ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԵՐ

ԺԷ. ԴԱՐ

ՀԱՏՈՐ

Գ՛

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XVII ВЕКА

(1641—1660 гг.)

ТОМ III

Составил ВАЗГЕН АКОПЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԷ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(1641—1660 ԹԹ.)

ՀԱՏՈՐ Գ

Կազմեց ՎԱՉԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1984

ԳՄԴ63.3(2Հ)
Հ249

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատ. գիտ. դոկտորներ
Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆԸ և Ռ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ.—Եր.։ ՀՍՍՀ
Հ249 ԳԱ հրատ.—(Նյութեր հայ ժող. պատմ. /ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ, գիրք 17).
Հ.3 (1641—1660 թթ.)/Կազմ. Վ. Հակոբյան; Պատ. խմբ.՝ Ա. Ս. Մաթևոսյան. 1983. 1016 էջ.

«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններին» Գ հատորը ընդգրկում է 1641—1660 թթ., բովանդակում է հարուստ նյութ հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հայ գաղթավայրերի, ինչպես նաև լեզվի և ազգագրության վերաբերյալ։ Ուշագրավ նյութեր կան նաև հարևան ժողովուրդների՝ ադրբեջանցիների, թուրքերի, պարսիկների, ուկրաինացիների, լեհերի մասին։ Այդ նյութերը լրացնում, առանձին դեպքերում ճշտում են ժամանակի պատմիչների տվյալները։

Հասցեագրվում է հայագիտության տարբեր բնագավառների ուսումնասիրողներին։

05050400
Հ ——————— 84
703(02)—84

ԳՄԴ63.3(2Հ)
902.9 + 9(с43)1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն հատորում ամփոփված են հայերեն ձեռագրերի 1641—1660 թթ. հիշատակարանները։ Նշված քսանամյակը մի ժամանակաշրջան էր, երբ պատմական Հայաստանի տարածքի վրա նախորդ դարերի կամ տարիների նման պատերազմական գործողություններ տեղի չեն ունեցել։ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև 1689 թ. սեպտեմբերի 14-ին Զահարում (Կասբը-ի-Շիրինի մոտ) կնքված հաշտության պայմանագրով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց երկու հզոր պետությունների միջև։ Ստեղծվեց համեմատաբար խաղաղ մի շրջան, որը տևեց մի քանի տասնամյակ։ Այս տարիներին Օսմանյան Թուրքիան թեև պատերազմական մեծ գործողություններ մղեց Եվրոպայում, ինչպես 1645 թ. հունիսին սկսած Կանդիայի պատերազմը, որը տևեց շուրջ 25 տարի (մինչև 1669 թ.), բայց դրանք հայ ժողովրդի համար չունեցան այն ավերիչ նշանակությունը, ինչ որ ԺԶ դարի և ԺԷ դարի առաջին տասնամյակների պատերազմները, որոնք մեծ մասամբ տեղի էին ունենում պատմական Հայաստանի տարածքի վրա, ավերելով քաղաքները, մեծ ու փոքր բնակավայրերը, քայքայելով և ապա արգելակելով տնտեսության զարգացումը, մեծացնելով հայ ժողովրդի արտագաղթը։

1640-ական թվականների երկրորդ կեսից սկսած և 50-ական թվականներին Կանդիայի պատերազմի ռազմական գործողությունների մասին երբեմն ընդհանուր, երբեմն որոշ մանրամասնություններով հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում իրենց հիշատակարաններում այդ տարիների գրիչները։

Վկայություններ կան նաև այլ պատերազմների, ինչպես և Թուրքիայում տիրող ներքին կյանքի մասին։ Պատերազմները Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին դրեցին տնտեսական ծանր վիճակի մեջ, հատկապես պատերազմական ծախսերը հոգալու նպատակով։ Անչափ բարձրացվեցին ժողովրդից գանձվող հարկերը, որոնց գանձումը լծորդվում էր կամայականություններով ու բռնություններով, որոնց մասին նույնպես հիշատակարաններում կան բազմաթիվ տեղեկություններ։

Օսմանյան Թուրքիայի լծի տակ գտնվող ոչ մահմեդական ժողովուրդները տնքում էին ոչ միայն ծանր հարկերից, այլև երկրի ներսում տիրող անօրինականություններից՝ քաղաքների և գյուղերի բնակչության կողոպտումներից, ճանապարհային (քարավանների) ավազակությունից, որոնք է՛լ ավելի էին ծանրացնում հպատակ ժողովուրդների վիճակը։

Տիրապետողներն իրենց հպատակներին ճնշում էին ոչ միայն տնտեսական, քաղաքական և իրավական առումով, այլև հաճախ ոտնահարում էին նրանց մարդկային արժանապատվությունը։ Ահա թե ինչ է պատահել Նոր Ջուղայի հայկական գաղթավայրում՝ 1651 թ. «Ուհ, կարի դառնագոյն է ժամս,

զի Թահմազ խանն ի վշտակիր ազդէս Հայոց ջուղայեցւոց զՁ(6) աղջկունս Ժ(10) ամեայս էառ, և ապա որոց ոչ հաւանեալ ետ ի տեսրսն»։

Բազմաթիվ հիշատակարաններում, որոնք գրվել են պատմական Հայաստանի սահմաններից դուրս, հետաքրքիր տեղեկություններ կան մասնավորապես Ուկրաինայի, Լեհաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի և այլ հայկական գաղթավայրերի մասին։ Այս առումով բավական հետաքրքիր են Հովհան Արղնցու հիշատակարանի տեղեկությունները Ուկրաինայի հայկական գաղթավայրերում կաթոլիկական եկեղեցու ազդեցության տարածման վերաբերյալ, կապված Նիկոզայոս Թորոսովիչի գործունեության և վերջինիս դեմ ժողովրդական հուզումների հետ։

Մի քանի հիշատակարաններում գտնում ենք վկայություններ պանական Լեհաստանի լծից ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի և այդ պայքարի առաջնորդ Բոգդան Խմելնիցկու մասին։

Սույն հատորի հիշատակարաններում ևս բազմաթիվ են տեղեկությունները եկեղեցիներին ձեռագրեր, հողեր և եկեղեցական կահկարասիներ նվիրելու վկայությունները։ Տեղեկություններ կան նաև եկեղեցու կողմից ջրաղաց կամ այլ անշարժ գույք գնելու մասին, որոնց եկամուտները հոգալու էին վանքի միաբանության ծախսերը և հոգսերը։

Հիշատակարանները, բացի քաղաքական մեծ ու փոքր դեպքերից և վերևում նշված վկայություններից, տեղեկություններ են հաղորդում նաև մահտարածմանների և բնական պատահարների մասին, որոնք վերաբերում են ոչ միայն բուն Հայաստանին, այլև հայկական գաղթավայրերին, ինչպիսիք են երկրաշարժը, արևի խավարումը, մորեխը և այլն։

Մենք ուզում ենք ուշադրություն հրավիրել շատ կարևոր մի բնագավառի՝ պատմական աշխարհագրության վրա ևս։ Բազմաթիվ հիշատակարաններում հիշված են այնպիսի բնակավայրերի, դյուղերի, վանքերի անուններ թե՛ Հայաստանում և թե՛ գաղթավայրերում, որոնք այժմ գոյություն չունեն և հայտնի չեն, կամ դրանց անունները փոխվել են և հին անունների մասին վկայություններ չունենք, կամ գրեթե չունենք։ Այդպիսի տեղանուններից են Շախասորոն, Աւետարանոց, Աղքատ, Բիւք, Միջա, Գոմա, Բարկիս, Իքան, Աւթուն, Խրատեզ, Մազրագրակ, Երկէն մասուր, Պապաջան, որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի։ Մոտավորապես այսպիսին է սույն հատորում ընդգրկված հիշատակարանների հաղորդած տեղեկությունների ոչ լրիվ պատկերը։

Հիշատակարանների Գ հատորն ընդգրկում է մեծ ու փոքր 1466 հիշատակարաններ, որոնց հրատարակության սկզբունքի և օգտագործած տեղեկատու դրականության մասին խոսվել է սույն ժողովածուի Ա և հատկապես Բ հատորների առաջաբաններում։

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՏՈՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

1. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ա. Ձեռագրեր

№№ 35, 45, 52, 66, 74, 80, 96, 104, 120, 131, 133, 151, 179, 182, 188, 189, 190, 198, 200, 201, 223, 224, 231, 236, 237, 238, 248, 254, 261, 264, 270, 274, 282, 289, 294, 297, 307, 331, 332, 333, 338, 347, 348, 351, 362, 363, 389, 428, 456, 457, 503, 507, 510, 516, 533, 588, 659, 679, 684, 702, 715, 745, 762, 774, 779, 784, 791, 800, 803, 804, 825, 829, 835, 840, 852, 857, 896, 906, 915, 917, 953, 977, 981, 992, 1023, 1034, 1038, 1052, 1096, 1112, 1113, 1123, 1125, 1128, 1130, 1136, 1153, 1177, 1203, 1206, 1215, 1245, 1249, 1251, 1255; 1260, 1263, 1268, 1278, 1285, 1294, 1308, 1312, 1315, 1317, 1318, 1327, 1336, 1365, 1393, 1405, 1407, 1420, 1428, 1443, 1449, 1469, 1472, 1474, 1487, 1502, 1510, 1527, 1528, 1539, 1542, 1549, 1558, 1567, 1578, 1586, 1597, 1605, 1606, 1610, 1624, 1626, 1628, 1669, 1684, 1702, 1714, 1739, 1742, 1752, 1754, 1764, 1771, 1782, 1832, 1856, 1862, 1864, 1865, 1909, 1918, 1923, 1924, 1926, 1927, 1940, 1979, 1989, 2008, 2025, 2039, 2056, 2076, 2089, 2096, 2105, 2135, 2149, 2166, 2175, 2180, 2277, 2303, 2308, 2309, 2326, 2330, 2360, 2386, 2389,. 2396, 2399, 2404, 2405, 2407, 2408, 2424, 2444, 2454, 2459, 2470, 2484, 2494, 2503, 2534, 2536, 2558, 2567, 2577, 2587, 2669, 2680, 2693, 2705, 2709, 2735, 2758, 2802, 2804, 2831, 2838, 2846, 2940, 2962, 3001, 3002, 3004, 3007, 3034, 3071, 3114, 3119, 3145, 3165, 3196, 3218, 3231, 3273, 3291, 3326, 3333, 3359, 3371, 3382, 3392, 3393, 3400, 3415, 3426, 3430, 3442, 3489, 3496, 3519, 3542, 3573, 3602, 3633, 3646, 3647, 3688, 3697, 3771, 3858, 3873, 3904, 3926, 3946, 3979, 3980, 3992, 4004, 4006, 4022, 4032, 4043, 4049, 4064, 4101, 4106, 4109, 4122, 4123, 4126, 4130, 4140, 4145, 4157, 4158, 4171, 4176, 4183, 4188, 4205, 4208, 4217, 4276, 4281, 4304, 4309, 4316, 4336, 4348, 4387, 4403, 4451, 4458, 4472, 4536, 4546, 4550, 4559, 4599, 4614, 4620, 4631, 4640, 4658, 4661, 4663, 4677, 4684, 4690, 4693, 4702, 4723, 4836, 4856, 4905, 4912, 4921, 4930, 4953, 4955, 4969, 4970, 4981, 5019, 5053, 5099, 5136, 5152, 5174, 5176, 5195, 5236, 5261, 5263, 5301, 5302, 5343, 5350, 5361, 5397, 5403, 5428, 5491, 5496, 5499, 5537, 5544, 5562, 5567 5568, 5571, 5599, 5604, 5623, 5634, 5652, 5684, 5690, 5725, 5774, 5787, 5824, 5848, 5875, 5909, 5914, 5921, 5956, 5964, 5992, 6053, 6071, 6112, 6135, 6186, 6196, 6201, 6215, 6220, 6231, 6256, 6273, 6291, 6323, 6340, 6351, 6353, 6363, 6364, 6393, 6411, 6419, 6423, 6431, 6485, 6497, 6507, 6513, 6518, 6526, 6543, 6569, 6663, 6665, 6673, 6697, 6731, 6772, 6776, 6778, 6779, 6783, 6801, 6802, 6825, 6873, 6966, 6977, 6979, 6989, 6992, 7004, 7010, 7013, 7014, 7017, 7029, 7040, 7046, 7050, 7070, 7089, 7098, 7099, 7111—7114, 7119, 7122, 7124, 7131, 7140, 7143, 7148, 7158, 7168, 7219, 7220, 7227, 7236, 7249, 7270, 7293, 7300, 7305, 7317, 7364, 7371, 7376, 7381, 7392, 7393, 7409, 7411, 7412, 7422, 7432, 7465, 7475, 7491, 7511, 7512, 7517, 7524, 7546, 7552, 7566, 7574, 7580, 7583, 7713, 7740, 7758, 7794, 7839, 7842, 7850, 7874, 7880, 7881, 7883, 7911, 7918, 7954, 7958, 7594, 7598, 7606, 7622, 7623, 7630, 7633, 7641, 7642, 7665, 7676, 7697, 7698, 7709, 7713, 7758, 7794, 7839, 7842, 7850, 7874, 7880, 7881, 7883, 7911, 7918, 7954, 7958, 7960, 7985, 7992, 8029, 8030, 8065, 8106, 8131, 8135, 8155, 8156, 8177, 8196, 8204, 8205, 8207, 8210, 8233, 8281, 8315, 8325, 8349, 8384, 8386, 8388, 8397, 8425, 8438, 8444, 8451, 8454, 8460, 8462, 8468, 8506, 8523, 8568, 8571, 8586, 8588, 8594, 8597,

8601, 8605, 8617, 8623, 8641, 8642, 8657, 8674, 8680, 8692, 8798, 8875, 8876, 8882, 8885, 8906, 8928, 8932, 8970, 8985, 9014, 9022, 9026, 9086, 9113, 9124, 9186, 9257, 9273, 9288, 9289, 9292, 9299, 9390, 9322, 9367, 9401, 9422, 9433, 9445, 9482, 9531, 9552, 9642, 9694, 9757, 9767, 9777, 9798, 9799, 9826, 9850, 9873, 10006, 100024, 10028, 10044, 10075, 10123, 10193, 10198, 10209, 10210, 10254, 10299, 10307, 10317, 10324, 10355, 10362, 10366, 10374, 10381, 10382, 10403, 10440, 10442, 10584, 10601, 10607, 10622, 10636, 10641, 10662, 10682, 10685, 10697։

բ. Պատատիկներ

ՄՄ 848, 919, 923, 940, 965, 967, 970, 972, 977։

գ. Մաներաժապավեններ (դրսից ստացված)

Մ 10, Երուսաղեմ, Մ 1928։
Մ 12, ——»—— Մ 1934։
Մ 14, ——»—— Մ 1938։
Մ 24, ——»—— Մ 2438։
Մ 401, ——»—— Մ 233։
Մ 593, ——»—— Մ 542։
Մ 597, ——»—— Մ 797։
Մ 731, ——»—— Մ 1927։
Մ 52, Դորպատի համալսարան, Մ 173։
Մ 132, Լենինգրադ, Սալտիկով Շչեդրինի անվան գրադարան, Арм. Н. С. 38։
Մ 139, ——»—— ——»—— ——»—— ——»—— Дорп, 631։
Մ 156, ԼԱԱԺԻ, A—8—Լենինգրադի Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ։
Մ 185, ԼԱԱԺԻ, A—46 ——»—— ——»—— ——»—— ——»——
Մ 226, ԼԱԱԺԻ, A—3 ——»—— ——»—— ——»—— ——»——
Մ 232, ԼԱԱԺԻ, B—9 ——»—— ——»—— ——»—— ——»——
Մ 343, ԼԱԱԺԻ, C—33 ——»—— ——»—— ——»—— ——»——
Մ 449, Վաշինգտոն, Freer gallery of Art—3719:
Մ 478, Հարոլդ Բեյլի հավաքածու (Լոնդոն)։
Մ 479, —»— —»— —»— —»—
Մ 490, Կ. Պոլիս, Պալատի Ս. Հրեշտակապետի եկեղեցի, Մ 1։
Մ 494, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 11։
Մ 497, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 17։
Մ 510, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 45։
Մ 511, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 47։
Մ 512, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 48։
Մ 520, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 61։
Մ 530, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 71։
Մ 533, ——»—— ——»—— ——»—— ——»—— Մ 81։
Մ 544, Կ. Պոլիս, Ազգային Պատրիարքարան, Մ 41։
Մ 607, Չիկագոյի համալսարան, Մ 234։
Մ 608, ——»—— ——»—— Մ 275։
Մ 618, Վենետիկ, Մ 2։
Մ 619, ——»—— Մ 3։
Մ 620, ——»—— Մ 4։
Մ 623, ——»—— Մ 7։
Մ 630, ——»—— Մ 1258։
Մ 672, Վիեննա, Մ 55։
Մ 676, ——»—— Մ 88։
Մ 699, ——»—— Մ 571։
Մ 772, Հ. Հազարյանի հավաքածու, Նյու-Յորք, Մ 5։
Մ 777, ——»—— ——»—— ——»—— Մ 10։
Մ 814, ——»—— ——»—— ——»—— Մ 47։
Մ 832, ——»—— ——»—— ——»—— Մ 65։

Ը

դ. Լուսանկարների ֆոնդ

№№ 110, 134, 170

ՄԼԳ—Մոսկվայի Լենինի անվան գրադարան, Арм. *№ 21։*
Էրմիտաժ—Լենինգրադ, Էրմիտաժ, V, 3—835։
Վաշինգտոն Կոնգրեսի գրադարան, Arm. MS. *3։*

ե. Հիշատակարանների ժողովածուներ (անտիպ)

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա—«Ընշխարք պատմութեան Հայոց», ձեռ. № 6332։
Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք» հտ. Բ—«Ընշխարք պատմութեան Հայոց», ձեռ. № 4515։
6273—Ղ. Փիրղալեմյան, Հիշատակարանների և այլ նյութերի ժողովածու։
9027—Ղ. Փիրղալեմյան, Հիշատակարանների և այլ նյութերի ժողովածու։
6333—Հովհ. Բարղամյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի։

զ. Ձեռագրաց ցուցակներ (անտիպ)

ԼԱՎԳԱՒ—Ս. Պ. Լալաֆարյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտ[1]։
ՄԱԳԻՍՏՐՈՍ—Մեսրոպ Տեր Մովսիսյան, Հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակ։ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագրատուն, ձեռագրաց ցուցակների ֆոնդ։
ՊՊԹ—Ն. Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Երևանի պետական պատմական թանգարան, ազգագրության բաժնի արխիվ։
ՏԵՐԱՎՋ—Ս. Վ. Տեր Ավետիսյան, Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամրի Ս. Ստեփանոսի, որ ի Գողթն։ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագրատուն, ձեռագրաց ցուցակների ֆոնդ։
ՏԻՐԱՑՐ ՎԱՐԴԱՊԵՏ—General catalogue of the armenian manuscripts in the Bodleian Library at Oxford.

Մաշտոցի անվան մատենադարան, արխիվային բաժին

Տիրայր վարդապետի արխիվ, թղթապանակ 119—122, վավերագիր 1ա—1իդ։
Տիրայր վարդապետ—թղթապանակ 118, վավերագիր 1ա—1դ։
ՔՏԲ—Ս. Է. Քալանջյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Բուխարեստի[2] «Հայ մշակույթի տան մատենադարանի»։ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագրատուն, ձեռագրաց ցուցակների ֆոնդ։

2. ՁԵՌԱԳՐԱՑ ՑՈՒՑԱԿՆԵՐ (տպված)

ՑՁԱԲ—Բարգէն աթոռակից կարողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957։
ՑԶԹԱԻԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1910։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1905—1909 թթ.։
ՑԶԼԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի համալսարանի մատենադարանի, արքեպիսկոպոսարանի և Ստանիսլաւովի, կազմեց Ն. Ակինեան, Վիեննա, 1961։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1936, 1937, 1948—1950 թթ.։
ՑԶՀԱ—Արտաշոզդ արք. Սիրմէեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղէմ, 1935։
ՑՂՐ—Բարգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961։
ՑՆԲԱՃ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1924։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1909—1913 թթ.։

---

[1] *Այն դեպքում, երբ Ցուցակը հեղինակի մոտ է, հասցեն չի նշվում։*
[2] *Սույն ժողովածուի Ա հատորում սխալմամբ տպագրվել է Բուդապեշտի (էշ ԻԸ)։*

ՑՁՆԿԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ն. Ակինեան, Վիեննա, 1961։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953—1957 թթ.։

ՑՁԱԳ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմեց Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1922—1929, 1958 թթ.։

ՑՁՍԿԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1900։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1896—1897 թթ.։

ՑՁՎԼ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալեան, պրակ Ա, Թիֆլիս, 1915։

ՑՁՎՍ, I—Բարսեղ Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հա. 1, Վենետիկ, 1914։

ՑՁՎՍ, II—Նոյնի հտ. 2-րդ, Վենետիկ, 1924։

ՑՁՎՍ, III—Բարսեղ Սարգիսեան, Գրիգոր Սարգսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. 3, Վենետիկ, 1966։

«Բանբեր Մատենադարանի», № 9—Ս. Է. Քալանջյան, Համառոտ ցուցակ հայերէն ձեռագրաց Գեղա հայաքաղաքի (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969)։

«Բանբեր Մատենադարանի», № 11—Օ. Եգանյան, Կ. Սուքիասյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց արևելագետ սրբ Հարութ Ուոլտեր Բեյլիի։ Զավեն Ե. Վ. Արզումանյան, Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում։

Հ. Քյուրտյան, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածուի ի Ուիչիգա, Կանզաս ԱՄՆ (այս երեք ցուցակները տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 11, Երևան, 1973, էջ 357—376, 377—398, 399—422)։

Զմիւռնիա—Տրդատ եպիս. Պալեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Զմիւռնիա, տե՛ս «Դափնի», № 4, 1921։

Զմմառ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, հտ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին Ն. Ակինեան և Հ. Ոսկեան, Վիեննա, 1971։

ԹՑԱՎ, Յ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962։

ԹՑԺԴ, Բ—Յ. Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900։

ԹՑԶԴ, Ա—Յ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898։

ՄԻՆԱ—Նոր Ջուղայի անհատական և Փերիայի եկեղեցական ու անհատական ձեռագրեր։

ՄԻՆՋ—Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց Թանգարանի, հտ. Բ, կազմեց Լ. Գ. Մինասեան, Վիեննա, 1972։

Մուրմար, I—Սահակ Ա. Մուրատեան, Նազարեթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ

Մուրմար, II—Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967։

ՑՈՎՀՑՆ—Ստեփանոս արքեպ. Յովակիմեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմեդիոյ և շրջակայից, Վենետիկ, 1969։

ՈՑՁՄՎ—Ցուցակ ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, կազմեց Հ. Ոսկեան, Վիեննա, 1963։ Նախապես մասամբ տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1945։

ՊՑԶԿ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց Տրդատ եպ. Պալեան, Վիեննա, 1963։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1959—1960։

ՏԵՐԱՎՋ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա, կազմեց Ս. Տեր Աւետիսեան, Վիեննա, 1970։

ՊՎՑՁԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա. Կեսարիոյ վիճակ, տետր Ա, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սարգիս վանուց ի Կեսարիա, կազմեց Տրդատ վրդ. Պալեան առաջնորդ Հայոց Կեսարիոյ, Կ. Պոլիս, 1892։

ՏՑԶԿՄՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1891։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1891։

ՏՑԶՄՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895։

ՔՑԶԶՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964։

ՄՑԶԵՄՍ, 1— Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հտ, Ա, Փարիզ, 1950։

ՄՑԶԵՊ—Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպիս. Պողարեան,

Երուսաղեմ, Հ. Ա., 1966, Հ. Բ., 1967, Հ. Գ., 1968, Հ. Դ., 1969, Հ. Ե., 1971, Հ. Զ., 1972, Հ. Է., 1974, Հ. Ը., 1977, Հ. Թ., 1979։

ՄՅԶԵԱ, I—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբանց վանքի, հտ. Ա, կազմեց Արտաւազդ արքեպիս. Սիւրմէեան, Վենետիկ, 1948։

ՄՅԶՀՄՍ—Մայր ցուցակ ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց, հտ. Բ, կազմեց Արտաւազդ արքեպիս. Սիւրմէեան, Հալէպ, 1936։

Ասլանեան, «Տաճար»—Գէորգ վրդ. Ասլանեան, Հնութիւնները, տե՛ս «Տաճար», 1912, № 4։

Արծնեան, «ՀԱ»—Հ. Քոսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին, «Հանդէս ամսօրեայ», 1961։

Բաղդատ, «ՀԱ»—Մ. Տ. Ազգային ձեռագիրք ի Պաղտատ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1889։

Բաս. «Բանասէր»—Կ. Հ. Բասմաջեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ազգային մատենադարանին Պարիսի, տե՛ս «Բանասէր» (Փարիզ), Ա, 1899։

Դասապեան, «ՀԱ»—Ն. Դասապեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1947, № 1։

Թալաս—Տ. վ. Պ. Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թալաս (Թեմ Կեսարիոյ), տե՛ս «Արևելեան մամուլ» (Զմյուռնիա), Իէ տարի, 1897։

Թեհրան, «ՀԱ»—Հ. Ոսկեան, Ցուցակ Թեհրանի հայերէն ձեռագիրներու, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953։

Լոնդոն, «ՀԱ»—Մեսրոպ վ. Գ. Գրիգորեան, Ժէ դարու երկու հայերէն ձեռագիրք Լոնտոնի մէջ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1961։

Կարնոյ գիւղեր, «ՀԱ»—Քոսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1963։

Կոր. «Բանասէր»—Կորիւն վրդ. Համբուս վրայ տեսած ձեռագիրներս, տե՛ս «Բանասէր» (Փարիզ), հտ. է, 1905։

Հ. Ե. Փ. «Բազմավէպ»—Հ. Եղիա Փէշիկեան, Ցիշատակարանք գրչագրաց սբ. գրոց, տե՛ս «Բազմավէպ», 1935։

Ն. Միքայելյան, «Էջմիածին»—Նուբար Միքայելյան, Լիակատար ցուցակ մայր աթոռ սբ. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի, տե՛ս «Էջմիածին» (տարբեր համարներում)։

Մաղնիսա—Տ. վ. Պ. Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիօնի և Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց Մաղնիսայի (Թեմ Կեսարիոյ), տե՛ս «Արևելեան մամուլ» (Զմյուռնիա), Իէ տարի, 1897։

Ն. Մառ—Ն. Մառ, Ցուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանայ, Մոսկվա, 1892։

Ոսկգաս, «ՀԱ»—Հ. Ոսկեան, Ն. Դասպարեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1938։

Չարմահալ, «Բազմավէպ»—Ս. Երեմեան, Ժէ դարի մի գրչագիր Աւետարան, տե՛ս «Բազմավէպ», 1951։

Պողոսեան, «ՀԱ»,—Հ. Ե. Պողոսեան, Հայերէն ձեռագիրներ ի Բուլգարիա, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», № 1—2, 1948։

Վ. Ագուլիս, «Արարատ»—Սեսրոպ վրդ. Մամսուտեան, Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայի առաքելոյ վանուց և եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ և անձանց մասնաւորաց, տե՛ս «Արարատ», 1911, 1914, 1915։

Վ. Թորգոմեան, «Բազմավէպ»—Վ. Թորգոմեան, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, տե՛ս «Բազմավէպ», 1923—1926։

Վ. Յովհաննիսեան, «Բազմավէպ»—Վ. Յովհաննիսեան, Մագաղաթեայ Աւետարան մը, տե՛ս «Բազմավէպ», 1950։

Յ. Քիւրտեան, «Հասկ»—Յ. Քիւրտեան, Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանքին ձեռագրաց հաւաքման բժշկարանները, տե՛ս «Հասկ», 1939, № 6։

F. Macler, *«Բանասէր», 1905, հտ. է։*

Heck *«ՀԱ»—Հ. Ոսկեան*—Heck *հնավաճառին հայերէն ձեռագիր Աւետարանը, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1965։*

Artab—Erganzungs Verzeichnis der armenischen Handschriften Preussischen Statsbibliothek zu Berlin, Berlin, 1934.

Baronian Bodleian—Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library by the rev. Sukias Baronian and F. C. Conybeare, Oxford, 1918.

Gallery—Sirarpie der Nersessian, Armenian, Manuscripts in the Freer Gallery of Art, Washington, 1963.

Finck, Tubingen, I—K[öniglichen] Universitätsbibliothek zu Tübingen. Veröffentlich-

ungen l'Atlas zum katalog der armenischen Handschriften. l'Armenische Paleaiographie, von Franz Nikolaus Finck, Tubingen, 1907.
KarHB—Die Handschriften—Vezreichnisse der königlichen Bibliothek zu Berlin, Zehnter Band, Verzeichniss der armenischen Handschriften von Dr. N. Karamianz, Berlin, 1888. *Նախապես տե՛ս «Բազմավէպ», 1886։*
CBCon—A Catalogue of the Armenian manuscripts in tbe British Museum, by Frederick Cornwallis Conybeare, London, 1913.
CBNMac—Catalogue des manuscrits armeniens et georgiens de la Bibliotheque Nationale, par Frédéric Macler. Paris, 1908.
Not. Mac.—Notices de manuscrits armeniens vus dans quelques bibliotbèques de l'Europe centrale, par Frédéric Macler, Paris, 1913, Extrait du Journal Asiatique (septembre-octobre et novembre-décembre, 1913).
AHTFG—Systematisch-Alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitatsbibliothek zu Tübingen. M. Handscbriften. & Orientalische. XIII, Verzeicnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek von Frans Nikolaus Finck und Levon Gjandschezian, Tübingen, 1907.
Not. Mac., II—Notices de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens vus dan quelques bibliotheques de la Péninsule Ibérique et du Sud-Est de la France, par Frédéric Macler (*տե՛ս* Revue des Études Armeniennes, t. II, Paris, 1922, fascicule 1, 2).
Rapp. Mac., X—Rapport sur une mission scientifique en Roumanie (juin-août, 1927), par Frédéric Macler (*տե՛ս* Revue des Études Arméniennes, t. X, fascicule 1, Paris, 1930).
Rapp. Mac., XXII—Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède (juillet-septembre, 1922), par Frédéric Macler. Extrait des Nouvelles archives des missions scientifiques, t. XXII, fascicule 5, Paris, 1924).
Վատիկանի ղրագրան—Codices Armeni bibliothecae Vaticanae Borgtani, Vaticani Berberini Chisiani, Eugenius Tisserant, Romae, MCMXXVII.

3. ՄԱՄՈՒԼ

«Ազգագրական հանդէս», ԺԲ, 1905։
«Անահիտ», Բ, 1946։
«Արարատ», 1872, 1875, 1888, 1905, 1911, 1915։
«Արևելեան մամուլ», 1897։
«Արծագանք», 1888։
«Բազմավէպ», 1886, 1891, 1923, 1925, 1935, 1950, 1951։
«Բանասէր» (Փարիզ), Ա, 1899, Բ, 1900, Զ, 1904, է, 1905։
«Դափնի» (Զմյուռնիա), 1921, № 4։
«Էջմիածին», 1950—1952, 1960, 1963—1965, 1971, 1975։
«Լոյս», 1905, 1906։
«Լոմայ», 1902, №№ 2, 3։
«Մաղիկ», 1891, 1892, 1897։
«Հանդէս ամսօրեայ», 1889, 1891, 1894, 1896—1897, 1905—1913, 1925—1926, 1935—1938, 1945, 1947—1950, 1953—1966։
«Հասկ», 1939, 1941, 1973։
«Պատմա-բանասիրական հանդէս», № 1, 1958։
«Սիոն», 1964, 1966, 1968, 1972, 1974։
«Տաճար», 1912։
„Journal Asiatique", №№ 2, 9—12, 1913.

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղավնունի Այցելուք—Միրաքիչ Աղավնունի, *Միաբանք և այցելուք հայ ծրուսաղէմի, ծրուսաղէմ, 1929։*
Աղուանք—Մ. Բարխուդարեանց, *Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս 1893։*

Արցախ—Մ. Բարխուդարեանց, Արցախ, Բաքու, 1895։
Բալու—Կորիւն վարդապէտ, Զեռագիրներ («Լոյս», Կ. Պոլիս, 1905)։
Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830։
Գեղարքունի—Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895։
Դիւան—Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ժ, Թիֆլիս, 1912։
Երնջակ—Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր Երնջակայ Ս. Կարապետի Վանից և շրջակայից նորին, Տփխիս, 1906։
Թորոս աղբար, Ա—Գարեգին Սրվանձտեանց, Թորոս Աղբար, Ա. Կ. Պոլիս, 1979։
Թորոս աղբար, Բ—Նույնը, Բ, Կ. Պոլիս, 1884։
Կամենից—Ղ. Ալիշան, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, Վենետիկ, 1896։
Հնոց և նորոց—Գ. Սրուանձտեանց, Հնոց և նորոց պատմութիւն վասն Դաւթի և Մովսէսի Խորենացւոյ, Կ. Պոլիս, 1874։
Ճանիկյան—Հ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895։
Շահազիզ—Երուանդ Շահազիզ, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903։
Շահազիզ—Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931։
Շամախի—Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր Ս. Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միւս վանօրէից և ուխտատեղեաց ևս և քաղաքացն և գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1890։
Սիսական—Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893։
Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952։
Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ, Գահիրէ, 1937։
Ն. Ակինեան, Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952։
Գավրիկեան—Դրանսիլուանիոյ Հայոց։
Զարարիա Ազուլեցի, Օրագրութիւն։
Բ. Կիւլեսերեան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939։
Բ. Կիւլեսերեան, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք,
Մաս, 1] Մանր ժամանակագրություններ (13—18-րդ դդ.) հտ. 1, կազմեց Վ. Ա. Հակոբյան,
Մաս, 2] Երևան, 1951, հտ. 2, 1956։
Յակոբ Կարնեցի, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903։
Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951։
Հ. Ոսկեան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960։
Հ. Ոսկեան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957։
Հ. Ոսկեան, Սերաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի և Տրապիզոնի վանքերը, Վիեննա, 1962։
Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, հտ. Գ, Վիեննա, 1947։
Հ. Ոսկեան. Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953։

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(1641—1660 թթ.)

1

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7393

Գրիչ՝ Միքայել
Վայր՝ Պաղշասարայ

ա

4ա Որոց աղաւթիւք ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Համ-
դեցի խոճայ Աստուածատուրին, և կողակցին՝ Նուրիխանին, որդոցն
Սարգիսին, և դստերն՝ Սուլթանպէկին, և հաւրն՝ խոճայ Շէկոնց Գաս-
պարին, և մաւրն՝ Սուլթանպէկին, և մեծ քրւերն՝ Մարանին, Խաթունպէ-
կին, մահդեսի Պալախ[շ]ին և ամենայն արեան մերձաւորաց և ինձ
մեղապարտ սուտանուն Միքայէլի, կարդացողաց...[1]։

բ

456բ Յիշեցէք զմահդեսի Յովասափն և զմահդեսի Աղաճանն, որ զօրի-
նակս շնորհեաց։ Դարձեալ յիշեցէք և զխաշիկն՝ յեկեղեցոյս ժամակոցն,
որ սպասաւ[որ]էր մեզ և զկերակուրն բերէր։

գ

591ա Փառք...։

592ա Արդ՝ ստացաւ զգիրքս պիտանի աստուածասէր Համքեցի խոճայ
Աստուածատուրն, որ կոչի Յայսմաւուր, զոր կարգեալ է ի յետին ժա-
մանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մերենց կոչեցեալ, բազում ջանիւ և
աշխատութեամբ ուղղեաց... յիշեցէք զստացող սորա... զՀամքեցի խո-
ճայ Աստուածատուրն և զկենակիցն նորա զՆուրիխանն, և զորդին իւր՝
զՍարգիսն, և զդստերն իւր՝ զՍուլթանպէկն, և զհայրն իւր՝ զՇէկոնց
Գասպարն, և զմայրն իւր՝ զՍուլթանպէկին, և քրւերցն՝ Մարանին, և Խա-
թունպէկին, և մահտեսի Պալախշին և ամենայն արեան մերձաւորքն իւր...։

Արդ՝ դրեցաւ սա ի յամի թուականութեանն հայկազեան սեռի ՌՂ
(1641) փետրվար ամսոյ Ժ (10), աւրն չորեքշաբաթի։ Աւարտեցաւ ձե-
ռամբ անիմաստ և թարմատար, վերջին և յետին... անարհեստ նորա-
ջան գրչի Միքայիլ դպրիս։ Աղաշեմ... յիշեսջիք և զմեզ առ Տէր... նաև
զմարմնոյ զծնաւղսն իմ, զհայրն իմ՝ զՊետրոսն և զմայրն իմ՝ զկիրա-
յին, և զեղբայրն իմ՝ զկիրակոսն, և զքրւերսն իմ և զամենայն ազգա-
յինսն իմ...։

[1] Նման և համառոտ հիշատակարաններ տե՛ս նաև ձեռագրի 5ա, 6ա, 7ա, 14ա, 16ա, 17բ, 20բ, 21բ, 23ա, 24ա, 26ա և այլ բազմաթիվ էջերում, յուրաքանչյուր վարքագրության վերջում։

Եւ եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս ի Պաղշայսուրայ, ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնին, յառաջնորդութեանն տէր Փիլիպոս կաթողիկոսին և արքեպիսկոպոսին տէր Խաչատուրին և տէր Գրիգորին և այլ բազի քահանայիցն և ժողովրդեանն ամենեցուն։

Դարձեալ յիշեսջիք ի Տէր զերեխտաւոր ծնաւղ զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ քահանայն հանդերձ ծնաւղիւքն և ամենայն արեան մերձաւորաւքն։

592բ Դարձեալ աղաչեմ զձեզ, ով եղբարք, յիշեցէք ըղ//եղբայրակիցն իմ՝ զՍուրգիս տիրացուն, որ բաղում աշխատեցաւ ի դիրքիս ծաղկելս և ի կապելն. Տէր Աստուած նմա վարձահատոյց լինի...։ Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զընտացող սբ. դրոցս զՀամբեցի խոճայ Աստուածատուրն, որ ընտացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրունս ամէնաւրհնեալ Ս. Աստուածածնին, յիշատակ անշնջելի...։

Դարձեալ աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանաւք, ով սբ. ընթերցողք, յորժամ կարդայք և կամ գաղափարէք մի՛ մեղադրէք անարհեստ գրիս կամ սղալանացն կամ խոշորութեանն, զի ըստ տկար աղտկացեալ մտաց մերոց այս չափ էր կարիք մեր։

Դարձեալ յիշեցէք ի Տէր զտատացաւղ սորա զՀամբեցի խոճայ Աստուածատուրն հանդերձ ծնաւղիւքն, նաև զթղթիս կաւկողքն և զաշխատողքն և դուք յիշեալ լիջիք...։

Գրիչ՝ Յովանէս

Գ

231բ Որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Յամբեցի խոճայ Աստուածատրին... և բազմամեղ գրչի Յովանէսի։

2

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7883

Գրիչ՝ Մելքոն քահանայ
Վայր՝ Քիլիս

Ա

11բ . . . . . .

Սուրբդ Մաթէ նախ մաքսաւոր,
Եւ ի յետոյ աւետաւոր,
Յիշեա առ քոյդ տէր երկնաւոր,
Զիս Մելքոն էրէց յայժ մեղաւոր[2]։

Բ

84բ Աղաչեմ յիշել ի Տէր զգծագրաւղ սբ. Աւետարանիս զՄելքոն քահա-

[2] Նման մի հիշատակարան տե՛ս նաև 226բ էջում։

նայս։ Ոհ, ոհ, ոհ որ զանունս ունիմ և զգործս ոչ. ի թուին Հայոց ՌՁԸ (1639)։

Գ

137ա Զզծող սորա զտէր Մելքոն քահանայս աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած զձեզ յիշէ։

Դ

286բ Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարհեստ և անիմաստ գրչի Սեբաստացի Մելքոն քահանայի, ի թուին Հայոց ՌՂ (1641), մարտ ամսոյ ի ԺԹ (19), աւուրն ուրբաթ, ի գիւղաքաղաքն ի Քիլիս, ի դուռն Ս. Յովանէս եկեղեցւոյն, ի հայրապետութեանն տէր Սիմէոնին տանս Կիլիկոյ։ Ով դասք լուսերամից և սբ.[3]։

3

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 9390

Վայր՝ Ըստամբոլ

10բ Փառաւորեալ Տէր...։ // Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի քաղաքն Ըստամբոլ, որ կոչի Բոզանդիայ, ի դուռն Ս. Սարգսի զօրաւարին և որդոյ նորա Մարտիրոսին, և մեղսամած գրչի զ[?]ին[4], թվին ՌՂ (1641), ապրիլ ամսոյ ԺԳ (13)։ Արդ՝ երես դնելով աղաչեմք զամենեսեան, որք հանգիպիք կարդալով և կամ օրինակելով մէկ Հայր մեղայ[5]։

4

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Rapp. Mac., XXII № 75

Գրիչ՝ Գրիգոր

165 Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ ժողովածու դիրքս ձեռնտու[ու]թեամբ ամենայսուրբ Հոգոյն և աւժանդակութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ ստահակ և սոսկապանծ անձին Գրիգորի, յաւուրս յինանց քառասնորդի թվին ՌՂ (1641), յամսեանն չորրորդի՝ ապրիլի ԺԸ (18), ի յաւուր պատկերն էր շաբաթի, առ յիշատակ իմ վարպետին, Ոսկան անուն կրա[ւ]նաւորի։

Որք հանդիպիք այսմ տառի,
Գծայգրեցելոյ իմով բազկի,
Միով բանիւ Տէր ողորմի,
Մի՛ խնայէք շարայգծողի։
Զի և հանուրց Տէրն բարի,
Առ հասարակ ողորմեսցի,
Ինձ գծողիս եղկապատի,
Զեղ լսողացդ գերահրաշից. որում փառք յաւիտեանս. ամէն։

[3] Շարունակությունն ընկած է։
[4] Գրչի անունը եղծել են։
[5] Հիշատակարանի շարունակությունն ընկած է։

5

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՅԶԵՊ, III, № 718

Գրիչ՝ Յոհաննէս սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

164 *Որ եղև զրաւ վերլուծութեան սորա ի թուականութեանս հայկազան տումարիս ՌՂ (1641), ի մարտի ամսոյ ԻԶ (26), ի քաղաքն* Կոստանդինուպոլիս, *ընդ հովանեաւ Ս. Սարդիս զօրավարին։ Եւ արդ՝ ես յետնեալս և անարդս ի սարկաւագաց, և համբակս ի ծանօթս բանից, մեղօք մեռեալս, ոգով եղկելիս և թշուառականս* Յոհաննէս, *փափաքանօք զսա դրեցի, թէպէտ դիրս է սխալ և անարուեստ որպէս և ձեզ իսկ երևի, յիշատակ անձին իմոյ բազմամեղի և համայն ցեղիցն մերոց և ամենայն զարմի։*

Այլ և աղաչեմ զձեզ եղբայրք, որք հանդիպիք սմա ընթեռն[լ]ով կամ գրելով կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զուսուցիչն իմ և զհայրն իմ՝ զպատուելի քահանայն զտէր Անդրիասն, *և զմայրն իմ՝* ԶՕղիտան, *և զեղբայրն իմ՝ զտէր* Մելքիսէթն, *և զքոյրքն իմ, և զայլ ամենայն արեան մերձաւորքս զկենդանիս և զննշեցեալսն, և զիս զեղկելիս յիշեցէք մի Հայր մեղայիւ, և դուք յիշեալ լիջիք ի դպրութիւն կենաց. ամէն։ Յայսմ ամի թվին ՌՂ (1641) ապրիլ ամսոյ ԻԵ (25), Զատկին կիրակին ձեռնադրեցին զտէր* Մելքիսէթն։

6

ԺԱՄԱԳԻՐՔ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 2470

Գրիչ՝ Ղազար երէց

ա

11բ *Գրեցաւ ի թվականիս ՌՂ (1641) ամին յունիս ամսոյ ԻԲ (22), աւրն չորեքշաբթի, ձեռամբ* Ղազար *իրիցու։*

բ

36բ *Զմեղապարտ գծաւղ զ*Ղազար *երէց ի Տէր վարձատրեա միով Տէր ողորմեայիւ, ով սիրելի ընթերցողք, և Քրիստոս Աստուած զձեզ յիշեսցէ...։*

գ

52բ *Գրոցս այս դուք խընամ տարէք,*
Որք տենչանաւ զսա երգէք,
Ով ոք կարդայք, աւրինակէք,
*Զ*Ղազար *երէցըս յիշեցէք։*
Զթաղծեալս հոգովս եղբայր յիշեա,
Եւ զողորմին սիրով ասա,
Ձեռքս փտի 'ւ ի հող դառնա,
Գիրս յիշատակ առ ձեզ մնա։

7

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԵՐԱՎՔ, № 554

Վայր՝ Էջմիածին
Ստացող՝ Մովսէս աբեղայ

ա

832 Փառք...։ Յորմէ շնորհէ սատարեալ յանգեալ աւարտեցաւ տառս՝ մակացական և գիծս իմաստասիրական արտադրութիւնս փիղիսոփայական և ասացուածս նրբաճառական յամի հազարերորդի ինսներորդի (1641) թուահաշուութեան արամազեանս, ըստ հոլովման մեծի չափողին և պատճառին ամանակի, ի նաւասարդուոջ ի սկզբան ամսեանն, և ի հոկտեմբերի ըստ հռոմայեցւոցն երկոտասան, առ (sic) հովանեաւ լուսանկար և տիեզերածաւալ, գերագահ սբ. աթոռոյս Էջմիածնի, յորում միջի կայաւորեալք են բազմութիւն եղբարց կուսակրօնից իբրև յիսնեակ թուով, միշտ յաստուածաշունչ գիրս պարապեալք և յար ի քննութիւնս բնախօսական տառիս կրթեալք, ունելով գլուխ և առաջնորդ ուսմանս այսորիկ զմեծ հռետորն և անյաղթ փիլիսոփոսն, ամենավսեմականի Հոգւոյն ընդունարանն և զինչ եթէ ոչ երկրորդ Դաւիթ և Մովսէս շնորհեալ ազգիս մերում Սիմէօն ասեմ, զմայլեալն առատաբար ի վերնական զեղմանէն, յորմէ ուռճացան յոքունք քերթողութեան արուեստիւ և արտաքին գրոց տեղեկութեամբ և աստուածախօս տառից ծանօթութեամբ։ Ըստ որում պատճառի և զգիրս զայս ստացայ։ Քանզի ըստ յաւէտունակ իմաստութեան մտաց իւրոց, պարզագոյն իմացուածով քերականութիւն յօրինեաց և ուսոյց ամենայն ումեք. գոլով գաւառաւ Ջուլայեցի, որ այժմ ի Շօշ քաղաքի բնակեալ են արքայարանի Պարսից, աշակերտ եռամեծին և բազմերջանիկ վարդապետին Խաչատրոյ, զորմէ զկնի ճառեցից։ Արդ՝ սկիզբն այսր գիտութեան եզև խստակրօն և ճգնազգեաց վարդապետն Մելքիսէք, որ էր յԱրարատեանս գաւառէ, և ի նրմանէ ծանօթացաւ սա, բայց սակայն բազմապատկաբար առաւելու գիտութեամբ սա, սակս յոյժ առատութեան մտաց իւրոց, որպէս և քերականութեանս իրողութիւն, որում ոք երբէք էր տեղեակ յազգէս մերմէ ի վաղուց հետէ մինչև ցայսօր ամանակի ըստ այմ։ Ուստի և որքանութիւն իմաստութեան սորայ սովաւ ծանուցանի, այնոցիկ մտաց, որք իսկապէս կարեն բաց որոշել զդիտաւորութիւն քերթողութեանս։ Այլ մեք դարձցուք ի կարգ անկեալ բանիս, զոր սկսաք։ Արդ՝ գոլով այցելու և դիտապետ տոհմիս հայկական երջանիկ և ճգնազգեաց իմն արտասանեալ տէր Փիղիպպոս բան ջահից մակադրեալ, որ արդարև ըստ անուան իւրոյ փայլէ յաւուրս յայսոսիկ իբրև արեգակն միջօրէի, երանելի կենցաղավարութեամբ և առաքինաշաւիղ ընթացիւք պատճառ բարեաց լինելով ուղղութեան կարգաց շինութեան եկեղեցեաց և այլ ամենայն բարեձևութեանց։ Ուստի և նոր նորոգեալ պայծառացոյց զտիեզերական աթոռս, թէպէտ և ոչ սկիզբն, սակայն զվախճանն գեղեցկապէս յանդեաց։ Ըստ որում Դաւթին առաջարկութիւն և Սողոմոնեան եզրակացութիւն տեսանի։ Վասն զի յառաջ քան զսա սրբազան և երջանիկ հայրապետն Մովսէս, որ էր Սիսական նահանգէ անհամեմատ գտեալ /// դիս, զոր ոչ ոք

կարասցէ ըստ քանիօնութեան նորայ արտավրիպել, և զի՞ է քեզ, կալչիր նպատակ զՊարթեն Սահակ կամ զմեծն Ներսէս, ըստ բնութեան բարուցն, ըստ մաքրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացիցն, ըստ առաւելութեան արդեանցն ի վերայ ազգիս և ըստ այլոց ամենայնի, զոր յայլում վայրի պատմագրեալ արտասանեցիցս։ Սա երիցս չոգաւ առ թագաւորն Պարսից և յոյժ սիրեցաւ ի նմանէ, որով և աղատեաց զաթոռս մեծի դիմոսական հարկաց ծանրագունից, որ յանուղղագործ առաջնորդաց ազգիս մտեալ էր սա ի ներքոյ չարագոյն լծոյն այնորիկ, խափանեալ էբարձ զայն երջանիկս դէտ շնորհօքն Քրիստոսի։ Եւ զկնի այնորիկ սկիզբն արար ի մաքրել զսա յաղբիւսից բազմակուտից,
833 լայնանիստ պարսպօք բոլորեաց և զերից կող//մանց շինուածսն աւարտեաց, որ ինչ միանդամ ըստ հարկաւորութեան և ըստ պատշաճաւորութեան պիտոյանայր, քարիւ և կրով կարծրակառոյց ամրութեամբ, նաև գկմբէթ մեծի տաճարիս ի բաց առեալ շքեղացոյց, քանզի էր խարխալեալ և կարի նիստ։ Եւ յետ այնորիկ եղև զրաւ կենաց իւրոց, փոխեցաւ աստուստ յանմահական կեանսն ի հազարերորդ ութներորդ երկրորդ (1633) թուոյս մերոյ, գոլով վաթսուն ամաց[6]։ Կացեալ յաթոռն հայրապետութեան ամս չորս և ամիսս ըստ ամացն[7]։ Իսկ զկնի երանելւոյն փոխանորդեաց աշակերտ նորին՝ տէր Փիլիպպոս դիտապետս, զորմէ նախ ճառեցաք։ Եւ սա եցոյց զթերին, քանզի զտանիս սբ. աթոռոյս պայծառապէս նորոգեաց մինչև ի գոտին և զբրգունսն եռակի, զդրունսն երից կողմանց, և զաստիճանսն շուրջանակի և զարևելեան ձեռակերտսն, և զայլ ամենայն շինուածս ըստ։ պիտոյից սորա։ Ընդ որոյ հովանեաւ և մեք ընդ յոքունս բարւոք տնօրինեալ խնամիմք և տածիմք։ Զոր շնորհեսցէ մեզ տէր Աստուած խորագոյն խաղաղութեամբ և յաւէտ իմն յարամնայական ամօք կալ մնալ բարի հովիւ, ի պատճառս սոփութեան վարատեալ ազանց մեր։

Եւ ևս ըստ որում յառաջագոյն յիշեցաք զպանծալի և զբազմաշնորհ վարժապետն Խաչատուր, որ է այցելու ազգի մերոյ բնակելոց ի մայրաքաղաքն Շօշ առձայնեալ, այր կորովամիտ և արուեստահանճար, հեղ քան զյոքունս և ընդունակ Հոգւոյն Աստուծոյ, որ և սահմանեաց տրպադրութիւն ի մէջ ազգիս որպէս Լատինացւոցն է և այնու յաճախեաց զբազմութիւն գրեանց։ Այլ և ի նմանէ տարածեցաւ արհեստ մատենագրութեան և երանգութիւն ոսկեզօծ ծաղկանց, որպէս ի գիրս մեր, քանզի անհետ էր եղեալ զայսու ժամանակաւ։ Արդ՝ մաղթեմ յիշատակել զպատճառ այսոցիկ իրաց ի պաղատանս ձեր յօժարական։ Եւ վասն զի խոյս կամիմ տալ յերկարաճառութենէ, յաղագս այնորիկ զանց առնեմ զբազում իրօք, յայլում ժամու պահելով շարադրութեան։

Արդ՝ ես ունայնազբաղ և զրաբազբաղս ներ օն անդր անդստին ի մանկութեան տիօք մինչև ցայս վայր երկոքումբք իրօք յետս /// կրկին գոյիւք թշուառացեալ պիտակ անուամբ Մովսէս, կոչմամբ աբեղայ,

---

[6] № 507 ձեռագրի հիշատակարանի վկայությամբ Մովսես Տաթևացու մահը տեղի է ունեցել 1633 թ. մայիսի 21-ին, երեքշաբթի, տե՛ս 1633 թ. շարքում (Բ հատ., էջ 504)։ Նշանակում է Մովսես Տաթևացին ծնվել է 1573 թ. (1633—60)։

[7] Այսինքն՝ 4 ամիս։

բայց արդեամբք խաբեբայ։ Ի բազում ամաց տենչագրաւ և ըղձապատար գոլով ի սէր այսմիկ փիլիսոփայական գծի և անկարանայի մատամբ իմով ծրել, սակս յոլովագոյն ցնորմանցս, որ պարփակեալ կայր զինև, քանզի ես չուառապէս մախիզեալս երկոցունց հայրապետացս քարտուղար եմ լեալ և ի նոցին ընթացից յոյժ տարակացեալ։ Վասն որոյ ընդ հայրապետիս իմոյ երթալն իմ ի Շօշ, ետ անտանօր գրել զսա ի զբոսանս անձին իմոյ։ Բայց մնաց անկատար և այսր աւարտեցաւ յայլ և յայլ գրչաց, նաև ոչ ըստ ախորժակաց իմոց, քանզի որպէս ահա տեսանէք ի բազում տեղիս եղծեալ եմ յաղագս սխալանաց և յոլով պակասս ի լուսանցսն գրեալ, իսկ և յոքնակի դրեալ թուղթս ի բաց եմ հանեալ և փոխանակ նորա զայլս ծրեալ և եղեալ ի տեղի նորա։ Արդ՝ թէպէտ ի սխալ գրչաց գրեցաւ, այլ սակայն ըստ կարի իմում և չափու ճշգրտապէս սրբագրեալ ստուգեցի զսա, որպէս պահանջէ արհեստ քերթողութեան, տարորոշեալ երիւք կիտիւք և առոգանութեան խրատու, եթէ ուրանօր սկզբունք բանից և եզերմունք մարթ իցէ գնել, գլխատառք և այլք ոմանք, ըստ որում կարծեմ ճշմարտահաս մտաց անտարակոյս և յաւէտ ուղղապէս իմանիլ և ճանաչիլ, որք իցեն իսկագոյն հրահանգեալք քերականութեան իմացուածով և անտուստ ապա ծանիցեն զաշխատութիւնս մեր։ Ընդ որում աղաչեմ յիշատակել յաղօթս ձեր և զխո||| և գովութեան մեծի արժանաւոր զմիւս Սիմէօն վարդապետն, հարազատ հոգւոյ իմոյ, որ ամենայօժար կամօք և զուարթագին սիրով զարդարեաց զսա ոսկեզօծ երանգօք, կցորդելով իմ ընդ նմա տպակաւք, որում Տէր լիցի փոխարինահատոյց ըստ աշխատանաց իւրոց։ Եւ ես մաղթեմ յիշել ի խնդրուածս արտասուաց և զհամաշունչ և զիսկապէս բաղձալիսն իմ զՅովաննէս վարդապետն և զԱռաքեալ վարդապետն այր նրբախօս յոյժ, զմիւս Յովհաննէս վարդապետն և զՄխիթար վարդապետն, զտէր Յոհաննն զօրինակ սրբագրութեան շնորհօղ և զաւագ սարկաւագն մտերիմ, ընդ միագումար եղբարբք հանդերձ, որք են ըստ կարի իւրեանց յօժանդակք սբ. աթոռոյս գործառնութեան։

Արդ՝ ըստ փոփոխման ամանակաց և հոլովմանց կենցաղոյս, որում լիցի ժառանգել զայս իմաստասիրական կտակ և վայելել զսա՝ հայցեմ հեծեծագոյ պաղատանօք յիշել զիս՝ զտառապեալս Մովսէս, սորին ստացող առ Քրիստոս յոյսն ամենից համօրէն գրեցելովք ի սմա, և զսակաւ յիշատակարանս դրոշմեալս յայսմ գծի մի՛ երբէք ի բաց հանել ի սմանէ կամ եղծանել։ Զի և ձեզ շնորհեսցի ըստ այսմիկ յապառնի [եկելոց] և փոխարինութիւն առ հասարակ պարգևեսցի մեզ և ձեզ յամէնառատ գթութեանցն Աստուծոյ, որ է աւրհնեալ անդբաւ յաւիտենից յաւիտեան. ամէն։

Բ

834 Եւ զստացող սմին յոգնապատիկ չարեօք ունակացեալս Մովսէս յիշեսչիք ի միտս բարիս առ ամենից ակնկալութիւնն Քրիստոս, զի բուժեալ ապաքինեսցէ զխըխայթութիւն անձին իմոյ, և նմա փառք ընդ Հօր իւրում և ամենասուրբ Հոգւոյն. ամէն։

8

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2368

Գրիչ՝ Ոսկան

48ա Շնորհք և գոհութիւն..., որ օժանդակեաց ինձ մեղսամակարտի և յուսավրիպի Ոսկանի ապիկարի և ապաշնորհի եզրահասանել քարտիսացս շարածրութեան սկզբմամբ ներթուում ՌԶ և Թ (1640)-ում, իսկ աւարտմամբ ներթուոշ ՌՂ (1641)-ումն, ամսեանն մետասաներորդում, որք աւուրք երեք էին նոյեմբերի ամսոյ, ծայրաւորեալ յերկիրն Ռուսաց, վերշաւորեալ յերկրիս Հայոց, ընդ հովանեաւ սրբոյ աթոռոյս էջմիածնի:

Մօրս լուսոյ Հայոց զարմի,
Ի ժամանակս յետնագունի,
Եւ յաւուրս Փիղիպպոսի,
Հայոց ազգի կաթողիկոսի։
Արդ՝ որք պատահիք՝ այսմ մատենի,
Իմաստասիրականս շարագծի։

Յիշեսջիք ի յարփի[ափ]այլ յաղօթս ձեր և յանուշահոտ մատուցմունս զվերոյ յիշատակեալ անունն և զթողութիւն յանօրինութեանց և սղալանաց խնդրեցէք, զի և դուք զմասն բարի ի Քրիստոսէ ընկալջիք յաւուրն վարձատրութեան և հատուցման. ամէն։

Նաև յիշեսջիք զհամօրէն դասս եղբայրականս, որք կան ի սպասու տաճարին արդեանս՝ զՅակոբ վարդապետն, որ է վերակացու, զՅոհանէս վարդապետն, զՍիմէօն վարդապետն, զծերունի տէր Բարսեղն, զՍահակ եպիսկոպոսն, զտէր Մովսէսն, զտէր Յոհաննն, զտէր Սարգիսն, զտէր Կարապետն, զտէր Յոհաննէսն, զԱւագան, զՅոհան, նաև ի փոքունցն՝ զՊօղոսն և զբարեմիտ մարանապետն՝ զՅոհաննն, որոյ տէր Յիսուս վարձահատոյց լիցի։

9

ԺԱՄԱԳԻՐՔ

ԹՁԶԴ, II, № 25

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Կ. Պոլիս

48բ ... Ես... Սարգիս սուտանունս գրեցի... ի լաւ և յընտիր օրինակէ ... Թումայի, որ փայլեաց... յերկիրս Քաջբերունի... ի սբ. ուխտս Մեծոփայ, որ և սա նորոգեաց զԱղաւիթս, որ էր ծեքեալ և եղծեալ ի սխալագիր գրչից և յանմիտ արանց, զոր հոգ յանձին կալեալ. ըստ իւրում կատարեալ իմաստութեան և տուեալ շնորհացն և աւժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ կատարեաց զսխալն ուղղելով և զաւելորդն բառ-

նալով։ Գրեցաւ... ի ՌՂԱ (1641), նոյեմբերի Թ (9)[8], ի մայրաքաղաքն Կ. Պալսի, ընդ հովանեաւ Ս. Գէորգայ ղաւրավարի, ի հայրապետութեան տէր Փիլիպոս արհ կաթողիկոսին։

10

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 144

193 Փառք...։ Աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թիւն Փրկչին ՌՉՃՀԲ (1672)[9] և թիւն Հայոց ՌՂԱ (1641) նոյեմբերի ԺԳ (13)[10]. ամէն։ Եւ դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ, և աստուածասէր, և երկիւղած յամենայնի, զհանգուցեալ պարոն Յովհաննէսն և կողակիցն իւր՝ զԵղսաբերթն, և դուստրն իւր՝ Թանկխաթունն, և թոռն իւր, որ հանգուցեալ է ի Քրիստոս՝ Վարթանէսն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհոգևոր պարոն Ռուստակէսն, և կողակիցն իւր՝ Թանկխաթունն, և հանգուցեալ զորդին իւր՝ զբարեմիտ Վարթանէսն, և զդուստրն իւր՝ Մապուրն, և զնորաբողբոջ ծաղկեալ թոռն իւր՝ զՅովանէսն և զՍաբուին. ամէն։ Վերջ։

11

ՅԻՍՈՒՍԻ ՈՐԴԻ

Երևան, № 2407

Գրիչ՝ Յոհան քահանայ
Վայր՝ Ըսպահան

348ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար և տարտամ ոգւոյ Յոհան քահանայիս ի հասանել յաւարտ գրոցս, որ կոչի Յիսուս որդի, յիշատակ ինձ և իմ ծնողացն։ Արդ՝ գրեցաւ ի սբ. գիրքս ի թուականիս Հայոց ՌՂ և մէկ (1641) նոյեմբերի ամսոյն ԺԴ (14), պատկեր օրն կիրակի[11], ի
318բ Շաւղ քաղաք, որ կոչի Ըսպահան, ընդ հով//անեաւ <ի գուռն> Ս. Յակոբայ, ձեռամբ Յոհան քահանայի, ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպոսի, և ի հայրապետութեան մերոյ քաջ և բարուն Խաչատուր վարդապետին, իշխանութեան գեաւղաքաղաքիս Ջուղայոյ, իշխանաշուք պարոն խաւշա Սարֆրոազին իմաստնոյ և բարեպաշտի։

---

[8] Հայոց ՌՂ, ՌՂԱ, ՌՂԲ և ՌՂԳ տարեթվերը համապատասխանորեն սկսվում են 1640, 1641, 1642 և 1643 թվականների հոկտեմբերի 12-ին (շարժական տոմարով)։ Հետևապես Հայոց ՌՂ, ՌՂԱ, ՌՂԲ և ՌՂԳ տարեթվերի հոկտեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 31-ը պետք է նշել ոչ թե հաշորդ, այլ միևնույն տարում։ Անշարժ տոմարի հաշվով էլ հայոց ՌՂԱ նոյեմբերի 14-ը դարձյալ կընկնի 1641 թվականի մեջ։

[9] Լ. Մինասյանը ճիշտ կերպով ծանոթագրում է, որ փրկչական թիվը սխալ է նշված, պետք է լինի «ՌՉՃԽԲ», որովհետև ձեռագրում պահվել է նաև 1665 թ. հիշատակարանը։

[10] Տե՛ս 8-րդ ծանոթագրությունը։

[11] Տե՛ս ծանոթ. 8-ը։ Իրոք, եթե հայոց ՌՂԱ թվականը հաշվենք 1642, այդ դեպքում այդ տարեթվի նոյեմբերի 14-ը կլինի երկուշաբթի, իսկ եթե հաշվենք 1641, նոյեմբերի 14-ը կլինի կիրակի, ինչպես նշված է հիշատակարանում։

Արդ՝ աղաչեմ զմանկունս սբ. եկեղեցոյ, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհայրն իմ՝ տէր Մկրտիչն, *և զմայրն իմ՝* Եզտիանն, *և զեղբայրն իմ՝* Կարապետ *վարդապետն,* Գրիգորն, Ազարիէն *և զքոյրն իմ՝* Գուլումն, *և հանգուցեալ*
349ա *եղբարքն և քորքն իմ՝ մի բերան ողորմեսիւ յիշեցէք // և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ դալըստեանն...։*

Եւ դարձեալ յիշեցէք ըզգծող սորայ Յոհան *քահանայս և զկողակիցն իմ, և զորդիքն իմ՝* Մանուկն, Պողոսն, *և զհանգուցեալ որդիքն իմ՝* Մարտիրոսն, Պետրոսն, *և դուստրն իմ՝* Անայի, *յիշեցէք, ով սբ. ընթերցողք, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։*

12
ԱՒԵՏԱՐԱՆ

Ցովհաննէս, № 42 (1615) թ.)

Գրիչ՝ Վարդան երէց

4 *Յիշատակ [է] այս սբ. Աւետարանս* Յալթեցի[12] Աբրիկեան *եղբօր* Շարպաթին, Ասլանին, *հօր* Մուրատին, *մօր* Մելեամին, *կողակցոյն՝* Մարիամին, *միւս կողակցոյն՝* Թուրվանտային, *հարսերուն՝* Կուլիսաանին, Մարիամին, *որդոցն՝* Սիմէոնին, Աստուածատուրին, Պաղասարին, *միւս մօր* Խրմզին, *միւս հարսին՝* Անապխանին, Մարիամին *և այլ միւս որդոց* Յախինանին, Պաղտասարին, Ղումսարին, Ռուրփանին, Մարքսային, Յակոբին, *մօր* Գուրզոյին, *զոքանչին՝* Ճեճանին, Զմրուքին։ *Ով եղբայր, ի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և Աստուած յիշէ ի ձեզ յիւր միւսանգամ գալստեանդ. ամէն։ Գրեցաւ թվին ՌՂ (1641), նոյեմբեր Իէ (27)[13] օր[ն] շաբաթ, ի վայելումն Ս. Յակոբ եկեղեցուն, ի ձեռն* Վարդան *երիցուն։*

13
ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան, № 762 (ԺԴ դար)

Նորոգող՝ Արիստակէս

ՃԲ Զ*Արիստակէս գրիչ յիշեա, ով եղբայր, և զնորոգօղս։ Թվին ՌՂ (1641)։*

---

12 Ձեռագրում՝ «ղթեցի» ձևով։

13 *Սույն հիշատակարանի տոմարական հաշվումը մեր կողմից նախորդի սկզբունքով չի կատարվել։ Եթե № 11 հիշատակարանի հայոց «ՌՂ և մէկ» տարվա նոյեմբերի 14-ը հաշվել ենք 1641 թվականի մեջ և ոչ թե 1642 թվականի նոյեմբերի 14 (տե՛ս ծանոթ. 11), ապա նկատի ենք ունեցել հայոց շարժական տոմարի հաշվման սկզբունքը։ Այդ սկզբունքով ենք կատարել նաև այն հաշվումները, որտեղ բացակայում են ամսաթվի օրվա պատկերը կամ գրչության վայրը (տե՛ս №№ 7, 8 հիշատակարաններ)։ Սակայն սույն հիշատակարանում ամսաթվի հետ տրված է նաև օրվա պատկերը՝ հայոց ՌՂ տարեթվի նոյեմբերի 27-ը շաբաթ կլինի 1641 թվականին, իսկ 1640 թ. նույն ամսաթիվը կլինի ուրբաթ։ Ուստի հայոց ՌՂ թվականի նոյեմբերի 27-ը նշել ենք 1641 թ. շարքում։*

14

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 784

Գրիչ՝ Մաթէոս

ա

249բ Ով դասք սբ. և պատուական կրաւնաւորաց, որ միշտ ընթեռնի/ոյք զաստուածաշունչ սբ. գրեանս, արդ երես անկեալ աղաչեմ առ ոտս ձեր, յորժամ ընթեռնոյք և կամ թէ օրինակէք, յիշեսջիք զՄաթէոս զանարժան ի սբ. յաղօթս ձեր հանդերձ ծնաւղաւք և ամենայն ազգականօք. ամէն։

Եւ ի թուականիս ՌՂ (1641) գրեցաւ։

բ

257բ . . . . . .

Որ ընթեռնուք զայս մատենին,
Եւ սքանչանայայք ընդ վարս նոցին,
Տուք ողորմի այսմ դրաւղին,
Եւ ընդ նմին իւր ծնաւղին՝
Մարտիրոսին, Վարդ-խաթունին
Եւ եղբարցն՝ Սիրունին,
Եւ միւսոյն տէր Գրիգորին,
Եւ ասողին և լսողին,
Տէրն ողորմի հազար. ամէն և եղիցին։

գ

75ա Եւ զՄաթէոս զանարժանին,
Մաղթել զՏէրն ամենայնին
Յերկարացնել ոչ ինչ աւգտին,
Աղաչեմ զձեզ ընթերձող սոցին,
Մի՛ ողորմի ասել բաղմայմեղիս։

15

ԳԻՐՔ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԵԱՆ ՊՕՂՈՍԻ ՏԱՐՕՆԵՑԻՈՑ

Երևան, № 840

Գրիչ՝ Թասալէ
Վայր՝ Պալխ

191ա Շնորհիւ Տեառն անկեալ աւարտեցաւ հոգելից տառս որ կոչի [ ][14] աստուածայհարն [ ][15] ի թվականիս Հայոց ՌՂ (1641)-ումն, գրեցաւ յերկիրն Պալխ, ձեռամբն անարժան Թասալէ և իմ ծնողացն. ամէն։

---

[14] Նախապես գրված է «Մաղմոսարան» և ապա ջնջված է։

[15] Նախապես գրված է «Մարգարէից Դաւթի» և ապա ջնջված է։

16
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Երևան, № 1365

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Կ. Պոլիս

279ա *Փառք..., որ ետ կարողութիւն ապիկար ծառայիս հասանել յաւարտ գերահրաշ գրոց պրակիս Առաքելոց մեկնութեանս։ Արդ՝ եղև զրաւ սորին ի թվին հայկազեան տոհմիս ՌՂ (1641) ամին, ի մայրաքաղաքս* Կոստանդինուպոլսի, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին, ձեռամբ մեղապարտ և անարժան* Խաչատուր *երիցուս։ Որ և հանդիպեալ յայսմ ամի ի* Կոստանդինուպոլիս *եռամեծն և քաջ հռետորն* Խարբերդցի Արիստակէս *վարդապետն, և հարկեալ մեծ հրամանէ նորին, յանձն առեալ գրեցի զգերահրաշ մեկնութիւնս Գործոց առաքելոցն, յիշատակ մաքուր հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց [աէր* Կիրակոսին *և* Հոիփսիմէին*] և եղբարցն՝ [*Ստեփանոսին, Խըաըշային *և* Յուսիկին*]*[16]*, և ամենայն արեան մերձաւորաց նորին։ Արդ՝ աղաչեմ արտասուալի դիմօք զսրբասնեալ դասս բանասիրացդ, որք հանդիպիք այսմ հոգիաբուղխ տառիս, յիշեսջիք աղօթիւք ի Քրիստոս զսորին ստացօղն, զսրբասնեալ հայրապետն զտէր* Արիսաակէս *վարդապետն, և զաշակերտին իւր՝ զտէր* Թադէոս *վարդապետն, որ բազում աշխատանք ունի ի վերայ մեկնիչիս և զծնօղսն նոցա, և զիս զանարժան հէքս և աղկաղկ գրչակս՝* զԿեսարացի, Խաչատուր *երէցս, և զծնօղսն իմ՝ զմահտեսի* Սաառադայն *և* զԿուլուզայն*, և զհանգուցեալ որդիքն իմ՝* զԹորոսն // *և* զՍտեփանոսն, զԱննան, զՄարիամն *և* զՍալոութն*, որ առ Աստուած փոխեալ են, և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Աղաչեմ յիշել...։*

279բ

17
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1393 (ԺԷ դար)

170ա *Զվերջի ստացող սբ. մատենիս, որ ասի Քաղաւածու սբ. Աւետարանիս, մահտեսի* Նիկողայոսն *որ ստացաւ զսայ ի հալալ վաստակոց իւրոց և ետ իւր որդոյն՝* Պողոս *սարկաւագին։ Թվին ՌՂ (1641). ամէն։ Արդ՝ որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյ գրեալսն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։*

---

16 *Ուղղանկյուն փակագծերում եղածը բացակայում է ձեռագրում, և տեղը դատարկ է, այն լրացրինք Մատենադարանի № 2039 ձեռագրի նույն անձնավորության 1624 թ. հիշատակարանի տվյալներով։*

18

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1862

Գրիչ՝ Ըսամանոս

ա

65ա *Ստացող Պատմագրիս զքաշ և իմաստուն* Սահակ *վարդապետ* Ջուղայեցիս *յիշեցէք, որ փափագանօք ետ գրել։ Եւ ես նուաստ և անպիտան, և սուտանուն* Ըռամանոս *գրիչս յիշեցէք։ Ի թվականիս Հայոց ՌՂ (1641) ամին գրեցաւ։*

բ

134բ—135ա լուսանցքում *Յիշեցէք զստացող սորայ [զ*Սահակ *վարդապետն] ///[17] թվին ՌՂ (1641) գրեցաւ։*

գ

145ա լուսանցքում *Զ*Ըռամոնս *անարժան գծողս աղաչեմ յիշել ի Տէր։ Թվին ՌՂ (1641)։*

դ

63բ *Բարեխօսութեամբ սբ. և մաքուր, քաջ և յաղթող զօրաւարին և նահատակին* Վարդանայ, *և ամենայն ինքնանուէր պատարագեալ բանակի նորին ՌԼ և Զ (1036) նահատակացն, մանաւանդ մաղթանօք սբ. և ընտրեալ* Ղևոնդեանց *քահանայիցն, վարդապետացն և հայրապետացն ողորմեսցի տէր Աստուած զտէր* Սահակ *կրօնաւոր, քաջ և արիհ, շնորհալից կատարեալ որ և աշակերտեալ և ուսեալ ի գիրս աստուածային և կարգ առեալ հրեշտակաց ի ձեռն բաբունի և քաջ արհի* Խաչատուր *վարդապետէ, ըստացաւ գրել զայս գիրս վասն ընթերցման կատարելոց ի հասանել բանից։*

19

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1979 (ԺԴ դար)

418ա *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս բարի մտօք* զԱկրնցի *խօջայ* Մուրատն, *և զծնողսն իւր՝* Բայինդուրն, Մունարին, *և եղբարսն իւր՝* զԲանդուրն *և* զՍարգիսն, *և զամենայն արեան մերձաւորսն իւր, որ գնեաց զգիրքս և վերստին շնորհեաց սբ.* Էջմիածնայ, *զոր գերեցին զգիրքս, և խօջա* Մուրատս *գնեաց և վերստին շնորհեաց* Էջմիածնայ. *վասն որոյ եղիցի սմայ մասն և բաժին հոգևոր բարութեանցն* Էջմիածնայ *յարքայութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։*

Ի թուականութեանս Հայոց ՌՂ (1641)։

---

[17] *Ուղղանկյուն փակագծերում եղածը եղծված է ուրիշների կողմից, չընթերցվեց հաջորդ բառը։ Վերջինս գուցե պետք է լինի «Ջուղայեցիս»։*

20
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2326 (ԺԴ դար)

422բ Յիշատակ է արտաքին փիլիսոփայական Ե (5) դիրքս Բաբերդացի Մինաս վարդապետին և իւր ամէն արեանառու մերձաւորացն և ծնողացն, և ազգականացն ամենեցուն. ամէն։

Աստուած բարով վայել տացէ իւրն հաստատ աստիճան վարդապետական դաղանօն։ Թվին ՌՂ (1641)։ Խնամով՝ Բ (2) Դ (3) լաթով պահօղն՝ Աստուած աւրհնեսցէ։

21
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 2404

Գրիչ՝ Գայանէ
Վայր՝ Ամատարանց

ա

287ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ զսա ձեռամբ փծոյն և անիմաստ գրչի /... /. ///... /. ///. /.....[18] կոչեցելոյ, ի յերկիրն Աղբուանից, ի գեաւղաքաղաքն Ամատարանց, ընդ հովանեաւ սբ. եկեղեցոյս Յարութիւն կոչեցելոյ, ի թվարերութեան Հայոց տաւվմարի Ռ և Ղ (1641)-երորդի ամի, և յիշխանութեան Պարսից փոքր շահ Ապազին, և ի կաթողիկոսութեան
287բ էջմիածնի տեառն Փիլիպոսի, և // Աղվանից տեառն Գրիգորի, և հայրապետութիւն մերոյ գաւառի Յոհանէս եպիսկոպոսի։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեանսդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք...։ Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշել ի յաղաւթս ձեր
288ա զբարբտաշան և բազմաերախտ և զքաղց[ր]ագութ հոգևոր հայրն // իմ՝ տէր Առաքեալն, որ բազում աշխատութեամբ սնուց զիս խրատու և ուսմամբ սբ. գրոց, ընդ նմին և զհարազատ քոյրն իմ, զհոգևոր ծնողն՝ Հրոիփսիմէն, որ մանկութեամբ դաստիարակեաց զիս, և հասարակ միաբանք սբ. ուխտին, զոր տէր Աստուած անփորձ և [ան]սասան պահեսցէ մինչ ի խորին ծերութեան. ամէն։

Ստացող՝ պարոն Ջանում

բ

Կամաւ անեղին ես՝ պարոն Ջանումս առա զսբ. գիրքս, որ կոչի Մաշտոց ի արդար վաստակոց իմոց, ետու ի ձեռն Մարտիրոս քահանայն, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Պապին և մօրն՝ Մանպուպին, և կողակցին իմոյ՝ // Շահումին, և որդոց և դստերաց իմոց, և
288բ ամենայն արեան մերձաւորաց...։

Դարձեալ ով որ զայս գիրքս ի ձեռաց տէր Մարտիրոսին առնուլ կամենա՝ եթէ որդոց իմոց, եթէ աւտարաց՝ երեսաց Տեառն անկեալ լիցի ահեղ դատաստանին. ամէն։

[18] Կարդացվում է «Գայանէ»։

22
ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 2454

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Աղուերձ

ա

233ա Դարձեալ և ես անարժան և մեղաւոր, անիմաստ և սուտանուն Յովանէս երէցս գրեցի Շարակնոցս, [ի] դուռն Ս. Ըստեփանոսի Նախավկային, դեղն որ կոչի Աղուերձ, թիվն ՌՂ (1641)։

Ստացող՝

բ

333բ /// և առի այս Շարակնոցս հալալ ինչից իմոց, յիշատակ հոգոյ իմոյ և իմ ծնողացն, հաւրն իմոյ՝ Ավանիսին և մաւրն իմոյ՝ Փաղին, և կողակցին իմ՝ Խանումին, և եղբայր իմ՝ Յիսային, նորա կողակցին՝ Մարիամին, իւր որդի Յովանիսին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, դուստր Եղուրին, որ հանգուցեալ է /// եղբաւր որդի Դարմանին և իւր կողակցին՝ Գոզալին, և որդին իւր՝ Յոհանին, Ղազարին, և իմ քուերն՝ Նանայգո[ւ]լին, պապն իմ՝ [Փ]իրսուլթանին։

23
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 2664

Գրիչ՝ Աստուածատուր ղպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

661ա Փառք...։ Արդ՝ այս ամենայն բարութեանս և աստուածային գանձուցս փափաքող եղեալ աստուածամեծարն և աստուածարեալ անձն, աստուածունակ և երիցս երանելն, Սեբաստացի Թորոս վարդապետն, և ետ գրել զսա և ըստացաւ յիշատակ բարի յինքեան և բարի նախնեաց իւրոց փոխեցելոցն ի Քրիստոս։

Արդ՝ եղև սկիզբն գրոյս և աւուրտումն ի Կոստանդինուպալիս, ձեռամբ Աստուածատուր դպրի, ի թուականութեանս Հայոց ՌՂ (1641) ամի, ընդ հովանեաւ սբ. եկեղեցեացս Ս. Նիկողայոսի և Ս. Սարգսի։ Եւ է պատճառ դրելոյս այս. նախ՝ վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեան. երկրորդ՝ յիշելով զբան մարգարէին որ ասէ, թէ «Երանի...»։ Վասն որոյ և ետ գրել զսա յիշատակ բարի մինչև ի գալուստն Քրիստոսի, և ընծայեաց հաւրն երկնաւորի, բարեխօս արկանելով առ նա...։ Վասն որոյ կանգնեաց զսա իբրև զարձան յաւիտենական, զի զկնի եկեալքն տեսցեն զյիշատակ սորա...։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան
661բ զհանդիպող//քդ յայսմ Աստուածաշունչ մատենիս, որք ընթեռնոյք զսա կամ աւրինակէք և կամ գաղափարէք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստացող սորա, զպատուական և զերշանիկ զԹորոս վարդապետ

զՍեբաստացին և զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս։

Բ

258բ Աստուածատուր դպրի՝ դրիչ տառիս,
Մաղթեմ յիշել ձեզ ի բարիս։

Ստացող՝ Թորոս Սեբաստացի

Գ

661բ Դարձեալ յիշեցէք զիս՝ ստացող սբ. Աստուածաշնչիս, զնուաստ Թորոս բանի սպասաւորս և զհոգևոր հայրն իմ և զուսուցիչս, զտիպն տիրական և պատկերն աստուածանման... մեծ դէտն և դիտապետն, աստուածադիր եպիսկոպոսապետն, զպատրիարգն Յերուսաղէմի և զկաթողիկոսն ամենայն Հայոց մեծաց տան Կիլիկոյ տէր Սիմէոն, զոր ի յայսմ՝ ի սոյն ամի աղգմանէ Հոգոյն Սրբոյ շարժեալ ի կամս բարիս խորհի ի միտս իւր երթալ ի յերկրպագութիւն փառաւորեալ քաղաքին սբ. Յերուսաղէմայ, ընդ ինքեան ունելով զիս զմեղաւոր, զնուաստ ծառայակիցն զԹորոս բանի սպասաւորս, զստացող սբ. տառիս, և զայլ միաբան եղբարս, զվարդապետս, զեպիսկոպոսունս, զճգնազգեաց աբեղայս և զկրաւնաւորս, այլ և զփառաւոր իշխանս և զտանուտեարս տանս Կիլիկոյ։ Եւ ուղի անկեալ մեծաւ փափաքանաւք և ըղձալի յուսով դիմեաց ի սբ. քաղաքն Յերուսաղէմ, զոր տէր Աստուած մեր շահ անշիջանելի պահեսցէ ի ծոց եկեղեցոյ և ի մէջ աշխարհի, ի պարծանս մեր և յուրախութիւն քրիստոնէից։ Զոր յոյժ աշխատանս ունի ի վերայ ինձ հիգոյս, զի էի պանտուխտ և նշդեհ և ի յարելս իմ առ մեծաշուք անձն, զոր և ընկալեալ շնորհեաց ինձ աստիճան եպիսկոպոսութեան, և յաւել ևս ի վերայ շնորհեալ ետ ինձ առնել գաւազան իշխանութեան հոգևոր հաւրէն իմէ, պատուական ծերոյն Դանէլ քաշ հռետորէ և աստուածաբան վարդապետէ Անթփցոյ, զոր և տէր-մեր Յիսուս Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց... վարձատրեսցէ իւր զհարիւրեան, նաև ընդ սմին յիշեցէք զհոգևոր ծնօղս և զսնուցիչն իմ՝ զՂուկաս եպիսկոպոսն, որ հանգուցեալ է ի Քրիստոս։ Այլ և յիշեցէք զամենաիմաստ, զհանճարեղ իշխանքն տանս Կիլիկոյ զհաւատարիմ բարեկամքն զտեղի մխիթարութեան իմոյ, որ յոյժ սիրով հոգոյն են ինձ հիգոյս Թորոս բանի սպասաւորիս, յուսադրողք զպարոն խոճայ Մուրատն և զխոճայ Լաչին, մանաւանդ խոճայ Մինասն, որ յոյժ յաշխատանս կրեաց վասն Աստուածաշնչիս ծախիցն պակասութեան, որ ետ զգինն որ մնացեալ էր, և էառ ի Կոստանդինուպոլսէ և ողարկեաց առ մեզ. զոր տէր Աստուած մեր վարձահատոյց լիցի իւրն ի միւսանգամ գալստեան իւրոյ։ ...Դարձեալ յիշեցէք զսիրելի հոգևոր հայրն իմ՝ զպարոն խոճայ Պայրամն և զպատուական եղբայրն իմ՝ զխոճայ Զինին. որք յիշեն՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ. ամէն։

Դրիչ՝ Գրիգոր

Դ

3ա Եւ զսակաւ գծագրող ցանկիս զԳրիգոր, աղաչեմ յիշել։

24
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3273

Գրիչ՝ Սահակ արեղայ

ա

136բ Կատարեցաւ գիրք հինգերորդ[19] շնորհօքն Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ մեղօք լցեալ Սահակ արեղայի, թվին ՌՂ (1641) հայ տոմարի։ Ով ոք ասէ ինձ մի ողորմի՝ Քրիստոս իւրն ողորմեսցի. ամէն։

բ

141բ Այս չափս վասն այն չգրեցի, որ թուղթըն դուրս կանցնէր[20]. թողութիւն շնորհեցէք մեղաւորիս։

25
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 3333 (1496 թ.)

Նվիրատու՝ Բաւրաշ

243ա Արդ՝ ես նուաստ և ծառս Յիսուսի Քրիստոսի հանապազ աւր ըստ աւրէ ո[րպէ]ս հրամէ ի սբ. Աւետարան, թէ «Երանի...»։ Վասն այս պատճառի համար, որ յանկարծակ փորձանաց հանդիպեցաւ՝ եղբայրն իմ՝ Բերին, տվին նորան սպանեցին. շատ շանացին յ[?]ս[21] ամենայն, և մէջ եկին, նորա բանն շարիատ արին։ Վասն նորա հոգուն ես՝ Բաւրաշս և իմ մայր Գուլիստանս առանք զսբ. Աւետարանս, դրինք վախմ ի դուռն Նորայկնունք Ս. Աստուածածնայ յիշատակ։ Ինչ մարդ այս վախմըս, այս եկեղեցւոյ դրանէն [հեռացուցանէ՝] մասն Յուդա[յ]ի առցէ և նզովքն Կա[յ]ենի։

Գրեցաւ յիշատակարանս թվին ՌՂ (1641). ամէն։

26
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 3858

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ասպահան

ա

285ա Որ ողորմի Տէրն ամէնի,
Հոգւոյ սորին ստացողի,
Զի գրեցաւ սա ի թուի,
ՌՂ և երկքառի (1639)։
Ի դուռն Սրբոյն Թովմայի,
Ձեռամբ տրուպ Գրիգորի։
Որ յիշման առնէ արժանի,
Յիշեալ լինի ինքն ի բարի։

---

[19] Խոսքը վերաբերում է «Աստուածաբանական ճշմարտութեան» գրվածքի հինգերորդ գլխին։

[20] Ձեռագրի 141բ էջում գրված է երկու տող և այնուհետև էջը դատարկ է, որովհետև թուղթը վատորակ լինելու պատճառով մելանը ծծվել է։

[21] Այս բառը գրված է հապավված և եղծված է։

Յորժամ գայ Տէրն ամենի,
Այց արասցէ յաշակողմի.
ամէն։

Բ

285բ Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զաստուածախաւս և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս ի լօ և ի յնտիր օրինակի, ի թվականիս Հայոց ՌՂ (1641) ամին, ի քաղաքիս Շօշ, որ կոչի Ասպահան, ընդ հովան[ե]աւ Ս. Աստուածածնին և Ս. Էշմիածնին, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոսին և տէր Խաչատուրին, ի թագաւորութեան այլասեռից շահ Սէֆուն, ի դառն [ե] ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, զոր տացէ տէր Աստուածն մեր, պահեսցէ զամենայն ազգս քրիստոնէից, ընդ ամրածածուկ աշովն իւրով. ամէն։

[Ա]րդ որք ճաշակէք և վայելէք ամէն առատ սեղանոյս և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՄէրտատիկն, որ ստացաւ զսա
286ա հալ// ալ ընչից իւրոց, հոգւոյ իւրոյ և ամենայն արեան մերձաւորացն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄէրտատիկն, և զհայրն իւր՝ Մատուրն, և զմայրն իւր՝ Ալփսալէն. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Դաւութն և զհայրն իւր՝ Բաբաքն, և զմայրն իւր՝ Մէրումն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Դաւութն, և կողակիցն իւր՝ Մէրտատիկն, և որդիքն իւր՝ Ոսկանն, Յովանէսն, և դուստրն իւր՝ Խառմսիմէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄէրտատիկն, և զհանգուցեալ որդիքն իւր՝ Բաբաքն, Տէրոնն, Սարասն. և դստերքն իւր՝ Թառղումաշն, Սալվերիխանն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ոսկանն, և որդիքն իւր՝ Նեկաղոսն, Գրրումրն, և դուստր իւր Մուրատիկն, Յովանէսն և որդին իւր՝ Մատուրն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄէրտատիկն, և եղբայրն իւր՝ հանգուցեալ ի Քրիստոս զՍաֆարն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զԴաւութն, և զեղբայրն իւր՝ Մարգարէն. ամէն։

288բ Դարձեալ յիշեցէք Դաւութն, և զհայրն իւր՝ Մատուրն, և զմայրն իւր՝ Մէրումն, և զեղբայրն իւր՝ Մարգարէն, Եղգարն, յիշեցէք...։

Գրիչ՝ Յաւրիկ

Գ

Յիշեցէք Յաւրիկ, ծառայ Աստուծոյ Յիսուս Քրիստոսի. ամէն։

27

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 3992 (ԺԵ դար)

Հետ. ստացող՝ Փիլիպպոս Կեչառեցի

481 Փառք... Ես՝ Կեչառեցի մեղաւք զառածեալ և գործով անարժան Փիլիպպոս էրէցս, որդի գոլով տէր Սահակին[22], գնեցի զսբ. Աւետարանս

[22] Ձեռագրի 181-րդ էջում անվարժ գրչությամբ գրված է «Աստուած ողորմեայ Կեչառեցի Սահակ իրիցի[ս]»։

482 ի հա//լալ ընչիւք իմօք և ետու կազմել և կոստղել, յիշատակ ինձ և կողակցին իմոյ՝ Խաթունճանին. ամէն եղիցի։

Արդ՝ խնդրեմ պայծառ ընթերցողացդ՝ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր, զիս անարժանս զՓիլիպպոսս, որ անուամբ միայն կոչիմ քահանայ և ոչ գործով կատարեալ լինիմ, և զծնաւղքն իմ՝ զտէր Սահակն, և զՇահնումրն, և զկողակիցն իմ՝ Խաթունճանն, և որդիքն իմ՝ Գրիգորն, Թամուրիան և Ալէքսանն, Յակոբճանն, Աբրահամն, Մովսէսն, Պետրոսն և Պօղոսն, և դստերքն իմ՝ Հուրիխանն, Թառղումաշն և Եփրիսիմէն և ամենայն ընտանիսն իմ. ամէն։

Եղև ի թուաբերութեանն. հայկազեան Ռ և Ղ (1641), և ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց կաթողիկոսի գրեցաւ ի դրան
483 Ս. Լուսաւորչին և Ս. Նշանին և Ս. Յարութէնին և Ս. Հռիփսիմին. որ է հան//գուցեալ Պոօղ իշխանն[23] և զպապէրն իմ՝ Փի[լ]իպպոս եպիսկոպոսն, տէր Յակոբն, տէր Գրիգորն, տէր Մկրտիչն և եղբայրն իմ՝ Սարգիսն։

Երես անկեալ աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, հանդիպօղք սբ. Աւետարանիս կարդալով կամ օրինակելով միով Հայր մեր որ երկնաւ։ Աստուած ողորմի ասացէք տէր Փիլիպպոսին և իւր ծնաւղացն և իւր ուստերացն և դստերացն և ամենայն արեանառու մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն և որք յիշէք և բոլորով սրտիւ Աստուած ողորմի ասէք՝ յիշեալ լիջիք և գուք առաջի ողորմածին Աստուծոյ...։

28

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 4130

Գրիչ՝ Պարսամ դպիր
Վայր՝ Կաֆայ

Յիշատակարան է գրոցս

887բ Փառք...։

888ա Ըստ այսմ օրինակի ջարժեալ ի շնորհաց Հոգոյն, եցոյց յինքեան իւրոյ պտուղ հոգևոր, բարեպաշտ և աստուածասէր, իշխանազուն և պերճապատիւ մահդասի խոճայ Աստուածատուրն հանդերձ կենակցաւն իւրով՝ Շամարպիխայիւն. յիշատակ բարեաց անջնջելի առաջի Աստուծոյ, հոգւոյ իւրեանց և վայելչագեղ և նորահաս որդոյն իւրեանց՝ Շանրն չէլէպուն, և ի Քրիստոս հանգուցեալ ծնօղաց իւրեանց խոճայ Տէրպապային և Ինինիպիխային, և եղբարցն՝ խոճայ Մրսրին և խոճայ Սարգսին և ամենայն արիւնառու ազգականաց իւրեանց՝ կենդանեաց և ննջեցելոց, որպէսզի սորին անբարբառ բարեխօսութեամբն և մաղթանօք պատահողացդ ողորմեսցի Քրիստոս Աստուած սոցա, և թողցէ զմեղս սոցա և զծնօղաց իւրեանց, և արժանիս արասցէ արքայութեանն երկնից, և տացէ երկար և անփորձ կեանս ինքեանց և դեռաբողբոջ որդոյն իւրեանց՝ Շանրն չէլէպուն. ամէն. և եղբարցն՝ խոճայ Մրսրին, և խոճայ Սարգսին. և խոճայ Յովանէսին, և Տէրպապային. ամէն։

[23] Ուղում է ասել, թե որտեղ են թաղված Պոռղ իշխանը և մյուսները։

Արդ՝ ստացան զայս աստուածային զանձս վերոյ ասացեալ քրիստոսասէր, արդոյապատիւ և պայազատ մահգասի խոճայ Աստուածատուրն և բարեսէր կենակիցն իւր՝ Շահարպիֆայն և յարդար վաստակոց իւրեանց, և ետուն զսայ յիշատակ ի ձեռն Առաքեալ վարդապետին[24], ի վայելս անձին իւրոյ և առիթ աղաւթից, որպէսզի անմոռաց յիշեսցէ զսոսա յաղօթս և ի պատարագս և յամենայն աստուածահաճոյ գործս։ Իսկ դուք հանդիպողքդ այսմ աստուածախօս սովփերիս, յիշեցէք բարի մտօք ի Քրիստոս զվերոյ ասացեալ խոճայ Աստուածատուրն և զկենակիցն իւր՝ զՇահարպիֆայն, և խնդրեցէք ի Քրիստոսէ, զի ցորքան պահեսցէ զսոսա յայսմ աշխարհիս ամենայն բարութեամբ, որ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ, որդովն՝ իւրեանց, անսասան կենօք մինչև ի խորին ծերութիւնն։ Եւ յետ աստեացս ելանելոյ ընկալցի ի դասս սրբոց և ընտրելոց իւրոց բարեխօսութեամբ սրբոյ վարդապետին մերոյ՝ սրբոյն Գրիգորի Տաթևացոյն և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՊարսամ նորաշան գրչակս, որ անուամբ դպիր կոչիմ և գործովս ոչ եմ արժանի, զհայրն իմ՝ զտէր Յակոբ քահանայն և զմայրն իմ՝ զՇահարպիֆայն, և զեղբայրն իմ՝ Իսկէնտէրն, նաև զուսուցիչն իմ՝ զընտրեալ սբ. և մաքուր զտէր Զաքարիա քահանայն հանդերձ ծնողիւքն իւրովք, յայս կեանքս զինքն ընդ երկայն աւուրս արասցէ...։

688բ Արդ՝ եղև սկիզբն և կատարումն աստուածախօս մատենիս ի մայրաքաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս, որ յանուն Ս. Սարգսի զօրավարին, ի թվականութեանս Հայոց ՌՂ (1641)[25], ի կաթուղիկոսութեան ընտրեալ և սբ. աստուածաղան հայրապետին տեառն Փիլիպոսին, որ ի գերագահ և ի հռչակածաւալ աթոռն Էջմիածնին, և ի վերատեսչութեան քաղաքիս տէր Խաչատուր եպիսկոպոսին, որ ի Ս. Խաչն Ղրիմայ, և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմին, որ ի Կոստանդնուպօլիս։

Արդ՝ աղաչեմք զմանկունսդ նոր Սիոնի, որք հանդիպիք այսմ արփիաւորիչ կտակիս, յիշեսջիք ի Քրիստոս սրտի մտօք զվերոյ ասացեալ զստացաւղքս սորայ և զգրողք սորա, և ըստ զանազան կերպի որպէս և իցէ զաշխատողքս սորա և մեղաց թողութիւն խնդրեսջիք և ձեզ թողցի յանցանք պարտեաց ձերոց. ամէն։

Դարձեալ կրկին և երեքկին աղաչեմ զպատահողսդ մի՛ առնիցէք զչար սովորութիւնն, որք հատանեն զյիշատակարանս գրոց, որպէս թէ զիւրեանցն գրեսցեն։ Արդ՝ ահա թողաք զկնի սորա յոլով թուղթ անգիր. եթէ կամիցիք, անդ գրեսջիք զձեր, և զմերս յիշատակ թողջիք աստ, զի պատահողացդ յիշեալք լիցուք ի բարիս և զձեզ յիշեսցէ Քրիստոս ի բարութիւնն արքայութեան իւրոյ ընդ ամենայն սբս. ամէն։

[24] Իմա՛ Առաքել Դավրիժեցին, ձեռագրի կազմել տվողն ու Քարոզգրքի նաև առաջին մասի ստացողը։ Որ այս անձնավորությունը Առաքել Դավրիժեցին է, տեսնել 1659 թ. շարքում։

[25] Ձեռագրի առաջին մասը՝ Ձմռան հատորը (էջ 1ա—352բ) ընդօրինակվել է 1659 թ., իսկ երկրորդ մասը՝ Ամռան հատորը (էջ 359ա—693ա)՝ 1641 թ.։ 1659 թ. Առաքել Դավրիժեցին այդ երկու հատորը կազմել է տալիս միասին։ Դրա համար էլ 1659 թ. հիշատակարանը ձեռագրի առաջին կեսում է՝ 349ա—350ա էջերում, իսկ 1641 թ. հիշատակարանը՝ երկրորդ կեսում՝ 687բ—688ա էջերում։ 1659 թ. հիշատակարանը տե՛ս իր շարքում։

29
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4217 (1331 թ.)

Նվիրատու՝ Խաչատուր վարդապետ
Վայր՝ Ագուլեաց վանք

272ա *Ի հազարերորդում և ինսներորդում (1641) ամի թուահաշուութեան հա[յ]կազեան տօմարի, ես՝ նուաստ Խաչատուր վարդապետս ետու նորոգ կազմել զսր. Աւետարանս ի սփոփանս բազմամեղ անձին իմ և եղի ի սբ. աթոռ Թումայի առաքելոյ՝ ի վանս Ագուլեաց, որում և էրն յառաջագոյն։ Իսկ արդ՝ որք հանդիպիք, աղաչեմ զի յիշեսջիք զիս հանդերձ ծնողօք իմովք և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ. ամէն։*

30
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4387

Գրիչ՝ Յովանէս

ա

115բ *Փառք...։ Եւ ես երես անկեալ աղաչեմ զձեզ, ով սբ. եղբարք, և ով ոք հանդիպի սբ. գրոցս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զյոգնամեղ անձն Յովանէսիս, որ սակաւ աշխատեցայ, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ։*

բ

90բ *Ոհ, ոհ թէ որչափ մեղաւոր է գրիչս։*

գ

157բ *Փառք...։ Թվական ՌՂ (1641)։*

31
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4836

Գրիչ՝ Թաթոս

ա

23բ *Կարդա, կարդա ով եղբայր և զԹաթէոս գծողս ի Տէր յիշեա։*

բ

250բ *Յիշատակ է սա Լմա[յ] անապատին՝ ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին, ձեռամբ Ստեփանոս վարդապետին և եղբարցն և աշխատաւորացն, յիշեցէք.. Ստեփանոս վարդապետին և եղբարց անապատիս, որ կան այժմ Կ (60) միակէց, հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ։ Ոչ ոք չունի հրաման հեռացուցանել զսա յանապատէս Լմայ, այլ կացցէ անջինջ յիշատակ հոգոց մերոց...։*

Գ

347բ լուսանցքում

Զշաղախեալ մեղօք Թաթոս գծողս յիշեցէք ի Քրիստոս։ Գրեցաւ սբ. դիրքս ի թվականիս Հայոց ՌՂ (1641) ամին։

Նվիրող՝ Ստեփանոս վարդապետ
Վայր՝ Լիմ անապատ

Գ

348ա

Յիշեցէք ի Քրիստոս զտառապեալս մեղօք զՍտեփանոս անուամբ ևեթ վարդապետ և առաջնորդ Լմայ Ս. Գէորգ անապատիս, որ հոգս տարաք և տուիք գրել զսբ. Մեկնիչս խորհրդոյ և աղօթից, արարեալ սրբոյ հայրապետին Ներսէսի Լամ[բ]ռոնոյ, ի վայելումն հոգևոր եղբարցս անապատի, որ քան զՇ (50) հոգի աւելի կան ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեան, ի թուականութեանս Հայոց ՌՂ (1641), ի կաթողիկոսութեան սբ. Էջմիածնին լուսապայծառ հոգով Փիլիպպոս սրբասնունդ հայրապետին, որք հանդիպիք սմա ընթերցմամբ Աստուած ողորմի ասացէք աշխատողաց և իարճի տուողաց և յարմարողացս գործոյս, և ինքն որ առատն է ողորմութեամբն, ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս՝ ողորմեսցի. ամէն։ Եւ կացցէ անջինջ յիշատակ ի դուռն Ս. Գէորգ զօրավարիս ի Լիմ անապատիս։ Ոչ ոք հեռացուսցէ ի դրանէ սորա, այլ լաւ պահողքն...։

32

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5567 (1601 թ.)

Կազմող՝ Աւետիս երէց

296բ

Զվերջին ստացաւղ լոյսաղարդ սբ. Աւետարանիս զԱւետիս անարժան Երէցս յիշեցէք..., որ կազմեցի ձեռամբ իմով, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց. և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ ՌՂ(1641) թուին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

33

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5848 (ԺԵ դար)

Նորոգող՝ Մովսէս երէց
Վայր՝ Ալամէք

156բ

Արդ՝ նորոգեցաւ վերբստին սբ. գիրքս, որ կոչի Մաշթոց, ի թվականին Հայոց ՌՂ (1641), ի գիւղս Ալամէք[26], ձեռամբ սուտանուն Մովսէս իրիցու, յիշատակ Թուխայ[27] Յովանիսին և իւր կողակցին՝ Շաղզաին, և որդոցն՝ Յակոբին և Յոհանիսին, և ամենայն արեան մերձաւորաց նորին, յիշեցէք...։

26/ Գյուղ Բաղեշից հյուսիս։
27/ Գտնվում է Բաղեշի հարավարևելյան կողմում։

34
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6256 (ԺԵ դար)

2ա Թվին ՌՂ (1641) ամին ձեռնա[ր]կեցо Ս. Նախավկայէն[28]։

35
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6363 (ԺԵ դար)

235բ [Ես՝ Փի]լիպոսս, ես՝ Յուսէփս մեր կամաւ Աւետ[արանս տուին]ք Մխիթարին, թվին ՌՂ (1641) էր. ի հայրապետութիւնն տէր Փիլիպոսին էր, [ի թագաւորութիւնն շ]ահ Սաֆոյն էր, ի խ[ա]նութիւնն Մահմատ խանին էր, մէլիքութիւնն Աստ[ուածատուրի]ն /// ազգականից. այլ և այլ անիցսն /// [ես՝ Կար]ապէտս վկայ, ես Գրիգորս /// ին Վարդայ-վա[ռ]ն ///

36
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՅՈՅՑ

Երևան, № 6423

Գրիչ՝ Վրթանիս

ա

210ա Փառք..., որ եդ կարողութիւն տկար և տարտամ անձին սուտանուն Վրթանիս անարժան ղպրի, որ անունս ունիմ միայն և ի գործոց բարեաց ունայն։

210բ Հայրն իմ՝ Յոհանէսն, և մայրն իմ՝ Մարիանն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, եղբայրն իմ՝ Կիրակոսն, և իւր որդի Աբրահամին, Հայրապետին, յիշեցէք...։

Ի թվականիս Հայոց ՌՂ (1641)։

բ

68բ Վրթանիս գրիչս յիշեայ ի Տէր։

գ

221ա Վրդանես, թիւականն ՌՂ (1641)։

դ

102բ ...Արդ՝ գրեցաւ ժամագիրքս որ կոչի Սաղմոսարան. և ի թվաբերութեանս հայկազնեայ տոհմիս ՌՂ (1641) ամին աւարտ եղև շնորհիւ Տեառն։

Արդ՝ ես ունայն ի բարեաց և փոյթս չարեաց, որ եմ լի ամենայն մեղօք և զանազան գործօք վիրաւորեալս Մարտիրոս եպիսկոպոսս, յերկրէն Արծկայ, զոր գնեցի զժամագիրքս ի հալալ ընչից իմոց, յիշատակ հոգւոյս իմում և ծնողաց իմոց ըստ մարմնոյ՝ տէր Յակոբին առ

[28] Նույնությամբ տե՛ս ՏԵՐԱՎՔ № 17, էջ 28։ Այստեղ տարեթիվը նշված է «ՌՂԱ» (1642)։

Քրիստոս փոխեցելոյ և մօրն իմոյ՝ Գուլփաշին, և երիցագոյն եղբայրն իմ՝ զԿիրսկոսն, և զկրսեր եղբայրն իմ՝ հարազատ զԱլէքսիանոսն, և զկողակիցն իւր՝ զԳուլումն, և զորդիսն իւր՝ զնորաբողբոջ և գեռաբոյս, նորանուէր քրիստոսակիր Յովհաննէս վարդապետն[29]։

37

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6778

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

302ա Փառք...։ Ես՝ ողորմելի գերիս և ամենայն մեղաց լիապէս գործաւոր Յոհաննէս, որ յառաջին շարեաց մինչ ի վերջինսն հանդերձ միջոցաւքն ոչ ինչ թողի զոր ոչ գործեցի...։

303ա ...Քանզի էր ուղղեալ զսա և հարստացուցեալ ցանկաւք և նախադրութեամբք երջանկին և հզաւր զաւրեղին ի խումբս մեծին Գեորգեայ։ Եւ ամենայն իրողութեամբ լի և պատարուն զարդարեալ՝ և՛ վճիտ, և՛ սեռն բայիւք, և՛ բառիւք, և՛ բաժանմամբք որպէս և տեսանիսս իսկ։ Եւ իմաստնոց միայն է յայտ, թէ որպէս կամ զինչ կայ ամբարեալ մթերք բարեաց բանի և՛ գծի, և՛ առոգմամբ քերական արուեստի, զոր թէ ոք մանրամասնաբար ի սմայ նայեսցի, գտցէ զսա հանգոյն և քատակ սրբոց թարգմանչացն սարասի, և յաւգտելն յոլով քան թէ սակաւ մխիթարի։...

304ա ...Եւ ես մեղաւորս, յերես անկեալ աղաչեմ զժառանգաւղսդ և ըղհանդիպողսդ սրբոյ այս կտակացս մեղաւորիս Յոհաննէս կրաւնաւորի թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք, նաև ծերունի հաւրն իմոյ՝ տէր Յակոբ քահանային, և մաւրն իմոյ՝ Սայիրի և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ ...Եւ սխալանացս ներեցէք և սիրով խոնարհեալ ուղղեցէք, զի որչափ էր ի մեզ կար՝ ջանացաք, և թէ գտանի սխալ՝ մեք ոչ իմացաք, բայց գիտնոցն կրկին մաղթեմ ուղղել։...

304բ ...Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն։ Եւ չար է սովորութիւնս այս, աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ։ Ապա թէ արժան է դրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի և ջնջէ՝ ինքն ջնջի ի կենաց գրոյն, ո ոք և իցէ՝ եթէ մեծ ոք և կամ փոքր։...

305ա Արդ՝ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՂ (1641), ի քաղաքն Կոստանդինուպալիս. ի դուռն Ս. Սարգսի զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր Փիղիպպոս ամենայն Հայոց կաթուղիկոսի, և մերոյս աթոռակալութեանն տէր Դաւիթ արհեպիսկոպոսի, զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ձեռամբ յոգնամեղ և մեղսամած, փրծուն և մոխրաթաւալ սուտանուն Յովանէս իրիցու, որ զանունս ունիմ և զգործն ոչ...։

305բ Այլ և յիշեցէք զծաղկաւղ սմա զտէր Դանիէլն, որ բազում աշխատութեամբ և մեծաւ ջանիւ ծաղկեաց և զարդարեաց զսբ. Աւետարանս։

[29] Շարունակությունն ընկած է։

Յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զծաղկողս, զստացաւղս և զգծողս։ Եւ որք յիշեէք՝ յիշեալ լիցիք յառաջի ահաւոր ատենին Քրիստոսի. ամէն։

Բ

240բ Եւ զեղկելի գծողս սուտանուն զՅովանէս երէցս աղաչեմ միով ողորմիւ յիշել ի Տէր. ամէն[30]։

38
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7040

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Լայուռ

105ա Յիշեցէք յաղօթս ձեր զշինող Լուսնացուցիս, զոր տաճիկն ըռոզլամայ ասէ, որ բազում աշխատութեամբ ի Ֆռանգաց տօմարէ շինած է զլուսնեակն և զարեգակն գնացմունք, որ անսղալ և անխափան ոչ կորուսանեն զժամն և զմասն, և գտանէ զխաւարումն արեգական և լուսնի, և բզծնունդն և զլրումն լուսնի, և ոչ բոպէ մի անցուցանէ, զի անանց և յաւիտենական է անխափան մինչև ի կատարած աշխարհի։ Յիշեցէք զՅովասափ Սեբաստիացին, որ դրեալ էր ի յընտիր օրինակէ զգովելի տառս, ի վայելումն բանասէր անձանց։ Եւ զվերջին գրող Առաքելս յիշեցէք ի յաղօթս ձեր և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։

Գրվեցաւ ի Հնդուստան, ի քաղաքն որ անուն Լայուռ կոչի, թվին ՌՂ (1641) ամին։

39
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 7219

Գրիչ՝ Մելքիսեթ Քօթահեցի
Վայր՝ Քօթահեայ

ա

292բ Փառք...։ Գրեցաւ Յիսուս որդիս ի թվին ՌՂ (1641) ամին, ի քաղաքն Քօթահեայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Թէոդորոսի
293ա զինաւորին, և Ս. Սարգսի զօրավարին, ձեռամբ // սուտանուն Մելքիսէթ անարժան և եղկելի, և մեղօք լցեալ աբեղայի Քօթահե[ա]ցի, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւր[ին]ակելով, Աստուած ողորմի ասացէք հոգևոր հօրդ իմոյ երիցս երանեալ, քաջ երաժիշտ և աստուածաբան վարդապետին Արիստակէս Տարօնացոյն՝ ուսուցչին իմոյ, ընդ նմին զհայրն իմ՝ Խուպեարն, և զմայրն իմ՝ զՍառան, և զայլ ամենայն արեան մերձաւորքն իմ և զմեղաւորս յիշեցէք...։ Ով պատուական եղբարք, մինչև ի յաւարտն հասուցի նա չորս օրինակէ եմ գրեր անմեղադիր [լեր]ուք, զի կարն մեր այս էր։

---

30 Նման մի հիշատակարան էլ տե՛ս ձեռագրի 160բ էջում։ Մեսաղյա կազմի վրա կա անթվական մի հիշատակարան։

Բ

238բ Փառք...։
Զեռամբ նուաստ և փցուն գրչի,
Մելքիսէք սուտանուն արեղի,
[Ը]նդ հովանեաւ Ս. Աստուածածնի,
Ս. Սարգսի և Թէոդորոսի,
Թվին ՌՂ (1641) ամի,
Եղև աւարտ այս բուրաստանի։

Գ

304բ Ով սբ. եղբարք և ծառայակիցդ, զանմիտ գծողս զՄելքիսէք սուտանուն Քօթանեացի աբեղայս յիշեցէք ի Քրիստոս և զծնօղս իմ, աղաչեմ։

40

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7371

Գրիչ՝ Աւետիք դպիր
Վայր՝ Կաֆայ

Ա

7բ Որ ողորմի Քրիստոս ստացողի գրոցս Սրսցի մահդասի Աստուածատուրին և կողակցին իւրոյ՝ մահդասի Շահարպիքայիին և Մարեամին, որդոյն՝ մահդասի Շահինին, և դստերն՝ Աղնային, և հարն՝ Իսկենտերին, և մարն՝ Աղնային և փցուն գրչի Աւետիք դպրի, կարդացողիս և լսողացդ...։

Բ

254բ Որում և ղստացող գրոցս Սրսցի մահդասի Աստուածատուրն... և զիս անարժան գրիչս Աւետիք դպիրս, և զմայրն իմ՝ զՍուսան և զհայրն իմ և զեղբայրն իմ յիշեցէք յաղաւթս ձեր։ Եւս առաւել յիշեցէք յաղաւթս ձեր զուսուցիչն իմ՝ զտէր Զահարիայ քահանայն, որ բազում աշխատանք կու կրէ ի վերայ մեր, Քրիստոս վարձահատոյց լինի նմա...։

Գ

607ա Փառք...։

607բ Արդ աղաչեմք զդասս քրիստոնէից, մանաւանդ զեշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սոփերիս, յիշեսջիք զստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի Սրսցի մահդասի խոճա Աստուածատուրն, և զկենակիցն իւր՝ զՇահարպիքայն, և զաւակացն՝ Շահինին և Աղնային, և իւր փեսին՝ տէր Աւգսենղին, իրիցկնոջն՝ Աղնային, և մարն՝ Մուրեամին, Սինանին, Պայրամլիին, Մքխալին և իւր հարն՝ Իսկենտէրին և մարն՝ Մարեամպիքային, Աղնային, որդոցն՝ Սինանին, Յովանէսին, Պայրամլիին, Մինասին, հօրեղբարցն՝ խոճա Մսրին, Սէֆէրին, Թուրապիին, Էսլէմէզին, Հիթումին, պապուն՝ Շահրնաճենց խոճա Մսրին և կենակցին իւրոյ՝ Ալթընպիքայիին. զի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով եւ գրել մահդասի Աստուածատուրն, յիշատակ հոգոյ և ի քաւութիւն սղալանաց և ի բարեխաւսութիւն անձանց...։

Արդ՝ գրեցաւ սա ի յամի թուականութեան հայկազան սեռի Ռ և Ղ (1641), ձեռամբ անարժան և թարմատար գրչի Աւետիք դպրի, որ անու-
608ա ամբս գպիր կոչիմ և ոչ գործով։ // Աղաչեմ զՀշմարիտ ծառայքդ Աստուծոյ, յիշեսջիք և զմեզ առ Տէր... և զծնաւղսն իմ, զհայրն իմ՝ զմահդասի Աստուածատուրն և զմայրն իմ՝ Սառան, և զեղբայրն իմ՝ զՎասիլն, և զքոյրն իմ՝ զԹուրվանտան և զՄարգարիտն, և զամենայն արեան մերձաւորսն մեր...։ Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին. ամէն[31]։ Նաև զուսուցիչն իմ՝ զծաղկաւղ և զկազմաւղ սորին զտէր Զաքարիայ քահանայն, որ բազում շանիւ աշխատեցաւ ի վերայ իմ և յետոյ ծաղկաւք զարդարեաց։ Քրիստոս Աստուած զսա ընդ երկայն աւուրս արասցէ...։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ով սր. ընթերցողք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սր. գրոցս մահդասի Աստուածատուրն, որ ստացաւ զսա ի յարդար վաստակաց իւրոց և եղ ի դրունս Սրբոյն Սարգսի զաւրավարին, յիշատակ անշնչելի, ազատ, ազատ, ոչ ոք չունի իշխանութիւն գրաւելոյ կամ ծախելոյ թէ՛ ազգէ, թէ՛ ի տակէ և թէ՛ ի քահանայից։ Եւ թէ ոք [յ]անդգնի և ձեռնամուխ լինի՝ նա պատիժ յԱստուծոյ և ԳՃԺԸ (318) հայրապետաց անէծքն առնու և զխաչահանուացն. ամէն։ Նաև զառաջնորդ Կաֆայ քաղաքիս զԽաչատուր արհիեպիսկոպոսն յիշեսջիք ի Քրիստոս, այլ և սպասաւոր սր. եկեղեցոյս զտէր Սարգիսն և զտէր Զաքարիան, զտէր Յովաննէսն և զտէր Յակոբն և զամենայն ժողովուրդ սր. եկեղեցոյս առ հասարակ, զմեծ և զփոքր, զկենդանիս և զհանգուցեալսն...։

41

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7641

Ստացող՝ Ովքանտիլ
Վայր՝ Թպխիս

ա

311բ Փառք...։ // Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի լուսալրական ժամանակի սկզբանց արարչութեանն մինչև առ մեզ ԻԿԶ (7066), իսկ ի կենարարին գալստենէն ՌՈԽԳ (1643), իսկ ի շահ Սաֆին Պարսից սկսեալ մերս թիւ ՌՀԶ (1627)։ Եւ գրեցաւ սայ ի քաղաքն Թպխիս, որ Թբլիս կոչեն։ Արդ՝ եղև զրաւ կատարման սորայ ի թվիս ՌՂ (1641), յորում դեգերե[ա]լ կամք առ դրանն Բեթղեէմայ ակն ունենալով ամէնաւրհնեալ մաւրն լուսոյ Աստուածածնին, խնդրել ողորմութիւն մեզ և միեղեն եղբայրութեանս և ամենայն աշխարհի թագաւորաց քրիստոնէից։ Եւ Բագրատունեան ազգէ թագաւոր Ռուսդամ խան ևս և բարեպաշտ թագաւոր Վրացոց Թամրազ, և որդին՝ Տաքունայն ի Կախէթ, զոր աջն Աստուծոյ պահեսցէ զսայ և զորդիս իւր հանդերձ ամենայն մերձաւորաւք

[31] «Արդ գրեցաւ սա»-ից մինչև «ՌՂ» հատվածը և «Եղև ծրագրութիւն»-ից մինչև այստեղ թվում է, թե այն է, ինչ գտնում ենք Բժշկյանցի մոտ (էջ 355), որից ընդօրինակել է նաև Ղ. Փիրղալեմյանը (տե՛ս № 6273, էջ 552բ)։ Եթե նույնիսկ տարբեր ձեռագիր է, ապա նշված հատվածներին նոր բան չի ավելացնում։

հնազանդեցելովք իւրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութիւն։ Մանա-
վանդ զքահանայապետական աթոռոյ սբ. և անբիծ հայրապետին
312ա տեառն Փիլիպոսի, որ և քահանայապետն մեր Քրիստոս // պահեսցէ զսա։ ...Եւ արդ՝ մեղաւք մեռեալ հոգիս անպիտան և հողս Ովքանտիլ ետու գրել զսբ. Աւետարանս ի յողորմութենէն Աստուծոյ...։

Բ

313ա Եւ ես՝ Ովքանտիլէս ըստացայ ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և իմ որդոցն վայելումն։ Ով որ անտգնի՝ ազգ կամ աւտար գողանայ կամ գրաւէ կամ յոյժով ըստանայ ի իմ զարմէն՝ նա ինձ պարտական և աբ ի բերան լինի Քրիստոսի դատաստանին առաջ...։

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Դրպխիս

Գ

Արդ՝ ես նուաստ ողնայմեղ քարտուղար Մկրտիչ դպիրս ի քաղա-
312բ քէն Եբերիոյ // որ եմ տամ[բ]ք ի Շաւշ, և յետոյ նեղութեամբ մեծ պանդրխտեցա եկի հասայ ի քաղաքն Դրպիսիս, և թելադրութեամբ Հոգւոյն ըսկիզբն արի սբ. Աւետարանիս, և գրեցի մատեամբ իմով զչորեքին գլուխն, և ծաղկեցի ոսկով, և Ժ (10) գունով զարդարեցի զհամայբարբառքն Դ (4) աւետարանչօքն, զամենայն։ Որ ողորմի Տէրն ամենի հոգոյ սորայ ստացողի պարոն Ովքանտիլին և կողակցուն՝ Մարիամին, հաւրն՝ Սուլիւանին, մաւրն՝ Թամարին, և իւր որդուն՝ Սուլիւանին, Պաֆթայ պէկին, և դուստր Թինաթին, Տարանանին, Լէլային, և եղբայրցն՝ Սորազանին, Պէժանին, Լիպարիտին, Շանշէն, Շալուին, հաւր աղբէրն՝ Սորազանն, Ղանաուրալին, պապն՝ Ղարան Մարտիրոսն։ Սոքայ են ի ազգէն Շանշիանայ։ Այս Շանշիանն է, ի աղգէն Հայոց իշխանաց եկեալ է բնակեալ է ի սահմանքն Վերի Քարբլ, ի գեաւղն Վախայ, ընդ հովա-
313ա նեաւ Ս. // Աստուածամաւրն։

Սայ [յ]իշատակ անջնջելի,
Բարի զաւակ հոգոց սոցին,
Յորժամ որ գայ Տէրն երկնային,
Ցանճառ փառաւք իւր հայրենին։
....։

Դ

94ա Արդ՝ եղև զրաւ աւարտ Աւետարանիս ի թըւականութեան Հայոց ՌՂ (1641), ի գաւազանութեան Յախբատայ Ս. Նշանին Մինաս վարդապետին, և առաջնորդութեան Կաւրոյ Անդրիաս եպիսկոպոսին և Բարսեղ եպիսկոպոս, զոր աջն Աստուծոյ պահեսցէ, կաստառացուսցէ, հաստատիմն արասցէ ի վերայ իշխանութեան իւրեանց մինչև ի խոր ծերութիւն։

Ե

149ա Ազգիս Հայոց թըւականին,
Կրկին քառակ երկ հարիւրին,
Ղ (1641) ամին,
Աւարտ եղև գանձս աստուածային։

Աւետարան խորհրդով լին,
Չորրորդ գլուխ զոր կարգեցին,
Ս. առաքեալքն անեղ բանին,
...։

Ես աղաչեմ կողկողագին,
Հանդիպողաց այս սբ. տառին,
Որ ննջեցեալս իմ առնէք յիշման,
Արժան և ձեզ աւրհնէ անմահ արքան։

Նախ զհայրն իմ՝ տէր Մարգարէն,
Եւ զմայրն իմ՝ Նառմելիքն,
Եւ պապն իմ՝ տէր Մկրտիչն,
Եւ զեղբայրքն իմ՝ Մկրտիչն,
Սիմէոնն, *քոյր իմ* Մարիամն,

և այլ ամենայն յարեան մերձաւորքն իմ, որ հանգուցեալ են ի Քրիստոս։
149բ *Եւ զեղբայրն իմ՝ զքաշ բարունապե//տն* Սիմէոն. *ամէն։*

Դարձեալ յիշեցէք զհոգեոր հայրն իմ՝ հեզահոգի տէր Մկրտիչն, *[յ]որդորեց զխոստովան որդին իւր՝ զայս պարոն* Ովթանաիլն, *որ ըստացաւ զսբ. Աւետարանս, մանաւանդ զաւրինակն ետ, որ գրեալ և ծաղկեալ ի ժամանակին Հայոց թագաւորութեան Հեթումայ, և հանապազ ըսփոփէր քաղցրութեամբ զպանտուխտ սիրտս մեր, յոյս դնելով զոր տէր Քրիստոս լցի յաւէտ իւր աւգնական և կարգէ ըստ Մելքեսէդեկի և Ահարոնի, նորոյս Սիոնի, մեր Ղեւոնդի և այլ ընտրեալ դասի։*

Եւս առաւել զսանայհայրն իմ՝ զտէր Գրիգորն, *որ էի իւր եկեղեցին՝ Ե (5) ամ Ս. Բեթլահէմն, և էր ըսբասու զտիւ և գիշեր, ըստ կարեացն ծառայէր հոգևորով և մարմնաւորիւ յիշելով զբանն Տեառն ըստ Ժ (10) հրամանին, թէ «Աւտար էի և ժողովեցիք, քաղցայ և կերակրեցիք»։ Յիշեցէք, որք հանդիպիք այս տառիս կարդալով կամ օրինակելով, և*
150ա *դու[ք] յիշեալ // լիցիք ի Քրիստոսէ, ասելով «Եկայք առ իս» և այլն։*

Գ

239ա *Անեղ Աստուած, անճառական, անհուն և անհաս... Յոր և իւր բազմայպատիկ շնորհն և մակայցութիւնն ի եղականքս տալով միմեանց մինչև ուսուցիչն իմ* Յովանէս *վարդապետն և բարունապետն. և նա ևս մասն ինչ շնորհեաց մեզ, զոր և Տէրն տացէ իւր փոխարինեաց...։*

239բ *Արդ՝ եղև Աւետարանս այս սկսեալ և աւարտեալ ի պանդուխտութեանս և ոչ էին առ իս աշակերտք իմ կատարեալ, այլ նորահասք քարտուղար Ե (5)՝ տէր* Յակոբ, *տէր* Սարգիս *և տէր* Սարգիս, Սրապիոն *փոքր և* Գրիգոր *ցաւակից և սպասաւոր, զտիւ և զգիշեր լաց ընդ լացողս, խնդայ ընդ խնդացողս և զ[հ]ամայրարբառքին մագաղաթն նայ եհան և գլխոցն աւետարանչացն։ Եւ էին Ե (5)-էքին ի ծառայութիւն ամենայն ոք ըստ իւրեան չափուն։ Տէր Յիսուս, տուր սոցա զփափաք սրտիցն, զի մի՛ կարաւտ մնասցին, և տուր համբերութեամբ և խոնարհութիւն, զի տպաւորի շնորհ Ս. Հոգոյն...։*

42
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8233

133բ Զեկուցումն լիցի վկայսիրացդ հարցողաց վասն սբ. մասանց նշխարացս, որ ընդ Ալէքսիանոս անուն քրիստոնէիս է. զի այս ի նշխարաց սրբոյն Կիրակոսի խստակրօն ճգնաւորին է, որ եգիտ զգամրարան սբ. առաքելոյն Թադէոսի և սբ. կուսին Սանդիտոյ: Իսկ ի թուին Հայոց ՌՂ (1641) ամին, զոր հրաման արար շահ Ապազն քակել զամրոցն Արտազու և զեկեղեցին Ս. Նշանին, որ է Ս. Կիրակոսի։ Գնաց և հոգևորտէրն անդ վասն տրտմշուր բանիս և բացեալ զյատակ սբ. սեղանին, անդ եգիտ զնշխարս սբ., մասն ինչ մեզ շնորհեաց և այլն տարաւ ընդ իւր ի յէջմիածինն: Ողջ լերուք Տէրամբ[32]։

43
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 8571

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Թորասկան

323բ Փառք...։ // Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղսամած Գասպար էրէց գրչի, ի յերկիրս Իսպանան, որ Շօշ կոչի, ի յեղր Նարընղալային, որ Թաւրասկան ասի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, և հայրապետութեան տէր Խաչատուրին, թվականի ՌՂ (1641)-ի։

44
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8538 (1498 թ.)

Գրիչ՝ Տէր Մովսէս

138բ Է գիրքս այս սեպհականաբար ծերունի տէր Բարսեղին, յիշատակ առ տէր Յոհաննէսն: Մի՛ ոք այլ և այլ արասցէ վասն այսորիկ գրոյ ի մեծամեծաց մինչև ցփոքունս, զի կամօք ետու։ Եղև այս ի հազարերորդ և ինքսներորդ (1641) թուոյս մերոյ։

Ես՝ տէր Մովսէս վկայ, որ զգիրս զայս գրեցի, նաև Սիմէօն վարդապետն վկայ սակս այսր։

45
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 10374

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Զեթուն

320բ Փառք...։ // Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի գեղաքաղաքս Զեթուն, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորայ Մարտիրոսին, ի

[32] Սույն ժողովածուի տարբեր նյութերը գրվել են տարբեր ժամանակներում՝ 1577, 1693, 1695, 1783 և այլ թվերին, տարբեր անձնավորությունների կողմից։

թվաբերութեանս ասքանաղեան և աբեթական տօմարի Ռ և Ղ (1641) ամին, ձեռամբ մեղապարտ և անարժան Յովանէս դպրի, ի յստոյգ ե յրնտիր յաւրինակէ, ի տիս մանկութեան և յաշակերտութեան գոլով։ Եւ այժմ ըստացաւ զսա աստուածարեալ և հոգիասէր Ղարաղանցի Վազգոնց մահդեսի Անտոնն, որ մեծաւ փափագանօք և սրտաշան յօժարութեամբ, քաջահաւատ յուսով խնդրեաց զսայ ի փրկութիւն կենաց իւրոց, և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնողաց իւրոց Աւետիքին և Շնորհաւորին, և պապուն՝ Գրիգորին, և կողակցոյ նորին
321բ Հոիփսիմէ, Սանդիտին և քորոշն՝ Հոիփսիմէ և միւս քեռն՝ Գոնա//ին, և դստերն՝ Շնորհաւորին, և կողակցացն՝ Հոիփսիմէ և մահտեսի Շուշանին, և այլ զաւակացն և ազգականացն, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց...։

Արդ՝ աղաչեմ զսրբազան զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք կամ օրինակէք, յիշեսջիք սրտի մտօք զմեղապարտ գրիչս և զծնողսն իմ՝ զԱւետիք քահանայն և զՇուշանն, և զպապն իմ՝ զՎահան քահանայն, և զհօրեղբայրն իմ՝ զտէր Գրիգոր բաբունապետն և զհովուապետն այս Գերմանիկոյ երկրիս, նաև զուսուցիչն իմ՝ զտէր Յոհան քաջ քարտօղարն՝ զհանգուցեալն առ Քրիստոս, այլ և զըստացող սբ. Աւետարանիս զվերոյ գրեալ մահտեսի Անտոնն։ Եւ որք յիշեն՝ յիշեալ լիցին առաջի ահեղ ատենին Քրիստոսի, ուր բանք սպառին և
1~1բ գործք // թագաւորին առաջի արդար դատաւորին Քրիստոսի. ամէն։

Այլ և եդ զսբ. Աւետարանս մահտեսի Անտոնն իւր հայրենական Ղարաղան գեղի եկեղեցին ի Ս. Սարգիս։ Եւ ոչ ոք ունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ սորայ՝ եթէ հայրապետ, եթէ քահանայ, եթէ սարկաւագ, եթէ աշխարհական, եթէ ազգական կամ թէ օտարական։ Ով ոք և իցէ եթէ [յ]անդգնի կամ ծախէ կամ գրաւէ կամ գողանայ կամ հեռացնէ՝ նա ի Քրիստոսէ անմասն ելցէ...[33]։

46

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 10442

Գրիչ՝ Խաչատուր Երէց
Վայր՝ Ըստամպալ

ա

167բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս, ի մայրաքաղաքն Կոստանդիսայ, որ կոչի Ըստամպալ, ի դուռն Ս. Սարգսի և այլ ամենայն սրբոց, թվին ՌՂ (1641), ձեռամբ նուաստ և ալգնամեղ Խաչատուր երիցու, աղաչեմ յիշել ի Տէր. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հա[նգիպիք][34]

Բ

22բ Ով եղբայրք, յիշեցէք զԵղնիկ յիրիցկին մայրն, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալուստն. ամէն։

[33] Այս Ավետարանը հետագայում կորչում է, ստացողի թոները այն գտնում են։ Այդ մասին տե՛ս 1694 թ. շարքում։

[34] Շարունակությունն ընկած է։

Գ

159բ Զմեզապարտ և անարժան գրիչս զնաչատուր երէցս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր, և Աստուած զձեզ յիշէ։

47

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 10636

Վայր՝ Զեթուն

2ա Փառք...։
Յամի մի և քսան յորելինին,
Եւ քառասուն այլ ընդ նըմին (1641)[35],
Է թըւականս մեծ հային,
Շրջագայեալ պարագայցին։
Գրեցաւ մատեանս ի սոյն ամին,
Ի յերկիրս Գերմանիկին,
Գեղաքաղաքս ի Զեթունին,
Աւարտ առեալ այս աղօթնին,
Ընդ հովանեաւ Աստուածածնին Ս.[36]։

48

ՏՕՆԱՑՈՅՑ, ՇԱՐԱԿՆՈՑ

Ֆ. Պոլիս, Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 71 (մանրաժապավեն, Երևան, № 530)

Գրիչք՝ Սահակ, Մեսրոպ
Վայր՝ Բայէշ

ա

1բ Նկարի վերևում և ներքևում Զ Մեսրոպ նկարող յիշեցէք ի Քրիստոս Աստուած։

բ

59ա Յիշատակ է Մեսրոպ վարդապետին, յիշեցէք ի Քրիստոս Աստուած։

գ

141ա Գրեցաւ և ոսկով ծաղկեալ նկարեցաւ ձեռամբ Մեսրոպ վարդապետին և տէր Սահակին. և վաճառեցաւ և տուաւ հոգոց իւրեանց և ծնաւղաց իւրեանց Աւետսին և Ազամաթին, և հօրեղբօր Թաթուլին։ Յիշեցէք... Մեսրոպ վարդապետին, որ ետ զսա հոգոյ իւրոյ և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի...։ Լաւ պահօղն աւրհնի յԱստուծոյ։ Թվին ՌՂ (1641)։ Ով եղբայր, յիշեայ ի Տէր ղստացողս։

դ

192ա Զ Սահակ բազմամեղս յիշել աղաչեմ առ Քրիստոս Աստուած։

---

35 Այսինքն՝ (21×50)+40+551։

36 Ձեռագիրը ընդօրինակվել է 1834 թ., որը պահպանել է նախագաղափար օրինակի հիշատակարանը «Ամ ընթերցողս» նախաբանի մեջ։

Ե

312ա Արդ՝ ես Մեսրոպ վարդապետս ետու ըղսա Ստեփանոս վարդապետին, որ է հայր Հ (70) եղբարց ի Լիմ յանապատին Քառասնից, ինձ և ծնողին [ի]մոյ տէր Սահակ վարպետին։ Զինչ որ կամի վարդապետն արասցէ։ Բաւ է։

Զ

389ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար և անիմաստ անձանց և սխալամիտ գրչաց Սահակ և Մեսրոպ անուամբ ևեթ երիցանց, որ գրեցաք զսբ. տառս և զհոդիախառն նուագարանս, որ կոչի Շարակնոց, ի լաւ աւրինակէ, և ըստ կարի իմում ծաղկեցի և զարդարեցի զսա նուաստ Մեսրոպս, ի թվին ՌՁԷ (1638), ի քաղաքիս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Սարգսին, ի հայրապետութեան հայկայ սեռի տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի, ի վայելումն անձին իմոյ Մեսրոպի, և յիշատակ հոգւոյ իմոյ... և ծնողաց իմոց Աւետրսին և Ազամաթին, և ամենայն արիւնամերձ ազգականաց մերոց...։ Այլ և հոգևոր հօրս մերոյ և վարժողի զմեզ ի սոյն գործ հոգևոր արուեստի տէր Սահակ քաշ քարտուղարի. շնորհեսցէ տէր Աստուած նմա դասաւորիլ ընդ երկտասանց և քառակի քահանայիցն... և ծնողաց իւրոց ողորմեսցի Տէր. այլ և դստերն իւրոյ՝ Հռիփսիմին ողորմեսցի Քրիստոս...։ Այլ և հոգևոր մօր մերոյ ողորմեսցի Տէր, որ բազում աշխատութիւն է կրեր ընդ անարժանութիւնս մեր և մայրութիւն արարեալ է, նմա ողորմեսցի Տէր։ Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զհանդիպողդ այսմ տառի, յիշել առ Տէր և թողութիւն ինձ անարժան Մեսրոպի և ծնողաց իմոց, և եղբարց, և քրւերց մերոց և վերոյ գրեալ անուանցս ողորմութիւն և այցելութիւն խնդրեցէք...։

Է

404ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ Սահակ և Մեսրոբ գրչացս հասանել յաւարտ այսմ գրոցս, որ կոչի Տօնացոյց, եղեալ ընդ Շարակնոցի։ Եւ է փոքր ինչ համառօտեալ, ոչ ծուլութեան վասն և թերութեան, այլ վասն թեթև լինելոյ և զհարկն բառնալոյ ընդ Շարակնոցին լինելոյ, իսկ զլիակատարն տեսցէս յայլսն և մեզ անմեղադիր լինել։ Այլ և սբ. տառս տուաւ ի վայելումն Մեսրոպայ գրոց աշակերտի և բանի սպասաւորի, յիշատակ իւր և հոգոյ իւրոյ և ծնողացն՝ Աւետսին և Ազամաթին և կենակցին փոխեցելոյն առ Քրիստոս՝ Հռիփսիմին, այլ և ամենայն բարի երախտաւորաց և հոգևոր ուսուցանողաց մերոց...։ Եւ ես յերես անկեալ աղաչեմ, զի անմեղադիր լինիցիք և լի սրտով Աստուած ողորմի ասացէք Մեսրոբ ստացողի սորա և Սահակ գրչի. և յիշողքդ...։

49

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ, № 2 (1634) (մանրաժապավեն, Երևան, № 618)

Գրիչ, ստացող՝ Ֆատլալայ

Ա

222բ Զբազմաթշուառ անձն մեղաւք ներկեալ ոգւոյս Ֆատլալայ, որ գրեաց զսբ. մատեանս, աղաչեմ զհանդիպողդ յիշել զիս և զծնողս իմ

և զամենայն արեան մերձաւորս իմ և մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք...։

Բ

336ա Զամենամեղս Ֆատլալայ ստացաւղս Աստուածաշունչ տառիս աշխատանաւք և գրչութեամբ իմոյ ձեռինս և այս, զի պակաս եմ յարուեստ գրչութեանս, մի՛ մեղադրէք զիս, աղաչեմ վասն սիրոյն Աստուծոյ, յիշեցէք ի Տէր, թողուլ զանեզր յանցանս իմ...։

Գ

438ա Փառք...։ Ես՝ մեղաւորս Ֆատլալայ, ըստ կարի, զփափաքս իմ լցի, յանկ ելանելովս. և այս եղև ներելովն Աստուծոյ, զի յանարժանէս թերևս արժանաւոր այս գործ եղև յանկեալ, աղաչեմ զժառանգաւղսդ ևս և զհանգիպաւղսդ ներեցէք սղալմանս ի սա, և սիրով ուղղեցէք, և միոյ Տէր ողորմի արժանի արարէք...։

Դ

510ա Զմեղաւորս Ֆատլալայ և զծնօղսն իմ յիշեցէք ի մեղաց թողութիւն, աստուածասէր ընթերցողք, և մի՛ մեղադրէք, զի այսչափ էր կար իմ. ՌՂ (1641)։

Ե

սՀՏբ Պատուեալք յԱստուծոյ և ի Քրիստոս եղբարք սուրբք, որք յինչ և իցէ պատճառս հանդիպիք սբ. այս գրոցս զմեղաւորս Ֆատլալայ, որ շատ աշխատութեամբ գրեցի զսա, յիշեցէք զիս առ ողորմածն Աստուած, նաև զծնաւղսն իմ և զուսուցիչն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ...[37]։

50

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ենշխարք», հտ. Ա, № 770

Կազմող՝ Պօղոս աբեղայ

212բ Փառք...։ Գրեցաւ ի թուականիս Հայոց ՌՂ (1641). կազմեցաւ ձեռամբ սուտանուն Պօղոս աբեղի, ի դուռն Ս. Աստուածածնին ի ՅԱՆՆայվանք[38]։

51

ՏՕՆԱՅՈՅՑ

Մագիստրոս, № 71

Գրիչ՝ Սարգիս քահանայ
Վայր՝ Թրխիս

11 Գրեցաւ... ձեռամբ Սարգիս անուամբ միայն քահանայի, ի քաղաքն Թրխիս, ի լաւ և ընտիր աւրինակէ Ղուկաս վարդապետի Կեղեցոյ, ի

[37] Սույն ձեռագիրը թեև նկարագրված է ՑՁՎՍ, հտ. Ա-ում (էջ 22—26), բայց հիշատակարաններից ոչ մեկը բերված չէ։

[38] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է. «Այժմ գիւղ ի Վան ի Տոսպ գաւառի»։

խնդրոյ Միհաս *վարդապետի* Թոխաթցոյ, *ի վայելումն իւր, ի թվին* ՌՂ *(1641)։ Արդ՝ յիշեցէք զուսուցիչ իմ՝* զՄկրտիչ *դպիրն։*

52

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏԵՐԱՎՋ, № 119 (ԺԵ դար?)

ա

202 *Արդ՝ աղաչեմ զձեզ. ով քահանայք, յիշեցէք ի մաքրափայլ սբ. ձեր աղօթին* Շարաֆն, *իւրեան որդիք* Խուրովն, Սիամոնն, Գուլիչանն, *իւրեան կողակից* Սառէն: *Դարձեալ յիշեցէք* Պողոսն, *իւրեան կողակից* Ծաղիկն: *Եւ դարձեալ յիշեցէք* Յարիկն, *իւրեան կողակից* Մերումն, *իւրեան որդիկ* Թաղէմիշն, Խաչիկն, Նորիկն, *Աստուած իւրեանք անսասան պահեսցէ. ամէն։*

բ

Արդ՝ աղաչեմ զձեզ, քահանայք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհանգուցեալ տէր Կարապետն, զՇարաֆն *և որդիքն իւր՝* Նորիկն [*և* Պ]ապն, *և* Նորիկի [*որդ*]*իքն՝* Պօղոսն, Ղազարն: *Դարձեալ յիշեցէք ի բարի* Նորիկն, *և եղբայրն իւր՝* Պապն, *որ տվին Շարակնոցս կազմել և թերին լնուլ, յիշատակ իւրեանց և հանգուցեալ նընշեցելոց հոգոյն, և տէր* Կարապետին, Շարաֆին, *և հանգուցեալ նընշեցելոց. ամէն։ Որ տվին նորոգել և թերին լնուլ, յիշատակ իւրեանց նընշեցելոց հոգոյն /// թվին* ՌՂ *(1641) կազմեցաւ։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք* Նորիկին *հոգոյն, որ եդ կազմել Շարակնոցս յիշատակ տէր* Կարապետին, Շարաֆին *հոգոյն. ամէն։*

53

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 6333, էջ 62

Գրիչ՝ Անդրէաս քահանայ

13բ Յիշատակարան Աստուածաշունչ զրոց
Արարեալ Անդրէաս *քահանայի,*
Ի խնդրոյ պարոն Մէլիք *աղայի,*
Որդւոյ խոշա Սաֆարին,
Ի թվականին մեր հայկազեան,
Որ էր անցեալ քսան յոբելեան,
Այլ ինն տասն աւելի լման (1641)[39],
14ա *Գրեցաւ շունչըս // աստուածական։*

54

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տիրայր վարդապետ, № 6

Ստացող՝ Յուսիկ երէց

ա

190 *...Ստացող սբ. գրոյս* Յուսիկ *էրէցս, զտէր* Զազարէն *և* զՀուտումսիմէն[40], Ղազարն *և* զՄարգարիտն, *զվարպետն իմ՝ զտէր* Յակոբն *և զկո-*

---

[39] *Այսինքն՝ [20×50+(9×10)]+551,*

[40] *Հաջորդ անունը անընթեռնելի. հարցականով է դրել Տիրայր վարդապետը։*

զակիցն իւր, զՍալանն, զխանսոլթանն, Սայիպսուլթանն, և զՅովանէսն, զորդիքն՝ զտէր Զաքարէն, զԱռաքելն, զՅովաննէսն և զՍարգիսն, զՍայիպսոլթանն, որ է իմ դուստր, զԳոհարսալթանն, զՅարութիւն, և զԱւդամղուդլուն, և Հուռումսիմէն, և զՄարիամն. և հանգուցեալ դստերքն մեր՝ զՎարդիքերն և զՄարիամն. կենդանեաց և հանգուցելոց Աստուած ողորմի ասացէք...։

Բ

Յիսուս Աստուած... յիշ[ե]այ զհոգիս մեղսամած Յուսիկ երիցոյս, որ միայն զանունս ունիմ ե ոչ գործք, և կենակիցն իմոյ Գանվարսոլ-
191 թանին, և որդոցն իմոց՝ աստի//հանաւոր զՍարգիսն և զՅարութիւնն, և դստերաց իմոց Սայիպսոլթանին, և հանգուցեալ դստերքս Վարդիքէրին և զՄարիամին, և զկենդանի դստերացս Ղատամղուլուին, Հուռումսիմին, զՄարիամին և զծնօղսն իմ՝ զտէր Զաքարին, զՀուռումսիմէն, սոցայ հոգոցս ողորմի ասացէք...։ Թվին ՌՂ (1641)-ին գրեցաւ աւրինակէն։

Գ

190 ... ողորմի ասէ[ք] մեղուցեալ Յուսիկ իրիցոյս և իմ ծնողացն՝ հաւրս տէր Զաքարին, մաւրս Հուռումս[իմ]ին եղբաւրս Առաքելին և Ներսէսին, քրւերցս Աւդալնփաշին և հանգուցելոցն առ հասարակ, հօրեղբաւրս Առաքելին և նորա որդոյն՝ Յովանիսին։

Դարձեալ Լուսիկ իրիցոյս և կողակցիս...։

Գրիչ՝ Լուսիկ երէց

Դ

1 Գրեցաւ անպիտան Լուսիկ իրիցէ աւրինակելով. անմեղադիր կենաք, զի կարս մեր այս էր...։

ՆՆ

ՄԱՆՐՈՒՄՄՈՒՆՔ, ՏՕՆԱՑՈՑՑ

ՏՑՁՄՎ, № 432

Գրիչ՝ Բարղամ
Վայր՝ Սեբաստիա

Ա

883 Զտէր Յակոբ բանի սպասաւորն յիշեա ի Տէր, ով երգեցող եղբարք։

Բ

Զստացող գրոցս զՆզրնկացի մահտեսի տէր Յակոբ. բանի սպասաւորն յիշեսջիք յաղօթս ձեր, ով հարք և եղբարք, որ ետ գրել զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն, զոր տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրս, և յիշատակն իւր օրհնութեամբ եղիցի. և աղաւթիւք ձերով Քրիստոս մեզ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս. ամէն։

Թվին ՌՂ (1641) գրեցաւ ձեռամբ Բարղամ գրչի, ի քաղաքն Սե-
884 բաստիա, // ի յառաջնորդութեամբ մայրաքաղաքիս մերոյ Ներսէս վարդապետին, զոր տէր Աստուած զինքն ԲԺ (12) վարդապետացն դասակից և պսակակից արասցէ. ամէն։

56
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՈՅՁՄՎ, № 837

415 Վերջ լրումն դրքուս յամի Փրկչին[41] հազար իննուսուն (1641), ի Սիմէոն վարդապետէ Ջուղայու արարեալ. արդար<ար>ութիւն վասն անձին մարդոյ։

57
ԾԱՂԿԱՔԱՂ ՔԱՐՈԶԳԻՐՔ Ի ԳՐԻԳՈՐԷ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
ՈՅՁՄՎ, № 1208

Գրիչ՝ Բաղդասար վարդապետ

ա

858 Ով հրաշալի հարք իմ և երանելի եղբարք, երշանիկք և սրբամիտք, բանասէրք և գրոց աշակերտեալք մանկունք, Քարոզգիրքս այս ոչ Ամառան հատորն է ի բուն և ոչ ի Ձմեռան, այլ ծաղկաքաղ է արարած յերկուց հատորիցն։ Զի ոչ ունէի կար և յապահով յանդորրութիւն, որ զլի և ղկատարեալն գծագրէի, զի միտք իմ զբաղեալ կայր ի յոգոց աշխարհի և չեղէ ձեռնհաս։ Այլ փոքր ի շատէ ըստ ախորժակաց իմոց ընտրեցի և գրեցի, զաւելորդն բարձէք և սղալանաց անմեղադիր լերուք և զԲաղդասարս յիշէք։

բ

Վայ ինձ և մեղաւոր գրչիս,
Եմ տարակուս ի մէջ աշխարհիս,
Լսեմ զբանս քարոզիս,
Ահ մեծ կրէ ունայն հոգիս։

գ

Ծրագրեցաւ ձեռամբ անարժան Բաղդասար անուամբ ևեթ միայն վարդապետի։ Ով սրբասիրտք աշակերտեալք Քրիստոսի, միով ողորմեայիւ արժանի համարիջիք։

դ

Վասն որոյ աղաչեմ հարք իմ և եղբարք, ղլեզասցուք, զղջասցուք ի մեղաց։ Դարձցուք սրտի մտօք առ Աստուած և նա դարձցի առ մեզ, ոհ, ոհ եղկելի Բաղդասար։

ե

Զստացօղ և զծրօղ լուսազարդ տառիս զմեղօք լցեալ Բաղդասարս յիշեսջիք։

զ

Գրիչ՝ Անտոն դպիր

Ով հանդիպօղք սբ. քարոզիս, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր անիմաստ և անարհեստ գրիչս զԱնտոն անուամբ միայն դպրիս և դուք յիշեալ լիջիք ամէնառատ պարգևողէն... ի թվին ՌՂ (1641)։

[41] Սխալ է, պետք է լինի Հայոց։

Է

Ստացող գրոյս զԲաղտասար. վարդապետն յիշեցէք հանդերձ ծնողիւք իւրովք, ով լուսերամ մանկունք Նորոյս Սիոնի և հարսնացեալք անմահ փեսային Քրիստոսի։ Ընդ նմին և Անտոն դպիր նուաստ ծրոզս վասն Աստուծոյ։

Ը

Նկարող՝ Յոհան

Նկարող գրոյս Յոհան քահանայն յիշեա և դու[ք] յիշեալ լիշիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի։

Բ

Մաղկող՝ Հայրապետ

...զծաղկող դպիր Հայրապետն։

58

ՃԱՌԸՆՏԻՐ

Մ8ՀԵՊ, 1, № 73 (1398 թ.). Մ8ՀԵՍ, էջ 196—197

Նորոգող՝ Յովանէս Մոկացի

Վայր՝ Երուսաղէմ

253 Արդ՝ յերեսս անկեալ կրկին անկամ աղաչեմք զձեզ, ո՛վ ընթերցողք լուսազարք տառիս, որ է Ճառընտիր, յիշեսջիք ի յերկնագնաց յաղօթս ձեր, զվերշինս նորոգօղն, զանարժան և զթափուրս ամենայն բարեաց, Յովանէս աբեղայս, որ եմ բուն Մոկացի, և սպասաւոր Ս. Փրկչին և լուսարար սբ. Կափարիչ վիմիս և բանտին Յիսուսի։ Եւ տեսեալ իմ զսբ. դիրքս անկեալ ի բաց, և ի խորշս որմոց եկեղեցւոյն անխնամ ձգեալ, ողորմութեամբն Աստուծոյ և օժանդակութեամբ սրբազան հայրց և եղբարց մերոց, նորոգեցի զսա յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց՝ Բաշարաթին և Ինախաշին, և հարազատ եղբօրն իմոյ՝ տէր Մելքեսեդ քահանային, և իւր որդոյն՝ տէր Յոհանիսին, և քուերցն իմ՝ Ջանալին, Գոզալին և Փաշին։ Եթէ ոք ընթեռնու զսա, կարդալով կամ օրինակելով, միով ողորմեաւ յիշման արժանի համարեսջիք զվերոյ գրեալ անուանքս և զծնողս և զամենայն արեանառու մերձաւորսն իմ, զկենդանիս և զհանգուցեալսն։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեանն. ամէն։

254 Դարձեալ կրկին անկամ յիշեսջիք ի Քրիստոս զհասարակաց հայրն մեր, և զսրբազան հայրապետն զտէր Գրիգոր արհեպիսկոպոսն սբ. Երուսալիմայ, որ նեղութիւնս կրեաց բազում և անպատմելի ի մերոց և աւտարաց, ևս առաւել յարեանարբու և գազանաբարոյ ազգէն [արաբացոց][42] և բնակչաց սբ. Սիոնին [որ են շեխ և մուտաուրս][43], որ բաղում նեղութիւն հասուցանեն ի սբ. ուխտս՝ վասն ագահութեան իւրեանց։ Որ ի բազմաց մին այս եղև, որ ի մէջ գիշերի գաղտագողի և մկնանման՝ զորմն ծակեցին եւ մտանելոյ ճարակ խուզէին, զոր իմացեալ մեր և ազդ արարեալ փաշային և դատաւորին, զոր եկեալ դատաստան եղին, և շեխերն ուրաստ կացին, թէ «Դուք պահեցէք զձեր տունն, ով ոք որ գայ

[42] և [43] Այս բառերը ավելացրինք Սյուրմելյանի հրատարակությունից։

զարկէք եւ վիրաւորեցէք»։ Այս եղեւ ի թվիս Հայոց ՌՂ (1641)։ Զոր տեսեալ Պարոնտէրն, զի հնար չկայր, բազում փող եւ մալ մսխեալ, շիջիլ և ամր բերեալ, և զպարիսպն Ս. Փրկչիս նորոգեալ ներքոյ և արտաքոյ, և Դ (4) բուռչն պահապան կարգեալ. և այլ բազում շէնուածս արարեալ ի Ս. Ծնունդն, և Ս. Յակոբ, և ի Ս. Հրեշտակապետն, և զՍ. Յահանու տաճարն, և Գ (3) կամար ի ֆռանգէն էառ և զվերնատունն մեծացոյց, զոր խնդրեմք ի մարդասիրէն Աստուծոյ, որ զանձեռագործ խորանն իւրն պարգեւէ. և տէր Գրիգոր վարդապետին, որ բազում եղախտիք ունի ի վերայ սբ. Տնօրինականաց, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասէք նմայ։

59

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ

Մշբեղ, II, № 333

Նուիրող՝ Աստուածատուր վարդապետ
Վայր՝ Երուսաղէմ

ա

211 *Թվին ՌՂ (1641) գրեցաւ։ Յիշատակ է սբ. գիրքս սբ.* Յերուսաղէմայ *հայրապետ* Աստուածատուր *վարդապետին, որ ետ իւր ձեռամբն ի դուռն* Յերուսաղէմայ *Հայոց աթոռ Ս. Յակոբայ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց։ Ով որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Բայց մի՛ որ յիշխեսցէ նենգիւ հանել կամ գրաւել զսա ի դրանէ Ս. Յակոբայ. եթէ որ անդգնի և հակառակի՝ հանգիստ մի դտցէ աստ և ի հանդերձեալն։*

բ

Յիշատակ է սբ. Յերուսաղէմայ *հայրապետ* Աստուածատուր *վարդապետին, ի դուռն Ս. Յակոբայ։*

60

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մշբեղ, V, № 1480

ա

199 *Գրիչս յիշման չէ արժանի,*
Մտացդ անցոյ փոքր ի շատի,
Յարժան լինիս յարքայութենի։

բ

200 *Ո՛ դու մոլար մեղկեալ ծերուկ,*
Չար և վաթար և ընկրղմուկ,
Զօրն անդադար տուր քեզ եղուկ։
Ահայ զերծար ի ծրրելոյ,
Մի՛ դադարեր զաչդ ի լալոյ,
Յերկար ճանապաք ես գնալոյ։

Ի թուականիս Հայոց մեծաց,
Հազար. և իններսուն (1641) կարգաց,
Կատարեցաւ թիւ քո յամաց։
Եւ դու բնաւ ոչ զղշացար,
Ոչ փոշէման ոչ ապաշխար,
'Ի ոչ միտ ասծեր զաւրն անաչար։
Վաթսուն և եաւթներրորդ ամի,
Զի կշտացար դու աշխարհի,
Լցեալ մեղաւք ազգի ազգի։
Էր կաս ի քուն ողորմելի,
Ասայ մեղայ Տեառն բանի,
Շուտ կու լսէ մեղաւորի։
Սիրէ զծնեալն աւազանի,
Զի մոռանար զիւր երկիւղածն,
Թէպէտ անկեալ կենայ աղբի։
Այլ կու գթայ աստուածաբար,
Առնէ զմեռեալն կենդանի։
Ճշմարիտ աղաւթք արայ
Ասա մեղայ տեառն Յիսուսի։
Ով կատարողք խնդրուածաց,
Տուք ողորմի ինձ այս խղճի,
Եւ փոխարէն ի Քրիստոսէ,
Առնուք հազար 'ւ այլ աւելի։

61

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ

ՄՏԶԵԳ, VI, № 1980

Ստացող՝ Բաշարաթ սարկաւագ

ա

565 Տէր Աստուած ողորմի բարբառ Ամենիսին, որ երեկ արիւն առաւ. Աստուած զինքն ի մեղաց ազատէ. ամէն։

բ

566 Ես՝ աստուածասէր և բարեմիտ ծառայս Աստուծոյ մահդասի Բաշարաթս ետու գրել զսբ. գիրքս, յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց...[44]։

գ

565 Փառք...։ Իսկ ես՝ մահդասի Բաշարաթս, ծառայս Աստուծոյ, ի բազում տենչմամբ տոչորեալ էի ի սէր ուղղաբան Սաղմոսարանիս ատենի. ահա հանդիպեցայ ընտիր և լաւ աւրինակի, որ էր գրած յիշատակարանին, թէ «Գրեցաւ սա յաւրինակս սբ. վարդապետին Յովանէս Գառնեցիւն ձեռամբ նորին դրեալ և ստոգաբանեալ ճշմարտիւ կրկին կրկին, որ նայ նոյն բաղձմամբ խնդիր լեալ էր ուղղաբան Սաղմոսարանիս, որոյ

[44] Դարձյալ թվում է դ հիշատակարանում նշված անունների մի մասը։

յիշատակարանն գրեալ էր այսպէս։ Եւ ապա, ասէ. «Գնացի ի սբ. ուխտն Հաղարաա և երկիրպագեցի Ս. Խաչին և սբ. գերեզմանի մեծի և տեսանողի իմաստասիրին Հայոց սբ. վարդապետին Յոհանիսի, մականուն Սարկաւագի, այն որ բաղում ճգմամբք զսաղմոսն ի թարգմանչագիր Սաղմոսարանէ դաղափարեաց...»։

Գրիչ՝ Ստեփանոս Մոկացի
Վայր՝ Վան

Դ

Վասն որոյ վերոյ յիշեցեալ հաւատարիմ և ճշմարիտ ծառայն Քրիստոսի աւագ սարկա[ւա]գն մահդասի Բաշարաթ կոչեցեալ, որ էր նա ի կողմանցն Միջագետաց, ի յերկրէն Մարաց, ի նահանգէն Կորդուաց, ի յիշխանանիստ գաւառէն Մոկաց, ի քաղաքի մեծ թաղէն, զոր Մէգնի է կոչած, ի տոհմէ որ Ասպահանենց առասած, շարժեալ ի յԱստուծոյ, որպէս ինքն Տէրն ասէր. «Առանց իմ ոչ ինչ կարէք առնել...»[45]։

Եւ զամենայն թողեալ ըստ տիրունեան բանին՝ զտուն, զհայր, զմայր, և զամենայն տոհմայինս, նաև զհեշտութիւն, բարձեալ ի յուս զիւաչն Յիսուսի դիմեալ յԵրուսաղէմ, Ծ (50) ամ յօժար սիրով ծառայելով սբ. Երուսաղէմայ ընդ կարգաւորացն ղեկեղեցոյ, և զպատարագ, և զպաշտօն կատարելով, սպասաւորելով սրբութեանցն, և ամենայն հոգեվոր գործոց, և ընդ աշխարհական քրիստոնէիցն զմարմնաւոր ծառայութիւն հոգալով։

Եւ ընդ այսմ ամենայնի յաւել ևս ի վերայ բարեաց մտածեաց զբանն մարգարէին Եսայեայ որ ասէ, թէ՝ «Երանի...»։ Վասն որոյ սկսաւ առնել յիշատակ ի յարդար և ի հալալ վաստակոց իւրոց, ետ գրել Բ (2) պատուական ոսկէպատ, գեղեցկադիր Աւետարանս և արծաթէ ոսկէզաւծ խաչ մի, և արծաթէ ոսկէզաւծ մասին տուփ մի, և գիրք մի՝
566 որ Ոսկեփոր ասեն, և լաւ Տունացոյց մի, // և Ատենի Սաղմոսարան մի, և եդ զսոսա յիշատակ ի սբ. Երուսաղէմ։ Եւ այլ որչափ որ ունէր ինչ ի մանկութենէ՝ ժողովեալ էր՝ ետուր զամենայն ի նորոգումն եկեղեցեացն սբ. Երուսաղէմի։ Յորոյ աւուրս նորոգեաց երանաշնորհ և պատուական, սրբասնեալ հայրապետն սբ. Երուսաղէմայ տէր Գրիգորն Գանձակեցի, զբոլոր տնաւրէնութիւնսն Քրիստոսի՝ զՇնունդն, զՓրկիչն, զՀրեշտակապետն, զՍ. Յակոբայ վանքն, զՍ. Յոհանէսն, և Գ (3) կամար ի Յարութեան միջոյն ի վերնատունն առաւ ի Ֆռանգացն, և զամենայն վիճակս Լուսաւորչի ազգին, որ յԵրուսաղէմ առաւել հաստատեաց քան զԼուսաւորիչն, զոր վարձահատոյցն Աստուած տացէ վարձս վաստակոց նորա։

Եւ մանաւանդ աղաչեմ զսա վերոյ յիշեցեալ մահդասի սարկաւագ Բաշարաթին լի բերանով զԱստուած ողորմին ասացէք և ծնաւղաց նորին՝ հօր Միրիջանին և մօրն՝ Մարգարտին, և եղբօրն՝ Յակոբին, և քուերցն՝ Փաշաջանին և Գուլումին, և Մարիամին, և ամենայն արեանառու մերձաւորաց նորա...։

Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ աստուածախաւս սբ. տառս այժմ, որ

45 Յովհ., ԺԵ, 5։

կոչի Սաղմոսարան Ատենի, ի դառն և ի նուրբ ժամանակիս, որ ամենայն աշխարհս յաւիրիլն առեր, ի յերկիրս Վասպիւրականի, որ ասի Շամիրամակերտ, ի քաղաքս Վան, ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին, ձեռամբ Մոկացի Ստեփանոս քահանայիս, ի թուականիս հայկազեան սեռիս մերում տումարի ՌՂ (1641), ի հայրապետութեան սբ. Երուսաղէմայ տեառն տէր Գրիգորի սրբասնեալ և մաքրամիտ, և պատուական հայրապետին տէր Գրիգորին, որ չկայ նորա նման ի վերայ աշխարհիս, Աստուած զինքն մշակ առանց ամաւթոյ պահէ. ամէն։

Ե

565 Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ստացողի գրոցս մահդասի Բաշարաթին, և սաղմոս աս[ա]ցողին, և լաւ պահողին, և խնամ տանողին. ամէն։

Զ

566 Դարձեալ կրկին երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, դասս լուսերամից քահանայից և սարկաւագաց, յիշեցէք ի Քրիստոս... փծուն գրչիս՝ մեղաւոր Ստեփանոսիս և իմ ծնողացն. ամէն։

Այլ և զխոշորութիւն և սխալանաց դրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս է։...

62

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՏՁԵՊ, VIII, 2558 (1615 թ.)

262 Յիշատակ է սբ. Աստուածաշունչս Մարտիրոս վարդապետին, ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, ի հայրապետութեան տէր Գրիգոր արհեպիսկոպոսին, թվին ՌՂ (1641)։ Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն։

63

ՃԱՇՈՑ

ՁՁԱԲ, № 156 (1358 թ.)

777 Դարձ[եալ] վերջի ստացողի այս Տարեգիրքիս զբան Յակոբ Վոյթն, պարոն Բիրումի որդին, որ յաւժար փափաքմամբ գնեաց զսա իւր յիշատակ և իւր կենակցուն բանի Հանուխնա[յ]ին, և ծնաւղաց և զաւակաց իւրոց, որ ետ զսա նորաշէն Պրոտ քաղաքի Հաճ<սա>կատար սբ. յեկեղեցւոյ, ի փառս Աստուծոյ և ի վայելու[մ]ն մանկանց յեկեղեցւոյ։ Վասն այն, ո՛վ նազելի քահանայք և ընթերցողք, մի՛ մոռանայք զվերոյ յիշատակեալքս ի մաքրափայլ աղաւթս ձեր, լի սրտիւ, միով Աստուած ողորմիւ նոյն, և յիշողացն ողորմես[ց]ի. ամէն։ Գրեցաւ ի թուականութեանս Հայոց՝ թվին ՌՂ (1641)։

64
ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
ՏԵՐԱՎՋ, № 10

Գրիչ՝ Անառն դպիր
Վայր՝ Ըսպահան

ա

18 Փառք...։ Ի թուին Հայոց հազար Ղ (1641) գրեցաւ Աստուածաշունչ տառս ի քաղաքն Շօշ, որ է Ըսպահան, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ, ձեռամբ անարհեստ, և փծուն, և բազմամեղ դպրի Անառնի, ի հայրապետութեանն տեառն տէր Փիլիպպոսի, և ի թագաւորութեանն Պարսից շահ Սէֆոյն, առաջնորդութեան գիւղաքաղաքիս Խաչատուր վարդապետի Կեսարացո[յ] իմաստնոյ և հանճարեղ փիլիսոփայի, իշխանութեանն խոջայ Սարֆրասի իմաստնոյ և բարեպաշտի։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, և որք հանդիպիք սմա, յիշեսջիք զԱնառն դծողս, որ գծագրեցի զսա յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ Ղարտաշին, Խանումին, և քվերցն իմոց՝ Սէլանին, Բուլշարին, Հոիւիսիմէ /// և կողակցին իմոյ՝ Եղիսաբեթին։ Եւ որ զմեզ յիշէ՝, յիշեալ լիցի, և ինքն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։...[46]

բ

Եւ զիս զեղկելի Անառն դպիր գծողս յիշեայ, և զհայրն իմ՝ մահդասի Ղարտաշն և զծնօղն իմ, և դուք լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

գ

Ո՛վ ընթերցողք, աղաչեմ զձեզ և զանարժան գծողս մէկ Հայր մեղայիւ արժան առնէք. և ողորմածն Աստուած զձեզ իւր արքայութեանն արժան առնէ. ամէն։ Թվին ՌՂ (1641) գրեցաւ։

դ

Թվին ՌՂ (1641). Տէր մեր Յիսուս Քրիստոս տուր համբերութիւն յասանել յաւարտ։

ե

Ո՛վ սբ. դասք լոյսերամից, աղաչեմ զձեզ անմեղադիր լերուք, օրինակի մէջն չկայր, յետոյ այլ օրինակի մէջ տեսաք, այսպէս գրեցաք, տետրս աւարտ էր, այլ թուղթ չի անկաւ ի մէջս թէ արձակ էաք գրեր։ Այսպէս եղև, անմեղադիր լերուք, զի կարն մեր այս է, վասն սիրոյն Քրիստոսի միով Տէր ողորմեայիւ արժան առնէք զիս՝ զմեղապարտ գծողս և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. Անդոն։

65
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 25 (1216 թ.)

38 Յիշեցէք զվերջին ստացող սբ. Աւետարանիս զՄխիթարն և զհոգևոր հայրն իւր՝ Եվէափաշէն և զմայրն իւր՝ Տատիկն։

[46] Այնուհետև ոտանավոր, ուր հիշվում են վերևում նշված անունները։

Դարձեալ յիշեցէք զՄխիթարն և զհարազատ ծնողքն իւր՝ զԴարմանն և զխաթունն, և զկողակիցն իւր՝ Մարամն, զդուստրն իւր՝ Եղիսաբեթն և զմիւս դուստրն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, Աննային: Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք...։

Թուին ՌՂ (1641)։

66

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՏԵՐԱՎՔ, № 246

Գրիչ՝ Սիմէոն քահանայ
Վայր՝ Ասպահան

ա

385 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Յայսմաւուր, ձեռամբ* Սիմէոն *քահանայի։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորա հասուցի աւարտ ի թվաբերութեանս Հայոց ՌՂ (1641), հայրապետութիւնն Հայոց տէր* Փիլիպպոս *կաթողիկոսի, առաջնորդութեան դեղոյս, որ է Ջուղայ, տէր* Խաչատուր *արհեպիսկոպոսի, ի թագաւորութեանն Պարսից շահ* Սէֆէ, *ի վայելումն համեստ և հարկաւոր* Սալվարիիան *անուն քրիստոնէի, յիշատակ իւրն և կողակցին՝* Հայրապետին, *որդոց, և դստերացն, և ամենայն ազգականացն. ամէն։*

Արդ՝ գրեցաւ սբ. դիրքս ի քաղաքս Շօշ, *որ կոչի* Ասպահան, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և յիշատակ ի դուռն [Ս.] Բեթղահէմի։ Ով ոք յանգգնի և սխալէ դիրքս այս՝ դրաւէ կամ ծախէ՝ պատիժն Աբիայէ և Արիութէ առցէ և մասնակից Յուդայի լիցի և այլ խաչահանուացն։*

բ

Ստացող՝ Սալվարիիան

Արդ՝ ես Սալվարիիանս *ետու գրել զգիրքս այս յիշատակ հոգոյ իմոյ. ոչ ով չունի իշխանութիւն՝ ոչ յիմոց և ոչ յաւտարաց, ոչ հայրենաց և ոչ մայրենաց, ոչ սկեսրաց և ոչ սկեսրարաց, և ոչ այրեաց, այլ իմոյ ջէջէ և ապարանջէ։ Ով ոք սբ. դիրքս ի դուռն Ս. Բեղղահէմէ հանէ՝ ինքն հանած լինի և որոշած ի քրիստոսական հօտէն, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

67

ԲԱՌԳԻՐՔ

ՏԵՐԱՎՔ, № 560

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Շօշ

ա

837 *Նարեկացոյ մեկնիչս*[47] *գրեցաւ ձեռամբ* Խաչատուր *իրիցիս ի թվականիս Հայոց ՌՂ (1641), ի քաղաքն* Շաւշ: *Սխալանացն ներել թողութիւն*

[47] Ս. Վ. Տեր Ավետիսյանը ծանոթագրում է, որ «Նարեկացու մեկնութիւն» ասելով հասկացվում է Նարեկացու գործածած բառերի բացատրությունը։

մեզ և ձեզ Քրիստոս Աստուած ողորմեսցի, որ առատն է ի տուրս բարեաց. ամէն։

Բ

Ջխաչատուր գրող սորա, յիշեցէք ի Քրիստոս։

68

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

ՑՋԲԱԻԱ, Ա 45 (ժամանակը ?)

Հետ. ստացող՝ Ղարախան

ա

37 Ես՝ Ղարայխանս առայ այս Ատենի Սաղմոսարանս ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և իմ ծնաւղացն՝ հաւր և մաւր իմոյ, և էղբարց իմոց, և կողակցին իմոյ և որդոց և դստերաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և մեռելոց, որք կարդան և աւգտին ի սմանէ աւրինակելով, լի բերանով և սրտիւ ողորմի ասէ զվերոյ ասացելոցս և Աստուած իւրն ողորմի աստ և ի հանդերձեալն. ամէն։ ԵՌ (5000) դիան տվի, թվականս Հայոց ՌՂ (1641) տարի. ով որ կարդայ՝ ողորմի [ասէ]։

Բ

Ես՝ Ղարայխանս առայ Ատենի Սաղմոսարանս յիշատակ հոգոյ իմոյ և կողակցին իմոյ՝ Նանասին, և որդոյ իմոյ՝ տէր Խաչատրին. ամէն։

69

ՇԱՐԱԿՆՈՑ

Not. Mac., № 47 (1596 թ.)

153 Փառք...։ Արդ՝ ստացող եղև այս բուրաստան ոսկիաղարդ Շարակնոցիս բարի և հաւատարիմ քահանայն Յոհանէս յիշատակ հոգո[յ] իւրոյ և ծնողացն իւրոց, հօրն՝ Յովսէփին և <և> մաւրն՝ Մարգարիտին, և պապուն՝ Մխիթարին, և եղբաւրն՝ Ազատին և տէր Յոհանիսի կողակցին՝ Շանումին, և իւր ծաղկեալ որդոցն՝ Փանոսին, Շանազարին, Մխիթարին, Ղարիպեանին, Դաւթին, և հանգուցեալ որդոյն՝ Ղաչօին. ամէն։

Ով դասք լուսերամից, որք հանդիպիք այսմ բուսաստանիս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Յոհանէս քահանայն, որ ստացաւ զսա յիշատակ հոգո[յ] իւրո[յ], և ծնաւղացն իւրոց, հօրն՝ Յովսէփին...[48]։

Ի թվիս Հայոց Ռ և Ղ (1641)։

70

ՇԱՐԱԿՆՈՑ

ՑՋՆԿԱ, № 5

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Կ. Պոլիս

ա

130 Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս թվին ՌՂ (1641), ձեռամբ Թոխաթցի անպիտ գրչի Միքայէլի, ի մայրաքաղաքս Կոստանդինուպալիս։ Արդ՝

[48] Նորից թվում է վերևում հիշված անունները։

աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ յաւրինակելով, միով ողորմեայիւ յիշեցէք զանպիտան գրիչս, և զծնաւղսն իմ և զայլ ամենայն ննջեցեալսն իմ...։

Բ

Գրեցաւ Շարականս այս ի թիւին Քրիստոսի (sic) ՌՂ (1641)։

71

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վատիկանի գրադարան, № 19 (1607 թ.)

Գրիչ՝ Սահակ Էջմիածնեցի

293 Այլ և յիշեցէք յաղօթս ձեր զընստացող գրոյս զտէր Պողոսն և զեղբայրն իւր՝ զՊատուական և զԽաչատուրն, որ գնեցին զսա ի հալալ յրնչից և ի յարդար վաստակոց իւրեանց, և եդին յեկեղեցին յիշատակ իւրեանց հոգոյն և իւրեանց ննջեցելոցն։ Ո՞ ոք հանդիպիք սմա ուսմամբ կամ տեսութեամբ կամ օրինակելով, յիշեցէք յաղօթս ձեր...։

Յիշեցէք և զիս՝ զտառապեալս գրող սակաւ գրոյս զտէր Սահակ Էջմիածնեցի և զծնօղսն իմ ի Տէր...։ Գրեցաւ յետին գիրս թվին ՌՂ (1641) յամին յորում մեռաւ սուրբն Մուրատն։

72

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գրիգոր Մաքսուդյան, «Սիոն», 1968 թ., № 5—6, էջ 253 (1311 թ.)

Գրիչ՝ Ատեփ

Վայր՝ Եդեսիա

Վերստին նորոգեցաւ աստուածաշունչ գիրքս ձեռամբն տէր Պետրոս քահանային, ի վայելումն Ատեփ դպրին։ Եւ սա յիշատակ է տէր Պաղտասար ցանկալի և պաղձալի քահանային։ Ով որ կարդա կամ աւրինակէ, Աստուած ողորմի ասէ իւրն և իւր նախնեաց, և ձեզ ողորմի տէր մեր Յիսուս Քրիստոս...։ Կազմեցաւ դիրքս ի թվականիս Հայոց ՌՂ (1641), ի դուռն Բարձրահայեաց Ա. Աստուածածնին, ի մայրաքաղաքն Եդեսիա։

/. ////..... /..... ///\.... //. ////.....

//..... \/. ////. /. ///... /. ///...[49]։

[49] Ծածկագրությունը վերծանել է հոդվածագիրը. «Ատեփ ծառայ Աստուծոյ»։

73
ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 438

Գրիչ՝ Մանուէլ երէց
Վայր՝ Կողոնիա

Գրեալ ի թվին Հայոց ՌՂ (1641) ձեռամբ երէցու Մանուէլի... *ի քաղաքիս* Կողոնիա, *ի դուռն Ս. Աստուածածնին և Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, ի հայրապետութեան տէր* Փիլիպպոս *կաթողիկոսին, ի յառաջնորդութեան տեղւոյս տէր* Կարապետ *եպիսկոպոսին և ի թագաւորութեան Տաճկաց սուլթան* Իպրահիմին:

74
ԱԻԵՏԱՐԱՆ

Արցախ, էջ 144

Նորոգող՝ Սարգիս
Վայր՝ Ջարեբայ անապատ

Ի թվիս Հայոց ՌՂ (1641) և ի հայրապետութիւն սբ. էջմիածնայ տեառն Փիլիպպոսի *նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ* Սարգիս *կրօնաւորի, աշակերտ սբ. Աւետարանիս, ի սբ. անապատս* Ջարեբայ *և առաջնորդութեամբ սբ. ուխտիս* Դաւիթ *եպիսկոպոսի։*

75
ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1977 թ., թ—ժ, № 461

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Քօթահեայ

80 *Փառք...։ Այսպէս յաւետ կենդանութիւն Աւետարան կոչեցաւ սբ. դիրքս այս։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն* Քօթահեայ, *ի թվաբերութեանս Ասքանաղեան և Աբեթական տաւմարի ՌՂ (1641), ձեռամբ մեղապարտ և անարժան* Գրիգոր *երիցու, ի յստոյգ և յընտիր օրինակէ, ի խնդրոյն աստուածարեալ և հոգիասէր* Խարբերդցի *մահդասի* Աստուածատուրին, *որ մեծաւ փափագանօք և սրտաջան յօժարութեամբ, քաջահաւատ յուսով ետ գրել զսբ. Աւետարանս, ի փրկութիւն կենաց իւրոց և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց՝ մահդասի* Մելքոնին *և* Գոհարին *և եղբարսն՝* Խօջահանին *և* Հրմուզին, *և քրւերն՝* Աղսպակէ, *և կողակցին՝* Ագիգին *և մեծ պապուն՝* Կարապետին *և մեծ մամուն՝* Կուլշիշէկին, *և հօրեղբարցն՝* Պալիին *և* Պաղտասարին, *և որդւոյն՝* Մուրսապալիին, *և դստերն՝* Մուլքիին, *և քրւեր որդւոյն՝* Սաֆարին *և զոքանչին մահդասի* Մարիամին *և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, կենդանեաց և ննջեցելոց. և եդ յիշատակ ի սբ. քաղաքն* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ, ի ձեռն տէր* Գրիգոր *հայրապետին։ Գանձ յաւիտենական և անկապոյտ ճոխութիւն...։*

Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասըս քահանայիցդ, որք ընթեռնուք կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք զմեղապարտ գրիչս և զծնաւղսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ նաև զընտացող սբ. Աւետարանիս զմահդասի Աստուածատուրն և զծնաւղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն իւր։ Դարձեալ յիշեցէք յաղաւթս ձեր զեաչատուր երէցն, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ սբ. Աւետարանիս, և որ յիշեն, յիշեալ լիցին առաջի ահեղ ատենին Քրիստոսի...։

76
ՊԱՐՁԱՏՈՒՄԱՐ

ՄՏԼԱ, № 14

Գրիչ՝ Վարդերէս
Վայր՝ Զամոսցա

ա

16 Այս է Լուսացուցս Հայոց, որ թվին // ՌՂԱ (1642)-ին գրեցաւ. Կաւացի ես Վարդերէս, Ասվատուրի որդին. օր գ[ր]եցի այս Լուսնացուցս։

բ

Եագրլտի պու գալանտար թվին ՌՂԱ (1642)-ին, յունվարին ԻԹ (29)-մէն Վարդերես, Ասվատուր օղլու. օզճանրմ իշուն եազտմ պու Լուսնացուցնի. Զամօձայ շահհարրնտա. պէկլիարնտա բան նան Զամօցկիրն թանկրի ուղախ. զամանկա սաղլակեայ. ամէն։

77
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 10440 (1364 թ.)

ա

254բ Յիշատակ է սբ. Աւետարանս տէր Վարդանին դստ[երցն]՝ Եղիսին, Հռիփսիմին, Եւային. Աննարին, Մայրամին: Դարձեալ յիշեցէք զԵղիսին որդիքն՝ Յովանէս սարկաւագն, զԿարապետն, զԵղիսին կողակիցն՝ զՄուրատն. ամէն։ ԶՅորանիսին կողակիցն՝ զԹուրուանտ(ա)ան, դուս[տ]ր Աննան, Կարապետին կողակիցն՝ Մայրամն, որդին՝ Սահակն, դուստրն՝ Եդիսան. ամէն։

բ

255ա Գրեցաւ թվին ՌՂԱ (1642) փետրվար է (7)։ Զտէր Յովանիսին փեսան՝ Կարապետն, որդի Նզարն, գնեցաւ ձեռամբ տէր վարպետին Խ (40) ղուռիշ։ Ով որ ծախէ կամ գրաւ դնէ՝ զմասն Յուդայի առցէ...։

Դարձեալ յիշեցէք զտէր Վարդանին, որդին Ղուկասն. ամէն։ Եւ որ յիշէ զաշխատողքս ո[ո]րայ, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ամենայն վերոյդրելոցս ի սմայ...։

78

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑ

Երևան, № 1318 (1335 թ.)

Նվիրատու՝ Գրիգոր երէց

138ա [Յ]իշատակ է մեղաւոր և անարժան հողու հաւասար Գրիգոր երիցուս։ Այս սբ. գիրքս ի մեր նախնեացն է՝մնացեալ <է>, ետոյ ի մեռանելոյ իմոյ ոչ ոք չունի իշխանութիւն զայս սբ. Սարգիս գիրքս ծախելոյ։ Եւ է յիշատակ սբ. եկեղեցոյ, զի լաւ է եկէղեցին երթալ, քան թէ անգետ և անիմար մարգոց մէջ մնալ. զի խիստ օրինած գիրք է։ Ամէն գիրք մատանի է, ապայ զայս սբ. գիրքս, ակն է ի վերայ մատանուն։ Կարթացոխք, որք հանդիպիք այսմի բուրաստանիս մեղացս թողութիւն հայցեցէք...։

Գրեցի թվին ՌՂԱ (1642)-ին, ես՝ եղկելի, մեղաւոր և անարժան Գրիգոր էրէցս, ի մարտի Թ (9), ի սրբոց Քառասնից, օրն չորեքշաբթի։ Այն տարին էր որ Ալվի Ագաթին վերա ՃՌ (100000) ասքէր գնաց, դեռ վերջն չի գիտեմք թէ ինչ կու լինի, վասն մեր ծովացեալ մեղացն...։

79

ՏՕՆԱՑՈՅՑ, ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ

ՔՋՋՎ, № 53 (1561 թ.)

Գրիչ՝ Ոնոփրիոս աբեղայ

Վայր՝ Ղարայճիսար

85 Գրեցաւ[1] զայս մեսեղիկս ձեռամբ մեղաւոր և անարժան[2] ծառային Քրիստոսի Ոնոփրիոս աբեղային, ի յերկրէն Լեհու, ի խնդրոյ տէր Սարգիս իրիցուն, ի քաղաքն Ղարայճիսար, ի թվին ՌՂԱ (1642), մարտի Լ (30), օրն չորեքշաբթի։

80

ՄԱՇՏՈՑ

ՄՋՀԵՊ, VII, № 2155 (1543 թ.)

Նորոգող՝ Դանիէլ

Վայր՝ Հզու

ա

216 Զ Դանիէլ գրող սորին,
Յիշեայ ի բարին,
Ի ասա զողորմին,
Ով հանդիպող սորին։
Ի մարտի ամսին գրեցաւ,
Աւրհնէք խաղողին,
Ի թվին հայկազմին,
ՌՂԱ (1642)[3]։

---

[1] Ձեռագրի 191ա—205ա էջերը, Սարգիս երեցի խնդրանոք, 1642 թ., ընդօրինակում է Ոնոփրիոս աբեղան. խոսքն այդ մասին է։

[2] Բնագրում՝ առարժան։

[3] Ցուցակի միևնույն էջում կրկնված է նման մի հիշատակարան ևս։

Բ

Փառք..., որ ետ տկարիս կարողութիւն՝ նուաստ Դանիէլիս, *վերստին նորոգել զսբ. գիրքս, որ կոչի Մաշթոց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Խաչ Մուշել զաւրավարին, որ են ի Հզու քաղաքին, ի թվին Հայոց ՌՂԱ (1642)-ին, ի վայելումն տէր* Բաղդասարին։

Արդ՝ որք հանդի[պի]ք այս սբ. տառիս՝ կարդալով կամ օրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զտէր Բաղդասարն *և զկողակիցն իւր, զհայրն իւր՝* զԷնիայթն, *և զմայրն իւր՝* զՄանուշակն, *և զհաւրաքուրն իւր՝* Զարդարն, *և զամենայն արեանառու մերձաւորն իւրեանց. ամէն, որ ըստացան զսբ. գիրքս յիշատակ հոգով իւրեանց, ի հալալ արդեանց իւրեանց։ Ով որք յիշէք՝ յիշեալ լինիք ի Քրիստոսէ. ամէն։*

81

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՁԱԲ, № 188 (ժամանակ?)

Գեր. *ազատող* պաքալ Առաքել

Վայր՝ Անկուռիա

908 *Փառք...։ Յիշատակ է այդ, և ես նուաստ պաքալ* Առաքել *հալալ արդեանց իմոց գնեցի և ազատեցի ի գերութենէ զԱւետարանս զայս, յիշատակ ինձ և հոգոյս իմոյ և ծնողաց իմոց, որդոց և զաւակաց իմոց՝* Մարտիրոսին, *և* Մուրատին, Խաչատուրին *և* Աբրահամին, *և կողակցոյս իմոյ՝* Նուռ խաթունին, *և հոգևոր որդոյս իմոյ՝* Մինասին. *եղի յիշատակ* յԱնկուռի *ի Ս. Քառասունք եկեղեցոյ։ Եթէ ոք գողանայ կամ դուռ դնէ՝ ի ներքոյ յանիծից եղիցի. լաւ պահողն՝ աւրհնի Աստուծոյ և ամենայն սրբոց. ամէն։ Հայոց թվին ՌՂԱ (1642), ապրիլ ամսոյ Զ (6), ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպոս *կաթողիկոսին սբ.* Էջմիածնայ, *և ի պատրիարգութեան* Կոստանդինուպոլսոյ <*ի*> Կիրակոս *վարդապետին, և առաջնորդութեան յայսմ նահանգս* Գաղատիոյ *Տիրամայր Ս. Աստուածածնա[յ] վանուցն* Գաբրիէլ *վարդապետին. զոր տէր Աստուած բարով վայելել տացէ մահտեսի տէր* Աստուածատրի *որդի՝ մահտեսի տէր* Աբրահամ[ին], *անզրաւ յաւիտենիս. ամէն։*

82

ԲԱՆՔ ՁԱՓԱՒ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ՄՁԶԵՊ, V, № 1694

Գրիչ՝ Փիլիպոս

563 *Ըզ*Փիլիպոս *ծրող գրիս,*
Թշուառական յոյժ եղկելիս,
Յիսուս օգնեաց թշուառականիս,
Յաւարտ եղև Յիսուս Որդիս։

Որք հանդիպիք սմայ կարդալով,
Կամ օրինակ վեր առնելով,
Լիով սրտիւ դիս յիշեսջիք,
Հայր մեղայ մի ինձ ասասջիք։

Յիսուս Քրիստոս յորժամ գայցէ,
Կոչէ զմեզ և հատուսցէ.
Վարձքն ի Քրիստոսէ դուք առնուցուք,
Եթէ հայր մեղայիւ զիս յիշէք։

Աղամ ամսոյն քսան և իններ (29)[4]
Յաւարտ եղև այս սբ. գրքի,
Թիւն ՌՂ և մինի (1642)
Որ է օրհնեալ յաւիտենի. ամէն։

83
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 5964

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Շէնհէր

ա

139բ Ղազար դրիչ յիշել հայցէ վասն Աստուծոյ, և Աստուած զյիշողքդ յիշէ. ամէն։
Թվին ՌՂ (1641)։

Բ

386բ Աւարտ հասուցողին վայել է փառք։
Թվին ՌՂԱ (1642)։

Գ

387ա Յիշատակարան զրոցս

Փառք..., որ ետ կարողութիւն մեղսամած և չնչին գրչի Ղազար պիտակակոչի հասանել յաւարտ աստուածախումբ շարեալ ականցս, որ կոչի Շարակնոց, ի մեծ թուականիս Հայոց տումարի Ռ և Ղ և մէկ աւելի (1642), ապրիէլ ամսոյ քսանի, և ի մեծ հայրապետութեան սբ. Էջմիածնի՝ Հայոց տեառն տէր Փիղիպոսի, յառաջնորդութեան երկրի Սիւնեաց և Որոտան նորին նահանգի Յովանէս եպիսկոպոսի, եղև զրաւ ծրման սորա ի գեաւղս Շէնհէր, ընդ հովանեաւ Ստաթէի սբ. առաքելոյն և սբ. անապատացս և նորակնունք Ս. Ստեփաննոսի մերս եկեղեցոյ։ Որ կարող զաւրութեամբն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի։
387բ ըստ իմում կարողութեանս, ի վայելումն ընդանեաց իմոց // և կուսանիք քեռն իմոյ՝ Մարգարտին և որդոցն իմոյ. և յելանել աստի և ի փոխիլիս անդ յիշատակ կացցէ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոյ՝ Կիրակոս քահանային և Թուրվանդին, և եղբարցն իմոց հանգուցեալ՝ Ալէքսիանոս քահանային և Արիստակէս վարդապետին, և քեռցն իմոց՝ Ղիմաթին և ըստ վերոյ դրեալ կուսան Մարգարիտին և հանգուցեալ Հեղինէին, և կողակցոյն իմոյ՝ Հոիփսիմէին, և որդոցն իմոյ՝ Կոզմասին, Ալէքսիանոսին, և դստերացն իմ՝ Շահանդուխտին, և հոգևոր մայր Խոսրովապաշխարողին, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց, զորս գրեցաք և զորս մնացին, Աստուած ողորմի ասացէք...։

[4] Աղամ ամիսը կընկնի ապրիլի 10-ին։

84
ԱԽԵՏԱՐԱՆ
Երևան, № 3004

Գրիչ՝ Վասիլ
Վայր՝ Խազան

261ա Փառք...։

262բ Իսկ վասն բազմաթիւ մեղաց, մերոց, անձն առի փոխանակ ապաշխարանաց, գրեցի այս սբ. Աւետարանս, օգնութեամբն Քրիստոսի, ի քաղաքս Խազանս: Իսկ պա[տ]ճառն բարեաց խօճա Աւետիքն, որ եկեայ էր խըզրլպաշէն, այս սբ. Աւետարանն ընկեալ էր ի մէջ գերութեան։ Այսչափ պատճառն բարեաց խօճայ Պողոսն, որ եկեալ էր Ասքարխանէ, թուղգրն նա գընեց իր հոգոյն համար։ Եւ ես գերի մեղաւոր Վասիլ ձեռօքս գրեցի, որ մընացնում յիշատակ այս Խազանի ժողովրդեանն։ Փրկիչն ամենայն տէր մեր Յիսուս Քրիստոս զխօճայ Միխալն և ըզ-Պարոնն, և իւր որդին՝ Մըկըրտիչն, և զխօճայ Միխալին քոյրն, և քրոջ որդիքն, Գրիգորին տըղաքն՝ զՄելքունն, և զԽազարն, և զՔասբարն, և զՊաղտասարն և ամենայն ժողովուրդքն՝ մեծ և փոք[ր] աւրհնեսցէ

263ա այն աւրհնութեամբն, որ աւրհնեաց զչուրն Յորդան//անու, սրբ[ե]աց և մաքր[ե]աց զմեղս աշխարհի... և նոյնպէս զչարն ի բարին փոխեսցէ դեմ պա[տ]ճառս բարեաց և մեր բարերար բարեկամաց, որ զիս այս գերութեանն մէջ կու ունթունին և զիս կու ազեցնուն ու կու կերակրեն։ Տէր Աստուած իրենց մեկին Ճ (100)-ապատիկ, Ռ (1000)-ապատիկ, բիւրապատիկ վարձս բարեաց հատուցանէ. ամէն։

Հայրն երկնաւոր Աստուած զձեր հայրն և մայրն աւրհնէ։ Որդին միածին Աստուած զձեր ծաղկեալ դուստր և որդիքն աւրհնէ, Հոգին Ս. Աստուած զձեր և զմեր ննջեցելոց հոգին աւրհնէ։ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

263բ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ մեղաւորս // գերիս զՎասիլս, և իմ ծնողքս, և իմ ամենայն արեան մերձաւորքս։ Գրեցաւ ի թվականիս ՌՂԱ (1642) փետրվարի ԻԱ (21)-էն, ապրիլի ԻԸ (28) լըմընցուցի. բարով վայելէք. ով որ կարդայ Հայր մեր ասէ...։

85
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 3114

Գրիչ՝ Նորատունկ

ա

85բ Թվին Հայոց ՌՂԱ (1642) մայիս ամսոյ ԺԵ (15), օրն երեքշաբթի[5]։

բ

Անարհեստ գրիչս յիշեայ զՆորատունկն, անմեղադիր լերուք, եղբայրք, զի կայր մեր այս է։

[5] 1642 թ. մայիսի 15-ը կլինի ոչ թե երեքշաբթի, այլ կիրակի, իսկ երեքշաբթի կլինի մայիսի 17-ին, թեև բնագրում բացակայում է ԺԵ (15) և ԺԷ (17)՝ Ե և Է տառերի շփոթումը։

Գ

Այլ գրով

168 ա Աղաչեմ, ով հայրք իմ, ասացէք Աստուած ողորմի տողչափ շինողին։

86

ՇԱՐԱԿՆՈՑ

Երնչակ, էջ 238

Գրիչ՝ Բարաղամ
Վայր՝ Քանովա

Թվին ՌՂԱ (1642) յունիսի ԺԱ (10) աւարտեցաւ ձեռամբ նուաստ Բարաղամ գրչի, ի նոր աւանն Քանովա, ի խնդրոյ... որ ետ ի ձեռն հոգևոր որդոյն Կարապետին, յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն։ Ով ոք որ է ի յիմոցս և յաւտարաց, չունին իշխանութիւն հակառակելոյ, այլ ես կամաւն Աստուծոյ տվի ղՇարակնոցս Կարապետին իմոյ որդոյն։ Ով ոք որ հակառակի յափշտակելոյ կամ հանելոյ ի սմանէ, ի ներքոյ կապանաց է հոգևորին և մարմնաւորին, հնաղանդեալքն ա[ւ]րհ[ն]ին և անհնազանդն դատի Աստուած։

87

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8506

Գրիչ՝ Յակոբ տիրացու
Վայր՝ Կոզլով

ա

99բ Գրեցաւ Յուցարանս ի թվին Հայոց ՌՁԹ (1640) ապրիլ ամսոյ ԻԸ (28), Յակ [ոբ տ]իրացուս, ի քաղաքն Կոզլով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին. ամէն։

Բ

34բ Գրեցաւ Յաշխարհացոյցս ի թվին ՌՂԱ (1642) յունիսի ԺԴ (14), ի վայելումն[6]. ամէն։

Գ

38բ Գրեցաւ Նեռնան պատմութիւնս թվին ՌՂԱ (1642) յունիսի ԺԷ (17), յաւրն յուրբաթ, ի փառս Քրիստոսի...։

88

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1443

Գրիչ՝ Աստուածատուր երէց
Վայր՝ Հալապ

ա

209բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար և տարտամ անձին իմոյ Աստուածատուր անուամբ ևեթ երիցու, որ զանունս ունիմ և գործս ոչ, հասանել յաւարտ պատմութեան գրոցս։ Արդ՝ գրեցաւ մատեանս ի մայրա-

[6] Ստացողի անունը սկզբնապես գրված է «Յակոբին», ուրիշները չնչել են և գրել իրենցը, բայց չի կարդացվում։

քաղաքն Եբերիա, որ է Հալապ, ի թվին Հայոց ՌՂԱ (1642) ամին, յուլիս ամսոյ ի Ի (20), ի վայելումն Զուղայեցի խոճա Պաղտասարին, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ նմա. ամէն։

Բ

Գրիչ՝ Դաւիթ

37ա Եւ ես մեղապարտ գրիչս Դաւիթ, հանդերձ ամենայն զարմիւք յուսամք ի քեզ Տէր՝ խնայեա ի մեզ աստ և ի հանդերձելումն[7]։

89

ՀԱՒԱՔԱՄՈՅ

ՔՅԶՉՎ, № 167

Գրիչ՝ Թորոս Համբեցի
Վայր՝ Կեսարիայ

386 Փառք...։ Որոյ ծառայս անպիտան Թորոս Համբեցի որ և Տիգրանակերտ քաղաք առձայնի, որ եմ թափառական և պանդուխտ, հեռացեալ
387 ի սահմանաց և ի հայրենեաց իմոց, էի և եմ և եղեց վիճակ և ժա//առանգութիւն, միայն թէ ընկալցի անարգամեծար Տէրն։ Որոյ շնորհիւ Տեառն սկիզբն արարի սբ. գրքիս ի յուսումն մանկանց Սիոնի և ողորմութեամբ և օգնականութեամբ նորին յանկ հանի, ի թվականութեանս մերում արմենեան սեռի ՌՂԱ (1642) ամին, օգոստոս ամսոյն ԺԱ (11), աւրն երկուշաբթի, աւարտումն եղև մանրամունտ և ժողովածոյ մատենիս ի ուսումն բանասիրաց, ի յերկիրս Մաժաք, որ այժմ ասի Կեսարիայ, ընդ հովանեաւ սբ. Կարապետայ դամբարանիս և այլ ամենայն սբբոցն որ աստ կան հաւաքեալ, նշխարհք նոցին ի պահպանութիւն քրիստոնէից ազգի։ Եւ ի առաջնորդութեան այսմ ուխտի Դաւիթ հայրապետի և տեսչի այսմ նահանգի։ Այլ և հոգևոր մաւրս իմոյ Զուլալի պառաւեալ ծերունւոյ, որ բազում խնամ ածին ի վերայ անարժան ծառայիս Աստուծոյ՝ կերակրով և ըմպելովք և մխիթարելով զմեզ բազում անգամ ինքն և եղբայրն իւր՝ Դաւիթ պարոնտէր հայրս մեր։ Ինքն հատուցանողն ամենայնի հատուցցէ նոցա ըստ ընդարձակ առատութեամբն հարիւրապատիկ աստ և ի հանդերձելումն, և փոխանակ կերակրոցն նոցա, զանմահական կերակուրն պարգևեսցէ նոցա... զոր մեծարեցին զմեզ և պատուեցին, անեղն Աստուած զիւրեանքն մեծարէ և պատվէ և զհոգի նոցա դասակցեսցէ երանական և եւթնաստեղեան խորանս ըստ անսուտ խոստմանն իւրոյ որ ասաց. «Բազմեցուցից զձեզ և անցեալ պաշտեցից»[8] կամ թէ՝ «Ուր ես եմ և պաշտօնեայն իմ եղիցի»[9]։ Արդ՝ որք հանդիպիք այս գրքիս կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով բան ինչ ի սմանէ աւտգելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս՝ զանարժան զգծող սորա Թորոս եպիսկոպոս և զհայրն իմ՝ զԴաւիթն և զմայրն իմ՝ զԱթլաս խաթունն և զայլ ամենայն ազգականս իմ, որ փոխեալ են առ Քրիստոս՝ զհաւրեղբայրս իմ զԲարսեղ վարդապետն և զՊո-

[7] Ձեռագիրը գրված է երկու գրիչների կողմից։ Դավիթ գրչի մասը ԺԷ դարի է, բայց մինչև 1642 թ.։

[8] Ղուկ., ԺԲ, 37։

[9] Յովհ., ԺԲ, 26։

դոս եպիսկոպոսն և զտէր Պետրոսն միով հայր մեղայիւ յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանղամ գալուստն։ Զայն երանական ձայն լուիցիք...[10]։

90

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ

ՋՂՎՍ, I, № 73

Գրիչ՝ Մանուէլ քահանայ
Վայր՝ Ղարաճիսար

ա

332 Փառք... Արդ՝ դրեցաւ հոգիարուղխ աս//տուածային գանձարանս ի հայկազանս տումարի Ռ և ՂԱ (1642) ամին, հրոտից ի Դ (4), և սեպտեմբերի Ե (5). ի յաստուածապահ քաղաքիս Կոլոնիայ, որ այժմ ասի Ղարաճիսար, ի յանառիկ ամրոցիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Սրբոյն Ստեփանոսի Նախավկային. ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսին, և յառաջնորդութեանն տէր Կարապետ եպիսկոպոսին, զոր տէր Յիսուս տացէ նմա սիրտ հաստատուն և միտք անզբաղ և հոգի անաղտ՝ լցեալ ամենայն իմաստութեամբ, ժառանգել զաթոռ հայրենի ժառանգութեան, հանդերձ եղբարբ իւրով և ամենայն զարմիւք՝ մինչև ի հազար ամն. ամէն։ Զոր եղև զրաւ գրոցս ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ընդ բռամբ ածեալ եղև աշխարհս ընդ չարաշուք և ընդ մարդախողող և ընդ գազանադէմ ազգին նետողաց. զոր ազգի ազգի նեղութեամբ և չարչարանաւք և հարկապահանջութեամբ կեղեքեն և աւերեն զաշխարհս. և ոչ ու[ս]տեք հասանի աւգնութիւն, ոչ յերկնէ և ոչ յերկրէ և ոչ այլ ուստեք։ Զոր տէր Յիսուս որ վասն Ադամայ տնկելոյն եկն և ղգեցաւ մարմին և աղատեաց զադամայինքս ի սատանայէ, նոյն ինքն Փրկիչն մեր՝ իւր անոխակալ ներողութեամբն և գթածախառն խնամովն ազատեսցէ զմեզ ի յանհընարին դառնութենէս և ի նեղ ժամանակէս. ամէն։ Որ ետ տկարիս հասանել ներողութեամբն իւրով ի յաւարտումն դրոցս, որ կոչի Ժամագիրք, Աղաւթամատոյց և տետրակ Սաղմոսարան և այլն։ Ընդ որս և ես՝ մեղապարտ գրիչս Մանուէլ, որ բնաւ չեմ արժանի յիշման, արդ, երես անկեալ աղաչեմ զսբ. ընթերցողդ, առնել արժանի յիշելոյ ի ժամ սոսկալի և քստմնելի սբ. բաշխման խորհրդոյն. և անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրիս, զի ժամանակս դառն էր, և կենակիցն իմ առ Քրիստոս փոխեալ էր. վասն այն խելս կորել էր։ Աղաչեմ յոյժ թախանձանաւք, զի խնամաւք կալցին, զի խնամեալ և պահեալ լիցին յԱստուծոյ։ Եւ որ կարդա կամ աւրինակէ, գրեսցէ զնոսա տէրն Քրիստոս ի գիրն կենաց. բայց զեղկելիս մի՛ մոռացցի։

Դարձեալ յիշեցէք զուսուցիչն իմ զԳրիգոր քահանայն, և զհայրն իմ՝ զտէր Վարդան, և զմայրն իմ՝ զՍուսամ, և զկենակիցն իմ՝ զեազգուլին և այլ ամենայն մերձաւորքն մեր ի Տէր։ Եւ խնամաւքդ սորա՝ խնամեալ լիցին յԱստուծոյ. և որք ոչ խնամարկեսցեն՝ զհակառակն տեսցեն։

[10] Զեռագրից թերթ ընկնելու պատճառով հիշատակարանն ընդհատվում է։

Բ

...Յորոց և մին ես անպիտան՝
Ղարասարցի տեղեաւ բնական,
Եւ Մանուէլ կոչիմ անուան,
Ի սուրբ գրոց գիրկ և ունայն.
Քանզի գործովս եմ անարժան,
333 Զձևն ունիմ // քահանայութեան,
Դարձա մեղաց շտեմարան,
Աստուծոյ ի՞նչ տամ պատասխան.
Զձեզ աղաչեմ հարք սրբազան,
Որք հանդիպիք երգոյս դաւթեան,
Զիս արժանի առնէք յիշման,
Առ արարիչ անմահ արքայն։

91

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՏԵՐԱՎՋ, № 2 (ժամանակ?)

Հետ. ստացող՝ խոջայ Ֆաճրատ

ա

Փառք...։ Արդ՝ ես Ֆաճրատս գնեցի զԱստուածաշունչ գիրքս ի հալալ և ի յարդար վաստակոց իմոց, և նորոգել ետու յիշատակ ինձ և իմ հոգոյն։ Դարձեալ յիշեցէք ծնողսն իմոց, հօրն իմոյ՝ Նուրուն և մօրն իմոյ՝ Թանքաքին, և որդոցն իմոյ Ազարիային, Պետրոսին, Սարգիսին, և դստերացն իմոց՝ Մալլաճիխանին, Մուղամին, Աննային, Սողովմին, Զերեքին, և եղբարցն իմոց՝ Շեխումին, Փիրճամզին, Պարուքին և Աղասլէկին և ամենայն արեան մերձաւոր[ա]ցն։ Ով որ կարդայ կամ յաւրինակէ, լի բերան Աստուած ողորմի ասէ խոջայ Ֆաճրատին, և ամենայն վերոյ դրելոցս ի սմայ։

Նորոգեցս և կաղմեցս գիրքս ձեռամբ սուտանուն Դասպար իրիցու Ղարաճեցոյ, ի թվիս ՌՂԱ (1642), ի հայրապետութեանն տեառն Փիլիպոսի կաթողիկոսի, ի թագաւորութեանն[11] շահ Ապասին, որ զկնի շահ Սաֆուն, ԺԲ (12) տարոյ մանուկ թագաւորեաց, որ այժմ ասեն Փոքր շահ Ապազ։ Գ (3) ամսոյ թագաւոր էր յորժամ գիրքս կա[զ]մեցինք։ Տարին Կուսն էր, ամիսն սեպտէմբեր։

Դարձեալ յիշեցէք զբարէհոգի խոջայ Ֆաճրատն, որ բազում փափագանաւք առաւ զգիրքս և նորոգել ետ զսայ, յիշատակ վասն հոգոյ իւրոյ Աստուած իւր տանն արքա[յ]ութիւն պարգևէ, որ է աւրհնեալ յօիտեանս յօիտենից. ամէն։

Բ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոջա Ֆաճրատն, որ ըստացաւ զսբ. զԱստուածաշունչս, ի հալալ վաստակոց իւրոց, և կողակիցն իւր՝ Մէրտատիկն, և զծնաւղս իմ Նորի, Թանքաքն...։

[11] Տպված է «ի թուագրութեանն»։

92
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1684

Գրիչ՝ Ոսկան

ա

383բ Աւարտեցաւ գիրքս փիղիսոֆայական, ձեռամբ Ոսկ[ան] բանասիրի և փծնոյ գրչի, թուին ՌՂԲ (1642) յամսեանն Հոռւոյ, որոյ էին աւուրք է (7), ի խնդրոյ բանի սպասաւորի և քաջագունի հռետորի Յովհաննէսի Մուղնեցւոյ, զոր տէր Յիսուս բարեաւ վայելել տացէ. ամէն։

բ

283բ—284ա Լուսանցքում Ասլուայ նահլաթ Մուղնեցի, զի այս ինչ եղանականէ, // զոր գրեմ, գրեցի և դրելոց եմ փոխան եղանակականի։

93
ՔԱՐՈԶԳԻՐՔ
ԼԱԱԺԻ, Բ—3 (մանրաժապավէն, Երևան, № 226)

Գրիչ՝ Միքայէլ

ա

425բ Փառք...։ Ես՝ մեղաւոր և անարժան Միքայէլ ծառայն Յիսուսի Քրիստոսի և սբ. Նիկոլայոսի սքանչելագործ հայրապետին։ Որ ետ կարողութիւն անարժան գրցիս Միքայէլ՝ որդի Ղազարիճ Սիսցի, որ գրեցի այս զսբ. Քարոզգիրքս։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ հայրք և տեառք իմ, խնդրեմ զձեզ չմեղադրեցէք գրիս. յերբ սղալ կամ պակաս գտանիցէք այսուն մէջն, կու խնդրեմ օր թողութիւն շնորհեցէք և պակասն ինչ տեղ կա՝ գրեցէք և ազատեցէք սղալութենէ գրիս. ամէն։

Կատարեցաւ այս ի թվին Հայոց ՌՂԲ (1642) դեկտեմբեր ամսոյ ԺԳ (13)[12]։

Յորժամ որ կարդայք յիշեցէք ի սբ. աղօթս ղիս և զծնօղս իմ և ասացէք թէ Աստուած ողորմի։

բ

13ա Ես առաւել զս//տացող գրոցս և գրչիս Միքայէլ, որ պատճառ եղաւ գրել, և ամենայն արեան մերձաւորքն հաւասար. ամէն։

94
ՏՕՆԱՑՈՅՑ
Ջմմառ, № 585

Գրիչ՝ Աստուածատուր Հալապեցի

Վայր՝ Վենետիկ

196 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տաւնացոյցս և քաղուածք Պարզատոմարիս ի լաւ և ընտիր յաւրինակէ, ձեռամբ նուաստ և անարժան գրչիս Աստուածատուրի Հալապեցոյ, ի վայելումն Ջուղայեցի էպրահամի որդի Սահա-

[12] Շարժական տոմարի հաշվով Հայոց ՌՂԲ թվականի հոռի ամսի 7-ը կլինի 1642 թ. նոյեմբերի 17-ին, նույն հաշվով հայոց ՌՂԲ տարին սկսվում է 1642 թ. հոկտեմբերի 12-ին։

կին[13], ի թվին Հայոց ՌՂԱ (1642), դեկտեմբերի ԻԳ (23), օրն ուրբաթ։
197 Գրեցաւ ի Վէնէ//տիկ կղզին, ընդ հովանեաւ Ս. Ավետարանչին Մարկոսի։
Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զնուաստ յոգի զԱստուածատուրս և զուսուցիչն իմ՝ զտէր Մինասն և զամենայն արեան մերձաւորսն իմ, ե Աստուած զձեզ յիշէ...։

95
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 35

Գրիչ՝ տէր Յակոբ

ա

130բ Թվին ՌՂԱ (1642) ամեան։

բ

161ա Եւ զդծող գրոյս զանարժան զտէր Յակոբս յիշեայ։

96
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 45

Գրիչ՝ Սարգիս Եգեսացի
Վայր՝ Լիմ

293ա Փառք...։ Որ և նորին ամենաբարի կամաւքն ձեռնարկեալ դեղեամիտ և յողդողդ ապիկարս Նղեսացի Սարգիս, և ամենակարող զօրութեամբ նորին յանկ և զրաւ ածեալ աւարտեցի զսա ի յերկիրս Ամկոյ, ի ծովապատ Լիմս, ի հրեշտակակրօն և քրովբէաճեմ մենաստանս, ընդ հովանեաւ Ս. Գէորգ զօրավարին, ի ՌՂԱ (1642) ամին. և ի կաթողիկոսութեան տեառն տէր Փիլիպպոսին, և ի յառաջնորդութեան յայս սբ. մենաստանիս տէր Ստեփաննոս վարդապետին, ի վայելումն ինձ՝ ամենաչար և եղեռնագործ ստրուկ գրչիս Սարգսի։ Բայց աղաչեմ և հայցեմ զհանդիպողդ յայսմ աստուածութեան տառիս ամէներջանիկ և երիցս երանելի սբ. հօրս մեր Նաագրեա, անմեղադիր լինել սխալանաց, և խոշորութեան, և մանրութեան, և վասն լուսանցկի սակաւութեանն, և պատուով գրոյն։ Վասն զի յօժարութիւն կամացս և իղձ փափագանացս յաղթեաց, և քարտէս ոչ ունելով բաւական, այսպէս ձեռնարկեցի. ներումն և թողութիւն շնորհեցէք, և զի կար մեր այսքան էր, անմեղադիր լերուք։ Բայց գոհութիւն տուողին՝ զկարողութիւն, աւրհնութիւն...։

97
ՅԱՂԱԳՍ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹՈՎՄԱՅԻ ԱԳՈՒԻՆԱՅԻՈՅ
Երևան, № 120

Գրիչ՝ Յակոբ երէց

ա

254բ Թվին ՌՂԱ (1642)։

[13] Ցուցակի հեղինակը հաղորդում է, որ «Էպրահամի որդին Սահակին» հատվածը գրված է սկզբնապես եղածը ջնջելուց հետո։

Բ

293ա Զմեղապարտ Յակոբ եղկելի էրէցս յիշեցէք։

Գ

304ա Խիստ նեղացեալ եմ ի գրելն. ոհ, ոհ, ո՞հ։

Դ

347ա Զսուտանուն Յակոբ էրէցս յիշեցէք։

Ե

382ա Զստացող սորին յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զՅովհաննէս վարդապետն, և զիւրքն ամենայն, և զուք լիջիք յիշեալք ի Քրիստոսէ. ամէն։

Թվին ՌՂԱ (1642)։

98

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 294

Գրիչ՝ Վահրամ դպիր

Վայր՝ Թորըսկան

ա

269ա Փառք...։

269բ Արդ՝ շնորհօք Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զսբ. Աւետարանս և սրբագրեցաք ի լաւ և յընտիր օրինակէ, ի մայրաքաղաքս Շօշ, այսինքն՝ է Ասպահան, ի դեղս Թորըսկան, որ է յեղր Նարընղալային, ձեռամբ անարժան գրչի Վահրամ դպրի, որ միայն զա-

270ա նունս ունիմ և զգործս ոչ, // ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642) ամին։ Եւ ի հայրապետութեան տոհմիս հայկական տեառն Փիլիպոսի խարպնազգեաց կաթողիկոսի, որ յետ մեծին Մովսէսի ժառանգեաց զսբ. աթոռն էջմիածնի, և ի արքեպիսկոպոսութեանն գեղաքաղաքիս Նոր Ջուղայո[յ] և ամենայն քրիստոնէիցս տէր Խաչատրի հեզահոգի և քաղցրաբան վարդապետի, և ի թագաւորութեանն Պարսից շահ Սէֆուն, որ էր երկրորդ մեծին և իմաստնոյն արքայի քաջասրտի շահ Ապաս կոչեցելոյ։ Որ և սա եհան զմեզ ի բնիկ երկրէն մերմէ և բերեալ զետեղացոյց դմեզ խաղաղութեամբ ի քաղաքս Շօշ, որ կոչի Ասպահան, յանկեան ուրեք պատշաճաւոր։ Ընդ մեզ բերելով և զսբ. աջն Գրիգորի մերոյ լուսաւորչին, որպէս թէ հիմն և հաստատութիւն կալոյ, մնալոյ մեզ աստ. զի յոյժ սիրէր զազգս Հայոց և բազում գթով և խնամօք պահեաց զմեզ, որչափ եկաց, մնաց նա կենդանի, զորոյ զլաւութեան փոխարէնն հատուսցէ նմա ամենազօր թագաւորն երկնաւոր։ Իսկ ի այն ամին, որ ՌՁԸ (1639) էր թիւն Հայոց, Փիլիպոս կաթողիկոսն հայրապետ ամենայն Հայոց և մեծ պատրիարգն Վաղարշապատու տեառնակառոյց և լուսա-

270բ նկար սրբոյ աթոռոյն էջմիածնի // յաշորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ելեալ ի յաթոռոյն եկն ի Ասպահան ի սակաւաժողովս քրիստոնէից առ ի մխիթարութիւն և ի սփոփումն տրտմութեանս մերոյ՝ ղերկեցելոյ ի հայրենական ժառանգութենէ։ Որ և ի գալըստենէ նորա ոչ սակաւ մխիթարեցաք յաստուածատուր բանիցն և խրատուց նորա։ Նաև կամ եղև սորա դարձուցանել զսբ. աջն Լուսաւորչին մերոյ՝ ի յաթոռն իւր ի սբ.

էջմիածինն. զոր և արարն իսկ որպէս թէ նշան ազատութեան մերոյ յօտար և ի պանդուխտ երկրէս ի հայրենի և ի բնիկ երկիրն մեր, զոր և յոյժ ըղձիւ փափաղիմք։ Այլ զի յայսմ հնար ոչ էր լինել առանց հրամանաց թագաւորին, զի հրամանաւ թագաւորին բերեալ եղև աստ։ Վասն որոյ վստահացեալ ի Հոգին Սբ. և ի կենդանի աղօթք սրբոյ լուսաւորչին եմուտ առ թագաւորն Պարսից արժանաւոր պատարագաւ և բաղում գանձուց ծախիւք։ Եւ շնորհօք Ս. Հոգոյն էառ ի թագաւորէն հուքմ և հրաման յաղագս Դ (4) իրաց։ Նախ՝ զի զպատուական սբ. աջն լուսաւորչին մերոյ դարձուցանել ի յաթոռն իւր արժանաւոր։ Երկրորդ՝ զի սբ. էջմիածնա[յ] գեղն աղատ լիցի ի թագաւորական հարկէ և վախմ լիցի սրբոյ աթոռոյն որպէս և յառաջագոյն։ Երրորդ՝ զի ո՞ւր քրիստոնեայք իցեն՝ եկեղեցի հաստատեսցի անպատճառ։ Չորրորդ՝ զի վարդապետք և առաջնորդք որ յիշխանութենէ սրբոյ աթոռոյն ուր և գնասցեն զիշխանութիւնս իւրեանց՝ ըստ կանոնաց սրբոց հարցն վարեսցեն առանց ընդդիմանալոյ ուրուք։ Զհրամանս զայսոսիկ առեալ կաթողիկոսն Հայոց տէր Փիլիպոսն հանդերձ սբ. աջիւն դարձաւ ի յաթոռն իւր սբ.։ Որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն։

Դարձեալ ի թվականիս Հայոց ՌՂԱ (1642) ամին, որ զսբ. Աւետարանս կատարեցաք, թագաւորն Պարսից շահ Սէֆին, թոռն մեծ շահ Ապասին, բազում զօրս ժողովեաց և կամէր երթալ ի Հնդկաց երկիրն ի պատերազմ. քանզի ապըստամբեցաւ այն իշխանն Պարսից, որ ի Ղանտահար նստէր և գնաց առ թագաւորն Հնդկաց։ Եւ էլ շահ Սէֆին ի Ասպահանայ և գնացեալ ի քաղաքն Քաշան, և անգ հիւանդացեալ մահուամբ փոխեցաւ։ Եւ յաջորդեաց յաթոռ թագաւորութեանն Պարսից որդի
271բ նորա փոքրիկ // շահ Ապասն, որ և նա նման է ամենայն բնութեամբն և իմաստութեամբն մեծ շահ Ապասին. որ և զսա ի Քաշան նստուցին յաթոռ։ Եւ յետ սակաւ աւուրց գնաց ի քաղաքն Ղազվին, բայց զկատարածն Աստուած գիտէ։ Եւ ի Քրիստոսի Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

Արդ՝ խնդիր եղև այս ծաղկալի դրախտիս և վարդափթիթ բուրաստանիս խոճայ Յակոբջանն և գնեաց զսբ. Աւետարանս ի հալալ և յարդար վաստակոց իւրոց։ Յիշատակ հոգոյ իւրոյ, զոր և ասէ մարգարէն, «Երանի...»։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոճայ Յակոբջանն և զկողակիցն իւր՝ զԴավլաթխանումն, և զծնողսն իւր՝ զՍէթն և զխանադէն, և զեղբայրսն իւր՝ զԳրիգորն և զԴատանն, և զքրուերքն իւր՝ զԱնախաթունն, զՍառէն և զԵղսալամն, յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Յակոբջանն և զկողակիցն իւր՝ զԴավլաթխանումն, և զորդիքն՝ զՍարգիսն, զՅովանէսն, զՄարդարէն և զՍէթն, և զդստերքն իւր՝ Անապիսանն, և զԵղսալամն, և զՋերեղեայն, յիշեցէք...։

272ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոճա Յակոբջանն և եղբայրն իւր՝ զԳրիգորն, և նորին կողակիցն՝ զՄարիամաան, և զորդիքն՝ զՍահակն և զՋաքարէն. և զդուստրն՝ Անախաթունն, յիշեցէք...։

Կրկին անդամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Յակոբջանն, և զմիւս եղբայրն իւր՝ զԴաւտն և զնորին կողակիցն՝ զՄասումփաշէն, և զդստերքն իւր՝ զխաթունջանն, զխաթային և զՅաննայն, յիշեցէք...։

Արդ՝ յերեսս ի դետին դնելով համբուրեմ զգարշապարս ձեր, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ հայրք և եղբարք, զխոճա Յակոբջանն հանդերձ ծնօղօք, զարմօք և զաւակօք և ամենայն ազգականօք, նաև զիս զմեղապարտ գծողս, կարդալով կամ օրինակելով անմեղադիր լերուք դրիս խոշորութեանն և սղալանացն, զի կարն իմ այսչափ էր։ Եւս առաւել զծաղկող սորին՝ զՄեսրոպ դպիր Խիզանցին հանդերձ ծնօղօք յիշեցէք...։

Բ

23ա Յիշեցէք ի Քրիստոս զստացող սբ. Աւետարանիս զխոճա Յակոբջանն և զկողակիցն իւր՝ զԴօվլաթխանումն, և զծնօղսն իւր՝ զՍէքն և զխանաղէն, և եղբարքն իւր՝ զԴաւտն և զԳրիգորն, յիշեցէք...։

Գ

90բ Թվին ՌՂԱ (1642) կատարեցաւ։

Ստացող՝ Յակոբջան

Դ

Արդ՝ ես Յակոբջանս զսբ. Աւետարանս ետու ի գուռն Ս. Գրիգորի և
272բ Ս. Պետրոսին, որ մականուամբ // Երկու երեսէն կոչի, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնօղաց իմոց և ամենայն ազգականաց. ամէն։ Դարձեալ եթէ ոք յանդգնեսցի կամ ի եղբարց կամ ի յորդոց կամ ի դստերաց կամ այլ ազգականաց զսբ. Աւետարանս Բ (2) երեսիցն հանելոյ կամ ծախելոյ կամ զյիշատակարանս կտրելոյ՝ կտրեսցի ի մէջ, նզովեալ եղիցի ի ԳՃԺԸ (318) հայրապետացն...։

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

Ե

21բ Զքեզ աղաչեմ ո՛վ Կուսածին,
Յորժամ գաս ի յատենին,
Յիշեա զիս՝ ծաղկող սորին,
Մեսրոպ դպիրս Խիզանցին։

99

ՊԱՏԱՐԻԿ

Երևան, № 967

Նորոգող՝ Սարգիս դպիր

1ա Փառք...։ Արդ՝ վերրստին նորոգեցաւ և կազմեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Խ., ի դուռն Ս. Սարգսին, ձեռամբ սուտ և անպիտան Սարգիս դպրիս, թվին Ռ և ՂԱ (1642) ամին, հայրապետութիւն սբ. էջմիածնայ Փիլիպպոս կաթողիկոսին, թագաւորութիւն շահ Սաֆուն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ սբ. աղօթս ձեր ըզ-

ժամահար[14] Դուրմիշն և զկողակիցն իւր՝ Անախաթուն, *որ ետուն վերբստին նորոգել յիշատակ հոգոյ իւրեանց, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք զտէր Յովանէսն, *որ սակաւ մի աշխատեցաւ ի կ[ա]զմել սբ. Աւետարանիս։*

100

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 1260

Գրիչ՝ Անտոն Ջուղայեցի
Վայր՝ Ասպահան

ա

230ա *Փառք..., որ ետ կարողութիւն տառապեալ և փցուն գրչի, անարժան և անպիտան, և ամենայն գործոց դատարկ, հող և մոխիր, հիւանդացեալ հոգով և ծոյլ կենօք* Անտոն Ջուղայեցոյ *հասանել ի վերջին գիծ լուսաւոր լուծմանցս այս Մատթէոսեան Աւետարանի։ Արդ՝ գծեցաւ սա ի թուին ՌՂԱ (1642) ամին, ի Շօշ քաղաքն՝* Ասպահան, *ի թագաւորութիւն Պարսից, ամին յորում շահ* Սէֆի *փոխեցաւ աստի կենացս և եդին յաթոռ նորա շահ* Ապասն, *և հայրապետութեան տեառն* Փիլիպպոս *կաթողիկոսի, իշխանութեան գիւղաքաղաքիս* Ջուղայոյ *խօջա* Սարֆոազին, *և հոգևոր հօրն մերոյ՝ քաջ բարունապետ* Խաչատուր *վարդապետին։*

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ և ի լուսաճաճանչ յաղօթս ձեր զանպիտան և ծոյլ գործոց բարեաց գծող սորա դպիր Անտոնս *և զծնողն իմ՝ զմահդասի* Ղարտաշն *և զխանումն, յիշեցէք...։*

բ

289ա *Ջատացող լուսազարդ և աւետալուր սբ. տառիս զԲաղդասար վարդապետն և զծնողսն իւր՝* Աղաշանն *և զԱսպարիթուղթն, և զանդրանիկ եղբայրն՝ զՍիմէօնն, որ երիտասարդ հասակաւ և վայելուչ տեսլեամբ փոխեցաւ յանանց կեանսն և եթող վերք և կսկիծ անբժշկելի, և զՂազարն, և զշնորհազարդ ամէնունակ նկարիչ Հայրապետն, և ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանին և զհանգուցեալսն յիշեցէք...։*

գ

298ա *Ջատացող մշտասազարդ և փթթեալ բու[ր]աստանիս զԲաղդասար վարդապետն, որ փափագանօք և բաղձմամբ սրտիւ ետ ծրագրել, յիշատակ իւրն և իւրոցն ամենայնի։ Էր սա աշակերտ մեծի զխաչատրոյ արհի եպիսկոպոսի և քաջ բարունոյ* Կեսարացոյ, *որ երկրորդ լուսաւորիչ եղև հայկազնոյ տոհմիս, զոր տէր Աստուած ընդ սբ. հայրապետացն և երկուտասան վարդապետացն պսակակից արասցէ. ամէն։*

դ

131բ *Ո՛վ քարոզողք զԲանն կենաց ի հոգիս բանաւորաց, յիշեցէք զիս զմեղսամած գծողս* Անտոն *դպիրս և զծնողսն իմ և վասն Քրիստոսի արժանի արարէք ի սբ. յաղօթս ձեր, աղաչեմ զձեզ։*

---

[14] Այստեղից գիրը փոխվում է։

Ե

36ա Ո՛հ եղկելիս, որ ձանձրանամ և վհատիմ անհամբերութեանս։

Զ

375ա Փառք..., // որ ետ դրել զսբ. Աւետարանի Մաթոսեան և Յոհանու ավետարանչացն զողվածուն հեղահոգի զտէր Խաչատուրն Ջուղայեցի ե յիշատակ իւր հօր մահգասի Յակոբին, և մօրն՝ Ղատամիուրլէ, և իւր եղբարցն՝ պարոն Առ[ա]քելին, Ռուստամին, Վարդանին և Պողոսին, և քեռն իւր՝ Խաթունին, և որղոց սոցա, կենդանեաց և հանգուցելոցն, որ յարքայութեան արժանի արասցէ, ընթերցողաց...։

Արդ՝ գրեց[այ]ն զլուծմունք սբ. Աւետարանեացս Մաթէոսեանն ե Յոհանոյ ի թվականութեանս ՌՂԱ (1642) ամին, ի Շօշ քաղաքն՝ Ասպահան ի թագավորութեան շահ Սէֆուայն, և ի հայրապետութեան տեառն սրբասնեալ Փիլիպոսի կաթողիկոսի, իշխանութեան գիւղաքաղաքիս Ջուղայու խոջա Սաֆրազին, և հոգևոր հօրն մերոյ՝ Խաչատուր վարդապետին։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդի[պի]ք կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանպիտան ծառայս ձեր զվերոյ դրեալ զտէր Խաչատուրն, զհայրն և զմայրն և զեղբարքն իւր. ամէն։ Եւ որք յիշեն...։

Գրիչ՝ Աւետիս դպիր

Է

102բ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք, յորժամ ընթեռնուք զսա, միով Հայր մեղայիւ յիշեցէք զապիկար գծող սորա զԱւետիս դպիրս, ևս առաւել ի ժամ սոսկալի սբ. պատարագին զթողութիւն մեղաց իմոց խնդրելով...։

101

ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 1285 (1613 թ.)

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

Վայր՝ Նոր Ջուղայ

156ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Մուքայէլն, և զհայրն իւր՝ զտէր Յակոբն, և զնորին դուստրն՝ զԳօզալաղէն, և զնորին դուստրն՝ զԳուլաղէն։ Գրեցաւ զսակաւ յիշատակարանս ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642) ամի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի և ի արհեպիսկոպոսութեան դեղաքաղաքին Նոր Ջուղայոյ տէր Խաչատրի, ի յերկիրս Ասպահան, ի թագաւորութեանն Պարսից շահ Սէֆուն։

Եւ յառաջնորդ և խնամատար գեղջիս մերոյ զխոջայ Յակոբն, որ յայսմ ամի շինեաց զՍ. Երեսի յեկեղեցին, որ և նա պատճառ եղև զՍբ. Ամենափրկչի խորանն բարձրացոյց, որ բազում հոգս ու խնամք կու տանի յեկեղեցոյս մերոյ. Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ և վարձահատոյց արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍր. Ամենափրկչի քահանայքն՝ զտէր Կարապետն, *զտէր* Բարսեղն, *զտէր* Մուքայէլն *և զտէր* Սարգիսն, Յովանէսն, *և զտէր* Սարգիսն, *և զտէր* Սարգիսն[15], *զոր և Աստուած անփորձ և անսասան պահեսցէ, որ խնամք տանին ի հրէ, ի շրէ և յամենայն աղտից, զոր Տէրն մեր...։ Ընդ նոսին և զսակաւ յիշատակարանի գծողս, անարժան դպիր* Աստուածատուրս *հանդերձ ծնօղօք իմովք յիշեցէք և Աստուած...։*

102

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Երևան, № 1294

Գրիչ՝ Յովանէս

ա

6ա *Թվիս ՌՂ (1641) զՅովանէս փանաք գծողս աղաչեմ յիշել ի Տէր։*

բ

39բ *Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. եկեղեցոյ մանկունք, հարք և եղբարք, յորժամ ընթեռնուք կամ օրինակէք զԱւետարանի քաղուածոյս, որ է բացող դրանն արքայութեան և տապալիչ ի հիմն դըժոխոց և կործանիչ և հալածիչ սատանայի և ամենայն զօրաց նորա, յիշեցէք... տէր* Սայեայ *քաշ և բաբունի վարդապետին և արհի եպիսկոպոսին, որ ետ գրել զսբ. գիրքս, յաղագս անշինչ յիշատակի իւրոյ։ Ընդ նմին և զիս զՅովանէս գրիչս յիշել աղաչեմ ի Տէր։*

Թվին ՌՂԱ (1642)։

103

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1407 (1596 թ.)

Հետ. ստացող՝ խոջայ Ամիրասատ

ա

249ա *Փառք...։ Ես՝* Ամիրասաթս, *մահդասի* Մարգարէ *որդի, ստացայ զսբ. գիրքս ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ ինձ և իմ ծնօղացն՝ մղտէսի* Մարգարէ *և* Ղատամիսուլուին, *և իմ ամենայն արեան մերձաւորացն։ Եւ շնորհեցաք ի ձեռս հոգևոր հօր մերոյ* Խաչատուր *և*Թնասիւն *վարդապետին, և այլ ոչ ոք ունի իշխանութիւն՝ ո՛չ յիմոց և ո՛չ յաւտարաց հանել զսա ի ձեռաց ծիաձայն (sic)* Խաչատուր *վարդապետէն. ով ոք յանդգնի՝ նզովեալ լինի։*

Արդ՝ յիշեցէք զՋուղայեցի խոշա Ամիրասատն *և զծնօղսն իւր՝ զմահդասի* Մարգարէն *և* Ղատամիսուլուն *և զորդիսն՝* Մկրտիչն *և* Աւետիսն, *որ հանգուցեալ են առ հանգուցիչն մեր Քրիստոս։ Ով ոք բերան մի ողորմի ասէ, ողորմութիւն յաւուրն ահագին առցէ ի Տեառնէ մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ...։*

Թվինն ՌՂԱ (1642) սբ. գիրքս ըստացաւ։

[15] *Սույն անունը ձեռագրում չի կրկնված, այլ անձնավորություն է։*

Բ

Այլ գրով

249բ Ով առիւծ մահ դու առեր դիս,
Գերեալ եդեր ներքոյ քարիս,
Շատ շրջեցայ ես գաւառիս,
Փող մի չունիմ պահեալ առ յիս։

104
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1428

Գրիչ՝ Յակոբ

ա

188բ Կատարեցաւ սբ. տառս Թվականիս Հայոց ՌՂ և մէկրն (1642)։

Բ

189ա Փառք...։ Շնորհիւ Տեառն ըսկսայ և նորին ողորմութեամբն կատարեցի մեկնիչ սբ. խորհրդոյս։ Որ սովաւ պատարագի Քրիստոս Աստուած
189բ ճշմարիտ և ի // սմա կան հաւաքեալ սբք. ամենայն։ Սովաւ սբ. խորհրդովս և ի սրբոց սոցին բարեխօսութեամբն փրկեայ և ազատեա զհոգի տէր Յովանէս կրօնաւորին և իւր արեան մերձաւորացն. ամէն։

գ

110ա Զգծող սորին անարժան Յակոբս յիշեսջիք ի տէր Աստուած մեր։

Ստացող՝ Յովանէս կրօնաւոր

դ

189բ Արդ աղաչեմ զամենեսեան, ով դասք լուսերամից, որք օմտիք ի սմանէ ուսմամբ և կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ աղօթս ձեր զտէր Ովանէս կրօնաւորս, և հայրն իմ՝ Միրումն
190ա և մայրն իմ՝ // Հոբփսիմեան, հօրեղբայրն իմ՝ Մինասն, և հարազատ եղբայրն իմ՝ Յունանրն և Կիրակոս քահանայն։ Եւ ով ոք յիշէ...։

105
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2166

ա

387ա Դարձեալ յիշեցէք ի մահդասի Կարապետն և կողակիցն՝ Մարիամն, և զորդիքն իւրեանց՝ Զեփեթէն, որ ծնաւ ի թվին Հայոց ՌՁ (1631) ամին, ի մէջ Աղուհացիցն, և միւս որդին իւր՝ Յակոբոսն, որ ծնաւ ի թվին Հայոց ՌՁԲ (1633), ի մէջ Աղուհացիցն, և դուստրն իւրեանց՝ Թագուհին, յիշեցէք...։

Բ

Այլ գրով

Յիշեցէք ի բարի զՄարիամն որ Ծ (50) ամեայ էր փոխեցաւ առ Քրիստոս ի թվիս Հայոց ՌՂԱ (1642), յիշեցէք և զհայրն իւր՝ զԹեղանն և զմայրն՝ զՍավլումն, և զեղբայրն՝ զՅակոբն, և զորդիքն իւր՝ զՅակոբոսն և զԹագու[ն]ին. ամէն։

106
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2330

Գրիչ՝ Վրդանէս դպիր
Վայր՝ Կաֆայ

102բ Փառք...։ Աստանաւր յանդ ելեալ կատարեցաւ տառս այս իմաստասպատում, որ կոչի Քերական, արարեալ և մեկնեալ զսա մեծ վարդապետին Հայոց Վարդանայ Կիլիկեցւոյ, ի խնդրոյ բարեպաշտ թագաւորին Հեթմոյ, նաև խրատք ոտանաւորաբար ասացեալ Առաքել վարդապետի, այլ ևս ոտանաւոր պատճէն տումարի յաղագս Ղուկաս վարդապետի, այլ ևս խրատ գրչութեան մեծն Գէորգ վարդապետի, այլ ևս կա ի սմա բառս ամենայն դրոց։ Յիշատակ է սբ. տառս Մինաս վարդապետին Բաբերթացու, և հարազատ հօրն նորա՝ Ամիրդօլ[վա]թին, և մօրն նորա՝ Խաթունիկին, քրւերն նորա՝ Նուրիխանին, և ամենայն արեան մերձաւորաց նորա, ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642)[16], ձեռամբ մեղապարտ, անիմաստ, փծուն, վտիտ, փանաքի Վրդանէս դպրի։ Վասն զի սա է քանոն և գաղափար ամենայն արհեստից. զի որպէս անհնար է թռչնոց ի լուծ լծել և սակաւ պատառել, և կամ եզանց յօդս վարել, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծ գրչութեան։ Բայց գրեցաւ սա յաշխարհն Կաֆայ, ի դուռն Քաշօաու, որ անուանեն Ս. Գէորգ, ի հայրապետութեանն Հայոց տեառն տէր Փիլիպոս կաթուղիկոսին։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակաւ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան Վրդանէս գրիչս և ամենայն արեանառուսն, զկենդանիսն և զհանգուցեալսն, թողութիւն մեղաց հայցեցէք աղաչեմ, զի և ձերն թողցի։ Ի վայելումն քոյ բարունապետին Մինաս վարդապետին. Աստուած բարով վայել տացէ. ամէն։

107
ԺԱՄԱԳԻՐՔ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Երևան, № 2386

Գրիչ՝ Լիանոս Բաբերթացի
Վայր՝ Դոմնաս

263բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ // վարդափթիթ սբ. տառս, ո[ր] կոչի Աղաւթմատոյց, ի թվականին Հայոց ՌՂԱ (1642), Խախտ[ե]աց գաւառն [ի գիւղն որ] կոչի Դոմնաս[17], ի դուռն Ս. Սարգ[ս]ին, Ս. Մինասին, Ս. Աստուածածնին, Ս. Թրոսին, ի հայրապետութեանն տեառն
264ա Փիլիպոսին կաթուղիկոսին, ամէնիմաստ պատր//իարգի, և առաջնորդութեան սբ. ուխտիս տէր Մակարիս արքեպիսկոպոսին, ձեռամբ անարժան և անիմաստ, մեղսասէր և բազմավէր ոգոյ, խոշոր և սխալագիր գրչի Լիանոս Բաբերդացոյ, սբ. տառս ի վայելումն անձին իւրոյ. և յետ

[16] Ձեռագրում գտնվում է Մինաս Բաբերթացու մի այլ հիշատակարանը, թերևս նրա ինքնագիրը, տեսնել 1643 թ. շարքում։

[17] Կոչվել է նաև Թոմնա, Բարերդից մոտ 10 կմ. հյուսիս։

264բ աստեացս ել//անելոյ յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ Դարձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ, յորժամ կարդայք կամ աւրինակէք կամ հարեվանցի տեսանէք. զաւելորդն բառնայք և սղալանաց մերոց անմեղադիր
265ա լերուք. զի կար մեր այս էր։ Զի լի սրտիւ և սերտ // հաւատով ողորմի ասացէք ինձ անարժան Լիանոսին և ծնողաց իմոց, և վարպետին իմոյ Բարերբացուն տէր Գր[ի]գ[որ]ին, քաշ փիլիսոփայիին, և եղբօրն իմոյ՝ Սրապին, Սիրանին, և հաւրն իմոյ՝ Ն[ի]կոլին, և մորն իմոյ՝ Հերիփին,
265բ և քուրերոն իմ՝ Նանա//նին, Դոլաթին, Յեղսիկին։ Եւ դարձեալ մեզ յիշողացդ և ձեզ յիշելոցդ ողորմեսցի Քրիստոս...։

108
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 2408

Գրիչ՝ Մարկոս

85բ Աւդնեա իսկ և Բան և է Աստուած, յիշման առնէք զՄարկոսս, զի անարժան զհողս և զմոխիրս. ամէն։ Զբսաացող սորա զՅակոբջանն և զծնողսն՝ զՍէքն, և զխանաղէն յիշեցէք։

Թվին ՌՂԱ (1642)։

109
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՐԱՆԻ
Երևան, № 4140

Գրիչ՝ Մելիտոս դպիր

367ա Գրուեցաւ Սաղմոսի մեկնիչս ձեռամբ անարհես[տ] և անիմաստ, փրծուն գրչի Մելիտոս դպրի, որ միայն անուամբս եմ և գործովս ոչ արժանի։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, խնդրեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր ըզգուսուցիչն իմ՝ զտէր Պետրոս քահանայն, և զմարմնաւոր ծնօղն իմ՝ զմահտեսի Ղուկասն, որ բազում աշխատանք ունին ինձ անարժանիս, միթէ փոխարէնն Քրիստոս ի միւսանգամ գալստեանն հատուցանէ. ամէն։

Եւ աւարտեցաւ գիրս ի թվին ՌՂԱ (1642), ի դուռն Ս. Յոհանէս անուն եկեղեցոյս[18]։

110
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 4856 (ԺԴ դար)

Նորոգող՝ Կարապետ

ա

192բ Փառք...։

193բ Ուստի տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդն հաւատարիմ, հեզահոգի և սրբասնունդ զտէր Կիրակոս կրօնաւորն, որ ետ կրկին նորոգել զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց,

[18] Մեկ ուրիշը հետագայում այս բառի դիմաց ավելացրել է «Շնորհոյ»։ Երրորդն էլ վերջինս շնչել է թանաքով։

հօրն՝ Հէրապետին և մօրն՝ Եղիսաբեթին, և եղբարցն՝ Սահակին և Արրահամին. քւերցն՝ Գաւզալին և Ինախին. և հօրեղբօրն՝ Ախիջանին և իւր կողակցուն, և իւր որդոյն՝ Ամիրաղին. և իւր կողակցուն՝ Շախնիգարին, մեծ պապուն՝ Գուլագրգին, մեծ մամուն՝ Անլիփաշին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոց։ Ով որ կարդայ կամ օրինակէ նա՝ զԱստուած ողորմին ասացէք...։

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա տէր Կիրակոս կրօնաւոր-
194ա ին և իւր ծնողացն՝ Հէրապետին, Եղի//սաբեթին, և իւր սանահայր Աւետիսին, և իւր կողակցուն՝ Խանումին, և մօրն՝ Շախաղին, եղբօրն՝ Մկրտչին. ամէն։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականութեանս Հայոց ՌՂԱ (1642) ամի, ձեռամբ սուտանուն Կարապետի և իմոցս ամենայնի. ամէն։

Նվիրատու՝ Կիրակոս Աւշակեցի

Բ

Ես՝ աստուածասէր և բարեմիտ տէր Կիրակոս կրաւնաւորս Աւշակեցի, որ մականուն Գադաֆլու ասի, ետու կրկին նորոգել զսբ. Աւետարանս և եդի ի դուռն Կաղցու ծովահայեաց Ս. Կարապետին, յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ Ս. Կարապետից. եթէ ոք յանդգնի կամ ծախելով կամ գրաւ դրնելով՝ նա զանէծքն Յուդային առցէ և դխաչ խանողացն. ամէն. եղիցի, եղիցի։

111

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 4953

Լրացնող, կազմող՝ Թումայ դպիր

Վայր՝ Վարագ

ա

40բ Փառք...[19], որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և մեղապարտ գրչի՝ Թումա մեղաւոր և անարժան դպրի հասանել ի յաւարտ ձեռք ժամագրգիս։ Ո՛վ սբ. ընթերցողք, զի այս ժամագիրքս դրած էր, բայց Բ (2) տետր մնացեալ էր, ոչ գիտեմ եթէ զինչ էր պատահել գրողին ժամագրգիս, բայց բերին իմ մատս, ես աւարտ ածի աստուծոյ հրամանաւն։ Յետ նորա կապեցի և կազմեցի ի դուռն աստուածընկալ Ս. Նշանին, ի մայրաքաղաքս վանորէից ի Վարագ, ընդ հովանեաւ Աւագ Ս. Նշանիս և յայլ է (7) սբ. տաճարացս, որ կառուցեալ կան ի պատիւ սրբոց և ի պահպանութիւն երկրիս մերոյ Վասպուրականի, ի մայրաքաղաքս Վանայ, ի եկեղեցուն Ս. Սահակայ։ Ով ոք սմա հանդիպիք թէ ի ժամու տեղաց հաստատութեան, որ ի կարգ կատարելոյ ժամատեղաց և կամ օրինակելով, յիշեսջիք զմեզ՝ սորա առաջին գրաւղսն և զիս զմեղաւոր Թումա սուտանուն դպրի, որ միայն գործովս եմ տխմար և անպիտան, որ ոչ եմ արժանի դպրի, այլ մեղաւոր և անարժան։ Աղա-

[19] Թումա դպիրը 1642 թ. լրացրել է ձեռագրի թերի մասը։ Առաջին գրչից ձեռագրում ոչ մի տեղեկություն չի պահվել։

չեմ զձեզ, սբ. ընթերցողք, որ լի բերանով և ուղիղ սրտիւ ողորմի ասացէք գծողիս, Աստուած ձեզ ողորմեսցի...։ Թիւն ՌՂԱ (1642) ամին[20]։

Բ

40ա *Գրեցաւ ի թվին ՌՂԱ (1642) ամին։*

112

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4981 (մինչև 1635 թ.)

ա

224ա *Զվերջին ըստացող սբ. Աւետարանիս զՇաղուպաթն և զՆուրիկն, որ ստացան զսբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց... յիշատակ... իւրեանց ծնողացն՝ հաւրն և մաւրն իւրեանց, եղբարցն և քւերցն, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն...։*

Բ

Առաւ սբ. Աւետարանս ի թվին ՌՂԱ (1642), ի վայելումն տէր Մանուէլ *քահանային, վասն հոգոյն* Շաղուպաթին *և իւր ծնաւղացն. ամէն։*

113

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5136

Վայր՝ Մոկք

243ա *Փառք...։ // Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս* Մոկաց, *ի թուին Հայոց ՌՂԱ (1642), ձեռա[մբ]*[21]

114

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5361 (1486 թ.)

281բ *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք... տէր* Խաչատրին, *որ զՊղնձանից կտոր գնեաց ի տէր* Յովանէսից *և յաղբօրից և արար ոհվ ի դուռն Ս. Սարգսին, յիշատակ հոգոյ իւրոյ և իւր ծնողաց, և իւր արեան մերձաւորացն. ամէն։ Յիշեցէք... տէր* Խաչատրին, *որ արտ մի այլ գնեաց ի* Պրղնձանցի Խալօից *ու* Հապօիցմէնէ *ոհվ արար ի վերայ Ս. Սարգսին։* Դալէնց *տղայք մեռան, որ զատ չունէին, տային նոցա պաշտման, գուզի ծառմ,* Դառան *արտի յափն տուին պաշտման ու խաչի յաղկ* (sic). *ես՝ մղդսի տէր* Խաչատուր *ուհվ արի ի վերայ Ս. Սարգսին, Աստուած զիւր հոգին լուսաւորէ. ամէն։*

Ով որ հակառակի կամ յանդգնի կամ յարշև յայլազգեաց յիշէ՝ զարտ (sic) *նա զանէծքն գԿայենին առցէ ու զպատիժն Յուդային և զայլ խաչհանողացն. ամէն։*

Թվին ՌՂԱ (1642)։

---

20 Կարմրադեղով ներքևի լուսանցքում նորից գրված է «Թվին ՌՂԱ»։

21 Շարունակությունը եղծված է։

115
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7633 (1629 թ.)

Հետ. ստացող՝ Մատուր
Վայր՝ Սրկուղունք

ա

152ա Ըսկիզբն Աւետար[ան]իս այսպէս է. Հէնդաւրդուլին ծախեց Վաղաթ-նեցոյ Բաղոյն, Բաղին ծախել էր Բոնակոթեցի Խումարշին, Մատուրն դնեց Խումարշինայ հալալ ընչից իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն իւրոյ՝ Ղամբարին և մաւրն՝ Անախաթունին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց. ամէն։

բ

Դարձեալ ես՝ Մատուրս գնեցի զսբ. Աւետարանս և ետու ի դուռն Ս. Գէորգեայ Սրկուղունուց եկեղեցոյն, ոչ թէ վախմն ետու, այլ կարդալոյ։ Եթէ ոք անտրքնեսցի ազգականաց իմոց և կամ քահանայից դեղոյս և կամ այլ տեղաց եկելոց, որ համարձակի և զսբ. Աւետարանս ծախի և կամ գողանայ՝ ՅԺԸ (318) հայրապետաց նզոված եղիցի...։

Դարձեալ ի վերջին ժամանակս՝ ի թագաւորութեանն Պարսից շահ Սափու, տղայ շահ Ապազին, և կաթողիկոսութեան սբ. Էջմիածնայ տէր Փիլիպոսին, և խանութիւն Երևանայ Մահամմատղուլի խանին գրեցաւ այս յիշատակարանս, ի թվիս ՌՂԱ (1642). ամէն։

գ

102ա Դարձեալ յիշեցէք ըզվերջին ստացաւղ սբ. Աւետարանիս զյիշխանազան Մատուրն և մայրն իւր՝ Անախսաթունն, որ փափաքանաւք գնեցին զսբ. Աւետարանս յիշատակ իւրեանցն և ծնաւղացն, հաւրն իւրոյ՝ Ղամբարին և մայրն իւր՝ դարձեալ Անախաթունին, և հանգուցեալ որդոյն իւրոյ՝ Սաթիլմշին։ Եւ դարձեալ յիշեցէք զՄատուրն և զկողակիցն՝ Թրուանդէն, և որդին իւր՝ Պապախանն, Բարեգն, Տէրունն և զդուստրն իւր՝ զՄայրեանն։

103բ Դարձեալ յիշեցէք զհանգուցեալ պապն իւրեանց՝ զՄկրտիչն, զհանգուցեալ որդին իւր՝ զՂամբարն և Ղամբարի որդին՝ զՄատուրն, և զկողակիցն իւր՝ զԹրուանդէն, և զմայրն իւր՝ զԱննախաթունն... և որդոցն կանայքն՝ Եղիսաբեթն և զՋիլիխանն և ամենայն արեան մերձաւորաց իւրոց...։

116
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7850

Գրիչ՝ Վարդան աբեղայ
Վայր՝ Կարմիր վանք

177ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս [ի սբ. անապատս] որ կոչի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և Ս. Կարապետիս, և Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի թվականիս Հայոց ՌՂԱ (1642) ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Աստուածատուր

արհեպիսկոպոս և այլ միեղեն եղբարցս՝ ԺԸ (18) անձն կրաւնաւորիս, որ կան ի յայս քարաժեռ անապատիս, ձեռամբ անարժան Վարդան աբեղի և Ներսէս աշակերտի. ամէն և եղիցի։

177բ Յիշատակ է սբ. Աւետարանս մահդասի տէր Աստուածատուրին, հաւրն՝ Առաքելին և մաւր Հերիքին, և հաւրեղբաւր տէր Ղուկասին, և քուֆերն իմոյ՝ Ճուֆարին, և իւր դրստերն՝ Մանպուպին, և որդւոյն՝ Խաչատուրին, և անցեալ աղգականին՝ Մարտիրոս եպիսկոպոսին, և Կիրակոս եպիսկոպոսին, և Խաչատուր եպիսկոպոսին, և միւս Կիրակոս եպիսկոպոսին և անցեալ ննջեցելոցն. ամէն։

Դարձեալ յիշեսջիք առաջի Քրիստոսի զմահդասի տէր Աստուածատուրն, որ ստացաւ սա ի հալեալ արգ[ե]աց իւրոց և եդ զսբ. Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ[22], ի գիւղն որ կոչի Յուշպակ, ի դուռն Ս. Թորոսին. ի քահանայութիւն տէր Իսրաէղին և սարգաւակութիւն Միրաֆին ծաղիկ ոստս խաչին։

Զունի ոք իշխանութիւն կամ ծաղխել կամ դրաւական դնել, պատուողքն և պահողք աւրհնի ի Աստուծոյ և ամենայն սրբոց։

117
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Երևան, № 8030 (1341 թ.)

Գրիչ՝ Ովանէս

2ա Թվին ՌՂԱ (1642) Ճաշիւաքուն է (7) օ[ս]կի ամանաթ երետ Խասխաքունին. Աստուած վկա, Սուլթանշան վկայ, ես՝ տէր Ովանէսս վկայ այս բանիս, որբի հախ է։ Ով օր տամահութիւն անէ՝ պարտական է դատաստանին։

118
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8433 (1322 թ.)

Նորոգող՝ Գրիգոր աբեղայ

316բ Վերջի նորոգողս սորա մահդասի Գրիգոր աբեղայն, ի թվական ՌՂԱ (1642), ի վայելումն Սբ. Թորոսցի[23] տէր Ղուկասին և իւր որդոյն՝ տիրացու Լուսիկին. ամէն։

119
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 8882

Գրիչ՝ Եսայի

ա

78գ Փառք...։ Գրեցաւ գիրքս ժամատեղաց և սաղմոսս հոգելի հաւրն Դաւթի, ձեռամբ սուտանուն Եսայի գրչի, ի դուռս Խորանաշատայ Ս. Աստուածածնիս և գերեզմանացս Վանականայ և Գրիգորի սբ. վարդա-

[22] Ձեռագրում՝ «իմոյ»։

[23] Խոսքը հավանաբար վերաբերում է Բաբերդի նույնանուն գյուղին։

պետացս, և առաջնորդութիւն սբ. ուխտիս ի տէր Յովհաննէս պանծալ[ի] և արհի կուսակրաւն եպիսկոպոսի, ի թվականութեան Հայոց ՌՂԱ (1642)-ի, ի կաթողիկոսութիւն տեառն Գրիգորի։ Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց... սուտանուն Եսայի գծողս յիշեցէք ի Տէր հանդերձ ծնողաւք՝ Իսրայէլ քահանայն և Խոնդաղէն, և եղբարքն իմ՝ Մաթէոսն, և Յոհաննն, և կենակիցն իմ՝ Խոստրովն, և որդիքն իմ՝ Ստեփանոսն և Սենեքարիմ սարկաւագն, և նորաբողբոջ Սրապիոնն, և դստերքն իմ՝ Վարվառն, Թեկղին, Սառիկն և Զարիպխանն, և ամենայն արեան մերձաւորքն իմ, Աստուած ղձեղ յիշէ ի գալրստեան աւրն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զտնտեսներս, որ զմեզ կերակրեցին, Աստուած զիւրեանքն անմահական հացին արժանի արասցէ. ամէն։

Բ

Ստացող՝ Թամուր

78գ *Ես՝* Թամուրս, *որդի* Գալուստի, *յանձն առի փափաքանաւք և ուրախ սրտիւ դրիլ տվի գի[ր]քս ժամատեղաց հալալ վաստակոց իմոց, վասն որգոյ իմոյ* Դաւիթ *սարկաւագին, Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, յիշատակ հոգւոյ իմոյ, ինձ և իմ ծնողացն՝* Գալուստին[24] *և կենակցին իմոյ՝* Անայիտաթունին, *և որդոցն իմոց՝* Ամիրխանին, Ավանանին, Դաւթին, Նաւասարդին *և հանգուցեալ* Մկրտիչ *սարկաւագին, և դստերացն իմոց՝* Հոռոմսիմին, Խանումին, *և հարսներն իմ՝* Հիւրին, *և դստերքն՝* Խանումն *և* Գուլազարն, *և միւս հարսն՝* Խանաղէն, *և ամենայն արեան մերձաւորքն իմ։ Աղաչեմ զձեզ և որք հանդիպիք սմա կարդալով և աւրինակելով, լի բերան ողորմի ասացէք* Թամուրին *և* Անաիտաթունին, *Աստուած զձեզ յիշէ...։*

120

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 10641

Ստացող՝ Յոհան

ա

96ա Յոհան *ստացող սբ. տառիս սիրալի, մաղթեմ յիշել զիս առ յոյսն բնաւից։*

Գրիչ՝ Ոսկան

Բ

143բ Յոհան *սիրով զնուէրս ընկալ,*
Որ Ներսէսի *է սա ոգեալ,*
Բայց Ոսկանի *շարածբրեալ,*
Սիրոյ սաղարթ առ քեզ եղեալ։

Գ

279բ *Վաշաւորին բնութեան արձամբ էբրակին և էութեամբ եղակին... զի հետ զկարողութիւն տարտամիս և դանդաղկոտիս ժամանել յանկ և յաւարտ ոտնահանութեան ոլորակի սրբոյն* Ներսէսի Հռոմկլայեցւոյն *և*

[24] *Մոր անվան տեղը բաց է թողնված։*

մերայնոյ ջահի ևթնափայլի, այս է Ոսկանի, առ ի զբօսանս բաղձալ-
ոյն իմոյ Յօհանի պարանպետի, դեռաժամանի և ախավայելչի։
Արդ գրեցաւ սա ի թուականութեանս մերում ՌՂ և միում (1642),
ընդ հովանեաւ սրբոյ աթոռոյս։

121
ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 771

Գրիչ՝ Աբրահամ դպիր
Վայր՝ Մարզուան

212բ Փառք...։ Արդ՝ ցանկացող եղեալ յայսմ հոգելից մատենիս բարեմիտ կինս այս Խուրանն։ Արդ՝ գրեցաւ սա ի գիւղաքաղաքն Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ի թուականութեանս Հայոց ՌՂԱ (1642), ի հայրապետութեան մերոյ Փիլիպպոս կաթուղիկոսի, ձեռամբ յոդնամեղ և անարհեստ գրչի մահտեսի Աբրահամ դպրի։

122
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 772

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

ա

212բ Փառք...։ Եւ արդ՝ եղանակաւոր տառս շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642), ի դեաւղս որ կոչի Աւրնդանց, որ է հանդէպ արևելեան կուսէ Ապարանից Ս. Խաչին և այլ բազմութեան սրբոցն, որ անդ հաւաքեալ կան, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պօղոսի և Ս. Գէորգայ զօրավարին, ի գառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ
213ա անօրինաց, քանզի ևս քան զևս սաստ//կանայ բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս ևս առաւել [ի վերայ] ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց [մերոց]։ Արդ՝ յիշեցէք զանարժան գծողս Աւետիսս...։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք ստացողի տառիս Սիմէօն վարդապետին Ապարանից... որ ետ գրել զՇարակնոցս և զանազան [երանգով] ծաղկել, յիշատակ հոգւոյ իւրոյ [ե][25] ի վայելումն Կարապետ սարկաւագին։

Ստացող՝ Սիմէոն վարդապետ

բ

Ես՝ պիտակ Սիմէօն բանի սպասաւոր վարդապետ, զայս Շարակնոցս ետու իմ եղբօր որդւոյն Կարապետ սարկաւագին...[26]։

---

[25] Ուղղանկյուն փակագծերում եղածն ավելացրել է Ղ. Փիրղալեմյանը։

[26] Ղ. Փիրղալեմյանը Կարապետ սարկավագին ենթադրաբար նույնացնում է Վարագի միաբանության վանահայր Կարապետ վարդապետի հետ, մականվամբ Կալո։

Ծաղկող՝ Յովանէս Ղութեցի

գ

Արդ՝ որք ճաշակէք յամենառատ սեղանոյս, լի և առատ սրտիւ, ողորմի ասացէք ստացողի սորա՝ շնորհալի և շնորհաղարդ, աստուածահաճոյ և սրբասէր... Սիմէօն *վարդապետին և ինձ մեղապարտ* Ղութեցի Յովանէս *ծաղկողիս, ևս առաւել վարպետին իմոյ՝ տէր* Յովանէս *երաժիշտ* Հնգանցտյն:

123

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 773

Գրիչ՝ Թումայ դպիր
Վայր՝ Վարագ

ա

213ա *Փառք...։ Արդ գրեցաւ սբ. դիրքս ձեռամբ անարհեստ և փծուն գրչիս* Թումայ *դպրիս, ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642), ի յերկիրս* Վասպուրականի, *ի մայրաքաղաքս վանօրէից ի* Վարագ, *ընդ հովանեաւ*
213բ *Աւադ Ս. Նշանիս և եօթնագումբէթ Ս. Խորանացս, որ // կան կառուցեալ ի պատիւ և ի սպասաւորութիւն Ս. Նշանիս, ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպպոսի *կաթողիկոսին սբ. աթոռոյն* Էջմիածնայ *և մերոյ առաջնորդի սբ. ուխտիս* Վարագայ *տէր* Կիրակոս *վարդապետին։*

*Եւ դարձեալ յիշեցէք զ*Վարագայ *սրբասնեալ քահանայքն՝ զ*Կիրակոս *առաջնորդ սբ. ուխտիս* Վարագայ, *սբ. և ընտրեալ վարդապետն և առաջիկայն իւր զտէր* Յովանէս, *որ մականուն* Կրճօն *ասի. ընտիր, խոհեմ և սրբակրօն, քաղցրաբարբառ զտէր* Յոհաննէս *վարդապետն, զտէր* Յակոբ, *որ լաւ, ընտիր և կատարեալ է հոգւով և մարմնով, և մարդավարութեամբ, որ նա միայն դիտէ զմարդավարութիւն. զտէր* Սահակ[27] *ընտիր և ընտրեալ ամենայն գրագիր վարպետաց վարպետն. զտէր* Յովհաննէս, *որ մականուն* Բաղմիկ *ասի, զտէր* Սաեփանոս, *զտէր* Գրիգորն *և զտէր* Թումայ Մալազգիկն՝ *սբ. և ընտրեալ յերկիւղած Աստուծոյ և ամօթխած ի մարդկանէ. ևս առաւել այնչափ սիրեցեալ եղև յԱստուծոյ, որ ընտրեաց և սիրեաց՝ երեր կացոյց լուսարար և սպասաւոր Աւագ Ս. Նշանին իւր։ Ով ոք ոչ կարէ իշխել՝ ո՛չ մօտանալ և ո՛չ սպասաւորել, քանզի՝ չեն արժանաւոր, այլ պատուհաս կրեն ի սբ. խաչէն Քրիստոսի և չարաչար մահուամբ սատակին։ Ճշմարիտ սա է, որ*
214ա *ասաց Քրիստոս. «Բաց զբերան քո և լցից զդա»*[28]. *// ամենայն առաքինութեամբ զարդարեալ և փառօքն պսակեալ. տէր Աստուած հաստատուն պահեսցէ զնա մինչև ի խորին ծերութեան. ամէն։*

Եւ զսարկաւագունս սբ. ուխտիս Վարագայ՝ *զ*Ագուլեցի Պօղոսն, *զ*Յովանէսն *և զ*Աւետիքն, Անդրիասն *և զ*Յովասափն, Սահակն *և զ*Դա-

---

27 *Առ.* Դավրիժեցու «Պատմութեան» ԼԸ գլխում պատմածը հավանաբար սրա մասին է։
28 *Սաղ.*, 2, 11։

ւիթն և այլոցն։ Աստուած պարգևրեսս պահեսցէ աստ և ի հանդերձեալ. ամէն։

Ի խնդրոյ տէր Սահակ քահանայի։

Բ

439 Փառք...։ Աստուած ողորմի ասացէք [ստացողի դրոցս] տէր Սահակին և ծնողաց նորին Պետրոսին և Դուրդանի։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս... ձեռամբ Թումայ դպրիս... ՌՂԱ (1642)։ Զթումայ գրիչս ե վարդապետն իմ՝ զտէր Խաչատուր բարունապետ վարդապետն, որ ի Ըսպահան նստի, և երկրորդն զՊուղիշոյ տէր Սահակ՝ ծաղիկ և ծաղկարար, պատկերահան և գրագիր, կաղմող և կապող, ընտիր և առաքինի, սբ. և ընտրեալ։ Նոյնպէս և փեսայն իւր զՄեսրոպ վարդապետն, որ և նա ամենայն շնորհօք լցեալ, որպէս և վարպետն իւր զՍահակ քահանայն։

Եւ դարձեալ յիշեցէք զՎարագայ սրբասնեալ քահանայք զԿիրակոս առաջնորդն...[29].

Գ

Թվին ՌՂԱ (1642) շինեցաւ Ս. Յակոբս[30]։

124

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 774

Նորոգող՝ Սահակ աբեղայ

214ա Նորոգեցաւ Աւետարանս ձեռամբ Սահակ մեղապարտ աբեղայի, ընդ հովանեաւ Ս. Նշանիս Վարագայ, ի ՌՂԱ (1642) թուին, ի յառաջնորդութեան սրբասնեալ վարդապետին Կիրակոսի, ի խնդրոյ Ասլան անուն քրիստոնէի։

125

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 530

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

438 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքն ի Կոստանդնուպոլիս, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, թվականիս Հայոց ՌՂԱ (1642), ձեռամբ մեղապարտ Յակոբ դպրի, յիշեսջիք յաղօթս ձեր զմահտեսի Յակոբն[31], որ ստացաւ զսա և եդ ի գուռն Ս. Կարապետու Ուսքուտարու քահանայից և ժողովրդեանն։

---

29 Բ և Գ հիշատակարանները բացակայում են Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք»-ի Ա հատորում, այն վերցրինք նույնի Բ հատորից և զետեղեցինք այստեղ, քանի որ վերաբերում է միևնույն ձեռագրին։

30 Ղ. Փիրղալեմյանը փակագծերում ավելացնում է. «Շօոօթու»։

31 Ղ. Փիրղալեմյանը փակագծերում ավելացրել է «երդնկացի»։

126
ԺԱՄԱԳԻՐՔ
Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Բ, № 530

Նորոգող՝ Դանիէլ

440 *Ի թվին Հայոց // ՌՂԱ (1642) նորոգեցաւ սբ. երգս Դաւթին... ձեռամբ* Դանիէլի, *ի վայելումն* Բաղիշու Գոմաց *վանից, ի յառաջնորդութիւն* Մեսրոբ *վարդապետին։ Աստուած ողորմի ասէք իմ ծնողին՝* Սօսանին *և* Գուլէին։

127
ՏՕՆԱՊԱՏՃԱՌ
Մ8ՀԿ, I, № 145 (1358 թ.)

Գրիչ՝ Յովհաննէս սարկաւագ
Վայր՝ Երուսաղէմ

416 *Վայ ինձ սևերես, պոռնիկ սարկաւագ* Յովհաննէսիս, *որ անուամբ միայն եմ և ոչ գործով, եկի ի սբ.* Երուսաղէմ *թվին ՌՂԱ (1642), ի հայրապետութեան տէր* Գրիգոր *հայրապետին. և առի պեղծս զաստիճան սարկաւագութեան ի նմանէ, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ։*

128
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ8ՀԿ, III, № 885

Գրիչ՝ Յովհաննէս երէց
Վայր՝ Շոռոթ

ա

385 *Փառք... Արդ՝ ի համարահաշուութեան ծնընդեան Փրկչին մերոյ և Աստուծոյ Ռ և ՁԾԽԲ (1642) ամին, և մերոյս Թորգոմական տումարիս ՌՂ և Ա (1642) թվականին յանգ ելեալ կատարեցաւ դիրքս այս ձեռամբ* Յովհան[ն]էս *երիցու, ի գեղաքաղաքս* Շոռոթ *կոչեցեալ, յերկիրս* Երընջակայ, *հրամանաւ և ընչիւք վարժապետին մերոյ տեառն* Եսայեա *քաջաղան հովուապետի և արժանապատիւ վերադիտողի մերայինս նահանգի, նստեալ ի գահ Ս. Կարապետի և մեծի Մկրտչի տեառն* Յիսուսի *և փրկչի, որ ետ գծագրել հիքոյս* Յովհաննիսի, *յիշատակ և ի վայելումն անձին իւրոյ և այնոցիկ ազգաց յուսումնասիրաց, որ զկնի գալոց են, վասն որոյ աղաչեմ յիշել զնա։*

Դարձեալ գիտելի լիցի աստուածասէր անձանց և մանկանց սրբոյ Սիոնի, զի ըստ վերոյ դրեցեալ թվոյն եղև դրեալ զայս գիրք[32]։

բ

Զըստացող տառիս զՅեսայի վարդապետն յիշեցէք հանդերձ ծընաւղքն։

[32] Շարունակությանը կցված է նույն գրչի 1663 թ. հիշատակարանը. այն տեսնել 1663 թ. շարքում։

Գ

386 Կարդա և ժիր կաց, ո՛վ եղբայր,
Տարբերութեան ճառս է դժար,
Բայց թէ մտօք կարդաս յերկար,
Նայ հասկանաս զամէնն ի շար։
Եւ թէ մտօք այլ բան քննես,
Կամ ի զբաղմունք զքեզ կապես,
Գիտեմ որ զուր ոքեղ տանջես,
Եւ վայրապար աշխատ. առնես։

129

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մ32Ե9, V, № 1456

Գրիչ՝ Կարապետ

157 Նաև վերջին գրծագրողին,
Եւ սուտանուն Կարապետիս,
Որ զայս գրեցի իմ վարպետիս,
Խնդրեմ ասել ինձ ողորմիս։
Թվին ՌՂԱ (1642)։

130

ՇԱՐԱԿՆՈՑ

Մ32Ե9, V, № 1637

Գրիչ՝ Յովանէս քահանայ
Վայր՝ Մոկք

454 Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և անիմաստ Յովանէս մեղապարտ գծողիս, որ բնաւ չեմ յիշելոյ. հասեալ ի յաւարտ Շարակնոցիս, զի ունի սա հաւաքեալ յինքեան զերգս ամենայն սրբոց, զմարգարէից և զառաքելոց, զհայրապետացն և զվարդապետացն, զմարտիրոսացն և զճգնաւորացն, զՅարութեան և զՀոգոյն գալստեան, զՎարդավառին և զԱստուածածնին, զՍ. Խաչին և զԾընընդեանն, զԱպաշխարութեանն և զԱւաք շաբթեան, զՀանգստեան և զԱւադ աւրհնութիւն, զոր և պայծառանայ եկեղեցիք Հայաստանեաց:

Զոր տեսեալ զպայծառութիւն սբ. գրոցս տէր Յովսէփ սրբասքանեալ քահանայն, ստացաւ յիշատակ իւր և իւր ծնաւղացն։

Գրեցաւ սբ. գիրքս ի գիւղաքաղաքս Մոկաց, ի դուռն Ս. Գ (3) խորանին, ձեռամբ սուտ և ան[ար]ժան Յովանէսի, որ բնաւ չեմ յիշելոյ, այլ նրման եմ սինոյ ընկուզի, որ խեռուստ կանաչ երևի։

Թէպէտ և ես երևիմ մարդկան քահանայ,
Հոգիս ի ժանգոտեր որ ճարակ չի կայ,
Սատանէն ի դրեր զդրոշմն ի վերայ,
Կամի դողան ի հոտէ նորա։
Արդ՝ աղաչեցէք զՏէրն հիմա,
Որ չտա զայնպիտանս ի ձեռս նորա,
Զի ունիմ կարողութիւն ընդդէմ հնարիցն սատանայի։
Ի թվականութիւն Հայոց ՌՂԱ (1642)։

Ով քահանայք և մանկունք սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սբ. գրոցս, ղխոշորութեան և ղսրբխալանաց թողութիւն շնորհեցէք, զի կայր մեր այս է։

131
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՁՁՎՍ, I, № 8 (1341—1355 թթ.).

Նորոգող՝ Սարգիս

ա

94 Ով եղբարք, յորժամ տեսանէք և ընթեռնուք զայս դիրքս, յիշեցէք զսուտանուն Սարգիս եղուկս, որ գրեցի զտետրուկս[33] թուին ՌՂԱ (1642)։

բ

Ի մեծափառ սբ. ուխտէս Ստաթէի սբ. առաքելոյս ծառա և սպասաւոր սորին Գրիգոր վարդապետ ցանկացեալ Աստուածաշունչ սբ. տառիս, և առեալ զսա յիւր յիշատակ և ամենայն արեան մերձաւորաց, և զի վայելեսցէ ուսմամբ զամենայն կեանս իւր, և ոչ եղև հասու ըստ խորհրդոյն, այլ կարճաւրեա եղեալ փոխեցաւ առ Քրիստոս։ Եւ յետ սակաւուց վաճառող տառիս եկն և սկսաւ դարձեալ վիճել... իսկ վանիցս արքեպիսկոպոսն տէր Յովանէս ԺԵՌ (15000) դահեկան դրամ տրաւ իւր քսակէն և խափանեաց զնորա վիճմունքն ուխտիւք և միաբանից վկայութեամբ...։

Կազմող՝ Մինաս

գ

Ի թուիս Հայոց ՌՂԱ (1642) ես՝ անարժան սուտանուն Մինաս կազմեցի սբ. Աւետարանս. աղաչեմ յիշել և ողորմի ասել ինձ մեղաւորիս, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

132
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՏԵՐԱՎՋ. № 567

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Շօշ

843 Վերջին գրող սորա Խաչատուր էրէցս, որ գրեցի ի թուականիս Հայոց ՌՂԱ (1642), ի քաղաքն Շաւշ: Սխալանաց թողութիւն արարէք, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

133
ՀԱՎԱՔԱԾՈՒ
ՔՁՁՎ, № 130

Գրիչ՝ Կարապետ Թոխաթեցի

ա

271 Գրեցաւ Տաղարանս թվին ՌՂԱ (1642), ձեռամբ մեղաւոր և անարժան գրչի Կարապետ իրիցու Եղովկայցոց, որ այժմ Թոխաթցի, ի թագա-

[33] Բ. Սարգիսյանի կարծիքով, վերոհիշյալ Սարգիսը ոչ միայն նորոգել է, այլև հանդիսացել է երկրորդ օրինաց գրքի գրիչը (էջ 87)։

ւորութեանն Տաճկաց սուլթան Իսրահիմին, ի վայելումն Մուրանայ չէլէպոյն։ Աստուած բարով վայելել տացէ։ Ով եղբայր թուխտն ցած էր, թանաքս չառու։

Բ

Ո՛հ եղբայր, թուխտն ցած էր թանաքս չառաւ։

Գ

Գանձիս դրաւղին և աշխատողին՝
Կարապետին, *ձեր ոտից հողին՝ ողորմի։*

Դ

Եւս առաւել ղստացող գանձիս,
Լոկ Կարապետին, *ձեր ոտից հողին։*

134

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

ԹՑԱՎ, № 199

Գրիչ՝ Դաւիթ սարկաւագ
Վայր՝ Յեռուսնուկ

382 *Փառք...։ Գրեցաւ... տառրս ի թվականութեանս Հայոց ՌՂԱ (1642), ի գիւղաքաղաքն* Յեռուսնուկն... *հայցեցէք ի Քրիստոսէ* Դաւիթ *սարկաւագ[ի]ս Տէրն ողորմի։ Եւ արդ՝ խնդրող եղև այս գրքիս, որ կոչի Հարցմանց գիրք, հոգեսէր...* Մարիամին *և ծնողացն...։ Աստուած օրհնէ զ*Մարիամն, *որ ստացաւ սա հալ[ալ] ընչից իւրեանց և դրին յիշատակ իւրեանց հոգոյն, զոր տէր Աստուած բարով վայել տացէ...։*

135

ՇԱՐԱԿՆՈՑ

ՈՑՁՄՎ, № 974

Վայր՝ Զէթուն

560 *Փառք...։ Շնորհիւ Աստուծոյ և ողորմութեամբն նորին յանկ ելեալ կատարեցաւ երգարան և եղանակաւոր տառս ի թուականութեանս Հայոց ՌՂԱ (1642), ի յերկիրս* Գերմանիկոյ, *ի գիւղաքաղաքս ի* Զէթուն, *ձեռամբ անիմաստ գրչաց, վասն զի մինչ ի Հոգւոյ գալստեան եօթներորդ աւուրն ումեմն գրչի դրեալ և անտի մինչև ի վերջն այլ ումեմն տարտամ ոգոյ, ի խնդրոյ տէր* Մկրտիչ *քահանայի, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց, հօրն՝* Պատուականին *և մօրն՝* Ալթունին, *և կողակցոյն իւրոյ՝* Մարթային, *և իւր որդւոյն՝* Յոնանին, *և դրստերն՝* Հեղինէ[ին], *և եղբարցն՝* Յակոբին, Ստեփանոսին *և* Թուրվանաէ[ին], *և քրւերցն, և մեծ մօրն՝* Սառային, *և հօրեղբօրն՝* Կարապետին *և իւր կողակցունն՝* Եղեերին *և զիւր որդիքն...։ Արդ՝ աղաչեմ*

զամենայն արեան մերձաւորացն, որք ակտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք և կամ հարևանցի տեսանէք, յիշեցէք ի սր. աղօթս ձեր զգծողք սորա և զամենայն տոհմ և զազինսն և զստացող սորա զտէր Մկրտիչն, ղուսուցիչ վարդապետն իւր՝ զՂազարն, և զկողակիցն՝ զԼուսինն, և զորդին՝ զՄկրտիչն, և զդուստրն՝ զՄարիամն. և տէր Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց...։

136
ՇԱՐԱԿՆՈՑ
ՁՁԱՐ, № 124

Գրիչ՝ Ալիքսանոս երէց

ա

616 Զեռքս փրտի և հողանա,
Գարշ աղտեղի ւ անպիտանա,
Գիրս յիշատակ առ ձեզ մընա,
617 Սիրով սրտիւ ընթերցիք ըզսա։
Ալիքսանոս էրեց ծառա,
Ի յոտքս ձեր անկեալ և լայ,
Թէ ասէք ինձ Հայր մեղա,
Եվ տէր Աստուած ձեզ ողորմեա։

բ

Գրեցաւ թվին ՌՂԱ (1642)։

137
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՑՑ
ՁՂԲ, № 278

Գրիչ՝ Տէր Բարսեղ
Վայր՝ Տօմարզայ

1227 [Ա]րդ՝ և ես երես անկեալ աղաչեմք զձեզ լուսերամիցսն և մանկունք եկեղեցեայց, որ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք զմեղապարտ գրիչս տէր Բարսեղն, որ գրեցի զայս եղանակաց տառն ի յերկիրն Կեսարիայ, և ի գիւղն, որ գոչի Տաւմարզայ, ի թվականութեան Հայոցս ՃԼԶ (136) կրկնակի քառից և միակ երից (1642)[34] և աւրն Բ (2)-ն, ի թագաւորութեանն սուլթան Իպրայիմին, և [ի] կաթողիկոսութեան Հայոց Փիլիպպոսի։

138
ԱՒԵՏԱՐԱՆ
Մուրմար, II, № 81

Նուիրատու՝ Յլղաթ

156 Թվին ՌՂԱ (1642) գրեցաւ։

Յիշատակ է այս Սեաւ սբ. Աւետարան տէր Պարսամի որդի Յլղաթին, որ ես առի զայս սբ. Աւետարան ի Բֆենց տնէն, որ և եդի ի Ս. Յարութեան եկեղեցին յիշատակ։ Ուխտուն ղռուշ զգին տվի։ Եվ ամէն մարդոյ և տեսողաց հաճոյ թուեսցի, և իմաստից բաւ է...։

[34] Գրչության թվականը ցուցակի հեղինակը նշել է 1639. թե ինչպես է հաշվել, չգիտենք, բայց մեր հաշվումներով ստացվեց 1642. այսպես՝ 136×(2×4)+3=1091+551։

139
ՏՕՆԱՑՈՅՑ
Մուրմար, II, № 90 (1638 թ.)

Կազմող՝ Դանիէլ

162 *Արդ՝ կազմեցաւ սբ. զիրքս, որ կոչի Տօնացոյց և Աւետարանացուց, ձեռամբ սուտանուն Դանիէլի, ի թվին ՌՂԱ (1642), ի վայելումն հեզահոգի Ղուկաս սարկաւագին։ Որք հանդիպիք այսմ տառիս... յիշեցէք... զՂուկաս սարկաւագն, և զմեծ պապն՝ դխաչատուրն, զմարմնաւոր ծնօղն՝ զՍուլտանն, զմայրն իւր՝ Անթառսումն և զամենայն առու մերձաւորսն։ Արդ զգիրն աւարտեալ է տէր Յովասափն, և կազմն և զարձանագիրն՝ սուտանուն Դանիէլս, յիշեցէք։*

140
ՄԱՇՏՈՑ
ՄՂՀՍ, № 74

Գրիչ՝ Մուրատ
Վայր՝ Հալապ

154 *Փառք...։ Արդ՝ անկ ելեալ կատարեցաւ գիրքս այս, որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Մեսրովբ և Յոհանն Մանդակունի։ Գրեցաւ սա ձեռամբ մեղսաներկ և եռաթշուառ անձին Մուրատի, ի խնդրոյ սրբասէր և հեզահոգի քահանային՝ տէր Աստուածատուրի, և ծնողաց նորին*[35]։

Արդ՝ եղև զրաւ և աւարտ գրոյս ի թվաբերութեանս հայկազան տումարիս ՌՂԱ (1642), ի մայրաքաղաքս ի Բերիայ, որ այժմ կոչի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, և այլ սրբոցն որ աստ կան։ Ի կաթուղիկոսութեան տեառն տէր Սիմէոնին Սեբաստացոյ, և առաջնորդութեան այսմ նահանգի տէր Գրիգորի Զեյթունցոյ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս քահանայից և զգիտնականաց, յորժամ տեսանելով կամ օրինակելով, մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սբ. գրոցս տէր Աստուածատուրին, և ծնօղաց նորին և ամենայն արեան մերձաւորացն, և անարժան գրողիս, և ծնօղաց իմոց և ամենայն ազգատոհմի իմոցն, Աստուած ողորմի ասացէք, լի սրտիւ. ամէն։ Յիշեսցէ բարեգութն Աստուած զընտացող գրոցս զտէր Աստուածատուր քահանայն, որ ընտացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծընօղաց իւրոց, և ի վայելումն յանձին իւրոյ...։ Ով եկեղեցոյ մանկունք աղաչեմ յիշել ի տէր զՂազար քահանայն, որ է հայրն իմ և ուսուցիչ, որ զամենայն աշխատանօք ուսոյց ինձ զպատուական արհեստս, և լի ի խորոց սրտէ Աստուած ողորմի ասացէք, և յոյսն մեր Քրիստոս առատապէս ողորմեսցի ձեզ և ձերոցն. ամէն։

---

[35] Երկու տող բաց է թողնված։

141
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին» 1952 թ., Ա, № 86

Գրիչ՝ Գրիգոր երէց

ա

50բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և անիմաստ Գրիգոր երիցու հասանել ի յաւարտ Սաղմոսիս՝ հոգիախառն և աստուածաշունչ մարգարէին Դաւթեայ։...

51ա Արդ՝ ես մեղանչականս և պարտաւոր տէր Գրիգոր, ի երկրէն Բաղիշու, ի խնդրոյ մուղդրսի Աշուրսրիին, ի վայելումն տէր Թումին, ի թվականութեանս Հայոց տումարի ՌՂԱ (1642) գրեցաւ Սաղմոսարանս, ընդ հովանեաւ Ս. Սարգսի և այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ յիշեցէք...։

բ

Ո՛վ մայր իմ սբ., վասն աղաչանացդ քոց, թողեալ լիցին մեղք տէր Թումին, և մի՛ յիշեսցի մեղքն առաջին[36]։

գ

Ծաղկող՝ Դաւիթ

50բ Յիշեա զԴաւիթ նկարողս։

142
ԱՒԵՏԱՐԱՆ

Թ8ԺԴ, II, № 79 (1634 թ.)

Հետ. ստացող՝ Վարդանէս

5[illegible] Ես՝ Վարդանէսս ստացայ զսբ. Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց... ի ՌՂԱ (1642), ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի և թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասի, որ այսմ ամի ելեալ ի թախթ ի Ղազվին։ Ետու զսբ. Աւետարանս ընծայ... Ս. Քեղարդին՝ Երքնջակու ձորոյ Խոշկաշենու վանացն...։

143
ԱՒԵՏԱՐԱՆ (1594 թ.)

Կարնոյ գիւղեր—«ՀԱ», 1963 թ., էջ 27—28

Գրիչ՝ Ղազար

Յիշատակ է սբ. Աւետարանս Աւաքին, կնոջն՝ Զարդարին, եղբօր տէր Աստուածատուրին, իր կողակցին՝ Նորխաթունին, փոքր եղբօրն՝ Կիրակոսին, կողակցին՝ Հռոմին, և ամենայն արեան զարմին. ամէն։ Թվին ՌՂԱ (1642)։ Ով զայս վաճառէ, օրհնեալ հող չմտանէ, պատիժն Յուդային առցէ. հնազանդն աւրհնեալ եղիցի։

Ես՝ Ղազար պարոնտէրս վկայ, Մելիք վկայ, Խնյուրն վկայ, Դոլվաթ վկա, Աստուր վկա, տէր Զոյզօ վկայ։

[36] Ցուցակ կազմողը հաղորդում է, որ տէր Թումի անվան տեղը այլ անուն է եղել, հավանաբար գրչի՝ Գրիգոր երեցի անունը, որը ջնջել են և ավելացրել տէր Թումի անունը։

144
ԺԱՄԱԳԻՐՔ
CBNMac., № 47

24 Թվին ՌՂԱ (1642) յիշատակ է Աղաթմատոյցս մահտեսի Գրիգորին, ի գուռն Ս. Սարգիս եկեղեցոյ, ի Կամախ քաղաք։

145
ԱԻԵՏԱՐԱՆ
Թորոս աղբար, Բ, էջ 375

Գրիչ՝ Մեսրոբ երէց
Վայր՝ Հաւաւ գիւղ

...Գրեցաւ սբ. Աւետարանս ի թվին Հայոց ՌՂԱ (1642), ի Բալու, Հաւաւ գիւղ, ի Մեսրոբ երիցէ։

146
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5176

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Կամէնից

244ա *Փառք...։ Արդ՝ որք հանդիպիք կամ ժառանգէք, յիշեցէք զմեղաւոր* Միքայէլ, *և զերհայրն իմ՝* Ղազար, *և զմայր իմ՝* Ուստիեանայ, *և զբնաւ զարմն, և թողութիւն յԱստուծոյ խնդրէցէք, զի և ձեռն թողցի. ամէն։*

Գրեցաւ այս սբ. Աւետարանս ի քաղաքն Կամէնից, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի կաթողիկոսութեան տէր* Փիլիպպոսի էջմիածնի: *Եւ ի թագաւորութեան* Իլաիւց *երկրի* Վլատիսլավին, *ի թվականութեան յաբեթական տօմարի ՌՂԲ (1643) փետրվարի երկու, աւրն հինգշաբթի. զոր Աստուած բարով վայել տացէ ընդ երկայն աւուրս. ամէն։*

Զմեղապարտ գծող յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ։

147
ԱԻԵՏԱՐԱՆ
Մ3ԶԵՊ, VI, № 1887

Գրիչ՝ Մկրտիչ դպիր

296 *Փառք... զսրկիզբ արի* Մկրտիչ *դպիրս, զաստուածային քո գիծ տարիս...։ Եւ գրել տրւի աշակերտաց իմոց զգիրքն առաջմէն մինչ ի յաւարտ՝ տէր* Սարգսին, *և զծաղիկն և զխորանքն ոսկով և լաջուվարդիւ զարգարեալ տուի* Սրբապիոնին, *ի թուաբերութեան Հայոց յաբեթական տոհմի ՌՂԲ (1643) թուի, Աղուհացից քառասնորդաց պասի ի շաբաթն* Յոհաննու Սրուսաղէմայ *հայրապետի, մարտի ամսոյ Ա (1) յաւարտեցաւ, օր չորեքշաբթի, ի ժամ այգի. ի հայրապետութեան տեառն Փի-*
297 *լիպպոս կաթողիկոսի, և յառաջնորդութեան* Սանահնու *տէր* Սարգիս // *ահրեպիսկոպոսի, ի պարոնութեան* Բագրատունեան *յազգէն* Ռուստամ *խանին։*

Որ ողորմի Տէրն ամենի հոգոյ սորա ըստացողի Ալիխանին *և կողակցուն՝* Սատրինիհանին, *հաւրն՝* Ասլամազին, *մաւրն՝* Ճաւարին, *որ հանգուցեալ են առ Քրիստոս, այլ և որդիք սորայ* Ալանվէրտին, Պէժանին, *դուստրն՝* Թանտարին, *և փոխեցելոյ յերկրէ երկին* Ասլանմազին, Ճաւարին, *հաւրեղբայր՝* Տամուրին *և կնոջն՝* Գաւարսուլթանին, *հաւրեղբայր* Ղաբարին, Միրիանին. *սայ յիշատակ անշնջելի, բարի զաւակ հոգոց սոցին...։*

148
ԱԻԵՏԱՐԱՆ
ՈՒՍՄՎ, № 604

Գրիչ՝ Միքայէլ երէց
Վայր՝ Ոսկոյդար

60 Փառք...։ Գրեցաւ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643) ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսին և կաթողիկոսութեան սբ. Էջմիածնայ, ձեռամբ անարժան և անպիտան և յետնեալ ծառայ ծառայիցն Աստուծոյ Միքայէլ Էրէցս անարժանիս և յետնեալ գրչիս, ի գիւղաքաղաքն Ոսկոյդարն[1], ի գուն Ս. Կարապետ եկեղեցոյ սպասաւոր[2]։

Եւ դարձեալ այս սբ. Աւետարանս խնդրեցաք ի մեր նախնեացն հոգուն և մեր ծնողացն և մեր ննջեցելոցն հոգոյն յիշատակ եղիցի։ Ոչ ոք չունի հրաման և իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ և եթէ ոք [յ]անդգնի՝ զպատիժն Կայենի կրէ։...

Արդ՝ գրեցաւ աստուածախօս Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643), մայրտի ԻԸ (28), աւրն երեքշաբթի և ձեռամբ իմով նուաստ և անարժան գրչի, և ի թագաւորութեան սուլթան Իպրահիմին։ Յերես անկեալ ամենեցուն աղերսալի աղաչեմ, յիշեսջիք ի տէր Աստուածն ամենայնի զհոգևոր հայրն մեր՝ զտէր Աստուածատուր քահանայն ուսուցիչն իմ, որ ի վերայ իմ բաղում աշխատանաւք աշխատեալ է ամենայն ջանիւք և փոխարէնն Քրիստոս Աստուած հատուսցէ ի միւսանգամ գալըստեանն։ Եւ յետ նորա զտէր Կարապետ վարդապետն, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ գիր անարժանիս։ Եւ զմարմնաւոր ծնաւղքն մեր յիշեսջիք ի տէր Աստուածն ամենայնի, հանգուցեալ է առ Աստուած, և հայրն իմ՝ զՆորտունկն և զմայրն իմ՝ զՄարիամն և փոխեալ են առ Քրիստոս ննջեցեալքն մեր զՔրիստոսատուրն ամենայն զարմաւք, և զՅակոբն և զՎարթիւաթուն ամենայն ընտանեաւք առ Քրիստոս հանգուցեալ են, և Պողոսն և Սեֆէրն և ամենայն արեան մերձաւորաց մերոց...։

149
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՍՂՀՍ, № 129

Ստացող՝ Դաւիթ վարդապետ

ա

210 Փառք...
Հա[յ]կազանազգեանս մեծ տումարի,
Հայոցս մեծաց թուականին.
Երկեակ քառիցս հարիւրի
Եւ տասանցս վեցի և վեց թուի (1617)։
Եւ արդ՝ եղև այսմ տառի,
Յերուսաղէմ գնալ փափաքելի,
Որ է քաղաք վեհ արքայի,
Եւ համատիպ երկնից յերկրի։

---

1 Իմա՝ Սկյուտար, կ. Պոլսում։

2 Ինչպես հաղորդում է Ոսկյանը, հաջորդ բառի տեղը ձեռագրում բաց է թողնված։

Հարանց վարք յորջորջեալ,
Ըզվարս սբ. հարց սբ. պատմաբանեալ,
Գործով զանունն, յինքեան բերեալ
. . . . .
221 Հոդէնորոգ յայսմ տառի,
Յոյժ ցանկացեալ տարփմամբ սրտի,
Դաւիթ վարդապետս մեղսասիրի և անարժանի,
Եւ ցանկացող յայսմ տառի։
Եւ յիշատակ անջնջելի,
Նաև ծնողաց նորա բարի,
Եւ ամենայն ազգատոհմի։
Որք հանդիպիք սա ընթեռնուլ
Կամ փափաքմամբ աւրինակի,
Յաղաւթս ձեր յիշատակել,
Եւ ըզթողութիւն մեղաց խնդրել։
Զի և ձեզ Տէրն ողորմեսցի,
Այն որ առատն է ի բարի,
Ըղմեղքն ջընջի ամենայնի,
Յաւուր մեծի դատաստանի,
Եւ յիշատակաւ խաղաղեսցի,
Որ ցանկացաւ յայսմ գրրգի։

Գրիչ՝ Գրիգոր երէց

Բ

Յիշատակ է Վարս սբ. հարանց Դաւիթ վարդապետին, և ծնողացն, հօրն՝ մահտեսի Մանուկին, և մօրն, և այլ ամենայն ազգականաց նորա, և գծողի գրոցս Սարգիս անուն քահանայի և աշակերտ մեղսասէր Գրիգորի։ Սանիք ընթերցողք գրքիս, որ այս տառապեալ, մեղաւոր և անարժան Գրիգոր երէց լոկ անուն քահանայիս, որ այս գրոցս աւրինակն յոյժ սիրով և փափաքանաւք, և բազմաց միջնորդութեամբ հազիւ կաբացաք ի Տրապիզու բերել, և յոյժ տրգնութեամբ և ճգնութեամբ, և տառապանաւք իմ ձեռամբս գրեցի ի ծերութեան ժամանակիս։ Եւ յետոյ աշակերտին իմոյ Սարգիս քահանայի կրկին դրել տուի զայս աստուածաշունչ գիրքս։ Եւ դարձեալ յաւժար կամօք և բաղձմամբ սրտիւ ցանկացաւ այս անուն Դաւիթ վարդապետս Եքեռեացի, ասա այնմ բանին որ ասէ. «Երանի...»։ Վասն որոյ գընեաց և ետ յիշատակ ի դուռն[3]։ Եւ մի՛ ոք իշխեսցէ ծախելով կամ գրաւելով զսա, ոչ յազգէ կամ յաւտարէ։

Գրեցաւ և ծաղկեցաւ ի թվականիս Հայոց Ռ և ՂԲ (1643) ամին, որ ունիս տարիս զԿարիճն, և ամիսս մարտսն։ Այլ խնամող պահողք՝ աւրհնին ի յԱստուծոյ և ամենայն սրբոցն. ամէն։

Գրիչ՝ Սարգիս քահանայ

Գ

... Ողորմեա եղկելի գրծողիս և ծնաւղաց և եղբարց, մանաւանդ զմեզ ուսուցանողացս զվարպետն իմ տէր Գրիգորն, անարժան Սարգիս

[3] Եկեղեցու անունը չի գրված, տեղը բաց է թողնված։

գրչիս ոչ է յիշելի, հայցեմ ի ձեղանէ, որ յիշէք զիս ի ձեր սբ. և մաքուր աղօթիւք, պարգեւք առնուք յԱստուծոյ։

150
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Տիրայր վարդապետ Man, № 12 (1589 թ.)

197 *Յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր զխաւշայ* Եղնազարն, *որ ետ*
198 *նորոգել զՍաղմոսարանս, յիշա//տակ իւր, և իւր ծնողացն՝ մահդասի* Բարաքին, Թարվիզին. *ամէն։*

Դարձեալ յիշեցէք Եղնազարն, *և զկողակիցն իւր՝* Շանզատէն, *և զմիուս կողակիցն՝* Փարիխանն *և զորդիքն իւր՝* Աւետիկն, Միայսարն, Ամիրայսաթն, Բաբէն, Յակոբջանն, Յովանջանն. *և զդստերքն՝* Խանփարվանն, Փարասխանն, Թարվէզն, Խնթուշին *յիշեցէք, և Աստուած ողորմի ասացէք։ Թվին ՌՂԲ (1643) ամին, ադամ ԺԴ (14)*[4] *նորոգեցաւ Սաղմոսարանս, որ կոչի Դաւթի*[5]*։*

151
ԱՒԵՏԱՐԱՆ
ԹՅԱՎ, № 148

Գրիչ՝ Յովհան Լեհացի
Վայր՝ Նոր-Բաղաք

ա

280 *Թվին ՌՁԶ (1637) աւգոստոսի Ա (1), երեքշաբթի, սկիզբ եղև Աւետարանիս։*

բ

Փառք... Արդ՝... խոնջայ Պօղոսն *յերկրէ* Մշու, *գիւղաքաղաքէ* Ճապաիչրու, *ի գեղջէ* Ապիթորու, *որ այժմ բնակեալ է ի* Նոր-Բաղաք, *ի սահմանս* Նիկիու, *կամեցաւ զաստուածաշունչ տառս զայս ստանալ, զոր*
281 *ի վազուց հետէ փափաքեալ տենչայր, բաղձանաց այսմ լուսալրական // և հոգիարուխ մատենիս, որ կոչի Աւետարան։ Եւ արդ՝ գրեալ ետուր ի յարդար գոյից իւրոց և եգեր անշնչելի յիշատակ ի* Նոր-Բաղաք *վասն փրկանաց հոգւոյն իւրոյ...։ Նախ մեծապապուն՝* Անդրէասին *և մեծ մօրն՝* Մարիամին, *և ծնողացն, հօրն՝* Մախսաթին *և մօրն՝* Խալինարին, *հօրեղբարցն՝* Պեարոսին *և* Սարգսին, *եղբօրն՝* Նուրինանին, *և միւս եղբօրն՝* Վարդանին, *և կողակցին՝* Թագուհէ, *և դստերն՝* Շուշանին, *և միւս դստերացն՝* Շանմէլիքին *և* Շանզէտին, *անեղբոջն՝* Մելքոնին, *և զոքանչ մօրն՝* Մարթային, *և գէնուն՝* Կուլանին...։

Գրեցաւ սբ. աւէտս ձեռամբ ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործօղ Յոհան Լէհցի *գրչիս, որ անուամբս իմ միայն և գործովս ոչ։ Ի թվաբերութեան ԻԱ (21)-երորդ յոբելեանի և ԽԲ (42) յաւելորդի*

---

[4] *Այսինքն՝ 1643 թ. մայիսի 3-ին։*

[5] *Ցուցակի 197-րդ էջում բերված է 1610 թ. մի այսպիսի հիշատակարան. «Յիսուսի Քրիստոսի Սուրբ Աստուածածնին ծառայ Մարտիրոս եպիսկոպոս Թվին ՌԾԹ (1610)»։*

(1643)[6], մայիս ամսոյն վեցերորդի կատարեցաւ յօրն շաբաթի...։ Ապիկար և անարհեստ գրչիս սխալանաց ներեցէք...։ Դարձեալ աղաչեմ յիշել ի տէր Անկուրցի ղՅոհանէս վարդապետ զհամշիրակ, զհոգևոր եղբայրն մեր, որ պատճառ եղև սբ. գրոցս ստանալոյն խոճայ Պողոսին, զի մինչև ցայժմ առանց Աւետարանի կային...։

152
ՀԱՄԱՅԻԼ
Մագիստրոս, № 40

Գրիչ՝ տէր Գրիգոր

14 Գրեցաւ Համայիլս ձեռամբ տէր Գրիգորիս ի լաւ և ընտիր աւրինակէ, թվին ՌՂԲ (1643) մայիսի ԺԷ (17)։

153
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Բեռլին (West) Staatsbibliotliek Msor. oct. № 1921 (մանրաժապավեն, Երևան, № 910)

Գրիչ՝ Խասպէկ

ա

61բ Եւ զիս յիշեայ ի բարի մասին զանպիտան գրիչս, ով ընթերցողք և Աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան. ամէն։

բ

74ա Թվին ՌՂԲ (1643) ապրիլի ԻԷ (27)։

գ

104ա Գրեցաւ գիրս ձեռամբ անարժան և թարմատար փծուն գրչի՝ Խասպէկի, յոյժ մեղաւք զառածեալ և յետնեալ գծողացն ի քարտիսի, ի թվականի Հայոց ՌՂԲ (1643) ի, և յունիսի Է (7)։ Խնդրեմ ի ձէնջ, ով սիրելիք, որ չմեղադրէք, զի կար մեր այս էր։

154
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2389

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Էջմիածին

144ա Գրեցաւ Աղօթագիրս ի սբ. մենաստանս Էջմիածնի. ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, ի վայելումն Մկրտչիս, ի թվին ՌՂԲ (1643) յունի ԺԲ (12)։

155
ՏԱՂԱՐԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Զմմառ, № 606

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Լով

213 Գրեցաւ Աղօթամատոյցս ի մայրաքաղաքն Լով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ մեղաւոր Աստուածատուր գրչիս, ի վայելումն

[6] Այսինքն՝ (21×50)+42+551։

իլովցի բարեպաշտ և աստուածասէր, երկիւղած Աստուծոյ և յամօթխած ի մարդկանէ պարոն Վարդերեսի որդոյ բան Ստեփանոսին. Աստուած բարով վայել[ել] տացէ ընդ երկայն աւուրս, ամէն։

Ի թվին ՌՂԲ (1643) յունիսի[7]։

156

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, 7517

Գրիչ՝ Զաքարիա երէց։
Վայր՝ Կաֆայ

ա

255ա Փառք...։ Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ տառս գերապայծառ և լուսազարդ, որ կոչի Շարակնոց և Սաղմոսարան, Տաւնացոյց և Աղաւթամատոյց և այլ բաղում բանք պիտանիք հաւաքեալ կան ի սմա, որ ունի զբովանդակ տարւոյ կատարեալ զժամակարգութեան յիշատակս, զոր շարակարգեալ ի սբ. հարցն զտաւնից տէրունականաց, զառաքելոց և զմարգարէից և զամենայն դասուց սրբազանից՝ զերկնաւորաց և զերկրաւորաց, զբազմահոյլ և զբիւրս բիւրուց, որք ծանեան զՏէր և Տէր ծանեաւ զնոսայ...։

Արդ՝ ցանկացող եղեալ աստուածախաւս մատենիս՝ աստուածասէր այրս այս զպարոն Խուբլուպէկն, ետ դրել զսա մեծաւ փափաքանաւք, և եդ ի դրունս Սրբոց Քառասնից տաճարին, յիշատակ անջնջելի և կտակ յաւիտենական յոգւոյ իւրոյ աղգաց մինչև յազգս։ Վասն որոյ աղաչանաւք հարկաւորեմք աղերսական պաղատանաւք..., որք հանդիպիք մատենիս սրբոյ և պատուականի, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, զստացաւղ սորա զպարոն Խուբլուպէկն, և զհայրն իւր՝ զԽաչատուրն, և զմայրն իւր՝ Աննախաթունն, և զքոյրն իւր՝ զԽաթոյնպիքայն, և զքուր որդին իւր՝ զպարոն Աստուածատուրն և այլ ամենայն արեան մերձաւորքն իւր զայժմու կենդանիքն և զկանխաւ ննջեցեալքն, որոց թողցէ տէր Աստուած զանցանս նոցա և տացէ զհանգիստն յաւիտենից։ Հուսք յետոյ իբրև անարգի մի՛ յիշեսջիք և զծրագրաւղ Զաքարիա կրաւնաւորն, որ յառաջ քան զաւարտ գրոցս փոխեցաւ առ Քրիստոս. տէր Աստուած թողցէ զանցանս նորա և տացէ զհանգիստն յաւիտենից։

Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Անտոնի անապատականին, ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643), յուլիս ամսոյ Զ (6), յաթոռակալութեան տէր Խաչատուր արքեպիսկոպոսի։ Եւ ինքն Քրիստոս կոչաւղն աշխատողաց և ծանրաբեռնից, յիշեսցէ զյիշաւղդ վե-
255բ րոյ գրեալ // արանցս....։

բ

Զյետնեալս ի բարիս և զյամառեալս ի չարիս Զաքարիայ երէց զկազմող սբ. գրոցս, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր։ Նաև զտէր Մինաս զընտրեալ քահանայն զսպասաւոր Ս. Քառասնից եկեղեցւոյս յիշեսջիք ի տէր Յիսուս հանդերձ իւրայնովքն, որ բաղում շանիւք պատ-

[7] Տպված «յունիս ի...»։ Այս դեպքում կարելի է կարդալ «յունիս Ի (20)»։

ճառ եղև ի գրքիս գրելն, Քրիստոս Աստուած վարձս բարեաց պարգեվեսցէ նմա...։

Դարձեալ հանդիպողք ցանկալի՝ հոգևոր բուրաստանիս, կրկին պաղատանաւք աղաչեմք զլուսերամից դասքդ, յիշել ի Տէր զտէր Լուսիկ մահտեսի իրիցակինն, ծնողիւքն ամենայն, վերրստին կազմեալ նորոգել ետ զծնօղացն յիշատակն, որպէս յիշատակարանին մէջն դրեալ կայ անուանսն։ Եւ որ սեռն սիրով յիշեսցէ զնոսա՝ ինքն յիշեալ լինի յերկնից արքայութեանն։

157

ՃԱՇՈՑ

ՏԵՐԱՎՋ, № 213

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Շախասորոն

ա

261 Զի որպէս ուրախութիւնն մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել, նոյնպէս և գրչին՝ ի վերջին կէտն։ Վասն որոյ գոհացողական ձայնիւ վեր առաքեմ փառք, պատիւ և գոհութիւն ի բարձունս, որ և զանարժան գրիչ Յովանէս դպիրս արժանի արարեր հասանել ի վերջին գիծ տառիս, և ի հոգելից բուրաստանիս։

բ

Փառք...։ Ի թուականութեանս Հայոց տումարի Ռ և ՂԲ (1643) գրեցաւ աստուածախօս մատեանս, որ կոչի Ճաշու գիրք, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, ի յերկիրս Ըսպահան, ի գիւղս Շախասորոն, և յառաջնորդութեան մերոյ Ջուղայի պարոն խօճայ Սարֆրազին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և ի տիեզերալոյս կաթողիկոսութեան մեծափառ համակ բարի և հեզահոգի... հայրապետ տէր Փիլիպպոսն, և մերոյ արհի եպիսկոպոսն տէր Յակովբ վարդապետն։ Աղաչեմք զտէրն մեր և զփրկիչն Յիսուս Քրիստոս, որ տէր Աստուած զիւրեանքն փառաւորեսցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զստացող սբ. գրոյս զպարոն Ապովն, և զհայրն իւր՝ մահդասի Մարութէն, և մայրն իւր՝ Սղմէրն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և քորքն՝ Անայփիէն, Ջանեզանն, Իտիսաբեթն, և ընտանիք սոցա... Դարձեալ առ ոտս ձեր անկեալ աղաչեմ, յիշել զպարոն խօճայ Ապովն, և զհամեստ կողակիցն իւր՝ զբարեսէր Մաղիքն, և որդիս իւր, զոր և տէր Աստուած զիւրեանքն ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն խօճայ Ապովն, և զհայրն իւր՝ Մարութէն, և զվերջի կողակիցն սորայ՝ Թալէլումն, և որդիքն իւրեանց՝ Գրիգորն, Թասալին, և դստերքն՝ Աննային, Խանփաշէն, Սօլթաջանն, և ամենայն արեան մերձաւորսն ողորմեսցի Քրիստոս Աստուած... ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ապովն, որ ստացաւ զսբ. գիրքս ի հալալ արդեանց իւրոց, վասն փրկութեան հոգւոյ իւրոյ, և իւր՝ պապին՝ Թասալէ, ժամարար Սարգիսին, Խէրումին, Հայրապետին, Մարտիրոսին, աղաչեմ լի և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք... ամէն։

Դարձեալ յիշեցէք զՍբ. Աստուածածնի միարենքն՝ զտէր Յակոբ սրբամիտ քահանայ, զպատուական ծերունի զտէր Սիմէօնն, և զտէր Յովանէսն, զտէր Դաւիթն, զտէր Պօղոսն, և զտէր Մկրտիչն, և զտէր Ներսէսն, և զհանգուցեալ տէր Զաքարիայն, և տէր Յովսէփն, որ հանգեաւ ի Քրիստոս...։ Դարձեալ յիշեցէք զբարեսէր հաւատարիմ քրիստոնեայ և երեսփոխան Աստուածածնի սբ. եկեղեցւոյս պարոն խոճայ // Ապովն և տէր Աստուած զինքն երկայն աւուրս արասցէ... Եւ յիշեցէք ստացողակից սբ. գրոյս հաւատարիմ ի Տէր պարոն Սիմոնն, և զծնօղսն՝ հանգուցեալ ի Քրիստոս Փանոսն, Ագիգն, և եղբայրն՝ հանգուցեալ առ տէր Աստուած Մարտիրոսն, և քվերքն՝ Ըսպիլն, Հոիփսիմէն: Եւ դարձեալ յիշեցէք պարոն Սիմոնն, և կողակիցն իւր՝ Յուլիտէն, և զորդիքն՝ Փանոսն և Մարութն և ամենայն արեան...։ Եւ յիշեցէք զստացողակից սբ. գրոյս հաւատարիմ ի Տէր պարոն խոջայ Գրիգորն, և ծնօղքն իւր՝ մահդասի Գէրամն, Ծաղիկն: Դարձեալ յիշեցէք պարոն խոճայ Գրիգորն, և զեզբարքն իւր՝ պարոն Զաքարէն, Ըմբրում աղէն, տէր Աստուած զիւրեանց կեանս յերկեարեաց շնորհեսցէ, և զհանգուցեալ առ Քրիստոս Աստուած Ըռուսամն, Մարգարէն:

Դարձեալ յիշեցէք պարոն Գրիգորն, և զկողակիցն իւր՝ Սափուրն, և զորդիքն իւրեանց՝ բողբոջ Բաղտասարն, տէր Աստուած շատ կենօք պահեսցէ։ Եւ զհանգուցեալ մանկունս և դստերս Փիրաթամն, Մասփուրն և Սապրիիանն: Դարձեալ յիշեցէք պարոն Գրիգորի եղբայր որդի Մկրտումն, Աստուած յերկարակեաց պահեսցէ և բարի յիշատակ ծնօղաց իւրոց, ամէն...։

[Դարձեալ յիշեցէք]... Մեսրոպ դպիր Խիզանցին, որ ծաղկին և կազմին աշխատեցաւ։

Գ

264 Թվին ՌՂԲ (1643) ամին Վարդավառի բարեկենդան[8] մեք Ասպահան էաք, խաբար եկաւ ի Վաղարշաբաթ քաղաքէն, թէ մէկ շորի ծնաւ, գրլուխն շորոյ էր, լաշն ձիոյ։

158

ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ

ՁԶՀՍ, № 112

Գրիչ՝ Ամիրիան դպիր
Վայր՝ Հալապ

191 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Պարզատումարս ի մայրաքաղաքն ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Քառասնիցն և Ս. Աստուածածնին, և այլ ամենայն սրբոցս, որ աստ կան, ձեռամբ գրեցաւ մեղաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծով գրչի Ամիրիան սուտանուն դպրի, յորժամ զՊարզատումարս պարզեցի թվին Հայոց էր ՌՂԲ (1643), յնտիր և ստոյգ օրինակէ, որ ի բազմաց փորձեալ և ստուգեալ է։

[8] Այսինքն՝ 1643 թվի հուլիսի 2-ից մինչև 9-ը։

Գրեցի զսա անձն եղկելի,
Զի ոչ ունիմ գործըս բարի,
Բամեալ և ոչ ա[ր]հեստ[ս] գրչի,
Այլ լոկ անուամբ կեամ կենդանի։
Զլինել հայցեմ մեղադրելի,
Թէև սրղալ ինչ աստ գտցի,
Է իմ դրեալ աշխատելի[9],
Ընդ որս և դէմ եղեալ յերկրի։
Երկրպագեմ հանդիպողի,
Նաև սիրով կարդացողի.
Կամ թէ ի պէտս ոք ընկալցի,
Ցիշման արա զիս արժանի
Զամիրխան գրչի այլ և դպրի,
Նաև գործովք յոյժ եղկելի։

Դարձեալ աղաչեմ, ով եղրայրք, զի զմեզ առանց պարսաւանաց թողուք, և անմեղադիր լերուք վասն սղալութեան և անզարդութեան գրոյս, զի կար մեր այսչափ էր և ոչ այլ աւելի։ Եւ աւարտեցաւ աւգոստոս ի Ժ (10). ի փառս Քրիստոսի Աստուծոյ աւրհնելոյն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

159
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4122 (1325 թ.)

Նորոգող՝ Տօլվէթ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

251բ Վերստին նորոգեցաւ [սբ. Աւետարանս] ի թվականութեանս Հայոց ՌՂԲ (1643), ի արքայանիստ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ի բռնակալութեանն Տաճկաց սու[լ]թան Իպրահիմին և ի կաթողիկոսութեանն տէր Փիլիպպոս կաթողիկոսին, և ի պատրիարգութեանն տէր Դաւիթ արքեպիսկոպոսին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնայ Բարձրահայեաց տաճարի, ձեռամբ ումեմն մեղսաթաւալ Տօլվէթ դպրի Նդոկիացու, աւգոստոս ամ[ս]ո ի ԺԲ (12), ի վայելումն տէր Սրբասէր քահանային[10]։

160
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 10209

Գրիչ՝ Ոսկան բանասէր
Վայր՝ Էջմիածին

271բ Յաւէտ յարակայ...։ Սակս հասանելոյն յօժանգակութիւն տարտամեցելոյ անձինս նուաստի Ոսկանի բանասիրի, առ ի ժամանել յաւարտ գրոցս Ներսէսի կաթուղիկոսի Հայոց Կիլիկեցւոյ, որ վերակոչի Յիսուս

[9] Կենտ տողերից հոդվում է «գրչէ»։
[10] Բնագիրն այստեղ ընդհատվում է։

որդի, ընդ հովանեաւ սրբոյ աթոռոյս հայկազնոյ էջմիածնի, որ բացա-
փայլի նարդեանս իբրե երկին զանաղանօք լուսաւորօք, այսինքն ու-
սուցչօք և ուսանողօք, ի թուականութեանս Հայոց ՌՂԲ (1643)-որդին
յամսեանն օգոստոսի, որոյ էին աւուրք ԺԶ (16), և ի հայրապետութեան
271բ *տեառն Փիղիպպոսի կաթողիկոսի, ի յիշատակի Մաթէոսի վարդա//պետի*
առ ի վայելումն և ի խրատ զգօնութեան։ Արդ՝ որք հանդիպիք սմա ըն-
թեռնլով կամ օրինակելով զԱստուած ողորմին մի՛ արգելուք և զթողու-
թիւն յանցանաց հայցեցէք վերոյ դրելոցն անուանց, նաև խնդրեցէք
արժանանալ տեսութեանն Քրիստոսի...։

161
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1558

Գրիչ՝ Խասպէկ
Վայր՝ Ղարասու

ա

393ա *Փառք...։*
Ի նորաշան գրրչէս խնդրի,
Առ ձեզ բանիս յոյժ փարելի.
Ժողովարան ճարտասանի,
Ներակերտողք ի քարտիսի։
Առ որ հայցեմ աղերսալի,
Եւ պաղատիմ յոյժ բաղձալի.
Մի՛ մեղադրել ինձ ծաղրալի,
Զի չեմ հրմուտ այսմ արհեստի։
Այլ ղի անվարժ ի չափ տաղի,
Ոտտնաւոր ի հանդիսի.
Նորոգ բանիւ աստ ի կարգի,
Կարճ ի կարճոյ համառաւտի։
Արդ՝ լրւարուք որ ըստ կարգի,
Շարայարեալ ի յայս տառի.
393բ *Կերտեալ մեծին տէր Ներսէսի,*
Հայաստանեայց հայրապետի։
Սկըսեալ նախնոյն որ առաջի,
Մաղթանս առ Տէր իւր պաղատի.
Թեպէտ միջնորդ յիւր աղէտի,
Եղեալ զԱդամ հայր մեր նախնի։
Ամէնիմաստ յիւրում շնորհի,
Որ Ս. Հոգւոյն առեալ զհոգի.
Գայ ի հիմանց վերաթևի,
Ի ի նոր աւրէնսըն բարբառի։
Այլ պարզախաւս բանիւ բերի.
Ոչ բառակապ և խրթնալի.
Ի իւսմամբ սրրբոցն որ ըստ կարգի,

Երկու հազար տամբք աւարտի։
Ուստի այնու ոչ շատացի,
Շնորհաց բրղխումն իւր սբ. սբրտի.
Բամեալ բանիւ յոյժ քաղցրալի,
Դարձեալ կրկնէ զբանն առաջի։
Որպէս սբ. հայրքն յԵփեսոսի,
394ա Դաւանեցին զԱստուածորդի.
Ի ի Նիկիայ և Կոստանդնի,
Զնոյն ուղղափառ հաւատ բարի։
Թագաւորին երկնաւորի,
Զնոյն զաւանում ընդ աւանի.
Երգս յաւրինեալ խոստովանի,
ԶՅիսուս որդի հաւր անեղի։
Այլ և դարձեալ ըսկըսանի,
Եւ ոչ նըւազ ինչ արգիլի.
Նոր նորոգէ ի քարտիսի,
Ըզնախահարս Արշակունի։
Նաև ձայնիւ կականալի,
Ողբս յաւրինէ յԵդեսիայի.
Տալով մանկանց նոր Սիովնի,
Ըսփոփութիւն սրգաւորի։
Այլ և փայտին սբ. կենսատուի,
Յերգս յոգէ յոյժ հըրճուալի.
Ճարտար թովիչ էր սբ. հաւտի.
Իւր անձանձիր դեղաւք բանի։
394բ Կենաց աստի նա վրճարի,
Յանզբաւական փառսըն փոխի.
Աթոռ յազգէն իւրմէ նըստի,
Անուն Ներսէս Լամբրունացի։
Յաւղեալ և նա նորին ցաւղի,
Եւ ի սիրոյն սէր բորբոքի.
Սիրով հոգոյն տէր Ներսէսի,
Ներբողական ճառ բարբառի։
Որով մեք յոյժ փափաքելի,
Գաղափարեալ զբան պատուելի.
Ի իւծեալ խաւսիւքըս ծաղրալի,
Զեղեալ ներհուն ըստ արժանի։
Լայնատարած նորին նուագի,
Սա յիշատակ անջընջելի.
Թուական Հայոցըս հազարի,
Ընսուն ւ երկու թիւ յաւելի (1643)։
Աւարտեցաք յայս նահանգի,
Հոնաց երկրիս Ղարասուի.
Նաև առ ոտս Ս. Աւգսէնդի,

395ա Քրսան և ութն աւգուստոսի։
Ի դառնագոյն ժամանակի,
Մահմետքարայ թաթար խանի.
Պաահառելով ինչ պատճառի,
Յոյժ կողոպտեն զաղդրս Հայկի։
Բամեալ և ինձ անարժանի,
Գրծաւղ բանիս և ծաղկաւղի.
Ամէնիմաստ ձերում շնորհի,
Տուք ողորմի ինձ Խասպէկի։
Հուպ յիշեցէք ի յայս կարգի,
Զհայր Անդրեասն իմ մահդեսի.
Իսկ և ըզմայրն իմ անձկալի,
Հանդերձ ծնալղիւք տուք ողորմի։
Մեծապայծառ և պատուելի,
Ընտրեալ մաքուր իմ ուսուցչի.
Ի ձէնչ հայցեմ տալ ողորմի,
Տէր Յոհաննէս քահանայի։
Մնաւղիւք հանդերձ իւր սբ. ղարմի,
Գերապահոյճ դեղգեղալի.
395բ Բախճանապէս միշտ անթերի,
Յիշել յաղաւթրս հաճելի։
Արդ՝ աղաչեմ ես կըրկնակի,
Զայնիւ մաղթեմ կողկողալի.
Գովեալ մանկանց նոր Սիովնի,
Վերծանողաց յայսըմ տառի։
Ոտեալ անձն իմ երկիւղալի,
Թե սրղալանս աստ գրտանի
Եւ թէ աւել է ջընջելի,
Եւ թէ պակաս լընուլ ղտեղի։
Արդ՝ արասցուք աւարտ բանի,
Յիսուս որդոյս յիշատակի.
Լոյս ի լուսոյ հաւրն անեղի,
Փառք յաւիտեանս յաւիտենի[11]։

Բ

152բ Ով ընթերցաւղ քաջ վիպասան,
Դիպաւղք գանձիս արքայական,
Զնուաստ առնել յիշման արժան,
Խասպէկ գրրիչս որ նորաջան։

---

[11] Մեկընդմեջ տողերի սկզբնատառերից հոդվում է. «Ի ժամանակս թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմի ծրագրեալ»։ Զափածո սույն հիշատակարանից 1-ին, 7—12 և 67—82-րդ տողերն իր մի հոդվածում հրապարակել է Ն. Ակինյանը (տե՛ս «ՀԱՍ», 1935, էջ 338—339)։

162
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՈՑՉՄՎ, № 590

Գրիչ՝ Տօնիկ
Վայր՝ Սաամպոլ

43 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ աստուածային մատեանս, որ կոչի Սաղմոսարան, ի Ըսաամպոլ, ի գուռն Ս. Աստուածածնայ, ձեռամբ անարժան և անպիտան գրչի Տօնիկին անարհեստ գրչի, որ զանումս միայն ունիմ՝ զգործս ոչ։ Գրեցաւ թվին Հայոց ՌՂԳ (1643) հոկտեմբերի ԺԹ (19), օրն հինգշաբթի։ Արդ՝ ցանկացող եղև այսմ հոգևոր բուրաստանիս հոգեսէր և հոգիընկալ*[12] *ի հալալ ընչից, ի Կոստանդինուպոլիս։ Արդ՝ գրեցաւ քընարս հոգէպատում՝ երգ սաղմոսաց ի հայրապետութեան տէր Փիլիփոսի և թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմին և յառաջնորդութեան տէր Գրիգոր պարոնտէրին։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛ր հարք և յեղբարք, յորժամ կարդայք և սաղմոս ասէք կամ օրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր ստացող Սաղմոսարանիս. ամէն։*

163
ՄԵԿՆՈՒԹԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ
ՄՑՁԵՊ, V, № 1619

420 *Փառք...։ Այլ և երես անկեալ մեղսամած ոգով աղաչեմ զուռճօրէն բանիւ լրացեալ զդասս սրբազանից, որք հանդիպիք այսմ հոգեբուղիս՝ Մատթէի քաղուածոյ անուանեալ՝ տառիս, յիշեսջիք զՀոռոմկլայիզի Եղիա վարդապետն, որ ըստացեալ և երես ի նորոգումն, ի թվին ՌՂԳ (1643) հոռի է (7)*[13]*, ի մայրաքաղաքն Թոխատ, ի վայելումն գեղեցկայարմար անձին իւրոյ. զոր տէր Աստուած բարով վայելել տացէ յերկար ժամանակս...։*

164
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 7124

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ախալցօր

254ա *Արդ՝ գրեցաւ սբ. տառս, լուսատու ճրագ հոգւոց յաւիտեանց, երգ*
254բ *Դաւթեան...։ // Հայրապետութեան սբ. լուսակառուց էջմիածնայ տէր Փիլիպոս կաթողիկոսին, և եպիսկոպոսութիւն թեմիս (Հայոց) տէր Անդրէասին, տէր [Բ]արսեղին։ Գրեցս Սաղմոսարանս ի գիւղաքաղաքս Ախալցաւր, ի դուռն Ս. Աստուածածնա[յ], ձեռամբ սուտանուն Գրիգոր գրչիս, որ անուամբս եմ և գործովս ոչ։ Գրեցաւ թվականիս ՌՂԳ (1643) դեկտեմբեր ամսոյ Ե (5)-ին։ Աւարտման աւրհնեալ է Աստուած։*

---

[12] Պատվիրատուի անունը, ինչպես նշում է Ոսկյանը, ձեռագրում չի նշված։

[13] Շարժական տոմարի հաշվով կլինի 1643 թ. նոյեմբերի 17-ին։ Տոմարական մեր դիտողությունը տե՛ս № 9 հիշատակարանի 10-րդ ծանոթագրությունում։

165
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՑՁԱԲ, № 238

Գրիչ՝ Յունան
Վայր՝ Եդեսիա

Ա

192 Ես՝ անարժան Յունանս դրեցի շնորհիւ և ողորմութեամբն Աստուծոյ, զհոգէնորոգ տառս Մեկնութեան սբ. Աւետարանին Յովհաննու, իմ հոգեվոր հայր Է[ր]զընկացի տէր Աւետիք, որ սպասաւոր է ի Թոխաթ Ս. Պարսամայ։ Գրեցաւ թվին ՌՂԲ (1643) նոյեմբեր ամսոյ ԻԸ (28), օրն երեքշաբթի։

Բ

1091 Փառք... կատարեցս հոգէնորոգ տառս Մեկնութեան սբ. Աւետարանին Յովհաննու, զոր կարգեալ է և ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ աշակերտի երիցս երանելոյն սբ. վարդապետի Սարկաւագ կոչեցեալ, որ և նմա համազուգեալ ի սոյն խորհրդի ժողովել բանս պատշաճաւորս յաղագս աւգտի լսողաց և ուսումնասիրաց ընթերցողաց։ Բայց հաւաքեալ են աստ բանք պիտանիք ի վարդապետութենէ սրբոյն Եփրեմի, և Ոսկէբերանի, և տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, և ի տեղիս տեղիս Աստուածաբանի, և Սարկաւագի, և Անանիայի, և Իգնատիոսի և սկիզբն ի Նանա[յ]է սակաւ մի, և ի Սեբեռիանոսէ ի մէջ քրիստոսասիրացն սուղ ինչ վրկայութիւն։

Գրեցաւ ձեռամբ Յունանի, ի թվին Հայոց ՌՂԳ (1643), սահմի Թ (9)[14]։

Գ

Զստացող գանձուս և լուսերանգ տառիս, որ է աւետեաց քարոզ բոլոր ազգաց և ազանց, և փրկական տնօրէնութեան մարգացելոյ բանին պատմող և հրատարակիչ, և մեզ պատճառ փրկութեան և ազատութեան։ Ստացաւ զսայ բարի հոգի մղտեցի Հաւատվորն, և եդ յիշատակ իւր հոգոյն ի քաղաքն յԵդեսիայ. մանաւանդ ի ձեռն // Թոխաթցի
1092 Մինաս վարդապետի, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս և պարագայց ամօք երկայնաձիգ գաւազանաւ վարել զիշխանութիւն վարդապետական, արդեամբք և սրբութեամբ ճոխացուցէ զինքն. ամէն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զհանդիպողսդ՝ պատուական և աստուածավայելուչ անօթոյս, զընթերցօղսդ յարաժամ և զամենայն որդիս լուսոյ, յիշել ողորմութեամբ և աղօթիւք զմեղուցեալ հոգի իմ, և զծնօղացն իմոց՝ Կուլապետի Խաչատուրն, և զմայրն իմ՝ Շահումն, և եղբայրն իմ՝ Աստուածատուր, որ գեղեցիկ պատանի և ԺԸ (10)-ամենից վախճանեալ, զորոց պայծառացուցէ Տէր զհոգիս յիշե-

---

[14] Հայոց ՌՂԳ տարեթվի սահմի 9-ն անշարժ տոմարի հաշվով կհամապատասխանի 1643 թ. հոկտեմբերի 18-ին, իսկ շարժական տոմարով՝ 1643 թ. դեկտեմբերի 12-ին։ Մինչև այստեղ տե՛ս նաև մեր Մատենադարանի № 4006 ձեռագրի 138բ էջում (1773 թ. ընդօրինակություն)։

լոցս, և յիշողացտ վարձս բարի պարևեսցէ. ամէն։ Եւ որ տէրն է հասարակաց ամենեցուն ողորմեսցի՝ ստացողացն և աշխատողաց, յիշողացդ և յիշատակելոցս, ողորմեսցի, և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս. ամէն։

166

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 188

Գրիչ՝ Յակոբ Ակնցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

150բ Զմեղաւոր հողս Յակոբ դպիր յիշեցէք ի Տէր միով ողորմեայիւ աղաչեմ։

բ

173ա Էր թիւ Հայոց ՌՂ (1641), յորժամ սբ. գիրքս գծագրէր։

գ

184բ—185ա Զցանկ երկրորդ և երրորդ Մակաբէացւոցս յետոյ գտեալ աստ գրեցաք։ Իսկ դու որ հանճարեղդ ես, զիւրաքանչիւր յիւրում տեղիս դիցես և անմեղադիր լիցիս։

դ

286ա Զբազում երկաւք ստացաւղ սբ. Աստուածաշունչ տառիս զԳասպար քահանայն և զծնօղս նորա զմահտեսի Աստուածատուրն և զմահտեսի Մինան, և զեղբարսն զհանգուցեալսն առ Քրիստոս՝ զՄելքոնն և զԹովմասն, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի մեղաց թողութիւն, որ և Տէր զձերն թողէ. ամէն։

Գրեցաւ ՌՂԱ (1642) ամի։

ե

100ա Յիշեսցիք ի Քրիստոս զստացող սբ. Աստուածաշնչիս զԱկնցի Գասպար քահանայն, որ ետ գծագրել զմատեանս զայս ի հալալ արգեա[ն]ց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց մահտեսի Աստուածատուրին և մահտեսի Մինային, և եղբարցն իւրոց ննջեցելոցն ի Քրիստոս, և քւէրն Մարգարտին, և կենակցին՝ Մելիքին, և զաւակացն իւրոց՝ Յակոբին և Մելքոնին, և նորաբոյս Գաւիթին, և ամենայն արեան մերոց։ Զեռամբ բազմամեղ գրչի Ակնցի Յակոբ դպրի, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ի թվականիս մերում ՌՂԲ (1643) ամի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի եղև կատարումն սբ. գրոցս։

գ

440բ Զստացող սբ. Աստուածաշունչ կտակարանացս զԱկնցի Գասպար քահանայն, և ծնօղսն նորա...։

Գրեցաւ տառս աստուածային ի թուականիս մերում ՌՂԲ (1643) ամի, ի մայրաքաղաքն Կոստանդնուպալիս, ընդ հովանեաւ սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ձեռամբ Ակնցի Յակոբ դպրի։ Աղաչեմ զձեզ, վասն իմ նուէր տուք Աստուծոյ զաղօթս ձեր և մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք, նաև ծնողացն իմոց և ողորմածն Աստուած զձերն թողցէ. ամէն։

Է

464ա Զմեղաւորս Յակոբ զրիչ, նաև զծնաւղսն իմ՝ զՎահրատ և զՇազատան յիշեցէք ի մեղաց թողութիւն, ո՛վ աստուածասէր ընթերցաւղք, և Քրիստոս Աստուածն իմ յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի...։

Ը

471բ [Ա]րդ՝ երեսս անկեալ աղաչեմ զդասս սրբազան պաշտաւնեիցդ, որք հանդիպիք այսմ աստուածային մատենիս, յիշեցէք յաղաւթս ձեր զստացաւղ սորա զԳասպար սրբասնունդ քահանայն...։

Գրեցաւ տառս աստուածային ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի թուականիս Հայոց ՌՂԲ (1643) ամի, ի թագաւորութեանն իսմայելացոց սուլտան Իպրահիմի, և ի հայրապետութեանն որ ի սբ. Էջմիածինն տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, նաև յառաջնորդութեան աթոռոյն սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր քաջ հռետորի, ձեռամբ բազմամեղ գրչի Ակնցի Յակոբ դպրի։ Աղաչեմ զամենեսեանսդ, որք հանդիպիք սմա ի պատճառս տեսլեան, ասացէք աստուած ողորմի տառիս զծողի և ծնողացն իմոց՝ մահտեսի Վահրատի և մահտեսի Շազատայի, և որք յիշեքդ զմեզ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Բ

Յիշատակարան գրոցս

515բ Փառք...։ Արդ՝ և ի ծրարս ծրարեցաւ հանգամանս նախնեաց սրբոց, որ ունի յինքեան զտառս գերունակ մարգարէիցն խմբի և զկարգս թագաւորացն և զաւետարերս կենաց զԱւետարանս տեառն մերոյ յուսոյ և Աստուծոյ, և զպրակս առաքելոցն հանդերձ իւթանասուն և երկու կտակարանօքն, որ կրէ ի միջի զէակս ամենայն իմանալեաց և զգալեաց իրս անեղին մածեալ ի մտաց եղականաց ածեալ ի լոյս ռահցոյց ճշմարտութեան և կառեալ կայացաւ կաւոց գիտութեամբ։ Պարագրեալ միայնոյն և անպարագրելի փողոցս տարեալ բովանդակեցաւ թանձրացեալ մարմնով եղաւ յայսմ քառակուտակ և գնդաձև, փոքրագեղ տփիս, որ Աստուածաշունչ տառ որշորջի։ Այս յիրաւի և ճշմարտապէս ստուգաբանութեամբ է ստացումն յանուանս իրին, որ ի շնչոյ Աստուծոյ և տրնատրութեամբ Հոգոյն Սրբոյ եղև հնար սեռիցս բանաւորաց անկարելի գոլ կարևոր։...

Որպէս և այս աստուածարեալ և փափագողս բանի հետևողաց Ակրնցի Գասպար քահանայս, որ հրով տոչորեալ ի սէր սորա և մաշէր

զինքն իղձք մտաց իւրոց ի բազում ժամանակաց և զի յայսմ ազնիւ և անգիւտ աւրինակէս ստացցի, որ էր ուղղեալ յառաջին սբ. վարդապետացն և զելս իրացն ոչ գտանէր, այլ այն որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, ոչ անտես արար զխնդիր սորա, այլ առաջնորդեալ հասոյց փափագանացն։ Որ ետ սկսիլ զսբ. Աստուածաշունչ գիրքս ի գրել ձեռամբ Ակրնցի Յակոբ դպրի, որ էր իւրն գաւառակից. և յաւարտ հասուցեալ կատարեաց Տեառն գործակցութեամբ և զարդարեաց գոյն զգոյն գեղաւք և պատկերաւք և ոսկիազարդ զարդարեաց բազում ծախիւք. ի մտի արկանելով զբանն տէրունական որ ասէ. «Երթա՛յք, գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենական»[15]։ Եւ յիրաւի հետևեցաւ այսմ հրամանիս, զի ոչ էր վասն մարմնաւոր ջահից ջան սորա, այլ վասն յուսոյն որ առ Աստուած, և զի յաղաւթից ձեր աւգտեսցի քան զի այլ ուր. ասէ գիր, թէ «Յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յաւգնականութիւն»[16]։ Զոր և հայցեմ ի հանդիպողացդ այսմ ցանկալի սբ. գրոյս հանգանակեցէք զպարգևս աղաւթից, ստացողի սորա Գասպար սրբասէր քահանայի և ծնաւղացն՝ մահտեսի Աստուածատուրին և մահտեսի Մինային, և եղբարցն իւրոց հանգուցելոցն առ Քրիստոս՝ խոճայ Մելքոնին և Թովմային, և քուերն՝ Մարգարտին, և կողակցին՝ Մելիքին, և որդոցն՝ Յակոբ տիրացուին և Մելքոնին, և դստերացն՝ Մարիամին և Գոհարին, և հանգուցեալ զաւակացն՝ Դաւթին և Գրիգորին։ Այլ և երկոսին կողմանց պապերց նորին՝ Միրաքին և մահտեսի Պաղտասարին, և մամերցն՝ Մարիամին և Շալշուքին, և հօրեղբօրն՝ մահտեսի Խաչատուրին, և որդոյ նորին՝ Ղազար քահանային, նաև վարժապետին իւրոյ Դարանալեցի Գրիգոր քաջ բարբունապետին, և ամենայն արեան մերձաւորաց նորին կենդանեացն և
156ա հանգուցելոցն // թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք, զի և Տէրն զձերն թողցէ...։

Կատարեցաւ տառս աստուածային ի մայրաքաղաքն երջանիկ, ի մեծն Կոստանդինուպալիս, ընդ հովանեաւ հրաշագործ տաճարի սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի թիւ հայկազան սեռիս կրկին հնգից հարիւրից և միոյ յոբելեանից և քառեակ տասնից և երկուսից (1643)[17], ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան իսմայելացոց ի վերայ բազում ազգաց և ազանց՝ քրիստոնէից և այլոց սեռից, սուլտան Իպրահիմի. և ի հայրապետութեանն Հայոց, որ ի սբ. Էջմիածինն տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, նաև յառաջնորդութեան աթոռոյն սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր քաջ հռետորի, ձեռամբ բազմամեղ գրչի Ակրնցի Յակոբ դպրի։ Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա ի պատճառս տեսլեան յինչ և իցէ, Աստուած ողորմի ասացէք ինձ անիմաստ գրչի Յակոբի, և ծնաւղացն իմոց՝ մահտեսի Վահրատի և մահտեսի Շազաայի, և ամենայն արեան մերձաւորացն իմոց, զի բազում երկաւք և աշխատութեամբ գրեցի, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում յարուցեալ են ազգքն Տաճկաց մեծաւ պատերազ-

[15] Յովհ., Զ, 27։
[16] Յակ., Ե, 16։
[17] Այսինքն՝ [(2×5×100)+50+(4×10)]+2+551։

մաւ ի վերայ մեծ կղզոյն Կրետոյ, որ և առին զկիսակողմն նորին ի ձեռացն Ֆռանգաց. և դեռ ևս ի նոյն պատերազմի կան, և բաղում աւերս ածին եկեղեցեաց, և յոլով արիւնս հեղին քրիստոնէից։ Որ բազում տառապանաւք ի ժամանակիս յայսմիկ գրեցի զսբ. գիրքս զայս, և առաջնորդութեամբ Ս. Հոգոյն յաւարտ հասեալ կատարեցի։ Եւ այս ի խնամոց ամենակալ մարդասիրին իսկ և վասն անարհեստութեան և անվարժութեան գրոյս ներումն արարէք, զի կար մեր այս էր։ Նաև վարժապետին իմոյ Յակոբ կուսակրաւն սարկաւագի ասացէք Աստուած ողորմի, որ բազում վշտաւք ուսոյց ինձ զարուեստս գծի գրութեան։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս սրբազան պաշտաւնէիցդ, որք հանդիպիք այսմ աստուածային մատենիս, դարձեալ յիշեցէք յերկնաթռիչ յաղաւթս ձեր զվերոյ դրեալ ստացաւղ սորա զսրբասնունդ Գասպար քահանան... և աշխատաւորացն ի սայ և սրբագրողացն և աւրինակի շնորհացն, և առաւել և այնոցիկ որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին եթէ հոգևոր, եթէ մարմնաւոր. ասացէք Աստուած ողորմի...։

Տարտամս յիմաստս այսրմ գրրոց,
Որ եմ եղեալ քերաւղ գրծոց,
Ահա կարաւտ սոցին համոց,
Գրտա գերել յաւտար հոգոց։
Ուստի հարեալ սրրտիս ի խոց,
Եւ տոչորմանս որ կայ յիս բոց,
Զայս սրրսկեմ կաթս անձրևոց,
Ըղձեռահիւսս սբ. գրոց։
Միթէ գնացիւք այսոց դեռոց,
Իմ ղովասցի ծարաւս ոգւոց,
Եւ սփոփեսցի յիւրոց ցաւոց,
Սրրբեալ տաճար Տեառն աւթանոց։
Այսու յուսով յերկս վաստակոց,
Կամ ի յոքունց մէջ ի հոգոց,
Զի արծարծեալ ճրագիս իմ բոց,
Մի՛ խրթնասցի յաւտար հողմոց։

Իսկ Ս. Երրորդութիւնն աւրհնեալ եղիցի յաւիտեանս. ամէն։

167
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 333

Գրիչ՝ Գրիգոր դպիր
Վայր՝ Տպխիզ

ա

277 ա Աւարտեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Տպխիզ, ի դուռն Բեթխայհեմայ Աստուածածնին, ի ձեռամբ ոգ[ն]ամեղ և անարժան Գրիգոր դպրի, վարպետն իմ՝ Մկրաչին, հայրն՝ Աբրահամ, մայր իմ՝ Սաթխաթուն, եղբայրն՝ Յովանէսն, քոյրն իմ՝ Յեղիսափէթն, և հոգևոր մայրն

իմ՝ Մէրճուրան: Ո՛վ եղբայրք, կարդալով կամ աւրինակելով Ա (1) բերան ողորմի ասացէք՝ Աստուած ողորմի ձեզ. ամէն։

Թվականին [Ռ]ՂԲ (1643)։

Բ

278բ *Փառք...։ // Մանաւանդ ըստացող եղև սբ. Աւետարանիս նորընծայ* Գրիգոր *քահանայն աւժար կամաւք և փափաք սրտիւ, և հայրն իւր՝* Վէլիճանն, *և մայրն իւր՝* Դինարն, *և կենակիցն իւր՝* Խանումն, *և եղբայրքն իւր՝* Մարգարէն, Ղազարն, Մինասն, *և հանգուցեալ եղբարքն՝* Գրիգորիսն, Բէկինանն, Սարգիսն, Միրզապէկն, Խաչատուրն. *և քոյրքն իւր՝* Մարեանն, Գուլին. *և հանգուցեալ քոյրքն՝* Խանադեն, Մարթայն, *և փեսայքն իւր՝* Թորոսն, Նաւասարդն: *Դարձեալ յիշեցէք զԲաչարն,* Փարին, Դավլաթն *և իւր որդին* Էտկեարն *և*[18]

Գ

Ստացող՝ Գրիգոր Քահանայ

68ա *Արդ՝ աշխատող եղև սբ. Աւետարանիս հեզահոգի և բարէմիտ, աստուածասէր* Յովասափ *քահանայն, մեծաւ ջանիւ պատճառ եղև այսմ աստուածաշունչ սբ. Աւետարանիս ինքենէ տրաւք և իւրոցն որդորելովք. վարձահատուցն ամենայնի Քրիստոս Աստուածն մեր հարիւրապատիկ հատուցէ և ի հանգերձելումն. ամէն։*

Արդ՝ և ես անպիտան և մեղաւոր Գրիգոր *քահանայ կոչեալ անուամբ և ոչ գործով, աղաչեմ զձեզ յիշման արժան առնէք զիս և զծնողսն իմ. ամէն*[19]։

168

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 779

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Շուռոթ

ա

238բ *Փառք..., որ ետ կարողութիւն և աւարտ զբաւական գրչութեան հայսմ կոչեցեալ անուն Կոչումն ընծայութեան գրոցս ի թուականութեանն հայկազեան տումարի երկհնգեակ հարիւրոց և մու միակ հազարի, քառից քսանից և տասանց ութից, երկհնգեակ թուոց, մուից տասան և երկուց թուոց (1643)*[20]*, ի թագաւորութեանն Պարսից շահ* Ապասին,

---

[18] Շարունակությունն ընկած է։

[19] Սրա ներքևում նոտր գրով, հավանաբար Աղվանից կաթողիկոս Պետրոս Դ Խանձկեցին (1653—1675 թթ.) գրում է. «Ես՝ Պետրոս կաթողիկոս քննեցի վկայութեամբ տէր Տէրուէին և այլոց, որ Աւետարանս Գրիգոր իրիցուն է, տուրք ողորմութեան նորա է, նորա լիցի. այլ ոչ ոք բան չունի հետ Աւետարանիս։ Ով ոք յանդգնի՝ դատի ի ատէնէսս։ Այնուհետև կնիք։

[20] Հաշիվը տրված է կրկնակի ձևով. այսպես «երկհնգեակ հարիւրոց և մու միակ հազարի։ Այստեղ 1000-ը կրկնված է՝ մեկ՝ 2×5×100 մեկ էլ՝ 1000։ Ապա «քառից քսանից և տասան ութից» (4×20 և 10×8)։ Եվ ապա «երկհնգեակ թուոց, մուից տասան» (2×5, 1×10)։ Այս երկու շարքից պետք է վերցնել մեկը՝ (2×5×100)+(4×20)+(2×5) կամ 1000+(10×8)+(1×10)։ Սրանցից որևէ մեկին ավելացնել հիշված 2-ը՝ կստանանք 1092 (ՌՂԲ), սրան էլ ավելացնել 551։

որ յետ շահ Սէֆուն կացուցին յայսմ ամի, ի Հայրապետութեանն Հայոց շնորհազարդ աթոռոյն սբ. Էջմիածնի տեառն տէր Փիլիպպոս, կաթո-
239ա ղիկոսի և ի զանութեանն Մանմատղուլոյն, ի սուլտանու//թեանն Նախիջևանու Իմամվլուլուն՝ որդւոյն Մասուտին, ի հռչակաւոր դեղս Շոռոթ, ընդ հովանեաւ Ս. Յակոբիս, Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչիս, ձեռամբ ամենամեղ և թարմատար գրչի Յովանէս սպասաւորի, ի խնդրոյ սրբասէր տէր Հայրապետ կրօնաւորի, որ է ի սոյն գեղջէ, և որ է հրաժարեալ ի բազմաց ի գիւղէս և ի տանէ իւրեանց և ամենայն ընտանեաց, նաեւ և ամենայն կենցաղական հոգւոց. և այժմ կա ի գիւղաքաղաքն Ագուլիս, ի հռչակաւոր մենարանն և կուսարանն Ս. Թովմայի, առ ոտս Խաչատուր բարեբունապետի և բանիբունոյ, յոր և երկրորդ նորին գոլ վարկեալ է նկատելով գործառնութիւնն քաջապէս առ հոգևորս և մարմնաւորս։ Ընդ սմին ևս երկեղբարք տէր Առաքել վարդապետ և տէր Յովանէս սննդակից և կաթնակից գոլով ի տէր Հայրապետին՝ մէկն հոգևոր սննդեամբ, երկրորդն ի հոգևոր և ի մարմնաւոր. քանզի զտէր Առաքել վարդապետն աշակերտակցութեամբն միայն, իսկ տէր Յովանէսն նախ՝ մարմնաւոր գոլով յոր և ի մի հօրէ և ի մի մօրէ ծնեալ են և երկրորդ՝ աշակերտակցութեամբն։ Այսպէս սնեալ և վարժեալ եռակի եղբարքս այսոքիկ ի մի վարժարանում։ Եւ թէպէտ եղբայր ասացաք գոլ տէր Հայրապետն սոցին, ապա հայրօրէն գութ և խնամատարութիւն ոչ սակաւ ունէր ի վերայ սոցա. թէպէտ արդ ծերութիւն սոցին այլ իմն ներգործէ ըստ Սողոմոնի. «Ոչ որ բազում ամանակեան է և ոչ որ թուով ամսոյն ծերութիւն, այլ ալիք իմն իմաստութեանն» և այլն[21]։ Յոր և ան-
239բ ցեալ ամն աստուածաղան վարդապետն Խաչատուր գնալ // կամեցաւ ի սբ. Երուսաղէմ, զտէր Հայրապետն կարգեաց ի տեղապահութեանն իւրում զտէր Առաքէլն, և զտէր Յովանէսն առեալ ընդ իւր ընդ այլ գործակալօք բազմօք գնաց։ Եւ ի հասանելն ի սբ. Երուսաղէմ ազգմամբ Հոգւոյն ետ տէր Առաքէլին վարդապետական իշխանութիւն։ Թէ ինչպէ՞ս ընկալան զնա երուսաղէմացիք և կամ ինչպէ՞ս է զգնալն և ի գալն, նա աստ ոչ պատկանաւորի առ ի պատմել։ Եւ ևս և զԵսայի վարդապետն ասեմ զսքանչելին, որ է առաջնորդ մերում գնդիս, յոր և սա փայլէ ամենայն հոգեկանօք և մարմնականօք, նաև զայլս ոչ սակաւս զկնի բազմաւորական գթովն և յոգնահանճար իմաստութեամբ իւրով։ Յոր և սա այժմ իսկ, ներկայումս նորոգէ զՍ. Կարապետն քան զամենեսեան գերագոյն գոլով, բարձրաբերձիւն և հաստակառոյց հիմամբն։ Արդ՝ ոչ բազում մնացորդք գոն պարսպին և խցերուն, զի ի գալ ամի կատարելոց է. յոր և կատարեալ Հոգին Աստուած կատարումն տացէ զայլ մնացորդացն, այսինքն՝ զեկեղեցին ընդ այլովքն, և վայելումն ընդ նմին տացէ երկարաձիգ ամօք հանդերձ աշակերտեալ մանկամբն իւրովք մինչ ի խորին ծերութիւնն։ Յորում և զեկեղեցիս Շոռոթու, որ կոչի Ս. Յակոբ նորոգեալ եղև յայսմ տարոջ բազմաչան աշխատութեամբ։ Տէր մեր Յիսուս Քրիստոս արժանի արասցէ զսոսա փոխանակ զգալի և ձեռագործիս զիմանալի և զանձեռագործ զվերինն Երուսաղէմ հանդերձ ննջեցելովք իւրեանց. ամէն, եղիցի։

[21] Իմաստ., Դ, 8։

Դարձեալ յիշեցէք և զՅակոբ վարդապետն Ասապատեցի, որ և զօրինակն շնորհեաց և Աստուած ողորմի ասացէք։

Բ

16բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի դրոցս /// և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց և Յովանէս մեղուցեալ գրչի, և հօրն իմոյ՝ Վարդան քահանային, ի թուականութեանս Հայոց Ռ և ՂԲ (1643)[22]։

169

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 852 (ԺՋ դ.)

ա

304ա Զվերջին ստացող սբ. գրոյս, որ կոչի Հարցմանս, զԳրիգոր կրաւնաւոր աբեղայն, որ ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց, հաւրն՝ Շիրամին և մաւրն՝ Սալթանին, և եղբարցն՝ Միրզաեանին, Միրիջանին, Ամիրջանին. և քեռցն՝ Խանզադին, Ջանսալթանին և ամենայն արեան մերձաւորացն. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Բ

Հետ. ստացող՝ Գրիգոր Աղբոլցի

Արդ՝ ես Գրիգոր աբեղայս Աղբոցի ստացայ զսբ. գիրքս, ի յարդար վաստակոց իմոց, յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց՝ հաւրս Շիրամին և մաւրս Սալթանին, և եղբարցս՝ Միրզաջանին, Միրիջանին, Ամիրջանին. և քրւերցս Խանզադին, Ջանսալթանին, յիշեցէք ե Աստուած ողորմի ասացէք։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ....։

Թվին ՌՂԲ (1643)։

170

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

Երևան, № 1112 (ԺԵ դ.)

Կազմող՝ Թումա դպիր

104ա Փառք..., որ ետ կարողութիւն ակար և մեղսաթաւալ Թումա դպիր գրչի, որ կազմեցաք զսբ. Յոբայ մեկնիչս ի գուրս սբ. Էջմիածնայ, ի վայելումն տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսին, որ է ջահ եկեղեցւոյ և պայծառ քարող տիեզերաց, խրատիչ անզգամաց, ողորմած, աղքատասէր և բարեաց կամեցող, վանաց և վանորէից ամենայն առաքինութեամբ զարգարեալ, ալեաւքն ծերացեալ և հոգովն պայծառացեալ, փայլէր քան զարեգակն, փառաց ի փառս վերանա, ընդ Աստուծոյ բազմեալ խայտայ, հոգովն զմայլեալ, մտաւք ցնծա և սրտիւ բերկրեալ զուարճանայ, զոր և Աստուած իւր յերկար կենաց պահեսցէ. ամէն։

Թվին ՌՂԲ (1643) ամին։

---

22 Ձեռագրի 241բ էջում նոտրագրով կա այսպիսի նշում. «Ասաց Տէրն մեր Քրիստոս Աստուածն, թէ կամարարէք զծառն բարի և պտուղն նորա բարի. ՌՂԲ (1643)»։

Ձեռագրի 8ա, 23բ, 37ա, 43ա, 59ա, 64բ, 66բ, 72բ, 82ա, 108ա և բազմաթիվ այլ էջերում կան փոքրիկ հիշատակարաններ, որոնք եղծված են, իսկ ընթեռնելի հատվածներում պատմական որևէ արժեք ներկայացնող տեղեկություններ չկան։

171
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2330 (1633 թ.)

Նվիրատու՝ Մինաս Բաբերթացի

183բ Յիշատակ է հոգևոր գանձարանս, այսինքն Քերականի մեկնիչս հետ Բ (2) բառգրովս և այլ սբ. գրերովս Բաբերթացի Մինաս վարդապետին, և իւր համօրէն աղգականացն և ծնողացն, հարազատ հարքն՝ խոճայ Ամիրգոլվաթին և մօրն՝ մայրատիկին Խաթունիկին, և քևերն՝ Նուրիխանին, և ամենայն արեանառու մերձաւորացն, ամէն։ Աստուած բարով վայել տացէ իւրն ի յամ երամ ժամանակաւք. թվին ՌՂ[Բ?] (1643)։

Իննեակ դասուց սբ. հրեշտակաց,
Էք պահպանող ազգս մարդկանց.
Համաձայնեալք ի միասին,
Մեղ բարեխաւս յայնմ ատենին։
. . . . . .
185բ Փոխան եղև դուստր Մարիամ,
Էբէր զլոյսն անմահ արքայն.
Լուսաւորեաց զամենեսեան,
Պտուղ կենացն որ ի յԵւայն։
Մինաս անուամբս փանաքի,
Հող և մոխիր անուանողի.
Տհաս հասակ տարտամ լեզուի,
Ցոյժ մոլորեալ մեղաք իլի։
Քեզ աղերսեմ սբ. Տիրուհի,
Բարեխաւսեա քո միածնի.
Հոգիս իմ ի քեզ ղէնէ հարի,
Ահեղ աւուրն ատենի։
Թվին [Ռ]ՂԲ (1643)։

172
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 3001 (1503 թ.)

Նորոգող՝ Յովանէս երէց

ա

257ա Յիշատակ է աստուածախաւս սբ. Աւետարանս Մարիամին և ծնաւղացն, հաւրն՝ Յոհանիսին և մօրն՝ Շանբէկուն, և ամենայն արեանառու ազգականաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց, որք պատահիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք...։

Հետ՝ ստացող՝ Մարիամ

Բ

Ստացա զսբ. Աւետարանս ի յարդար ընչից իմոց և ետու նորոգել և արծաթապատ առնել զսա, և խաչ արծաթի բևեռեցի ի վերա սորա։

257բ Մի՛ ոք յափշտակեսցէ զսա և կամ արծաթոյ սո//ին։ Եթէ ոք յանդգնի՝ պատիժս կրեսցէ աստի և ի հանդերձեալն. ամէն։

Նորոգեցաւ ի թվին ՌՂ և Բ (1643), հայրապետութեան տեառն Փիլիպպոսի ճգնազգեաց կաթողիկոսի, ձեռամբ յոգնամեղ Յովանէս [եր]իցու. անմեղադիր լերուք պակասութեան սորա։

173

ՃԱՇՈՑ

Երևան, № 4702 (ԺԵ դար).

Նորոգող՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Վարագ

40ա Գրեցաւ սակաւ բանս և նորոգեցաւ սբ. գիրքս ձեռամբ Սահակ սուտանուն և մեղաւք զառածեալ աբեղայի, ի Ռ և ՂԲ (1643) թուականիս մերոյ, ընդ հովանեաւ Աւագ Ս. Նշանիս Վարագայ, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս մեր Կիրակոս սրբակրաւն վարդապետի, ի խնդրոյ սրբասնեալ վարդապետին Սահեփանոսի, որ է առաջնորդ Լիմն անուն կոչեցեալ սբ. անապատի, զոր ետ նորոգել զսբ. գիրքս ի վայելումն մաքրամիտ կրօնաւորացն և յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց Փիրիջանին, Դիլդարին, և եղբարցն՝ Խլղաթին, Սարգիսին, և քրւերն՝ Խանումին, և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց...։

Ըստ կարգի և յիշման դրելոցն ի սմա ես՝ մեղաւոր Սահակս զերեսս ի ձեր ոտից հողն տալով, աղաչեմ զդասս սրբագումար կրօնաւորացդ, զի յորժամ սովաւ կատարէք զհրաշափառ տաւն մկրտութեանն Քրիստոսի և հրճուիք ուրախութեամբ հանդերձ, միոյ ողորմեայի արժան արէք զմեղաւորս և զծնօղսն իմ և զհոգևոր եղբարս իմ զտէր Թումայ
40բ ժամարար և // ջախընկալ սբ. տաճարացս, որ աշխատեցաւ ընդ իս և ձեռնատու եղև ի յոսլայել սբ. գրոցս։ Եւ Աստուածն ամենայն բարութեանց և ողորմութեանց զձեզ մասնակից առնէ...։

Նորոգող՝ Թումայ

Բ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... Խլղաթին և իւր կողակցո[ւ]ն՝ Ալամին, և իւր որդոյն՝ Հերապեամին, Մարտիրոսին, Մրջանին, Խանումին, և իւր քեռոյն՝ Յովանէսին և ինձ սուտանուն Թումային, որ միայն անուն է և գործքն ոչ, և ամենայն արեան մերձաւորաց նոցին...։

174

ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 5397

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Ջգրաշէն

ա

147բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. տառս, որ կոչի Տաւնացոյց և Աւետարանացոյց, ի գեօղս որ կոչի Ջգրաշէն, ընդ հովանեաւ Ծո-

վահայեաց Ս. Աստուածածնին, ձեռամբ մեղսասէր և անարժան գրչի, կարի յանդգնութիւն համարիմ զանունս իմ ընդ գրով արկանել և ասել գրիչ, զի նախատինք է ինձ և ոչ պատիւ։ Վա՛յ է ինձ ըստ գրոյն, որ զանուն կամիմ ըստանալ և ոչ գործ, բայց եմ զինչ և իցեմ Վարդիկ անուանիմ, յիշեցէք... իմ վարժապետ տէր Կարապետին, և ինձ մեղուցեալ Վարդանիս, ևս առաւել այնոցիկ, որ երախտաւոր են մեզ. ամէն։

Բ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ղե[բա]խտաւոր սբ. ուխտիս կրկին վարձուց արժանի քահանայքն՝ զտէր Յոհանէսն, տէր Յովանէսն, տէր Պօղոսն և զայլ աստիճանաւորք սորա, որ բազում աշխատութիւն կրեցին ի նորոգումն սբ. տեղոյս։ Եւ այս եղև ի թվականութեան Հայոց ՌՂԲ (1643)[23], ի առաջնորդութեան սբ. ուխտին Վարազայ Կիրակոս վարդապետի երկրորդ ամին։ Ընդ նմին տիրեալ ունէր զաթոռն Բարգօղիմէի, տիրական հրամանաւ տեառն Փիլիպպոսի։ Որ և Աստուած անփորձ պահէ ի պարծանս մեր և ի փառս սբ. ուխտեացս. ամէն։

Դարձեալ Աստուած անփորձ պահէ զաւագ քահանայն՝ զտէր Յոհանէսն, որ բազում ջանս և աշխատութիւնս կրեաց ի նորոգումն սրբոյ Սիովնիս որ յանուն սբ. առա[քելոյն][24]։

Գ

122բ Շնորհաւոր Զատիկն ի վերա տէր Յոհանիսին. ամէն։

Դ

134ա Բարեխաւսեա տէր Յոհանիսին ի ժամ սոսկալին, աղաչեմ։

Ե

14[illegible]ա Քրիստոս Աստուած...
Թողութիւն շնորհեա տէր Յոհաննէսիս,
Որ պատճառ եղայ սբ. տառիս,
Վասն սրբոյ ատենիս,
Հրճուեալ բերկրի իմ հոգիս։

175
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 5914

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Անանավանք

ա

290բ Փառք...։ // Այլ և արդ՝ գրեցաւ թերին[25] սբ. Աւետարանիս անարժան և տխմար գրչի Պաւղոս, և իմ անընդել գոլով յարուեստ գրչութեան, և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ. այլ ըստ կարգի մերում, զոր

[23] Ձեռագրի մի մասն ընդօրինակվել է 1634 թ.։ Այս շարքում տեսնել գրչի հիշատակարանը։

[24] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է ձեռագրից թերթ ընկնելու պատճառով։

[25] Ձեռագրի մի մասն ընդօրինակվել է ԺԵ դարում, Պողոս գրիչը լրացրել է թերին։

պարգեեց մեզ մարդասէր Հոգին։ Բազում աշխատութեամբ գրեցի ի դառն և ի նեղ ժամանակի ի յերկիրն Վանայ, ի գեղն յԱնանավանք[26], ի դուռն Ս. Աստուածածնին, ի թուականիս Հայոց ՌՂԲ (1643), ի հայրապետութիւն Աղթամարայ Ըսաեփանոս կաթողիկ[ոս]ին և Յովանէս եպիսկոպոսին. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զդուստր իմ, որ բաղում կերակրօք կերակրէր զմեզ, Աղայբեկին, և որդիքն՝ Յոհանէս, Սանակն, դու[ս]տրն իւր՝ Թուռուանդէն. ամէն։

191ա Դարձեալ յիշեցէք յաղութս ձեր Բարեղամն և իւր կողակիցն՝ Աղայբեկին և իւրեանց որդիքն. ամէն։

Բ

58բ Քրիստոս Աստուած քո սբ. աւետարանչիս բարէխաւսութեամբ ողորմեայ Պաւղոս դրծաւղիս և ամենայն արեան մերձաւորաց իմոց և ծնաւղաց իմոց. ամէն։

176

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 6323

Գրիչ՝ Անանիայ

ա

32ա Եւ աստ յիշեցէք զստացող գրոյս, և զիս՝ սուտանուն Անանիայ գծողս յիշեցէք։

308ա Ես՝ Անանիայէս գիրեց. թվին ՌՂԲ (1643) էր գիրեցի։

Բ

177

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7376

Գրիչ՝ Յարութիւն դպիր
Վայր՝ Կսփայ

ա

17բ Որ ողորմի ստացողի գրոցս մահտեսի Սրսցի Յարութիւնին և կենակցին իւրոյ՝ մահտեսի Մարիամին, և հաւրն՝ Ասլանին, մաւրն՝ Ալբընին, և քրոջն՝ Մթխալին և Թրվանաային, և իւր զաւակացն՝ Լուսինին և Խաթունպիքային, և թոռինն՝ Անդրիասին, և մեղապարտ գրչի Յարութիւնի[ն], կարդացողաց...։

Բ

598ա Փառք...։

598բ Արդ՝ ըստացաւ զգիրքս պիտանի զմահտեսի Յարութիւնն, որ կոչի

---

26 Անանավանք կամ Աննավանք, գյուղ Վանի հյուսիսային կողմում, Ամենաշատ և Մակդար գյուղերի միջև, Մարմետ գետի ափին։

Այսմաւուրք, զոր կարդեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մերենց կոչեցեալ, բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցւոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարոյն։ Արդ՝ աղաչեմք զդասս քրիստոնէից, մանաւանդ զեղբմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սոփերիս, յիշեսջիք զըստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի զմահտեսի Յարութիւնն, և զկողակիցն իւր՝ զմահտեսի Մարիամն, և զհայրն՝ զԱսլանն, և զմայրն իւր՝ զԱլթունն, և քրւերքն իւր՝ զՄթխալն և զԹուրվանտան, և գդստերքն իւր՝ զԼուսինն և զխաթունպիքայն, զթոռն իւր՝ զԱնդրիասն, և ամենայն արեան մերձաւորքն, զի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով ետ գրել մահտեսի Յարութիւնն, յիշատակ հոգոյ և ի քաւութիւն անձանց, և որպէս յիշէք առ Տէր՝ յիշիք և դուք...։

Արդ գրեցաւ սա ի յամի թուաբերութեան հայկազան սեռի ՌՂԲ (1643), ձեռամբ անարժան և թարմատար գրչի Յարութիւն սուտանուն դպրի, որ անուամբ միայն կոչիմ և ոչ գործով։ Աղաչեմ զեղբմարիտ ծառայքդ Աստուծոյ յիշեսջիք և զմեզ առ Տէր... և ծնողսն իմ, զհայր իմ զԳրիգորն, և զմայրն իմ՝ զՍարրայն և զերախտաւոր ծնաւղսն իմ։ Նաև զուսուցիչսն իմ՝ զտէր Զաքարիայ ընտրեալ սբ. և մաքուր քահանայն,
599ա որ բազում աշխատանք կրեաց // ի վերայ մեր և ուսոյց զյարուե[ս]տս զայս տէրն մեր Յիսուս Քրիստոս...։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս Կսփայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյն նորա Մարտիրոսին։ Նաև ջծաղկող և զկազմաւղ սորին զտէր Զաքարիայ քահանայն, որ բազում աշխատանք կրեաց ի ծաղկելն և ի կազմելն սորա. Քրիստոս Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք, և յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զսըստացող սբ. գրոցս Սրսցի մահտեսի զՅարութիւնն, որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրունս[27] յիշատակ անջնջելի ազատ, աղատ։ Ոչ ոք չունի իշխանութիւն գրաւելոյ կամ ծախելոյ՝ թէ՛ յազգէ, թէ՛ ի տակէ և թէ՛ ի քահանայից։ Եւ թէ ոք յանդգնի և ձեռնամուխ լինի՝ նայ պատժի յԱստուծոյ և ԳՃԺԸ (318) հայրապետաց անէծքն առնու, և զխաչահանուացն. ամէն։

178

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7409

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Կաֆայ

ա

59ա Որո[յ] աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Ղրմցի տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, հաւրն՝ Պաւրանեիին և մաւրն՝

[27] Եկեղեցու անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

Նոնանատին, և քուերցն՝ Պիքալխին և Խաթունպիքային, և ամենայն արեան մերձաւորացն. նաև գծողի սորին Միքայէլ դպրի, և ծաղկողի սորին, ևս առաւել սրբագրաւղի։

Գրիչ՝ Աւետիք դպիր

Բ

173բ Որոց աղաւթիւքն ողորմի... և մեղապարտ գրչի Աւետիք դպրի, կարդացողաց և լսողաց։

Գ

Ծաղկող՝ Խասպէկ դպիր

42ա Որ ողորմի ստացողի սբ. գրոցս... և ծաղկաւղի Խասպէկ դպրի, կարդացողի...։

Դ

263բ Փառք... // ...ղի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով ետ գրել տէր Խաչատուր արքեպիսկոպոսն, յիշատակ հոգոյ և ի քաւութիւն անձանց...։ Արդ՝ գրեցաւ սա ի յամի թուականութեան հայկազան սեռի ՌՂԲ (1643), ձեռամբ անարժան և թարմատար դրչեաց Աւետիքի, և Միքայէլի, և Ուսիկի։ Աղաչեմք զՔրիստոս ծառայքդ Աստուծոյ, յիշեսջիք և ղմեզ առ Տէր...։

Եղև գրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս ի Կաֆաս, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրաւարին, նայև ղծաղկաւղ և զկազմաւղ սորին, յիշեսջիք ի տէր Յիսուս...։

263ա /// սբ. մատենիս յիշես[ջիք զ] տէր Խաչատուր արքեպիսկոպոսն, որ է առաջնորդ այժմ Կաֆայու նահանգիս, որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրունս Ջարխափան Ս. Աստուածածին, յիշատակ ան <ըն>ջընջելի. ազատ ազատ։ Ոչ ոք չունի իշխանութիւն գրաւելոյ կամ ծախելոյ, թէ՛ յազգէ, թէ՛ ի տակէ, և թէ՛ ի քահանայից, և թէ՛ ոք յանդգնի...։

Ե

107ա Որոց աղաւթիւքն ողորմի ստացողի գրոցս սրսցի Պայրամլուին և մաւրն և յամենայն զարմիցն, կարդացողաց...։

Գրիչ՝ Յովանէս

Զ

359ա Որոց աղաւթիւքն ողորմի... և մեղայպարտ գրչիս սորին Յովանէս դպրի, կարդացողաց...։

179
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 7622

Գրիչ՝ Յարութիւն դպիր

343ա Ողորմութեամբն Աստուծոյ անդ ելեալ աւարտեցաւ տառս աստուածային, որ կոչի Շարակնոց, ձեռամբ Յարութիւն դպրի, ի թուականու-

թեանս հայկազանի ՌՂԲ (1643)-ի, ի խնդրոյ խօճայ Քրիստոստուրի և կենակցին իւրոյ, և զաւակացն՝ Գէորգին և Ալթնպիքային, և ամենայն արեան մերձաւորացն։ Յիշատակ ի դուռն Ս. Հրեշտակապետին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ։

180
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 911

149ա Փառք...։ Գրեցաւ սբ. տառս ի թվիս Հայոց Ռ ու ՂԲ(1643), ի փառս Քրիստոսի Աստուծոյ։

Յիշատակ է Մաշտոցս Մայրանին, և առն իւրոյ՝ Յակոբին, և որդոցն՝ Ղազարին և զՊողոսին, և դեռաբուսի դստերն՝ Եղիսաբթի:

Դարձեալ յիշե[ցէ]ք Մայրանն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և զհայրն իւր՝ Ղազար և զմայր իւր Գոճարվարդ, և զհօրեղբայրն՝
149բ Ասատուրն, և զորդին իւր՝ Էվանէսն, որ սրա//խոխող փոխեցաւ առ Քրիստոս ի անօրինաց; և զամենայն մերձաւորս մեր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն...։

181
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 7954 (1483 թ.)

252ա Յիշատակ է Մաշտոցս տէր Ալէքսանին հոգոյն ի դուռն Ս. Խաչին, ի յառաջնորդութեանն տէր Խաչատուր արքեպիսկոպոսին և ընդ նմին կցորդի տէր Գրիգոր արքեպիսկոպոսի, յիշատակ անշինչ յաւիտենական և ծընողաց նորին՝ Գրիգորին, և եղբաւրն՝ Յակոբին և ամենայն արեան մերձաւորացն. ևս առաւել փոխարկողաց սորին Վարդերեսին, ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643)-ին, ի դուռն Ս. Նըշանիս[28]։

182
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 8885 (1501 թ.)

Նորոգող՝ Յովանէս Եղէգեցի

112բ Յիշեցէք ի մաքրափա[յ]լ յաղաւթս ձեր զՍարգիսն, և զկողակիցն իւր՝ զՄարգրիտ, և զեղբարն իւր՝ զԳր[ի]գոր և զկողակիցն իւր զՄարիամ, և զեղբարն իւր՝ զԱռաքել և զկողակիցն իւր՝ զՄարիամ, և զմիուս եղբարն՝ զՈվանէս և զկողակիցն իւր՝ զԲէկին, և զծնօղն իւրեա[ն]ց՝ զՍահակն և զկողակիցն՝ զԲաղտատն, որ ի յաս ամի փոխեցօ ի Քրիստոս։

Լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք Սարգսին և իւ[ր] եղբա[ր]ց Գրիգորին, որդոյն՝ Սահակին, և եղբօրն՝ Առաքելին, Յովանիսին, որ ետուն վերստին նորոգել զսբ. Աւետարանս, յիշատակ հոգոց իւրեանց...։

[28] Ձեռագրի հաջորդ՝ 252բ էջում կա 1706 թ. նորոգողի հիշատակարանը, ուր ասվում է. «յիշատակ իւր... ի դրունս Ղրիմու Ս. Նշանի վանացն»։ Ուրեմն, 1643 թ. հիշատակարանում հիշված Ս. Նշանը Ղրիմի համանուն վանքն է։

Նորոգեցо սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն Յովանէս իրիցուս Սղէգէցուս, որ զանունս ունիմ և զգործս ոչ. վա՛յ ինձ հազար բերան։ Ի թվին ՌՂԲ (1643)։

183
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9026 (ԺԲ դ.)

Նորոգող՝ Գասպար

201ա Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրն Խորձենք, որ Կեղի կոչի, ընդ հովանեաւ Ս. Սարգսի, ձեռամբ սուտանուն Գասպարի, ի թվին ՌՂԲ (1643)։ Ո՛վ եղբայրք, ով ոք հանդիպիք սմին, յիշեցէք զեղկելի գծողս, որ բազում աշխատանս կրեցի, և զծնաւղս իմ և զամենայն արեան մերձաւորս. ամէն։

184
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9273 (1494 թ.). տե՛ս նաև «Հասկ», 1941 թ., էջ 23

Հետ. ստացող՝ խոջայ Պողոս

93բ Ես՝ մեղաւոր խոճայ Պողոս գնեցի զայս սբ. Աւետարանս ի հալալ ապրանաց իմոց, և յիշատակ ինձ և իմ ծնաւղացըս, հաւրս Յովանէսին և մաւրս Մանուշակին, և ընկերոչս Զարդարին, և որդոցս Յովանէսին, Ակսէնային և Մըսըրին, թվին ՌՂԲ (1643)։ Կարդացողաց և լսողացդ Աստուած ողորմի ասացէք. ամէն։ Մեղայպարտ գրչիս Գրիգոր եպիսկոպ[ոս]իս. ամէն։ Զայս սբ. Աւետարանս լաւ և ընդիր պահաւղն աւրհնի...։

185
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 9642

Վայր՝ Ախալգօր

165բ Գրեցо տառս, որ կոչի Շարական, ծաղկաքաղաց զամէն կարգից, ազիզ, դուրեալի անձինք, մարտիրոսաց հանգստարան, օգտ աւրհնութիւն։ Զինչ գրած է տես և ասայ, զեղկելի գրիչս յիշեայ, ո՛վ սբ. եղբայր։

166ա // Հայրապետութիւն տեառն տէր Փիլիպոսին, և եպիսկոպոսութիւն գօտռիս պարոնտէր Բարսեղին։ Գրեցաւ ի գիւղաքաղաքս Ախալգօր, ի դուռն նորակնունք Ս. Աստուածածնա[յ], Ս. Յակոբայ, Ս. Հրեշտակապետացն Գարրիէլի և Միքայէլի, ի Ս. Ծմինդա Մարինին և Ս. Գևորգա[յ]. թվականիս Հայոց ՌՂԲ (1643)։

186
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 10682

Գրիչ՝ Ներսէս վարդապետ
Վայր՝ Սեբաստիա

ա

380բ Փառք...։

381ա Զոր և եռափափագ սրտիւ և յաւժար կամաւք ետ աւրինակել և գրել

բարեպաշտն Սարգիս, որ ասի Անմեղուկի, ի ձեռն Յովհաննէս դպրի, աշակերտի Ներսէս վարդապետի, կամաւք Աստուծոյ։ Յիշատակ նոցա՝ նոյն Սարգսի և կողակցին՝ համեստ Ղամարին, և որդւոյն՝ Աստուածա-
381բ տուրին, որ Պապ անուամբ կոչի և իւր // հարսիննն՝ Պաեր է, ե միւս որդ-ւոյն՝ Աւետիքին, որ փոխեալ է առ Քրիստոս. և դստերացն՝ Շաեիստանին և Շանփաշին, և թոռանցն՝ Լուսպարոնին և Յովանիսին, և այլ արեան մերձաւորացն. զոր և յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։

Եւ յիշեցէք յաղաւթս ձեր զմեղսամած և զանարժան Ներսէսս, աշակերտեալ մանկամբս հանդերձ, այսինքն՝ զՅակոբն և զԱլէքսան, բանի սպասաւոր քահանայքն կուսակրաւն. և զԽաչատուր սարկաւագն բանասէր, և զՅովհաննէս հոգևոր որդեակս, որ գրեաց զմատեանս։ Եւ ունին վերոյ գրեալ աշակերտքս, որ առ միաւք բազում աշխատանս ի վերա ցանկի սորա, զի կարի եղծեալ էր ի ծերութենէ աւրինակ սորա, զոր տէր Աստուած վարձահատոյց լիցի իւրաքանչիւրոցն՝ և՛ ձեզ, և՛ մեզ, և՛ որ զամէնն ասեն։

Եւ գրեցաւ ի՛ Սեբաստիայ, ընդ հովանեաւ Ս. Նշանին, Ս. Աստուածածնին, Ս. Կարապետին և անապատի Ս. Աստուածածնին, և Խնդրակատար Ս. Աստուածածնին, և Ս. Յովանիսին, և միւս Խնդրակատարին, և Ս. Հրեշտակապետացն, և Սրբոյն Գէորգեայ, այսինքն վանորէից և քաղաքի Ս. Քառասնից, Ս. Աստուածածնին և Ս. Սարգսին, թվին ՌՂԲ (1643)։

Եւ որ զողորմիսն ասէ՝ յողորմած Տէրն ողորմութիւն գտցէ կրկին կենաւք. ամէն։

Բ

Այլ գրով

382ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ո՛վ դասք քահանայից, զվերոյ գտեալ Անմեղուկենց Սարգիսն և զկենակիցն՝ զՂամարն...[29], որ ըստացաւ ի հալալ ընչից իւրոց և եդ յիշատակ ի Սեբաստիոյ նորաշէն Ս. Սարգիս եկեղեցուն։ Ոչ ոք չունի իշխանութիւն՝ ո՛չ ի մերոց և ո՛չ ի յաւտարաց հանելոյ զսբ. գիրքս ի դրանէ Ս. Սարգիս եկեղեցոյս, ոչ ծախելով և ոչ գրաւ գնելով։ Այլ յաւրինակն և ընթերցումն մի՛ խնայեսջիք։ Եւ դուք, որ ընթեռնոյք և յիշէք մի Հայր մեղաւոր և Աստուած ողորմեսցի՝ յիշեալ լիցի ահեղ ատենին Քրիստոսի. ամէն։

187

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մագիստրոս, № 216

Վայր՝ էկրայ

46 Գրեցաւ... ի յերկիրս Հնդկաց, ի ծովահայեաց արքա[յ]անիստ քաղաքս Նփպարսպատ, որ կոչի էկրայ, որ է աթոռ թագաւորացն Հնդկաց բազմամարդ... ի թագաւորութեան Շահջահանին, որ է ի ցեղէ արիւնառու գազանին Լանկ Թամուրին, այր կորովամիտ և բազմահմուտ, յոյժ ագահ

[29] Դարձյալ թվում է ա հիշատակարանում հիշված ստացողի ազգակիցների անունները։

և ընչակեր և անյագ... և Պարսից թագաւորին մանկանն շահ Աբասին..., ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի... և յառաջնորդութեան Զուղայոյ տէր Խաչատուր քաջ բարունապետի...[30]։

188
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Մ3ԶԵԳ, IV, № 1350 (1283 թ.?)

Կազմող՝ Թումայ

622 Փառք..., որ ետ կարողութիւն տկար յոգոյ և մեղսաթաւալ Թումայ
623 գրչի, որ կազմեցաք զսբ. Պիտոյից դիրքս, որ է ընթանրական // ևս, ի վայելումն տէր Ազարիայ վարդապետին, և իւր հալալավաստակ և անդրանիկ որդին նախասարկաւագ Պօղոսին, որ ետ զսա կազմել ի հալալ վաստակոց իւրոց, ի յաթոռ սբ. Էջմիածնի, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոս կաթողիկոսին, ի թագաւորութեան Պարսից շահ Ապազին՝ երկրորդին, ի թվին Հայոց ՌՂԲ (1643) ամին, յորում փառք յաւիտեանս. ամէն։

189
ԱՒԵՏԱՐԱՆ
Մ3ԶԵԳ, VI, № 1966

Գրիչ՝ Մեսրոպ Բաղիշեցի

344 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորա փրկագործութեանն խորհուրդ և զբանն, որ ասէ, թէ՝ «Երանի...»։ Վասն որոյ և իմ փափաքեալ նուաստ ոգոյ Մեսրոպ բանի սպասաւոր Բաղիշեցի սկսեալ զսբ. Աւետարանս դրեցի ես և տէր Սահակ վարպետն, ծաղկեալ ոսկով և տնօրինականօք զարդարեցի ըստ կարի մերում, և բերեալ զսբ. Աւետարանս ի սբ. քաղաքս յԵրուսաղէմ, և եդի յիշատակ զսա ի դուռն Ս. Յակոբայ, ինձ և ծնօղացս և տէր Սահակին, որ հանգուցեալ է առ Քրիստոս և բազում աշխատեալ ընդ մեզ։

Արդ՝ աղաչեմ յիշել ի Տէր զանար[ժ]անս, որ զսբ. Աւետարանս ետու յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ, ի թվին Հայոց ՌՂԲ (1643), ի հայրապետութեան սորա տեառն տէր Գրիգոր խստակրօն և ճգնազգեաց հայրապետին, որ բազում երախտիս ունի ի վերայ ազգիս Հայոց, զԵրուսաղէմայ սբ. տնօրինականաց տեղիքն և զՍ. Յակոբ պայծառացուցանելով և զարդարելով հոգևոր և մարմնաւոր, զոր տէր Յիսուս Քրիստոս զնա յերկար կենաւք պահեսցէ ի պարծանս մեր...։

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմ ես՝ Մեսրոպ, անկարգս ի մէջ կարգաւորաց, ...թողութիւն յԱստուծոյ խնդրելով ինձ և ծնօղաց իմոց, նաև հոգևոր հօրն իմոյ՝ տէր Սահակին, որ բազում է աշխատեր ի սա ընդ մեզ, զոր տէր Յիսուս նմա ևս վարձահատուց լիցի...։

Դարձեալ կրկին աղաչեմ յիշել ի Տէր զտէր Սահակ վարպետն և զանարժան Մեսրոպս յետնեալս, որ եմք Բաղիշեցի, և սկսեալ զսբ. Աւետարանս ի միասին գրեցաք և ծաղկով զարդարեցաք, և նա փոխեցաւ

[30] Հիշատակարանում տարեթիվ չկա, բայց Մագիստրոսը վերնագրի մոտ նշել է 1643 թ.։

առ Քրիստոս ոչ ժամանեաց զալ. վասն որոյ բերեալ իմ զսա ի սբ. յԵրուսաղէմ եդի յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ, վասն ոգոց մերոց փրկութեան. ամէն։

190
ՎԵՑՕՐԷԻՑ ԳԻՐՔ
ՄՅԶԵՊ, հ. IX, էջ 497

491 Կատարեցաւ գիրքս որ Յաղագս Հոգւոց եւ Հրեշտակաց, ի թուիս Հայոց ՌՂԲ (1643)-ին։

191
ՄԱՇՏՈՑ
Ջմմառ, № 568

Գրիչ՝ Բարսեղ քահանայ

177 Փառք...։ Գրեցաւ աւրհնութիւնաբեր ցուցակս այս ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643), ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչիս, որ զանունս ունիմ Բարսեղ քահանայ և գործովս ոչ. ի հրշակաւոր անապատս սբ. Աստուածածնին, և այլ ամենայն սրբոցս որ աստ կան. և ի յառաջնորդութեանս մերոյ Առաքել պարոնտիրին։ Արդ՝ յերիս անկեալ աղաչեմ յիշել ի Տէր զհայր իմ Աւագ քահանան և զմայր իմ, զկենդանիս և զհանգուցեալս. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր Զառուցի Պաղտոստ, Պառապն, որ էառ զՄաշտոցս զայս յիշատակ իւր հոգոյն և իւր ընկերին՝ Հախվեռդ, և որդոցն՝ Տիրատուրին և Արզիմանին, և դստերացն՝ Մարամին և Աննային, որ փոխեր են առ Քրիստոս, Սառային և Գոնարին և Տաւնտի յիրիցկնոջն, և փեսանուն՝ Ղայէ և Խաչերին, և տէր Սարգիսին. ի ձեռն յիշատակ հաւասար, համաւրէն ի տուրս բարեաց՝ ձեզ և մեզ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս. ամէն։

192
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՅԶՄՎ, № 153

Գրիչ՝ Շամլու
Վայր՝ Սեբաստիա

456 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի Սեբաստիա, ի ձեռն սուտանուն Շամլուին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Սարգսին, որ տուեալ են կարողութիւն տկար անձին իմո[յ] գրել զՍաղմոսարանս ի լաւ և ընտիր աւրինակէ, որ կոչի Յովհաննէս Գառնեցի, ի թվականութեանս Հայոց ՌՂԲ (1643)։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով՝ անմեղայդիր լերուք, զի կարիքս իմ այսչափ է։

193
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 69

Գրիչ՝ Ֆատլալայ դպիր

ա

326 Զաստուածային սիրոյ...։ Գրեցաւ այս Սաղմոսարան, որ է երգարան, ի թուականութեանս մեր ազգիս Հայոց ՌՂԲ (1643), ձեռամբ անիմաստ և հողոյ հաւասարոյ Ֆատլալայ, որ ոչ է արժան անուանել դպիր, յիշեցէք ի Տէր, Գ (3) Տէր ողորմեա և մի Հայր մեր որ յերկինս, և Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս ողորմութեան, ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, որ չտայք զՍաղմոսարանս ի տղայի ձեռք, որ տախտակ գրեն յիւրմէս, այլ ուղղորդեն։ Մի՛ նայիք ի յերես ձափբրտած գրիս, զի ընտիր աւրինակ է. իսկ այլ և այլ ասելն անընդունելի է։

Բ

Զնուաստ ողորմելոյ կտտամահ ի մեղաց լեալս՝ Ֆաալալա յարդար գործոց նուազեալս, զսբ. մարգարէիցս մեղսաշաղախ անձին ստացաւոյս յիշեցէք երեք Տէր ողորմեայիւ և մի Հայր մեր [որ] յերկինս. և Տէր ձեզ տա անբաւ բարիս։

194
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 72

Գրիչ՝ Վրդանէս դպիր
Վայր՝ Կաֆայ

ա

328 Փառք...։ Յամի ՌՂԲ (1643)-երորդի թուականիս Ազքանազեանս տոհմի, և ի հայրապետութեան տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և ի թագաւորութեան պիղծ և անաւրէն ժողովոյն մահմէտականացն սուլթան Իպրահիմին, և ի մերոյս նահանգի Կաֆայու վերադիտողի և հոգևոր հովուի տէր Խաչատուր արհեպիսկոպոսի գրեցաւ Սաղմոսարանս, որ կոչի երգս Դաւթեան, ձեռամբ փծուն հող և ոտից մոխիր ձեր ծառայ Վրդանէս դպրի, որ զանունս միայն ունիմ և զգործս իմ խաւարեալ։ Որում ցանկացող եղեալ յայսմ աստուածային և լուսազարդ Սաղմոսարանիս աստուածասէր ոմն դպիր, որում անուն էր...[31], որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա, կարդալով կամ աւրինակելով, յի[շես]-ջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոգրեալ Վրդանէս անարժանս. գր-
329 րեցաւ // սա...[32] և դուք յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

[31] և [32] Ինչպես հաղորդում է Բ. Սարգիսյանը, երկու դեպքում էլ բնագիրը քերված է։

Բ

330 Որք ընթեռնուք սիրով սրտի,
Ցիշման արէք զիս արժանի,
Վրդանէս անուն մեղաւք ի լի։

195
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
ՋՋՀՍ, № 143

Գրիչ՝ Ովանէս սարկաւագ

ա

0 Զեռքս գնա դառնայ ի հող,
Գիրքս մնայ յիշատակող,
Ովանէս սորա գրող,
Ոտից ձերոց կոխան ի հող։

Բ

Թվին ՌՂԲ (1643). ձեռամբ սուտանուն Ովանէս սարկաւագին։

196
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 22 (1187 թ.)

Վայր՝ Հալապ

21 ... Որոյ փափաքեալ բարէպաշտ և երկիւղած Ջուղայեցի Տեռուն և ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ ընչից և արդար, քրտնաջան աշխատութեանց վաստակոց իւրոց, և եռափափագ տենչմամբ ըղձից ցանկացող եղեալ փրկադործ սբ. Աւետարանիս, ի մայրաքաղաքն ի Կոստանդնուպալիս, յիշատակ իւրն, և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ խոճայ Սաֆարին և մաւրն՝ Մարիամին, եղբաւրն՝ Գրիգորին, և քուրոջն՝ Սամայնփարին, և միւս փոքր քուրոջն՝ Սանդուխտին։ Որք և տեսանէք զսայ, լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցայ. ամէն։ Վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՂԲ (1643), ի մայրաքաղաքն՝ Հալապ։

197
ՃԱՌԸՆՏԻՐ
ՏԵՐԱՎՋ, № 220

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Ասպահան

ա

88 Փառք...։ Արդ՝ շնորհիւ Տեառն սկսաք զսբ. գիրքս և ողորմութեամբ նորին և ի յաւարտն հասաք ի քաղաքն Շոշ, որ Ասպահան ասի, յեզր Նարընդալային, որ այլազգի բառով Թաւրքական կոչի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, և հայրապետութեանն տեառն Փիլիպպոսի, և առաջնորդութեան տէր Խաչատուր քաջ բարունապետի, և թագաւորութեանն այլասեռի շահ Ապասի, որ այսմ ամի ի թաղթ ելեալ ի Ղազվին քաղաքի,

որ և տէր Աստուածն ամենայնի և Փրկիչն փրկէ և ազատէ զազգս քրիստոնէից ի յերևելի և անտեսանելի թշնամոյն։

Գրեցաւ սբ. գիրքս ի թվականիս ՌՂԲ (1643), ի խնդրոյ պարոն խօջա Պետրոսի, *յիշատակ իւրն և իւր ծնողացն՝* Վէլիճանին, Շուշանին, *որ տէր Աստուած զփոխարէնն հատուսցէ միոյն հարիւրապատիկ, հազարապատիկ և բիւրապատիկ, աստ և ի հանդերձեալն. ամէն։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Պետրոսն, *որ ստացաւ զսբ. գիրքս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւրն և որդոցն իւրոց՝* Պօղոսին, Մինասին, Յովանէսին, Ղուկասին, *որ և Աստուած վայելել տացէ. ամէն։*

Դարձեալ յիշեցէք զխօջա Պետրոսն, *և զիւր պապն՝* Աղիճանն, *և նորա կողակիցն՝* Գայէանէն, *և զմայրենի պապն՝* Ջալալն, *և զկողակիցն՝* Ծամոսկին, *յիշեցէք...։*

Միւս անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Պետրոսն, *և զկողակիցն զ*Աննայն, *և զվերջի կողակիցն* Թանկմէրն, *յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք ի* Քրիստոս *զխօջա* Պետրոսն, *և զիւր դստերքն՝* Հոիփսիմէն, Մարիամն, Շուշան[ն], Ծաղիկն, Գայէանէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Պետրոսն, *և զորդին իւր՝*
289 *զ*Պօղոսն, *և զնորա // կողակիցն՝* Մուրուսանն, *որդիքն՝* Յակոբնանն, Յովանէսն. *յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօջա* Պետրոսն, *և զհանգուցեալ որդին՝ զ*Մինասն, *և զկողակիցն՝* Սանդուխտն՝ *զորդին՝* Մաթէոսն, *և զդուստրն՝* Համասփիւռն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա* Պետրոսն, *և զիւր հօրեղբարքն՝* Նուրիճանն, Գրիգորն..., *մայրն՝* Շանխաթունն, *և խօջա* Պետրոսի *արներ* Ասլանն, *և կողակից* Մարիամն, *յիշեցէք...։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և զիս՝ զբազմամեղ Սանակս, *որ հասի ի յաւարտ տառիս։ Ո՛վ եղբարք, յորժամ հանդիպիք յայսմ վարդապետիթ բուրաստանիս՝ կամ կարդալով կամ օրինակելով զմեղաւոր* Սանակս *յիշեցէք և դուք յիշեալ...։*

Բ

Քրիստոս Աստուած ստացողի դրքոյս խաւջա Պետրոսին, *և իւր ծնողացն՝* Վէլիջանին, Շուշանին *և պապին՝* Աղիճանին, Գայիանին *և ամենայն արեան մերձաւորացն։*

Գ

Եւ մայրենի պապին՝ Ջալալին, Ծամոսկոյն, *և փծուն գրչի, և ամենայն արեան մերձաւորացն։*

198

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԵՐԱՎՋ, № 392 (1631 թ.)

593 *Յիշատակ է* [Մ]ուժամպարցի *տէր* Առաքելին, *և կողակցին՝* Շանինսին, *և որդւոցն՝* Խանվալատին, Ղազարին, Մօսէսին, *և հանգուցեալ որդոցն՝* Դաւթին, Շանվալաթին, Մկրտչին, *և դստերացն՝* Սուլթանղա-

դին, Շանզատին, Մարդրտին, և ծնողացն՝ հօր Փիրումին և մօրն՝ Սուլթանզադին, և եղբարցն՝ Մելքոնին և Մէրճապին, ի ձեռն /// վարդապետին մեզ յիշատակ լինիցի։

Թվին ՌՂ և Բ (1643) գրեցաւ։

199

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՕՇԻ

ՏԵՐԱՎՔ, № 548 (ԺԳ դ.)

Հետ. ստացող՝ Բարդուղիմիոս քահանայ

ա

826 Ո՛վ պատուական և բարեմիտ, սրբասէր հանդիպողք յայսմ յիրաւադատ կանոնական գրոցս, զԳրիգոր քահանայ իւրաւք ննջեցելաւքն յիշեսջիք առաջի ղենլոյն Քրիստոսի։ Եւ որ առատն է ի տուրս պարգևաց Քրիստոս ձեզ ողորմեսցի յիւրում գալստեանն. ամէն։

Տէր Աստուած Իսրաէղի,
Դու պահապան լեր Գրիգորի,
Իւր հոգին հետ Մովսէսի,
Եւ նա խաւսի յետ Քրիստոսի։
Ամէն և եղիցի։

Եւ զմեղայսէր զԲարդուղիմիոս քահանայ յիշեցէք ի Քրիստոս և թողութիւն խնդրեցէք մեղաց իմոց և Աստուածն ամենեցուն Յիսուս Քրիստոս զխնդրողաց մեղսն թողու. ամէն։

Զ Ամիրայն յիշեցէք, զծ[ն]աւղսն իւր, որ զայս գիրքս աղատեաց ի գերութենէ. Աստուած զինքն աղատէ ի մեղաց զմերձաւորքս նորա և զյիշողքս. ամէն։

բ

Յիշեա Քրիստոս Աստուած զրստացաւղ սբ. գրոցս զԳրիգոր քահանայ, ամենայն արեան մերձաւորաւք իւրուք։...

Ո՛վ աստուածասէր քահանայք, որք աւգտիք յայսմ գրոցս թողու-
827 թիւն խնդրեցէք // Ամիրային և իւր ծնօղաց Նիւատշային, Ե<ւ>սայ մէլիքին, և իւր եղբարցն՝ Շիրինբեկին, Շահարբեկին, քեռն՝ Խաթունմելին և իւր կողակցին, և իւր զաւակացն, որ աղատեաց ի գերութենէ զայս սբ. գիրքս և շնորհեաց անարժան քահանայիս Բարդուղիմիոսի, որ զքահանայից զանուն ունիմ, զգործն ոչ, վայ կու տամ ինձ. անունս մեծ է քան զգործս...

Նորոգող՝ Գրիգոր երէց

գ

Զվերջին ստացողի գրոցս Սարդարն և կողակիցն՝ Քիշմիշն և որդիքն՝ Սուֆիասն, Աստուածատուրն, Յոհաննէսն, և դստերքն՝ Սանամն, և Խանփարի, Ղատամխաթլու, Սալվինազն։

Դարձեալ յիշեցէք զՍահակն և կողակիցն՝ Խանփարի, դստերքն՝ Եղիսէրն, և Եղիսէրի դուստր Մարիամին, և Մարիամի որդի Սատուրն և

Խանփարէ, *դուստր* Փառասէրն, *և դուստրն՝* Դաղիթառն, *և* Խանփարէ, *որդին՝* Մալիքաբէն:

Դարձեալ յիշեցէք Սանամն *և դստերքն՝* Մարիամն, Զատամիութիւն, Շանվատէն *և որդին՝* Գտուրիկն:

Դարձեալ յիշեցէք Սուքիասն, *և կողակիցն՝* Այիփաշէն, *և որդիքն՝* Անանիէն, Ալթունն, Եսայի, *և դուստրն՝* Սոլթանն, *յիշեցէք...։ Ի վայելումն վայելողաց. թվականիս Հայոց հազար Ղ և երկու (1643). նորոգեցաւ ձեռամբ* Գրիգոր *երիցու։*

200

ՃԱՇՈՑ

ՈՋՍՄ, № 698

Գրիչ՝ Սարգիս քահանայ

Վայր՝ Եաշ

ա

217 *Փառք...։ Աւարտեցաւ քրիստոսահիմն և առաքելախաւս, մարգարէաշէն հոգիաբուխ այս տառ[ս] ձեռամբ և անարհեստ գրչի տէր* Սարգիս *քահանայի, ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտաւն երկու եղբարց խաւճայ* Վասիլին *և խաւճայ* Պաւղոսին, *ի թվարերութեանս հայկազեան սեռիս տոմմարի ՌՂԲ (1643)-ին, ի հայրապետութեան Հայոց տեառն տէր* Փիլիպպոսին *և առաջնորդութեան տէր* Անդրէաս *արհիեպիսկոպոսին Պուղտանաց երկրի և ի թագաւորութեան* Վասիլ *բարեպաշտ վո[յ]վոտային, [ի] մայրաքաղաքն* Եաշ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին, և քահանայութեանն տէր* Մովսէսին *և տէր* Խաչաաուրին, *տէր* Ղուկասին *և գրչիս, և երէցփոխնութեանն խաւճայ* Ակսենային: *Յիշման արէք զմեզ արժանին։*

Որք ի յուզմանէ ջուրցն և յանդնդեայպտոյտ ալեաց ծովուն ապրեալք զնաւն ի նաւահանգիստն հասուցանեն ուրախութիւն ոչ սակաւ ի սիրտս իւրեանց բերցեն վաճառականին։ Եւ առաւել յորժամ զլուսատեսել մարգարիտն և զակն պատուական և զոսկին սոփերա ընդ ինքեանս ունեցին մոռանան զաշխատութիւն կրիցն։ Որով և մեզ դիպեցաւ այս դիրք վաճառի և նոյն աշխատութիւն։ Սակայն գտեալ եղեն անգի՛տ մարգարիտք և ակք պատուականք կապեալ ի թագ թագաւորին Յիսուսի և ոսկիաձոյլ պատկերք նորուն սկզբնատպին, աստուածագիտք և աստուածընտիրք դասք առաքելոցն և գումարք մարգարէիցն, վիճակք հայրապետացն, և ժողովք ամենայն մարտիրոսացն և հրեշտակակրաւն ճգնաւորացն և աստուածազգեաց միանձանց երկնից բնակողացն և աստուածամերձ սուրբ արանց։ Որոց անուանքն և վարքն յիւրաքանչիւր աւուր կատարման ի սմա ամբարեալ կան, լրմամբ տարեւորական՝ աստուածասէր տաւնողաց, նաև տանք տէրունականք սկսեալ ի Յայտնութենէն մինչև ի լրումն տարւոյն ի սմա հաւաքեալ կան, զոր հոգեկիր սբ. հարքն կարգեցին։ Որով ե ես ամենանուաստ անձն և մեղաց գերի, տկար ոգի Սարգիս *էրէց, ոտից ձերոց հող և փոշի, մեծատենչ փափագմամբ գրեցի զսա, թէպէտ մեծ դրաւք յարմարեցի, այլ զաւրութիւն մեծ*

գոյ ի սմա և լիակատար՝ յուրախութիւն ընթերցողաց և խրախճանութիւն ամենայն հաւատացելոց ի տէր Աստուած։ ... Յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր բարեպաշտուն և աստուածասէր, բարի արմատեաց պտուղքն՝ եղբարքն՝ զբան Վասիլ և զիւր կողակիցն՝ Մարգարիտն, և զբան Թորոսն, զկողակիցն՝ Աննայն, և զբան Պաւղոսն և զիւր կողակիցն՝ Թուրվանայն։ Որք լուեալ զբանս մարգարէին, որ ասէ թէ. «Երանի...» և ստացան զսա անջնջելի յիշատակ հալալ յընչից և վաստակոց իւրեանց, և եդին ի դուռն Ս. Աստուածածնայ իւրեանց ծնաւղացն հոգւոյն, հաւրն՝ մահտեսի Ովանէսին և մաւրն՝ Գեղեցիկին, և պապոյն՝ Վա-
218 սիլին և մամոյն՝ Ջուճալ խաթունին, որ առ // Աստուած են փոխեալ և ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց և հանգուցելոց։

Ո՛վ որք չունի իշխանութիւն այս գրոյս, որ կոչի Ճաշոց, ոչ ազգական և ոչ աւտարական, չունի իշխանութիւն հանել զսա ի Ս. Աստուածածնայ դրանէս, ի մայրաքաղաքն Նազլովցայու, նորաշէն Հաճկատար Ս. Աստուածածնայ։ Եւ որք յանդգնի ի յազգականաց կամ յաւտարականաց հանել զսա սբ. եկեղեցոյս կամ գրաւ դնելով կամ ծախելով՝ պատիժն Կայենի առցէ և մասն ընդ Յուդայի եղիցի։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբարք, զամենեսեանդ, որք հանդիպիք այսմ աստուածաշունչ տառիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զբան Վասիլ, և զեղբարսն զբան Թորոսն, և զբան Պաւղոսն, և զամենայն արեանս մերձաւորսն. և որ առատն է ի տուրս բարեաց՝ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի առ հասարակ ամենեցուն ամենայնի. ամէն։

Աւարտեցաւ այս սբ. մատեանս ի լաւ և յընտիր աւրինակէ ի թվաբերութեանս Հայոց ՌՂԲ (1643), ի թագաւորութեան Լեհաց աշխարհին չորրորդ Վլատիսլաւին, և իշխանացն մերոց[33], և ի քահանայութեան աւագ էրէց տէր Յակոբին և տէր Անդրէասին, որ եղև պատճառ այս սբ. տարեգրքիս և նորընծայ տէր Ներսէս, որ յայսմ ամի էառ զկարգ քահանայութեան, և էրէցփոխանութիւնն բան Նիկողոսին, և վոյթութեան բան Ոճանին, և երկոտասան դատաւորացն։

Եւ ես՝ տրուպս ամենայնի երես անկեալ աղերսագին պաղատանաւք հայցեմ ի յապէնիաղ Արարչէն, որ առատն է ի տուրս, տացէ ձեզ տէր Աստուած զերկնային ողորմութիւնն։

Բ

Աւագ երկուշաբթի աւր կարդա և զեղկելի գրչակս յիշեա սուտանուն Սարգիս էրէց։

201

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մուրմար, № 87 (1632 թ.)

160 Ով լուսերամք դասք քահանայից և մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յոճանէս քաջ բարունապետն,

[33] Ոսկյանը նշում է, որ ձեռագրում անունների տեղը բաց է թողնված։

որ ըստացաւ զսբ. Աստուածաշունչս ի հալալ արդեանց իւրոց և ետ զսա անջինջ յիշատակ ի դուռն Ս. Պետրոսի առաքելոյն վիմին հաւատոյ իւրն և իւր ծնաւղացն, հաւրն՝ Նիկիտայոսին և մաւրն՝ Շուշանին, և եղբաւրն՝ Սիմէոնին, և կողակցին՝ Շահպէկուն, և իւր որդոցն՝ Նիկողայոսին, Ազատին, Սարգսին, և մեծ պապուն՝ Առաքելին, և իւր եղբաւրն՝ տէր Սարգիս կուսակրաւն աբեղային, որ է ուսուցիչն իմ և ամենայն արեանառու ազգականացն իմոց. ամէն։

Արդ՝ եղաւ սբ. Աստուածաշունչս անջինջ յիշատակ ի դուռն Ս. Պետրոսի առաքելոյն, ի թվին ՌՂԲ (1643), ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի հանուրց դիգապետի և յառաջնորդութեան սբ. ուխտիս տեառն Մարկոս արհեպիսկոպոսի, զոր տէր Աստուածն անդրդուելի կենաւք պահեսցէ զտէր Յովհաննէս քաջ բաբունապետն և զտէր Մարկոս արհեպիսկոպոսն մինչև ի ծայր ծերութեան. ամէն։

202

ԱԻԵՏԱՐԱՆ

Երնջակ, էջ 253 (1428 թ.)

Հետ. ստացող՝ Սահակ

Ես՝ Սահակ էրէցս գնեցի զսբ. Աւետարանս յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և ամենայն յարեան մերձաւորաց իմոց. աղաչեմ հանդիպող եղբարցդ մի ողորմի ասել մեզ և մերոցն ամենայնի և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած իւր միւսանգամ դալստեան. ամէն։

Ի թվին Հայոց ՌՂԲ (1643)։

203

ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցեկուք, էջ 473

Նվիրատու՝ Սիմէոն Ապարաներցի

ա

...Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս, և զարդարել ետ ոսկւով, և երանգ երանգ ծաղկով, յիշատակ իւրն և ի[ւ]ր ծնողացն, և ամենայն արեանառու մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոցն, նաև զսբ. հօրն իւրոյ հոգևորի՝ Կարապետ գիտնական բաբունապետի, որ հանգուցեալ է առ Քրիստոս և եղեալ կայ յԵրուսաղէմ քաղաքս ի Ս. Փրկչի եկեղեցին։

բ

Դարձեալ կրկին աղաչեմ յիշել ի Տէր, ես՝ Սիմովն վարդապետս Ապարան[ե]ցի, որ ստացայ զսա մեծ կարաւտիւ. և առեալ զսբ. Աւետարանս և եկի ի սբ. քաղաքս յԵրուսաղէմ, և եդի յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ, ի թվին Հայոց ՌՂԲ (1643), ի հայրապետութեան սբ. տեղեացս Երուսաղէմայ տեառն տէր Գրիգոր արի և քաջ հայրապետին...։

204
ԱԻԵՏԱՐԱՆ
Աղավնունի, Այցելուք, էջ 492

...Ուստի տեսեալ զսորայս փրկագործութեան խորհուրդ հաւատարիմ քրիստոնեայն Սողբաք *մահտասին, որ է սպասաւոր սբ.* Երուսաղէմայ *և ցանկացող եղև այսմ լուսազարդ սբ. Աւետարանիս և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց մղտեսի* Սողբաք, *յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝* Սալվիեարին *և* Հերէկին, *և կողակցին իւրոյ... և ետ զսա յիշատակ ի սբ.* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Ծննդեան*[34]։

205
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՁՄՆՍ, № 80

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Ըսաամբալ

369 *Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն* Ըստամբալ, *ի դուռն Ս. Սարգիս, ի Հայոց թուականիս ՌՂԲ (1643)։ Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ և անպիտան գրչի՝* Մկրտիչ *դպրի. աղաչեմ յիշել ի Տէր։ Արդ՝ աղաչեմ բանիմաստ, հանճարունող, սրբասէր և եղբարդդ, որք հանդիպիք այսմ տառիս, յիշեցէք զստացող սորա զ*Մարգարիտն *և ծնողացն՝* Նորտուկին *և* Խիկարին, *և այրն՝* Նորսիկին *և իւր ծնողացն՝* Սէրգիսին *և* Ալքունին, *և որդոցն՝* Պէկլէրին, Ալքունին, Լուսիաքունին, *և այլ ամենայն արեան մերձաւորացն և զկենդանիսն և զհանգուցեալսն ի Քրիստոս։ Որ ստացաւ զսբ. Աւետարանս զայս ի հալալ արդեանցն իւրոյ և ետ յիշատակ ի դուռն կենարար Ս. Նշանին։ Աստուած աւրհնէ զ*Ներսէս *և զիւր կինն՝ զ*Մարգարիտն, *և զիւր որդին՝ զ*Պէկլէրն, *որ տրին ՃԲ (62) զուռուշ սբ. Աւետարանիս։ Աստուած աւրհնէ զտէր* Կիրակոսին, *որ ետ սբ. Աւետարանիս Լ (30) զուռուշ։ Գնեցին և եդին յիշատակ ի դուռն Ս. Նշանին և ի ձեռն տէր* Կիրակոսին։ *Եթէ ոք կամի գրաւելոյ կամ ծախելոյ՝ զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայենի, ամէն։ Պահողքն աւրհնի ի յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա. ամէն։*

---

[34] *Այստեղ թեև չի նշված տարեթիվը, Աղավնունին նշում է 1643 թ. ներքո։*

ՌՂԳ 1644

. 206

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան, № 7046

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Հալապ

361ա Փառք...։
Որ զաւրութիւն ետ տկարի,
Մեզապարտիս 'ւ անարժանի,
Որ զսայ ծրեալ գծագրեցի,
Եւ յանգ հանեալ աւարտեցի։
Զեռամբ տրհաս փծուն գրչի,
Աստուածատուր այս չրւառի,
Որ յիշելոյ չեմ արժանի,
Եւ ոչ ի կարգ նաւտարագրի։
Արդ՝ կատարիչն ամենայնի,
Կամակատար Տէրըն բարի,
Որ զիս հասոյց ի ծայր բանի,
Բազմահաւաք նուագարանի։
Աւարտեցաւ բանըս գրրի,
Յեբեր քաղաք, որ Հալապ կոչի,
361բ Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի,
Եւ Քառասնից սբ. վկայի։
Ի թվականիս մեծի թրվի,
Ի յԱդամայ մինչ յայս վայրի,
Վեց հազար 'ւ ութ հարիւր տարի,
Եւ քառասուն հինգ աւելի (6845)։
Ի ծնունդենէ տեառն Յիսուսի,
Հազար և վեց հարիւր տարի,
Քառասուն և եօթն յարաբարդի (1647)
Մինչև ցայսաւրըս համարի։
Դարձեալ թվին հայկազանի,
Աբեթականըն տումարի,
Հազարն անցեալ ընդ յիննըսունի,
Այլ և երեք կայ աւելի (1644)։
Կատարեցաւ ի յայսմ ամի,
Յունվար ամսոյ Ժ և եաւթի (17),

Աւուր պատկերն չորեքշաբթի,
Ի վեց ժամուն մէջաւրէի։
Գրծագրեցի զսայ կամաւի,
Վայելումն ինձ անարժանի,
362ա Եւ դեռաբոյս իմ զաւակի,
Ներսէս անուն փոքրագոյնի։
Արդ՝ այժմ եղև ղբրաւ տառի,
Յամենալից բուրաստանի,
Զճառ և ըզբանսըն Ներսէսի,
Զոր անուանի Յիսուս Որդի։
. . . .[1]
363ա Իւրաքանչիւր կարգաւ պատմի,
Մինչ ի Ներսէս բանիս գրողի,
Արդ՝ աստանաւր վրճար առնի,
Է կատարումն և վերջք լին[ի]։
Յայլ պատմաբան սկսեալ կրկնի,
Առ թագաւորքըն Կիլիկէի,
363բ Խնդրեալ Լեոն թագաւորի,
Շարեալ Վահրամ վարդապետի։
Դարձեալ գովեստ տեառն Ներսէսի,
Զոր գովեստի է արժանի,
Զվարք և ըզգործն կարգաւ պատմի,
Յիշատակն աւրհնեալ եղիցի։
Այլ և կրկին գովեստ երկնի,
Յոյժ քաղցրագոյն և նազելի,
Տարերց մասանց 'ւ եղանակի,
Կենդանակաց մոլար աստղի։
Քննէ զբոլոր մասն աշխարհի,
Ճառէ զգալուստըն Քրիստոսի,
Ոչ ասացեալ է Ներսէսի,
Այլ Յոհաննէս Եզընկացի։
Ոչ թէ նման պատմարանի,
Յիշատակէ 'ւ անփոյթ լինի,
Այլ և քննէ զմիտըս բանի,
Տայ աւրինակ մարդկան ազգի։
Է սայ մեկնիչ ծածուկ բանի,
Քննող մտաց և խորհրդի,
364ա Զվարքս սրբոց միշնորդ ունի,
Եւ մախթանաւք առ Տէր խաւսի։
Այլ և խնդրէ կողկողալի,
Պաղատանաւք հայցմամբ սրտի,
Առ ողորմած Տէրն ամենի,
Զի ողորմի անցաւորի։

[1] Այնուհետև շարադրում է ձեռագրում տեղ գտած Ներսես Շնորհալու քերթվածների բովանդակությունը։

Է սայ գիտնոց բան իմաստի,
Եւ իրախութիւն տղայականի,
Բանասիրաց վերծանելի,
Եւ իմաստնոց իմաստ յայտնի։
. . . . .
364բ Զձեզ աղաչեմ արտասուելի,
Որք հանդիպիք յայսմը տառի,
Զմեզ յիշեցէք ի աղաւթի,
Առ ողորմած Տէրն ամենի։
Եւ զուսուցիչն իմ ըզրարի,
Ըղտէր Մինասն Եդովկացի,
365ա Բազում ջանեաւք սիրով սրտի,
Աշխատեցաւ ընդ անարժանի։
Մինչև հասոյց յայսըմ վայրի,
Զիս զանարժանս զինչ զարժանի,
Մինչև ուսոյց արուէստ գրի,
Եւ զընթերցմունըս սբ. տառի։
Արքայ և Տէրն ամենայնի,
Առատաձիր Տէրըն բարի,
Զվարձըս բարեաց նըմա տացի,
Ընդ քահանայսըն դասեսցի։

207
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մշեցի, IV, № 1195

Վայր՝ Սեչով

ա

Կատարեցաւ ցանկ Այսմաւուրաց թվին ՌՂ (1641), մարտի Բ (2)։

բ

319 Գրեցաւ սա խիստ սղալ օրինակէն, թվին ՌՂԳ (1644) փետրվարի ամսոյ ի Բ (2), ի քաղաքն Սեչով, ընդ հովանեաւն Ս. Սիմէոնի եկեղեցւոյն։

208
ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ
Երևան, № 8641

Գրիչ՝ Մարկոս
Վայր՝ Բուզանդիայ

93բ Փառք Փրկչին,
Յիշատակ գրչին։
Փրկիչն ողորմի
Ստացողի սորին. ամէն։

Արդ՝ դրեցաւ Յաղաւթմատոյցս ի քաղաքն Բուզանդիայ, ձեռամբ սուտանուն [Մարկոս] տիրացուին [կ]ոչեցեալ, թվին ՌՂԳ (1644), ի
94ա մա//ռտի ամսոյ ԻԸ (28), աւրն հինգշաբթի։ Զի որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄարկոս գրիչս. և Աստուած յիշողդ, յիշէ...։

Ո՛վ եղբայր խոշորութեան դրիս կամ սղանալեացս անմեղադիր լե-
64բ բուք զի կայր // մեր այսչափ է։

Ո՛ ձեռն որ փտիս,
Ո՛ գրիչ որ մաշիս։
Զեռս երթայ, գիրս մնայ,
Յերուսաղէմ դու կատարեայ։
Ով Տէր կենաց ամենայնի,
Դու ես մաքրիչ մեղաց աղտի,
Քաւեայ և զիս մեղաւքս իլի,
Մարկոս անուն տարտամ ոգի։
Ով երգաւղ այս կտակի,
Յիշման առնէք զիս յաղաւթի,
Յորժամ երգէք ժամա[տեղի?]։

209

ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ

ՅՁԱՔ, № 201

Գրիչ՝ Խաչատուր Լէճցի
Վայր՝ Կաֆայ

ա

952 Փառք...։ // Գրեցաւ Ձեռնադրութեան գիրքս ի թուաբերութեան հայկազան սեռի ՌՂԳ (1644), ի փետ[ր]վար ամսոյ ԻԳ (23), աւրն ուրբաթ, ի մայրաքաղաքն Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Յով[հ]ան[ն]էսի Կարապետին, ձեռամբ մեղսասէր և անարժան, սուտանուն Խաչատուր Լէճցի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի սբ. աղօթս ձեր զվերոգրեալս։ Եւ որ թողութիւն խնդրէ՝ Միածին որդին զիւր մեղսն թողու, ստեղծօղն ամենայնի արժանի արասցէ զինքն երկնից արքայութեանն, անմահական հացին...։ Ի վայելումն Անկուրացի Գրիգոր եպիսկոպոսին, յիշատակ իւր ծնողաց հոգուն. քանի ինքն կենդանի է վայելէ, իւր անցման յետև՝ յիշատակ լինի Էնկուրի Ս. Աստուածածնա[յ] վանիցն։ Ոչ ոք չունի իշխանութիւն՝ թէ՛ ազգականաց, թէ՛ օտարաց կամ ծախելու կամ գրաւ դնելու. թէ՛ [յ]անդքնին, տէր ելանեն՝ մասն Յուդայի առցեն։ Բաւ է ս.ռ այս. ամէն։

Ի Կիլիկիա, յաթոռակալութեան տեառն տէր Սիմէոն կաթողիկոսին։ Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

---

[2] Շարունակությունը պակասում է։

Ստացող՝ Գրիգոր եպիսկոպոս

Բ

Փառք...։ Արդ՝ ցանկացաւղ եղեալ աստուածախաւս մատենիս՝ հրեշտակասարաս երջանիկ կուսակրաւն յԱնկիւրացի Գրիգոր տրուպ եպիսկոպոսն և ետ դրել զսա յիշատակ յԱնկիւրի վանացն, անջինջ և կտակ յաւիտենական ոդւոյ իւրոյ՝ աղգաց մինչև յազգս...։

953 Յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ի տէր մեր, զրստացող սորա՝ զտէր Գրիգոր եպիսկոպոսն հանդերձ ծնողիւք և ամենայն զարմաւքն, այսինքն զհայր իմ Դաւիթ և զմայր իմ Մարդայ, և զկանխաւն ննջեցեալքն, զայժմու կենդանիքն, եղբայր իմ Պաղշին, և զքոյրն իմ Արխոնսայպիքան, և զփեսայն իմ զԳաբրիէլն, որոց թողցէ տէր Աստուած զյանցանս նոցա և տացէ զհանգիստ յաւիտենից։

Գրիչ՝ Յարութիւն դպիր

Գ

Հուսկ յետոյ իբրև անարգ մի, յիշեսջիք և զգծագրաւղս զՅարութիւն դպիրս, հանդերձ ծնողիւքս։ Եւ ինքն Քրիստոս, կոչաւղն աշխատողաց և ծանրաբեռից, յիշեսցէ զյիշողք, որք սեռն սիրով ի պատկանաւոր խնդրուածս և ի միտս բարիս հայցէք ի Քրիստոսէ զթողութիւն և զողորմութիւն, և ինքն Քրիստոս աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին, ի հայրապետութեանն էջմիածնայ՝ տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին, ի թվին Հայոց Ռ և ՂԳ[3] (1644), ապրիլի Դ (4), աւրն

954 հինգշաբթի, կատարեցաւ շնորհաւքն Աս//տուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

210

ԺԱՄԱԳԻՐՔ

Կամենից, էջ 189

Գրիչ՝ Վարդերես

Յիշատակ է այս մէկ տետրիս թուխթն պարոն Թաթուլին, որդոյ պարոն Գրիգորին՝ Կամենիցոյ տօլվաթաւոր քառասուն եղբարցն մէկն, ի վայելումն Ս. Նիկաւղայոս Սքանչելագործ եկեղեցւոյս, թվին ՌՂԳ (1644), ապրիլի ԺԲ (12)։ Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս և զմեղապարտ գրիչս զՎարդերես դպրապետս, որդոյ պարոն Քրիշթոֆին, յիշէք մէկ Հայր մերիս, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

211

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏՅՁՄՎ, № 434 (1319 թ.)

885 Փառք.... յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զխոճա Խաչիոն Իլովցի պարոն Սուեցիոնեց վասն իւր հոգոյն և իւր հօրն՝ Սաեփանեոսին և

[3] Սխալմամբ տպված է «ՂԳ»։

մօրն՝ Նաստուխնայիին և ամենայն արեան մերձաւորացն։ Զոր ետես զայս անգին գանձս մեծաւ փափագանօք, էառ զսա իւր հալալ արեամբ վաստակոց իւրոց. և դարձեալ ետ զսա յիշատակ ի նոյն տեղին, ուր և յառաջն էր. զի մի՛ կորիցէ յիշատակն արդարոց և աշխատաւորաց։ Դարձեալ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, մի՛ մոռանայք ղյետի յիշատակ տրւօղս զպարոն Խաչիոն, որ այլ սբ. գրոյս զթերին լրցոյց, քանզի ետ նկարել զԴ (4) գլուխ դատկերանիքն և Դ (4) կանոններն ի թվին Հայոց ՌՂԳ (1644)-ին, ապրիլի ԻԸ (28)-ին։ Որոց յիշատակ տրւ՝ լացն աւրհնութեամբ եղիցի. և կարդացողաց և լսողաց. ամէն։

212
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մեշեմս, I, № 33, էջ 77

Գրիչ՝ Յակոբ երէց
Վայր՝ Թվիս

ա

236 Քրիստոս Աստուած ողորմեայ իմ ծնաւղացս... և մարս...։ Քրիստոս Աստուած քո սբ. ծնաւղի բարեխաւսութեամբ ողորմեայ իմ աղբրտոցս և քրվերտացս, և ամենայն արեան մերձաւորացս, քրիստոն[ե]աց,
237 լսողաց, օրինակողացս, և իմ անեղոչս..., և // իմ զաւքընչիս... ընկերոչս..., և ինձ մեղաւոր և անարժան, սուտանուն Յակոբ էրիցս, թարմատար գրչիս. ամէն։

բ

239 Գրեցաւ գիրքս ձեռամբ Յակոբ իրիցէս ի քաղաքն Թվիս, ի դուռն Ս. Գարրիէլ Միքայէլին, թվականին ՌՂԳ (1644)-ին մայիսի ԻԴ (24) ումն աւարտ եղև. ամէն։

213
ՇԱՐԱԿՆՈՑ
Մուրմար, II, № 93

Գրիչ՝ Կարապետ վարդապետ
Վայր՝ Կ. Պոլիս

166 Փառք... աստանաւր կատարեցաւ աստուածային [գիրս] ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետու, ի թաղըն Պալատու, ձեռամբ մեղսասէր գրչի տէր Կարապետ վարդապետի, որ զանունս ունիմ և ոչ զգործն, զօրինակ ունիմ և ոչ ճշմարտութիւն։ Ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644) ի մայիսու ԻԵ (25) աւրն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով զպակասըն լնուք և զաւելորդն բառնայք, զի ոչ ժուժեաց միտս իմ և ոչ իմացա զսղալանսն սորին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեանդ ներել սղալանաց իմոց. ամէն։

214
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
Երևան, № 9124

Գրիչ՝ Մարտիրոս

96բ Ես՝ անարժան ծառայ Մարտիրոսս գրեցի զՀամայիլին թուականն, զոր գրած էր։ Գիրս գրեցի Հա[յ]ոց թվին ՌՂԳ (1644), մա[յ]իս ամսոյ։ Եւ էր Համայիլն թիւն այսպէս. ՌԾԹ (1610)[4]։

215
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 3926 (1503 թ.)

291բ Զտէր Յովհաննէս արքեպիսկոպոսն յիշեցէք ի Քրիստոս, որ չուեաց յերկրայնոցս յերկինս, թվիս ՌՂԳ (1644) յունիսի Զ (6)։

216
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Մաշտոց, III, № 886

Գրիչ՝ Ալէքսան երէց
Վայր՝ Եւդոկիայ

ա

387 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսի Քաղուածոյս ձեռամբ անարհեստ գրչի Անդրանեղուպոլրսցի Ալէքսան իրիցու, ի վայելումն քաշ բարունապետին մերոյ՝ Դաւիթ վարդապետին, սպասաւոր սբ. Երուսաղիմայ, զոր
388 և տէր // Աստուած բարով վայելել տացէ աստ և ի հանդերձեալն, սբ. և արժանաւոր վարդապետացն դասեսցէ. ամէն։

Կատարեցաւ գիրս թվին ՌՂԳ (1644) յունիս ամսոյ ԺԵ (15), ի քաղաքն յԵ[ւ]դոկիայ, ի դուռն Ս. Ստեփանոսի, և Ս. Կարապետին, և Ս. Յակոբայ։ Ո՛վ սրբասէրք, [յ]որժամ կարդալով կամ օրինակելով զյետնեալ գրիչս յիշէք, զաւելն բարցէք, և զթերին լցէք, զի կար մեր այս է։ Եւ որ յիշէ Աստուած ողորմեայիւ մի, նա օր առատ է ի տուրս, զյիշողս և զյիշեալս անթառամ պսակացն արժանի արասցէ։ Կատարողք աղաչանաց մերոց աւրհնիք ի յԱստուծոյ. ամէն։

Բ

Զծոյլս ի բարիս,
Եւ զարագս ի չարիս,
Զ Ալէքսան աշխատելիս,
Յիշեա եղբայր որ հանդիպիս։

---

[4] Ձեռագիրը բաղկացած է 98 թերթից, որից 23—81 թերթերը՝ 59 թերթ Հակոբ մեղապարտի 1512 թ. տպված Պարզատոմարի մի օրինակն է։ Մնացած 39 թերթերը տարբեր ձեռագրերի մասեր են կամ դատարկ թերթեր, զանազան գրառումներով։ Այս գրառումներից մեկն էլ ներկայացվող հիշատակագրությունն է։

Գ

Այլ գրով

Թվին ՌՁ և է (1638) առի իշխանութիւն, և ի [Ռ]ՂԳ (1644)՝ առի գաւազան։

217
ՄԱՇՏՈՑ
ՑՁԱՐ, № 220

Գրիչ՝ տէր Պետրոս

1005 *Ձեռքս փոտի և հողանայ.*
Գիրս առ ձեզ յիշատակ մնայ։

Փառք յաւիտեանս. ամէն։ Գրեցաւ գիրկքս ձեռամբ տէր Պետրոս անուն. ամէն։ ՌՂԳ (1644), յուլիս ամսոյ է (7)։

218
ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՒՐՂԻ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ
Երևան, № 3489

Գրիչ՝ Փիղիպոս

Ա

151ա *Զտառապեալ և զանարժան գծողս սորայ զՓիղիպոսս միով ողորմայիւ յիշել աղաչեմ։*

Բ

343բ—344ա *Գիտացիր տէր իմ, զի օրինակն թուղթ մի պարապ էր թողած, սանցքում թողութիւն արարէք եղբայրք։*

Գ

354ա *Փառք... որ ետ կարողութիւն նուստ և անպիտան, տրուի Փիղիպոսիս հասանել ի յաւարտ գրոյս, որ կոչի Պարապմանց, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի, սրբակրօն Ստեփաննոս քահանայի, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն, հօրն՝ Ըստեփանոսին և մօրն՝ Գայիանէ, և եղբօրն՝ Բաղտասարին, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք՝ ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Սաեփանոսն, և կողակիցն իւր՝ Աննային, և որդիքն իւր՝ զՅակոբն, Յոհաննն, տէր Աւետիս աբեղայն, զՓիլիպոսն, Առաքելն, Պօղոսն, և դստերքն իւր՝ զՊարասկեի, Մասփիւռն, զՆղեսաբեթն, զՍափիրայն, և Աղատն, և միւս
354բ *Աղատն, և զՄարամն, // և զեղբօր որդիքն իմ՝ զՍիմոնն, զՍարուխանն, զԽաչիկն, յիշեցէք...։*

Արդ՝ գրեցաւ գիրքս ի թվինն Հայոց հազար ՂԳ (1644), ի զամար ամսոյն Ի (20)[5]. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով՝ զեկեղն բառնայք և զպակասն լնուք և [ս]ղալութեան և խոշորանաց գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր. ամէն։

---

5 *Այսինքն՝ օգոստոսի 7-ին։*

219
ԳԻՐՔ ՅԱՂԱԳՍ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ
Երևան, № 1474

288ա Փառք...։ Որոյ ամէնառատ և բազմապատիկ ողորմութեամբն յանկ ելեալ կատարեցաւ հոգէլի սբ. գիրքս, որոյ անուն կոչի Մոլութեանց, այսինքն սակս մեկնութեան և բացայայտութեան հասարակ մեղացն։ Եւ է (7) գլխաւոր մոլութեանցն է, որ յերկար և համեղ բանիւք ցուցանէ զմեղքն զարշելի և աղտեղի և վնասիչ հոգոց մարդկան, բաժանելով զնոսա ի տեսակս և ի մասունս, առ ի բաց քեցելոյ զմանկունս Սիօնի ի մոլի ծառայութենէ նոցին. զի ծանօթս արասցէ զմեղ գիտել զվնաս նորա, թէ որպէս անհաճոյ է Աստուծոյ մեղքն և ապականիչ բնութեանս. և զի ծանօթ գոլով նոցին զարշութեանցն խորշիցի ի նոցանէ և առաւել բևեռեսցի հոգին ի սէր առաքինութեանն, քանզի խորշիլն ի մոլութեանց, առաքինութիւն է, որպէս ասէ այս գիրք։ Վասն այնորիկ յերկար բանիւք սկիզբն առնէ և ասէ զհասարակ մեղացն, ծանուցանելով զանուանս նոցին և զգարշութիւն և զանհաճոյ լինելն Աստուծոյ։ Ասէ և զշարժողացն զմարդս ի մեղքն, վերաբերելով զպատճառն ի սատանայ ի մարմինս և յաշխարհ։ Ասէ և զայն, թէ որով հնարիւք կարեմք զերծանել ի բազմապատիկ որոգայթից մեղացն։ Եւ ապա սկսանի և ասէ զէ (7) մոլութիւնսն և զգարշութիւնս նոցին, և զգուշացուցանէ ի բաց կալ ի նոցանէ և յաղթել մեղացն ըստ օրինակի սրբոցն։ Եւ յաւարտ բանին զգուշացուցանէ և ասէ վասն զգայութեանց, թէ իբրև զգործի են մտացն և նոքօք կատարի ամենայն գործ, եթէ բարի և եթէ չար. և պատուիրէ ոչ ածել ի չարն զգործին, այլ ի բարին, և հեռանալ ի չարէն որ առնեն զմարգն չար և անիրաւ, այլ երթալ զհետ բարւոյն, որ առնեն զմարգն առաքինի, և արդար, և հաճոյ Աստուծոյ։

288բ Արդ՝ զայս ամենայն տեսեալ պարոն խոճայ Պետրոսն Ջուղայեցի, ցանկացաւ ստանալ զսա յիշատակ անշնջելի հոգոյ իւրոյ և գանձ անկողոպտելի ի յերկինս։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով, օրինակելով և կամ միայն տեսանելով, յիշեցէք զստացող սորա զպարոնաց պարոն զխոճայ Պետրոսն, որ է այր մեծահաւատ և հնազանդ աստուածային օրինաց, ողորմած և աղքատասէր, աղօթասէր և արտասուեղ, խոնարհ և երկիւղած, զոր տէր Աստուած ընդ սբս. իւր դասեսցէ զնոսա. ամէն։

Դարձեալ յիշեցէք զխոճայ Պետրոսն, և զծնողսն իւր՝ զՎէլիճանն և զՇուշանն, յիշեցէք...։ Դարձեալ ի Քրիստոս յիշեցէք զխոճայ Պետրոսն, և զորդին իւր՝ զխոճայ Պողոսն, որ է իշխան Ջուղայու, և սիրեցեալ յաշս արքային Պարսից և մեծամեծաց նորին, զոր տէր Յիսուս անփորձ պահեսցէ զնա. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոճայ Պետրոսն, և զկողակիցն իւր՝ զԱննային, և զմիւս կողակիցն՝ զԹանկմէրն, և զորդիսն իւր՝ զՄինասն, որ մանուկ տիօք փոխեցաւ առ Քրիստոս, և զմիւս որդին իւր՝ զՅովանէսն, յիշեցէք...։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխոճայ Պետրոսն,

որ ստացաւ զսա ի հալալ ընչից և յարդար վաստակոց իւրոց և ետ յիշատակ ի Ղաղար եպիսկոպոսն, զոր տէր Յիսուս միոյն հարիւրապատիկ հատուցէ աստ...։

Գրեցաւ թուին ՌՂԳ (1644) օգոստոս ամսոյ ի ԻԱ (21)։

220

ՇԱՐԱԿՆՈՑ

ՈՑՍՄՎ, № 1246

Գրիչ՝ Յովսէփ պարոնտէր

884 Փառք..., որ ետ զաւրութիւն տկարութեանս իմոյ, յանկ և յաւարտ հանեալ շարայարմադիծս Շարակնոցիս, ի վայելումն գ[ե]ղաբուսոյ նորաբողբոջ մանկան հասակի նորոյ Սիովնի սուսանուն Յովսէփ պարոնտէրին մեղաւորն գրչի։ Գրեցաւ ի թուականութեանս Հայոց ղաթուղիկոսի Մովսէս[ի], թագաւոր[ութեան]սուլդան Յերբահիմ, ընդ հովանեաւ Քրիստոս Աստուծոյ մերոյ, ո[ր] է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Թվին ՌՂԳ (1644) աւգոստոս ԻԸ (28), չորեքշաբ[թ]ի։ Յովսէփ պարոնտէրի Աստուած ողորմ[ի] հոգին։

221

ԱԴԱՄԳԻՐՔ, ՏԱՂԱՐԱՆ

ՄՑՁԵՊ, V, № 1417

Գրիչ՝ Օնոփրիոս եպիսկոպոս

Վայր՝ Երուսաղէմ

ա

78 Փառք...։ Շնորհաւք ամենակալին Աստուծոյ կատարեցաւ սայ Տաղարանս ի աստուածակոխ սբ. քաղաքն յԵրուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի թվականիս Հայոց ՌՂԳ (1643)-ին, հոկտեմբեր ամսոյ ԻԱ (21)-ին, ձեռամբ անարժանիս ոմն եպիսկոպոս անուն ուխտաւորիս, ի խընդրոյ տէր Նիկողայոս սրբազան քահանային, որ էր սպասաւոր սբ. յԵրուսաղէմայ և լուսարար լուսաբուղխ սբ. գերեզմանին Քրիստոսի, ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր Աստուածն մեր պահեսցէ գինքն անփորձ և անսասան կենաւք. ամէն։

բ

75 Ողորմեայիւ մին զմեզ մի՛ մոռասցեն,
Եւ զՕնոփրիյոս պանտուխթն յիշեսցեն։
Սէրն մեր Յիսուս աւրհնաբանեսցին,
Զեպիսկոպոսին մեղքըն քաւեսցին։
Ի մեծ թվականիս մեր Հայոց ազգին,
Հազար ւ ինըսուն և ի երրորդին (1644),
էի ամրս այս ի սբ. քաղաքին,
Եւ գրրեցի սա ի աւգոստոսին։

222

ՃԱՇՈՑ

ՄՁՍԴ, № 80 (1555 թ.)

Նորոգող, կազմող՝ Յակոբ երէց

60 Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զխոճայ Շիրինին. զարեան մերձաւորքն՝ զխաչատուրն, զԴաւիթն, և զիւրեանց որդիքն՝ զՏիրատուրն, զՇիրին, որ եառն վերստին նորոգել և կազմել զսբ. գիրքս ի հալալ արդեանցն։ Աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք, մէկ Հայր մեղայիւ մի յիշել ի Տէր. և որ յիշէ՝ յիշեալ [լիցի] ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ամէն։ Կազմեցաւ և նորոգեցաւ գիրքս ի թվին ՌՂԴ (1644), ձեռամբ սուտանուն Յակոբ երիցուն, զանունս ունիմ և զգործս ոչ։

223

ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՁՍԴ, № 128

Գրիչ՝ Բարղամ

80 Փառք... Արդ՝ գրեցաւ Շարակնոցս ձեռամբ նուաստ ծառայ Բարղամ գրչի, // թվին ՌՂԴ (1644), ի խնդրոյ Սեբասացի Մելքիսէք քահանային, որ ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն։ Որք հանդիպէք սմա կարդալով կամ տեսանելով աղաչեմ զձեզ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սբ. գրոցս զմահտեսի Արզուն, և զորդիք իւր՝ զէսանանն և զՊաղասարն, որ փոխեալ են առ Քրիստոս, և զդստերքն իւր՝ զիրիցակին Նազէֆարն, զՓաշապակն և զխանանուլթանն, և զթոռներն՝ զԱրսլանն և զՅուսէին, զմահտեսի Ղայան, և զորդին՝ զՊապն, և կողակիցն՝ զխուտարթն, որ ստացան զսա ի յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ անջինջ և յաւիտենական։ Եւ ետուն ի ձեռն վերոյ գրեալ Մելքիսէք քահանային և որգւոյն Յակոբին և Անդրէասին, զոր տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրս անվրդով յամենայն չարէ, ամէն։

224

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

ՄՁԵԹ, VI, № 1703 (1337 թ.)

Նվիրատու՝ Մինաս երէց
Վայր՝ Երուսաղէմ

6 Յիշատակ է խազտեսրս ձեռօքս Սաամպօլցի Մինաս իրիցու ի դուռն Ս. Յակոբայ, ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ, ի հայրապետութեան տէր Գրիգոր սբրբակրօն հօղապետին։ Տէր Աստուած զինքն երկայն աւուրս արասցէ. ամէն։ Եւ դուք հայրք երաժիշտ վարպետք, յորժամ քաղցրաձայնէք զտետրս, զվերոյ գրեալ զտէր Մինասն յիշեցէք...։

Թվին ՌՂԴ (1644), սեպտ[եմբերի] ԻԴ (24), օրն երեքշաբթի։

225
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 66 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Պետրոս քահանայ
Վայր՝ Թէքիրտաղ

288ա Կամաւ ամենազօրին Աստուծոյ կրկին նորոգեցաւ գիրքս ի թվականութեանս մերում ՌՂԳ (1644), ի վերագիտողութեան առաքելական աթոռոյն սրբո[յ] էջմիածնի տեառն Փիլիպպոսի սրբափայլ հայրապետի, որո[յ] սրբութիւն և համբաւն տարածեցաւ ի Յոյնս և ի Լագինս, և երկու անգամ չոգաւ ի դրունս արքային Պարսից և արար ազատ զեկեղեցին և զամենայն ինչս նորին ի հարկէ. որո[յ] հրամանաւ յետնեալս ի բարեաց՝ Յոնան եղեռնալուրս եկի նուիրակ ի կողմանս Կոստանդնուպօլսի. և պատահեցա ի քաղաքն Թէքիրտաղ ումեմն բարեսէր քահանայի տէր Պետրոս յորշորշելո[յ], որո[յ] տեսեալ զգրոցս ծերութիւն առեալ նորոգեաց յօժար սրտիւ և բազում աշխատութեամբ և գրեաց զյիշատակարանս զայս, զոր և խնդրեմք յամենազօրէն յԱստուծոյ, զի տացէ սրմա զվարձս ըստ վաստակոց իւրոց. ամէն։

226
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
Երևան, № 791

Գրիչ՝ Կիրակոս

ա

464ա Փառք...։ Որ դրսմադրեաց զմասունս վերջացեալ գծագրիս, տկար և սրխալագիր գրչիս Կիրակոս, թվին ՌՂԳ (1644)-ի։ Արդ՝ շնորհիւ բարերարին Աստուծոյ սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զտառս աստուածայարմար և զանդին մարգարիտս ... և կոչի Հարանց վարք, որ աւր ըստ աւրէ սոսկացուցանէ դոսկերս լսողացն և մխիթարէ և քաղցրացուցանէ զսիրտս հաւատով և սիրով ունկնդրողացն զպատմութիւն և զխրատ սբ. հարանցն, որ տուտ հաւաքեալ կան։ Արդ՝ զայս ամենայն բարութիւնս տեսեալ հեզահոգի և բարեմիտ[6]

բ

139ա Ողորմի ստացողի գրոյս. Բասպարին, և ծնողացն՝ պարոն Հայկազին, Մարասիանումին, եղբարց Ազաջան պէկին, Հախնազար պէկին, ամուսնուն՝ Սուլթանազին, նորընծայ որդոյ իմոյ Հաիանազարին, և դուստր Ֆարիզատ խանումին, և քոյրն՝ Հումայիիանին, և [ինձ] մեղապարտ գրչի. ամէն։

գ

168բ Սոցին աղօթիւքն ողորմի ըստացաւղի գրոյս Գասպար պէկին, և ծնաւղացն՝ պարոն Հայկազին, Մարասխանումին, եղբարց Աղաճան պէկին, Հախնազար պէկին, ամուսնուն Սուլթանաղին, իւր նորընծայ որդոյն Հախնազարջանին, և դուստր Ֆարիզատ խանումին, քվեր Ումախանին։

---

[6] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

227
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 1023

Գրիչ՝ Յովանէս

189բ Փառք...։ Ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644) էր, ձեռամբ յամենամեղ և անիմաստ եղգելի և մեղաւք լի, անարժան և սուտանուն Յովանէս գրչի։ Յորժամ մեղ աւրհնեցին թվին ՌՁԹ (1640) էր[7]։

228
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ
Երևան, № 1123

Գրիչ՝ Ալէքսան էարէնեցի
Վայր՝ Եւդոկիա

373ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ ի յաւարտ այսմ սբ. գրիս, որ կոչի Քաղուածու սաղմոսիս, ի քաղաքն յԵդովկիա, ի դուռն Ս. Ստեփաննոսու, և Ս. Յակոբուն, և Ս. Կարապետին, ի վայելումն Կիրակոս քաշ բաբունապետին, զոր տէր Աստուած բարով վայելեր տացէ աստ և ի հանդերձեալն, սբ. և արժանաւոր վարդապետացն դասեսցէ. ամէն։ Արդ՝ գրեցաւ ձեռամբս էարէնեցի Ալեքսան իրիցու, թվին ՌՂԳ (1644)։ Ով հայրք սբ., յորժամ աւարտէք, չհողու փոշի Ալեքսան իրիցուն մեղաց թողութիւն խնդրէք, վասն սիրուն Քրիստոսի, ևս առաւել անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, ո՛վ հայրք սբ. ամէն։

229
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ
Երևան, № 1136 (1381 թ.)

Նորոգող՝ Աբանաս եպիսկոպոս

ա

222ա Զվերջին նորոգող սբ. տառիս, որ է մայր արարածոց, երկու հարազատ եղբայրքս Աբանաս եպիսկոպոս և Գրիգոր եպիսկոպոս, յիշատակ մեզ և կրկնակի ծնողաց մերոց, ևս առաւել բազմերախտ և հոգևոր հօրն մերոյ՝ Յոհանէս վարդապետին, որք ընթեռնուք և կամ օրինակէք, Աստուած ողորմին մի՛ խնայէք և Աստուած զձեզ ողորմի...։

Թվին ՌՂԳ (1644)։

բ

Գրիչ՝ Աբանաս

222բ Նուաստ քարտուղար և աշակերտ բանի զԱբանասս յիշեսջիք, որ եմ եղեռնագործ. Աստուած յիշեցողն յիշէ յաւուրն ահագին։

---

[7] Հետագայում մեկ ուրիշը նույն էջում ավելացրել է. «Փիլիպոս կաթողիկոսի թիվն այս է ՌՁԲ (1633). ՌՁԲ»։

230

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1215

Գրիչ, ստացող՝ Թորոս
Վայր՝ Սիս

ա

262ա Նաև ղվերշին ստացողս և գրողս սբ. տառիս զյետինս ի բանասիրաց զԹորոս, որ յոյժ աշխատանաւք և փափագանաւք գծագրեցի ձեռամբ իմով զգիրս, յիշատակ ինձ և ամենայն ննշեցելոց իմոց, ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644), ի Սիս քաղաքն, ի գուռն Ս. Լուսաւորչին, ի հայրապետութեան տեառն տէր Սիմէոնի, հոգևոր հօրս իմոյ։ Եւ որք յիշէն՝ յիշեալ լիցին...[8]։

Բ

289բ— 290ա լու- սանցքում Թողի, թէ գտնէք գրէք։

231

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 1255

Գրիչ՝ Կարապետ Թոխաթցի
Վայր՝ Եղոկիա

ա

271ա Փառք...։ Որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտումն աստուածախօս մեկնութեանս սբ. Մաթէոսեան Աւետարանիս, տկար և տարտամ, ձեռամբ անարհեստ և փծուն գրչի, մեղապարտ և սևերես առաջի Աստուծոյ և մարդկան, Թոխաթցի Կարապետ պոռնիկ իրիցի, յամի ՌՂԳ (1644) թուի, ի քաղաքիս Եղոկիոյ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի և Ս. Աստուածածնի[9]

Բ

Զբստացող սրբոյ Մեկնութեանս քաջ բարունի տէր Ներսէս Սեբաստացին[10], որ ստացաւ զսայ յիշատակ յափտենից։

---

[8] Սույն հիշատակարանն անմիջական շարունակությունն է նախագաղափար ձեռագրի՝ 1415 թ. հիշատակարանի։

[9] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

[10] Հետագայում Կիլիկիայի կաթողիկոս։

232
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1278 (1625 թ.)

Գրիչ՝ Իսահակ վարդապետ
Վայր՝ Էջմիածին

153ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ մեկնիչ Գ (3) գլուխ Աւետարանաց, հրամանաւ տեառն Մովսէս կաթողիկոսի, յաթոռն գերագահ սբ. Էջմիածնի։ Որ եղև կրկին լուսաւորիչ աղդիս և կարգիս մերոյ։ Եւ նորոգեաց զսբ. աթոռն Էջմիածնին։ Եւ զայս գիրքս գրել ետ և եդ յիշատակ ի սբ. աթոռն, զի մի՛ ելցէ անտի ուրեք և մի՛ ոք իւրացուսցէ զյիշատակս հօրն սրբոյ. այլ ի նմա կացցէ և մնասցէ յաւիտեան։*

Ի թվականիս մերում ՌՂԳ (1644) ամին. ձեռամբ Իսահակ վարդապետին[11]։

233
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 1542

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Մակեդոնի մայրաքաղաք

292ա Յիշատակարան գրոցս ըստ կարեաց արկար մրտացս

Փառք...։
Որ զօրութիւն ետ տկարի,
292բ *Հասոյց աւարտ 'ւ ի ծայր բանի.*
Զի զանտախկոտ փոթոտէի,
Վերջանալոյն ոչ հասնէի։
Եռափափաք ըղձմամբ սրտի,
Փոթոտ կամս փափաքէի,
Ներսիսի գիծ ընտրեալ տառի,
Ամէնալից բուրաստանի։
Մինչ կամեցս Տէրն ամէնի,
Կամակատար Տէրըն բարի,
Բաղմայաշխատ յոյժ ջանացի,
Ի գտանել յօրինակի։
Ձեռամբ տրհաս փծուն գրչի,
Աստուածատուր *անարժանի,*
Թէ կամեցող Տէրն կամի,
Ի վայելումն [ ]ի[12]։
Աւարտեցս բանս ի կարգի,
Մայրաքաղաքն Մակեթոնի,

---

[11] *1625 թ. Մովսես Խոտանանցին, իր հայրենիքում եղած ժամանակ, ընդօրինակել է տվել այժմյան ձեռագրի մի մասը՝ մինչև 277 թերթը։ Այնուհետև 1629—1632 թթ., երբ լինում է կաթողիկոս, իր հետ բերում է Էջմիածին՝ լրացնելու և Էջմիածնի մատենադարանում թողնելու նպատակով, որը իրագործվել է 1644 թ. Մովսես Խոտանանցու մահից հետո։*

[12] *Անվան տեղը դատարկ է։*

Ընդ հովանեա Ս. Աստուածածնի,
293ա Եւ Քառասնից սբ. վկայի։
Ի ժամանակս այս ի վերջի,
Տէր Փիլիպոս կաթողիկոսի,
Պատրիարգի սբ. աթոռի,
Տէր Գրիգոր պարոնտէրի։
Եւ առաջնորդ Ըս[տ]մպոլ քաղաքի,
Տէր Դօիթ կոչի ահրի,
Եւ թագաւորն Տաճկաց աղգի,
Սուլդան Իպրահիմ անուանի։
Արդ՝ ես նուաստ ամենայնի,
Մեծամեծաց և նուաղի,
Եղէ խնդրող յայսրմ տառի,
Բաղմահօաք նուագարանի։
Ի թվականիս մեծի թըվի,
Ի Ադամայ մինչ այս վայրի,
Եաւթ Ռ և Կ տարի,
Այլ և ունի Թ աւելի (7069)։
Ի ծրնընդէնէ տեառն Յիսուսի,
294բ Ռ և Զճ տարի,
Եւ քառասուն վեց օեւլի (1646),
Ընդ թիւ ամացըն Քրիստոսի։
Դարձեալ թվին հա[յ]կազանի,
Աբեթականըն տոմարի,
Հազարն անցեալ և կատարի,
Ընըսուն ւ Գ կա աւելի (1644)։
Կատարեցս սա յայսմ ամի,
ի
Աւուր պատկերն ի
ի[13]։
Գծագրեցի ղսա կամաւի,
Ի վայելումն Առաքելի,
Զճառ և ղվխոսսրն Ներսէսի,
Զոր անուանի Յիսուս որդի։
Ի Ադամայ սկսանի
. . . . . .
296ա Ես աղաչեմ որք հանդիպի,
296բ Ամէնալից բուրաստանի,
Զմեզ յիշեցէք ի յաղօթի,
Առ ողորմած Տէրն ամէնի։
Եւ զուսուցիչն իմ ըզբարի,
Սարգիս յանուն կրօնաորի,
Բաղում ջանաք աշխատելի,

13 Ձեռագրում՝ այդպես դատարկ։

Յոյժ դատեցաւ նա վասն իմի։
Մինչև հասոյց ի յայսմ վայրի,
Զիս զանարժանս ղերդ զարժանի,
Մինչ զի յուսոյց արուեստ գրրի,
Եւ զ[ը]նդերձմունքս սբ. գրրի։
Արքայ և Տէրն ամենայնի,
Առատաձիր Տէրըն բարի,
Զվարձս բարեաց նմայ տացի,
Ի ընդ քահանայսն դասեսցի։
Որքան կենդան է ի մարմնի,
Խաղաղակսն կենաւք ապրի,
Եւ յետ աստեացրս վրճարի,
297ա Դասի ի դաս յաջակողմի։
Այլ յիշեցէք ի յաղօթի,
Մարմնոյ ծընօղքս մինչդեռ մարմնի,
Զհայրն իմ Մխիթար յանուն ասի,
Զմայր իմ Շոֆրա հեզահոգի։
Ով ընդերձողքըդ նազելի,
Ասա[ա]ցէք սոցա Տէրն ողորմի,
Միթէ Աստուածն ամենայնի,
Զեզ և սոցա ողորմեսցի։
Զի շատ աշխատ կըրեալ լինի,
Առ մեղօրս 'ւ անարժանի,
Եւ սընուցին սիրով սըրտի,
Խանդաղական գրթով իլիի։

. . . . . .

234

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1754

ա

219բ Աւարտ իրիս ճեմականի,
Ստագիրացւոյ Նրբախօսի,
Զէակս հանուր ստորոգողի,
Ի թիւ տասնեակ որոշողի։
Գեղեցկավիպ ճարտասանի,
Ճշմարտախորհ մակագրողի,
Միտ անուանեալ Պղատոնի,
Համայնց աղանց ընդունելի։
Բացատրող հակակայի,
Համադամայնց և նախկընի,
Եւ շարժութեան երկեռակի,
Վերջեալ զունելս նիմեքի։

Գրիչ՝ Գաբրիէ՞լ

Բ

Յորժամ ընթեռնուք զսբ. արտաքնիդ,
Աստուած ողորմի ասացէք [տէր Գաբ՞]ռի[է՞]լի[դ],
Որ սիրով սրտիւ խնդրէր զփափաքելիդ.
Կատարեաց և աւարտ էած զարտաքնիդ։

Թվին Հայոց ՌՂԳ (1644) ամին և Աստուծոյ փառք յաւիտեանս. ամէն։

235

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 2149 (ԺԵ դ.)

Կազմել տվող՝ Պետրոս արքեպիսկոպոս

26 2ա *Ես՝ աստուածասէր և բարեմիտ, հեզահոգի* Պետրոս *արքեպիսկոպոս տուի վերըստին կազմել, յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց, հօրն՝* Խումային *և մօրն՝* Խաթունփաշին, *և եղբարցն՝* Եմինին, Ղղթիարին, *որ հանգուցեալ [են?] առ Աստուած, և եղբօր որդոցն՝* Քաճանին, *կողակից* Սառային, *և դեռաբուս սարկաւագացն՝* Հումային *և* Ալէքսիանոս[ին], Բարսեղին, *կողակցին, և իւր քուերցն և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... Պետրոսին *եպիսկոպոսին,* Աստուածատուրին *և տէր* Գինոսին, *տէր* Կիրակոսին *և* Յովանէսին, Յովսէփին, *և իւրեանց ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... մեծ պապերացն՝ Պետրոս *եպիսկոպոսին,* Ղազար *եպիսկոպոսին, և միւս* Պետրոս *եպիսկոպոսին, և* Պողոս *եպիսկոպոսին, որ հանգուցեալ են առ Քրիստոս, և որ զԱստուած ողորմին ասէ...։*

Կազմեցաւ Թվին ՌՂԳ (1644) ամին։

236

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2180

Գրիչ՝ Վարդան սարկաւագ

Ա

103բ *Ով եղբայր, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեանց, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զեղկելիս* Վարդան *սարկաւագս և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոս[է]։*

Բ

Այլ գրիչ

302ա *Սղալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, ո՛վ եղբարք, զի խիստ յշտապեցա գրելիս։*

Գրիչ՝ Աթանաս սարկաւագ

Գ

315ա Թողութիւն արէք սղալանաց գրիս Աթանաս խէլառ սարկաւագիս։

Դ

320բ Թողութիւն արէք սղալանաց գրիս Աթանասի, անպիտան դպրիս։

Գրիչ՝ Սահակ սարկաւագ

Ե

416ա Այլ պաղատիմ աղերսալի,
Եւ թախանձեմ ըղձմամբ սրտի,
Ըղհանդիպողսդ յայս մատենի,
Եւ զվերծանողսդ խուն այս բանի։
Անկեղծ մտօք սերտեալ սրտի,
Յիշման առնէք զհէքս արժանի,
Զփոքրիկ մարմնովըս տաղտկալի,
Բայց ճոխ մեղօք յանցմամբ ի լի։
Զ՝Սահակ համբակըս եղկելի,
Ծաղր և ծանակ համայն ցեղի,
Նաև եղբարսն իմ նազելի,
Դոյզն ինչ օգտօղ յայսըմ ծըրի։
Զ՝Զ՝Առաքեալն ըղձալի,
Եւ զ՝Գրիգորն տենչալի,
Այլ և համօրէն ջոկքս երամի,
Որ կան ի կիրթ յայս դպրոցի։
Այլ ամք կենացս ապիկարի,
Զորեքտասան մու աւելի[14],
Ի թուականիս Հայոց աղնի,
ՌՂ եղ[15] և երկի (1644)։

237

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2802

Գրիչ՝ Սրապիոն սարկաւագ

Ա

6բ Տէր Աստուած թողութիւն շնորհեա ըստացողի գրոցս Մէհրուբանին, և որդոյն՝ Զուրապին, Փարսադանին։

Բ

Յորոց արժանի արասցէ զ՝Սրապիոն սարկաւագս. ամէն։

---

[14] Այսինքն՝ 14+1=15. ուրեմն գրիչը ձեռագրի ընդօրինակության ժամանակ եղել է 15 տարեկան և ծնվել է 1629 թվին (1644—15)։

[15] «եղ»-ը համապատասխանում է հունարեն «մեկ» բառի արական սեռին՝ ετς ինչպես իգական սեռի μια-ն հայերենում մու։ Այստեղից էլ 1090+1+2+551։

238
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3231

Գրիչ՝ Մինաս

ա

11Ա բ Աղաչեմ յիշել ի Տէր զտխմար գրիչ գեղեցկայարմար բանիս զկողոպտեալս ի բարեաց Մինաս սուտանուն, և անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

Գրիչ՝ Սարգիս

բ

18Ե բ Եւ ես գրողս եմ անարժան,
Տեսանողաց ոտից կոխան,
Որ և Սարգիս կոչի անուամբս,
Զիս որ առնէք արժան յիշման,
Եւ ձեզ աւրհնէ անմահ արքայն։
Թուականն Հայոց ՌՂԳ (1644)։

239
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 3400

Վայր՝ Կ. Պոլիս

326ա Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի Կոստանդնուպոլիս, ի թուականութեան Հայոց ՌՂԳ (1644), յիշատակ խոշայ մահտեսի Սատուրին, և ծնողացն իւրոց՝ Մալինին և Հոիփսիմէին, և կողակցին իւրոյ՝ Ղաղամ-
326բ ղուբլուն, և որդոցն իւրոց՝ բան Թումա//սին, Գալուստին, Աւետին և Պետրոսին: Դարձեալ յիշեցէք զմահտեսի Սատուրն, որ ետ զսբ. Աւետարանս Նոր Ջուղայու Ս. Աստուածածնի եկեղեցւոյն, յիշատակ իւրն և հանգուցեալ որդւոյն իւրոյ՝ Բարաղամին, որ մանուկ տիօք հանգեաւ ի Տէր, որոյ հոգին հանգուսցէ Տէր ի դասս ընտրելոցն. ամէն։

240
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ
Երևան, № 4106 (ԺԷ դ.)

Ստացող՝ Մխիթար եպիսկոպոս

196բ Փառք...։ Արդ՝ յիշեցէք Մխիթար եպիսկոպոսս, [որ] գնեցի հալալ ընչից իմոց ըզսբ. տառս, յիշատակ ինձ և եղբարցս միաբանից, յիշատակ Սեանայ կղզոյս, [ի] դուռն Ս. Առաքելոցն անխախտ։ Ի հայրապետութիւն սբ. յաթոռոյս Էջմիածնայ տեառն Փիլիպոսի, առաջնորդութիւն Մխիթար եպիսկոպոսին։ Ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644) ամի։ Ով որք հանցէ ի սբ. ուխտէս կամ ծախելով կամ գերի անկեալ առ ինքն պահէ՝ պարտական լինի առաջի Քրիստոսի մեր մեղացն, հակառակն պատիժ կրէ։ Կատարեալքն հրամանաց աւրհնին ի Աստուծոյ։

241
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 5499 (1576 թ.)

221ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ղէռէս Խաստնեան, ե ղորդ[ղ]իքն իւր՝ Սիսիար[ն], ղՄուրատն. և ղկո[ղ]ակցին՝ Խուրումիմ, և որդուն՝ Եղիին, ոԱտոմն, և զորդիքն իւր։ Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, որ լի բերանով Աստուած ողորմի ասացէք Սիսիարին, և իւր կողակցուն՝ Ցինարին, Յոհան, և զկողակցին, և որդիք իւր. ամէն։

Գիրեցաւ ի թվին ՌՂԳ (1644) ամին։

242
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6665

Գրիչ՝ Սաեփանոս
Վայր՝ [Նոր] Ջուղայ

ա

281բ Փառք...։ Արդ՝ ցանկացող եղեալ // այսմ աստուածաշունչ մատենիս աստուածասէր և հաւատարիմ, հեզահոգի, Ծաղիկն, և ետ գրել, յիշատակ իւրն և կողակցին՝ Գէրաքին. Քրիստոս Աստուած իւր հոգոյն ողորմի։ Աղաչեմ յիշել առ Տէր զհեզահոգի... Գէրաքն և իւր պարոն և աշխատասէր որդիքն՝ Գրիգորն, Ըռըստամն, Ըմպրումն, Զաքարէն, Մարգարէն, և Գրիգորին դեռաբուսիկ որդին՝ Փիրաքամն, Աստուած զիւրեանքն անփորձ և անսասան պահէ...։ Դարձեալ աղաչեմ յիշել զԳէրաքն, և զծնողսն՝ Ըմպրումն, Շուշանն, և քոյրն՝ Սինափաշէ, դուստր Սանդուխան, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զպարոն Գրիգորն, և կողակիցն՝ Արզուքանն, և որդին Փիրաքամն. Քրիստոս զիւրեանքն անփորձ պահէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զպատանեակ Ըռըստամն, և կողակիցն՝ [Ս?]ափորն. Քրիստոս Աստուած պտղացուցէ զինքն և յերկարամեա արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զմահդասի Դշխունն, որ եղև <եղև> միջնորդ սբ.
282ա Աւետարանիս դրելոյ, որ է հոգէ//քոյր Ծաղիկին. Քրիստոս հատուցէ զվարձս իւր...։

Դարձեալ աղաչեմ յիշել առ Քրիստոս զհաւատարիմ և աղօթասէր Ծաղիկն, և զհայրն իւր՝ զտէր Ըռըստակէս մեծաշուք և անուանի քահանայն, և մայրն՝ Խանփարի, և եղբարքն՝ Մկրտիչն, Մուրատփաշէն, Երիջանն. սոքա ամենեքեան փոխեցեալ են առ Քրիստոս. Քրիստոս իւրեանց հոգոյն ողորմի. ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշել զԳէրաքն, որ է հանգուցեալ առ Քրիստոս...։ Քրիստոսի քաղցր տեսոյն արժանի լինի իւր կողակից Ծաղիկաւն, և յիշատակն խաղաղական կենօք պահեսցէ...։

282բ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս Շօշ, ի դեղս Ճուղայ, հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպոսի, և առաջնորդութեան մեր Ոյ գեղիս խաչաբարձ և Քրիստոսի անմոլար հետևողի տէր Խաչատուր

եթնարփեան շնորհօք լի վարդապետի, որ բակում երախտիք ունի ի վերայ մեղաւորիս. Աստուած հատուցէ զվարձս իւր է (7)-ապատիկ ի ծոցս իւր։ Եւ թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասի, և իշխանութեան գեղիս խօճա Պողոսին, ի թվաբերութեան Հայոց Ռ և ՂԴ (1644)-ի, որ ետ գրել Ծաղիկն և իւր որդի Ղոբստակէսն զսբ. Աւետարանս ի հալալ և ի արդար վաստակոց Գէրամին և իւր որդոցն։ Ոչ ոք ունի իշխանութիւն՝ ո՛չ ի Գէրամին հայրենեացն և ո՛չ ի Ծաղիկին հայրենեացն ի վերայ սբ. Աւետարանիս. և ետուն յիշատակ ի դուռն Ս. Տիրամօր Աստուածածնայ. բարեխօս լինի Ծաղի[կին, Աւետիքին հոգւոյն և ի նոցա որդւոցն կենացն][16]։

Բ

97բ Աղաչեմ յիշել զստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ Ծաղիկն, և զհանգուցեալ որդին Վրդանէսն և դուստրն՝ Համասփիտն։ Դարձեալ յիշեցէք զԾաղիկն, և եղբօր որդիքն՝ Ռուբէն և Բաղիկն։ Դարձեալ յիշեցէք զԾաղիկն, և քոյրն իւր՝ Էրէքնիազն, և զորդին՝ Յոհաննն, և միւս քոյրն՝ Սիպրիկն, և զորդին՝ Աւետիկն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զԳէրամն, և զպապն Գրիգորն, և հանիկն՝ Խանումն, և զմիւս խանիկն՝ Խանումն, յիշեցէք...։

Գ

98ա [Ա]ղաչեմ յիշել զԳէրամն... և իւր կողակցին՝ Ծաղիկին, և որդւոցն՝ Գրիգորին, Ղոբստակիսին, Զաքարէ, Ըմպրումաղէ, Մարգարէ, և թոռան՝ Փիրաթամին. Աստուած զԳէրամի որդիքն անփորձ և անսասան պահէ...։

Դարձեալ յիշեցէք զԾաղիկն, և զորդին՝ պարոն Ղոբստակէսն, որ ետուն զսբ. Աւետարանս գրել՝ թէ՛ թղթագին, թէ՛ գրագին, թէ՛ ծաղկադին, թէ՛ ոսկագին, թէ՛ կազմագին, թէ՛ խալաթ. ամէնն սիրով հասուցին զմեղաւոր Ստեփանոսս. իւրեանքն վարձն ի Քրիստոսէ առցեն միոյն հարիւրապատիկ...։

Դ

145ա Դարձեալ յիշեցէք զԾաղիկն, և զհանգուցեալ որդիքն՝ Նազարն, և դուստրն՝ Հաճամասփիորն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զաստուածապաշտ զԾաղիկն, և քոյրն՝ Էրէքնիազն, և որդին՝ Յոհաննն, և զմիւս քոյրն՝ Սիպրիկն, և որդին՝ Աւետիկն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զԳէրամն, և զկողակիցն՝ համեստ և հոգէսէր Մաղիկն, որ է նման կանանցն իւղաբերից, և զորդին՝ պարոն Ղոբստակէսն, որ սիրով և յօժար սրտիւ զմեղաւորս լաւ թասալի արարին վարձով և լաւ խաթ[ր?]ով. Քրիստոս Աստուած հատուցանէ զվարձս իւրեանց աստ...։

Ե

2ա Ո՛վ եղբարք և հարք, եթէ կամիք որ իմանայք, թէ որչափ արծաթ է գնացէր կոստղիս, ծանիւք, որ Ճ և Կ (160) մսղալ արծաթ է, և է (7)

16 Շարունակութիւնն ընկած է։

ցգին ոսկի սբ. նշան, ե Ի (2) թուման համաբառն և տնօրինականացն, և Բ (2) թուման դրելոյն և ցրուածաղկին, Գ (3) ցքին ոսկիաշուր։

243
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 7140

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

ա

26ա Զրստացող երգարանիս զՅովանէս քահանայն, և զորդին իւր՝ զՄարկոս զաւադ սարկաւագն, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ հարք և եղբարք. նաև զիս զմեղապարտ գծողս զԱստուածատուր սուտանուն սարկաւագս։ Թվին ՌՂԳ (1644)։

Բ

33ա Ով երգեցող երգարանիս,
Յիշեա զյաղօթս մեղաց գերիս,
ԶԱստուածատուրս եղկելիս,
Զգրծող սորա տառապելիս։
Եվ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

244
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7236

Գրիչ՝ Անդրէաս

ա

302ա ԶԱնդրէասս գրիչս յիշել աղաչեմ ի Տէր։

Ստացող՝ Մուրատ

Բ

302բ Փառք...

303բ Զոր և տեսեալ զսորայսն անճառ փրկագործութեան խորհուրդ

304ա զ//սրբոյ Աւետարանիս խորհուրդ արարեալ և ես՝ ամենամեղ Մուրատս, և ետու գրել զսա յիշատակ ինձ և զիմ ծնողացն, հօրն իմոյ՝ Էվազին և մօրն իմոյ՝ Փարուն, և կենակցին իմոյ՝ Սղիսաբեթին, և որդւոցն իմոց՝ Բարսեղին, Մարկոսին, Սահակին, Դաւթին, Մարութին, Ասլանին, և դստերացն իմոց՝ Փարուն և Շուշանին, և ամենայն արեան մերձաւորացն իմոց կենդանեաց և հանգուցելոց. ամէն։

Դարձեալ յիշեցէք զԲարսեղն, և կողակիցն իւր՝ զԽոսրովիդուխտն, և զորդիսն իւր՝ Մուրատխանն և զԲինիաթն, և զդստերսն իւր՝ Փարիխանն, Մարիամն և զՄարինոսն։

Դարձեալ յիշեցէք զՄարութէն, և զկենակիցն իւր՝ Փարիխանն, և զորդին իւր՝ Աղապապէն։ Այլ ևս յիշեցէք զԱսլանն և կինն իւր՝ զՄարինոսն։

304բ Ստացայ սբ. Աւետարանս ի հալալ արդեանց իմոց, և ետու յիշատակ հոգւոյս ի դուռն Սրբոյ Ստեփանոսի Նախավկային, որ է եկեղեցի

գեղաքաղաքիս Անվէրնու, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնին և Սրբոյ Ստեփանոսիս։ Վասն որոյ աղաչեմ զմանկունսդ նորոյ Սիոնի, զհանդիպողսդ այս մատենի և կամ ընթեռնուք զուարճացմամբ սրտի. իսկ և ընթեռնուք և կամ օրինակէք իբրու գաղափար սահմանելի, յիշել զմեզ բարի մտօք առ յոյսն ամենայնի, մանաւանդ գծողի սրբոյ Աւետարանի՝ զԻսրայէլն, որ էր նա յերկրէն Սիւնեաց, ի գեղջէն Լորու։ Եղև ղրաւ գրչութեան սորա և թուին Հայոց ՌՂԳ (1644), ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի սրբազան ընթանուր ամենայն Հայոց կաթողիկոսի, և Ստաթէի վանից մերում առաջնորդի Յով[հաննէսի?][17]

245

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 7249

Գրիչ՝ Վարդէրէս

217ա Զեղկելի Վարդէրէս դրպիրս, գրիչս և զուսուցիչն իմ և զծնաղս իմ զԳրիգորն աղաչեմ յիշել ի Տէր։ Թվին ՌՂԳ (1644)։

246

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7465 (1507 թ.)

Նորոգող՝ Զաքարիայ երէց

ա

Պանպանակ Զ Արդ՝ որպէս անհնարին է ի քաղցր աղբերէ դառն բղխել կամ ի բարի ծառոց պտուղ չար տեսանել։ այսպէս անհնար է ի բարի արմատոց՝ զմարդն անբարի տեսանել։ Սոյնպէս և այս խոճա Պարոնն, և իւր կողակիցն՝ Ճոճար խաթունն, որ են ի բարի և աւրհնեալ յարմատոց, որ հանապազ զբարին կու խորհին, և են սիրող աստուածային աւրինացն և պատուիրանացն, ետուն վերստին նորոգել զսբ. գիրքս, ինձ անարժան Զաքարիայ իրիցուս, թվին Ռ և ՂԳ (1644)-ին, յիշատակ հոգւոյ իւրեանց, և իւրեանց ծնողացն, և զաւակացն, և ամենայն արեան մերձակայից իւրեանց, միջնորդութեամբ տէր Յովանէսին և տէր Օգսէնդին, զոր տէր Յիսուս վարձս բարեաց պարգևեսցէ նոցա. ամէն։

բ

Պանպանակ Բ Այլ գրով

Տէր Յովանէս դու շնորհալի,
Ուրախարար ժողովրդի,
Քաղցր և անուշ ձայնդ գովելի,
Նման փողոյն Գարրիէլի։
Աստուածատուր սբ. քահանայ,
Իսկի չի կայ քեզ մահանայ,
Ճարտար գու հիւսն և գերագայ,

[17] Շարունակությունն ընկած է։

Նրման ես դու հայր Յովսէփայ։
Տէր Աւգսենտ էր փափաքելի,
Սբ. և մաքուրք քան զաղօնի,
Անաստասայ էք նրմանի,
Ի Յովսեթեկեանց քահանայի։
Ո՛վ տէր Լուսիկ դու նորընձայ,
Սբ. Քառասնից ես քահանայ,
Արժան լինիս դու. Սաղիմայ,
Սբ. գերեզ[մ]ան որ անդէն կայ։
Տէր մղտեսի Աստուածատուր,
Սբ. Յակոբայ ըսպասսօր,
Անունդ ահեղ և զօրօր,
Զարմանալի և փառաւոր։
Փոքր տէր Աբրահամ, իմ սիրելի,
Նման ես դու սբ. տատրակի,
Սաղմոսասաց սերտ շարակնի,
Ի շշափող Տեառն մարմնի[18]։
Տէր Ստեփանոս նոր քահանայ,
Դու Սբ. Խաչին կարդեալ ծառայ,
Անմեղ ւ անպարտ յարակայ,
Աստուած ըզքո մուրատըն տայ։
Ֆրոնոզցի տէր Մաղաքիայ,
Մատաղ մանուկ դու քահանայ,
Տետր ւ ալէլուք ամէն քեզ կայ,
Սան Փեդրոյին սպասսորեայ։

247

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7874 (1374 թ.)

Կազմի վրա

ա

Յիշատակ է սբ. խաչս Թաւաքալին հոգոյն և իւր ծնաւղացն ամենեցուն. ի դուռն Սբ. առաքելոցն Պետրոսին և Պաւղոսի, թվին ՌՂԴ (1644)-ին։

բ

Յիշատակ է սբ. խաչս մահտեսի Մտեռմին, և իւր ծնաւղացն՝ մահտասի Սինանին, Մարիամին, ի դուռն Ս. Պետրոսի և Պաւղոսի, թվին ՌՂԴ (1644)-ին։

---

[18] *Այս քառյակը բնագրում գրված է լուսանցքում և տեղը ցույց չի տրված։ Ցափածոյի շարքում տեղավորեցինք ենթադրաբար։*

248
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8065

Գրիչ՝ Հարապետ երէց

234բ Բարեխաւսութեամբ սբ. Աստուածածնին... և սրբոյն Պետրոսի կաթուղիկոսին և ճառիս աւրինողի Յովհաննէս վարդապետին, ողորմեայ Աստուած ամենայն հաւատաց[ելոց] և ինձ անպիտան Հարապետ իրիցուս և կենակցին իմոյ և որդոցս Գաբրիելին և Խաչիկին, և հանգուցեալ զաւակացս Քրիստոսատուրին, որ այսմ ամի՝ ի թվականութեան Հայոց ՌՂԳ (1644) փողեցաւ առ Քրիստոս և եթող ինձ մեծ տրտմութիւն և այլոցն, Սահակին, Աւրութեն, Մարկոսին և Աւրութեն, և Սահակին, և Գալուստին, եղբարց իմ Թoporfային և մահդէսի Սարգիսին, և ծնողացս Նուրատինին և Մարիամին: Խնդրեմ ձեզանէ՝ կարդացողք և լսողք, որ միով Հայր մեղայի արժանի առնէք զտառապեալքս մեղք[19]։

249
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 8196 (1524 թ.)

Գրիչ՝ Դաւիթ երէց
Վայր՝ Շատսխ

ա

1ա [Զվեր]ջին ստացող սբ. աստուածաշունչ Աւետարանիս հեզահոգի ե բարեսէր... Զիլաւիանն, որ շերմեռանդ և փափագմամբ սրտիւ ըստացաւ սբ. Աւետարանս, յիշատակ իւր և կողակցին՝ Հռիփսիմին, և որդոցն իւրեանց՝ Հախումն, Պէկումն, Ակոբն. Աստուած ընդ երկայն աւորս արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհանգուցեալքն իմ՝ Գրիգորն՝ որդիքն և դրստերքն ///։ Այլ և յիշեցէք զդստերքն իւր՝ Ազիզն, Խոստրովն, Աստուած իւրեանց կենօք պարգևէ։

Դարձեալ յիշեցէք զԶիլաւխանն և ծնողքն իւր՝ Սաատնն, Շ[ահ?]ուպէկին, և եղբայրքն իւր՝ /// Յատիպէկն, որք են հանգուցեալ. Աստուած իւրեանցն արքայութիւն շնորհեսցէ։

Դարձեալ յիշեցէք [զԶիլ]աւխանն և քու[ր]ք Իկաց?, Փայանդին,
1բ Նակահն, որ ի Քրիստոս են հանգուցեալ։

Դարձեալ յիշեցէք Զիլաւխանն, և եղբայրն՝ Յակոբն, քոյրն՝ Խանադէն, որ փոխեալ են առ Քրիստոս...։

Դարձեալ յիշեցէք զԶիլաւխանն, և Հռիփսիմէն, և դեռաբուսիկ թոռունքն իւրեանց՝ Պալումն, Յոհանն, Հախին. Աստուած իւրեանց արևշատութիւն տացէ...։

Դարձեալ յիշեցէք զՀռիփսիմէն, և հարսներն իւր՝ Զիլփիլին, Զինին, Նազին. Աստուած զնոսա հոգւով և մարմնով, որդով և դստերով զարդարեսցէ <զնոսա>. ամէն։

---

[19] Մատենադարանի ձեռագրաց ցուցակում սուրբ ձեռագրի ընդօրինակությունը և հիշատակարանը նշված է 1664 թ. (հտ. Բ, էջ 664)։

Բ

2ա Դարձեալ յիշեցէք զՋիլաւխանն, որ զմտաւ ածեալ սէրն աստուածային... ստացաւ զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ամենայն ազգականացն։ Եւ ով որ կարդա, ողորմի ասէք իւրն ի միւս անգամ գալուստն. ամէն։

Գրեցաւ յիշատակարանս ձեռամբ Դաւիթ իրիցու, ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644), ի ժամանակս փոքր շահ Աբազին, ի յերկիրս Գանձոյ, ի գեղն Նատախ, ի դուռն Աստուածածին եկեղեցւոյ. ամէն։

Ո՛վ հանդիպող սբ. Աւետարանիս, օրինակելով, տեսանելով կամ գաղաբար առնելով սմա, յիշեցիք ի մաքրափայլ աղօթս ձեր, Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի...։

Հետ. ստացող՝ Ջիլաւխան

Գ

Ես՝ Ջիլաւխանս առա սբ. Աւետարանս ի հալալ ընչից իմոց։ Ով որ կարդայ՝ ողորմի ասի։ Եթէ որ կամեսցի ծախել մերոց կամ օտարաց՝ պատիժն Յուդայի և Կայենի առցէ, սև<և>երես գայցէ առ իս. ամէն։

250

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 8680

Գրիչ՝ Յովանէս

219բ Զանարժան Յովանէսըս յիշեցէք ի Տէր, և Աստուած զձեզ [յիշէ]. թվին ՌՂԳ (1644) էր։

251

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 6333

Գրիչ՝ Հեղինէ

105ա Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեանս Հայոց ՌՂԳ (1644), ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին և ի հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի հեզահոգի ռաբունապետի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք այս ծաղկաւէտ բուրաստանիս, զոր աստուածաբան վարդապետքն աշխատ եղեն. և պատուական և զանգին ակունքս ի մէկտեղ են ժողովել, և Շարակնոց անուանել, որ են ընտրեալ շարայակունք և բանալիք Հին և Նոր կտակարանաց, և լուծմունք աստուածաշունչ գրոց։ Յերես անկեալ կրկին աղաչեմ զձեզ, մեղօք գերի գծող սորա զՀեղինէ անուամբ միայն ապաշխարեալ, և ոչ զգործս զիմ հեղացեալ։ Զհայրն իմ՝ զմահտեսի Խաչատուրն, և զմայրն իմ՝ Թումայնաղայն և զկոյսակրօն քոյրն իմ՝ զՄարիանէ և զեղբարքն իմ՝ զՅովսէփն, և զՄեսրոպ նախասարկաւագն, և զթղթի կոկոզն կոյս Յուսաիանէն, և զամենայն աշխատողքն ի սմա յիշեսջիք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։...

252
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 780

Գրիչ՝ Մարգարիտ
Վայր՝ Շէնեէր

215բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ տառս դերապատում ի թուականութեանս Հայոց ՌՂԴ (1644), ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնի տեառն Փիլիպպոսի, ի գեղս Շէնեէր, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Ստեփաննոսի եկեղեցեացս և երկու հրեշտակագումար վերնաշաւիղ սբ. մենաստանացս արանց ընտրելոց և կուսանաց մաքրելոց, ձեռամբ գերեալ անձին, մեղօք վարանեալ և նաւաբեկ ալեօք տատանեալ ի յընթացս կենաց շաւղին, մոլորեալ և ի մասանց բարեաց կողոպտեալ բաղմասէր Մարգարտիս...։

253
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 781

215բ Փառք...։ Աստանօր յանկ ելեալ աւարտեցաւ սբ. Աւետարանս այս ...ի ՌՂԴ (1644) թուին և եդաւ ի գուռն Ս. Ստեփաննոսին։ Քանի Սեվանայ[20] եկեղեցւոյն՝ Ս. Ստեփաննոս ի շէն կենայ, սբ. Աւետարանս փակեալ կենայ. ոչ ոք իշխէ հեռացուցանել ի դրանէ Ս. Ստեփաննոսին։

254
ՃԱՇՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 782

Գրիչ՝ Սէֆէր սարկաւագ
Վայր՝ Կեսարիայ

215բ Փառք...։ Արդ՝ ցանկացողք եղէն այսմ լուսազարդ բուրաստանիս... Կեսարացի խոճայ Մուրատն և Ճիճուանշայն և ստացան զսբ. Ճաշոց դիրքս՝ անմահ զաւակ ըստ հոգւոյ և յիշատակ անշնջելի ի դրունս վայելչայարկ և գեղեցկասար սբ. եկեղեցեացն Ս. Ստեփաննոսի Նախավկային և Սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյն ի ծովահայեաց քաղաքս Իզմիր...։ Եւ գրողի սորին Սէֆէր սարկաւագին...։ Արդ՝ գրեցաւ ի մեծա-
216ա հանդէս մայրաքաղաքս առաջին Հայոց // Կեսարիայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զօրավարի և որդոյ նորա Մարտիրոսի և Մեռկեռիոսի զինաւորին ի թուական Հայոց ՌՂԴ (1644), ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան այլասեռից սուլթան Իպրահիմին և ի հայրապետութեան Հայոց, որ ի սբ. Էջմիածինն, տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին...։

---

20 Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է «գիւղ ի Վանս»։

255
ԳԱՆՁԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, № 71 (1453 թ.)

1190 *Այս Գանձարանս Նորշինւածքի եկեղեցումն յիշատակ մնաց. ով որ քաղցրաձայն բարբառէ յիշէ զԲ (2) տպագար (SIC) զմեղսամած նորայրողբոջ տղայքս՝ որ մէկին անումն Նսոբփտաեն, մէկին անումն Ռնոէան յիշեցէք. թվականն ՌՂԳ (1644)։ Այ ոհ, այ ոհ, այ ոհ, ոհ, ոհ։*

256
ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ
ՏՁՁՄՎ, № 66

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Բաղէշ

Ա

303 *Փառք..., որ ետ կարողութիւն տդէտ ոգոյ* Գրիգոր *երիցու հասանել յաւարտ այսմ լուսաբուղխ և ոգէշահ սբ. Հարանց վարք, ի քաղաքս* Բաղէշ, *ի թվին ՌՂԳ (1644) ամին, ի կաթուղիկոսութեան սբ.* Էշմիածնա[յ] *տէր* Փիլիպպոսի *սրբ[ակեաց?] հայրապետի, ի վայելումն հոգևորն հօրն իմոյ՝* Մեսրոպ..., *որ է այժմ տեսուչ քաղաքիս* Բաղիշու, *որ և զսա գրել...։*

Բ

*Դատաւոր արդար Քրիստոս, անդատապարտ պահեա զստացօղ սբ. տառիս զ*Մեսրոպ *վարդապետն* Բաղիշեցի, *որ ետ գրել զսա ի հալալ*
304 *արդեանց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնօղացն՝ մղտսի* Աւետսին // *և* Ազամաթին։ *Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, ո՛վ ընթերցողք, զի այց արասցէ դատաւորն արդար... յանուանէ կոչէ զ*Մեսրոպ *վարդապետն..., որ ետ գրել ի թվականիս ՌՂԳ (1644)։*

Գ

Ով սբ. ընթերցաւղք յիշեսջիք յարժանաւոր աղօթս ձեր... և թողութիւն մեղաց հայցեցէք ինձ տառապեալ Գրիգոր *գրչակիս։ Եւս առաւել յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթսն ձեր և զտէր* Սահակն, *որ բաղում աշխատութեամբ ուսոյց զարուեստս։*

257
ՃԱՌԸՆՏԻՐ
ՏՁՁՄՎ, № 224 (1428 թ.)

Վայր՝ Ալիփինար

534 *Զվերջին ստացող ճառիս զագմակչի* Սրեմիան *և զծնօղս իւր, զհայրն՝ զ*Կիրակոսն *և զմայրն՝ զ*Ելչեկն, *և զամուսինն՝ զ*Շանգատան, *և զհայրն՝ զ*Մարգարան *և զմայրն՝ զ*Նուշանն, *և զամենայն արեան մերձաւորսն նոցին յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք նոցա, որ ստացաւ զսայ ի հալալ վաստակոց իւրոց. և եդ յիշատակ ի դուռն Ս. Աս-*

տուածածնին յԱլիփիճարայ։ Ով որ [յ]անգգնի ծախելով կամ գողանալով կամ գրաւ դնելով հանէ ի դրանէ նորա՝ զանէծքն Կայենի և զպատիժն Յուդայի և զխաչահանողացն առցէ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ [յ]աւիտեանս. ամէն։ Թվին ՌՂԳ (1644). ամէն։

258

ՄԱՇՏՈՑ ԵՒ ԳԱՆՁԱՐԱՆ

ՈՋՄՎ, № 910 (1421 թ.)

Նորոգող՝ Սարգիս

495 Նորոգեցաւ Մաշտոցս ի թվին ՌՂԳ (1644) ձեռամբ անիմաստ գրչի Սարգսի, ի վայելումն սրբակրաւն քահանայի տէր Կարապետին և ամենայն նախնեաց նորին։

259

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

ՄՁԶԵՊ, III, № 668

Գրիչ՝ Կարապետ երէց
Վայր՝ Եւդոկիայ

103 Փառք...։ // Վասն որոյ ցանկացող եղեալ սբ. տառիս յոգներանեալ երջանիկ բաբունապետս մեր տէր Աստուածատուր վարդապետն, զի այսմ դրոցս պակաս գոլով յիւրումն գանձարանին, և յաւել զսայ ի շտեմարանս իւր, զոր տէր Յիսուս բարով վայելել տացէ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս մերում ՌՂԳ (1644), ձեռամբ անարհեստ փծուն գրչի Կարապետ երիցու, որ մականուամբ Կաստանենց կոչի։ Գրեցի զսա ի քաղաքս Եւդոկիայ, ի թաղս Ղայայ մահալլա, ի գուռն Ս. Նիկողայոսի զօրաւոր հայրապետի։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զսբ. ընթերցողդ և դաղափարողք[դ], յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զանպիտան գրիչս և զստացող սորա զտէր Աստուածատուր բաբունին, և զծնօղսն իմ՝ զտէր Խաչատուրն, ի Քրիստոս հանգուցելոյն, և զմայրն իմ՝ զԽասիաթունն, և զապաշխարող կուսակրօն քոյրն իմ՝ զՇանունն, որ բազում աշխատանք կրեաց ի կոկել թղթիս. յիշեցէք միով ողորմիւ տեսողք սորին և վայելողք զսայ, և Աստուած յիշէ զյիշողքդ. ամէն։

260

ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՁԶԵՊ, V, № 1659

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

ա

499 Ո՛վ մանկունք սբ. Սիոնի,
Եղանակողք վերա սորին,
Դուք յիշեցէք ի յաղօթին,
. . . .

Թողուլ զմնղս ծաղկողին,
Զ Ղարուէցի Յովանիսին:

Բ

Ով շոկ սրբազանին,
Դուք մաղթեցէք առ Ս. Հոգին,
Վասն հերպետ տէր Ստեփանին,
Մնալ անփորձ ի յաշխարհին։
Այլ զծազկողի երգարանին,
Դու աղաչեա կոյս Տիրածին,
Զվարպետի Նորա հոգին,
Զ Հիզանցի Յովանիսին,
Դասաւոր է քո Ս. Որդին,
Ընդ քսանուչորս քահանային։

Գ

300 Փառք եռակի Աստուածութեանն,
. . . .
Զոր ես չարեացրս աւթարան,
Եւ ե բարի գործոցս ունայն,
Ասեպիս հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յօժար և ժըրական,
Բաղում շանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ ամեան,
ՌԴ թիւ ընդ նրման (1644),
Աւարտեցաւ սա ի լրման։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Ցիշման առնէք ըզմեզ արժան,
Զ Ասեպիս հողս և անպիտան։
. . . . . .

Դ

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, ...որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է Խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի մեղաւոր Ասեպիսի: Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի, ի թվականիս Հայոց ՌԴ (1644), ի գեաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Ս. Պետրոսի, և Պողոսի, և Ս. Գէորգա[յ] զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան դրծողս զԱւետիս, և զստացող սորա զտէր Ստեփանոս հէրպետն, զՍ. Աստուածածնի սպասաւոր Սուրա վանից, որ ստացաւ զՇարակնոցս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրո[յ]...։

Դարձեալ կրկին անդամ աղաչեմ ղձեղ կողկողագին պաղատանաւք, զի լի սրաիւ և բոլոր հաւատով ասացէք Աստուած ողորմի ստացաւղի սբ. Շարակնոցիս տէր Ստեփանոս հէրպետին և իւր ծնաւղացն, հաւրն՝ Կիրակոսին և մաւրն՝ Մուրթին, որ ստացաւ զՇարակնոցս ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ հոգւոյ իւրո[յ] և ծնաւղացն։...

261

ԱԻԵՏԱՐԱՆ

Մ8ԶԵՊ, հ. IX, էջ 368

Գրիչ՝ Մարկոս երէց

Վայր՝ Երապոլիս—Արափկեր

ա

534 Փառք...։

Արդ աղաչեմ զամենեսեան կողկողագին պաղատանօք, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զգրող սուրբ Աւետարանիս զՄարկոս երէցն, եւ Աստուած ղձեղ յիշէ իւր միւս անդամ գալստեանն, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս յԵրապոլիս քաղաք, որ ասի Արափկեր, թուին Հայոց ՌՂԳՆ (1644). ի հայրապետութեան մերո տէր Փիլիպոս կաթուղիկոսին, եւ առաշնորդութեանն Վարդան եպիսկոպոսին։

բ

223 Զբազմասպի վիրաւորս եւ զթակարթապատեալս անաւրէնութեամբ, զնուաստ գծողս՝ Մարկոս երէցս, զանհարւեստ եւ զփծուն գրիչ, յիշեսջիք ցաւաքցարար ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ով լոյսերամից դասք քահանայից, որք հանդիպիք ի սմա գրելով կամ աւրինակելով, յիշեսջիք ի Տէր, աղաչեմ, զի եւ զնոյն հատուցումն ընկալջիք ի Քրիստոսէ։

262

ՄԱՇՏՈՑ

ՄԶԱՐ, № 202

Վայր՝ Գաղատիա

956 Փառք...։ Գրեցաւ համառուտ գիրքս, որ Մաշտոց կոչի, ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644), ի հայրապետութիան տեառն տէր Փիլիպոս կաթողիկոսի և առաշնորդութիան Գարբ[ի]էլ վարդապետին, ի մայրաքաղաքս Գաղատիայ, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զաւրավարիս և այլ սրբոցս, խնդ[ր]ո[յ] մղցի Մինասին, հաւրն՝ յԵղիային, և մաւրն՝ Մարթային, և իւր կողակցին՝ Սանայ խաթունին, և որդոյն՝ Սահակին, և հարսին՝ Մարիամին, և թոռին՝ Ներսէսին և Սառային։ Արդ՝ աղաչեմ

զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսանելոյվ կամ աւրինակելով կամ միանդամ կարդելով, յիշեսցիք յաղաւթս ձեր զմղտեսի Միհասն և զայլ արեան մերձաւորս, զմեծամեծս և զփոքունս առ հասարակ, և Աստուած ղձեզ յիշէ. ամէն։ Որ ետ յիշատակ իւր հոգոյն ի դուռն Ս. Սարգսի յեկեղեցին։ Աստուած բարով վայելել տացէ և զքահանայսն՝ տէր Խաչատուրն, և տէր Սարգիսն. և այլ ամենայն յուխտ յեկեղեցոյն, Աստուած անփորձ պահեսցէ. ամէն. եղիցի, եղիցի։ Այսու հետէ ոչ ազգականաց և ոչ տուտարաց չունին իշխանութիւն ծախելոյ կամ գրաւ դնելու, զպատիժն կայէնի առցէ և զմասն Յուդայի ժառանգեսցէ։

263
ԱՒԵՏԱՐԱՆ
Rapp. Mac., XXII

117 [Յ]իշեցէք ի Քրիստոս ըզմահտեսի Մարշայն և զկողակիցն՝ զմահտեսի Ղատամն, և զհայրն՝ Զորմազն, և զմայրն՝ Խրսմատն, և զորդիքն՝ զՂասարն և զՅակոբն, և զամենայն մերձաւորսն. ամէն։ Որ էառ զսբ. Աւետարանս ի հալալ արդեանցն և եդ յիշատակ ի դուռն Սրբոյն Սարգսին և որդոյ նորա Մարտիրոսի. թվին ՌՂԴ (1644)։

264
ՇԱՐԱԿՆՈՑ
Քոսեան—ՀԱ, 1912 թ., I, № 44

Վայր՝ Կ. Պոլիս

55 Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս այս ի թուականութեանս Հայոց ՌՂԴ (1644), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպոլիս, ի դուռն Ս. Նիկոլայոսի, և ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոսին։

265
ՍԱՀՄԱՆՔ ԴԱՒԹԻ ԵՒ ԱՅԼՆ
Մուրմար, I, № 14 (1311 թ.)

Նորոգող՝ Դանէլ աբեղայ

17 Արդ՝ վերըստին նորոգեցաւ սբ. գիրքս, որ կոչի Սահմանաց, ձեռամբ սուտանուն Դանէլ խաբեբա[յ] և ոչ աբեղա կոչեցեալ, ի թվին Հայոց ՌՂԴ (1644)։ Արդ՝ երես ի գետին դնելով աղաչեմ զհանդիպողք և զընթերցաղդ սբ. տառիս, զի խիստ էր եղծեալ և քայքայեալ, որպէս
18 հուիւ ի մրրկէ հարեալ. որ է սա հարիւր քառասուն ամ // բոլորեալ[21]։ Եւ ես զառածեալս յոյժ աշխատեալ ի վերստին նորոգել, վասն միոյ Աստուած ողորմի ասացեալ ինձ և իմ ծնողաց Սօսանին և Գուլանին. ընդ հովանեաւ Ս. ԲԺ (12)-ան Առաքելոցս, որ է ի դաշտն Տարուանոյ, որ այժմ ասի վանք Ղազարոյ, ի յառաջնորդութեան քաջ բարունապետին՝

[21] 140 տարին, եթե վերաբերում է ընդօրինակությանը, ճիշտ չէ, որովհետև այն կատարվել է 1311 թ., ըստ այնմ մինչ 1644 թ. ձեռագիրն ունեցել է 333 (1644—1311) տարվա կյանք։

Յովհաննէս *վարդապետին, և միուս* Յովհաննէս *վարդապետին, և* Կարապետ *եպիսկոպոսին, տէր* Աւետիսին, *տէր* Մարգարին, *տէր* Գրիգորին, *տէր* Մեսրոբին...:

266

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Մուրմար, I, № 71 (1631 թ.)

Ծաղկող, նուիրատու՝ Դանէլ աբեղայ

67 *Ես՝* Դանէլ *աբեղայս տկարս ի յամենայն կենդանեաց ի թվին ՌՂԳ (1644)։ Ես մեղաւորս կտցի Ի (20) տարի սբ.* Երուսաղէմ *և ըղձմամբ*
68 *սրտի և փափաքա//նաւք անձիս, տուի զայս Հարցմանս հոգիայշունչ գիրքս և զփոքր մագաղաթ Աւետարանս դրել, ի սբ. քաղաքն* Երուսաղէմ: *Եկի ի վանքն* Ղազարու *և բնակեցա ժամանակ ինչ, ի ԲԺ (12)-ան Ս. Առաքեալս, ի յառաջնորդութեան* Յովհաննէս *վարդապետին, և իւր աշակերտացն* Յովհաննէս *վարդապետին, և երաժիշտ* Մարգարին, *մահդասի տէր* Գրիգորին, *տէր* Աւետիսին, *տէր* Մեսրովբին, *և այլ միայբանից, և մեր ծերացեալ հաւրս* Կարապետ *եպիսկոպոսին, և ի հայրապետութեան սբ.* Էջմիածնու[յ] *տէր* Փիլիպոս *կաթողիկոսին, և եդի զայս Բ (2) դիրքս՝ ղՀարցմունս* Տաթևացու *և զմագաղաթ Աւետարանս, որ և ձեռամբս իմովս ծաղկեցի և կազմեցի, և եդայ յիշատակ ի վանքն* Ղազարոյ, *ի գուռն Ս. ԲԺ (12)-ան Առաքելոց։ Ով որ կարդաք կամ աւրինակէք, յիշեցէք ի Քրիստոս և Աստուածողորմի ասացէք ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն՝* Սաւսին, *և մաւրն՝* Գուլէին, *և ամենայն արեանառու մերձաւորաց իմոց, անջինչ յիշատակ մնասցէ գրիչանքս ի դուռն Ս. Առաքելոցս, որ է ի դաշտն* Տարոնոյ, *ի լեառն* Մշու, *որ յորջորջի վանք* Ղազարու: *Ով որ յանդգնի կամ ծախէ կամ գրաւ դնէ կամ զդրեալ յիշատակս կտրէ կամ քերէ՝ զտարտարոսն տիրէ և զդժողքն ժառանգէ, ոչ մարմին ի հող հանգչի և ոչ հոգին առ Աստուած երթա, հոգով կապեալ, մարմնով անիծեալ զանէծքն Կայենի, և զմասն ցուդայի, և զխաչահանողաց առցէ։ Լաւ պահողքն և խնամ տանողքն՝ աւրհնին ի յԱստուծոյ և յամենայն սրբոցն. ամէն։*

Ի թվին ՌՂԳ (1644)-ին
Եւ ընթերցողք տան զողորմին.
Մեղաւոր տէր Դանիէլին,
Աստուած լուսաւորէ ղ[յ]նշողաց հոգին. ամէն։

267

ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 23 (1453 թ.)

115 *Փառք...։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զՈփումայ* Պաղտասար, *որ ետ իւր հալալ վաստակն կապել զսբ. Աւետարան։ Աստուած ողորմի ասացէք իւր հօր* Իշխանին, *մօրն՝* Մուղալին...: *Ի թվին ՌՂԳ (1644)։*

268
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Բաս. «Բանասէր», հտ. Ա, 1899, № 3

Գրիչ՝ Վրթանիս

ա

162 Մեղաւոր Վրթանիս գրիչ յիշեցէք ի տէր Յիսուս փրկիչն, որ փրկէ ահեղ դատաստանիցն...։ Թվին ՌՂԳ (1644)։

բ

163 Զտառապեալ Վրթանիս գրիչս յիշեցէք ի տէր Աստուած. գրեցաւ ՌՂԳ (1644) թվին։

269
ԱՒԵՏԱՐԱՆ (1291 թ.)

«Սիոն». 1974 թ., № 1—2, էջ 72

Կազմող՝ Վարդան աբեղայ

Կազմեցաւ սբ. և փառաւոր Աւետարանս ձեռամբ անարժան և վատթար, սուտանուն Վարդան աբեղիս, որ միայն զանունս ունիմ, բայց ի գործոյս դատարկացեալ։ Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի Կարմիր վանք, ի գուռն Ս. Կարապետին, և Ս. Նշանին, և [Ս.] Սարգսին, ի յառաջնորդութեան սբ. ուխտիս արհիեպիսկոպոսին տէր Աստուածատուրին, և փոքր Աստուածատուրին, ի թվականիս Հայոց Ռ և Զ և այլ ԺԳ (1644). ամէն կրոնաւորացս որ կան ի յայս քառաժէռ յանապատիս։

Դարձեալ յիշեսջիք առաջի անեղ ատենին զհայրն իմ՝ զԿարապետ էրէցն, և զմայրն իմ՝ զխանն, և զեղբայրն իմ՝ զփոխեալն ի Քրիստոս զԳրիգորն և զՊեարոսն, և զքոյրն իմ՝ զխաթունն և զՏանեայն և հաւասար զննջեցեալսն, որ կան հաւաքեալ ի գերեզմանս, և զտէր Մկրտիչն, որ նա գներ է գսբ. Աւետարանս։ Աստուած ողորմի...։

270
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՋՀՎԼ, № 19

Գրիչ՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Վարագ

45 Գիրքս յիշատակ է տէր Գրիգորին, ի վանքն, որ Անէն անապատ
46 ասի, ի դուռն // Կարմիրակ Ս. Նշանին, որ ի յերկիրս <որ> Գաւաշ ասեն։ Եւ ով յանդգնի և հանէ ի վանացս՝ զպատիժն Յուդայի առնէ...։

Ձեռամբ Սահակ աբեղայի գրեցաւ ի Վարագ։

Գիրքս յիշատակ է տէր Գրիգորին, ի սբ. ուխտն, որ Անէն անապատ ասի, ի դուռն Ս. Նշանին, որ Կարմիրակ ասեն, ով որ կարդայ, Աստուած ողորմի ասէ։ Եւ ով որ հեռացուցանէ ի դրանէ Ս. Նշանին՝ առնու և զպատուհասն ի յԱստուծոյ։ Ռ և ՂԳ (1644) թուին գրեցաւ ի Վարագ։

271
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՁՎԼ, № 128 (ԺԴ դ.)

Նվիրատու՝ Եղիայ

77 Ի ՈՂԴ (1644) թուին դնեցաւ սբ. Աւետարանս և եղաւ ի դուռն Ս. Ստեփանոսին, Քանի Սեանայ եկեղեցին՝ Ս. Ստեփանոսն ի շէն կենայ, սբ. Աւետարանս փակած կենայ. ոչ ոք իշխէ հեռացուցանել ի դրանէ Ս. Ստեփանոսին, մի յիւրոց և մի յօտարաց. մի ծախելով և մի գրաւելով. եթէ ոք յանդգնի զսա հեռացուցանէ...։ Եւ եթէ յազգմանէ՝ չարին Սբ. Աւետարանս ի գերութիւն անկանի՝ ով որ հանդիպի՝ գնէ, ի յիւր տեղն առաքէ և նա ի վերին Երուսաղէմն առաքէ...։

272
ՃԱՇՈՑ
ՋՁՈԴ, № 79

Գրիչ՝ Ստեփանոս Արևելցի
Վայր՝ Աղաւրան

59 ...Աւարտեցաւ... այս տառ ձեռամբ յոգնամեղ անարհեստ գրչի, սուտանուն Ստեփանոս իրիցու յԱրևելցւոյ, ի գաւառէն Աղաւրատան, հուպ Էջմիածնայ։ Արդ՝ գրեցաւ սա ի թուիս Հայոց ՈՂԴ (1644), յերկիրս Յենկել, ի գիւղս Աղաւրան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ մասունք սրբոց։ Քանզի որք մեծութեան ընչից ըղձանան ոչինչ աշխատութիւն զմտաւ ածեն, յայլ յայլ անցանեն գաւառս՝ հեռագնաց ուղաւորութեամբ, որպէս զի շահն աճեցուցեալ մարթասցի, նաև ընդ համատարած ծովուն ծփանս նաւարկեալք, որք բարկացայտ ալեաւքն լեռնացեալ կոհակաձև դաշտանան անդնդապոյտ խորոցն, բքացեալ կուտիցն, մէտ առ մէտ ալեացն, ահ պակուցող տեսողացն արկանելով. իսկ յարիացեալքն ստորիչիցն ի խիխս խոռոչիցն ի խորս խաւարային ձորոցն, համարձակին ի քարաժեռս դժուարամուտ տեղացն, ի խնդիր ականցն զանազանելոցն, լաւ համարելով զմահ անձանց քան ունայն ձեռաւք զվատացն ժառանգել զանուն...։ Ըստ նմին աւրինակիս այսմ հոգիանորոգ, լուսերանգ, ծաղկափթիթ, անուշահոտ բուրաստանիս [ըղձացեալ] ստացաւ մահդասի Փաշիկն, որդին՝ Մոզոսն, և կողակիցն ն[ո]րա՝ Սալջուկն, և որդին ն[ո]րա՝ Մարտիրոսն, և կողակիցն՝ ն[ո]րա՝ Մարիամն՝ և միւս կողակիցն՝ Գուհարն, և որդի նորա Շիրվանն, զՎարդանն, զԹորոսն, և զԿիրակոսն. և զշար մարգարտեայ և զանառիկ մեծութիւնս, զպայծառութիւնս սրբոյ եկեղեցւոյ, քանզի ունի սա զբոլոր մասունս տանից տէրունականաց, զոր սբ. հարքն հաստատեցին, զընթերցուածն, զոր Յակոբոս եղբայր Տեառն և Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետն հաստատեցին և զԴաւթեան նուագն նշանագրով, գործ<ով>քն, ՀԼ> կաթուղիկէից թղթովքն և Դ (4) գլուխ Աւետարանաւն և զտաւնանամակ զսրբոց առաքելոց, մարգարէից, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց։ Անդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոգրեալ անուանս զՄազոսն և զկողակիցն՝

զՍալչուկն, զորդին՝ զՄարտիրոսն, զկողակիցն՝ զՄարիամն՝ և զմիւս կողակիցն՝ Գուենարն, որդին ն[ո]րա՝ զՇիրվանն, զՎարդանն, զԹորոսն, զԿիրակոսն, և դուստրն՝ Շահասան:...

Դարձեալ կրկին աղաչեմ զվերընթացաւղ անուանցս, զմահդասի Փաշիկն, և որդին՝ զՄոզոսն՝ զկողակիցն՝ Սալչուկն, և զորդին զՄարտիրոսն, զկողակիցն՝ զՄարիամն, և զմիւս կողակիցն՝ զԳուենարն, և զփոխեցեալն առ Քրիստոս զԹորոսն, Շիրվանն, Խանզատան, Գուլզատան, Շանզատան, և զմիւս քոյրն՝ զՄարիամն, և զՂամիշն, որ էր երիցկին։...

Դարձեալ կրկին աղաչեմ զվերընթերցաւղ անուանցս, զմահդասի վաստակոց իւրեանց, յիշատակ անչինչ և յաւիտենական։ Եւ ետուն ի ձեռն վերոյ դրեալ Մելքիսէք քահանային և որդւոյն՝ Յակոբին և Անդրէասին, զոր տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրս անվրդով յամենայն չարէ. ամէն։

273

ԱԻԵՏԱՐԱՆ

Finck, Tübingen, I, Atlas I, Tafel IV, № 18

Գրիչ՝ Յակոբ Լէճացի
Վայր՝ Կ. Պոլիս

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի, ի թուականութեանս ասքանազեան և աբէթական տոմարի ՌՂԳ (1644), ձեռամբ Յակոբ սարկաւագի Լէճցոյ, ի յստոյգ և յընտիր աւրինակէ, ի խնդրոյ աստուածարեալ և հոգիասէր տէր Սիմոն աբեղային, որ մեծաւ փափագանաւք և սրտաջան յօժարութեամբ քաջահաւատ յուսով ետ գրել զսբ. Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց և բարեխաւս ծնողացն իւրոյ՝ Ղազարին և Փաշամին, և եղբարցն՝ Եաղուզին, Խաչումին, Պեսրոսին, Գրիգորին և քրոջն՝ Կուլճիճանին։

274

ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցեկուք, էջ 356

Գրիչ, նվիրատու՝ Յովհան Խիզանցի

...Նաև զեղկելի [Յովհան Խիզանցի] գրիչս յիշեցէք, որ ի Հիզնա առեալ քերի Համիք քաղաք, տուի արծաթել ողորմութեամբ Քրիստոսի, և առեալ հասուցի ի սբ. քաղաքս Երուսաղէմ։

275
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9757

Գրիչ՝ Փիլիպպոս
Վայր՝ Կ. Պոլիս

333բ Փառք...։

335բ Արդ՝ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս սբ. Աւետարանս ի մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյն նորա Մարտիրոսին, ի մեծ թվականիս Հայոց ՌՂԴ (1645) ամի և յունուարի ամսոյ ի Ի [Ե] (25), աւրն շաբաթ, և ի գալստենէն Կենարարին ՌՁԾԽԶ (1646), ձեռամբ Փիլիպպոսի մեղապարտ և յետին գրչի, ի հայրապետութեանն սրբոյն Էջմիածնայ տեառն Փիլիպպոս կաթողիկոսի ամենայն Հայոց և առաջնորդութեան Կոստանդինուպոլսոյ Դաւիթ արքեպիսկոպոսի, որ տէր Աստուած Յիսուս Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեանն իւրոյ. ամէն. և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմին: Վասն որոյ աղաչեմ զամենեսեանդ, զի որք հանդիպիք այսմ սբ. գրոցս կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով ///...։

276
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 2709

ա

403ա Փառք...։
Աւարտեցաւ գիրս այս գանձի,
Հայոց մեծի թըւականի,
ՌՂ չորս աւելի (1645),
Մարտի ամսոյ և ութի։

բ

24բ Ի մեղական գոլով բնութիւնս բնաւոր,
Ղարիպին կեանքն է լալ ի ողբ։

գ

146ա Ո՛վ եղբայր իմ տաղկահն չի գրեցի. մի՛ մեղադրեր։

277
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վատիկանի գրադարան, № 16

Գրիչ՝ Զաքարիա Սիւնեցի

Զաքարիա մեղօք մեռեալ Սիւնեցի,
Զձեզ պաղատիմ ով սիրելի,
Որք հանդիպիք այսմ տառի,
Ցիշման առնէք զիս արժանի։
. . . . .
Զոր և զսա շարադրեցի,
Յամսեան մարտին ի ցանկ հանի,
Ի թվականիս Հայոց զարմի
ՌՂ ը[նդ] չորրորդի (1645)։

278
ՏԱՂԱՐԱՆ

Երևան, № 3218

Գրիչ՝ Հայրապետ քահանայ

Ցիշատակարան գծողի տառիս

Ի ձէնշ հայցեմ աղերսալի,
Վերծանողաց յայսըմ տառի,
Գերադունիցըդ հրաշալի,
Ընթերցողացըդ սբ. գծի։
Արդ՝ ես թշուառս ամենայնի,
Ցոյժ պաղատիմ ես փարելի,
Բայց զի չեմ հրմուտ այսմ արհեստի,
Զի մեղադրել ինձ ծաղրալի։
Բաբունապետրն պանծալի,
Սբն. Ներսէս Շընորհալի,
Ի Ս. Հոգւոյն նա թելադրի,
Իմաստութեամբ ըսկսանի։
. . . . .
Ծընեալ մանկունք նոր Սիովնի,
Ի ձէնշ հայցեմ տալ ողորմի,
Բամեալ գծողի այս սբ. տառի,
Տէր Հայրապետ քահանայի։
Այլ և ծնողացս իմ պատուելի,
Եւ յազգայնոցս ամենայնի,
Գոլ կազմողիս Գաբրիէլի։
Բամեալ Հայոցըս թուականի,
Հազար նրսունն էր և քառի (1645),
339բ Եւ ապրիլի տասն ու հընկի,
Աւարտեցաւ բանս հոգելի։

Արդարասցուք վերջ այսմ իրի,
Յիսուս Որդոյս յիշատակի,
Լսելով խրատիցըն քաշ հովուի,
Եւ փառքս տալ բստեղծաւղի։

279
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6513 (1551 թ.)

Կազմող՝ Գասբար Երէց

ա

282ա *Արդ՝ և ես՝* Բինիաթին *հայր* Մասաճիս *և* Բինիաթին *որդի* Ծաուրս, *և մայրն իմ՝* Սուլթանաթն, *նորոգիլ տվինք զսբ. Աւետարանս. յիշատակ հոգոյ* Բինիաթին: *Ով կարդայ կամ աւրինակէ լի բերանով Աստուած ողորմի ասէ ստացողի սբ. Աւետարանիս* Բինիաթին, *և ծնողացն՝* Շահզատին, *և հօրն՝* Մասաճուն, *և կողակցին՝* Սուլթանաթին, *և միւս հանգուցեալ որդոյն՝* Դաւութին, *և ամենեցուն վերո դրելոցս։*

բ

282բ *Դարձեալ յիշեցէք զկազմող սորա անարժան* Գասբար Երէցս, *որ եմ եղբայր խոջա* Բինիաթին, *և զհայրն մեր՝* Մասաճին, *որ զխաչէրս և զկոստղս նայ կոստղել երետ։ Տվինք վախմ* Դխուունուց *սբ. եկեղեցուն, որ կոչի Ս. Սարգիս։ Ինչ քահանայ և կամ աշխարհական որ այս յիշատակս կտրէ...։*

283ա *Կազմեցս թվիս ՌՂԴ (1645), տարին Աղեղնօրն, ամիսն մայիս, ի թագաւորութեանն շահուպոյ փոքր շահ* Ապազին, *ի հայրապետութեանն* Թաքնոյ Մեսրոբ *արհեպիսկոպոսի, և ի կաթողիկէոսութեանն տեառն* Փիլիպոսի: *Եւ դարձեալ յիշեցէք անարժան* Գասբար Երէցս *կազմող սբ. Աւետարանիս և զմեծ հարսն մեր՝ զպարէհոգի* Սուլթանաթն, *որ շատ աշխատութեամբ անցուց զժամտնակս իւր, որ է աւրհնեալ...։*

գ

Վաճառող՝ Ճալալ

220բ *Ես՝* Ճալալ, *որդի տէր* Ակոբ Երէցս *ծախեցի սբ. Աւետարանս մասի Աստուծոյ* Բունաթին: *Ով որ այլելում առնի, վասն Ուղիայ առնի. ամէն։*

դ

Գրիչ՝ Ազարէ

221ա *Ես՝* Բինիաթս, Դաւութս, Սալթանաթս *առանք Աւետարանս տէր* Յակոբինանայ. *մեր հոգոյ բաժին տվինք* Թուխուունուց *Ս. Սարկիսին վախմն, այլ մարգի բան չկա՝ կամ հաւր կամ եղբաւր կամ եղբայր որդոյ կամ այլ ազգակ<ակ>անի։ Ով որ այլ* Թոխուունուց *Ս. Սարկիսէն հանէ՝ սբ. Աւետարանիս ԳՃ ու ԺԸ (318) հայրապետաց նզաւած լինի...։*

Ես՝ տէր Ազարես *զիրեցի.* Մանկասարն *վկա,* Կոճէն *վկա,* Ամիրդն *վկա,* Փիրինան *վկա, տէր* Կարապետն *վկա, Աստուած վկա. ամէն։*

280

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 7794

Գրիչ՝ Խասպէկ

30բ Փառք... Արդ՝ գրեցաւ սա ի լաւ և ըստոյգ աւրինակէ, որ ինքս կոչի Պատարագամատոյց. և պարուրեալ ունի յինքն զևթնարփեան շնորհք...։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք, որք հանդիպիք այս սբ. մատենիս
31ա կար//դալով կամ գաղափարելով կամ սովաւ զպատարագն սբ. մատուցանելով, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս զստացաւղ սբ. Խորհրդատետրիս զԿաֆայեցի տէր Գրիգոր քահանայն և զհամեստ ամուսին իւր զՍէֆէրպիֆայ երիցակինն, զփոխեցեալն առ Քրիստոս, և զծնաւղսն իւր, և զզաւակսն իւր, և զամենայն արեան մերձաւորսն նոցին՝ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Արդ՝ գրեցաւ սա ի յամի թուաբերութեանն հայկազեան սեռի քսան և մէկ յոբելինի և երկրորդ վեշտասանի և միակ երկոտասանի (1645)[1] և յուլիս ամսոյ ի Ժ (10), աւրն հինգշաբթի, ձեռամբ անարհեստ Խասպէկ դրչի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի և յառաջնորդութեանն յայսմ նահանգի տէր Խաչատուր արքեպիսկոպոսի։ Արդ՝ աղաչեմ զձեզ կրկին, կրկին պաղատանաւք յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Գրիգոր քահանայն, որ ստացաւ զսա յիշատակ իւր իրիցակնոջն հոգւոյն և եդ զսա ի դուռն Սրբոյն Յովհննու Կարապետին ծովահայեաց և գմպեթաձև սրբոյ տաճարի, ի վայելումն մանկանց Սիովնի։ Եւ է ազատ. ոչ ոք չունի իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ կամ ի յայս եկեղեցոյս դուրս հանելոյ...։

281

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏՈՅ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 785

Գրիչ՝ Աստուածատուր երէց

Վայր՝ Հալապ

216բ Փառք... որ և շնորհիւն Աստուծոյ աւարտեցաւ սբ. Առակի մեկնիչս, ձեռամբ սուտանուն Աստուածատուր երիցու, ի թուականիս մերոյ ՌՂԴ (1645) ամին, ի սեպտեմբեր տասն, ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Սիմէոն կաթուղիկոսին և ի առաջնորդութեան մերոյ Ներսէս վարդապետին։ Եւ արդ՝ եղև խնդրող տառիս Սեբաստացի վարժապետն՝ եռամեծ զքաջ բարունապետն զտէր Թորոս վարդապետն, զերախտաւորն

[1] Այսինքն՝ (21×50)+32+12+551։

սբ. հօրն մերոյ տէր Սիմէոն կաթուղիկոսին, ի վայելումն անձին իւրոյ...։ Արդ՝ գրեցաւ գիրքս այս ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացս և այլ սրբոցս...։

282

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Զմմառ, № 488

Գրիչ՝ Աստուածատուր երէց

ա

85 *Եւ ոչ լիայկատար գրեցաք զպատմութիւնս, զի աւրինակն այս էր։ Աղաչեմ եղբայրք, յորժամ կարդայք և լսէք զպատմութիւնս զայս, լի սրտիւ ողորմի ասացէք* զԱւետիսին, *և կողակցին՝* Թուրվանդին, *և դստերացն, որ հանգուցեալ են առ Քրիստոս։*

բ

Ողորմի ասացէք գրոցս զԱւետիսն *և զծնօղսն՝* Յերուգարշէն *և* Ուղիւրիկն, *և որդին՝* Դաւիթն, *որ հանգուցեալ [են] առ Քրիստոս։*

գ

Յիշեցէք ի Քրիստոս զանարժան սուտանուն Աստուածատուր *երէցս, որ փոքր ի շատէ ծաղիկ արարի և կազմեցի...։ Թողութիւն խնդրէ մեղաւորիս և ծնօղացն իմ և կողակցին [իմ]ոյ. ամէն։*

դ

ԶԱւետիսն *և իւր ծնօղսն՝* Յերուգարշէն, *և մաւրաքուրն, և որդին՝* Յակոբն, *և ամենայն արեան մերձաւորք։ Կազմեցաւ թվականին ՌՂԴ (1645)-ին, ի յամսոյ սէմդէբեր ԺԴ (14)։*

ե

ԶԱւետիսն, *և կողակիցն, և որդին՝* Գրիգորն, *որ հանգուցեալ է. և դստերքն՝* Սառայ *խաթունն և* Խուրովն *[յիշեցէք]. ամէն։*

զ

Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս զԱւետիսի[ն] *և իւր նորարողրող դստերացն՝* Լէլուն *և* Մարիամին, *որ հանգուցեալ են առ Քրիստոս. ամէն։*

283

ՇԱՐԱԿՆՈՑ

Մշեղ, IV, № 1140

Գրիչ՝ Ներսէս

Վայր՝ Քիլիս

224 *Գրեցաւ Շարակնոցս ձեռամբ* Ներսէս *անարժանիս ի գիւղաքաղաքն ի Քիլիս, ի դուռն Ս. Ովանէս եկեղեցւոյն, ի թվին Հայոց ՌՂԴ (1645), ի նոյեմբերի ամսոյ ի ԺԳ (13), աւրն հինգշաբթի։ Աստուած ողորմի ասացէք ծնօղացս և քրւերն իմոյ՝* Մարիամին, *որ առ Աստուած են փոխեալ, և զգրչապետ հայրն իմ՝ տէր* Մելքոն *քահանայն։ Աստուած ողորմի ասացէք մի համուռ աղգականացս իմոյ. ամէն։*

284

ՇԱՐԱԿՆՈՑ

Լենինգրադ, Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Dopn *631*
(մանրաժապավեն, Երևան, № 139)

Գրիչ՝ Նիկողայոս ղպիր
Վայր՝ Կաֆայ

ա

11ա *Զծոյ[լ]ն ի բարեաց և ղարագս ի չարեաց զՆիկողայոս զանպիտան գրիչս յիշեցէք ի Տէր։ Ընդ նմին և զրստացող սորա զտէր Մինաս քահանայն հանդերձ ծնողաւքն, և դուք յիշեալ լիցիք։*

բ

28բ *Զեռափափագ սիրով ստացող սբ. տառիս զԸսպերցի տէր Մինաս հոգէսէր քահանայն յիշեսջիք ի Տէր Յիսուս հանդերձ իւրայնովքն, և դուք զնոյն գտջիք...։*

գ

61բ *Աստուծով զաւրացեալ... Ըսպերցի տէր Մինաս ընտրեալ քահանայն բազում տենչմամբ և եռափափաք սիրով ետ գրել զսբ. գիրքս, որ կոչի Շարակնոց, ի վայելումն անձին իւրոյ...։*

Ինձ մեղսասէր նորաշան գրչի Նիկողայոս դպրի։ Խնդրեմք և հայցեմք ի յապենիազ Արարչէն, որ բարով վայելել տացէ նմա...։

դ

155բ *Ի թվին Հայոց ՌՂԴ (1644) դեկտեմբերի ԺԲ (12) աւրն հինգշաբթի աւարտեցաւ ի դուռն Ս. Սարգսայ ի Կաֆայ քաղաք, ձեռամբ Նիկողայոս դպրի։*

ե

400բ *Փառք...։ Շնորհաւքն Աստուծոյ և ողորմութեամբ նորին յանգ ելեալ*
401ա *կատարեցաւ երգս ժամակարգութեան, // որ կոչի Շարակնոց...։*

Արդ՝ ցանկացող եղեալ այսմ հոգևոր բուրաստանիս տէր Մինաս սբ. և մաքուր ընտրեալ քահանայն և ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ ազգաց յաղգս, յիշելով զհրամանն տէրունական թէ...։ «Երանի...»։

Վասն որոյ այս նազելի տէր Մինաս քահանայս զամենայն զոր ունէր վաճառելով ըստացաւ զպատուական զանձս աստուածային յիշատակ իւր հոգոյն և վայելումն իւր անձինն...։

401բ *Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրաւարին, թվին Հայոց ՌՂԴ (1645)-ին և հոռի ամսոյ ԺԹ (19)*[2]*, հայրապետութեանն տէր Փիլիպպոս կաթողիկոսին և առաջնորդութեան մերոյս նահանգի տէր Խաչատուր արքեպիսկոպոսի և տէր Գրիգոր եպիսկոպոսի, ձեռամբ մեղսասէր և անպիտան նորաշան գրչի Նիկողայոսի, որ ըստ կարի աղկատացեալ մտացս, ջանք եդեալ գրեցի և ծաղկեցի և կազմեցի, թէպէտ ոչ հմուտ գոլով, այլ վերին նախախնամութիւնն*

---

[2] *Քանի որ ձեռագիրն ընդօրինակվել է Կաֆայում, ՌՂԴ տարեթվի հոռի 19-ը շարժական տոմարի հաշվով կհամապատասխանի ոչ թե 1644 թ. նոյեմբերի 28-ին, այլ 1645 թ. նոյեմբերի 28-ին։*

ապաւինելով յանգ հանեալ կատարեցի ըստ կարեաց իմոց։ Խընդրեմ կրկին պաղատանաւք, զի թէ սխալ ինչ գացի ի սմա չի մեղադրէք, զի կար մեր այս էր, ո՛վ պատուէլի եղբայրք։

Դարձեալ խնդրեմ ի ձէնջ կրկին պաղատանաւք, ով հանդիպողք սբ.
40 2ա տառիս, յիշեսջիք ի տէր Յիսուս զընտացող սորա զ//տէր Մինաս ընտրեալ քահանայն և զհայրն իւր՝ զտէր Մովսէսն, և զմայրն իւր՝ զԵաղուբ խաթունն, և զիւր կողակիցն՝ զՍալչուկն, և զքոյրն իւր՝ զԳոնարպիքան, որ եւ ջինել զՇարակնոցիս զկոճակն և զայլ ամենայն արեան մերձաւորքն իւր...։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս զտէր Զաքարիայ զսրբասէր քահանայն, որ ի խազելն և ի սրբագրելն բաղում ջանիւ աշխատեցաւ։ Քրիստոս Աստուած վարձս բարեաց պարգևեսցէ նմա...։

Դարձեալ աղաչեմ զձեզ, զհանդիպողք սբ. տառիս, որ ի նըւագելն ջարունակիս, յիշեսջիք ի տէր Յիսուս զընտացող սորա զտէր Մինաս սըրբահոգի քահանայն և զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ զսրբասէր
402բ քահանայն, // որ բաղում աշխատութեամբ հասոյց զմեզաւորս ի յայսմ արհեստիս։ Խընդրեմ ի Քրիստոսէ որ փոխարէն ինքն հատուցանէ...։ Ընդ նըմին և զբազմամեղ գծողս զՆիկողայոս անպիտան մեղաւք լըցեալ յոգիս, և զծնաւղն իմ՝ զհայրս և զմայրս, և զեղբայրս, և զքոյրս, և զամենայն արեան մերձակայքն իմ...։

285

ՊԱՏՄԱԳԻՐՔ

Ն. Ակինյան, Բաղեշի դպրոցը, էջ 210—211

Գրիչ՝ Դաւիթ

Արդ՝ ծրեցի զսա ի թուին Հայոց ՌՂԵ (1645) դեկտեմբերի Թ(9), յառաջնորդութեան Բաղիշու նահանգին Մեսրովպ հայրապետի և աստուածաբան վարդապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, ոչ միայն յարհեստ գրչութեան և ծաղկաբարութեան, այլ ճոխ ամենայնիւ լցեալ գիտնականութեամբ, ճշմարիտ քարոզող և գասասաց, հեզ և հանդարտ, սրբասնունդ և մաքրամիտ, օրհնեալ ձեռամբ տէր Փիլիպպոս կաթողիկոսի և շնորհեալ եպիսկոպոս Բաղիշու. և տուեալ գաւազան իշխանութեան վարդապետական և եկեալ նստեալ յաթոռ իւր հովուել զհօտ Տեառն։ Եւ ես հէգս և թշուառականս առի ձեռնադրութիւն ի նըմանէ։ Եւ ԺԲ (12) ամ է, որ տեսուլ է մեզ որդիացելոց, խնդրեմք յապէնիազ Տեառնէ, զի յերկարակեաց արասցէ...։

Գրեցի ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Գէորգայ զօրավարին։ Արդ... աղաչեմ յիշել... զտառապեալ անձն իմ՝ Դաւիթ...։

286

ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 76 (1597 թ.)

152 Յիշատակ է սբ. Աւետարանս խոճայ // Վասլին, և կողակցին՝ Զոնալին, և որդոյն՝ Բարսեղին, և դստերացն իւրոց, ի վայելումն անձին իւրոյ ... ի թվին ՌՂԵ (1645) դեկտեմբեր Թ (9)։

287
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՅ

Երևան, № 10307

Գրիչ՝ Ղազար դպիր

ա

64բ Ո՛վ պատուական ընթերցողք և ածանցողք, թողութիւն շնորհեցէք այսմ սխալանացս իմոց, որ միտս ի յիս չէր, թողի զայս թուղթս կիսատ, անցայ ի միւսն. բայց դուք անտարակոյս լեր, զի ոչ է պակաս բան ի սմանէ։

բ

6գբ Կատարեցաւ դիրք հաւատոյն լիապէս և անթերի։
Ծովու նման ալէկոծեալ,

Եւ թիլ քարի պէս երերեալ։
Երբեմն յեզր ծովուն եմ շիվարեալ,
Բամեալ ի յատակ ջուրցն սուզեալ։
Ով եղկելի և թշուառացեալ,
Անձն իմ մեղօք դատապարտեալ։
Իւրթից շնորհաց հոգոյն եմ ծարաւեալ,
Եւ ողորմութեան Տեառն պասքեալ։
Այլ եմ մեղօք հիւանդացեալ,
Բնաւ անկար եմ մնացեալ։

. . . . .

Ղազար անուն գործով ղեխութեան,
Բազադրելոյս արդարութեան։
Եւ տէտ եմ խիստ դծագրութեան,
Զձեզ աղաչեմ հարք սրբութեան։
Մայր ղղջութեան և վարդապետք ապաշխարութեան,
Ցիշեցէք զիս ողորմութեամբ Քրիստոսի սբ. արքայութեան,
Փրկչին երգել փառք յաւիտեանս։

գ

86ա Ո՛վ հանդիպողք յայսմ տառիս, որք լուսաւորիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զստացող սորա լուծ քաղցր և բեռն փոքր ոգի զԴաւիթ վարդապետն, որ և հանգուցանէ և բառնայ, ղբարձողն իւր. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

դ

106բ Ցիշեցէք զստացող սորա զԴաւիթ վարդապետն և զծնողսն իւր. և դուք յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Քրիստոսի։

ե

12ա Ջսաացող սորա զԴաւիթ վարդապետն Ջուղայեցի, աղաչեմ յիշել ի Տէր։

զ

175ա Ցիշեսջիք զստացող սորա զհեզայոգի Դաւիթ վարդապետն, որ է

աղբիւր իմաստութեան, և զհայրն իւր՝ Նուրի, զմայրն իւր՝ Մէրիկն, և զեղբարքն իւր՝ զմէծ Մարգարէն, և զփոքրն՝ զՅակոբն և զՅոհանն, և զքոյրն՝ զԵղիսաբեթն և զամենայն մերձաւորս իւր։

Է

307ա Ով սրբազան ընթերցողք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յերեսս անկեալ աղաչեմ, յիշել զծող սորա՝ զխոնթացեալ Ղազար դպիրս և ծնողացն իմոց Աստուած ողորմի ասել։

Բ

364ա Ով վայելողք սբ. տառիս, խնդրեմ ի ձէնջ, յիշեսջիք զստացող սորա զհեզահոգի Դաւիթ վարդապետն քաշակրօն, որ բազում փափագանօք և աշխատութեամբ ետ գծագրել զսբ. գիրքս Առաքինութեանց, և զհայրն իւր՝ Նուրի, և զմայրն իւր՝ զՄէրիկն, և ամենայն մերձաւորսն։ Ընդ սըրբոյ վարդապետիս յիշել մաղթեմ զհոգէնուաստ Ղազարս, որ ամէնառատ շնորհիւն Քրիստոսի և աղօթիւք սբ. վարդապետին գծագրեցի զսբ. գիրքս Առաքինութեանց, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ եկեղեցոյն։ Այլ և յերեսս անկեալ աղաչեմ յիշել զհայրն իմ՝ Ամիրեզտի և զմայրն իմ՝ զՇուշանն։ Այլ և մաղթեմ անմեղադիր լինել սխալանացն։

Աւարտեցաւ զգիրքս Առաքինութեանց յամի հազար և ինսներորդի և հնգակ թուոյ (1645) սահմի ամսոյ ի ԺԶ (16) և դեկտեմբեր Հոովմայեցւոց ի Իե (25), օրն հինգշաբթի։

288

ՆԱՐԵԿ

Երևան, № 2089

Գրիչ՝ Մկրտիչ աբեղայ

ա

4բ Տէր Յիսուս Քրիստոս յաջողեա զգործս ձեռաց իմոց։ Ի թվիս ՌՂԴ (1645) մայիսի Ի (20) սկիզբն եղև դրոցս։

Բ

305ա Փառք...։ Յամի թուաբերութեանս հայկազան տոհմիս տումարի ՌՂԴ (1645) մելանագրեցաւ մատեանս հոգիանորոգ, աղօթանուէր, արտասուաբուղխ, խոստովանական... որումն Մկրտիչ լոկ անուն աբեղի, որդւոյ Ղազարի, գաւառաւ Լեռնցի։ Նորին ձեռամբ աւարտեցաւ ի փառս Քրիստոսի Ա[ստուծո]յ մերոյ։

289

ՀԱՄԱՅԻԼ

Երևան, № 52

Գրեցաւ Կպրիանոս ի դուռն Ս. Աստուածած[ի]ն և Ս. Գևորգայ և Ս. Հրեշտակապետին Գաբրիէլի և Միքաելի, Ս. Յմինդամարին, ձեռամբ սուտանուն գրչիս /// Բարսեղին. թվին ՌՂԴ (1645)։ Աւրհնեալ է Աստուած. ամէն։

290
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 270

Գրիչ՝ Պաղտար երէց

Գրեցաւ թվին ՌՂԴ (1645) ամենը։ Գրեցօ ձեռամբ Կամիցի տէր Պաղտա[սա]ր երէցուս։ Ո՛վ եղբարք, անմեղայդիր լերուք, Աստուած ողորմի ասէք։

291
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 307

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Ընկղագուք

ա

218ա [Փ]առք...։ Գրեցաւ սբ. Յաւետարանս ի թուին Հայոց ՌՂԴ (1645), ի կաթողիկոսութեան տէր Փիլիպպոսի, ի թագաւորութեան շահ Ապասին, առաջնորդութեան Սիւնեաց գաւառիս տէր Մեսրոբ եպիսկոպոսիս, ի գիւղս Ընկղագուք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և սբ. աստուածընկալ Ս. Նշանիս, ձեռամբն սուտանուն գրչի Յակոբ դպրի։ Ով կարդայք կամ տեսանէք, յիշեցէք ի սբ. և երկնաթռիչ յաղաւթս ձեր ղանպիտան գծող սբ. Աւետարանիս զՅակոբս և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալըստեան իւր. ամէն։

Բ

171բ Յիշատակ է սբ. Աւետարանս բարեպաշտ և բարեպաշտոն և բարեպաշտասէր Նազարին և իւր ծնողացն։

292
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ
Երևան, № 1251

Գրիչ՝ Սաճակ երէց
Վայր՝ Եսդոկիայ

ա

217բ Փառք..., որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտումն աստուածախաւս Մեկնութեանս Մաթէոսեան Աւետարանիս, տկար և տարտամ ձեռամբ անարհեստ և փծուն գրչի, մեղապարտ, հիզայհոգի Սաճակ իբիցէ, յիշմամբ առնէք, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։ Յամի ՌՂԴ (1645) թուի, ի քաղաքն Եսդոկիայ, ի դուռ Ս. Պարսամ եկեղեցոյն, ի Սաճակ երիցուէ, ի անպիտան, ի հող ւ ի փոշի ծառայ անուտ, որ ընդ հովանեաւ սորին պարփակիմք, զոր տէր Աստուած պահեսցէ զձեզ անփորձ. ամէն։

Այլ զբստացաւղ սորին <սորին> զծնաւղսն՝ զՄաճտեսի և զմայրն իմ՝ զԿերնիմ, և զեղբայրն իմ՝ Երբանոս մահտեսին, և այլ մեծ և փոքունսն. և ձղեզ յերկնից արքայութիւն պարգևես[ց]է. ամէն։

Բ

146ա Փրկեա զստացող սբ. դրոցս նայև զ[ան]պ[ի]տան գրիչս զՍահակ երէցսն, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։

293

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 715

Գրիչ՝ Դանիէլ երէց

ա

Գահ-պանակ դ Ես՝ անարժան Դանիէլ քահանայս ստացայ զայս գիրքս հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ տէր Գրիգորին և մայրն իմ՝ Վարդիւաքունին, և կողակիցն իմ՝ Դաւսաագուլին, որ փոխեցաւ առ Քրիստոս ի թվին ՌՂԴ (1644) մարտի Ժ (10)-ն։

Բ

221բ Քրիստոս Աստուած և մեղ զամենեսեան զհաւատացեալքս ի քեղ արժանի արայ...։

Արդ՝ գրեցաւ սակաւ գիրս ի ձեռաց սուտանուն Դանիել երիցու[3], որ անուամբս միայն կամ և գործովս եմ թափուր և ունայն։

Դարձեալ աղաչեմ, ո՛վ դասք քահանայից, յորժամ կարդայք կամ աւրինակէք այս սակաւ բանս, յիշեցէք զԴանիել էրէցն, և գուք յիշեալ լիշիք յառաջի Քրիստոսի. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ վասն սղալանաց դրոյս, քանզի միտքս ցնոր էր ի վերայ պրաղմանց և հոդս աշխարհիս, և աւրինակն հին էր, մի՛ մեղադրէք. մեղայ, մեղայ աղաչեմ զձեզ։

Գրեցաւ թվին Հայոց ՌՂ և Դ (1645)-սին։

294

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 1605

Գրիչ՝ Խաչատուր քահանայ

Վայր՝ Արափկեր

250բ Աւրհնեալ է Աստուած. աւարտեցաւ Շարակնոցս ձեռամբ Խաչատուր քահանայիս։ Գրեցաւ սա թվին ՌՂԴ (1645), ի քաղաքն Արափկեր։ Արդ՝ աղաչեմք զամենեսեան, որ կարդալով կամ աւրինակելով, յիշեցիք
251ա զտէր Խաչատուր Յարափկերցիս։ Ո՛վ եղբայ[ր]ք, մի՛ մե//ղադրէք սղալանացս, զի հոգ և տարակուս էի ի յանիրաւ եղբարցմէ։ Այլ և յիշեսշիք զհայր. իմ՝ Նաովաւգն և զմայրն իմ՝ Շալշուքն, որ Աստուած փոխեալ են, լի սրտիւ թողութիւն խրնդրեցէք։

Արդ՝ գրեցաւ լաւ և ընտիր աւրինակէ, որ է խլկցի. ամէն։ Օրն ուրբաթ աւարտեցաւ։ Այլ և յիշեսշիք կողակիցն իմ՝ Թանսուին, որ զթուխ[թ]ս կոկեց, և թանաք եփեց, և այլ բազում բանիւք ձեռնատրու-

[3] Ձեռագրի 1—152 թերթերը ԺԴ դարի գրչություն են, 154ա էջից մինչև վերջ գրել է Դանիել երէցը։

Թեամբ աւդնեաց ինձ, Աստուած վարձահատուց լինի. ամէն, և եղիցի, եղիցի. ամէն։

295

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2735 (ԺԴ դ.)

Հետ. ստացող՝ Խանբաբ
Վայր՝ Խրատեղ

ա

79ա *Թվին ՌՂԴ (1645)։*

բ

99ա *Ես՝* Խանբաբս *հալալ ընչիւք և վաստակօք իմով գնեցի զսբ. ծերացեալ Աւետարանս, ի դեղջէն* Ցեցկցի Սաթիլմշէն, *երկիրն* Եղեգյաձորն, *ի գ[ե]օղն* Խրատեղ։

Ես՝ Աստուածապովս *վկայ,* Ծատուրս *վկայ։*

296

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3426

Ստացող՝ Տէր Բարսեղ

99ա *Ստացող սբ. Աւետարանիս տէր* Բարսեղն. *Թվական Հայոց ՌՂԴ (1645)։*

297

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4019 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Պօղոս երէց

258ա *Փառք... Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի ձեռն սուտանուն* Պօղոս *իրից[ու], յիշատակ* Գրիգոր *քահանային և ծնողացն՝ տէր* Մելիքսէթին *և* Զիլփուն, *և կողակցին՝* Նաղլուխանին, *և որդոցն՝* Շահնազարին, Սարգսին, Քասպարին, Շահպանին, Պաղասարին, Մալքումին *և հանգուցեալ որդոց* Պայազիթին, Պայանդուրին, *և դստերացն՝* Պէկիշանին *սուտանուն, և հօրեղբօրն՝* Յովանէսին, *ի Թվիս Հայոց ՌՂԴ (1645)։ Ո՛վ քահանայք, կարդալով կամ աւրինակելով լի բերանով ողորմի ասացէք. Աստուած ղձեղ ողորմի։*

298

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4336

Գրիչ՝ Մելիքսեթ երէց
Վայր՝ Տեղ

ա

270բ *[Փառք]...։*

271բ *Որոյ ցանկացող եղեալ սբ. Աւետարանիս աստուածասէր և պատու-*

ական, ամենայն աւրհնութեանց արժ[ան]աւոր Ղարախան, աւագ որդ-
ոյն Պապան, Պաղտասարն, Կոչպեկն, և դստերաց և հանգուցեալ Մա-
րիամն, Եղիսաբեթն, Նաբատն, Ասիլին. ե թոռանցն՝ Աիրինանին, Ղու-
կասին, սարկաւագ Ղազարին, Յակովբին[4]. և հարսներին՝ Գուլումին,
Աղասին և ///[5] և կողակցին՝ Խանու<ու>մին, և հանգուցեալ դստերացն
///[6] և անպիտան, մեղուցեալ գրիչս զՄելքիսեթ երէց. տեսի զ[ե]ռա-
փափաք սէր և զջան Ղարախանն, և իւր ծնաւղացն ամենայնի, իւր կինն՝
Խանումն, զոր ունէին սէր զերկուսինն սբ. Աւետարանիս, ձեռն արկեալ
գիրեցի զսայ ի քաղաքս Տեղ, ընդ հովանեաւ սբ. եկեղեցոյս, ի հայրա-
272ա պետութիւն տեառն Փի//լիպպոս, և պարսիկ թագաւորութիւն շահ Ապա-
զին, ի թվականիս ՌՂԴ (1645) ամին։ Դարձեալ յերես անկեալ աղա-
չեմ... յիշեցէք ի Քրիստոս...։

Բ

208ա Եւ ինձ մեղապարտ գ[ր]չի և իմ ծնաւղացն ամենայն. թվին ՌՂԴ
(1645) էր, զորս խոստացեալ էր տալոյ Ղարախան իւտան (sic) ամէն.
փառք Աստուծոյ։

299

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 4348 (մինչև 1645 թ.)

Գրիչ՝ Ղուկաս

ա

19բ Դարձեալ յիշեցէք Ղուկաս անարժան գրիչս։

Բ

240բ Դարձեալ յիշեցէք մահդասի Յովանէսն, որ յայս սբ. Մաշտոցս գը-
նեաց ձեռամբ իւրով [ե] ետ ի սբ. եկեղեցիս, յիշատակ իւր և ծնողացն
իւրոց, հաւրն՝ Սադաթիարին և մաւրն՝ Մարիամին, և իւր պապն՝ Ղարա
Քաֆուլին և մամն՝ Դալաթն, հաւրեղբայրքն իւր՝ Խուբիարն, և միւս
եղբայրն՝ Գոլիարն, Սպանդիարն, Ոնանէսն և եղբարքն իւր՝ Վարթանն,
Աւաֆն, և քորք իւր՝ Նըսարաթն, Խոնձայն, և կողակիցն իւր՝ Մարիկն, և
որդիքն՝ տէր Ոնանէսն, Խաչիկն, Քաֆուլիկն, և դստերաց իւրոց Գուլու-
մին, Էմինին, Հոռոմսիմին, և արեան մերձաւորաց իւրոց. ամէն։

Դարձեալ յիշէք երկնայգնաց յաղօթս ձեր, ո՛վ մանկունք սբ. Սիոնի,
զմահդասի Յովանէսն և որդիքն՝ տէր Ոնանէսն, Խաչիկն։

Թվին ՌՂԴ (1645). և դուք յիշեալք [լիշիք] ի Քրիստոսէ. ամէն։

---

4 Տողամեջ նոտրագիր ավելացված է «[Գր]իգորին, Անգրիասի, Հուռոմսիմայ»։

5 Ավերված տեղն այլ գրով ավելացված է. «և հաւրն՝ Կոչպէկն, պապն՝ Ղասումշան, տատս Տէրեճան, մայրս Մայրամն»։

6 Ավերված տեղն ուրիշներն ավելացրել են «հաւրն՝ Զորհապն, մայրն՝ Խաթուն, պապն՝ Ղոչ, եղբայրն՝ Նազարն»։

300

ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 4634 (1407 թ.)

ա

532ա *Փառք...։ Արդ՝ ի յօուրն այն ահեղին յիշեայ զհոգիս ստացողին՝ զտանուտէր* Շիրաքն *և զիւր որդիքն՝* զՂուբաթն, զԴիլաքն, *զկողակիցն՝* զՈսկին, *զդուստր՝* Սառէն, *զքուր՝* Խոնդան, Գուլջանան, Եթարն: *Դարձեալ կրկին անկամ յիշեսջիք..., որ ստացաւ զգիրգս ի հալալ յարդամոց իւրոց, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հաւրն՝* Դիլաքին *և մաւրն՝* [Սաֆար-Մէլիքին], *և մեծ պապոյն՝* Ղուբաթին, *և որդոցն՝* Ղուբաթին, Ներսէսին, *կենակցին՝* Ոսկոյն, *դստեր՝* Սառային, *քուրոչ՝* Խոնդանին, Գուլջանանին, Եթարին, *մեռեալքն ի հողին, և զկենդանիքն ի յայսմ յաշխարհիս. ամէն։ ...Թվին ՌՂԴ (1645)։ Տէր* Արիստակէսն *յիշէք ի սբ. յաղօթս ձեր, Աստուած զձեզ յիշեայ. ամէն։*

բ

532բ *Դարձեալ յիշեսցջիք* զՇիրաքն *և զիւր ազգականն զամենն... որ ետուր զգիրքս անջինջ յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ։ Կարդալով կամ աւրինակելով նայ յիշման արժան արարէք* զՇիրաքն, *և զիւր որդիքն, և զիւր ազգածանաւթքն. ամէն։...*

գ

531բ *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք...* Աղէքու Շիրաքին, *հաւրն՝* Դիլաքին, *մաւրն՝* Սաֆար-Մէլիքին, *և իւր դստերն՝* Սառային, *քուերն՝* Խանդանին, Գուլջինանին, *և դոռանցն՝* Նազարին, Ղուբաթին, *դստերն՝* Եթարին *և* Ղիմաթին, *և* Շիրաքի *կողակցուն՝* Ոսկի *խաթունին, յիշեցէք ... նոցա, որ ստացան զսբ. գիրգս ի հալալ վաստակոց իւրեանց և եդին անջինջ յիշատակ ի դուռն Ս. Յակոբին։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսայ ի դրանէ Ս. Յակոբին, եթէ ոք յանդգնի՝ ընդովքն Կայենին և զխաչահանացն առցէ. ամէն։*

դ

343բ *Վերջին ստացողին՝* Շիրաքին, Ոսկոյն, Ղուբաթին, Սառին:

Նվիրատու՝ Շիրաք

ե

533ա *Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Շիրաքն...։ Արդ՝ ես* Աղէքոյ Շիրաքս *[սբ.] գիրքս գնեցի լ (30) ղուռուշ, գերի բերին, ես գնեցի, դարձեալ յղրկեցի ի գո[ւ]ռն իւր՝ ի սբ. ուխտն Դամաղիէլ։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսայ կամ գրաւել...։*

301
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5774

Գրիչ՝ Զաքար քահանայ
Վայր՝ Շատախ

Ա

305ա Փառք...։

307ա Զաղքատամիտ պակասարան,
Մարտիրոսէ բանքրս ծրրեցան,
Առ ի գովեստ հաճոյական,
Առ միածին Աստուածրն բան։

Բ

309ա Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստս ի դիրս գրչութեան և անչանս յամենայն գործս բարութեան Զաքարայ սուտանուն քահանայս, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն որ ասէ «Ցոր կոչումն հրաւիրեցար ի նմին կացջիք»։...

309բ Շնորհիւ Տեառն սկսայ ե ողորմութեամբ նորին կատարեցի գաստուածախաւս և զաստուածարնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ՂԴ (1645) ամին, ի յերկիրն Շատախ, ի թաղն որ Մէղան կոչի, ընդ հովանեաւ սբ. տաճարիս Ամենասուրբ Փրկչին և Ս. Սաեփաննոս Նախավկային, որ սակաւ մի հեռի է, ի հայրապետութեան հայկաղան սեռի էջմիա-
310ա ծին տեառն տէր Փիլիպոսին, և ի մերոյս // կաթողիկոսութեան Աղբաւմարայ տեառն տէր Ստեփանոսին: Զոր յուսամք և հայցեմք յամէնառատ քաղցրութենէն և բարութենէն Աստուծոյ...։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս... զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեան և սխալանաց դրիս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով, աղաչեմ զմանկունս սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով
310բ Աստուած ողորմի ասացէք անարժան և ան//պիտան սուտանուն Զաքարիս և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ծնօղաց իմոց, որ փոխեցեալ են առ Քրիստոս՝ Նահապետին և Բէկազին, և կողակցոյն իմոյ՝ Շայումին, որ փոխեցեալ են առ Քրիստոս, և դստերացն՝ Խաթունաղին, Զանաղին և Աղասուն, և իմ հուրեղբարցն՝ Մխիթարին, Սաեփանոսին, Սրապիոնին, Յովանիսին, և իմ եղբարցն՝ Ամիրջանին, Սուքիասին, Աւազին, և իմ հաւրեղբաւրորդոյն՝ Հէրապետին, կողակցոյն՝ Խանաղին, տէր Մխիթարին, և իմ վարպետացն՝ Հիզանցի տէր Սարգիս վարպետին, Յովանէս վարպետին, Աւետիս եպիսկոպոսին, և իմ հօրեղբաւր վարպետ Շաղուրաթին, Վանեցի Մարգարտին, Շաղգադին, և իմ մաւրքուր Սալամին: Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

Գ

Հետ. ստացող՝ Զանաղա

311բ Փառք...։ Արդ՝ ես Զանաղէս զԱւետարանս գնեցի յիշատակ հոգոյ

իմոյ և ծնողաց իմոց, հօրն՝ Աբգարուն, *մաւր* Փաշին, *տէր* Մարտիրոսին, *կողակցոյն* Ջանաղին: *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։ Աստուած լուսաւորէ զ*Մովսէսի *հոգին, կողակցոյն՝* Փաշին, Եղիին, *կողակցոյն՝* Ինախին, *հօրն՝* Աբրահամին, *կողակցոյն՝* Խոնձին, Հայրապետին, Կիրակոսին, Ներսէսին, Աւետիսին, Փանոսին, Շիրաքին, Աբրահամին, Պաւղոսին, Յովանէսին, Մխիթարին. *ամէն։*

302
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 5992

Գրիչ՝ Գրիգոր քահանայ
Վայր՝ Ախալգօր

ա

80ա *Փառք...։ Գրեցաւ զայս տառս, որ կոչի Գիր խրատ և Առակ մեղօրացս, Գիր կտակի և քաղցրանուշ տաղերով, և աղուես առակ, և խրատ, և առակ յիմարաց, և սպասաւորութիւն պատարագի։ Գրեցաւ ի գիւղաքաղաքս* Ախալգօր, *ի գուռն Ս. Աստուածածնայ և Ս. Գեորգա[յ], ե ամենայն սրբոցն, որք աստ կան հաւաքեալ։ Եւ հայրապետութեան տեառն* Փիլիպոս *կաթողիկոսին և եպիսկոպոսութիւն գաւառիս մերոյ տէր* Անդրէասին, *տէր* Բարսեղին, *թվին ՌՂԴ (1645)։ Եւ գրեցաւ ձեռամբ սուտանուն գրչիս* Գրիգոր *մեղօորիս, որ լոկ անուամբս եմ քահանայ և գործովս ոչ։ Ո՛վ սբ. կարդացողք, յիշեցէք, լի բերան ողորմի ասացէք հաւրն իմոյ՝* Առաքել *վարպետին, և մօրն իմոյ՝* Խանաղին, *Աստուած զձեզ յիշման առնէ...։ Վա[յ] ինձ եղկելիս որ չեմ կացէր պատուիրանիս։*

բ

27ա *Ո՛վ սբ. քահանայք, յորժամ յողբոս զայս կատարէք, կու աղաչեմ զձեզ, որ զեղկելի, սուտանուն* Գրիգորս *յիշման արժան[ի] առնէք։*

գ

57ա *Այ եղբայր սբ. երգողք, այս սակաւ էր գրած յօրինակն, այլն չկայր, չրմեղադրէս, սակաւ է, լաւ է։*

303
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 6135.

Գրիչ՝ Յովաննէս երէց
Վայր՝ Շատախ

ա

236բ *Փառք..., որ ետ կարողութիւն տկար և ախմար գրչի սուտանուն* Յովաննէս *իրիցու, ի յերկիրս* Շատախոյ, *ի նոր թաղս որ* Մէղան *[կոչի], ընդ հովանեաւ ///։*

237ա Գրեցաւ ի թվականիս ՌՂԴ (1645), ի խնդրոյ սրբա//սէր Շնահաւորին, հօրն՝ Խլղաթին, մօրն՝ Խաթունին, տէր Յովանիսին, և իւր ծընողացն՝ տէր Գրիգորին, Թուրվանդին, Հայրապետին, կողակցոն՝ Թազգուլին, և առաւել Շնահաւորին, և իւր աղայոցն, որ փոխեցեալ են առ Քրիստոս, Կարապետին, Գրիգորին, Նէրսէսին, Խամբէկուն, Վարդխաթունին. ամէն։

Բ

193բ Զիս էլ յիշեա քաշիշ բարայ,
Թէ չէ զարկի Աստուած վկայ։

304

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7013

Գրիչ՝ Աւէտ

71բ Հազարնրսուն ընդ մու քառի (1645)՝
Հայկիականըն թվականի։
Սրեցաւ մատամբ մեղսամածէ,
ՅԱւէտ չընչին քարտուղարէ։
Զի յիշատակ սայ եղիցի,
Ի Յովանէս կրօնաւորի։
Զձեզ աղաչեմ տարփմամբ սրտի,
Երեսս եդեալ ի ձեր յոտի։
Գլխակոր թեքեալ պարանով,
Եւ պաղատիմ առ ձեզ յոլով։

305

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 8425

Գրիչ՝ Ղազար դպիր

ա

35ա Զմեղսաթաւալ և զապիկար գրիչս՝ զՂազար դպիրս յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր...։

Բ

159ա Փառք... Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ Մաշտոցս ի թվականիս Հայոց ՌՂԴ (1645), ձեռամբ մեղապարտ Ղազար գրչի, ի դուռն Ս. Գէորգեայ զօրավարին։ Դարձեալ աղաչեմ զամենեսեան զսբ. դասս լուս երամիցդ, որք հանդիպիք սմա... յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր Ղուռնավիլցի Գոնարն, և իւր կողակից Թորոս, և հայրն՝ Նուրիկ, և մայր Ճոխարն, զոր բազում փափաքանօք ետ գրել. զՄաշտոցս յիշատակ իւր հոգոյն, զոր բազում հետէ սէր և փափագ ունէր[8]

[7] Այսինքն՝ 1090+(1×4)+551։

[8] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

306
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8451

Վայր՝ Վաղարշապատ

136ա [Գրեցաւ] ի թուականութեանս Հայոց ամսարի ՌՂԴ երորդի (1645), ի հայրապետութեան տեառն սրբազան հովապետի և քաջ առաջնորդի Փիլիպոս կաթողիկոսի և փոխանորդի քրտնաջան մշակի և լուսատուի Հա[յ]ոց նախնականի Գրիգորի Լուսաւորչին, ի տեղի Միածնի իշման նստեցելոյ ի Վաղարշապատ քաղաքի։

307
ՏՕՆԱՅՈՅՑ
Երևան, № 8462 (ԺԷ դ.)

126բ Թվին Հայոց ՌՂԴ (1645)-ին Մայրամ ղաիլ[իլ]ան։

308
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10685

Գրիչ՝ Ալէքսան երէց

268բ Փառք...։

269ա ...Փափագեալ եղև բարեսէր և աստուածահաճոյ... Ղազար քահանայն, ստացաւ զսա հալալ ընչից իւր և արդար վաստակոց, յիշատակ իւր և ծնողացն, հօրն՝ Մխիթարին, և մօրն՝ Մարիամին, և ամուսնոյն իւր՝ Զամանին, և որդոցն՝ Մխիթարին, Յովանէսին, Ասատիսին, Թումանին, և դստերացն՝ Մարինոսին, և հանգուցեալ որդին՝ Դաւիթն, և

269բ դստերքն՝ Եղիսաբեդն, Հուռումսիմին և միւս Եղիսա//բեդ, որ փոխեցան առ Քրիստոս, և միւս որդին Խաչատուրն ի Քրիստոս հանգեաւ։

Դարձեալ յիշեցէք Մխիթարն և ամուսին իւր՝ Մարգարիտն[9]:

Դարձեալ յիշեցէք մեծ պապն՝ Ծատուրն, և կողակիցն իւր՝ Խաթունն, և զմօր պապն՝ Կիրակոսն, և ամուսինն իւր՝ Արզուխանն:

Դարձեալ յիշեցէք քեռին իմ՝ Փիրազիզն, Գուլազիզն, Մարտիրոսն, որ առ Աստուած փոխեցան։

Դարձեալ յի[շեցէք Ազատն և կողակիցն իւր՝ Զամանն] /// [Սուֆիասն և Բաղդասարն: Դարձեալ] յիշեցէք եղբայրն իմ՝ Ասատուրն:

Գրեցաւ սբ. Աւետարանս ի թվին Հայոց ՌՂԴ (1645) ամին, ի հայրապետութիւն տեառն սբ. Էջմիածնի սրբազան տէր Փիլիպոս կաթուղիկոսին, ի ջահակալութիւն փոքր Շանպազին: Գրեցաւ սբ. Աւետարանս զապիկարի ձեռամբ Աթանասի Ալէքսան երէցի։

---

[9] Երեք և կես տող դատարկ։

309

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՀԱԱԺԻ, Բ—9 (մանրաժապավեն, Երևան, № 232)

Գրիչ՝ Խաչատուր քահանայ

Վայր՝ Կամենից

290բ Փառք..., որ ետ կարողութիւն անուղղա գրչիս և տառապեալ անձինս հասանել ի կէտ աստուածային դանձարանիս քրիստոսահրաման պատուիրանացն, զոր ետ առաքելոցն յետ համբառնալոյն առ Հայր, թէ «Զոր արձակիցէք յերկրի, արձակեսցի յերկինս, և զոր ունիցիք՝ կալեալ լիցի»[10]։ Ընդ որում ընկալեալ աշակերտացն զփրկաւէտ պարգևսն հաստատեցին զսբ. կանոնքս բաղում և ազգի ազգի հրաշագործութեամբ, վասն մեղուցեալ անձանց և հաւատով զղջացողաց, վասն այնմ թէ՝ «Ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց»[11]։ Եւ յետ իւրեանց նոյնպէս պատուիրեցին սբ. հարցն սմին օրինակաւ կառուարել զհաւատացեալ ժողովուրդս ասելով, թէ «Յետ մեր գայցեն դայլք յափշտակողք կերպարանաւ ոչխարաց»[12] և զբազումս մոլորեցուցանեն, որպէս և եղև իսկ։ Վասն որո ժողովեալ վերստին սբ. հայրապետաց և ճշմարիտ մարտակցութեամբ հերքեցին զայնպիսիսն և ի բաց խլեցին զայն, եղին հաստատութեամբ, զայլ ևս կանոնս համա ըստ առաքելոցն ուղիղ դաւանութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն և ի վայելչութիւն
291ա եկեղեցւոյ /// սրբո[յ], նաև ի բժշկութիւն վիրաւորեալ հոգւոց ի պէսպէս աղբից բանսարկուին, զի սովաւ սրբեալք ի մեղաց ի ձեռն ապաշխարութեան արժանի լիցին վերստին փրկութեան, որպէս և Տէրն ասէ. «Այսուհետև մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցին յարքայութիւնն Աստուծոյ և որդիք արքայութեան ելցեն արտաքս»[13]։ Ընդ որս և մեք փառս վեր երգեսցուք պարգևողին զազատութիւն արարածոց, զի նա ոչ կամեցաւ զկորուստ մեղաւորին, այլ զդառնալ նորա։

Արդ՝ եղև զրաւ սբ. գրոյս, որ կոչի Կանոնք, ի թվարերութեան Հայոց մեծաց ՌՂԴ (1645), ի յերկիրս Իլախաց ի քաղաքս Կամենից, ի թագաւորութեանն սոցայ գրռալ Վլատիսլաւին, և ի հայրապետութեան Էջմիածնա[յ] սբ. աթոռոյն տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսին, ձեռամբ անիմաստ գրչի Խաչատուր քահանայն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, ո՜վ սբ. հայրք, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվարժապետն իմ՝ զտէր Յակոբն։ Իսկ ես, զի ոչ զարհեստս գրչութեան կատարելապէս ուսմամբ, այլ զի մի՜ խափան լիցի յիշատակ նախնեացն իմոց, գրեցի զայս ըստ իմում կարի, անմեղադիր լերուք և անպարսաւ սղալանաց մերոց, զի կար մեր այսչափ էր։ Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զհայրն իմ՝ զՇառուկն, նոյնպէս և զմայրն իմ՝ զԿուլաֆն, և զիս
291բ զանարժան գրիչս, եթէ // արժանի համարիք և զամենայն արեան մերձաւորսն մեր, զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս. և ձեզ զփոխարէնն պարգևեսցէ Քրիստոս յարքայութեան յերկնից. ամէն։

---

10 Մատթ., ԺԶ, 19, ԺԸ, 18։

11 Մար., Բ. 17. Ղուկ., Ե, 31։

12 Հմմտ. Գործ., Ի, 29։

13 Հմմտ. Մատթ., ԻԱ, 31։

310
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 784

Կազմող՝ Մեսրոպ երէց

216ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտանուտէր Աւետիսն և զեղբայրն՝ Միրազիզն..., որ ստացան զսբ. Աւետարանս յաւիտենական պաշար ե եդին ի դուռն Նարեկայ վանիցն, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն և Ս. Գրիգոր Լուսաւորչին, և Սանդղտոյ կուսին. յառաջնորդութեան սբ. ուխտին Նարեկայ քաշ և արի երանաշնորհ Կարապետ վարդապետի...։ Թուին ՌՂԴ (1645) կազմեցաւ ձեռամբ Վանեցի Մեսրոպ իրիցուն։

311
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Բ, № 539

Գրիչ՝ Ղազար

Վայր՝ Շենեէր

442 Փառք...։ Գրեցաւ զՍաղմոս Դաւթի այսահալած մարգարէին, ձեռամբ Ղազար պիտակակոչի և քեռն իմոյ Մարգարտի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, ի յերկիրս Ղափան, ի գեօղն Շենեէր, ընդ հովանեաւ Ստաթէի սբ. առաքելոյն և սբ. անապատացս, ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645) ամին, ի թագաւորութեան Պարսից շահ Ալի Աբազին։

Աստուած ողորմի ասել ստացողի սբ. տառիս Հռիփսիմէ կուսակրօն հաւատաւորի... և եղբօր դստեր կուսակրօն Սոփիային։

312
ԺԱՄԱԳԻՐՔ

Տիրայր վարդապետ, № 23 (1637 թ.)

344 Զվերջին ստացող գրոյս Իսկանդար և յիշատակ ծնօղացն՝ Դաւուտին, Գօհարին, և եղբարցն՝ Մատուրին, Սաf[ի?]ին, Մաթէոս դպրին, և քրեերորդոյն՝ Եսիկարին։ Ով կարդա ողորմի ասէ։ Թվին ՌՂԴ (1645), ի կաթողիկոսութիւն տէր Յակոպեայ ///։

313
ԱԻԵՏԱՐԱՆ

Յիշատակարանք, Բ (լուսանկար, Երևան, № 170)

Գրիչ՝ Եսայի

Վայր՝ Թաւուզ

Փառք...։ Որք աստուածային սիրոյն փափակեալ հետևին միշտ յարազուարճ բերկրանաւք խորհին յաւրէնս Տեառն ի տուէ և ի գիշերի. ըստ նմին աւրինակի և սրբասէր և իմաստուն Սարուխան անուն միշտ և հանա<զա>պաղ բորբոքէր ի սէր սբ. և ի տիեզերաքարող քառավտակ Աւետարանիս... մեծաւ փափագմամբ ետացաւ զսա անշնջելի արձան ի մխիթարութիւն անձին և ի յոյ[ս] փրկութեան։

5 Եւ ես՝ յոգնամեղս և փցուն ի // գրչաց Եսայի, տեսեալ զփափագ և զսէր սորա, յանձն առեալ ըստ իմում կարի յանգ հանեալ կատարեցի գխնգիր սորա, շնորհաւք և ողորմութեամբ մեծին Աստուծոյ... ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս, ի յերկրիս Տայուշ, ի գեաւղս, որ կոչի Թաւուզ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բռնացաւ անաւրէնութեան չարիք ի վերայ մեր ի հենէ Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն գարձուցանել ի մոլոր յաւրէնս իւրեանց։

Եւ արդ՝ աղաչեմ զամենեսեան, սիրովն Աստուծոյ, զընթերցողդ ե զլսողդ, յիշման արժանի առնել զվերոյ ասացեալ զպատւական և սրբասէր Սարուխանն զստացող սբ. տառիս և զծնաւղսն իւր...։ Ընդ նոսին և ես ամենամեղս ի գրչաց Եսայի յերեսս անկեալ աղաչեմ յիշել և զիմ անարժանութիւնս և զծնաւղսն իմ զհանգուցեալսն ի Քրիստոս...։

Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւ[?]յական, յիշման արժանի առնէք Եսայի գրիչս և որդիքն իմ՝ զՍաեփանոսն, և Սենեքարիմն, և Սրապիոնն, և թոռն իմ՝ Եփրեմն, և Թիկղին, և կենակիցն իմ՝ Խոստրովն, և տստիրքն իմ՝ Վառվառն, Մարջանն, Խաթունն, Նազլուխանն և Սառիկն, Ղարիպիանն, և ծնողքն իմ՝ Իսրայէլ քահանայն և Խոնտաղէն, և եղբարքն իմ՝ Մաթէոսն, Յոհանն և և ամենայն արեան մերձաւորքն...։

314

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Մ3ԶԵՊ, II, № 363 (1599 թ.)

268 Զվերջին ստացող սբ. դրոցս ղխոջայ Սաֆարն, և կողակիցն իւր՝ զՄարիամն, և զծաղկեալ դուստր և որդիքն իւրեանց՝ զՏէրոնն, և զսարկաւագ Գրիգորն, և ղդստերքն իւրեանց՝ զէմէնիարի և զՍանդուխան, Աստուած իւրեանցն բարի յիշատակ արասցէ, և զիւրեանքն խաղաղական կենօք պահեսցէ մինչև ի խորին ծերութիւն, և յետ աստի կենացս արքայութեան արժանաւորեսցէ Քրիստոս Աստուածն մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Եւ զվերջին զկազմողս յիշեցէք, զի և Աստուած զձեզ յիշեսցէ ողորմութեամբ իւրով. թվին ՌՂԴ (1645)։

315

ՇԱՐԱԿՆՈՑ

Մ3ԶԵՊ, V, № 1639

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

ա

458 Փառք եռակի աստուածութեանն,
...։
Ի թվականիս Ռ ամեան,

ՂԴ թիւ ընդ նըմա (1645),
Աւարտեցաւ սա ի լըման։

Որք հանդիպիք սըմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Յիշման առնէք ըղմեզ արժան,
ՅԱւետիս հոգս և անպիտան։

...։

Բ

458 Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, ...որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է Իլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնամեղ և անիմաստ գրչի մեղաւոր Աւետիսի։

Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌՂԴ (1645), ի գեաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Ս. Պետրոսի և Պաւղոսի և Ս. Գէորգա[յ] զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան գրծողս զԱւետիսս, և զծընօղքն իմ, և զվարպետն իմ՝ զտէր Կիրակոսն, և զորդիքս մեր զԹումէն և զՎարդան, զնոցա մայրն՝ զԱռեան, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք նոցա...։

459 Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, կողկողագին պաղատանաւք, յիշեցէք ի Քրիստոս... տէր Մարտիրոսին, որ ստացաւ զՇարակնոցս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգւո[յ] իւրոյ և ծնօղացն, հաւրն՝ պարոն Վարդին և մաւրն՝ Փարեհանին, և եղբարցն՝ Գրիգորին և Յովանէսին, և եղբօր տղայոցն՝ Սմանդարին, և Աբգարին, և դեռաբո[յ]ս Գրիգոր սարկաւագին. Աստուած անփորձ և անսասան պահեսցէ զիւրեանքն յայսմ աշխարհիս...։

Գ

Ծաղկող՝ Յովիկ Ղուէցի

459 Առ քեզ բարեխաւս ծնաւղք մաւր քոին,

...։

Զնկարող սոցա զՅովիկ Ղուէցին,
Դու անտես չառնես յաւրն ապագային։

Դ

Զքեզ խոստովանիմք Աստուած Ս. Հոգի,

...։

Գթա ի հոգի տէր Մարտիրոսի,
Այլ և ի ծաղկողս ի մեղաց գերի։

316
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՅԶԵՊ, VI, № 1799 (1462 թ.)

Նորոգող՝ Յակոբ երէց
Վայր՝ Արզրում

156 *Նորոգեալ եղև վերստին սբ. Աւետարանս ձեռամբ բազմամեղ և անարհեստ* Յակոբ *իրիցի, ի թվականիս Հայոց* ՌՂԴ *(1645), ի քաղաքն* Թէոդուպոլիս, *որ այժմ* Արզրում *ասի, ի գրան Ս. Աստուածածնի և Ս. Ստեփաննոսի, վասն յիշատակի ամէնիմաստ, բարի... պարոն* Նորհատն, *և զծնողսն իւր, հօրն՝* Գուլպակէ *և մօրն՝* Վարդէ *տիկին, և փոխեցեալ կենակցին՝* Շնոյֆին, Հոռոմսիմին, *և կենդանոյն՝* Այլամելիքին, *և որ-*
157 *գոցն՝* Սահակին *և կենակցին՝* Նանին *և* Էթարին, *և որ//գոցն՝* Գուլպակին, Առաքելին, Շահմանուկին, Խոնապակին, *և եղբարն՝* Յովանէսին, Մարգարին, *և կողակցին՝* Գոհարին, Վարդարևին, *և դստերացն՝* Զարդրիկին, Դօլվաթին, Մսնանին, *մամն՝* Շահփաշն, Խանփաշին, *եղբօրն՝* Թորոսին, Էլպակին, *և զպապն իւր՝* Թաւաքն, *և որդիքն՝* Խոնաբակին, *և որդոյն՝* Կիրակոսին, *և կենակցին՝* Շահզատին, *և քվերն՝* Թուրվանդին, Փարվարին, Դօլվաթին, Մայրամին, Համատրին:

Դարձեալ յիշեցէք զՋաֆարն և զծնօղսն իւր, հօրն՝ Սաֆարին, *և մօրն՝* Գուլզատին, *և կենակցին՝* Խանիկին, *և որդոցն՝* Մելքոնին, Աստուածատուրին, Թաւաքալին, Յովանէսին, Վարդմանուկին, Յարութենին, *և եղբօրն՝* Աստուածատուրին, Բակին, Խոնաբակին, Բարունակին, Գրիգորին, *և քվերն՝* Անապիանին, Խարիպիանին, *և դստերն՝* Անապխանին, Շարխաթունին, Մարդային *և ամենայն ազգատոհմին...։*

Դարձեալ յիշեցէք զաշխատաւորն Յոհան *և կողակիցն՝* Նանան *և զամենայն մերձաւորս։*

317
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՄՅԶԵՊ, VI, № 1933

Գրիչ՝ Աստուածատուր դպիր
Վայր՝ Թովրասկան

ա

453 *Զբստացող Աստուածաշունչ սբ. մատենիս զհեզահոգի* Յեռևանցի Զօնրապն *և զհայրն իւր՝* զԽօնազատէն, *և զմայրն իւր՝* Ուղուրսօլթանն, *և զկենակիցն՝ իւր՝* Ուլուխաթունն, *և զմիւս կողակիցն՝* զՀոխիսիմէն, *և որդիքն իւր՝* զԽաչիանն, *և* զՆիկողայոսն, *և զհանգուցեալն առ Քրիստոս* Մուրախանն, *և զեղբարքն իւր՝ զտէր* Պետրոսն, *և* զՀուրմուզն, *և զքուերքն իւր՝* զՆազլուխանն, *և* զՄասումփաշէն. *նաև զանիմաստ բազմամեղ գծողս՝* Աստուածատուր *դպիրս, ով հայրք և եղբարք...։*

բ

Դարձեալ յիշէք յաղօթքս ձեր արժանական,
Զօնրապն *և* Նիկոզոս *որդի նորա այր հեզական,*
461 *Որդիք սորա դեռաբուսիկ վարդի նման,*

Նորաբողբոջ քան զբլպուլն քաղցրաձայն,
ԶՕհրապն և զՂուպաքն, որք են փոքրիկ եղբայրական,
Իբր զծիծառ սոքա կարդան համեղական,
Զոր տէր Աստուած բարի կենօք պահէ զսոսայ յերկարական,
Խոր ծերութեամբ յերկար ամօք յաջողութեան։

Գ

457 ...[14]։
Եւ որ յիշէ զիս զնուաստս և անպիտան
Տէր Աստուածատուր սբ. մատենիս գրծողական,
Նաև նոյն ինքն յիշեալ ՝լինի օրն ահեղեան,
Յորժամ նստի Քրիստոս աթոռ դատողական։
Աւարտ եղև Աստուածաշունչս այս տիրական,
Հին և Նոր Կտակարանքըն լիական,
Թուականիս Հայոց մեծաց և արեթեան,
ՌՂԴ (1645) աւելի յարաբարդեան։
Ի յերկիրըս այլազգաց պարսկական,
Ի քաղաքըս Ասպահան, Շօշ կոչական,
Ի դեղս Պարսից բառովըն Թովրասկան,
Ի դուռըն Ա. Աստուածածնիս կատարեցան։
Հայրապետին մերոյ ազգիս արեթական,
Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն էջմիածնեան,
Խարազնազգեաց քաշ և արի ճրգնողական,
Զոր տէր Աստուած անփորձ պահէ և անսասան։
Հովուապետին մերոյ ազգիս պանդրխտական,
Տէր Խաչատուր եպիսկոպոսն արհիական,
Որ յետ ամաց մի անցելոյ եղև վախճան,
Յաւուր մեծի ուրբաթի ժամ խաչելութեան,
Զոր տէր Աստուած ընդ հայրապետսն առնէ դասական,
Ի սբ. խորանսըն լուսեղէն պայծառական։
Թագաւորին ազգին, որ է պարսկական,
Մանուկ տիօք շահ Ապասն երկրորդական,
Պարոնութեան մերոյ ազգիս Առարատեան,
Զոր պանդրխտեալ կեամք ի քաղաքս Ասպահան։
Պարոն Յակոբրն հանճարեղ ճարտարական,
Որ հանապազ միշտ աշխատի սա անխափան,
Ըստ երախտեացն վարձըս առցէ օրն ահեղեան,
Արժան լիցի լըսել ձայնին երանական,
Հանդերձ ծնօղօք և եղբարցըն հարազատեան,
Որդոցն և դստերացն ամենեսեան։
<Ի> [Տ]էրն ողորմի իւր գալըստեանն դատաստան,
Արժան առնէ զամենեսեան արքայութեան,
Խընդիր եղեալ սբ. մատենիս այս պատուական,

[14] Ղազար Բարեբեացու չափածոն է. այն տե՛ս 1619 թ. շարքում. սույն ժողովածուի Ա հատորում, № 919ր, էջ 677—678։

Աստուածաշունչ սբ. անուամբ վերկոչական,
Որ հրաման է և պատուիրան արարչական,
է արեգակ և լուսատու հոգոց մարդկան,
Օրհնեալ է Տէրն ամենայնի արարչական,
458 Զոր պարգևեաց սբ. մանանայս հոգիական,
Որպէս ասէ Աւետարանն աստուածական։
Գրտող գանձին ագարակի վաճառական,
Հետևեցաւ պատուիրանին քրիստոսական.
Անուամբ Զօհրապն յԵրևանցի քաղաքական,
Ըստացաւ զսա գանձ հոգևոր անսպառական,
Եւ յիշատակ հոգւոյ իւրոյ անանցական։
Ծաղկեալ ոսկով իբր ըզվարդ փթթական,
Երանգ երանգ, գոյնզգոյնիւք զարգաբական,
Իբրև զդրախտ պտղով լրցեալ վայելչական,
Եւ բուրաստան անուշահոտ հոգոց մարդկան։

Ծաղկող՝ Հայրապետ դպիր

Դ

454 Զմեղաւոր Հայրապետ դպիրս յիշեցէք որ զսա նկարեցի։

Ե

Ի թուականիս Ռ յիսնի,
Երկ քսանի և միոյ թուի (1642),
Ես՝ Հայրապետս մեղաց գերի,
Որ ցնորեալ կամ յաշխարհի։
Դառն կենօք երերալի,
Հոդիս է սեաւ ի մէջ մարմնի,
ԶԱստուածաշունչս ծաղկեցի,
Մատամբ իմով մեղսամածի։
Երանգ երանգ զարդարեցի,
Որպէս զդրախտ վայելչալի,
Եւ կամ զայգի պտղով ի լի,
Լուսափթիթ տերև ունի։
Պտուղ բերէ անծորելի,
...։

Զ

460 Եւս առաւել զձեզ աղաչեմ,
Եւ արտասուօք եղբարցդ մաղթեմ,
Ի ծունկս անկեալ զոտսդ համբուրեմ,
Եւ խոնարհեալ երկիրպագեմ,
Ցիշել ի սբ. յաղօթքս ձեր։
Զիս զնուաստս և զծնողս մեր,
ԶՀայրապետքս նըկարող,
Հոգւոյն շնորհօք եղէ կարող։
Զոր ծաղկեցի աշխատանօք,

Եւ ջերմեռանդ փափագանօք,
Ոսկի լաճվարդ և այլ գունօք,
Զարդարեցի իմոյս ձեռօք։
Որ ոք ասէ ինձ ողորմի...։

Ստացող՝ Զօհրապ Երևանցի

Է

455 Զօրաւոր է բանք Սաղմոսիս,
Օր ըստ օրէ ցնծայ հոգիս,
Հոգիս ցանկայ այս մատենիս,
Բաբունուն բանքն է Դաւթիս։
Ապա ես ինչ լինիմ դերիս,
Պարտական եմ բիւր քանքարիս[15],
Ես եմ մեղօք լցեալ դերիս,
Միտքս ցնորեր է աշխարհիս։
Յիշեցէք դուք ընդ Տեառն և զիս,
Եւ դուք լինիք խնդման որդիս,
Վայ իմ անձինն է Զօհրապիս,
Որ եմ իբրև զորդ մէջ աշխարհիս։
Սարսեալ ահիւ դողայ մարմինս,
Յեարապ ինչ լինիմ գերիս,
Զձեզ աղաչեմ ես եղկելիս,
Զիս յիշեցէք օր տէրունիս։
Եւ ընդ իմոյս և զիմ որդիքս,
Յիսախանիս և կրտսերոյն Նիկողայոսիս,
Զի և դուք արժան լինիք յիշման. ամէն։

Ը

458 Արդ՝ ես Զօհրապ Յերևանցիս նժդեհական,
Ստացա ըզսա գանձ հոգևոր անապական,
Որք հանդիպիք օգտիք ի սմանէ ամենեքեան,
Արժան առնէք ըզմեղաւորս յիշողական։
Նախնեաց մերոց և ազգայնոցն ամենեսեան,
Տուք ողորմի սրտիւ ձերով յօժարական,
Նախ ըզՂուպաթն, որ է նախնին յառաջական,
Եւ կենակցոյն անուն գրեալ ի դպրութեան։
Սորա որդիքն են պապ Զօհրապն և Ալէքսան,
Եւ Թադումաշ անուն կոչի դստեր նորայն։
Արդ՝ յիշեցէք զԹադէոսն այր պատուական,
Եւ զկենակից Դօլվաթ խանումն համանման,
Որդի նորա Աւետիսն այր հեզական,
Յանձին կալեալ ըզլուծ Տեառնէն քաղցրական,
Հրաժարեալ ի զբաղմանց աշխարհական,
Փափաքանօք ուխտեալ զտեղիս տնօրինական։

15 Տողասկզբի տառերից հոդվում է «Զօհրապ»։

Եւ հարազատ քոյրք են սորա պարկեշտական,
Խանսոլթանն և Գուհարշատն համեստական,
Ապա զպապն իմ, որ է Զօհրապ անուանական,
Եւ հանիկն իմ՝ Մասումփաշէն համեղական։
Որդիք նորա երեք եղբարք հարազատեան,
Խօնազատէն, Թադէոսն և երրորդն Ղուպաթ կոչման,
Որ կին երկրորդ՝ պապ Զօհրասպին որ վերջական,
Սապանմէլիքն ընդ առաջնոյն յիշել արժան։
Եւ քոյր սորա Բէկիխաթունն համեստական,
Որդի սորա Առաքելն հանդուցական,
Ղուպաթ եղբայր Թադէոսին որ յիշեցան,
Եւ Խոնդաղէն հարկեւոր կենակցական։
Են և սորա երկու որդիք ծնընդական,
Յովանէսն և Յակոբջանն եղբայրական,
Եւ ըզծնօղսն իմ արժան լինին յիշողական,
Խօնազատէն, զՈղուրսօլթանն հանդուցական։
Եղբայրն իմ՝ զտէր Պետրոսն, որ առ Քրիստոս հանդուցական,
Եւ կենակից էր նորա Օղլանփաշայն,
Որդիք նորա Միքայէլն, Գաբրիէլն և Ալէքսանն,
Ղըզլարիանի, Պարոնխաթուն դստերք նորայն։
Եւ միւս եղբայր Հուրմուզ անուն վաճառականն,
189 Եւ կենակից սորա Բէկի անուանական,
Եւ Գրիգոր որդի նորա բողբոջական,
Եւ դստերն, որ է անուն Ուղուրսօլթան։
Եւ երկոքին քեռցըն իմոց հարազատեան,
Նազլուխանն և երկրորդըն Մասումփաշայն,
Ապա Զօհրապն և կենակից Ուլուխաթունն յառաջական,
Եւ զմիւս կենակից Հռիփսիմէն որ վերջական։
Որդիք նորա Իսախանն և զՆիկողայոսն եղբայրական,
Զոր տէր Աստուած պահէ զսոսա անփորձական,
Եւ միւս որդին Մուրատխանն հանկուցական,
Որ փոխեցաւ յանցաւորէս յան[ան]ցականն։
Եւ կենակից Իսախանին, որ է Սալամն,
է խոնարհ և հարկեւոր համեստական,
Նորաբողբոջ որդիք սորա տղայական,
Յարութիւնն, Խօնազատէն արուական։
Ապա Նիկողայոսն, որ է սորայ եղբայրական,
Եւ կենակիցըն՝ Խամբէկին խոնարհական,
Եւ դեռաբոյս որդիք սորա նախ Մուրատխանն,
Եւ զԹադէոսն որպէս զշուշան պայծառական։
Նաև զդուստր Իսախանին համեստական,
Եփրոսինէն որպէս նոր այդի վայելչական,
Որդի սորա Աստուածատուրն դեղեցկական,
Ի յերկնային աշէն լինի պահպանական։

. . . . .

Են քահանայք Ամենափրկչիս որ Ասպահան,
Են բանիբուն և իմաստուն ամենեքեան,
Որք սաղմոսիւք և աւրհնութեամբն կան ի պաշտման,
Եւ հանապազ տիւ և գիշեր առ Տէր կարդան։
Նախ զտէր Կարապետն առաքինի խոհեմական,
Որ յորդորող պատճառ եղև սմա կատարման,
Արժան լինի արքայութեանն հանգըստական,
Հանդերձ ծնողօք ազգականօքն ամենեսեան։
Երկրորդն զտէր Բուրսեղն ճարտարաբան,
Արժան եղև գերեզմանին լուսոյ համբուրական։
Երրորդն զտէր Մուքայէլն այր ծերական,
Ի երրորդ անգամ յԵրուսաղէմ ընթացական։
Չորրորդն զտէր Յովանէսըն քաղցրաձայն,
Քաղցրաձայնիւ երգէ զերդըս տէրունական։
Հինգերորդն զտէր Սարգիսն պարզմտական,
Որ հանապազ կա սաղմոսին դէմ յանդիման։
Վեցերորդն զտէր Սահակն եղբայրական,
Որ խոնարհի ընդ այլ եղբարցն ի ծառայութեան։
Եւթներորդն զտէր Պետրոսն մտերմական,
Զոր տէր Աստուած տացէ նմա բարս խաղաղական։
Ութերորդն զտէր Պողոսըն մանկական,
Մի վերշացի ընդ այլ եղբարցն որ ասացան,
Զոր տէր Աստուած պահէ զսոսա անփորձական,
Յերկար ամօք բարի վարուք հաճոյական։

* * * * *

Արդ՝ աղաչեմ զհանդիպողքդ վեհական,
Որք ընթեռնուք զյիշատակ մերոյս զարմեան,
Եւ ընդ սոցա յիշման առնէք արժան,
Զխոճա Բուլուքն և կենակից խաթուն Գուլբեանն,
Որ են սոքա երախտաւոր աշխատական,
Ինձ Զօնրուպիս նուաստանուն անպիտական,
Եւ ընդ նոսա յիշեալ լինին որդիք նորայն,
Ուլուխանն մահդասի պարկեշտական։
Եւ Գրիգոր եղբայր սորա կրտսերական,
Յիշել ի սբ. յաղօթս ձեր մաքրողական,
Որ է որդի Ուլուխանին զՅակոբջանն,
Զոր տէր Աստուած անփորձ պահէ և անսասան։
Դարձեալ յիշէք յաղօթս ձեր արժանական,
Զքոյրըն իմ՝ Մասումփաշայ անուանական,
Կենակից նորա՝ խոճա Դաւուան այր պատուական,
Որ է եղբայր Յակոբջանին պարոնական։
Եւ դստերացն, որ է նոցա զաւակական,
Խաթունջանն, Խաթային և զՅաննայն,
Ի յաշխարհի պահեալ լինին պարկեշտական,
Եւ ընդ կուսանսըն դասեսցին իմաստնական։

318

ՄԱՇՏՈՑ

ՄՏՍԵՊ, VIII, № 2442

Գրիչ, ծաղկող՝ Սէք դպիր
Վայր՝ Բաբերդ

ա

94 Զնկարող պատկերիս ե ծաղկիս, զանարժան Սէքս, աղաչեմ զձեզ, յիշել ի Տէր։

բ

Յիշեա զեղկելի գրչակ զգլխակոր Սէքս։

գ

Փառք...։ Որոյ շնորհիւ և ողորմութեամբն սկսեալ և ի յանգ հանեալ աւարտեցաւ սբ. տառս և ծաղկաւէտ բուրաստանս...։

Եւ ես յոգնամեղ փրծուն գրչակս գրեցի զսայ ըստ իմում չափոյ և կարողութեան շնորհիւն Աստուծոյ։ Յաղագս ի բազում յօրինակէ զի ոչ կար ուրուք լաւ յօրինակ մի։ Ապա առաջին յօրինակն լաւ էր, որ գրեցաք մինչև ի խաչաւրհնէնքն։ Այնուհետև յաղագս չար նախանձու առան զօրինակս ի ձեռացս և այլ ոչ ետուն, եւ նուաստ քարտուղարս, գասեղան[16] դիպելով, ի բաժում յօրինակէ մին մին բան առնելով, յաւարտեցի զսա, ողորմութեամբն Աստուծոյ։

Եւ յոյժ վշտացեալ եմ, զի բազում է գանգատս վասն յօրինակացս, որ մինն ի մին ոչ նմանէր, զի այնու եղև բան գրոցս յետ և առաջ և շալակով, և ոչ նմանի իւր ցանկին։ Ապա հայցեմք Աստուծոյ ըստ մեր անարժանութեամբս և զօրութեամբ սբ. գրոցս և արժանաւորութեամբ ձեր եղբարք, զի ով ոք նախանձ կառնէ այս սբ. գրոցս և արհեստիցս, և յօրինակ ոչ կու տայ, նա Աստուած զինքն ընդ մէջ կտրեսցէ և ընդ բաժին նորա ընդ անհաւատս դիցէ. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ Մաշտոցս ի թվաբերութեանս Հայոց ՌՂԴ (1645), ի գաւառս Խաղդեաց, որ այժմուս կոչի Բաբերդ, առ դրան Ս. Աստուածածնին, որ է միջի եկեղեցին քաղաքիս, ձեռամբ մեղսասէր և անպիտան, փծուն գրիչ Սէք դպրիս, որ լոկ անունս ունիմ և ի գործոց բարեաց դատարկացեալ և հեռացեալ եմ ամենևին։

Արդ՝ երեսս ի գետնի դնելով, մոխրամած դիմօք և արտասուաթոր աչօք, խնդրեմ և հայցեմ ի ձէնջ, ով սբ. լուսերամք և ընթերձաւղք սբ. տառիս, որք հանդիպ[իք] սմա կարդալով, յօրինակելով կամ այլ իւիք
95 զանց առնելով նա, յայնժամ յիշեսջիք զմե//ղօք խոցոտեալ և հոգով տկարեալ զանարժան գրչակս և զծնողս իմ, և զուսուցիչս, և ամենայն արեան մերձաւորքս իմ, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք...։

Դարձեալ աղաչեմ զձեզ անմեղադիր լերուք խոշորութեան գրիս և սղալան[ա]ցս, զի չափ կարեաց իմոց այս էր։

---

16 Իմա. «գդեա և դէն»։

319
ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅԶԵՍ, I, № 9. տե՛ս նաև «Անահիտ», 1946 թ., № 2, էջ 25

Գրիչ՝ Մարգար դպիր
Վայր՝ Ջուղայ

14 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս Յովհաննու ի թվականիս Հայոց ՌՂԴ (1645) ի գրչիս ձեռամբն դպիր* Մարգարի, *ի գեօղն* Ջուղայ, *ի խնդրոյ հաւատարիմ քրիստոնեայ* Աղէ, *որ է որդի մելիք* Աղէ, *որ ստացաւ զսայ, վասն վայելումն հաւատոյ և ուղղափառութեան իւրոյ, ուսանիլ ի սմանէ բան ճշմարտութեան. որով տէր Աստուած անփորձ պահեսցէ զինքն և անսասան յաւիտենից. ամէն։*

Դարձեալ յիշատակ է սբ. Աւետարանս ստացող գրոյս պարոն աղա Խաչիկին, *և ծնողաց իւրոյ մելիք աղէ* Նաշխունին, *և եղբարցն իւրոյ՝* Միքայէլին, Սինանին, Բաղումին, Մելիքնիազին, *և քվերն՝* Սօլթանպաշին. *ամէն։*

Դարձեալ յիշատակ է ստացողի սորին Խաչիկ *աղա անորդի, և կողակիցն իւրոյ՝* Մարիամին, *և որդւոցն սոցա՝* Մելիքին, Պետրոսին, Իսրայէլին, Թեւումին, *և դուստր* Նաշխունին, *աստէն և ի հանդերձելումն. ամէն։*

320
ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՔ, № 93 (1584 թ.)

133 *Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեց[էք]* Ագամաքն, *և զդուստրն իւր՝* Լէլիխանն, *և որդիքն՝* Երվալին /// *թվին ՌՂԴ (1645)։ Դարձեալ [յիշեցէք]* Աղայմաքն, *կողակիցն իւր՝* Իրիջան, Ուղիղէն, Նանուշան։

321
ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՔ, № 122

Նվիրատու՝ Մարիամի հայրը
Վայր՝ Քիլիս

ա

171 *Փառք...։ Արդ՝ այսմ աստուածային պատմութեանս ցանկացող եղեալ աստուածասէր և բարեհոգի դուստրն իմ՝* Մարիամն, *որ ստացաւ զսայ իւր հոգւոցն յիշատակ։ Եւ ինքն ի սոյն ամի ևս գեռ չէր աւարտեալ փոխեցաւ ի Քրիստոս, ի թուին Հայոց ՌՂԴ (1645)։ Եւ յետ իւր փոխելոյն, Աստուծոյ կարողութեամբն, սակաւ ինչ ժամանակի խալիսեցաք և ուխտեցաք, որ տանենք ի Արայու*[17] *եկեղեցին, ի դուռն Ս. Յակոբին անջինջ յիշատակ։*

[17] Ինչպես նշվում է, ցուցակում նախապես եղել է «Մարաշուս», հետո շնչել են «Մ» և «շշ» տառերը։

Բ

Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս այս և զարդարեցաւ ծաղկաւք, և գլխագրաւք, և բարէշուք կաղմօք ձեռամբ Մելքոն իրիցու, ի գեղաքաղաքն ի Քիլիս, ի գուռն Ս. Յովանէս եկեղեցւոյն, ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն Սիմէօնին, և ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Իսլրահիմին, ե ի մեզ թագաւորելոյ Քրիստոսի Աստուծոյն մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Արդ՝ հրամանաւ մերով գրեցաւ աւրհնութիւն այնոցիկ, որք խնամք տարցեն սբ. Աւետարանիս, և այլ սպասուց եկեղեցւոյս, և որք յափշտակեն կամ գողանան կամ խորեն կամ գրաւ դնեն կամ այլ ինչ իրաւք վնաս բերեն, կամ հանեն եկեղեցւոյն նա՝ հանցէ զնոսա Քրիստոս յարքայութենէ իւրմէ...։

322
ՄԱՇՏՈՑ

Մաղնիսա, № 1

Գրիչ՝ Սահակ երէց
Վայր՝ Բաղէշ

Ա

131 *Փառք...։ Արդ՝ և ես անարդս, հողս և մոխիրս, անարժանս և անիմաստս..., և ամենայն բարութեանց ծոյլ կացեալ* Սահակ *մեղսասէրս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի, ըզտառս աստուածայարմար, զքնարս աստուածաշունչ, և զյաւգնապտուղ դիրս, որ է կոչեցեալ Մաշթոց։ Հաւաքեալ տիեզերալոյս վարժապետին և հոգիընկալ առն Աստուծոյ* Մաշթոց *վարդապետի։ Որ սովաւ կատարեն է (7) խորհուրդ եկեղեցւոյ և ամենայն կարգ և սահման քրիստոնէական։ Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց Ռ և ՂԴ (1645), ի քաղաքս որ կոչի* Բաղէշ, *ընդ հովանեաւ Ս. Հինգ խորանին, Ս. Աստուածածնին, և Ս. Խաչին, Ս. Պետրոսին և Պողոսին, և Ս. Սարգիս զօրավարին, ձեռամբ սուտանուն* Սահակ *երիցու...։ Աղաչեմ ղձեղ, ո՛վ սբ. ընթերցողք, յիշման արժանի առնէք ղիս և զծնաւղսն իմ՝* զՄկրտիչ *քահանայն և* զՇահումաղէն, *և ձեզ և մեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած յիւր միւսանգամ գալստեանն. ամէն։*

Բ

Բ (2) գանձ կայ գրեալ մեռելի, զորն որ կամիս ասա, ո՛վ տերտէր, թէ ղարիպ է զայս ասա, և թէ չէ՝ շուրջ տուր զմիւս թղթերն, այլ տաղ կայ դրեալ՝ ասա։

Գ

Բ (2) գանձ կայ մեռելի և Դ (4) տաղ, զորն կամիս ասայ, և զանպիտան գրիչս յիշեա ի Տէր։

Դ

130 Բ (2) դանձ եմ դրել մեռելի, զորն կասկս ասա, թէ զայն և թէ զայս, դուք դիտէք, եղանակեցէք և զանպիտան գրիչս զսուտանուն Սանակս յիշեցէք ի Տէր։

323
ԱԻԵՏԱՐԱՆ

Զմիւռնիա, № 5 (1588 թ.)

142 Դարձեալ յիշեցէք զպահող և զստացող սբ. Աւետարանիս, զտէր Մարտիրոս քահանայն, և զորդին իւր՝ զտէր Ազարիա քահանայն, և զկողակիցն իւր՝ զՄարթայն, և զամենայն արեան մերձաւորս իւրեանց զկենդանիս և զհանգուցեալս, զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Ի թվին ՌՂԴ (1645)[18]։...

324
ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրմար, № 76 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Դանիէլ աբեղայ

71 Եւ արդ՝ վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՂԴ (1645), ի սբ. ուխտիս, որ կոչի ԲԺ (12)-ան Առաքեալս, ի թեն (sic) Մշու, որ ասի վանք Ղազարոյ։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով [կամ] տեսանելով, յիշեսջիք ի սբ. յաղաւթս ձեր զՅովհաննէս վարդապետն, որ կամակից եղև նորոգելուն։ Աղաչեմ և աղերսեմ, յիշել ի Տէր զսուտանուն Դան[ի]էլ աբեղայս և ծնաւղսն իմ՝ զՍօսրն և զԳուլան, և զամենայն արեանառու մերձաւորն իմ և Աստուած ողորմի ասէք մեզի և Աստուած ձեզ ողորմի. ամէն։ Վայ ինձ Ռ (1000) բերան, որ սայ ԲՃՁԸ (288) ամ վճարեր է, Ճ (100) տարի դարան կտցէր, քան զկէսն աւելի գիրն էր եղծեր էր։

325
ՏԱՂԱՐԱՆ

Վիեննա, № 537 (Մանրաժապավէն, Երևան, № 698)
տե՛ս նաև ՏՅՁՄՎ, № 537, էջ 1009

1բ Այս տաղարանս ես Նուսնուսեցի Մկրտիչիյ որդիյ փոքրիգ Պետրոս գրեցիյ և թէ օվ օր գարգայ՝ ասէ Աստուած ողորմի էդ գծողիյ հոգոյն ՌՂԴ (1645)։

---

[18] Տպված է ՌՂԴ (1655)։

326

ԱԻԵՏԱՐԱՆ

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 127

Նորոգող՝ Կասպար երէց

Ցիշեցէք ի Քրիստոս... Մարգարին, *կողակցին՝* Տիպարին, *հաւրն՝* Գինէվանին, *մաւրն՝* Վարդցաւլին, *եղբաւրն՝* Վարդուրաիին, Մելտոնին, Վարդպաւկին, *քուրոջն՝* Փոfրիկին, Դովլաղին, *որ փոխեալ են առ Քրիստոս. հնոց և նորոց, և ամենայն արեան մերձաւորաց, և որ զԱստուած ողորմին ասէ. ամէն։ Ո՛վ հանգիպիք սմա կարդալով կամ աւրինակելով՝ Աստուած ողորմի ասացէք, յիշատակ դնողաց, որ յիշատակ եղիր ի ձեռն* Կասպար *երիցուն։ Ցիշեցէք ի Քրիստոս... տէր* Կասպարին, *որ նորոգեց աստուածախաւս սբ. Աւետարանս, Բ (2) Շարակնոցս, մէկ Մաշտոցս, մէկ Սաղմոսարանս, Տաւնացոյցս. յիշատակ է մեր տանս։ Թվիս Հայոց ՌՂԴ (1645)։*

327

ՃԱՇՈՑ

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 328—329

Գրիչ՝ Խասպէկ

Վայր՝ Կաֆայ

Զի առաւել քան զճառագայթս արեգական... այրս Աստուծոյ, այսինքն խոճայ Մինասն *ցանկացեալ լուսափայլութեան սորա. լաւ համարելով զսա քան զբոլոր մեծութիւն աշխարհիս։ Ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, յիշատակ մշտնջենաւոր, և արձան յաւիտենական աղգաց յազգս։ Եւ այս ոչ յոլովից է նախապատուելի, այլ որոց մտացն աչք պայծառակերպ լուսով հոգւոյն են վայելչացեալք։ Եւ ոչ այսու միայն բաւական համարեցաւ զփրկութիւն հոգւոյ իւրոյ, և իւրոցն ամենայնի։ Այլ միւս ևս խորհուրդ բարի առեալ ի մտի գնալ յԵրուսաղէմ, և երկիր պագանել սբ. տնաւրինականացն Քրիստոսի, զոր տէր Աստուած առաջնորդեսցէ և հասուցանէ իւր յըղձանացն։ Եւ մինչև էր կատարեալ տառս աստուածապատում, որ կոչի Տարայգիրք, փոխեցաւ առ Աստուած իւր հարազատ դուստրն՝* Հեղինէն, *և եթող մեծ տրտմութիւն ծնաւղացն իւրոց։ Եւ յետոյ մեռաւ և Գալուստն, և եղև կսկիծն և տրտմութիւն ծընաւղացն երկրորդ։ Արդ՝ որք հանդիպիք այսմ փառազարդ կտակիս, ո՛վ աստուածապատիւ դասք քահանայից և քրիստոսասէր ժողովուրդք, յիշեսջիք ի Քրիստոս զարժանին յիշատակի սրբութեամբ սնեալն զխոճայ* Մինասն, *որ պայծառացոյց զեկեղեցի Աստուծոյ, սովաւ որ ունի բովանդակեալ յինքեան զերեք հարիւր և զվաթսուն և չորս աւուր ընթերցմունս խորհրդաբար եղեալ ըստ պատշաճի...։*

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս ո՛վ եկեղեցական դասք և ամենայն հաւատացեալք, յարժանաւոր և ընդունակ աղաւթս ձեզ զստացաւղ Ճաշոց գրոցս զխոճայ Մինասն *և կենակիցն իւր՝* զԽանգատայն, *և զծնաւղն*

իւր՝ զԱնդրէասն *և զմայրն իւր՝* Շէմի *խաթունն, և զեղբայրն՝ զմահդասի* Յովանէսն, *և զորդիքն իւր՝* զԳասպարն *և* զԳալուստն, *և զդստերքն իւր՝* զԱլթընպիքայն *և* զՀեղինէն՝ *զփոխեալն առ Աստուած։...*

Կատարեցաւ տառս ի թվականիս Հայոց հազար և ՂԴ (1645)[19], *ի մայրաքաղաքս* Լաֆայ, *առ ոտս սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպպոս *կաթուղիկոսի, և յառաջնորդութեան այսմ նահանգի տէր* Խաչատուր *արքեպիսկոպոսի։*

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զթղթիս կոկոզն և աշխատողն բազում ջանիւք, հուսկ յետոյ և զմեղաւոր հողս և զզառածեալս մե //)

328

ԱՒԵՏԱՐԱՆ

Միքայելյան, «Էջմիածին», 1950 թ., Ե—Զ, № 9

Դրիչ՝ Խաչատուր քահանայ

Վայր՝ Արտաւել

ա

87 *Փառք... որ արժանի արար զնեխեալ մեղաւք և զանարհեստ և զանարժան* Խաչատուր *գրիչ սուտանուն քահանայ, հասանել ի վերջին գիրս սբ. Աւետարանիս, ի թուականութեան հայկազեան տումարիս ՌՂԴ (1645), ի քաղաքն* Արտաւել։ *Արդ՝ երես անկեալ աղաչեմ զրնթերնողքս սբ. Աւետարանիս և զհանդիպողքս, յիշել ի մաքրափայլ յաղաւթս զիս՝ զանարժան գրիչս և զծնաւղսն իմ, զի բազում աշխատութեամբ և ջանիւ գծագրեցի սբ. Աւետարանս...*

բ

Զսակաւ ծրող սբ. Աւետարանիս զԽաչատուր *սուտանուն յիշեցէք ի Քրիստոս։*

գ

88 *Զսակաւ ծրող սբ. Աւետարանիս* զԽաչատուր *սուտանուն յիշեցէք ի և զծնողս իմ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի առ հասարակ. ամէն։*

329

ԱՒԵՏԱՐԱՆ

ՋՁՎԼ, № 137 (1409 թ.)

Կազմող տէր Յոհանէս

Վայր՝ Նոնենից վանք

ա

295 *Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զամենեսեան զդասս լուսերամ քահանայիցդ, որք հանդիպիք սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ աւրի-*

[19] Ղ. Փիրղալեմյանի մոտ № 6273, էջ 570 պահվել է. «ձեռամբ Խասպէկ դպրի, ի խնդրոյ խոջայ Մինասայ»։

նակ դնելով և կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին նորոգել տրող սբ. Աւետարանիս զտէր Կարապետն *և զեղբայրն իւր՝ զՅովհաննէս, զՄարտիրոս, և ծնաւղս իւրեանց, հօրն՝* Աւետիսին *և մաւրն՝* Թուրվանդին, *և տէր* Կարապետի *կողակից* Մարիամին *և իւր ծնաւղացն, մաւրն՝* Մրաւթին *և հաւրն՝* Առաքելին, *եղբաւրն՝* Շաղաւաթ, Վարդհաթունին, *և իւր դստերն և քրոջն՝* Շահումին, Նարընջին, Պետրոսին *և* Գրզալին, *և* Յոհաննիսի *կողակցին՝* Հաթունաղին, *և մաւրն՝* // Թաւրէզին. *և տէր* Կարապետի *որդոցն՝ տէր* Գրիգորին, *և իւր կողակցին՝* Գոհարին *և դստերացն՝* Գոզալին *և* Թուրվանդին. Աւետիսին *և իւր կողակցին՝* Ներգզին, Պետրոսին *և* Պարսամին, *և տէր* Կարապետի *դըստերացն՝* Ներգզին, Հանումին *և* Շահումին: *Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք տէր* Կարապետի *որդոյն՝* Աւետիսին *և իւր կողակցեայցն՝* Ներգզին *և* Հրաթին. *ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զՀերապետ, զեղբայրն՝ զՍահակ և զՎարդան, և զծնողսն իւր՝ զՌափայէլ, և զկողակիցն իւր՝ զԳուլումն և զԸոիհան, և զորդիքն իւր՝ զՎարդան և զԱռաքէլ և զՆերսէս, և զքեռն իւր՝* Սալչուկին, *և որդոյն՝* Յակոբին, *և միւս քրոջն՝* Թանգաւին *և* Ազրգին *և* Գաւզալին: *Դարձեալ աղաչեմ զձեզ, որք յանդիպիք սմայ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զկազմող սբ. Աւետարանիս՝ զտէր* Յոհաննէսն *և զծնաւգն իմ՝ զՅովսէփ և զԹանգան, և զեղբայրն իմ՝ զՀայրապետն. ամէն...։*

Արդ՝ կազմեցաւ սա ի յերկիրն Մոկաց, *ի վանքն* Նոնենից, *ի որ. ուխտն Ս. Վարդան, ի թվականիս Հայոց ՌՂԴ (1645)։*

Բ

295 *Դարձեալ Աստուած ողորմի* Զատկին *և իւր որդոցն՝* Մուրատին, Գուլանին, Աստուրին, *ևս առաւել* Զատկին *հաւրն՝* Վարդանին, *մաւրն՝* Եղիսին, *որ* Տապկոան *ու* Ծածկոտն *դեղին ոխվ արար։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Սահակն, *զ*Յուսէփն, *և զ*Քաֆար՝ *կողակից իւր. ամէն։*

330

ՄԱՇՏՈՑ

ՏՅԶԿՄՎ, № 14. տե՛ս նաև № 9027, էջ 75 բ. «ՀԱ», 1891 թ., էջ 73

Գրիչ՝ Մարութա Ամասիացի

Վայր՝ Զամոսցա

2[illegible] *Փառք...։ Արդ՝ գրեցաւ խորհրդատետրս յաշխարհն Լեհա, ի քաղաքն* Զամոսցա, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի վայելումն տէր* Յովհաննէս *նորընծա քահանային. Աստուած վայելել տացէ նմա ընդ երկայն աւուրս. ամէն։ Բայց գրեցաւ սա թվին ՌՂԴ (1645), ձեռամբ անարժան և անարհեստ գրչիս,* Ամասիացի *մեղսամած* Մարութա *դպրի. որ եռու յիշատակ բարի ինձ և ծնողացս, հօր իմոյ մահտեսի* Ալիքսանոսին *և մօրս* Մարիամին: *Աղաչեմ զհանդիպողս սորա, յիշել զանարժան գրիչս ի մաքրափայլ յաղօթս ձեր. ամէն։ Անմեղադիր լերուք սղալանացս, զի կար մեր այսչափ էր։*

331
ՅԱՅՄԱԻՈՒՐՔ

Թորոս աղբար, Բ, էջ 356

Վայր՝ Բիւզանդիա

...Գրեցաւ ի Բիւզանդիա ի մահալէն Սուլու մանաստրու, ի թուականութեան Հայոց ՌՂԴ (1645), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Իպրահիմին և ի պատրիարքութեան Զ (6) եկեղեցեաց իշխանաց...[20]։

332
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հա. Բ, № 538, էջ 441

Վայր՝ Եազլովցա

Գրեցաւ սա ի մայրաքաղաքն Եազլովցա, *ընդ հովանեաւ Հաճկատար Ս. Աստուածածնին, ի թուականութեանս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպոսի... *և յառաջնորդութեանն տէր* Անդրէաս *արքեպիսկոպոսին ի* Եազլովցա *քաղաքին, և թագաւորութեանն Լեհաց աշխարհին չորրորդ* Վլատիսլաւին... *ընդ հովանեաւ նորաշէն Հաճկատար Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին... և վոյթութեան բան* Պաղտասարին *և երկոտասան դատաւորացն։*

---

[20] *Գրեալ ի Կ. Պոլիս, ի Ս. Սարգիս, թվին ՌՂԴ (1645), ձեռամբ Ղազարոս գրչի, յիշատակ Գէորգ արքեպիսկոպոսի՝ դիտի նոյն վանից։*

333
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅԶԵՊ, IV, № 1335 (ԺԹ դ.)

Կազմող՝ Մարտիրոս երէց

603 Զկրկին վերջին կազմողս Մարտիրոս երէ[ց]ս ի ձեր ծառա. թվին ՌՂԵ (1646) յունուվար Ա (1)։

334
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7050

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Կամենից

ա

26ա Փառք քեզ կիոնիքոզ՝ արեգսագոյն կիսազընտի և Դեմետրի արարիչ։ Արդ՝ գրեցաւ պատմութիւնս թվին ՌՂԵ (1646), մարտ ամսոյս Դ (4), օրն երեքշաբթի, ձեռամբ Խաչատուր իրիցուս, որդոյ խոճա Մերիկիս, և զախմար գրիչս մի՛ մոռանայք. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

բ

37բ Գրեցաւ Թագաւորին դստերն պատմութիւն ձեռամբ Կամինցի Խաչատուր իրիցուս, ի քաղաքն Կամենից, թվին Հայոց ՌՂԵ (1646), մարտ ԺԵ (15)։ Յորժամ որ կարդայք, ինձ անարժանիս ասէք թէ՝ Աստուած ողորմի։

գ

48ա Ահա քեզ կարճ մեկնից, ո՛վ իմաստուն, լաւ ուսիք և զախմար գրիչս զԽաչատուր էրէցս մի՛ մոռանայք. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

335
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8970

Գրիչ՝ Յակոբ երէց

ա

135ա Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղ[ս]ամած փծուն գրչիս Յակոբ երէցոյս, որ զանունս ունիմք և գործս ոչ, յիշեցէք...։

---

[1] Այս բառի ենթադրական բացատրությունը տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 305, ծանոթագրություն 61։

Գրիչ՝ Թաքոս

Բ

371ա Աւրհնութիւն, գոհութիւն..., որ ետ կարողութիւն տկար և անիմաստ գրչի Թաքոս մեղապարտի հասանել յաւարտ աստուածաբան և հոգէնուագ մարգարտաշար տա[ռ]իս, որ կոչի Շարակնոց, ի դառն և ի նեղ
371բ ժամանակիս. զի այսմ // ամի ի մեծ ուրբաթի ի լոյս շաբաթ գիշերի, զի ամենեքեան ի յերեկոյին նստեալ ուրախութեամբ խօսէին զիրար, թէ վաղիւ Զատիկ[2] է և յարութիւն Քրիստոսի, և վասն մեղաց ի[մոց] ի մէջ գիշերին երկիր շարժեցաւ և շատ հոգիք, որ երեկոյին ննջեցին, այնպէս մնացին ի տան միջին։ Ով կարէ իմանալ զթիւ նոցին։

Եւ ի թուականիս մերում ՌՂԵ (1646) ամին։

336

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՏԶԵՊ, VI, № 1934, էջ 461—469

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Ասպահան

Ա

38ա Անեղանելիդ Աստուած որ արարեր զարարածս իմանալի և զգալի յոչընչէ գոյիւ և գթութեամբ, նոյն գթութեամբդ գթա ի հոգի ստացողի գրոցս խօճա Սաֆարին և ծնօղացն՝ Նազարին և Դշխոյէ, և եղբօրն՝ զԲաղտասարին, և կողակցին՝ Խանզատէ, և որդոյն՝ Ստեփանոսին, և դրստերացն և եղկելի գծողիս, և իմ վարպետին։

Բ

168ա Ընդ նմին և զգովելին, զերջանիկն, զառաքելաշնորհն զտէր Գրիգոր քահանայն, որ է ուղղիչ և առաջնորդ և սպասաւոր Աստուածաշունչ մատենիս, բերան մի ողորմայիւ զինքն յիշեցէք, և դուք յիշեալ [լիցիք]։

Գ

182ա Ընդ նմին և զտէր Գրիգոր քահանայն և չյիշելիս։

Դ

197ա Զստացող սբ. մատենիս զխօճա Սաֆար Ճուղայեցին, և զկողակիցն՝ Խանզատէն, և որդին՝ Ստեփանոսն աղաչեմ յիշել ի Տէր. ընդ նմին զերջանիկ ժիր մշակ, ջրաշան աղբիւր և քաղցրահամ պտուղ զտէր Գրիգոր քահանայն որ է միջնորդ և սպասաւոր Աստուածաշունչ տառիս և զովացուցիչ կորուսեալ գծողիս, աղաչեմ բերան մի ողորմայիւ յիշել զինքն. յիշողդ ի Քրիստոսէ յիշեալ լինի։

Զտառապեալ Ստեփանոս գծողս բերան մի ողորմայիւ՝ ողորմողն ողորմութիւն ի Քրիստոսէ գտցէ...։

Ե

198բ [Ա]ղաչեմ յիշել ի Տէր զձեռնասան եղբայրն իմ՝ զտէր Սարգիս քահանայն, որ է սպասաւոր սբ. մատենիս, և բազում անգամ անոյշ կերա-

[2] 1646 թ. Զատիկը կլինի մարտի 29-ին, նշանակում է երկրաշարժը տեղի է ունեցել մարտի 28-ի լույս 29-ի գիշերը։

կրիւ և ըմպելեաւ յագեցուցանէ զեղկելիս. փոխարէնն ի Քրիստոսէ առցէ աստ և ի հանդերձեալն յերկնից արքայութեանն արժանիս արասցէ...։

Զ

240բ Ի խաչ նշանէն մինչ ի միւսն աւելորդ է։

Է

302բ Աղաչեմ յիշել զեղկելի Ստեփանոսս բերան մի ողորմայիւ և Քրիստոս ձեզ ողորմեսցի։ Եւ տէր Գրիգոր քահանայն աղաչեմ յիշել ի Տէր։ Եւ զտէր Սարգիս աշակերտեալ նորին և սպասաւոր մատենիս աղաչեմ յիշել ի Տէր։

Ը

422բ Սաֆար ըստացող[3] Նազարի որդի. թվին ՌՂԲ (1643)։

Թ

Դարձեալ աղաչեմ զստացող Աստուածաշունչ մատենիս զխօճա Սաֆարն, և զկողակիցն՝ Խանզատէն, և զորդին՝ Ստեփանոսն, և դրստերքն՝ Կատարինէն, Սարալաիանումն, Մադալին, Վարվառն, և թոռունքն՝ Եփրիթէն, Մասֆիտն, և հարսն՝ Լէլի յիշեցէք...։

Ժ

Դարձեալ յիշեցէք զխօճա Սաֆարն, և զծնօղսն՝ զխօճա Նազարն և զԴշիուն, և զեղբարն՝ քաշ և ըռեստոր և տէլէտ իմաստից Բաղասարն, և քոյրն՝ Մասֆիտն, և պապն՝ մահդասի Մաթէոսն, և հանիկն՝ Մէրջանն յիշեցէք...։

Ժա

423ա Ա՛խ ջերմ, որ խելքս գլխէս թափեցիր։

Ժբ

463բ Թվինն ՌՂԲ (1643) ամին, հայրապետութիւն տեառն Փիլիպպոսի, թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասի, է սա ի ձեռս մեղաւոր Ստեփանոսիս. աւարտն Քրիստոս հասուցէ։

Ժգ

487բ Աղաչեմ կողկողագին պաղատանօք յիշել զտէր Գրիգոր քրիստոսասէր քահանայն, և զորդին՝ դեռարուսակ Ռստակէսն, Քրիստոս Աստուած հատուցէ զվարձս իւր...։

Ժդ

538ա Զստացող Աստուածաշունչ մատենիս զՃուղայեցի Ամիրասաթէնց խօճա Սաֆարն, և զիւր ընդանիսն աղաչեմ յիշել ի Տէր։

Ժե

546ա Ընդ նմին զտէր Գրիգոր սրբասնեալ վերծանող և տէլէտ իմաստից քահանայն, որ բազում աշխատանք ունի ի վերայ մեղաւորիս. աղաչեմ բերան մի ողորմայիւ յիշել։

[3] Այս երկու բառը գրված է փակագրով։

ժզ

558ա Դարձեալ յիշեցէք զխօճա Սաֆարն, և զպապն իւր՝ զմահդասի Մաթէոսն և զհանիկն՝ Մէրջանն, և հօրեղբօրն՝ զմահդասի խօճա Եղիազարն, յիշեցէք...։ Եւ զիս զեղկելի Սանփանոսս և զծնողսն իմ՝ Մարտիրոսն և Սոլթանն աղաչեմ յիշել ի Տէր...։

ժէ

559բ Զեղկելիս աղաչէ յիշել առ Քրիստոս զուսուցիչն իմ՝ զխաչատուր վարդապետն, Քրիստոս Աստուած հատուսցէ զվարձս իւր աստ և ի հանդերձեալն։

ժը

556ա Աղաչեմ զձեզ, եղբարք, յիշեսջիք զմիջնորդ և սպասաւոր Աստուածաշունչ մատենիս զտէր Գրիգոր հեզահոգի և սրբասնեալ քահանայն, և զհայրն իւր՝ զտէր Զաքարիա քահանայն, և զկողակիցն իւր՝ Շատլուղն, և զորդիքն՝ Ընբստակէսն, Բաղտասարն, և ըզդուստրն՝ Յոուրն և զայլսն յիշեցէք... զի բազում երախտիք ունի ի վերայ մեղաւորիս, որ լեզուաւ ճառել ոչ կարեմ...։

ժթ

Դարձեալ աղաչեմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զերշանիկ և զառաքելաշնորհն զմիոյ երանեալ և եթեան լրացեալ զխաչատուր առաքելաշնորհ, քաղցր և անձանցիր ուսուցանող վարդապետն, որ է արհեպիսկոպոս և առաջնորդ մայրաքաղաքիս Ճուղայոյ։ Քրիստոս Աստուած զինքն անփորձ և անսասան պահէ հոդով և մարմնով որպէս է, զի սակաւ գրչաբանութեանս է ուսուցիչ, բազում երախտիք ի վերայ մեղաւորիս ունի...։

ի

Ով քրիստոսասէր և քրիստոսադաւան քահանայք... առ ոտս ձեր անկեալ աղաչեմ... զի խոշորութեան, և գրչաբանութեան, և սխալանաց գրիս անմեղադիր լերուք, զի չեմ ընթերցող և բանի մի տեղեակ ոչ, զի վասն չքաւորութեանս և դառն աղքատութեանս առա ի ձեռն Աստուածաշունչ մատեանս, և իմ անարժան գոլով և Քրիստոս Աստուած իւր, բազում ողորմութեամբն ներելով զիմ ծուվացեալ մեղացն և ոչ պատուհասելով տառապեալ անձնս այլ ետ կարողութիւն փանաքոյս հասանել աւարտ զըստուերական օրինացն, խնդրեմ իւր բարերար ողորմութենէն որ չպատուհասէ պատուհասիս...։

իա

835բ Խնդրեմ ամենասուրբ երրորդութենէն և ի մի աստուածութենէն, զի տացէ պարոն խօճա Սաֆարէն զսրբութիւնն Դաւթի... և բարով վայելէ զԱստուածաշունչ մատեանս, որ ետ սերտ հաւատով և բոլոր սրտիւ դրել զԱստուածաշունչս ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց, մէկ տետրին գրելէ դինն ետ Ծ (50) շահի, Քրիստոս Աստուած մեկին հազար տացէ...։

Եղբարք աղաչեմ սակաւ ունկն դնել, զի այս խօճա Սաֆարս թող

ղԾ (50) շահի տեսրին վարձ տալն, այն չափ երախտիք ունի ի վերայ մեղաւորիս, որ մոլորեալ էի՝ դարձոյց, կորուսեալ էի և գտաւ, հիւանդ էի և բժշկեաց, հոդովս մեռեալ էի և կեցոյց՝ սաստելով, խրատելով, յանդիմանելով, դարձեալ մխիթարելով մեղաւորս դարձոյց։ Այնպէս արբեցող էի, որ վաղուենէ մինչև երեկոյ նման կատաղած շան շուրջ կուգայի և երախայքս քաղց և ծարաւ, և շունս անխիղճ գոլով այնպէս սառուցեալ էի ի յիմարուստն, որ մէկ օր չէի կարող, որ վաստակէի. այս խօճաս՝ Սաֆարս այնպէս դարձոյց, որ թէ հարկ լդիպի տարին մէկ օր չպարպիմ։ Քրիստոս զիւր մեղքն և զիւր անօրէնութիւնն ոչ յիշէ. ամէն։

իբ

852ա Խօճա Սաֆար զստացող, զՍտեփանոս գծող աղաչեմ յիշել ի Քրիստոս Աստուած. ամէն։ Ի թվարերութեանս Հայոց Ռ և ՂԲ (1643) ամին։

իգ

902բ Զի որպէս ուրախութիւն մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել, նոյնպէս և գրծողին ի վերջին կետն։ Վասն որոյ փառք և գոհութիւն առաքեսցուք Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ..., որ արժանի արար զանարժան հողս և մոխիրս՝ հասանել վերջին գիծ տառիս և անմահական բուրաստանիս, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Թվին Հայոց ՌՂԵ (1646)։

իդ

903ա Փառք...։

906բ՝

Արդ աղաչեմ հայրք և եղբարքդ իմ պատուական,
Որք հանդիպիք յայսմ բանիս յարմարական.
Անուամբ Ղազար վարդապետէ Բաբերթական,
Ի սրմանէ բանս յօրինեալ ջարադրական։
Եւ որ յիշէ զիս զնուաստս և անպիտան,
ՁԸսաեփանոս սբ. մատենիս գրծողական.
Նաև նոյն ինքն յիշեալ լինի օրն ահեղեան,
Յորժամ նստի Քրիստոս աթոռ դատողական։
Աւարտ եղև Աստուածաշունչ այս իրական,
Հին և Նոր Կտակարանքրն լիական.
Թուականիս Հայոց մեծաց և աբեթեան,
ՌՂԵ (1646) աւելի յարաբարթեան։
Ի յամիսըն մարտի ըստ հռոմայական,
Որ Ի և Թ (29) եղև Զատիկ մեր հայկական.
Ի յերկիրս այլազգեաց պարսկական,
Ի քաղաքըս Ասպահան՝ Շօշ կոչական։
Հայրապետին մերոյ ազգիս աբեթական,
Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն էջմիածնեան.
Խարազնազգեաց քաջ և արի ճգնողական,
Զոր տէր Աստուած անփորձ պահէ և անսասան։

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

ի

874բ [Ո]վ եղբայր, յիշեա ի տէր Քրիստոս զընտացող Աստուածաշունչ մատենիս, զհեղահոգի և զբարեմիտ խօճա Սաֆարն...: Նաև զիս՝ զանարժան և զեղկելի հողս ու փոշիս զԱստուածատուր սարկաւագս, որ անուամբ միայն եմ և գործովք թափուր և յունայն...:

337

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 1263

Գրիչ՝ Ղազար

346ա Փառք Փրրկչին,
Եւ յիշատակ գրրչին,
Զմեղաւոր և անարժան,
Ղազար գրչի:
Զեռս երթա,
Գիրս մնա,
Մատներս ամէն,
Ի հող դառնա:

Զեզ աղաչեմք, հայրք և եղբարք, և զայս Քաղուածոյս օրինակեցի մինչ որ ի լըմնեցաւ գիրքս: Աստուած բարով վայել տացէ տէր Յակոբին և զիւր տղայքն մնացական լինի. ամէն:

Թվին ՌՂԵ (1646). մարտ ԻԹ (29) Զատիկ արաք:

338

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 4472 (1457 թ.)

Գրիչ՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Աղբակ

ա

633ա Արդ՝ գրեցաւ սակաւիկ բանս ձեռամբ Սահակ անարժան աբեղայի, ի յերկիրս, որ Յաղբակ ասի, ընդ հովանեաւ Սբ. Առաքելոյն Բարդուղիմէոսի և յայլ սրբութեանց, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն ազգիս Հայոց. ի յառաջնորդութիւն տէր Կիրակոս բաբունապետի, որ խիստ լաւ զարդարեր է զվանքն հոգեկանաւք և մարմնական պիտոյիւք, զի անպարապ է պատարագ և սաղմոսերգութիւն և ժամակարգութիւն ի դրանէ Սբ. Առաքելոյս, զի քան զքսան և զերեսունն անպակաս է կարդացողք և սաղմոսերգուքն ի ժամատեղացս, զոր և զփոխարէն ջանից և վաստակոց սորա Աստուած տացէ սմա պարգևս ի յարքայութեան իւրում:

Եւ արդ՝ գրեցաւ սա ի խնդրոյ աստուածասէր և քրիստոսադաւան քրիստոնէին Միրիջանի, որ ստացաւ զսբ. գիրքս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց Գուլամիրի և Փարիխանին, և կողակցուն իւր՝ Խանադին, և դստերաբն՝ Խանզադին և

էքարին, Փարիխանին և Յամանին, և քուերն՝ Նօնուֆարին և ամենայն արեան մերձաւորացն իւրոց կենդանեաց և հանգուցելոց։ Եւ աղաչեմ զհանդիպեալքդ ի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք... զՄիրիջան և զկողակիցն իւր և զծնօղսն իւր և զամենայն աղգակիցսն իւր...։

Ռ և ՂԵ (1646) թուին գրեցաւ։

Բ

Եւ արդ՝ ես սակաւ մի ճառեցից զդառնութիւն ժամանակիս, որ եմք ի մէջ վասն ծովացեալ մեղաց մերոց, զի անաւրինաց հարկապահանջութիւն անչափ է և անթիւ, որ դրել չի գարւ Եւ զայլն պատմեցից ձեզ՝ եղբարցդ իմոց, որ վասն մեղաց է պատուհասն, զի քան զայս ամս չորս ամաւ յառաջ ի յՈսատան մինչ ի Հայկաձոր և ի Մահմուդանք մարախ եկաւ և մարդիք սարսեցան, որ ոչ էին տեսեալ և մեղաց ոչ դարձան։

633բ Եւ դարձեալ երկու ամաւ ի յետոյ սաստիկ մահ անկաւ ի Վան և ի յՈսատան, և զթիւ մեռելոցն չ՚արացաք իմանալ և այնով այլ մեղայ ոչ տուին[4]։

Եւ դարձեալ երկու ամաւ մինչ ի յայս ամս, որ եմք ի մէջ, նոր, կրկին աստուածասաստ բարկութիւն սփռեցաւ յաշխարհս Հայոց, վասն անթուելի մեղաց իմոց, մանաւանդ Վանայ քաղաքին, գեղա[ւ]րէիւքն և յՈստանայ մինչ ի Խօշաբ, զի ի յԱւագ մեծի ուրբաթի գիշեր լոյսն ի շաբաթ, որ էր Զատիկ, Աստուած բարկացաւ և շարժեաց զերկիր՝ ի բազում տեղիս և այն որ ի Վան և յՈսատան շարժեաց։ Մարդ ոք չէր տեսեալ և ոչ ի պատմութեանց լուեալ, զի ո՞չ վանք մնաց, ո՞չ քաղաք, ո՞չ գեղ և ոչ շինութիւն, զի Խ (40) եկեղեցի Վանայ բոլոր մինչ ի Հայկաձոր ի հիմանց բլան, այն հրաշի ատն և սուգ ածին քրիստոնէից և զաւերումն տանց և բարձրաշէն ապարանից. և զմնացեալ մարդ, կին և տղայ և անասուն, որ ի տան հողի տակն մնացին, չկարողացաք իմանալ և ի դիր արկանել, զի անթիւ էր, բայց նորա միայն է գիտելի, որ արար զնա վասն մեղաց մերոց։ Եւ աղաչեմ զձեզ եղբարք, Քրիստոս ասէ յԱւետարանն, թէ՝ «Յամենայն ժամ արթուն կացէք» և դարձեալ ասէ. «Եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորընչիցիք»։ Փառք Աստուծոյ Ռ (1000) բերան։

Գ

Դարձեալ կրկին յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք խոջա Միրի[ջ[ան]ին և կողակցին իւրոյ՝ Խանաղին, որ անուամբն միայն էր խոջա և հոգովն էր վերացեալ ի դրախտն Ադամա[յ]։ Եւ Գ (3) տարի յառաջ Յայսմաւուրն առեց յիշատակ իւր և այնու ոչ բաւականեցաւ և ոչ լցաւ զփափաք սրտին իւրոյ. այլ և ետ ևս վախմ ի դուռն Ս. Գէորգեա[յ] զաւրավարին, որ այնու ելանէ ի վերինն յԵրուսաղէմ. և որպէս Զենովք որ Կ (60) ամ ծառաեց յագոյն իւրոյ, ոչ ճաշակեց ի պտղոյն...։

[4] Այսինքն 1644 թ.։ Ն 1524 ձեռագրի լուսանցքում եղած անթվական տեղեկությունը, հավանաբար, այս մահտարաժամի մասին է. «Անմեղադիր լերուք, կազմած էր ինչ զ[ր]եցի. բայց խՇստ մահ կայր ի վանքս (իմա՛ Վարագ—Վ. Հ.)։ Եւ ես եկի ի դասատանէն է (7) երէց վախճանեալ էին. և զվերջն Աստուած գիտէ (էջ 695բ—696ա)։

Նվիրատու՝ Միրիջան
Վայր՝ Աւթուան

դ

Ես՝ Միրիջանս ի Սալմաստայ, որդի Գուլամիրին ըստացայ զսբ. դիրքս ի յարդար վաստակոց իմոց և եղի ի դուռն Ս. Գէորգա[յ] զօրավարին, յիշատակ հոգոց մերոց, ի դեղս մեր յԱւթուան: Եւ մարդ ոք մի՛ իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ Ս. Գէորգեայ զօ[րա]վարիս՝ ո՛չ մերոց և ո՛չ յօտարաց, ո՛չ ծախելով և ո՛չ գրաւելով և ո՛չ գողանալով։ Եւ եթէ մարդ ոք յանդգնի և առնէ՝ նա զպատուհասն ի յԱստուծոյ առնէ...։

339
ՄԱՇՏՈՑ

Մագիստրոս, № 667

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Սեբաստիոյ գաւառ

198 *Փառք...։ Կատարեցաւ... ձեռամբ... գրչի Միքայէլ դպրի, ի գաւառս Սեպասաիոյ, ի դուռն Ս. Հրեշտակապետի, ի յառաջնորդութեան տէր Նիկողայոս արքեպիսկոպոսի և այլ միաբան եղբարցս, ի թուականիս Հայոց ՌՂԵ (1646), ապրիլ ամսոյ Ի (20), աւրն հինգշաբթի, ի դառն և ի նեղ ժամանակի...։ Աղաչեմ յիշել... և զուսուցիչն իմ՝ զՆերսէս աբեղայն։*

340
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7017

115ա *Այս է Աբրոյ որգոյս ծնունդն՝ թվին ՌՂԵ (1646). կենդանայկերպս Այծեղջիւրին, Եղիային շաբաթն*[5]։

341
ԱԻԵՏԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 48 (մանրաժապավեն, Երևան, № 512)

Գրիչ՝ Անդրիաս երէց
Վայր՝ Պանարման

Փառք...[6]*։ Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ տառս հոգիընկալ, ակն լուսատու, ջահ անշիջանելի պայծառացուցիչ եկեղեցոյ, ...որ այժմ կոչի*

---

[5] *Քանի որ 1646 թ. Զատիկը կլինի մարտի 29-ին, ապա սրան համապատասխան Պենտեկոստեն (Հոգեգալուստը) կլինի մայիսի 17-ին, այստեղից էլ մայիսի 17-ից մինչև 24-ը կլինի եղիական պահոց բարեկենդանը, իսկ Եղիայ մարգարեի շաբաթը կլինի մայիսի 23-ին։*

[6] *Ձեռագիրը համարակալված չէ, հիշատակարանը գտնվում է ձեռագրի վերջում։*

Աւետարան, ձեռամբ բազմամեղ սուտանուն Անդրիաս երիցուս, ի թվին ՌՂԵ (1646) յուլիսի Լ (30), աւրն հինգշաբթի, ի գիւղաքաղաքն ի Պանտրման, ի գուռն Ս. Մինասայ, ի թագաւորութեան բռնակալ սուլթան Իպրահիմին, որ բազում զաւրաւք գնաց ի վերայ Ֆռանկին, և հայրապետութեան Փիլիպպոս կաթուղիկոսին։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լոյսերամից, յորժամ կարդայք սբ. Աւետարանս ի մէջ եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր անարժան Անտրիասս ես առաւել զբարեմիտ և զհեզահոգի քրիստոնեա զմահտեսի Պետրոսս՝ զվերջին ստացողս։

342

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 3371

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Կողոնիա

ա

383բ Փառք...։
Յորոց և մինն ես անպիտան,
Կողոնացի տեղեաւ բնական,
Գրիգոր կոչիմ ես անուան,
Ի սբ. գործոց զիրկ ե ունայն։
Քանզի գործովս եմ զիրկ և ունայն,
Եւ չար գործովս եմ անարժան,
Եւ ձևս ունիմ քահանայութեան,
Դարձա մեղաց ըշտեմարան։
Եւ յԱստուծոյ ինչ տամ պատասխան,
Զեզ աղաչեմ հարք սրբազան,
Որք հանդիպիք երգոյս Պաւղոսեան,
Եւ վարդապետին քաջ իւր անուան։
Ոսկիբերան վարդապետի Յոհանիսեան,
Եւ իմաստուն և ճարտասան,
Ի սբ. գրոց է հմտական,
Շնորհք առեալ աստուածութեան։
Մեկնեաց զգիրս զանազան,
Անուշահոտ վարդի նման,
384ա Ի հոտ առնէք իմս մարդկան,
Եւ զուարճանա, որք ընթեռնու և կարդան։
Գծող գրիս առնէք արժան,
Խիստ ծերացեալ է և անպիտան,
Որ է աւուրքս թանասեան,
Սա գեղեցիկ է և բուրաստան։
Անտես չառնէք զիս <զիս> նախատեան,
Զիս արժանի առնէք յիշման,
Առ Արարիչն անմահ արքայն։

Բ

Աստանօր անկեալ կատարեցաւ այս աստուածաշունչ դիրքս ի քաղաքս Կոյոնիայ, ի դուռն Ս. Աստուածածնին և Ա. Ստէփաննոսի Նախավկային և ամենայն սրբոցն, որ կան հաւաքեալ։

Գրեցաւ և ծաղկեցաւ ի կատարեցաւ ձեռամբ անարժան Գրիգոր իրիցու, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ այս ամի պատեալ կան արիական ազգն և Ռուսեաց ազգն ծովով և ցամաքով շրջապատեալ կան. և Տաճկաց ազգն անեզեր ելեալ գնացեալ Ֆռանկաց զաւրացն ի վերա։ Գիտելին Աստուծոյ, թէ ինչպէս պիտի որ լինա։ Ապա ես անարժանս գրէի զայս Պաւղոս դիրքս, որ ամէնևին զգայարանքս կորուսեալ էի, անմեղադիր լերուք սղալանացս մեր, որ ի ծերութեան ժամանակիս գրեցի։ Խնդրեմ ի ձեզանէ, որ զթերին լնուք և զաւելօրդն բառնաք։ Գրեցաւ սա, որ ունի տարիս Այծեղջեր և ամիսս ագոստոսի ԻԲ (22), աւրն երեքշաբթի, ի թվականիս Հայոց ՌՂԵ (1646), որ աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

343

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 152 (1269 թ.)

Վայր՝ Ածպտեր

58 Վերըստին զայս սբ. Աւետարանս գրաւէն ազատեցաք, թվին ՌՂԵ (1646) սէպտեմբերի Ժ (10). տուանք ի դուռն Ս. Սարգիսի, որ է Ածպրտեր։ Ով որ ծախէ կամ դրաւ դնէ՝ նզոված է։

344

ԱԻԵՏԱՐԱՆ

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 314—315

Գրիչ՝ Վասիլ
Վայր՝ Խազան

ա

Այս սուրբ Աւետարանս աւգնութեամբն Քրիստոսի ի քաղաքս Խազանս (յ)որժամ վասն իմ բազում և անթիւ մեղացս, որ նստեալ էի ի գերութեան։ Իսկ պատճառն բարեաց Ավետիքն, որ եկեալ էր Խըզըլպաշի երկրէն, այս Քրիստոս սբ. Աւետարանն ԻԵ (25) տարի փակ ի մէջ տերութեան անկեալ էր։ Եւ ԻԵ (25) տարոյն պարոն Աւետիքն ձեռն անկաւ և նարամէ առի օրինակեցի, և յիշատակ կացցէ, որում Քրիստոս նասիպ անէ, առնու իւր հոգուն [յ]իշատակ կացնու։...

Բ

Դարձեալ աջեմի ո՛վ եղբարք կարդացողք և Քրիստոսի ընտրեալք քահանայք՝ ծառայք ի մէջ եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ բազմամեղս գերի Վասիլս և իմ ծնողքս, և ձեր, և իմ ամենայն համօրէն ննջեցեալքն։ Գրեցաւ ի թվականիս ՌՂԵ (1646) սեպտեմբեր ամսու Ժէ (17) օրն, առաւօտուն ելի լմնեցուցի։ Բայց աղաչեմ սխալու-

թեան գրոյս այնմեղագիր լերուք, ինչ տեղ թէ որ դտանի ս<ա>ղալ, դուք՝ ո՞վ իմաստունք քահանայք և կարդացողք, խորդեցէք ում նասիպ լենա՝ բարով վայելէ և ինձ մեղաւորիս մէկ Հայր մեր ասէ, վասն իւր հոգոյն...։

345

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՔԵԻԱՑԻՈՑ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 45 (մանրաժապավեն, Երևան, № 510)

Գրիչ՝ Անտոն վարդապետ
Վայր՝ Սէջով

ա

21ա Գրեցաւ ձեռամբ մեղաւոր Անտոն վարդապետի, փետրվար ԻԱ (21), օրն ուրբաթ։

բ

8բ Հոդի սբ. յօդնեա և յաջողեսս անիմաստ և տարակոյս անարժան գրչիս՝ Անտոն վարդապետի՝ սպասաւորիս Ս. Աստուածածնին, աղաչեմ և խնդրեմ ի քէն բարերար և մայր ողորմութեան քոյին, բարեխօսութեամբ առ որդին քո Միածին, զի զօրացուցէ զիս զանարժանս ի անկ ելանել, որպէս ի սկիզբն զօրացուցեր մարդասէր, նոյնպէս տպաւորեա սբ. հոգիդ, զի յօգնութեամբն հասից մինչ ի վերջն, զի ոյժ ծանր թւի ինձ վասն բազմութեան և երկարութեանն, որպէս այն, որ մտանէ ի նաւ և խնդրէ անցանելն յայնկոյս, նոյնպէս և ես. բայց յուսալով ապէնիազ Աստուած, և նորին օգնութիւն ժտելով, ըստ այնմ օգնութիւն ինձ ի Տեառնէ եկաւ։ Եւ դարձեալ թէ որ յուսայ ի Տէր, որպէս լեա. և նորին սբ. և սքանչելի անուանն վերա սկսանիմ աստուածաշունչ դիրս անտարակոյս։

Մայիսի Զ (6), օրն չորեքշաբթի, առաջ քան ղՀամբարձումն, թվին ՌՂԵ (1646)։

գ

398բ Փառք...։ Արդ՝ եղև զրաւ սորայ ի թվականութեանս աբեթական տօմարիս ՌՂԵ (1646), և ի ամսեանն հոկտեմբերի ԻԸ (28), Սրբոյն Անդրէի առաքելոյն մէկ օրն առաջ ուրբաթի, ի յաշխարհս Պուղտանաց, ի քաղաքն Սէջով, ընդ հովանեաւ Ս. Սիմէոնա[յ] եկեղեցոյն, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և առաջնորդութեան տէր Մինաս վարդապետին, որ ծնա[ւ] զնա ի Քրիստոս, և ի պարոնութեան այսմ նահանգի Վասիլ վոյվոտային, գրեցաւ աստուածաշունչ գիրքս, որ կոչի Հարցմունք Գրիգոր Թաքեացոյն, ձեռամբ ումեմն անիմաստ և քան զամենայն վերջինս, ի ծնունդս եկեղեցոյ, և տրուպս բանասիրաց Անտոն պիտակ անուն Լովցի մականուն Սէրէբոյենց, որ միայն անուամբ եմ և գործովս ոչ, զի և յիշման ոչ եմ արժանի, վասն բազում և անթիւ մեղաց իմոց։ Աղաչեմ և պաղատիմ արտասուադէմ հառաչանօք զհանդիպողսդ այս սբ. գրքիս, ո՞վ ուսումնասէր և ցան-

կացող աստուածային բուրաստանիս. հարք իմ և եղբարք, զի յորժամ ընթեռնոյք զայս բազմաց բաղձալի և գովելի գիրքս, յիշէք զիս մի Հայր մեղայիմն, այլ և զծնօղք իմ և զամենայն արեան մերձաւորս...։

Արդ՝ աղաչեմ զամենէսեանդ, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, որ զիս առանց պարսաւանաց թողուք, զի յօրինակն այս-
399ա պէս էր, և գրիս սղալանաց անմեղադիր կեցիք, զի կար մեր այսչա//փ էր։ Եւ թէ գտանիցէք ինչ սղալ ի սմա, ի բաց շնջեցէք, ձեր վեհ իմաստութեամբդ զթերին խնդրեմ լնուլ, և զաւելորդ կշռել հաւանելեալ Տեառն, զի միայն Աստուած է անսղալ և անխալատ։ Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորին Հայոց Զաքարիայ, որ եղև բազում ժամանակ պատրիարգ ի Կոստանդինուպօլիս, զի նա ծնօղ մեզ ըստ բանի բազմաջան երկօք կրթեալ ի մամուլս վարժանի և զիս ի կարգս և աստիճանի վարդապետութեան հասոյց, միթէ տէրն մեր Յիսուս Քրիստոս հասուցէ զհոգի նորա ընդ սբ. վարդապետաց...։

Դարձեալ և զվերջին ծնօղս իմ յիշեցէք աղաչեմ տեառն տէր Սիմէոն կաթողիկոս Սիսա[յ] և պատրիարք Երուսաղէմայ, որ զիս ծնաւ ի Քրիստոս և ետ մեզ կարգ եպիսկոպոսութեան, որ ոչ էի արժանի այսպիսի կարգի, հատուցէ նմա տէր Աստուած...։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ արտասուալի դիմօք, հողս և փոշիս ... անտես ոչ առնել ամենամաքուր մաղթանս ձեր, զի [յ]ոյժ անարժան մատամբ եմ գրել զսա, որ ոչ եմ արժանի մերձենալ համարձակութեամբ յիշխեցի և մերձեցա, տկար և փանագի անձամբս, ապաւինելով ի [յ]ոյսն ամենայնի..., որ ետ կարողութիւն տկար հողոյս անկ ելանել այս սբ. գրոյս, որմէ գոհանամ...։

346
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 9767

Վայր՝ Կամէնից

ա

94բ Գրեցաւ ի քաղաքն Կամէնից, թվին ՌՂԵ (1646), դեկտեմբեր Ը (8), օրն երեքշաբթի։

Բ

3ա Նիկոլայոս Թորոսենց արքեպիսկոպոս Լեվա Հայոց և Պուլտանաց երկրի առաջնորդ[7]։

347
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 236

Գրիչ՝ Եղիա Համթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

316բ Փառք...։ Որոյ շնորհիւն յանկ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարհեստ գրչի Եղիա դպրի Համթեցո[յ], թվին ՌՂԵ (1646),

[7] Նիկոլ Թորոսենցի ինքնագիրն է։ Վերջում իր ստորագրությունը։

ի քաղաքն Կոստանդնուպոլիս, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի նորաշէն տաճարիս, ի հայրապետութեան սբ.* Էջմիածնա[յ] *տէր* Փիլիպպոս *կաթուղիկոսին։ Արդ՝ ես* Վարդան *երէցս, որ առ Աստուած մահուամբ փոխեցա առ Քրիստոս, և ի ժամ մահուան իմոյ արարի կտակ զսբ.*
317ա *Աւետա//բանս զայս, զոր բազում աշխատութեամբ ի հալալ արդեանց իմոց ստացեալ եմ դիցեն յիշատակ անշրնջելի ի սբ.* Էջմիածին *վասն ոգոյ իմոյ և ամենայն զարմից և զաւակաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոց...։*

Ստացող՝ Վարդան երէց

բ

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զՎարդան *իրիցուս, զծնաւղքս իմ՝* զՄինաս *և զմայրն իմ՝* զՀազրէվարդն, *և զմեծ պապն իմ՝* զՍարդիսն *և զմեծ մամն իմ՝* զՍալչուգն, *զհօրեղբայրն իմ՝* զԴաւիթն, *և զկողակիցն իմ՝* Վարդենին, *և զդեռաբոյս որդին իմ՝* զԱսլանն, *և զքուրն իմ՝* զՎարդխաթունն, զՄուրվարն, *և* զԿուլվարն, *և* զՊաղտատն,
317բ *և յամենայն առուարեան մեր//ձաւորացն, որ առ Աստուած հանգուցեալ են...։*

348
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1128 (1415 թ.)

Վայր՝ Շէնքուշ

199բ *Տաւնադրիս ի թվին ՌՂԵ (1646) նուաստ* Հոռոմկլայեցի */// անուամբ ևեթ վարդապետ կոչեցեալս, ըստացա հալալ արդեամբս զայսուհետ բուրաստան[ս], այսինքն /// յնոս և գՊօղոս քաղուածուքս, որ է /// ետու յիշատակ ի դուռն* Շէնքուշոյ *վանքին, որ կոչի Ս. Աստուածածին։ Ոչ ոք ունի իշխանութիւն [զայս] դիրքս յետ մահուանս ի Ս. Աստուածածնի !/// [հ]եռացուցանել՝ ո՛չ աշակերտ և [ո՛չ ազգ]ականքս և ոչ ոք յօտարք։ Եւ թէ ոք ժպրհեալ կամ /// խլել և բաժանել՝ հոգով և մարմն[ով] ///*

349
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 1549

Գրիչ՝ Ստեփանոս Լեհացի
Վայր՝ Էջմիածին

ա

276ա *Փառք...։*

277բ *Արդ՝ ես* Սաեփաննոս *անուամբ միայն ևեթ կրօնաւոր, յաշխարհէն Լեհաց, քաղաքաւ* Իլվացի, *ընթերցեալ զայս աստուածեղէն մատեանս տեառն* Ներսէսի, *և քննեալ զզօրութիւն բանիցս հեշտաբար և մեծաւ փափագանօք ցանկացայ ստանալ զայսպիսի անկողոպտելի գանձ... սակս որոյ զանց արարեալ զիմ մարմնոյ տկարութեամբս, ապաւինեալ*

ի յոյսն բնաւից, զձեռն ի գործ արկեալ իմ ձեռամբս գծագրեցի և ոսկէ-
նկար ծաղկօք և երփն երփն գունօք զարդարեալ ետու, զի լինիցի ի յի-
շատակ մշտնջենաւոր առաջի Աստուծոյ, մեծայոյս և երկիւղազարդ
ծնողաց իմոց փոխեցելոցն ի Քրիստոս...։

278ա Արդ՝ եղև սկիզբն և աւարտ աստուածեղէն տառիցս ի յԱյրարատեան գաւառին, ընդ հովանեաւ լուսանկար և առաքելածաւալ իշման Միածնին բանին Աստուծոյ և դրիգորաշէն խորանին, ի թուաբերութեան ամի փրկագործ տնօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՈՒՁ (1646), և ի թուականիս Հայոց ՌՂԵ (1646), ի հայրապետութեան սրբազան և երիցս երանեալ տեառն Փիլիպոսի, որ հայրական գթով խնամ առ իս ցուցանէ, և մխիթարիչ ըստ կրկին մարդոյս հեշտաբար

278բ լինի...։ Արդ՝ մեծաւ թաղխածանօք աղաչեմ, որ օգտիք և // վայելէք... մի՛ դանդաղիք յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ գրեալ զստացող և զգրիչս, և զծնօղսն իմ հանգուցեալս ի Քրիստոս և զամենայն ազգայինսն. նաև զՍիմէօն շնորհազարդ և քաջ բարունի ծաղկօղ և կազմօղ սորին, և զՄովսէս վարդապետն, և զՆերսէս վարդապետն, իսկապէս իմ բարեկամս և սիրեցեալ, և զՆիկողայոս վարդապետն, և զտէր Մկրտիչն, և զտէր Յովհաննէսն, ինձ մտերիմ և հոգևոր եղբարս, այլ և զայլ եղբարս, որք աստ ի հրահանգս ճեմարանիս և ի յաստուծայինսն կրթեն զանձինս իւրեանց...։

279ա Այլ և զայս մաղթեմ. եթէ ուրուք դէպ լինիցի ըստ փոփոխման ժամանակաց զմատեանս ժառանգել՝ մի՛ զվերոյ գրեալ անուն եղծանել ի սմանէ. ապա թէ ոք յանդգնեսցի՝...։

Բ

275բ Աստ զկայ էառ բանս Ներսէսի,
Ի փառս էին զշնորհս տրուղի,
Յիշել մաղթեմ առ յոյսն բնաւի,
Զիս զՍտեփաննոս գրիչ տառի։

350

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1739

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ
Վայր՝ Ղարասու

ա

371ա Փառք...։ Որոյ շնորհիւ և ողորմութեամբն եղև սկիզբն և կատարումն այս սովփերիս արտաքին գրոյս, որ ունի գումարեալ յինքեան զյոլով իմաստասիրաց զբազմահանճար գիտութիւնս, յաշխարհին Կաֆայ, ի Ղարասու կոչեցեալ քաղաքի, ընդ հովանեաւ Ս. Աւգսէնդ անուանեալ եկեղեցւոյս, ձեռամբ Յովանէս սարկաւագի, գրելով և ծաղկելով և կազմելով, ի թվականութեանս մերոյ ՌՂԵ (1646), ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսի, որ ի լուսակառոյց յաթոռն ի սբ. Էջմիածին, ի թագաւորութեանն Աւսմանցոց սուլթան Իպրահիմին, ար-

դեամբք և ծախիւք Առաքեալ վարդապետին[8], նոյն Փիլիպոս կաթողի-
371բ կոսի աշակերտին, որ ստացաւ զսա ի վայելս անձին իւրոյ, այլ // և յի-
շատակ ինքեան և իւրոց ծնողացն և ամենայն ազգականաց։ Արդ՝ որք
հանդիպիք այսմ գերապանծ իմաստասիրական մատենիս կարդալով
կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, մեծաւ խնդրանաւք
հայցեմք ի ձէնջ սրտի մտաւք, յիշել առ Աստուած զամենայն աշխատա-
ւորս սորա և մեղաց թողութիւն խնդրել...։ Դարձեալ մեծաւ աղաչա-
նաւք խնդրեմք ի ձէնջ ամենեցուն մի՛ առնել զչար սովորութիւնն զայն,
որք հատանեն զյիշատակարանս գրոց և կամ եղծանեն...։

Բ

307ա Եւ զիս անարժան սուտանուն Յովանէս գրիչս յիշեա։

351

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԻԼՈՆ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ

Երևան, № 2056

Գրիչ՝ Մկրտիչ երէց
Վայր՝ Երևան

472ա Գրեցաւ գիրքս այս ի քաղաքին յԷրևանայ, ընդ հովանեաւ Ս. Կա-
թուղիկէին, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի, ձեռամբ Մկրտիչ
իրիցու, ի վայելս Պետրոս սարկաւագի, եղբօր որդւոյ Խաչատուր վար-
դապետի իշխողին Գողթնեաց, ի թվականիս Հայոց ի հազար և ի Ղ և Ե
(1646)-երրորդումն ամի. յիշեցէք որ հանդիպիքդ։

352

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 2405

Գրիչ՝ Եղիազար
Վայր՝ Համիք

179բ Փառք...։ Որոյ ամենակարող զօրութեամբ նորին եղև սկիզբն սբ.
գրոցս, որ կոչի Մաշտոց և ողորմութեամբ նորին էառ զլրումն և զկատա-
րումն։ Արդ՝ եղև աւարտ լրման սորա ըստ հայկազեան տումարիս ՌՂԵ
(1646) ամի, ի քաղաքս Տիգրանակերտ, որ և Համիք վերակոչի, ընդ
հովանեաւ սրբոյն Կիրակոսի և մօրն նորա՝ Յուլիտայի, ձեռամբ զա-
ռածեալ անարհեստ սուտ և փուտ գրչի Եղիազարի։

353

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

Երևան, № 4000

Գրիչ՝ Մելքիսեդ
Վայր՝ Տաքն

[Փ]առք..., որ ետ կարողութիւն վհատեալ սրտիս և մեղկացեալ ան-
436ա ձիս տեսանել զաւարտ գծիս՝ աստուածախումբ մատենիս...։ // Զոր և

[8] Իմա՛ Առաքել Դավրիժեցին։

երջանի[կ] մշակն հոգւոյ դիտապետն Ընբստակէս յօժար կամօք ետ գրել զՄեկնութիւն աղօթից սբ. պատարագին, զոր բացայայտեաց լուսապայծառ բանիւք և գեղեցկադիր յորինւածով... արքեպիսկոպոսին Տարսոնի Կիլիկեցւոց տեառն Ներսէսի Լամբրոնացոյ:...

436բ Արդ՝ գրեցաւ սա ի թվիս ՌՂԵ (1646)-ին[9], ի յերկիրս Անանան, ընդ հովանեաւ Սբ. առաքելոցս Ստադէի և այլ բազմագոմար սրբոցս, վասն փրկութեան մեղապարտ յոգւոյ Մելքիսեդ անարժանիս, զի անւամբ կոչեցայ յինքնաշարժ փառամոլութեամբ և գործովս վատթար և յետնեալ յամենայն կարգաւորացս։

437ա Արդ՝ կոխան եդեալ զերեսս արշնաթորմ ի սրբափայլ դասուց քահանայից և կրօնաւոր պաշտօնէից, ժտելով ի հանդիպողացդ սբ. տառիցս, որ օգտիք ի սմանէ կարդալով կամ այլ օգտութեամբ, յիշել զանյիշելիս Մելքիսեդ, և զծնօղսն իմ՝ զՅովանէս քահանայն և զմայրն իմ՝ Եղիսաբեթն, որ գերի վարեցաւ Գ (3) որգովք և այլ ոչ դարձաւ, վասն ծովացեալ մեղաց իմոց, զի ի յախորժել զչարն և զբարի, ընդգրկեցի զչարն և հեռացայ ի բարւոյն, ոչ զմի կամ զերկու...։

354

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4123 (1466 թ.)

Վայր՝ Արարուց եկեղեցի

313 Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Ճիտեցի Քառաս[ուն] մանկանց տէր Մաթէոսի որդի Մանասէ, Մանասէի որդի մահտեսի Մանուկ, և իւր որդի Կարապետն, և իւր կողակիցն՝ Կուլիստանն, և իւր դստերն՝ Ուլիտային, և իւր ամենայն արեան մերձաւորացն, կարդացողաց և լսողաց...։

Այս սբ. Աւետարանն դերի անկեալ էր ի ձեռն անաւրինաց։ Աղատեաց մահտեսի Մանուկն, դարձեալ յիշատակ եդիր ի դուռն Ս. Աստուածածնին, որ կոչի Արարf, ի թվականիս Հայոց ՌՂԵ (1646)։

355

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4158 (ԺԶ դ.)

ա

86ա Յիշատակ է սբ. Աւետարանս բարեսէր Յովանիսին և ծնողացն՝ Ամիրջանին, Սաարին, կողակցոյն՝ Եթարին, որդոցն՝ Մկրտչին, Մովսէսին, Մէլիքբաբին, աներ՝ Յոհանէսն, և իւր կողակիցն՝ Գուլիաթունն։

Դարձեալ յիշեցէք Մկրտիչն և իւր կողակիցն՝ Մարիամն, և հօրեղբայրքն իւր՝ Հախնազարն, Շահնազարն, և պապն իւր՝ Եդգարն, և

---

[9] Գրչության թվականը ձեռագրի կողին Մագիստրոսը նշել է «ՌՂԷ—1648», իսկ Մատենադարանի ձեռագրերի ցուցակում նշված է «1641 թ.» (հտ. 1, էջ 1127)։

քոյրքն իւր՝ Մարիամն, Շաճրստանն և ամենայն ազգականքն. ամէն։
Թվին ՌՂԵ (1646)։

Բ

140ա Ստացող Աւետարանիս զՅովանէս յիշեցէք. ամէն։

356

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4276

Գրիչ՝ Եղիա Համքեցի
Վայր՝ Կ. Պոլիս

310ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ Որոյ ականատես լեալ յետին գրիչս ե փանաքիս և աղետեալիս յամենայնի, ձեռնարկեցի ի սմա սուտանուն Եղիա դպիր Համքեցի, թվին Հայոց ՌՂԵ (1646). և հասի ի զրաւ գրչութեան Աւետարանիս, ոչ ուսա արհեստից և զօրութեամբ անձինս, այլ ի կատարումն ուխտի հրամանի մարդասիրին, թէ՝ «Ամենայն որ խնդրէ՝ առնու»։

Արդ՝ աղաչեմ զհանգիպողդ յայսմ [Աւետարա]նիս յիշման արժանի վարձչիք Ս. Սարգսա[յ] աւագ երէցն՝ զտէր Աստուածատուր քահանայն, որ բաղում աշխատանք կրեց մինչև որ գրել երեսն զսբ. Աւետարանս։ Եւ փոխարէն այն աշխատանացն առ//նու զվարձքն ի յԱստուծոյ և նմայ փառք յաւիտեանս. ամէն։

310բ

357

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4309 (1416 թ.)

Կազմող՝ Երեմիայ քահանայ
Վայր՝ Ջամալաւու

294բ Արդ՝ կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Ե[ռեմի]այ անուամբ քահանայ և գործովք ունայն, ի վայելումն դիւղաքաղաք Ջամալաւու, ի դուռն Սրբոյն Սարգիսի զաւրավարին և ի Ս. Նշանին, ի ձեռն արժանաւոր քահանային։ Ով յանդգնէ զսա ի Ջամալաւու հեռացուցանէ կամ ընդ ինքն պահէ և ասէ, թէ «Դորայ տէրն ես եմ», և կամ
295ա ծախէ և կամ գրաւէ. թէ մերոց, թէ աւտարաց լինի՝ նայ զան//էծքն Կայենի առնէ, զպատիժն Յուդայի առնէ...։ Թվին ՌՂԵ (1646)։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք. ամէն։ Եւ աւրհնաւղն իմ՝ Կիրակոս վարդապետն ՌՂ (1641)։

358

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4458

Գրիչ՝ Մարուքէ
Վայր՝ Արկուտի

251ա Փառք...։ Այլ և գրեցաւ սայ ի թուիս Հայոց ՌՂԵ (1646), ի յերկիրս Յերեան, ի գաւղաքաղաք Արկուտի, ի յոտն Աւաք Մասիս, ի դուռն Ս.

251բ Յակոբայ, ի հայրապետութիւն էջմիածնայ <ի թագաւոր//ութիւն> Հայոց Փիլիպպոս կաթաղիկոսն, ի Խոր Վիրապի միաբանիցն առաջնորդ Մկրտիչ վար[դա]պետն, հոգևոր արք Մանուէլ իպիսկոպոսն, ի գառն և ի տխուր ժամանակիս։

Արդ՝ երեսս անգեալ աղաչեմք, ո՛վ քահանայք սրբազան, յիշեալ լիջիք դուք ի սբ. յաղաւթս ձեր մեղապարտ սուտանուն քահանայ Մարուքէս, <իմ> հայրն իմ՝ Ղազար, հաւրեղբայր Յովսէփ իպիսկոպոսն առ Աստուած փողեցաւ, մայրն իմ՝ Խանսալթան, եղբայրքն իմ՝ Յարիճան, Խէրտաին. ևս առաւել մեղայպատիս, կողակիցն՝ Մարիան, անդրանիկ որդին՝ Ղազար, հոգևոր ահեղ ատենին Քրիստոսի, իմ դուստր, և այս վերջին ժամանակիս իմ հոգևոր որդի Խանում[աղէն], Սանդուխան, միւս Խոսրովն, յիշեցէք ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք Հէրիկն, բաղու[մ] աշխատանք արար Աւետարանիս թղթին դեղ առաւ։ Աստուած իւր միւսանգամ հատուցէ իւրաքանչիւր։

Դարձեալ յիշեցէք... Մարուքէս, մայրն, կողակիցն, Ղազարն, որպէս ի փափակս արքայութեան իմ հարսն՝ Խանումաղէն: Ահա ժամանակ ծերութեան իմոյ փափակէի զհարսանեաց որդոյն իմոյ և տեսի. փառք Քրիստոսի, որ հասոյց զիս տեսանել զփափաքելին իմ մարմնաւոր որդիս և հոգևոր գուս[տրս][10]։

359

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5195 (1552 թ.)

ա

249բ Զայս Մաշթոյցս Մոկաց գերեցին թվին ՌՂԵ (1646)։

250ա Այն տարին որ Ազդինշէր եղ։

բ

Այլ գրով

26բ Դարձեալ յիշեցէք... զՅակոբին և իւր կողակցոյն՝ Խանումին, և դստերն՝ Զամանին: Աստուած զիւրեանց գործեալ մեղքն թողու. ամէն. որ ետուն ղսբ. Մաշթոցս վերստին նորոգել ի հալալ վաստակոց իւրոց։ Դարձեալ յիշեցէք...։ Դարձեալ Աստուած ողորմի Խաթունին, որ ետ ողորմութիւն ի նորոգել գրոցս[11]։

---

10 Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է ձեռագրից թերթ ընկնելու պատճառով։

11 բ հիշատակարանը ձեռագրում գրված է մինչև 1646 թ., նույնպես ժէ դարում։ Ձեռագրի 112բ էջում կրկնված է բ հիշատակարանը։

360
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5428

Գրիչ՝ Աւագ
Վայր՝ Ղարաշալուայ

ա

124ա Նաև աղաչեմ յիշել ի տէր ղկաղմող սբ. Աւետարանիս Աւետիս քահանային և ղիս զամենայն մեղս ղԱւագ զրիչ, որ մեծ սիրով և կամաւք ցանկեցի ղսբս. զայս տառ մեծ։

Գրիչ՝ Աւետիս երէց

բ

188ա Զմեղսամած գրիչս տէր Աւետիս տառապեալ, հանդերձ ծնողօք և ամենայն զարմօք յիշեցէք ի բարին։

գ

231բ Փառք...։ Ցանկացող եղեալ աստուածային պատուիրանիս, քահանայումն, կրաւնաւոր ճգնայտեսակ տէր Կոստանդ, աստուածասէր, աստուածիմաստ...։

դ

232ա Փառք..., որ ետ կարողութիւն տկարութեանս իմոյ սուտանուն և մեղաւոր Աւետիս երեցու հասանել ի վերջ գրիս. ամէն։ Որ ցանկացող եղեալ այս պատ[ու]ական գանձիս և անգին մարգարտիս, պատուական և առաքինի և սրբասէր... Մկրտիչ և իւր ծնաւղաց <իւրոց> Մեհանին և մաւր Մեղուշին. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄկրտիչն և իւր կին Նքար խաթունին։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր Մկրտիչ և կողնկցին՝ Նքարին, որ ետ հալար վաստակոց էառ սբ. Աւետարան, և իւր հոգոյն յիշատակ և իւր ննջեցելոց ամենայն։

Ի թուականիս ՌՂԵ (1646), երկիր Խաւայ, ի գիւղն Ղարայջալուայ, ի դուռն Պետրոս-Պողոսին կատ[ար]է։

361
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6201 (1038 թ.)

Գրիչ՝ Մխիթար Մշեցի

ա

191բ Ես՝ անարժան Մշեցի մեղաւոր երէցս Մխիթար սուտանուն, որ կու կենամ ի Կարնոյ քաղաք, ի Կան, որ է յԱրզռոմու քով, որ եկի յԱղբուրք գեղս ու կարդացի զԱւետարանիս յիշատակ ու օրինակեցի, որ էր թիվ Հայոց ՌՂԵ (1646)։ Վասն Աստուծոյ սիրուն համար զՄխիթար սևերէս երէցն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք...։ Ով եղբայրք, առաջին թիվ որ գրած է ղԱւետարանս ՆԶԷ (1038), գրողի անուն նսագր է՝ ճրգնաւոր աբեղայ, սբ. կաթողիկոս Պետրոս ու Դէոսկորոս. ու թէ զթագաւոր ասես Միխայէլ է անուն, Հայոց թագաւորի ժանանակն է գրեր, սբ.

քահանայի ձեռամբ. ես կարդացի ու օրինակեցի։ Ով որ կարդայք ողորմի ասէք Մխիթարիս, *Աստուած ձեզ էլ ողորմի։*

Բ

242բ *Ով սբ. ընդերձողք, զսբ. Աւետարանի յիշատակն ես՝* Մխիթար Մշեցի *մեղաւոր երէցս, որ կու կենամ ի* Կան, *կարդացի և օրինակեցի ի* Ղուկաս *գլխուչեմ ի* Յոհան *գլխու յառաջն եմ գրեր. գիտ և կարդայ։ Զէգէնորու Աւետարանի[ն] թվական ու զայս Աւետարանին գրեր եմ էգէնորուն՝ երեք հարիւր ու ընբսուն ու վեց է թիվ (947). ու այս, որ չորս հարիւր ու ութսուն ու եաւթն է թիվ (1038)։ Գիտ և կարդայ և զանարժան* Մխիթարս *յիշեայ և մեղացս թողութիւն շնորհեայ։ Ես օրինակեցի ի թվականիս Հայոց ՌՂԵ (1646), ես՝* Մխիթարն:

դ ե բ գ բ թ ա ե
ր տճ ծ լժ բ տ

սս վս ճճ իի ժժ եդ

ա վս.[12] *ամէն. տէր* Մխիթար *է, ով ընդերձողք։*

Ես ձեր հողն եմ և փոշին, որ կու կոխէք, չէ հպարտանալոյ, այլ ուրախանալոյ. ամէն։

362
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 6663

Գրիչ՝ Սրապիոն երէց

265բ *Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ գրչի* Սրապիոն *երէցս գրել զերեք գլուխ Աւետարանն և ծաղկեցի աւդնականութեամբ հոգևոր ուսուցչին իմոյ՝* Մկրտիչ *դպրի, ի թեվականութեան Հայոց ՌՂԵ (1646), ի հայրապետութեան Տեառն* Փիլիպոս *կաթողիկոսի և ի առաջնորդութեան գաւառիս* Սարգիս *արհեպիսկոպոսին* Սանահնոյ *Ս. Նշանին։ Եւ սովորութիւն է աստուածային արանց միշտ և հանապազ խոկալ աստուածային պատուիրանս...։*

266ա *Ըստ այսմ աւրինակի փափաքաւղ եղև աստուածային սբ. Աւետարանիս աստուածասէրն* Տաւնմազն *վասն իւր։ Որ ողորմի Տէրն ամենի հոգոյ սորա ստացողի* Տաւնմազին, *և կողակցին՝* Թինաթինին, *հայրն՝* Այաւղմիշ, *մայրն՝* Թանաարին, *որդին՝* Տուրմիշն, *դուստրն՝* Կուլփարին,
266բ Քէթէվանին, *պապն՝* Կո//կիպայ, *հանիկն՝* Էրէնայ, *հաւրեղբայրն՝* Զաքարիայ, Աթայպէկն, *եղբարքն՝* Ղաւրխմազն *և կինն՝* Սինաուխտն, *որդիքն՝* Խաւրով, Պէժին:

---

[12] *Փոխանակագիր (առաջին երկու տողերը), Սյունակագիր (երրորդ) և Գոմարագիր (չորրորդ) տողերի ծածկագրությունները կարդացվում են «Տ/է/ր Մխիթար»։*

Սայ յիշատակ անջնջելի,
Բարի զաւակ հոգոց սոցին,
Ցորժամ որ գայ Տէրն երկնային;
Անճառ փառօք իւր հայրենին։

* * * * *

363
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6989

Գրիչ՝ Ղուկաս
Վայր՝ Կռուց

ա

351ա Փառք...։ Արդ՝ շնորհիւ ամենաղաւրին Աստուծոյ աւարտեցաւ գիրքս, որ կոչի Աղօթամատուց ի լաւ և յրնտիր աւրինակէ, այլ և սակաւ ինչ ժողովեալ աստի և անտի եգաք ընդ սմա, որ է Նարեկացի և Աւետարան, և սակաւ ինչ քարոզ և քերական, և ժամակարգութեան խրատք և այլ սոյնպիսիք, և եդաք ի մի տուփ։ Աւարտեցաւ ի Կռուցու անապատն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին, որ է երկիրն Վանայ ծովապատ կղզի։

351բ Գրեցաւ ձեռամբ բազմամեղ և անարհեստ Ղուկաս կրաւնաւորի, որ զանուն ունիմ և ոչ զգործ <և ոչ>, գրեցի զսա ի մխիթարութիւն տառապեալ անձին իմոյ և անջինջ յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ կենդանեաց և ննջեցելոցն, ի թվին ՌՂԵ (1646)։ Որ և ի սոյն ամի եղև ահագին շարժ յերկիրս Վանա[յ], ի ցարութեան ճրագալուցի շաբաթ աւրն ի մէջ գիշերի, և արար բազում աւեր, մանաւանդ ի Վան և ի Վարագ։ Եւ բազում եկեղեցիք տապալեցան և շինուածք կործանեցան, և բազում ոգիք մեռան ի յաւերակի, վասն ծովացեալ մեղաց իմոց։ Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ով հարք և եղբարք իմ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով թողութիւն արէք սխալանացն և հարևանցի գրոյն, զի կար մեր այս էր։ Արդ՝ լի բերանով և ուղիղ սրտիւ յիշեցէք ի Քրիստոս զանարժանս և զծնաւղս իմ, զկենդանիս և զհանգուցեալսն...։

բ

10բ Զանարժան հողս զՂուկաս մեղաւք մեռեալ ոգիս և զծնաւղսն իմ աղաչեմ յիշել ի տէր Քրիստոս, և դուք յիշեալ լինիք...։

364
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7985

Գրիչ՝ Անդրեաս երէց

301բ Փառք...։ Շնորհիւ Տեառն սրկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախաւս և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ սբ.

Աւետարանս, ի լաւ և յընտիր աւրինակէ։ Ապա և ես ծեր և տկար, և
ցաւագար էի. և ես իմով տկարացեալ բնութեամբս, բազմամեղ և անար-
ժան, սուտանուն Անդրեաս էրէց[ս] գրեցի զսբ. Աւետարանս՝ աւրինակ
լաւ և յընդիր։ Ապա ես տկար և ծեր էի. և եթէ գրչութեան արուեստին
302ա կամ զգրա // դարձութեան շեշտին և բրդին, և պարուկին, և ուռականու-
թեանցն, ե այլ սխալութեան ի ծրողես է, ըստ տկարիմաց տեսութեան
իմոյ և զանարժանս և զփանակիս ի///աց յիշես [առ] ի Տէր։ [Ո՛վ]
զեղբարք, ես զ///աւ ինն որդ[ոց] և դստեր[աց] հայր էի. մահրն այն-
պէս ջնջեաց, որ բնաւ մեկ չմնաց, մնացի պաշարեալ, և գրեցի զսբ.
Աւետարանս ի դուռն Ս. Աստուածածինիս արտասուախառն աչաւք, հա-
ելով ի դուռն ողորմածաց, թոչնոց ձագն ոնց կու հաի զմայր, երբ մարխ
բերե որ ուտեն, ես այլ այնպէս կու հաի թէ երբ կերակ գայ, որ ուտեմք,
մեկ աւր քաղց, մեկ աւրն ծարաւ անցուցի։ Արդ՝ գրեցի սբ. Աւետարանս
302բ թվին ՌՂԵ (1646)։ Յիշեցէք // զհայրն իմ՝ Զաքարիա քահանայն և
զմայրն իմ՝ Գուլադեն, և զեղբայրն իմ՝ Մինաս կրաւնաւորն, որ Ի (20)
ամ ի յանապատի եկաց խարազնազգեստ, քրթաջամբ, և զիս անարժան,
և զկողակիցն իմ՝ Գուլպաղին, և զորդ[ի] իմ Գրիգոր վարդապետն։
Յիշողքն՝ յիշեալք լինին առաջի Քրիստոսի...։

365

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 8454

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց գեաւղ

ա

404բ Փառք...։
407ա Այս մատենիս աստուածաբան;
Զանազաննալ ականցս որ կան,
Եւ գծագրել բաբունին այն,
Որ Սիմէոն կոչեն անուան։
Վարուք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճրգնողական,
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդւոց մարդկան։
Փափագեցաւ իբր զեղջերայն,
Յաղբերս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարեալ ետ հրաշազան։
Զոր ես չարեացդս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Աւետիս հողս և անարժան,
407բ Կատարեցի // զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,

Հոգւովս յօժար և ժրրական
Բազում ջանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ-ամեան,
Ղե թիւ ընդ նրման (1646),
Աւարտեցաւ սա ի լրման,
Տէր Աւետիսին ի վայելման։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Ցիշման առնէք ըզմեզ արժան,
Զ Աւետիս հողս և անպիտանս։
Եւ դուք յիշիք առ Տէրըն բան,
Ցորժամ գայցէ ի դատաստան,
Լրսէք ըզձայնն երանական,
Զեկայք աւրհնեալք հաւրն իմ արժան։
Աղաչեսցուք զհայրն գրթական,
Զերրորդութիւնըն միական,
Նրմա տացուք փառս անխափան,
Որ է աւրհնեալ միշտ յաւիտեան։

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս և
408ա խնկալի տուփս և զանազան ծաղկ//աւէտ բուրաստանս... որ կոչի Շա-
բակնոց ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոդնէ-
մեզ և անիմաստ դրչի մեղաւոր Աւետիսի։ Շնորհիւ Տեառն սկսա և ողոր-
մութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌՂԵ (1646), ի դեպաւղս
որ կոչի Աւրնդաց, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս.
Գէորգա[յ] զօրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեզիմք
ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ես քան զես սաստկանա
բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ես առաւել ազգիս Հայոց,
վասն ծովացեալ մեղաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ
408բ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանար//ժան դրծողս
զԱւետիսս, և զծնօղքն իմ՝ զՎարդան քահանայն, և զմայրն իմ՝ զՄահ-
մուրն, և զպապն իմ՝ զԹումա քահանայն, և զտղայքն իմ՝ զԹումէն և
զՎարդս, և զնոցա մայրն՝ զԱռիտն, և զվարպետն իմ՝ զտէր Կիրակոսն,
որ բազում աշխատանք քարշեցին հետ անարժանիս և ուսուցին զիս։
Աստուած զնոցա լուսաւորէ և պայծառացուցանէ յիւր սբ. միւսանգամ
գալստեամբն. ամէն։

Բ

Եւ արդ՝ կրկին անգամ աղաչեմ զձեզ, հարք իմ և եղբարք, լի սրտիւ
և կատարեալ բերանով Աստուած ողորմի ասացէք Ապարանցի Սիմէոն
վարդ[ապ]ետին, որ ետ զսա գծագրել և ոսկով զանազան ծաղկել, և
ետ զսա իւրն յիշատակ, ի ձեռն հոգևոր աշակերտին իւրոյ տէր Աւետի-
սին, իբր թէ արժանաժառանգ և հոգևոր // որդի[13] գոլով առ նմա. շնոր-

[13] Հիշատակարանի շարունակությունն ընկել է, այն վերցրինք Բարղամի հիշատակարան-ների ժողովածուից (№ 6333)։

հեաց զՇարականս տէր Աւետիսին, ևս առաւել վարդ[ապ]ետին իւրոյ Սիմէոնին: Եւ Աստուած ողորմեսցի ասողքդ յիշեալ լիշիք առ Քրիստոս...։

Գ

146ա Ով մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱպարանցի զՍիմէոն վարդապետն, որ ետ գրել զսա և ոսկով զանազան զարդարել և ետ ի ձեռն աշակերտին իւրոյ տէր Աւետիսին, յիշատակ իւրն և իւր ծնողացն, յիշեցէք...։

Ծաղկող՝ Յովանէս Ղրէցի

Դ

1բ Զբազմամեղ և յոքնաթշուառ նկարողս զՅովանէս Ղրէցին, և զիմ ծնաւղսն, և զարմն, և զուսուցիչսն [յիշեցէք]։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի յողորմութիւնն Աստուծոյ. ամէն[14]։

Ե

256բ Ով սբ. Յակոբ, եղբայր Յիսուսի,
Որդի հիւսեան Յովսէփա[յ] ծերի,
Այլ և վեհիդ, որ կա խորանի
Զանուն չգիտեմ, թէ ով ոք լինի.
Այլ ի յաւուրն աներեկի,
Դուք հայցեցէք վասն ծաղկողի,
Խաչի լուսոյն առն է արժանի։

366
ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ
Երևան, № 8623 (1312 թ.)

249ա Յիշատակ է տեսրակս Տիլանին և հօրն՝ Շաաուրևին, մօրն՝ Խանսուլթանին, հօրեղբօր՝ Խումարի[ն], Բարսեղին, ի դուռն Ս. Կարապետին, թվին ՌՂԵ (1646)։

367
ԽԱՉՏԵՏՐ
Երևան, № 8657 (ԺԴ դ.)

144ա Յիշատ[ակ] է խաղտետրս տէր Կարապետին, և որդոյն նորա՝ տէր Անուանին, և իւր դուստրն՝ Նորթուին, որ ելաւ մօրէ, այն տարին տանուտէ[ր]ն Ա[յ]ծեղջուրն էր. մեծ թիւն ՌՂԵ (1646)։

---

[14] Գրված է կարմիր մելանով նկարի տակ։

368
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8906 (988 թ.)

Կազմող՝ Թումայ

224ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար յ[ուսո?]յ և մեղսաթաւալ Թումայ գրչիս; որ կազմե[ցա]ք զսբ. սրբասնեալ, և մեծապայծառ, և անուանի, ընդ ամենայն ոլորտս տիեզերաց Սբ. Յովհաննէս անուն Աւետարանս, որ կազմեցաք զսբ. Աւետարանս, յիշատակ տէր Մարտիրոսին:

Դարձեալ աղաչեմ յիշել զիմ ազգ և աղինս ամենայն, ևս առաւել զզիմ պապ տէր Ղուկասին և իւր եղբարցն՝ Մարտիրոսին և Սաճակին, և իւր կողակցին՝ Եղիսաբեթին, և իւր որդոցն՝ Մաթոս[ին] /// և իւր դստերացն։ Եւ զմիւս եղբօրն՝ Պետրոսին, և իւր կողակցին՝ Սոլթանին, և իւր որդոցն՝ տէր Մարտիրոսին և դեռաբուս մանկանցն՝ Ղուկասին և Ազիզբէկին, Սարգիսին և իւր կողակ[ց]ին։ Դարձեալ աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք, յորժամ հանգիպիկ սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ գրեալսն, զհանգուցեալսն և զկենդանիսն, և գուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի...։

Եւ <ևս> դարձեալ աղաչեմ՝ կողկողագին սրտիւ, և լալագին աչօք,
224բ և փղցկեալ սրտիւ աղաչեմ // /// սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեան յիշեսջիք ի սբ. յաղաւթս ձեր զԻրդմաշինոյ ժողովուրդն, ևս աւաւել զքահանայքն՝ սրբասնեալ զտէր Յովհաննէս ծերունին, տէր Առաքելն, և զտանուտէր Դանէլն, և զօլվաթավոր Մատուրն, և առ հասարակ ամենայն Իրդմաշինոյ ժողովրդեանն, առ Աստուած փոխեցելոցն, կենդանեացն և ննջեցելոցն. ամենեցուն լի սրտիւ ողորմի ասացէք սոցայ, վասն զի օգտակար եղեն Շէֆիրիցանց տէր Մարտիրոսին, փոքր ի շատէ ողորմած եղեն և տվին կազմել զսրբազան սբ. Աւետարանս և սքանչելագործ, որ Ս. Յովաննէս կոչի անուամբ։

Աստուած ողորմի ասացէք զվերոյ գրեալ ժո[ղովրդ]իցն և դուք ///...

Ի հայրապետութ[իւն սբ. էջմիածնայ տեառն տէր Փիլիպպոսին, և թագաւոր]ութիւնն Պարսից փոքր շահ Ապազին, ի առաջնորդութիւն Բրջնու տէր Փիլիպոս արհեպիսկոպոսին, ի մելիքութեան Մա[ղ]կունոյ ձորիս տէր Աստուր մէլիքին և այլոց հարցն ամենեցուն. ամէն...։

Թվին ՌՂԵ (1646)։

Դարձեալ աղաչեմ յիշել զտէր Մարտիրոսին և իւր կողակցին՝ Մարիամին, և իւր հօրեղբօր որդոյն՝ Մաթոսին, և կողակցին՝ Մարիամին, և իւր դստերացն՝ Գուլումին և Արզուքանին. դարձեալ Պետրոսի յետի
225ա կնոջն՝ Մարիամին և իւր որդոցն՝ Օլֆին և Առաքելին: Եւ առաւել // /// frանին, Մեհրիշատին և Մուրվաթին և առ հասարակ ամենեցուն կենդանեացն և ննջեցելոցն Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դարձեալ աղաչեմ և ինձ Թումայ գրչիս և զաշակերտսն իմ սիրելի դեռաբուս մանկունք զՊայրամն և զՎարդանն: Եւ զհարազատ հոգոյ մայրն իմ՝ Խաթունն, որ և բազում անգամ կերակրեաց զմեզ. Աստուած իւր հոգոյն թողութիւն արասցէ և ինձ սուտանուն գրչիս անմեղադիր լերուք։ Հայրք և եղբայրք, մի մեղադրէք ինձ, զի յոյժ խախտեալ էր և

տրորերալ բաղմաժամանկեայ. քանզի է (7) հարիւր տարի անցեալ էր և ապա ի մեղ հասեալ կազմեցաք։ Զսր. Աւետարանս բազում փորձանաց հանդիպեալ էր պէսպէս, աղդի տզդի, ոմն ժամանակ ի գերութեան ի ձեռս անօրինաց։ Եւ անօրէնք ղսբ. սքանչելագործ Աւետարանս ձդեալ ի մէջ հրոյ, վասն դի այրեսցէ. և սա զօրութեամբն Քրիստոսի և իւր սքանչելագործութեամբ, որ է ինքն Քրիստոս, և Քրիստոսի քաղցրաշունչ վարս և տնօրէնութիւնս ի իւր կառուցեալ առաշի չարագործաց թռուցեալ անկաւ ի գետն ///[15] և անդ ի մէջ գետոյն կացեալ։ Եւ ունի սբ. Աւետարանս նշան. առ ինքն ունելով հրոյ այրեալն և դՊլթփիկ ձկան կերածն։

226բ Տեսողացն փառս տան Աստուծոյ և սբ. Աւետարանիս // ///։

Բայց և ես տկարս և սակաղար հոգով, յերես անկեալ աղաչեմ, ո՛վ սբ. լուսակիր դասք քահանայիցդ, դի վասն այսորիկ ոչ եկն ի տեղ իւր կազմ և նորոգութիւն. քանզի ոռքն և առաջին ճակատն և յետի լուսանցն բոս էր և որպէս գլուխն, դի տեսանէք պատրոյկն և շիրազն ոչ եկն ի տեղ իւր. քանզի ճղվածն և ձկան կերած տեղն կարկատան ոչ էառ, վասն այսորիկ ոչ եկն ի տեղի ամենայն բանն կազմիս, վասն այն աղաչեմ զձեզ, զի անմեղադիր լերուք ինձ և դուք ազատեալ լիջիք ի մեղաց ձերոց. ամէն[16]։

369

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 10622 (1511 թ.)

Նորոգող՝ Յովանէս երէց
Վայր՝ Գոմա գիւղ

353բ Նորոգեցաւ Զայնաքաղրս ձեռամբս ան[արժան], սուտ ու փուտ Մշեցի Յովանէս երեց [դրչ]ի, [ի] գիւղն, որ կոչի Գոմա, ի դուռրն Ս. Նշանին, ի թուին ՌՂԵ (1646)։ Ով ոք հանդիպիք սորայ կարդալով՝ յիշեցէք ի յաղաւթս [ձեր]։

370

ՏՕՆԱՑՈՅՑ (ԺԶ Դ.)

Մագիստրոս, № 76

Գրիչ՝ Ալէքսան

11 Յիշատակ է սբ. տառս ի նուաստ և տառապեալ երիցէ և զհայրն իմ՝ Ազարիա քահանայն, և զմայրն իմ՝ զԽանումն, և զեղբայրն իմ՝ Ըստեփանոսն և Խաչատուրն, և քորքն իմ՝ Մուհուրաթն, Սուլթանաղէն, Զանիբէկին, և զեղբօր որդին իմ՝ Աբրահամն, Եփրիանոսն, և Գրիգորն, և Սուքիասն... և զմիւս քոյրն իմ՝ Մասում և զնորաբողբոջ որդիքն իւր՝

[15] Գետի անունը եղծել են, կարելի է կարդալ «Խաչեն»։

[16] Կազմի երկրորդ կողի երեսին ամրացված է խաչ, ուր արձանագրված է «Ի սբ. Աւետարանս կոստղեցաւ ձեռն Եզիկին. թվին ՌՃԳ (1654)»։

Ֆռանգուլն, Փանոսն, Յարութիւնն: [Գրեցաւ] ձեռամբ Ալէքսան քահանայի... ի ՌՂԵ (1646) թվին, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոսի... ի դրան սբ. աստուածանկար, առաքելայարկ խորանիս և քրիստոսարնակ սբ. տաճարիս Քրիստոսափորի, և ընդ հովանեաւ սբ. Թումայի առաքելոյ աջին մխեցելոյ ի կողն Յիսուսի և սրբոյն Յակովբայ սբ. Նշանիս... եղի յիշատակ ի դուռն Ս. Քրիստոսափորի։

371
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 787

Գրիչ՝ Յովակիմ քահանայ
Վայր՝ Տումարզայ

216բ Փառք...։ Գրեցաւ հոգիաբուղխ և աստուածային գանձարանս ի թուին Հայոց ՌՂԵ (1646), ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի, և ի հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Թորոս վարդապետի, և ի յառաջնորդութեան Առաքել պարոնտէրի. ձեռամբ անարհեստ գրչի՝ Յովակիմ քահանայի, ի գիւղն Տումարզայ,
217ա // ի դուռն Ս. Աստուածածնայ և Ս. Պետրոսի և Պօղոսի առաքելոցն և այլ սրբոց, որք աստ կան հաւաքեալ։

372
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 790

Գրիչ՝ Մեսրովբ երէց
Վայր՝ Վան

217բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի Վան քաղաքի, ընդ հովանեաւ Տիրամայր Ս. Աստուածածնին և Ս. Հրեշտակապետաց Գաբրիէլի և Միքայէլի, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և յառաջնորդութեան Վարագայ Կիրակոս վարդապետի, ի թուին Հայոց ՌՂԵ (1646) ամին, ձեռամբ անարժան Մեսրովբ երիցու... արդեամբ տանուտէր ուէս Ամիրխանի:

373
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 541

Գրիչ՝ Պետրոս երէց

442 Զայս օրինագիրս թէպէտ որ վերն գրեալ կայ, Աստուած ողորմի նմա. և մեր տեսեալ զայս գեղեցիկ պատմութիւնքս ինչ որ կայ գրեալ
443 // կամ թէ ինչ է իցէ, մեզի պիտոյ եղեալքն ըստ կարեաց իմոց գրեցի, ինչ և իցէ՝ թէ ծուռ և թէ շիտակ...։ Ես՝ անարժանս Ս. Գէորգայ եկեղեցւոյ եղեալ անուամբ Պետրոս էրէցս գրեցի թվին ՌՂԵ (1646)։

374
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 29

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Յամիք

194 Փառք...։ Գրեցաւ երգարանս հոգիաբուղխ աստուածահօր դաւթեան երգոյս, ի թուականիս Հայոց ՌՂԵ (1646), յաշխարհս Միջագետաց, ի քաղաքս Տիգրանակերտ, որ յայժմ ասի Յամիք, ընդ հովանեաւ Սրբոյն Կիրակոսի, և մօր նորա Յուղիտայի, և Սրբոյն Սարգսի զինաւորին, և որդոյ նորա Մարտիրոսին, և այլ բազմահաւաք սրբոցս որ. աստ կան ի պահպանութիւն քրիստոնէից, ի լաւ և յընտիր օրինակէ, որ Գառնեցի կոչի, ձեռամբ մեղսամած Յոհանիսի, ի վայելումն[17]. զոր կողկողագին դիմօք և արտասուահար աչօք յերես անկեալ աղաչեմ ղձեղ, որ կարդայք զ[ս]ա և կամ յօրինակեք, ողորմիս ասել ինձ անարժան գրչիս և ստացողի սորին։ Եւ որ յիշէ և Աստուած ողորմի ասէ...։

375
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 57 (ԺԶ դար)

Հետ. ստացող՝ Խաչատուր Երէց

ա

282 Այս Սաղմոսարանս մեր խոճա Սաֆարին է, առեր է տէր Խաչատուր երիցուն, Թ (9) ղուրեալ. իւրեան տղին անուն Մովսէսին համար առաւ։

Թվին ՌՂԵ (1646) ամսոյն... թէ հարցունես՝ ո՛չ զտարին գիտեմք ոչ Զզամիսն, մեր մտաց այս ///[18]

բ

Զմեղապարտ և անարժան գրչակս զԽաչատուր երէցս[19] յիշեա ի Տէր, ո՛վ եղբայր։

376
ԱԻԵՏԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 172 (1590 թ.)

722 Դարձեալ յիշեցէք Խանումն, Յակոբն, Միրուման, Դալաթն, Ուտիանէն, Շիրինանն իւրեանց ամէնեցունին։ Թվին ՌՂԵ (1646) էր գրեցաւ։

---

[17] Ստացողի անունը չի գրված։

[18] Բ. Սարգիսյանի հաղորդմամբ «մնացեալ երեք չորս բառերն քերուած են» (էջ 282)։

[19] Բ. Սարգիսյանը գրում է. «Խաչատուր երէցս եթէ Մամցին է, գրած ըլլալու է 1520 մոտերը. իսկ եթե Արաբկիրցին՝ 1664-ին» (էջ 282)։ Ձեռագրի նկարագրության մասում գրչության ժամանակը նշված է 1640—1666 (էջ 280)։

377

ԳԻՐՔ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՁՁՎՍ, III, № 446

Ստացող՝ Յակոբ եպիսկոպոս
Վայր՝ Ձէքուն

ա

647 *Փառք... Գրեցաւ Ձեռնադրութեան դիրքս ի թվին ՌՂԵ (1646), ի խնդրոյ տէր* Յակոբ *անարժան եպիսկոպոսիս, ի վայելումն անձին իմոյ և ի յիշատակ հոգ[ւ]ոյ իմոյ, և ծնաւղաց իմոց, և ամենայն ղարմից իմոց. ամէն։ Գրեցաւ դիրքս յի* Ձէքունոյ *վանքն, ի Աստուածածնին*
648 *դուռն, յառաջնորդութեան տէր* Ներուն *արհեպիսկոպ//ոսին։ Ով որ ողորմի ասէ մեզ և ձեզ ողորմեսցի Աստուած։*

բ

Գրիչ՝ Յակոբ

Եւ զմեղաւոր Յակոբ *գծողս յիշեցէք։*

378

ՃԱՇՈՑ

ՄՁԵՊ, I, № 15, տե՛ս նաև ՄՁԵՍ, № 15, էջ 104—105

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

96 *Փառք...։ Արդ՝ շնորհիւ տեառն հօր Աստուծոյ և կարողութեամբ Միածնի որդոյ իւրոյ Յիսուսի Քրիստոսի և զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ կենարարի, երջանիկ և երանելի հայրապետն մեր տէր* Գրիգորն, *որ է սա ի* Վերի աշխարհէն, *յերկրէն* Գանձասարու։ *Սա մինչդեռ պատանեակն էր եկն առ* Պետրոս *վարդապետն, որ գլուխ վարդապետաց էր յայնմ ժամանակին և աշակերտեցաւ նմա։ Եւ նա տեսեալ զվարս նորա, զի էր ճգնազեաց, իմաստուն և հանճարեղ յամենայն բանս և ի գործս, և առաքեաց զնա յ*Երուսաղէմ *սպասաւորել տնօրինական տեղացն Քրիստոսի. զի էր յայնմ ժամանակին Հայոց վիճակն որ* յ*Երուսաղէմ ի բազում պարտուց ներքոյ էր անկեալ՝ մինչ զի ամենայն անօթք, որ կայր, յայլազգիք էր գրաւեալ։*

Սա բազում աշխատութեամբ զպարտքն վճարեաց. զի տեսին մեծամեծքն և իմաստուն վաճառականք Հայոց զբարի վարս նորա և ամենեքեան ձեռնատու եղեն նմա, մինչ որ եհաս ի յաստիճան քահանայութեան։ Եւ ապա շնորհօք Հոգւոյն Սրբոյ արժանացաւ առնուլ զպատիւ հայրապետական, և նստաւ առաջնորդ և վերատեսուչ վիճակիս Հայոց՝ որ յ*Երուսաղէմ։ Եւ ամենայն ազգս Հայոց պատուէին զնա, սարսէին և դողային յահէ նորա վասն բարի և առաքինի վարուց իւրոց։ Սա խ (40)*
97 *ամ յաջորդեաց զաթոռ ազգիս // մեր Հայոց ի Ս. Յակոբ՝ որ էր աթոռ Յակոբայ Տեառնեղբօրն և Գլխադիր Յակոբա[յ]՝ որդոյն Զեբեթեայ,*

վասն զի ի մեր Լուսաւորչէն Հայոց մինչև ցայսաւր ոչ ոք գտաւ նման սմա, ո՛չ ի վարդապետաց և ո՛չ ի հայրապետաց. և թէ որչափ նորոգեաց և պայծառացոյց զեկեղեցիս աղգիս Հայոց՝ որ յԵրուսաղէմ:

Սա շինեաց ի Ծնունդն, զՄեծ խանն և զվրայի դարպասներն և զայլ խցերն և Բ (2) անգամ զՓրկիչն նորոգեաց և զՀրեշտակապետն մարմաթ արաւ. և զՍ. Յոհաննու եկեղեցին նորոգեաց. և առաւ Գ (3) կամար ի Ս. Յարութեան վերնատունն. և շինեաց զՆոր խանն, որ ի Ս. Յակոբ: Եւ արար անաւթք ոսկեղէնք և արծաթեղէնք, տիպակք հանդերձեղէնք, և թաքերք մարգարտեղէնք և այլ բազում անաւթք, զոր ոչ կարացաք ի թիւ արկանել. այլ որ դիտակն է գաղտեաց // նա հատուսցէ զվարձս և զփոխարէն իւր:

Ապա ի թվին Հայոց ՌՂԴ (1645) ետուր զայս գիրքս գրել իւրն յիշատակ և ծնաւղաց իւրոց, հօրն՝ Մարգարին և մօրն՝ Թուրվանդին, և եղբարց, և քրւերցն, և ամենայն ազգականացն:

Եւ արդ՝ մինչդեռ ի Վարդավառի կարգքն էիք հասեալ ի գրել գրոցս, եհաս վախճան հայրապետին մերոյ՝ տէր Գրիգորիս, և արար մեզ մեծ սուգ և տրտմութիւն. և ոչ թէ մեզ միայն, այլ ամենայն ազգիս Հայոց: Զի յորժամ գնաց բաւթատուն յաշխարհս Հայաստանեայց, ամենեքեան իբրև զսիրելի եղբայր և զմիամօր որդի լային և կոծին զնա: Ապա մինչդեռ կենդանի էր, կոչեաց զԱստուածատուր վարդապետն, եդ ի յաթոռն իւր առաջնորդ ազգիս մեր, որ յար և նման էր նմա, գործովք առաքինութեան և ամենայն վարուք. եւ ասաց, թէ «Ով որ Աստուածատուր վարդապետին հնազանդի, աւրհնի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ». զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ. ամէն:

Եւ արդ՝ կրկին աղաչեմ, ով որ կարդաք, ասացէք Աստուած լուսաւորէ զԳրիգոր հայրապետի հոգին, և զիւր ծնողացն, և ամենայն արեանառու մերձաւորացն. ամէն:

Եւ արդ՝ ես անարժանս և եղկելիս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստս ի գիրս գրչութեան Յոհան Հիզանցիս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զՏարոյ գիրքս, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ՂԵ (1646) ամին, ի Ս. Ծնունդն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ է վիճակ ազգիս Հայոց. ի հայրապետութեան հայկազեան սեռի Էջմիածնին տեառն տէր Փիլիպպոսին, և Սրսայ տեառն տէր Սիմէոնին, և ի թագաւորութեան այլասեռից սուլթան Իբրահիմ խանդքարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէն անաւրինաց. քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւնն և նեղութիւնն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց: Զոր յուսամք և խնդրեմք ի յամէնառատ, քաղցրկամք մարդասիրէն Աստուծոյ, որ վերստին նորոգեսցէ զաթոռս և անվնաս պահեսցէ յամենայն հնարիցն սատանայի. ամէն:

Արդ՝ որք հանդիպիք տեսութեան սորա՝ կարդալով կամ աւրինակելով, զաւելորդն բառնայք և զպակասն լնուք և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր: Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ, ով սբ. հարք և եղբարք, յիշեցէք ի Քրիստոս, մի Տէր ողորմայիւ զգրիչս, և զծնողսն իմ՝ զՅովանէս երէցն, և զԱնլիհ, և զեղբարքն իմ՝ զտէր Մի-

քայլեն և զԱմիրսէթ սարկաւագն, և զայնոքիկ, որ վերայ մեզ երախտիք ունին զամենեսեան։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Գրիգոր հայրապետն, և հնազանդեալ հոգևոր որդիացեալքն հրամանաց նորին։ Նախ զտէր Աստուածատուր վարդապետն, և զիւր աշակերտն՝ զտէր Առաքելն, և զՈնոփրիոս եպիսկոպոսն, զտէր Գրիգոր վարդապետն, և զտէր Մինասն, զտէր Նիկողայոսն, և զտէր Ղուկասն, զԲ (2) տէր Կիրակոսքն, և զտէր Վարդանքն, որ մին զթուղթն կոկեաց, և զԲ (2) տէր Խաչատուրն, զտէր Յակոբն, զտէր Ստեփանոսն, որ փոխեցաւ յայսմ ամի առ Քրիստոս, զտէր Մելքիսէթն, և զտէր Յովանէսն և զտէր Սիմէոնն, զտէր Սարգիսն. և զՆնընդեան միաբանքն՝ ուր դիրքս դրեցաւ՝ զտէր Վարդան, զտէր Հերապետն, զտէր Սահակն. և զվանաց բաղում ժամանակաւ աշխատաւորքն և երախտաւորքն՝ զմահդասի Ամիրխան և զմահդասի Ագտալ Գրիգորն, զմահդասի Տաւնապետն և զմիւս մահդասի Գրիգորն, զմահդասի Մանուկն, զԱդուպն և զՅոհանէս սարկաւագն, զՄկրտիչն և զԱստուածատուրն։ Եւ զաշխատաւոր մշակքն զՅոհաննէսն, զՍահակն, զԽլղաթն, զԳուլասարն, զտնտես Մարտիրոս, զԱւետիս, զՍարգիսն, զՄիրիջանն, զՅուսէփն, զՄեսրոպն, զնաջար Յոհաննն, զթերձակ Յակոբն, զՍաֆարն, զՂազարն, զՄուրատն, զՂուկասն, զՅովասափն, զՅովհաննէսն, զՍտեփանոսն, և զայլ ամենայն աշխատաւորքն, զքահանայքն և զաշխարհականքն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք և յիշողդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

379

ՇԱՐԱԿՆՈՑ

Մ8ՁԵՊ, VI, № 1984 (1639 թ.)

Նվիրատու՝ Սիմէոն կաթողիկոս

571 Ի թվին ՌՂԵ (1646), ես՝ Սիմէոն կաթողիկոս եկի ի սբ. Երուսաղէմ և զտէր Աստուածատուր վարդապետն, ամենայն աշխարհի հաւանութեամբ, հաստատեցաք առաջնորդ սբ. Երուսաղէմայ. և եղի զՇարակնոցս զայս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի Ս. Յակոբ, զոր լաւ բռնողն և խնամ տանողն օրհնի յԱստուծոյ։

380

ՇԱՐԱԿՆՈՑ

Մ8ՁԵՊ, VII, № 2146

Գրիչ՝ Մովսէս դպիր
Վայր՝ Ատանա

ա

193 Փառք..., Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի թվին Հայոց ՌՂԵ (1646), ի մայրաքաղաքն ի յԱտանա, ի դուռն Ս.

Աստուածածնին և Ս. Ստեփանոսին, որք կան ի յաւգնութիւն ամենայն հաւատացելոց. և ի հայրապետութեան տեառն տէր Սիմէոնի, և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմին:

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա պաշտելով, տեսանելով, անմեղադիր լերուք վասն վատութեան և սղալանաց գրոյս, զի գեռ մանուկ էի և տգէտ և ոչ ուսեալ ի վարպետաց։ Եւ ես՝ անպիտան և մեղսասէր Մովսէս դպիրս դրեցի զսա կարողութեամբն Աստուծոյ։ Եւ դարձեալ յիշեցէք ի յաղօթս ձեր զյուսուցիչն իմ՝ զտէր Միքայել քահանայն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, այլ և զՀռոմկլայացի Գրիգորն, որ գրոց կազմն ուսոյց, և զգրոցս բազում պակասութիւն, մանաւանդ և զգրադարձն. Քրիստոս ողորմի իւր հոգևոր և մարմնաւոր ծնողացն հոգուն։

Եւ դարձեալ յիշեցէք զմեղաց գերի զՄովսէս դպիրս, և զծնաւղսն իմ՝ զմահտեսի Պալին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և զմայրն իմ՝ զՊաղտատն, և զեղբայրն իմ՝ զԴաւիթն, և զքոյրն իմ՝ զՄարիամ, և զայլ ամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս...։

ՃՃ, ՅՅ, ԳՌ, ՌՌ, ԳԴ, ՌՌ, ԲԲ, ՆՆ, ՅՅ, ԵՌ
Ի, ԻԴ, Լ, ԻԹ, Է, ԻԹ, Դ, ԻԶ, ԺԱ, ԼԲ[20]

Բ

Զարագս ի չարիս և զծոյլս ի բարիս, զանարժան և զեղկելի և զանպիտան Մովսէս, աղաչեմ. յիշել ի Տէր։

Գ

Անմեղադիր լեր վասն վատութեան ծաղկիս։

381

ՏՕՆԱՑՈՅՑ

Մշեկ, VIII, 2592 (ժամանակ՞)

Կազմող՝ Ներսէս աբեղայ
Վայր՝ Կարմիր վանք

179 Կազմեցաւ Տաւնացոյցքս և Աւետարանացոյցքս ի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Ս. Կարապետին և Ս. Նշանին, ձեռամբ Ներսէս աբեղին, ի թվականին Հայոց ՌՂԵ (1646), ի վայելումն անձին իւրոյ տէր Բարսեղին, որ կապել տուեց զայս Տաւնացոյցքս. ամէն։

382

ԱՒԵՏԱՐԱՆ

Մուրմար, I, № 21 (1325 թ.)

Նորոգող՝ Դանիէլ

ա

25 Արդ՝ վերստին աղաչեմ զձեզ զամենեսեանդ, որք հանդիպիք այս սբ. Աւետարանիս յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր զնորընծա կրօնաւոր տէր

[20] Ցուցակի հեղինակը ծածկագրերը կարդացել է «Մովսէս դպիր»։

Դաւիթն, որ վերստին նորոգել երես զսև գիրն, զի յոյժ թուղեալ էր, որ ի կարդալ չէր իգար. վասն որոյ ետուր ինձ մեղաւոր Դանիէլիս գրեցի. ի թվին Հայոց ՌՂԵ (1646)։

Բ

Կազմող՝ Կարապետ աբեղայ

Նաև զանպիտան ծառայս ծառայիցդ Աստուծոյ, զսուտանուն Կարապետ աբեղայ զԲաղշեցի, զվերջի կազմողս յիշեցէք ի Տէր, և Աստուած ողորմի ասացէք։

383

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Մուրմար, I, № 77

Գրիչ՝ Մովսէս

71 Գիրքս սեպհականացեալ է էջմիածնի աթոռոյն, յիշատակ նմա ի Ղրիմ քաղաքէ եղեալ, ի թուիս Հայոց ՌՂ-երորդ հինգերորդին (1646)։ Գրեցաւ այս զգուշացուցիչ ձեր, ի Մսվսիսէ։

384

ԱՒԵՏԱՐԱՆ

ՋՁՎԼ, № 387

Գրիչ՝ Թումայ
Վայր՝ Դաշտ

903 Փառք... Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն Թումայիս, անիմաստ և ահմար գրչիս։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստս գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, թէ յոտից ցգլուխ չիք առողջութիւն, այլ ըստ կարի մերում, ղոր պարդևեաց մեզ մարդասէր Հոգին, բազում աշխատանաւք, անարժան ձեռաւք իմաւք, յընտիր և ստոյգ յաւրինակէ, կենաւք տառապանաւք։ Գրեցաւ յերկիրս Մոկաց, ի
904 գեաւղս, որ Դաշտ կոչի, ի դուռն // Սրբոյն Յակոբայ հայրապետին և Ս. Կեցնայ Աւետարանին, ի թուականիս Հայոց ՌՂԵ (1646). յայս դառնացեալ նեղ ժամանակս գարնանա[յ]ին, յիշատակ///

Ուստի և տեսեալ զսորայ անճառ փրկագործութիւն, ոմն պատուական Մոկացի Խըլղաթն, որ ստացաւ զսայ, ի խալալ արդեանց [և] վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց, հօրն՝ Աւետիսին և մօրն՝ Թուռանդին, կողակցոյն՝ Ջանփաշին, և որդոյն՝ Բարսեղ դրրին, կողակցոյն՝ Խաթունին, որդոյն՝ Պարսամին, դստերն՝ Թոռքէկին. Մարգարին, կողակցոյն՝ Օլքաբէկոյն, որդոյն՝ Գրիգորին, դստեր Մրաթին, Թուռանգին, քոյր Խայրին, Աբրահամին, Պարսամին։ Աստուած լուսաւորէ գիւրեանց հոգին. ամէն։

385
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄԻՆՉ, № 24

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Թովրասկան

ա

13 *Փառք...։ Արդ եղև զրաւ և աւարտ աստուածաբնակ սբ. Աւետարանս, ի թուականութեան Հայոց մեծաց ՌՂԵ (1646), ի յերկիրս Պարսից, ի քաղաքս Շօշ, որ է* Ասպահան, *ի գեօղս* Թովրասկան, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի բռնակալութեանն փոքրիկ շահ* Ապասին, *և ի հայրապետութեանն Հայոց անշարժ վիմին հաւատոյ, հանդարտախաղաց ծովուն, հա[ս]ատահեղոյս և անառիկ պարսպին տեառն* Փիլիպպոսի, *զի ի մարմնի զվարս անմարմնոց ունէր ստացեալ, հրեշտակաց ցանկալի, մարդկան գովելի, և դիւաց սարսելի, վասն զի կայր հիանալի քաղաքավարութեամբ, գործովք վարդապետէր, և քաղցրութեամբ խրատէր։ Նստեալ ի յաթոռն Թադէոսի Սբ. Առաքելոյն, ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ յաշորդ և փոխանորդ սրբոյն Գրիգորի* Լուսաւորչին, *զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։ Եւ ի արհեպիսկոպոսութեանս մերոյ վտարեալ ազգիս Հայոց, որ կեամք ի յերկիրս Պարսից՝ տէր* Խաչատրի *և քաղցրաբան վարդապետի, որ յայսմ ամի փոխեցաւ առ ցանկալին իւր՝ յաւուր մեծի ուրբաթին*[21], *ի ժամ խաչելութեան Քրիստոսի։ Զոր աէր Աստուած ընդ սբ. հայրապետսն դասակից և պսակակից արասցէ. ամէն։ Եւ ի մարմնաւոր առաշնորդութեանն պանդըխտեալ ///սր բազում աշխատութեամբ և անդադար հոգս տանի քրիստոնէից ///։*

Արդ՝ ով ք[ահանայք] և ժողովուրդք ի լուր յիշատակարանիս, ուղիղ սրտիւ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զհեզահոգի և բարեմիտ երիտասարդն զխօճա Մանուկն, *և զծնօղսն իւր՝* Աւէտիսն *և* զԱնքառամն, *և եղբարքն իւր՝ զխօճա* Թորոսն *և* զԹագէոսն, *և զպապն՝* զՔոսակ Մէլիքն, *և հանիկն՝* Ազիզփաշէն, *և զմայրենի պապն՝* Յոհաննն, *և հանիկն՝* զխանբէկին, *յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճա* Մանուկն, *և կողակիցն իւր՝* զՍալամն, *և որդին՝* զԳորգն ///

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զխօճա Թորոսն, *և զկողակիցն իւր՝* զՄարգարիտն, *և զմիւս կենակիցն՝* զՄարիամն, *և զորդիքն՝* Յոհաննն, Յարութիւնն, Աւետիքն, *և զդստերքն իւր՝* զխանբէկին, զԳայիանէն *և* զՎարդխաթունն:

Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զՄատթէոսն, *և զկենակիցն իւր՝* զխոնծաբէկն, *և որդիքն՝* Մկրտիչն, *Բ (2)՝* Ակոբշանքն *և* զՈսկանն, *և զդստերքն իւր՝* Վառվառն, Ազիզն, *և* զՀռիփսիմէն: *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոջայ* Մանուկն *և զորդին իւր՝ զպարոն* Գորքն, զՔրիստոստուրն, զՄէլիքն, Մարգարիտն, Խանումն, Թամուն *և զկողայկիցն՝* Սալամն. *ամէն։*

---

21 *Այսինքն մարտի 27-ին, որովհետև 1646 թ. Զատիկը կլինի մարտի 29-ին։*

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զխօճա Մանուկն, և զքեռին իւր՝ զԿարապետն, և զսորին կենակիցն՝ Գայիանէն, և որդիքն՝ զՊողոսն և զՋուքարէն, և միւս այլ քեռիքն՝ Ամիրսէքն և զՆահապետն: Եւ[ժ] առաւել յիշեցէք ի Քրիստոս զտէր Մարտիրոսն, զտէր Անդրէասն և զտէր Զաքարէն: Դարձեալ յիշեցէք զխօշա Մանուկն, և միւս կողակիցն՝ Եղիսաբէթն:

Բ

Այլ ես առաւել աղաչեմ զձեզ, հայրք և եղբարք և մանկունք Սիովնի, և արտասուօք համբուրեմ զգարշապարս ոտից ձերոց, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս կար[դալով կամ] օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան և զտատանեալս մեղօք Աստուածատուր գծողս, որ անարժան գոլով այսմ արուեստի, բայց շնորհօք Հոգւոյ Սրբոյ կատարեցաւ։ Այլ և զվարպետն իմ՝ զտէր Գրիգորն, որ բազում աշխատութեամբ ուսոյց ինձ զուսմունս, ես առաւել զտէր Գասպար քաջ քարտուղարն, որ ուսոյց մեղաւորիս զարհեստ գրչութեանս, հանդերձ ծնօղօք, ղարմօք...։

Գ

[Դարձեալ յիշե]ցէք ի Քրիստոս զանարժան գծող Աստուածատուրս, և զծնօղսն իմ՝ զՄարգարէն և զԳայիանէն յիշեցէք...։

Դ

Զբստացօղ սբ. Աւետարանիս տերունական,
Հեզահոգի անուամբ Մանուկըն պատուական,
Որ կատարեաց զբան խրատին աստուածական,
Գնեաց ըզսբ. մարգարիտս գեղեցկական,
Թվին ՌՂ և Ե. աւելորդեան (1646)։

Ծաղկող՝ Ստեփանոս քահանայ

Ե

Եւ արդ՝ ես մեղաւորս նրաստ անուամբ զՍտեփաննոս քահանայս, իմոյս անարժան ձեռօք և փտեալ մատամբս ծաղկեալ նկարեցի զսբ. Աւետարանս, և զարդարեցի զսա ոսկուով և լաճվարտով, և այլ գոյնդգոյնիւք, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս, բերան մի ողորմի ասացէք մեղաւորիս, այլ և ծնօղացն իմ և դուք ողորմութիւն գտջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերո[յ]։

386

ԱԻԵՏԱՐԱՆ

Տուղթն, Մ 50

Գրիչ՝ Ղազար երէց
Վայր՝ Կ. Պոլիս

18 Փառք...։ Արդ՝ գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ սրբազան Աւետարանս և մեծալիր գանձս աստուածային, ի մայրաքաղաքն Կոստանդինուպալիս, ի դուռն Ս. Հրեշտակապետացս Գաբրիէլի և Միքայէլի, և ի հայրապետութեանն էջմիածնայ տեառն Փիլիպպոսի, և սբ. յԵրուսաղէ-

մայ առաջնորդութեան տէր Աստուածատուր վարդապետին, և ի բռնակալութեանն Տաճկաց սուլդան Իպրահիմի, որ յայսմ ամի պատերազմ ունէր ի վերայ Կրէտէս կղզոյն, և ի թուականութեանս Հայոց ՌՂԵ (1646) ամի, ձեռամբ ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործողի Ակնցի Ղազար երիցու։ Եւ ցանկացաւ եղեալ սբ. Աւետարանիս աստուածասէր քրիստոնեայս Քարձեցի խօճայ Կիւրեղն. և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, գանձ պատուական և առիթ փրկութեան, և եդ յիշատակ հողւոց իւրոց և բարի ծնողացն իւրոց, հարն՝ Սիմէոնին և մարն՝ Տալէքիին, և որդւոյն՝ Թորոսին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և եղբարցն՝ մ[ահտեսի] Սողոմոնին և մ[ահտեսի] Զաքարիին, և կողակցին՝ Մանանդին, որ հանգուցեալ է առ Աստուած, և միւս կողակցին՝ Կիլիստանին և եղբաւր որդւոյն՝ Նիկողայոսին, Խումարին, Փարվարին, և որդոցն՝ Կիրակոսին, Գրիգորին, Բարսեղին և ամենայն արեանառու մերձաւորացն։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեանդ, ով քրիստոսազարդ քահանայք և մանկունք սբ. եկեղեցւոյ, որ հանդիպիք սբ. և լուսափայլ, հոգիազարդ Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշման արժանի վարկջիք ի սրբամատոյց և արժանընդունակ յաղաւթս ձեր զվերոյ դրեալ ստացաւղս սորա զՔարձեցի խօճայ Կիւրեղն և զամենայն առուարեան մերձաւորացն...։ Ընդ նմին և գրչի սղալանացս ներեցէք և սիրով խոնարհեալ ուղղեցէք, և թէ գտանի սղալ, որ մեք ոչ իմացաք, բայց գիտնոցդ մաղթեմ կրկին ուղղել։ ...

387

ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ

ՈՅԶՄՎ, № 690

Գրիչ՝ Աստուածատուր

ա

180 Արդ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, յորժամ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթ[ս] ձեր զստացող սորա զՍիմոն խանն և զծնողսն իւր՝ զմահդասի Գրիգորն և զԲէկիխաթունն, և զկողակիցն իւր[22], և զորդիսն իւր՝ զՊօղոսն, և զՊետրոսն, և զԱնդրեասն, և զդստերսն իւր՝ զԵղիսաբեթն, և զԹառղումաշն, և Ազամաթն, և զմեղապարտ և զանարժան գծողս սորա զԱստուածատուրս յիշեցէք... և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն. ամէն։ Գրեցաւ թվին ՌՂԵ (1646)։

բ

Զստացող Պարզատումարիս զՍիմոն խանն յիշեցէք, ընդ նմին և զանարժան գծող Աստուածատուրս յիշեցէք և Աստուած ողորմեսցի։

գ

Զստացող սորա զՍիմոն խանն յիշեցէք ի Քրիստոս Յիսուս։

---

22 Ինչպես հաղորդում է Հ. Ոսկյանը, ձեռագրում անունը չի գրված։

388
ԱԻԵՏԱՐԱՆ

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 316

Հետ. ստացող՝ Աստուածատուր երէց

ա

Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զանարժան էրէցս Աստուածատուր, *քահանէս, որ զանուն ունիմ և զգործս ոչ, ով հանդիպիք Աստուած ողորմի ասացէք անարժանիս, և հայր իմ՝* զՅոքսաարէս *քահանին, և զմայրն իմ՝* զՄթխաշն, *և կողակիցն իմ՝* զԽաթուն, *որ հանգեսու առ Աստուած... Թվականիս ՌՂԵ (1646) կատարեցաւ յերկիրն* Բասեն, *գիւղն* Խորարան, *թագաւորութիւն Տաճկաց սուլտան* Մուրատին: *Աստուած ողորմի* Աս[տու]ածատուրին, *որ գնեց սբ. Աւետարանս ի հալալ վաստակէն... ի գիւղն* Մամրվան:

Բ

Ով հանդիպիք ընթերցողք յիշեցէք զանարժան Աստուածատուր *էրէցս, որ զանունս ունիմ և զգործս ոչ ունիմ։*

389
ԺԱՄԱԳԻՐՔ

Արծնեան, «ՀԱ», 1962 թ., էջ 51

Գրիչ՝ Սարգիս

ա

Քրիստոս Աստուած մեր, քո անարատ ծնօղի բարեխաւսութեամբ ողորմեա Սարգիս *գրծօղի. ամէն։ Թվին ՌՂԵ (1646)։*

Բ

Դարձեալ յիշեցէք ... քրիստոսասէր և բարեմիտ կինն այս անուն /// որ տայ ևս աշխատեցօ ի վերա ժամագիրքիս և Աստուած իւր արքայութիւն պարգևէ...։

390
ՑԱՑՄԱԻՈՒՐՔ

Ճանիկեան, № 3

Գրիչ՝ Անտոն դպիր
Վայր՝ Ըստամպոլ

79 *Փառք...։ Գրեցաւ և աւարտեցաւ սրբոց պատմութիւնս, որ կոչի Այսմաւուրք, թուականի[ս] Հայոց ՌՂԵ (1646), ի քաղաքն* Ըստամպոլ, *ընդ հովանեաւ Մ. Լուսաւորչին։ Որք հանդիպիք յայսմ տառիս, յիշեցէք ի Քրիստոս զխոճա* Տատուրն, *և կողակիցն իւր՝* զՇուշան, *և որդիքն իւր՝ զխոճա* Զոնրապն *և զխոճա* Մկրտիչն, Լատիֆն *և* զՊետրոսն, Մուրատն *և զամենայն արեան մերձաւորսն. ամէն։ Որք եդին իւրեանց հոգւոյն յիշատակ ի* յԱկին *քաղաք, ի* Վան-գեղի *ժամն։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեցէք ի Քրիստոս ապիկար գրիչս* Անտոն *դպիրս, որք դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։*

391
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՈՆԱՑՈՅՑ
Երևան, № 5956 (1582 թ.)

187բ Զվերջին ստացող մատենիս զՄկրտիչ էրէցն և զհայրն իւր՝ զՄովսէս և զմայրն՝ զՊիլօրն, և զեղբայրն իւր՝ զՓանոսն, և [զ]Մեռկեռիոսն, և զՅակոբն, և զքոյրսն իւր՝ Շամամն և Զաղուռն, և զմօր հայրն՝ զՅակոբ, և զամուսին իւր՝ զՄաղման, որ ստացան զսա ի հալալ արդեանց իւրոց և ետուն յիշատակ ի ձեռն Մկրտիչ երիցու և որդոց նորա, անջնջելի յիշատակ, թվին Հայոց ՌՂԶ (1647), յունվարի Գ (3), օրն կիրակի՝ ցայտնութեան պահոց։

392
ՏՕՄԱՐ, ՏԱՂԱՐԱՆ
ՑՁՆԲԱՌ, ՊԶ,

Գրիչ՝ Ասվատուր[1]
Վայր՝ Կ. Պոլիս

49 Արդ՝ գրեցաւ սայ ի թվականութեանս Հայոց ՌՂԶ (1647) յունվար ամսոյ, ի հայրապետութեան սբ. էջմիածնայ Փիլիպպոս կաթողիկոսին, ի սբ. Երուսաղէմ առաջնորդութեան Աստուածատուր վարդապետին, ի քաղաքն Կոստանդինուպոլսի, ի դուռն Ս. Սարգսի եկեղեցոյն, ի վայելումն խոճայ Անմիրշումին. Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

393
ՄԱՇՏՈՑ
ՑՁՎՍ, III, № 403

Գրիչ՝ Սիմէոն երէց
Վայր՝ Մըխալիճ

477 Փառք... Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց,

[1] Հ. Աճառյանը նշում է, որ Հիշատակարանում բացակայում է գրչի անունը, բայց ձեռագրի 119 ա և 143 ա էջերում երեք անգամ հիշվում է Ասվատուր գրչի անունը։

ձեռամբ մեղաւոր և անարժան Սիմէոն երիցու, որ զանունն միայն ունիմ
478 և զգործն՝ ոչ։ Արդ՝ գրե//ցաւ գիրս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի գեաւ-
զաքաղաքն ի Մըխալին, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին, ի թվին
ՌՂԶ (1647) փետրուար ամսոյ Բ (2), աւրն երեքշաբթի։

Այլ ես՝ Սիմէոն գրիչս, յետնեալքս յամենայնի,
Եւ ներքևեալ նուաստ յոգի,
Եւ ծուլութեամբ զկեանս անցուցի,
Զանունս ունիմ քահանայի։
Ո՛վ եղբայր իմ սիրելի,
Խրատ մի տամ քեզ պիտանի,
Ի տղայութեան ժամանակի,
Երերալով զկեանս անցուցի,
Վայ թէ մահն ինձ հանդիպի,
Զունիմ պաշար որ զիս տանի։
Ով մանկունք սուրբ Սիովնի,
Որդիք լուսոյ առագաստի,
Որք ընթեռնուք սիրով սրտի,
Ցիշման առէք զիս արժանի։

Եւ արդ՝ խնդրող եղև այսմ գրքիս, որ կոչի Մաշտոց, հոգէսէր և հոգիընկալ...։

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր, զիս զանարժան Սիմէոն երէցս և զծնողսն իմ և զուսուցիչս իմ, յիշեցէք մի Հայր մեղա[յ]ի, և որք յիշէք՝ յիշեալ լիշիք ի միւսանգամ գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն։

394
ՏԱՂԱՐԱՆ[1]
Երևան, № 10755

Գրիչ՝ Սարգիս երէց

3բ Գրեցաւ սակաւ բանքս ի խնդրոյ աստուածասէր և սրբամիտ Գաա-
պարին, ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր Աստուած տացէ նմայ ու-
րախութեամբ վայելել ընդ երկայն աւուրս. ամէն։

Աւարտեցաւ սակաւ տաղս ձեռամբ նուաստ և անարհեստ Սարգիս
անուամբ միայն երիցու, ի թվին ՌՂԶ (1647) ամին, մարտի ԻԶ (26)։
Որք հանդիպիք սմայ՝ թողութիւն արարէք մեղաւորիս, զի և ձեզ թողցէ
Տէր զյանցանս ձեր. ամէն։

395
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4658 (1629 թ.)

Կազմի խաչի վրա Ցիշատակ է սբ. խաչս Այաինին հոգւոյն և իւր ծնաւղացն, ի դուռնն
Զարխափան Ս. Աստուածածնին։ Թվին ՌՂԶ (1647) և մայիսի Ա (1)։

396

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մուրմար, I, № 78

Ստացող՝ Յովհաննէս
Վայր՝ Համիք

ա

Փառք...։

73 *Զոր ես նուաստս յամենայնին,*
Եւ ապիրատս ի կարգ բանին.
Պիտակ անուն Յովհան[ն]էս ջնջին,
Մեղօք լցեալ աղտեղագին։
Հակամիտեալս հետ աշխարհին,
Ոչ ունելով տեսականին.
Ի ոչ գործնական արդարութիւն,
Այլ շաղախեալ մեղօք ի լին։
Տեսեալ զգանձս աստուածային,
ԶԱստուածաշունչ մեծ արփին.
Զփարթամութիւնս անանցելին,
Եւ զրել զսա քարտիսին։
Հոգւոյ իմոյ և ուսուցչին,
Զի յիշատակ միշտ եղիցին.
Ի կենդանեաց ունկն հնչին,
Ննջեցելոց տան զոզորմին։
Նախ հոգևոր իմոյ ծնողին,
Որ ծնաւ յիմաստս սուրբ գրրին,
Տէր Յովանէս ըրաբունին,
Վերատեսուչ իւր վիճակին։
Որ և Տարօնոյ դաշտ ասին,
Եւ Ղազարու վանք յորջորջին,
Երկոտասան Առաքելոց
Ի աշակերտացն Քրիստոսին։
Եւ մարմնաւոր իմոյ ծնօղին,
Հօրըս իմոյ Հա[յ]ռապետին,
Եւ մօրս իմոյ Նուպարին,
Եւ հօրեղբօրս Կիրակոսին,
Եւ միւս եղբօրն՝ Քասպարին։
Այլ զոր ի սոցանէ ծնան,
Թէ որդիք և թէ թոռունք ասին.
Հօրս քուերցն և իւրոց դստերացն՝
Մարիամին և Մարթային։
Արանց իւրոց, զոր ընկալան զնոսին,
Ատեփսին և Ղազարին.
Եւ իմ եղբօրն Ղարիպնանին,
եւ իմ քուերրս Շալչուին։
Եւ իւր որդւոյն տէր Դաւիթին,

Մանուկ տիօք կրօնաւորին,
Եւ մօրս եղբայր տէր Աւետիսին,
Բազմաչարչար աբեղային։
Եւ իւր եղբօրն Ղազարին,
Եւ հօրեղբօրն Խաչատուր պարոնտէրին,
Եւ Ղազար եպիսկոպոսին,
Փոխեցելոյն առ Տէր վերին։
Հօրս քուերն իւրոյ անձին,
Բարեմիտ մահդասի Սառային.
Նահատակեալ յանաւրինաց,
Պսակեցաւ Տեառնէ վերին։
Երկրորդ քուերքն՝ Սուլթանին,
Եւ երրորդին՝ Թիլիաթունին,
Եւ ամենայն արեանառու,
Մերձաւորացն ազգատոհմին։
Եւ մերոյ երախտաւորացն,
Հոգևոր և մարմնաւորին.
Եւ իմ հոգևոր հօրըս,
Կարապետ եպիսկոպոսին։
Մահդասի տէր Գրիգորին,
Եւ երաժիշտ տէր Մարգարին,
Տէր Մեսրոպ աբեղային,
Տէր Դանիէլ ճգնաւորին։
Եւ մեր աշակերտելոցն,
Տէր Առաքել և տէր Խաչատուրին,
Կիրակոս սարկաւագին,
Եւ Թաքոս սպասաւորին։
Որք ի կտակս անուամբս յիշին,
Յիշատակի մասն ընկալցին.
Որք կենդանիք են աստ փրկին,
Ի որք ննջեցեալք անդէն հանգչին,
Արքայութեան արժան լինին,
Յաւուր մեծի դատաստանին[2]։

Բ.

Գրիչ՝ Խաչատուր

74 Արդ՝ գրեցաւ սբ. Աստուածաշունչ տառս ի մայրաքաղաքն Տիգրա-
75 նակերտ, որ այժմ ասի Հատմիթ, ի դուռն Ս. Կիրակո//սայ եկեղեցւոյս և
ընդ հովանեաւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ, և ի Հայոց

[2] Ցուցակում բերված է նաև ձեռագրի գրիչ Խաչատուրի չափածո հիշատակարանը (էջ 74), բայց քանի որ այնտեղ պատմական ոչ մի հիշատակություն չկա, ուստի չվերցրինք։ Չափածոյի քառյակների սկզբի տողերի առաջին տառերից հողվում է գրչի անունը. «էջ բանքս ի Խաչատուրէ»։

մեծաց թուաբերութեան ՌՂԶ (1647), և ի հայրապետութեան սբ. էջ-միածնա[յ] տեառն Փիլիպպոս սրբասքնեալ եւ առաքինի խարազանազգեստ ճգնաւոր կաթողիկոսին։ Եւ ի դիտաւորութեան սբ. Երուսաղէմայ, և յաջորդեալ սբ. աթոռոյն Յակոբայ Տեառնեղբօր, տէր Աստուածատուր առաքինասէր հայրապետին։ Ի սոյն ամս Բ (2) ամ է, որ նստաւ յաթոռ հայրապետական, զոր տէր Աստուած Բ (2) աթոռս Հայոց և զդիտապետս սոցա ամրածածուկ աջով պահեսցէ։ Նաև ի յառաջնորդութեան մայրաքաղաքիս Համբայ տէր Յովհաննէս հայրապետին և աստուածաբան վարդապետին։ Այլ և ի թագաւորութեան մահմետական ազգին, օսմանցի Տաճկաց, սուլթան Իպրահիմին, որ յաւուրս սորա միահաղուն բարձաւ դատաստան սոցին և բազմացաւ անիրաւութիւն, մանաւանդ զրկանքն և խիստ հարկապահանջութիւնքն, զի ամենայն երկիրս, որ ընդ իշխանութեամբ սոցա էր՝ աւերեցաւ։

Եւ եղև աւարտ լրման սորա մայիս ամսոյ ի ԺԱ, յաշխարհ Միջագետաց Ասորւոց նահանգիս, ձեռամբ յոգնամեղ եռաթշուառ, զառածեալ անձին և անարհեստ սուտ և փուտ գրչիս Խաչատուրի։ Այլ և ես անպիտանս և անարժանս յերեսանկեալ մոխրամած ղիմօք և արտասուաթոր աչօք աղաչեմ զձեզ ո՞վ դասք լուսազարմից, և քրիստոսազգեաց գումարք խաչակրօնք հայրապետաց և աստուածաբան վարդապետաց և մաքրափայլ քահանայից, որք հանդիպիք այսմ աստուածազարդ սբ. բուրաստանիս ընթերցմամբ կամ ընդ գաղափարել, աղօթիւք հայցել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ թողութիւն բազմամեղ անձինս, եղկելի գծողիս Խաչատուրի, և իմ ծնողացն, հօրս Քասպարին, մօրս Շնահատրին, և եղբարցն իմ՝ Յուհաննին և Աստուածատուրին, և միւս Յուհաննին, և կուսան քուերս Շահսուլթանին և կենակցին իմոյ՝ Զարդարին, և որդւոցս՝ Քասպարին և Մինասին, և դստերացս Անանային և Եսային, և առ Աստուած փոխեցելոցն։ Եւ հօրս եղբարցն՝ Ապաուլին և Ղազարին առ Աստուած փոխեցելոցն։ Եւ Յովհաննէսին, և որդւոցն Կիրակոսին, Մարտիրոսին և Նիկողայոսին։ Եւ հօրս եղբօրն կնոջն՝ Խաթունկան, և մեծ հօրս Յովհաննին, և մեծ մօրս Խաթունին, և մօրս ծնողացն, և հօրեղբօր որդւոյն՝ տէր Մարտիրոս երաժշտին, հեզահոգի և սրբասնեալ կրօնաւոր աբեղային և ամենայն զարմիցս և ամենայն արեան մերձաւորացն իմ, և ամենայն սիրելեացս, որ ի վերայ իմ երախտիս ունին, մաղթեմ աղերսիւ յիշել և Աստուած ողորմի ասել։ Նաև առաջին ուսուցանողիս իմոյ տէր Սկրաչին, որ յայրէն մինչև ի շարականն ուսոյց, Աստուած հոգին լուսաւորէ։ Նաև զվերջին ուսուցանօղն իմ զարուեստ գրչութեանս՝ տէր Մինաս քարտուղարն քաշ և արին, զոր է առ Աստուած փոխեալ, զոր տէր Աստուած զնա սբ. թարգմանչաց և գրչապետաց դասին դասակից և պսակակից արասցէ, և զուսուցանողն իւր զնոր արուեստածինն զտէր Յովհան[ն]էս վարդապետն ընդ յիշեցեալսն դասակցեսցէ և պսակեսցէ. ամէն։

Նաև հայցեմ դասուց քահանայիցդ, յիշել զկնքահայրն իմ՝ զպարոն մահդասի խոճա Մաիսուան, զի յայսմ ամի ի սբ. Երուսաղէմ գնացեալ էր, և զորդին իւր՝ զՆիկողայոս Չալապին, և զդստերսն իւր, և զկենա-

կիցն, և Աստուած ողորմի ասել։ Նաև աշխատողքն առաջին իմ զհոգևոր որդիքն իմ՝ զմահդասի Սարգիսն և զողջախոհ և խոնարհամիտ Պողոսն, նաև զսիրասնունդ և մաքրամիտ հոգևոր որդեակս իմ՝ զՄարտիրոս պատանեակն, որ բաղում աշխատութիւնս կրեաց ի սրբագրելն և այլ ինչ իրաց, զոր տէր Աստուած տացէ իւրն՝ երկար կեանք, և անփորձ ի հնարիդ չարին, և անսասան մնալ մինչև ի խորին ծերութեան։ Նաև զհոգևոր եղբայրն իմ՝ զտէր Եղիազարն, որ է անդրանիկ ուսուցիչն մերոյ, և զտէր Յուսնան յիշել ի Տէր աղերսեմ։ Այլ և մեզ չարակ լինողացն և զմեզ ատողացն Աստուած ողորմի ասել հայցեմ, և մեզ չարհասու ցանողացս թողութիւն շնորհել աղաչեմ։ Դարձեալ՝ աղերսեմ զտեսող սր. տառիս յիշել զսրբազան Յովանէս վարդապետն և զբազմամեղ Խաչատուրս, և Աստուած ողորմի ասել և Աստուած ձեզ յիշողացդ և ողորմի ասողացդ ողորմեսցի Քրիստոս...։

- 397

ՅԱՅԱՄԱՒՈՒՐՔ (1627 Թ.)

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Բ, № 549

Գրիչ՝ Կարապետ Վանեցի

446 Ի սմին աւուր[3] եղև շարժ ի քաղաքն Վան մեծ և ահագին, իսկ Աւագ ուրբաթի երեկոյին կատարեցաք զկարգ թաղման տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ամենեքեան ուրախ մտօք ակն ունէինք թէ վաղիւն Զատիկ է և յարութիւն Փրկչին մերոյ և օր ազատութեան։ Եւ զի էր օր մարտի ամսոյ ԻԸ (28) եղև աստուածասաստ բարկութիւն ի վերայ արարածոց և մանաւանդ ի վերայ քաղաքիս Վանայ։ Զի ինքն տէր Աստուած ամենակալ զօրութեամբ իւրով մեծաւ սրտմտութեամբ հայեցաւ յարարածս իւր, զի որդիք մարդկան առ հասարակ եղէն մոլորեալք ի յարդարութեան ճանապարհէ անտի ըստ մարգարէի բանին, որ ասէր. «Եթէ ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ» և ոչ ոք է որ առնէ
447 զբարի և ոչ մի։ Այսպիսի // օրինակաւս սիրեցին ամենեքեան զանօրէնութեան ճանապարհս մեղաց և ատեցին զամենայն պատուիրանս և զիրաւունսն Աստուծոյ. վասնզի ո՛չ իշխանք և ո՛չ զօրականք, ո՛չ ժողովրդականք և ո՛չ առաջնորդք, ո՛չ քահանայք և ո՛չ կրօնաւորք, ո՛չ կացին և ո՛չ մնացին ի գործն Աստուծոյ ուղղապէս, այլ ընթացան զհետ ցանկութեան մարմնոյ։ Եւ զոր սիրէ՝ աշխարհս և զայս ամենայն համարեցաւ Աստուած ի գործ կատարման մեղաց։ Եւ ահա եղև ըստ բանի մարգարէին որ ասէր. «Ո հայի երկիր և տա դողալ սմա»։ Եւ ահա հայեցաւ տէր Աստուած յարարածս բարկութեամբ և արարածք յանձն առին կործանիլ յահէ զօրութեանց Տեառն։

---

[3] Ղ. Փիրղալեմյանը կլոր փակագծերում ավելացնում է. «մարտի 28» (իմա 1646 Թ.)։

Եւ արդ՝ ահա մինչդեռ էաք ի խոր քնոյ եղև յանկարծակի ճայթումն և թնդումն ահաւոր և գոռայր առ հասարակ քաղաք և գեօղ, վանք և անապատք. և եղև դղորդ սաստկապէս և ահագին թնդմամբ շարժեցաւ երկիր և լերունք, և պատառեցան ապառաժ վէմք, և հերձան բլուրք։ Եւ ի սաստկութենէ ահաւոր բարկութեան հնչէին լերինք և բլուրք. և իբրև կենդանի անասունք սասանեալ ընչէին վասն շարաշար մեղաց մերոց։ Զի ոմանք ընթացեալ էին ի յեկեղեցին և ոմանք ի տունս իւրեանց ընչէին. և յանկարծակի շարժեցաւ և փլաւ բազում եկեղեցիք, և պարիսպ քաղաքին, և ամենայն շինուածք և բարձրաշէն աշտարակք, և այլազդաց աղօթից տեղիք. և մնացին բազում մարդիկք ի ներքև հողին այր և կին, ծերք և տղայք։ Եւ մնացեալք ամենեքեան գրոհ տուեալ ելին ի քաղաքէն, քանզի ոչ դադարէր երկիրն ի շարժմանէն՝ նման ալեկոծեալ
448 //նաւի երերայր երկիր։ Եւ ահ կալաւ զամենեսեան։ Եւ դարձեալ քանդեցին զտունս իւրեանց և հանին զմեռեալս։ Ո՞ կարէ պատմել զդառն կրսկիծ աղէտից նոցա, ճիչ և աղաղակ բարձեալ վայ և եղուկ կարդային։ Քանզի ապշեալ և յիմարեալ էին։ Ոմանք զմեռեալս սայլով տանէին առ ի թաղել և ոմանք զերկու և զերեքն ի վերայ փայտի և դագաղի եղեալ տանէին. զեօթն և զութն ի մի տապան դնէին, զթիւ և զհամարս նոցա ընդ գրով արկանել ոչ կարեմ. զի որ կենդանիքն էին՝ եղեալ էին իբրև զմեռեալս։ Եւ այսպէս կարծէին, թէ ահա քաղաքս մեր ընկղմի և ամենեքեան կորնչիմք և բնաւ կելոյ և կամ արև տեսանելոյ ակն ոչ ունէին, զիինքեանք կամաւն իւրեանց կամէին զգերեզման մեռելոց բանալ և ի ներս մտանել, զի մի տեսցեն զայնպիսի դառն սկսկիծ. որ եղև ի ժամուն յայնմիկ։ Եւ շատ գիւղ փլաւ և խ (40) եկեղեցի։ Եւ Վարագ բովանդակ շինուածովն իւրով ի հիմանց տապալեցաւ, որ Լղև սուգ մեծ ազգիս Հայոց։ Մինչև ի վեց և ի եօթն ամիս յահէ և յերկիւղէ (շարժին) ոչ կարէին ի ներքոյ տան և առաստաղի մտանել։ Եւ ի շարժմանէ երկիրս գեօղ մի, որ կոչի Նորագեղ, բովանդակ փլաւ և վեց եօթ ոգի անդ մեռան. և եկաց այնպէս երկու տարի ի շարժման։ Յորոց բազում պաղատանք ու հառաչանք ելանէին առ Աստուած, զի թերևս ողորմեսցի տառապեալ ազգիս Հայոց։

Դարձեալ յայսմ ամի ի յաւուրս Համբարձմանն Քրիստոսի[4] ի քա-
449 ղաքն Բաբելոն ի հասարակել // աւուրն տիւն եղև, որպէս զգիշեր մինչև ի մուտս արևուն, այնպէս մնաց և նվտաւ կիսաչափ թզոյ մոխիր ի վերայ քաղաքին Բաբիլոնի, նշանակելով զկորուստ ազգին քրիստոնէից։ զոր առեալ գերեաց սատանայ ըստ իւր չար կամացն ի պէսպէս մեղաց մերոց։ Գործեցաւ այս թուականիս մերում ՌՂԶ (1647)։ Ո՜հ, ո՜հ, վա՜յ և եղո՜ւկ հազար բերան չարեօք ի լի և մեղօք լցեալ Վանեցի Կարապետի, որ տեսի խաւարեալ աչօք իմովք զդառն կսկիծ և զպատուհաս Վան քաղաքին, և մեղամած մատամբ իմով գծագրեցի։

---

[4] 1647 թ. Զատիկը կլինի ապրիլի 18-ին, իսկ Համբարձման տոնը 40 օր հետո՝ մայիսի 27-ին, հինգշաբթի։

398
ԱԻԵՏԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 81
(մանրաժապավեն, Երևան, № 533)

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

Փառք...[5]*։ Արդ՝ գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ սրբագան Աւետ[ար]անս և մեծալիր գանձս աստուածային ի մայրաքաղաքն* Կոստանդինուպոլիս, *ի դուռն Ա. Հրեշտակապետու, ձեռամբ անիմաստ և անարժան...* Արիստակէս *իրիցի, թվին Հայոց ՌՂԶ (1647) ամի, յունիսի ԻԴ (24)։*

բ

Փառք...։ Յիշեցէք ստացող սբ. Աւետարանիս այրի կին Աղաբէկիս *և իւր հանգուցեալ կողակցին՝* Խլղաթին, *և որդոյն՝* Նաւասարդին *և զրստերցն՝* Հոռումսմին, Գաւզալին, Եթարին *և* Վարդխաթունին, *և հանգուցեալ դստերացն՝* Հուռումին, Մուրվաթին, Համանին. *և Հայրապետին և ի ծնողացն՝, հաւրն իմոյ՝* Եզտանին *և մաւրն իմոյ՝* Խանպէկուն *և արեան մերձաւորաց. ամէն։*

Ստացող՝ Աղաբէկ

գ

Ես՝ Աղաբէկի *այրի կինս գնեցի սբ. Աւետարանս [հալա]լ ընչից իմոց յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց...։*

399
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3519

Գրիչ՝ Խաչիկ Կաֆայեցի
Վայր՝ Վաշարհէյ

ա

358բ *Փառք..., որ ետ կարողութիւն տկար բնութեանս, և անժուժ անձինս, և անիմաստ գրչիս, որ տեսեալ եղաք այս պատմագիրս ի յերկիրն Մաճառաց, որ ասի* Էրաէլ, *ի ձեռն խոճայ* Ոնանին Ճողեցի, *և յոյժ փափաքանօք առեալ օրինակեցաք բաղում արտորանօք, քանզի շօքոտոլէ ի շօքոտոլ ձեռվներս ի գիր դնէք, և ըստ փափաքանաց մերոց կամէաք հասանել և ինքն ողորմածն Աստուած, որ կատարող է աղաչանաց ծառայից իւրոյ, ոչ անտես արար, և զմեր խնդրեալն կատարեաց, և մեր փափաքն ելից, և կատարեցաք զգիրս, որ բաղումք յիշատակին սորայ միջի թէ՛ թագաւորք և թէ՛ հայրապետք։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ,*

---

5 Ձեռագիրն էջահամար չունի։ Հիշատակարանը գտնվում է ձեռագրի վերջում։

ով սբ. հանդիպողացտ, հարց և եղբարցտ մեծի և փոքու, որք կարդայք կամ օրինակէք, յիշեցէք միոյ Հայր մեղայիւ զառածեալս մեղօք յետին և վերջին գրիչս՝ զԽաչիկս Կաֆայեցի, և զծնօղս իմ զԽոճա Պաղշին և զմայրն իմ՝ մահտեսի Եաղուբ խաթունն, և քուրք, և եղբայրքն իմ, և զամենայն արեան մերձաւորս իմ։ Այլ և զուսուցիչքն իմ՝ զտէր Մկրտիչն և տէր Զաքարիայ կրօնաւորն, որ զգիրս ուսոյց մեզ։ Եւ թողութիւն հայցեցէք սոցա և իմ մեղաւորիս և ծնօղացս։ Եւ թողութեանց տուօղն Աստուած, զձեր և ձեր ծնողացն թողցէ...։

300ա Արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647), ի ամսեանն յուլիսի Ի (20), և աւարտեցաւ ի քաղաքն Վաշարճէյ[6], ի յերկիրն Մաճառաց, և թագաւորն Էրտէլիս Ռագովգի ասի, որ մինչի աստ ԺԸ (18) տարի էր, որ տիրութիւն կանէր յերկրին. և էր սա անուանի և խաղաղաբար թագաւոր։ Զոր ե զորդին թագաւոր կացուցեալ էր ի կենդանութե[ան]ն իւ[բու]մ, մինչ զի կենդանի էր ինք էր, և յետ իւրոյ նստելոց էր որդին։ Արդ սիրելիք իմ և եղբայրք իմ, խնդրեմ ի ձեզանէ կողկողագին պաղատանօք, ամենայն մեծամեծ իմաստունքտ, զի սղալ ինչ իցէ սորա ներեցէք և մի անիծանէք և սրբագրեցէք, քանզի օրինակ սորայ, զի բազում սխալ կար և որում հասու եղաք շինեցաք և որ ոչն՝ ոչ կարացաք։ Նմանապէս գրեցաք և այլ բազում սխալ ի մեզանէ եղեալ կայ անգիտութեամբ, քանզի ուժ (յոյժ) արտորանօք գրեցաք, քանզի երկրաւոր բազում բանից հետ էայք և վասն այն արտորնօք գրեցաք, քանզի աւուրն Ժ (10), ԺԲ (12), ԺԳ (13) տէր և օր լինէր կու գրէաք, ասելով, թէ ինչ լինի՝ լինի, թող գրվի։ Վասն այն այլ և այլ գիր, և այլ և այլ թուխտ է, անմեղադիր լերուք։ Զպակասն և թերին դուք լցուցէք։ Եւ Քրիստոս ձեր արդարութենէ զպակասն լցուսցէ և արքայութեան արժանի առնէ. ամէն։

Բ !

1բ Ով սբ. հանդիպողք այսմ ոակաւ պատմագրիս, հայցեմ յոյժ կողկողագին պաղատանօք, զի անմեղադիր լինիք սակաւ բանիս, զի կար մեր այսչափ էր։ Եւ առաւել երեսս անկեալ աղաչեմ, ո՜վ սբ. վեհագոյն իմաստնոցտ, զի զպակասութիւնն սորա և զսղալն ուղղեցէք վասն սիրոյն Քրիստոսի, և ինձ մեղաւորիս անմեղադիր լերուք. և Քրիստոս Աստուած զձեզ ի սղալանաց մեղաց փրկէ և ազատէ. ամէն։

Այլ և անմեղադիր լերուք վասն ցանկիս, որ ի մեզանէ զցանկս եդաք, վասն ոչ նեղանալոյ հանդիպողացդ և ոչ զթուխտն շարշարելոյ. քանզի յոյժ նօսր և տկար է թուխտս, քան[զ] ի յերկիրս այս դիժար կու գտնվէր թուխտն. և վասն այն ինչ օր դիպեցաւ գրեցաք և մեք անդադար ճանապարհորդ էաք և յոյժ արտորանօք կու գրէաք, վասն զի մեք գնացող էաք, և օրինակս մնալոց էր. վասն այն այսպէս եղև, այլ և բազում բան մնաց ի կարդ ցանկիս, որ չի գրեցաք, զի օրինակն ամե-

[6] Տրանսիլվանիայում հայաբնակ երկու քաղաք կա Վաշարհեյ անունով, որոնցից մեկը առևտրի խոշոր կենտրոն է եղել և հունգարերեն կոչվել է Marosvasarhely—Մարոշվաշարհեյ։ Հիշատակարանում խոսքն այս քաղաքի մասին է (տե՛ս Ս. Քալանջյան, Գեղա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն, Բանբեր Մատենադարանի, հտ. 6, Երևան, 1962, էջ 500)։

նայն բանի, խորագիր և կամ ծաղկագիր չէր գրեալ. և մեք այլ վասն
2ա արտորանաց // չի կարացաք հետևիլ և նմանապէս գրեցաք, անմեղադիր
լերուք, հայրք և եղբայրք։ Այլ և դարձեալ աղաչեմ, ո՛վ սբ. հանգիպո-
ղացա, յիշել ի Տէր ղառածեալս մեղօք յետին և վերջին գրիչս՝ ղԽաչիկս
անարժան, և զծնօղսն իմ, և զուսուցիչսն իմ, և զամենայն արեան մեր-
ձաւորսն իմ, և դուք յիշեալ լիջցիք և տեառնէ Աստուծոյ մերոյ...։

Գ

26բ Որոյ բարեխաւսութեամբ սրբոցն ողորմեայ Քրիստոս Աստուած մե-
ղաւոր և անարժան ծառա Կաֆայեցի Խաչիկ աբիկար գրչիս, ծնողացն և
ազգականացն և ամենայն արեան մերձաւորաց իւրոց. և օրինակի շր-
նորհօղիս Ճողէցի խոճայ Ոճանին, կարդացողաց և լսողաց, և որք զո-
ղորմիսն ասէն. ամէն[7]։

Դ

64ա Այլ և յիշեցէք զուսուցիչքն ձեր և յետոյ զտէր Մկրտիչն և զտէր
Զաքարիա աբեղայն, որ գիրս ուսոյց։ Եւ յիշեսցի զհոգի ձեր ի սբ. գա-
լըստեանն Տեառն։

Ե

292ա Ո՛վ սիրելի և բարեկամ եղբայրք, անմեղադիր լերուք բանիս պա-
կասութեանն, քանզի աւրինակն աստ աւարտեցաւ, քանզի կատարեալ
չէր գրաց։ Յիշեցէք ի տէր Քրիստոս զմեղաւոր և անիմաստ գրիչս՝ ղԽա-
չիկս և զծնաւղս իմ, և դուք յիշեալ լիցիք ի նոյն Տեառնէ։

400

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7098

Գրիչ՝ Գրիգոր Ամքեցի

ա

204ա Զ Գրիգոր Ամքեցի երէց գրիչս յիշեա և Քրիստոս ձեզ և մեզ ողոր-
մեսցէ. ամէն։

Գրիչ՝ Խաչատուր վարդապետ

Բ

274ա Զակաւ աշխատողս ի սմա զտառապեալ Խաչատուր վարդապետս
յիշեցէք ի մեղաց թողութիւն, զի և զձերն թողցէ երկնաւորն Հայր. ամէն։
Գրեցաւ թվին ՌՂԶ (1647) օգոստոսի Դ (4)։

---

7 Ձեռագրի 363 ա էջում այլ գրով գրված է. «Ես՝ Յովանէս վարդապետս, որ էի ի աշ-
խարհէն Սիմեաց, եկեալ ի այսմ տառի հանդիպեցայ ի քաղաքս Քաֆայ, զայս գիրքս եհաս
ի ձեռս մեր՝ ամենայն աւուր ընտեռնուի և մտադիր լինէի։ Վասն որոյ աղաչեմ զիս յաղօթս
ձեր և Աստուած զձեզ յիշէ...»։

401
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 8156

Գրիչ՝ Մելքիսէթ երէց
Վայր՝ Բաբերթ

ա

192ա *Փառք...։ Որոյ շնորհիւն սկսեալ և ողորմութեամբ նորին յանկ հանեալ աւարաեցաք սբ. մատեանս, որ է գիրք ձեռնադրութեան և հիմն արէք սբ. եկեղեցւոջ և քահանայութեան, ի գաւառս Խաչուտեաց, որ յայժմուս կոչի Բաբերթ, ընդ հովուանեաւ Ս. Աստուածածնին, որ է միջի եկեղեցին քաղաքիս, ի թուականութեանս Հայոց ՌՂԶ (1647), ի մարգաց Հայոց ամսոյ Դ (4) և ի Հռոմայեցւոց յօգոստոս ամիս Ժ (10), աւուր երեքշաբաթի, պահոց սբ. Աստուածածնին, ի վայելումն Մինաս քաջ և երջանիկ բարունապետին, որ ետ գրեալ զսա։ ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց և ամենայն արեանառու մերձաւորացն։ Զոր և տէր Աստուածն մեր բարեաւ վայելել տացէ և յիշա[տա]կ յաւիտենից արասցէ հանդերձ ամենայն սրբովք իւրով. ամէն։*

Եւ արդ՝ ես նուաստ և անարժան ծառայից ծառայս Աստուծոյ, անարհեստ քարտուղարս Մելքիսէթ վատթարեալ երէցս, որ ի յայսմ ամի
192բ *ձեռնադրեցաք // մերում անարժանութեամբս։ Զերեսս ի գետնի դնելով մոխրամած դիմօք և արտասուաթոր աչօք աղաչեմ և խնդրեմ ի ձէնջ, ո՛վ դասք լուս երամից, որք հանդիպիք սմա կարդալով [և] յօրինակելով նայ, յայնժամ յիշեսջիք զստացող սբ. գրոցս զտէր Մինաս քաջ և արի և անյաղթ փիլիսոփայ սբ. վարդապետն, և զծնողսն նորա, և զիս զհոգով խոցոտեալս և մտօք խաւարեալս, զփծուն գրչակս, ե անառակ[8] ծնողսն իմ. և խնդրեալ առ Տէր զթողութիւն յանցանաց մեղուցելոցս. զի թերևս արժանաւորս արասցէ անարգամեծարն Աստուած զմեզ յիշեցեալքս և ղյիշողսդ իւր աստուածային տեսլեանն և ողորմութեանն, և լսել տացէ զլուրն բարի, որ ասէ. «Եկայք աւրհնեալ էք Հօր իմոյ»։ Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն։ Եւ դարձեալ աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք, որք անմեղադիր լինիք խոշորութեան գրիս և սղալանացս, քանզի յոյժ շտարեալ և մոլորեալ է միտք իմ ի վերջեալ և երեկոյացեալ ժամանակիս ի ձեռն այլազգաց, ղոր և տէր Աստուած մեր փրկեսցէ զմեզ ի նեղչաց մերոց. և նմա փառք յաւիտեանս։*

---

[8] «Անառակ» բառն այստեղ պետք է հասկանալ ոչ թե չար, անհանգիստ, լկտի կամ անբարոյական իմաստով, այլ դրական։ Գրաբարում «առակ» նշանակում է նաև օրինակ, կերպար (հուն. ὑπόδειγμα, τύπος)։ «Անառակ» այստեղ նշանակում է նմանը, օրինակը չունեցող (չլինող)։ Հմմտ. «Անամօթ» բառը։ Գեորգ Սկևռացու Վարքում Վահրամ Բաբունին բնութագրվում է. «անամաւթ և քաջարան» (Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964, էջ 421)։ «Անամաւթ» նշանակում է նաև անվախ, պարզերես, աշխուրշ, համարձակ։

Բ

67բ Անմեղադիր լերուք, ո՛վ սբ. հայրք, որ յօթինակս ծուռն էր, քանզի այս շալակս որ արաք, նա ի նորա մէջն ամէնևին գրած չէր։

Գ

191բ Քրիստոս Աստուած... ողորմեա ստացողի գրոցս սրբասէր և հեզահոգի, քաջ և երջանիկ ռաբունապետին՝ Սինաս վարդապետին և ծնօղաց նորին. և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

402

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏՆԻԻ

Երևան, № 1052

Գրիչ՝ Խաչատուր Լէնցի

226ա Կատարեցաւ Ե (5) գիրքս Մովսէսի, շնորհօքն Աստուծոյ, որ ունի յինքեանս ժամանակս երից Ռ-աց էՃ և Ը (3708)-ից ամաց և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն։

Զմեղաւոր և զանարժան Խաչատուրս՝ Լէնցի զհողս յիշեցէք, եղբայրք, աղաչեմ զձեզ։ Հայր մեր։ Թվին ՌՂԶ (1647), ի օգոստոս ամսոյ ԺԳ (13), օրն ուրբաթ։

403

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7740 (1357 թ.)

Նորոգող՝ Նիկողայեան

293բ Դարձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջի գնորոգել տուող սբ. Աւետարանս զխոճայ զՄարտիրոսն, և զկողակիցն իւր՝ զՀուսիսիմէն, և զդստերքն իւր՝ զՆուրպիքայն և զՊահարն, և զեռաբոյս մանկտիսն՝ զԻնֆնատիոսն և խոճայ Մսբրն և զամենայն արեան մերձակայսն, աղաչեմ յիշել ի Տէր և դուք ընդ նոյն գտջիք ի Քրիստոսէ...։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ յիշեսջիք ի Տէր զնորոգաւղ և կազմաւղ սբ. Աւետարանիս զՆիկողայոս դպիրն, թվականիս Հայոց ՌՂԶ (1647), ի ամսոյ սեպտեմբերի Գ (3), որ է աւրհնեալ յաւիտեանս. յամէն։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յակոբ սրբազան քահանայն, որ բազում աշխատութիւն ունի ի վերայ սբ. եկեղեցոյս. Աստուած իւրեանն կենդանութիւն պարգևէ. և յետ աստեացս ելանելոյ, զինքն առաջին քահանայիցն դասուն դասակից արասցէ. ամէն։

404
ԱԽԵՏԱՐԱՆ
Երևան, № 7538 (1352 թ.)

Կազմող՝ Նիկողայոս դպիր

261ա Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով ընթերցողք սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջի նորոգել տուող սբ. Աւետարանս զխոճայ Ալեքսանոսն և զկենակիցն, զծնաւղքն զմահտեսի Սփրիանոսն և Մարիամն և ամենայն արեան մերձաւորքն, աղաչեմ յիշել ի Տէր։

Կազմաւղ և նորոգող սբ. Աւետարանիս զՆիկողայոս դպիրն, որ մեղաւոր և անարժան գոլով կազմեց զսբ. Աւետարանս, ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647), և ի սեպտեմ[բեր] ամսոյ Գ (3)։ Որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

405
ԱԽԵՏԱՐԱՆ
Երևան, № 223

Գրիչ՝ Մխիթար
Վայր՝ Սուլտանեցի

ա

218բ Փաւք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս յորդառատ բղխմամբ աղբիւրա-
219ա բար հոսեալ ի Հոգւոյն Սրբոյ ||... ի թուաբերութեան հայկական տոմարի յամի հազարերորդի նսներորդի վեցերորդին (1647) և Հայոց երկոտասաներորդի ամսոյ և նորին երկրորդ հնգեակերորդի մէկերորդին (13), և Հռովմայեցւոց իններորդի ամսոյ և նորին երեք հնգեակերորդի մէկերորդին (16), ի հայրապետութեան Հայոց տէր Փիղիպպոսի, ի յաթոռ սբ. Էջմիածնի, ի յերկիրս Զակամայ, ի գեօղս որ կոչի Սուլտանեցի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ մեղապարտ և անարժան և անպիտան գծագրողի Ճ ծ լ ժ ր տ[9] աշխարհականի։ Արդ՝ հայցեմ ի ճաշակողաց յայսմ յոքնահամ և ախորժընձա սեղանոյ, որք հանդիպիք օգտու-
219բ թեամբ իւիք ի սմանէ, յիշմամբ աղօթից արժանի առնել առ Քրիստոս || զիս, և զհայրն իմ՝ զՀայրապետ քահանայ, և զմայրն իմ՝ զԳոհարն, և զամենայն ազգայինսն։ Նաև զուսուցիչն իմ՝ զՄովսէս վարդապետն. սեռն. սիրով ի միտս բարիս...։

Բ

Դարձեալ յիշեցէք զվալա Մատուրն և ամուսինն իւր՝ Օղլանգարաք և միւս ամուսինն իւր՝ Աբուսմէլ, և որդին՝ Բաբեռն[10], և եղբայրն իւր՝ Մաթէոս, քոյրն իւր՝ Շուշան և Օղլան, և իւր որդին՝ Ղազարն, յիշեցէք...։
220ա Դարձեալ յիշեցէք զվալա Մատուրն, և զպապն իւր՝ Ղարաճայն, և

[9] Եղբայրագիր ծածկագիր, կարդացվում է Մխիթար. այսպես ճ=մ, ծ=խ, լ=ի, ժ=թ, բ=ա, տ=ր։

[10] Գուցե [Կա]բաբեռն։

զդուստրն իւր՝ Թազագուլ, և զփեսայն իւր՝ Թաւմուր, հօրեղբօր դուստրն իւր՝ Փարիխան, և եղբայրն՝ Մալազէն, Թելէփաշայ, և այլ ամենայն ազգայինս...։

Գ

Արդ՝ ո՞վ եղբայրք և հայրք, յորժամ ընթեռնուք զԱւետարանս զայս, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան և պակասութեան գրոց, զի այս չափ էր կար մեր. աղաչեմ յիշել ի Տէր հանդերձ ծնողաք և հարազատաք. ամէն։ Ընդ սոցին և զԱռեփ.սնոս քահանայն և զՀափիսիմէ ապաշխարողն յիշեցէք ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր...։

Դ

Ստացող՝ Լալա Թաւուր

219բ Արդ՝ ես Լալա Թաւուրս ի միտ ածելով զբան մարգարէին, որ ասէ. «Երանի...», և յոյժ ըղձմամբ և շերմն սիրով և փափաքմամբ յուսով ետու գծագրել զսբ. Աւետարանս, յիշատակ ինձ և ծնողացն իմոց, հօրն իմում՝ Գրիգորին և մօրն իմում՝ Սոլթանին, յիշեցէք...։

406

ՊԱՏԱՐԻԿ

Երևան, № 970

1ա Թվին ՌՂԶ (1647), նոյեմբեր ամսոյ ԺԳ (13) օրն, տէր Յովհաննէս ծերունի քահանայն իւր հաղորդութեան ժամկին երեսն այս Վարդանգիրքս յիշատակ ի դուռն Աստուածածնի վանուց, իւր հոգուն, և իրիցկնոշն հոգուն, և որդուն՝ Թօքարին, և դստերացն՝ Շիրինպիքայիին, և Եաղութպիքայիին, և ամենայն ընտանեացն հոգուն. ամէն։

Ո՞վ սբ. քահանայք և մանկունք սբ. Սիոնի, որք ընթեռնուք այս գիրքս, յիշեցէք ի մաքրափայլ աղօթք ձեր տէր Յովհաննէս քահանայն, ամենայն յարեան մերձաւորաք իւրով. ամէն։ Եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

407

ԳԱՆԶԱՐԱՆ

Երևան, № 7958 (1623 թ.)

172բ Թվին ՌՂԶ (1647) նոյեմբեր ամսոյ ԺԳ (13) օրն, տէր Յովհաննէս ծերունի քահանայն ձայն ետ իւր սիրելի եղբայրք քահանայքն, վասն հաղորդութեան ժամանակին, երեր զիւր հալալ_վաստակոց ժողոված գրեանքն խոստացաւ իւրեան թաղելու։ Նախ և յառաջ Ա(1) Գանձ տեսրրմն, Ա (1) Զայնքաղմն, Ա (1) Մաշտոցմն, ծախեն իւրէն հոգոյն, թաղայդրամ բաժանեն քահանայից. ամէն։

408
ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ
Երևան, № 5725.

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

279բ Փառք...։ Արդ՝ ի յաւարտ հասանել գրոյս, որ կոչի Աղօթամատուց Տօնացուց և քաղուածու Պարզատումար ի միում տփի՝ ի միատեղ ժողովեալ եղաք, ձեռամբ ոգնամեղ և անարժան և անպիտան Արիստակէս երէց գրչի, ի քաղաքն ի Կոստանդինուպօլսի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի, ի խնդրոյ բարէմիտ և աստուածասէր Ալիքսանոսին, և հօրն՝ Մուսէսին, և կողակցին նորին՝ Թամամին, այլ և կողակին Զուլալին, Քնարին, Մելիքին, այլ և եղբօրն նորին՝ Գրիգորին, և նորին հարսին՝ Գոհարին, Շահրէ և ամենայն արեան մերձաւորաց և համաւրէն ննջեցելոց։ Եւ եղաք զսա յիշատակ ի գիւղն Բագրատունի, ի դուռն Ս. Խոնարկտրա ի ձեռն Անդրէաս սարկաւագին։ Եւ ոչ ոք չունի իշխանութիւն [յ]ափշտակել զսա դնելոյ կամ ծախելոյ կամ յարկէ Ս.
280ա Խոնարկըրտէ հանելոյ կամ գրաւ դնելոյ, եթէ ոք // յանդգնի՝ ինքն նզովեալ եղիցի։

Դարձեալ երես անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որք կարդայք կամ օրինակէք, անմեղադիր լերուք սխալանաց գրիս, զի կայր, որ միտս չի հասաւ և կա, որ ինքնին սուղ ինչ անցանելով գերեցաւ, անմեղադիր եղերուք. զխելորդըն բառնայք և զպակասըն լնուք և ողորմի ասացէք։ Ի թվին ՌՂԷ (1647) նոյեմբերի ԻԷ (27)։ Եւ ասասջիք Հայր մեր...

409
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 4403

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Ղարասու

ա

383ա Փառք..., որ երետ կարողութիւն տկար անձին իմոյ, մեղաւք լցեալ անարժան գրչի յանգ և յաւարտ հասանել այս սբ. գրոցս, որ կոչի Կանոնք։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թվաբերութեանն Հայոց ՌՂԶ (1647)-ին և ամսեանն դեկտեմբերի, ձեռամբ մեղսաներկ և անհմուտ գրչի Յովանէս դպրի, որ եմ չարութեամբ լցեալ և մեղաւք զառածեալ։ Աստանով կատարեցաւ հոգիակեցոյց և ցանկալի դրախտս...։ Քանզի սա պարունակեալ ունի առ ինքն զմեկնութիւն կանոնացս, որ և սբ. հայրապետքն ասացին հոգւովն սրբով յաղագս վիրավորեալ հոգւոց։։ Բայց գրեցաւ սայ ի յաշխարհն Հոնաց, ի գիւղաքաղաքն Ղարասուն, ընդ հովանեաւ Ս. Աւգուստինին, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոս
283 կաթուղիկոսին, և առաջ//նորդու[թեան մեր]ոյ Խաչատուր արհեպիսկոպոսին, և յէրուսաղէմայ առաջնորդին մերոյ տէր Աստուածատուր քաջ բարձունապետին։

Եւ ըստացան ըզսայ հալալ ընչիցն և ապրանացն, և ետուն յիշատակ զսբ. գիրքս խոճայ Յակոբին *հոգուն և իւր կողակցին, և ծնողացն՝* Ամիրաւգիգին, *մաւրն՝* Ծամիկին, *եղբարցն՝* Ստեփանոսին, *մահգեսի* Աւետիքին, *որդոցն՝* Յաւգսէնտին, Քրիստոստուրին, Մանուկին, Յակոբին, Սէֆէրպիքայինն, Սուլթանպիքայինն, Վաւրգմելիքին, Յայիզպիքայինն, Գրիգորին, Ծամիկին, Սալչուկին, Մուրապիքայինն, Շէհրիին, *կողակցին, ծնողացն, հաւրն՝* Տիլանին, *մաւրն՝* Մեծրիկին, *եղբաւրն՝* Սարգիսին: *Եւ ետուն ի ձեռն* Բաբերբացի Առաքել *վարդապետին, որ հասուցանէ ի դուռն սբ. յԵրուսաղէմայ՝ առ ոտն սբ.* Յակոբին։

Բ

269բ *Զմեղապարտ գրիչս զՅովանէս։ դպիրս յիշեայ։*

410

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 74

Գրիչ՝ Մանկասար

Ա

122ա *Զանարժան բարեաց յիշատակի զստացաւղ տառիս՝ զիմաստուն վարդապետն* Յովանէս, *և զեղբայրն իւր՝ զտէր* Հայրապետն, *և զծնաւղսն իւրեանց՝* զՄկրտիչն *և* զՇնաւորն, *և զփգուն գրչիս* Մանկասար *աղաչեմ յիշել ի Տէր։ Թվին ՌՂԶ (1647)։ Տունք ՉԷ (707)։*

Բ

191բ *Ո՛վ եղբարք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղաւք լցեալ* Մանկասար *սուտանուն գծողս, ըստ նմին և զմայրն իմ՝* զՄամէն։

411

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 332 (1647 թ. առաջ)

Գրիչ՝ Ստեփանոս

Վայր՝ Լիմ

325ա *Ոմն պատուական, այրն Աստուծոյ* Սարգիս *ցանկացող եղև և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւր։ Վասն որոյ Աստուած ողորմի ասացէք* Սարգսին *և իւր կողակցին՝* Ցէքաքին, *և իւրեանց որդոց* Սիմոն[ին] /// *ժամ* /// *և* Հէր[ճե]ին *և* Փանոսին, *և իւրեանց ծնողացն, և ազգատոհմին, և ամենայն արեան մերձաւորացն Աստուած ողորմի և [հոգոյն] արքայութեանն արժանի արասցէ. ամէն։*

Ա[րգ] աւար[տեցաւ սբ.] Աւետարանս ի թվականիս Հայոց ի Ռ և ՌՂԶ (1647), վերակացութեամբ նուաստ և անարժան Ստէփան[ոս] *ան[ուամբ] /// ի Լմա Ս. Գէորգ [ան]ապատի /// Աստուած ողորմի ամենայն աշխատողացն. ամէն.*

412

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 389

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Ասպահան

28բ *[Փ]առք...։ [Ա]րդ՝ դրեցաւ սբ. Խորհրդատետրս ի յերկիրս Պարոից, ի քաղաքս* Ասպահան, *ի հայրապետութեանն տեառն* Փիլիպպոսի *Հայոց կաթողիկոսի, ձեռամբ անարժան գծողի* Աստուածատրի, *թվին ՌՂԶ (1647) ամի, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր կրօնաւորի* Օնոփրիոսին։ *Եւ յիշատակ է հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ մահդասի* Խաչատրին *և մօրն՝* Խանումաղին, *և հօրեղբարցն՝* Միրիջանին[11], *և եղբարցն,*
29ա *և քրւերցն, և ամենայն արեան // մերձաւորացն. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս, զծաղկող և զնկարող սորա զՋուղայեցի Հայրապետն, և զծնողսն իւր, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք...։

413

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵԻԱՑԻՈՅ

Երևան, № 804

Գրիչ՝ Յոհանէս քահանայ

ա

255բ *Զարադս ի չարիս և զծոյլս ի բարիս տէր* Յոհանէս, *ի նուաստ հոդիս յիշեցէք յաղօթս ձեր, ո՛վ սբ. ընթերցողք այսմ տառիս, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։*

բ

419բ *[Շ]նորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս։ [Ե]։ արդ՝ ես ի յետինս ի կարգաւորաց և անպիտան և անարժան* Յոհանէս *սուտանուն քահանայ, որ անուամբ միայն եմ և ոչ գործով, գրեցի և աւարտեցի զսբ. Հարցմանց գիրքս ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647) ամի, [ի] հայրապետութեան տեառն* Փիլիպոսի *ամենայն Հայոց կաթողիկոսին։ Արդ՝ ո՛վ եղբայրք և հարք խնդրեմ, որ մէկ Տէր ողորմեա ասէք, զոր Տէր Աստուած զձեզ ողորմի. ամէն։*

Գրիչ՝ Ստեփանոս սարկաւագ

գ

357բ *Աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, կողկողագին պաղատանօք, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զմեղօք լցեալ սուտանուն* Ըստեփաննոս *սարկաւագս, որ մէկ հատորն գրեցի, և զհայրն իմ՝* Ամիրսուլթան *և մայրն իմ՝* Աղրխանն. *ամէն։*

---

11 *Գրված է նաև «և Միրզախանին», բայց ջնջված է։*

414
ՆԱՐԵԿ
Երևան, № 1567 (ԺԴ դար)

Նորոգող՝ Յոհան Կարճաւանցի

ա

364բ Ի հազար նսուն ամի,
Այլ և թվոյ հնկեակ և մի (1647)
Եղև նորումն այս սոֆեստի,
Ի գերայհրնակ տանս մեծի։
Զնսայի վարդապետն և զծնողսն մեր յիշել աղաչեմ։

բ

368բ Զնորոգող սբ. Նարեկիս զՅոհան վարդապետ Կարճաւանցի յիշեցէք։ Թվին ՌՂ և Զ (1647)։

415
ՏԱՂԱՐԱՆ
Երևան, № 1989

Գրիչ՝ Մարգար դպիր
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

341բ Փառք...։ Արդ՝ դրվեցաւ Տաղարանս ձեռամբ դպիր Մարդարիս, ի գեղաքաղաքն Ջուղայ, ի թվականութեան Հայոց մեծաց ՌՂԶ (1647)-ումն, և արհի եպսիկոպոսութեան Յակոբ վարդապետին, ի խնդրոյ պարոն խոշայ Գասպարին, որ է որդի Կիրակոսին, ի վայելումն անձանց իւրեանց Սուրիազին, որ է որդի Գասպարին: Վարձս բարեաց պարգևեսցէ տէր Աստուած և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց կենդանեաց և հանգուցելոց. ամէն։

բ

101բ Զ Մարգար գրիչս յիշեա ի Տէր։

գ

241բ Զստացօղն սորին զխոշայ Գասպարն և զորդին իւր՝ Սուրիազն տէր Աստուած աւրէնէ ամէն։ Ամենայն սրբոց բերանով աւրհնէ։

416
ԺԱՄԱԳԻՐՔ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Երևան, № 2444

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

129բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աղաւթամատոյցս ի քաղաքս Կաֆայ, ընդ
130ա հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտի//բոսին, ձեռամբ յոգնամեղ գրչի սուտանուն Նիկողայոսի, ի թվականութեանս

Հայոց ՌՂԶ (1647)-ին, և առաջնորդութեան այսմ նահանգի տէր Խաչատուր արքեպիսկոպոսի, ի խնդրոյ դեռաբոյս մանկանն Խաչատուր դպրի։ Զոր տէր Աստուած բարով վայելել տացէ և զինքն ընդ երկայն աւուրս արասցէ։

Դարձեալ ազաչեմ զձեզ, հանդիպող այսմ Աղաւթմատոյցիս, հայրք և եղբարք, չի մեղադրէք մեղաւորիս, զի կար մեր այս էր։ Դարձեալ աղաչեմ զձեզ, հանդիպողք այսմ տառիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ սրբասէր քահանայն, որ բազում
130բ աշխատութեամբ // և ճշգրտիւ հասոյց զմեղաւոր ծառայս ի յայսմ արհեստի, Աստուած իւրեանն վարձահատոյց լիցի, զփոխարէնն ի Քրիստոսէ առնուցու, և զինքն ընդ սբ. քահանայիցն դասակարգեսցէ. ամէն։

417

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2804 (1600 թ.)

Գեր. ազատող՝ Աւետիս

ա

267բ Շահ [Ա]պազ[12] եկաւ այս աշխարհս գերի արաւ, տարով Սպհան. այս Աւետարանս, սբ. Լուսաւորչին Աջն անօրինաց ձեռքի[ն] է։ Դ (4) տարէն ետն լսեցանք թէ Աւետարանն, Աջն Ղարադաղումն է։ Վանից միաբանն լսեցան թէ Աւետաբանն, Աջն Ղարադաղումն է. գնացին ոչ բերին, թէ «Մէք կարիլ չենք Ղարայդաղն գնալ, մեզանէ բէզար չէնք»։

Ես՝. տէր Աւետիս, իմ որդի տէր Մարգարաւ, իմ որդի Բէկի զալաւուզ բռնեցի, ՌԶ (6000) դիան տուի զալաւուզին, տարաւ ճանապարհ նշանց ետուր. հետևս տարանք, տարանք, գնացինք տունն գտինք։ Իրան տանն հիւր կայր, գնացինք մէկ այլ <այլ> տան վեր եկինք։ Ապայ խիստ անօրէն մարդ էր. մարդ ձգեց ետևներ։ Մէկ շահի զուլ կայր այնտեղն, մեր կարդացրած աշակերտ էր, գնացինք այն բերինք, մէջն ձգեցինք, ԺԵՌ (15000) դիան տուինք ետ առինք, բերինք գեղս։ Խիստ թանկութիւն էր՝ սումար Ե (5) մարշիլ։ Կանչեցին եկեղեցին գեղիս խոճէնին՝ խոճա Արզանին,
268ա խոճա Ծատուրն, խոճա Նաւրուզն կանչեցին, բերին Փա//նոսն, Մուրատն եկեղեցին։ Մեք ասացինք, թէ՝ «Այս թանկութիւն ժամանակիս մեք գնացինք, առինք-բերինք, թէ հիմա գինն կուտաք, ձեր Աւետարանն ձեզ կուտամ, թէ վաղն ԺԲ (12) թուման այլ տայք, որ տալ չեմ»։ Նոքա ասին, թէ՝ «Մեք Աւետարանն գրեցինք տուինք վանքն, նոքա չկարացին պահել, երբ որ դու այսչափ չարչարուեցար, գնացիր Ղարադաղն, նեղացար, առիր, բերիր՝ Աւետարանն քո է, քեզանէ այնչափ խնդիրք ունեմք, որ մեր անունն ջննջես ոչ»։

Բազում ժամանակ պահեալ եմ իմում տանն, տուի ի դուռն Ս. Լուսաւորչին վախմն։

Դարձեալ յիշեցէք, ով սրբազան և լուսաճաճանք, լուսաթրոիչք երամք յիշեցէք զտէր Աւետիսն և որդին տէր Մարգարէն, որ բազում չարչարա-

[12] Ձեռագրում «Շահպազ» ձևով։

նօք և աշխատանօք ծերացեալ է, յիշեցէք զՎարդանն, զՎրթանէսն և այլ որդիքն, իմ կողակից Խաթունին, փոքր որդի Բէկուն, ապաշխարող դուստրը Խաթունին, որդի Առաքէլին, դուստր Մարթին, Հռիփսիմին, Մարիամին, որդի Բէկին և իւր կողակից Խունգիկն։

Նվիրատու՝ Մարգարէ

Բ

Ես՝ տէր Մարգարէս արծաթ առի, որն առի, որն ժողովեցի, այս սբ. Աւետարանս և սբ. Աչն պատուեցի. իմ սրտիս օժարութեամբն այս սբ.
369բ Աւետարանս տուի ի դուռն Ս. Լուսաւոր/|չին և ի ձեռն վարժապետի, որոյ անուն կոչի Առաքել վարդապետ, որ է սբ. և անարատ, որ բնակեալ է առաքինի վարուք ի վանքն, այս սբ. Աւետարան տուի ի ձեռս նորա։ Եւ եթէ այտր ով որ կա՝ եթէ կրօնաւոր եթ[է] քահան[այ]ս, ով որ միտ արասցէ եթէ Աւետարանիս արծաթ քակտելոյ, գողանալոյ կամ ծաղելոյ կամ Ս. Լուսաւորչին դրանէն հանելոյ նայ՝ զպատիժն ընդ [Յ]ուդայի և ընդ Պիղատոսի, խաչհանողացն առցէ։

Գրիչ՝ Վառվառա

Գ

Գրեցաւ ձեռամբ յիշատակարանս բազմավեհ մեղօք լցեալ կոյս անուանեալ Վառվառէս, որ միայն անուն [ուն]իմ և ոչ գործ։

Թուին ՌՂԶ (1647)։

418

ԲԱՆՔ ՁԱՓՍԻ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Երևան, № 3688

Գրիչ՝ Սիմոն

Ա

204ա Եւ զանարժան բմսկդ[13] գրիչ,
Յիշեա տէր Յիսուս Փրկիչ։

Բ

204բ Փառք...։ Ի թուականութիւնս Հայոց ՌՂԶ (1647), ձեռամբ փրծուն, զանպիտան, յամենամեղ և յանիմաստ գրչի մրիցդ[14], ի խնդրոյ սորա։

Գ

Սասստեա յոգւոն որ յիւսախի,
Եւ մթութեանցն խաւարի,
Ինձ ողորմեա զանարժանիս,
205ա Տառիս գրողի ի վատթարի։

---

[13] Ծածկագիրն ընթերցել են Մատենադարանի ձեռագրերի ցուցակ կազմողները (հտ. Ա, էջ 1064)։ Փոխանակագիր ծածկագիրը վերծանվում է այսպես՝ բ—ս, մ=ի, ս=մ, կ—ո, գ=ն. Սիմոն։

[14] մ=ս, բ—ի, ի=մ, ց=ո, դ=ն. Սիմոն։

Մատուցանեմ քեզ փարեի,
Զլսող հոգւոց այնյայտ ձայնի,
Որովք լինիմք երանելի,
Եւ կատարել զգործ բարի։
Նոյն զծածուկ ղիմ լսելի,
Լրսել խրատու այսրր տառի[15]։

419
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4022

Գրիչ՝ Մարումէ
Վայր՝ Արկուտի

261ա *Փառք...։ Այլ և գրեցաւ սա ի թվիս Հայոց ՌՂԶ (1647), ի դառն և յանբարի ժամանակս, որ ամէն աւր երերման կու կենայք։ Արդ՝ գրեցաւ սր. Աւետարանս ի յերկիրս յԵրևվանայ. ի գուղաքաղաք յԱրկուտի, ի*
261բ *հայրապետութիւն էջմիածնա[յ] տէր Փիլիպպոս կաթաղիկոսին։ Իւր // կենդանութեան ժամանակին շնորհաբաշխ աւծութիւն ետուր Ջուղաեցի պատուական հայրապետն մեր տէր Յակոբ, անուանի ամենայն երկրի։ Տէր Աստուած անսասան, ամրածածուկ ա[շ]ով պահեսցէ եկ[եղ]եցեաց շահ անշիջանելի։ Եւս առաւել մեր Հայոց աթոռս Խոր վիրապիս առաջնորդին տէր Մկրտչի վարպետն Տաթևացին. Աստուած իւր հոգին պայծառացուցանէ, որ ի ձեռն անաւրինաց կու մաշէր, թէպէտ այս ժամանակիս հաստատ ժամատեղաւք, պատարագաւք, պաշտաւնաւք զարդարեալ է։ Աստուած իւր հոգին պայծառացուցանէ։ Եւ մեղաւոր անարժանս սուստանուն Մարումէս գրեցաք կամաքն Արարչին։*

420
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4126 (1591 թ.)

298ա *Եւ դարձեալ վերջին ստացող աստուածախաւս սր. Աւետարանիս անպիտան և անարժան Ա[բապ?]շին*[16] *և կենակիցս իմ զԴալլաքն, որ ստացաք զսա յիշատակ հոգոց մերոց, ի դուռն Ս. Գէորգ զօրավարին, ի վայելումն մանկանց սր. եկեղեցոյ, որք կամեցան սր. Աւետարանս յիշատակ մեզ գեօղիս քահանայքն /// և զնորակնունք տէ[ր Յակո]բն, զոր և տէր Աստուածն ամենայնի բարիս տացէ այնոցիկ, որ լաւ տիրեն և պահեն, վարցս առցեն Աստուծոյ. ամէն։*

Յորում էր թվականութիւն Հայոց ՌՂԶ (1647)։ Եւ զդուստրս իւրեանց զէմինն յիշեցէք...։

---

[15] Զափածոյի կենտ տողերի առաջին տառերից հոդվում է Սիմոն։
[16] Անունը չնչված է, կարդացվել է ենթադրաբար։

421
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 4281

Գրիչ՝ Մարիամ
Վայր՝ Խանածախ

200ա Փառք...։ Արդ՝ ես Մարկոս եպիսկոպոս ըստացի զՅիսուս որդիս, գրել տուի ձեռամբ եղբօր դստերն իմոյ՝ Մարիամին և փծուն գրչի, որ ապաշխարող կոչի։ Յիշատակ ինձ և փրկութեան հոգւոյ և ծնողացն իմոց, հօրն իմոյ՝ Դաւութին և մօր[ն] իմոյ՝ Թանկօղին, և եղբօրն իմոյ՝ Ղուկա-
200բ սին, Մելքոնին և Պաղին. // և Եղիսաբեթ քոյրն իմ, և եղբօր որդոցն իմոյ՝ Ենկիպարին, Գրիգորին, Դօլվաթիեարին, և հարսներն՝ Վառին և Թումանին, Զիլփին. և եղբօր թոռներացն՝ Մարտին, Եղմուքին, Թառանին, Ասլին, Մարգարահին, Թիլին. և եղբօրն հարսներուն՝ Գարիանին, Գուլումին, Փարիզատն և Դալին, որ <որ> փոխեցաւ առ Քրիստոս, և
201ա նորապողպոջ որդոյն նորա՝ Սենիքարիմին և ամենայն արեան մերձա//ւորացն։

Գրեցաւ զսայ ի յերկիրս Քաշքաղու, ի գուզս Խանածախ, ընդ հովանեաւ Ամէնափրկչիս, ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647)-ին. որում և մեք թողաք զսա յիշատակ։ Ով ոք զսա կարդայ և ապրինակէ, մի բերան զմեզ յիշէ և ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի, իւր միւս ան[գամ] գալստեանն. ամէն։

422
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 5099

Գրիչ՝ Հեղինէ

376բ Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեան Հայոց ՌՂԶ (1647), ի թագաւորութեան [Պ]արսից շահ Ապասին և ի հայրապետութեան տեառն Հայոց Փիլիպպոսի հեզահոգի բարունապետի։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այս ծաղկաւէտ բուրաստանիս, զոր աստուածաբան վարդապետքն աշխատ եղեն, և զպատուական և զանդին ակունքս ի մեկ տեղ են ժողովել և Շարակնոց անուանել, որ են ընտրեալ շարած ակունք և բանալիք Հին և Նոր Կտակարանաց, լուծմունք Աստուածաշունչ դրոց։ Յերես անկեալ կրկին աղաչեմ զձեզ, յիշեցէք մեղօք դերի գծող սորա զՀեղինէ անուամբ[17], միայն ապաշխարեալ և ոչ գործով եմ հեղգացեալ. զհայրն իմ՝ զմահտեսի Խաչատուրն և զմայրն իմ՝ Թումայնաղայն, և զկուսակրօն քոյրն՝ Մարիանէ, և զեղբարքն՝ զՅովսէփն և զՄեսրովպ նախասարկաւագն, և զթոռի կոկոզ կոյս Յուստիանէն. և զամենայն աշխատողք ի սմա յիշեցէք...։

---

[17] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռագրից թերթ ընկնելու պատճառով։ Շարունակությունը վերցրել ենք Ղ. Փիրղալեմյանից՝ «Ընշխարք», հտ. Բ, № 545, էջ 444։

423
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5261.

Գրչի՝ Սահակ քահանայ
Վայր՝ Բաղէշ

ա

319բ Փառք...։

322բ Եւ արդ՝ ես յետինս ի գրչացն, և անպիտանս, և անարժանս... Սահակ խստբերայս և ոչ քահանայս, որ անուամբս միայն եմ և գործովս ոչ։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց ՌՂԶ (1647), ի քաղաքս Բաղէշ, ի դրունս սբ. հինգ խորանացն՝ Ս. Աստուածածնին և Ս. Խաչին, Ս. Պետրոսին և Ս. Պաւղոսին, և Ս. Սարգիս զաւրավարին։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ զմանկունս սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս զաւելորդն բառնայք և զպակասն լնուք, և խոշորութեանն
323ա և սխալանա//ցն անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր. և միտքս ի զանազան ցնորս մեղաց մոլորեալ էր և խաւարեալ. վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով ողորմի ասացէք ինձ Սահակ անարժան գրչիս և իմ ծնաւղացն՝ Մկրտիչ քահանային և Շահումաղին, և հօրեղբաւրն իմ՝ Մելքոնին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս։ Եւ Աստուած որ առատն է ի տուրս բարեացն...։

Բ

145ա Զ Սահակ գրչակս ի Տէր յիշեա, ո՛վ բարի հանդիպողք սմա. և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

424
ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
Երևան, № 5343 (1303 թ.)

352բ Ի թվին Հայոց ՌՂԶ (1647)։

Զստացող սբ. գրոյս զՅոհանէս կուսակրօն աբեղայն յիշեցէք ի Քրիստոս, որ ետ նորոգել զառաքելական և զմարգարէական սբ. գիրքս և ետ յիշատակ Լիմն անապատի, ի դուռն Ս. Գէորգեայ զաւրավարին։ Արդ՝ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սբ. եկեղեցոյս, այլ կացցէ յիշատակ ի Լիմն անապատիս, որ են այժմ կրաւնաւորք Ծ (50) աւելի և ոչ պակաս. և են միշտ ժրաջան յաղաւթս և ի փառաբանութիւն Աստուծոյ։ Յիշեցէք և զառաջնորդ սբ. ուխտիս Սաեփանոս վարդապետն, և այժմուս Ղուկաս հեզահոգի վարդապետն, և զայլ միաբան սբ. ուխտիս ՁԾ (50)-ունքն և զծերունի հայրն զտէր Մովսէսն։ Որք ընթեռնուք և կամ հարևանցի ինչ տեսանէք, կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Յոհանէսն և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ. ամէն։ Եւ <և> զեղբայր տէր Յոհանիսին Յակոբ կրօնաւորն և զծնօղսն յիշեցէք ի Քրիստոս։

425
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 5599 (1357 թ.)

233ա Քրիստոս Աստուած քո միւս անգամ գալստեանդ ողորմեա ըստացողի սբ. գրոցս աստուածասէր և բարեմիտ, հաւատարիմ Միքայելին և իւր ծնողացն, հօրն և մօրն կողակցոյն և որդոցն Եղիային և ասգականացն իւրոց ամէնեցուն. ամէն։ Այս Քարոզգիրքս երեր յիշատակ ի դուռն Ս. Եղիայի, թվին ՌՂԶ (1647), ի վայելումն տէր Սարգսին և տէր Խաչատուրին. ամէն։ Եթէ ոք զայս գիրքս ծախելով կամ ի դռանէն ի դուրս հանելով կամ ըրէհին գնելով <զայս գիրքս> երեք հարիւր և ԺՌ (318) հայրապետաց կանոնիւքն նզովեալ եղիցի. եթէ ոք սրբութեամբ պահէ նոցին աւրհնութեանցն արժանի լիցի. ամէն։

426
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5634

Գրիչ, ծաղկող՝ Յովանէս

ա

294բ Փառք և պատիւ այժմ յաւիտեան,

. . . . . .

296ա Յաղքատամիտ պակասաբան,
Յովանիսէ բանքս ծըրեցան,
Սա ի գովեստ հաճոյական
Առ միածին Աստուածըդ բան։

197ա Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից սրբոյ Սիովնի, սրբասնեալ վարդապետն Սիմէովն Ապարանից, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախաւս այսմ մարգարտաշար, լուսափթիթ սբ. Աւետարանիս, և ետ գրել յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց. ի միտ առեալ ղբանն՝Նսայայ, որ ասէ «Երանի...»։ Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս, և զարդարել ետ ոսկւով և երանգ երանգ ծաղկով յիշատակ իւրն և իւր ծնողացն, հաւրն՝
297բ Կարապետին // և մօրն՝ Ծովինարին, և հօրեղբօրն՝ Սիմէովն վարդապետին, և տէր Գրիգորին, և հոգևոր հօրն՝ Կարապետին: Արդ որք հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք զՍիմէոն քաշ բարունապետն Ապարանից, որ ստացաւ զսա յիշատակ բարի հոգւոյ իւրո[յ], և ծնողացն, և ամենայն արեանառու մերձաւորացն կենդանեացն և հանգուցելոցն ի Քրիստոս։

բ

29բ Քրիստոսի նկարի տակ
Մեղայ յերկինս և առաջի քո,

. . . . . .

Մանաւանդ զստացող սորա զՍիմէոն բարունին և զմեղաւոր Յովանէս ծաղկողս. ամէն։

Գ

36ա *Քեզ աղաչեմ ով փակակալ,*
Որ ամենայնցես վեհրնկալ,
ԶԱւետարանըս հրաշափառ,
Մի՛ հանապազ ի ձեռքըն տալ։
Որ չաղտոտեն զանգին ջաւհար,
36բ *Աստուածածնի // սիրոյն համար,*
Աստուած զայն քահանայն աւրհնէ,
Որ զմատն չրթանայ և զթուղթն շրջէ։

Դ

49բ Մատթէոս աւետարանիչի նկարի տակ.
Սր. Մատթէոս մարդտ անուանեալ,
. . . . . .
Ստացող սորա յոյժ երանեալ,
Սիմէոն *հռետորն որ է սուրբէ սնեալ,*
Լիցի և սա արժանացեալ,
Փառաց սրբոց հաղորդ գրտեալ։
Եղուկ ծաղկողս պիտակացեալ,
Յովանէս հողս նուաս(տ)ացեալ,
Լիցի ի ձէնջ ոչ վերջացեալ
Այլ հաղորդոյն արժանացեալ[18]։

Ե

23բ Նկարի տակ
Սիմէոն *վարդապետն է,* Ապարանցին։

Զ

Նկարի տակ
Յովանցս *ծաղկողն է* Ղ*ր*[*իմեցի?*]։

Ստացող՝ Սիմոն Ապարանեցի

Է

207բ *Արդ՝ ես Սիմէոն վարդապետս ստացայ զսբ. Աւետարանս ի թվին Հայոց ՌՂԶ (1647) ամին, և ետու ծաղկել զսա զարմանալի տնօրինականօք, յիշատակ ինձ և ծնողաց իմոց* Կարապետին, *և* Ծովինարին, *և հօրեղբօրս* Սիմէոն *վարդապետին, և տէր* Գրիգորին, *և եղբօրս* Թաժդնին, *և որդոյն՝* Պարսամին, *և ուսուցիչ՝ հօր իմոյ հոգևոր* Կարապետ *վարդապետին, և սիրասնունդ որդոյ իմոյ տէր* Աւետիս *գրոց աշակերտի և բանի սպասաւորի։ Վասն որոյ աղաչեմ զհանդիպողք սբ. Աւետարանիս, յիշել զմեզ ի սբ. յաղօթս և ի ժամ սբ. պատարագին և Աստուած ողորմի ասել..*

---

18 *Յուրաքանչյուր ավետարանիչի նկարի տակ կա նման բանաստեղծություն էջ 121 բ, 169 բ, 243 բ. հմմտ. էջ 30 ա։*

427
ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ՅԱՂԱԳՍ ՀՈԳՒՈՅ, ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՀՈԳՒՈՅ, ՅԱՂԱԳՍ ՀՐԵՇՏԱԿԱՑ

Երևան, № 7119

Գրիչ՝ Վարդանիս

ա

267ա [Փ]առք...։ Որ զօրացոյց զիս զանարժանս տեսանել զաւարտ գծա-
267բ գրութեանս գրոց, որ է Յաղագս հոգւոյ և զօրութեանց // և որակութեանց և ունակութեանց նորին ևս և վասն հրեշտակաց և որպիսութե[ան]ց նոցա։ Եւ արդ՝ ո՛վ սբ. հանդիպողք սմին, որք օգտիքդ ի սմանէ, յիշեսջիք յերկնագնաց յաղօթս ձեր զրաբունին Խաչատուր զարհին Գողթնեաց՝ զա[ռա]ջ[ն]որդն Թումայի Ս. Առաքելոյն, որ ստացաւ զսա ի վայելս Պետրոսի՝ եղբօր որդւոյ իւրում բանի սպա[սաւ]որի, որ եռատենչ սիրով ցանկացայ սմա, թեպետ հեռու մնացի գիտութեանցն որ ի սմա, սակայն փափագ սրտի միոյ կամեցայ լնուլ, զի յիշատակ առ ձեզ մնասցէ և ինձ մասն յաղօթից ձերոց եղիցի։

Դարձեալ յիշէք զհայր տեառնս իմոյ զԿարապետն և զմայրն՝ զՍաւայն, ևս և զհայրն իմ՝ զՎարդան։ *ՌՂԶ (1647)։*

Բ

267ա Կատարեցաւ գիրքս որ Յաղագս հոգւոց և հրեշտակաց։ *ՌՂԶ (1647)* թւիս։

Ծրագրեցաւ ի քարտիսիս,
Մեղսամակարթ և եղկելիս,
Զեռամբ անարժան Վարդանիսի,
Ես աղաչեմ ով հանդիպի,
Զմեղաւորն անարժանս յիշի,
Եւ դուք լիցիք յիշեալ ի Քրիստոսի...։

Գ

150բ Զմեղապարտ դրուպ Վարդանիս գրիչս յիշեա։

Դ

Ստացող՝ Պետրոս

149ա [Ա]րդ՝ ես յետնեալս ի բանասիրաց նուաստացեալս Պետրոս աղաչեմ յիշել ի Քրիստոս զպատուական հայրն իմ, զտէր Խաչատուր զարթուն դէտն Գողթնեաց, որ ի փափագմանէ սրտի իմոյ ստացաւ զսա ի վայելս անձին իմում։ Ի թվին *ՌՂԶ (1647)։*

428
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8135 (1490 թ.).

Նորոգող՝ Մովսէս երէց

ա

321բ *Ի թուականիս հայկիականի,*
Երեք քառեակքն հարիւրին,

Տասըն տասնեակըն պակասի,
Եւ ի չորիցն ստորադասին (1647)[19]։
Ի ժամանակըս պարսըկի,
Ի փոքր Ապազ շահ Թագաւորին,
Ի հայրապետըն Աղվանի,
Տէր Պետրոսի արհի հսկողին։
Ի սըրբազան հանճարեղի,
Եւ նոր ընծայ կաթողիկոսին,
Եւ առաջնորդն Ըստդաթէի,
Սաեփանոսի արհեպիսկոպոսին,
Եւ սպասատր ըզՍ. Խաչի,
Մարդն աղաւնեաց Ս. Նըշանի։
Նորոգեցաւ յայսըմ տարի,
Եւ ի գանձի աստուածային,
Որ յորջորջեալ ևըս կոչի,
Աւետարան տեառն Յիսուսի։
Զեռամբ փծուն մեղսամածի,
Եւ ի չընչին քարտուղարի,
Եւ լոկ անուամբըն յիրիցուի[20],
Մովսէս տրուպ զանարժանի։
Որ եմ բնական ի յերկըրի,
Զադածորոյն ի Գորիսի,
Զազածորոյն ի Գորիսի,
Եւ ի յերկիրըն Ծարայի։
Մայրաքաղաքըն Սոթէի,
Զի եմ ծառայ Սբ. Մաշտոցի,
Է կատարող խընդրըրուածի,
Եւ հովանի ամէն տեղի։
322ա Ի խընդրելոյ սըրբամըտի,
Անուամբ կոչեալն Երեմիայի,
Հեզահոգի և բարելի,
Սաստուածահաճոյ միայնակեցի։
Ի հիշատակ հար լիցի,
Եւ իւր ծնողացն ամենայնի,
Տէրըն տացէ պարգև բարի,
Յիւր ընդանեացըն յամենայնի։
Եւ ի յաստեացս դասակցեսցի,
Ընդ հրաբուն զօրացըն հրաշալի,
Եւ ով ոք որ աստ հանդիպի,
Առցէ յիշման գրծող սորին։
Եւ ինքն առ Տէր յիշեալ,
Լիշի, միշտ և այժմ յաւիտենի. ամէն։

---

19 Այսինքն՝ (3×4×100)—[(10×10)+4]+551։
20 Ձեռագրում «յիրիրուի» ձևով։

Բ

Այլ գրով

Եւ արդ՝ յիշեցէք զսրբամիտ Եղկարն, որ էր նա ի յերկրէս Մարայ, ի գեղջէն Հոսաբակայ, և ջերմեռանդ սիրով[21] ետ դրել զՅայսմաւուրքն, և դիմեալ ի բանն Տեառն որ ասէ. «Եւ որ առնու զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ, նա է ինձ արժանի»։ Եւ ապաւինեալ զայս բանս, և թողեալ զտուն իւր և զամենայն ինչ, և ելեալ գնաց յանապատ։ Եւ յետ տարւոյ միոյ և երկու եկեալ ի մայրաքաղաքս Սոթ, վասն նորոգելոյ զԱւետա-
3-3բ րանս։ Եւ ետ նորոգել յոյժ փափագանօք զսբ. // Աւետարանս բարի յիշատակ իւր և հոգևոր ծնօղացն, հօրն՝ Ասլաւին, մօրն՝ Սալվինազին, և Ապաւին ծնօղացն՝ Շահնուարին, Շահումաղին, և Ապաւին որդւոցն՝ Մաառուրին, Կիրակոսին, Յոհանիսին, և դստերացն՝ Մարգարտին, և իւր որդւոյն՝ Մաառուրին. և միւս դստերն՝ Խիլային. և մարմնաւոր ծնօղացն՝ Առաքելին, Գուլիիանին, և հօրեղբարցն՝ Շահարին, Յոհանին, և հանգուցեալ ամուսնոյն՝ Զիլփիիանին. և կենդանւոյն՝ Թէզաիանին, և որդոցն՝ Գուլսէվանին, Գասբարին, Պաղտասարին, Պապանանին, և հանգուցեալ Բ (2) Մելքոմեանցն, և դստերացն՝ Նաղլուխանին, Գուլիիանին, Փարիխանին, Մարիանին, Շահնօլթանին, և հարսներուն՝ Զարիպխանին, հանգուցեալ Մարիանին, և թոռանցն՝ Աաիպէկին, Սալվարիխանին և ստ ամենեսեան. ամէն։

Այլ և յիշեցէք զվերոյ գրեալսն, ընդ նոսին և զմահդասի Եդկարն,
323ա որ և Երեմիայ անուանեցաւ, // և իւր ամենայն մերձաւորքն՝ զկենդանիքն և զհանգուցեալն։ Աստուածն ամենայնի զննչեցելոցն հանգիստ և արքայութիւն պարգևեսցէ և կենդանիքն ամբողջ և անսասան կենօք պահեսցէ. ամէն։ Այլ և աղաչեմ զՀեզ, ով հանդիպողք սմա, հայրք իմ և եղբայրք, կարդալով կամ օրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զյոգնամեղ, զտարակուսի զարիպ և հեգք նկարող սորին հանդերձ ծնօղօք, զիիշողքդ՝ յիշեալ լիջիք զտեառնէ աստուծոյն մերոյ. ամէն։

429

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան, № 9257 (ԺԴ դ.)

229ա Եւ արդ՝ վերըստին նորոգեցաւ Խաղտեստրիկս, շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ, բազում ջանիւ և աշխատութեամբ ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647), ի գառն և ի դիժար ժամանակիս, որ իբրև զնաւ մրրկեալ և ալեկոծեալ կայեաք ի ձեռս անօրինացն և գազանաբարոյ բռնաւորացն. զի ազգի ազգի և պէսպէս պատրանօք և անխտիր թալանէին և կողոպտէին զազգս քրիստոնէիցն անողորմաբար։ Եւ կայեաք ի մէջ այլազգեացն անտերուչ և անօգնական, ոչ ունելով զառաջակայ և ոչ
229բ գլուխ ժողովրդեան, այլ մնացեալ արիբերան // և լալի ի մէջ օձիցն թիւ-

[21] Ձեռագրում «սիրրվ» ձևով։

նաւորաց, զի որում ոչ կարեաք յաջ գնալ և ոչ յահեակ, յոյսահատեալ ամէն դիմաց, վասն անառակ գործոց մերոց։ Զի ոչ ունիմք մաս մի բարի և ոչ կառնեմք ըստ կամացն Աստուծոյ բարեգործութիւն։ Եւ վասն անտր բարձեալ կա նախախնամութիւնն ամէնագութ Արարչին ի մենջ։ Եւ կամք մեք որպէս կալեալ և կապեալ ի մէջ չարաբարոյ օձտողաց։ Եւ արդ՝ աղերսեմ ի ձէնջ կողկողագին պաղատանօք, ով սիրալիր սի-
230ա բողք բանիցս, որք հանդիպիք սմա երգելով և եղանակելով // յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զհաւասար քահանայքն և զժողովուրդքն, և խնդրել առ Տէր զթողութիւն մեղաց նոցա, զի ետուն նորոգել զխազտետրիկս, յիշատակ իւրոց հոգւոյն, մանաւանդ զմահտեսի Յակոբն, որ է տեսուչ և վերակացու սբ. եկեղեցւոյս և զիս զվերջացեալ ժամանակի գրագիրս, որ եմ ամենեցուն յետինն և ծառայ, զի անուամբ կոչիմ և ոչ ճշմարտութեամբ։ Եւ որ յիշէք զվերոյ գրեալսն և զիս զմեղօք խոցոտեալս և զծնօղքս իմ, նաև դուք սրբութեամբ յիշեալ լիցջիք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

430
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 10123

Գրիչ՝ Փիլիպոս սարկաւագ
Վայր՝ Իֆան

354ա Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս շարականաց ի թվականիս
354բ Հայոց ՌՂԶ (1647), ընդ [հո]վա//[նեաւ Ս. Յոհանի?]ին և Ս. Կարապետ[ին], զերկիրն Մշոյ, ի գիւղն Իf[ան], որ է մերձ Ս. Կարապետին, ի յառաջնորդութիւնն Յոնանէս եպիսկոպոսին և /// եպիսկոպոսին, ձեռամբ մեղսամակարդ և մեղաւք լցեալ անարժան Փիլիպոս-սարկաւագի, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, որ կոչի Խըլկցի /// [ո]րոյ սրբասէր։

Արդ՝ աղաչե[մ ա]մենեան, որք աւկտիք ի սմանէ կամ ընգաւրինակէք յիշեցէք։

Ընդ նմին և զիս անարժան հողս զՓիլիպոս դ[ծ]ողս, և զծնաւղսն, և զամենայն [աղ]դա[տոհ]մն իմ; և զխրատատուն իմ [տէր?] Կարապետն, որ պատուական և ըն[տիր] է ամենայն գրոց և ժամակարգութեան, [որ] յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

431
ԱՒԵՏԱՐԱՆ
ՄԼԳ, Арм. 21

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

306ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Կոստանդինուպալիս, ի դուռն Սրբոյ Սարգսի զաւրավարին՝ և որդոյ նորա Մարտիրո-

սին, թվին ՌՂԶ (1647), ձեռամբ բազմամեղ սուտանուն Յովանէս իրիցու, որ միայն անուամբ եմ և գործովս ոչ, այլ աւտարացեալ եմ և հեռացեալ ի սբ. անուանէ և ի բարի գործոց։ Ի հայրապետութեանն սբ. Էջմիածնայ տէր Փիղիպպոս ամենայն Հայոց կաթողիկոսի, և մերոյս աթոռակալութեան Կոստանդինուպսլսոյ[22] և ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Իպրահիմ խոնդքարին, զոր ահա Գ (3) ամ է, որ կու պատեբ
306բ բազմի ընդ արևմտեան խաշա//պաշտիցն ի վերայ Կրիտէս կղզոյն։ Եւ էառ ի նոցանէ Բ (2) մեծ բերթ, զոր տէր Աստուած մեր աղաւթիւք սրբոց խաղաղութիւն շնորհեսցէ. ամէն։

Արդ յերես անկեալ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք և Աստուած ողորմիի արժան առնէք զգծողս։ Եւ որք յիշեք՝ յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի...։

Բ

107բ Աղաչեմ, աղաչեմ զհանդիպողդ այսմ տնաւրինապատմիս, զի մի Աստուած ողորմիի յիշել զգծողս զսուտ անուն զՅովանէս երէցս, զյունայնս և զդատարկս ի գործոց բարեաց, և որք յիշէք և Աստուած ողորմիի արժան առնէք՝ արժան լինիք տեսոյն Քրիստոսի. ամէն։

432

ԱՒԵՏԱՐԱՆ

Հ. Հաղարյան, № 65 (մանրաժապավեն, Երևան, № 832)։

Ստացող՝ Ուսթիան

ա

292ա Յիշատակարան...։

293ա Զ Ուստիանէս զստացող սորին,
Եվ զկենակիցն՝ Աղաբաբին,
Եվ միւսոյն՝ Ազարիին,
Որ հանգուցեալ է աշխարհ վերին։
Եւ զՊօղոս գծող գրիս,
Ընկալ Տէր ընդ նոսին,
Աղաչանօք սրբոյ գնդին։
. . .։

293բ Ազգիս Հայոց թուականին,
Հազար նըսուն վեց աւելին (1647),
Ընդ հովանեաւ Ս. Յակոբին,
Գրեցաւ գանձս աստուածային։
Աւետարանս խորհրդով լին,
. . . . . .[23]։

---

22 Անունը չի գրված։

23 Ավետարանի խորանների զարդանկարների բացատրությունը։

Բ

Գրիչ՝ Պողոս

297ա Կրկին անգամ յիշեցէք զՈւստիանէն և զծնողսն իւր՝ զՄար//գարեն
297բ և զՄարիամն, և զեղբարքն իւր՝ զՄուրատն, զՅովանէսն և զԴաւիթն. և
զքոյրն իւր՝ զԳուլդաստէն, զԱնային, զՎարթեռն և զՎառվառան, և զկե-
նակիցն իւր՝ զԱզարիէն և զԱղաբսբայն յիշեցէք ի Քրիստոս։ Ընդ նմին
և զիս զանարժան գրիչս յիշեցէք, կարդալով և կամ օրինակելով և կամ
տեսանելով, զի ստոյգ և լաւ ընտիր օրինակէ է։ Թողութիւն շնորհեցէք,
298բ եղբարք իմ և հարք, զի կարն մեր այս էր։ Ով եղբարք, զինչ որ ձեզ
սխալ թուի և յաւել գրեացն ոչ մեղադրէք, զի այս բառս է քերականու-
թեան, որ է այս՝ Յակկոբոս, Սիմմոն, Յուդա, Թադդէոս և այլ նման
սոցինքն են։

433

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Ա, № 796

Գրիչ՝ Ստեփանոս վարդապետ

Վայր՝ Սուրբ

219ա Փառք...։ Արդ՝ ի յանգ ելեալ գրեցաւ և աւարտեցաւ սբ. և աստուա-
ծային մատեանս յիշխանական երկիրն Մոկաց, ի գեղս որ կոչի Սուրս,
ի դուռն Ս. Յոհաննէս Մկրտչին և Ս. Գէորգայ զօրավարին, ձեռամբ Լիմ
անապատի առաջնորդ Ստեփանոս վարդապետին, ի թուականիս Հայոց
ՌՂԶ (1647) ամին, և ի հայրապետութիւն տեառն Ստեփանոսի՝ Ալրա-
մարայ Հայոց սբ. հայրապետին և Էջմիածնին՝ տեառն Փիլիպպոսի, ա-
ռատաձեռնութեամբ տանուտէր Յոհաննիսի։

434

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Ա, № 798

Գրիչ՝ Մարգարիտ

Վայր՝ Շոռոթ

ա

219բ Փառք... սրբազան և մաքրահոգի եպիսկոպոսն Սահակ... ստացեալ
զհոգեշունչ մատեանս զաւետարանական աստուածախօս քարոզութիւնս
Փրկչին մերոյ և Աստուծոյ, յոյժ փափագանօք և մեծատենչ ըղձմամբ...
ծնողացն, հօրն՝ Յակոբին, մօրն՝ Մարիամին, եղբօրն՝ Սաաղին...։

Արդ՝ գրեցաւ աւետաբեր սբ. Աւետարանս ի յերկիրս Երնջակոյ, ի
գեղս Շոռոթ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսա-
ւորչին, և [ի] հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի սբ. աթո-
ռոյն Էջմիածնի և [յ]աթոռակալութեան մերոյս նահանգի Եսայեայ քաջ
բարունապետի, որ վերստին նորոգեաց զվանքն Ս. Կարապետին հրաշա-
լի շինուածովք ի փառս զարդարողին էիցս։ Յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր
զստացող մատենիս զհեզահոգի և զքաջաշան հայրապետն Սահակ և

զծնողսն իւր... ընդ նմին և զիս անպտուղս ի բարեաց... գծողս և զծնողսն իմ՝ զտէր Կիրակոսն և զհեզահոգի հարազատն եղբայր իմ զՂազար բազմաշնորհ քահանայն և զտէր Արիստակէսն...:

Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՌՂԶ (1647) ամի, ձեռամբ ումեմն մեղապարտի՝

Մեռեալ հոգով շունչս ի մարմնի.
Ալեօք մեղաց ի սագնապի,
Բամեալ հոգիս իմ ընդ մարմնի,
220ա Գործով // չարեաց ողորմելի։
Արդ՝ ո՛վ որդիք մօր Սիովնի,
Բամի դիտողաց այս մատենի,
Ի Սուրբ աղօթս ձեր բարի
յորժամ առնէք արտասուալի։
Տացի և մասն հոգոյս գերի[24],
մեղօք մածեալ Մարգարտի:

Ի խնդրոյ հօրն մերոյ երջանիկ և պատուական եպիսկոպոսին Սահակայ... յիշեցէք և զդուստրն իմ հոգևոր զՀռիփսիմէն, որ բազում աշխատեցաւ սպասաւորելով, զոր վարձատրեսցէ Քրիստոս Աստուածն մեր իւրով ողորմութեամբն. ամէն:

Ստացող՝ Սահակ եպիսկոպոս

Բ

Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զիս զանարժան Սահակ եպիսկոպոսս, որ եմ տեղեաւ ի բուն գաւառէն Շատխոյ, ի գիւղէն որ կոչի[25] զԻսահակ սբ. հայրապետ, ստացող սբ. Աւետարանիս, և զմեղօք մեռեալ գծողս աղաչեմ յիշել ի տէր Յիսուս։ Աւետարանս յիշատակ է Սահակ եպիսկոպոսիս, ի դուռն Հոգոց վանից Ս. Աստուածածնին. ամէն։

435

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Բ, № 598

Ստացող՝ Յակոբ Ակնցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

481 Փառք...// Զի վաղ ժամանակաց մեծաւ փափագանօք Ակնցի Յակոբ անարժանս հրով տոչորէի, զի ստանայի զսա և զի ձեռամբ իմով գրէի, և վասն բազմազբաղ ժամանակիս կենցաղավարութեանս յերկարեցայ և ոչ կարացի ի գծի արկանել. և ի մեծի տրտմութիւն զանձամբ արկեալ տագնապէի և մաշէի, զիս իղձոք մտացս և զելս իրացն գտանել ոչ կտրէի։ Եւ մինչ յայս մեծ վիշտ վտանգիս իբր յանշէշ հնոցի հալէի, նա-

[24] Տողերի սկզբնատառերից հոդվում է գրչի անունը՝ Մարգարիտ։

[25] Ղ. Փիրղալեմյանը հաղորդում է, որ թուղթը կտրված է, ուստի գյուղի անունը չի պահվել։

խանձ արկեալ զանձամբ, զնախանձ Տեառն զօրութեանց։ Եւ զյոյսն որ առ Աստուած ունէի, զամենայն հոգս անձին իմոյ մոռացայ և ետու զսբ. գիրքս գրել ձեռամբ վարժապետին իմոյ Յակոբ կուսակրօն սարկաւագին և զարդարեցի գոյնզգոյն դեղօք և պատկերօք և ոսկիազարդ զարդարեցի ի մտի արկանելով զբանն տէրունական, որ ասէ. «Թէ երթայք դոբծեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանս յաւիտենականս»։ Եւ այսու բանիւ լցի զփափագ սրտի իմոյ։ Եւ մեծամիշտ տառապանօք զսկսեալս կատարեցի և այս եղև ներելովն Աստուծոյ. զի յանարժանէս թերևս արժանաւոր այս գործ եղև յանգեալ։ Եւ զայս ոչ միայն գեղապաճոյճ և ոսկիազարդ շարագրութեանս ասեմ, այլ վասն աղնիւ և անգիւտ օրինակիս...։

182 *Աղաչեմ զհանդիպողքդ այսմ աստուածային // մատենիս, ներեցէք ինձ մեղաւոր Յակոբ ստացողի սորա և ծնողացն իմոց՝ մահտեսի* Վահրատին *և մահտեսի* Շաղատային, *և երկոսին կողմանց պապերցն իմոց՝* Շահպազին *և* Յովանէսին, *և մամերցն իմոց՝* Քնարին *և* Մեհրիին, *և հօրեղբօրն իմոյ՝* Կիրակոսին, *և քրւերցն իմոց՝* Քնարին, Դշխոյին *և* Մարիամին, *և զաւակացն իմոց հանգուցելոցն առ Քրիստոս՝* Յովանէսին, Սառային *և* Մկրտչին, *որ ի տիս տղայութեան վճարեցին զկենցաղս՝ գնալով առ յոյսն ամենեցուն. և կենդանի զաւակացն իմոց՝* Յովանէսին *և* Մարգարին, *նաև կողակցին [իմոյ]՝* Գոհարին *և ամենայն արեան մերձաւորացն իմոց՝ թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք...։*

Բ

183 *Փառք...։ Եւ արդ՝ ես անարժանս, որ ըստ կարի զփափագս իմ լցի,*
184 *զրաւ հասանելով սբ. Աստուածա//շունչ դրոցս, աղաչեմ զհանդիպո[ղ]քդ այսմ աստուածային մատենիս, ներեցէք ինձ մեղաւորիս՝* Ակնեցի Յակոբ *ստացողի սորա և ծնողաց իմոց...։*

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ

Գ

182 *Կատարեցաւ հրաշալից բուրաստանս այս ի թուականիս Հայոց ՌՂԶ (1647) ամի, ի մայրաքաղաքն երջանիկ, ի մեծն* Կոստանդինուպոլիս, *ընդ հովանեաւ հռչակաւոր տաճարին Սբբոյն Նիկողայոսի հրաշագործ հայրապետին, ի ժամանակս իշխանութեան Տաճկաց սուլտան* Իբրահիմ *բռնակալին, որ և. յայս ամի էառ սա զկղզին Կրետացւոց ի ձեռացն Ֆրանգաց. և բազում աւերս էած եկեղեցեաց քրիստոնէից։ Նաև յառաջնորդութեան սբ. Էջմիածնայ աթոռոյն տեառն տէր* Փիլիպպոս *սրբազան կաթուղիկոսի, ձեռամբ բազմամեղ գրչի* Յակոբ *սարկաւագին։ Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա, Աստուած ողորմի ասացէք ինձ անիմաստ գրչի* Յակոբի *և ծնողացն իմոց՝* Պաղասարին *և* Յուստիանէին, *զի բազում երկօք և աշխատութեամբ զամս վեց հազիւ հասի յա-*
183 *ւարտ սորին. և այս ի խնամոց ամենակալ // մարդասիրին։ Իսկ վասն խոշորութեան գրիս ներումն արարէք, զի ծերութիւն և ցաւք մարմնոյ պատեաց զիս, ևս առաւել նուազութիւն լուսոյ աչացս։*

---

26 *Հովհ., Զ, 27։*

Այլ և արժանի համարեսջիք յիշման յարժանաւոր յաղօթս ձեր և զծաղկող սորա զտէր Աբրահամ սրբազան քահանայն, որ բազում ջանիւ զարդարեաց զԱստուածաշունչ և զհոգիաբողբոջ բուրաստանս, նաև աշխատաւորացն ի սա՝ և՛ սրբագրողացն և՛ օրինակիս շնորհողացն, ևս առաւել և այնոցիք, որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին՝ եթէ հոգևոր և եթէ մարմնաւոր՝ վարձս բարիս տացէ Աստուած։ Եւ որք յիշէքդ զմեզ՝ որդին Աստուծոյ և զձեզ յիշեսցէ...։

Դ

184 Գրեցաւ աստուածային մատեանս ի թուականիս մերում ՌՂԶ (1647) ամի, ի մայրաքաղաքն երջանիկ, ի մեծն Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ հռչակաւոր տաճարի Սրբոյն Նիկողայոսի հրաշագործ հայրապետի։ Ի ժամանակս իշխանութեան Տաճկաց սուլտան Իբրահիմ բռնակալի։ Նաև յառաջնորդութեան սբ. էջմիածնայ աթոռոյն տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթուղիկոսի, ձեռամբ բազմամեղ գրչի Իլովցի Յակոբ սարկաւագի։ Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա՝ Աստուած ողորմի ասացէք ստացողի սորին, նաև գծագրողիս։

Եւ գիտցէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն, զառաջնոյն զանուն կու ջնջեն և դիւրեանց կու գրեն. և ոչ է բարի սովորութիւնս։ Աղաչեմ մի՛ գործել զվնասդ զայդ։ Ապա թէ արժան է դրելոյ՝ և պատեհ գրեսցէ և զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր. քանզի կարող է Աստուած ձեզ և մեզ հատուցանել ըստ վաստակոց...։

436

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 546

Գրիչ՝ Բարսղամ

444 Փառք...։ Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց ՌՂԶ (1647), հրամանաւ և արդեամբ Սեբաստացի Ներսէս վարդապետին, որ ետ գրել զայս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք [կամ] օրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս զհոգևոր հայրն մեր՝ զվերոգրեալ Ներսէս վար-
445 դապետն և զյանցաւոր գրիչս զԲարսղամ, զի և դուք յիշեալ // լիջիք ի Քրիստոսէ...։ Որ ետ ի ձեռն տէր Աստուածատուրին և իւր որդւոյն՝ Յակոբին, Կարապետին, Դաւթին, որ եղաք յիշատակ ի դուռն նորաշէն Ս. Սարգիս եկեղեցւոյն...։

437

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մ3ՁԵՊ, II, № 417 (1214 թ.)

368 Թվին ՌՂԴ (1645) Գրիգոր պարոնտէրն առ Աստուած փոխեցաւ։

Տէր Աստուած ողորմեայ <մեղաւոր> Ըստամպոլցի մեղաւոր Յոհան սարկաւագի, ծառայ սբ. Երուսաղիմայ, թվին ՌՂԶ (1647), յիշեցէք...։

438
ՆԱՐԵԿ
Մ8ԶԵՊ, V, № 1438

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Սուսաղէմ

117 *Գրեցաւ ձեռամբ ամենամեղ և անարժան, անպիտան եղկելի և սևերես Հիզանցի պոռնիկ Յոհան սուտանուն խաբեբայիս, ի սբ. քաղաքս* Սուսաղէմ, *թվին ՌՂԶ (1647)։ Արդ՝ որք հանդի[պի]ք և ընթեռնուք, վասն սիրոյն Քրիստոսի մի ողորմիւ յիշէք զմեզ, և ձեզ լիցի ողորմութիւն Աստուծոյ. ամէն։*

439
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ8ԶԵՊ, V, № 1575 (1305 թ.)

Նորոգող՝ Եղիազար

335 *Նորոգեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի թվականութեանս Հայոց ՌՂԶ (1647) ամի[ն], ի քաղաքիս* Համիք, *որ է* Տիգրանակերտ, *ի դուռն Ս. Կիրակոսի տաճարին, ձեռամբ զառածեալ սուտ և փուտ դրչի՝* Եղիազարի, *ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի քահանային տէր* Սահփանանոսին։ *Արդ՝ աղաչեմ զհանդիպող և զվայելող սբ. գրոցս, որ լի բերանով Աստուած ողորմի ասէք աստուածասէր և աւրհնեալ կընոջն՝* Եւայինն, *որ զգրոցս գինն շնորհեաց և ետ յիշատակ հոգւոյն իւրոյ, ի ձեռն հոգևոր որդւոյն իւրոյ՝ տէր* Սահփանանոսին, *զոր տէր Աստուած սմա բարեաւ վայելել տացէ. ամէն։*

440
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ8ԶԵՊ, V, № 1629 (1507 թ.)

Գրիչ՝ Սարգիս Դսեղցի

442 *Ես՝* Սարգիս *սարկաւագս* Դսեղ[ցի] *շատ կարդացի Շարակնոցիս վրայ. հայր իմոյ* Թումանին *և մայրն իմոյ՝* Գոչկակին, *թվին ՌՂԶ (1647), առաջնորդութեամբ* Սարգի։ *յեպիսկոպոսին։*

441
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ8ԶԵՊ, V, № 1655 (1507 թ.)

Նորոգող՝ Սէք սարկաւագ

492 *Եւ արդ՝ վերըստին նորոգեցաւ Շարակնոցս, ի թըւաբերութեանս Հայոց ՌՂԶ (1647), ձեռամբ յոգնամեղ գրչիս, յիշատակ ամենայն ժողովրդեանն Ս. Աստուածածնին, և վերակացութեամբ մահտեսի* Յակոբին։

Եւ արդ՝ երեսս ի դետնի դնելով մոխրամած դիմօք և արտասուաթոր աչօք հայցեմ ի ձէնշ, ո՛վ սբ. ընթերցաւղք և պաշտօնայք Քրիստոսի, որ հանդիպիք զայս ծերացեալ և փտեալ մատենիս, որ է լաւ և ընտիր յօրինակէ խլկցոյ, և ի կարի հարուստ լեալ ի նմանէ անթերի և անպակաս, եթէ կարդալով և թէ յօրինակելով, և կամ այլ իւիւք զանց առնելով նա, յայնժամ յիշեսշիք զվերշին զստացաւղ Շարակնոցիս և նորոգել տըւօղքն՝ զՍ. Աստուածածնի քահանայքն, և հաւասար ժողովուրդքն, և տացշիք լիառատ սրտիւ զողորմիս ամենեցուն, որ բարեաց պատճառ եղեն, և ետուն նորոգել զայս հնացեալ սբ. մատեանս, և եդին իւրում տեղին ի դուռն Ս. Աստուածածնին, որում յառաջն էր։

Նաև զանպիտան և զանարժան... զսուտանուն Սէք սարկաւագս յիշեսշիք, որ բազում աշխատութեամբ նորոգեցի զսա ըստ իմում կարի։ Եւ որ յիշէք...։

442
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏՁՎՍ, I, № 162 (1449 թ.)

Նորոգող՝ Սահակ սարկաւագ
Վայր՝ Մեծոփ

092 Զվերշին նորոգել տուող սբ. Աւետարանիս զբարեպաշտ և զաստուածայսէր կինն՝ զԳուլբէգին և իւր այրն՝ զՍահակն և զԱւաքն, և զորդիսն իւրեանց՝ զՄանուկն և զՆայիպշէն, և դուս[տ]րն իւրեանց՝ զԽանումն և զԲահազիզ, և ծնաւղն իւր՝ զՅամամ և զԹանզազիզն, որ ետ նորոգել զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր ննշեցելոցն։ Որք հանդիպիք սմա լի բերանով Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Կազմեցաւ սբ. Աւետարանս ի վանքն Մեծոփ, ի դուռս Ս. Աստուածածնին, թվին ՌՂԶ (1647), ձեռամբ սուտանուն Սահակ սարկաւագի։ Յորժամ ընթեռնուք, դիս և զննշեցեալսն իմ յիշեցէք ի Տէր, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զտէր Գալուստն, որ եղև պատճառ սբ. Աւետարանիս, որ ետ ի կինն և նա ետ նորոգել. Աստուած զուր մեղքն թողնի. ամէն։

Զվերջին նորոգել տուող սբ. Աւետարանիս զպարեբաշտ և զաստուածայսեր կին զԳուլբէկն, իւր այրն՝ զՍահակն և զԱւաքն և զորդիսն իւրեանց՝ զՄանուկն և Այիպշէն։

443
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՁՄՎ, № 180 (1329 թ.)

Նորոգող՝ Յակոբ դպիր

497 Այլ և նորոգեցաւ Շարակնոցս ի վերշի ժամանակիս, ի թվին ՌՂԶ (1647) ամի, ծաղկիւ և պատկերաւ, կարմրագրով և գլխագրով, ևս առա-

ւել զեղծեալս լցուցանելով, ձեռամբ անիմաստ Յակոբ դպրի։ Աղաչեմ զամենեսեանդ, որ պատահիք այսմ գանձարանիս աստուածային կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք յերկնաթռիչ յաղօթս ձեր զվերջի ստացող սորա և զնաւրոգաւղ զվերոյ ասացեալ զԱկընցի Յակոբ և զբարեսէր հայրն զմահտեսի Վաճառ, *և զմայրրն զմահտեսի* Շազաւան, *և զզաւակսն իւր՝ զհանգուցեալսն առ Աստուած* զՅովանեէսն, զՄկրտիչն, զՍառասն, *զկենդանիսն՝* զՅովանեէսն, զՄարթան, *և զկողակիցն՝* զԳոճարն, *և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ ի ձեռն ձեր սբ. խնդրոցն ողորմել մեզ, և զի ջան մեր այս է։*

444

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՁՁԱՐ, № 22

Հետ. ստացող՝ Մինաս Թոխաթեցի

ա

116 *Զմեղաւոր* Մինաս *վարդապետս, որ անուամբ միայն [եմ] և գործով ոչ, յիշեցէք ի Քրիստոս և զծնողս իմ և զազգակիցս և որ երախտիք ունին ի վերայ այս գանձարանիս և է սա անջնջելի յիշատակ...։*

բ

Յորոց լիցի մեզ ամենեցուն մասնաւորել մանաւանդ Մինաս *բանի սպասաւորիս* Թոխաթեցոյս:

գ

Ես՝ Թոխաթեցի Մինաս *բանի սպասաւորս ստացա այս գիրքս, որ է Հար[ց]մանց, թվոյն ՌՂԶ (1647), ի քաղաքն* Գաղատիա *և ի մենաստան Ս. Աստուածածնին, որ էի սպասաւոր սորին. ապա բազում պարտուց մէջ էր մինչև ցա[յ]ժմն. ողորմութեամբն Աստուծոյ մեր ջանալով և ժողովուրդն տալով ազատեցաւ ի պարտուց, և անաւթն ի գրաւէ, որ էր ի ձեռս այլազգեաց, բազում նեղութեամբ ազատեցաք և պայծառացաւ մենաստանս։ Ընթերցողք, յիշեցէք ի Քրիստոս։*

445

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՁՁԱՐ, № 44 (1518 թ.)

Գրիչ՝ Մինաս Թոխաթցի

ա

274 *Ստացող սորա զմահտեսի* Խուպիարն *յիշեցէք ի յաղաւթս։*

բ

Ստացող սորա զմահտեսի Խուպիարն *յիշեցէք ի [յ]աղաւթս, որ եւ յիշատակ* Յանկուրի *Ս. Աստուածածնի վանիս։*

Գ

275 Փառք...։ // Որոյ տեսեալ զԱստուածաշունչս ի Գաղատիայ կարի ցանկացեալ ձեռնարկեցի ես՝ Մինաս Թոխաթցի բանի սպասաւոր՝ և աշակերտ տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի։ Բարեխաւսութեամբ Ս. Աստուածածնին և ամենայն սրբոց բազում և ազգի ազգի պատճառաւք և Հոգւոյն սրբոյ շնորհաւքն և ողորմութեամբ Տեառն պատճառ եղեալ. ՌՂԶ (1647) թվականի։ Ի սմին չորրորդ ամին եկեալ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Գաղատիայ, և զանարժանս ձեռնադրեաց և եղեալ ի Ս. Աստուածածինս վերատեսուչ. և ի թագաւորութեան սուլթան Մէհէմմէտին, որ էր մանուկ
276 տիաւք. և կաթողիկոսութեան տեառն տէր Փի//լիպպոսի։ Եւ ես՝ Մինաս վարդապետս յորդորելով և քարոզելով ուղղափառ քրիստոնեայսն առաջ եկեալ մահտեսի Խուպիարն տեսեալ զԱստուածաշունչս, բխեալ ի սրտէ իւրմէ Հոգւոյն Սրբոյ շնորհաւքն առեալ ետ հալալ ընչիցն, և եղեալ յիշատակ ի Գաղատիա ի Ս. Աստուածածնի վանուցն անշնջելի արասցէ մինչև ի կէտ կոչման։ Արդ՝ աղաչեմ զհանդիպող վարդապետական դասք, յիշման արժանի վարկչիք զմահտեսի Խուպիարն, և զհայրն Պաղտասարն, զմայրն՝ Մարիամն, և եղբայրն՝ Խաչատուրն, և Հաւնաթն, և կողակցին իւրոյ՝ Խասպուլան, և ծնաւղաց կողակցին՝ Մուրատն, և Էզիգն, և դստերացն՝ Մարիամին, և Հռիփսիմէին, և ամենայն մերձակայ և զկենդանիսն, և զհանգուցեալսն, յիշման առնել արժանի առաջի անմահ զենլոյն Քրիստոսի...։

446

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՁՎԼ, № 126 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Սահակ աբեղայ

Վայր՝ Վարագ

268 Նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղսապարտ Սահակ աբեղայիս, ի թուին Հայոց Ռ և ՌՂԶ (1647) ամի, ընդ հովանեաւ Աւագ Ս. Նշանին Վարագայ, ի յառաջնորդութեան սբ. ուխտիս, սրբասնունդ վարդապետին Կիրակոսի, ի խնդրոյ աստուածասէր և մեծահաւատ դօլուաղտրին Ալագոզի, որ ստացաւ զսայ ի յարդար վաստակոց իւրոց, և ետ //
269 նորոգել յիշատակ բարի հոգոյ իւրոյ, և ետ ի գեօղն Արարf, ընծայ նորաշէն սբ. եկեղեցւոյս, որ յանուն Ս. Աստուածածնին, զոր ԺԲ (12) ամաւ[ք] առաջ շինեաց մեծ վարդապետն Կիրակոս։ Եւ վասն ծովացեալ մեղաց իմոց և՛ յանօրինեալ [և՛] չարացեալ բերմանց ժամանակիս ի սաստիկ շարժմանէ խախտեալ կործանեցան սբ. եկեղեցիք ի բազում տեղիս, զոր է մի և այս[27]։ Եւ դարձեալ նորոգեաց վարդապետն Կիրակոս, յիշատակ հոգոյ իւրոյ և ի վայելումն տեսողացն զսա, պատուակ[ան] և վայելուչ տեսլեամբ, քան զոր էրն յառաջագոյն, ի պարծանս հաւատացելոց։ Զոր և տեսեալ զպայծառութիւն և զվայելչութիւն սբ. եկեղեցոյս, քրիստոսասէր դաւլադաւրն Ալագոզ, և ետ զԱւետարանս և այլ սպասք սրբութեան սբ. եկեղեցոյս՝ մասի տուփ մի, շապիք մի, սաղաւարդ մի, ուրար մի, վարդէ (?) մի, մոմատուն մի, յիշատակ հոգոյ

27 Տպված է «զոր էր միայն»։ Ուղղեցինք համաձայն Ղ. Փիրղալեմյանի։

իւրոյ և ծնաւղաց իւրոց՝ Շաղակաթին *և* Մարիամին, *և իւր կողակցուն՝* Կիւլիւմին, *որդոցն՝* Շիրաքին, Ալթունին, Աւետիսին, Փանոսին, *դստերաց[ն՝]* Մարեմին, *կողակցուն՝* Կարապետին, *դստերն՝* Աղութին, *միւս դստերն՝* Պատիկ *խաթունին,* Ալազօզի *քվերցն՝* Գաւանարին, Նքարին, Գաւզալին, *և այլ ամենայն արեան մերձաւորացն կենդանեացն և հանգուցելոցն, և որ ի յիշելն Աստուած ողորմի ասէ սոցայ՝ Աստուած իւրն ողորմեսցի. ամէն։*

Եւ ահա արդ՝ սակաւ մի աւաղեցից զդառնութիւն ժամանակիս, զոր տեսայ աչաւք իմովք։ Զի Աստուած զմարդն վասն բարոյ ստեղծեաց և զարդարեաց հոգով, մարմնով։ Եւ մեքս զհոգիս մեր ի մարմինս մեր մեղաւք մեռուցաք և հետևեցաք չարեաց, որով կերպիւ որ զչարն գործեցաք, նովին և զպատիժն ընկալաք։ Ի մեր ժամանակ տեսաք զսով սաստիկ, որ բազում մարդիկ շուն ու կատու կերան և զմեռեալս ևս։ Զհեծեալաշարժութիւն և զգերութիւն Պարսից՝ հանապազ, և զտարաժամ մահ անխափան։ Զմարախն, որ ոչ ոք չէր տեսեալ, տեսաք և զնա։ Եւ զայն ամենայն տեսեալ մեր, և [ի] մեղաց ոչ դարձաք, նոր իմն պատուհասիւ պատժեաց, զմեզ, զի ի պասեքի մեծ Զատկի շաբաթի գիշերն[28] *այնպէս*
270 *բար//կացաւ մեզ Աստուած, որ չէր ոք տեսեալ, զի ի սաստիկ շարժմանէ երկրի, բազում, եկեղեցիք ի հիմանէ կործանեցան, և բազում մարդիկ և անասունք ի տան տակ մնալով մեռան՝ ի քաղաքս [և] ի գեղս երկրիս մեր* Վասպուրականի։ *Զթիւ չըկարացաք իմանալ և ի գիր արկանել. զի նորա է գիտելն, որ ստեղծողն է ամենայն. Փառք Աստուծոյ հազար բերան, Աստուած ինքն ողորմի և դարձ տայ մերձաւորացս։*

Արդ՝ ի յայսմ յամի կրկին եղև նորոգում սբ. ուխտիս Վարագայ, *զոր ի շար[ժ]մանէ կործանեցաւ գեղեցկաշէն դարպասն, եկեղեցիքն՝ շինեալք ի* Սենեքերիմայ, *կամաւն Աստուծոյ, ձեռամբ հոգիընկալ վարդապետին* Կիրակոսի, *որ է ի* Յառնց *անուն գիւղէ։ Զոր ընտրողութեամբ ամենազօրին Աստուծոյ առաջնորդ եղև մեզ՝ երկու սբ. աթոռացն՝ մեզ և Ա. Առաքելոյն Բարդուղիմէոսի, ձեռամբ տեառն տէր* Փիլիպպոս *կաթուղիկոսի* Աղբակեցւոց, *և աւգնականութեամբ Աստուծոյ, ձեռնարկեալ ի նորոգել զդարպասն և զգմբէթն սբ. տաճարին Աստուածածնին, յիշատակ հոգոյ իւրոյ և ի պարծանս ողորմութիւն տուողաց։ Աստուած միոյն հազար տացէ զանճառ և զանսպառ բարին և աստ ի յաւուրն ապագային. ամէն։*

447

ՇԱՐԱԿՆՈՑ

ՁՁՂՐ, № 172 (1469 թ.)

Գրիչ՝ Ղազար

1043 *Փառք Փըրկչին և յիշատակ գրչին,*
Զմեղաւոր և անարժան Ղազար *գրչի։*
Թվին ՌՂԶ (1647)։

---

[28] *Խոսքը վերաբերում է 1646 թ. մարտի 28-ի լույս 29-ի գիշերը տեղի ունեցած երկրաշարժին։ Այդ մասին տե՛ս նաև № 349 բ հիշատակարանը։*

448
ԿԱՐԳ ԴՊՐՈՒԹԵԱՆ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ՏԱՂԱՐԱՆ
ՈՅՁՄՎ, № 664

Գրիչ՝ Խաչատուր

ա

157 Գրեցաւ Խորհրդոյ, դպրութեան և սպասաւորութեան տետրակս ի թվին ՌՂԵ (1646) ի վայելումն սարկաւագ Աստուրին:

բ

Զայս ասա եղբայր սիրելի և ապա զԳոհանամքն և յետ Գոհանամքին զԲաշխելովն, վասն զի աւրինակն չկայր և զմեղաւոր Խաչատուր գրիչս ե զխղճուկ Աստուրն յիշեա ի Քրիստոս Աստուած։

գ

Գրեցաւ այս հոգևոր բանկներս թվին ՌՂԶ (1647)։

դ

Գրուաւ թվին ՌՂԶ (1647)։

449
ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ
ՑՁՆԿԱ, № 20 (1652 թ.)

60 Զոր և թարգմանեաց[29] ոմն վարդապետ ի կարգէ Յիսուսեանցն ի Հէլէն բարբառէ ի մերս ի Բերայ, թվին Հայոց ՌՂԶ (1647)։

450
ԱԻԵՏԱՐԱՆ
Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1951 թ., Դ—Զ, № 51

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Կ. Պոլիս

85 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղաւք խաւարեալ և անարժան Մինաս գրչիս ի աստուածապահ քաղաքիս Կոսանդի[ն]ուպալսոյ, ի դուռն Ս. Նիկողայոսի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թվին Հայոց ՌՂԶ (1647), և ունի տարիս կենդանակերպ ղՋՐՐՀՈՍՆ...։

451
ԲԺՇԿԱՐԱՆ
Վ. Թորգոմեան, «Բազմավէպ», 1925 թ., էջ 134—136

Գրիչ՝ Սաֆար Վանեցի
Վայր՝ Վան

ա

Գրեցս Ցեքիմարանս յերկիր և քաղաքն ի Վան, դուռն Ս. Էջմիածին-

29 Խոսքը վերաբերում է Թովմա Կեմպացու «Վասն հետևմանց Քրիստոսի» գրքին։

նիս, ձեռամբ ամեն մեռայպարտ և անարժ[ան] գրչիս՝ Սաֆարիս. որ զանունս ունիմ և գործս ոչ։

Ի թվիս Հայոց ՌՂԶ (1647)։

Բ

... Դիրս բժշկական արհեստի ժողովեցաք ի բազում գրենաց զկարճառաւտս և զպիտանիսն. իսկ որք կարդաք և օգտիք ի սմանէ, յիշեցէք զՎանեցի Սաֆարս, Աստուած զձեզ յիշէ ի յարքայութեան։

Գ

Եւ անպիտան Սաֆարս յիշեայ ի Տէր, և ասայ զողորմին՝ Աստուած ձեզ ողորմի։

Դ

Որ ի բան տանես, յիշեա զգծող գրիս զայնպիտան Վանցի Սաֆարս, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ՌՂԵ (1646) թվիս, երկիրս Վան։

452

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., Ա, էջ 62—63

Գրիչ՝ Նիկողայոս երէց

Վայր՝ Սամբոլ

Փառք...։ Սրդ՝ գրեցաւ սայ ի թուաբերութիւն Հայոց ՌՂԵ (1646), ի քաղաքն Ստամբալ, ի դուռն Ս. Նիկողայոսի, ձեռամբն անարուեստ և անիմայ գրչի Նիկողայոս լոկ անուամբ երիցու, ի վայելումն անձին իւրոյ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք սմա, յիշեցէք աղաւթս ձեր զծնաւղս իմ և զերախտաւոր վարդապետն իմ, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ իմ։

Այլ և ստացող սորա յիշեցէք Քեաւթահեացի ոսկերիչ Յարութիւն գրել տրաւ զսբ. Աւետարանս իւր հոգոյն, ի հալալ ընչից և ի յարդար վաստակոց, և հաւրն՝ Յովանէսի հոգուն, և մաւրն՝ Հռիփսիմէնի, և եղբաւրն՝ Շեհրիին, և միւս եղբաւրն՝ տէր Նիկողոսին, և որդոցն իւրոց դեռաբուսկաց Յեսայիին, Յովանէսին, Շեհրիին և Մարիամին, որ ի միում ամսի հանգեան ի Քրիստոս՝ ի տէր մեր, ի թվին Հայոց ՌՂԶ (1647)։ Որք հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյ գրեալսն և Աստուած ողորմի ասացէք...։

Դարձեալ յիշեցէք զընստացող սբ. Աւետարանիս զՔեաւթահեացի ոսկերիչ Յարութիւնն, որ փափաքանաւք եւ գրել զսբ. Աւետարանս ձեռամբ եղբաւրն իւրոյ՝ Նիկողայոս երիցու, յիշատակ իւր և կողակցին, և որդոցն, և ծնաւղացն իւրոց... և եւ ի ձեռս եղբաւրն իւրոյ՝ Նիկողայոս քահանային, որքան կենդանի է առ ինքն մնասցէ. և յետոյ որդոյն իւրոյ՝ թէ՛ քահանայ լիցի և թէ՛ ոչ լիցի, տացեն ի Ս. Նիկողայոս եկեղեցին։ Եւ մնասցէ անդ անջինջ յիշատակ։ Եթէ ոք յանդգնի ծախէ կամ գրաւէ՝ զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայենի աստ և ի հանդերձելումն։

453
ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբար, Ա, էջ 219—220

Նորոգող՝ Մկրտիչ դպիր

Փառք... Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թուականին Հայոց ՌՂԶ (1647), ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի *և առաջնորդութեան* Սանահնոյ Սարգիս *եպիսկոպոսին, ձեռամբ* Մկրտիչ *դպիր։ Որ ողորմի Տէրն ամենայնի հոգոյ սորա ստացողի* Ղարախանին *և կողակցին՝* Ոսկեհատին, *և որդիքն՝* Դաւիթն, *տէր* Ոհանէսն, Աստուածատուրն, Սարգիսն, Ամիրխան, Սուլուխան, Գալուստ *և* Նազարն *դուստրն* Շնահաւորն, *և հանգուցեալ որդին՝* Շահնազարն, *հայրն Ղարախանին՝* Աստուածատուրն, *մայրն՝* Մուրվարն, *բար սորայ* Դաւիթն, *հանիկն՝* Մուրվարն, *եղբայրն՝* Ալիխանն, Տամուրն, *հանգուցեալն* Առաքելն, *քոյրն՝* Պահրիխանն, Շամանդուխն, Կուլպուսուխն, Սիրամարգն։...

454
ՃԱՌԸՆՏԻՐ

«Նշխարք», հտ. Ա, № 791, էջ 227 բ

Գրիչ՝ Թադեոս

Վայր՝ Բալու

Փառք..., որ ետ կարողութիւն անղօր անձինս Թադէոսի *հասանել յաւարտ երկնաշնորհ գրոցս, որ կոչի Ճառընտիր, ի ՌՂԶ (1647) թուականս, որ է տանուտէր Զրհոսն, ի գիւղաքաղաքս* Բալու, *ընդ հովանեաւ [Ս.] Լուսաւորչի, ի դառն և ի նուրբ ժամանակի. որ այլազգիքն զօրացեալ են ի վերայ մեր վասն մեղաց մերոց և անուղղայ գնացիցս մատնեալ է զմեզ Աստուած ի ձեռս նոցա։ Եւ դարձեալ մխիթարիչ լինի մեզ Ս. Հոգին, թէ՝ «Մի՛ տրտմիք, զի տրտմութիւն ձեր յուրախութիւն փոխեսցի»։ Ի խնդրոյ պատուական և սրբասէր* Կարապետ *վարդապետի, որ ստացաւ զգիրքս ի յարդար ընչից իւրոց։ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Արդ՝ որք հանդիպիք վարդափթիթ բուրաստանիս ընթեռնուլով և օգտելով, յիշեսջիք յաղօթս ձեր զվերոյ ասացեալ* զԿ[արապետ] *վարդապետն և զծնողսն իւր՝* զԱռաքելն *և* զԵղիսաբէթն, *և զամենայն արեան մերձաւորսն, և զհոգևոր հայրն՝* զՄարաիրոս *վարդապետն. և լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք։ Այլ և աղաչեմ, միով Աստուած ողորմիւ և զիս՝ զմեղուցեալ* Թալէոս *գծողս յիշել և զծնողսն իմ՝* զԿարապետ *երէցն, որ խիստ ջանաց ի հետ թղթիս ի ճղելն և ի կոկելն, և զմայրն իմ՝* զՄարգարիտ, *որ օր աւուր պատրաստէր զկերակրիկն իմ, և զմեծ հայրն իմ՝ զտէր* Յովհաննէսն, *որ ի ՌՂԴ (1645) թուականին փոխեցաւ առ Քրիստոս, և կողակիցն իւր, և զամենայն արեան մերձաւորսն իմ։*

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, յորժամ ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս զվարպետն իմ՝ զխաչատուր *սարկաւագն։*

455
ՄԱՇՏՈՑ
Մագիստրոս, № 664

Գրիչ՝ Ստեփանոս երէց
Վայր՝ Լաւաշայ

ա

198 *Ի թվին ՌՂԵ (1646) դեկտեմբեր ԻԲ (22), երեքշաբթի։*

Բ

Փառք...։ Արդ՝ անկ ելեալ կատարեցաւ Քահանայաթաղս, զոր արարեալ մեծ վարդապետն Հայոց Մեսրոպ *և* Յոհան Մանդակունի: *Արդ՝ դրեցաւ Քահանայաթաղս ձեռամբ մեղաւոր և անիմաստ գրչի* Ստեփանոս երիցու, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի կղզիս ի* Կիպրոս, *ի քաղաքն* Լաւաշայ, *ի թուականիս Հայոց ի ՌՂԷ (1648) ի հունվար ԻԹ (29), աւրն շաբաթ, յիշատակ ինձ, և իմ ծնողացն, և որդոցս, և դստերացս* Հռիփսիմէ, *և* Ճոհաւրին, *և* Սողոմոնին, *և* Սուրիասին, *և* Ղուկասին, *և կենակցին իմոյ՝* Ասմընին *և իւր ծնողացն. ամէն։*

456
ԿՆԻՔ ՀԱԻԱՏՈՑ
Երևան, № 4640 (ԺԵ դ.)

Գրիչ՝ տէր Յոհան

ա

253բ *Ես՝ տէր* Յոհանս *գիրս օրինակեցի թվին ՌՂԷ (1648), մարտի ամսին ԺԳ (13) աւարտ հանաք։ Աստուած ողորմի* Բաղտասարին *հոգոյն. ամէն։*

Բ

Դարձեալ յիշեցէք պարոն Մաթոսն *և կողակիցն՝* Ռու[սՀ]նիազն *և զիւր դստերքն. ամէն։*

457
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ
Երևան, № 4690 (1475 թ.)

Վայր՝ Լիմ

673ա *Դարձեալ յիշեցէք ... դարբին* Սարգսին, *որ մականուն* Դամուրդոան *կոչիւր. և որդոցն՝* Աւէդին, *և* Մու[ր]ատին, *և այլ զաւակացն, և*

կողակցին՝ Սալթանին, և ամենայն արեան մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոցն, ամէն։ Որ ետ զիւր դարբնի սալն յիշատակ ի դուռն Լմայ Ս. Գէորգ անապատիս։ Աստուածն ամենայնի ընդունելի արասցէ և զինքն հանդերձ նն[շե]սեցելոցքն երկնից արքայութեանն արժանի արասցէ. ամէն։ Գրեցաւ թվին ՌՂԷ (1648), ի մարտի ԻԹ (29), յաւաք շորեքշաբթին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

458

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 2096

Գրիչ՝ Աւետիք
Վայր՝ Էջմիածին

ա

34ա Եւ զԱւետիք գրիչս յիշեա ի Տէր։

Գրիչ՝ Յովաննէս դպիր

բ

604բ Կատարեցաւ գիրքս, որ Յաղագս հոգւոց և հրեշտակաց, ի թվականիս Հայոց ՌՂԳ (1644)-ին, ձեռամբ անարժան Յովաննէս դպրի։

Ստացող՝ Առաքեալ (Դավրիժեցի)

գ

305ա Փառք...։ Շնորհիւ և օգնականութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ծրեալ եղև գիրքս Հոգւոց և հրեշտակաց, նաև Մեկնութիւն Արարածոց գրոց, հաւաքելով ի մի տուփ, առ ի վարժումն և յօգուտ բանասէր եղբարց։ Արդ՝ եղև կատարումն սորայ ի թուականութեանս Հայոց հազար նրսուն և եօթեան, ի մեհեկի ամսոյ ի տասն և յութ, և յապրիլ Ի և Ե (25), յերկիրս Այրարատեան, ընդ հովանեաւ հրաշափառ գերագահ սրբոյ աթոռոյս Էջմիածնի, ի կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի շնորհազարդ և ճգնազգեաց սրբոյ հայրապետիս, ըստ վարժման և դաստիարակութեան հօր մերոյ, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, և ի տեղապահութեան նահանգիս Քայ Խոսրով խանին։

Արդ՝ վերջինս ի բանասիրաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ Առաքեալ[1] անուամբ ևեթ վարդապետ, մեղուցեալ հոգւով և ցաւագնեալ մարմնով հոգացեալ ետու գրել զԳիրս հոգեաց և զՄեկնութիւնս Արարածոց, և եդի ի միում տփի ի վայելումն անձին իմոյ և յիշատակ բարի յետ ելից կենաց իմոց, և ծնողաց, և ազգականաց, և ընկերակցաց իմոց, վարդապետաց և երախտաւորաց իմոց։ Արդ՝ աղաչեմ զվայելողսդ և ըզհանդիպողսդ, որք պատահիցէք սմա կարդալով և կամ օրինակելով, յիշեսջիք զվերոյ գրեալ Առաքեալ աբեղայս սրտի մտօք, և զհոգևոր և զմարմնաւոր աշխատաւորսն իմ։ Եւ զոր մեզ հատուցանէք, զնոյն ի Քրիստոսէ առնուցուք փոխարէն. ամէն։

[1] Իմա Առաքել Դավրիժեցին։

305բ Դարձեալ թախանձանօք խնդրեմ ի սիրելեացդ մի՛ առնել զչար սովորութիւնն, որք հատանեն զյիշատակարանս գրոց՝ շընչելով զանուն առաջին աշխատողաց, որպէս յինքեանց սեփականել։ Արդ՝ որք ստանայցեն, գրեսցեն և զիւրեանցն անուանս, քանզի բազում թողի տեղի դրելոյ ի մէջ սորա. անդ զձեր անուանսն գրեսջիք և զմերն աստ թողջիք, սակս յիշատակի մնացելոյ առ յապա պատահելոցն։ Եւ որք թողցեն զմեր անուանսն և զիւրեանցն յայլ տեղիս գրեսցեն՝ գրեսցին ի դպրութիւն կենաց, և յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն[2]։

459

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4064

Ստացող՝ Սիմէօն վարդապետ
Վայր՝ Էջմիածին

ա

421ա Փառք...։ Որոյ շնորհիւ և օգնականութեամբն յանկ ելեալ կատարեցաւ գիրքս, որ կոչի Մոլութեանց, նաև Մեկնութիւն արարածոց՝ վեցօրէից արարչութեանն Աստուծոյ, այլ և զԳիրս հոգւոց և հրեշտակաց, ժողովեալ ի մի տուփ, ի թուականիս Հայոց ՌՂ և է (1648) ամի, յապրիլ ամսոյ քսան և ութ, և ի մեհեկի քսան և մէկ, յերկիրս յԱյարատայ, ընդ հովանեաւ երկնահանգէտ, գերահռչակ սրբոյ աթոռոյս Էջմիածնի, ի հայրապետութեան ընդհանուր սեռիս հայկազեան՝ տեառն Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի, ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Աբասին, և ի տեղակալութեան նահանգիս Քայ Խոսրով խանին, աշխատա-
421բ սիրութեամբ նու/աստ և անարժան Սիմէօնի։ Զի թէպէտ եմ յաշակերտաց երիցս երանեալ Ճգնազգեաց սրբոյ հայրապետիս, սակայն գերանով մեղանացս կուրացեալ վերջացեալ գտայ ի լուսաշաւիղ ընթացից սորա. նաև տրուպ յամենեցունց՝ այսինքն յաշակերտակցաց իմոց վարդապետաց։ Արդ՝ գրեցաւ Մեկնութիւն վեցօրէից արարչութեանն յաշխարհին Պարսից, մերձ յԱսպահան արքայանիստ քաղաքին՝ ի գեղաքաղաքին Նոր Ջուղայոյ, ի մենաստանի Ամենափրկչի վանացն։ Եւ գիրք հոգեացն և հրեշտակացն ի սբ. աթոռոյս Էջմիածնիս, ձեռամբ Թաթէոսի դպրի, իմոյ աշակերտի այսմ գրչութեան արհեստի։ Իսկ Մոլութիւնքն գրեցաւ յերկրիս Գեղամայ, ի գաւառիս Մազազայ, ընդ հովանեաւ վանացս, որ կոչի Հայր Յոհանք, ձեռամբ Յովանիսի դպրի։

Եւ ես՝ անարժան Սիմէօնս տեսուչ գոլով նահանգիս, ետու գրել զդիրսս զայս ի վայելումն անձին իմոյ և յիշատակ յետ ելից կենաց իմոց վայելողացդ։ Արդ՝ որք պատահիցէք այսմ մատենի ընթերցմամբ կամ օրինակելով, յիշեցէք ըզնուաստ Սիմէօնս, որ անուամբ ևթ կոչիմ վարդապետ և տեսուչ; իսկ գործով յոյժ տարակացեալ կամ յայսմ շնորհէ։

[2] Սույն հիշատակարանը բառացի կրկնվում է 161 ա—բ էջերում։

Դարձեալ աղերսանօք խնդրեմ պատահողացդ յիշել ի սբ. յաղօթս ձեր, զմեծագոյն վարդապետսն Յակոբ և Սիմէօն, և զուսումնակիցս իմ զԱռաքել վարդապետն, և զՄովսէս վարդապետն, զՅոհան, և զՄիքայէլ, և զՆերսէս վարդապետսն, և զայլ ընկերակիցս իմ, որ ի գրելն ձանձրութիւն վարկանիմ, քանզի շնորհիւ Տեառն յոյժ բազումք են։ Նաև զգրօղս սորին Թաքէոսն և զՅովանէսն, աղաչեմ յիշել ի Քրիստոս։ Նաև մարմնաւոր ծնօղսն իմ՝ զՎարդան և զԹուրվանդէն, որք կարի ծերացեալ են։ Այլ և զեղբայրն իմ և զաշակերտ զԳալուստն, մաղթեմ յիշել ի Քրիստոս, որ տարաժամ հասակի փոխեցաւ առ Տէր, և սուք մեծ եթող ծերացեալ ծնօղացս և ինձ իսկ գլխովին։ Եւ որք ըղմեզ յիշեն՝ յիշեալ լիցին ի Քրիստոս, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Բ

421ա Արդ՝ ես անպիտան Սիմէոնս ցանկայի բազում ժամանակաց գրոցս Մոլութեան և կամէի մատամբ իմով գրել, որպէսզի ուղղեցից ըստ քերթողութեան արհեստին, քանզի թարգմանիչք սորա ոչ գիտելով զարուեստ քերականութեանն ոչ կարացին ուղղակի թարգմանել, որպէս յայտ է հրմտացելոցդ, որք ընթեռնուք զսա։ Եւ ետու գրել ումեմն Յովանիսի դպրի. և ի մնալն կիսակատար ետու աւարտել Թաքէոսի իմոյ աշակերտի, սակս ոչ ձեռնհաս լինելոյ ինձ ի զբաղանացս և ի տկարութենէս։ Եթէ կարացից սրբագրեցից և թէ ոչ՝ անմեղադիր լերուք։

460
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 1038

Գրիչ՝ Արիստակէս երէց

247բ Արդ՝ գրեցաւ գիրքս, որ կոչի Մաշտոց, զոր և սովաւ լուսաւորին որդիք մարդկան, որ և որդիս Աստուծոյ առնէ վերը[ս]տին ծնընդեամբ, ի լաւ և [յ]ընտիր աւրինակէ, ձեռամբ մեղսասէր և անարժան Արիստակէս երէց գրիչ, որ զանունս ունիմ միայն և զգործս ոչ...։

248ա Եւ եղև աւարտ սորին ի թվին ՌՂԷ (1648), ի մայիս ամսոյ ե (5), օրն ուրբաթ։ Արդ երես անկեալ աղաչեմ զամենեսեանսդ, որք կարդայք կամ օրինակէք՝ զպակասն լնուք և զաւելորդն բառնայք զգրին և անմեղադիր լերուք սղալանացս. և միով Հայր մեղայիւ արժան առնիջիք. ամէն։

461
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1308

Գրիչ՝ Միքայէլ երէց
Վայր՝ Արմրաայ Գիւղ

ա

98բ Ողորմութիւն իւրեանց և զիս զանարժան զՄիքայէլ մեղուցեալ երէցս ·հշեսցիք։

Բ

177բ Գրեցо Քարոզգիրքս ձեռամբն անիմաստ, սուտանուն Միքայէլ իրիցուս, ի գիւղն Արմրաայ, ի գուռն Ս. Ամենողորմ և Ս. Գէորգայ, թվին ՌՂԷ (1648) յունիս ԻԹ (29), օրն ուրբաթ, յիշատակ իւր և ծնողացն՝ Պակէ, Մայրամին, և եղբորցն, և իւր իրիցկնոջն՝ Քնարին, որ հանգուցեալ է աստ ի կենացս, և իւր արեան մերօրացն յիշատակ, և դիս յիշեալ Հայր մեղայիւ. ամէն։

462
ՇԱՐԱԿՆՈՑ
Մշեկ, VI, № 1914 (1537 թ.)

Նորոգող՝ Մանուէլ
Վայր՝ Ալիփուարին

350 Վերըստին նորոգեցաւ Շարակնոցս ձեռամբ յոքնամեղ, անիմաստ և անարհեստ գրչի Մանուէլի, ի գեաւղն Ալիփուարին, ի դուռն Ս. Աստուածածնին, ի թվին Ռ և ՂԷ (1648)-ին, յուլիս ամսոյ ի ԺԱ (11)-ին։ Յիշատակ է տէր Գասպարին, և եղբարն՝ Առաքելին, Նիկողոսին և Յակոբին, և հարն նորա՝ Պաւղոսին, և կնոջն՝ Զատային, և քրտերն՝ Մարքանին, Մարտիրոսին, և մեծ մարն՝ Թանսուխին, և այլ արեան մերձաւորին, որ կրկին նորոգել տուին զսա յարդար վաստակոց իւրեանց, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի և բարով վայելել տացէ. ամէն։

463
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Զմմառ, № 522 (1644 թ.)

125 Թվին ՌՂԷ (1648). յունիսի ԺԱ (11), օրն կիրակի, եկեղեցոյ տօնին, ԻԳ (23) ժամի, խիստ մեծ և ահագին շարժ եղաւ, որ բաղում ապարանք և մինարաք բրլաւ. Աստուած զբարին տայ։ Այս ամենայնի եղև վասն ծովացեալ մեղացս։ Եւ դարձեալ այս ցուցանքս յայտնեցաւ՝ Ծ (50) օր անցաւ վրան, թագաւորն փոխեցին, վազիրն և խազասքերն սպանեցին և այլ բազումք, թվին ՌՂԷ (1648) ԻԸ (28) յուլիսի /// առաջնորդն այն տեղն էր։

464
ՔԱՐՈԶԳԻՐՔ ՂՈՒԿԱՍԻ ՎԱՆԱՆԴԵՑԻՈՑ
Երևան, № 3359 (ԺԷ դ.)

Գրիչ՝ Պողոս Ջուղայեցի

33բ Ես՝ ջուղցի Պողոսն գիտակ եմ, որ թվին ՌՂԷ (1648)-ումն, ղամար ԺԱ (11)-ումն[3], սուլթան Իպրայիմն բռնեցին սպանեցին, սուլթան Մամադն թաչթ դրին։

[3] 1648 թ. ղամար ամսի 11-ը համընկնում է հուլիսի 29-ին։

465

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՄՅԶԵՊ, IV, № 1017

Գրիչ՝ Մելքիսէք երէց
Վայր՝ Բաբերդ

ա

31 *Ով երանեալ սբ. հայրք մեր հոգևոր, հանդիպողք սբ. մատենիս, անմեղադիր լերուք խոշորութեան դրիս և սղալանացս, զի իբրև ղծով տատանեալ և ողորկեալ կյանք ի ձեռս բաղմակուլ արեանարբու անօրի-*
32 *նացն. զի ոչ միանգամ //* միտք իմ հաստատ լինէր ի վերայ գործոյ ա-*ռուեստի իմոյ։*

բ

Փառք...։ Որ և բազմամեղ շնորհիւն և առատ ողորմութեամբն ըս-կըսեալ և անճառելի գթութեամբն և անհտս աստուածային խնամովն յանկ հանեալ աւարտեցաւ սբ. մատեանս, որ է ծածկեալ աստուածային գանձիւն, որ կոչի Աստուածաբանութիւն Դիոնէսիոսի Արիսբագացւոյն, ի գաւառս Խաղդեաց, *որ այժմ ասի* Բաբերդ, *ընդ հովանեաւ Ս. Աստուա-ծածնին, որ է* Սիջի *եկեղեցին քաղաքիս, ձեռամբ յոգնամեղ և ղհողոյ հաւասար անարհեստ քարտուղարի, վատթարեալ* Մելքիսէք *երիցւոյ, ի խնդրոյ մեծի բարունոյ, քաջ և արի* Մինաս *վարդապետի։ Որ և յոգնա-բաղձ տենչմամբ, և ջերմեռանդ սիրով, ցանկացեալ եղև աստուածային գանձոյս, որ լի է շնորհօք...։ Եւ ստացաւ զսբ. մատեանս ի հալալ և ար-դար ստացուածոց իւրոց ի վայելումն անձին իւրոյ, և ի պայծառութիւն սբ. և կաթուղիկէ եկեղեցւոյ...։*

Եղև կատարումն սբ. տառիս ի թվաբերութեան Հայոց ՌՂԸ (1648), ի նաւասարդ ե (5)[1] *ի փառս Քրիստոսի...։*

466

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՅՁՄՆՍ, № 31

Գրիչ՝ Քրիստոսատուր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

158 *Փառք...։*

159 *Արդ՝ յայսմ քաղցրանուագ երգոյս հետևեալք ի սէրն Քրիստոսի, ստացան զաւակ անմահ ըստ հոգւոյ և յիշատակ անջնջելի յաւիտենա-կան։ Ի դուռն Սրբոյ Աստուածածնի, վայելչայարկ և գեղեցկասար եկե-ղեցոյ, ի մայրաքաղաքս* Կոստանդնուպոլիս, *ի խնդրոյ աստուածասէր և բարեբարոյ քահանայից՝ տէր* Խաչատուրի *և տէր* Յովանիսի, *յիշա-տակ հոգւոց իւրեանց և ծնողաց, որդւոց և դստերաց, կենդանեաց և հանգուցելոց ի Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորաց...։*

[1] *Հայոց ՌՂԸ տարեթվի նավասարդի 1-ը շարժական տոմարով կընկնի 1648 թ. հոկտեմ-բերի 10-ին, իսկ նավասարդի 5-ը կլինի հոկտեմբերի 14-ին։ Ուստի սույն հիշատակարանը դրեցինք 1648 թ. շարքում։*

Արդ՝ դրեցաւ ի մեծահանդէս քաղաքս Կոստանդնուպոլսի, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զօրավարի և որդոյ նորա Մարտիրոսի, ի թվական Հայոց սեռի, քսաներկու յոբելանի, ոչ գոլ լրմամբ կատարեալ լի, այլ եռակ թիւ հարկ գոլ ի սմի (1648)[5]։ Ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան իսմայէղացւոց և հագարացոց, ի վերայ բազում աղդաց և աղանց, քրիստոնէից և այլասեռից սուլտան Իպրահիմին, որ եղև ըստկիզբն սորին ամին, և ի լրումն որդւոյ սորին սուլտան Մահմետի, որ ութնամեա մանուկ գոլով, կալաւ թագ և թախտ թագաւորութեան հօր իւրոյ։ Եւ ի հայրապետութեանն Հայոց, որ ի սբ. Էջմիածինն, տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի։ Զեռամբ տկար և փծուն գրչի՝ Քրիստոսատուր դպիր համբակի, կրկնակին դրի։

160 Իսկ նախ քան ցայս վայր, յամս եռակ, հրաձիգ լեալ քաղաքս յոյժ հրդեհեալ տոչորեցաւ քառից մասանց մի և դիւրեալ դաշտացոյց և տապալեցաւ մեծամեծ տունք և ապարանք, գեղեցկաշէն և ոսկեյօծ շինուածք, յօրինեալ դոյնդգոյն որակութեամբ՝ կապուտով և ծիրանով, կարմրով և կանաչով, որ զգունակութիւն որակացն ընդ միաձեալ ճառագայթիցն արեգականն որպէս ոսկէճաճանչ ցոլցոլային և շողշողային անպատմելի տեսութեամբ։ Զի յոյժ փայլմանէ հազիւ նկատէին տեսութիւնք աչաց գեղեցկութիւն շինուածոց տանց. և իմու մէջ գիշերոյ և տունջեան, եղև հարթ և հաւասար որպէս անապատ՝ սաթ և սօթ, զի բնաւին ոչ երևէր նշոյլ և տեղի շինութեան տանց, վասն մերոյ բաղում մեղաց։ Եւ ի սոյն ամի Աստուածածին անուն սբ. եկեղեցիս վերստին նորոգեալ պայծառացաւ, որպէս կամարս յերկնից՝ լի աստեղամբ։

Արդ՝ երես անկեալ պաղատիմ հանդիպողացդ յայսմ ծաղկաւէտ բուրաստանի և հոգիազարդ մատենի. յիշել զվերոյ գրեալ անունսն, ի սէրն Քրիստոսի...։

Եւ արդ՝ արտասանեցից իրս մեծ և զարմանալի, որ եղև ի սոյն ամի, ի մայրաքաղաքս Ռուզանդեա, զի ի մետասան յաւուրց յունիս ամսոյ, յաւուր կիրակէի, յետ մտանելոյ արեգականն, զի հանդերձեալ էր ժամ նսեմութեան եղև, յանկարծակի ճայթուն մեծ և ահագին, թընդիւն առեալ յերկիր շարժեցաւ, և դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, զի նաւք ի վերայ ծովուն, առ յիրեարս հարեալ մնացին, և սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային, զի հազիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին։ Իսկ ողորմածն է մարդասէրն Աստուած, իւր անբաւ մարդասիրութեամբն, խնայեաց զգինս կաթուածոյ սբ. յարեանն իւրոյ, և // վերստին շնորհեաց զանցանս մեղականացս։ Եւ իբրև գթելական քանակաւ մնացեալ կայր աստուածասաստ պատուհասն, ոչ գոյր հնար յերբեք յումեք մնալ կենդանի, ոչ ի բանականաց և ոչ անբանից, ոչ մնալ ամրութիւն և շինութիւն՝ տանց և ապարանից։ Ահա հասեալ էր ժամ կործանման և հիմնատապալ քայքայման տեղոյս։ Իսկ ահագին հրաշս այս, գուշակումն եղև արտաբերելի իրիս այս, զի ի զրաւել քառակ տասանց և եւթից, յաւուրց յուլսի ամսոյ և յաւուրս ուրբաթու ի մէջ գիշերի, դղրդեցաւ քաղաքս։ Եւ ոամք մարդկան ի մի վայր գումարեցան՝

[5] Այսպէս՝ 22×50—3+501=1648։

ուլամայք և սուլամայք, մեծամեծք և իշխանք, զօրք և զինաւորք, ամենեքեան խորհուրդ առին ի միասին և խորհեցան սակս սպանման թագաւորին։ Եւ ընդ լուսանալ առաւօտուն, վերացաւ աղմուկ մեծ և խռովութիւն յոյժ։ Յայնժամ հրամայեցին փակել դրունք քաղաքիս և եղին պահապանս ի վերայ նոցա մեծաւ ղգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար յումեք անցանել ի դրանցն և կամ հանել զմեռեալս և տանել առ ի թաղումն։ Եւ ի նոյն վայրի ըստ իւրեանց կամացն՝ կարգեցին նախարար և դատաւոր ի միջի իւրեանց։ Եւ առաքեցին առ թագաւորն, որսալ բան ինչ ի բերանոյ նորա, և տալ հաւանութիւն ըստ կամաց նոցա։ Եւ վասն յերկիւղի բամիցն՝ ընկալաւ զնա թագաւորն և մեծարեաց. ե ղլաթեալ՝ առ տեղիս իւր առաքեաց։ Եւ յայնմ աւուր դադարեցան ի խռովութենէ և ոչ մի ինչ վնաս եղև ի մարդկանէ։

Իսկ ի միւսում առաւօտու, յաւուր շաբաթու, վերստին գումարեցաւ զօրքն ամենայն, ի նոյն տեղւոջ, որ կոչի Օրթայ Ճամի։ Յայնժամ գրոհ տրեալ առ հասարակ, որպէս ի միոջէ բերանէ, մեծաւ հանդիսիւ, սկսան զեռալ և ընթանալ զօրքն ամենայն՝ նիզակաբարձք և վաղակապատք, սասդերովդ քաղաքիս զեղուն ընթանային, հնչատելով և փնչատելով, մինչ զի ի տեսողացն սալարեալ սարսէին, սակս իրացն զինչ լինելոյն։ Եւ եկեալ խուռն ամբոխով հասին ժամանեալ տեղիսն, լայնատարած և մեծասարաս աղօթարանն իւրեանց, որ ըստ նոցա բառբառոյն Յինկի-նամի յորջորջի, որ է հանդէպ յապարանի թագաւորին։ Յայնժամ նստան ուլամայք և մեծամեծք՝ ի նոյն տեղւոջ, առ ի յուղումն և ի ղընումն ի-
162 // Եւ ի սոյն գիշերի, վազիր թագաւորին, Ահմատ փաշան, փախըստական լեալ, անկեալ տուն մի, յումեմն իշխանի, որպէսզի ապրեսցի։ Եւ նա ըմբռնեալ զնա ետ ի ձեռս նորանիստ վազիրին, և ի նմանէ խեղդամահ լեալ սատակեցաւ և ընկեցաւ ի մէջ ասպարիսին, ուր ամբոխն գումարեալ կային։ Եւ ընդ առաւօտուն եկն ժանդ և դառնահոգի Ղազաս-քարն՝ ի մէջ յամբոխին, և ընթացաւ յերկրպագութիւն մուֆթոյն ըստ սովորական բարուցն. և նա ոչ եթող հպիլ առ ինքն և մեծաւ նախատանաւք յետս կացոյց. և նա ի նոյն տեղւոջ սրախողող լեալ սատակեցաւ ի զօրացն և ընկեցաւ ասպարիզին, մերձ առ միւս մարմնոյն, որ և զօրացն եղեալ՝ սուր ի վերայ նոցա, յօշոշեցին սատակեալ մարմինք նոցա և տարեալ ընկեցին կերակուր գազանաց։ Եւ այնպէս կորեան չարքն ընդ չարեօք, և ընկալան զկորուստն յաւիտենական։

Իսկ սատանայի սիրով վառեալ Ահմատ փաշայ անուն վազիրն, նա եղև առիթ մահու և սպանման թագաւորին, քանզի մարթէր և արժան ինքն սատակման, նա ևս ունայն և ընդ վայր կորոյս զթագաւորն ընդ ինքեան։ Եւ մինչ ցայս վայր եղև ժամ յաւուր վեցերորդ։ Եւ ապա այնուհետև ըսկըսան վիճիլ ընդ թագաւորին և բաղում բանիւք մարտեան ընդ նմա։ Իսկ թիկնապահ և պաշտաւնեայք թագաւորին յետս կացին, և խորհրդով միացան ընդ զօրացն։ Եւ յետ բաղում վիճմանց, ընթացան միահաղուն խուռն ամբոխիւ՝ ուլամայք և մեծամեծք, հանդերձ զօրօքն ամենայն ի յապարանս թագաւորին։ Ընդդիմացան ճակատ առ ճակատ և ասացին բանս բաղում նախատաց ընդ նմա։ Եւ ապա տարեալ եղին ի բանդի։

Իսկ ութամեա աւագ որդի նորա սուլթան Մահամատն, նստուցին յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ։ Յայնժամ մունետիկն աղաղակեաց սակս թագաւորութեան նոր թագաւորին։ Եւ աստ լրացաւ զառածն Սողոմոնի, որ ասէ. «Վայ քեզ քաղաք, որ թագաւոր քո մանուկ է»։ Եւ եղև ժամ յաւուրն իններորդ։ Եւ յաւուրս մետասան թողին թագաւորն ի մէջ բանդի. դի հանապազ տիւ և գիշեր, լայր դառնապէս և աղաղակէր, ոչ ուտէր և ոչ ըմպէր, գոռայր որպէս զանասուն, հառաչէր և պառաջէր անդադար, 163 խնդրէր գտանել հնար ինչ ելանել յարգելական բանդէն և ոչ կարէր, // արտասուօք հայցէր ի սիրելեացն՝ արձակիլ ի կապանացն, և ոչ ոք էր, որ յօգնէր նմա։ Եւ յետ մետասան աւուրց, առեալ ընդ իւրեանս դահիճ և ընթացան ի բանդն՝ մուծին դահիճն առ նա։ Եւ գնացեալ դահիճն մարտեաւ ընդ նմա. և իբրև ոչ կարաց յաղթել, յայնժամ բուռն հարեալ ի յերանացն և ճմլեալ նուազեցոյց և մեծաւ աղաղակալ ընկեց ի գետին։ Զի այսպէս դառն և սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ։ Եւ այսպիսի խեղճ և լալագին, ելեալ գնաց հեծեծանաւք ի կենացս և եղաւ ի բանակիստ ի մերձ առ հարս իւր։

Եւ մահ թագաւորին եղև ընդ ձեռամբ եռակ և քառակ զօրապետաց, անխորհրդաբար ի զաւրացն և ոչ թելադրութեամբ հասարակաց։ Թէպէտ և միակամ եդին ի բանդի։ Բայց ազատք էին ի մահուանէ նորա զօրքն ամենայն։ Վասն որոյ ծրարեցաւ նախանձն և բնաւորեցաւ սերմն մախանաց ի սիրտս նոցա յայնմ աւրէ։ Որ և ի սոյն իրաց երկակ անջատեցան զօրքն ամենայն և եղեն գունդ գունդ առանձին իսպահին և էնկիչարին։ Իսկ դասք ըսպահոցն առիթ եդեալ զայն ի[ւ]ր և յարաժամ աղաղակէին՝ բացայայտ լինել մահապարտք թագաւորին ակներև, զի թերևս զերծցին ինքեանք յարենէ և ի մահապարտութենէ նորա։ Այլ և միւս դասուն պետք և զօրագլուխք անքանակ փութացան, համոզել առ ի խաղաղութիւն զօրքն այն, և ոչ կարացին։ Զի աւր ըստ օրէ յաւելաւ յաճախումն խռովութեանցն. մինչ զի զայրացեալ, պատրաստեցան ի պատերազմ սաստիկ լի սրտմտութեամբ։ Իսկ մօլլայն, այսինքն՝ մուֆթին, և վազիրն՝ Մահամէտ փաշան, և զօրապետք զօրացն ընդ նոսա ի մի վայր գումարեցան, որ կոչիւր Աւրթայ Ճամի, հանդերձ զօրօքն ամենայն, լի ցասմամբ և բարկութեամբ յոյժ։ Վառեալք և սպառազինեալք, եկեալ ժամանեցին ի մեծանիստ և լայնատարած տեղին, որ կոչի Յէնկի Ճամի, զոր ի վերոյ գրեցաք, յորում կայացեալ կայ տեղին յայն՝ արձանս եռակ, որ և մինն ի նոցանէ եռակահիւս ձուլածութեամբ ձևս վիշապայ ունի ընդ յինքեանս։ Որ և զօրքն միւս գնդոյն անդր ևս ի պատրաստի կային, առ ի բորբոքումն պատերազմին։ Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան 164 յերկոցունց կողմանց ի պատերազմ, ճակատ առ ճակատ. //յայնժամ յարեան ի վերայ միմեանց. իսպահին և յէնկիչարին գազանացեալ զօրութեամբ։ Քաջքն՝ խիզախէին, արիացեալքն՝ գոչէին, թանձրամիտքն՝ յիմարէին և վատասիրտքն՝ լքանէին։ Սուսերքն՝ փայփայլէին, և սաղավարդքն շողշողային, և ի բազմախուռ նիզակացն, որպէս հրաձգութիւնք եռային յերկնից ի փայլմանէ պատենազէն վառելոցն, ընդ ճառագայթից՝ արեգական միացեալ սոսսոսային, որ և կոբկոբմունք վա-

հանաւորաց և ճայթճայթմունք լարիցն՝ ի լսելիս մարդկան խլացուցանէին։ Եւ աստ էր տեսանել զաղէտ և տագնապ մեծի կորստեան նոցա. զի որպէս փայտք՝ հարեալք ի փայտահարաց ի մէջ մայրոց եղեալք ի գետնի. այսպէս և նոքայ հարեալք ի միմեանց բազմահար հարուածք, և անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց։ Ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ղեղասոյզ սատակեցան, և ոմանց կլափն ներքին ընդ կոկորդեաւն ի բաց եղան, և ոմանց ընդ միջաւն յերկուս բաժանեալ հերձաւ. և ոմանք գլխահատք կորեան, և այլք բազումք կիսամահք լեալք, ոանատ և ձեռնատ, քընթատ և ակընջատ, անկեալ ի գետնի տքային և հեծային, մինչ զի սպառուած շնչոյն՝ կսկծալի հեծեծանօք զհոգիս իւրեանց դառնագին արձակէին։ Վասն որոյ լի եղև արեամբ և դիակամբք շրջապատ և սրահ լայնատարած ճամուն, ներկեցաւ երկիր յարենէ նոցա։ Սայլք և սանդուխք, սիւնք և խարիսխք՝ ի միագոյն լեալ կարմրացան, որպէս ծով արեան, և զօրքն ըսպահոցն փախստական լեալ հալածեցան։ Որ և գէշք նոցա՝ ընդ նսեմանալ յերեկոյեան՝ կառաբարձք տարեալ ընկեցան ի ծով։ Որ էր ժամանակս աշնանային և շնչաբերութեան հարաւային հողմոյն, որ և անկեալ ի ներքոյ ահագին ծովուս, խառնէր և խախուլէր, ճոճայր ծովն մեծ և սաչէր, ծաւալէր և ծփծփայր։ Եւ ի սաստիկ հարմանէ յալեացն ի բաց ոստաւ գէշք նոցա, առ ափս ծովուն, իբրև կուտակս ձկանց երևէին, որպէս ուրկանաւ ըմբռնեալ յորսակցաց մարդկան։ Եւ այս եղև յաւուրս յամսոյ հոկտեմբերի Ժ և է (17)։ Եւ անցեալ ի մէջ աւուրս Կ և Ը (68)՝ ի մահուանէ թագաւորին մինչև ցայս վայր։

165 , Ահա այսքան էր, յորմէ համառօտաբար ծայրաքաղ արարեալ, ծրեցի մինչև ցայս վայր, զանցեալն և ներկայս, իսկ յապագայն՝ նա միայն միոյն է դիտելի, որ արար յոչընչէ զէակս ամենայն։ Որ անձամբ եռակ յանջատի, իսկ տէրութեամբ և յէութեամբ ի մի եղարի։ Որ և նմա փառք յաւիտեանս. ամէն։

Բ

Զնկարող սորա ծաղկարար Ղազարոս յիշեցէք ի Տէր, ուսուցիչն իմ և զծնողս իմ. յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

Գ

... մանաւանդ ստացողի գրոցս Յովանէս իրիցուն և ծնողացն՝ Պալիին և Ոսկիին, կողակցին՝ Մարիամին, դստերն՝ Սուլթանին և եղբօրն՝ Մարտիրոսին։

467

ՇԱՐԱԿՆՈՑ

Հ. Քիւրտեան, «Սիոն», 1974 թ., № 1—2, էջ 74—75

Գրիչ՝ Նիկողայոս

Վայր՝ Կաֆայ

Փառք...։ Արդ՝ ցանկացող եղեալ այսմ հոգևոր բուրաստանիս տէր Գրիգոր արքեպիսկոպոսն, որ ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ աղ-

գաց յաղգս, յիշելով զհրամանն տէրունական, թէ «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ»։ Եւ դարձեալ թէ «Զամենայն ղոր ինչ ունէր վաճառեաց և գնեալ զայն մարգարիտ»։ Եւ դարձեալ, թէ «Երանի...»։ Վասն որոյ այս նաղելի տէր Գրիգոր եպիսկոպոսն զամենայն ղոր ունէր, վաճառելով ստացաւ զրպատուական գանձս աստուածային, յիշատակ իւր հոգւոյն և վայելումն ||։խնդրեմք ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. զի ընդ երկայն աւուրս արասցէ և ծաղկեալ պայծառացուսցէ ի մէջ քրիստոսասիրաց մինչև ի կետ կոչմանն...։

Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զաւրավարին, թվին Հայոց ՌՂԷ (1648)-ին և հոկտեմբեր ամսոյ ԻԲ (22)-ին. հայրապետութեան տէր Փիլիպպոս կաթողիկոսին և առաջնորդութեան մերոյս նահանգի տէր Խաչատուր արքեպիսկոպոսի, ձեռամբ մեղսասէր և անպիտան Նիկողայոս գրչի. որ ըստ կարի աղկացեալ մտաց ջանք եղեալ աւարտեցի, թէպէտ ոչ հմուտ գոլով, այլ վերին նախախնամութիւն ապաւինելով յանդ հանեալ կատարեցի ըստ կարեաց իմոց։ Խնդրեմ կրկին պաղատանաւք, զի թէ սղալ ինչ գտցի ի սմա, չի մեղադրէք, զի կար մեր այս էր, ով պատուելի հայրք և եղբայրք։ Դարձեալ խնդրեմ ի ձէնջ կրկին պաղատանաւք, ո՛վ հանդիպողք սբ. տառիս, յիշեսջիք ի տէր Յիսուս զըստացող սորա զտէր Գրիգոր Արքեպիսկոպոսն, և զհայրն իւր, և զմայրն, և զեղբայրսն, և զքորքն, և զամենայն մերձաւորսն իւր...։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս զվարպետն իմ՝ զտէր Զաքարիայ զսրբասէր քահանայն, որ բազում աշխատութեամբ և ճշգրտիւ ջանդ եղեալ հասոյց զմեղաւորս ի յայսմ արհեստի։ Քրիստոս Աստուած վարձս բարեաց պարգևեսցէ նմա և գինքն առաջին քահանայիցն դասուն դասակից և պսակակից արասցէ...։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս զտէր Մինաս սրբասէր քահանայն և զտէր Վարդան աբեղան, որ բազում աշխատանք կրեցին ի յայս աստուածարեալ Շարունակիս՝ ոմն աւրինակ տալով, և ոմն միջնորդելով և բարեխաւս լինելով, առաջնորդեցին և ետուն ինձ մեղաւորիս գրել և՛ ծաղկել և՛ կապել. Աստուած զիւրեանց վարձահատոյց լիցի և գիւրեանքըն առաջի քահանայից դասուն դասակցեսցէ. ամէն։ Դարձեալ աղաչեմք հանդիպողք սբ. տառիս, որ են նուազելն Շարունակիս յիշեսջիք ի տէր Յիսուս զստացող սորա զտէր Գրիգոր արքեպիսկոպոս[ն] և զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ զսրբասէր քահանայն, ընդ նմին և զբազմամեղ գծողս Նիկողայոս սուտանուն գրիչս, և զհայրն իմ, և զմայրն իմ, և զեղբայրն իմ, և զքորքն իմ, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զայժմոյս կենդանինք և զկանխաւ ննջեցեալքն իմ աղաչեմ յիշել...։

468

ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 7524

Գրիչ՝ Ավետիք
Վայր՝ Կաֆայ

ա

294ա Փառք...։ Որոյ կարողութեամբ և առաջնորդական զաւրութեամբ ամենասուրբ Հոգոյն աւարտեալ եղև ձայնաւոր և եղանակաւոր երգարանս այս, որ ասի Շարակնոց, այսինքն՝ ական շարոց, որ և շարիւ և կարգիւ եղեալ են առաջին սբ. վարդապետքն և սբ. հայրապետքն ըստ տուչու-
294բ թեան Հոգոյն Սրբոյ և ըստ // առատ իմաստութեան երգողացն զերգս. նախ՝ զՆնունդ Մարիամ Աստուածածնին ի ծնաւղաց, և զԱւետումն Քրիստոսին մերոյ և զՀ-աւրեայ կարդ ծննդեան և զմրկրրտութեան Քրիստոսի, և զԳալն ի տաճարն, նաև զգլխաւոր տաւնս՝ և զԱռաքելոց, և զՅունանուն, և զԱպաշխարութեան, և զՄաղկաղարդն, զԱւագ շաբթուն, և Յարութեան, զՀամբարձման, և զՀոգոյ գալըստեան, զՅովաննու, և զլուսաւորչին, զՆերսէսին, և զՀռիփսիմեանցն, զՎարդավառին, և զԱստուածածնին, և զխաչին, այլ և զմարգարէիցն, զհայրապետացն, և զըմիահամուռ սրբոց արժանացելոցն՝ անձանց զնահատակաց և զմարտիրոսաց. նաև զհանգստեան և զյարութեան կարգս ի մի շարոց հաւաքեալ հոգելից սբ. վարդապետքն մեր։ Որ և զնոյն կարգ տեսանելով և հետևելով ի նոյն յետնորդս և աննշոյլս իմաստից, մեղապարտ և անյարհեստ գրիչս ըսկսեալ և աւարտեալ զսա ըստ կարեաց իմոց, ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ և ի ընթերցումն ուսումնասէր մանկանց։ Արդ՝ ցանկացաւղ եղեալ երգարանիս 'այս, զտէր Յովաննէս հեզահոգի քահանայն և զծնաւղսն իւր, որ ըզսա բազում փափաքանաք խընդրեաց ստանալ իւր յիշատակ անմահական և անջընջելի՝ զաւակ երանական ի Սիոնն և ընտանեակ ի նորն Յերուսաղէմ։ Առ ի կատարեալ սովաւ զամենայն
295ա փափաք ցանկութեան իւրոյ, զչընչ//ջումն սղալանաց և զմաքրումն ամենայն յանցանաց. սովաւ արժանաւորիլ արքայութեան Աստուծոյ և դասիլ ընդ սուրբս ամենայն։ Արդ՝ որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափարելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յովաննէս ծաղկեալ յալեաւք Ս. Յակոբա[յ] քահանայն, և զծնաւղսն իւր, և զդեռաբոյս զաւակն իւր՝ Թոռոր սարկաւագն, որ փոխեցաւ առ Քրիստոս, և զկողակիցն՝ Սաֆարխաթուն իրիցկինն, և զմայրն իւր՝ զԱմրափաթունն, և զդստերսն իւր՝ զՇիրինպէքայն, և զԵաղութպեքայն, և քուերն իւրոյ՝ Մանուշակին, նաև զաւակացն՝ Անապիքային և Ալամիաթունին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Որ ետ զսբ. գիրգս յիշատակ Ս. Յակոբա[յ] Մրծբընա[յ] հայրապետին անուան շինեալ սբ. յեկեղեցին։ Եւ է սա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և ամենայն զարմից իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց և ամենայն արեան մերձակայից, թողութիւն շնորհել սրմա և սեռից իւրոց, այլ և շնորհել սրմա զյանցանս իւր՝ զկամայն և զակամայն, զգիտութեան և զանգիտութեան...

295բ Եւ է այս Շարակնոցս Ս. Յակոբայ յիշատակ և յայսրմ հետէ չունի ոք իշխանութիւն իմոց կամ յաւտարաց յորոշել զսա ի սբ. եկեղեցոյս,

նախ յինէն է ազատ և ապա ամենայն հասակէ, ի քահանայից և ի ժողովրդոց, յիշխանաց և ի հնազանդեցելոց, մի ոք իշխեսցէ տիրել սրմա։ Այլ ով ոք որ խնամ արկեսցէ սրմա՝ Աստուծոյ ներումն և թողութիւն գտցէ և դասեսցի ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս շարականաց ի կղզոջս Ղրիմայ, ի մայրաքաղաքս Կաֆայ, առ դրան Ս. Նիկողայոսի հայրապետին, ի թ[վ]ականութեանս Հայոց ՌՂ և է (1648) ամին, հոկտեմբեր ամսոյ Ի և Ը (28)-ին, և ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Փիլիպոսին, և առաջնորդութեան մերոյ արհեպիսկոպոսին տէր Գրիգորին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք, յորժամ եղանակէք զերգս շարականաց, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զուսուցիչն իմ՝ զՆիկողայոս դրպիրն, որ բաղում ջանիւ և աշխատութեամբ հասոյց զիս յայսմ յարուեստիս, ըստ կարաւղ լինելոյ առ ի կարեաց իմոց. տացէ տէր Աստուած նմա արժանաւորիլ ընդ սուրբս յամենայն և պահեսցէ յայսմ յաշխարհի անփորձ և յանսասան, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Եւ զմեղապարտ գրիչս աղաչեմ յիշել ի Տէր։

Բ

333բ Փառք...։

Որ ետ զիմաստս անմտի,
Կարողութիւն ինձ տկարի,
Յաւարտ առնել բանս յիշէքի,
Շարականս ընդ Տաւնացոյցի։
Արդ՝ գրեցաւ բանս կարգի,
Երգս հսկման առաւատի,
Զեռամբ ումեմն անարժանի,
Եւ սուտանուն Ավետիքի։
Որ եմ տրուպ ամենայնի,
Եւ չեմ տեղեակ յայսմ յարուեստի,
Հող և մոխիր և փանաքի,
Յետնորդ ///
Ռ ամի Ղ և է աւելի (1648),
[Նո]յ[եմբեր][14] ամսոյ ԺԵ (15)-ի,
Աւարտ եղև չորեքշաբթի։
Զոր ստացաւ փափաքելի,
Տէր Յովանէս անուն բարի,
Ծաղկեալ ալեաւք և ծերունի,
Եւ քահանայ հեզահոգի։
Ի ժամանակս յուժ անբարի,
Որ է սկիզբն կատարածի,
Զի հրաման Փրկչին լինի,
Որ է գրեալ Ավետարանի։
«Յարիցէ յազգ ի վերա ազգի,
Եւ թագաւոր թագաւորի»,

Յայսմ յամի բանս կատարի,
Երկիրն ի Լեհ՝ Լեհաց ազգի։
Զի խռովեալ ընդ զազախի[6],
Հարին զնոսա ի փախստի,
Որ և հատմանքն Յոզուի,
Եկին երկիրն Ղրիմի։
Եւ հաշտեցան նոքա ընդ խանի,
Որ էր անուն խանին Նեպի,
Եւ պարոնին անուն Մեմի,
Եւ միւս պարոն Թաւղայի կոչի։
Զոր ժողովեալ զաւրք թաթարի,
Միաբանեալ ընդ զազախի,
Գնացին աշխարհն ի Լեհի,
Զերկիր նոցա հարին ավարի։
Զայս և զկանայս վարեցին գերի,
Բազումք փախեան լեառ Վիմորի
334ա /// [բա]ժին սրի,
Եւ շատք մեռան ճանապարհի։
Եւ ցրվեցան որպէս փոշի,
Կանայք, մանկունք անթվելի,
Նաև պարոնն Պար քաղաքի,
Բերին երկիրն Ղրմի։
Յայսմ յամի յոյժ մահ եղև,
Կաֆա քաղաքն և Ղրիմի,
Ըստ հարուածոյն Յեզիպատոսի,
Շատ հայրք թողու առանց որդի։
Մատաղ մանկունք մեռանէին,
Որպէս ծաղիկ թառամէին,
Եւ մայրք նոցա նուաղէին,
Երկուքն ի մի նաշ դնէին։
Բազմաց, հնկից ոչ մնաց մի,
Եւ ոչ կայր տուն առանց լացի,
Վասն մեղաց մեր այս լինի,
Զի զղշասցուք գործոց չարի։
Արդ՝ աղաչեմք արտասուելի,
Փրկչեն մերոյ Կենարարի,
Զի որ էհար նոյն գթասցի,
Ժամ բարկութեանն ողորմեսցի։
Աղաչանաւք Աստուածածնի,
Եւ Յովաննու Կարապետին,
Նախավկա Ստեփանոսի,
Եւ ամենայն սրբոց դասի։

---

[6] Նկատի ունի Բոգդան Խմելնիցկու ղեկավարած ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարը պանական Լեհաստանի դեմ։

Բառնալ զցասումն պատուհասի,
Զխաղաղութիւն տալ աշխարհի,
Անշարժ պահել զեկեղեցի,
Ի մի հաւատ և ի յոգի։
Հայրապետաց, քահանայից,
Պաշտաւնէից սրբոց ուխտի,
Թագաւորաց և իշխանաց,
Զաւրավարաց և ռամկի։
Սակաւ բանիս յարմարողի,
Ընտացողի և գրողի,
Ընթերցաւղի և յիշողի,
Քրիստոս Աստուած ողորմեսցի։
Յոյժ մեղաւոր եմ և եղկելի,
Լցեալ չարեաւք ազգի ազգի,
Մեռեալ հոգով բազում ախտի,
Միայն մարմնով սուտ կենդանի։
Ով դասք ընտրեալք լոյս երամի,
Որք հանդիպիք այսմ բանի,
Զիս յիշեցէք կամաւք բարի,
Արժան առնել Հայր մեղայի։

գ

302ա *Զստացաւղ դրոյս զտէր Յովանէս քահանայն յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, հանդերձ ննջեցելովք։*

469
ՄԱՇՏՈՑ
ԹՑԱՎ, № 202

389 *Յիշատակ է սբ. Մաշտոցս* Սառային *հոգոյն և իւր կողակցին՝* Կոստային *և որդոցն՝* Յաւուրթէնին, Միքայէլին, Մարթային, *խաթուն* Փաշուկան Մանուշակին, Յովանէսին, Եղիային, Վարդէծոցին... *որ զայս ծախէ՝ Յուդայի մասն առնէ...։ Գրեցաւ ՌՂԸ (1648), նոյեմբերի 18, օրն հինգշաբթի։*

470
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Կամենից, էջ 189—190

Գրիչ՝ Մուրատ սարկաւագ
Վայր՝ Շէշով

Ես՝ մեղաւոր և անարժան, ծառայ Աստուծոյ Մուրատ, *որդի ողորմած հոգի* Միքայելին, *գրեցի զայս կանոնական հրամանս ի* Շէնով *քաղաք, ի դուռն Ս. Խաչին, ի թագաւորութեան* Վասիլ *պարոնին, թվին ՌՂԷ (1648)-ին, դեկտեմբեր ամսոյ Ը (8)-ին, օրն հինգշաբթի։ Աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, յորժամ կարդաք կանոնական հրամանս*

անմեղադիր լերուք սղալանացս և խոշորութեան գրոյս, զի շատ արտասուելով և հառաչանօք գրեցի զայս, զի այսմ ժամանակի փախստական էինք ի հայրենի տեղեաց՝ Նուզլովգայու ի Շէջովն քաղաք, ի ձեռաց չար Խմէլին, զի շատ աւերում արար ի Լեհաց երկիրն։ Յայսմ ժամանակի եկաւ տէր մահտէսի Գասպարն Երուսաղէմայ, զի ուխտն կատարեալ էր. եկաւ ի Շէջով քաղաք. յետոյ չկարաց երթալ ի Նազլովցու, զի շատ խառնակութիւն էր. ամէն հարամի եղեր էր որ իսկի չէին թողեր, որ մարդ գալէր ճամբրահներն, զի այս չարութեանս է պատճառ Խմէլին. յետոյ ետուր իւրեան հալալ ընչիցն ինձ՝ անարժան մեղաւոր Մուրատ սարկաւագիս, որ զայս սակաւ կանոնահրամանն գրեցի, այլ բաւ է։

Աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, հայրապետք և վարդապետք, քահանայք և սարկաւագք, յորժամ կարդաք կանոնահրամանս կամ օրինակէք, յիշեցէք զանարժան ծառայն ձեր Մուրատ սարկաւագ զգծող սորին, և զծնողսն իմ՝ զխոճայ Միքսայէլն, որ առ Աստուած փոխեցաւ, և զմայրն իմ՝ Նազութիաթունն։ Յիշեցէք միով Հայր մերիս, և Աստուած զձեզ յիշէ միսանգամ գալստեանն. ամէն։

Ո՞հ գիր որ մնաս,
Ո՞հ ձեռք որ հողանաս,
Ո՞հ եղբայր որ թէ զմեզ չմոռանաս։

471

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մ32ԵՊ, V, № 1553

Գրիչ՝ Դաւիթ աբեղայ
Վայր՝ Բաղէշ

ա

322 Փառք...։ Արդ՝ աւարտեցաւ սբ. գիրքս, որ կոչի Միխայէլ և փոքր ինչ ծաղկաքաղ գաւաղանագիրք, որ զամենայն ինչ յայտնէ կարգաւ. նաև Բիւզանդ կոչեցեալ պատմագիր և Աշխարհացոյց, եղեալ զսոսա ի միում տփի, ձեռամբ բազմամեղ տրուպ Դաւիթ հաբեղայի, որ անարժանս եմ ի ման[կ]ունս եկեղեցւոյ։ Սնեալ առ ոտս պատուական և հեզահոգի, քաղցր և լի ամենայն բարութեամբ Մեսրովպ վարդապետի, աշակերտի Հայոց տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, որ է այժ[մ] անուանի ի մէջ երկոտասան ազգ խաչապաշտից և վեհ քան զնոսա։ Որ և խնդրեմ ի բարերար Տեառնէ մերմէ, զի պահեսցէ զսբ. աթոռն պայծառ հանդերձ Բ (2) մեծամեծ լուսաւորօք, որ է կաթողիկոսն և Յակոբ վարդապետն[7]. ամէն։

Եւ ես՝ տրուպ գոլով շառաւիղեալ յարմատոյ սոցա, հոգևոր որդի Մեսրովպ վարդապետի, որ բազում աշխատութեամբ երկնեաց զբանս հոգևոր ծնանելով ի սիրտս մթին զբանս յորդաբուղխ, զՀին և զՆոր կտակարանացն. նաև ուսոյց ինձ գիր։ Թէպէտ ես անարժան և յետնեալ, միշտ ուսանիմ և երբէք ի գիտութիւնն ճշմարտութեան ոչ հասանիմ, այլ կեամ հակամիտեալ յերկրի, զսերմն առեալ փշով հեղձուցանեմ և հանապազ

[7] Նկատի ունի, հավանաբար, Հակոբ Ջուղայեցուն։

պշնում մտօք ցանկութիւն մարմնոյ, և ի ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց, որ ոչ է յԱստուծոյ, այլ յաշխարհէ։...

Արդ՝ ծրեցի զսա ի թվին Հայոց ՌՂԸ (1648), դեկտեմբերի յԹ (9), ի յառաջնորդութեան Բաղիշու նահանգին Մեսրովպ հայրապետի և աստուածաբան վարդապետի, քաշ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, ոչ միայն յարհեստ գրչութեան և ծաղկարարութեան, այլ ճոխ ամենայնիւ, լցեալ գիտնականութեամբ, ճշմարիտ քարոզող և դասասաց, հեզ և հանդարտ, սրբասնունդ և մաքրամիտ, աւրհնեալ ձեռամբ տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և շնորհեալ եպիսկոպոս Բաղիշու, և տուեալ գաւազան իշխանութեան վարդապետական, որ եկեալ նստեալ յաթոռ իւր հովուել զհօտ Տեառն։

Եւ ես հէքս ե թշուառականս առի ձեռնադրութիւն ի նմանէ։ Ես [ահա] ԲԺ (12)-ան ամ է, որ տեսուչ է մեզ որդիեցելոցս։ [Արդ՝] խնդրեմք յապենիազ Տեառնէ, զի յերկարեաց ա[բաս]ցէ, և յետ աստեաց ճեպելոյ ընդ երջանկա[յիշատակ] սբ. հայրապետացն դասակից առնէ յաւիտենից. ա[մէն]։ Գրեցի ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Գէորգ[գայ] զօրավարին։

Արդ՝ վասն սիրոյն Քրիստոսի աղաչեմ յի[շել] ի Տէր զտառապեալ անձն իմ Դաւթի, [որ բազում] աշխատութեամբ գրեցի, զի զօրինակն [փութով կու տանէին], վասն այնորիկ նօտր և փութով գրեցի ի վայել[ումն անձին] իմոյ և յետ իմ, ում Տէր կամեսցի, Աստուած [վայ]ելել տացէ։ Աստուած աւրհնէ զայն մարդն, որ զգիրքս տեսանէ յայլազգոյ ձեռ դողացեալ յազդմանէ չարին, գնէ, շատ ու քիչն չհայի, զի խիստ լաւ գիրք է. և ոչ թէ մի գիրք, այլ Գ (3) գիրք ի միում տփի, նաև Աշխարհացոյց։ Եւ ուր որ երթայ և յոյր մարդու ձեռ կամ կարդացողաց կամ վարդապետաց կամ սարկաւագաց զգիրքս դնէ, միթէ ազատարարն Աստուած զձեզ ազատէ, և զդողացողսն պատժէ. ամէն։ Նաև յիշեսջիք ի Քրիստոս զհանգուցեալ հայրն իմ՝ զԱլեքսանոս, և զմայրն իմ, և դուք յիշեալ լիջիք յահեղ ատենին Քրիստոսի Աստուծոյ մերո[յ]. ամէն։

Բ

Յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԴաւիդ գծողս և զուսուցիչն իմ՝ զՄեսրոպ վարդապետ...։

Գ

21 Նաև բազում թախանձանօք և կողկողագին պաղատանօք, մոխրամած դիմօք... Դաւիթ սուտանուն ծառայ Քրիստոսի և ձեր, բազում հառաչմամբ աղաչեմ զմանկունս Նոր Սիոնի, զի յորժամ ընթեռնուք ի սա և օգտիք ինչ ի սմանէ... Աստուած ողորմի ասացէք ինձ անարժանիս և ծնօղաց իմոց, զի յիշատակ ոչ ունիմ մարմնական որ յիշէ, այլ զԱստուած ունիմ..., զի գիրքն ուր որ գնա յիշատ[ակ] է հոգոյ։ Յիշեսջիք զիս զտրուպս և այն որ ի սկզբանէ բարին է և տուող ողորմութեան, քաղցր ակամբ հայեսցի ի ձեզ...։ Անմեղադիր լերուք, զի զօրինակն փութով կու տանէին և ես փութով գրեցի, ի թուին Հայոց ՌՂԸ (1648)։

դ

Ով եղբայր, զսորա շարադրութիւն դնա դիտ ի յետին տետրն, որ ըստ դրոնիկոսի գաւազանօք գրաւեալ է Սամուէլ[8] և տես կարգաւ զկարգս թագաւորաց և զքանի ամք Տեւոն մերոյ, որ զաւելորդն բարձեր է և զամենայն պիտանի բան գրեր, կարգաւ ի Քրիստոսէ սկսեալ։ Հռովմայեցոց թագաւոր Օգոստոս, Հրէից՝ Հերովդէս, Պարսից՝ Արշաւիր, Հայոց և Ասորոց՝ Աբգար. տես և դիւրաւ հասանես ի վերա իրացն եղելոց։ Եւ զմեղաւոր Դաւիթ գրիչս յիշեա, զի նորա համար կու տա[ն]ջիմ գրել զինչ որ տեսանեմ, որ ողորմի տայք և մեղացս խնդրել զթողութիւն։ Թէ ում որ հանդիպի այս գրքիկս՝ Աստուած բարով վայելել տացէ. ամէն։ Առաջակայս Բուզանդ է, որ է Փաստոս։

472

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 80 (ԺԷ դ.)

Կազմող՝ Թումա

194ա Փառք Քրիստոսի աստուածութեան, որ ետ կարողութիւն Թումա կազմողի, որ կազմեցի զսբ. դիրքս, յիշատակ և վայելումն [տէր] ////-ին[9], որ ետ կազմել ի հալալ ընչից իւրոց. թվին ՌՂ և է (1648)[10]։

473

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1113

Գրիչ՝ Յակոբ Ակնցի

193բ Զվերջին ստացաւղ սբ. գրոցս Ակնցի Յակոբ[11] դպիրս և զծնաւղս /// և զմահտեսի Ղազարան, այլ և զկողակիցս ///, և զՅովանէսն, և զՄարաիրոսն յիշեցէք առ Տէր, որ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։

Եւ եղև ստացումն սորա ՌՂԷ (1648) ամի, յորում յաւուրս մեռաւ սուլտան Իպրահիմն և նստաւ սուլտան Մուհամատն թագաւոր յՍտամպուլ։ Եւ ի սորա յա[ւուրս][12]

---

[8] Իմա Սամուել Անեցի։

[9] Անունը ջնջված է։

[10] Նույն բովանդակությամբ և միևնույն անձնավորության մի այլ հիշատակարան պահվել է № 7911 ձեռագրի 149 բ էջում։

[11] Մինչև այստեղ ջնջված է. կարդացինք դժվարությամբ։ Ձեռագրի 209 բ—211 ա էջերում պահվել է նույն հեղինակի ոտանավորը 1635 թ. աքսորի մասին և 1662 թ. Գաբրիել նահատակի պատմությունը (էջ 116 բ— 118 ա)։

[12] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

474
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ
Երևան, № 1312

Գրիչ՝ Սաճակ Զուղայեցի

314ա *Յիշատակ է մեկնիչս Մաթէոսեան Աւետարանին ի դուռն սրբոյ Էջ-միածնին Ղարատանէնց Աղդէ և հարն՝ խոճայ Վալուն, և մօրն՝ Զատա-յին, և եղբարցն՝ հանգուցելոց Միրզախանին, և խոճայ Բաղիրին, և քեռն՝ Զիւֆլիխանին, և կենակցին խոճայ Աղդէ՝ Համափարին, և մեծ պապուն՝ Ղարատանին, և նորա որդոյն՝ Յակոբին, և սորայ որդոյն՝ խաւճայ Առաքելին: Ով որ ընթեռնուք զսա, լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցս, և ձեզ յիշողացդ ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր. ամէն։*

Եւ ինձ Սաճակ վարդապետիս Զուղայեցւոյ, մէկ ողորմեա ասասցիք, որ եմ ազդաւ Ղարատանեցի: Թվին ՌՂ է է (1648)։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն[13]։

475
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ
Երևան, № 1527 (1303 թ.)

129ա *Յիշատակ է սբ. գիրքս Ղալաթիու բոլոր ժողովրդեանն, որ ստացան զսա միաբանութեամբ և եդին ի Սբ. Մայրն Լուսաւորիչ, ի վայելումն ան-ձանց իւրեանց, հրամանաւ իշխանացն Դաւթի և այլ ծերոց, ձեռամբ եկեղեցպան մահտեսի Մանկին և աթոռակալ Սողոմոնին, յորդորմամբ աւագերէց տէր Կարապետին, թվին ՌՂէ (1648)։*

Եւ որ հանդիպիք սբ. տառիս աստուածարեալ վեհ իմաստք, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք զվերոյ դրեալ համակամ և միա-խորհուրդ ժողովուրդն, ղծնողսն /// ողորմեսցի Աստուած. ամէն։

476
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան, № 2076 (1410 թ.)

Նորոգող՝ Պօղոս
Վայր՝ Ամիք

210ա *Վերստին նորոգեցաւ Քարոզգիրքս ի թվականիս Հայոց ՌՂէ (1648) ամի, ձեռամբ անարժան Պաւղոսի, ի քաղաքն յԱմիք: Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս ընթերցողաց [զտէր Յոհանէսն][14] առ ի յիշատակել [զիս զանարժանս], որ ետ վերստին նորոգել Քարոզգիրքս ի վայելումն իւր, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ սմա. ամէն*[15]։

---

[13] Ձեռագրի 4-րդ պահպանակի վրա դրված է. «Թվին ՌՃԿէ (1718)-ին լուսին խաւարէցաւ»։

[14] Ուղղանկյուն փակագծերինը լրացրինք՝ ՏԵՐԱՎ ցուցակից։ Ձեռագրում դրանք չնշված են։

[15] Այս հիշատակարանի տարեթիվը Մատենադարանի ձեռագրաց ցուցակում թյուրիմացաբար նշված է 1610 թ. (հտ. Ա, էջ 713)։

477
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2503

Ստացող՝ Մովսէս
Վայր՝ Վաղարշապատ

ա

328ա Եւ զդատապարտեալ գրիչս յիշեցէք, ո՛վ վայելողք, ծնողիւքս հանդերձ։ Գրեցաւ թվին ՌՂԱ (1642)։

Բ

372բ Ցիշատակարան սր. գրոյս Դիոնէսիոսի Արիսպագացւոյ.

Շնորհօք և առատ գթութեամբ...։ Յանգեալ աւարտեցաւ տառս աստուածաբանական մեծին Դիոնէսիոսի Արիսպագացւոյ ձեռամբ Մկրտչի կուսակրօն և միայնաւոր քահանայի, ի վայելումն անձին իմում մեղապարտի Մովսէսի իմաստութեան սիրողի, յորոյ խնդրոյ և երկնազան որակօք զարդարեալ պաճուճեցաւ զիրքս այս ի ձեռն Սիմօնի բարունւոյ, հարազատի իմոյ հոգւոյ, որ զթուղթ այսորիկ տառի շնորհեաց և ոսկենկար ծաղկօք յօրինեաց, որում Տէր վարձատրեսցէ յանճառ փառսն իւր. ամէն։

Արդ՝ գրեցաւ յամի հազարերորդի ինսներորդի եօթներորդի (1648) թուոջ արամեանս տօմարի, ի ժամանակս երիցս երանեալ և երջանկա-
373ա փառ հայրապետի // տեառն Փիղիպպոսի, Հայաստանեայց վերադիտողի. որ եղև առիթ բարեաց բազմաց, վերստին նորոգող կարգաց և սահմանադրութեանց եկեղեցւոյ, և պայծառացուցիչ խրթնացեալ զարդու դստեր Սիօնի, և մխիթարութիւն ազինս Թորգոմեան, զորոյ կեանսն առաւելացուսցէ Տէր ի փառս անուան իւրոյ։ Եւ ի թագաւորութեանն Պարսից շահ Աբասի երկրորդի, որդի որդւոյ առաջնոյն։ Ընդ հովանեաւ մեծի աթոռոյ էջմիածնի, որ ի Վաղարշապատ քաղաքի, յորում իսկ վարժեալ եմք ուսմամբ գրոց, յորմէ և ծնեալ եմք հոգևոր շնորհօք. ուստի և ընկալեալ եմք պարգևս երկնաւորս։ Եւ արդ՝ պաղատանօք հայցեմ ի ժառանգողացդ և ի վայելողոցդ զայս տառ[իս], զկնի մեր՝ յիշել յաղօթս սրբամատոյցս զիս զբազմավէր զստացող սորին՝ զՄովսէս սիրող բանի ծնողօք հանդերձ, և զքարտուղար զՄկրտիչ զմիանձնական քահանայ, և
373բ զոսկեզօծ նկարիչ // զՍիմէօն վարդապետ, և զշնորհօղ օրինակին զհոգևոր հայր մեր զՅակովբ վարդապետ, որ է յաջորդ սրբազան հայրապետիս մերոյ. նաև զՍտեփաննոս ճգնաւոր և ուսումնակիրթ քահանայ, ընդ աշխատաւորսն ի սմա յիշեսջիք, որ զսկզբանց գլխատառսն գրեաց միանգամայն և զնշանագիրս Յունաց եդ ի վերայ իւրաքանչիւր բանի և ըստ նմին մեկնութեան, որպէս և գէտք իսկ յայտ առնեն, զի ձև և տիպ գրոյն է յոյժ յարմարապէս կարգեալ ըստ օրինակի սորին թարգմանչի՝ տեառն Ստեփաննոսի, որում հատուսցէ Քրիստոս վարձ ըստ վաստակոց։ Ընդ որս և զհամօրէն հոյլս հարց և եղբարց մերոց հոգևորաց, վարդապետաց և քահանայից հանդերձ, միագումար վիճակաւոր պաշտօնէիւք յիշեցէք յողորմութիւնն և ի գթութիւնն Քրիստոսի...։

478
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 2587

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Ասպահան

ա

602բ Փառք ամենասուրբ Երրորդութեան,

. . . . . .

602սա Առանց հոգւոյ ոչ ոք կարէ շարժիլ ի բան,
Առանց մտաց է նմանակ անասնական։

. . . . [16]

607ա Աւարտեցաւ Աստուածաշունչս այս սիրական,
Հին և Նոր Կտակարանքն լիական,
Թուականիս Հայոց մեծաց և աբեթեան,
Հազար ննսուն է աւելի յարաբարդեան (1648)։
Ի յերկիրըս Պարսից պանդխտական,
Ի քաղաքս Ասպահան՝ Շօշ կոչական,
Հայրապետին մերոյ ազգիս աբեթական,
Տէր Փիլիպպոս կաթողիկոսն էշմիածնեան[17]։

բ

601բ Զծաղկօղ Աստուածաշունչ սբ. տառիս Հայրապետն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած յիշողն յիշեսցէ՝ յիւր միւս գալուստն. ամէն։

գ

450ա Եղուկ եղուկ է քեզ թշուառ,
Գիտես զբարին կու գործես չար,
Հառաչեա և ծունր կրրկնեա,
Զտանջիս դժոխքն անդադար։
Սուրբ չկեցար Աստուածատուրդ յիմար,
Զարթիր քնոյ արա քեզ ճար,
Փոխան այսօր կիզօղ հուրն է,
Եւ անքուն որդունքն զորդուն ծնար։
Ես՝ Աստուածատուրս[18] մտօք խաւար,
Բարեաց ունայն մեղօք զարդար,
Ով ընթեռնու վայ տա գերոյս
Զը աւրհնեցի զԱստուած բարերար։

---

[16] Մինչև 607 ա էջում չափածո Աստծու գովության և Աստուածաշնչի բովանդակության մասին, հմմտ. № 351 ձեռագիր Աստվածաշնչի 562 բ—565 ա էջերը։

[17] Հիշատակարանն այստեղ ավարտվում է, մինչդեռ № 351-ում շարունակվում, տե՛ս 1619 թ. շարքում։ Ամբողջ չափածոն նույնությամբ տեսնել № 189 ձեռագիր Աստվածաշնչի 603 ա—605 բ էջերում։

[18] Մատենադարանի ձեռագրերի ցուցակում սույն ձեռագրի գրիչ հարցականով նշել են Ղազար (Հատ. Ա, էջ 831)։ Սակայն Ղազարը № 351 ձեռագրի ստացող Ղազար Բաբերթացին է (սրա հիշատակարանը տե՛ս 1619 թ. շարքում)։ Իսկ այս ձեռագրի գրիչը Աստվածատուրն է։

Դ

450ա Զբստացող սորա յիշեցէք զխօճա Պետրոսն մտօք ճարտար, բերան մի ողորմեա [ա]սէք, Տէր ողորմի ձեզ հաւասար։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զխօճա Պետրոսն, և զծնօղսն իւր՝ զՎէլիշանն և զՇուշանն, և զկենակիցն իւր՝ զՅանենայն. և զորդիքն իւր՝ զխօճա Պողոսն և զՄինասն և զՅովանէսն, այլ և զդստերսն իւր՝ Հռիփսիմէն, Մարիամն, զՇուշան ծաղիկն և զՈսկին, և զվերջին կենակիցն իւր՝ զԹանկմէրն, և զորդին՝ զՂուկասն, յիշեցէք..., և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի ի միւս անդամ գալստեանն իւրոյ. ամէն։

Ե

97ա Զբստացող Աստուածաշունչ մատենիս զխօճա Պետրոսն աղաչեմ յիշել ի Տէր և դուք յիշեալ լիջիք։

479

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2846 (1471 թ.)

Վաճառող՝ Մկրտիչ աբեղայ

149ա Կամօն ամենակալին Յիսուսի Քրիստոսի ես՝ Մկրտիչ աբեղէս ծախեցի զսբ. Աւետարանս՝ իմ հայրենիք, ծախեցի իմ եղբօր որդոցն՝ Եվազին, Պողոսին, Ա (1) թուման զգիննն առի, էլ ոչ ում դօէ չկայ՝ ոչ եղբօր, ոչ քվեր, ոչ եղբօր որդոյ, ոչ քվեր որդոյ. ոչ ազգի, ոչ ում դօէ չկայ։ Իմ եղբայր Գրիգորն վկայ, Փանոսն վկայ, Հայրապետն վկայ։ Ով որ դօէ ան Գ (3) թուման տեղաց հաքիմին տայ։ Ռայիս դիվանն վկայ. Այդինն վկայ, Գղուրիկն վկայ։ Թվին ՌՂԷ (1648)։

480

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4653 (1629 թ.)

Կազմի խաչի վրա

Յիշատակ է սբ. խաչս Լուսպարոնին, հաւրն՝ [Պ?]ապիկին, մաւրըն՝ Ճափխանին, եղբաւրն՝ Յովանէսին, ի դուռն Զարխափան Ս. Աստուածածնին. Թվին ՌՂԷ (1648)։

481

ԺԱՄԱԳԻՐՔ, ՀԱՄԱՅԻԼ

Երևան, № 4661

Գրիչ՝ Պողոս դպիր
Վայր՝ Ստամբոլ

Ա

140բ Գրեցաւ ժամակարգութիւնս ձեռամբ Պողոս դպրիս, ի մայրաքաղաքն Ըստամբոլ, ի դուռն Ս. Գէորգայ, Թվին ՌՂԷ (1648)։

Բ

150ա Զ Պաւղոս դպիրս յիշեցէք ի Քրիստոս։

482
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Երևան, № 4693

Գրիչ՝ Մարտիրոս քահանայ
Վայր՝ Լիմ

ա

354բ *Որ ողորմի ստացողի գրոցս տէր* Աբրահամին, *որդոյն՝ տէր* Յովանէսին, *կողակցաց նոցին և հաւասար ննջեցելոցն, և իմ գծողիս՝* Մարտիրոս *քահանայի, և իմ ծնօղաց՝* Կարապետին *և* Շայումուին, *որ բաղում աշխատեցան հետ մեղաւորիս. ամէն...*[19]։

բ

354ա *Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձին տէր* Մարտիրոսին *հանել յաւարտ զսբ. գիրք[ս], որ կոչի Ասմաւր և ունի յ[ի]նքեան ժողովեալ զբո[լո]ր տարեան զպատմութիւնս զծնընդեան, և զյայտնութեան, և զսրբոց առաքելոցն, և զմարգարէից, և զմարտիրոսաց, զճգնաւորաց, զհայրապետացն և զվարդապետ<աց>ն։ Եւ ապա աւարտեցաւ սբ. գիրք[ս] ձեռամբ անապատի սպա[սա]տրի* Ստեփանոս *վարդապետի, որ եղև մասնակից և ետ գրել, ընդ հովանեաւ* Լմա[յ] *Ս. Գէորգայ ծովապատ անապատիս, ի թվականիս Հայոց Ռ և ՂԷ (1648), ի հայրապետութիւն տեառն* Փիլիպոսի *և* Աղթամարա[յ] Սաեփանոսի։ *Որով եղև ցանկացող սրբասէր և բարեմիտ* Ջանշէն *եռափափ[ագ] սրտիւ և էառ զսայ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղացն, [հօրն՝* Ջանշին *և մաւրն՝* Աղաբէկուն*], կողակից* Մարգարաին, *դստերացն՝* Նուքարին, Մարիանին, *հաւրն՝* Ջանշին *և մօրն՝* Աղաբէկուն, *ևս* Դալուաթիարին. *ամէն։ Դարձեալ յիշեցէք...*

Կազմեցաւ սբ. գիրքս ձեռամբ Սեարոպ *վարդապետին և իմ աշակերտեալ նմա* Թումա *երիցու և անապատիս հայր կոչեցեալ* Թաթուլ *միակեցին։ Լի բերանով Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

483
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4955 (1498 թ.)

155բ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՀիզանցի մահդասի խոջա* Թումաջան, *և զկողակիցն իւր՝ զ*Մրաթն, *և զորդիքն՝ զ*Միրուն *և զ*Գրիգոր, *որ զայս սբ. Աւետարանս այլազգիք թալան բերին. նա գնեց ւ արար կրկին ոխջ* Առնանից[20] *Ս. Գէորգին։ Յիշեցէք... մահդասի* Թումաջանին, *և իւր կողակցին, և ծնօղացն, և ամենայն ազգականաց նոցին...։*

Ի թվին ՌՂԷ (1648)։

---

[19] *Նման և համառոտ հիշատակարաններ կան ձեռագրի բազմաթիվ էջերում, որոնց զգալի մասը հետագայի՝ 1671 թ. ստացողը շնչել է և գրել իր հիշատակարանները (տե՛ս 1671 թ. շարքում)։*

[20] *Խոսքը հավանաբար վերաբերում է Պարսկահայքի Ռոնա (=Առնա) գավառին։*

484

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4969

Գրիչ՝ Յոհանէս քահանայ
Վայր՝ Մոկս

ա

257ա Փառք...։

258ա [Ո]ւստի և տեսեալ սորա ղփրկագործ մարմնառիկ տնաւրէնութեան խորհուրդ Փրկչին, ոմն ի մանկանց Սիոնի, հաւատարիմ քրիստոնեայն և բարի յարմատոցն շառաւեղեալ Սարգիսն, զոր ի վաղուց հետէ փափաքէր աստուածախաւս սբ. Աւետարանիս և ետ գրել զսայ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Սահակին և մաւրն՝ Զարդուրին, կնոջն՝ Գուլաղին, և ծնողացն՝ Ասպատրուն և Պիկէն, և որդոցն՝ Վարդանէսին և Մարգարային, հաւրեղբաւրն՝ Հէրպետին, Կակոսին, Յակոբին, Յովանէսին, քրոջն՝ Թաւէզին, Գաւգալին, Շամամին յիշեցէք...։

Բ

Դարձեալ ես՝ բազմամեղ և ամենայն չարեաւք ի լի Յոհանէս գրիչս արտասուալից աչաւք և կողկողագին պաղատանօք դիմեալ... Աստուած
258բ ողորմի ասացէք ստացողի սբ. Աւետարանիս Սարգսին...։ // Եւ արդ՝ ես անկարգս ի կարգաւորաց, անսուրբս ի սրբոց... տունս դառն ոստեան և բարունակս ապակաբէր սուտանուն Յոհանէս քահանայն, որ զանունս ունիմ և գործովս հեռացեալ եմ յամենայն սրբոց մասնակցութեանց, և ես իմ ակար անձամբս յանձն առի և գրեցի զսբ. Աւետարանս ի յերկիրս Մոկաց քաղաքի, ընդ հովանեաւ Գ (3) խորանացս՝ Ս. Աստուածածնին, և Ս. Յովանէս Մկրտչին, և Ս. Ստեփաննոսի նախավկային, ի թուականիս Հայոց Ռ և ՂԷ (1648) ամին, և ի հայրապետութիւն մերոյ աթոռոյն Ախթամարայ տէր Ստեփանոս կաթուղիկոսի. յուսամք ի մարդասէր Ս. Հոգին անսասան կենաւք պահէ յայսմ աշխարհիս..., ի յամիրութիւն Սէր-
259ա խան բէկին, և ի թագաւորութիւն Հայոց ազգի, որ խափանեալ և // ոչ երևի, և հարկապահանջութեամբ ազգս տառապալի այլասեռից ազգէ նեռոյի։ Աղաչեմք զձեզ, քահանայք և ժողովուրդ, լի բերանով և բոլոր հավատով Աստուած ողորմի ասացէք ստացողի սբ. Աւետարանիս Սարգսին...

Դարձեալ ես՝ Յոհանէս անուն քահանայ, որ զանունս ունիմ և ոչ զգործս, նմանաւոր եմ ես սինուն ընկոզի, որ ի հեռուստ կանաչ երևի, նոյնպէս և ես երևիմ քահանայ, հոգիս է ժանգոտէր որ ճարակ չկայ...։

Դարձեալ աղաչեմ զձեզ, քահանայք և ժողովուրդք, միամիտ սրտիւք Աստուած ողորմի ասացէք ինձ անիմաստ գրիչս նուաստ անուն Յոհա-
259բ նէսի և ծնաւղացն իմոյ՝ տէր Մելքեսեթին և Գուլաղին, // և կողակցուն իմոյ՝ Փաշին, և դստերն իմոյ՝ Գուլաղին, և հօրեղբարցն իմոց՝ տէր Յովանիսին և Շէրբէկին. և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի։

Ստացող՝ Սարգիս

գ

Արդ՝ ես Սարգիս յիշեցի և ծանեա, զի սուտ է մեծութիւն աշխարհիս և անցաւոր, և զի որդի և ժառանգ ոչ ունէաք, վասն որոյ բարի խորհուրդ արարաք ես և ամուսին իմ և ստացաք զսբ. Աւետարանս յիշատակ հոգոց մերոց և ծնօղացն...։

դ

Այլ գրով

Ես առաւել Աստուած ողորմի ասացէք Սարգիսին, Գուլաղին, Նուբարին, Յամամին. Աստուած զիւրեանց մեղք թողու. ամէն։

485

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5019 (1336 թ.)

Կազմող՝ տէր Թումայ
Վայր՝ Շանդալաի

ա

190ա Ե.[ս] առաւել Մուրադին, որ էառ զԱւետարանս զայս, և պատուական շուրշառ մի, և Մաշտոց մի, և Շարակնոց մի և եդ ի դուռն Ս. Յովանու Մկրտչին, ի ձեռն տէր Գրիգոր քահանային։ Ոչ ոք կարէ հեռացուցանել զայս Դ (4.) անաւթս ի դրանէ սորայ՝ ո՛չ ծախելով և ո՛չ գրաւելով։ Եւ եթէ ոք յանդգնի նա՝ զանէցքն Կայենին առցէ և զխաչհանողաց. ամէն։

Գրեցաւ սակաւ յիշատակարանս և կազմեցաւ ձեռամբ սուտանուն տէր Թումիս, ի գիւղն, որ կոչի Շանգալդի, ընդ հովանեաւ Ս. Խաչիս, թուին Ռ և ՂԷ (1648.)[21]։

[Դ]արձեալ յիշեցէք ի Քրիստոս... Աստուածուրին, կողակից Խէր-
190բ խաթունին, հաւրն՝ Վարդաշահին և մաւր Խանսաղ//թանին, որդոյն՝ Աւետիսին, կողակից Խաթունջանին, մաւրն՝ Սառին, որդոյն՝ Վարդանիսին, եղբաւրն՝ Անձրևուն, և միւս եղբաւրն՝ Շղիին, և միւս այլ եղբաւրն՝ Յովանիսին, քուերն՝ Խալխաթունին։ Լի բերանով Աստուած ողորմի ասացէք Աստուածատուրին, որ մասնակից եղև այս սբ. Աւետարանիս, և միաբանեցան ետուն վերըստին նորոգել զսբ. Աւետարանս։ Աստուածասէր Մաւրանդն գնեց և Աստուածատուրն վերըստին ետ նորոգել, յիշատակ իւրն և ծնաւղացն, հաւրն՝ Վարդաշախին...։

191ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... Մաւրադին և Աստուածատուրին և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն։ Եւ ինձ մեղսամած և յոդնամեղ, սուտանուն Թումա երիցու. ամէն։

---

[21] Սույն հիշատակարանը Մատենագարանի ձեռագրաց Ցուցակում սխալմամբ նշված է 1649 թ. ներքո (հտ. Բ, էջ 17)։

Բ

192ա Զվերջին ստացող սբ. Աւետարանիս ՍՈՒՐԱՊՆ յիշեցէք..., որ էստ զսբ. Աւետարանս յիշատակ իւրն և ծնաւղացն, հաւրն՝ Շաղաւաթին, մաւրն՝ Խաթունաղին, կողակցին՝ Մարգարտին, և միւս կողակցին՝ Մրուսթին, քուերն՝ Գաւզալին, միւսոյն՝ Թուրուանդին, դստերն՝ Էթարին, և միւս դստերն՝ Թուրուանդին, որդոյն՝ Յեխանիսին, Խանադին, հօրեղբաւրն՝ Փաղչանին, կողակցին՝ Էթարին, և Աւագին, և իւր պապուն[22] Պապկէն, մեծի և փոքու ատ հասարակ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... Մուրադին, որ առաւ զսբ. Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրոց և եդ ի դուռն Ս. Յո[վա]նէ-
192բ սին, ի գիւղն, որ կոչի // յԷրէրին, ի սպասաւորութիւն սբ. ուխտիս Էջմիածնին և Տիրամայր Ս. Աստուածածնին՝ Սիամանն պարոնտիրին և Ներսէս պարոնտիրին, և Ս. Սահակա[յ] վերակացու և սպասաւոր, սրբասէր կրաւն[աւ]որ տէր Մխիթարին, և գիւղի տանուտէր ոէս Ամիրխանին. յիշատակ մաքրամիտ Մուրադին և ծնաւղացն, հաւրն Շաղաւաթին...

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ///

486

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5544 (1460 թ.).

321ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին զստացող սբ. Աւետարանիս զՇաղաւաթն, որ ստացաւ զսա ի հալալ յնրդ[ե]անց և յարդար վաստակոց իւրոյ, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց, հօրն՝ Վանէսին և մօրն՝ Նանային, և եղբօրն՝ Մխիթարին, և կողակց[ի]ն՝ Խոիփսիմին: Եւս առաւել Աստուած ողորմի ասացէք Շաղաւաթին...: Բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք Շաղաւաթին, և կողակցոյն՝ Թուրանդին, և զաւակին՝ Յովանէսին, և դստերն՝ Խոիփսիմին. ամէն։ Եւս առաւել Աստուած ողորմի ասացէք Խուսդեղին, և կողակցին՝ Յամանին, և դստերն՝ Խանադին. ամէն։

Ի թվին ՌՂԷ (1648) ամին։

487

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ԹՂԹՈՅ

Երևան, № 5787 (ԺԶ դ.)

342ա Յիշատակ է սբ. գիրգս մահտեսի Նազլուին, Սողոմոնին, Պաղտասարին, Գիրեբին, Հարզիկին և ամենայն արեան մերձաւորացն, ի վայելումն Մարկոս վարդապետին։ Թվին ՌՂԷ (1648)-ն։ Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

---

22 Ձեռագրում՝ «պատուն»։

488

ՆԱՐԵԿ

Երևան, № 5921

Գրիչ՝ Մարգարիտ
Վայր՝ Շուաթ

ա

342բ Յիշատակարան ստացողին

Փառք...։

Որ ետ ինձ կար ապիկարի,
Մեղսաթաւալ թարմատարի,
Զրտւ առնել այսմ տառի,
Զեռամբ ումեմն մեղսամածի։
Յոյժ վերջացեալ այս արեստիս,
343ա *Անակնկալ այսմ գործի,*
Զոր մարդասէրն Աստուած Հոգի,
Հասոյց ի լրումն աւարտի։
Ի թրւականիս Հայոց մեծի,
ՌՂ և է աւելի (1648),
Ի հայրապետութեան սբ. Էջմիածնի,
Տեառն տէր Փիլիպպոսի։
Եւ աթոռակալութեան մերոյս նահանգի,
Նսայեայ քաջ մեծ վարժապետի,
Նորոգող կրկին Ս. Կարապետի,
Գեղեցկայարմար և զարմանալի։
Եղև կատարումն այսմ մատենի,
Յերկիրս Երնջակ, գեօղս Շոռոթի,
Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի,
Վայելչատիպ սրբոյ տաճարի։
Ի մէջ կուսանաց մենաստանի,
Սրբասուն կուսից մաքուր երամի,
Ս. Լուսաւորչի վանաց մերձկայի,
Եւ Ս. Յակոբայ մեծ հայրապետի։
Եղև ցանկացող այսմ սոփերի,
Բաղձմամբ ստացող յոյս սիրով սրտի,
Տարփացեալ ըղձայր տենչմամբ ի հոգի,
Սովաւ խօսակցել առ Տէրն ամենի։
Սահակ *մաքրասուն եպիսկոպոսի,*
Սրբասէր գոլով և մաքրահոգի,
Ստացաւ զսա յիշատակ բարի,
Ճանապարհ կենաց որ յերկինս տանի։
Առնէ սա միջնորդ տեառըն Յիսուսի,

Աղերս արտասւաց սա մատուցանի,
. . . .[23]
344ա Պ[ա]ռտին յիշել զնա առաջի տեառն Յիսուսի,
Զի դասեսցի ընդ հայրապետին անուանակցի,
Որ համանուն է Սահակայ սբ. Պարթևի,
Եւ ցանկացող նորին վարուց ճանապարհի։
Սա փրկութիւն ևս լիցի նորին ծնօղի,
Հայրն՝ Յակոբ և Մարիամ յիշեալ լիցի,
Իսկ Սադաղայ եղբօրն իւր հարազատի,
Եւ ամենայն ազգատոհմին մերձաւորի. ամէն։

Բ

Մեռեալ հոգով մեղօք մածեալ գծօղ գրիս,
Վիրավորեալ համայն կողմանց կամ ի մարմնիս։
Անճարակ խոցով անբժշկելի կամ ի աշխարհիս,
Նաւաբեկեալ ծփիման հանգիստ մարմնոյ ծովակիս։
Բամեալ տատանիմ հոգով եղկելիս ի վերա երկրիս,
Երերիմ մեղօք տարագիր կենօք յայսմ կենցաղիս։
Գերեալ բանսարկուէն կողոպտեալ բարեաց թափուր կայ հոգիս,
Զունիմ համեմատ իմ օրինակի բոլոր աշխարհիս։
Առ ձեզ աղերսեմ, ո՛վ ընթերցողք այս սբ. մատենիս,
Որ խօսակիցէք սովաւ առ Տէր չառնել անտես զիս։
344բ Բարունոյ անմահ արքայէն երկ[ն]ից հայցէք գթալ յիս,
Զի միշնորդութեամբ ձերոց մաղթանաց քաղցրասցի առ յիս։
Ի բաժանմանէ հոգոյս ի մարմնոյս ցամաքի ոսկերս ի գերեզմանիս,
Հոգիս սասանի ի ժամուն ահեղ հայցեմ յիշել զիս,
Տացի ինձ մասն յաղօթից ձերոց սոսկալի ժամիս,
Եւ ցօղ արտասւաց ձերոց ցօղեսցի ի պասքեալ հոգիս։
Գոչեմ աղերսիւ առ սբ. ընթերցողքդ այսմ մատենիս,
Եւ զծնօղսն իմ յիշել առ ի Տէր բարիս։
Մաղկափթիթ բուրաստանիս որք հանդիպիք
Եւ ճաշակէք զպտուղ սորին յոյժ քաղցրագին։
Ով դասք երամից սբ. եկեղեցոյ,
Որք զմայլիք քաղցրութեամբ սորին ճաշակոյ։
Զձեզ աղ[աչ]եմ յիշել սիրով զվեհագոյն իմ,
Հարազատն բազմագութ և բազմերախտ, քան զհայր և զմայր։
Ղազար[24] շնորհապաճոյճ քահանայն,
Որ վերակացու և ձեռնտու է ամենայն գործոյս։
Որ ի շարժելն գրչիս միայն եմ աշխատեալ։ Զծնօղսն մեր և զամենեայն արեան մերձաւորսն, յիշողքդ, յիշեալ լիջիք ի Տեառնէն բարեաց. ամէն։

---

23 Գովք Նարեկի։

24 Հիշատակարանի կենտ տողերի տառերից հոդվում է գրչի անունը. «Մարգարիտ գծողդ»։ Գրչի անունը Ղ. Փիրղալեմյանի մոտ նշված է Մարգարէ։

489
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6507 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Գրիգոր երէց
Վայր՝ Կարուց

256բ Դարձեալ նորոգեցաւ սբ. Աւետարան ձեռամբ մեղապարտ Գրիգոր[25] անուն իրիցու, ի թվականիս Հայոցս ՌՂԷ (1648), ի դառն և ի նեղ ժամանակիս, ի Կարուց քաղաքիս, ի դուռն Ս. Գէորք զաւրավարիս։ Վասն որոյ Աւետարանս խիստ ծերացեալ և տրորեալ էր. և առեալ ի ձեռն, բազում չանիւ իրար արի, ոչ թէ զԱւետարանս իմ լինելով, բայց իմ աշխատելով աշխատեցայ, վասն միոյ ողորմիւ հաւրն իմոյ՝ տէր [Ա]ռաքեալն և մաւրն իմոյ՝ Վարդխաթունին, և եղբաւրն իմ[ո]յ՝ Մկրտչին, մեզ աշխատողացս և ձեր կարդացողացդ, ձեզ և մեզ միւսանգամ գալըստեան. ամէն։

490
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 6526 (ԺԵ դ.)

ա

163ա [Ա]րդ՝ կրկին և ե[ռեղ]գկին [աղ]աչ[ե]մ ձեզ, եղ[բ]արք սիրէ-[ցեա]լք, [յի]շեցէք [մա]քրափայլ աղ[աւթ]ս ձեր զտէր Մելքիսէթն, և զկողայկիցն իւր՝ զԱրզուխանն, և զդուստրն իւր՝ նորաբոյս և աստուածապարգև զՄարիամն, և զծնաւղսն իւր, զհայրն իւր՝ Կարապետն և զըմայրն իւր՝ Ջանբէկին, և զհաւրեղբայրն իւր՝ Գրիգորն, և զկողակիցն իւր՝ Մարգարիտն, և զորդիքն իւրեանց՝ Աստուածատուրն և Գիլամն, և դուստրն՝ Շահզատէն, և զմիւս հաւրեղբայրն՝ Աւազն և զկողակիցն իւր՝ Ջանբէկին, և զորդին իւր՝ Շատարեն, և զդուստրն իւր՝ Շահզամանն, և զամենայն յարեան մերձաւորսն զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս յիշեցէք... և Աստուած ձեզ ողորմեսցի ի[ւր] միւս անգամ գալըստեանն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՂզլարն, որ մնաց ի ձեռն անաւրինաց գերի. և ունի բազում սէր ընդ քրիստոնայս։ Զի սա ետ զգինն սբ. Մաշտոցիս և այլ ընթիր Աւետարան մի, և Ճառընթիր մի, խաչ, սկիհ և շուրջառ, և այլ
163բ անաւթ եկեղեցւոյ յիշատա//կ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և ամենայն ազգականաց, զի զոր առնոյր տայր եղբաւրն տէր Մելքիսէթին, զի քոյր և եղբայր ի միասին գեր[ի] վարեցին ազդն Պարսից և տարան ի Յերեւան տուն իշխանին, զոր տեսեալ իշխանին զմայրն սոցա, աղէկեզ յայնժամ ծագեաց ի սիրտն ողորմութիւն և ետ զտղայն ի մայրն և մնաց աղչիկն Ղզլար ի տուն իշխանին, զոր տէր Յիսուս փրկիչն և ազատիչն՝ փրկէ և ազատէ ի յանաւրինաց և ի գերութենէ, և յամենայն յորոգայթից զՂզլարն և յետ աստեացս ելանելոյ...։

---

25 Տառերը մաշված էին, լավ չէին երևում, ընթերցեցինք ենթադրաբար։

Բ

Այլ դրով

Զվերջին սաացող գր[ոյս] զտէր Մելքէսէդն յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սբ. երամք դասք քահանայից ե ուսումնասէր մանկունք, զի յորժամ կարդաք կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ յ[աղ]օթս ձեր զտէր Մելքէսէդ երէցն և զորդին իւր՝ զԿարայպետն և զքոյր իւր՝ զՂզարն, և զկենակիցն իւր՝ զԱրլու, և զդստերք իւր՝ զՆղիսաբեդն և զՀոռոմսիմէն և զայլ ամենայն արեան մերձաւորք. ամէն։

Թվին ՌՂԷ (1648)։

491

ՄԱՇՏՈՑ

Երևան, Մ 6543

Գրիչ՝ Պետրոս դպիր
Վայր՝ Բաբերդ

ա

139բ Փառք...։ Եւ ես յոդնամեղ փրծոյն գրչակս, գրեցի զսայ ըստ իմում չափոյ։ Եղև կատարումն սբ. տառիս ի թվաբերութեանս Հայոց ՌՂԷ (1648), ի գաւառս Խաղբեաց, որ այժմ կոչի Բաբերդ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ է Միջի եկեղեցի քաղաքիս, ձեռամբ մեղսասէր և
140ա անարհեստ փանաքիս, սուտանուամբ Պետրոս // դպրիս, որ լոկ ա-նուամբ կոչիմ և գործովս ուրացեալ և դատարկացեալ ամենայն առաքինութեանցն։ Արդ՝ երեսս ի գետնի դնելով, մոխրամած դիմօք և արտաս[ու]օք որ աչօք խնդրեմ և հայցեմ ի ձէնջ, ո՛վ սբ. լոյս երամք և ընթերցողք սբ. տառիս, որք հանդիպիք սմա կարդալով, յօրինակելով կամ այլ իւիք զանձն առնելով նայ, յայնժամ յիշեսջիք զմեղօք խոցոտեալ և հոգով տրկարեալ զանարժան քարտողարս, և զծնողքս իմ, և զուսուցիչքս իմ զտէր Մե[լ]քիսէթն, և ամենայն արեանառու մերձաւորքս իմ։ Եւ որ յիշէք՝ յիշեալ լիցջից յառաջի ահեղ յատենին Քրիստոսի. ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք խոշորութեամբ գրիս և սղալանացս, զի չափ կարից իմոց այս էր։ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Բ

147բ Ով հոգևոր հարիկ տէրտէր Աֆանտի, զբազմաւորակն և զառանձնականն լաւ իմացիմ, որ թէ մեղատունք բազումք լինին, պարտ է որ ձեզ շնորհեսցէ ասես և թէ առանձնակի է նա պիտա որ քեզ ասես։

Եւ զանարհեստ գծողս յիշես,

Վասն Աստուծոյ Հայր մեղա մի ասես,
Եւ թէ գրիս սղալն շիտկես,
Վարձս բարեաց Աստուծոյ առցես. ամէն։

492
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6776

Գրիչ՝ Թադէոս քահանայ
Վայր՝ Վան

295բ Փառք...։
296բ Ուստի տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ բարի
297ա և հաւատարիմ մահդասի տէր Գրիգորն, որ ըստացաւ զսա ի // հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն, հօրն՝ Միրաքին և մօրն՝ Էմինսօլթանին, և եղբօրն՝ Միլիտոնին, և քրւերց՝ Գուլամփաշին, մեծ պապ զՄուրատ, կին Գուլամփաշէն, և զորդին պարոն՝ զԱռաքելն, և տէր Մարտիրոսն, և զՄիրաքն, քորն՝ Սառէն։ Եւ դարձեալ յիշեցէք զտէր Գրիգորն, և զեղբայրն՝ զՄիլիտոն, և զորդիքն՝ Միրաքն, Խաչատուրն, զՀերապետն[26] և իւրեանց քրւերն՝ Հռիփսիմէն, Սառէն, զԷթարն, և զիւրեանց մայրն՝ Գուլում. ամէն։

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անպիտանս և անարժանս... Թադէոս սուտանուն քահանայ, որ անուամբ միայն եմ և ոչ գործով, շընորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թրւականիս Հայոց ի ՌՂԷ (1648), ի մայրաքաղաքս Վան, ընդ հովանեաւ Ս. Էջմիածնայ, ի հայրապետութեան Հայոց տէր Փիլիպ-
297բ պոս կաթողիկոսի // և ի յառաջնորդութեան սբ. ուխտիս Վարագայ Կիրակոս վարդապետի, որ յայսմ ամի վերըստին շինեաց և պայծառացոյց դրմբէթաձև և կամարակապ սբ. աթոռս Հայոց։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս զաւելորդն բառնաք և զպակասն լնուք և խոշորութեանն և սխալանացն անմեղադիր լինել. զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր<ով> հաւատով Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւնն խնդրեցէք մեզ և ծնողաց մերոց մահդասի Միրզին և Նէֆին, և կենակցին իմոյ՝ Շահադին, և որդոյն իմոյ՝ Գրիգոր սարկաւագին, և դստերաց իմոց, և վարպետաց մերոց, և խրատ տրուողաց, և Մէլքոն սարկաւագին, որ աշխատեցաւ ի կոկել թղթին. և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի և թողցէ զանցանս ամենեցուն. ամէն։

Դարձեալ կրկին անկամ Աստուած ողորմի ասացէք մահդասի տէր Գրիգորին... Միրզէն, զՄիրզի որդին Աւիտիս, զՎանէս, և զՄէլքոն, և զԽաչօն։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Մարտիրոսն, և եղբայրն իւր՝ Առաքելն, և զորդին՝ զՈսէփն, և միաեղբայրն՝ զմահդասի Գազարն, և որդին՝ զՂազարն, Յոսէփն, Նազարն, զԹորոսն, քոյրն՝ Խալիճարն և զՓեփրոն, և զիւր ամենայն մերձաւորն. ամէն։

Դարձեալ կրկին անկամ աղաչեմ զամենեսեանդ, լի բերանով և քաղցր սրտիւ Աստուած ողորմի ասացէք մահդասի տէր Գրիգորին..., որ ետուն գրել սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, անջինջ յիշատակ. և եդին ի դո[ւ]ռն Գաղղայ Կանաչաւոր Ս. Աստուածածնին և Ս.

---

26 Հաջորդ անունը չնչված է։

Յակոբին. Աստուած ղիւրեանց հոգին լուսաւորէ. ամէն։ Եւ Ս. Գէորգ զօրավարին, Ծիրանաւոր Ս. Աստուածածնին, Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգոյն և Աստուած զՀեղ յիշէ. ամէն։

493
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6966

Գրիչ՝ Յուսիկ երէց
Վայր՝ Բիւք

ա

241ա Շնորհք և ողորմութիւն...

242ա Արդ՝ գրեցօ կանոնական գիրգս ձեռամբ անարժան Յուսիկ երիցու, մեղաւք լցեալս և անձամբ և հոդով անարժանս, ամենայն չարեաւք լցեալս և ամենայն բարի գործոց հեռացեալս. ամէն. տէր Աստուած։

Ի թվականիս Հայոց ՌՂԷ (1648), ի գաւառս Դեբջան, ի գիւղն Բիւք, ի դուռն Տղա Ս. Գէորգայ և այլ ամենայն սրբոց, որ աստ են հանգուցեալ. ամէն։

բ

35բ Քրիստոս Աստուած ողորմեա ստացաւղի գրոցս մեղաւոր տէր Յուսիկ քահանայիս։

գ

47ա /// [ստաց]ողի գրոցս տէր Յուսկան քահանայս և հաւրն՝ Ֆռանկին, և մաւրն՝ Թուրվենդին, և կնոջ Մարգրտին, և ամենայն արեան [մերձաւորաց]։

494
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 7089

Գրիչ՝ Դաւիթ երէց
Վայր՝ Արտաւէլ

244բ Փառք...։ Արդ՝ փրկական սբ. // խորհրդոյս պատարագի և աղօթմատոյցս հասարակաց քրիստոնէից մերս հայկազանի ընտրեալ և սրբագրեալ ի բանիբուն վարդապետաց ե ի հարցն մեր յառաջնոց, և եղեալ ի սբ. եկեղեցի ի պայծառութիւն մանկանց նոր Սիովնի կաթողիկէ եկեղեցո[ց]։

Արդ՝ գրեցաւ սայ ի թ[ու]ականիս ՌՂԷ (1648), յերկիրն Պարսպ-
245ա տան, ի քաղաքն Արտաւէլ, ձեռամբ // մեղսամած և անարժան և անարհետս գրչի Դաւիթս, ծոյլ և [պ]ըղերգ երից, որ զանունս ունիմ և ոչ գործս, և իմ անկար անձամբս սկսա կամաւն Աստուծոյ և օգնականութեան նորին կատարեցի, զոր արարեալ և քաջ [ր]աբունայպետն Թումայ։ Արդ՝
245բ ով դասք քահանայից և երամք կուսակ//[ր]աւն վեհից, յորժամ հանդիպիք սբ. և աստուածախաւս մատենիս կարդալով կամ ուրինակելով,

յիշեսջիք զսրբայնըւէր առ աղօթս ձեր զանարժան Դաւիթս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

495
ՃԱՇՈՑ
Երևան, № 7422

Գրիչ՝ Բագարատ
Վայր՝ Շուռթ

. ա

189ա Ո՛վ բարեսէր հայրք և եղբարք, աղաչեմ զձեզ, յորժամ հանդիպիք յայսմ տեղոջ, ասասջիք լի բերանով Քրիստոս Աստուած, որդի Աստուծոյ՝ ողորմեա մեղուցեալ գրչիս՝ մեղաւոր Բագարատիս:

Բ

330բ Ո՛վ սբ. մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով հայցեմք ի ձեզ [յիշեսջիք] մեղաւոր գրչիս Բագարատիս, և հաւրն իմոյ՝ Յովանիսին, որ բաղում աշխատանաւք մինչև ի ԺԷ (17) տետրն կոկեաց, և այլքն ես մեղաւորս կոկեցի և դրեցի, հայցեմք ի ձեզ, որ լի բերանով Աստուած ողորմի ասացէք։

Գ

Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոցս տէր Բարսեղին, և կողակցին՝ Զիլֆիւն, և հօրն՝ Ազարին, և մօրն՝ Գուլզատին, և որդոցն՝ Յովասափին և Իսրայէլին և Մինասին, և դստերացն՝ Մարիամին, Սիրամարֆին, Գու[լ]զատին և Սալբանջանին, և եղբօրն՝ Ղուկասին, և քւերն՝ Սիրամարֆին, և հարսներին՝ Ուլիանին և Անայիւթունին, և հօրեղբօրն՝ տէր Յովսէփին, և որք երախտիք ունին ի սբ. գրգիս վերայ. ողորմեա կենդանեաց և հանգուցելոցն. ամէն։

Դ

511ա Փառք...։

512ա Գրեցաւ սբ. տա[ղեդիրքս ի] երկիրն Երին[ջակոյ ի դևղս // Շո]ռթ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Գրիգորի [Լու]սաւորչի մերոյ և Ս. Յակոբ [հայ]րապետին։ Գրեցաւ սբ. գիր[քս ի հայրապետ]ութիւն տեառն Փիլ[իպպոսի և] արհի եպիսկոպոսն մեր[ոյ Ե]սային։ Գրեցաւ ի թվական[իս մեր]ում Ռ և ՂԷ (1648), բարեխաւսութեամբ Սրբոյհու Աստուածածնին և Յովաննու Կարապետին և Սրբոյն Գրիգորին Լուսաւորչին և ամենայն սրբոցն։ Ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի գ[ր]ոցս տէր Բարսեղին [և] ծնողաց, և որդոցն, և դստերացն, և [եղբ]այր Ղուկասին, և քւերն՝ [Սիրա]մարֆին և ամենայն ազգականացն սորա։

Ով սբ. մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք յայսմ տեղոջ, աղաչեմ զձեզ՝ [հար]ք և եղբարք, լի բերանով Աստուած ողորմի ասացէք զմեղաւոր [գր]չիս՝ Բագարատիս և զուսուցիչն իմ՝ զՄանկասարն, որ խիստ լաւ վարպետ էր։ Եւ ես մեղաւորս այս չափ կարացի ուսանել։

Դարձեալ յիշեցէք Թրֆայմա[ղեցի] տէր Բարսեղն և ծնաւղքն

[իւր՝] Ազատէն և Գուլզատէն, [եղբ]այրն՝ Ղուկասն, և քուրն՝ Սի[ռամա]rfն. և Աստուած ողորմի ասացէք։

[Դարձեալ] յիշեցէք Թrfամատզեցի [տէր] Բարսեղն, և կողակիցն՝ Զիլ[ֆիւն և եղբօրն՝] Յովասափն...:

613ա Աստուած ողորմի ասացէք տէր [Բա]rսեղին, որ գնէց սբ. գիրգ. [ի] հալալ ընչից իւրոց և ետուր յիշատակ ի դուռն Ս. Գրիգ[որ Լո]ւսաւորչին իւր հոգոյն յի[շա]տակ և ծնօղացն և ամենայն աղգականացն. ամէն։

496

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7566 (1460 թ.)

1ա Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Շամամին և իւր ծնօղացն, հօրն՝ Կիրակոսին, և մօր՝ Ջոյարին, և եղբօրն՝ Արևին, և դստերացն՝ Նէֆին և Հանումին, որ հանգուցեալ են, յիշեցէք...։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՇամամ, որ ետ զսբ. Աւետարանս վերըստին նորոգել, յիշատակ հոգո[յ] իւրո[յ] և ծնօղաց իւրոց. <իւրաց> ամէն։ Եւ առ<առ>աւել յիշեցէք ի Քրիստոս զտէր Ղազար, որ կամակից եղաւ սբ. Աւետարանիս և ետ վերստին կազմելոյ Ով որ զողորմին բոլոր սրտիւ ասէ և Աստուած իւրն ողորմի. ամէն։ Ի թվին Ռ ու ՂԷ (1648)։

497

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7992 (ԺՁ դ.)

Կազմող՝ Աւետիս երէց

228ա Յիշատակ է Աւետարանս ի դուռն Ս. Ստեփաննոս Նախավկային, ձեռամբ Աւետիս իրիցւոյ. թվին ՌՂԷ (1648) կազմեցաւ սբ. Աւետարանս։

498

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8281 (ԺԴ դ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց

ա

90բ Թվին ՌՂԷ (1648) էր <թվականն> մեծ մահ էղաւ ի Կաֆան, որ ԺՌ (10000) հոգի մեռան։ Որ այն տարին թաթարէ Կոռէլին վերայ սէֆիր գնացիլ էր ՁՌ (80000) գէրի էր բերել. վասն մեր ծովացեալ մեղաց էր. Աստուած փրկէ այս քաղաքըս։ Եղբարք, Աստուած աղաչեմք որ փրկէ զմեզ ի փորձութ[ենէ]։

Բ

Գ (3) են սունք աշխարհիս՝ սբ. Յակոբ, սբն. Սեղբեստրոս, սբն. Անտոն։ Աւրհնութիւն ի վերայ մեղաւոր Գրիգոր իրիցուս եղիցի. ամէն։

Գ

Վա՛յ քեզ Գրիգոր էրէց, զի ամենայն դատարկ բանի համարըս տալոց ես ահեղ ատենին Քրիստոսի։ Ով եղբայրք, մեղացս թողութիւն հայցէցէք ձեր սբ. աղօթիւքն։

Դ

Լուսանցքում

Թվին ՌՂԱ (1642). տես թէ եղբայր, չի սիրելէն ինչ վայ կու տայ։ եղկելի Գրիգոր էրէց. սէր կացիք որդիք։

499

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 9482

Գրիչ՝ Գրիգոր Համազասպեանց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

171ա Ո՛վ մանկունք սբ. առագաստի, յիշեցէք զստացող սբ. մատենիս ի բարին զպարոն խոջայ Միասարն[27], և զծնողսն իւր՝ զխոջայ Մարուքայն[28] և զԱսլումն. ընդ նմին յիշեսջիք և զապիրատ գծողս զԳրիգորս Համազասպեանց, ես առաւել յիշեսջիք զՍտեփաննոս վարդապետն իմ, որ է հանգուցեալ առ Քրիստոս, յիշեցէք...։

Բ

Արդ՝ գրեցաւ սա ի ամի,
Թուին ՌՂ և եաթնի (1648),
Ի վայելումն բաբեմտի,
Յոյժ ցանկացող սբ. մատենի։
Աստուածաբանիս սբ. տառի,
Պարոն խոջայ Միասարի[29],
Եւ իւր նախնեացն և ծնողի,
Եւ իւր որդւոցն ամենայնի։
Եւ ի դուռն Ս. Թովմայի,
Ջեռամբ Գրիգոր ապիրատի,
Ի հայրապետութեան մերոյ ազգի,
Տէր Փիղիպպոս կաթողիկոսի։
Եւ առաջնորդ մերոյ գեղջի,
Որ սեփհական Ջուղայ կոչի,
Եւ ուղղիչ քաջ հովուի,
Եւ Դաւիթ արհ վարդապետի։

27, 28, 29 Այս անունները չնշված են, վերականգնեցինք գ հիշատակարանի տվյալներով։

Տէր Արարիչն ամենայնի,
Առ հասարակ ողորմեսցի[30]։

Գ

133բ Ո՛վ սրբազան դասք նոր Սիովնի, աղաչեմ զամենեսեան սիրով հոգոյն յիշել յերկնաթռիչ աղօթս ձեր զստացող սբ. մատենիս, զպարոն խօշայ Միասարն և զծնողսն՝ զՄարութէն և զԱսլումն, ևս առաւել ամենայն արեանառուքն. ընդ նմին և զապիրատս՝ բաղմամեղ գրիչս Գրիգոր, աղաչեմ յիշել և զծնողսն իմ՝ զտէր Մարգարէն և զմահդասի Խանաղէն, և Քրիստոս առ հասարակ ողորմեսցի...։

Դ

82բ Զստացող սբ. մատենիս զպարոն խօշայ Միասարն և զծնողսն իւր՝ զՄարութէն և զԱսլիխանն, և զորդիսն՝ զՂազարն և զԵնովսն, և զայլսն աղաչեմ յիշել ի տէր Յիսուս։ Նաև զապիրատ գծողս զԳրիգորս Համազասպեանց ընդ նմին յիշեսջիք, և յիշողք յիշեալ լիջիք...։

500

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ, № 3 (623) (մանրաժապավեն, Երևան, № 619). տե՛ս նաև ՅՁՎՍ, I, № 3, էջ 40—42

Գրիչ՝ Գասպար Երէց
Վայր՝ Պարսկաստան

Ա

2բ Մանաւանդ զստացող սորա զտէր Խաչատուր կրօնաւորն և զաւանդապահս սորա ի յամենայն արկածից սատանայի պահէ...։

Բ

99ա Զմեղապարտ գրիչ Գասպար Էրէցս և զիմ ծնող Պաղտասար քահանայն, բարի մտօք յիշել ի Տէր...։

Գ

480ա Աւարտ եղև գրոց հին օրինացն. այժմ առաջնորդութեամբ և թելադրութեամբ Ս. Հոգւոյն արկանեմ ձեռն ի նորս, յուսալով յապէնիազ Տէրն, որ նա տացէ կարողութիւն մեղսամակարդ անձին հասանել և յաւարտ նորոյս։ Վասն որոյ հայցեմ ի հանդիպողաց այսմ լուսերանգ Աստուածաշունչ տառիս, յիշել բոլորով սրտիւ զստացող սորայ զտէր Խաչատուր հեզահոգի աբեղայն, որ բաղում փափագանօք և ջերմեռանդ սրտիւ ետ գրել զսա ի մխիթարութիւն անձին իւրոյ յայսմ կենցաղի. և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց, որոց գոյիւք ետ ծախ սորին, զի միշտ անմոռաց յիշմամբ յիշեսցին ի ձեռն սբ. մատենիս։ Եւ դուք հանդիպողք, վասն սիրոյն Քրիստոսի, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զտէր Խաչատուրն և զծնողսն իւր՝ զմահդասի Յա-

[30] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

կոքն և զՂատամղութլուն. և որք յիշենն՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ։ Դարձեալ յիշեցէք զտէր Խաչատուրն և զեղբայրն իւր՝ զԱռաքելն, որ փոխեցաւ առ Տէր. զոր տէր Աստուած երկնից արքայութեանն արժանի արասցէ. և զկողակից նորին զԹագունին, և զորդին՝ զՆազարէթն, և զդստերսն՝ զՂատամն և զՔարանն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զմիւս եղբայրն՝ զԸռուսատամն և զկողակից նորին զՄասփիւռն և զորդին՝ զՅակոբջանն, և զդուստրն՝ զՆանիկն։

Դարձեալ յիշեցէք զմիւս եղբայրն՝ զՎարդանն և զկողակից նորին
480բ զՏատկումն, որ ի միում ամի հանդեան ի Քրիստոս... և զոր//դիս նոցին՝ զՇատուրն և զԱւէտն. տէր Աստուած անփորձ պահեսցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զփոքրիկ եղբայրն նորին՝ զՊօղոսն և հայցեցէք ի Քրիստոսէ, զի ընդ երկայն անփորձ... պահեսցէ...։

Դարձեալ յիշեցէք զքոյրն՝ զԽաթունն և զդուստրն՝ զՆդինարն։ Եւ որ բոլորով սրտիւ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ...։

Դ

658բ Յիշատակարան

Փառք...։

659ա Արդ՝ այսպիսում լուսազարդ տարի և վարդափթիթ բուրաստանի... փափաղող եղև շերմեռանդ սիրով և մեծաւ յուսով... բարեհամբաւ աբեղայն տէր Խաչատուր ստանալ զսա ի զբօսանս հոգոյն...։

Արդ՝ աղաչեմ զձեզ զամենեսեան, հարք իմ և եղբարք, տեարք իմ և վարդապետք, որք հանդիպիք սմա կարդալով, օրինակելով և կամ միայն հարևանցի տեսանելով, յիշեցէք բոլորով սրտիւ և թաղութիւն մեղաց հայցեցէք հոգոյ, ստացողի այսմ լուսազարդ տարիս տէր Խաչատուր սրբասնեալ աբեղային և ծնօղաց իւրոց, հօրն՝ մահդասի Յակոբին և մաւրն՝ Ղատամղութլուին, և եղբարցն իւրոց՝ պարոն Առաքելին, Ռոստամին, Վարդանին և Պօղոսին, և քեռն՝ Խաթունին և ամենայն արեան մերձաւորացն...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աստուածաշունչս ի թուականիս Հայոց ՌՂԷ (1648) ամին, ի յերկիրս Պարսկաստանի, ի ժողովն Գազկեցւոց, ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապազին և ի հայրապետութեան տանս հայկազեան տէր Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի, և ի յառաջնորդութեան Ջուղայոյ և նահանգիս Պարսկաստանի երիցս երանեալ և գերահռչակ հօրն մերոյ՝ տէր Խաչատուր երջանիկ վարդապետին, որ ի թվին ՌՂԵ (1646) ամին փոխեցաւ առ յոյսն ամենեցուն ե եթող մեզ ետնորդացս անասելի սուգ. քանզի այս ամէնիմաստ վարդապետս Խաչատուր՝ էր վարուքն սբ., գործովն առաքինի, բարուքն հեզ և խոնարհ, ամենևին լի երկնային շնորհօքն, որ միայն ի տեսութենէ նորին շահիւր տեսօղն և այս ոչ եթէ ի մէջ հաւատացելոց միայն, այլ ևս առաւել ի մէջ անհաւատից էր ցանկալի. որ և միայն տեսօղքն և միանգամ ընդ նմա խօսօղքն ընդ մեր ափսոսային։ Զորոյ զհանդէսն հրաշափառադունիւ պարտ էր անցանել, այլ այլում տեղւոյ և ժամանակի թողցուք ասել. որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի։ Որ և յետ նորա յաշորդեաց զաթոռն տէր Յակոբ սրբասնեալ եպիսկոպոսն. յորոյ աւուրս աւարտեցաւ սբ. Աստուածաշունչս ձեռամբ

տէր Գասպար իրիցու և նորին աշակերտի Յովհաննէս քաջ քարտուղարի, հոգաբարձութեամբ և ծախիւք վերոյ ասացեալ Ջուղացի տէր Խաչատուր աբեղայի, որ մեծաւ հոգացողութեամբ ջան յանձին կալաւ գուն
630բ գործեալ ի տուէ և ի // գիշերի անդադար հոգալով լաւութեան՝ թէ՛ մագաղաթին, թէ՛ ճարտարվարին, և թէ՛ օրինակին և ստուգութեան, նաև վասն գրոյն և ծաղկին և պատկերացն առատապէս ծախելով զինչս, թերևս լցցի փափագ սրտի իւրոյ, զոր ի վաղուց հետէ ցանկացեալ էր ստանալ առ ի զբօսանս և ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ անմահ կրկին կենաց յետ իւր։

Ստացող՝ Խաչատուր աբեղա

Ե

Արդ՝ աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, ով հանդիպողք այսմ լուսերամ տառի, յիշել զիս՝ զԽաչատուր անարժան աբեղայս. բոլորով սրտիւ և թողութիւն մեղաց իմոց հայցել, զի թերևս արժանի եղեց ողորմութեանն Աստուծոյ, աղօթիւք ձերովք։ Նաև զբարեպաշտ և զքրիստոսասէր ծնօղսն իմ՝ զմահդասի Յակոբն և զԳատամդուբլուն ևս աղաչեմ յիշել...։

Եւ դարձեալ աղաչեմ յիշել զեղբարսն իմ՝ զԱռաքելն, որ է այր հանճարեղ և իմաստուն, մանաւանդ վաճառականութեամբ գերազանցեալ քան զբազումս և անուանի, և զկողակից նորին զԹագունի, և զորդին՝ զնազարէթն և զԳրիգորն, զՍուքիասն և զՊեարոսն, և զդստերսն՝ զՂատամն և զՓարասն յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք զմիւս եղբայրն իմ՝ զպարոն Ռուստամն խոհեմ և զկողակից նորին զՄասփիրն, և զորդին իւր՝ զՅակոբճանն և զԱւէտն, և զդստերքն՝ զԱննային և զմիւս Աննային, որ փոխեալ է առ Տէր։

Դարձեալ յիշեցէք զմիւս եղբայրն իմ՝ զՎարդանն և զկողակից նորին զՏաակումն, և զորդին՝ զՄաառուն և զԱւետիսն, և զդստերքն՝ զՄարիամն։

Դարձեալ զփոքրագոյն եղբայրն իմ՝ զՊօղոսն և զկողակիցն իւր[31] և զորդիքն, զոր տէր Աստուած տացէ։ Եւ զքոյրն իմ՝ զԽաթունն և զդուստրըն՝ զԵղիսաբեն, և զհանգուցեալ քոյրն իմ՝ զԱզատն յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք զքեռին իմ՝ զԹասալին, և զմօրաքոյրն իմ՝ զՄէրաաաիկն, և զորդիքն՝ զՍարատն և զՅովաննէսն, յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք զհօրեղբայրն իմ՝ զՀայրապետն, և զկողակից զԲաւրն, և զորդիքն իւր՝ զՍահակն և զՄարութէն, և զդուստրն՝ զՄարիամն։

Դարձեալ յիշեցէք զհօրաքոյրն իմ՝ զՄարիամէն, յիշեցէք։ Նաև աղերսելով աղաչեմ զձեզ, յիշել զհոգևոր հարք և եղբարքն իմ և զմիաբանք սբ. ուխտիս Ամենափրկչի, նախ. զերջանիկ հայրն հասարակաց զԽաչատուր վարդապետն և զձեռնասուն զաշակերտն նորին՝ զՍիմէօն վարդապետն, ամէնիմաստ և անյաղթ փիլիսոփայն, և զԴաւիթ սրբահոգի վարդապետն, և զԲաղասատր երջանիկ վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Տէր..., նաև զՍահակ վարդապետն, և զՅովհաննէս վարդապետն,

31 Անունս չի գրված։

և զԲարսեղ վարդապետն, և զտէր Ստեփաննոս Ճգնաւորն և զայլսն ամէն։

Կրկին անգամ աղաչեմ յիշել զմիաբանք սբ. ուխտիս զմեծ Յովանէսն, և զտնտես Առաքելն, և զտէր Յուսիկն, և զսարկաւագունսն՝ զՍահակն, զՄինասն, և զՍարգիսն, և զմահդացի Մխիթարն, և զայլ միեղէն եղբարսն, որք ամենեքեան երախտաւորք են ինձ անարժանիս, որոց ամենեցուն ողորմեսցի տէր Յիսուս...։

Ես առաւել յիշել աղաչեմ զաշխատաւորս ի վերայ սբ. գրոցս զտէր Գասպարն, որ զմադաղաթն շինեաց և մասն ինչ սբ. գրոց անձամբ գրեաց և զմիւս գրագիրն զՅովանէսն, նաև զՀայրապետն յիշել աղաչեմ, որ ծաղկեաց զսբ. գիրքս և ճարտարվարեաց, նաև զԱղափիրին, որ զպատկերսն նկարեաց, որոց ամենեցուն փոխարէնն տէրն մեր Յիսուս Քրիստոս հատուսցէ...։

Արդ՝ ես նուաստս ի բարեաց և թափուր ի գործոց բարեաց Խաչատուր աբեղայս, աղաչիմ և պաղատիմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով, օրինակելով և կամ միայն տեսանելով, յիշել միով Հայր մեղայիւ ղիս, և զծնօղսն իմ, և ամենայն արեան մերձաւո[ր]սն]...։ Այլ և երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, սիրելիք իմ հարք և եղբարք, որ հանդիպիք սբ. Աստուածաշնչիս, լաւ խնամօք պահէք. զի բազում աշխատանք ունի, վասն որոյ հանդիպողքդ խնամարկեսջիք պահելով ի հրոյ, ի ջրոյ և յայլ վնասակարաց։ Եւ թէ ոք յանդգնի և կտրէ ի թղթէ և ի պատկերէ և կամ այլ ինչ ագահութիւն արասցէ, որ պակասութիւն լինի սբ. գրոցս՝ այնպիսին մասն և բաժին զՅուդայի առցէ...։

Գրիչ՝ Յովանէս դպիր

զ

124ա Զմեղաւոր և անպիտան Յովաննէս գրիչս յիշեսջիք ի Քրիստոս...։

է

301ա Ով ընթերցողք սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՅովանցս դպիրս և զվարպետն իմ՝ զտէր Գասպարն. և Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց՝ մեզ և ձեզ ողորմեսցի։

ը

Այլ գրով

659բ Դարձեալ յիշեցէք զծաղկող սորա Հէրապետն, և զծնօղսն իւր, և զկողակիցն, ընդ սմին և զաշակերտսն իմ՝ զՄատուրն, զԱղամալն և զԳալուստն, որ սոքա ևս աշխատեցան։ Ի թվին ՌՂԷ (1648)։

Աշակերտ՝ Գրիգոր

թ

Այլ գրով

180ա Յիշեցէք ի Քրիստոս զՋուղայեցի սարկաւագ Գրիգորս, որ եմ աշակերտ ստացողի սորա։

501

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղէմ, № 1928, տե՛ս նաև ՄՏՁԵՊ, VI, № 1928, էջ 430—431

Գրիչ՝ Մարկոս սարկաւագ

ա

գ20բ Զեռս փրտի և հողանա,
Մոխիր, փոշի, գազախ դառնա,
Գիրս յիշատակ առ ձեզ մնա,
Եւ սփոփան ձեզ յարակա։
Թէպէտ մանր է գիր սորա,
Ի յընթեռնուլն դժուարանայ,
Սակայն երբ ուսնի հմտանայ,
Նա օր ըստ օրէ յոյժ պարզ կարդա։
Որք ընթեռնուք օգտիք ի սմա,
Ցիշէք զմեղապարտ զգծող սորա,
Զ՝Մարկոս սարկաւագ գրող սորա։

Եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

բ

444ա [Ց]իշեցէք ի Քրիստոս զպարոն Մարզարէն, որ ստացաւ զսբ. մատեանս, որ կոչի Աստուածաշունչ, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ պարոն Վարդանիսին և Շահզատին: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբ-պարոն Վարդանէսն և զծնողսն իւր՝ զԹարիվէրմիշն և զխանզատայն: Դարձեալ յիշեցէք զ՝Վարդանէսն և զեղբարքն իւր՝ Երինանն և զԱւէլնանն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Վարդանէսն, և զորդին իւր՝ զպարոն Մարզարէն, որ հանգուցեալ է ի Քրիստոս, և զդստերսն իւր՝ զխանզատէն, զՄարիամն, զԳուլզատէն և զՍսիսիլէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհանգուցեալ զաւակսն իւր՝ զՍանուկն, զԲէկզատէն և զԳուլզատէն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՎարդանէսն և զկենակիցն իւր՝ զՇահզատէն, և զծնողսն իւր՝ զՍիմատանն և զՂարիպխաթունն, և զեղբարսն իւր՝ զՄելիտոնն, զՍարգիսն, զՄիքայէլն, և զորդին՝ Սիմատանն, զՇահսուլթանն, զԱբրահամն, զՊողոսն, զՄարտիրոսն, զԿարապետն, և զքորքն իւր զհանգուցեալն՝ զՇահսուլթանն և զՋուհարն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմիւս քոյրն իւր՝ զՀոռոմսիմէն, և զկենակիցն իւր՝ զխաչատուրն, և զորդին՝ Իսախանն, զդուստրն՝ Լապիխանն, Արզուիանն, զՆազլուն, և զհանգուցեալսն յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմեծ դուստրն՝ Խանզատէն և զկենակիցն իւր՝ զմահդասի Կարապետն և զորդին՝ Դիլանին, և զհանգուցեալսն։ Եւ զմիւս դուստրն՝ Մարիամն, և զկենակիցն իւր՝ զպարոն Հուրմուզն, և զհանգուցեալ դուստրն՝ զԲէկզատէն, և զմիւս դուստրն՝ Գուլզատէն, և զկենակիցն՝ զՅոհանն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՇահզատէն և զպապն՝ զԱբրահամն, զհանիկն՝ զՋատէն:

Գ

314բ Ո՛վ եղբայրք, յիշեցէք զիս և զեղկելի գրչիկս զՄարկոս սարկաւագն և զծնօղն իւր՝ զտէր Յովանէսն և զվարպետն իմ՝ զԱստուածատուր սարկաւագն մին Հայր մերիւ։ Որք լուսաւորիք ի սմանէ ընթերցմամբ կամ օրինակելով, անմեղադիր լերուք սրղալանացս իմոց, զի կարս մեր այս է։ Եւ Աստուած որ առատն է ի տուրս մեզ և ձեզ ողորմեսցի։ Թվին ՌՂԷ (1648)։ Հայրմեր։

Դ

138ա Զմեղապարտ և զանարժան մեղաց գերիս զՄարկոս սարկաւագն բարի մտօք յիշել ի Տէր յերես անկեալ աղաչեմ. և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց՝ մեզ և ձեզ ողորմեսցի. ամէն։

Ե

188ա Զմեղապարտ և զանարժան զմեղաց գերիս, զգրիչ տառիս տէրունական զսուտանուն Մարկոս սարկաւագս ոմն անպիտան, մաղթեմ արժան արէք յիշմանա։ Հարկ իմ և եղբարք իմ պատուական, անմեղադիր լերուք, եղբարք, սղալանաց սորա կամ գրի խոշորութեան սորա, զի կարս մեր այս էր։ Աստուած ողորմի ասացէք ձեր և մեր ննջեցելոցն. ամէն։

Զ

332բ Այս խաչ նշանէս մինչև ի միւս խաչ նշանն լադին Աստուածաշունչ գրոց մէջն կայ այս կարգովս։

Նվիրատու՝ Շահզատէ

Է

441ա Արդ՝ ես՝ Վարդանիսի կինակից Շահզատէս ետու զսբ. մատեանս յիշատակ մեզ և մերոցն ամենայնի՝ կենդանեաց և հանգուցելոց։ Ետու ի ձեռն Օնոփրիոս վարդապետին։ Եւ այլ մի՛ ոք իշխեսցէ զսբ. գիրքս ծա-
444բ խելոյ // և կամ դրաւ դնելոյ՝ ո՛չ մերոց և ո՛չ այլոց. և թէ ոք յանգքնի կամ ծախելոյ և կամ գրաւ դնելոյ՝ ի Քրիստոսի ահեղ դատաստանին պարտական լիցի զմեզ և մերոց ազգայնոցն, նաև անիծեալ լիցի ի Քրիստոսէ...

502

ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Կ. Յուզբաշյան, NB—116

Գրիչ՝ Յոհան աբեղայ

276ա Ի հայրապետութեան տեառն արփիաւորի՝ տէր Փիլիպպոսի և ի թագաւորութեան Պարսից շահ Սէֆիոյ, ի թուաբերութեանս մերում ՌՂ և Է (1648) հաշուի, վերստին նորոգեալ եղև այս տառ, որ պարառեալ ունի յինքեան զամենայն հանճարս իմաստասիրական, որ և ըստ արդեանց կոչի Գիրք իմաստութեան, որ փրթեալ և բամբակացեալ էր ի սպառ ի սպուռ ենթակայ սմին, ձեռամբ տէր Յակոբ կուսակրօն քահանայի, ի վիճակէ Ըստաթէի Սբ. առաքելոյն, որում և գիրքս է, քանզի ի նոյն վիճակէ գոլով սրբասէր քահանայս, խանդաղատեալ սիրով, իբրև որդի հա-

բաղատ, ձեռնարկեալ ձրի նորոգեաց և կազմեաց զսա, հրամանաւ տեառն Սսայեայ առաջնորդի սբ. աթոռոյս, որ Երնջակայ Ս. Կարապետ կոչի, նաև յոյժ ջերմեռանդ թանխանծմամբ հիքացեալ Յոհան աբեղայիս։

Արդ՝ կարօտ և պասքեալս, ողորմութեան կազմօղս՝ յերեսս անկեալ աղաչէ, զաստուածասէր անձինսդ, յիշել յաղօթս, ևս առաւել ի ժամ ընթերձման. և որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

Գիրքս այս սեփական Տաբևու է։

503

ԱԻԵՏԱՐԱՆ (1569 Թ.)

Մագիստրոս, II, № 1878

Հետ. ստացող՝ Խանիգուլ

111 Ես՝ մեղաւոր Խանիգուլ առի սբ. Աւետարանս ինձ յիշատակ, ի թվին Հայոց ՌՂԷ (1648), ի թագաւորութեան շահ Սուվին, հայր իմ Գիշաղայ, մեծ հայրն՝ Ուլաղայ, մայրն իմ՝ Բալայիւաքուն և եղբայրն իմ՝ Մուրատ... Ճանաղայ, որդոյ նորայ Մարտիրոս, Մարկոս, Ղուկաս, Ղաշաղայ, Ոհան, Սարոն, իմ խանում Հոռումսիմայ...։

504

ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 799

Գրիչ՝ Միքայէլ երէց

Վայր՝ Մարզուան

220ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի գիւղաքաղաքն Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին տաճարիս, ի թուականութեանս Հայոց ՌՂԷ (1648), ի հայրապետութեան մերոյ Փիլիպպոսի կաթողիկոսի, ձեռամբ անարհեստ գրչի Միքայէլ երիցու, ի խնդրոյ մահտեսի Յոհան բարե-[պաշտի]...։

505

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 801

Գրիչ՝ Գրիգոր՝ քահանայ

ա

220բ Փառք...։ Շնորհիւ Տեառն ամենակալի աւարտեցաւ հոգիազարդ Աւետարանս ձեռամբ Գրիգոր լոկ անուամբ քահանայի... ի թուականիս Հայոց ՌՂԷ (1648), ի ժամանակս յաշխարհակալի փոքոյն կոչեցեալ շահ Աբազի, ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Փիլիպպոսի և Աղուանից տէր Գրիգորի։ Իսկ վարդապետն Կիրակոս վարժեալ և կատարեալ իմաստութեամբ ի վարժարան վարժապետին Նսայոյ՝ տիեզերաքարող և սրբազան հռետորի, նոյն վերատեսուչ գահէրէց և գլուխ արհի աթոռոյն Ս. Կարապետի, որ Յերընջակ. զի աթոռն այն կայր բազում ժամանակաց

քայքայեալ և մանաւանդ կարգ և ուղղութիւն բնաւին բարձեալ և գնացեալ, իսկ ի գալ նորին[32]*, ամենիմաստ հանճարովն իւրով վայելչապէս զարդարեաց զայն աթոռն՝ զպարիսպն ամրագոյն շինեաց, զյարկ և զկայանսն յաղիւսաշար յօրինել ետ, և մանաւանդ զեկեղեցին կոփածու և յօրինածու քարամբ նորակերտեաց հիանալի և զարմանալի տեսողաց և լսողաց, զի և վէմ մի ի հնոյն ոչ եթող, այլ զամենայն նոր նորոգեալ պայծառացոյց և եթող յիշատակ բարի հոգւոյ իւրոյ...։*

Եւ ինքն վարդապետն Կիրակոս *ի ստանալ այսպիսի մեծատանջ Աւետարան, ուրախ եղև իբրև ընծայ վերուստ առաքեալ և յաղագս յիշատակի հոգւոյ իւրոյ ետ գծագրել...։*

Բ

Ստացող՝ Կիրակոս վարդապետ

221ա *Եւ արդ՝ ես նուաստ և եղկելի թշուառաւիցեալ* Կիրակոս, *կսկծալից սրտիւ աղաչեմ զդասդ սրբազանից զպահող սբ. Աւետարանիս, [յիշեցէք] զգեղալի և զարեգակնափայլ զեղբայրն իմ՝* զՅոհաննէս *վարդապետն, և ես անդրանգագոյն զեղբայրսն իմ՝* զՍիմէօն *վարդապետն,* զՆղիազ *վարդապետն,* զՂազար *վարդապետն...։*

506

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հա. Ա, № 807

Գրիչ՝ Խաչատուր երէց

Վայր՝ Կ. Պոլիս

222ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ ի մեծահանդէս քաղաքն* Կոստանդնուպոլիս, *ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսի, ի թուական Հայոց սեռի ՌՂԷ (1648), ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան Իսմայէլացւոց և Հագարացւոց ի վերայ բազում ազգաց և սղանց քրիստոնէից և այլասեռից սուլթան* Իպրահիմին, *որ եղև սկիզբն սորին ամին և ի լրումն որդւոյ սորին սուլտան* Մահմատին, *որ ոչ սմեայ մանուկ գոլով [նստաւ] թախտ թագաւորութեան հօր իւրոյ, և ի հայրապետութեան Հայոց, որ ի սբ. Էջմիածինն՝ տեառն տէր* Փիլիպպոս *կաթուղիկոսի, ձեռամբ փոքուն գրչի* Խաչատուր *երիցու։*

507

ՄԱՇՏՈՑ (1600 Թ.)

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Ա, № 808

Գրիչ՝ Զոսիմոս

Վայր՝ Իզմիր

222բ *Թուին ՌՂԷ (1648) հրամանաւ սուլթան Իպրահիմին խեղդեցին* զՍաֆ *փաշան... ու ամենայն տաճիկներուն, որ ամենեքեան այնպէս կորընչին. ամէն։*

---

32 *Իմա՛ նայի վարդապետին։ Մ. Չամչյանը վերանորոգումը նշում է 1651 թվին (Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 648)։*

Ես՝ տէր Զոսիմոս եկի ի Իզմիր թուին ՌՂԷ (1648) հետ տէր Միհաս քաշ բարունապետ վարդապետին՝ առաջնորդին Անկիւրիոյ. Աստուած անփորձ պահէ զայս քաղաքս։

508

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

ՊՊԹ., № 653 (1430 թ.)

Գրիչ՝ Մեսրոպ աբեղայ

Եւ ղդիրքս զայս, որ կոչի Հարանց վարք ստացաւ զսա Ստեփաննոս վարդապետն Լմա[յ] անապատին, հանդերձ միաբան եղբարցն կամօք, յիշատակ ի դուռն Ս. Գէորգայ Լմա[յ] անապատին, որք հանդիպիք յիշեցէք... Ստեփաննոս վարդապետին և անապատի միաբանիցն՝ քահանայիցն և սարկաւագացն և կրօնաւոր միակեցացն և ամենայն երախտաւորացն, յիշեցէք՝ և դուք յիշեալ լիջիք և Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։ Թվին ՌՂԷ (1648) յառաջնորդութեան Ստեփաննոս վարդապետին սբ. ուխտիս Լմա[յ] անապատին, որ է հաստատ կարգն և սահմանն, և է Կ (60) միակեց այժմ, յոր հանապազ կարդացուի գիրքս ի մէջ սոցա յօգուտ եղբարցս, զոր տէր Աստուած Յիսուս Քրիստոս հաստատուն պահեսցէ զսա, ամէն։

Ես՝ Մեսրոպ աբեղայս եկի ի սբ. ուխտս Լիմ կոչեցեալ, և է այժմ անապատ։ Եւ իմ կացեալ եղէ աստ մէկ քանի տարի. և տեսեալ զպայծառութիւն սբ. եկեղեցւոյս, վասն որոյ չնրմեռանդ սրտիւ և յօժար կամաւք ետու արծաթ խաչ մի, և սեղանի ծածկոց մի, սկոյ ծածկոց մի։ Եւ արդ՝ եղիցի անջինջ յիշատակ ի դուռն Լմա[յ] անապատին և Գէորգայ սբ. զօրավարին ի մաքրութիւն մեղաց իմոց, և ծնօղաց, և ամենայն ննջեցելոց. ամէն։

509

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅ

ՄՏՋԵՊ, I, № 2 (1338 թ.)

47 *Դարձեալ աղաչեմ աստուածարեալ վեհ ընթերցողք սբ. գրոցս, ի բարեբախտելն ձեր, յիշեսջիք ի Քրիստոս զվերջին ստացող բարեբարոյ, զհեզահոգի պարոն Սողոմոնն, և զիւր ծնօղսն՝ Մելիքն և Աննան, և զկենակիցն, և զաւակսն զվախճանեալն՝ Մովսէսն և Զաքարիայն, Սահակն և Ազարիայն, Դշխոյն և Զմրութն, և զկենդանիսն՝ Յակոբն, Տիրուհին, Սուլթանն, Զմրութն և ամենայն արեան մերձաւորացն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանցն և եղ յիշատակ վերոյ դրելոցն ի Խալաթիայ, ի Ս. Լուսաւորիչ, ի վայելումն մանկանց եկեղեցւոյ։ Եւ դուք երանելի սբ. հայրք, ի յաւկտիլ ձեր ի սբ. տառէս, գթացէք ի մեզ, որպէս անդամոց ձերոց, միով ողորմիւ։*

Եւ որք յիշենն զմեզ սիրով,
Առ ողորմածն բոլոր սրտով,
Եւ զի և չանք մեր ցաւելով,
Վասն սորին ակն ունելով։
Լուարուք զԱստուծոյ բան հոգով,
Զոր և կոչէ սուրբ բարբառով,
Որով չափէք յոյս ամանով,
Նոյն եղիցի ձեզ քանակով,
Եւ որ պատճառ եղև սորա,
Տէր Կարապետն գերակայ,
Աստուածային շնորհովն նա,
Լցեալ երիւք մաս[ե]ամբ նորա,
Զխոհականն, զգործնականն,
Եւ զմատակարարականն ևս ի վերայ,
Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։
Բամեալ զթիւն հայկազան,
Ի և Ա յոբելեան,
Ի թիւ շարադասեան,
Եւ է թիւ ևս յաւելեան (1648)[33]։

510

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Մշեղ, III, № 984

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

583 Ո՛վ ընթերցողք սբ. գրոցս, վասն սիրոյն Քրիստոսի, յորժամ օգտիք բան ինչ ի սմայ, զեղկելի և զանարժան, զսևերես պոռնիկ Յոհան զՀիզանցի գրիչ սորայ մի ողորմայ առնէք արժան։

բ

Զեղկելի գրիչս ղսևեր[ե]ս Յոհան Հիզանցիս, և զամենայն երախտաւորսն ի վերայ մեր՝ զհոգևոր և զմարմնաւոր ծնողսն մեր յիշեցէք ի Քրիստոս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։ Գրեցաւ ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի յաթոռ Տեառնեղբօրն Յակոբայ, ի գուտն Ա. Գրոսին։ Թվին ՌՂԷ (1648)։

[33] Այսինքն՝ [(21×50)+(40+7)]+551։

511

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՏՁԵԳ, V, № 1529

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Թամգառայ

ա

281 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Ադամգիրգս ի գիւղն Թամգառայ[34], ի դառն ժամանակիս, ձեռամբ և՛ անարժան [և՛] սուտանուն Գրիգորի, և մի՛ անարհեստութեան իմոյ ոչ մեղադրէք, զի ոչ վարպետի քով էի գնացեր և ոչ գիր հաներ, այլ յուսացայ ի ապէնիազն Աստուած և գրեցի զսակս գիրս, անմեղադիր լերուք, ո՛վ հայրք և եղբայրք, մանր ու խոշոր գրոյս, զի կարն մեր այս էր ու դեռ չէր հաստատեալ արհեստն իմ։*

Ի թվին հազար նրսուն և եթն (1648) ամին գրեցս, յաւուր շաբաթու։

բ

Զեռս երթայ գիրս մնայ,
Մատունս ամէն ի հող դառնայ,
Ես այլ մեղաւոր եղայ,
Դժոխոց դռին մատեցայ։
Քանի որ տխմար էի,
Ի մեղացն ի զատ կու փաղչի,
Երբ որ մեղաւոր եղայ,
Դժոխոց ճամփան ես ուսայ։
Ես՝ Գրիգոր մեղաւք լցեալ աշխարհի,
Որ ի նախնին սկսայ և առաջ եկի,
Լալով զձեզ աղաչեմ որդիք Սիոնի,
Որ լի սրտով ասէք Աստուածն ողորմի։

512

ԱՇԽԱՐՀԱՎԱՐ ՔԱՐՈԶԳԻՐՔ

ՏՄՁՄՎ, № 102

Գրիչ՝ Յունան

ա

376 *Թողութիւն արա...*
Նաև անարժան գրչի Յունանիս մեղսասիրի,
Բիւր տաղանդսյ պարտականի,
Մեղաւք լցեալ ազգի ազգի,
Վասն այն կամ ի տարակուսի։

---

[34]Կեսարիայի շրջանում, Նիկոպոլսից մոտավորապես 6 կիլոմետր հյուսիս։ Ըստ ավանդության, բնակիչների մի մասը գաղթել է Անիից։

Բ

Այլ գրով

Յիշատակ է սբ. գիրգս խոճա Պաղոսին,
Եվ իւր կենակցին՝ Ալթունին,
Եվ իւր եղբարն՝ Մալխասին,
Եվ ծնողաց նորին՝ Մալիճանին,
Եվ այլ ազգականացն նորին,
Ի դուռն Սրբոյ Սարգսին,
Եվ որդոյ նորա Մարտիրոսին,
ՌՂԷ (1648) թվին։
Որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։

Գ

Յիշատակ է գիրքս խոճայ Պաղոսին *և կողակցին՝* Ալթունին, *և հաւրեղբար որդոցն՝ խոճա* Կիրակոսին *և* Թաթէոսին:

513

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՕԹՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ

ՄՅԶՀՄՍ, II, № 47

Գրիչ՝ Պապ Սեբաստացի

ա

143 *Այս պատմութիւնս խորդ մօր վերայ է. կարդա և լաւ ի միտ առ, և զանարժան զ*Պապ Սեբաստացիս *յիշեա ի Տէր։*

Բ

Կատարեցաւ Պատմութիւն եօթն իմաստասիրացս թվին ՌՂԷ (1648), ի թագաւորութեան սուլթան Մահմատին *նոր թագաւորութեան։*

Գրիչ՝ Ղազար դպիր
Վայր՝ Թոխատ

Գ

Զեռս երթա գիրս մնա, զձեզ աղաչեմ հայրք և եղբարք իմ. երբ զայս եւթն իմաստնասիրաց բանս կարդաք և ասէք Աստուած ողորմի Ղազար *դպիր շահընկալ, ի դուռն Ս. Ստեփաննոսու Տաշ Մարտիւան կոչի,* Թոխատ *քաղաքի. Տէրն բարով վայելել տացէ իւրէնն...*

514

ՇԱՐԱԿՆՈՑ

ՔՅԶՉՎ, № 75

Ստացող՝ Մովսէս աբեղայ

ա

120 *Փառք...: Արդ՝ ես անարժան և մեղաւոր* Մովսէս *աբեղայս կարողութեամբն Աստուծոյ գրել տուի Շարակնոցս զայս իմ հալալ ընչից իմոց,*

յիշատակ հոգոյ իմոյ և հոգևոր եղբայրն իմ՝ տէր Պետրոս աբեղայն, ի թվականութեանն Հայոց ՌՂԷ (1648), ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոս կաթողիկոսին։ Ով որ կարդալով կամ օրինակելով զմեզ յիշէ և որ ողորմի ասէ՝ Աստուած զիւրն յիշէ և ողորմի իւր արքայութենէն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գրիչ՝ Կարապետ

Բ

Զկարապետ գրիչ յիշեցէք առ Քրիստոս և զստացող սորա տէր Մովսէս կրաւնաւոր, ո՛վ ուսումնասէրք։

515

ՇԱՐԱԿՆՈՑ

ՔՅՁՁՎ, № 76

Գրիչ՝ Շամլու
Վայր՝ Կոտին

121 Փառք... Արդ՝ ըսկըսաւ աստուածային տառս ի Սեբաստիա և յաւարտեցաւ ի Կոտին, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին և Ս. Կիրակոսին,
122 ձեռամբ մեղաւոր և անարժան գրչին՝ Շամլուին, որ է ի յերկրէն // Սեբաստիոյ, և եկեալ էր բազում նեղութեամբ ի Կոտինն և գրեալ է զՇարակնոցս ի լաւ և ընտիր յաւրինակէ որ կոչի Խլկցի։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայր[ք], որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, անմեղադիր լինիք գրիս խոշորանացն և մանրութեան և կամ սղալանացն, զի կարիք մեր այսչափ էր, և յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեզաւոր գրիչս։ Այլ յառ ոտս անկանելով աղաչեմ զձեզ, որք լի սրտիւ յիշէք զուսուցիչս իմ զՆերսէս աբեղայն, որ է հայր վանաց Սեբաստիոյ Ս. Նշանին, և Ս. Աստուածածնին, և Ս. Կարապետին սպասաւոր։

Արդ՝ աղաչեմ զձեզ, որ յիշէք ի սբ. աղաւթս, ով ընթերցողք, զԽանտուան, որ բազում աշխ[ատ]անք կրեալ է ի վերայ մեր աւր ըստ աւրէ կերակրել զմեզ, զվարձս և զպարգևս ի յԱստուծոյ առցէ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սայ ի դառն և ի դժար ժամանակիս, ի թվին ՌՂԷ (1648) ամին ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Իպրահիմին, որ ոմանք կասեն, թէ ի թախտն ձգեր են և ոմանք կասեն, թէ սուտ է. և դեռ չէր աւատեր իրաւի եղաւ ի թախտէն հանելն։

Արդ՝ զստացող սբ. գրոցս, յիշեսչիք ի սբ. աղաւթս ձեր զՊետրոսն, որ ստացաւ ի հալալ ընչիցն գրել ետուր զՇարակնոցս, յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն, և յիշատակ ետ ի ձեռն որդւոյն իւր՝ Մեսրոպին. Աստուած բարով վայելել տացէ և յերկար ժամանակաւք ի խորին ծերութիւն հասուցանէ. ամէն։

516
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՔՅԶՉՎ, № 197

Գրչի՝ Դաւիթ

475 Դարձեալ ծանիք, զի մեծն Գրիգոր բազում աշխատանօք և ջերմ սիրով Յովհաննու Աւետարանս դաս ասաց և քաղուածու շինեաց մինչև ցայն, որ ասէ՝ Յառաջագոյն քան զտօն Զատկին։ Եւ փոխեցաւ ի Քրիստոս և գիրգս թերատ մնաց, իսկ ես՝ նուաստ Դաւիթ բանի սպասաւորս զքաղուածս [յ]որժամ ստացայ պակասաւոր՝ զպակասն զՄատթէոս վարդապետի շինուած քաղուածէն լմնեցի։ Աղաչեմ անմեղադիր լինել, զի սէր և փափաք բազում ունէի, վասն այն գրեցի։ Արդ՝ ոչ լիապէս գրեալ է աստ, այլ մասնաւոր բանից եղև լուծումն, իսկ զգերակատարն ի մեծէն Գրիգորէն լուծեալ անդր գտշիք ճշտապէս։ Թվին ՌՂԷ (1648)։

517
ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻՈՅ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՔՅԶՉՎ, № 207

Ստացող՝ Դաւիթ վարդապետ
Վայր՝ Նդոկիա

ա

514 Ես նուաստ և տրուպ Դաւիթ ևեթ անուամբ կոչեցեալ վարդապետ, զոր ետու գրել զպատմագիրքս, զոր արարեալ է Մուխայիլ պատրիարգն Ասորոց, ի թվականիս ՌՂԷ (1648), Նդոկիա քաղաքն։ Եւ ով ոք զԱստուած ողորմին ասէ՝ տէրն Քրիստոս իւրն ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն. ամէն։

Գրիչ՝ Կարապետ երէց

բ

Զտարտամս ի բարեաց և զփարթամս ի չարեաց զԿարապետ զանարժան իրիցուկս յիշել աղաչեմ ի սբ. աղօթս ձեր և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ յոյսոյ մերմէ։

գ

Զծոյլս ի բարիս,
Զյօժարս ի չարիս,
ԶԿարապետ գերիս,
Աղաչեմ յիշել ի սբ. մատեանիս։
Ո՛վ ընթերցողք այսմ սբ. տառիս,
Որ լինիք և դուք արժանիս,
Լսելոյ զձայն եկ առ իս. ամէն։

518
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Մուրմար, II, № 94

167 Յիշատակ է կանոնագիրքս մահտեսի Սարգսին, որ ստացաւ հալալ վաստակոց և եդին անջինշ յիշատակ ի դուռն Ս. Սարգսին ձեռն տէր Ղուկասին, որ յայսմ ամի ձեռնադրուեցաւ ՌՂԷ (1648)։

519
ԺՈՂՈՎԱԾՈՅ
ՁՁԱՐ, № 121

610 Գիրքս ժողովածու յիշատակ է խոճա Կիրակոսի տղի խոճա Կեցոնին, ի դուռն Ս. Աստուածածնին վանիցն Դաղատիու։ Ոչ ոք չունի հրաման առնելո[յ] կամ տիրելո[յ], այլ միայն կարդան և ի մէջ վանիցն չի հանեն և Աստուած ողորմի ասեն յիշատակ դնողացն և իւրեանցն այլ ողորմի։ Թվին ՌՂԷ (1648) դ<յի>րինք յիշատակ. ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն Փիլիպ[պ]ոս կաթողիկոսին և առաջնորդութեան մերոյ Մինասա[յ] վարդապետին Թոխաթեցո[յ], որ բազում ջանս եդ վասն վանիցն, որ ամա[յ]ի էր եղեալ և անաւթն զամենայն ի գրաւ էր եղեալ. ոչ թէ վանիցն միայն, այլ է (7) եկեղեցուն, այլ էին ըսկսեալ որ վանիցն չէր եղեալ բաւական. պարտուց շատ լինելուն այն տեղն հասեր, որ Յոյնք կամէին առնուլ զվանքն մեր, դրամ տալով, այլ ողորմածն Աստուած ողորմեցաւ, և եկն Մինաս վարդապետն, շանաց քան զկարն աւելի գնաց, ժողովեց ի դուրսէ և ի քաղաքէս, Աստուած զտուողքն աւրհնէ, և երեր որչափ անաւթ կայր ի գերի, թէ՛ վանիցն և թէ՛ եկեղեցոցն, զամենայն ազատեց մինչև ԴՌ (4000) ղռուշ աւելի և ոչ պակաս, և կըրկին զվանքն նորոգեց բազում զգեստիւք և շինութեամբ։ Աստուած իւր մեղաց թողութիւն անէ և Ս. Աստուածածինս իւրն բարէխաւս լիցի ի միւանգամ գալստեանն և ամէն ասողացն. ամէն։

520
ԱՒԵՏԱՐԱՆ
ՁՁԱՐ, № 192 (1636 թ.)

922 Դարձեալ կրկին անգամ աղաչեմք զձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ստացող սբ. Յաւետարանիս, ղհաճի Դօլվաքն և զծնօղսն իւր, որ ըստացաւ զվարդափրքթիթ բուրաստանս և զանխօս մարգարիտն, զքարող բանին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զհրամանն, որ կոչի սբ. Աւետարան, ի հալալ արդեանց և ի յարդար վաստակոց յիշատակ իւր և ծնօղաց իւրոց, հօրն՝ պօղաչի Գրիգորին և մօրն հաճի Հռիփսիմէին, և կողակցին իւր՝ Մարիամին, և որդւոցն՝ Սարգսին և Մուրատին, և փոխեցելոյն առ Քրիստոս Այանին[35], նաև դեռաբոյս մանկան Գրիգորին, և դստերն՝ Հռիփսիմ[է]ին,

[35] Ցուցակի հեղինակը հաղորդում է, որ այդ բառը «քերած և ըրած են յԱյրնին»։

և քրւերցն՝ Շիրինին[36], Այսելիքին և Ղիմաթին, Ղայէփաշին և Մարթա-
923 յին, և այլ ամենայն // արեանառու մերձաւորացն՝ կենդանեաց և հան-
գուցելոց։ Եւ ետ զնա յիշատակ ի քաղաքն յԱնկուրիայ, ի դուռն Ս. Խաչ
յեկեղեցոյն, որ յայժմ կոչի Յեանարտաղ, ի թվականութեանս Հայոց ՌՂԷ
(1648), ի յառաշնորդութեանս մերոյ տէր Մինաս աստուածաբան վար-
դապետին։ Որք հանդիպիք սմա, կարդալով կամ յաւրինակելով, և յա-
ւրևանցի տեսանելով, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք վերոգրեալ
յանուանցն, և Աստուածն ամենայնի, որ առատն է ի տուրս բարեաց,
ձեզ յիշողացդ ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, զի խնամով պահէք և մի՛ հեռացուցանէք
ի դրանէ Ս. Խաչին, իսկ թէ ոք լրբի և յանդգնի, ծախէ և կամ գրաւէ՝
զպատիժն Կայենին առցէ, և զպատուհասն Դաղանայ և զԱրիրոնին ժա-
934 ռանգեսցէ, և զբորոտութիւնն Գեէզի ընդունեսցի։ Այլ // կացցէ և մնասցէ
սբ. Աւետարանս որպէս զզաւակ ի Սիոն և ընտանի յերուսաղէմ, ի վա-
յելումն մանկանցն Սիոնի։

Արդ՝ անկեալ կրկին անգամ աղաչեմք, ով դասք քահանայից և ըն-
թերցողք սբ. Աւետարանիս, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք մահ-
դասի Տովլէթին, որ բազում աշխատանս կրեաց, և պատճառ եղև ըստա-
նալոյ հաճի Դօլվաթն զսբ. Աւետ[ար]անս միով ողորմ[եայ]ու և զնա
յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք մահդասի Տովլէթին և Աստուած
ձեզ ողորմեսցի. ամէն։

521

ՄԱՇՏՈՑ

ՁՁԱԲ, № 209 (ԺԴ—ԺԴ-րդ դդ.)

978 Զվերջին ստացող սբ. գրոցս Աթխցի Բարսեղ վարդապետի եղբօր-
որդի զտէր Թորոս արքեպիսկոպոսն, որ վերստին նորոգել և կազմել
ետ զսա թվին ՌՂԷ (1648), ի վայելումն անձին իւրոյ. և զկնի որտեղ որ
պատշաճիցէ՝ յետ անձման իւրոյ՝ մնասցէ յիշատակ անշնջելի։ Ո՛վ ոք
որ հանդիպի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ
յաղօթս ձեր միով Հայր մեղայիւ, և Աստուած յիշէ զձեզ իւր միւսանգամ
գալստեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

522

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁՂԲ, № 68 (1253 թ.)

ա

474 Աստուած աւրհնէ զՊռատինճ գեղն և զիւր քրիստոսադաւան ժողո-
վուրդն, զռայիս Գրատնն և զիւր որդիքն՝ զՆերսէսն, և զՄովսէսն, և զիւ-
բանց որդիքն. զմղտեսի Հարապետն, զՎարդանն և զիւրեանց որդիքն։ Եւ
Աստուած լուսաւորէ զիւրեանց ննջեցելոցն հոգին, որ միարանեցան ի
սէրն Քրիստոսի, և արտ մի Գ (3) չրփու տեղ, յիշատակ դրին ի դուռն

[36] Ինչպես հաղորդում է Ցուցակի հեղինակն, այս անունն ավելացվել է հետո։

Ս. Կարապետին, և Ս. Սարգսին, և Ս. Տիրամայր Աստուածածնին՝ ի վանքս Խարտիշարոյ, ի յառաջնորդութեան տէր Տիրատուր եպիսկոպոսին և Ստեփանոս վարդապետին և Տիրատուր քահանային։ Յամէն տարի կարդացէք և զայս ժողովուրդս ի Քրիստոս յիշեցէք, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Բ

Յիշեցէք և ասացէք Դանէլին, և Մաւնուտին, և Եքարին, և Մնացականին, և այլ ամենայն եղբարց և քուերց, որ եւոն կամաւոր ողորմութիւն և օգնական եղեն շինութեան Ս. Կարապետի վանիցն. և սբ. Աւետարանս գրաւեալ կայր մօտ յայլազգիս. և սոքա ընձեռելով ինչք զերծուցին ի յայլազգոյն և եդին յիշատակ կրկին ի Ս. Կարապետ. յիշատակ
475 սոցա աւրհնութեամբ եղիցի ամէն։ Թվին // ՌՂԷ (1648) կրկին նորոգեցաւ վանքն, զի շարժմանէն աւերեալ էր և առաջնորդ վանիցն էր տէր Միքայէլն։

523

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՏՎԼ, № 392

Գրիչ՝ Թումայ քահանայ
Վայր՝ Դաշտ

913 Փառք...։ Եւ արդ՝ ես եւոին ի քահանայս և անարժանս Թումաս ի մանկունս եկեղեցւոյ, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն որ ասէ. «Ցոր կոչումն կոչար, ի նմին կացջիր»։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բարեաց վայելչութենէ, որ[ով] առաքինեացն է համարձակութիւն, այլ ի բարեխաւսութիւն մաղթելով զամենայն սուրբս և ի մարդասիրութիւն Աստուծոյ յուսադրել զկործանեալ և զլքեալ անձն իմ եղկելի։

Ս[որ]դ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Թումայ քահանայի և ախմար գրչի։ Եւ անընդունակ գոլով իմ յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ
914 մարդասէր Հոգին Սուրբ, բազում // աշխատասիրեալ իմ ի սմա, գրեցի անարժան ձեռաւք իմովք, յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենօք տառապանաւք և բազում պանդխտութեամբ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ժամանեաց մեզ, ի մեծ թւականիս Հայոց ՌՂԷ (1648), ի կաթողիկոսութեան հայկազան սեռի տեառն Սահականնոսի Ալբամարցոյ։ Զոր տէր Աստուած պահեսցէ անսասան և անսայթաք զաթոռ հայրապետական և զթագաւորական. և յետ աստեաց ելանելոյ ընդ քսանուչորս քահանայիցն և երկոտասան առաքելոց դասակից և պսակակից արասցէ։ Եւ գրեցաւ Աւետարանս և յերկիրս Մոկաց, ի գեաւղս որ Դաշտ կոչի, ընդ հովանեաւ Սուրբն Յակոբա[յ] հայրապետին և Անջողոնց Ս. Աստուածածնին, ի վայելումն պատուական տանուտրոչն Մովսէսին, Քիշխաքունին։

Դարձեալ յիշեցէք զՄովսէսն և Քիշխաքուն, որ ըստացան իւրեանց հալալ վաստակով զսբ. Աւետարանս և փակեցին ի դրունս Ս. Թադէոս

առաքելոյն։ Եւ որ [յանդգնի] ծախելով կամ հեռացնելով կամ գրաւ դնելով՝ նա զպատիժն Կայենին առցէ և զխաչխանողացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄովսէսն և զիւր հայրն՝ Բարուկն *և մօրն՝* Թուրուանդին, *կնոջն՝* Խանադին, *դստերն՝* Թուր[ու]անդին, *որդոյն՝* Յովանիսին, *հօրեղբարն՝* Եզդանին, Անրէվին, *մեծ պապուն՝* Մովսէսին, *փեսին՝* Դիլաբին. *ամէն։*

524

ՄԱՇՏՈՑ

ՋՂՎ, III, № 404

Ստացող՝ Մելքուն
Վայր՝ Կարին

ա

481 *Փառք...։ Արդ՝ ցանկացող եղև այսմ աստուածաշունչ տառիս... զբ-*
482 *նորընծայ տէր* Մել//քուսն *գնեցի զՄաշտոցս հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, հարն իմոյ՝* Կիրակոսին *և մարն իմոյ՝* Մուրվաթին, Նսէֆին, *որ են փոխեալ առ Աստուած. եղբարն իմոյ՝* Վարդուրախին, Մուրատին, Յովսաբին, *և կողայկցին իմոյ՝* Գուլզատին. *զոր տէր Աստուած վայելել տացէ բազմայժամանակաւք հանդերձ եղբարաց։*

Գրեցաւ Մաշտոցս ի ընտիր աւրինակէ, ի քաղաքն Քարնու, *որ այժմ ասի* Ա[ր]զրում, *ընդ հովանեաւ Ս. Ստեփանոս Նախայվկայ եկեղեց-[ւ]ոյ ամենայն սրբոց, ի թվին ՌՂԷ (1648), ի հայրապետութեան Հայոց տեառն* Փիլիպպոսի։

Գրիչ՝ Յակոբ

բ

Արդ՝ երես անկեալ աղաչեմ, ով ոք հանդիպիք սմայ կարդալ[ո]վ կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զանարժան և զանպիտան Յակոբ *գրիչս, որ անուամբս միայն կամ և կոչիմ քահանայ, բայց գործովս՝ յո[յ]ժ աղտեղացեալ իբրև զսատանայ։*

Գործ մի բարու ես չի հանդիպայ,
Որ Աստուծոյ աչաց ելայ,
Վայ ինձ անղա[ր]ձ եմ ես ի մեղաց,
Յորժամ պահանջէ քանքար ձեռաց,
Ես ինչ լինիմ անգ մոլորած։

Դարձ[եալ] *յիշեցէք զԲասսօս իմ, զթոթիս կոկօղս իմ զտէր* Մելքուն։
Դարձեալ յիշեցէք զծնօղս իմ, որ առ Քրիստոս են փոխեալ, և ամենայն արեան մերձաւորս իմ։ Ո՛վ եղբարք, անմեղադիր լերուք գրիս սղալանաց և խոշորութեան, զի յոյժ նեղութեան և ի մեծ վտանգի կայի։ Դարձեալ յիշեցէք Խաչմանուկն, Յեղիսաբեդն, Ամիրոեթն, Կիրակոսն, Վարդպակն. *ամէն։*

525
ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1950 թ., ԺԱ—ԺԲ, № 33

Գրիչ՝ Գալուստ կրօնաւոր

ա

86 Ով եղբայր ընթերցող, աղաչեմ զձեզ, վասն սիրոյն Քրիստոսի Աստուծոյ, ողորմի ասէք սուտանուն կր[օ]նաւոր Գալու[ս]տի, զի յոյժ կարօտ եմ ողորմութեան Աստուծոյ։

բ

Քրիստոս Աստուած, որ մարմնացար ի սբ. կուսէն Մարիամայ, ողորմութիւն և արքայութիւն շնորհեա մեղապարտ գրչիս Գալստի. ամէն։

գ

Յիշեա զմեղաւոր գրիչս, ով սբ. ընթերցող, և դու յիշեալ լինիս Քրիստոսի. ամէն։ Թվին ՌՂԷ (1648)։

526
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1965 թ., Ը—Թ, № 232

126 Յիշատակ է սբ. Երուսաղէմայ, ի ձեռն տէր Աստուածատուր վարդապետին՝ հայրապետին սբ. Երուսաղէմայ. Թվին ՌՂԷ (1648)։

527
ՇԱՐԱԿՆՈՑ

(Rapp. Mac., XXII, № 58 (1602 թ.)

Կազմող՝ Շամլու

Վայր՝ Սեբաստիա

142 Փառք...։ Արդ՝ կազմեցաւ Շարակնոց[ս], ի Սեբաստիայ, Թվին ՌՂԷ (1648), ձեռամբ սուտանուն Շամլուին։ Այլ աղաչեմ զամենեսեանդ, որք լի սրտիւ յիշէք զմեղաւորս ի մաքրափայլ յաղաւթս ձեր. ևս առաւել զտէր Ալիքսանոս արեղան, որ կազմել ետուր ի հալալ ընչիցն, յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն՝ [Յ]ովանէսին, Խաթունին, և այլ արեան մերձաւորացն։ Որք յիշէ Հայր մեղաւի կամ Տէր ողորմեաւ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

528
ԱԻԵՏԱՐԱՆ

ՍՂՀՍ, № 35 (1557 թ.)

Գրիչ՝ Յոհան երէց

77 Թվին ՌՂԷ (1648) ես՝ անարժան Յովան երեցս եկի ի Հալապ վասն ոտիցս տկարութեան համար ի վարպետ Կանանչին մօտն, և այսմն ամի առ Աստուած փոխեցաւ Քրիստոս. իւր հոգուն ողորմի ասացէք, խիստ լաւ վարպետ մարդ էր. և ես շուար մնացի և չի գտա նմին նման։ Եւ եմ բնա-

կան սեբաստացի և եմ Սիմէոն կաթողիկոսին եղբօր որդին, և ինքն է սնուցեր զիս և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն[37]։

529
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՏԵՐԱՎՔ, № 247

Գրիչ՝ Անդրիաս Երէց

386 Արդ՝ գրեցաւ սուտանուն Անդրիաս իրիցիս, սղալական բանիս թողութիւն արէք եղբարք, թիւն ՌՂԷ (1648)[38]։

530
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՔ, № 123

Գրիչ՝ Ստեփանոս Մահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

172 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, հեզահոգի և աստուածասէր /// որ ետ գրել եռափափագ սիրով, յօժար կամօք և սերտ հաւատով ցանկացօղ եղև այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանիս։ Եւ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէին որ ասէ. «Երանի...»։ Վասն այն յուսոյն ետ գրել զտէրունական Աւետարանս առատ տրիւք ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյն, և ի վայելումն մանկանց Սիոնի։ Այլ և յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծընօղաց իւրոց։

բ

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, և անպիտանս, և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս և անիմաստս ի գիրս գրչութեան, և յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ Ստեփաննոս սուտանուն քահանայ, որ անուամբ միայն եմ և ոչ գործով։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց ՌՂԷ (1648), ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի եկեղեցւոյս, որ աստ կան հաւաքեալ նշխարք սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի. և Գէորգեայ զօրավարին, և Անդրէ առաքելոյն, և Անդրէի զօրավարին, և Պանդալեոնի բժշկին և սրբոց Հռիփսիմեանց կուսանացն, որք ընձիւղեն բժշկութիւն հոգւոց և մարմնոց, ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի յառաջնորդութիւն մերոյ աթոռոյ սբ. ուխտիս՝ Ամենափրկչի Յակոբ վարդապետի և իշխանութիւն մերոյ գեօղայքաղաքիս Ջուղայայ պարոն Սարֆրազին, և ի թագաւորութեան Պարսից մանկագոյն շահ Ապասին կարմիր գլխոյ, զոր Տէր...։

37 Այս նույն հիշատակարանը տե՛ս մի այլ ձեռագրում ևս, ՄՍՀՍ, № 45, էջ 91։

38 Այս ձեռագրի երկրորդ գրիչ Սարուխան Շաղպանցու հիշատակարանը տե՛ս 1680 թ. շարքում։

Գ

Զմեղուցեալ Ըստեփանոս *էրէց գծողս յիշեցէք ի Քրիստոս...։*

Ստացող՝ Մաղաքէ

Դ

Եւ արդ՝ ես մեղուցեալ ծառայս Աստուծոյ Մաղաքէն, *և ծ[ն]օղն՝* Յովանէսն, *ստացայ զսր. Աւետարանս, ի հալալ և յարդար վաստակոց իմոց, ի թողութիւն մեղաց և ի փրկութիւն հոգւոյ իմոյ, և ետուս զսա ընծայ և նուէր ի դուռն Ս. Գէորգ եկեղեցւոյ, յիշատակ հոգւոյ իմոյ* Մաղաքիս, *և իմ ծնօղացն՝* Յովանէսին *և մօրն իմոյ՝* Դալապէկուն. *ամէն։*

531

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՏԵՐԱՎՔ, № 248

Գրիչ՝ Աստուածատուր

Ա

387 *Փառք..., որ ետ կարողութիւն սխալամիտ մատնդէտս, մեղսամած և թարմատար* Աստուածատուր *գրչիս հասանել յաւարտ աստուածախօս կտակարանիս, օժանդակութեամբ Ս. Աստուածածնին, ամենաւրհնեալ և գերագով կուսին Մարիամու, գնա կալեալ բարեխօս առ Միածին որդին իւր և Աստուած իմ Յիսուս Քրիստոս։ Աւարտեցաւ քրիստոսահիմն և քաջ նահատակացն մարտիրոսաց հոգիաբուխ սբ. տառս ի յամի Ռ և Ղէ (1648) թուականիս Հայոց, ի յերկիրն*[39]*, և հայրապետութեան տեառն* Փիլիպպոսի, *ի թագաւորութեան Պարսից փոքր շահ* Ապասին, *ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի* Աստուածատուր *զանարժան և թշուառականի, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր պարոն խօճայ* Մատուրին, *և ծնօղացն և ազգականացն...։*

Ըստ նմին օրինակի, ջերմեռանդ սրտիւ և եռափափագ հաւատով ցանկացեալ եղև այսմ հոգեկիր և աստուածազարդ մարտիրոսական տառիս խօջայ Մատուրն, *յիշատակ իւր և վասն փրկութեան հոգւոյ իւրոյ և ամենայն առուարեան մերձաւորացն, հօրն՝* Մկրտչին *և մօրն՝* Յուսաիանին, *և եղբարցն՝* Տիրաքրին *և* Յոհաննիսին, *և կողակցացն՝* Մէրտաքիին *և* Գուլվարդին, *և որդոցն՝* Դիլաքին, Մարիամին *և* Եփրիքային *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս խօճայ Մատուրն, *և զհանգուցեալ առ Քրիստոս կողակիցքն իւր՝* Մէրփաշին *և* Մէրտաքին, *և հանգուցեալ դուստրն իւր՝* Յուղիտայն, *յիշեցէք առ Աստուած, ողորմի ասացէք և Աստուած ողորմի ձեզ. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Մատուրն *և որդիքն իւր՝ պարոն* Դիլաքն, *և* Դիլաքի *որդի* Ստեփանն *և նորաբողբոջ* Ոնանջանն, *որ էառ Բ (2) աստիջան։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհանճարեղ վաճառական և զբարեմիտ պարոն Դիլաքն, *զամուսինն՝* Աննային, *և հանգուցեալ ի Քրիստոս*

[39] *Տեր Ավետիսյանի հաղորդմամբ, երկրի անունը չի գրված և տեղը բաց է թողնված։*

որդիքն իւր՝ զՄկրտումն, զՄնացականն *և* զՍողոմէն *և ամենայն արեան մերձաւորս յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոչայ Ծատուրն *և զքերց որդիքն՝* Գրիգորն *և* Յովակիմն, *և դստերքն՝* Տատումն, Ծաղիկն, Վարդիսաթունն *և* Եղիսաբեթն, *յիշեցէք...*

Զսակաւ նորոգութեան գրի և ծաղկի զՀերասլեանն *և* զԱղամալն *յիշեցէք, զկազմող սորին* զՄէլքումն *ևս յիշեցէք և ձեզ յիշողացդ, և մեզ յիշեցելոցս առ հասարակ Տէրն ողորմի այժմ և անզրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն խոճա Ծատուրն, *և հայրըն իւր՝* զՄկրտիչն, *և մայրն՝* Յուստիանէն, *և եղբարքն՝* զՏիրատուրն *և* զՅովհաննէսն, *և քեռքն իւր՝* զխանդաղաէն, զԹիրանդէն, *և* զՄարիամն, *և զորդոց որդիք սոցա յիշեցէք...*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զօտարն և զվերջին կողակիցն իւր՝ զհամեստ և զամօթխած Գուլվարդն *և զնորաբողբոջ դստերքն իւր՝* զՄարիամն *և* զԵփրիքայն, *զոր ե այլ տէր Աստուած տացէ զհոգունս սրտից իւրեանց...*

Բ

Այլ գրով

Վերջին ստացող գրոց Դիլաքանց *խաւշա* Ծատուրին, *և ամուսնոյն՝* Մէրփաշին, Մէրտաթիկին, Գուլվարդին, *և ծնաւղացն՝* Մկրտչին, Յուստիանին, *որդւոյն՝* Դիլաքին, *և դստերացն՝* Մարիամին, Ուղիդային, Եփրիքային, *և եղբարցն՝* Դիրատուրին, Յովանիսին, Դիլաքի *որդի* Սաեփանոսին, Ոհանջանին, *և կողակցոյն՝* Սէլէլին, *և որդոյն՝* Մարդարէ *և դստերն՝* Ազաթլուէ։

Գրիչ՝ Աղամալ

Գ

388 *Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս* Դիլաքէնց Ծատուրին, *և ծնողացն՝* Մկրտչին։ *Եւ զիս անպիտան վերջին գրիչս* Աղամալ *չար ժառանգ յիշել աղաչեմ մի Հայր մեղայիս...*

532

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏԵՐԱՎՔ, № 290

Գրիչ՝ Ղուկաս երէց

193 *Փառք..., որ ետ կարողութիւն մեղաւոր և անարժան, սուտանուն* Ղուկաս *երեց[իս]։ Յիշեցէք զհայրն իմ՝* Կիրակոս *քահանայն, և զմայրն*
194 *իմ՝* Հռոռումսիմէն, *և զա//մո[ւ]սինն իմ՝* Եղիսաբեթ։ *Ո՛վ եղբարք, ով կարդայ կամ աւրինակէ և մեր մեղացն թողութիւն հայցէ վասն Աստուծոյ, Աստուած ձեր մեղն ոչ յիշէ. ամէն։*

Թվին ՌՂԷ (1648)։

533
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻՆՋ, № 120

Գրիչ՝ Սառայ
Վայր՝ Երուսաղէմ

131 Վասն սիրոյն Քրիստոսի աղաչեմ զձեզ, ո՛վ աղօթասէր եղբարք և քոյրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զյետինս ի գրչաց և զառաջինս ի մեղաւորաց, ոտից հող ե մոխիր սուտանուն Սառայս, որ միայն զանունս ունիմ և ոչ զգործ և Աստուածն ամենայնի, որ առատն է ի տուրս բարեաց, զձեզ յիշողացդ և մի բերան ողորմի ասողացդ մեղաւորիս և իմոցն ամենեցուն և մեզ յիշեցելոցս առ հասարակ՝ պարգևեսցէ զիւր երկնից արքայութիւն և անճառելի ուրախութիւն. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

Ո՛հ, ո՛հ աղաչեմ զձեզ ողորմելի աղախին Սառայս վասն Աստուծոյ սիրոյն, յորժամ ջերմեռանդ սիրով աղօթէք, յիշեցէք... ինձ և ծնողացն իմոց, և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալուստն։

Գրեցաւ թվին ՌՂԷ (1648), ի սբ. քաղաքն Երուսաղէմ[40]։

534
ԼՈՒԵՄՈՒՆՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ
ՋՄՄԱՌ, № 504

Գրիչ՝ Դաւիթ վարդապետ
Վայր՝ Էջմիածին

102 Որ և զիս զանարժանս և զունայնս յամենայն բարեաց զպիտականուն Դաւիթ վարդապետս և զծնողսն իմ՝ զմահտեսի Մանուկն, և զՄարթան, և զՍառան, և զամենայն արեան մերձաւորսն իմ... այլ և զհոգևոր որդեակս իմ զՊողոսն և զՂազարն զփոխեցեալսն առ Քրիստոս, որք աշխատեցան ընդ իս ի գծագրելն...։ Այլ և զՊողոս նախասարկաւագ սբ. Էջմիածնայ, որ զօրինակն շնորհեաց։ Եւ կատարեցաւ սակաւ գիրս ի դուռն սբ. Էջմիածնայ, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, ի թվականիս Հայոց ՌՂԷ (1648)։

535
ՇԱՐԱԿՆՈՑ
ՅՈՎՍԷՆ, № 6

Գրիչ՝ Ալեքսան երէց

ա

19 Զմեղսաներկ և զանառակ գրչակս զԱլեքսան երէցս յիշեցէք հայրք և եղբարք միով Տէր ողորմիւ, աղաչեմ։

---

40 Ինչպես հաղորդում է Յուցակի հեղինակը, սույն ձեռագիրը բաղկացած է վեց մասից և հիշատակարանը վերաբերում է Դ մասին։

Բ

Աւրհնեալ է անուն էին, որ հասոյց զգիրս ի յաւարտ թվին ՌՂԷ (1648)-ին։

Գ

...Աստուած ողորմի Պանատուրին հոգւոյն և իւր կողակցին՝ զՈսթի-
20 անին, միւս կնոջն՝ Նաղլուին, որ շինեաց զեկեղեցին// և եդ իւր [յ]իշատակ տարայի շուրջառ մի, արծաթէ սկի մի, սեղանոյ Բ (2) ծածկոց, գոտի մի, Աստուած ողորմի ասացէք։

536

ԱԻԵՏԱՐԱՆ

Զարմահալ. «Բազմավէպ», 1951 թ., էջ 310, 312

Ա

Զվերջին ստացօղի Աւետարանիս Ջարղալանն, և կողակիցն՝ Թամամն. ամէն։ Դարձեալ յիշեցէք Կիրակոսն և կողակիցն՝ Էմէնփաշէն. ամէն։ Դարձեալ յիշեցէք Սարգիսն, և կողակիցն իւր՝ Գոլդաստէն. ամէն։ Դարձեալ յիշեցէք զՈսկին, և զթոռն իւր՝ տէր Խաչատուրն։

Բ

Սբ. խաչս յիշատակ Ջարղալանին, կողակից Թամամին. թվին ՌՂԷ (1648)։

537

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Վատիկանի գրադարան, № 77

Գրիչ՝ Աղամալ

146 Եւ ես՝ տարապեալ յոգի Աղամալ երես ի գետին աղաչեմ զմանկունսն Սիօնի, սրբրազան քահանայքդ և պատուական ընթերցողքդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով կամ ինչ իւիք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զիս զեղկելի և զփցուն գրիչս Աղամալ հանդերձ ծնօղիւք, զի կարօտ եմ միոյ Տէր ողորմեայի։

Գրեցաւ թվականիս ՌՂԷ (1648)։

538

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՄՍՄՆՍ, № 163

Գրիչ՝ Սաեփանոս Լեհցի

Ա

708 Զստացօղ սորա և զգծօղ տէր Սաեփանոս Լեհցի, աղաչեմ յիշել ի Քրիստոս Յիսուս։

Բ

707 Շնորհօք...։ Ես՝ Ստեփաննոս կրօնաւոր, ի քահանայս ապաշնորհ և եղեռնագործ, յերկրէն Լեհաց, իմ ձեռամբս գծագրեցի զայս Խորհրդատետրս, ի վայելումն անձին իմոյ։ Եւ ետու յարդարել ոսկէնկար ծաղկօք և երփն երփն գունօք, առ ի յիշատակ անշնչելի առաջի Աստուծոյ ծնողացն իմոց փոխեցելոց ի Քրիստոս և եղբարցն ըստ մարմնոյ կենդանեաց...։ Եւ աւարտումն սորա եղև ի թուաբերութեան տումարիս Հայոց ՌՂԷ (1648), ի հայրապետութեան վեհափառ և երիցս երանեալ տեառն Փիլիպպոսին ամենայն արամեան աղդիս վերադիտողին, ընդ հովանեաւ սբ. Էջմիածնին:

Արդ՝ որք հանդիպիք սորին կամ վայելիցէք, աղաչեմ զիս յիշել առաջի Աստուծոյ և զծնօղսն իմ ննջեցեալս. և զհարազատս իմ կենդանիս...։ Ընդ սմին յիշեցէք ի Քրիստոս և զբազմաշնորհ Սիմէօն քաշ բաբունի ծաղկող սորին։ Եւ որք մի անգամ զմեզ յիշման արժանի վարկանիք սբրտի բաղձանօք առաջի// Աստուծոյ և դուք յիշեալ լիջիք...։ 708

1649

539

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՈՅԶՄՎ, № 838

Ստացող՝ Մինաս վարդապետ

ա

417 Փառք...։ // Իսկ ես՝ Մինաս վարդապետ տրուպ և հուսկս ամենայն վարդապետաց, ի բազում ամաց տենչմամբ տոչորեալ էի ուղղաբան Սաղմոսարանի։ Ահա հանդիպեցա ընդիր օրինակի Յովանէս Գառնեցւոյն, յորոյ յիշատակարանն դրած էր այսպէս. «Եւ գնացի, ասէ, ի սբ. ուխտն Հաղբատ և երկրպագեցի սբ. խաչին և սբ. գերեզմանին մեծ և տեսանող Հայոց սբ. վարդապետին Յովանէսի մականուն Սարկաւագ, այն որ զսաղմոսն բազում ճգմամբ ի թարգմանչագիր Սաղմոսարանէ դաղափարեաց»։ Եւ իմ հանդիպեալ նոյն Սաղմոսարանի սբ. վարդապետի, առեալ համբուրեցի և ետու ջերմեռանդ սիրով գրել զսա յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, այլ և ի լուսաւորութիւն և ի պայծառութիւն մանկանց Սիոնի։ Զի վասն այս յուսոյս ետու դրել զսա, որք և հանդիպողք սորա մի տէր ողորմեայիւ յիշման արժանի արասցեն զստացող սորա։

Գրիչ՝ Մելքիսէք երէց
Վայր՝ Բաբերդ

բ

Եւ ես՝ յոգնամեղ և անպիտան, մեղօք խոցեալ և հոգով ակարացեալ, զանարհեստ գրչակս անարժան Մելքիսէք երէցս ըստ տկար և գուզնաքեա[յ] կարողութեան մերոյ գրեցի զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ՝ զբանն, զգիրն, զհարցուկն, զհանգիստն, զտունն, զկէտն և զբստորն։ Եւ այլ ամենայն արուեստն զոր ի նմա կար։ Այլ իմով կարողութեամբ ուղղեցի, որ նոյն օրինակն եղև։ Վասն որոյ համարձակ լիցին ուսանելով և յօրինակելով զսա անդալապէս։ Բայց մի՛ ոք իշխեսցէ ի Հոգոյն Սրբոյ՝ տգիտաբար բան թիւրել. և կամ զդրեալսն չստուգել յօրինակէս, որպէս և ես։ Որ թէպէտ գիրս յոյժ անարուեստ է, այլ զբանն ուղղեցի յոյժ շանիւ և ճգնութեամբ կրկին և երեքկին։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի թուականութեան Հայոց ՌՂԸ (1649), ի գաւառս Խախանաց, որ այժմ կոչի Բաբերդ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, որ է Միջի եկեղեցի քաղաքիս։ Այլ և յերեսս անկեալ աղաչեմ և հայցեմ ի ձէնջ, ո՛վ դասք լոյս երամից հոգևոր հայրք և եղբարք մեր ի

Տէր, որք պատահիք սմա կարդալով կամ յօրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Մինասս քաշ բաբունապետն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց ի վայելումն յանձին իւրոյ և յիշատակ ծնողացն և ամենայն արեանառու մերձաւորացն։ Որ և տէր Աստուած մեր բարիք և խաղաղութեամբ վայելել տացէ և յիշատակ յաւիտենից արասցէ հանդերձ ննջեցելովք իւրովք. ամէն։ Այլ և զիս զյոդնամեղ յետանկեալ փրծուն գրչակս և զթափուրս ամենայն բարեաց և զծնողսն իմ և զուսուցիչքս և այլ ամենայն [աբեան]առու մերձաւորքս իմ։ Յիշեսջիք և լի ւ առատ սրտիւ մեղ մեղուցելոցս՝ Հայր մեղայ մի ասասջիք։ Եւ դուք յիշեալ լիջիք առաջի սոսկալի և ահաւոր բեմի տեառն Աստուծոյ ե գտջիք թողութիւն և ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն։ Եւ արդ՝ հայրք հոգևորք և եղբարք պատուականք, աղաչեմ, աղաչեմ զձեզ և հայցեմ ի սրբութենէ ձերմէ, զի ներումն և թողութիւն արարէք սղխալանաց իմոց և անմեղադիր լերուք խոշորութեան գրիս, զի չափ կարեաց մերոց այո էր։

Գ

Փառք...։ Գրեցաւ սբ. մատեանս, որ է Սաղմոսարան և Աղօթամատոյցս ի մի. տփի ձեռամբ յոգնամեղ գրչի, լոկ անուամբ Մելքիսէթ երիցու, թվարերութեանս Հայոց ՌՂԸ (1649) քաղոց ամսոյ Թ(9) և փետրվարի ԺԳ (13), երեքշաբթի, ի վայելումն Մինասս քաշ բաբունապետին, որ ստացաւ զսա հալալ արդեանցն և արդար վաստակոց իւրոց։ Զոր տէր Աստուած մեր բարիք և խաղաղական կենօք վայելել տացէ և յիշատակ յաւիտենից արասցէ զնա. ամէն։

540

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՄՍՀՍ, № 60

Գրիչ՝ Աբրահամ քահանայ

Վայր՝ Հալապ

130 Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ ոգւոյս, տկար և անարժան անձինս Աբրահամ երիցուս հասանել աւարտ Սաղմոսիս, որ Սաղմոսարան կոչի, ի լաւ և ըստոյգ աւրինակէ, որ կոչի Գառնեցի, անթերի և յոյժ կատարեալ, խորագրաւք և ամենայն որպիսութեամբ զարդարեալ. յամին որ ի ծնընդենէն Քրիստոսի ՌՈՒԸ (1649) և ի Հայոց թվականիս ՌՂԸ (1649), ի հայրապետութեանն Հայոց տէր Ներսէսի սրբազան կաթուղիկոսի և ի թագաւորութեանն Տաճկաց սուլտան Մուհամատ նորընծայ

127 թագաւորին։ Սկսարտեցաւ մարտ // ամսոյ ԻԱ (21), ի մայրաքաղաքս որ կոչի Հալապ։ Արդ՝ եթէ հաճոյ թուեսցէ բարեպաշտութեան ձերում շընորհք Տեառնէ գոհացարուք, և եթէ ոչ՝ ներիցէք իմում տկարութեանս, և երկայնամիտ լերուք, և թողութիւն շնորհեցէք խոշորութեան և սղալանաց գրոյս։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զծնողս իմ զտէր Յոհաննէս քահանայն և զմայրն իմ՝ զիրիցկին Մարեամն, որ մանուկ ման-

կութեամբ փոխեցաւ ի Քրիստոս, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք նոցա. և ինքն ողորմածն և մարդասէրն Աստուած՝ ձեզ ողորմեսցի ի միւսանգամ գալըստեան իւրոյ. ամէն։

541
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 4536

37բ Արդ՝ գրեցս պահպանութեան թուխթս ի թվականութեան Հայոց ՌՂԸ (1649) ամին, մարտ ամսոյ ԻԳ (23), աւրն օգ ուրբաթ, [ի] վայելումն պարտախճի Թուխ[1]։

542
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 4905

Գրիչ՝ Անդրէաս

ա

69ա Զգրիչ սորա Անդրէաս անարժանս յիշեսջիք։

Բ

238ա Աւարտեցաւ թվին ՌՂԸ (1649) ամին, ստացող այսմ վարդապետիթ բուրաստանիս Շոռոթցի Փշրկէնց խոճայ Մարգարէն յիշեցէք ի Քրիստոս Աստուած հանդերձ ծնողօք, որդովք և դստերօք իւրովք. ամէն։

Գ

311ա Զստացող սորա զխոճայ Մարգարէն։

Դ

445ա Պակաս մնալոյն թողութիւն արարէք, յառաջին օրինակն եղծւած ունէր, յետոյ գրէցի, կիսատ մնաց։

Ե

571ա Ո՛վ լուսերամ մանկունք սբ. Սիոնի, որք հանդիպիք այսմ Աստուածաշունչ գրոցս կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորա զՓշրկէնց խոճայ Մարգարէն, և զհայրն իւր՝ զմահդասի Հայրապետն, և զմայրն իւր՝ զՈւսաիանէն, զկողակիցն իւր՝ Նազուխանն, և նորաբողբոջ որդիքն իւր՝ զՍահակն և զՋամարիայն, ևս հանգուցեալ որդիքն իւր՝ զՍուքիասն և զնազարն, և այլ արեան մերձաւորքն իւր, յիշեցէք ի Քրիստոս Աստուած. ամէն։

Աւարտեցաւ թվին ՌՂԸ (1649)։

---

[1] Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողներն այս անունը կարդացել են «Թուխ» (հտ. Ա, էջ 1232)։ Անվան շարունակությունը գտնվելիս է եղել հաջորդ էջում, որը հիմա ընված է։

Զ

624բ Վայ զիս՝ գծողիս,
[Եւ] անարժան ծառայիս,
[Զ?]զարմացայ զայս բանիս,
Զարհուրեցայ աեսլեանիս։
Ով ընթերցող սբ. ճառիս,
Աղաչեցէք վասն զիս,
Սբ. Յոհանու աւետարանչիս,
Եւ սիրելի աշակերտիս։
Արժան առնէ զիս եղկելիս,
Աշխատանօք տառապեալ դրչիս,
Անդրէաս քահանայիս։
Զունիմ դադար այսմ աշխարհիս,
Վայ զիս չմարժանիս,
Ցնորեալ ի մէջ սնոտիս,
Հոդիս սևացեալ ի մէջ մարմնիս։
Ով քահանայ չյուսահատիս,
Թէպէտ տուն մի մեղօք լի ունիս,
Նշան խաչին այլ դու ունիս,
Մեղա ասես դարձեալ կանգնիս[2]։

Է

626բ Փառք...։ Գեղաղէշ և շնորհաշուք յորդիս Սիոնի անդրանիկն, սընեալն սրբութեամբ Շոռոթեցի խօճայ Մարգարէն, սիրող եղեալ սրբազանից Կտակարանաց, գիտելով խոհեամ ընտրութեամբ զսնոտի կենցաղս անհաստատբերուն։ Յաղագս որո[յ] զձեռն յուսոյ ի գործ արկեալ մեծաւ տարփանօք, և ստացաւ զանհամեմատ փարթամութիւնս, և որ պահին մշտնջենապէս տալով ընդ սգալի յոլովութեան գանձուցն և զանչափ յօժարութիւն ըղձից, և ստացաւ զպատուական մարգարիտս զայս ի վարժումն և ի վայելս ներհուն և սրբազան մանկանց Սիոնի, և նորաբոյս ոսկէբողբոջ աստուածատուր, հարազատ, ծիրանածին և բարենշան զաւակացն՝ Սահակին և Զաքարիին և հանգուցեալ որդոցն առ Քրիստոս՝ Սուրիապին և Նազարին, և աստուածապաշտ և երկիւղած և մեծահաւատ ծնողաց իւրոց, պապին՝ Փշրուկ Մարգարին և մամին՝ Խանդին, և հօրն՝ մահդասի Հայրապետին, և մօրն՝ Ուսաիանին, մեծայոյս և երկիւղազարդ ամուսնոյն իւրոյ՝ Նազլուխան[ին][3]

Ծաղկող՝ Յովանէս Շոռոթեցի

Ը

244բ Ծաղկեցաւ տառս Աստուածաշունչ նուաստ, տխրիղձ Յովանէս բանի սպասաւորէ Շոռոթցոյ, որդոյ Վարդան քահանայի։

Թվին ՌՂԸ (1649) օգոստոսի ի Ժ (10)։

---

[2] Ձափածոն վնասված է, ընթերցեցինք դժվարությամբ։

[3] Շարունակությունն ընկած է։

Ստացող՝ Փշրկէնց Մարգարէ

Բ

530ա [Ե]ս՝ Շոռոթցի խաճայ Մարգարէս ստացայ տառս աստուածա-
կան, որ կոչի Աստուածաշունչ, և ետու վախմ յ[իշատակ?] /// որ կո-
չի Ս. Ցակոբ /// յիշատակ և փրկութիւն հոգւոյ իմոյ, նաև ծնողաց իմոյ
Հայրապետին և Ուսպիանին, և պապին իմոյ՝ Մարգարին, և մամին ի-
մոյ՝ Խունծուն, իսկ ամուսնոյն իմոյ՝ Նազլուխանին, և շքեղազարդ որդ-
ոցն իմոց՝ Սահակին և Զաքարիային, և հանգուցեալ որդւոցն իմոց՝
Սուքիասին և Նազարին, և դստերացն իմոց՝ Փաքանին, Անիկամին և
Մարգարտին, և հանգուցեալ եղբօրն իմոյ՝ Էոզարշանին, և քեռց իմոց
Խունծին, Թորոսին և Գուլուն, և հարսներացն՝ Մարիամանցն, և դեռա-
բուսիկ թոռանցն՝ Հայրապետին և այլ ամենայն արեանառու մերձաւո-
ր իմոց. ամէն։ Եւ արդ՝ մի ոք իշխեսցէ հանել զայս /// ի դրանէ սբ.
եկեղեցւոյս. եթէ ոք յանդգնեսցի հանել զսոսա իմոց կամ օտարաց՝ մա-
սն Ցուդայէ և ի Կայենէ առցէ. ամէն։

Թվին ՌՂԸ (1649)։

343

ՅԱՂԱԳՍԵ ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Մշեցի, IV, № 1017

Գրիչ՝ Մելքիսէք երէց
Վայր՝ Բաբերդ

ա

31 Ով երանեալ սբ. հայրք մեր հոգևոր, հանդիպողք սբ. մատենիս,
անմեղադիր լերուք խոշորութեան դրիս և սղալանացս. զի իբրև զծով
տատանեալ և ողորկեալ կայայք ի ձեռս բազմակուլ արեանարբու անօ-
32 րինացն. զի ոչ մի անգամ//միտք իմ հաստատ լինէր ի վերայ գործոյ
արուեստի իմոյ։

Բ

Փառք...։ Որ և բազմասեղ շնորհին և առատ ողորմութեամբն սկսեա-
լ և անճառելի զթութեամբն և անհաս աստուածային խնամովն յանկ
հանեալ աւարտեցաւ սբ. մատեանս, որ է ծածկեալ աստուածային գան-
ձիւն, որ կոչի Աստուածաբանութիւն Գիոնէսիոսի Արիսբագացւոյն, ի գա-
ւառս Խաղդեաց, որ այժմ ասի Բաբերդ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ է Միջի եկեղեցին քաղաքիս, ձեռամբ յոգնամեղ և զհողոյ հաւասար անարհեստ քարտուղարի, վատթարեալ Մելքիսէք երիցւոյ, ի խընդրոյ մեծի բարունոյ, քաջ և արի Մինաս վարդապետի։ Որ և յոգնարաղձ տենչմամբ և շերմեռանդ սիրով, ցանկացեալ եղև աստուածային գանձոյս, որ լի է շնորհօք և եօթնարփեան իմաստութեամբ Հոգւոյն Սրբոյ։ Եւ ստացաւ զսբ. մատեանս ի հալալ և արդար ստացուածոց իւրոյ, ի վայելումն անձին իւրոյ, և ի պայծառութիւն սբ. և կաթուղիկէ եկեղեցւոյ և ի լուսաւորութիւն մանկանց Սիովնի...։

Եւ արդ՝ մեղօք մածեալ և զանարժան ծառայից ծառայս Աստուծոյ. անկեալ առաջի ձեր, ով աստուածարեալ դասք սրբազանից, հայրք և եղբայրք մեր, աղաչեմ, աղաչեմ զձեզ արտասուաթոր աչօք և մոխրամած գիմօք, հայցեմ ի ձէնշ, զի որք հանդիպիք սմա, յիշման արժանի արասշիք զիս և զծնողքս իմ և զուսուցիչքս իմ, և այլ ամենայն արեանառու մերձաւորքս մեր, և խնդրել առ Տէր զթողութիւն յանցանաց մերոց, և որ առատն է ի տուրս բարեաց, շնորհեսցէ թողութիւն ձեզ յիշողացդ և մեղ յիշեցելոցս իւր միւսանգամ գալստեան. ամէն։

Եղև կատարումն սբ. տառիս ի թվաբերութեան Հայոց ՌՂԸ (1649), ի նաւասարդ Ե (5)[4], ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

544

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 11 (մանրաժապավեն, Երևան, № 494)

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

Փառք...[5]։ Արդ՝ աւարտեցաւ սբ. գիրքս, որ կոչի Նարեկ, ձեռամբ մեղսասէր, և անպիտան, և անարժան Արիստակէս երէց գրչի, ի թուականիս մերում ՌՂԸ (1649), սեպտեմբերի Ը (8), օրն շաբաթ, ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպօլիս, ի թաղն Պալաթու, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն՝ Միքայէլի և Գաբրիէլի։ Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, որք հանդիպիք այսմ գրոյս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սբ. աղօթս ձեր զծնողսն և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ եթէ սգալ ինչ գտանէք ի սմա ուղղեցէք, զի կա միտս չի հասանելով և զի խոթնածածուկ գոլով տեղեակ ոչ լինելով. գրոցս զթերին լնուք և ղաւելորդն բառնայք։ Յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով || սբ. հայրք և եղբայրք և մանկուք եկեղեցոյ, որք ընթեռնուք այսմ զանձուս աստուածային մաղթանացս սորի[ն], յիշման արժանի առնել...։

545

ՇԱՐԱԿՆՈՑ

ՊՎՋՁՍ, № 3 (1638 թ.)

13 Ո՛վ մանկունք եկեղեցւոյ, յիշեցէք զստացող սորա զմահդասի Իրաանոս, և զկողակից իւր Շամխաթուն, և զհայր մահտեսի Թումար, և զմայրն՝ զՎարդէն, և զորդիք Թումար և զՄկրտիչն, որ առ Քրիստոս փոխեր են, և զդստերն՝ Սիրայն, որ է հանգուցեալ, Նարկուզ և Ոսկին, և զեղբարքն՝ զՏաւնիկն և զՄիքայէլ։ Դարձեալ յիշեցէք զԻրաանոս մղտեսին, և զհանգուցեալ դուստրն՝ զՆազլուն, որ առին զՇարակնոցիս կէսն հայր և կէս աղջիկն, յիշատակ իւրեանց հոգւոցն, և ծնաւղաց, և յամե-

[4] Նավասարդի 5-ը կլինի 1649 թ. հուլիսի 15-ին։

[5] Ձեռագիրը էջահամար չունի։ Հիշատակարանը գտնվում է ձեռագրի վերջում։

նայն արեան մերձաւորաց կենդանեաց և ննջեցելոց հոգւոյն յիշատակ, և ետին ի դուռն եկեղեցւոյն ի ձեռն /// Ով որ լի բերանով ողորմի ասէ՝ Աստուած ողորմի ի միւսանգամ գալուստն ձեզ և մեզ. ամէն։ Ի թվին ՌՂԸ (1649), Ս. Խաչի տաւնին։ Ս. Խաչն բարեխաւս և աւգնական յամենայն հաւատացելոց. ամէն։

546
ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ
Երևան, № 1203 (1449 թ.)

ա պահ-պա-նակ

Թվին ՌՂԹ (1649) նաւասարդի է (7), հոկտեմբերի ԺԶ (16)[6]*, Գամաղիէլս և Եղիայն ճորտ մտան Ս. Կարապետ։*

547
ԺՈՂՈՎԱԾՈՅ
Մշեցի, V, № 1555

Գրիչ՝ Դաւիթ աբեղայ
Վայր՝ Բաղիշ նահանգ

ա

321 *Ով հարք և եղբարք մեր, յորժամ կարդայք և կամ օգտիք ինչ ի սմանէ, եթէ մինչ կենդանի եմ և թէ մեռեալ, վասն Աստուծոյ աղաչել զնա զի թողցէ զբազմամեղս ի պարտուց, զԴաւիթ տրուպս, զի և ձեզ թողցէ Հայրն երկնաւոր զպարտիս ձեր։*

բ

Նաև բազում թախանձանօք և կողկողագին պաղատանօք, մոխրամած դիմօք և բեկեալ անձամբ, խաւարեալս մեղօք և յածեալ ընդ չարեաւք, Դաւիթ սուտանուն ծառայ Քրիստոսի և ձեր, բազում հառաչմամբ աղաչեմ՝ զմանկունս նոր Սիովնի, զի յորժամ ընթեռնուք զսա և օգտիք ինչ ի սմանէ, և տեսանէք զծրեալ տրակս, բոլորով սրտիւ Աստուած ողորմի ասացէք ինձ անարժանիս և ծնողաց իմոց։ զի յիշատակ ոչ ունիմ մարմնական որ յիշէ, այլ յոյս զԱստուած ունիմ նաև զձեզ որ կարդայք, թէ ում որ հանդիպի՝ Աստուած բարով վայելել տա, զի գիրքն ուր որ զնա յիշատ[ակ] է հոգոյ։ Յիշեսջիք զիս զտրուպս, և այն որ ի սկզբանէ բարին է և տուող ողորմութեան, քաղցր ակամբ հայեսցի ի ձեզ, և դասեսցէ ընդ սուրբս իւր։ Նաև զյետնեալս, որ գծեցի զայս գիրքս փոքր ի շատէ ըստ կարի մերում, որ կոչի Միխայէլ։ Անմեղադիր լերուք զի զօրինակն փութով կու տանէին, և ես փութով գրեցի, ի թուին Հայոց ՌՂԸ (1649)։

գ

Ով եղբայր, զսորա շարադրութիւն գնա գիտ ի յետին տեսերն, որ ըստ գրօնիկոնի գաւազանօք ղրաւեալ է Սամուէլ, և տես կարգաւ զկարգս

[6] *Այսինքն՝ 1649 թ. սեպտեմբերի 16-ին։*

թագաւորաց և զքանի ամք Տեառն մերոյ, որ զաւելորդն բարձեր է և զամենայն պիտանի բան գրեր, կարգաւ ի Քրիստոսէ սկսեալ, հռովմայեցոց թագաւոր Օգոստոս, հրէից Հերովդէս, պարսից Արշաւիր, Հայոց և Ասորոց Արգար. տես և դիւրաւ հասանես ի վերա իրացն եղելոց։ Եւ զմեղաւոր Դաւիթ գրիչս յիշեա, զի նորա համար կու տա[ն]ջիմ գրել զինչ որ տեսանեմ, որ ողորմի տայք և մեղացս խնդրել զթողութիւն։ Թէ ում որ հանդիպի այս գրքիկս, Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

Առաջակայս Բուզանդ է, որ է Փաւստոս։

Դ

Սբ. հայրապետդ Ներսէս, բարեխօսեա վասն ամենայն աշխարհիս
312 Հայոց, մանաւանդ Դաւթի//մեղապարտի, որ բիւրապատիկ մեղուցեալ եմ և անցեալ զպատիւրանաւն Աստուծոյ, աղաչեա զի հաշտեսցի ընդ մեղօք զառածեալ աբեղայի, Սբ. Հայր հայկազնի։

Ե

Փառք...։ Արդ՝ աւարտեցաւ սբ. գիրքս որ կոչի Միխայէլ և փոքր ինչ ծաղկաքաղ գաւազանագիրք, որ զամենայն ինչ յայտնէ կարգաւ. նաև Բիւզանդ կոչեցեալ պատմագիր և Աշխարհացոյց, եդեալ զսոսա ի միում տփի, ձեռամբ բազմամեղ տրուպ Դաւիթ հաբեղայի, որ անարժանս եմ ի ման[կ]ունս եկեղեցւոյ։ Սնեալ առ ոտս պատուական և հեզահոգի, քաղցր և լի ամենայն բարութեամբ Մեսրովպ վարդապետի, աշակերտի Հայոց տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, որ է այժ[մ] անուանի ի մէջ երկոտասան ազգ խաչապաշտից և վեհ քան զնոսա։ Որ և խնդրեմ ի բարերար Տեառնէ մերմէ, զի պահեսցէ զսբ. աթոռն պայծառ հանդերձ Բ (2) մեծամեծ լուսաւրօք, որ է կաթողիկոսն և Յակոբ վարդապետն. ամէն։

Եւ ես տրուպ գոլով շառաւիղեալ յարմատոյ սոցա, հոգևոր որդի Մեսրովպ վարդապետի, որ բազում աշխատութեամբ երկնեաց զբանս հոգևոր ծնանելով ի սիրտս մթին զբանս յորդաբուղխ, զՀին և զՆոր Կտակարանացն, նաև ուսոյց ինձ գիր։ Թէպէտ ես անարժան եմ և յետնեալ, միշտ ուսանիմ և երբէք ի գիտութիւնն ճշմարտութեան ոչ հասանեմ, այլ կեամ հակամիտեալ յերկրի, զսերմն առեալ՝ փշով հեղձուցանեմ, և հանապազ պշնում մտօք ի ցանկութիւն մարմնոյ, և ի ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց, որ ոչ է յԱստուծոյ այլ յաշխարհէ։ [Պաղա]տանօք խնդրեմ ոչ յերկարելով, այլ միայն զայս թէ աղօթիւք հոր իմոյ ողորմեայ ինձ։

Արդ՝ ծրեցի զսա ի թվին Հայոց ՌՂԸ (1649), դեկտեմբերի յԹ (9), ի յառաջնորդութեան Բալիշու նահանգին Մեսրովպ հայրապետի և աստուածաբան վարդապետի, քաշ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, ոչ միայն յարհեստ գրչութեան և ծաղկարարութեան, այլ ճոխ ամենայնիւ, լցեալ գիտնականութեամբ, ճշմարիտ քարոզող և դասասաց, հեզ և հանդարտ, սրբասնունդ և մաքրամիտ, աւրհնեալ ձեռամբ տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և շնորհեալ եպիսկոպոս Բալիշու, և տուեալ գաւազան իշխանութեան վարդապետական, որ եկեալ նստեալ յաթոռ իւր հովուել զբհօտ Տեառն։

Եւ ես հէքս և թշուառականս առի ձեռնադրութիւն ի նմանէ։ Եւ [ահա?] ԲԺ (12)-ան ամ է որ տեսուչ է մեզ որդիեցելոցս։ [Արդ?] խընդրեմք յապենիազ Տեառնէ զի յերկարեաց ա[րաս]ցէ, և յետ աստեաց ճեպելոյ ընդ երջանկա[յիշատակ] սբ. հայրապետացն դասակից առնէ յաւիտենից. ա[մէն]։

548
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՅՁՎՍ, I, № 65

Գրիչ՝ Ստեփաննոս երէց
Վայր՝ Ստամպալ

306 Արդ՝ գրեցաւ սբ. երգարանս Դաւթի մարգարէին, ի քաղաքն Ըստամպալ, ի դուռն Ս. Գէորգայ զաւրավարին, որ Սուլու մանասաիր ասի, թվին ՌՂԹ (1649) հոգտեմբեր ամսոյ ԺԸ (18), աւրն շաբաթ, ձեռամբ բաղմամեղ և անարհեստ գրչի Ըստեփաննոս երիցու. որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս և զծնաւղս իմ և զուսուցիչն իմ և զամենայն արեան մերձաւորս իմ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։ Կատարողք աղաչանաց մերոց աւրհնիւք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա, նա[և] ի մէնջ. ամէն։

549
ԱՒԵՏԱՐԱՆ
ՅՁՍԳ, № 63

50 Յիշատակ է Աւետարանս Թանիկին, և իւր կողակցին՝ Սառային, և իւր եղբօրն՝ Գուլազին, որք ետուն զայս Աւետարանս և զմի Մաշտոց յիշատակ իւրեանց հոգւոյն ի դուռն Ս. Նշանիս...։ Գրեցաւ թվին ՌՂԹ (1649), դեկտեմբերի Ը (8), յառաջնորդութեան Ա[ր]զրումցի Սարգիս վարդապետի։

550
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՅՁՆԿԱ, № 30

Գրիչ՝ Տօնապետ դպիր
Վայր՝ Զմիւռ

77 Փառք..., որ ետուր կարողութիւն ապիկար յանձին իմոյ և չընչիչ ծառայի քո ի վճար դրոցս և շնորհեցեր ինձ զաւարտ և զկատարումն առաջարկութեան իմո[յ] աջողութեամբ...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի ծովահայեաց քաղաքն ի Զմիւռ, ձեռամբ անարժան Տօնապետ դպրիս, թվին ՌՂԹ (1649) դեկտեմբերի ԻԳ (23)...։

551
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 297

Գրիչ՝ Շամլու
Վայր՝ Սեբաստիայ

ա

286բ Փառք...։ Արդ՝ դրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թվականութիւնս Հայոց ՌՂԸ (1649) ամին, ի քաղաքն Սեբասպիայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Սարգսին, որ տուեալ են կարողութիւն տկար անձին իմոյ դրել զսբ. Աւետարանս ի լաւ և ընտիր յաւրինակէ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ և աղերսանաւք մաղթեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով անմեղադիր լերուք, զի կարիք մեր այս չափ է։ Եւ յիշեսջիք զանպիտան և զանարժան, մեղապարտ գրիչս՝ զսուտանուն Շամլուս ի սբ. յաղաւթս ձեր, և ամենայն [յ]անցանաց իմոց ներումն և թողութիւն խնդրեցէք, և Քրիստոս Աստուած զձեր մեղքն ջնջէ և իւր արքայութեանն արժանի արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեսջիք զստացաւղն իմ՝ զՆերսէս աբեղայն ի սբ. յաղաւթս ձեր. և որ յիշէ՝ յիշեալ լիցի առաջի Աստուծոյ. ամէն։

բ

287ա Ի ամս հազար Հայոց թվական,
Նսուն և ութ (1649) սկսեալ նոր ամ,
Յաւարտեցաւ բանս տէրունեան,
Որ յորջորջի Աւետարան։
. . . .[7]։

552
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1096

Գրիչ՝ Պետրոս երէց
Վայր՝ Գիմիշխան

192ա Եւ թիւ Հայոց մեր հայկազան ՌՂԸ[8] (1649) թվականին։
Գրեցի տումարս ես՝ Պետրոս էրէցս Գիմիշխանան։
Գեղեցիկ և ընտիր, որք ընթեռնուն և հասկանան։
Յորժամ կարդաս հմուտ լինաս, միտքդ պահէ դու զամենայն։
Պարտ է քեզ պատրաստ կենաս, որ նահանջ լինի տարին յայն։
Մի՛ սխալեսցես դու զպասն և զուտիսն ընդ միմեան։
Նահանջի տարին թէ վևն լինի՝ վև բանեցոյ մինչ գարուն, գարնանմուտ սէով մուտ։ Նահանջի տարին զինչ գիր լինի, Ա (1) գիր յետ տուր անխաբան։

---

[7] Այնուհետև գովք Աւետարանի։

[8] Մատենադարանի ձեռագրաց ցուցակում ՌՂԸ (1649) տարեթիվը համարված է եղծված «և գրված ՌԺԸ» (հտ. Ա, էջ 474)։

553

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3145

Գրիչ՝ Գրիգոր Համազասպեանց

Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

240բ Փառք...։ Գրեցաւ քրիստոսական մատեանս այս ի թուականիս Հայոց ՌՂԸ (1649), ի ստոյգ և ի վճիտ օրինակէ, յաշխարհալոյս վարդապետին, մեծ արքեպիսկոպոսին տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, յերկիրս Սպանեան և գեաւղս, որ կոչի Ջուղայ, ի դուռն Ս. Առաքելոյն Թովմայի, ի հայրապետութեան տեառն Փիղիպոս կաթողիկոսի, և առաջնորդութեան մերոյս ազգի Դաւիթ հեզահոգի քաջ հռէտոր և ուղղիչ վարդապետի, և թագաւորութեան Պարսից ազգի Փոքր շահ Ապասի, և ի պարոնութեան Հայոց խոջայ Սարֆրազին, և ձեռամբ Գրիգոր ապիրատի, որ ազգաւ Համազասպեանց լսի, և ի խնդրոյ բարեմիտ, աստուածասէր կնոջ Մարիանոսի, և պատճառանաւ պերճացեալ անուամբ վարուք և գործօք Առաքել քահանայի, որ զբարին յորդորելով եղև պատճառ և առիթ սորին ի յայտ ածելոյն, զոր բարեաց բաշխօղն զինքն ի յարքայութիւնն հրաւիրեսցէ. ամէն։

բ

241ա Դարձեալ յիշեցէք զստացօղ սբ. Աւետարանիս զՄարիանոսն, որ ընտացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց ի յիշատակ յաւիտենական իւրն և ամենայն աբեանառուացն, հօրն իւրոյ՝ խոջայ մահդասի Թաղվէրտէ և մօրն իւրոյ՝ Նունիկին, և եղբարցն իւրոց՝ խոջայ Սուրիասին, և պարոն Խաչիկին, և պարոն Գաւիքին և պարոն Առաքելին, և քեռն իւրոյ՝ մահդասի Նարինջին, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։

Ընդ նմին աղաչեմ յիշել զծնողսն իմ՝ զտէր Մարգարէն և զմահդասի Խանաղէն. ամէն։

գ

Դարձեալ [յիշեցէք] զՄարիանոսն, [և որդին] իւր [պա]րոն խոջայ Գորգին, և զորդիսն պարոն խոջայ Գորգէ՝ զՊետրոսն, և զՊողոսն, զոր տէր Աստուած յերկար կենաց անփորձ պահեսցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զպարոն Խաչիկն և զհանգուցեալ որդին իւր՝ զՍիմէոնն, զոր Քրիստոս իւր սբ. տեսոյն արժանի արասցէ. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զՄարիանոսն և զհանգուցեալ զորդիսն իւր՝ զՄիքայէլն, և զՅոհաննէսն, և զՆուբարն. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք...։

դ

184ա Տէր Աստուած... ողորմեա ստացողի սբ. Աւետարանիս Մարիանոսին և իւր առնն՝ Մուրատխանին, և իւրեանց որդւոցն՝ Մուրէլին, Յոհաննիսին և Նուբարին։ Դարձեալ յիշեա Տէր և ողորմեա Մարիանոսին, և իւր ծնաւղացն՝ Թաղվէրտէ և Նունիկին, և իւր եղբարցն՝ խաւջայ Խաչիկին և պարոն Առաքելին։ Նաև ընդ նմին բազմամեղ անարհեստ գծողի սբ.

Աւետարանիս Գրիգոր *ապիրատի, և հօրն իմոյ՝* Մարգարայ *քահանայի և մօրն իմոյ՝ մահղասի* Խանաղային:

Ե

240ա *Զեռամբ* Գրիգոր *ապիրատի։*

554

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 4546

Գրիչ՝ Մանկասար
Վայր՝ Շոռոթ

ա

6բ *Որ ողորմի ստացողի գրոցս* Փշրկէնց *խոջայ* Մարգարին, *և կողակցին՝* Նազլուխանին, *և որդոցն՝* Սահակին *և* Զաքարիային, *և հանգուցեալ* Սուքիասին *և* Մանկասար *գծողին։*

Բ

22ա *Որ ողորմի ստացողի դրոցս* Փշրկէնց *խոջայ* Մարգարին *և քրեերցն՝* Խաչանուն, Թորոսին, *և* Գուլումին, *և* Մանկասար *գրչի։*

Գ

365բ *Փառք..., որ ետ կարողութիւն սխալամիտ, և մատնադէտ, և մեղսամած գրչի՝* Մանկասարի *յանկ հանել զաստուածախաւս կտակարանս, աւժանդակութեամբ սբ. Աստուածածնին...։*

Աւարտեցաւ քրիստոսահիմն... սբ. տառիս ի թուականութեանս Հայոց ՌՂԸ (1649), ի յերկիրն Ծրնչակայ, *ի դեաւղաքաղաքն, որ կոչի* Շոռոթ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին և Ս. Յակոբ հայրապետիս։ Ի հայրապետութեանն* Էջմիածնի *տեառն* Փիլիպպոսի *և արհիեպիսկոպոսն տէր* Եսայի *Ս. Կարապետին, ի խնդրոյ բարեմիտ և առատաձեռն* Փշրկէնց *խոջայ* Մարգարէն, *որ ետ գրել սբ. տառս յիշատակ իւր և կողակցին իւրոյ՝* Նազլուխանին, *և որդոցն՝* Սահակին, Զաքարիային *և* Սուքիասին, *և ծնողացն՝* Հայրապետին *և* Յուստիանին, *և եղբօրն՝ Ծտդարչին և*[9]

555

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Երևան, № 4631

Գրիչ՝ Յովանէս արեղայ
Վայր՝ Ղարասու

ա

291ա *Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ, մեղաւք լցեալ անարժան գրչիս յանգ և յաւարտ հասանել այս սբ. գրոցս, որ կոչի կանոնք։*

---

[9] *Շարունակությունն ընկած է։*

Արդ՝ ցանկացող եղեալ այսմ սբ. կանոնքիս այրս աստուածասէր մահղեսի Օգսէնդն և ետ գրել յիշատակ իւր ծնողացն հոգւոյն՝ մահղեսի Մոզային և մաւրն՝ Շէնրիպիէային, և որդւոցն՝ Յոհանէսին, Մոզային, դստերն՝ Շանզաապային և ամենայն զարմից նորին. և եդ յիշատակ ի դուռն Ս. Օգսէնդին, և իւր նախնեացն հոգւոյն։ Ոչ ոք չունի իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ կամ եկեղեցոյս ի դուրս հանելոյ։ Եթե ոք յանգգնի լրբաբար զհրամայեալսն ոչ կատարեսցէ՝ զպատիժն Կայենի առցէ և զանէծքն Յուդայի...։

Գրեցաւ և կազմեցաւ ձեռամբ Յովանէս աբեղի, ի թվականիս մերում ՌՂ և Ը (1649)-ին, ի յերկիրս Հոնաց, որ այժմ կոչի Ղրիմ, ի գիւղաքաղաքիս Ղարասու, ընդ հովանեաւ Ս. Օգսէնդ եկեղեցւոյս։

291բ Յիշեսցիք զհոգևոր ծնողքն իմ՝ տէր Ալէքսանոս // քահանայն և տէր Յովանէս քահանայն, զհայրն իմ՝ զՅակոբն և զմայրն իմ՝ զԱնապիքայ տիկինն, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ հանդերձ ծնողիւք և ազգայնաւք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

Բ

290բ Գրեցի ըղսա յանձն եղկելի,
Զի ոչ ունիմ գործս բարի,
Բամեալ և ոչ արհեստ գրչի,
Այլ լոկ անուամբ Յովանէս դրպրի։
Զլինել հայցեմ մեղադրելի,
Թէ և սրղալ ինչ աստ գրտցի,
Զիմ գրեալ աշխատելի,
Որ ոչ կայ յիս յիմաստ բանի։
Նայև գործովք յոյժ եղկելի,
Եւ անպիտան ամենայնի,
Ընդ որս և դէմ եղեալ յերկրի,
Երկիր պագեմ հանդիպողի[10]։

Գ

281ա Յիշեսցիք զծնաւղքն իմ՝ զմահղեսի տէր Ալիքսանոսն և զհայրն իմ՝ զՅակոբ, որ փոխեցան ի Քրիստոս և դուք յիշեալ [լիջիք]։

556

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5568 (1426 թ.)

Կազմող՝ Աւետիս քահանայ

ա

88բ Կազմեցաւ սայ ձեռամբ սուտանուն Աւետի[ս] քահանայի. Աստուած ողորմի ասացէք սմայ և ծնաւղաց սորա։ Թուականիս ՌՂԸ (1649)։

Յիշատակ հոգոյ տէր Սահակին, որ ետ վերբստին նորոգել և լնուլ զթերութիւն սորա, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն՝

10 Այսպես ևս չորս քառյակ։

Բաղդայսարին և մարն՝ Ինախին, և կողակցին՝ Խանաղին, և որդոցն՝ Աբրահամին և Սարգ[ս]ին, և դստերացն՝ Խոռոմին, Բունարին, յիշեցէք...։

Բ

118բ Զվեր[ջ]ին ստացաւղ սբ. տառիս զտէր Սահակն, որ եւ[11] վերըստին նորոգել զսա, ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց Բաղդասարին և Ինախին, և որդւոցն՝ Աբրահամին, Սարգսին, դստերացն՝ Խոռոմին, Բունարին, կողակցոյն՝ Խանաղին. Մխիթարին, Խլղաթին, յիշեցէք...։

557

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 6215

Գրիչ՝ Պարսամ երէց
Վայր՝ Կաֆայ

ա

18ա Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս ստացողի գրոցս Սրսցի Պուտախին և կենակցին՝ Ալքնին, եղբարցն՝ Կիրակոսին և մահդասի Խոսոտավէրտէ, և զաւակացն՝ Ալէքսիանոսին և մահդասի Եփրիանոսին, մահդասի Մարիամին և Լիպարտին, մահդասի Լաշինին և փցուն գրչի Պարսամ սարկաւագի։

Բ

517բ Փառք...։ // ...Արդ՝ ստացաւ զգիրքս պիտանի մահդեսի Լաշինն, որ կոչի Յայսմաւուրք, զոր կարգեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Տեղեցի կոչեցեալ, բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցւոյ, զի անաշխատ առաշնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարւոյն։

Այլ աղաչեմ զդասս քրիստոնէից, մանաւանդ զեշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սոփերիս, յիշեսջիք զստացաւդ սորա առաջի զենլոյն Քրիստոսի զմահդասի խոճայ Լաշինն, որ ստացեալ զսա եդ յիշատակ ի սբ. էջմիածին, վասն հոգւոյ ծնաւղացն խոճայ Պուտախին և Ալքընին, և հարեղբարցն՝ Կիրակոսին և Խուտավէրտէ, և եղբարցն՝ Ալեքսիանոսին և Եփրիանոսին, և իւր կենակցին՝ Լատիֆին, և որդւոյն՝ Ղազար չալապուն և զամենայն արեանառու մերձաւորսն իւր...։

Արդ՝ գրեցաւ սա յամի թուաբերութեան հայկազան սեռի ՌՂԸ (1649)
518ա ամի, ձեռամբ անիմաստ // և թարմատար... անարհեստ գրչի Պարսամ երիցու, աղաչեմ զեշմարիտ ծառայքդ Աստուծոյ, յիշեսջիք և զմեզ առ Տէր սեռն սիրով ի միտս բարիս, նաև զմարմնոյ ծնաւղսն իմ՝ զտէր Յակոբն և զմայրն իմ, զեղբարսն իմ, և զքորքն իմ զկենդանիսն և զհանգուցեալսն։

11 Ձեռագրում «եւ» ձևով։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս զհոգևոր որդեակն իմ՝ զԱսսաւածաւուր գրիչն, զծաղկաւղ յայսմ հոգեզարդ բուրաստանիս, խնդրեմ և հայցեմ ի յապենիազ արարչէն, որ զիւր երախտեացն փոխարէն զերկնից արքայութիւնն ժառանգել...։ Հուսկ յետոյ իբրև անարգի միոջ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զկազմաւղ սրբոյ սոփերիս զԽասպէկ մեղաւք զառածեալն, որով թողցէ տէր Աստուած զյանցանս նորա բազում։

Իսկ արդ՝ եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին։

Դարձեալ յիշեսջիք ի Տէր զերախտաւոր ծնաւղ զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիա քահանայն։

Արդ՝ գրեցաւ սա յառաջնորդութեան տեառն Փիլիպպոսի ամենայն Հայոց կաթուղիկոսի, և յարհիական եպիսկոպոսութեան յայսմ նահանգի տէր Գրիգոր եպիսկոպոսի, և աւագերիցութեանն Սարգիս քահանայի և Հարապետ քահանայի, որոց թողցէ տէր Աստուած զյանցանս նոցա...։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս զթղթիս կոկողքն և զաշխատողքն ի սմա սեռն սիրով...։

Դարձեալ աղաչեմ զձեզ կրկին պաղատանաւք... յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սբ. գրոցս զմահդասի խոճա Լաչինն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից և յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրունս սբ. էջմիածնայ, յիշատակ անջնջելի, ազատ, ազատ, ոչ ոք չունի իշխանութիւն ծախելոյ և կամ գրաւելոյ...։

558
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 6431

Ստացող՝ Գայիանէ

ա

139բ Փառք...։ Յիշեցէք [մաքր]ափայլ և յերկնաթրոիչ սբ. յաղօթս ձեր, զսրբամիտ և ճգնազգաստ, հեզահոգի և բարեմիտ... զապաշխարող Գայիանէ, և հանգուցեան ծընօղացն իմոյ՝ զՔամալն, զնագումն, և եղբայրն իմ՝ Բաղասարն և իւր կողակից Մարջումն, և որդոցն իւրոյ՝ Աստուածատուրն, Պետրոսն և նորընծայ Գալուստն, և դստերացն իւրոյ՝ Սառէն և Նագումն և այլ ամենայն արեան մերձաւորքն իւր...։ Որ ետ գրրել յօժար սրտիւ և ջերմեռանդ, մեծաւ փափագմամբ, յիշատակ հոգւոյն իմոյ, ի հալալ ընչից, խորհուրդ եկեղեցւոյ և այլ ինչ կարգ, զոր սահմանեալ կայ սբ. հայրապետաց ի կարգ քրիստոնէական հաւատոյ ամենայնի. ամէն։

Դարձեալ մանաւանդ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր ըզկոյսն Գայիանէ զապաշխարողն և զեղբայրն իւր՝ զքաջ և ըաբունի, զսրբասընեալ կոյ-
140ա սակրրոն և քաջ քարոզող... // հեզահոգի զտէր Միքայէլ վարդապետն և հանդո[ւցե]ալն առ Քրիստոս հօրեղբայրն՝ զտէր Պետրոս եպիս[կոպոսն] և յառաջ և յետ հանգուցեալքն առ Քրիստոս, դատաստանն նոցա Քրիստոս ողորմութեամբ քաւէ և զհոգի Գայիանին և ծնօղացն իւրոց

և քրւերացն՝ Սամէլիին, Գուլիանդէն, Օղլանին, Եքարին, Սառին և այլ ամենայն արեան մերձաւորացն...։

Քրիստոս Աստուած քո առատ ողորմութեամբն յիշեա զկոյսակ[ը]օն ապաշխարող Գայիանի հոգին, որ բաղում աղաչանօք ետ գրել զսա՝ ծաղկաքաղ աստուածային բիւրաստանիցն։ Որք հան[դի]պիք կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք... և դուք յիշեալ լիջիք ի միւս յանգամ դալըստեանն. ամէն։ Աղաչեմ զձեզ, ո՛վ քահանայք և մանկունք եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա անմեղադիր լերուք զխոշոր սխալանաց մերոց, զի կա՞ր մեր այս չափս էր։

Թվին ՌՂԸ (1649)։

Բ

140բ Դարձեալ յիշեցէք ըստացող սբ. զրոյս զկուսակրօ[ն] /// Քրիստոսի հարսնացեալ զսրբամիտ Թամ[ամ]), աւազանին անունն Գայիանայ է, և մեք Թամամ կու ասեմք։ Զսա ետ գրել յիշատակ հոգւոյ իւրոյ և ծընօղացն իւրոյ, որ են փոխեցեալ առ Քրիստոս, յիշեցէք...։

Արդ՝ ես Թամամս և Բաղտասարս այս Մաշտոցս տուինք ի ձեռն տէր Գրիգորին, որ է ըսպասաւոր Ս. Աստուածածնին, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի թվին ՌՂԸ (1649), ախ հոգի։

Գ

139ա Ա՜խ զանարժանս ամենայնի,
Եւ զձանձրացեալս ի մէջ վըշտի,
Եւ աղաչեմք զձեզ տեսողի,
Ցորժամ դրեալս առ ձեզ խօսի։
Ա՜խ յիշման առնէք զիս արժանի,
Եւ յիշողաց ամենայնի,
Առ հասարակ ողորմեսցի. ամէն։

Ո՛վ ամենամաքուր տաճարք Աստուծոյ և բընակարան գառն Աստուծոյ, սբ. սիօ[ն?]ք այսմ վայրի, ի միոյ յիշման արժան արասջիք ամէնամէզ և թշուառ սբջսբջլզբն[12] գծող սորա, անմեղադիր լերուք, քանզի գիրս գրչի աւեր է և անվարժ։

Գ

103բ—104ա Ներքևի լուսանցքում Ես՝ ջբշբվ[13] եմ անարժան,
Գլուխ մեղաց եմ զանազան,
Դուք կարդացողք էք, այլ և արժան,
Զիս յիշեցէք բանիւ միայն։

Ե

7բ Ցիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զտէր Սարգիս էրէցն։

---

[12] և [13] Գրչի անունն է, ծածկագիր։ Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողներն ընթերցել են «Պապաս» (հտ. Բ, էջ 318), նկատի ունենալով երկրորդ ծածկագիրը, դա կասկածելի է, որովհետև ծածկագրերից առաջինն ունի ինը տառ, մինչդեռ ընթերցումը հինգ տառ է։ Չկարողացանք ընթերցել։

Գ

Յիշեցէք ի Քրիստոս զքաշ և արի, սրբբասընունդ և սրբբասընեալ
39բ ..... զտէր Բարսեղ քահանայն, որ կամակից եղաւ և կարի աւգնական, ցաւակից, որ էտ գրել վասն խընդրոյ զսրբբակրօն Գայիանին, տէր Աստուած իւրեան աշխատացրն վարձրն Քրիստոս հատուցանէ և զինքն հոգով զարգարեսցէ ի միւս յանգամ գալըստեանն. ամէն. յիշեցէք...։

Թվին ՌՂԸ (1649)։

Է

77բ—78ա Ի՛վ սրբակաց քահանայք և եղբայրք, անմեղադիր լերուք սխալութեան
Ներքևի լուսանցքում խոշար գրոյս, քանզի յօրինակն սխալ շատ կայր։

Ը

7բ—88ա Ներքևի լուսանցքում

Անցանէ մեծութիւն ու փառք աշխարհի,
Աւեր ու քակտի շինուածք տաճարի,
Բայց դու զայս գիտացիր, թէ յինչ կու դատիս,
Յերբ թողոյս ի յաւտարաց, ի հող մտանիս։
Մի՛ դատիր. ո՛հ։

559

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6783

Գրիչ՝ Յակոբ

166ա Զնուաստ Յակոբ գծօղս յիշեցէք ի Քրիստոս, և զհայրն իմ՝ զՍտեփանոս քահանայն, և զմայրն իմ՝ զԱննայն, և զեղբայրքն իմ և զքուերքն իմ։ Եւ Քրիստոս զյիշողդ, իւր արքայութեանն արժանի արասցէ. ամէն։

Գրեցաւ ի թվին ՌՂԸ (1649), որ ես գնացի Հընդսատան, Աւետարանս մնաց անկատար[14]։

560

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 6802

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սուրս

Ա

190բ Փառք... // Վասն որոյ ետ գրել զսա ի հալալ յարգեաց և յարդար
191ա վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց, հաւրն[15]։ // Եւ եռ տեսեալ զյաւժար կամք նորա և զսէրն, որ առ Աստուած առեալ, գրեցի ի գեաւ[ղ]ս, որ կոչի Սուրս, ի դուռն Ս. Յովաննու Մկրտչին և Ս. Գէորգեայ զաւրավարին, ձեռամբ յոգնամեղ և ախտամած, միշտ ի չար Ստե-

[14] Ձեռագրի ընդօրինակությունն ավարտվել է 1670 թ., այդ հիշատակարանը տեսնել 1670 թվականի շարքում։

[15] և [16] երկու դեպքում էլ անունները չեն գրված և տեղը բաց է թողնված։

փանոսիս, ի թուականութեան Հայոց ՌՂԸ (1649) ամի գրեցաւ տառս, որ կոչի Մաշթոց ի յանուն[16], զոր տէր Աստուածն մեր ընկալցի զսա և ընդունելի արասցէ...։

Բ

192ա Եւ այսուհետև սա ինձ չնչիս,
Եւ փանաքիս փքացեալ գրչիս,
. . . .[17]

Զերեսս ի գետնի դնեմ, և զոտս ձեր համբուրեմ, զի ասէք զԱստուած ողորմին ինձ և ծնօղաց իմոց Ստեփանոս քահանային և Շամամին, և իմ կենակ[ց]ին, և եղբարցն իմոց՝ տէր Գրիգորին և Յովանէսին և Յո-
192բ վասափին. և որ ա//սէ զԱստուած ողորմին մեղ, առցէ...։

Ո՛վ քահանայք և ժողովուրդք, աղաչեմ ղձեղ, որ ասէք Աստուած ողորմի տէր Ստեփանոսին և Շամամին, Վարդին և Եղիսին, և Զաքարիայ եպիսկոպոսին, և Ինախին, և Մարտիրոսին, և ամենայն երախտաւորաց մերոց։ Եւ որ ասէ զողորմին նոցա...։ Կրկին անգամ աղաչեմ... Աստուած ողորմին ասացէք ինձ և ծնօղաց իմոց Յոհանէս քահանային և Մրջանին և իմ կենակցին, և եղբարցն իմոց՝ Վարդանէսին և Յովանէսին, և պապուն իմ՝ տէր Կարապետին, և դստերացն՝ Վարդին և Շամամին, Փաշին և Գրիգորին։ Եւ որ ասէ զողորմին, միոյն Ռ (1000) առցէ...։

561

ՅԱՅՄԱՀՈՒՐՔ

Երևան, № 7411

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Տպիսիս

ա

20ա Որ ողորմի Քրիստոս Աստուած Շահպաւոնին, հաւրն՝ Շահղուլուն և մաւրն՝ Անայխաթունին, և եղբարց Ամիրին, Մուրատին, Շահվերտուն, և կողակցուն՝ Ասպանիչաւորին, և որդոցն՝ Բէժին, Զալին, և Աւթանդիլին, և գրչի՝ Մկրտիչ դպրի։

Բ

426ա Փառք... Որոյ շնորհաւք և յաւժանդակութեամբ աւարտեցաւ սբ. տառս, որ կոչի Յայսմաւուր, որ հաւաքեալ կայ ի ներս ճառս տէրունական տաւնից և ամենայն սրբոց, որք նահատակեալ են և չարչարեալ ազգի ազգի տանջանաւք և դառն մահուամբ, վասն անուանն Քրիստոսի, ի թուականութեանս Հայոց ՌՂԸ (1649), ի քաղաքն Տփխիս, ի դուռն Փեթլայեմու Ս. Աստուածածնայ և այլ սրբոցն, որ աստ կամ հաւաքեալ, ի թագաւորութեանն Վրաց տան Բագրատունեաց ազգէ Ռոսատամ խանին, զոր և ընդ երկար աւուրս պահեսցէ տէր Աստուածն ամենայնի. և ի հայրապետութեանն սբ. Էջմիածնայ տեառն Փիլիպոս կաթողիկոսին, և ի առաջնորդութեանն Հաղպատայ Մինաս ռուբռնապետին, ձեռամբ յոգնա-

[17] Այսպես ավելի քան կես էջից։

մեղ և անարհեստ և ծառայ ոգոյ և փանաքի և փրծուն գրչի դատարկ անուն իրիցի։

Աղաչեմ ղձեղ, ո՛վ ընթերցողք ի սբ. ճառիս,
Ունկն դրէք դուք սղալիս,
Եւ հոգս աշխարհիս հեղքեալ է
Ջիս ի դրելոյ ժամիս։

Արդ՝ որպէս ոք ծարաւ ի գոլով յաղբևրս ջուրց և ոչ գտանիցէ և յորժամ պահեսցի բաղում ցնծութեամբ ուրախանա և զուարճանայ, այսպէս և ըստ այսմ աւրինակի հեզահոգի և իմաստուն Շանպարոնն ըստացաւ զգիրքս գովելի, յիշատակ բարի յեկեղեցի, ըստ այնմ որ ասէ, թէ «Երանի...», ըստ այնմ՝ փափագանաց ըստացաւ զսայ յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց...։

Գ

701բ Ազգիս Հայոց թվականին,
Կրկին քառ[ե]ակ երկ հարիւրին,
ՂԸ (1649) ամին
Աւարտեցաւ գանձս աստուածային։
Սայ է խորհուրդով լին,
Որ ամենայն սուրբքն ի սմայ պատմին։
Որ ողորմի Տէրն ամենի,
Հոգոյ սորայ [ս]տացողի
Շանպարոնին և կողակցին՝
Ասպանիջաւարին.
Եվ դստերացն՝ Ռաւատամին
Եվ Անայխաթուն։...

Արդ՝ աւրհնեալ է... որ ետ կարողութիւն նուաստ ապիկար Մկրտիչ դպրի, որ ըսկսայ զԱյսմաւուրս և աւգնականութեամբ աշակերտան[ց]իմ՝ տէր Սարգսին և տէր Սրապիոնին, զոր ընդ երկայն աւուրս արասցէ Քրիստոս։ ...

562
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7665

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

329ա Փառք...։ Վասն որոյ և ես՝ մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զըստաւս հոգէշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս,
330ա զոր ամենասուրբ հոգին հանգչելով... // Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւո-
330բ ի, ի թվաբերութեանս աս//քանազեան և աբեթական տօմարի ՌՂԸ

(1649) և ըստ Նորումս շրջանի ԼԴ (33)[18], և ի գալստենէ Կենարարին ՌՈՄԲ (1652), ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ևս առաւել համարայիցն. զի գաղափար սորին էր ի դրանէ Ս. Յովհաննէս աւետարանչին, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշէն և աստուածապահ քաղաքս՝ ի Կաֆայ, ընդ հովանեաւ բարձրակառոյց և կամարակապ աւագ եկեղեցոյս, որ յանուն Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյ Նորա Մարտիրոսին, ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի, և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։

Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահռչակելի, գերա-
331ա կատար և գերապանծ...// սբ. Աւետարանս՝ չորեք ճառագայթեան, ճշմա-

---

[18] Նիկողայոս դրիչն իր մի շարք հիշատակարաններում հայոց Մեծ թվականի (շարժական տոմարի) հետ նշում է նաև երկու կամ երեք տոմարական այլ տարեթվեր, օրինակ՝ «ըստ Նորումս շրջանի», Փրկչական, երկու անգամ էլ Ադամի դուրս դալը դրախտից, որոնք հայոց միևնույն տարեթվերում տարբեր են նշված կամ եթե հայոց տարեթիվը հաջորդաբար է տրված, ապա Փրկչական տարեթվերը նույնությամբ կրկնվում են։ Նիկողայոս գրչի երեք հիշատակարաններում (տարօրինակ է, որ ութը այլ հիշատակարաններում՝ №№ 284, 415, 465, 840, 978, 1151, 1315 և 1383, նշված է միայն հայոց տարեթիվը) հայոց, նոր շրջանի և փրկչական տարեթվերը նշված են այսպես՝ № 556 հիշատակարանում հայոց տարեթիվ՝ ՌՂԸ (1649), նոր շրջան՝ ԼԴ (33) փրկչական՝ ՌՈՄԲ (1652), (էջ 494)։

№ 623-ում՝ հայոց տարեթիվ՝ ՌՂԹ (1650), նոր շրջան՝ ԼԵ (35), փրկչական՝ ՌՈՄԲ (1652), (էջ 548)։

№ 670-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃ (1651), նոր շրջան՝ ԼԴ (34), փրկչական՝ ՌՈՄԲ (1652), (էջ 585)։

Լինում է նաև այնպես, որ հայոց տարեթվի տարբերությունը երկու տարի է, իսկ նոր շրջանի տոմարական տարեթիվը նշված է նույնը. այսպես՝ № 852-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԲ (1653), նոր շրջան՝ ԼԴ (34), փրկչական՝ ՌՈՄԶ (1656), (էջ 772)։

№ 1014-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՈՃԴ (1655), նոր շրջան՝ ԼԴ (34), փրկչական՝ ՌՈՄԸ (1658), (էջ 938)։

Լինում է և այսպես, երբ երեք հիշատակարաններում Հայոց տարեթվերը նույնն են, իսկ տոմարական մյուս հաշվումները՝ տարբեր, օրինակ՝ № 1075-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԵ 1656), նոր շրջան՝ ՁԵ (85), փրկչական՝ ՌՈՄԷ (1657), (էջ 988)։

№ 1091-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԵ (1656), նոր շրջան՝ ԼԵ (34), փրկչական՝ ՌՁՃՍԱ (1651), Ադամի ելքը դրախտից՝ ԽՀԶ (7076), (էջ 1004)։

№ 1100-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԵ (1656), նոր շրջան՝ ԽԱ (41), փրկչական՝ ՌՈՄԶ (1656), Ադամի ելքը դրախտից՝ ԽՂԱ (7091), (էջ 1013—1014)։

Միայն երկու հիշատակարաններում է, որ տարբեր տոմարների տարեթվերը նշված են համապատասխան նույնությամբ. դրանք են՝ № 925-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԳ (1654), նոր շրջան՝ ԼԹ (39), փրկչական՝ ՌՈՄԷ (1657), (էջ 847)։

№ 930-ում՝ Հայոց տարեթիվ՝ ՌՃԳ (1654), նոր շրջան՝ ԼԹ (39), փրկչական՝ ՌՈՄԷ (1657), (էջ 850)։

Մեր կարծիքով, նշված տասը հիշատակարաններում միակ ճիշտ համադրումն այս երկու հիշատակարաններն են, որովհետև տոմարական հաշվումներն այստեղ ստույգ են, քան մնացածները։ Ելնելով այս երկու հիշատակարանների տվյալներից, «ըստ Նորումս շրջանի» տոմարական արտահայտությունը հավանաբար պետք է նույնացնել հայոց Փոքր թվականի կամ Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի հետ և տոմարական նշված սկզբունքը պարզել այսպես՝ 1083/1084+532+39=1654/1655 (տե՛ս և հմմտ. Բ. Ե. Թումանյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965, էջ 35—36)։

Վերևում բերված առաջին տոմարական հաշվումների ոչ ճիշտ նշումը մեզ հարկադրեց ուղղումներ չկատարել և «ըստ Նորումս շրջանի» տոմարական տվյալները թողնել նույնությամբ։

331բ *րիտ, աստուածախաւսութիւն ...։ // Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկացաւղ եղեալ աստուածարեալ և պատւական Սրսցի խօճայ Խաչերեսն ետ գրել զսբ. Աւետարանս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։*

Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղաւթս ձեր զպատուելի խո-
332ա *ճայ Խաչերեսն, և ծնաւղսն իւր, զհայրն՝ Յովանէսն // և զմայրն իւր՝ զՄարիամն, և զպապն իւր՝ զտէր Պալտասարն, և զմամն իւր՝ զիրիցակինն, և զմարաքոյրն իւր՝ զմահդասի Իսպիլն, և զկողակիցն իւր՝ զՍուլթանն, և զՇիրինն, և զքոյրն իւր՝ զԹուրվանուսն, և զեղբարքն իւր՝ զՊաղտասարն և զՊալին, և զմիւսքորքն իւր՝ զՄթխալն և զԽաթունն, և զզաւակսն իւր՝ զխօճայ Յովնաննէսն և զՄարիամն, և զամենայն արեան մեր-*
332բ *ձակայսն՝ զայժմուս կենդանիքն և զկանխաւ գնչեցեալքն...։ // Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք զվերոյ դրեալքս ի սմա։ Եւ զիս զնիկողոս մեղաւոր գրիչ և զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ սրբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ և ճշգրտիւ զմեղաւորս <զմեղաւորս> հասոյց ի յայսմ արհեստի, զոր տէր մեր Յիսուս Քրիստոս իւր փոխարենն ընդ սբ. քահանայիցն ի միասին տացէ ի հանդերձեալն...։*

563

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8523

Գրիչ՝ Ալէքսիանոս

41ա *Գրեցի Հայոց թուին ՌՂ և ութ (1648), ձեռամբ անարժան և անիմաստ* Ալէքսիանոս *մեղաւոր գրչի. ախ. վայ է ինձ։*

564

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8586

ա

10ա *Թվին ՌՂԸ (1649)։*

բ

90ա *Ես՝* Ալիքսանս *ցանկալի,*
Է գեղեցիկ և ցանկալի,
Ըզբոլոր տումարս ի յինքն ունի,
Տպաւորեալ ի իւր սրտի։

565
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9850

Գրիչ՝ Տիրատուր
Վայր՝ Կ. Պոլիս

240բ Փառք...։ // ... ըստ այսմ սիրոյ և ի սոյն սարասի երիցակինս այս Մարիամ, վառեալ սիրով ի սէր... և տենչմամբ սրտիւ ընկալեալ ստա-
241ա ցաւ զսբ. Աւետարանս, ի հալալ ստ//ացուածոց և ի յարդար արդեանց, և եդ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւր՝ տէր Մինասին և Զուլալին, կենակցին՝ Յովանէս իրիցուն, դստերն՝ Սուլթանին, և եղբօրն՝ Նիկողոսին, և ամենայն արեանառու մերձակայիցն կենդանեաց և ննջեցելոց, զանձ յաւիտենական և անկապոյտ ճոխութիւն...։ Եւ եդ զսա ի գիւղաքաղաքն յՈսկոյդար, ի դրունս Արրոյն Յովաննու Կարապետին՝ Քրիստոսի մկրտչին։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մեծահանդէս քաղաքս Կոսաանդինուպոլիս, ի դրունս Սրբոյն Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի թվաբերութեանս Հայոց ՌՂԸ (1649) ամին, ձեռամբ փծուն և բազմամեղ գրչի Տիրատուր կոչեցելոյ, ի հայրապետութեանն տէր Փիլիպպոսն սրբազան ամենայն Հայոց կաթողիկոսի, և ի մերոյս առաջնորդութեանն Կոսաանդինուպոլսոյ տէր Դաւիթ արքեպիսկոպոսի. և ի թագաւորութեանն Իսմայէլացոց սուլթան Մահմետի, որ Ը (8) ամեայ մանուկ գոլով, կալաւ թագ և թախտ թագաւորութեան հօր իւրոյ։ Զոր հայր սորա սուլթան Իպրահիմն վասն անառակ գնացից իւրոց, հակառակեցան ընդ նմա զօրագլուխքն և իշխանաց իշխանն, և իշխանքն և զօրքն ամենայն և միաբանեալ ամենեքեան միակամ և մի խորհուրդ
241բ եղեալ // եղին ի բանդի. և զի հանապազ զտիւ և զգիշեր լայր դառնապէս և աղաղակէր, ոչ ուտէր և ոչ ըմպէր, զոռայր որպէս զանասուն, հառաջէր և պառաչէր, խնդրէր հնար ելանել յարգելական բանդէն և ոչ կարէր, արտասուաւք հայցէր ի սիրելեացն՝ արձակիլ ի կապանացն, և ոչ ոք էր որ աւգնէր և ողորմէր նմա։ Եւ յետ ԺԱ (11) աւուրց առեալ ընդ իւրեանս դահիճ և ընթացան ի բանդն և խեղդամահ արարեալ ընկեցին ի գետնի. և այնպիսի խիղճ և լալագին մահուամբ ելեալ յաշխարհէ և եղաւ մերձ առ Հարս իւր։ Եւ աստ լրացաւ զառածն Սողոմոնի, որ ասէ. «Վա՜յ քեզ քաղաք, որ թագաւոր քո մանուկ է»։ Եւ է քաղաքս այս ի յերերման և ի տատան, ի յողբ և ի սուք, զոր տէր Աստուած ողորմի և խաղաղութիւն պարգևեսցէ աղօթիւք սրբոց. ամէն։

Արդ՝ երես ի գետին դնելով աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայից, որք ընթեռնուք կամ աւրինակէք և կամ հարևանցի տեսանէք, յիշեսջիք միով Հայր մեղայիւ մի զստացող սորայ զՄարիամն...։

242ա Եւ արդ՝ մի՛ ոք իշխեսցէ հեռացընել զսբ. Աւետարանս ի դրանէ Ս. Կարապետ եկեղեցոյ՝ ծախել կամ գրաւ դնել, թէ՛ յիմոց ընտանեաց և թէ՛ յազգականաց և թէ՛ յօտարաց։ Եւ թէ ոք յանդգնի և յոչինչ համարի զասացեալս՝ նա ի սոսկալի դատաստանին... տայ զպատասխանին, այլ հանապազ կացցէ ի դուռն Ս. Կարապետին և ընթերցցի ի սբ.

232բ եկեղեցւոշ...։ Եւ յօրինակ տալն մի՛ խնայեսցի, և օրինակողն // խնամ տանի և լաւ րոնէ, և նա ևս վարձս ի Քրիստոսէ ընկալցի, ամէն։

566

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Երևան, № 10601

ա

27բ Գրեցաւ զայս աղաւթից տետրրս թիւիս Հայոց ՌՂԸ (1649). ի գալ և ի գնալն Փիլիպպոս հոգևոր տէրին Գանձասար ի գուռն Ս[բ. Է]շ-միածնի։ [Ց]իշեսցշիք զմեղօր կծողյ// է։

բ

84ա Ս. Երրորդութիւն շնորհեա թողութիւն մեղսորիս, զոր ինչ այսօր մեղա հոգովս բանիւ և գործով։

Ողարրտվվյ[19] անցա սրով։

գ

111ա Փառք...։

Ո՛վ եղբ[արք] իմ ցանկալիք,
Ցաշխատութիւնս որ արարի,
Թէպէտ որ բանքս են պիտանի,
[Ա]յլ ես յիշման չեմ արժանի։

111բ Ով Տէր ///
Ցիշման արա զիս արժանի,
Վասն սիրոյն տեառն Յիսուսի։
Ով պատուական սրբակրօն որ[20]

567

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 10843 (1648 թ.)

Գրիչ՝ Ամիրաս
Վայր՝ Պաւնտոս

ԱՄԻՐԱՍ

172բ Ցէր կաս անհոգ դու մէկ մ'ասայ,
Քեմ չես տղա ղու անիմայ,
Այժմիկ խնդրեա, ասայ մեղայ,
Անհոգ կենաս զէտ նոր փեսայ։

---

19 Ձկարողացանք վերծանել։

20 Ձեռագրում «սր. կրօնոր» ձևով։ Շարունակությունը երկու քառյակ։ Հետաքրքրություն ներկայացնող ոչինչ չունի և գիրը մաշված է տեղ-տեղ։

Բարձրամտիս որպես խոճայ,
Յետոյ վայ տաս անձինդ վերայ։
Ահայ կոխան ես անպիտան
Ջեմ արժանի ես այս անուան,
Ոչ յիշելու եմ ես անարժան,
Ջար գծելոցս եմ փոշման։

568

ԱԻԵՏԱՐԱՆ

ԼԱԱԺԻ, C—33 (մանրաժապավեն, Երևան, № 343, 1611 թ.)

Գրիչ՝ Մարգար

294ա *Փառք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացող սբ. դրոյս* Առաքելն *և իւր կողակիցքն՝* Գուլինարն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Առաքելն, *և իւր որդին՝* Պաւլոսն, Յովանէսն, Հոռոմն, Մարիամն, Զաւդրիկն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Առաքելն, *և որդին՝* Պողոսն, *և կողակիցն՝* զՎարդիսաթունն, *և որդին՝* Ասատուրն, *և դստերքն՝* Աննային, զԽանգատէն, *և* Շանգատէն։

294բ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* Առաքելն, *և որդին՝* Յովանէս, *և // մեղապարտ գրիչս* Մարգարս, *յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՜վ սբ. ընթերցողք, և դուք յիշեալ լիջիք առաջի անմահ արքային։*

Գրեցաւ թվին ՌՂԸ (1649)։

569

ՇԱՐԱԿՆՈՑ

Տիրայր վարդապետ Ման, № 16

Գրիչ՝ Յովհաննէս ջահնկալ

ա

22ա *Փառք...։ // Արդ՝ եղև աւարտ գրչութեանս այսմ մեծահանդէս հոգելից տառիս ի շրջադայութեան հայկազան տումարիս թվին ՌՂԸ (1649). ի դառն և յանբարի ժամանակիս։ Գրեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ և փծուն գրչի* Յովհաննէս *ջահրնկալի, որ զանունս միայն ունիմ դպրի, և ոչ գործս ի բարի. ի լաւ և ընտիր աւրինակէ* Սրսոյ *առաջին վարժապետի, և քաջ քարտուղարին* Գրիգորի *մականուն* Խուլ *կոչեցելոյ, ի դրունս Ս. Նիկողայոս եկեղեցոյ։ Ո՜վ լուսերամ մանկունք Սիովնի յե[րե]սս անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սրմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զանարժան գծողս, և զծնաւղքս իմ, և զուսուցիչն իմ՝ զտէր* Ներսէս *քահանայն, որ սկիզբ եղեալ կարդացոյց, և ուսոյց զգիրս, և զծաղիկս, ինքն միածինն, զինքն անփորձ պահեսցէ։ Եւ արդ՝ յիշեսջիք զկողակիցն իմ, և զամենայն արեան մերձաւորքս իմ ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։*

Եւ արդ՝ ես մեղաւք ի լի,
Որ ձև ունիմ շահրնկալի,
Եւ ոչ ունիմ մասն բարի,
Այլ ծոյլ և վատթար ամենայնի։
Եւ յանձնատր Տեառն աւրինի,
Որ շահրնկալ անուն կոչիմ,
Եւ քան զամէնն եմ գարշելի,
Ըգջանքս անձինս ես ինձ դրի,
Եւ զսուրբ գիրքս ի յանմ հանի։
Զեռքրս փրտի և հող դառնայ,
Մոխիր, փոշի գազախ դառնայ,
Գիրս յիշյտակ առ ձեզ մընայ։
229 Թէպէտ խո//շոր է գիր սորայ,
Այլ դիւր ընթով գիտենայ,
Երբ սովորի հրմրտանայ,
Որք ընթեռնուք աւգտիք ի սմա։
Եւ ինքն որ առատն է ...

Գրիչ՝ Յովհաննէս

Բ

ԶՅովհաննէս գրիչ յիշեա ի Տէր, ո՛վ քաղցր եղանակող։

Խազեր դնող՝ Մուրատ

Գ

Ո՛վ քաղցր եղանակաւորք, յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր Մուրատն զսորա խազն, փուշն, դիրն քաշեցի. զծնաւղքն իմ յիշեցէք ի Տէր։

570

ԱՒԵՏԱՐԱՆ (1094 Թ.)

Մագիստրոս, I, № 63

64 Ստացողք Աւետարանիս Պալախարցի մղտեսի Գրիգոր և ամուսինն Նայ, և մղտեսի Ստեփան և Սարգիս ետուն ի դուռն Բարձրահայեաց Ս. Աստուածածնին, յառաջնորդութեան սբ. ուխտիս տէր Եղիա վարդապետին. շինեցաւ կողք սորա ի ՌՂԸ (1649) թուականին Հայոց։

571

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 809

Վայր՝ Շոռոթ

222բ Փառք... աւարտեցաւ սբ. տառս ի թուականիս Հայոց ՌՂԸ 1649), ի յանապատս Շոռոթայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչիս և Ս. Յակոբիս։

572
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 6273

Ստացող՝ Սարգիս Եղեսացի

501ա Փառք... ղոր ցանկացող եղև սորին Սարգիս յետնեալ Եղեսայի անուամբ ևեթ աբեղայ... ի դուռն Ս. Աստուածածնին Բարձրահայեաց սբ. տաճարին Քրիստոսի, Ս. Դաստառակին և Ս. Յակոբըն հրաշալին. այլ և Գուրիաս Սամիասին և Արիբասայ դպրին, նաև Սարգսի զօրավարին, աբբայ Եփրեմ դամբարանին, յորս պարփակիմք ընդ հովանեաւ սոցին։ Ի յառաջնորդութիւն սոյն նահանգիս տէր Ներսէս արքեպիսկոպոսի, յաբեթական ազին թուական երրեակ եօթն էր յօրելեան, քառեակ տասն և հնգեակ այլ յաւելան՝ թիւք երեք ընդ նոսա շարամանեան (1649)[21] աւարտեցաւ երգս այս Դաւթեան։

573
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՎԱՍԱՓՈՒ
Երևան, № 6333/133

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Վարագ

30բ Յաւարումն այսքմ բանի շարադրական,
Որ յոլովից և ի բազմաց կարճ գրեցան,
. . . .
Ռ և ՂԸ (1649) ամին գրեցաւ սա ի Վարագ, ձեռամբ սուտանուն Յովաննէս Կարմիր լաճու. փառք Աստուծոյ. ամէն։

574
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Կ. Յուզբաշյան, ԻՊՀԱ, Ա—37 (ժամանակ ?)

Հետ. ստացող, կազմող՝ տէր Ալէքսիանոս

233ա Կամաւ[ն] ամենակալին Աստուծոյ, ես՝ տէր Ալեքսիանոս գնեցի զԻսուս որդիս և կազմեցի, յիշատակ ինձ և ծնողացն իմոց և վարպետին իմոյ, և կրկին ստեղծողին՝ հաւրեղբաւրն՝ տէր Մանուելայ եպիսկոպոսին Ամարասայ, և ամենայն արեանառու մերձաւորացն՝ կենդանեաց և ննջեցելոց։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիջի առաջի Քրիստոսի. ամէն։
Ի ՌՂԸ (1649)։

575
ԺԱՄԱԳԻՐՔ ՄԱՍՆԱԿԱՆ
ՏՅՀՄՎ, № 193

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ ԱկՀլ

ա

513 Փառք...։ Արդ՝ գրեցաւ փրկական խորհուրդ պատարագի հասարակաց աղաւթս մերոյս եկեղեցո[յ] ի թվականիս Հայոց ՌՂԸ (1649),

21 Այսինքն՝ [(3×7)×50]+[(4×10)+5+3]+551։

գրեցաւ ի դուռն Ակլա[յ] Ս. Նշանին, Ս. Աստուածածնին, որ է դիւաց հալած և բժիշկ ամենայն ցաւոց։ Գրեցօ ձեռամբ Կարապետի, հող և մոխիր սուտումուտ գրչիս, ի խնդրոյ սրբասէր և պատուական նորաբողբոջ Սամուէլ քահանայի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց և հարն՝ Աբրահամու և մօրն՝ Մոլխուն, և բարի որդւոցն՝ տէր Սամուէլին, Սիմէոնին, Բաղդասարին և Բոլոթին, Կոլսարին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։ Եւ տայ Աստուած ի վայելումն տէր Սամուէլին և իւր ամուսնոյն. և որ հանդիպի լի սրտիւ ողորմի ասի։

Բ

Արդ՝ գրեցօ սոսկալի խորհուրդս ի գիւղաքաղաքն յԱկրլ, ի դուռն Ս. Նշանին, ի թուականիս Հայոց ՌՂԸ (1649) ամին, և իւր սպասո[որ]ին, քաշ և արի Ղուկասի եպիսկոպոսին ժամանակին։

Գ

Եւ ետ Սամուէլ քահանայն դրել իւր յիշատակ և իւր ամուսնոյն Խանումին, որդւոյն՝ Մարտիրոսն, և իւր բարի ծնողացն, հարն՝ Մարտիրոսի և մարն՝ Մոլխոյն, և ամենայն յարեան մերձո[որ]ացս. ամէն։

576

ՄԱՇՏՈՑ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՄՅԶԵՊ, I, № 233

643 Փառք...։ Այս սբ. գիրքս, որ է Մաշտոց և Աղաւթամատոյց, որ ըստացաւ զսայ Մարեամն ի հալալ ինչից իւրոց և յետ յիշատակ ի սբ.
644 քաղաքս յԵրուսաղէմ ի դուռն Ս.// Հրեշտակապետին և որք հանդիպիք սմայ ասացէք Աստուած ողորմի հոգոյն և իւր ծնաւղին. ամէն։

Թուականութեանս Հայոց Ռ և ՂԸ (1649)-ին։ Ի ժամանակին յայնմիկ էր լուսարար Ս. Հրեշտակապետին Մինաս երէց Երզրնկացին, մեղաւք լցեալ, խեղճ ու լալին, որ բաղում աշխատանս կրեաց վասն նորոգութեան սբ. տաճարին ի ներսէ և ի դրսէն։ Դ. (4) տարի լուսարար կացի ի դուռն Ս. Հրեշտակապետին իբրև զմի ի մշակաց հանապազ կու սպասաւորէի, միթէ հոգոյց մէկ ճար լինի. ամէն և եղիցի։

577

ՊԱՏՄԱԳԻՐՔ

ՄՅԶԵՊ, II, № 303

Գրիչ՝ Յարութիւն դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

149 Փառք...։ // Աստանաւր գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ հոգեզուարճ բուրաստանս, որ ասի Պատմագիրք, որ ըստ անուան իւրոյ ըսկիզբն առնէ զհաւրէն նախնոյն Ադամայ, և պատմէ մի ըստ միոջէ զհանգամանս նահապետաց, թագաւորաց, հայրապետաց, և հասուցանէ մինչ ի յետին ժամանակս։ Զորոյ զճաշակ առեալ, և փափագանաւք ստացեալ զսա աստուածասէր Յակոբ դպիր ակն կալեալ բանին Պօղոսի առաքե-

լոյն որ ասէ. «Զգիրս սուրբս, գիտես որ կարող են զքեզ իմաստուն առնել» այլ և...։ Ըստ այսմ յարացուցի աստուածասէր և հաւատարիմ քրիստոնեայս Յակոբ վասն վերոյ ասացեալ աւգտակար պատճառացս ցանկացաւղ եղև այս պատուական դրոցս, և ետ դրել յիշատակ հոգոյ իւրոյ և բարեսէր ծնաւղացն իւրոց՝ մահտեսի Վանիրատին և մատեսի Շազատային, և քրւերցն՝ Քնարին, Դշխոյին և Մարիամին, և պապերցն նորին՝ Շանպազին և Յովանէսին, և մամերցն՝ Քնարին և Մեհրիին, և հաւրեղբօրն՝ Կիրակոսին, և որդոցն նորին՝ Յովանէսին և Ղուկասին, և հաւր քրւերցն՝ Զուլալին, Աղկուին և Խսումարին, և նախնեացն նորին՝ Աւետիքին, Սիրունին, և Երանոսին, և Քնարին, և Խոնարին և ամենայն առուարեան մերձաւորացն, այլ և զաւակացն իւրոց կենդանեացն՝ Յովանէսին, Մարքային և Ղուկասին, և հանգուցելոցն՝ Յովանէսին, Սառային և Մկրտիչին, նաև կողակցին՝ Գոնարին, և հաւասար ննջեցելոցն թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք...։

150 Կատարեցաւ դիրքս Պատմութեան, որ ունի յինքն ամբարեալ ի սոյն քառատուակ (sic) գնդաձև, փոքրագեղ տփիս զգիրսն հանճարեղ իմաստնոյն Ագաթանգեղոսի, որ յայտնէ զպատմութիւն մեծին Տրդատայ և զսրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, երկար և ճոխ պատմութեամբ, այլ և զՄովսէսի Խորենացւոյ, նաև զՆեղիշէի, որ զՀայոց մեծաց պատմութեանցն սկիզբն առեալ հասանէ մինչ ի քաջն Վարդան, նաև զտեառն Միխայէլի պատմագիրսն, և զ։ուզանդ, որ սկիզբն է առեալ յԱղամայ և հասուցանէ մի ըստ միոջէ մինչ ի վերջին ժամանակս։ Իսկ ի գիծ արկանել և յաւարտ հասանել գրոյս եղև ի թվականիս հայկազան զարմի ՌՂԸ (1649) ամի, ի մայրաքաղաքն երջանիկ ի մեծն Կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ հռչակաւոր տաճարի Ս. Սարգսի զաւրավարի։ Ի ժամանակս իշխանութեան Տաճկաց սուլթան Իպրահիմ բռնակալի. նաև ի հայրապետութեան, որ ի սբ. էջմիածինն, տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, և յառաջնորդութեան սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր երջանիկ բարունապետի, ձեռամբ գրչի, սուտանուն Յարութիւն դպրի։ Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմայ կարդալով և կամ հարևանցի տեսանելով՝ յիշեցէք...։

578

ՊԱՏՄԱԳԻՐՔ

Մ8Զ6Պ, II, № 310

Գրիչ՝ Յարութիւն դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

163 Փառք...։ // Աստանաւր գրեցաւ և զրաւ ի ակն կալեալ մինչ ցայս վայր հասեալ կատարեցաւ գիրքս, որ ասի Պատմագիրք։ Եւ յիրաւի պատմէ ըստ անուան իւրոյ զեղեալսն ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէ մինչ ի սբ. Վարդան զաւրավարն Հայոց մի ըստ միոջէ համառաւտ պատմութեամբ, և բանայ զմիտս բանասիրացդ և լցուցանէ երկնային ուրախութեամբ, որպէս այգի որ անկեալ է ի գնացս ջուրց, և որպէս զծաղ-

կալի բուրաստան, լի գուն զդոյն հոտովք անուշիւք ղմայլեցուցանէ ղքիմս հետևողաց իւրոց։ Որոյ ցանկացաւղ եղեալ և բազում փափագանաւք ետ գրել ղսա ի յարդար գոյից իւրոց Ակնցի Յակոբ դպիր, ի վայելումն անձին իւրոյ և յետ ելանելոյ ի կենցաղոյս, եղիցի հոգոյ իւրոյ յիշատակ, և ծնաւղացն իւրոց՝ մահտեսի Վաճառաին և մահտեսի Շահզատային, և զաւակացն և իւրոց հանգուցելոցն առ Քրիստոս՝ Յովանէսին, Սառային և Մկրտչին, և կենդանեացն՝ Յովանէսին, Մարթային և դեռաբոյս Ղուկասին, և կողակցին՝ Գոճարին, և քրեերցն՝ Քընարին, Դըշիոյին և Մարիամին, և ամենայն արեան մերձաւորացն։ Նաև պատուելի ալեաւք և գովելի անուամբ վարժապետին իւրոյ՝ Յակոբ կուսակրաւն սարկաւագին և Առիստակէս քահանային, այլ և հօրեղբաւրն իւրոյ՝ ծաղկեալ ծերունոյն Կիրակոսին, և որդոյ նորին Յովանէսին և Ղուկասին, որ ի տիս մանկութեան վճարեցին զկենցաղս, գնալով առ յոյսն ամենեցուն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ սիրովն Աստուծոյ յիշել սրտի մտաւք ղստացաւղ սորա զվերոյ գրեալ Յակոբ դպիր...

Գրեցաւ հոգեզուարճ բուրաստանս ի թվականիս հայկազան զարմի ՌՂԸ (1649) ամի, ի մայրաքաղաքն երջանիկ ի մեծն Կոստանդնուպալիս, ընդ հովանեաւ հռչակաւոր տաճարի Ս. Սարգսի զաւրավարի, ի ժամանակս իշխանութեան Տաճկաց սուլտան Իբրահիմ բռնակալի, որ և յայսմ ամի միաբանեալ զաւրացն իւրոց ընկեցին յաթոռոյ արքայութեան զսուլտան Իպրահիմն, և նստուցին ի տեղի հաւրն ղորդի նորա զսուլտան Մուհամատն՝ մանուկ է (7) ամաց. նաև յառաջնորդութեան, որ ի սբ. էջմիածինն, տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, և յեպիսկոպոսութեան սբ. Երուսաղէմայ տէր Ատուածատուր երջանիկ բաբունապետի. ձեռամբ բազմամեղ գրչի Յարութիւն սուտանուն դպրի։ Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմայ ներումն արարէք խոշորութեան սորա և անմեղադիր լերուք, ղի կար մեր այս էր։ Իսկ Սբ. Երրորդութիւնն աւրհնեալ եղիցի յաւիտեանս. ամէն։

Ստացող՝ Յակոբ դպիր

Բ

Աղաչեմ զձեզ եղբարք իմ նազելի, որք պատահիք այսմ գրոցս ի պատճառ զինչ և իցէ, ստացողի սորա Յակոբ անցաւորիս, և ծնողացն՝ մահտեսի Վաճառաին և մահտեսի Շահզատային, և զաւակացն՝ Յովանէսին, Սառային, և Մկրտչին, և ամենայն արեան մերձաւորացն ասացէք Աստուած ողորմի...։

579

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մշեցի, IV, № 1131

281 Ցիշատակ է սա Հռոմկլայեցի Եղիազար վարդապետին, ի գուն Արղբնու Բարձրահայեաց Ս. Աստուածածնի, որ էր տեսուչ այսմ նահանգի տեսողքդ ասացէք զողորմին. թվին ՌՂԸ (1649)։

580
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ3ՁԵՊ, V, № 1404 (1612 թ.)

59 Գիրքս յիշատակ է տէր Վարդանին, ի դուռն սբ. Երուսաղէմայ ի Ս. Ծնունդն։ Զունի ոք իշխանութիւն հեռացուցանել ի դրանէ Ա. Աստուածածնայ եկեղեցոյն, այլ կացցէ անջինջ յաւիտենական յիշատակ. թվին ՌՂԸ (1649)-ին։ Լաւ պահողքն աւրհնին յԱստուծոյ. ամէն։

581
ՄԱՇՏՈՑ
Մ3ՁԵՊ, V, № 1492

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Սեբաստիա

227 Փառք...։ Արդ՝ դրեցաւ Մաշթոց ի Սեբաստիա, ձեռամբ սուտանուն Միքայէլին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Սարգսին, որ տուեալ են կարողութիւն տկար անձին իմոյ յաւարտել զՄաշթոցս, ի թվարերութիւնս Հայոց ՌՂԸ (1649) ամին։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, անմեղադիր լերուք, զի կարիք մեր այսչափ է։ Եւ յիշեցէք ի յարժանաւոր յաղաւթս ձեր զտէր Յովասափն, որ ըստացաւ զսա ի հալալ ընչիցն յիշատակ իւր հոգւոյն և կողակցին՝ Թամամին և որդոցն՝ Դաւթին, Կարապետին և Պապուն, և ծնողացն՝ Ալիքսանոսին և Ղամարին, և ամենայն արեան մերձաւորացն. և որ յիշէ Հայր մեղայիւ կամ Տէր ողորմեսցի՝ յիշեալ լիցի...։

582
ԱՒԵՏԱՐԱՆ
Մ3ՁԵՊ, VI, № 1969

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Հիզան

548 Փառք...։ // Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն ի լուսածնեալ զարմից Սրբո[յ] Սիովնի, վարպետ Յոհանէս անուն, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարգարտաշար լուսափթիթ սբ. Աւետարանիս։ Եւ ըստացաւ զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և որդւոյն, և դստերացն՝ ապաշխարող Սուլթանին, և իւր քրւերն՝ Ջանաղին, և այլ ամենայն ազգականաց, կենդանեաց...։

Վասն այն ըստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց և եդ յիշատակ ի դուռն Ս. Փրկչի կափարիչ վիմին, ի սբ. Երուսաղէմ։ Եւ որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս, յիշեցէք... վարպետ Յոհանիսին, և իւր կողակցին, և իւրեանց զաւակացն, ապաշխարող Սուլթանին, և իւր քրւերն, և ամենայն ազգացն. ամէն։

Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և անարժանս ի մանկանց սբ. եկեղեցւոյ, Յոհան Հիզանցի, *անարժանս և սևերեսս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածարբնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի քաղաքս Հիզան, ընդ հովանեաւ նորաշէն սբ. տաճարացս Ս. Յարութենին և Ս. Աստուածածնին, Ս. Յովանիսին, Ս. Սարգսին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի մեծ թուականիս Հայոց Ռ և ՂԸ (1649) ամին, ի յաթոռակալութեան սբ* Երուսաղէմայ *Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին տէր* Աստուածատուր *քաշ և արի վարդապետին և սբ.* Էջմիածնա[յ] *տեառն* Փիլիպպոսին, *և* Սրսա[յ] *տեառն տէր* Ներսէսին, *և* Ալթամարայ *տէր* Ստեփանոս *կաթուղիկոսին։ Եւ ի թագաւորութեան այլասեռիցն սուլթան* Մուհամմէտին *խոնդքարին, ի դառն և ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք և տառապիմք ի հա[ր]կապահանջութենէ անօրինաց, նայև ի յաղահութենէ սուտ եղբարց, որ նախանձով ետուն զեղկելիս բռնել և ՃՄ ու Խ (140) զոսչ ճարիսայ առնուլ, զոր յայտնի ի մէջ բազմաժողով հանդիսին աղաղակէր և ասէր. «Վարդան անուն քահանայն, որ կրկին օծութեան հանդիպաւ, մին ի յաբեղայէ օծաւ և կրկին յառաջնորդէ. թէ դու ՉՃ (600) զոսչ ես հաներ ի քաղաքէս* Երուսաղէմայ»։ *Յիմացուցին պարոնին, տարաւ հաբս արաց Ժ (10)-ն աւր. յետոյ հայ ու տաճիկ մէջ անկան բռունք այս շարիմովս ազատեցին, զոր Աստուծոյ ամենատես աչացն յայտնի է սուտն և իրաւն, և կամ ներքոյ բանադրանաց ի պատճառս ագահութեան, զոր ամէնագէտն Աստուած մի՛ անտես արասցէ արդար դատաստանաւ իւրոյ»։*

Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասէք վարպետ Յոհանին, *և իւր զաւակացն՝ ապաշխարող* Սուլթանին, *և իւր քւերն, և ամենայն ազգացն ամենայնի. ամէն։*

Արդ՝ եդաւ սբ. Աւետարանս յիշատակ ի սբ. Երուսաղէմ, *ի դուռն Սբ. և պանծալի Հրեշտակապետին, ի հայրապետութիւն և յաթոռակալութեան Հայոց վիճակիս Յակոբա[յ] առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին տէր* Աստուածատուր *քաշ և արի և աստուածաբան վարդապետին։ Զոմնի ոք ի իշխանութիւն հեռացուցանել զսա ի դրանէ Ս. Հրեշտակապետին։ Եւ թէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի. ամէն։*

583

ՄԱՇՏՈՑ

Մայեղ, VII, № 2203

Գրիչ՝ Յոհան Հիզանցի

Վայր՝ Հիզան

276 *Փառք..., որ ետ կարողութիւն ակարիս և անարժանիս... և երեսիս և խաբեբայիս, լրբիս և անամաւթիս՝* Հիզանցի Յոհան *եղկելի գրչիս, որ կամ ի պատճառս ագահութեան զամ մի բոլոր ի ներքոյ բանադրանց, ի նախանձու սուտ եղբարց, զոր Աստուծոյ ամենագէտին է յայտնի, որ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնու....։*

Շնորհիւ տեառն Աստուծոյ ամենակալին հասաւ յաւարտ տառս աստուածայարմար Մաշթոց կոչեցեալ, ի քաղաքս Հիզան, ընդ հովանեաւ սբ. տաճարացս՝ Ս. Յարութենին և Ս. Աստուածածնին, Ս. Յովանիսին և Սարգսին, և Ս. Մարտիրոսին, ի թվին Հայոց Ռ և ՂԸ (1649)[22], ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տեառն տէր Փիլիպպոսին, և Աղթամարա[յ] տեառն տէր Ըստեփանոսին, և Սրսայ տեառն տէր Ներսէս կաթողիկոսին, և սբ. Երուսաղէմայ մերս Հայոց աթոռակալութեան Տեառնեղբօրն և Յակոբա[յ] գլխադիր սբ. դամբարանին տէր Աստուածատուր քաջ և արի աստուածաբան վարդապետին։

Զբստացող դրոցս զՅոհանէս վարպետն և զծընօղսն իւր, զորդին և զգաստերս իւր յիշեցէք..., որ եւ զգիրքս սբ. Երուսաղէմայ յիշատակ ի դուռն Ս. Մնընդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

584

ԽՈՐՀՐԴԱՏԵՐ

Մեզեպ, VII, № 2279

Գրիչ՝ Խաչատուր վարդապետ

374 Ով սբ. պատարագաւդ, յիշեա զԽաչատուր վարդապետս և զմայր իմ, թվին ՌՂԸ (1649) գրեցաւ։

585

ՄԱՇՏՈՑ

Մեզեպ, VII, № 2286

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Հիզան

384 Փառք...։ Որ եւ կարողութիւն տկարիս և անարժանիս, սևերեսիս և խաբեբայիս, լրբիս և անամաւթիս Հիզանցի Յոհան եղկելի գրչիս, որ կամ ի պատճառս ագահութեան զամ մի բոլոր ի ներքոյ բանադրանաց, զոր Աստուծոյ ամենագէտին է յայտնի, որ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնէ և ոչ մարդահաճութիւն գոյ ի նա, այլ արդարութեամբ դատի զամենայն։

Շնորհիւ տեառն Աստուծոյ ամենակալին հասաւ յաւարտ տառս աստուածայարմար Մաշթոց կոչեցեալ, ի քաղաքս Հիզան, ընդ հովանեաւ Ս. Յարութենին, Ս. Աստուածածնին, Ս. Յովանիսին, Ս. Սարգսին և Ս. Մարտիրոսին, ի թվին Ռ և ՂԸ (1649)։

---

[22] Սկզբից մինչև այստեղ նույն գրչի կողմից բառացի կրկնված է № 2256 ձեռագրի հիշատակարանում (տե՛ս Մեզեպ, VII, էջ 384)։

586

ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Մշբեղ, VIII, № 2493

Գրիչ՝ Ներսէս

170 *Գրեցաւ Աւետարանացոյցս և Աղօթամատոյցս ձեռամբ* Ներսէս *ա-նարժանիս, թուին Հայոց ՌՂԸ (1649), ի վայելումն տէր* Պատրսին: *Զխորհուրդն չգրեցաք, վասնզի ոչ պարտ է սարկաւագին ի վերայ խորհրդին նայել, այս խորհրդովս սոսկացաք և յետս չոգաք. յետուց տեսրը մի դրել տուր քահանայի մի, հոգի տէր* Պօղոս:

587

ԱԻԵՏԱՐԱՆ

Բաղդատ, «ՀԱ», 1889 թ., էջ 269, տե՛ս նաև «ՀԱ», 1959 թ., էջ 413—415

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

Վայր՝ Ասպահան

269 *Ես՝* Խիզանցի Մեսրոպ *վարդապետս կոչեալ, որ էի տարագնաց եկատրութեամբ բնակեալ ի* Շօշ, *յորշորշեալ* ԱԳամբիսակերտ *քաղաքիս, որ ըստ այժմու ասի* Ասպահան, *գրեցի տխեծ և մեղսաներկ ձեռամբս* Մեսրոպ Խիզանցի *դպիրս աշակերտին իմոյ՝* Վահրամ *գծագրել ետու և ըստ կարի ոսկենկար երանգօք վայելչացուցեալ շնորհեցի եկեղեցեացդ Հայաստանաց, ի վայելումն և ի խրախճանութեանց մանկանց իւրոց, ի ժամանակս տէրութեան Պարսից մանկանն շահ* Ապազ *կոչեցեալ, յաւուրսն որում դիմի հարկանէր թագաւորին արևելեան Հնդկաց ի վերայ բերդին* Ղանդահար *կոչի ասացեալ, ի թուաբերութիւնս ՌՂԸ (1649), ի հայրապետութեանս Հայոց տեառն* Փիլիպպոսի *խարազազգեաց ճգնաւորի։ Արդ՝ սկսեալ եղև տպագրերն* Ասպահան, *ընդ հովանեաւ Ա. Աստուածածնին, և յաւարտն ի սբ. մենաստան Ս. Կարապետի, որ է նախագահ և երևելի յոյժ, ի գաւառս* Ներնչակայ *յառաջնորդութեամբ տէր* Նայեա *քրտնաջան վարժապետի, որ յոյժ երկամբ աշխատի ի շինումն սրբոյ եկեղեցւոյս մեծի, կոփածոյ քարամբ գեղեցկաշար, ի հիացումն տեսողաց յօրինեալ ձեռամբ յոքնահնար* Դաւիթ *կոչեցեալ ուստայի։ Ըստ որում աղեխարշ սրտիւ պաղատիմ յիշել զինքն և զարբանակեալ միաբանսն իւր՝ զՄարտիրոս եպիսկոպոսն, զտէր* Յովհաննէս *վարդապետն, զտէր* Յովանէս *և զտէր* Առիստակէսն, *որք և սիրով աշակերտք եղեն արուեստի*[23]. Յովանէս *վարդապետն, և զ*Ղազար, *և* Արիստակէս *կիսասարգաւագն, և զ*Դաւիթ *տնտեսն, որ սիրական խնամածով սփոփէր զվտարանդեալքս ի նժդհութեանս և զամենեսեան, որ զնովաւ կերան։ Ընդ սոսին և ... և զառաջեալս զ*Մեսրոպ *դպիրս* Խիզանցի *և փեսացեալս իմ և ղսիրանունդ զաշակերտս իմ և զաշխատողս ընդ իս զ*Գրիգոր *արհեստասէրս, նաև զծնողսն իմ՝ զտէր* Մարտիրոսն *և զ*Խոնդքարն, *և զեղբայրս իմ՝ զտէր* Թադէոս *և զ*Պարանսմն, *և զամենայն ա-*

[23] Ձեռագրի նկարագրողը հաղորդում է, որ բազմակետերով նշված են անընթեռնելի տեղերը։

բեան մերձաւորսն յիշեցէք...։ Եւ առաւել դարձեալ յիշեցէք զիս և զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցիս, և զհոգևոր վարդապետս իմ՝ նախ զտէր Սարգիսն, որ մականուն Մազման կոչի, և զմիւս վարպետաց վարպետն՝ զտէր Մարտիրոս Խիզանցի, և զամենայն երախտաւորս յիշեցէք.. ամէն։

588

ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԱՂ

ՁՁԱՐ, № 201 (1644 թ.)

Հետ. ստացող՝ Մինաս Թոխաթցի

954 *Ես՝ նուաստ ծառայս Աստուծոյ՝* Մինաս *վարդապետս* Թոխաթցի, *վերատեսուչ մայրաքաղաքիս* Անկուրիոյ, *ի թվականութեանս Հայոց ՌՂԸ (1649), կրկին ստացայ զգիրքս զայս, և գնեցի ի հալալ արդեանց իմոց, ի վաղճանեալ* Գրիգոր *եպիսկոպոսի եղբօրէն և այլ ազգականացն, և եդի կրկին յիշատակ հոգւոյ իմոյ և հանգուցեալ ծնողացս, ի դուռն Ս. Աստուածածնին* Անկուրիոյ *վանիցն։ Ոչ ոք չունի իշխանութիւն հանելոյ ի դրանէ Ս. Աստուածածնին, գրաւելոյ և կամ ծախելոյ, թէ աղգականաց իմոց և թէ՛ օտարաց. և եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի ի մահ և ի կեանք, և զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայենի. ամէն*[24]։

589

ԱՒԵՏԱՐԱՆ

ՔՁՐ, № 123. տե՛ս նաև Rapp. Mac., X, *№ 13, էջ 51—53*

Գրչի՝ Յովհաննէս երէց

Վայր՝ Սեչով

ա

126 *Փառք...։ // ըղստացաւ ըզսր Աւետարանս խոճա* Քրիստոսատուրն Թոխաթցին *իւր հալալ արդեա[ն]ցն, և եդ յիշատակ Ս. Երրորդութիւն յեկեղեցին, իւր հոգոյն համար և իւր ծնողացն, հաւրն՝ խոճայ* Էմինին Թոխաթցի, *որ է որդի* Ղայրային, *մաւրն՝* Արոնին, *որ է դուստր* Թուրշինուն, *և իւր եղբաւրն՝* Միքայէլին, *և քրւերցն՝* Մարիամին, Աննային, *և իւր կողակցուն՝* Շուշան *խաթունին, և իւր զաւակացն՝* Ակոբին *և* Մարիամին, Աննային, Մանուշակին: *Աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք նոր Սիովնի և քահանայքս պատուելի, յիշման առնէք ըզմեզ արժանի* ըզՔրիստոսատուրս *մեղաց դերի։ Դարձեալ յիշեցէք ըզտէր* Սիմէոն *քահանայն, և զիւր որդին՝ ըզտէր* Աւգսէնն, *զի սոքա եղեն պատճառ այս սբ. Աւետարանիս։ Բայց յորժամ գրեցաւ սբ. Աւետարանս էր թիւ հայկազան տաւմարի ՌՂԸ (1649), գրեցաւ ի յերկիրս* Պուղտանաց, *ի քաղաքս* Սէջով, *ընդ հովանեաւ Ս. Սիմոնի. ի հայրապետութեան Հայոց տեառն տէր* Փիլիպոսի, *և յառաջնորդութեանն յայսմ նահանգիս տէր* Մինաս *վարդապետին, ձեռամբ յոգնամեղ, յանպիտան և փրծուն գրչիս*

[24] *Ցուցակի հեղինակը հաղորդում է, որ այս հիշատակարանը Անկյուրիայի առաջնորդ Մինաս Թոխաթցու ինքնագիրն է։*

Յով[ն]աննէս իրիցուս, որ անուամբս եմ և ոչ գործովս։ Աղաչեմք զձեզ
127 յիշել // զիս և ըզծնողս իմ, և զամենայն յարեան մերձաւորս, և դուք
յիշեալ լիջիք ի միւս անդամ գալուստն Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւի-
տեանս. ամէն։

Բ

Զստացող սբ. Աւետարանիս ըզխոճա Քրիստոսատուրն Թօխաթցին,
և ըզկենակիցն իւր, և զամենայն արեան մերձաւորսն, և ըզմեղաւոր
գրիչս ըզՅով[ն]աննէս էրէցս յիշեցէք ի Քրիստոս։

Զմեղաւոր գրիչս ըզՅով[ն]աննէս էրէցս յիշեա։

590

ԱԻԵՏԱՐԱՆ

ՋՁՍԳ, № 49 (1632 թ.)

43 Աստուած ողորմի տէր Մահտեսուն հոգոյն և իւր ծնողացն՝ Կոսաի-
կան և Սալվարին հոգոյն և երիցկնոշն՝ Ֆռանկին, որ շատ աշխատե-
ցան, որ զայս այրած Աւետարանս նորոգեցին իւրեանց հոգուն համար։
Թվին ՌՂԸ (1649)։

591

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ., № 63 (1474 թ.)

Վայր՝ Հռումբուման

97 Ի թվականիս Հայոց ՌՂԸ (1649) ամին շահ Ապասն գնաց յեր//-
կիրն Ղանդայնար. ի հայրապետութեան տէր Փիլիպպոս կաթուղիկոսին,
ի թագաւորութեան Պարսից շահ Ապաս[ի]ն Սանի։ Սբ. Աւետարանս
յիշատակ է տէր Սարգիսին, և կողակիցն Նդաարին, և դուստր Կուճարին,
և որդոյն՝ Ամիրխանին, և Ամիրխանի որդին և կողակիցն՝ Հռումին,
Սարգիսին։ Գիրս գրեցաւ ի քաղաքն Ըսպահան, ի դ[ե]աւղն որ կոճի
Հռումբուման, ի յերկի[բ]ն Լինջան. բաւ է։

592

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ., № 67 (1476 թ.)

Կազմող՝ Մելքոն

101 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զԱստուածատուր և զՅակոբ
կրօնաւորն, որ յայսմ ամի մերկացան երկու եղբարքն և եղեն սարկա-
ւագ, և ետուն նորոդել զԱւետարանս, յիշատակ իւրեանց և ծնողաց իւ-
րեանց, հօրն՝ Խէիւէաին և մօրն՝ Տուտումին, որ հանգուցեալ են առ
Քրիստոս։

Դարձեալ աղաչեմք յորժամ հանդիպիք յայսմ վարդափթիթ բու-

բաստանիս մէկ մեղայի արժան առնէք մեղ և ղծնօղքս մեր՝ և դուք յիշեալ լինիք։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվին Հայոց ՌՂ ԵԸ (1649), ի վանս Ամենափրկիչն։

Զկաղմող սորա Սելէոնս, ոհ, ոհ։

593

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ., № 76 (1490 թ.)

113 Զվերջին ստացօղ սբ. Աւետարանիս ղբարեմիտ և զհեզահոգի Դաղէոսն և ծնօղսն իւր՝ Բաբէն, և Հուրին և պապն՝ տէր Թադէոսն, և հօրեղբայրն՝ Դաւիթն, և եղբարքն՝ Բանդուրն, Ալթունն, Ոճանն, Բալասարն, և քեռն՝ Եղիսաբեթն, և Բէկիխանն, ե զխանումն, և եղբօր կողակիցն՝ Նազանն և Մարիամն, և որդիքն՝ Բաբէն, Միրզաբէկն, Աղաբէկն, Մարգարն, և Բայիսանն։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զստացիչ սբ. Աւետարանիս Թադէոսն, ե կողակիցն իւր՝ Սուրին, որ վաղուց հետէ իւր հայրենեացն կայր սբ. Աւետարանս, և ի ձեռս այլոց գրաւեալ էին։ Դաւէոսն վասն իւր հոգոյ փրկութեան և իւր ծնօղացն ի թվականիս Հայոց Ռ և ՂԸ (1649) ամին ստացաւ յիշատակ իւրն, և ամենայն առուարեան մերձաւորացն իւրոց, յիշեցէք...։

594

ԺԱՄԱԳԻՐՔ

ՏԵՐԱՎՋ., № 272

Նուիրատու՝ Ապով

ա

482 Ես՝ Ապովս իմ ձեռաց գրեցի, թէ գիրս տվի Աստուածածնին եկեղեցին վաղմ։ Ով աւր գիրքս կամ գրաւ անի կամ գրաւ դնի կամ ծախի՝ Աստուած անդուր տուն ջնջի, աղուլոյլաղն անիծի Քէրիստոսայ սբ. բերան, գրաւ գնողին տուն տեղն, զարմն, զավակն պատոյհասի, թուրքի թագաւորի զազապն[25] ընկնի, ի ձեռն սատանայի ձեռնումն տանջման կենայ, Հոգին Սբ. դատայպարտի դատաստանի աւուրն։ Տրվեցաւ ՌՂԸ (1649)։

բ

Աւարտ էառ Ժամագիրքս բոլորովին ի թուին Հայոց Ռ և ՂԸ (1649) շնորհօք Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեառն ամենակալի. վայ է քեզ գրծօղ սևերես։

---

25 Իմա՛ դաֆաղ (թուրք.)։

595
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ
ՏԵՐԱՎՔ., № 280

Գրիչ՝ Աղամալ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

486 Փառք...։ Ի թուականութեանս Հայոց տումարի ՌՂԸ (1649) գրեցաւ աստուածախօս մատեանս աստուածահօրն Դաւթէ, որ կոչի Սաղմոսարան և Ժամագիրք, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, և յերկիրս Ըսպահան, ի գեօղս Ջուղայ, և յառաջնորդութեան մերոյս Ջուղայի պարոն խօճայ Սուրֆուաղն և որդին ևս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս։ Եւ ի տիեզերալոյս կաթողիկոսութեան մեծափառ, համակ բարի և հեզահոգի, ճշմարիտ էկլէսիաստէս, երիցս երանեալ հայրս հանուրց իշխող և իշխեցող, պատուական և սրբասնունդ, հայրապետ և քաջ բարունապետ տէր Ֆիլիպպոսն, և մերոյ արհիեպիսկոպոսն տէր Յակոբ վարդապետն, աղաչեմք զտէրն մեր և զփրկիչն Յիսուս Քրիստոս, որ տէր Աստուած զիւրեանքն ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զստացող սբ. դրոցս զպարոն Ապովն, և զհայրն իւր՝ Մարութէն, և [զ]մայրն իւր՝ Սղմէրքն, և եղբայրն՝ Սիմէոնն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և քորքն՝ Անույփիէն, Զանէգանն և Սղիսաբեթն, և ընդանիք սոցա...։ Դարձեալ առ ոտս ձեր անկեալ աղաչեմ, յիշել զպարոն խօճա Ապովն, և զհամեստ զամուսինն իւր՝ զբարեսէր Մուղիքն, և որդիս իւր...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն խօճայ Ապովն, և զհայրն իւր՝ Մարութէն և զվերջի կողակիցն՝ Թալէլումն
487 և որդին՝ Գրի//գորն, Թաս[ա]լին, և դստերքն՝ Աննային, Խանփուշէն, Սոլթանջանն, և ամենայն արեայն մերձաւորացն ողորմեսցի Քրիստոս Աստուած...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ապովն, որ ստացաւ զսբ. գիրքս ի հալալ արդեանց իւրոց, վասն հոգոյ փրկութեան իւրոյ և իւր ծնողացն, Թասալէ, Խէրումին, Հայրապետին, Մարտիրոսին, Մովսէսին, աղաչեմ լի...։ Եւ դարձեալ յիշեցէք զտէր Յակոբ սրբամիտ քահանայն, որ եղև պատճառ գրոցս երթևեկ առնելով և փոխանակ աշխատանաց իւրոց հատուսցէ Տէր...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍ. Աստուածածնի եկեղեցւոյն միաբանքն՝ զպատուական ծերունի տէր Սիմէոնն և զտէր Յովհաննէսն, զտէր Յակոբն, զտէր Դաւիթն, զտէր Պօղոսն, և զտէր Կիրակոսն, և զտէր Մըկրտիչն, և զտէր Ներսէսն, և զհանգուցեալ տէր Զաքարիայն, և տէր Յովսէփն, որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս...։

Դարձեալ յիշեցէք զբարեսէր, հաւատարիմ քրիստոնեայ և երեսփոխան եկեղեցւոյ զմահդասի Աւետափաշէն, զՄկրտիչն, զԳրիգորն և զՆուրումն...։ Եւ արդ՝ ես յետինս յերեսս ի գետին անկեալ համբուրեմ զոտս աստուածահաճոյ և աստուածատեսակ հարցդ և եղբարցդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակ դնելով և կամ հարևանցի տեսանելով՝ Աստուած ողորմի հրամայեցէք սուտանուն և յոգնամեղ գրչիս և ծնողացն իմոց...։

Ման նվիշտամ թо բմունի եաղբկար, ման բմիրամ թо բմունի ռուզբգար[26]։

Բ

[27]



Գ

488 *Ով մանկունք սբ. եկեղեցւոյ, որք օգտիք յաստուածաշունչ բուրաստանէս ընթերցմամբ և կամ ածանցմամբ զԱղամալ գծող սորին յիշեսչիք Հայր մեղայիս...։*

Դ

Ապովի ինքնագիրը

Տէրըն արարիչ և այնսայմ[ա]ն,
Որ ըստեղծիչ ազգիք մարդկան,
Խաոնայ Ապովն *ի դասն աչայկողմայն...*[28]

596

ՇԱՐԱԿՆՈՑ

ՄԻՆՋ., № 46 (1313 թ.)

63 *Զվերշին ստացող երգարանիս յիշեցէք* զԽանլարն *և զիւր կողակիցն՝ զմահդասի* Անդրիասն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք* զԽանլարն *և զիւր որդի* զՄիրինանն, *և զկողակիցն՝* զՇանումաղէն, *և նոցա որդին՝* Ուլուխանն, Հայպաթխանն, *և զդուստրն՝* Սապրիխանն, *և զհանգուցեալ որդին՝* Ֆոանգուլն, Մանփարին, Օղլանփաշէն, Ասլիզաաէն, *յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք* զԽանլարն, *և զդուստրն իւր՝* զՍալվարն, *և հանգուցեալ որդին՝* Աիինանն, *և դուստրն՝* Էլիխանն, *յիշեցէք... Միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս* զԽանլարն, *և իւր ծնողքն՝* Զամարիէն, զՍալվարն, *և զեղբարքն՝* զՊողոսն *և* զԴազոշէն, *և զհանգուցեալ եղբարքն՝* Ասապովն, Սպազաան։

Յիշեցէք զԽանլարն, *և քուրն՝* Գուիսարազիզն, *և որդիքն՝ տէր* Ոսկանն, Աւետիսն, Յովանէսն, Միրզախանն, *և դուստրն՝* Օղլանփաշէն, *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք զԽանլարն, *և զեղբայրն՝* զԴազոշէն, *և կողակիցն՝* զՍիմէն, *որդիքն՝* Ապազ[ն], Ասապովն, Սիմոխանն, *և դուստրն՝* Սալվարն, *և հանգուցեալ որդին՝* Առիծն, Բարէն, Ազամաքն, Ջանփուրն, *յիշեցէք...։*

Գրեցաւ յիշատակարանս թվին ՌՂԸ (1649)։

---

[26] «Ես դրեցի, որ սա մնա յիշատակ, ես կմեռնեմ դա կմնա շարունակ» թարգմանությունը պարսկերենից պատկանում է Լ. Մինասյանին։

[27] Մածկագիրը կարդացվել է՝ «զԱղամալս յիշեց[է]ք»։

[28] Ցուցակի հեղինակը հաղորդում է, որ մեղայակեն ոտանավոր է, գրված 1649 թ.։

597
ՃԱՇՈՑ
ԹՑԺԴ, II, № 74 (1410 թ.)

Նվիրատու՝ Ալէքսան

51 *ՌՂԸ (1649) թուին գրեցաւ. ես՝ զԱլէքսանս ի Սալմասուս[յ], ի դուղն որ կոչի Յաւթրուան, որդի տէր Ղազարին, ըստացայ զսբ. դիրքս... և եդի ի դուռն Ս. Գէորգա[յ] զօրավարին։*

598
ԱՒԵՏԱՐԱՆ
«Հասկ», 1974 թ., № 3—4, էջ 119—120

Գրիչ՝ Պետրոս սարկաւագ

Վայր՝ Սեբաստիու գաւառ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուաբերութեան ՌՂԸ (1649) ամին, ձեռամբ մեղսամակարդ և սուտանուն սարկաւագ Պետրոսի, ի գաւառն Սեբաստիու, ի հոգևակաւոր վանքն Ս. Հրեշտակապետու, ի յառաջնորդութեան սբ. ուխտիս տէր Նիկողայոս արհեպիսկոպոսին, զոր տէր Յիսուս պահեսցէ զնա երկ[արյ[29] ամաւք և ընդ սբ. հայրապետացն դասուն դասակից և պսակակից արասցէ. ամէն։

Եւ արդ՝ աղաչեմ զձեզ, ո՞վ մանկունք սբ. եկեղեցւոյ, որ հանդիպիք այս սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք սրտի մտաւք յաղաւթս ձեր զուսուցիչն իմ զտէր Անանիայն, աղաչեմ յիշել ի Տէր և դուք յիշեալ լիցիք ի Տէր..., և այլ աղաչեմ զձեզ՝ խոշորութեան և անարհեստութեան և սղալանացս մի՛ մեղադրիք, զի կար մեր այս է։

599
ՇԱՐԱԿՆՈՑ
Բալու, № 6 (ժամանակ ?)

Կազմող՝ տէր Յոհան

141 *Արդ՝ կազմեցաւ Շարակնոցս ձեռամբ անարժան, և անպիտան, և անարհեստ գրչիս՝ տէր Յոհանի, և վարպետին իմոյ՝ տէր Մատթէոս արքեպիսկոպոսին Աստուած ողորմի ասացէք. ամէն։ Թվին ՌՂԸ (1649)։*

600
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Աղավնունի, Այցելուք, էջ 175

Նվիրատու՝ Խաչատուր Ատիշեցի

Վայր՝ Կ. Պոլիս

...յետնեալս ի բանասիրաց Ատիշեցի Խաչատուր վարդապետս պատահեցայ յայսմ վայրի՝ մեծահանդէս քաղաքս Բիւզանդիայ հանդերձ

---

29 Տպված «երկամաւք»։

քաջ հռետոր և անյաղթ պուետիկոս տէր Աստուածատուր *աստուածաբան վարդապետ, սբ.* Երուսաղիմայ *երջանիկ հայրապետաւն, տեսեալ Աստուածաշունչ տուփս այս գեղեցկադեղ ծրեալ միայն սեաւ տառսն...։ Եւ ահա յանգ ելեալ լրացաւ ի մեծ մայրաքաղաքս* Կ. Պոլսի, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսին, ի թիւ սեռիս հայկազանի քսաներկու յոբելեանի, ոչ գոլ լման կատարեալ լի և երկրորդիւ հարկ գոլ ի սմին (1649)...*[30]

Արդ՝ երես անկեալ աղաչեմ հանդիպողացդ այսմ հոդենուակ բուրաստանին յիշել ի ժամ աղօթիցն զիս անարժան զԽաչատուր վարդապետս և զծնողսն իմ՝ տէր Բարսեղն *և* Դիմսիթն, *և զնախնիքն՝ տէր* Յակոբն, Խաչատուրն, Գրիգորն *և* Մաւարդն, *և զհարազատ եղբայրքն իմ՝ մահտեսի* Յովհաննէսն, Աւետիքն, Յովհաննէսն...: *Յիշեցէք ի Քրիստոս միով ողորմեալիւ ինձ տառապեալ* Խաչատուր *վարդապետիս, որ բաղում ծախիւք և արդեամ[ք]ք ետու գրել և ծաղկելով զարդարել զԱստուածաշունչս ոսկով և լաճվարդով, և երանգ երանգ գունով և ետու յիշատակ ի սբ.* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ, ի յառաջնորդութեան տեառն տէր Աստուածատուր ... վարդապետին...։*

601

ԱԻԵՏԱՐԱՆ

Ճանիկեան, № 4

79 *Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՂԸ (1649), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան* Մահմէտին, *ի կաթողիկոսութեան* Փիլիպոս *սբ. կաթողիկոսին և ի հայրապետութեան* Ակնեցի *տէր* Յովհաննէս *պարոնտիրին։ Յայսմ ամի կայ ԺԳ (13) քահանայ, որք են...*[31]*։ Յայսմ ամի խօճա Արզումանն եղ յիշատակ զսբ. Աւետարանս ի Ա. Յովհան եկեղեցի,*[32]*. յիշատակ հօրն՝* Ճինանշահ[ին] *և մօրն՝ մահտեսի* Պաղտատին...:

602

ԱԻԵՏԱՐԱՆ

Ճանիկեան, № 40 (1625 թ.)

95 *Դարձեալ յիշեցէք մաքրափայլ աղօթս ձեր զվերջին ստացող սբ. Աւետարանիս զխոճայ* Յակոբն ... *և եդ յիշատակ ի դրունս Ս. Ստեփաննոսի, ի թվին ՌՂԸ (1649), ի հայրապետութեան տեառն տէր* Ներսիսի Սեբաստացւոյ...:

---

30 *Այսինքն՝ [(22×50)—2]+551։*

31 *Անունները և հիշատակարանի շարունակությունը Ճանիկյանը չի բերել,*

32 *Ճանիկյանը ծանոթագրում է, որ խոսքը հավանաբար վերաբերում է Ակնի Վարի թաղի (շուկայի մոտ) Ս. Հովհան եկեղեցուն, այրված 1655 թ.։*

603
ԱԻԵՏԱՐԱՆ
Թորոս աղբար, Բ, էջ 463

Գրիչ՝ Քրիստոստուր
Վայր՝ Կ. Պոլիս

Գրեալ ի Կ. Պոլիս ձեռամբ Քրիստոստուրի ի թվին Հայոց ՌՂԸ (1649)։ Յիշեցէք զՓոքր Աղիշեցի Կարապետն, որ ի գաւառէն Ամբայ. ի գեղջէն Պզտի Աղիշ... զմահտեսի Միրիջանն և զԱլամն... յիշատակ ի Մէծ Ատիշ գեղջն, ի դրունս Ս. Մաւրոֆին Ս. Կարապետին, և Ս. Սարգսի խորանացն...։

604
ԱԻԵՏԱՐԱՆ (1463 Թ.)
Արցախ, էջ 274—275

Նորոգող՝ Սահակ աբեղայ

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ընդ հովանեաւ աստուածընկալ Ս. Նշանիս Վարագայ, ձեռամբ Սահակ անարժան աբեղայի, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Կիրակոս վարդապետի, որ բազում ջանիւ գվանքս կրկին անգամ նորոգեաց՝ զեկեղեցիք, զդարպաս, զտներ, զոր ի շարժմանէ ապականեալ էր, ի թուականիս ՌՂԸ (1649), ի խնդրոյ Յոհան անուն անկեալ երիցին, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց և ետ նորոգել։

605

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3119

Գրիչ՝ Վարդան աբեղայ

216բ Եւ աղաւթիւք սբ. ծերոյն ողորմեայ Տէր ամենայն հաւատացելոցս և փափագանաւք ղծաւղի սորա, անարժան և ծոյլ Վարդան աբեղի, և թվականիս ՌՂԹ (1650) յունվարի Ե (5) ճրագալուցի. որում փառք յաւիտեանս. ամէն։

606

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1856

Գրիչ՝ Յովանէս երէց

Վայր՝ Մալաթիա

ա

109ա Փառք...։ Արդ գրեցաւ և յաւարտեցաւ սբ. կառս, որ կոչի Ոսկիփոր, ձեռամբ Յովանէս իրիցուն, որ միայն անուամբս եմ երէց և գործս ոչ, ի թուականիս Հայոց ՌՂԹ (1650) մարտ ամսոյ ԻԶ (26). և եղև յաւարտումն տառիս ի գաւառն Մալաթիու, ի դրունս Ս. Ստեփաննոսի, ի հայրապետութեանն սբ. յաթոռոյն Սբսայ Հայոց տեառն տէր Ներսէս կաթուղիկոսին։ Այլ և զծնաւղսն՝ Աստուածատուրն և զմայրն իմ՝ Թագուհէ, զեղբայրն իմ՝ Կարապետն, որ հանգեան ի Քրիստոս. զեղբայրն իմ՝ Պառսամն, քոյրն իմ՝ զԵրանն, զորդին իմ՝ Սեերիանոսն, Գաբրիէլն, Հարապետն. և զանպիտան գրիչս Յովանէս երէցս յիշեցէք ի Տէր և մի բերան ողորմի ասացէք...։ Այլ և յիշեցէք սարկաւագ Աբրահամն և իւր կենդանիքն և ննջեցեալքն, որ այս գիրքս Ոսկէփոր պատճառ եղաւ դրելոյն։ Աստուած աւրհնէ զինքն և իւր ննջեցեալքն. ամէն։

Բ

10ա Բարեխաւսութեամբ աստուածընկալ և ամենայաղթ սբ. նշանի քո Քրիստոս Աստուած ողորմի ըստացողի գրոցս, մեղաւոր գրչիս սուտանուն Յովհաննէս իրիցուն, այլ և ծնաւղաց իմոց Աստուածատուրն և մայրն իմ՝ Թագուհէ, որ առ Աստուած փոխեցան, և եղբայրն իմ՝ Պառսամն, և քոյրն իմ՝ Երանն։

607
ԳԱՆՁԱՐԱՆ
ԹՑԱՎ, № 217 (ԺՁ դ.)

438 Յիշատակ է Գանձտետրս մահտեսի Մովսէսին, և իւր հաւրն՝ Պարիւուսրին, և մաւրն՝ Նազլուին, և եղբարցն՝ Նէրսէսին և Յովսէփին, Մելքոնին, և քրւերցն՝ Խանումին և Թուրիննին, Շահմանանդին և իւր կողակցին Մուշֆինարին, և հաւրն՝ Յակորին, և մաւրն՝ Ճուճարին, որ առին զԳանձտետրս և եդին յիշատակ ի գուռն Ս. Լուսաւորչին...։ Գրնեցաւ Գանձտետրս թվին ՌՂԹ (1650) մարտ ամսոյ... ուրբաթ, և եդաւ յեկեղեցին Լուսաւորչին ի քաղաքն Մանիսայ։

608
ՔԱՐՈԶԳԻՐՔ
Երևան, № 9289 (1592 թ.)

235ա Յիսուսի Քրիստոսի ծառայէ Քարմատանենց Յովհաննէս վարդապետէ շնորհեցաւ այս Քարոզգիրքս ի վայելումն սիրական և պատուելի եղբօրտ մերում տէր Յոհան սրբազան կրօնաւորիդ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

Գրեցաւ թվին ՌՂԹ (1650) մայիսի ամսոյն Ժ (10)։

609
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
ՈՑՁՄՎ, № 693

Գրիչ՝ Աստուածատուր

183 Գրեցաւ Պարզատումարս ձեռամբ բազմամեղ և անարժան Աստուածատուր գրիչս, թվին ՌՂԹ (1650) յունիսի Զ (6). գրեցաւ սակաւ գիրս։

610
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 4304

Գրիչ՝ Աւէտ Որոտնեցի

ա

5ա Զաստուպեալ ոգի գրծողս,
Անգէտ յԱւէտ Որոտնեցիս,
Յիշման առնէք զիս արժանիս,
Այժմ և յաւուրն յապագայինս։

Զրեցաւ ՌՂ և ութ (1649) թվին։

բ

40բ Ով սր. ընթերցողք, յորժամ երգէք զերգս սրբոց մարտիրոսաց, ընդ նմին զիս՝ զբազմամեղ Աւէտ գծողս յիշէք ի Քրիստոս, արդար

բերանով, զյիշողդ՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ. ամէն։ ՌՂԹ[1] (1650) թվին։

Գ

82ա Զրեցաւ մատամբ մեղսամածէ,
Աւէտ չընչին անարժանէ,
Հազար նըսուն յինըն (1650) թըվէ։
Տեղապահ Հազարափրրկչէ։

Դ

163ա Զտառապեալ ոգի գծողս, զանարժան Աւետիս գրիչս և զծնողսն իմ աղաչեմ հիշել միով Տէր ողորմայիւ։

Ե

168ա Որ կապեցար ի Պուղեստին,
Արձակեցար ի Հռոմկըլին,
Լեր բարեխաւս գծողի սորին,
Նաև ծնողաց և յիս յետին,
Ինձ բազմամեղ Աւէտ չընչին,
Մեղօք փարթամ լրցեալ ոգին։

Զ

272ա Գիտութեամբ ընդ Հրէիցն քաղաքաց և անգիտութեամբ ընդ սոդոմայեցիսն, որոց ինձէն վկայէի անձին իմոյ բիւրապատիկ առնուլ առաւել քան զնոցունցն, թէ արդարութեամբ ղադեցայց, այլ ողորմութեան շնորհին ակն ունելով յուսով սպասեմ սբ. ընթերցողացդ աղօթից, յիշել զանարժան Աւէտ գրիչ և զծնողսն իմ. և զիսս, որ եմ թափուր ի բարեաց և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։

Զրեցաւ ՌՂ և ինըն (1650) թվին. մայիսի է (7) եղև սկիզբն և յունիսի ք[2]

611

ՅԱՅՍՄԱԻՈԻՐՔ

ՋՁՀՍ, № 152

Գրիչ՝ Սանակ
Վայր՝ Բէրիա

ա

320 ... Փառք անբաժանելի... ըստ նմին աւրինակի ի խնդիր ելեալ յայսմ հոգիանորոգ և լուսերանգ, ծաղկաւէտ և վարդափթիթ անուշահոտ բուրաստանիս, պատուական և ասծուածասէր և բարէմիտ մահտեսի տէր Աստուածատուրն...: Եւ եղև գրաւորութիւն գրոցս ի ՌՂԹ (1650) թուա-
327 //կանիս Հայոց, յուլիս ամսոյ ի ԻԶ (26), աւրն ուրբաթ։ Եւ ի գաւառս

[1] «ՌՂԹ»-ն ձեռագրում գրված է փակագիր։

[2] Հիշատակարանն ընդհատվում է։ բ, գ և զ հիշատակարաններում թեև երիցս հիշվում է 1650 թ., բայց Մատենադարանի ծուցակում ձեռագրի ընդօրինակության տարեթիվը նշված է 1649 թ. (հտ. Ա, էջ 1189)։

Արաբիայի, քաղաքս Ներիա, յաստուածաբնակ և սրոբէագումար մէնաստանս առ դուրս Ս. Աստուածածնի և Ս. Քառասնից եկեղեցիացս, ի հայրապետութեան տեառն տէր Ներսէս կաթուղիկոսի, ձեռամբ յու[գ]նամեղ և անարհեստ գրչի Սահակ անարժանի, ի լաւ և յընտիր աւրինակէ։ Արդ՝ որ հանդիպիք սբ. գրոցս կարդալով կամ աւրինակելով՝ յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զստացող սբ. գրոցս՝ զմահտեսի տէր Աստուածատուրն և զիւր կողակիցն՝ զՎարդխաթունն, որդիքն իւր՝ զԹորոսն և զԱկոբն, հայրն իւր՝ զՍահակն, և զմայրն իւր՝ Մարիամն, և եղբարքն իւր՝ զՂազարն, զԱմիրշահնրն, և զԴանիէլն, և զմեծ պապն իւր՝ զտիրացու Ապտլէէն, և զկինն իւր՝ Ճանէն։ Եւ դարձեալ զմիւս մեծ պապն՝ զտէր Ապտլան և զկողակիցն իւր՝ զխաթունն։ Եւ զամենայն աղգայինսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն. լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք մահտեսի տէր Աստուածատուրին, և իւրոցն ամէնին, որք յիշատակեցան աստ և Աստուած...։ Այլ զիս զանարժան գծողս աղաչեմ յիշել ի Տէր և զհայրն իմ՝ զՄելքոն քահանայն, որ ուսուցիչ մեր այս հոգևոր արհեստիս, և զմայրն իմ՝ զԱլթունն որ առ Աստուած են փոխեալ, և զկողակիցն իմ՝ զխաթունն, և զորդիքն իմ՝ զՊետրոսն և զՊօղոսն, որ բաղում աշխատութեամբ զթուղթս կոկեալ են, և զդստերքն իմ, և զեղբայրքն իմ, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ թէ կենդանի, և թէ հանգուցեալ...։ Արդ՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահտեսի տէր Աստուածատուրն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, և զդիր յիշատակ իւր հոգոյն ի Հալասլ, ի դուռն Ս. Քառասունք եկեղեցուն. և է անջինջ յիշատակ իւր և իւր ծնողացն։...

Բ

... ԶՍահակ գրչակս աղաչեմ յիշել ի Տէր և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...

Գ

...Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս մահտեսի տէր Աստուածատուրին և իւր կողակցին՝ մահտեսի Վարդխաթունին, հայրն՝ Սահակին, և մօրն՝ Մարիամին, և որդւոյն՝ Թորոսին և Ակոբին, և մեղաւոր գրչիս...։

Դ

Յայսմաւուրքս տէր Աստուածատուրին է, ես Յակոբս զայս գրեցի բարէծնողացն տէր Նողկտիր[3]։

612

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 8325 (1564 թ.)

Նորոգող՝ Խաչատուր

371բ Վերստին նորոգեցաւ գիրքս, որ ասվի Զայնքաղ, ձեռամբ հողոյ հաւասար, անմիտ և ապիկար, որ է Խաչատուր և մեղաւ ոք քահանայ. թվին ՌՂԹ (1650) աւգոստոսի ԺԵ (15)։

[3] Այս հիշատակագրությունը, ինչպես հաղորդում է Ա. Սյուրմելյանը, գրված է ծածկագիր. այն վերծանել է ինքը։

613
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Վատիկանի դրադարան № 19 (1607 թ.)

Գրիչ՝ Մելիտան

291 ... Թվին ՌՂԹ (1650) հոկտեմբեր ԻԷ (27), աւրն կիրակի, Գիւտ խաչին ուխտին աւրն, այսպէս մեծ զարմանք մի եղաւ, որ մարդ ոչ տեսեր, ոչ լսէր [էր]. ի ծովէն մեծ զարմանալի ձայներ՝ թաւփի եկաւ որպէս թոր կու նետէին։ Ամենայն աշխարհս մեծ և փոքր ի որոտմանէն սասանեցան, թէ այս ձայնս ո՞ւսկի կու գայ։ Ապայ որչաք քութուլէմիշ անելն ոչ կարացաք համարել և ոչ կարացաք դբրել. անթիւ ան Ռ (1000) ձայներ եկաւ. Ի (20), Լ (30) աւուր ճանապարհի հեռու տեղանին զորոտման ձայներն լրսեցին։ Ապայ այս զարմանքս ի ծովուն մէջն այտամի այրեցաւ, որչաքատան քայր և հող կայր ի յերկնուց երեսն ելաւ և ի ծովն թափեցաւ. ամէնն քարրն ծովուն երեսն շուռ կու գար, քարերրն մէկ մարդու չաք քարն անճախ Ա (1) հօխայ կու գար. որպէս սունկեր ծովին երեսն ժուռ կու գայր, մարդիք կառնէին կու տեսանէին և կու զարմանային քարին թէթև լինալն։ Այրած ատենն խիստ դառն հոտ ելաւ, այ[ն]պէս քիմքիրնիս բըորնվեցաւ. որչաք որ շուբ[շ]ս արծաթ կար սեացաւ, քիրաճլու պատերրն սեվացաւ։ Մեծ մեծ զարմանալի բաներ եղաւ. Աստուած վերշն բարին առաշնորդէ. ամէն։

Ես՝ մեղաւոր և անարժան Մելիտան ձեր ոտից հող։

614
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 179 (1292 թ.)

Նորոգել տվող՝ Խաչատուր վարդապետ

ա

578բ Ի կամս Աստուծոյ և շնորհօք նորին ես՝ Խաչատուր վարդապետս, աշակերտ երանեալ հօրն Մովսէսի կաթողիկոսի Հայոց, որոյ հրամանաւ և եղև մեզ ժառանգել զաթոռ Գողթան զսբ. վանս, որ յանուն սրբոյ առաքելոյս Թումայի հաստատեալ է, վերստին ետու կազմել զսբ. մատեանս, որ է ըշտեմարան ամենայն կտակարանաց՝ Հնոց և Նորոց, անպակաս։ Որ և անուանեալ կոչի Աստուածաշունչ։ Էր սա ի նախնեաց անտի յիշատակ սբ. աթոռոյս, անշինչ, բայց ի վատթար պահողաց յոյժ քայքայեալ էր. վասն որոյ ոչ անտես արարաք զհնութիւն սորա։ Այլ վերստին նորոգեցաք զսա ի թուաբերութեան արամեանս[4] ազին ի Ռ-երորդի ինսներորդի և յիններորդում (1650) ամի, ի հայրապետութեան հրեշտակաբնակ սբ. աթոռոյս Էջմիածնի տեառն Փիլիպպոսի և ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին փոքու։ Եւ եղաք զսա ի սոյն վանս յորում

579ա և գոյրն // յառաշադոյն։ Եւ արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպօղսդ սբ. մատեանիս յիշեսշիք զիս յաղոթս ձեր և մեղաց իմոց թողութիւն հայցեցէք աղաչեմ, աղաչեմ։

---

[4] Ձեռագրում «արամեանս»։

Կազմող՝ Գալուստ

Բ

Զեռամբ կազմեալ անարժանի,
Կոչեալ անուամբս չար դպրի,
Ոչ եմ արժան կոչիլ բարի,
Վեհ եմ և ես դլուխ չարի։
Արդ՝ ես Գալուստ ստոր անկելի,
Ես աղերսեմ հառաչալի,
Ըղմեզ յիշէք անզըղուելի,
Անկնարկելով այսմ բանի։

615

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 189

Ծաղկող՝ Յէրապետ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

Ա

6ր *Աստուածաշունչ սբ. ամք Կենարարին ՌՃԾԹ (1650), Հայոց ՌՂԹ (1650)[5]։*

Բ

Ես՝ եղկելի Յէրապետս շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին աւարտեցի Աստուածաշունչ սբ. մատեանս ի Շօշ քաղաքն՝ Ասպահան, ի գիւղն Ջուղայ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին[6]։

Գ

469ա Ծալկոդի նկարի տակ *Ընկալ զմատեան նէր ծառայիս քո Յէրապետի։*

Դ

469ր 472ա խորանների կամարներում *Ով դասք սբ. մաքուր վարդապետաց և մանկունք սբ. եկեղեցեաց, յիշեսջիք ի Քրիստոս զՄատթէոս վարդապետն[7]։ Դարձեալ յիշեցէք զՋուղայեցի Մատթէոս վարդապետն, որ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն։*

---

[5] Գրված է նկարի վրա։ 1650 թ. ձեռագրի զարդանկարման տարեթիվն է։

[6] Գրված է նկարի քառանկյունի շրջանակում, իսկ կլոր շրջանակում գրված է Սաղմոսից (ԻԱ, 18) մի հատված, այսպես. «Մակեցին զձեռս իմ և զոտս, և թուեցին զամենայն ոսկերս իմ, նոքա հայեցան և տեսին զիս», այնուհետև շարունակվում է. «տեսի զկեանսս»։

[7] Այս անձնավորության անունը, որ մեկ անգամ էլ հիշվում է հաշորդ տողում, մյուս հիշատակարաններում չենք գտնում։ Այդ անունը, հավանաբար, ավելացվել է ձեռագիրը զարդանկարելու ժամանակ՝ 1650 թ.։

Գրիչ՝ Գասպար երէց

Ե

603ա Փառք ամենասուրբ Երրորդութեան,

. . . . . .[8]

Զ

643բ Զի որպէս ուրախութիւն մեծ է նաւելոցն, ի նաւահանգիստն ժամանել, այնպէս և գրչին վերջին կէտն. :Լասն որոյ գոհացողական ձայնիւ վեր առաքեմ փառք, պատիւ և գոհութիւն ի բարձունս։ Որ և զանարժան գրիչ Գասպար քահանայս և զիմ աշակերտ Յովսէփ դպիրն արժանի արարեր հասանել ի վերջին գիծ տառիս և ի հոգելից բուրաստանիս։ ամէն։

Է

644ա Փառք...։ Զոր տես[եա]լ այսպիսի գանձս աստուածային և զբանալիս դրանն արքայութեան, աստուածասէր և ողորմած, հեղ և հանդարտ... պարոն Նազարեթն ջերմեռանդ սրտիւ և փափաքանօք ետ գրել, և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոյ՝ Նազարեթն, յիշատակ իւր և իւր ծնողացն, հօրն՝ մահդասի խօջայ Եղնազարին և մօրն իւրոյ՝ Սալվինազին, եղբարցն՝ Գասպարին, Ղազարոսին, և քուերցն՝ Մարիամին, Շահզատին, Մէրջանին, Աննային, Ասանեթին, և որք որ կենդանի են տէրն մեր Յիսուս Քրիստոս բարով և խաղաղ կենօք վայելել տացէ. ամէն. և որք հանգուցեալ են, արժան լինին կենեղուդ ձայնին, որ ասէ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռինք և ես հանգուցից զձեզ». արժան լինին այն ձայնին. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Նազարեթն և զհօրեղբարքն՝ զխօջայ Առաքելն, զմահդասի խօջա[յ] Մարուքէն, զմահդասի խօջայ Նազարն, յիշեցէք...։ Կրկին յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Նազարէթն և զհօրեղբօր կանայքն՝ զՍղմէրն, զՇիրին և զԴիշխունն, յիշեցէք...։ Միւս անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Նազարէթս և զհօրեղբօր որդիքն իմ՝ զխօջայ Ոնանն, Ոսկանն, զխօջայ Սաֆարն, Բաղասարն և զԱղամալն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Նազարէթն և զկողակիցն՝ Եզդիխանն, դեռաբոյսք և նորաբողբոջք, նազելիք և սրամիտ[ք], գեղեցիկք և ցանկալիք որդիքն՝ Եղնազարն և Միքայէլն, որ կոչին ծաղիկք պատուականք, որ և ապէնիազն անփորձ պահէ զնոսա. ամէն։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Նազարէթն և զծառայքն իւր՝ Վարդանն, Յովսէփն, Պիճօն, Գօրգի, Գրիգորն, Պետրոսն, Պօղոսն, և զաղախնայքն՝ Ջանաղէն, Սառէն, Շամանդուխտն, Եղինարն, Գոյտասուէն, յիշեցէք...

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս զանարժան Գասպարն երէց գրիչս և զիմ մարմնաւոր ծնողքն՝ զՊաղտասար քահանայն և զԹուրվանդայն, և զիմ որդի Յարութիւն դպիրն, որ բազում աշխատեցաք ի վերայ մահաղաթի և գրի սբ. Աստուածաշունչ գրքիս, յիշեցէք...։

---

[8] Մի քանի էջ բռնող այս չափածոյի (տե՛ս № 2587 ձեռագրում) պատմական մասը տեսնել 1648 թ. շարքում։

Գրեցաւ Աստուածաշունչ գիրքս և աւարտեցաւ ձեռամբ [յ]ոքնամեղ Գասպար իրիցի և իմոյ աշակերտի՝ Յովսէփ դպրի, ի քաղաքն Շօշ, որ Ասպահան ասի՝ եզր Նարընդալային, ընդ հովանեաւ Ս. էջմիածնի, ի հայրապետութեան խարանազգեաց տեառն Փիլիպպոս կաթողիկոսի, և առաջնորդութեան մերոյ քաջ բաբունապետի տէր Յակոբի, ի թվականի ՌՂԸ (1649), ի թագաւորութեան այլազգի շահ Նպասի, որ յայսմ ամի բազում զօրօք խախդեալ և գնացեալ ի վերայ Ղանդահարայ, ընդդէմ զօրացն Հնդկաց, որ և ապագայն միայն յԱստուծոյ է դիտելի։

Ը

Արդ՝ ես Գասպար մեղօք ի լի,
Չխե (45) ամըն լըցի,
Զամէնն ի հետ մեղաց կացի,
Ու զմահու օրն չյիշեցի։
Զօրն ուտէի և ըմպէի,
Ես ծոյլ և թոյլ ամենայնի,
Աշխարհս ծով էր, ես ծփի,
Մի՞թէ իմ Տէրն ինձ ողորմի։
Զինչ որ այլոց խրատ տայի,
Ցօժար մտօք զայն գործէի,
Զայլոց զշուզրն յայտնէի,
Եւ զիմ գերանրն ծածկէի։
Զգրոց կոչակն արձակէի,
644բ *Ես և այլոց քարոզէի,*
Ես որպէս սակ եմ դարբնի,
Եւ կամ զորց քար ի մէջ ջրի։
Տէրրն հրամէ իւր քարոզի,
Թէ վայ որ ի կին մարդն հայի,
Ըզհրաման Տեառն ես անցի,
Վայ ինձ ւ եղուկ յամենայնի։
Ես կարգ առի քահանայի,
Եւ զայն գործով չկատարեցի,
Յանմեղ մարդկանէ գովէի,
Եւ ես ի յիս փքանայի։
Ի մտացս մէջն հպարտանի,
Բայց վայ հազար բերան ընձի,
Աստուածածին կոյս սրբուհի,
Իմ յոյսն դու յաւուր մեծի։
Բարեխօսեա քո Միածնի,
Վասն անարժան քո ծառայի,
Նազարէթ մանուկ բարի,
Քո սբ. տեսուն արժան լինի։
Այս աշխարհիս է պանծալի,
Ի այն ատենին յոյժ գովելի,
Զանազանեալ ամենայնի,

Քահանայից յոյժ պիտանի։
Ամէն աւրհնեալ սր. Տիրուհի,
Զսա պահէա անդրդուելի,
Բամից աղքատացն բոլորովի,
Սա անտրտունջ ի հոգ տանի։

. . . . .

Գ

Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց, ...մեղսամած սոսկանուն քահանայ Գասպար, որ զձև ունիմ քահանայի և գործոյն թափուր և ունայն զտանիմ, տեսի զսէր և զփափաք խօջայ Նազարէթիս, զոր ունէր առ հոգևորսն և իմով իսկ տկարութեամբս յանձն առի և յամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսր. Աստուածաշունչս։ Ո՛վ հայրք և եղբարք, մանկունք սր. եկեղեցոյ, երեսս ի գետին դնելով տրտմասուաթոռ աչօք մաղթելով հայցեմ ի ձէնջ, յորժամ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով անմեղադիր լերուք խոշորանաց և սղալանաց, զաւելին բառնայք և զպակասն լնուք, զվարձքն ի Քրիստոսէ ընկալցիք միուն ՃՃ (100)պատիկ...։

Դ

Դարձեալ յիշեցէ[ք] ի Քրիստոս զծաղկող սորա զՀայրապետն և զվարպետն իմ զքաջ բարունի Խաչատուր վարդապետն և զեղբայրն իմ՝ զԲաղտասար վարդապետն. ընդ սմին և զծնողսն իմ, և զծկողակիցն, և ամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զննջեցեալսն. և որք յիշէք՝ յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն. ամէն։

616

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Երևան, № 684

Գրիչ՝ Մարինոս
Վայր՝ Առինջ

ա

61։ա *Փառք...։ Այլ և թարմատար գրիչս և շամբուշ ոգիս, տրուպ և տկար յըստեղծուածս Մարինոս տառապեալ, աղաչեմ զընթերցողսդ և զվայելողսդ, հանդիպողսդ և զհարևանցի տեսողսդ աստուածագիծ*[9] *տառիս միով Հայր մեղայիւ յիշել և Աստուած ողորմի ասել հանգուցելոց ծնողաց մերոց, մանաւանդ վասն ծրողին, խնդրել յողորմութիւն ի Քրիստոսէ և թողութիւն բազում յանցանաց իմոց։ Վասն որոյ աշխատեցաք և յուսով ակն ու[ն]իմ ի ձէնջ, խնդրել ի Քրիստոսէ պարգևել և ոչ վասն նիւթոյ անցաւորի։ Այլ և զՄար<մ>իամ քեռորդին, որ զթուղթն կոկեաց և զկէսն գրեաց և ընդ իս աշխատեցաւ մինչ ի սպառ. զի եղիցի մասն նմա ընդ աջակողմեանսն։ Որ ետ կարողութիւն տկար բնութեանս և տխեղծ մատինս հասանել յաւարտ գրոցս սր. հարանց վարուցս, ծաղկաւէտ բուրաստանիս ըստ հրամանի և ըստ խնդրոյ համշիրաք անձինս*

[9] Ձեռագրում «ածագիծ» առանց պատվի։

իմոյ սիրեցելոյ և հարազատի եղբօրս իմոյ, ընտրելոյ տէր Յովաննէս
բաբունոյ և ամենեցուն վկայեցելոյ աշակերտի սրբազան հայրապետի
տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի սբ. էջմիածնի, և վերատեսուչ և
611բ առաջնորդի մեծի նահանգիս յՆոգկիոյ//ի վայելումն անձին իւրոյ յա-
մենայն ժամանակօք և յիշատակ ծնողաց մերոց, հօր մերոյ Յոհանիսի և
բազմերախտ մօր մերոյ ՅուղիտայիՆ՝ հանգուցելոյ առ ի կեանս. ամէն։

Նաև խոշորութեան և սխալանացս գրոյս խնդրեմ շնորհել թողու-
թիւն, զի զթուղթն կարի նուազ և անօսր էր՝ անմեղադիր լինիք։ Արդ՝
գրեցաւ սա ի դառն և ի տրտում ժամանակի, ի գեղ Առընչու, ի դուռն
Ս. Աստուածածնի, ի գումարս կուսան կանանց, ի թվականի ՌՂ և Թ
(1650), զոր տէր Աստուած բարի[10] և խաղաղական կենօք վայելել տացէ.
ամէն։ Այլ և աղաչեմ, որ զկնի մեր գայք և գիրքս զայսն որ ստանայք,
զյիշատակս մեր անջինջ պահէք և վարձս ևս ի Քրիստոսէ առնուք. ամէն։

Բ

Գրիչ՝ Մարիամ

390բ [Ո]ր զօրինակ հօր քո վերին,
Անախտութեամբ անձին բերին,
Անյիշաչար գոլով նոցին,
Եւ բարերար առ թշնամին։
Եւ ես նոցունց եղէ վերջին,
Վասն ախտաւոր բնութեանս անձին,
Եւ ոչ թողուլ պարտապանին,
Եւ անկատար գոլ ի բարին։
[Ո]չ սիրեցի զթշնամին,
391ա Եւ ոչ ցուցի գութ ատողՍ//ին,
Այլ ատեցի զսիրելին,
Չար հատուցի բարերարին։
[Ս]ակայն առ իս ի քէն լցցին,
Քո ինձ եղեալ բան հրամանին,
Թողուլ զյանցանս առ քեզ պարտին,
Որ քան զաւազ շատ է ծովին[11]։
[Զ]ձեզ աղաչեմ եղբայրք բարի,
Որք հանդիպիք յայսմ վայրի,
Յիշման արէք զիս արժանի,
զՄարիամս մեղօք ի լի։

Գ

391ա [Դ]արձեալ կրկնակի հայցեմ ի ձէնջ, ո՛վ հանդիպողք այսմ առա-
քինազարդ և հոգէշահ գրոյս, յիշեսջիք ի յերկնաթռիչ սբ. յաղօթս ձեր

[10] Ձեռագրում «բարեւ» ձևով։

[11] Մինչև այստեղ տե՛ս նաև 385 բ էջում, շարունակության մեջ հիշում է ստացողի՝ Հով-
հաննես եպիսկոպոսի անունը, իսկ գրիչների մասին ասում է.

«Եւ մեզ գծողացս երկակի
Ձկատարողս հրամանիս։

զստացող սորին զՅովանեէս քաջ բարունին, զերանաշնորհ առաքինին, մաքուր կուսան սբ. աղաւնին, և զքոյրն՝ զմահտեսի կուսան զՄարիոս գրիչն, նաև զծնօղսն հանգուցեալ, զհայրն՝ Յոհաննէս և զմայրն՝ Օղիտայ, և որ յիշէ՝ յիշեալ լիցի արքայութեանն Քրիստոսի. ամէն։

617

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 923

Հետ. ստացող՝ Վարդան քահանայ

ա

3ա Զվերջին ստացաւղ սբ. Աւետարանիս՝ զտէր Վարդան քահանայս գնեցի հալալ ընչից և ապրանաց իմոց, յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց, հաւրն իմոյ՝ տէր Մելքիսէթ քահանային և մաւրն իմոյ՝ Ուղուրսալթանին, կողակիցն իմ՝ Նասումփաշին, որգուցն՝ Սուլթանին, կողակիցն իւր։

/// սարկաւագին, Ղազումին, Նուրիջանին, Սահակին, մեծ դուստրն իմ՝ Սալթանզատին, Խալիփգուներին, Գաւզալխանին, թոռն իմոյ՝ Յեկանին. գնեցի հալալ ընչից իմոց, յիշատակ հոգւոյ իմոյ։ Այլ ոչ ում բան չկայ այս սբ. Աւետարանիս միշումն, որ դաւի անէ կամ այլ և այլ անէ. ամէն։

Նորոգող՝ Ներսէս սարկաւագ

բ

Զվերջին նորոգաւղ զՆերսէս սարկաւագս նորոգեցի զսբ. Աւետարանս առաջնորդութեան սբ. ուխտիս Սահանոյ Սարգիս ահրեպիսկոպոսին, հէքիմութիւն Լաւոու Խաչանին, թվիս ՌՂԹ (1650)։ Ով ոք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զՆերսէս դպիրս, Աստուած զձեզ յիշէ...։

618

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 965

Վայր՝ Տեի

1ա Յիշատակ է Գանձարանս Գուլզաքին, դստերն՝ Մարիամին, որդոցն՝ Աբրահամին, Գրիգորին, Պօղոսին, Դարմանին, Եսային, քրւերցն՝ Շենաւորին, Աննային և ամենայն ազկա[կա]նացն. և եռու ի դուռն Ս. Թումայի եկեղեցոյն մերոյ, թվին ՌՂԹ (1650), ի գեօղն Տեի, յիշեցէք...։

619

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 972

Հետ. ստացող՝ Միքայէլ աբեղայ

1ա Միքայէլ կրօնաւորս վերստին ստացա զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ հոգւոյ իմոյ Միքաէլ կրօնաւորիս և ծնօղացս,

հօր Անլիմանին և մօրն՝ Մարիամին, և եղբարցն՝ Յոհանիսին, Աոլին, և կանանց սոցին՝ Յազուլին, Խանաղին, և որդոց սոցին՝ Մկրտչին, և որդոյն՝ Բաղդասարին, Յունանին, Յոհանին, զԳրիգոր սարկաւագին, Թադոսին, Մարտիրոսին, Էվազին, դարձեալ միւս Գրիգորին, Մանկին, Սարգսին, քրւերցն՝ Մարին, հարսն՝ Գուլաղին, և ամենայն արեան մերձաւորացն...։ Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ օրինակելով յիշեցէք... Միքաէլ աբեղայիս և ծնողաց իմոց, և ամենայն ազգակցեացն իմ. ամէն։

Ի թվին Հայոց ՌՂԹ (1650), ի թագաւորութիւնն Պարսից շահ Սեֆու որդի շահ Ասլազին։

Ես՝ Աշանեցի Անլիմանի որդի Միքաէլ կրօնաւորս ստացա զսբ. Աւետարանս յիշատակ ինձ...։

620

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 1420 (ԺԷ դար)

Կազմող՝ Պաղտասար երէց
Վայր՝ Եդեսիա

234ա Կազմեցաւ սբ. գիրքս տեսլեանն սրբոյն Յոհաննու աւետարանչին և երանելի առաքելոյն Քրիստոսի և Կաթուղիկէքն ընդ սմին, ի քաղաքն Յեդեսիայ, ի դուռն Բարձրահայաց Ս. Աստուածածնին, ՌՂԹ (1650) թվին, ձեռամբ զառածեալ և անարժանի, նուաստ Պաղտասար երիցի,
234բ որ անուամբս եմ և ոչ գործով։ Ով սբ. հարք, աղաչեմ զձեզ խոնարհութեամբ յիշել զանարժանս ի սբ. աղօթս ձեր. ամէն։

621

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 2309

Գրիչ՝ Ղազար երէց
Վայր՝ Էջմիածին

ա

34բ Դարձեալ ես անարժանս ի մէջ ընկերաց և որոշեալս յամենայն մասանց բարեաց Ղազար գրիչս կոչեա իբր էրէց։

բ

616բ Ո՛վ տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, վասն խաչի քո և բևեռաց և գեղարդեան... քո... զաւրացոյ և կարողացոյ զմեծ վարդապետն Գրիգորիոս զառնօղ և զկրկին ստացօղ գրոյս այժմ և ի մշտնջենաւորսդ ընդ ամենայն սրս. քո և ողորմեա ինձ բազմամեղ գրչի և ծնողաց իմոց և ամենայն հաւատացելոց. ամէն։

գ

669բ Շնորհօք՝ և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ...։ Յայս ամէնառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալք բազմերջանիկք հարքն

սրբազանք և իսկագոյն արժանիքն յիշատակելոյ աէր Մովսէս և տէր Փիլիպպոս կաթողիկոսք Հայոց, բայց զի՞նչ եթէ ոչ նոր արեգակունք, որոց հրամանաւ գրեցաւ գիրքս Քարոզութեան լի և կատարուն երկոքին հատոր։ Առ որ եղև սկիզբն և աւարտ երկրորդ հատորին բանիւ տեառն Մովսէսի հայրապետի ի տեղի իջման Միածնի, ի բարձրաբերձ աթոռն ամենայն հայկազնի, իսկ առաջին հատորն հրամանաւ տեառն Փիլիպպոսի ամենափայլ հայրապետի ևս ի սոյն տեառնակառոյց կաթուղիկէի, որ և կատարեցաւ իսկ ի թուին ՌՂԹ (1650), մնալով աստ յիշատակ անջնջելի բարերջանիկ հայրապետացս, որոց վարուց վասն և հանդիսապատում երախտեացն յիշատակեմ սեռորէն ի ձեռն սակաւու տեսութեան։ Բայց նախ առաջ նոյն Մովսէսի։ Արդ՝ գոլով սա ի գաւառէն Սիւնեաց, լեալ աշակերտ Սրապիոն կաթողիկոսին և շրջեալ ժամանակս ինչ ի տունն Յունաց առաքելաշնորհ քարոզութեամբ և անտի եկեալ յարևելս ի գաւառ իւր, արար զսկիզբն քարոզութեան և նորաձև վարդապետութեան. քանզի ընդ այս ժամանակս բնաւին բարձրեալ էր վարդապետ անուն յարևելեան աշխարհէ, բայց թէ կային եպիսկոպոսունք՝ էին արժանի բամբասանաց գնալով արտաքոյ կրօնից իւրեանց, վասն որոյ բնաւին խոպանացեալ էին մարդիկ ի գիտութենէ և ի գործոց։ Իսկ առաքելաշնորհ այրս այս՝ Սովսէս վարդապետ իբրև էարկ զսերմն կենաց ի տունս արևելեան, իսկոյն արմատացաւ, աճեաց և ետ պտուղ բազմապատիկ, զի շինեցան եկեղեցիք ի գեղաստանս, զարդարեցան վանորայք պարկեշտ կրօնիւք և առաքինացան միայնակեացք ի յանապատս։ Եւ զի է քեզ գրէթէ ամենևիմբ առաքելանման էր շնորհաց տարածումն, զի կարի նեղագոյն է յառաջարկութիւնս, որոյ պատճառէ փութով յեզերումն տամ բանիս։

Արդ՝ թէպէտ սորա այսպիսի լուսաւորելոյ զաշխարհս, այլ աթոռս մեծ տունս տէրունական սբ. Էջմիածին, էր ամենևիմբ այրի և ամայի ի զարդուց և ի շինութեանց, և մանաւանդ թէ անկեալ ի ձեռս սեխեխաց, և եղեալ զձեռս իւր ի ծնօտի կայր ի տարակուսի. գրեթէ միայնակ եկեղեցին մնացեալ ի մէջ լայնածաւալ դաշտին, որոյ լուսնացոյցքն եղեալ էին մուտ և ելք թռչնոց և դրունքն անասնոց։ Արդ՝ զայս իբրև այսպէս տեսանէր մեծ վարդապետն Մովսէս՝ վարանէր, տագնապէր և ի միտս իւր երկունս անհնարինս քարշէր, գոնեայ զի տեսցէ ի զարդարանս զկողոպտեալ հարսն Քրիստոսին։ Արդ՝ իբրև ետես ամենագութն Աստուած զ[ս]որա այսպիսի խորովակէզ իղձն իրաւաբար ի վերայ իւրոյ հարսին՝ հանգոյն Մովսէսի առ Իսրաէլ և կամ մեծին Ներսէսի ևս առ մեր, յայն ժամ քաղցրացաւ ի կամս իւր, անտես առնելով զյանցանս մեր, երևեցոյց, զսա պատճառաւ ինչ արքային Պարսից ի շահ Աբասին և ետ Աստուած[12]։

---

12 Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է հաջորդ թերթը կորչելու պատճառով։

622
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍԻՄԷՈՆԻ ՋՈՒՂԱՑԵՑԻՈՑ
Երևան, № 2360

Գրիչ՝ Յովհաննէս

268ա Փառք...։ Յիշեցէք ի Քրիստոս, ով սբ. հարք և եղբարք, զմեղաւոր ծրողս անյիշելիս ի դպիրս Յովհաննէս անուամբ միայն և գործով թափուր և ունայն. աղաչեմ զձեզ յիշել ի Տէր։ Ի թվականիս Ռ և ՂԹ (1650)։

623
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՑ
Երևան, № 2558

Գրիչ՝ Մարգար դպիր
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

433ա [Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ Շարականս ստոյգ և պատուական, լիակատար և քաղուածովք ըստ փառաբանութեան դասուց հրեշտակաց... ի թուականութեան Հայոց Ռ և ՂԹ (1650), և ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի, և ի վարդապետութեան մերոյ ազգէս Ջուղայեցի քաջ և բարունի Սիմէոնին և Դաւթին, և ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, և իշխանութեան խօջայ Սարֆոազին, ի քաղաքն մեծ Շօշ, որ է Ըսպահան, և ի գեղաքաղաքս Ջուղայ, ձեռամբ դպիր Մարգար գրչիս, ի նրէր և ի ընծայ սբ. եկեղեցոյն, որ կոչի Ս. Հոգի, ի խնդրոյ և ի հաւատարիմ քրիստոնեա և ստացող սորին ի փառս Աստուծոյ և յիշա-
433բ տակ բարի խօջայ Նազարէթն, ի վայելումն անձին իւրոյ հոգւոյ // և մարմնոյ. և յիշատակ է ծնողացն իւրոյ՝ մահդասի խօջայ Եզնազարին և Սալվինազին. ամէն։

Դարձեալ յիշատակ է ստացողի սորին պարոն խօջայ Նազարէթին և եղբօրն հանգուցեալ առ Քրիստոս Ղազարին և քվերն՝ Մէրջանին։ Դարձեալ յիշատակ է դեռաբոյս և նորաբողբոջ խօջայ Նազարէթին և կողակցին իւրոյ՝ Եզդիխանին, և որդւոյն մանկագոյն Մուֆայէ[լ]ին, և հանգուցեալ որդւոյն՝ Եղնազարին։ Որք հանդիպիք սմայ...։

բ

384բ Յիշատակ... զստացող սորին խօջայ Նազարէթն և հայրն իւր՝ հանգուցեալ առ Քրիստոս խօջայ Եղնազարն։ Եւ երգեցողաց սորայ միաբանից և քահանայից սբ. եկեղեցւոյն, որ կոչի Ս. Հոգի, զտէր Մկրտիչն, տէր Անդրէասն, տէր Յովանէսն, տէր Դաւիթն, տէր Մաթէոսն, տէր Աստուածատուրն, որ եղեն յօժար փափագանօք սմա գրելոյ վասն Ս. Հոգւոյն եկեղեցոյ, ընծայ և նրէր ի խօջայ Նազարէթէն, ի փառս Աստուծոյ և վայելումն հոգւոց և մարմնոց իւրեանց և յիշատակ աստ և ի հանդերձելումն...։

Եւ զդպիր Մարգար գրիչս յիշեցէք ի Տէր, և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ. ամէն։

Ստացող՝ Խոջայ Նազարէթ

Գ

382 Ջստացող սորին զխոջայ Նազարէթն յիշեա ի Քրիստոս։

Դ

273ա Յիշեցէք, ով աստուածասէրք, զծառայս Աստուծոյ Նազարէթս, որ ըստացայ զտառս լիակատար քաղուացովք զարդարեալ շերմեռանդ սիրով ի փառս Աստուծոյ. և զհայրն իմ՝ մահդասի խոջայ Եղնազարն, որ կոչի Ամիրասաթենց, և զմայրն իմ՝ Սալվինազն։ Դարձեալ յիշեցէք զեղբայրն իմ, որ հանգուցեալ է առ Քրիստոս զՂա[զա]ռոսն, և քոյրն իմ՝ Մէրջանն։ Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զստացող Նազարէթս և զկողակիցն իմ՝ Եզտիիանն, և զորդին իմ՝ նորաբողբոջ Մուքայէլն, և հանգուցեալ որդին իմ՝ Եղնազարն, որ զայս սբ. գիրս յիշատակ նուիրեցի զհայրենի յեկեղեցին մեր, որ կոչի Ս. Հոգի, ի փառաբանութիւնս Աստուծոյ...։

624

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3034

Գրիչ՝ Գասպար
Վայր՝ Էնկինաղալայ

174ա Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ կատարեցաւ մատեանս այս, որ կոչի Մաշտոց, ի շրջագայութիւն հայկազան տումարիս ՌՂԹ (1650), ի յերկիրն Գերմանիկոյ, ի գեղաքաղաքն ի Նարկիզն, որ այժմ կոչի յԷնկինաղալայ, ձեռամբ մեղաւք զառածեալ, փրծուն գրչի Գասպար տարտամ ոգ-
174բ ւոյ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին // և Ս. Սարգսի զաւրավարին և այլ սրբոցն, որ աստ կան ի յաւդնութիւն քրիստոնէից։ Ի յաթոռակալութեանն Կիլիկիոյ տէր Ներսէսին և ի յառաջնորդութեան այսմ գահի տէր Պետրոս եպիսկոպոսի, ի խնդրոյ աստուածասէր և բարեմիտ, հեզահոգի Փիլիպոսին և կենակցոյն իւրոյ Շուշանին, զի բազում փափաքանաւք ետուր գրել զսայ, յիշատակ իւրեանց և իւր որդոցն՝ Սարգսին և Մարտիրոսին և ամենայն արեանառուի, և ի վայելումն տէր Պողոսին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք սմա տեսանելով կամ կարդալով, յիշեցէք յաղօթս ձեր և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք վերոյ ասացեալ ստացողի գրոցս Փիլիպոսին, որ եռափափաք սիրով ստացաւ զսա, յիշատակ իւրն և ամենայն տոհմից իւրոց։ Այլ և զիս զանարժան գծողս և զծնաւղս իմ և զուսուցիչն իմ՝ զՅովանէս քաչ քարտողար վարպետն յիշեցէք ի յաղաւթս ձեր. և տէրն Քրիստոս, որ առատն է ի տուրս բա[ռեաց]։[13]

---

13 Շարունակությունն ընկած է։

625

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3904

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Հիզան

ա

Փառք...։ Եւ արդ՝ ես անարժանս և սպիրատս և ամենայն մեղօք և աղտեղութեամբ զառածեալս, անիմաստ և անարհեստ ի գիրս գրչութեան Յոհան Հիզանցի սևերես, պոռնիկ, խաբեբայս և ոչ քահանայս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զ[տա]ռս աստուածահարմար, ղքնարս աստուածաշունչ... որ է կոչեցեալ Մաշդոց։ Որոյ տեսեալ զանառիկ մեծութիւնս և զգանձս պատուականս հաւատարիմ և աստուածասէր մահդասի տէր Հայրապետ քահանայն, և եռափափագ

256ա *սրտիւ և յօժար // [կա]մօք ետ գրել զսա, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Սարգսին և մօրն՝ Խանալին, և եղբարցն՝ Սիրունին, Խլղաթին, և քրւերցն՝ Խանումին և Քընֆուշին, հօրեղբօրն՝ Յակոբին և կողակցին՝ Գուլալին և այլ ամենայն արէնառու մերձաւորաց՝ կենդանեաց և ննշեցելոց, մեծի և փոքու առ հասարակ. ամէն։*

Եւ արդ՝ գրեցաւ սա ի մեծ թվականիս Հայոց ի Ռ և ի ՂԹ (1650) ամին, ի քաղաքս, որ կոչի Հիզան, ընդ հովանեաւ սբ. Ե (5) խորանացն Ս. Յարութեանն, և Ս. Աստուածածնին, և՝ Ս. Յովաննէս Մկրտչին, Ս. Սարգսին և որդոյ նորա Մարտիրոսին։ Ի հայրապետութեանն Հայոց տեառն տէր Փիլիպոսի էջմիածնին սրբոյ, և ի կաթուղիկոսութեանն մերոյ Աղթամարայ տեառն տէր Ստեփանոսին, և ի մերոյս պարոնութեան

256բ *Աւտալ բէկին. ի դա//ռն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք և տառապիմք ի հարկապահանջութենէ անօրինացն։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց. զոր յուսամք ի մարդասէր քաղցրութիւն Արարչին, որ քաղցրանա բոլոր արարածոցս ևս առաւել հայկազան տոհմիս, ազգաց քրիստոնէից. ամէն։*

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Քրիստոս Աստուած զմահդասի տէր Հէրապետն..., որ ըստացաւ զսբ. գիրքս և եղ յիշատակ ի Մոկաց գաւառն, ի գեղն իւր հայրենի ի Սուրս, ի դուռն Ս. Յովաննու Մկրտչին և Ս. Գէորգեայ։ Եւ արդ՝ կացցէ սա անջինջ յիշատակ ի գուռն սբ. տաճարացս։ Եվ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սբ. եկե-

257ա *ղեցեացս, ոչ // [ծ]ախելով և ո՛չ գրաւելով։ Եւ թէ ոք յանդգնի կամ ծախէ կամ գրաւէ՝ զանէծս Կայենին առցէ և զայլ խաչահանուացն. ամէն։*

Բ

56բ *Ըստացող գրոցս զմահդասի տէր Հայրապետն և զծնողսն իւր յիշեցէք...։*

Գ

256ա *Ով դասք սբ. քահանայից և սարկաւագաց..., որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք... ստացողի գրոցս Մոկացի մահդասի տէր Խէրապէտին և իւր ծնաւղացն, և իւր ամենայն արեանառու*

626

մերձաւորացն...։ Նաև սևերես և եղկելի, պոռնիկ և խաբեբա Հիղանցի Յոհան գրչիս և ծնողաց իմոց և իմ վարպետաց. ամէն։

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4171 (ԺԳ դ.)

Կազմող՝ Մարգար
Վայր՝ (Նոր) Ջուղայ

319բ Յիշատակարան ստացողի սբ. Աւետարանի

Փառք...։ Արդ՝ վերստին նորոդեցաւ սբ. Աւետարանս ի թվականութեան Հայոց Ռ և ՂԹ (1650), ի քաղաքն Ըսպահան, ի գեղն Ջուղայ. և ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի: Յիշատակ է Աւետարանս խո-[շայ Ծ]ատուրին և ծնո[ղաց ի]ւրոյ Մկրտչին ///նին և կոզակ[ցին] ///[փ]աշին։

[Աւետարանս] յիշատակ է խոջայ Ծատուրին և զկողակից Մէրտատիկին, և զորդին դեռաբոյս և նորաբողբոջ պարոն Դիլաքին: Դարձեալ յիշեցէք և յիշատակ է Ծատուրն և զվերջի կողակիցն իւր՝ զԳուլվարգն, և զորդին՝ Ընտրիանոսն, և դստերքն՝ Մարիամատիկն և Զեփրիթայն և զհանգուցեալ դուստրն՝ զՈւղիղայն:

Դարձեալ յիշատակ է և յիշեցէք ի Քրիստոս զԾատուրն և զեղբարքն իւր՝ Տիրատուրն և Յովանէսն: Դարձեալ յիշեցէք զպարոն Ծատուրն և քոյրքն իւր՝ Խազատէն և զԹրվանդէն ի Քրիստոս Յիսուս տէրն ամենայնի...։

Եւ զՄարգար գրիչս և վերստին կազմողս յիշեցէք։

627

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4217 (1331 թ.). Պատարիկ, № 919, էջ 2 ա

Կազմել տվող՝ Խաչատուր վարդապետ

ա

275ա Ի հազարերորդում և ինսներորդում և յիններորդում (1650) ամի թուահաշու[ու]թեան հայկազեան տօմարի, ես՝ նուաստ Խաչատուր վարդապետս ետու նորոգ կազմել զսբ. Աւետարանս, ի սփոփանս բազմամեղ անձին իմ և եղի սբ. աթոռ Թումայի առաքելոյ ի վանս Ագուլեաց, որում և էրն յառաջագոյն։ Իսկ արդ՝ որք հանդիպիք, աղաչեմ զի յիշեսջիք զիս հանդերձ ծնողօք իմովք և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ. ամէն։

Կազմող՝ Գալուստ դպիր

Բ

Ձեռամբ կազմեալ անարժանի,
Կոչեալ անուամբըս Գալուստ դպրի,
Ոչ եմ արժան կոչիլ բարի,
Վեհ եմ և ես և գլուխ չարի։

628
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 4663

Գրիչ՝ Աւէտ Որոտնեցի

25ա Զտառապեալ ոգի գրծողս զԱւէտ սրբուպ Որոտնեցի, մեղաւք զառածեալս յիշեա։ Թիվն հազար Ղ և ինն (1650)։

629
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 5301

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

ա

372բ Փառք Եռակի աստուածութեանն,
Եւ միակի անճառ բնութեանն,
. . . . .
375ա Փափագեցաւ իբր զեղջերայն,
Ցաղբերքս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացքս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Աւետիս հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յաւժար և ժըրական,
Բազում շանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ ամեան,
ՂԹ թիւ ընդ նրման (1650),
Աւարտեցաւ սա ի լրման[14],
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
375բ Ցիշման առնէք ըզմեզ արժան,
ԶԱւետիս հողս և անպիտան։
Եւ դուք յիշիք առ Տէրըն բան,
. . . .։

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս և խնկալի տուփս..., որ կոչի Շարակնոց ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի, մեղաւոր Աւետիսի: Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվա-
376ա- կանիս Հայոց ՌՂԹ (1650), ի գեօղս որ կոչի Աւրնդանց, // ընդ հովա-

[14] Զորրորդ տողը չի գրված և տեղը բաց է թողնված։

նեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս. Գէորգայ զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանչութենէ անաւրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բարկութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան գրծոզս զԱւետիս և ծնօղքն իմ՝ զՎարդան քահանայն և զմայրն՝ զՄանիմուռ, և զպապն իմ՝ զԹումայ քահանայն, և զվարպետն իմ՝ զտէր Կիրակոս, որ բազում աշխատանք քարշեցին հետ անարժանիս և ուսուցին զիս։ Աստուած զնոցա հոգին լուսաւորէ և պայծառացուցանէ յիւր սբ. միւսանգամ գալըստեամբն. ամէն։

Ծաղկող՝ Յովհանէս սարկաւագ

Բ

180բ [Յով]հանէս[15] սարկաւագ նկարող սորին և [ղծնո]ղս իմ յիշեցէք ի Քրիստոս, ով եղբարք իմ [և դուք] յիշեալ լինիք ի Տէր[16]։

630

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6351 (ԺԶ դար)

Վայր՝ Տեր

296ա Յիշատակ է սբ. Աւետարանս Կարապետին, կողակցոյն՝ Շահրիստանին, որդոյն՝ Կոստանդին, Եսայուն. դստերացն՝ Եւային, Մարիամին. եղբարցն՝ Կիւրակոսին, Պետրոսին. քւերն՝ Փաշաբէկին, հարսն՝ Էքարին, Պետրոսին, որդոցն՝ Հայրապետին, Ադամին, Կիրակոսի կողակցոյն՝ Անաիւաթունին, որդոցն՝ Վարդանին, Թուրոսին և ամենայն արեան մերձաւորացն։ Եվ եւոու սա ի դուռն Ս. Թումայի եկեղեցոյն մերոյ, ի գեօղն Տեր, թվին ՌՂԹ (1650), յիշեցէք և լի բերանով Աստուած ողորմի ասացէք։

631

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 6423 (1641 թ.)

Սրբագրող՝ Յովանէս

Վայր՝ Երնջակ

91բ Զ Յովանէս բանի սպասաւորս յիշել առ Տէր աղաչեմ, վասն զի սակաւ ինչ աշխատեցաք ի վերայ այսմ ժամագրքիս սրբագրելով զսայ, ըստ կարողութեան մերում, թվին ՌՂԹ (1650), գրեցաւ ի վանս Ս. Կարապետայ Երնջակոյ, առ ոտս բարձունապետին Եսայեայ։

---

15 Մատենադարանի Ձեռագրաց ցուցակ կազմողներն այս անունը կարդացել են Վարդանէս (հտ. Բ, էջ 77)։

16 բ Հիշատակարանը գրված է կարմիր մելանով։

632
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6673

Գրիչ, կազմող՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

ա

200բ Փառք..., որ զտկարութիւնս իմ զաւրացոյց յաւետ իւրոյ իմաստութեանն, վասն որոյ և ես՝ մեղապարտ ոգի Նիկողայոս, անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառս, հոգէշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր ամենասուրբ Հոգին հանգչելով...։

301ա Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանատրի, ի թվարերութեանս ասքանազեան և աբեթական տօմարի ՌՂ և Թ (1650), և ըստ նորումս շրջան Լ և Ե (35), և ի գալստենէ Կենարարին ՌՈԾԲ (1652), ի ստոյգ

301բ և լընտիր // աւրինակէ ևս առաւել համաբայիցն, զի գաղափար սորին ի հռչակաւոր անապատին էր գրած, զոր Դրազարկ անուանի. ի յաշխարհիս Հոնաց և ի յերկրիս Դրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և այլ բազմահաւաք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց. տեառն Փիլիպպոսի և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսւսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։ Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահռչակելի, դե-

302ա բակա//տար և գերապանծ... սբ. Աւետարանս...։

302բ Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսանդ տառիս ցանկացաւղ եղեալ աստուածարեալ և պատուական մ[ահդասի] խօճա Յո-

303ա վանէսն ետ գրել զսբ. Աւետարանս յիշատակ անձին իւ//րոյ և իւր ծնողացն։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղաւթս ձեր զպատուելի մ[ահդասի] խօճայ Յովանէս զստացաւղ սորին, և զհայրն իւր՝ զԱնդրէասն, և զմայրն իւր՝ զԱլթն, և զպապն իւր՝ զԱնթառամն, և զմամն իւր՝ զՄուղալն, և զԳասպարն և Յովանէսն, և զԱլթն և զՊակուրիցն, և կողակիցն իւր՝ զՊաղտասա[ր]ն, և զորդիսն իւր՝ զԴիլանն և զՓիլիպպոսն և զՏօլվաթպիֆայն[17]։ Որ մեծաւ փափաքանաւք և սրտաջան յաւժարութեամբ և քաջահաւատ յուսով... ետ գրել զսբ. Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր

303բ և ծնողաց և // եղբարց և ամենայն զարմից, զանձ յաւիտենական...։

Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք զվերոյ դրեալքս ի սմա, և զիս զՆիկողոս մեղապարտ գրիչ, և զծնաւղսն իմ, և զեղբարս, և զքորս, և զամենայն արեան մերձակայսն իմ...։

304ա Եւ դարձեալ վերստին աղաչեմ զձեզ, ո՛վ դասք սրբազանից միանձ-

[17] Սկսած «զԱնդրէասն»-ից մինչև այստեղ ձեռագրում մելանը թափված է, կարդացինք, հետևելով մագաղաթի վրա թողած հետքին։

նացելոց և քահանայից, յիշել վերստին ի սրբամատոյց զաղաւթս և զաղաչանս ձեր զբարեհամբաւ և զողորմած զմահդասի խոճայ Յովանէսն և զեղբայրքն իւր՝ զմահդասի Մինասն և զՄիասարն և զամենայն արեան մերձաւորսն իւր, որ ստացաւ զսբ. Աւետարան[ս] հալալ և բստոյգ վաստակոց իւրոց և բաղում ծախիւք արծաթապատ և ոսկէզօծս աբար, և յիշատակ առաքեաց ի Կաֆայու ձեռամբ Գաբրիէլ վարդապետին, ի դուռն լուսակառոյց դրիգորաշէն, սրովբէապար, լուսածաւալ եպիսկոպոսապետարան մաւրն լուսոյ սբ. աթոռոյն Էջմիածնի, ի վայելումն սրբազան և սրբազանադոր եպիսկոպոսապետին տեառն Փիլիպ/պոսի դիտապետի և ամենայն Հայոց կաթուղիկոսի և ամենայն մանկանց եկեղեցոյ, որ բնակեալ են ի սբ. Սիոն։

Եւ դարձեալ յիշեսջիք զմահդասի Ավրանն, որ բազում երախտաւոր եղև ի սբ. Աւետարանիս յառումն, զոր տէր Յիսուս Քրիստոս զինքն ընդ երկայն աւուրս արասցէ և երկնից արքայութեան արժանիս արասցէ հանդերձ ծնողիւք իւրովք. ամէն[18]։

Բ

24բ Թվին ՌՂ և Թ (1650) կազմեցաւ սբ. Աւետարանս, ձեռամբ ոմն անարժանի, որ անուամբ[19] Նիկողայոս կոչի։

633

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան, № 7594 (1490 թ.)

Կազմող՝ Խասպէկ

238բ Եւ արդ[20] ես նուաստ վերջին դրիչ վերբստին // կազմեալ նորոդեցի չուառ Խասպէկս, հրամանաւ տէր Գրիգոր արհիեպիսկոպոսի, ի թուաբերութեանս հայկազեան սեռի քսան և մէկ յոբելինի և երրեակ վեշտասանի և մի թիւ ընդ նմին շարազուդի (1650)[21], և ի ծննդէ կենար[ար]ին Յիսուսի Քրիստոսի ութերորդ երկերիւրի և չորրորդ երկոտասանի և քառիցս թիւ աւելի (1652)[22], ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի ամենայն Հայոց կաթուղիկոսի և առաջնորդութեան յայսմ նահանգի տէր Գրիգոր արհիեպիսկոպոսի, ի մայրաքաղաքս Կաֆայ, առ ոտս Ս. Յարութեանն։ Արդ՝ որք հանդիպիք սմա երդելով կամ նուազելով կամ զյիշատակարանս կարդալով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Գրիգոր արհիեպիսկոպոսն, որ ետ կազմել զսա վերստին յիշատակ իւր և իւրայնոցն, այլ և մանկանց Սիովնի, որք տենչան նուազել ի շահաստանեան լերին, որ է իմանալի և մշտնջենաւոր, որք կրթին նոքա, ունին զճաշակ սորին, ուսմամբ կամ գաղափարելով։ Եվ ձեզ յիշողացդ ղերկ-

---

18 Ձեռագրի 305 ա էջում գտնվում է Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի 1903 թ. հիշատակարանը, ուր հաղորդում է, որ Ավետարանը կարդացել է Կողբում։

19 Մինչև այստեղ գրված է ոսկեգույն։

20 1490 թ. ընդօրինակության հիշատակարանը ևս գրված է նորոդող Խասպեկի ձեռքով։

21 Այսինքն՝ [(21×50)+(3×16)+1]+551։

22 Այսինքն՝ [(8×200)+(4×12)]+4։

նից արքայութիւնն պարգևեսցէ Քրիստոս Աստուած մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

634
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 8597

Գրիչ՝ Մարինոս
Վայր՝ Շէնհեր

255բ Փառք..., որ եւ կարողութիւն անիմաստ և փանաքի անուամբ միայն <սոյ> ապաշխարողի հասանել աւարտ աստուածային Հոգւոյն լցեալ սրբոյն Ներսէսի։ Արդ՝ երես ի գետնի դնելով աղաչեմ անապական արեան գառին գնեալքդ, յիշեցէք զանպիտան գծող սորա զՄարի-
255ա նոսս, և զծնաւղսն իմ զմիա//յակեաց Խաչիկն, զմայրն իմ՝ Թումանաղան, և զեղբարքն իմ՝ Մեսրոպ կուսակրօն քահանայն և Յովսէփն, զքոյրքն՝ Հեղինէն և Վառվառ, և ամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանին և զհանգուցեալն յիշեցէք...։

Արդ՝ գրեցաւ խոշոր գիրս ի թվականիս Հայոց ՌՂԹ (1650), ի թագաւորութեանն այլազգաց փոքրիկ շահ Ապազին, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և ի բնակութեան Շէնհերու յանապատին, գրեցաւ սբ. Յիսուս որդիս, աղաչեմ կողկողագին զամենեսեանդ, որք կարդաք կամ աւրինակիդ, յիշեցէք զՄարինոսս։

635
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8876 (1535 թ.)

39բ Արդ՝ ես տէր Ղազարս զրկին գրեցի, թոռն մեծ տէր Ղազարիս, հայրն իմ՝ Նազար, մայրն իմ՝ Բէկիի /// աղաց, Լուսթան, որդին իմ՝ Դիլանշին գրեցը թվին ՌՂԹ (1650)։

636
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 9777

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Շոռոթ

ա

385ա Յիշատակարան սբ. գրոյս[23]։

Փառք..., որ եւ կարողութիւն մեղսաթաւալ և զազրագործ, բազմասէր շնչականի, ումեմն անիմաստի և եղեռնագործի հասանել յաւարտ և ի զրաւ սբ. մատեանիս, որ կոչի Յիսուս որդի։ Արդ՝ կայ հաւա-

[23] Գրված է կարմիր մելանով։

քեալ ի սմա զՅիսուս որդին բովանդակ իւր դաւանութեամբն և ոտանաւորքն, և աղգացեղութիւնն յաբեթեանս տոհմի, թէ ո՞րպիսի և կամ ո՞յք էին թագաւորք և իշխանք հայկազեան զարմի ի կռապաշտութեանն
358բ ե կամ ի հաւատալն Աստուածն ամենայնի, բարեպաշտ և սրբասէր // թագաւորք և իշխանք և հայրապետք ի ցեղէն Լուսաւորչին, զոր արարեալ է տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի ոտանաւոր չափեալ, զի մի ծուլասցին ընթերցողք։ Այլ և գովասանութիւն սբ. խաչին, որ ի Կոստանդինուպոլիս Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն ասացեալ է ընդդէմ կենաց փայտին, զոր ոտն հանեալ ի նոյն Ներսիսէ Կլայեցոյ։ Այլ և գովասանութիւն ասացեալ Ներսէսի Լամբրոնացոյ արհեպիսկոպոսի վասն վարուց և քաղաքավարութեան և մահուանն սրբոյն Ներսէսի Կլայեցոյն։ Այլ և ողբանք էջմիածնայ սբ. կաթուղիկէին ի Վաղարշապատ քաղաքի, ասացեալ տէր Ստեփաննոս Սիւնեաց դիտողի և մետրապոլիտ
359ա // ամենայն Հայոց։ Եւ այլ բաղում ոտանաւորք ասացեալ այլ վարդապետաց, զոր բազում փափագանօք և աշխատութեամբ հաւաքեցի ի մի տեղ, ի խնդրոյ իմոյ բաղձալոյն և սիրելի հարազատին իմոյ՝ տէր Ա-ռիստա[կ]ի՝ քահանայի։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ ոմեմն մեղսամածի, ի թուականութեանս Հայոց տոմարի ՌՂԹ (1650)-ի, ի հայրապետութեան Հայոց սբ. աթոռոյն էջմիածնի տեառն Փիլիպոսի և յաջորդի նորին Յակոբայ փոխանորդի, և աթոռակալութեան մերոյս Նահանգի քաջ և արի հայրապետին տէր Նսայիսս մեծ վարժապետի, որ մեծաւ ջանիւ պայծառացոյց զսբ. վանք Ս. Կարապետին, գեղեցիկ և ան-
359բ //պատմելի շինութեամբ։ Գրեցաւ սա յերկիրս Ներնջակոյ, ի գեօղս Շնորթու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և այլ սբ. եկեղեցեացս։ Եւ ես եղկելիս բազում սիրով և յոյժ փափագանօք գրեցի զսա յուսով Ս. Հոգոյն և ողորմութեամբ նորին կատարեցի, վասն ցանկալի հարազատին իմոյ՝ տէր Առիստակիսին, զոր Ս. Հոդին Աստուած վայելել տացէ սմա անարատ կենօք։ Եվ յիշատակ եղիցի սա հոգոց մերոց և ծնողացն մերոց՝ Կիրակոս քահանային և Թուրվանդին, և վեհագոյն հարազատաց մերոց տէր Ղազարին և տէր Ալէքսանոսի հանգուցելոյն առ Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորացն մերոց. ամէն։

Բ

301ա Ի գլծողէս բան առ ճշմարիտ ժողովողն Յիսուս[24]

Գլթեալ չարեօք սիրտ իմ անժոյժ,
Գերեալ ախտիւք հոգիս անբուժ։
Բոտի բարւոյ ստեղծուածքս քո,
Բամեալ չարին հակառակ քո։
Ի յանցաւորս ոմայն կենցաղ,
Ի յայս սնոտի կենաց զբաղ։
301բ Գլտեալ կամաց քոց արտաքոյ,
Գլրեալ եհան ի գաւթէ քո։

[24] Գրված է կարմիր մելանով։

Ունայնութեանց պեղծ խորհրդով,
Ոգիս խոցեալ է չար գործով։
Բաբուն բարի լոյս ի լուսոյ,
Բամ աւետեաց ինձ լսեցոյ։
Ի փոյթ բարեաց Տէր կամեցող,
Ինձ գերելոյս Տէր ազատող[25]։
Էդ էակից Հաւր Միածին,
Ինձ ողորմեա յօրն ահագին[26]։

637

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 10317

Գրիչ՝ աէր Յոհան
Վայր՝ Բաղէշ

ա

152ա [Փ]առք..., որ ետ կարողութիւն իմոյ անարժանիս հասանել յաւարտ այսմ դրի, որ ունի զսրբոց ասացեալ աղօթս ընդդէմ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, և կոչի Աղօթամատուց, ի յընտիր և ի լաւ օրինակէ Թումայու, ի խնդրոյ բարեմիտ եղբօր մերոյ տէր Ղազարի, որ ցան-
152բ կացաւ սմա և ետ գրել զսայ ի հալալ // արդեանց իւրոց յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի թվիս Հայոց ՌՂԹ (1650), ընդ հովանեաւ Գոմոց Ս. Աստուածածնին և Ս. Գէորգ զօրավարի, ի յառաջնորդութիւն սր. ուխտիս և հոգևոր հօրն մեր՝ Մեսրովպ քաջ և արի վարդապետին, որ բազում աշխատութեամբ ուսուց ինձ զգիրս։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, Աստուած ողորմի ասացէք անարժան
153ա և փծոյն գրչիս աէր Յոհանին, որ անուամբս միայն եմ քահանայ // և գործով անարժան և վատթար քան զամենեսեան. և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց...։

Եւ դարձեալ յիշեցէք զտէր Ղազարն և զծնօղս իւր, զհայրն՝ Խալիֆայ և զմայրն՝ Ղզլար, և զդեռաբոյս որդին՝ զԽալիֆայն, և դեղբայրքն իւր՝ զՓոխան և զԴանէլն և Աստուած ողորմի ասացէք նոցա, որ ետուն զԱղօթ[ա]մատոցս գրել յիշատակ ծնողաց իւրոց։

բ

148բ Եւ զտէր Յոհան փծուն գրչակս յիշեա։

---

25 Սկզբնապես գրված է «կամեցող». բայց որովհետև նախորդ տողի վերջին բառը նույնպես «կամեցող» է, ուստի այստեղ ուղղված է «ազատող»։

26 Ձափածոյի կենտ տողերից հոգվում է գրչի անունը՝ «Գրիգորի է», իսկ զույգ տողերից՝ «Գրիգորիի»։

638

ՇԱՐԱԿՆՈՑ

Դորբաթի համալսարան, № 173 (մանրաժապավեն, Երևան, № 52)

Գրիչ՝ Բարղամ Սեբաստացի
Վայր՝ Քանովայ

ա

Գրեալ աւարտեցաւ ձեռամբ նուաստ Բարղամ *գրչի* Սեբաստացւոյ, *հրամանաւ և արդեամբ* Սարգիս *դրչի* Մարգուանցւոյ, *թվին Հայոց ՌՂԹ (1650) ի նոր աւանն, որ ասի* Քանովայ, *ի դուռն Ս. Նշանին։*

Բ

Ստացող՝ Սարգիս Մարգուանցի

Զծոյլս ի բարիս, զարագս ի՛ չարիս, սոսկ անուն Սարգիս *դպիրս աղաչեմ յիշել Քրիստոս յոյսն մեր*[27]։

639

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼԱՎԳԱՒ, № 189

Գրիչ՝ Միքայէլ երէց
Վայր՝ Եզնկայ

ա

1123 *Փառք... որոյ շնորհիւ և ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ Տաւնացոյցս և այլ զանազան երդերս, և Պարզատումարս, և Ազգութիւնս, և Քաղուածս ի խնդրոյ մաքրամիտ և սրբասէր* Մարաիրոս *իրիցու, ի վայելումն անձին իւրում, ձեռամբ զառածեալ մեղաւք և փծուն գրչի սուտանուն* Միքայէլ *իրիցու, ՌՂԹ (1650) թվին, ի քաղաքն ի* Եզնկայ, *ի դուռն Ս. Սարգսին և այլ բազմահաւաք սրբոց։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, զուսուցիչն իմ՝ զՄովսէս վարդապետն, և զծնաւղս իմ զՄկրտիչն, և զմայրն իմ՝ զՂամարն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Ով տանասէրք, անմեղադիր լերուք խոշորութեան և սղալանաց գրիս, զի կայր մեր այս էր. և Քրիստոսի մարդասիրին փառք յօիտեանս. ամէն*[28]։

Բ

Եւ դիս՝ զանարժան Միքայէլ *երէցս յիշեա։*

---

[27] *Մանրաժապավենում էշահամարներ չնկատեցինք։*

[28] *Սույն ձեռագիրն ընդօրինակվել է երկու գրչի կողմից, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում։ Մյուս գրչի հիշատակարանը տե՛ս 1630 թ. շարքում։*

640

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՅ ԳՕՇԻ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 810

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ղարսսար

202բ *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՌՂԹ (1650), ի հայրապետութեան աեառն տէր Փիլիպպոսի Հայոց կաթողիկոսի, և յառաջնորդութեան Կողոնիայ քաղաքիս տէր Կարապետ եպիսկոպոսի, և [ի] թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուհամատին, զոր եղև զրաւ դրոցս ի նեղ և ի դառն ժամտնակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց, ընդ բռամբ ածեալ եղև աշխարհս ի ձեռն անօրինաց, զոր ազգի ազգի նեղութեամբ և չարչարանօք և հարկապահանջութեամբ կեղեքեն և տառապեցուցանեն զազգն քրիստոնէից..., ձեռամբ բազմամեղ Գրիգոր գրչի... ղյետնորդս ամէն քահանայի...։*

Գրեցի զսա ի գաւառի,
Որ Ղարասսար անուն կոչի,
Ի դուռն Ս. Աստուածածնի,
Ս. Սահականնոս Նախավկայի։
Տէր Մանուէլ քահանայի,
Որ զօրինակն իւրմէն առի...։
Զեռս երթայ,
Գիրս մնայ,
Ով տէր Աստուած,
Ինձ ողորմեա։

641

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 561

Գրիչ՝ Վարդերես
Վայր՝ Կումենից

456 *Փառք...։ Արդ՝ եղև զրաւ սբ. գրոցս, որ կոչի Կանոնք, ի թուաբերութեան Հայոց մեծաց ՌՂԹ (1650), ի յերկիրս Իլահաց, ի քաղաքս Կումենից, ի թագաւորութեան ոգէրեան Քազիմիրին, և ի հայրապետութեան Հայոց ազգիս սբ. Լուսաւորչի աթոռոյս տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին և ի յառաջնորդութեան ի յայսմ ժամանակի խառնակութեան՝ ոչ կային և ոչ չկային, այլ այսպէս և այնպէս կենցաղավարէին։ Զեռամբ անիմաստ...* Վարդերեսի, *որդու պարոն* Քըշքոֆ Մուսքաֆային *և խան* Ազիզբէկին:

642
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ
Երևան, № 6333

Գրիչ՝ Մարգարայ քահանայ
Վայր՝ Շոռոռ

63ա Աւարտեցաւ Մեկնութիւնս ի թուականիս Հայոց ՌՂԹ (1650), ի յերկիրն Երընջակոյ, ի գեաւղաքաղաքն որ կոչի Շոռոռ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Լուսաւորչին, և Ս. Յակոբ հայրապետին, ի հայրապետութեանն էջմիածնի տէր Փիլիպպոսի, և արհիեպիսկոպոսին տէր Եսայի Ս. Կարապետի [վանուց]ն, ի խնդրոյ բարեմիտ և աստուածահաճոյ քահանային Աբրահամ[ու] և առատաձեռն մահտասի Ճարակ Հայրապետին, և ետուն գրել զսբ. տուռս յիշատակ իւրեանց և կենակցոցն, որդոց և դստերացն՝ կենդանեաց և մեռելոց...։

Արդ՝ որք հանդիպիք այսմ աստուածախաւս և տիեզերաքարող քնարի[ն], յիշեսջիք սրտի մտաւք զստացող կրոցս զԱբրահամ քահանայն և զտղահասակ ծաղիկն Պետրոս, և զդստերքն... ընդ նոսին զՃարակ մահտեսի Հայրապետն, որք էին անուանի քահանայք Շոռոքու... ընդ որս և զիս զմեղապարտ գծողս զՄարգարայ սուտանուն քահանայս և զծնողսն իմ՝ զեաղուպն և զՄամէն, և զեղբարքն՝ զԱռաքեալն, զՍիմոն, որք են հանգուցեալ ի Քրիստոս, և զկենակիցն իմ՝ զեղիսաբեթն, որ զմեկնիչիս թուղթն զամէնն սա կոչեաց... ամէն։

643
ՆԱՐԵԿ, ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Մագեկ, IV, № 1238 (1412 թ.)

390 Զվերջին ստացաւղ զմեղապարտ /// և զհոգևոր եղբայրն իմ՝ զՅովհաննէս կուսակրաւն քահանայն, որ պարգևեաց ինձ զգիրքս, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց, աղաչեմ յիշեցէք...։ Թվին ՌՂԹ (1650) ի յաթոռակալութեան Յակոբա[յ] Տեառնեղբօրն և գլխադրին Յակոբա[յ] առաքելոյն տէր Աստուածատուր քաջ և արի և աստուածաբան վարդապետին եղաք զգիրքս յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Ծնընդեան ի Ս. Աստուածածնայ եկեղեցին Հայոց ազգիս։ Զի է գիրքս կատարեալ Նարեկ և Յիսուս Որդի, կացցէ սա անջինջ յիշատակ։ Ոչ ոք չունի իշխանութիւն հեռացուցանել զսա, ապա կացցէ ի սբ. ուխտս։ Որք ընթեռնուն զԱստուած ողորմին ասեն պարգևողացն և խնամով պահողացն։...

644
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՅՈՅՑ
Մագեկ, V, № 1457 (ժամանակ ?)

157 Յիշատակ է Շարակնոցս ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ով որ կարդայք կամ օրինակէք Աստուած ողորմի ասացէք յիշատակ դիրողաց հոգւոյն, և իւր ծնողաց, և ամենայն յարեան մերձաւորացն։...

138 Դարձեալ ի թվին ՌՂԹ (1650), ի յառաջնորդութեան տէր Աստուածատուր աստուածարան վարդապետին, տուաւ զսա յիշատակ անջնջելի ի դուռն Ս. Յակոբայ։

645
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅԶԵՊ, V, № 1679

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Ամիթ

538 Փառք...։ Արդ՝ գրեցաւ քաղուածոյս թվին ՌՂԹ (1650) ի մայրաքաղաքն յԱմիթ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մօր նորա Յուղիտայի, ձեռամբ Յոհանիսի, ի վայելումն ///։ Աղաչեմ զձեզ նազելի եղբարք, զի յորժամ կարդայք զսա և կամ յօրինակէն, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորին ///, և զհայրն և զմայրն իւր և զիս զանարժան գրիչս...։

646
ՄԱՇՏՈՑ
ՄՅԶԵՊ, VII, № 2205 (1567 թ.)

278 Զվերջի ստացաւղ սբ. Կտառիս զԹումանեանն յիշեցէք..., որ ետ յիշատակ ի Ղասումիկ, ի դուռն Ս. Յակոբա[յ] անջինջ յիշատակ եւրն և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն իւրոց...։

Դարձեալ մի ոք իշխեսցէ հանել զհայր Մաշթոցս ի դրանէ սբ. եկեղեցոյս, եթէ յանդգնի գողանալով կամ ծախելով՝ զանէծքն Յուգայի և զպատիժն Կայենի առցէ. ամէն։

Գրեցաւ յիշատակարանս թվին ՌՂԹ (1650). ամէն։

647
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 125

Գրիչ՝ Աղամալ

ա

174 Զնկարող լուսազարդ սբ. Աւետարանիս զԱստուածատուր քաջ դրպիրն յիշեցէք ի սբ. յաղօթս։

բ

Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից սրբոյն Սիովնի, զբարեսէր և զհանճարեղ վաճառական խոճա Աղամալն, որ և ցանկացող եղև կենսաբեր սբ. Աւետարանիս, և ետ գրել զսա եռափափագ սիրով, զի ի վաղուց հետէ ցանկայր այսմ լուսալրական և աստուածախօս մատենիս և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Առաքելին և Եմէնփաշային, որ փախե-

ցեալ են ի անանց կեանսն և տեսոյն Քրիստոսի արժանի լինին հանդերձ իւրայովքն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զխօճա Աղամալն, *և զհամեստ ամուսինն իւր՝ զ*Ասլիխաթունն, *և ըզորդիքն իւր՝ զպարոն* Դաւիթն *և զ*Նավասարդն, *զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, և զհանգուցեալ առ Քրիստոս դուստրն իւր՝* Ոսկինն, *յիշեցէք և լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմեա ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի...։*

Դարձեալ յիշեցէք զպարոն Աղամալն, *և զեղբայրն իւր խօճա* Վալին *և զ*Սիմէօնն, *և զհանգուցեալն ի Քրիստոս՝* Պարամիասն *և* Սաֆարն, *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք զպարոն և զվայելչահասակ Դաւիթն, *և զամօթխած ժրագլուխ զամուսինն՝ զ*Նախշունն՝ *կե[ա]նքն ամենեցուն Քրիստոս հատուցէ մինչև ի խորին ծերութիւն, և տացէ զհոգումս սրտից իւրեանց. ամէն։*

*Դարձեալ աղաչեմ յիշել զ*Տէր Գրիգոր *ընտրեալ, որ զսբ. Աւետարանս կազմեաց, միով ողորմեայիւ կից ընդ նոսին յիշեսջիք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

Եւ արդ՝ ես յետինս և անարուեստ ի գրչաց [29] *ունայնս ի ընդեգործաց մի բերան ողորմեայիւ յիշեսջիք, զոր վասն ծովացեալ մեղաց իմոց ժամանէ ինձ փորձութիւն։ Յիշողն ի Քրիստոսէ լիցի յիշեալ, որ է աւրհնեալ։ ՌՂ և Թ (1650) թուին աւարտ էառ։*

648

ՏՕՆԱՑՈՅՑ

ՄՅՉԵՊ, Հ. IX, էջ 230

Վայր՝ Շոռոթ

ա

404 Յիշատակարան Գրոյս.—Փառք ամենասուրբ Երրորդութեանն, համագոյ տէրութեանն, այժմ եւ յապա, եւ անդրաւ յաւիտեանն, ամէն։

Որ ետ կարողութիւն տարտամ եւ ապիկար բազմավէր ոգոյս եւ մեղսամած անձինս հասանել տարփման եւ տենչանաց սրտիս, այսինքն ծրման փոքրիկ տառիս, որ ասի Տօնացոյց, որով կարգաւորին եկեղեցիք քրիստոնէից տօնախմբութեամբ ամենայն սրբոցն Աստուծոյ, եւ պարեն սովաւ ի ցնծութիւնս հոգեւորս, ի փառս ամենազօր Հոգոյն Սրբոյ՝ գարդարողին ամենայն էիցս։

Արդ գրեցաւ սա թուին ՌՂԹ (1650), ի հայրապետութեան Հայոց սուրբ աթոռոյն Էջմիածնի, *տեառն տէր* Փիլիպոսի, *եւ աթոռակալութեան մերոյս նահանգի՝* Եսայեայ *քաջ ըաբունապետի, յերկիրս* Երնջակայ, *ի գեօղս* Շոռոթու, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ սուրբ եկեղեցեացն։*

[29] *Նածկագիրը կարդացել է Ս. Տեր-Ավետիսյանը՝ Աղամալ։*

Արդ ես տատանեալս մեղօք, գերեալս հոգով, անարհեստ ձեռամբս դրեցի զփոքրիկ տառս մեծագոյն սիրով, եւ տենչացեալ հոգով, վասն անծկալոյն իմոյ բաղձալի հարազատին, սիրասրնունդ եղբօրս, բերկրումն սրտիս իմոյ, տէր Արիստակէս քահանայի, ի վայելումն անձին իւրոյ, զոր Սուրբ Հոգին Աստուած վայելել տացէ յերկար ամօք, անփորձ եւ անարատ կենօք, ամէն։

Եւ եղիցի սա յիշատակ հոգոց մերոց եւ ծնողացն մերոց՝ Կիրակոս քահանային եւ Թուանդին, եղբարցն մերոց՝ տէր Ղազարին, եւ տէր Ալէքսիանոսին՝ հանգուցելոյն առ Քրիստոս, եւ ամենայն արեան մերձաւորացն մերոց, ամէն։

Դիմաթաւալ աղաչեմ զսուրբ հանդիպողսդ՝ յիշել առ միայն բարին Աստուած զեղկելի գծողս, եւ զհոգեւոր եւ զերախտաւոր դուստրն իմ զՀռիփսիմէն։

Ոհ եւ ոհ, եւ զՄարիամն յիշեա։

Բ

125 Ով հանդիպող աւուրս տօնիս,
եւ կատարիչ սուրբ խորհրդիս,
յորժամ սովաւ լուսաւորիս,
եւ կատարմամբ տօնիս հրճուիս,
զձեզ աղաչեմ ես եղկելիս,
եւ աղերսեմ հոգով գերիս,
յիշել առ Տէր ողորմելիս,
որ տարբերիմ մեղաց ծովիս։
Ոհ եւ ոհ կենաց իմոց։ Է՞։

Գ

215 Զմեղօք մեռեալ հոգի գծողիս յիշեա, ով տօնասէր եղբայր, ընդ նմին եւ զդուստրն իմ զՀռիփսիմէ, առաջի Սուրբ Տիրամայր Աստուածածնին։ Աւաղ խաւարեալ հոգով եղկելոյս։

Դ

358 Քրիստոս յոյս ամենայնի,
միջնորդութեամբ Ստեփաննոսի,
ողորմեա գրչիս գերի,
որ եմ լցեալ ես ի հոգի,
վիրօք սաստիկ անբուժելի,
եւ տատանեալ յայս կենցաղի։

649

ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

ՏԵՐԱՎՔ, № 492

Գրիչ՝ Պօղոս քահանայ

Վայր՝ Ասպահան

764 [Ե]ւ արդ՝ ես յետինս, անարժանս և անպիտանս ի քահանայից Պօղոս անուն, որ անուամբ միայն եմ քահանայ և ոչ գործով, շնորհիւ

Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զամենալիր բուրաստանս ի թվականիս Հայոց ՌՂ և Թ (1650) ամի, ի Շօշ քաղաքս Ասպահան, ի թագաւորութեան Պարսից փոքուն շահ Ապաս արքայի, և ի հայրապետութիւն մերոյ գիւղիս Ջուղայոյ բարունապետին և զստացող սորա զպարոն /// որ եռանդափափադ և յոժար սրտիւ ցանկացաւ և գրել ետ զերգարանս Դաւթեան մեկնութեան ի վայելս մանկանց եկեղեցւոյ, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնօղացն պարոն /// և եղբօրն /// և քրւերցն /// և կենակցին իւրոյ /// և որդոյն /// և դստերացն, և այլ ամենայն արեան մերձաւորացն, և պապուն իւրոյ զխօշայ /// և հանիկին իւրոյ ///[30]

650

ՏՕՆԱՑՈՑՑ, ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

ՔՑՁՁՎ, № 56

Գրիչ՝ Աստուածատուր

Վայր՝ Բրենիկ

88 Փառք... Արդ՝ գրեցաւ Տաւնացոյցս ի քաղաքն Սեբաստիայ, ի գիւղն որ կոչի Բրենիկ, ի ձեռս նուաստ և անարժան, մեղապարտ և անպիտան Աստուածատուր գրչիս, որ անուամբս քահանայ կոչիմ և գործովս իմ աղտեղեալ եմ, վասն ծովացեալ մեղաց իմոց։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, հայրք և եղբայրք, եթէ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք ի յարժանաւոր յաղօթս ձեր զանարժան գրչիս իմ. և [որ] յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն...

Դարձեալ գրեցաւ ի թվիս Հայոց ՌՂԹ (1650)։

651

ՄԱՇՏՈՑ

ՔՑՁՁՎ, № 111 (1650 թ. առաջ)

Գրիչ՝ Յոհան քահանայ

225 Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմայ, յիշեցէք յաղաւթս ձեր զխսանպակին, որ... գնեաց զսբ. Մաշտոցս ի յիւր հալալ արդեանցն և եդ յիշատակ անձին իւրոյ պարոն Տատին, Մուրատին, խաթուն մաւրըս՝ Մարգարիտին, պարոնպիս տէր Մկ[ռտ]չին և կենայկիցն երիցկին, և որդոյն՝ Վարդերէսին, և թոռին՝ Ղազարին և ամենեցուն կենդանեաց և հանգուցելոցն, և որք զսոսայ յիշման արժանի առնէ և ողորմի ասացէ՝ ողորմեսցի Տէրն յիշողացն և յիշատակ դնողացն և արժանի արասցէ իւր բարի տեսոյն. ամէն։

Ես՝ անարժան տէր Յոհան քահանայս գրեցի յիշատակարանս ի թվականիս Հայոց ՌՂԹ (1650)։ Ով եղբարք, բերան մի Աստուած ողորմի ասացէք ինձ՝ Աստուած ողորմեսցի ձեզ և յիշողացն. ամէն։

---

30 Այս ձեռագրի առաջին մասի հիշատակարանը տե՛ս 1623 թ. շարքում։

652
ԽՐԱՏԱԳԻՐՔ, ԱՌԱԿԱԳԻՐՔ
ՈՋՎՄՎ, № 875

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Ղեղան

455 Սուրբ Գրիգոր Լուսաւորչի,
Որ բարեխօս ես աշխարհի,
Մեզ ողորմեա ամենի,
Որով եղաք լսող բանի։
Եւ աւել ինձ Եսայի,
Որ զսուրբ տառս գրեցի,
Եւ ում որ լինի աս երախտի,
Արքայութեան լինի որդի,
Տէրն տացէ նոցա բարի,
Որ անարժան Եսայիս յիշի։ 4

Փառք... Արդ՝ գրեցաւ գիրս խրատական ձեռամբ Եսայի գրչի, ի յերկիրս Շամքուռ, ի դուռն Ղեղանա Ս. Աստուածածնին և սորին սպասաւոր Յովհաննէս կուսակրօն կրաւնաւորիս, ի թուականութեան Հայոց ՌՂԹ (1650)-ի։ Յիշեցէք Եսայի գրիչս և կենակիցն իմ՝ Սուլթանաղէն և որդիքս իմ Ստեփաննոսն, Սեբեբերիմն և Սրապիոնս հանդերձ ծնողօքն իւրովք...։

653
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՋՎԼ, № 189 (1469 թ.)

Գրիչ՝ Պետրոս

457 Դարձեալ աղաչեմ զձեզ որ միոյ ողորմի արժանի արարէք զբարեմիտ մանուկն Յովաննէս, որ մականուն Փելիկ կոչի, և Աստուած ողոր-
458 մի ասացէք իւր ա//մենայն ննջեցելոց՝ մեծի և փոքու առ հասարակ. ամէն, Ռ (1000) ամէն։ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմութիւն և մեղաց թողութիւն շնորհեայ սրբոց քահանայիցն և ժողովրդեան՝ արանց և կանանց, ծերոց և տղայոցն. ամէն։

Աստուած զայն քահանայն և զայն տանուտէրն աւրհնէ, որ զԱւետարանս լաւ պահէ և զյիշատակարան կարդալ տայ։ Աւետարանս գեղին ամենու[ն է], խնամք տարէք ի վերայ Աւետարանիս։ Գրեցաւ յիշատակարանս ձեռամբ սուտանուն Պետրոսի, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ի թուականիս Հայոց Ռ և ՂԹ (1650)։ Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք տէր Պետրոսին և իւր ծնաւղացն՝ տէր Յակոբին, և իւր կողակցոյն՝ Թաւրեզին, և իմ եղբօրն՝ տէր Աբրահամին, իւր կողակցուն. ամէն, Ռ (1000) ամէն։ Աստուած ողորմի Գոլիջանին, Մարկոսին, և իւր կողակցին՝ Շաղզային և իւրեանց կողակցացն, մեծին և փոքուն. ամէն, Ռ (1000) ամէն։ Դարձեալ միոյ ողորմի արժանի արարէք զտէր Պետրոս և զիւր կողակից զԽանումն. ամէն, Ռ (1000) ամէն։

Ով սբ. ընթերցողք սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմայր մեր հոգևոր զԹամար խաթունն, որ բաղում աշխատի հետ մեր, լուանալով, կերակրելով և Աստուած ողորմի ասացէք նմա։ Եւ որ յիշատակէ և Աստուած ողորմի ասէք հոգևոր մօրն մեր՝ Թամար խաթունին, և Աստուած իւրն ողորմեսցի. ամէն։

654
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 560, էջ 456

Ծաղկող՝ Սարգիս
Վայր՝ Գոմ, Ամիթ

110 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Շարակնոց ի գեօղն Գոմա[յ], ի դուռն Ս.
111 Նշանին, ի թուին ՌՂԸ (1649) ամին, ի խնդրոյ // պատուական և սրբասէր տէր Յովհաննէս կրօնաւորին, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, որոց Տէրն ողորմեսցի. ամէն։

Դարձեալ ծաղկեցաւ սա ձեռամբ անպիտան Սարգսի, ի յԱմիթ քաղաքի, ի թուին ՌՂԹ (1650) ամին։

655
ԱԻԵՏԱՐԱՆ

«Էջմիածին», 1951 թ., Ա—Գ, № 38, էջ 81

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Ասպահան

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ [յ]ոգնամեղ Գասպար երէց գրչի, ի յերկիրս Շօշ, որ է Ասպահան, ի եզր Նարինղալային, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոս կաթողիկոսին, և առաջնորդութեան տէր Յակոբ արհեպիսկոպոսի, ի թագաւորութեան այլասեռի շահ Ապասի, ի թուականութեանս մերոյ ՌՂԹ (1650)։ Զոր ի վաղուց հետէ ցանկայր ոմն Դիլան անուն սբ. Աւետարանիս, ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց՝ Մարտիրոսին, Ուսթիանին, որ և Աստուածն ամենայնի վարձահատուց լինի. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն, և զկողակիցն՝ Հուրիանն, և զորդիքն՝ զՄնացական և զՄարտիրոսն, և զդստերքն՝ զՏունեաւ, Մելիքեներն յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն, և զեղբարքն՝ զՀերսպեան, զՏէրունն, զԱստուածատուրն, և զերկու Գալուստն, և զքուերքն՝ զՍառէն, զՄարիամն և զՍալշուկն յիշեցէք...։ Միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս զՏէրունն, և զկողակիցն՝ զՀէրիքն, և զորդին՝ Ոսկանն, և զդուստրն՝ Անային յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն, և զպապն իւր՝ զՏէրաէրն, և զմօր հէրն՝ զՎարդումն, յիշեցէք...։ Յիշեցէք ի Քրիստոս զՈւսաիսանէն, զեղբայրն՝ Նազարն, և զքոյրքն՝ Թուրվանդէն, Կօզալաղէն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զՏիլանն, և զանեռն՝ Խէշումն, և զն[ո]բա կողակիցն՝ Հո-

ոոմն, և զորդիքն Պետրոսն, Յարութիւնն, Պայանտուրն, յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք զՄարտիրոսն, և զքուերքն իւր՝ Խաչունն, Խանդղէն, Սալչուկն, Մարիամն, քեռիքն՝ Սուքիասն, Յովանէսն, հօրեղբարքն՝ Մարն, Փաշէն, Պապէն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զՄարտիրոսն, զծնօղսն՝ զՏէրտէրն, զՍառէն. յիշեցէք...։

656

ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 80

Վայր՝ Կ. Պոլիս

... սբ. Աւետարանս ցանկացող եղեալ մահտեսի Գրիգորն, որ մանուկ տիօք Ի (20) ամեայ, ի քաղաքէն Նախիջուանայ եկեալ յերկրպագութիւն աստուածընկալ Ս. Գերեզմանին Քրիստոսի. և տեսեալ զվայելչութիւն սբ. ուխտիս, թողեալ զհայրենական երկիրն և զգաւառն հաճեցաւ բնակիլ ի սբ. քաղաքս Երուսաղէմ, զոր և մտեալ ի սպասու Ս. Յակոբայ մենաստանին բազում աշխատութեամբ և մտերմութեամբ ծառայեաց զամս Խ (40) և այլ առաւել մեծաւ ջանիւ, մինչի խորին ծերութիւն հասեալ. որոյ տեսեալ զունայնութիւն կենցաղոյս վաճառեաց զամենայն ինչս իւր, զոր ժողովեալ էր ի հալալ ընչից իւրոց, և ստացաւ Ա (1) ջաղաց, Ա (1) փուռ և մէկ տուն, և եդ յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ, և ոչ այսու կարաց ժուժել, այլ և մեծաւ աշխատութեամբ դիմեալ ի յարքայանիստ քաղաքն ի Կ. Պոլիս, և անդ կացեալ տարով և այլ աւելի։ Եւ բազում ծախիւք և ջերմեռանդ փափաքմամբ ետ գծագրել զսբ. Աւետարանս և զարդարեաց ոսկով և արծաթով, և բերեալ եդ յիշատակ ի դուռն Ս. Գերեզմանին Քրիստոսի։ ... Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահտեսի Գրիգորն, և զմայրն՝ Խումար, և զեղբարքն՝ զՅովսեփն և զՊօղոսն...[31]։

657

ԱԻԵՏԱՐԱՆ

Արցախ, էջ 227

Ով մանկունք Սիովնի... ի թուականիս Հայոց ՌՂԹ (1650) Գանձասարայ *կաթուղիկոսն* Գանջայո *խանն տուքսաղ էր արել. մինչև հատոյց զպարտսն դահճացն ագատեցաւ. ելեալ գնաց թէ շրջեսցէ վասն պարտուցն։ Մինչև Խաչեն գնացի ես ընդ նմա... Գանձասարայ կաթուղիկոսն անուն Գրիգոր կոչի։*

---

[31] *Գրչության տարեթիվը թեև չի պահվել հիշատակարանի բերված մասում, բայց այդ մասին իր գրքում նշում է Աղավնունին։*

658
ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 444

Գրիչ՝ Յովհան
Վայր՝ Ամիթ

... Աստուածասէր այրն խաւհայ Ապտին ստացաւ զսբ. Աւետարանս և եդ յիշատակ յԱմիթ... ի դուռն Ս. Կիրակոսի և մաւրն նորա Յուղիտայի, որ միշտ և հանապազ ընթերցցի յունկն կենդանեաց և յիշատակ ննշեցելոց։ Արդ՝ եղև ղրաւ գրչութեան սորա... յԱմիթ, ի դուռն Ս. Կիրակոսայ, ի հայրապետութեան սբ. էջմիածնի տէր Փիլիպպոսի կաթողիկոսի, յառաջնորդութեան Համթայ տէր Յովհաննէս արհիեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետին, ի թվին Հայոց ՌՂԹ (1650), ձեռամբ... Յաւնան գրչիս։...։



659
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 1034 (1547 թ.)

Նորոգող՝ Դանիէլ երէց

474ա [Փ]առք...։ Որոյ և զիս զանարժանս և զանպիտան ոգիս, արժանի արար այս բազմազոյգ գրոյս, որ կոչի Մաշթոց, յիշատակ հոգո[յ] ի-մո[յ], և ծնօղաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդան[ե-աց] և ննշեցելոց. ամէն։

Արդ աղաչեմ զձեզ, ով լուսերամ դասք քահանայից և մանկունք սբ. եկեղեցո[յ], զի յորժամ կարդայք և կամ աւրինակէք և կամ աւգ-տիք բանիւ մի և հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յա-ղաւթս ձեր զմեծաշուք և շքեղազուն, հեզահոգի և սրբազան զտէր Յո-վասափ քահանայն, որ ստացաւ զսբ. գիրքս և եւ նորոգել, յիշատակ
474բ իւրն և ծնօղացն, // հաւրն՝ տէր Գաւթին և մաւրն՝ Անթառանին, որ հանգուցեալ են առ Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք զտէր Յովասափն և կողակիցն՝ Փարին, և որդին՝ Աբրահամն, և միւսն՝ Յովանէսն և Գալուստն, Գասպարն, Հէրապետն. և դստերքն՝ Մինախաթունն, միւսն՝ Հռիփսիմայն, Նազլուխանն, Անթա-ռանն։ Եւս յիշեցէք Աբրահամն և կողակիցն՝ Նազին. նաև Յովանէ[ս]ն և իւր կողակիցն՝ Գայիանէն և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդա-ննեացն և ննշեցելոցն. ամէն։ Եւ ևս յիշեցէք զտէր Յովասափն և իւր քե-ռին՝ Գրիգորն, և կողակիցն՝ Մայրանն, և որդին՝ Խաչատուրն և կողա-կիցն՝ Շամամն, և որդին՝ Յակոբն. ամէն։

Նորոգեցաւ սբ. գիրքս, որ կոչի Մաշթոց , ձեռամբ սուտանուն ևրթ. Դանիէլ ստրուկ իրիցու, ի թվաբերութեան մերոյ հայկազան տօմարի Ռ-Ճ (1651), ի ամսեանն մարտի Ժ-ն և մէկն (11)։

660
ՔԱՂՈՒԱԾՔ ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ԳՐՈՑ
ԼԱՎԳԱՒ, № 82

Ստացող՝ Մուքէլ

ա

470 Ողորմի ընտացող գրուս ձեռամբն Մուքելէ, և ծնողաց իմոց Պողոսի, և մօր իմոյ, քվերաց, հասարակաց ամենեցուն՝ կարդացողաց և

լսողաց, և ամենայն քրիստոնէից ննջելոց Քրիստոս Աստուած ողորմեսցէ. ամէն։

Բ

Յիսուս Քրիստոսի ծառայ Միքայէլ, թիվն փոքր ՌՃ (1651) շամս Դ (4)[1]։

661

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Զմմառ, № 487

Գրիչ՝ Դաւիթ երէց

Ա

81 Զծայրատ տառիս գծող զանիմաստ Դաւիթ էրէց վերաձայնեալս յիշեցէք, զոր ի խնդրոյ Քարամատանենց տէր Յոհաննէս քաշ բարունապետին և արքեպիսկոպոսին եղև վայելումն։

Գրիչ՝ Խասպէկ

Բ

... բարեխօսեա ստացողի սրբոյ հատորացս տէր Յոհաննէս բարունոյն և քաշ հռետորին, և իւր ծնողացն, և ազգայնոցն։ ... Եւս զԽասպէկ գրչտնեալ գրիչս, յիշեա առաջի զենլոյն Քրիստոսի...։

Գ

Թվին ՌՃ (1651) մարտի ԻԸ (28)։

Դ

Խասպէկ նօտար սղալագիր,
Անձն անարժան գործով զազիր,
Գիտեմ չունիս արհեստ ընտիր,
Էր առարկես զանունդ ի կիր։

662

ՄԱՇՏՈՅ

Երևան, № 5909 (1626 թ.)

56բ Յօրժամ զԱրարիչն քո հանապազ առ քեզ տեսանես,
Մեղքն չրխաբէ ըզքեզ, յարաժամ լինիս պարզերես,
Ի մէջ ամենայն մարդկան քան զամէն խոնարհ ըզքեզ տես,
Ծանիր թէ հողոյ է ծնունդդ և դարձեալ ի նայ վճարես։

. . . . .

Նոյն աստուածային օրհնութիւնն միշտ և հանապազ եկեսցէ և հանդիցէ ի վերա մեր հոգևոր որդոյն երեսփոխան Աստուածատուրին և ի վերա իւր աւրհնեալ ընտանեացն մեծաց և փոքուց առ հասարակ ամենեցունցդ և պահեսցէ տէր Աստուածն մեր անփորձ. և անխռով խաղաղու-

[1] Այսինքն՝ մարտի 24-ին։

57ա թեամբ ի տուէ ե ի գիշերի, ի նստել ի տան, // ի դնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնելն և յամենայն ժամու. ամէն։

Գրեցաւ թվին Հայոց ՌՃ (1651) ապրիլի ԻԳ (23), օրն շաբաթ[2]։

663

ԺԱՄԱԳԻՐՔ

Ջմմառ, № 531

Գրիչ՝ Կիրակոս

ա

136 Անմեղադիր լերուք ինձ անարհեստ գրոյս, զի չէի վարժ գրչութեան...։

Արդ՝ գրեցաւ սա ի թվականութիւնս Հայոց ՌՃ (1651), ի հայրապետութեան տեառն Ներսէսին, ի առաջնորդութեան Աստուածայաուր վարդապետին։ Այս գիրքս գրած տարին Աստուած անչափ առատութիւն արաւ՝ Ա (1) քիլայ ցորենն ԺԵ (15) փարայ եղաւ, Ա (1) լիտ[ր] հացն Ա (1) փարայ եղաւ, մինչև մայիս ամսուն ԺԵ (15) անձրև կու գայր։

Բ

... Եւ գծողիս սորա սուտանուն Կիրակոս յիշեա ի Տէր։

664

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 1 (մանրաժապավէն, Երևան, № 490) (1637 թ.)

Իսկ զկնի ամաց ինչ, որ եհաս թվականն Հայոց ՌՃ (1651) ամն, ի Յեղիական պահոց շաբաթ օրն[3], յետ արձակման ժամուն յանկարծակի լուցեալ ի մոմոյ ինչ կամ ի բուրվառէ և հրդեհեալ այրեցաւ Ակինն եկեղեցին բովանդակ. և ոչ ինչ աղատեցաւ ի գրոց և յԱւետարանէ, ի խաչէ, յրսկիհէ և ի զգեստէ, բայց միայն Այսմաւուրքս այս զերծաւ ի ձեռն արանց աստուածասիրաց կարողութեամբն Աստուծոյ և աղօթիւք սրբոյ։ Եւ տեսեալ զկսկիծ յիշատակին իւրոյ, որ եղեալ էր նոյ[ն] ստացող սորա մահտեսի Վահրատ և որդին իւր՝ Յակոբ և ըստ ձեռնտուութեանն Աստուծոյ, բազում ծախիւք զեղծեալ և զայրեցեալսն նոր նորոգեցին, որպէս տեսանի առաջի աչաց ձերոց. և ետուն յիշատակ անջնջելի ի դուռն տաճարի մեծաց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, որ ի Կոստանդնուպոլիս։ Իսկ յորդոց և յազգականացն ոչ ոք չունի իշխանու-

[2] Տոմարական հաշվումներով 1651 թ. ապրիլի 23-ը կլինի ոչ թե շաբաթ, այլ չորեքշաբթի։

[3] «Բարիկենդան Յեղիական պահոց» եկեղեցական տոնը սովորաբար սկսվում է Զատկի 50-րդ օրվանից հետո, մեկ շաբաթ տևողությամբ և համընկնում է Հոգեգալստյան (Պենտեկոստէ) տոնին։ 1651 թ. Զատիկը եղել է մարտի 30-ին (տե՛ս F. K. Ginzel, Handbuch der matemischen und technischen Chronologie, Bd. 3, Leipzig, 1914, S. 417)։ Հոգեգալուստը (Պենտեկոստէ)կսկսվի մայիսի 18-ից և կտևի մինչև մայիսի 24-ը, օրը շաբաթ է։ Ուրեմն, հիշատակարանում նշված հրդեհը տեղի է ունեցել մայիսի 24-ին, շաբաթ օրը։

թիւն հանելոյ զսա ի դրանէ սր. տաճարի սոցին, այլ եկեղեցոյն է հուքմ և հրամանն։ Եւ ողորմին ըստացողին սբ. գրոյս մղտեսի Վահրատին, և որդոյն՝ Յակոբին, ի գրելն և ի նորոգելն աշխատողին ե կողակցին՝ Գոհարին։

Գիտեք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին իշխեցողք գրոցն զառաջին անուանսն կու ջնջեն և զիւրեանց կու գրեն, և չար է սովորութիւնս այս. աղաչեմ մի՛ դոր//ծել զայդ գործ։ Ապա թէ արժանի է վասն երախտեաց ժամանակի ինչ դրելոյ, գրեսցէ և զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի ե ջնջէ՝ ինքն ջնջի ի կենաց դրոյն. ամէն։

665

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1405

Ստացող՝ Կիրակոս Թալինցի
Վայր՝ Զմիւռնիայ

ԻԱ

219ա [Ա]ւրհնութիւն Հօր, գոհութիւն Որդւոյ...։ Արդ՝ ես թաղձեալս մտօք և ցաւագնեալս անձամբ... և տրդւոյս բանասիրաց փութոյ, պիտակ անուն Կիրակոս խնդող ե փափագող եղեալ յայս հոգէլի և հոգէբուղխ բուրաստանիս։ Որ և արժանի արար զանարժանս փափաքանաց իմոց, որ և խնդրէի յարաժամ վասն մեկնութեան տեսլեան սրբոյն Յոհաննու որդւոյն Որոտման, ըստանալ զսայ ինձ յիշատակ անջնջելի, բազմամեղի, յօնար, վասն սևութեան հոգւոց լուալեաց առիթ և սատար փրկութեան իմոյ անձինս, յոգնամեղի Կիրակոս Թալնցի[4], յերկրէն Արա[ր]ատցի, ի թէմէն սր. Լուսաւորչի, սնեալ ե վարժեալ ի գահ իշման սբ. Միածնի, բայց ի վերջինս կոչեցեալ վերատեսուչ<ի> ի Զմիտին Լիկիացւոց։ Արդ՝ ես յետնեալս առաքինութեանց և թափուրս ամենայն բարեաց գործոց երեսս անկեալ աղաղակեմ ի խորոց սրտէ... Կիրակոս տրուպս բանասիրաց և յետնեալս ի վարժապետաց և անարժանս, յիշման առնել արժանի։

219բ ... Դարձեալ մաղթանօք աղերսեմ զաշխատօղս // և զգրօղս և զօրինակիս ջնորհօղն, նաև զընթերցօղսդ տէր Քրիստոս տացէ զբարիս երկնառատ ողորմութիւնն և ջնորհաց Ս. Հոգւոյն արժանի արասցէ...։

Ըստ հոլովման ամանակաց ընթացից կրօնոսի յառաջ ջարժութեան, որ ըստ լրապատարն, նշուղագեղն, արփիաճաճանճ լուսակիրն, օրակշիռն, մշտափարատն, ականն արևու, ըստեղծականն Արիւսեկի, որ համբարէ, հոլովէ, կուտէ ամաց յոլովութիւն ի չափ գարուց, շնչասպառ և կենդանանորոգ առ ուղղէկան, յաւիտենիս ի յաւարտումն կատարման։ Քսաներորդի յերկրորդ յոբելենի ի սկիզբն[5] պսակելոյ մտի մետասան

[4] Ն. Մառի ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ (Մոսկվա, 1892) աշխատութեան 35—37 էջերում բերված է Աղամգրքի նկարագրությունն։ Ձեռագրի գրիչը Կիրակոս Թալինցին է, որն ընդօրինակությունը կատարել է 1702 թ. (էջ 35, հմմտ. էջ 36)։ Թվում է, թե այս երկուսը միևնույն անձնավորություններն են։

[5] Հաջորդ մեկ բառը եղծված է, կազմված 4—5 տառից։

նահանջի յաբեթական տօմարի եղև զրաւ յայսմ սոփերի, յամսեանն յունիսի ԻԲ (22)[6]։

Արդ՝ եղև զրաւ յայսմ հոգէլի և հոգէբուղխ բուրաստանի մեկնութեան տեսլեան սբ. աւետարանչին Յոհաննու, ի դառն և ի դժնեայ և անբարի ամանակի, յերկիրս Ասիացւոց, ի քաղաքն[7] ի Զմիտնոյ Լիկիացւոց։ Ի յայսըմ անդորրութեան միջոցի, որ ծովով և ցամաքով պատեալ, պաշարեալ ազգն Իսմայելացոց ունելով սաստիկ պատերազմ ընդ ազգին Լատինացւոց[8], որ և մեք ևս ունիմք նեղութիւն բազում, եթէ ի հարկապահանջութենէ և ասպատակաւ, որ է ի հէնից և աւազակաբար զրկողէ, ոչ թէ միայն ի ճանապարհս, որ վնասեն վաճառականաց, նաև մեր շրջողաց, այլ և ի քաղաքս և ի գիւղորոյս բռնութեամբ վարին այլազգիք՝ կողոպտելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, զկին և զտղայս քարշելով, յայտնի կողոպտելով և ոչ յումեքէ երկնչելով։ Ի յայսպիսի յանդորրութեան միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցան թշնամիք յեկեղեցոյ։ Իսկ ես՝ նուաստս ի կարգս կրօնաւորաց և յետնեալս ի բանհիւսաց և կրսերս վարժապետաց, ի հոգ մտի և ժողովեցի ուր որ գտի. նախ. զՔաղուածս չորից աւետարանչաց. յերկրորդ զՏեսիլս սրբոյն Յոհաննու աւետարանչի. և երրորդ. զՔաղուածոցն Վարդանայ Մեկնութենէն սաղմոսացն Դաւթի։

Ստացայ զսայ յիշատակ ինձ, հիմնեցի ինձ Կացուցի և մի տուպ կուտեցի, արձանացուցի ի մի գոյ իրի, զբաղումս տեղնեան, դրվագադրութեան յայսմ սոփերի արգասաւորութեան։

Արդ՝ հայցեմ ի ճաշակողացդ հոդէլի սեղանոյ... յիշատակել զմեզ մաղթանս...։

Բ

168բ Ով սբ. ընթերցողք յայսմ հոդէլի սոփերիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զիս զանարժանս, ի յետինս բանասիրաց զտէր Կիրակոս վերատեսուչս ի Զմիտին քաղաքի, որ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

666

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (մասնակի)

Երուսաղէմ, № 797, տե՛ս նաև ՄՏՁԵՊ, III, № 797, էջ 253—254

Գրիչ՝ Ամիրաս Եզրենկացի
Վայր՝ Տրապիզոն

ա

105բ Ո՛վ հայր Պաւղոս սբ. առաքեալ,
Քարոզ բանին Տեառն յայտնեալ,
ԶԱմիրասիս մեղաւք լցեալ,
Առ քեզ յանձին եմ արարեալ։

Թորգոմեան թուականին հայկազնի ՌՃ (1651) աւարտեցաւ։

---

[6] Մատենադարանի ձեռագրաց ցուցակում այս ձեռագրի գրչությունը նշված է 1651 թ. (հա. Ա, էջ 544)։ Նույն ձևով է նաև Ն. Մառի մոտ (Ցուցակ համառօտ ձեռագրաց Սևանայ, էջ 36)։

[7] Ձեռագրում «ի քաղաքն» կրկնված է։

[8] Խոսքը վերաբերում է Կանդիայի պատերազմին (1645—1669 թթ.)։

Բ

474ա Փառք...։ Զեռք ամենակալի ստեղծ ղիս և բարձրեալն ի բարձունս ընծայեաց զիս։

Յորժամ ծնաւ զիս մայր իմ, ես իմաստնացուցի զնայ։

Կամ յարևելս և խաւս իմ յարևմուտս, ի հիւսուսոյ և ի հարաւոյ բարբառիմ։

Ի հրոյ զարհուրիմ և նստելով ի վէմս արհամարհեմ (sic) զնայ։

Եւ անուն իմ բաղկանայ երեք տառիւք՝ երրեակն ի միակէ, երկրորդն՝ ի տասանէ, երրորդն՝ ի հազարէն։

Զեռս երթայ և գիրս մնայ,
Եւ մարմինս ի հող կու դառնայ,
Ես ալ մեղաւոր եղայ,
Դժոխոց դռան մատնեցայ։
Քանի որ տխմար էի,
Ի մեղացն ի զատ կու փախչէի,
Երբ որ մեղաւոր եղայ,
Դժոխոց ճանփան ես ուսայ։

Գրեցաւ այս չորեքտասան գիրքս Պաւղոսի, և Յայտնութիւնն Յովհաննու, և Հանգիստն Յովհաննու, և Գործք առաքելոցն, և Կատողիկէքն, Սողոմոնի Առակն, Երկրորդն, Երրորդն, Ժողովողն, Իմաստասիրութիւնն, Երգ երգոցն, Տովբիթն, Եսթերայն, Դանիէլի տեսիլն, Հոութայն, Գէդէոնին, Աբիմէլիքայն, Սամբսոնին, Միքիայն, Յուդիթին, Սողոմոնի իմաստութիւնն, Կանոնք առաքելոցն և Հարցմանցս, Եղիայ մարգարէինն, Եղիսէինն, Եզեկիէլ մարգարէին տեսիլն։ Աւարտեցաւ ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մահամատին, որ էր ԺԲ(12) ամաց, և ի կաթողիկոսութեանն տէր Փիլիպպոսին Վաղարշապատ քաղաքին, և Երուսաղէմայ հայրապետին տէր Աստուածատուր պատրիարգութեանն. Աստուած զիւրեանց հայրապետութիւնն վայելել տացէ. ամէն։

474բ Արդ՝ աւարտեցաւ գիրքս ի քաղաքն ի Պոնտոս, որ է Տրապիզոն, ձեռամբ սուտանուն, անպիտան Եզրնկացի տրուպ Ամիրասէ, ի թուականութեանն հայկազան տոհմիս Ռ և ՃՃ (1651), յուլիս ամսոյ ի Լ (30), աւրն հինգշաբթի։

Արդ՝ որք հանդիպիք կարդալով և կամ աւրինակելով զսայ յետ մեր ողորմելով մեղուցեալ ոգոցս ողորմութիւն հայցեցէք ի Քրիստոսէ և յիշման արժանի արարէք ի բարին, մանաւանդ զհայրն իմ՝ զմահտեսի Պալին, և զմայր իմ զմահտեսի Նոպաթն, և զեղբայրքն իմ՝ զԱխինանն և զԱշրխ մահտեսին, [զ]Եաղուպն և զՊարոնն, զՏաաուրն և զՅովսէփն. և դարձեալ զաւակս իմ զՄալխասն և զՊալին, [զ]Թառուկն և զՎարդանն և զՄանուկն և այլ ամենայն արեան մերձաւորսն մեր և զերախտաւորսն մեր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն առ Քրիստոս յիշեսցիք աղաւթիւք, որ և դուք յիշեալ լիջիք յամէնառատ ողորմութիւնն Աստուծոյ...։

Գ

475ա Ով մարգարէ աստուածաբան,
Զի զաղաչեմ աղերսական
. . . .
Որ ողորմի մեզ գթական,
Ամիրասոյս և անպիտան,
Եւ ծառայիս Տեառն անարժան։
Լոկ Ամիրաս Եզրնկացի,
Ռ և վայ եղուկ քեղի
Զեռամբ իմով զայս զրեցի,
Ի թուականիս Ռ ամի,
Եւ հարիւր թիւ այլ աւելի (1651),
Յուլիս ամսոյ վերջքն ելի,
Եւրն երեսուն հինկշաբաթի։

Դ

474բ Հայր մեղայ ասեմ յերկինս,
Թէպէտ և ես եմ անարժան,
. . . .
475ա Լոկ Ամիրաս Եզրնկացի,
Արքայութեանդ քո ցանկայ,
Զի[ս] ի մասիտ արայ արժան,
Ի միւս անգամ քում գալըստեան[9]։

667
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԵՐԱՎՔ, № 572

Գրիչ՝ Գրիգոր

476 Կատարեցաւ քաղուածքս Սահմանաց,
Ի թուին Ռ և հարիւրին (1651),
Պատկեր աւուրս Աստուածածնին[10],
Զեռամբ Գրիգոր ապիրատին,
Ի դրունս Արքոյն Թումային,
Եւ ի խնդրոյ իմաստասէրին,
Հռչակաւոր պայազատին.
Ընտիր ազգաւ և գովելին,
Շնորհալի [Յարութիւն վարդապետին],
Որ ցանկացաւ ըղձմամբ սրտին,
Ստանալ զգանձս աստուածային,
Ցիշատակ իւրն և ազգակցին,

[9] Այս չափածոն վերցված է Հովհ. Թլկուրանցու «Աղօթք» բանաստեղծությունից (տե՛ս Յովհ. Թլկուրանցի, Տաղագիրք, հրտ. Ն. Պողարյան, Երևան, 1958, էջ 43—44)։ Նման, բայց համառոտ երկու չափածո էլ տե՛ս ձեռագրի 475 ա էջում։

[10] Այսինքն օգոստոսի 17-ին, կիրակի։

Եւ ամենայն արեանառուին,
Հօրն իւրոյ [Ղլսաակիսին],
Փոխեցելոյն առ Հայր յերկին,
Եւ մօրն իւրոյ ///
Քրիստոս ողորմի յամենեսին[11],

668
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6253 (ժե դ.)

Կազմող՝ Միքայել
Վայր՝ Օստեղս

1ա *Կազմեցաւ ձեռնար անարժ[ան Միքայէ]ելին, յիշեալ [ւ]իցիք։ Յիշեցէք ի [մաքր]եայփայլ յաղօթս և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոս յԱստուծոյ մերոյ։ամէն։*

Յեր[կ]իր իմ Արզրում, *գիւղս իմ* Պատիշէն, *թվին ՌՃ (1651)-ին, յօգոստոսի ԻԳ (23), դուռն ի Ս. Յակոբայ գիւղն* Օստեղս[12]:

669
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 8798

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ

10ա *Աւարտեցաւ Համայիլս և Պահպանութիւնս թվին ՌՃ (1651)-ին սեպտեմբերի Դ (4), ձեռամբ* Յովանէս *սարկաւագի, ի վայելումն Ա-*
ռաքելին։

670
ՄԱՇՏՈՑ
ՔՋՁՎ, № 111 (1651 թ. առաջ)

226 *Գրիգոր ծնաւ թվին ՌՃ (1651) սեպտեմբերի Ը (8), աւրն հինգ-*
շաբթի։

671
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՁՎՍ, I, № 175

Գրիչ՝ Աւէտ
Վայր՝ Տաթև

ա

733 *Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսա և խնամօք նորին կատարեցի զլու-*
734 *սաւոր և զմաքրափայլ սբ. // Աւետարանս ի գաւառս* Ռոռանոյ, *ի սբ. և*

[11] Ձեռագրի մի մասը գրվել է 1699 թ. Մկրտիչ երեցի կողմից, նրա հիշատակարանը տե՛ս 1699 թ. շարքում։

[12] Այնուհետև ընդհատվում է։

հռչակաւոր պատրիարգանիստ ի նահանգի՝ սբ. ուխտի աթոռոյս Ստաթէի սբ. Առաքելոյս, և այլ բազմահաւաք սրբոց նշխարացս, որ աստ կան ժողովեալ ԹՌ և ՐՃ (9800), ի պահպանութիւն տանս Սիսակայ, և հայրապետութեան տեառն Հայոց սբ. էջմիածնայ տէր Փիլիպպոս կաթողիկոսի, և մերոյ սբ. ուխտի սպասաւորի՝ արհեպիսկոպոսապետի և քաջ դիտապետի տէր Մեսրոբի, ի թվականութեան հայկազեանս սեռի հազար[13] [և] հարիւրի (1651)։

Զի ցանկացող եղեալ այսմ բազմագով գաղափարի, որ գեղեցկայարմար դրուատով ունէր յինքեան զամենայն արուեստ գրչութեան, քանզի զարդարեալ էր սա ի մեծ վարժապետէն և ի քաջ քարտուղարէն, մեծ բաբունապետէն և քաջ հռետորէն Գրիգորի[14] մեծի, որ ձեռամբ բազկի իւրոյ դրեալ ունէր զօրինակ զսբ. Աւետարանիս՝ կետօք և ստորակէտօք, վանկօք և ջեշտօք և պարոյկաւ, նաև քմակից գիրքն (?) ի տեղի իւր կարդեալ իմաստասիրապէս. և համարայքն և ճապաղ ցանկն՝ ուղղադրեալ և ներքնադրոշմեալ կարմրագրով։ Եւ ես մեղուցեալ անձն գրեցի սբ. օրինակին Աւետարանս տետր ընդ տետրի, թուղթ ընդ թղթի, տող ընդ տողի, էջ ընդ էջի, և այլ ամենայն որպիսութեան արհեստն որպէս նոյնն։ Արդ՝ աւարտեցաւ սբ. Աւետարանս ի տօնի մեծի Հրեշտակապետացն՝ ի նոյեմբերի ամսոյ ութն, ձեռամբ մեղապարտ և անարժան Աւէտ աշխարհականէ, ի խնդրոյ բարեմիտ և երջանիկ, հեզահոգի, ձեռնասնունդ որդի բանից տէր Սարգիս կրօնաւորի, և զծնաւղսն իւր՝ Դաւիթ քահանայն, և մայրն իւր՝ Սալվարն, և եղբայրն իւր՝ Գրիգոր քահանայն, և կողակիցն՝ Պէկիխանն, և որդւոյն իւրոյ՝ Մեսրոպին, և դստերացն՝ Զինիիանին, Խանիփաշին, և միւս եղբօրն իմոց՝ Թումին և կողակցին իւրոյ՝ Աղասօլթանին, և որդւոցն՝ Միհաս քահանային, Վլասին և Փիլիպպոսին, և հանգուցելոյն առ Քրիստոս Նիկողայոսին, և հօրեղբարքն՝ Սարգսին, և կողակցին՝ Սալվինազին, և միւս եղբօրն՝ Թարջիմանին, և կողակցին՝ Խաթունպէկին, և որդւոցն՝ Վէլոսմին և Լէլին, ուստերացն և դստերացն և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զհանգուցեալ եղբարքն՝ զԽուրայէլն, Զօնրապն և զքոյրն՝ Խանիփաշէն։

Ստացող՝ Սարգիս աբեղայ
Վայր՝ Շօշ

Բ

734 Արդ՝ ես յետինս ի մեղաց, և զժիրս ի չարեաց, զծոյլս ի բարեաց Սարգիս անարժան կրօնաւորս, ի ծերութեան ժամանակի՝ ի վաթսնամեայ կենաց իմոց, յոյժ փափագանօք և ըղձմամբ սրտիւ, ցանկացայ սբ. Աւետարանիս, և ետու գրել զսա՝ անչինչ յիշատակ, անկողոպտելի գանձ հոգւոյ իմոյ, և ծնողաց իմոց։ Աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք
735 սբ. Աւետարանիս, յոր//ժամ ի ձեռն առեալ ուսմանց կամ զիտմանց կամ գծագրութեան, յիշեսջիք լիաբերան ուղիղ սրտիւ զՍարգիս կրօ-

[13] Բ. Սարգիսյանը նշում է, որ թվականի հազարավորը քերված է (էջ 248)։
[14] Բ. Սարգիսյանը ծանոթագրում է «Տաթևացուց»։

նատրս, որ կամ և մնամ ի սրբոցդ յիշման, իբրև զկաթիլ մի ի դողէ, ակն ունելով յուսով սպասեմ սբ. ընթերցողացդ աղօթից, յիշել զՍարգիս կրօնատրս, և զծնողսն իմ աղաչեմ յիշել. ամէն։

գ

Ով դասք լուսերամից... զՍարգիս աբեղայս յիշեցէք ի մաքրափալ սբ։ յաղօթս ձեր, որ բաղում աշխատութեամբ ծրագրել և ծաղկել տուի ///[15] սբ. Աւետարանս ի Շօշ քաղաք, որ կոչի Ըսպահան, թողի հիշատակ և գրաւական ինձ հանդերձ ծնաւղաւք իմովք, և ինձ մեղապարտ աշխատողիս հայցել թողութիւն, զոր ձեզ և մեզ հասարակ պարգևեսցէ, որ առատն է յամենայնի. ամէն։

136 Յիշեցէք և զծրագրող յիշատակարանիս զՄինաս մեղօք լցեալս, սուտանուն քահանայս, հանդերձ ծնաւղօք իմովք. և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։

672

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7168

Գրիչ՝ Մարտիրոս աբեղայ
Վայր՝ Ներուսաղէմ

ա

65բ ի թվականիս Հայոց մեծի,
Երկեակ քառիցս հարիւրի,
Եւ վեցերորդ յոբելեանի (1651)
ՅԱրեգ ամսոյ ութներորդի[16],
Գրեցաւ ցոցակս ի քարտիսի,
Յներուսաղէմ սբ. քաղաքի։

բ

231բ Փառք...։ Գրեցաւ Տօնացոյցս և ցանկ Այսմաւուրաց կարգին հա//-
232ա մառաւտաբար, ի թվականիս հայկազան սեռի Ռ և Ճ և մի (1651) և յամ-
սեանն հոռի Գ(3)-ն էր օրն[17], ձեռամբ մեղսամած և անարհեստ Մարտի-
ռոս կոչեցեալ անուամբ ութ աբեղայի ի սբ. և յաստուածակոխ քաղաքս
յներուսաղէմ, ընդ հովանեաւ գերահռչակ սրբոյ ուխտիս Ս. Յակոբայ, աս-
տուածաբնակ մենաստանիս։ Ո՛վ նազելի եղբարք մի՛ մեղադրէք, զի
կար մեր այս էր, այլ և հայցեմ ի ձէնշ մի բերան Աստուած ողորմի ա-
232բ սացէք սևերես և // անամօթ գրչիս վասն Աստուծոյ յահեղ դատաստա-
նին...։

գ

Զեղկելի Մարտիրոսս գծող այս տառի,
Արժան արէք յիշման ձեր սբ. աղօթի,

---

15 Բ. Սարգիսյանի հաղորդմամբ մի բառ քերված է։

16 Այսինքն՝ [(2×4)×100]+[(6×50)]+551=1651 թ. հունիսի 12-ին (շարժական տոմարով)։

17 Հայոց ՌՃԱ հոռի 3-ը կհամապատասխանի 1651 թ. նոյեմբերի 11-ին (շարժական տոմարով)։

Զի ես չունիմ բընաւ գործիկ մի բարի,
Որ երթա առ Աստուած ինձ բարեխօսի։
Այլ եմ անկեալ ի խորս թանձրամած տղմի,
233ա Նըմանեալ գարշասէր խո//ղոյն վարազի,
Փոյթ եմ առ ի չարիս և ծոյլ ի բարի,
Անուամբս աղ կոչիմ ւ աղբ եմ գարշելի։

* * * *

673

ՇԱՐԱԿՆՈՑ

ԼԱԱԺԻ—Ա—8 (մանրաժապավեն, Երևան, № 156)

Գրիչ՝ Յակոբ աբեղայ

ա

Զեղկելի ղծողս սբ. Երգարանիս Յակոբ սուտանուն աբեղա. զանունն ունիմ և ոչ զգործն, ունայն և թափուր յամենայն բարեգործութենէ, յիշեցէք...։

Բ

Փառք...։ Գրեցաւ Զայնաքաղս ի թվին Հայոց ՌՃԱ (1651) ամի և աւարտեցաւ նոյեմբեր ամսոյ ԺԱ (11), ձեռամբ ապիկար գրչի Յակոբ սուտանուն աբեղի, ի խնդրոյ պատուական, և սրբասէր, և հեզահոգոց կրաւ[նաւ]որացս Մեռունին և իւր եղբարն Աստուածատուր մալաղին, քանզի ետուն գրել զսա ի հալեալ ի արդեանց // իւրեանց, ի յիշատակ իւրեանց և ծնողաց իւրեանց և ի վայելումն մանկանց Սիոնի։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. ընթերցողք, որք հանդիպիք սմա, յիշեցէք զստացող Զայնաքաղիս զսրբասէրք և զճգնաղգեացք զՄեռուն աբեղան և զեղբայրն իւր զԱստուածատուր մալագն ի լուսափայլ յաղաւթս ձեր...։

Արդ՝ ես տառապեալ Յակոբս, սուտ աբեղաս, որ մեղաւք եմ խրխայթեալ յոգոյ, ծրագրեցի զՁայնաքաղս ընդ հովա//նեաւ ի հռչակաւոր յանապատս, որ կոչի Ամենափրկիչ և մատուռ նորին՝ Սբ. Կարապետ, զոր յետոյ շինեցին, Ս. Խաչ և Ս. Երրորդութիւն։

Արդ՝ որք հանդիպիք սմա կամ կարդալով և կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՅակոբ աբեղաս, զծնաւղս իմ և զեղբայրքն իմ...։

Ո՜վ սբ. ընթերցողք, խոշորութեան և սխալանաց անմեղա//գիր լերուք, զի կար մեր այս չափ էր։ Նաև զպատուելի եղբարքն մեր՝ ղարհեպիսկոպոսքն մեր՝ զտէր Յոհանէս զվերատեսուչ քաղաքիս և զտէր Տաւիթ արհին [առ]աքինասէր եպիսկոպոսն, որ է բնական ի Մարանայ քաղաքի, և զայլ միեղէն եղբարցն, և զՂազար աբեղան և զՄաթէոս աբեղայն և զԱւետիք աբեղայն և զՄկրտիչ մալագն և զԱւետիք մալագն և զայլ սպասաւորս...[18]։

[18] Ձեռագիրը էջահամար չունի. վերջին երկու էջում մելանը զգալի չափով թափված է։

674
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 163 (ԺԲ դ.)

ա

310 Յիշատակ է սբ. Աւետարանս դալալ // Էվաղին, և զծնօղաց նորին Տիրատուրին, Փիանդէ, և զկողակիցն իւր՝ Հոիփսիմէ, և որդոցն իւրոյ՝ Պաումին և Թումիկին, և դստերն իւրոյ՝ Փաքանին, Լելէ, Սողովմէ, և ամենայն մերձաւորաց և ազգականաց նորին, յիշեցէք...։

Թվին ՌՃԱ (1651) սբ. Յակոբին պահոցն գրեցաւ[19]։

675
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 224

Վայր՝ Բի[ւ]ռական

310բ Փառք...։

311ա Ես՝ նուաստ անձս և տարտամս կայիւք և կրիւք, փանաքիս ամենայն մսեղեաց, տարամերժեալս... Յոհան միայնակեաց, եղէ ցանկացօղ լուսազարդ տառիս և աստուածախօս կտակարանիս... յիշատակ ինձ և ծնօղաց իմոց Ումրշահին, Դշխոյին, և եղբարց իմոց Կիրակոսին, Մկրտչին, և կողակցին՝ Յեթարին, որդոց նոցին և զաւակաց Էլումին, Նուինեանին,

311բ // Յակոբին և ամենայն արեանառու ազգականաց իմոց կենդանեաց և հանգուցելոց։ Արդ՝ որք հանդիպիք կարդալով կամ գաղափարելով, թերևս դիպեսցի հարևանցի տեսանելով, յիշեսցի միով ողորմիւ զվերոյ շարատառեալ անուանս, որք և սակս այնոցիկ գծեցան, զի գոնեա յիշմամբ ձերով ողորմութեան ինչ մասին ճահաւորեսցին, ընդ որոց և դուք մասն բարեաց ի Քրիստոսէ... ընկալջիք...։

Արդ՝ գրեցաւ սբ. տառս երկիրս Արարատեան, ի դեօղն Բի[ւ]ռական, ձեռամբ Գրիգոր իրիցու, ի թվականին ՌՃ (1651) ամին, հայրապետութեան տեառն Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի, ի դառն և վըշտաշատ ժամանակիս։

Ստացող՝ Յոհան

Բ

Այլ գրով

312ա Դարձեալ յիշեցէք զՅովայն միայնակեցն և եղբարք իւր Մկրտիչն և Նուրինան, և հանգուցեալ եղբարցն՝ Վէլինանն, Յէյլաբէկն, և որդիք Մկրտչին՝ Էլումն, Կիրակոս, և դստերք Հոռոմն, Գոլին, Եղսաբերքն, Թումիանն և ամենայն զաւակն նոցին, և Հոռոմին տղայն՝ Սարգիսն, և դուստր Գուզալն, Սափին և ամենայն մերձաւորաց կենդանեաց և նընջե-

---

[19] Սբ. Հակոբի պահքը (պասը) սովորաբար լինում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, մեկ շաբաթ տևողությամբ։ Քանի որ Հայոց ՌՃԱ տարեթիվը սկսվում է 1651 թ., հոկտեմբերի 10-ին (հուլյան տոմարով), հետևապես Հայոց ՌՃԱ տարեթվում Սբ. Հակոբի պահքը կլինի 1651 թ. դեկտեմբերի 7-ին՝ կիրակի և կտևի մինչև դեկտեմբերի 14-ը։ Ուստի սույն հիշատակարանը գրեցինք 1651 թ. շարքում։

ցելոց, յիշեցէք... հօրն մերոյ՝ Ջանազին *և մօր մերոյ* Ծաղիկին *և ամենայն արեան մերձաւորաց...։*

Յիշեցէք և զՆորիկի *որդին՝* Յակոբն։

Դարձեալ *յիշեցէք... զխօճայ* Բէնբուտն, *որ ետ* ԲՌ *(2000) գին ծաղկելէ, և ծնօղսն իւր՝* զԲայիսօղլուն, *և* զԹեթրօն, *և ամուսին իւր՝* զԳուլարզանդն, *և եղբայրն իւր՝* զխատինն, *և քորքն իւր՝* զԳօզալիսաթունն *և* Զուծանն, *և դուստրն իւր՝* զԹիքանն *և զամենայն արեան մերձայկայս իւր յիշեցէք...։*

676
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 237

Գրիչ՝ Վահրամ դպիր
Վայր՝ Ասպահան

ա

249բ *Փառք...։ // Եւ արդ՝ ես անարժանս և անարհեստս ի գիրս գրչութեան* Վահրամ *դպիրս, և զուսուցիչն իմ՝* զՄեսրոբ *վարպետս, և հօրն իմոյ՝* Պուտաիին, *և մօրս իմոյ* Նունուֆարին։

Շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զաստուածախօս և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս ի լաւ և ի յընտիր օրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ի Ճ (1651) ամին, ի քաղաքս Շօջ, որ կոչի Ասպահան, *յեզր պարսպին* Նորաջինի, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Էջմիածնին, ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպպոսին, *և ի յառաջնորդութեան մերոյ քաջ բարբունապետ տէր* Սիմէոնին, *ի թագաւորութեանն այլասեռից շահ* Ապասին, *ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց և ի սովութենէ հացի։ Զոր տէր Աստուածն մեր պահեսցէ*
250ա *զամենայն // ազգս քրիստոնէից ընդ ամրածածուկ աշովն իւրով. ամէն։*

Արդ՝ որք ճաշակիք և վայելէք յամենառատ սեղանոյս և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ օրինակելով, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրիս, զի կար մեր այս էր։

Ծաղկող՝ Հայրապետ

բ

193բ *Զմեղաւոր* Հայրապետ *նկարօղս յիշեցէք*[20]։

677
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 238

Ստացող՝ Սարգիս Երեւանցի
Վայր՝ Սաղմոսավանք

296բ *Փառք...։*

298ա *[Ո]ւստի և տեսեալ զսորայ անճառ փրկայգործութեանն խորհուրդն,*

[20] Գրված է նկարի շրջանակում։ Ստացողի հիշատակարանը տե՛ս 1652 թ. շարքում։

ես՝ Յէրեանցի անարժան և անպիտան Սարգիս էրէցս և ըստացայ զսայ
և ցանկացող էղէ այս աստուածայբերան սբ. Աւետարանիս...։

298բ Եւ շերմեռանդ սրտիւ ետու գծայգրել զսա գանձ անկողոպտելի և
կտակ անդառնալի, ի հալալ և ի քրտնաջան վաստակոց իմոց, յիշատակ
ինձ և հոգևոր հօրն իմոյ և զիս սնուցողին վիրապեցի Դաւիթ եպիսկոպո-
սին, և մարմնաւոր հօրն իմոյ՝ Ջալալին, և մօրն իմոյ՝ Վարդիթերին, և
որդոցն իմ՝ Կարապետ սրբասնեալ քահանային, որ տղայ հասակաւ փո-
խեցաւ առ Քրիստոս, և սուք մեծ եթող մեզ և մօրն իւրոյ՝ Եղսալամին,
և միւս որդոցն՝ Մկրտչին և Մարգարին, և միւս Մարգարին՝ փոխեցելոցն
առ Քրիստոս. և միւս որդոցն՝ Առաքելին և Մկրտչին. և դստերն իմոյ՝
Սոփիին. և քերցն իմ՝ Խաչունքէկոյն և Բանալուին. և պապուն իմոյ՝
Սարգիսին և կենակցին՝ Շահսոլթանին, և այլ ամենայն արեան մերձա-
299ա ւորացն իմոց // կենդանեաց և հանգուցելոց. ամէն։

Արդ՝ ես Սարգիս էրէցս ըստացայ զսբ. Աւետարանս և ետու զսայ
ընծայ և նուէր յիշատակ վերոյ դրելոցս ի սմայ ի սբ. և հրեշտակայ-
բնակ անապատն Լուսաւորչին մերոյ ի ձորն Սալմոսայվանից և դուռն
Ս. Աստուածածնին և այլ սրբոցն որ անդ կան, և ի յառաջնորդութեանն
սբ. և հրեշտակայկրօն հօրն Յովանէս պարոնտէրին և այլ միաբանացն
որ անդ կան, որպէսզի հրճուեսցին սովաւ մանկունք սբ. անապատին, և
լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացեն ինձ մեղապարտ
Սարգիս իրիցոյս և այլ վերայ դրելոցս ի սմայ։

Ի թվիս Հայոց Ռ և հարիւր (1651)։

Արդ՝ որք հանդիպիք սմայ ընթերցմամբ կամ տեսութեամբ յիշես-
ջիք երկնայգնաց յաղօթս ձեր զիս մեղապարտ Սարգիս քահանայս և
299բ զամենայն վերոյ դրեալս ի սմա և լի բերանով // և ուղիղ սրտիւ Աստու-
ած ողորմի ասացէք մեզ և վերայ դրելոցս...։

678

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 274

Ծաղկող՝ Եղիազար

287ա Ի քանակութեանս աբեթական հայկազեան ազգիս Ռ և Ճ (1651)[21]
ամի, ի գալ սբ. հաւրն մերոյ տէր Փիլիպոս սրբասնեալ կաթողիկոսի և
հայրապետի սբ. աթոռոյս մեր՝ էջմիածնի, ի յերկիրս Միջագետաց, ի
քաղաքս որ կոչի Տիգրանակերտ, և աստի գնացեալ ի սբ. Երուսաղէմ
յերկրպագութիւն սբ. գերեզմանին և այլ ոտնակոխ տնաւրինականացն
Քրիստոսի Աստուծոյն մերոյ, ընդ իւր ունելով զսբ. Աւետարանս թերա-
կատար, այսինքն զտասն խորան համաբարբառոն և այլ ուրեք ուրեք
ինչ տեղի պատկեր և թուի, զոր հարկ եղեալ ի վերա[յ] եղկելոյս առ ի
լնուլ զպակասութիւն սորին, վասն որոյ և ես նուաստս ի գրչաց Եղիա-
զար տրուպ ծառայ նորին, կամաւ և յաւժարութեամբ յանձն և կատարե-

21 Ձեռագրում Ճ-ն վնասված է, հաջորդ միավոր տառ եթե եղել է, ապա պետք է լինի Ա, Բ, Գ, Դ տառերից մեկն ու մեկը։ Քանի որ հիշում է Փիլիպոս Ագրակեցի կաթողիկոսին, -որը մահացել է 1655 թ., ենթադրաբար դրեցինք 1651 թ. շարքում։

ցի զհրամայեալն ի նմանէ ըստ իմում կարեաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա, աղաչեմ մեծաւ պաղատանօք, խնդրել աղօթիւք ի Տեառնէ պահել զսա ախոյեան յաղթող ընդդէմ ներհակաց ի վանումն չարափառաց և ի պարծանս աղգիս Հայոց։ Եւ յետ աստեացս ելանելոյ, ընդ սր. հայրապետացն դասեսցէ և պսակեսցէ, որ և աղաչեմ, զի և ինձ մասն լիցի ընդ սա յաւուր ահեղ ատենին Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

679

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 264

Գրիչ՝ Բարաղամ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

267բ Փառք...։

268ա Զայս լուեալ և իմացեալ աստուածասէր և հաւատարիմ Մխիթա[ր]ն և ցանկացաւղ եղեալ և վերըստին ըստացաւ [սր. Աւետ]արանս, ի հալալ ընչ[ի]ց իւրոց և ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն և ամենայն արեա[ն] մերձաւորացն, և ծնաւղացն՝ Տէրոնին և մօրն՝ Գուլսուլթանին, և ի հանգուցեալ եղբարցն՝ Թե[ղ]անի[ն], Յակոբջանին, և քվերացն՝ Սարեռանին և ի միւս քւերն՝ Մէրռատիկին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զսր. տառիս ըստացաւղն պարոն
268բ Մխիթարն և զկողակիցն իւր՝ Մեռատիկն // ///...։ Դարձեալ յիշեցէք զտէր Գրիգորն, որ կամա[կ]ից եղաւ Մխիթար անուն քրիստոնէին, ետ գնել <զսր.> աստուածային սր. Աւետարանս. և որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ. ամէն։

Գրեցաւ սր. Աւետարանս մատե///մն խոստմանն /// տնի, ձեռամբ մեղա[պարտ Բարաղամի] /// ՌՃ (1651)[26] /// ԺԴ (14), ի դուռն Ս. [Ստե]փանոսի, ի հայրապետութեան տեառն Փիլիպո[ս]ին, ի թագաւորութեան Պարսից շահ Սէֆոյն, ի քաղաքն Շաւշ, գրեցաւ [ի գե]աւղն Ջուղայ, առաջնորդութեամբ տէր Խաչատ[ուրին]։

Դարձեալ յիշեցէք մե[ղսա]թաւալ Բառաղամս, և զհայրն իմ՝ Ռոսի, և մայրն իմ՝ Մարիամն, որ բազում աշխատութեամբ շինեցին տառս ի յընտիր աւրինակէ. և որ յիշէ՝ յիշեալ լիցի ի միւսանգալ գ[ալս]տեանն Քրիստոսի. ամէն։

680

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 289

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

ա

272ա Փառք..., որ զտկարութիւնս իմ զաւրացոյց յաւետ իւրոյ իմաստութեանն, վասն որոյ և ես մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ

ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառս հոգեշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս...։

373բ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թւաբերութեանս ասքանազեան և աբեթական տաւարի ՌԾ (1651) և ըստ նորումս շրջանի ԼԴ (34) և ի գալստենէ Կենարարին ՌՈՄԲ (1652), ի ստոյգ և յընտիր աւրինակէ

374ա ևս առաւել համաբայիցն, զի գաղափար սորին էր ի դրանէ Ս. Սարգսին և որդոյ նորա Մարտիրոսին, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշէն և աստուածապահ քաղաքս ի Կաֆայ, ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի, և յեպիսկոպոսութեան ամենայն Հիւսիսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամոզորմութեան իւրոյ. ամէն։ Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահռչակելի... սբ. Աւետարանս, չորեք ճառագայթեան ճշմարիտ

375ա աստուածախաւսութիւն ...// ...։ Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիցս ցանկացաւղ եղեալ աստուածարեալ և պատուական[22] ետ գրել զսբ. Աւետարանս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղօթս ձեր զպատուելի[23] և զծնաւղսն իւր զը[24], որ մեծաւ փափաքանաւք և սրտաշան յաւժարութեամբ... ետ գրել զսբ. Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնողաց և եղբարց և ամենայն զարմից գանձ յաւիտենական...։

376ա Եւ զիս՝ զՆիկողայոս մեղաւոր գրիչ զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ զարբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ և ճշգրտիւ զմեղաւորս հասոյց ի յայսմ արհեստի, զոր տէր մեր Յիսուս Քրիստոս իւր փոխարէնն ընդ սբ. քահանայիցն ի միասին տացէ...

Բ

123ա Զանպիտան և զանարժան գծող սորին զՆիկողայոս սուտանուն մեղաւք ի լիս աղաչեմ յիշել ի Տէր միով Հայր մեղայիս...։

681

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 507 (1625 թ.)

Նվիրատու՝ Զաքարիա վարդապետ

Վայր՝ Յովհաննավանք

324բ Ես՝ Զաքարիա վարդապետ, առաջնորդ սբ. ուխտիս Յովհաննու վանից, ընդ բազում արդեանց իմոց, զոր արարի, ետու և զձեռացագիր ժամագիրքս յիշատակ ի Ս. Կարապետս. յամի որում նորոգեցի զեկեղեցիքս ի թուին Ռ և Ծ (1651)։ Արդ՝ մի՛ ոք հանցէ զսա ի դրանէ Ս. Կարապետիս, վասն Աստուծոյ աղաչեմ[25]։

---

22 Պատվիրատուի անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

23 և 24 Անունները չեն գրված և տեղերը, ինչպես և 375 բ էջի կեսը, թողնված է դատարկ։

25 Սույն հիշատակարանը Զաքարիա վարդապետի ինքնագիրն է։ Մի փոքր համառոտ

682
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 774

Գրիչ՝ Անտոն քահանայ
Վայր՝ Գօթանիա

ա

80բ *Որոց աղօթիւք և բարեխօսութեամբ ողորմեսցի Քրիստոս Աստուած մեղապարտ, սուտանուն գրչիս* Անտոն *քահանայի, և կարդացողաց և լսողաց սրտի մտօք, և որ զամէնն ասէ. ամէն։*

բ

6բ Յիշատակարան է սբ. գրոցս

Շնորհօք... այս ինչ կա ի գիրքս հաւաքեալ լի գանձիւք ոսկոյ և ականց պատուականաց շարադրեալ ի մէջ սորա. և բաղում պատասխանատուութիւնս առնէ առ երկոտասան ազգս, որ և ներհակախօսութիւնս առնեն առ Տիրամայր սբ. Աստուածածինն և առ Միածին Որդին ասելով Բ (2) բնութիւն։ Այսպիսի անկարգ բանիւ ջրալից բաժակաւ և խմորեալս մատուցանեն պատարագ և զէ (7) խորհուրդ եկեղեցոյ խախտեն։ Եւ սա ամենայն լցեալ շնորհօք Հոգւոյն Սրբոյ տա զպատասխանին ամենայն ազգի և պապանձեցուցանէ զլեզու նոցա և աբիբերան առնէ զգիւրախօսսն։

187ա *Ի թվին ՌՃ (1651) ամին* Փիլիպպոս *// կաթողիկոսի հրամանաւն* Գօթանիա Տաթևացի Եփրեմ *վարդապետն նըւիրակ։ Եւ ետես որ առ Աստուած փոխեալ էր* Աստուածատուր *քահանայն. և տեսեալ զայս գիրքս ցանկացաւ և հարկ եդ ի վերայ մեր, թէ «Պիտի որ քո հօրն՝ տէր* Աստուածատուրի *հոգւոյն, զայս գիրքս գրես մեզ յիշատակ, թէ այսչափ վաղուց ժամանակաց քահանայ է, պիտի որ մէկ յիշատակ տաս»։ Եւ մեք այլ զնորա խնդիրքն ոչ դարձուցաք յետս, այլ գրեցաք մեծաւ ջանիւ, վասն մեր հօր խաթերն և շնորհեցաք իւրենն։ Որք հանդիպիք, սբ. հայրք, կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զգրող սորա* Գօթանեցի *սուտանուն* Անտոն *քահանայ, և զհայրն իմ՝ զտէր* Աստուածատուրն *մէկ Հայր մեղայիւ. և Քրիստոսի մարդասիրին փառք և պատիւ և անզրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Գրիչ՝ Գրիգոր

գ

281բ *Զապիկար գծողս՝ զԳրիգոր մեղօք ի լիս մի՛ մոռանար յիշել ի Տէր, ով սբ. ընթերցող*[26]։

Նման բովանդակությամբ հիշատակարաններ տե՛ս նաև № 503 (էջ 295 բ) և № 659 (էջ 2ա) ձեռագրերում, դարձյալ 1651 թվին։ № 659 ձեռագրում (էջ 2ա) մեկ ուրիշը, գեղեցիկ նոտրագրով գրել է նույն հիշատակարանը, որն ամբողջությամբ ջնջված է և կարդացվում է հիշատակարանի միայն սկզբի մասը։

[26] *Խոսքը վերաբերում է 280 և 281 թերթերի գրությանը։ Թվին ՌՃ (1651)* Փիլիպոս *կաթողիկոս ի Թուղաթ եկեալ։ (Երևան, № 852, էջ 304բ)։*

683
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Երևան, № 917 (1413 թ.)

412բ Զվերջին ստացող սբ. տառիս զՍանակ վարդապետն և զՎարդան վարդապետն յիշեցէք, որ ստացան զսա ի վայելումն անձանց իւրեանց և յիշատակ յետ աստի կենացն, որոյ յիշատակ սոցա աւրհնեալութեամբ եղիցի։ Դարձեալ յիշեցէք զվերոյ ասացեալ վարդապետքս և ամենայն արեան մերձաւորք սոցին, և զհարազատ եղբօրորդին՝ զտէր Բարսեղ կրօնաւորն, որ ետ նորոգել զգիրքս զայս, որ էր կարի հնացեալ։ Ջերմեռանդ սրտիւ ետ նորոգել զսա յիշատակ ծնօղացն և վայելումն անձին իւրոյ։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով թողութիւն խնդրեցէք մեղաց իմոց, և ծնօղաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց, և ձեզ յիշողացդ մասն և բաժին լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Նորոգեցաւ գիրքս թվիս Հայոց հազար և հարիւր (1651) ամին։

684
ՃԱՌԸՆՏԻՐ
Երևան, № 992

Գրիչ՝ Մաղաքեայ
Վայր՝ Եղեսիայ

ա

5.17ա Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանկ ելեալ աւարտեցաւ աստուածային պատմութիւնս սբ. եկեղեցոյ՝ շտեմարանեցին մթերք անծախելի և գանձ անկողոպուտ, զկարգագրութիւնս տօնից տէրունականաց խորհրդոյն, հանդերձ բացայայտութեամբ ի բազմաց ժողովելոց և ընդ փաստս տէրունեան օրեաց և պահոց Տօնականիս. նախ եղեալ սահմանս կանոնական քրիստոնէութեան՝ վասն քսաներորդ գլխով Յոհաննիսէ Եզբենկացոյ, կոչեցեալ Պլուզ։ Եւ ընդ նոյն ոճ բանի ողբք պիտանի և բանք մխիթարական ննշեցելոց, վասն յայլմէ սրբազան վարդապետաց. նաև զտօնից սրբոց զգլխաւորացն վիպաբանութիւնս շարագրեալ ըստ ատուրց տօնից ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի բերկրումն հոգևորական տօնասիրաց քրիստոսասէր ժողովրդոց։ Եւ յաւարտ գրոցս նոր վկայից ոմանց, որք կատարեցան վասն անուանն Քրիստոսի, թիւրօրէն ազդէն Մահմետի։ Զայս չափութիւն բանիս հաւաքեալ ունի ի ծոց իւր սբ. գիրս, որ կոչի Ճառընտիր, ի հաստատութիւն հաւատոյ ուղղափառութեան և ի վանումն օցտողաց և խանգարչաց նորոյս Իսրայէլի, միանգամայն և ի դաստիարակութիւն բարեպաշտ քաղաքավարութեան ի Քրիստոս հաւատացելոցն։ [3]որում յոքնատենչ ըղձիւք բաղձացեալ իմաստուն վաճառականն աստուածասէր և հաւատարիմ քրիստոնեան պարոն խոճայ Ոսկանն Դաստիակցին, որ է յերկրէն Նախիջիւանու, որ և կամաց իւրոց տենչմանն եղև լրումն և յանդ ելեալ կատարեցաւ ճառս տօնական, յիշատակ անշնչելի յինքեան և նախաժամանելոցս ի Քրիստոս, հօրն՝ Վալաքին և մօրն՝ Մարիամին, և

որք աստ ի մարմնի եղբարցն՝ Սահրաթին, Ֆարհաթին, Եսայուն. և քրվերցն՝ Կուլասդրին, Սօզկարին, Խանսուլթանին. և որդոցն՝ Սկանդարին. և դստերն՝ Մարիամին. և եղբօր որդոցն՝ Վալատին, Աղամիրին, Ցիսաղուլուն և ամենայն արեան զարմից նորին՝ կենդանեաց և հանգուցելոցն.
507բ այլ և կողակցուն՝ Կուլսանամին: Եւ եւ զսա նուէր ի // դուռն հոգևոր ծնօղին, մօրն լուսոյ Երեք խորան սբ. եկեղեցին, զի միշտ յընթեռնլով անդ ի տօնս տէրունական և յիշատակս սրբոց, յիշեսցի ի Քրիստոս խօճայ Ոսկանն, հանդերձ ծնօղօք և հարազատօքն իւր, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի:

Եւ եղև աւարտ գրչութեան տառիս ի քաղաքն Եղեսիայ, որ կոչի Յուռհայ, ի դուռն Բարձրահայեաց Տիրամայրն Ս. Աստուածածնին, հիմնարկեալն յառաքելոյն Թադէոսէ և ի փրկչական պատկեր սբ. դաստառակին և Եփրեմ սբ. վարդապետին և սբ. Գուրիսանց վկայիցն սրբոյն Յակոբայ և ի սբ. Սարգսի զօրավարին և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն քաղաքիս: Զեռամբ յոհնամեղ, եռաթշուառ զառածեալ անձին, փծուն, անարհեստ և թարմատար գրչի, յոյլ և ի ծոյլ, անպիտան Մաղաքեայ գրչի. և ի թուականութեանս մերում Ռ և Ճ (1651) ամի. խիստ դառն և դիժար ժամանակի, զոր ոչ կարեմ գրել ի քարտիսի. զոր տէրն Քրիստոս ի բարին փոխարկեսցէ. ամէն:

Այլ և զստացող սրբոյ մատենիս զխոճայ Ոսկանն պարփակեալ պահեսցէ ընդ հովանեաւ թևոց իւրոց Քրիստոս Աստուածն մեր: Ընդ նմին արժանացուսցէ և զնախնիս իւր, զմեծ հայրն՝ Ցիսաղուլին և մեծ մայրն՝ զՍօզկարն և զծնօղն իւր, հայրն՝ Վալատն...:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք առ Աստուած փոխեցելոյն Պաշարաթին, որ էր փեսայ խոճայ Ոսկանին վաճառական գոլով եկեալ յԵդեմայ ՌՂԸ (1649) թվականին, որ խակուութ եղև և կարկտահար իբրև զծաղիկս բառոց ճիւղահատ, անժամ և տրհաս հնձեալ կասեցաւ, անծանօթ երկիր, որ եկեալ վաճառեաց և զնեաց և կամէր երթալ խնդութեամբ և անդէն ցաւ մահու եհաս իբրև զմարխայ և ոչ ժամանեաց հասանել առ ընտանիսն և սիրելիսն և առ Աստուած փոխեցաւ, զոր և Քրիստոս ողորմեսցի...:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զքաղցրատեսական և զվայելուչն, զբարձրահասակն զԵդեսացի Դանիէլն, որ բազում ջանիւք և յոյժ տենչմամբ կամակից եղև վասն գրոցս, զոր և Տէրն պահեսցէ խաղաղական կենօք մինչև ի խորին ծերութեան...:

Արդ՝ լալագին գիմօք և կողկողագին պաղատանօք առ ոտս ձեր անկեալ աղա[չեմ][27]:

Բ

244բ Որոց բարեխօսութեամբն ողորմի ստացողի զրոցս պարոն Ոսկանին և ծնօղաց նորին, հօրն՝ Վալատին և մօրն՝ Մարիամին, և եղբարցն՝ Սահրաթին, Ֆարհաթին, Եսայուն, և քվերցն, և կենակցուն՝ Կուլսանամին, և որդոյն՝ Սկանդարին և ամենայն արեան [մերձաւորաց][28]:

[27] Շարունակությունն ընկած է:

[28] Նման հիշատակարաններ տե՛ս նաև 26ա, 34բ, 37ա, 39բ և այլ բազմաթիվ էջերում:

685
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ
Երևան, № 1206 (1626 թ.)

Նվիրատու՝ Թորոս վարդապետ

350բ Արդ՝ ես վերջինս ի բանասիրաց և յետինս ի վարդապետաց Թորոս ևեթ անուն, վերջին ստացող յայսմն աւուր, ետու զսայ յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ Պարիուտարին և Շնորհ[ա]ւորին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, ի դուռն սբ. էջմիածնայ, ի վայելումն խարազնազգեաց և սրբազան հայրապետին տեառն Փիլիպպոսի:

Թվին Ռ և Ճ (1651)-ի։

686
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ
Երևան, № 1528

Գրիչ՝ Բաղարատ դպիր

Վայր՝ Շոռոթ

ա

39ա Որ ողոր[մ]ի ստացողի գրոցս Նազուէնց Հայրապետին և կողակցին իւրոյ՝ Խունդիկին և ամենայն [մերձաւորաց][29]։

բ

105ա Եւ ինձ՝ մեղապարտ Բագարատ գրչի շնորհեալ զթողութիւն մեղաց և յանցանաց ի քում յահաւոր և ի փառաւոր սոսկալի գալստեանդ...։

Թվին ՌՂԸ (1649)։

գ

186ա Ո՛վ հայրք և եղբարք իմ՝ սբ. միանձունք, աղաչեմ զձեզ, որ զիս՝ մեղաւոր Բաղարատ դպիրս յիշեսջիք ի սբ. մաքուր, անարատ և անբիծ յաղօթս ձեր...

Գրեցաւ Թվին ՌՂԹ (1650)։

դ

250ա Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս[30]։ Եւ ինձ անարժան գրչիս և հօրն իմոյ՝ Յովանիսին, որ բազում աշխատեաց ի սբ. գրգիս թուխտ կոկելն։

ե

458բ Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոյց Շոռոթցի Նազուէնց մահդասի Հայրապետին և իւրոցն ամենայնի. ամէն։

զ

583բ Փառք...։ // Գրեցաւ այս սբ. Սաղմոս մեկնիչս ի գեօղաքաղաքս Շոռոթ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Լուսաւոր[չ]ին, և Ս. Յակոբ հայրապետին, Թվին Ռճ (1651)-ին[31]։

---

29 Այսպիսի հիշատակարան տե՛ս նաև 14ա 24ա և այլ էջերում։

30 Վեց տող դատարկ։

31 Վեց տող դատարկ։

Դարձեալ խնդրեմ ի ձէնշ, ո՛վ աստուածասէրք հայրք և եղբայրք, յորժամ հանդիպիք յայսմն տառիս կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղաւ[որ] գրիչս՝ Բագարատա[ի]ս և հայրն իմ՝ Յոհաննէս, որ բաղում աշխատեաց ի սբ. գրգիս թղթին կոկելն և լի բերանով Աստուած ողորմի ասացէք ի միւսանգամ գալըստեանն...։

է

Ծաղկող՝ Նահապետ

515բ *Քրիստոս Աստուած ողորմեայ ստացողի գրոյս. նաև յոքնամեղ Նահապետիս, որ ըստ կարի իմում և ըստ չափու սրբագրեցի և ծաղկեցի, եթէ տէրդ հաճեալ հաւանեսցի։*

687

ՄԵԿՆՈՒԹԻՆ ՊՐՈԿՂԻ

Երևան, № 1702

Հեղինակ՝ Սիմէոն եպիսկոպոս

144բ *Եղև լուծմունքս բանիցն Պրոկղի պղատոնական իմաստասիրի ի հազարորդի և ի հարիւրորդի թուականութեանս Հայոց (1651)[32], ի նուաստ Սիմէօնէ Գառնեայ եպիսկոպոսէ[33]. որ աղաչեմ զհանդիպողդ ներել ինձ ի ձեռնամխութիւն բանիցս այսոցիկ. չի գուցէ ոք հանդիպող, որում Աստուած ևս պարզագոյն տեսութիւն շնորհիցէ, բայց առ այն շնորհ ունիցի շնորհաց պարգևողին Աստուծոյ, որում անբաւ փառք ըստ անբաւութեան իւրում. ամէն։*

688

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1752

Գրիչ՝ Դաւիթ

ա

98բ *Զառածեալ մեղօք յիշել ի սրբանուէր յաղօթս ձեր աղաչեմ, վասն Աստուծոյ, զգծող Դաւիթս ի Տէր։*

Գրեցաւ ի թուիս Հայոց Ռ և հարիւրին (1651)[34]։

---

[32] Ձեռագրի դրչությունն տարեթիվը Մագիստրոսը նշել է «ՌՄԻԶ (1777)» (տե՛ս կազմի ներսի կողմը), բայց նման բան ձեռագրում չգտանք։

[33] Այս անձնավորության մասին, նույն ձեռագրի մի այլ՝ 1750 թ. ընդօրինակած տարբերակի հիշատակարանում գրված է. «իսկ ի ՌՃ (1651)-երորդ թուոջն մերում, Ջուղայեցի Սիմէօն գերիմաստ վարդապետն, որ էր եպիսկոպոս Գառնոյ, վերատին արար սմա զնոր լուծմունս պարզ. ոճով...»։ (Հ. Անառեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910, էջ 124, № 58)։ Մատենադարանի № 2962 ձեռագրում գտնում ենք նաև այսպիսի հաղորդում. «Թարգմանեալ ի Սիմէօնէ եպիսկոպոսէ Գառնեցոյ ի Վրաց լեզուէ ի հայ բարբառ, յամի Կենարարին մեր 1651 և ի Հայոց ՌՃ (1651)։ Սիմէօնի Գառնեայ եպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն գրոցն Պրոկղի» (էջ 1.-բ)։ Այստեղ նշված Սիմեոն եպիսկոպոսը Պրոկլի թարգմանիչը չէ, այն կատարել է Սիմէոն քահանա Գղնձահանք վանքում (տե՛ս ձեռ. № 2962, էջ 64 բ, Մինչ № 124, էջ 134—135, Ղ. Փիրղալիմյան, Նշխարք, հտ. Ա, № 812, էջ [illegible] ա)։ Սիմեոն եպիսկոպոսը Մեկնության հեղինակն է։

[34] Գրված է նարնջագույն մելանով։

Բ

191բ Զփծուն գծող սորայ զԴաւիթն յիշել աղաչէ[մ]։

689
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1771

Պատվիրատու՝ Արիստակէս Խարդբերթցի

ա

238բ Փառք...։

Արդ՝ ես Արիստակէս վարդապետ Խարդբերթցի ի թվին ՌՃ (1651) ետու գրել զսբ. գիրքս, որ է Հաւատամքի մեկնութիւնն, և Ասացուածք, և Լուծմունք Պարապմանց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց տէր Կիրակոսին և Հռիփսիմին: Արդ՝ երես անկեալ աղաչեմ սրբազան ընթերցողք և բանի սպասաւորքդ, որք ընթեռնոյք զսբ. գիրքս և քարոզէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեռեալս հոգով զԱրիստակէս անուամբ ևեթ վարդապետս, զհայրն իմ՝ զտէր Կիրակոսն և զմայրն իմ՝ զՀռիփսիմէն միով Տէր ողորմեսիս...։

Գրիչ՝ Վարդան երէց

Բ

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զտրուպս ամենայնի, ծրող սորին Վարդան երէց գրիչս, զծնողսն իմ և զուսուցիչսն իմ. և դուք փոխարէնն ընկալջիք ի Քրիստոսէ. ամէն։

690
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1864

Գրիչ՝ Մարտիրոս երէց
Վայր՝ Ամասիա

ա

343ա Զանարժան Մարտիրոս երէցս յիշեա[35]։

Բ

435ա Շնորհիւ և ողորմութեամբ Տեառն յանգ ելեալ աւարտեցաւ Պատմութիւնս եօթն իմաստասիրաց, ի յերկիրն Ամասիոյ, ի խնդրոյ տէր Մովսէս բաբունի և տրամաբան վարդապետին և քարոզող ճշմարտութեան, ստացաւ և ետ գրել։ Եւ ես՝ զառածեալս մեղօք Մարտիրոս երէց գրեցի ըստ տկար մտաց իմոց և աւարտեցի։ Այլ և խոշորութեան և սխալանացս անմեղադիր լեր, հայրդ իմ սրբազան, զի կար մեր այս էր, ոչ կարացի որպէս քոյդ վայելէ, այնպէս գրել. զի սխալանք իմ բազում է, այլ նեբեսցես իմում յանցանաց, որ կայ ի սմա։

---

35 Ձեռագրի մի մասը գրվել է 1676 թ., այդ հիշատակարաններդ տե՛ս թիվ տեղում։

Յետ թուականէն զգիրն թուեայ թուականն՝ նայէ զի եկայ (1651)[36]։
Զառաջին երկու տեսրն Մկրտիչն գրեց և մարմինն տկարացաւ, եբեր առ իս, թէ «Աւարտէ». և ես անարժանս աւարտեցի։

Գ

Իմ կեանս իմ աչացս ելեր, այլ չունիմ տեղիք խնդալու[37]։

691
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2008

Գրիչ՝ Խաստէկ

60ա Թվին ՌՃ (1651) ձեռամբ Խաստէկ մելանաւորի գրեցաւ։

692
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2025

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Ամիթ

ա

178բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տօնացոյցս թվին ՌՃ (1651), ի մայրաքաղաքն յԱմիթ, ընդ հովանեաւ Սրբոյն Կիրակոսի և մօր նորա Յուղիտայի, ի վայելումն տէր Սամուէլ սրբակրօն աբեղային, տեսողդ ասացէք զողորմին։
Զմեղուցեալ Յովհաննէս գրիչս աղաչեմ յիշել ի Տէր։

բ

114ա Ո՛վ տօնասէր, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍիմէոն վարդապետն։

693
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՔԵԻԱՑԻՈՑ
Երևան, № 3165

Ստացող՝ մանեսի Յակոբ
Վայր՝ Նոր-Վկիայ

ա

325բ Փառք...։ Որոյ ողորմութեամբ և շնորհօք ես՝ նուաստ անձնս և տարտամս կայիւք և կրիւք, փանաքս... Յակոբս մահդասի, որ և վաճառական, տեղեաւ Զոտպայեցի, եղէ ցանկացող լուսազարդ տառիս և յոր-

[36] Այսինքն՝ Ն(400)+ա(1)+յ(300)+է(7)+զ(6)+ի(20)+ե(5)+կ(60)+ա(1)+յ(300)=1100+551 (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 235, նույնի, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 163)։
Մատենադարանի ձեռագրաց ցուցակում սույն ձեռագրի գրչությունը նշված է 1656 թ. (հտ. Ա, էջ 660)։

[37] Հավանաբար Մկրտիչ գրչի գրածն է։

նաղան տրամաբանականիս, խրթնածածկաց բացայայտողիս, նաև հմտացուցանողիս տխմարաց զոճս բանից և զկարգս պատասխանատրութեանց, ընդդիմութեամբ և ընդդիմակայութեամբ և ընդդիմայարակայութեամբ առ ամենեսեան ընդդիմաբանօղս և ընդդիմահարօղս, որք յառնեն ի վերայ ազգիս մոլեկան իմն ախտիւ՝ թէ՛ պարսաւանօք և թէ՛ զրպարտութեամբ, թէ՛ տգիտութեամբ և թէ՛ մաղթանօք չարութեան։ Որ և ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, մեծաւ փափագանօք և յաւէտատարփ ըղձիւ, ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց Աւաքին և Եղիսաբեթին, նաև ամենայն արեանառու մերձաւորաց իմոց և հարազատաց՝ եղբարց և քեռց Յօհանին և Անանային. և ևս ամուսնոյն իմոյ՝ Անձրևին, և որդւոցն՝ Խաչատուրին և Էլիազին, և այլոց բարեկամաց և սիրելեաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ գաղափարելով, թերևս դիպեսցի հարևանցի տեսանելով, յիշեսջիք միով ողորմի զվերոյ շարատառեալ զանուանսն, որք և սակս այնորիկ գծագրեցան, զի գոնեայ յիշմամբ ձերով ողորմութեան ինչ մասին ճահաւորեսցին, ընդ որոց և դուք մասն բարեաց ի Քրիստոսէ բարերարէ և առատաձիր պարգևատուէ ընկալջիք, որ է աւրհնեալ յաւէտ յաւիտենիս...

Այս քեզ ահա բան ծրեցաւ յիշատակի,
Ու ըստ խնդրոյ քո շարեցաւ ով ըղձալի.
Ռամիկ մտաց գարշեցելոյ և փանաքի,
Թէ հաճեսցի առ ընդունիլ կամք քո բարի։
Ցաւէտ ըղձիւ ի քէն մաղթեմ կողկողալի,
Զնշկահելիս ոչ եպերել որ գոն պարտի.
Այլ առ ունիլ զչընչին զիմ իր զտաղտկալի,
Իբրև զլոմայն կնոջն այրուոյ որպէս պատմի։
Կարի սիրով ըստ տենչալեացն որք են բարիք,
Վեհից նախնեաց կամ արդենից ամանակի.
Օր ըստ աւուրց յառաշ բերեալ յոյժ հրաշալի,
Ցապա եկացս զկնի նոցին սակըս օգտի։
Բայց այս սակաւս, որ գրեցաւ մատամբ մեղկի,
Թարց պարսաւից հաճիլ ընդ սա, իբր ընդ պերճի.
Դրուատական բանիւ ոգել յուսոյն վեհի,
Զփառս Յիսուսի թագաւորին ամենայնի[38]։

Դարձեալ յիշեցէք զանարժան մեղօք լի, անպիտան վաճառական Յակոբս, որ մինչև Լ (30) ամ ի վերայ աշխարհիս շրջէի բազում ընչիւք, ծախիւք վաճառէի զինչս իմ, եթէ ծովով կամ ցամաքով։ Զամենայն երկիրս տեսանէի՝ ի յերկիրն Ֆռանկաց տեսայ, բազում անգամ ի Կոստանդնուպօլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի
326բ մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ, Երուսաղէմ տեսայ։ Այլ և //Պարսից երկիրն զամէն՝ մինչ ի Խորասան տեսայ։ Բ (2) անգամ յերկիրն Օգբէգբսաան մտայ։ Այլ և Գ (3) անգամ ի յերկիրն Հնդստան գնացի։ Ահա տեսանէի զմեղս իմ, որպէս բեռն ծանրացեալ էր ի վերայ իմ, զինչ որ վաս-

[38] Մեկընդմեջ սկզբնատողերի առաջին տառերից հոդվում է «Առ Յակոբդ»...

տակէի, այլոք ուտէին զվաստակս իմ, բայց միայն զբեռինս մեղաց իմոց ի վերայ իմ լինէր։ Ահա ըզմտաւ ածի բան Սաղմոսին ,որ ասէ, թէ «Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի, գանձէ և ոչ գիտէ ում ժողովէ»[39]։ Դարձեալ որպէս ասէ տէրն մեր Յիսուս Քրիստոս, թէ «Զի՞նչ օգուտ է որ զաշխարհս շահեսցես և զանձն քո տուժեսցես[40]. այլ և միւսն, թէ «Մարդ երկու տերանց ոչ կարի ծառայել»[41]։ Զայս մտաւ ածի և ասացից անձն իմ, թէ «Ով ապականացու մարմին մինչև ցերբ դատես ի հետ մեղաց, վաղիւն ի հող մտանելոց ես, ի բեռինս մեղաց քոց համարս տալոց ես առաջի ահեղ ատենին Քրիստոսի»։ Յորժամ զայս յիշեցի հոգիս իմ զարհուրեցաւ ի յահէն Քրիստոսի. զինչ որ ժողովեալ էի, զորն բաշխեցի, զորն այլոց տուի. մերկացայ ի յաշխարհէս և եղէ կրօնաւոր։ Միթէ տէրն իմ Յիսուս Քրիստոս չնչեսցէ զամենայն մեղս իմ, և իւր տեսութեան արժանի արասցէ, ես առաւել կարդացողաց և լսողացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զտառապեալ մեղօք լի անարժան մահդասի Յակոբս, որ ոչ ունէի զաւակ, որ ժառանգէր զինչս իմ։ Ծնաւ ինձ մի զաւակ անդրանիկ, որ զանուն Խաչատուր կոչիւր, ի մանկութեան իւրում հանգեաւ ի խաղաղութիւն. այլ ես եղբօր որդին իմ առի ինձ հոգւոյ զաւակ, որոյ անունն Էլիազ կոչի, միթէ տէր Աստուած ընդունելի արասցէ։ Արդ՝ լուայ ի սբ. գրոց, թէ «Երանի...»[42]։ Այլ ես բազում փափագանօք, հալալ ընչից իմոց, գրել տուի զայս Հարցմունքս, որ եղիցի ինձ յիշատակ և իմ ծնօղացն, այլ և կարդացողաց օգուտ և հանճար լինիցի։ Արդ՝ արկանեմ զապականացու զերեսս իմ ի յերկիր, արտասուսալի աչօք աղաչեմ զձեզ, վասն ժամանակիս չարութեան ի հարցումնքիս համար, եթէ գերի անկանելով կամ գողանալով կամ վաճառելով, եթէ ոք ի սմա հանդիպի, գնեսցէ զայս. մի՛ ոք չնչեսցէ զանունն իմ։ Եթէ ոք
327ա աղաչանաց իմոց լսիցէ նա // ի գիրն կենաց յիշեալ լիցի։ Արդ՝ վկայութեան ի սբ. գրոցս ոչ ունի իշխանութիւն, եթէ ոք ի սմանէ թուղթ պատռեսցէ կամ զանունն իմ չնչեսցէ։ Եթէ ոք չնչեսցէ զանունն իմ՝ տէր Աստուած զինքն չնչեսցէ զարմօք և զաւակօք ի յայս կեանքս և ի հանդերձեալն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, եթէ ոք գնեսցէ զայս ի մէջ սորա զյիշատակս իւր գրեսցէ, միթէ տէր Աստուած իւր առատ ողորմութեամբն ինձ և ձեզ ողորմեսցի. ամէն։

Ես եմ Յակոբ վաճառական,
ծառայ եմ Ս. Երրորդութեանն,
. . . . .։

Արդ՝ գրեցաւ Հարցմունքս ի քաղաքն Ե[ւ]դովկիայ, ի դուռն սբ. ուխտին Յովակիմայ և Յաննայի, ի հայրապետութեանն Հայոց երիցս երանեալ և սրբազան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի սբ. Էջմիածնայ,

39 Մաղ., ԼԸ, 7։
40 Ղուկ., Թ., 25։
41 Մատթ., Զ, 24, Ղուկ., ԺԶ, 13։
42 Եսայ., ԼԱ, 9։
43 Գովք Ս. Երրորդութեան և աղերս։

ի թուականութեանն Հայոց Ռ և ՂԲ (1643) սկիզբն եղև գրոցս և Ռ և Ճ (1651) կատարեցաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ յարտհնելոյն յաւիտեանս. ամէն։

Բ

Այլ գրով

Դարձեալ աղաչեմ զձեզ, եղբարք, եթէ ոք ի սմա հանդիպեսցի կարդալով կամ օրինակելով, պատրաստ պահեսցէ ամենայն վնասակար բանից։ Եթէ ոք Հարցմունքս ջերմեռանդ սրտիւ խնամօք պահեսցէ, խնամօղն արարածոց զինքն անփորձ և անսասան արասցէ...։

Յակոբ վաճառականն յիշեսցիք և դուք ի գիրն կենաց յիշեալ լիցիք. ամէն։

Գ

Այլ գրով

8ա Տէրն ողորմած է ամէնի,
Որք շ[ուզա?]ց նորա կու հետևի,
[Ու?] քո մեղաց յիւրում սրտի,
Ու թողութեան արժան լինի։
Որպէս փափագէ յեղջիւրըս յաղբերի,
Այնպէս փափագեմ ես գրոց բանի,
Թուական էր Հայոց հազարի,
Ընսուն և ութըն թիւ յաւելի (1649),
Որ հարցմունքըս զայս գնեցի,
Ի քաղաքն Նդոկիայ զանուն կոչի,
Այլ և Թօխաթ անուանի,
Զայս յիշատակ ինձ եղիցի։
Որ զանուն իմ՝ Յակոբ կոչի,
Համ վաճառական եմ համ մահդեսի,
Պարտ է ծնօղաց իմում յիշելի,
Համ Աւաքին համ Նղիսաբեթին։
Այլ և եղբօրն իմ՝ Ոհանին,
Կողակցին իմ՝ Անձրևին,
Ու որդոյ իմում Խաչատուրին։
Ով եղբարք իմ սիրելի,
Զձեզ աղաչեմ աղերսալի,
Եթէ ոք ի սմա կու հանդիպի[44],

[44] Գ հիշատակարանը սկզբից մինչև այստեղ նույնությամբ տե՛ս նաև № 4661 ձեռագրի 153 բ էջում։ Տարբերությունը միայն այն է, որ

«Որ Հարցմունքըս զայս գնեցի,
Ի քաղաքն Նդոկիայ զանուն կոչի,
Այլ և Թօխաթ անուանի» հատվածի փոխարեն № 4661 ձեռագրի լափածոյում գրված է.

«Ժամագիրքս որ գընեցի,
Կոստանդինոյ մեծ քաղաքի
Որ Ըստամբուլ անուն կոչի»։

№ 4661 ձեռագրի գրչության հիշատակարանը տե՛ս 1648 թ. շարքում։

Կարդալով կամ օրինակի,
Ասէք թէ Աստուած ողորմի,
Յակոբին և իւր ծնաւղին։
Եթէ ոք զիս մի բերան կու յիշի,
Նա յանփորձ կենայ յայսմ աշխարհի,
Եւ հանապազ ուրախ լինի,
Արժան լինի տեսութեան Քրիստոսի...։

Դ

3բ Յակոբ եմ վաճառական.
Մեղօք լի ծանր բեռն ինձ վերայ,
Չար աւազակի նման
Երկաթի կապանօք ծառայ։
Ախնուն դատաստան տանին,
Ամենայն մարմինս իմ դողայ,
Այլ ճար չունիմ, բայց միայն
Տէր Աստուածն, որ ինձ ողորմեա։

Եթէ ոք Յակոբ վաճառականս յիշեսցի՝ նա ի դիրն կենաց յիշեալ լիցի։

Ե

35ա Յակոբ եմ վաճառական, չար մտօք, մեղօք լի եմ ես, Տէր իմ հազար մեղայ քեզ, մի՛ յիշեր անթիւ բազում մեղս, առաքեա բարի հրեշտակ, քաղցրութեամբ աւանդէ զհոգիս, առնու յերկին վերանայ, դամ երկիր պագանեմ քեզ ես։ Եթէ ոք Յակոբ վաճառական յիշեսցէ՝ նա դիրն կենաց յիշեալ լիցի[15]։

Զ

Այլ գրով

3ա Թէ ոք Հարցմունքիս հանդիպեսցի, պատրաստ պահեսցէ ի շրէ կամ թաց տեղէ և ամենայն վնասակար բանից, խնամ ածէ, լաւ պահեսցէ, տէր Աստուած զինքն անփորձ և անսասան արասցէ...։

Արդ՝ կազմեցաւ Հարցմունքս ի դուռն սբ. Էջմիածնայ, ի թուաբերութեանն Հայոց հազար և հարիւր լման (1651), ի հայրապետութեանն Հայոց երիցս երանեալ սրբազան տեառն Փիլիպպոս կաթողիկոսին, որ աւուրն երկու հարիւր մարդ կերակրէին, ի մէջ սբ. Էջմիածնայ, թէ՛ միաբան, թէ՛ մշակ և թէ՛ աղքատք։ Փառք տուողին բարեաց, որ այսպէս ժամանակ տեսաք. երանի թէ այսպէս լիցի մինչև ի կատարած աշխարհի։

Է

327բ Այլ գրով

Դարձեալ յիշեցէք զմահդասի Յակոբն վաճառականն, որ կենդանութեամբս յիշատակ տվի ի դուռն Նախավկային Ա (1) սպիտակ, զառօվ

[15] Դ և Ե հիշատակարանների նման, երբեմն համառոտ կան նաև ձեռագրի 180 բ, 197 ա, 225 ա և 274 ա էջերում։

քաշած Թաք և զայս Հարցմունքս, յիշատակ ինձ և իմ մերձաւոր ննշեցելոցն. և որք յիշէքդ ըզմեզ՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

* * * * *

694

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3646 (ԺԵ դար)

Կազմել տվող՝ Թաքոս

ա

256բ *Ես՝ Թաքոսս, իւր որդի Օագին, Յոհանին, Միրզայնանին, իւր կողակից Շանգամանին, իւր որդի Ավանէսին, իւր կողակից Սիմայ, Հայրապետ, իւր կողակից Սանամին, դստեր Եղիսապեա, Պետրոս, քոյր Մարեան, Հուտում։ Թվին ՌՃ (1651) էր որ գիրեցաս, Աստուած ողորմի ասասցէ ձեզ և մեզ. ամէն։*

բ

256գ *Ես՝ Թաքոս սր. Աւետարանս Նորոգիլ տվի, յիշատակ ինձ և իմ ծնաւղն իմոց, որ [հ]անգուցեալ են առ Քրիստոս։ Իմ մեծ քոյրն՝ Մարգարիտ, <իմ> կողակն իմ՝ Շահնում, և մեծ որդին իմ՝ Աւագն. և միւսն որդին՝ Յոհան, և <իմ> պապն իմ՝ Ճանիպէկն, և <իմ> մամն իմ՝ Մէնգան։ Կարդալով կամ յաւրինակելով լի <և> բերանով Աստուած ողորմի ասէք. Աստուած ձեզ և մեզ <և> ողորմեսցի. ամէն։*

695

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, №. 4550

Վայր՝ Ասպահան

ա

8ա *Որով Քրիստոս Աստուած ողորմի ըստացողի գրոցս պարոն Փիլիպոսին և կենակցին իւրոյ՝ Մարգարէին, և որդոյն՝ Կարապետին, և անարժան գծողի Անդրէաս իրիցի և ամենայն արեան մերձաւորաց։*

Գրիչ՝ Պետրոս

բ

127ա *Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս պատւական Հայրապետին, տէր Գրիգորին և հօրն՝ Սարգսին և ինձ մեղաւոր գրչի Պետրոսի և ծնողաց իմոց և կարդացողաց...։*

գ

350բ *[Փառք]... // զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով, բարեմիտ և աստուածասէր, երկիւղած և բարեպաշտ երիտասարդն Փիլիպոս և մեծ փափագմամբ և շերմեռանդ սրտիւ, ցանկացող*

եղև սբ. տառիս և ի խնդիր ելեալ այս համարեալ գանձիս... և ետ գծագրել զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց և այլ ամենայն ազգականացն նոցա և արեան մերձաւորացն...։

Ստացող՝ Փիլիպոս։

դ

Եւ արդ՝ ես Փիլիպոս անարժան ծառայս Աստուծոյ, սիրող եղէ այս սբ. տառիս և ետու գծագրել սքանչելեաց արեամբ ներկեալ սբ. մարտիրոսացս...։

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ

ե

Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց... անարժան, մեղսամած սոսկ անուն քահանայ Աստուածատուր, որ զձև ունիմ քահանայի և գործոյն թափուր և ունայն գտանիմ, տեսի զսէր և զփա-
351ա փագ սորա զոր ու//նէր առ հոգևորսն, քանզի յառաջին ազգականացն դրեալ ուներ զԶ (6) ամսեանն. և իմով իսկ տկարութեամբս յանձն առի ընդ հոգևոր հարքն Անդրէաս քահանայիւն և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցինք զսբ. գիրքս զայս, մեղսամած մատամբ իմով և մեծ աշխատութեամբ հասուցաք զսա յաւարտումն ի յերկիրս Պարսից, ի մայրաքաղաքս Նօշ, որ է Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Յակոբիս։ Ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի էջմիածնայ սբ. աթոռոյն, որ յայսմ ամի գնացեալ էր յերկրպագութիւն լուսաբուխ սբ. գերեզմանին Քրիստոսի։ Եւ ի արքեպիսկոպոսութեանն պանդխտացեալ ժողովրդեանս տէր Սիմէոնի իմաստասէր վարդապետի, որ էր աշակերտ մեծ բարունապետին տէր Խաչատրի։ Եւ ի թվականիս Հայոց ՌԾ (1651) ամի և ի թագաւորութեանն ազգին Պարսից փոքր շահ Ապասին, ի դառն և ի վշտալից ժամանակիս, յորում կամք ընդ հարկի և ընդ ծառայութեան ազգին Պարսից։ Վասն որոյ բարեխօսութեամբ սբ. և փառաւորեալ Աստուածածնին Մարիամու... Քրիստոս Աստուած... տացէ զիւր առատ ողորմութիւնն... ստացողի տառիս հեզ և խոնարհ երիտասարդին Փիլիպոսին, և ծնօղաց նորին՝ Կարապետին և Դոլվաթխանումին և հանգուցեալ եղբօրն՝ Ղուկասին, և քրւերն՝ Մարիտատին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՓիլիպոսն և զկենակիցն իւր՝ Մարգարիտն, և զորդին իւր՝ զնորաբոյս և զերաբողբոջ Կարապետն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՓիլիպոսն և զհայրենական պապն իւր՝ զխօճայ Կիրակոսն և հանիկն[46], յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՓիլիպոսն և զմայրենական պապն իւր՝ մահդասի զԹարիզուլին և զհանիկն իւր՝ զԹարիունփաշէն, զորդին նոցա Աստուածատուրն, յիշեցէք...։

---

[46] Անունը չի գրված և տեղը դատարկ է։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Թարիղուլին և զկենակիցն իւր՝ զԹարխունիաշէն և զդուստրն՝ զՄարգարիան[47]։

Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս քահանայքս՝ զտէր Անդրէա[ս, որ]
351բ || Ժ և Բ (12) տեսրն գրեաց և եղբայրակից ընկերն իւր՝ զտէր Զաքարէն, որ կամակից և միշնորդ եղև դրոցս և զսարկաւագունսն ամենայն, և զերեսփոխան զխոճա Մանուկն և զխոճա Թորոս եղբայր նորա, յիշեցէք...։

696

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 4690 (1475 թ.).

Գրիչ՝ Սաեփանոս Վարդապետ

73ա Ի թուականութեանս Հայոց Ռ ու Ճ (1651) և ի հայրապետութեան Էջմիածնա[յ] տեառն Փիլիպպոս կաթուղիկոսի, ես՝ նուաստ Սաեփանոս անուամբ ևեթ վարդապետ, առաջնորդ Լմա[յ] Ս. Գէորգ անապատիս, կամակցութեամբ միաբանն եղբարցս՝ աբեղայիցն և միակեցաց, գնեցաք ի յԱրծրկոյ երկիրն ի Ներքին Ցիպան Զրենանշենց Նուրկանց ներքին շաղացն, որ ի վերա Ճանապարհին, ի Ճ (100) ղուրիշ։ Վկայութեամբ Արծկոյ տանուտէրաց մէլիք Սիմէոնին, տէր Խաչատուրին, Անդրիասին. և արարք վախֆ ի վերայ Ա. Գէորգ անապատիս Լմայ, որ կացցէ անշինչ յիշատակ։ Մի՛ ոք իշխեսցէ ծախել, զինչ որ վարձ գա, բերեն յանապատս՝ ուտեն և Աստուած ողորմի ասեն մեզ և ամենայն աշխատաւորաց և անապատի եղբարցն։

697

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5652

Ստացող՝ պարոն Ալֆաքուն

334ա Փառք...։ Զոր տեսեալ հաւատարիմ և բարեմիտ և երկիւղած Աստուծոյ պարոն Ալֆաքին, որ զայսպիսի գանձս անկողոպտելիս ըստացեալ իւրն և իւր ծնողացն և իւր որդւոցն յիշատակ։ Արդ՝ որ ովք յանտրգնի սբ. զԱւետարանիս գրավելով և կամ ձեռն արկցէ ծախելով՝ ընդ Յուդայի մասն առցէ...։

334բ Արդ՝ գրեցաւ զ[յ]իշատակարան սբ. Ավետարանիս ի թուականիս մերոյ հազար հարիւրումն (1651) և յամսեանն ||| ումն ըստացաւ և ետ յիշատակ հոգւոյ իւրոյ և ի ծնողաց և իւր որդւոցն. տէր Աստուածն փրկեսցէ...։

Մանաւանդ ըստացող սբ. Ավետարանիս պարոն Ալֆաքունն, որ ետ
335ա զյիշատակ մայր Ս. Ամ||ենափրկչին իւրն և իւր ծնողացն...։

---

47 Այնուհետև սյունակի աջ մասի կեսից ավելին պատռված է և կորած։ Երևան, № 4658 (1629 թ.) Ավետարանի կազմի խաչի վրա «Յիշատակ և բարեխօս է Ս. Նշանս Սիմէոն տիրացուին հոգւոյն, որ ի ջուրն ընկղմեցաւ և [որ]դոյն՝ Ավետիքին, ի դուռն Ս. Աստուածածնին թվին ՌՃ (1651)։

Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով հայրք և եղբայրք և մանկունք սբ. յեկեղեցւոյ, յիշեցէք զմաքրայփայլ յաղօթս ձեր զեղկելի և անարժան Ալֆաթունս, *որ եմ գնեալ սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իմոց։ Եւ ով ոք որ յիշէ...։*

Դարձեալ յիշեցէք զպարոն Ալֆաթունն *և զծնողքն իւր, զհայր* Մուրատճասիլն *և զմայրն՝* Աննա[յ]ին, *յիշեցէք...։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ալֆաթունն *և զորդիքն*
325բ *իւր՝ դեռա//բողբոջ և նորաբուսիկ* Յովանէսն *և* զՍտէփանն, *զոր տէր Աստուած..., նաև ըզդուստրն* Անային *անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ալ<քա>ֆաթունն *և միուս որդին, հանգուցեալ ի Քրիստոս,* Մկրտումն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն* Ալֆաթունն *և սորայ կողակիցն՝* Սուրալուն *և սորին ծնօղքն՝* Յոհանն *և* Խաթունն. *և Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

698

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 6340

Գրիչ՝ Ղազար երէց
Վայր՝ Ղազվին

ա

257բ *Փառք..., որ ետ կարողութիւն տառապեալ անձին* Ղազարու *հասանել յաւարտ գրոցս թվին ՌՃ (1651), ի մայր[ա]քաղաքն* Ղազվին, *ի դուռն Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ, թագաւորութեան Պարսից փոքր շահ* Ապասին, *ի հայրապետութեան Հայոց ազանց տեառն տէր* Փիլիպպոս *կաթուղիկոսի։*

Գրեցաւ ձեռամբ հէջ և փանաք Ղազար *իրիցայ անուամբ [մի]այն և գործով յունայն։ Այլ և յիշեցէք զծնօղսն իմ՝ տէր* Յովասափն *և մա[յրն] իմ՝* Նանայն, *և ամենայն արեան մերձաւորքն, և ընդանէօքն իմ հանդերձ...։*

բ

Ով եղբայրք, թողութիւն արարէք սղալանաց կամ պակասութեանց գրոցս, որ յօրինակն այս էր. այլ վասն //// [բ]աղձանաց սրտի տեառն
458ա *սորա ոչ կամեցաք խափանել զայ[ս] // գործ, գուցէ յետոյ պատրանաւք չարին զսա այլ ևս խաբանեսցի։*

գ

146բ *Մանաւանդ ստացողի գրոցս* Կարապետին *և իւր հօրն՝* Ամիրվէլուն
147ա *և մօրն՝* Գուլումին, *և որդւոյն՝* Ան//առնին. *և* Ղազար *անարժան գրչի*[48]։

Ստացող՝ Կարապետ

դ

257բ *Արդ՝ ես* զԿարապետս *առայ զգիրքս հալալ վաստակոց իմոց, յիշատակ ինձ և իմ ծնօղացն և հօրն իմ՝* Ամիրվէլուն *և մօրն իմ՝* Գուլումին,

[48] Երկու տող դատարկ։

և որդոյն իմ՝ Անգոնին, և նորաբողբոջ թոռին իմ՝ Պետրոսին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։ Եւ տուի վախմ Գառաւոյ եկեղեցւոյն յիշատակ հոգոյ իմոյ։

Ով որ յանդգնի ծախելոյ կամ գողանալոյ կամ թուղթ կտրելոյ՝ մասնակից Յուդայի լինի...։

699

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 6485 (1635 /1639 թթ.)

86բ Ի թվին ՌՃ (1651) գնացեալ Երուսաղէմ, տեսաք որ Քրիստոսի Ննդեան դուռն այս էր գրած. «Թվին ՉՃՀԶ (1227) կաղմեցաւ դուռն Ս. Աստուածածնիս, ձեռամբ տէր Աբրահամու և տէր Առաքելի, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, որդի Կոստանդէ. Քրիստոս Աստուած ողորմեսցի աշխատողացս»[49]։

700

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6776 (1646 թ.)

ա

298բ Դարձեալ Աստուած ողորմի ասա[ա]ցէք մահդասի Խաշատուր կրօնաւորին, որ զսբ. Աւետարանս տարաւ ի յԱմիթ և արծաթակող զարդարեաց։ Աստուած զիւր մեղք թողու և իւր ծնողացն. ամէն։

բ

Կազմի վրա

Յիշատակ է սբ. Աւետարանս արծաթապատ տէր Գրիգորին[50], երկիրն Արծկոյ, ի գիւղն Գագողայ, ի վայելումն անձին իւրոյ։ Թվին ՌՃ (1651)։ [Ասա]ցէք Աստուած ողորմի։

701

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 6779

344ա Փառք...։ //Ուստի ցանկացեալ եղև քաջ բարունապետն Զաքարիայ, որ էր ի քաղաքէն Վաղարշապատու, կարգեալ առաչնորդ և վերատեսուչ հրաշափառ և աստուածաբնակ սբ. մենաստանիս վանացս Յոհաննու,

344բ որ ի գաւառին Անբերդու, յոտն Արագածու, ի վերայ Քասաղ <գհ<// գետոյ։ Որ ընդ բազում աշխատանաց իւրոց ետ և Աւետարանս յիշատակ ի դուռն Ս. Կարապետիս ՌՃ (1651) թուին. յամի յորում նորոգեաց զհին և զնոր եկեղեցիքս։ Արդ՝ որք օգտիք ի սմանէ, յաղօթս յիշեցէք և

---

49 Հիշատակարանի գրչությունը նման է ձեռագրի գրչությանը։ Ենթադրում ենք, որ Երուսաղեմ գնացողը ձեռագրի գրիչ Հակոբն է, նույն ինքը Հակոբ Կարնեցին։

50 Ձեռագրի ստացողը, հիշատակարանը տե՛ս 1648 թ. շարքում։

վասն Աստուծոյ մի՛ հանէք զսբ. Աւետարանս ի դրանէ Ս. Կարապետիս։ Եւ Քրիստոս ամենակալն հատուցէ ամենեցուն ըստ իւրում ողորմութեանն։ Եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

702
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7114

Ծաղկող՝ Սարգիս

ա

240ա *Ծաղկեցաւ տառս այս ձեռամբ անարժան և անիմաստ* Սարգսի, *ի թուականիս աբեթական տումարիս ՌՃ (1651) ամի։ Տեսողք ասացէք ողորմի...*

բ

101բ *Ծաղկեցաւ ձեռամբ նուաստ* Սարգսի.0000 : 0 . 0000 : 0 : 00 : 0000 : *Ամէն։*[51]

703
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Երևան, № 7381 (1623 թ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց

613ա *Ես՝ մեղաւոր, հողու հաւասար* Գրիգոր էրէցս, *[յ]որդորելով խօճա* Խաչատուրն *և խօճա* Մարտիրոսն *գրել տվաք զայս սրբոց մատեանս։ Մի մեղայ թողութիւն խնդրեցէք ինձ մեղաւորիս, եղբարք. ամէն։*

Թվին ՌՃ (1651) գրեցի։

704
ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 7580

Գրիչ՝ Ագարիայ

141բ *Զմեղաւոր և զապիկար* Ագարիայս *յիշել մաղթեմ ի Տէր։ Թվին ՌՃ (1651) ամին գրեցաւ։*

705
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7880 (1497 թ.)

Հետ. ստացող՝ Կաղաս քահանայ

228ա *Դարձեալ վերջի զստացող սբ. Աւետարանիս, յիշեցէք զաէր* Կաղաս *քահանայն և ծնօղաց իմոց* Անդրիասին, *մօրս* Խանիկին, *եղբօրս իմոց* Փիրզանգին, *քերց իմոց* Մարիանին, Մանիշ[ա]կին, *և կողակցին ի-[մոց՝]* Լալկանաշին, *և զաւակաց իմոց* Խաչատուրին, Կունաղին, Աննա-յին, [Մ]արութէին. *և եղբոր որդոց իմոց* Գրիգորին, Անգրիասին, *և մեծ մամիս* Պիրնազիգին, *և զոքանչիս՝* Խաթունին, *այլ և ամենայն ազգա-*

[51] Ծածկագիրը կարդացվում է «Սարգիս. ամէն»։

կանաց իմոց՝ հեռաւորաց և մերձաւորաց, որ ստացայ զսր. Աւետարանս հալալ ինչից իմոց։ Եւ որք կարդայք կամ աւրինակէք, մէկ բերան ողորմի առացէք ինձ և ծնաւղաց իմոց...։

Թվին ՌՃ (1651) գնեցի զսա։ Դարձեալ մէկ բերան ողորմի ասացէք իմ աներուն՝ Յորղանին։

706
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8444

Գրիչ՝ Յովհաննէս

ա

97բ Զվերջինս ի բանասիրաց, պիտականուն Յովհաննէսս, մաղթեմ յիշել ի Տէր. և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Եւ գրեցաւ թվին ՌՃ (1651)։

բ

90բ Ուհ, կարի դառնագոյն է ժամս, զի Թահմազ խանն ի վշտակիր ազդէս Հայոց շուղայեցւոց ղԶ (6) աղչկունս Ժ (10) ամեայս էառ, և ապա որոց ոչ հաւանեալ, ետ ի տեարսն։

707
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8281 (ԺԴ դար)

ա

124բ Քարրիել վարդապետն գնաց ի Կաֆայէն, թվին ՌՃ (1651) էր, մայիսին Ժ (10) անցաւ ի Սնապ։

Նվիրատու՝ Գրիգոր երէց

բ

172բ Ես՝ մեղաւոր Գրիգոր էրէցս այս Նարէկըս Ս. Յովհաննէսի յիշատակ թող լինի։ Դրի թվին ՌՃ (1651) էր, որ խոստացայ, լաւ բռնեցէք, Աստուած ողորմի ասէք. ամին[52]։

708
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 8571 (1641 թ.)

Ստացող՝ Սահակ

328բ Ես՝ Սահակս գնեցի զսբ. Աւետարանս ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, իմ հօրն՝ Փիրղուլէ և մօրն իմ՝ Մարգարիտին, և եղբօրն իմ՝ Եղիային, և հանգուցեալ եղբօրն իմ՝ Մարգարէ, և կողակցին իմ՝ Շուշանին. ամէն։ Ի թուականիս Հայոց ՌՃ (1651) ամին գնեցի զսբ. Աւետարանս, յիշատակ ինձ՝ Սահակիս և ամենայն առուաբեան մերձաւորացն իմոց. ամէն։

52 Միևնույն անձից, նույն ձեռագրում, այլ նշումներ տե՛ս նաև 1648 թ. շարքում։

709
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8594

Գրիչ՝ Գրիգոր սարկաւագ
Վայր՝ Ալփինեար

310ա Փառք...։ // Արդ գրեցաւ սա ի թվականին Հայոց ՌՃ (1651), ի մայրաքաղաք յԱմիթ, ի գեաւղն, որ կոչի Ալփինեար, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ թարմատ[ար փծու]ն գրչի և անպիտա[ն] Գրիգոր սարկաւագին։

310բ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք՝ դասք քահանայից և կրաւնաւորաց, եթէ ոք հանդիպի սր. Աւետարանիս կարդալով, տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր։

710
ՈՐԲԱԹԱԳԻՐՔ
Երևան, № 8617

Գրիչ՝ Թումայ

ա

113բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյս Թումայի հասանել ի յաւարտ գրքիս ի դառն և ի նեղ ժամանակիս, ի թվին Հայոց Ռ և ՃԾ
114ա (1651) որք հանդիպիք // սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սր. գրոցս զտէր Աւետիսն և զծնողսն իւր, հօրն՝ Շենիշանին և մօրն՝ Ագրգին, կողակցին՝ Մարգարին, եղ-
114բ բարցն՝ Խլղաթին, որդոցն՝ տէր Գրիգորին, Մարա//իրոսին, կողակցին՝ Մարէմին, որ փոխեցեալ է առ Քրիստոս, և Շայումին, և միւս եղբօրն՝ Վարդանիսին, կողակից Ջանաղին. քրտերցն՝ Խաթունին, Վարգխաթունին, Թուրանդին, և որդոյն՝ Յովանի[ս]ին, և մեծ պապուն՝ խոջայ Ա-
115ա ւետիսին, մամուն՝ Վարդ//խաթունին. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

Ստացող տէր Աւետիս

բ

Ես՝ տէր Աւետիս ստացայ զսա հալալ արդեանց և վաստակոց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց...։

711
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 9086 (ԺԶ գ.)

1բ Յիշատակ է Մաշտոցս Ս. Նշան Թաքոյին և իւրոց զօր[դոյ]ն՝ Յարութին, որ եղին ի ՌՃ (1651) էր[53]։

[53] Մատենադարանի ձեռագրաց Ցուցակում սխալմամբ նշված է 1658 թ. (հա. Բ, էջ 866)։

712
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 9873 (1525 թ.).

Հետ. ստացող՝ Սարգիս

161ա Ցիշատակ է Մաշտոցս // Սարգսին, որ ըստացաւ հալալ ընչից իւրոյ, որ էառ և եդ յիշատակ իւր և ծնաւղաց, հաւրն՝ Մուրատին և մաւրըն՝ Բարեթին, և քվէրն՝ Մաստունին, և եղբարցն՝ Պողոսին, Պետրոսին և ամենայն յարեան մերձաւորաց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն։ Եւ եթ յիշատակ ի ձեռն տէր Մովսէսին, զոր տէր Աստուած վայելել տացէ բազմայ ժամանակաւք հանդերձ եղբարտացով. ամէն։

Ո՞վ ոք ծախէ կամ գրաւէ նայ՝ մասն Ցուքայի առ//[ն]ու և պատիժն կայէնայ. ամէն։ Դարձեալ աղաչիմք զամենեսան՝ ով ոք հանդիպիք սմայ, յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր Սարգիսն և խորոց սրտէ ողորմի ասացէք. ամէն։

Թվին ՌՃ (1651) էր[54]։

713
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՑՑ
Երևան, № 1036ԿԿ

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

ա

149բ Ջստացող սրբոյ մատենիս զԱւետիս դպիր Սպահանցի, զծնօղսն և զեղբայրս իւր յիշեսջիք ի Տէր, որ եռափափաք սիրով ետ դրել զսայ իմոյ գրչիս Նիկողայոսի, Կաֆայ քաղաքի։

բ

264ա Եւ զՆիկողայոս գրիչս յիշեա[55]։

714
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 10662

Գրիչ՝ Մկրտիչ քահանայ
Վայր՝ Կ. Պոլիս

300ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Կոստան-
300բ դինուպաւ[լիս], // թվին ՌՃ (1651), ձեռամբ բազմամեղ գրչիս Մկրտիչ քահանայիս, ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր Փիլիպպոս

54 Պետրոս կաթողիկոսն թվին ՌՃ (1651) Ժ (10) տարի է, որ կաթողիկոս է։ Երևան, № 9292 (1297 թ.), էջ 1 ա։

55 Ձեռագրի 264 ա էջում դրված է Հայոց ՌՃ թվականի բանալին, ուր գրիչը բացատրում է, թե հաջորդ՝ 264 բ և 265 ա էջերում կազմված տոմարական աղյուսակից ինչպես օգտվել։ Հենց այստեղ էլ նա տալիս է պարզատոմարի գովքը և խրատ ընթերցողին, թե որ տոնից հետո քանի շաբաթ պետք է ուտել և պահս (պաս) պահել։

Հետևելով Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողներին, ձեռագրի գրչության տարեթիվն ընդունեցինք տոմարական աղյուսակի սկզբում գրված «ՌՃ», այն է՝ 1651 թվականը։

ամենայն Հայոց կաթողիկոս։ Արդ ընտացաւ զսա Նուսիացի *մահտեսի* Սէֆար, *ետ յիշատակ ի դուռն Ս. Թորոս եկեղեցոյն, յիշատակ իւր հոգոյն և իւր կողակից Ն//ակին*[56] *և իւր որդոյն՝* Ղարաղոչին *և իւր ննջեցելոցն հոգոյն։ Աղաչեմ զձեզ յիշեսցչիք ի մաքրափայլ աղաւթս ձեր...։*

Արդ՝ երես անկեալ աղաչեմ սրբազան և դաստուածամեծեն դաս քահանայիցդ, որդ ընդեռնուք կամ աւրինակեք, յիշեսչիք սրտի մտաւք զընտացաւղ սբ. Աւետարանիս մահտես[ի] Սէֆարին[57].

715
ՇԱՐԱԿՆՈՑ

Վաշինգտոն, Freer Gallery of Art. *3719 (մանրաժապավեն, Երևան, № 449). տե՛ս նաև* Gallery, *էջ 111—113*

Ստացող՝ Մարկոս կրօնաւոր

ա

436բ *Ցամի հազարերորդի վեցհարիւրորդի յիսներորդի երկրորդի թուահաշուութեան ըստ մեզ մարմնացելոյ բանին Աստուծոյ, և ի հազարերորդի հարիւրերորդի (1651) թուականութեան արամեանս ազին ըստ արեկագանն բերմանց, և ի հայրապետութեան հայկական զարմից տեառն* Փիլիպպոսի *երիցս երանեալ և խստաճգուն կաթողիկոսին, նստողին յամենագով և երկնանման յաթոռ Լուսաւորչի զբնաւս* Էջմիածնի, *ի՛ր յԱրարատեան նահանգին, և ի թագաւորութեանն Պարսից շահ* Ապասին *Երկ-*
436ա *րորդի, նաև յառաջնորդութեան տանս* Գողթան *երջանկա//ցելոյն ի համայնս տեառն* Խաչատրոյ *յաջորդութիւն սբ. առաքելոյն Թումայի, որ յաստուածապահ գիւղաքաղաքն* յԱգուլիս։

Ես՝ ետնեալս ամենայնի Մարկոս, *գոլով անուամբ և ձևով միայն կրօնաւոր շնորհօք և մարդասիրութեամբ Փրկչին մերոյ Քրիստոսի և Յիսուսի՝ յուսոյն մերոյ, ստացայ զսբ. տառգիրքս, որ ասի Շարակնոց, ամենայն տեղի և ժողովարան շարեալ ականց ի փարթամութիւն աղքատութեան իմոյ և յուրախութիւն տրտմութեան իմոյ ի կարոտութենէ*
436բ *մտացս և ի փափագմանէ սրտիս, ի սէր հոգոյս և ի վայելս /Հանձին իմոյ։ Վասն որոյ և ետու ծաղկել անկ և ոսկեաւ պաճուճել ի հրճուանս մանկանց Սիոնի և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝* Փոլոյն *և մօրն իմոյ՝* Գուլպանուշին, *և եղբարցն իմոյ՝* Պետրոսին *և* Ալիքսիանոսին, *նաև քերցն իմոյ՝* Փարոայն, Գիրումին *և* Մարգարտին. *և զհօրեղբօրն՝* Աւոլին *և կողակիցն՝* Մարիանին. *և որդոցն՝* Յովանէսին, Մալումին *և դստերն՝* Խանումին։ *Զոր և ես բազում պաղատանօք և սիրով աղաչեմ, յիշել ի սբ. յաղօթս ձեր որ առ Աստուած. և ես արտասուալի ա//չօք և կողկողագին սրտիւ հայցեմ ի ձէնչ, որ հանդիպիք սմա և վայելիցէք ընթեռնլով և կամ օրինակելով՝ խնամով պահել զորդեակ իմ ի Քրիստոս և խնդրել զթողութիւն մեղաց իմոց և ամենայն ազգականաց...։*

---

[56] *Հիշատակարանի գիրը խունացած է և կարդացվում է դժվարությամբ։*

[57] *Այնուհետև ընդհատվում է ձեռագրից թերթ կորչելու պատճառով։*

Բ

225ա Ո՛վ իմ Յիսուս տէրդ ամենի,
Քաղցր և ներող ամենայնի,
Ինձ ողորմեա քո ծառայի,
Յայսմ գրոցս ստացողի
Զտէր Մարկոս կրօնաւորի,
Այլ և ծնողացն իմում բարի[58]։

Գ

210ա Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զՄարկոս անարժան կրօնաւորն, որ բաղում փափագանօք ստացաւ զՇարակնոցս, յիշատակ իւր և ծնողացն, հօրն՝ Փուլին և մօրն՝ Գուլբանուշին. և եղբարցն և քեռցն. ամէն։

Ծաղկող՝ Հայրապետ

Դ

Զ Հայրապետ նկարողս յիշեսջիք։

716

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, լուսանկար, № 137

Գրիչ՝ Գրիգոր քահանայ

///[59] Արդ՝ ես նրաստ և ընչին Գրիգորս, լոկ անուամբ կոչեցեալ քահանայ, ծրեցի և ծաղկեցի զսա երբն երբն դունովք և ետու ի ձեռն երիցս երանեալ, երջանիկ բարունապետի սրբոյն Սարգիս վարժապետի, վերադիտողի սրբոյ անապատին Շամքորոյ. զոր Տէրն տերանց վայել տացէ. ամէն։ Աղաչեմ զդասդ սրբազանից, զի ողորմիայիւ միով առնուք զխաթիր իմ։ ՌՃ (1651)։

717

ԱՒԵՏԱՐԱՆ

Տիրայր վարդապետի № 61 (1469 թ.)

967 Դարձեալ վէրջին յիշատակ է խոճայ Տարվէշին, Աբանիասին, Յանային, Յապտուլին, Աստուածայարին, Պաղտատին, Մարիամին։ է յիշատակ սբ. Աւէտարանս ի դուռն Ա. Նշանայ. չունի ոչ ոք իշխանութիւն ծախելով կամ կրաւ ընելով կամ և այլ և այլ ասելով կամ աստի հանելով՝ անիծած է և նզովված է Աստուծոյվ։ Ի թվին ՌՃ (1651) էր։

---

58 Միևնույն հիշատակարանը տե՛ս նաև 66 ա էջում։

59 Գրված է երկու սյունակով. երկրորդ սյունակից վեց տող չի կարդացվում տառերը հստակ չերևալու պատճառով։

718
ԱԻԵՏԱՐԱՆ
Ղ. Փիրղալեմյան, «Ընչիարք», հտ. Բ, № 562

456 Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք Իշխանիգումայ[60] մեծ Մելիքին, ուր աիրէր Ստեփաննին, վկայութեամբ Մելքիսէք կաթուղիկոսին, զառաջնորդն մեր զՍիմէօն վարդապետին, թվին ՌՃ (1651)։

719
ԺԱՄԱԳԻՐՔ
ՁՁԹ, № 589

Գրիչ՝ Դաւիթ երէց
Վայր՝ Արտամետ

ա

Ի Փառք...։ Եւ արդ՝ աւարտեցաւ Ժամագիրքս ձեռամբ Դաւիթ իրիցու, ի գեօղս Արտամետ, յիշատակ հաւատարիմ և բարեմիտ առն Աստուծոյ հիւս Սիամոնին, և ծնողացն՝ Մելքոնին և Յազամաթին, կողակցին՝ Սառին, որդոցն՝ Մարտիրոսին և Մելքիսեթին, դստերացն՝ Դաստագիւլին, Մրուաթին և Էթարին, որդոյն՝ Աւետիսին, Ամիրզուլին, որդոյն՝ Գուլազիզին, Մրուաթին. ամէն։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Սարդխանին և իւր ծնողացն՝ Ղարիպին և Թորուանտին, և որդոցն՝ Ղարիպին և Թարառուին, Յովասափին և Մելիքզադին, Էրիմ<րիմ>ին, Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին, ամէն, որ միշնորդ եղև սբ. գրոցս և ետ գծագրել զգիրքս յիշատակ աներոյն իւրոյ՝ Սիամոնին և Սասային։

Դարձեալ ողորմի ասացէք Աառմին, կողակցուն Ջաւ[ն?]իկին, որդոցն՝ Աւէտին, Ամիրզուլին, Էթարին, [Ս]արաֆին, Թորուանային, Տիրատուրին և Ղարիպին։ Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին յաւուրն դատաստանին. ամէն։

Նվիրատու՝ ճիւս Սիամոն

բ

Ես՝ հիւս Սիամոնս ետու զսբ. գիրս ի դուռն Ս. Գէորգեայ զօրավարին, ի գեօղն Քէօշք, յիշատակ հոգւոյ իւրոյ։ Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ Ա. Գէորգայ, և որ յանդգնի ծախել կամ դրաւել կամ գողանալ, զանէծքն Կայինին և [խաչհանողացն] առցէ. ամէն։

Ի թուականս Հայոց ՌՃ (1651)։

720
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏՅՀՄՎ, № 93

Գրիչ՝ Յովսեփ դպիր
Վայր՝ Ասպահան

362 Փառք...։ Արդ՝ սկիզբն եղև սբ. Աւետարանիս ի յերկիրն Պարսից, ի քաղաքս Շօշ, որ է Ասպահան, ի դուռն Ս. Աստուածածնին յեղբ Նար-

[60] Ղ. Փիրղալեմյանի ծանուցմամբ՝ գյուղ Հայոց ձոր գավառում։

նղալային, թուաբերութեանս հայկազան տոհմիս ՌՃ (1651) ամի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի սր. աթոռոյն Էջմիածնայ, և ի
363 արքեպիսկոպոսութեանն Նոր-// Ջուղայոյ նահանգի տէր Սիմէոնի Ջուղայեցոյ, և ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապասին, որ է թոռն մեծ շահ Ապասին, ձեռամբ անարժան և մեղսամեծ գծողի Յովսեփ դպրի, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի, հաւատարիմ և իմաստուն կնոջն՝ Շահմէլիքին, յիշատակ հոգոյ իւրոյ և իւրայնոցն առ հասարակ, աստ և ի հանդերձելումն...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՇահմէլիքն և զծնօղսն իւր՝ Ղարիպն, Նաումէլիքն և զամենայն արեան [մերձաւորքն]: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՇահմէլիքն և իւր կողակիցն՝ Միրաքն, և զորդիքն իւր՝ Իպրահիմն, Խուտապաղշն, Տարվիշն, և հանգուցեալ դստերքն՝ Շահումն, Մարիամն, Անեկն: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Շահմէլիքն և զիւր եղբարքն՝ Ասատուրն, Պետրոսն և քուրն՝ Մուրատամէլիքն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԻպրահիմն և կողակիցն՝ Եղարն, դստերքն՝ Ասլին, Արզուն, Ղարիպ խաթունն և Աստուած ողորմի։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զԽուտապաղշն և կենակիցն իւր՝ Մարգարիան, և որդին՝ Միրաքն, Նանանանն: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Տարվիշն և կենակիցն իւր՝ Մարիտատն, և դուստրն՝ Նաումէլիքն. և Աստուած ողորմի։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ Յովսէփ դպիրս, և զվարդապետն իմ զքաջ քարտուղարն զԳասպար քահանայն, որ ուսոյց ինձ զարհեստ գրչութեանս. հանդերձ ծնօղօք յիշեցէք և Աստուած ողորմի։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծաղկող սորին Մեսրոպ վարդապետն, և զծնօղքն յիշեցէք. նաև զեղբայրակիցն մեր այսմ արհեստի՝ զԱսատուրն քահանայն, Յովանէսն, Յարութիւնն, զՄարկոսն, զԱբրահամն յիշեցէք։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ Յովսէփ դպիրս և զծնօղսն իւր՝ Ասատուրն, Վարդիտաքունն. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

721

ՄԱՇՏՈՑ, ՏԱՂԱՐԱՆ

ՏՅՁՄՎ, № 148

Գրիչ՝ Բարղամ

ա

481 Զստացաւզ գրոցս զՅոհանն, որ ետ դրել զսա, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց և ամենայն արեան մերձաւորացն գնացելոցն առ Քրիստոս. որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Գրեցաւ թվին ՌՂԹ (1650), ձեռամբ նուաստ Բարղամ գրչի։

բ

Փառք...։ Գրեցաւ ձեռամբ նուաստ Բարղամ գրչի, ի խնդրոյ աստուածասէր և հոգիասէր Յոհանին, որ եղ գրել զսա, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն՝ Բարունակին և Նոնոֆարին, և կողակցին իւրոյ՝ Կիլիխասին, և որդոցն իւրոց գնացելոցն առ Քրիստոս, և եղբաւրն՝ Կիրակոսին, և ետ զսա ի ձեռն տէր Սիմէոնին յիշատակ ամենայն արեան մերձաւորացն, որք կարդայք... թվին ՌՃ (1651)։

722
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՄՁՄՎ, № 433

Վայր՝ Ամիք

884 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ երգարանս սբ. հօրն Դաւթայ մարգարէին, թվին ՌՃ (1651), ի մայրաքաղաքն յԱմիք, ընդ հովանեաւ..., ձեռամբ մեղօք զառածեալ..., ի վայելումն... աղաչեմ զձեզ եղբարք, զի յորժամ որ կարդայք զսա և կամ օրինակէք, Աստուած ողորմի ասացէք ինձ անարժան գրչիս և ստացողի սբ. գրոյս...*[61]։

723
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՄՄՁԵՊ, I, № 228

Ստացող՝ Յովանէս Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

ա

617 *Փառք...// որ շնորհեաց ինձ անպիտան և անարժան և անիմաստ և բազմամեղ Յոհանէս մեղսամած գրչիս Մոկացոյ հասանել ի յաւարտ և ի կատարումն շնորհաղարդ սբ. գրոցս, որ ասի Հարանց վարք։ Զոր ի հերուն հետէ ես՝ Յոհանէս արեղայ, ցանկացեալ կարօտանայի տենչմամբ մեծաւ գրել, ժողովել, ամբարել ղերանելեացն և զամէներշանկացն վարս սբ. և գերաշխարհիկ անմարմնոց նմանս։ Եւ զբանս լուսաւորս հոգևորական խրատուց նոցա, որ քաղցր է ի քիմս սիրով ճաշակողացն զնա առաւել քան զմեղու խորիսխ և զռետին։ Եւ գիտէ լուսաւորել, նորոգել և կենսագործել։ Եւ զի յանդիմանիչ ևս է և կշտամբիչ, և յայտնիչ անուղղայ գնացելոց։*

Արդ՝ նայելով ի գործս քնայոյզ ծուլացելոյս, և անիմաստ շաւղաց մտելոյս, և անտէրունչ ընթացելոյս, ըղձմամբ մեծաւ փափագեցայ գրել և արձանացուցանել, և առ իս պահել, և ունել յար և հանապազ ինձ կշտամբիչ և յանդիմանիչ և յայտնիչ խորհրդոց, մաքուր կարծեցելոյս։ Եւ դարձեալ սփոփիչ և մխիթարիչ և տածիչ, ախմարացեալ յիմարացելոյս։ Եւ ինձ հայր խնամակալ և գութ ծնողականի և խրատ անխարդախ զսա վարկանելով սիրեցի, դրգալով ի վերայ սորա։ Զի գոնէ միայն ի լուր աստուածազարդ բանից խրատուց սբ. հարցն և երկնանման կրօնից գործոց նոցին գիտութիւն, զիմ անդէպ և կարծելի միայն գնացեալս ամաչեցուցեալ, գլխակորեալ, զգլուխս յերկիր հայեցուցեն։

Եւ արդ՝ այսպէս սկսայ զսա, ջերմեռանդն սիրով և յուսով առ այն որ տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ հասուցանել յաւարտ։ Այլ յոյժ տառապանօք և աշխատութեամբ, քանզի զօրինակաց զլաւագոյնն ընտրելով և զճշմարտագոյնսն խուզելով, և զհամառաւտն թողեալ զկատարեալ պատմութեան հետևելով ժողովեցի, բարդեցի աւրինակք ոչ սակաւ, որչափ ձեռնհաս եղէ գտանել։ Եւ թէ ի միոնն սխալ գտանիւր ի գրր-

[61] Ինչպես հաղորդում է Հ. Տաշյանը, բազմակետերը ցույց են տալիս միտումնավոր չնշված տեղերը։

չաց կամ աւրինակաց և կամ համառօտեալ զնա իմանալի, նա զիւրաքանչիւր աւրինակքն առընթեր բերելով գասանէի գնոյն բան ոչ վկայելով միմեանց, այլ ի նոցանէ խնդրեալ ընտրելագոյնս, և զհաճելին ի նոցունց առեալ գրէի յարմարեալ և կատարեալ բան զճշգրտագոյնս շարադրելով։

Այլ ի հասանել պատմութեան Կամաւոր աղքատին սրբոյն Ալեքսիանոսի, տարակուսեալ արգելայ, քանզի այլ և այլ պատմէին աւրինակքն զնմանէ։ Ոմանք ի Կոստանդնուպոլիս լեալ ասէին, ոմանք ի Հրոմայ, և այլն երկոտասան ամ ի դուռն ծնօղաց ասէին, կէսքն՝ ԲԺ (12)-ան աւր, և այլն է (7) ամ։ Եւ այլք զԵրուսաղէմ տեսեալ ասէին զնա, և կէսք յԵդեսիայ միայն, այլ ոչ ուրեք գնացեալ։ Այսպէս ամենայն պատմութիւն այլ և այլ էին գրեալ։ Մինչ հարկ եղև ի Յունաց բերել աւրինակ ի ձեռն բարեկամաց և ոչ շատանալ միով, այլ մինչ վկայեսցեն և նոքա միմեանց, և այսպիսի սիրով աշխատեալ գտի զայն որ միմեանց վկայեցին և գրեցի զճշմարտագոյնս, զլաւն և զանսխալն, այսպէս և զամենայն արարի, այլ ոչ որպէս սրբոյն Ալէքիսանոսին աշխատեցայ։ Եւ բազում վարք և բան աւելի եղի ի սմա, զայն որ ոչ գոյր ի մեծ աւրինակն։

Արդ՝ յամենայն գլխոյն վերջքն, որ կարմիր յի խաչագլուխ կայ, ի լուսանցքն ներքին, այն յայլ գրոց աւրինակեալ է. իսկ ի կողման լուսանցին, կարմիր նշան և թուխ կռագլուխ խաղ բազմեալն այն պիտանի և աւգտակար նշանաւոր բանք են, և եդի նշան առ ի փոյթ գտանել զայնպիսի ախորժագոյնսն։ Եւ ի վճար մեծ աւրինակին յիշատակարան եղեալ, սկսա և զայլն որ ոչ գոյին ի մեծ աւրինակն։ Եւ որչափ կարող եղէ հաւաքեցի և զայնոսիկ. նմանապէս աշխատելով զընտիրսն և զճշգրտագոյնս խնդրելով գրել։

618 Եւ արդ՝ ես Յովանէս աբեղայս Մոկաց // ցանկացայ այս աստուածային սբ. գրոցս, որ կոչի Հարանց վարք, և ետու գրել և ծաղկել զսա ոսկով, և բազում երանգօք, յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն՝ Բաշարաթին և Ինախփաշին, և հարազատ եղբարցն՝ տէր Մելիքսեթին, և կնոջն՝ Գուլաղին, և որդոյն՝ տէր Յոհանիսին և կողակցուն՝ Փաշին, և դստերն՝ Գուլաղին, և միւս եղբօրն՝ Շէրբէկին, և քուերցն՝ Ջանաղին և Գօզալին և Փաշին, և մեծ պապուն՝ Սինամարիմին և մեծ մամուն՝ Ինախփաշին. և որ մեզ ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն ամէն։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժանս և զանիմաստս և զվերջացեալս ամենայն մեղաւք, որ չեմ արժանի զանունս յիշելոյ, այլ յուսալով ի մարդասիրութիւն Աստուծոյ, որ ասէ «[Ով] որ հայցէ գտանէ, և ով բախէ բացցի նմա». և ես թշուառականս և անկեալս ամենայն մեղօք Յովանէս աբեղայս Մոկացի, որ ի (20) տարի փակակալ էի Ս. Փրկչին, բազում չարչարանս և նեղութիւնս կրեցի յայլազգեաց և մարդասիրութեամբ Աստուծոյ և ողորմութեամբն քրիստոնէից ստացայ զսբ. գիրքս, որ է Հարանց վարք, իբրև զդրախտ Եդեմայ, որ լի է ամենայն մրգօք և անուշահոտ ծաղկօք։ Ով ընթեռնու ոչ յագի ի վաղահաս պտղոց և անուշահոտ ծաղկանց, որպէս և նոքա նեղութեամբ և չարչարանօք արժանացան. քաղց և ծարաւ կենալով, մերկ և բոկ շրջե-

լով, արթուն և զգաստ աղօթելով, արժանացան անմահական դրախտին։ Նոյնպէս և մեք կարդալով և միտ դնելով և հառանչելով և արտասուս հանելով արժանասցուք նոցին վարուցն, որպէս է վկայած աստուածաբան վարդապետացն,

Թէ «Տօնասէրն չէ զրկած,
Ի պսակաց մարտիրոսաց,
Այլ է հաղորդ նոցին փառաց,
Առանց գանից և տանջա[նա]ց»։

Նոյնպէս և մեք սառեալքս ամենայն մեղօք զնոցայ տօն կատարելով, զնոցա պատմութեան միտ դնելով, խունկ ծխելով, մոմ վառելով, նոցին փառացն արժանաւորելով։

Եւ ես ոչ անյոյս լինելով, այլ ստացայ զսբ. անուշահոտ բուրաստանս, որ է Վարք սբ. հարանց, և դրի յիշատակ ի սբ. տնորինական տեղիքս նախ և առաջին ի Ս. Ծնունդն, և ի Ս. Յարութիւն, ի Ս. Փրկիչն, և Ս. Հրեշտակապետն, և Տեառնեղբօր Ս. Յակոբին, և առաջին աթոռակալին, և Զեբեթայ որդոյն Ս. Յակոբին, և Գլխադիր դամբարանին։ Ի թուաբերութիւն հայկազանիս ՌԾ (1651)-երորդի ամի, ի հայրապետութեան սբ. ուխտիս տէր Աստուածատուր սբ. բարունիս, հեզ, և խոնարհ, և հնազանդ, և ժողովող ամենայնի. ոչ վերջանայ վարդապետացն, երկոտասան նահատակացն։ Այլ ըստացող նոցին վարուցն և փափաքող փառաց նոցին։

Բ

Ես՝ Յովանէս եմ Մոկացի,
Զանունս ունիմ արեղայի,
Գործս չար է և ատելի,
Իսկի չունիմ հանգիստ տեղի։
Ով որ ասէ ինձ ողորմի,
Աստուած զիւր մեղքն չլիշի,
Հօրն իմոյ Բաշարաթի,
Եւ մօր իմոյ Ինաիւփաշի,
Եղբօրս տէր Մելքիսեթի,
Եւ իւր որդոյն տէր Յոհանիսի,
Եւ մեծ եղբօրս Շէրբէկի,
Եւ մեծ քորոջս Զանաղի,
Գուզալ, Փաշիկն հետ կարգի։

Գ

618 Տէր տայ արք[այ]ութիւն տէր Աստուածատուր հեռատորին,
Որ ձեռն էարկ ի ջինութիւն եկեղեցեացն ամենայնի.
Նախ և առաջին Հրեշտակապետն որ հնացեալ էր ժամանակին,
Ջներսն և զդուրսն նորոգեց և Գ (3) տուն այլ աւելի։
Յետև գնաց ի Ս. Փրկիչ. որ կափարիչ վէմն է միջի,
Շինեաց զպարիսպն ջրջապատ, զմէջ ծեփեց զարմանալի.

Յետոյ եկաւ ի Ս. Յակոբ, որ աւթևան է հայ ազգին,
Մեծ աթոռ հայրապետաց Տեառներբօղ Ս. Յակոբին։
Ուխտաւորք շատ են եկեր, ՃԾ (800) այլ աւելի,
Մեծ կաթողիկոսն Էջմիածնայ Փիլիպոս հեզահոգի,
Եւ պատրիարգ Կիլիկեցոց Ներսէս անուն քաշ և արի,
Վարդապետք շատ են եկեր, որ համարով Ի (20) ասի,
Եւ քահանայք ամէն դեհաց, որ չէր եկեր իսկի տարի։
Միաբանութեամբ ամենեցուն ի ըսկզբն արարին սբ. տաճարին,
Զհին քարեր քակեցին զամէն ի դուրս կրել տուին,
Եւ նոր քարեր բերել տուին, սև և կարմիր և ճերմակին,
Գոյն զգոյնով յօրինեցին, զամենեսեան զարմացուցին։
Եւ զմեծ խորան բարձրացուցին, ոսկով զինքըն ծիփեցին,
Մեծ բարիկենդանին սկիզբն արին, Նոր կիրակին աւարտեցին[62],
Միաբանութեամբ նոր աւրհնեցին, ուրախութեամբ թողին գնացին։
Երբ Յունաց ազգն եկան տեսան, խոր խոցեցան թողին գնացին.
Դեռ ծռազատկի նախանձն ունէին, թօնքն յայս տեղս թափեցին.
Զաբաշն իւրեանց կռնակ արին, իւրեանքն իւրեանց բան շինեցին,
Երթանք Ծնունդ դաւի անենք, Բ (2) աւտէն ու զկէս բազչին։
Սռին զքէյէն ու զսուպաշին, ղաղու մարդիքն այլ հետ էին,
Վարդապետին խաբար բերին, թէ ահա յոնք գնացին.
Վարդապետ խոնարհութեամբ առաւ զՏօնիկն ու գնացին,
Տէր Վարպետն ու Գրիգոր, Թարճիման, Աղուպն այլ հետ էին։
Երբ որ հասան ի Ս. Ծնունդ գեղի շեհեր դէմ եկին,
Տաւնիկն ասաց վարդապետին, թէ խաւսքն այսոնց է զինչ որ ասեն.
Յառաջ զայսոնց բերան բռնենք, այլ իսկի չզրուցին,
Ներքև ձեռաց զայնոնք տեսան զամենեցուն խաթար արին։
Երբ որ ժողվան ամէն մէկ տեղ, զգեղի շեհերն յառաջ բերին,
Թէ դուք գիտէք հայրենական յայս Հոռմին թէ Հայ ազգին.
Շեհերն ասեն մեք կու գիտեմք ժամանակեց է Հայ ազգին,
Երբ որ զայս խաւսք լսեցին, սճիլ արին մեր Հայ ազգին։
Տաւնիկն ասաց ներքև ձեռաց նշան արէք զպատ շարեն,
Ղաղու մարդն յառաջ գնաց քեհէն հետն ու սուպաշին.
Իւրեանց ձեռօքն չափեցին, նշան արին զհիմ դրին,
Բ (2) կանգուն լայնութիւն, Ը (8) կանգուն բարձրացուցին։
Դ (4) վարպետ յան յազգրէն՝ երկուս հայ, երկուս հոռմին,
Սկսան զհիմն կու փորեն, գեղի մարդիկ քար կու կրեն.
ԶԳրիգոր վերայ դրին, իւրեանք դարձան քաղաքն եկին։
Յունք առիւծու պէս գնացին, իբրև զաղուէս դարձան եկին,
Նանրի ծաղկի պէսպէս ծաղկեցան և թափեցան յինն ժամին։
Տէր տայ արքայութիւն յայս մնացած միաբանին,
Նախ և յառաջ վարդապետին, լէհու եկած Յովանէսին,
Զխոնարհութիւն յանձն առեր և ժամարար հետ իւր կարգին։

---

[62] Այսինքն շինարարությունը սկսել են 1651 թ. փետրվարի 9-ից և ավարտել ապրիլի 6-ին (շարժական տոմարով)։

Եւ զտէր Թորոս եպիսկոպոս, որ չէ եղեր [նման] նմին,
Զգաստ և արթուն մէջ գիշերին, յոտն է կանգնած մէջ տաճարին,
Ժամարար և ժամասող ոչ վերջանայ յիւր կարգին։
Աւնոփրիոս եպիսկոպոսն իմաստուն ու առաքինին,
Եւ նուիրակ առաքեցին, չէ չասաց ամենևին։
Եւ զտէր Վարպետն Մշեցին, ժամանակեց է յայս տեղին,
Արթուն և զգաստ գիշերային և ժամասաց մէջ տաճարին.
Եւ զՄանուկն Բաղէշեցին, հայրպետ եղև միաբանին,
Հեզ և խոնարհ, և հնազանդ, և խնամող զամենեսին.
Ոչ եթող կարօտութիւն միաբանացն ամենևին,
Զինչ էմիջ որ յառաջ գայր, դնէր բերէր ի սեղանին։
620 Զտէր Յովանէս Վանեցին և զտէր Բաղդասար Յգուեցին,
Խոստովանահայր ժամանակեց, մեղսաքաւիչ ժողովրդեան։
Եւ զտէր Մինաս ծերունին, սպասաւոր Սուրբ Հրեշտակապետին,
Զտախտերն ամէն նոր սալարսեց, ոչ վերջանայ յիւր բանէն։
Տէր Դաւիթ Մոկացին, որ նուիրակ առաքեցին,
Խոնարհութեամբ յանձն էառ, չէ չասաց ամենևին։
Զտէր Ղուկաս քաջ և արին, կանգնած յառջև մեծաւորին,
Զուապ կուտայ ամենեցուն, ոչ վախենայ ամենևին։
Զտէր Նիկաւղոս երիտասարդ, հասակաւ երեսնամին,
Փակակալ եկեղեցոյն և սպասաւոր մէջ տաճարին։
Եւ զԱւետիս Մշեցին, սպասաւոր յառջև նորին,
Զկանթեղներ կու վառէ, ոչ վերջանայ ամենևին։
Տէր Կիրակոս քաջ և արին, տէր Սամուէլ Բելուեցին,
Տէր Յոհանէս նորընծայ՝ աշակերտ վարդապետին։
Տէր Յոհանէս Մոկացին, իմ հարազատ եղբօր որդին,
Զգիրքս գրեց և աւարտեց, որ չէր եղեր նման նմին։
Տէր Յոհանէս Խիզրնցին, հեզ և խոնարհ է առանձին,
Գրագիր և ծաղկարար յայսմ վերջին ժամանակին.
ԶՀարանց վարքս ոսկով ծաղկեց, գոյն ըզգոյնով երանգ դեղին,
Կազմեց զինքն և նորոգեց, երեր յառջև մեծաւորին։
Տէր Մարտիրոս ժամարար և աշակերտ վարդապետին,
Տէր Սարգիս գրագիր և ծաղկարար է առանձին։
Տէր Սիմոն նոր եկած և ժամարար է հետ կարգին,
Սոքա Գ (3) են ժամարար և աշակերտ վարդապետին։
Եւ զՄինասն երիտասարդ հասակաւ Ի (20) ամին,
Հեզ և խոնարհ, և հնազանդ, և սպասաւոր վարդապետին։
Տէր Սիմէոն ծերունի՝ միաբան է Սուրբ Փրկչին։
Տէր Խաչատուր Սուրբ Ծննդեան, տէր Աստուածատուր հետ նորին.
Եւ զտիրացու Գազպար անուն սպասաւոր է հետ նորին.
Մահտասի Մարկոս ծերունին, ժամանակեց է յայս տեղին,
Սպասաւոր Սուրբ Յարութեան Գ (3) քահանայ այլ հետ նորին։
Բ (2) Սարգիս Ըստրմբոլցի և Գրիգոր Տաթեւացին,
Ալէքսան հետ նոցին, Դ (4) են դպիր սուրբ սեղանին։
Եւ զԳրիգոր դայդայ մահտասին, ժամանակեց է ծերունին,

Որ նուիրակ առաքեցին, չէ չասաց ամենևին։
Եւ Սարգիս Յալպիցին, ժամանակեց է յայս տեղին,
Թարճիման է և սպասաւոր, զինչ բան լինի կու՝ կատարի։
Եւ Ստեփանոսն Մոկացին, որ հնազանդ յամէն տեղին,
Ոչ վերշանայ յիւր բանէն, զինչ որ ասեն կու կատարի։
Տէր տայ արքայութիւն, տէր Աստուածատուր վարդապետին։
Միաբանք խիստ շատ են, երբ որ թուենք նա Կ (60) են,
ԻԴ (24) քահանայ, ԼԶ (36) աշխատողք են.
Մասն ունին ամենեքեան, ինչ պատարագ որ մատուցին։
Եւ յետ աստեաց ելանելոյն, հանգչին ի դասս յաշակողմին։
Ես աբեղայս եմ Մոկացի, զայս քանի բանքս յարմարեցի,
Գործս չար, խիստ ատելի, իսկի չունիմ հանգիստ տեղի։
Ով որ կարդայ տայ ողորմի, վերայ դրեալքս ի քարտիսի,
Կարդացողաց և լսողաց և հաւասար ամենայնի. ամէն։

621 Եւ խոշորութեան դրիս և սխալանաց անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

Դ

Աղաւթիւք և բարեխօսութեամբ սրբոյն Պօղոս պարզամտի ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի դրոցս՝ հեզահոգի և մաքրամիտ տէր Յովանէ[ս]ին, և եղբօրն՝ տէր Մելքիսէթին, և ինձ մեղօք լցեալ Յոհաննէսիս, որ բաղում աշխատանօք և տառապեալ կենօք գրեցի։

724

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՄՏՁԵՊ, V, № 1651 (1623 թ.)

480 Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին ըստացող սբ. Սաղմոսարանիս, որ է գանձ անապական...։ Վասն որոյ և այս կուսակրան Նբսէֆ անուն աղջիկս ցանկացաւ, այս անուշահոտ բուրաստանիս, և ըստացաւ զսայ ի հալալ վաստակօք և իւր ձեռագործով. ոչ թէ յայլոց աղերսեալ է, այլ իւրեան մարմնոյ քարիքն է կտրեր և զհոգին պայծառացուցեր. և ետ յիշատակ ի սբ. Յերուսաղէմ ի տնօրինական տեղիք. նախ ի Ս. Ծննունդ, ի Ս. Յարութիւն, ի Ս. Փրկիչ, ի Ս. Հրեշտակապետ, ի Ս. Յակովբայ Տեառնեղբօր աթոռակալին և Զեբեդեայ որդոյն սբ. Յակովբին և գլխադիր դամբարանին. ի հայրապետութիւն հայկազանիս տէր Աստուածատուր մեծ ըրաբունիս, հեզ և խոնարհ և հնազանդ, և ժողովէ զամենեսեան. զվանքերն ամէն նոր նորոգեց և ոչ եթող պակաս տեղիս. Տէրն պահէ զինքն ի մեղաց և ազատէ ի չար աչից։ Ի թվաբերութեան Հայոց ազգիս ՌՃ (1651)-երրորդ ամի։ Ով որ կարդայ, տայ ողորմի այս կուսակրան։

725
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏԳԵՊ, VI, № 1963

Վայր՝ Սեբաստիայ

541 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թվականութեանս ամաց ՌԾ (1651), ի քաղաքս* Սեբաստիայ, *ընդ հովանեաւ Ս. Սարգսին։ Եւ ստացող սբ. մատենիս հանգուցեալն առ Քրիստոս* Յովակիմն *և իւր ամուսինն՝* Աննայն, *որք ստացան զսա ի հալալ ընչից իւրոց, յիշատակ հոգւոց իւրեանց և յարեան մերձաւորաց, և ետուն յիշատակ ի ձեռն տէր* Յովաննիսին՝ *իւրեանց փեսային։ Որ և վայելելով և կամ կարդալով յիշման արժանաւորս արասցէ միով ողորմիւ ասելով...։*

726
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏԳԵՊ, VI, № 1970

Ստացող՝ Խաչատուր Երէց

Վայր՝ Կ. Պոլիս

550 *Փառք...։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, զդասս սրբազանիցդ ընթերցողացդ, զի ընթերցեալ զյիշատակարանս սբ. Աւետարանիս, զըստացօղս կեսարացի ըստամբոլցի մահտեսի* Խաչատուր Երէցս, *և գիրիցուհին հանգուցեալ* Խանումն, *և զծնօղսն իմ՝* զԱւետիքն *և* զՍարրան, *հանդերձ ծնօղօք սոցա, և ննջեցելովք, ողորմութեան Քրիստոսի յանձն ապաստան առնելով...։*

Եւ յետ կենդանութեան իմում մնասցէ կենդանի Աւետարանս, որ է անմահ, ի սբ. Երուսաղէմայ, *ի դուռն Ս. Յակոբայ տաճարին, յատենի կացեալ ի վայելումն սրբասիրացն ընթերցողացն...*

Գրեցաւ Աւետարանս ի քաղաքս Կոստանդինուպոլիս, *ի թվականիս ՌԾ (1651), առ դրան Ա. Նիկողայոս եկեղեցոյ, ձեռամբ լեհցի* Յակոբ *տիրացուի և ծաղկարար* Մարկոսի, *որոց աշխատանացն համար աղաչեմ,*

551 *ով // սբ հանդիպողք և վայելողք սբ. տառիս, զի և նոցա ևս Աստուած ողորմի կարդալով, ասացէք Հայր մեր...։*

727
ՄԱՇՏՈՑ
ՄՏԳԵՊ, VII, № 2286 (1649 թ.)

Ստացող և նվիրող՝ Յոհանէս վարպետ

385 *Զըստացող գրոցս զվարպետ* Յոհանէսն *և զծնօղսն իւր, և* զՍուլթան *դուստրն իւր յիշեցէք...։*

Աստուած ողորմի ասացէք Յոհանէս *վարպետին և իւր ծնօղացն և իւր ամենայն արեանառու մերձաւորացն..., որ ստացաւ զսբ. գիրքս և եդ ի սբ.* Երուսաղէմ *յիշատակ, ի դուռն Ս. Հրեշտակապետին։ Որք հանդիպիք, յիշեցէք...։*

Գիրքս եղաւ յիշատակ ի յաթոռակալութեան Ս. Յակոբա[յ] առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, տէր Աստուածատուր քաջ և արի, և աստուածաբան վարդապետին, ի թվին Ռ և հարիւրին (1651)։ Կացցէ անշարժ ի դուռն Ս. Հրեշտակապետին։

728
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏԶԵՊ, VII, № 2357 (1651 թ. առաջ)

Հետ. ստացող՝ Պաղտասար Հրզուեցի

502 Ես՝ տէր Պաղտասարս Հրզուեցի, ի սբ. Երուսաղէմ, ի//թուին Ռ և Ճ (1651)-ին, ի հալալ ընչից իմոց ըստացայ զեղանակաւոր տառս և զաստուածաբան կտակս..., որ կոչի Շարակնոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց Էնիսթին և մղտեսի Մանուշակին, և կողակցին իմոյ՝ մղտեսի Փարիխանին, և նորաբողբոջ որդոյն իմոյ՝ սարկաւագ Երեմիային, և փոխեցելոցն առ Քրիստոս եղբօրս տէր Պետրոսին, մղտեսի Ղարիպնանին և Զարդարին, և դստերացս Բ (2)՝ Հռիփսիմին, և միւս Երեմիային, և Մէրտանին և զամենայն արենառու մերձաւորսն մեր յիշեցէք...։

Աստուած բարով վայելել տայ զՇարակնոցս տէր Պաղտասարին և իր որդւոյն՝ սարկաւագ Երեմիային. ամէն։

729
ԺԱՄԱԳԻՐՔ
ՄՏԶԵՊ, VIII, № 2410

49 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սակաւ տառս, որ կոչի Ժամագիրք, ձեռամբ /// ի թվականիս մերոյ Հայոց ՌՃ (1651), ի յիշատակ Նիկողոսին և իւր կողակցացն՝ Իփրուսինէ, Եղիսաբերին և Ոսկիտատիկան, և իւր դստերն՝ Ազատին։ Եւ ետ յիշատակ հոգոյ իւրոյ ի վայելումն Մամարին։ Աստուած իւրեանց մեղքն թողու և վերին արքայութեան արժան առնէ. ամէն։

Դարձեալ կրկին աղաչեմ, ով ընթերցող, յորժամ ընթեռնուն զսբ. տառս և իւրեանց մեղաց թողութիւն խնդրես ի միւս անգամ գալստեան. ամէն։

730
ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՏԶԵՊ, VIII, № 2501

Գրիչ՝ Պետրոս դպիր
Վայր՝ Բաբերթ

178 Փառք..., որ ետ կարողութիւն մեղսասէր և ակար ոգոյ, սգալոտ, փծուն և անարհեստ գրչի, սուտանուն և անարժան Պետրոս դպիրս։

Ես անպիտանս յամենայնի,
Մեղօք լցեալ ւ ողորմելի,
Ունիմ տեղիք բանբասելի,

Որ զՏօնացուցս յուշ գրեցի։
Ես էլ գիտեմ որ սուտ էի,
Շատաշրջիք յամէն տեղի
Որք հանդիպիք յայսմ Տօնացուցիս,
Ինձ ասացէք Աստուած ողորմի,
Եւ դուք արժան լինիք տեսոյն Քրիստոսի։

179 Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որ հանդիպիք սմա, յիշեցէք ի Քրիստոս և ի սբ. յաղօթս ձեր, և ինձ մեղաւոր գրչիս՝ Պետրոս դպիրս, որ անուամբս միայն եմ և ոչ գործովս։ Արդ՝ գրեցաւ Տօնացոյցս ի թվականիս Հայոց ՌՃ (1651) ամի, ի գաւառս որ կոչի Բարբեր, ի մահալան Ջըկրաշէն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։

Արդ՝ ով եղբայրք, խոշորութեան և սղալանացն անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Եւ որք հանդիպիք սմայ, տեսանելով կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս <և> զամենայն արեան մերձաւորսն իւր և Աստուած գրձեզ յիշէ...։

731
ՄԱՇՏՈՑ-ՏԱՂԱՐԱՆ
ՄՅԶԵՊ, հ. IX, էջ 184

193 Դարձեալ յերեսս անկեալ կրկին աղաչեմք եւ պաղատանաւք հայցեմ ի մաքրափայլ յաղաւթս ձեր, որք հանդիպիք այսմր տառիս, յիշեցէք առ Քրիստոս զանմիտ եւ զանարժան գրծող սորին, եւ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեան, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զըստացող սորին զտէր Թումէն, եւ զհայրն իւր զտէր Միքայէլն, եւ զմայրն իւր զՂիմաթ, եւ զեղբայրն իւր զԽաչատուր, եւս առաւել այնոցիկ, որ ի վերայ տառիս աշխատանք եւ երեխտիք (ունեն), յիշեցէք առ Քրիստոս։ Թվ. ՌՃ (1651)։

732
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՅԶՎՍ, I, № 38 (ԺԵ—ԺԶ դդ.)

Հետ. ստացող՝ Գրիգոր

218 Փառք... Արդ՝ ես Գրիգորս գնեցի զպարկեշտատուր սբ. Սաղմոսարանս ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ ինձ և ծնողացն իմոց, հօրն իմոյ՝ Սարգսին և մօրն իմոյ՝ Թիրվանդին, և որդոց սոցին Քէշիշին, Մխիթարին, [որ] են հանգուցեալ ի Քրիստոս հանդերձ ծնողքն իւրեանց։

Դարձեալ յիշեցէք զբարեպաշտ Գրիգորն, որ է ստացող գրքիս և իւր կողակցին՝ Ղումաշին, և որդոցն՝ Զաքարին, Պալասանին, Ծաւուրին, Պետրոսին, Պողոսին. և դստերքն՝ Մարիանն, Եղիսաբեթն, Սանդուխտն։ Դարձեալ յիշէք զԳրիգորի եղբայր, նորաբողբոջ և սարկաւագ, քաջ քար-

տող[ար] Սահակն և ամուսինն՝ Մարիանն: Դարձեալ յիշեցէք իմ պապն՝ տէր Ովանէսն և տէր Ովանիսի հայրն՝ Պապաջանն: Դարձեալ յիշեցէք զմեղաւորս։ Ի ժամանակի բռնակալութեան փոքր շահ Ապասին, որ կոչի Կարմիր գլուխ։ Եւ ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոսի կաթուղիկոսի, յաթոռ սբ. Էջմիածնի, ի թուականութեան Հայոց տոմարիս ի ՌՃ (1651)-ին։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ քահանայք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող Գրիգորն և զՍահակն և ամուսինն՝ Մարիանն. ամէն։

733
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 45 (1476 թ.)

Հետ. ստացող, կազմող՝ Շամուն

248 Փառք...։ Զվերջին ստացաւդս յիշեա ի Տեր զսուտանուն Շամուն, որ կաղմեաց բազում աշխատութեամբ ի քաղաքն Սեբաստիա, ի թվին [Ռ]ՃՃ (1651)[63]։ Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՊետրոս եպիսկոպոսն և զհոգևոր ծնաւդս նորա զմահտեսի Խաչերն և զմահտեսի Մարիամն, և զկողակիցն իւր՝ զԱսմին, և զորդին իւր՝ [զՀ]ոռոփսիմին, որ փոխեալ են առ Քրիստոս. և զեղբօրորդին իւր զԹորոս տիրացու. բարով վայելեսցէ և յերկար ժամանակս՝ մինչև ի խորին ծերութիւն. ամէն։

734
ՄԱՇՏՈՑ
ՁՁՎՍ, III, № 405

Գրիչ՝ Պարսամ երէց
Վայր՝ Թուզ

487 [Աւարտ] եղև գրոցս որ կոչի] Մաշտոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Ի թվականս Հայոց ՌՃ (1651), ընդ հավանեալ և Ս. Երեք մանկանն և այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ։ Գրեցաւ Մաշտոցս ի յերկիրն Դերջան, ի գիւղն Թուզ, յիշատակ ինձ և որդո[յ] իմոյ Գրիգորին, և ծնօղաց իմոց, հօրս Պալէ և մօրս Խաթուշին. և եղբարց իմոց, և քրւերց իմոց, և փոխելոցն առ Քրիստոս, և ամենայն մերձաւորքն իմ։ Ընդ նմին աղաչեմ յիշել ի Տէր զանպիտան գրող սորա զՊարսամս և զուսուցիչն իմ՝ զՄանվել արհեպիսկոպոսն, որ բազում աշխատանք ունի ինձ վերայ. Է (7) տարէս ի վեր պահեց զիս և կարդացուց և աւրհնեց. Աստուած զիւր դատաստան քաղցր առնէ։ Եւ դարձեալ յիշեցէք զԿարապետ վարդապետն, որ աւրինակն ետուր, և զիւր լուսո[յ] եղբարն՝ զՄելքիսեթ վարդապետն, որ նա կամեցաւ. սոքա հեռուս[տ] աշխարհէ էին՝ տուին աւրինակն։ Եւ այս տէր Կարապետս, որ մէկ գեղ կու կենաննք, խնա[յ]ե-

[63] Բ. Սարգիսյանը նշում է, որ տարեթվի հազարավորը չնշված է (էջ 248)։

[ա]ց, չերետ զորինակ իւր, մօտ այլ կար այսպէս Մաշտոց մ'կարծէր թէ ինձ պէս չեղնին կամ թէ եհտաճ մնայ։ Աստուած հեռուստ տեղաց մ'ետուր ինձ, որ իւր մունաթ անդին մնաց, ով հայցէ գտանէ։ Այս օրինակս չկա[յ] դակմա տեղ։

188 Արդ՝ աղաչեմք զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք, որ // հան[դիպիք] սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զսբ. աղաւթս ձեր զՊարսամս, որ անունս կա[յ], գործս՝ ոչ. և զկողակիցս իմ՝ զԵղսիկն, և հոգևոր մայրն իմ՝ զՄայրամն, և զննջեցեալսն իմ՝ հնոց և նորոց, և այլ բարի խրատ տրուաղաց, զՍահակ կրաւ[նաւ]որն, որ է Մշու. ամէն։ Որ առատն է ի տուրս բարեաց, յիշողացդ առ հասարակ ողորմեսցի. ամէն։ Գրիս անմեղադիր, սղալանացս, ով եղբայրք, զի ձմեռ էր և կայր մեր այսչափ էր։ ԻԲ (22) որելոնին (1651)[64] գրեցան սա։ Բաւ է իմաստնոց։

735

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՁՎԼ, № 98 (1339 թ.)

Նվիրատու՝ Վարդան երէց

199 Եւ արդ՝ ես, անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, ...բազմամեղս, սուտանուն Վարգան երէց, և հա[յ]րն իմ՝ զՏէր Գրիգորն, զմա[յ]րն իմ՝ Ն[ա]ղաշ, և զեղբա[յ]րն իմ՝ զՓարաղամ, և զկողակիցն իւր՝ զԹաւրէգ և զորդիքն իւր՝ զտէր Յովանէս, զԱրիսաակէս և զԽլղաթ. յիշեցէք...։

Ես՝ Վարդան երէց և եղբօրորդին իմ՝ Արիսաակէս, և տէր Յովանէս, և որդին իմ՝ Գրիգոր գնեցինք զՇապուն Ներֆին կորին՝ կապիճ ու կէս ցորեն[65], ոխ արարին[ք], որ առու խանելոյ աւրն ուտեն։ [Երբ] ես հողացեալ ի գերեզմանի, երեսս ի գետնի դնի, լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւորիս և կողակցին իմ՝ Ներգիգին, և որդո[յ]ն իմոյ՝ Գրիգորի և իւր որդոյն՝ Շողակաթին, և հանգուցեալ որդոցն՝ Գրիգորին և միւս Գրիգորիսին, և Մարտիրոսին, և դստերաց՝ Հանումին, Նղաշին, Գուլաղոյն, Հռիփսիմին, և ծնաւղաց իմոց՝ տէր Գրիգորին և Նաղաշին, և եղբաւրն իմ՝ Բարաղամին, և որդոյն իւրոյ՝ Արիսաակէսին, և կողակցին՝ Թանումին, և որդւոցն՝ Խլղաթին, Աւետիսին, և հանգուցելոց տէր Յովանէսի, և իւր որդւոյն՝ տէր Յովանէսին, և զմեծ պապն իմ՝ զտէր Մարտիրոս, և զհաւրեղբայրքն իմ՝ զԿարապետն, և զորդին՝ զտէր Սրապիոն, և զտէր Ներսէս, և որդիքն իւր՝ զՄինասն և զտէր Յակովբ և զՄարտիրոս սարկաւագն. և տէր Բաղդասար և զորդիս, և զտէր

200 Սարգիսն, և զորդին իւր՝ զտէր Բաղդասարն, և զԿարա//պետն, և զԿիրակոսն, և զորդիքն՝ զտէր Մարտիրոս, և զՅո[վ]ան էս, և զԼուկաս, և զորդիք իւր տէր Խաչատուր և զՅոհանէս, և քուերքն իմ՝ զՆշխուն, և զՆունուֆարն, և զՄրուաթն, և զԳոհարն և զայրն իւր՝ զՍաեփանոս, և զորդիս

---

64 (22×50)+ 551։

65 Այսինքն մի հողակտոր, ուր կարելի է ցանել կապիճ ու կէս ցորեն։ Թվյալ դեպքում կապիճ ու կէս ցորենը հողի մակերեսի չափ է։

իւր՝ զտէր Մխիթարն, *և* զՕովինարն *և զա[յ]րն իւր՝* Բազէն, *և զեղբաւր որդին՝* զԽլղաթ, *զմիւս* Խլղաթն, *և* զԱրիստակէս, *և* զՅովասափն, *և զեղբաւրն դուստր* զՋանաղէն *և զա(յ)ն իւր՝ զտէր* Յովասափ, *զ[միւս]* Յովասափն *և* զԱրիսաակէս *և* զՎրթանէս։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան առ հասարակ զքահանայք և զժողովուրդ, զմեծ և փոքր, լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Ի թվականիս Հայոց ՌՃ (1651)։ Աստուած աւրհնէ զբոլորն՝ զփոքրն և զմեծն։

736
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏՐՈՒԴ, № 50

Գրիչ՝ Պետրոս սարկաւագ
Վայր՝ Սեբաստիա

44 *Գառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականութեան ՌՃ (1651) ամին, ձեռամբ սուտանուն* Պետրոս *սարկաւագի, ի գաւառն* Սեբասիոյ, *ի վանքն Ս. Հրեշտակապետս, ի յառաջնորդութեան տէր* Պետրոս *կրաւնաւորի։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ, ով մանկունք սբ. եկեղեցւոյ, որ հանդիպիք այս սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք սրտի մտաւք ի յաղաւթս ձեր, զուսուցիչն իմ* զՄարգուանցի *տէր* Անանիայն *և զծնաւղս իմ, զհայրն իմ՝* զՎրդանէս *և զմայրն իմ՝* զԿուլիստան, *և զեղբայրքսն իմ՝* զՎարդարան *և* զԱստուածատուրն, *և զքոյրն իմ՝* զԳաւնար *խաթուն, և զիս զանարժան գրող* զՊետրոս *աղաչեմ յիշել ի Տէր և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. և այլ աղաչեմ զձեզ խոշորութեան և սղալանացս մի՛ մեղադրիք, զի կայր մեր այս է։*

Դարձեալ յիշեցէք ի Տէր զԵաղուպն *և զկողակիցն՝* Շահպոլայն, *և զորդին՝* զԹորիկն, *և զծնաւղսն նորա՝* Յովհաննն *և զմայրն նորա՝* Թուրվանայն։ *Դարձեալ կողակցին մաւրն՝* Եաղուբին, *հաւրն՝* Պակէ, *և ամենայն արեան մերձաւորացն, որ ըստացաւ ի հալալ ընչիցն զսբ. Աւետարանս և եդին յիշատակ ի ձեռն* [Պաղտա]սար *քահանային. չունի ոք իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ կամ ի ձեռաց սորա յափշտակելոյ...։*

737
ՄԱՇՏՈՑ
ՏԵՐԱՎՋ, № 323

Գրիչ՝ Կիրակոս երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

323 *Գառք...։ Արդ՝ գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՌՃ (1651) ժամանակաց, ի հայրապետութեանս Հայոց ազգիս տեառն* Յակոբայ *և առհիեպիսկոպոսութեանն* Դաւիթ *վարդապետի, ի թագաւորութեան Պարսից*

շահ Սլէմանին, ի քաղաքս Ըսպահան, որ կոչի Շօշ, ի գեօղս Ջուղա, ի դուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ սուտանուն և մեղօք ի լի Կիրակոս երիցի, և որ հանդիպիք սմա կարդալու կամ օրինակելոյ, անմեղադիր լեբուք սխալանաց և խոշորանացն, զի կարն այս էր, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

738
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 126

Գրիչ՝ Վարդեր
Վայր՝ Շօշ

174 Փառք...։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ տառապեալ աղախինս ձեր, ո՜վ հոգևոր հարք և եղբարք իմ, մանկունք սբ. յեկեղեցոյ, որք հանդիպիք աստուածաշունչ սբ. Աւետարանիս...[66]։

Կատարեալ ձեռամբ աղախնականիս,
Անուամբ կոչեցեալ Վարդեր անուանիս,
Գրեցաւ Ռ և Ճ (1651) ի թվականիս,
Ի Շաւշ քաղաքի և Ըսպայհանիս։
Դարձեալ աղաչեմ ի հոգայկանիս,
Խոշորութեան գրոյ և սխալութեան բանիս,
Անմեղայդիր լինել կարիս և շանիս,
Դեռ նոր եմ ըսկսեալ ի նաւտար բանիս,
Որ չեմ կատարեալ վարպետութենիս,
Անհաս և խակ եմ արուեստարանիս,
Իմ այս էր կատարեալ բանիս։

Արդ՝ գրեցաւ աստուածայշունչ սբ. Աւետարանս ձեռամբ կուսայկրաւն աղախնուս Վարդիսաթունիս, յիշայտակ ծնողաց իմոց և յամենայն յարեան մերձաւորաց իմոց, հաւրն իմոյ՝ Պետրոս քահանայի և մաւրն իմոյ՝ Ազայմաթին, և քվերն իմոյ՝ Հռէփսիմէին։ Իե (25) ամ յառաջ փոխեալ էին առ Քրիստոս մարն իմ և քուրն իմ, և ես մնացեալ որբ ի մաւրէ, և հայր իմ էղեալ որբ ի հաւրէ, և մայր հաւր իմոյ բաղում աշխատութեամբ և տառապանաւք սնուց զիս, որ ոչ եմ կարող հատուցանելոյ սնուցանողին իմոյմ, որ ըսկսման Աւետարանիս փոխեցաւ առ Քրիստոս, որ էր հեզայհոգի, և եռափափաք սիրով և ցանկութեամբ շանայր տեսանել ի կատարման Աւետարանիս, և ոչ կարաց, այլ փոխեցաւ ի յանանց կեանսն, փոխարէն երախտեաց և աշխատանացն, որ ունէր ի վերայ իմ, վարձն ի Քրիստոսէ առցէ, և արժանի լինի լսել զերանօէտ ձայնին, որ ասէ...։

Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ և ծանուցանեմ, յորժամ կատարեցաւ աստուածայշունչ Աւետարանս ձեռամբ իմով ի դուռն սքանչելայ-

[66] Գովք Աւետարանի։

գործ Ս. Նշանի, ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթուղիկոսի, և վարդապետութեան Սիմէոնի և յառաջնորդութեան Ամենափրկչին, և թագաւորութեան մեծ շահ Աբազի թոռն, փոքրիկ շահ Այբազին, որ ԺԸ (10) ամ էր ի թաղաւորելն սորայ ի վերայ Պարսից, և տառապեալ քրիստոնէիցս և յառաջնորդութեան մարմնաւոր բանի ղխօճայ Յակոբն: ԶՍ. յԱմենայփրկիչ անուն յեկեղեցոյ միայրանքն՝ զտէր Միքէլն, զտէր Պետրոսն, զտէր Սահակն, զտէր Սարգիսն, զերեսփոխան մահդասի Գրիգորն յիշեցէք...

Ո՛վ հոգևոր հայրք իմ և եղբարք, աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ և տրժանաւոր յաղաւթս ձեր, զհայրն իմ մարմնաւոր և յուսուցիչն իմ զհոգևոր՝ զՊետրոս քահանայն և զհայրն իւր՝ զԳրիգորն, և զկողակիցն իւր՝ զխանգատէն, և զորդիսն իւր։

739

ԱՒՏԱՐԱՆ

«Բանիւր Մատենադարանի», № 10

414 Աստուած ողորմի Ուլուխալային համարիչն ժողովրդեան՝ մեծի և փոքրու, առ հասարակ ամենեցուն։ Այս Աւետարանս Համիթ քաղաք ծախ ծդեց տէր Բարսեղ, Ուլուխալայի ժողովուրդ վեր կանկնեցան՝ մեր վանից յիշատակ մեք կառնունք։ Դարձեալ առին ողարկեցին, որ եկս ի Ուլուխալան, տուլվաթվորնին ժողովեցան ի վեց խուռիշ դին տուին, Ս. Մեսրոպայ յիշատակ դրին... թվականս ՌՃ (1651)։

740

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ (1480 թ.)

Կարնոյ գիւղեր, «ՀԱ», 1963, էջ 212—213

Նորոգող, հետ. ստացող՝ Յակոբ Կարնեցի

Այլ և յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին ըստացօղ, նորոգող սբ. գրոցս կեղեցկաշէն մայրաքաղաքիս Արզրումա[յ], զանարժան տէր Յակոբս[87], և զհայրն իմ՝ զաւագ էրէց տէր Գէորքն, և զմայրն իմ՝ զՄանանայն, մամն իմ՝ զնաւրխաթունն, և զտիրացու Մաղաքիայն, քոյրն իմ՝ զԳուլինաւրն, և կողակիցն իմ՝ զՀռիփսիմէն, և նորաբոխբոռ որդիքն մեր՝ զՄկրտիչ սարկաւագն, Սողոմոնն և զՊլուզ Յովանէսն, զՇուշանն և Դըշիւոյ խաթունն, և այլ արեանառու մերձաւորքն մեր։ Յորժամ հանդիպիք այս սրբոցս պատմութեանց՝ կարդալով և կամ հարևանցի տեսնելով, զիս անարժան Յակոբ էրէցս, և մերձաւորքն մեր յիշեսջիք միով Աստուած ողորմի, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ Նորոգեցաւ ի մայրաքաղաքս Կարնոյ, որ ասի Արզրում, ի թվականիս ՌՃ (1651), ի փառս Քրիստոսի Աստուծոյ, մերոյ։

---

87 Հակոբ Կարնեցին է, և յուրայինների անունների մի մասը գտնում ենք իր կողմից գրված հոր կենսագրության մեջ (տե՛ս Մժ, I, էջ 246—249)։

741
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
«Բազմավէպ», 1886 թ., № 31

Գրիչ՝ Սահակ դպիր
Վայր՝ Բերիայ

ա

186 Փառք... զոր և եռափափաք սրտիւ և յօժար կամօք ետ գրել զսա ի հալալ վաստակոց իւրոց, պարկեշտ և աստուածասէր շահընկալն՝ Յուսուֆշայ, խրատով Խաշատուր անուամբ միայն բանասիրի, որ և շնորհիւ Տեառն վերատեսուչ մայրաքաղաքին Հալպայ, և եդ ի Հալապ քաղաքի Ս. Քառասունք եկեղեցին, ձեռամբ նոյն Խաշատուր բանասիրի, յիշատակ իւր և իւր ծնողացն...։

187 Արդ՝ գրեցաւ սա ի քաղաք Բերիայ, ընդ հովանեաւ Ս. // Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացն, ի թվականին Հայոց ՌՃ (1651), ի հայրապետութեան տեառն Ներսէս կաթուղիկոսին, որ յաթոռն Կիլիկիոյ, և Փիլիպպոս կաթողիկոսին, որ ի սբ. Էջմիածին, և յառաջնորդութեան Երուսաղէմայ Աստուածատուր վարդապետին, ձեռամբ յոդնամեղ գրչի Սահակ դպիր, որդւոյ Մելքոն Երիցու։

Կազմող՝ Դանիէլ աբեղայ

բ

Արդ՝ կազմեցաւ սբ. տառս կանոնական ձեռամբ սուտանուն Դանիէլ աբեղի, ի թվին Հայոց ՌՃ (1651), որ եկա գնացի ի սբ. Երուսաղէմ։

742
ԱԻԵՏԱՐԱՆ
«Բազմավէպ», 1950 թ., էջ 272

Ի թուին ՌՃ (1651) առ Թաւրէզ քաղաք, և գերեցաւ սր. Աւետարանս այլազգեաց։ Գնեալ է վերստին խօճա Ադամն, և կազմեալ ափովն և եդ յիշատակ ի դուռն Ս. Սարգսի զօրավարին ի յԱմիք քաղաք... և մարմնով Տէր ողորմեայ յիշել Ծ. ած (sic) ողորմն ասել խօճա Ադամին, և հօրն՝ Պետրոսին, և մօրն՝ Մարիամին, և կողակցուն՝ Մալաքին, և դստերն՝ Հռիփսիմէին, և քւերն ... և Իղաբերին...։

743
ՇԱՐԱԿՆՈՑ
Թեհրան, «ՀԱ», 1953 թ., էջ 107—109

Գրիչ՝ Դաւիթ քահանայ
Վայր՝ Հաղարջրեպոյ

ա

Ո՛վ եղբարք, մանկունք եկեղեցւոյ, յորժամ երգեսս զշարականս և զուարճանաս հոգւով և մարմնով, աղաչեմ զձեզ յիշեա զսուտանուն Դաւիթ քահանայս, որ անուամբ միայն եմ և ոչ գործով...։

Բ

Մեղաւք եղկելիս, ռամիկ և գերիս, անպիտան Դաւիթս աղաչեմ, ո՛վ երգողք, ասել ողորմեա ինձ և ծնողիս տէր Թաքէոսիս, մօրս Հռիփսիմէի, և պապոյն իմոյ՝ տէր Դաւրի. յիշողք՝ յիշեսցի։

Գ

Ո՛վ եղբայրք, երգիչք երգարանիս, յորժամ երգես զշարականս և զուարճանաս հոգւով և մարմնով, յիշեա զանպիտան գրիչս ևեթ և լոկ անուն Դաւիթ երէցս, որ անուամբ միայն եմ և գործով թափուր։ Տրտում անձամբ գրեցի զսա, որ յայսմ ամին, թվին ՌՂԸ (1649)-ին, և ի յիմ մեղացն, Աստուած բարկացաւ և էր մահտարաժամ ի յերկիրս Փարսոյ, Բուրվարոյ ի գիւղն իմ, որ բնակեալ էին Հ (70) տուն, որ և մեռան Ճ և Ծ (150) հոգիք, Ա (1) քահանայ, աշակերտ և ընկերակից մեր, որ և Քրիստոս զիւր մեղքն թողցէ։ Եւ ի յայսմ ամի ընդ նոսա մեռան և որդիքն իմ՝ զաչացս լոյսք, սարկաւագ Ներսէսչանն, և զՎաթանչանն, և նորաբոյս Ոսկանն, և դստերքն իմ՝ Դշխուհին, Ոսկիծաղիկն, որ և տէր Աստուած անթառամ պսակօք պսակէ զամենայն։ Բարերարն Աստուած, ողորմածն, գթածն և դարձեալ ողորմեցաւ և ետ մխիթարութիւն ինձ և կենակցին իմոյ՝ Մարիամին նորընծա տղա...

Դ

Եղբարք անմեղադիր լերուք, զի այս Բ (2) հարցս իւր աւրինակն չկայր, վասն որոյ ի յայս տեղս գրեցան, դու իւր տեղն ասայ և զմեղաւոր Դաւիթս յիշեա...

Ե

Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս շարականաց ի թուականութեան Հայոց ՌՃ (1651), ի յաշխարհիս Պարսից արքայանիստ քաղաքիս Շօշ *կոչեցելոց, ըստ գրոց որ այժմ* Ասպահան *արտաճայնի, ի յերկրիս* Փարսոյ, *ի գեղջիս* Հազարջրեպոյ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի ժամատանս, ի թագաւորութեան փոքր շահ* Ապասին, *և ի դիտաբեռութեան Հայոց հանուրց սեռի տեառն* Փիլիպպոսի *երանեալ հայրապետի, և ի վերատեսչութեան նահանգիս ընդհանուր* Պարսկաստանի *հեզահոգի արքեպիսկոպոսի և շնորհազարդ վարդապետի տեառն* Սիմէոնի։ *Ընդ սրբոյ երշանիկ հարցս մաղթեմ, յիշել զսոսկ ևեթ անուն Դաւիթ քահանայս, որ գծագրեցի զսբ. ծաղկաւէտ բուրաստանս, յիշատակ անշինշ հոգւոյ իմոյ և ուրախութիւն մարմնոյ, և հաւրն իմոյ՝* Թաքէոս *քահանայի, և մաւր իմոյ՝* Հռիփսիմէի, *և կենակցին իմոյ՝* Մարիամին, *և եղբարց իմոյ՝* Աղէքսեանոսին *և կողակցին սորայ՝* Աւդլանփաշէն, *և հանգուցեալ եղբաւրն իմոյ՝* Ներսէսին, *և քուերց ///* Մարիամն, Թագուհին, Եղիսաբէթն *և ուստերքն իմ՝ հանգուցեալ ի Քրիստոս* զՆերսէսչան, Վաթանչան *և* Ոսկանն, *և զդստերքն իմ՝* Դշխուհին, Ոսկեծաղիկն, *և ամենայն արեան մերձաւորացն...*

744
ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 505

Գրիչ՝ Քրիստոսատուր երէց
Վայր՝ Կաֆայ

... սբ. Աւետարանս Ղրիմայեցի տէր Վարդան քահանայն և իւր երեցկնոջն և զաւակացն... ետ յիշատակ ի սբ. յԵրուսաղէմ, ի դրունս դերահրաշ վանուց Ս. Յակոբայ առաքելոյ, անջնջելի յիշատակ։ Արդ՝ դրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Նիկողոսի եկեղեցւոյ, Հայոց թվին ՌՃ (1651), ձեռամբ Քրիստոսատուր երիցու...

745
ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂԻ

Թորոս աղբար, Բ, էջ 418

Ստացող՝ Արիստակէս վարդապետ
Վայր՝ Կ. Պոլիս

Գրեալ ձեռամբ Աստուածատուր երիցու, ի խնդրոյ Արիստակէս վարդապետի, ի թվին Հայոց Ռ ընդ Ճ (1651)-ի, դառն և ի նեղ ժամանակի։, ի Պաւլիս, ի դուռն Ս. Սարգսի զաւրավարին, ի հայրապետութեան մերոյ տեառն Փիլիպպոսի։

Ես՝ Արիստակէս վարդապետս ետու դրել զգիրքս յիշատակ ինձ և ծնողաց... և ետու ի վանքն Դաաեմու[58] Ս. Աստուածածնի։

746
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Թորոս աղբար, Բ, էջ 398—404

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Կ. Պոլիս

...Արդ՝ այսպիսի սխրամեծար անաւթոյս գտաւ ցանկացող այրս այս՝ մահդասի Ամբակումս, որ և զպատճառն ևս համառաւտեցից ի լսելիս քաշ արանց քրիստոսասիրացդ. քանզի զաղէտ և չուառութիւն ազգիս մեր զկարճիլն արժան վարկայ, և զսոսկ լուրն անգամ անխայեալ ի զրաւ բանիս արագեցից. և սոսկամ զի մի քամաւրէն՝ զառականս, այսինքն է, զպարսաւ հարց յաճախեալ, ըստ Քանանու ընկալայց. բայց ոչ գոյ հնար զանց առնել, զի թէ զմերս [գերան] թագուցեալ՝ զշեղս աւտարաց զննեցից, նաևս կարի յիմարութիւն է։ Այլ ի դէպ իսկ եկն բան մարգարէին ի վերայ մեր, թէ հատեալ և սպառեալ է ուրախութիւն յիսրայէլի, և բարձեալ ցնծութիւն Յակոբայ. զի զաւրացեալ է խարդախութիւն սկզբնաչարին, և տեղի տուեալ ճշմարտութեան բան։ Եւ պատճառ կականիս հառաչանացս այժմեան ժամանակիս մարմնասէր և փառամոլ առաշնորդ անուանեալքն, որ ոչ խնայելով ի գառինս, այլ դուն գործեալ միշտ ի փողոտել արագեն։ Եւ ևս այսմ արքայանիս մայրաքաղքիս

[58] Հայաբնակ գյուղ Խարբերդում։

պատրիշ պատրիարգունք անուանեալքն, յաճախեալ ի շարիս, թողլով զփառս զառի միոյն Աստուծոյ, և ... ուսան զգործս... կաշառաւք և տոկոսիւք խլել յիրերաց [զպաշտօն] և աւր ըստ աւրէ յաւելուլ զդիմոսական հարկն՝ այնչափ եղև, որ եկեղեցիք սբ. մայրաքաղաքիս յետին չուառութիւն հասեալ, ի տանց և յիշատակաց ի զարդուց և յայլ զգեստուց կողոպտեալ, և պարտք պատրիարքարանին մինչ ՁՌ (80.000) դուրուշն հասեալ. այնչափ ատելի և գարշ գտան ի տեսիլ ռամկին, որ մինչ առ կայսրն բողոք կալեալ, և զմիտս թագաւորին հաճեցեալ խէթթի շէրիֆ ընկալան, թէ ամենեին... անուն ոչ պատրիկ լիցի և ոչ ի քաղաքս անգամ մտցէ. և յաւելաւ վէր ի վերայ վիրի, և դառնութիւն ի վերայ դառնութեանց. զի աշխարհ ամենայն ի լիութեան և ի ճեմ Աստուծոյ բանին լրութեան [էր]։ Եւ քաղաքս այս միայն որպէս ի հնումն Սամարիա խալամի իշոյ և ծրտից աղաւնեաց կարաւտացաք... ոչ սով հացի կամ ծարաւ շրոյ, այլ սով ոչ լսելոյ զբանն Աստուծոյ։ Ամենայն ազգաց ծաղր և կատակ գտաք մինչ ի գալուստ սբ. Երուսաղէմայ հայրապետին, վարդապետին Աստուածատրոյ, որ է յաշակերտաց տեառն Պետրոսի Կուկառեցւոյ կաթողիկոսի Կիլիկիոյ։ Եւ էր այրս այս սբ. և առաքինի, ընտիր և պահեցող, ամենեին յար և նման սբ. հայրապետին Գրիգորի փոխեցելոյն ի Քրիստոս, որ և բազմաց ընտրութեամբ եղև զկնի յաջորդ և արժանահաւատ սբ. աթոռոյ և փառաց նորին։ Եւ ի գալ վարդապետիս բացաւ դուռն քարոզութեան սբ. Աւետարանին. և ըստ աւանդութեան նախնեաց, որ է քրիստոսական սբ. հրաման, երագեցին վարդապետք յարևելից և յարևմտից առ ի ոռոգել զերաշտացեալ և զպասքեալ զանդաստան մերս բանականութեան։

Ի սոյն ժամու եղև գալուստ Եղիազար վարդապետին ի քաղաքս Ստամբուլ, և էր վարդապետս այս ի բնիկ գաւառէն Արաբիոյ՝ Հոովմկլայ. և ի մանկութենէ թողեալ զհայրենիս և զծնողս, և յարեալ ի ծառայութիւն վարդապետաց, և սիրող գտեալ բանի սբ. գրոց ի յուսմանց, և վարժեալ առ ոտս Յոհաննէս վարդապետի Շեֆշեցւոյ, որ և նա ևս էր յաշակերտաց տէր Պետրոսի կաթողիկոսի Կառկառեցւոյ, և վարժապետ Աստուածատուր վարդապետին Երուսաղէմացւոյ։ Եւ վարդապետս այս՝ Եղիազար, ի թվին Ռ և Ղ (1641)-երորդի ընկալեալ զպատիւ վարդապետին ի վարժապետէն Յովանեսիսէ և շրջեալ ի բազում քաղաքս և ի տեղիս, մինչ զի համբաւեցաւ լուր վարդապետիս ընդ ամենայն երկիր և մեծ անուն և փառք ստացեալ եղև. և ի ՌՂԶ (1647) թվին կոչեցեալ եղև յառաջնորդութիւն սբ. ուխտին Արղնոյ բարձրահայեաց Ս. Աստուածածնին և առեալ զաստիճան եպիսկոպոսութեան ի սբ. Էջմիածնայ կաթողիկոս տէր Փիլիպպոսէ սքանչելագործոյ, և դարձեալ յաթոռն իւր արար բազում քաջութիւն ի շինութիւն պարագայցն և մենաստան ի սբ. ուխտին, որ ի բազում ժամանակաց, և տեղւոյն սառնապատութեան սակի բոլոր և հասարակ շինութեան և նորոգման էր կարաւտացեալ. նաև ի ներքուստ և արտաքուստ՝ թէ՛ կարգաւորաւք և թէ՛ անդադար պաշտաւն և սաղմոսերգութեամբ, և թէ՛ ընթերցմամբ, և թէ՛ մատենից ճոխութեամբ մինչ կըրկին Աստուածաշունչիւ և Ճ (100) և աւելի գրքիւ պերճացոյց զաթոռ իւր սրբութեամբ։ Նաև Ռ և Ճ (1651) թուականիս մեր ի գալ վարդապետին ի

քաղաքս այս Ստամբուլ, յոյժ հռչակեալ գովեցաւ քաղցրաբան վարդապետութիւն և անձանձիր քարոզութիւն և գեղեցիկ ըստ Աստուծոյ քաղաքավարութիւն վարդապետիս. մինչ ղի հաղկեալ, յիշխանաց և ի ռամկաց նաև յայլազգի երևելեաց քաղաքիս բռնութենէ՝ տարի և կէս ի պատիւ պատրիարքութեան հոգ և որ առաջնորդ եկաց ի քաղաքս, և զբազում պէսպէս եղծեալ և ապականեալ զկարգ եկեղեցւոյն վերստին պայծառացոյց. ընդ նմին և զպարտք պատրիարքարանին. և այլ նորագիւտ չարիք, որ ի վերայ ժողովրդեան և եկեղեցւոյն ի բաց բարձան յաւուրս առաջնորդութեան վարդապետիս, և համոզեալ զամենեսեան պահեաց խաղաղութեամբ ոչ կարաւտացեալ այլազգեաց հրամանի կամ իշխանութեան, այլ իւրովի կարողութեամբ և հանճարովն վարէր զամենայն, այսքան սիրեցեալ եղև ի բազմաց։ Եւ մեք Ս. Սարգիս եկեղեցւոյս տէր Մարտիրոս և տէր Ովանէս քահանայքս, որ միջնորդ և սպասաւոր եղաք սբ. Յայսմաւուրք գրոցս, հարեալ էաք ի սէր վարդապետիս, և միշտ ընդ նմա շրջէաք զցայգ և զցերեկ անանջատ կալով յեկեղեցական և յայլ ծառայական գործս։

Դարձցուք ի յոճ գրոյս։ Մինչ վարդապետս ի գործ քաղաքիս պարապեալ կայր, եկն դիր ի դրանէ Բարձրահայեաց Ս. Աստուածածնին, յորում գրեալ իսկ էր պատճէնս այս. «Լուսապաճոյճ և ի գերահռչակ Տալիթայէդ հովանաւոցի շնորհք, սէր և հանապազեայ խնամ անխիղ միացելոյդ, իսկապէս խոստովանող և ջատագով ճշմարտութեան և կարկիչ ներհակաց, և առաքելաշնորհ և մեծանուն վերատեսուչ բոլոր Միջագետացս. յոլովագութ և բազմերախտ, հոգեպէս և մարմնաւորապէս այցելու տեառնդ մերոյ, Եղիազար, պետաց պետ։ Ընդ որոյ և լուր սակս նորահրաշ սքանչելեացս, որ ի խնամոյն Աստուծոյ գործեցաւ ի սբ. քաւարանս, զոր ոչ քան զերեկն և զեռանդն կամ հերուն պատմութեանցն լուաք, լոյսն զարմանազան, որ ոչ բաւեն բերանք մեր ճառել զիսկն, իբրև զվրան քաւեալ էր զբոլոր պարսպաւն նաև սփռեալ ընդ յատակս և փարէր զանձամբ անարժանիցն, և գլուխք մեր դիզացեալ էին լի լուսով. նաև նորէր ի մէնջ իբրև ի զամբարէ հատեալ, կարծելով զմեզ ի վառարանի ըստ մորենւոյն՝ և էաք անկէզ։ Եւ ոչ թէ շեշտ էանց տեսիլն, այլ յառաջին նուագին սովորութեան ժամուն [ժամերգութեան], որ ազգ եղև մեզ ի ձեռն լուսարարին, մինչև ի ծագեալ արփւոյն. զի կարգ արարաք մեզ մերթ ի տեսիլն և մերթ ի ժամ։ Պատկերն աւուրն երեքշաբթի, ապրիլ ԺԵ (15)...։

[Զայս հրաշս] ի լուր աւետաւորեաց [Եղիազար վարդապետն ի մայրաքաղաքիս]. և հասարակ քաղաքացւոցս եղև ուրախութիւն ոչ սակաւ. և բազումք պէսպէս ուխտ եդին և սէր ընկալան յանձինս. ընդ բազմաց և այրս այս մահտեսի Ամբակումս եռափափագ տենչմամբ և յուսով, ի հեռաստանէ իբր առընթեր երկիրեպարգ զգետնի. և խոստացաւ ի հալալ վաստակոցն ստանալ զսբ. Յայսմաւուրքս և տալ ի դուռն Ս. Բարձրահայեաց Աստուածածնին, զոր ինքն տէր մէր Յիսուս Քրիստոս ի հաճոյս իւր ընկալցի. ընդ յիշատակս սրբոց և զյիշատակագիր մահտեսի Ամբակումիս ի գիրս կենաց գրեսցէ հանդերձ սխրալի հոգևոր որդւովն իւրով և ժառանգիւ մահտեսի Երեմիա դպրիւս։ Քանզի մահտասի Ամբա-

կումս բարեմիտ և հաւատարիմ այրս էր ի բնիկ յԱկնայ ձորակէն, ի գեղջէն որում Նավրէր կոչիւր, ի մանկութենէ որբացեալ ի ծնողաց, որոց տէր Քրիստոս ողորմեսցի, և յաղագս անճարակութեան և աղքատութեան եկեալ ի քաղաքս Ստամբուլ, և բաղում վշտաց և տառապանաց տարեալ, ի գործս հացեփեցութեան աւտարաց ծառայելով, մինչ յարբունս ի կարգ աշխարհիս ամուսնացեալ. և այլ իմիք ոչ կարաւտացաւ, բայց յանզաւակութենէ, զի հաւատամ, որ Աստուած էր վերակացու տան սորա ըստ Աբրահամու, զի ձրի ընկալեալ և ձրի շնորհէր եկեղեցեաց, վանաւրէից, աղքատաց և կարաւտելոց, զոր և տէրն ամենայնի ընկալցի։ Եւ զհարազատ քեռն իւրոյ զգուստրն ետ ինձ՝ Մարտիրոս երէցիս հրամանաւն Աստուծոյ ի կնութիւն. և մեր անարժանութիւն քահանայութեան ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ձեռամբ Գրիգորի սբ. հայրապետին փոխեցելոյն առ Քրիստոս, մահտասի հայրս ինքն եղև [պատճառ]. որոյ մասն շնորհեաց հոգեպէս յինքն կրեսցէ. ամէն։ Նաև զանդրանիկ որդեակն իմ, մերս յաւժարութեամբ, զԵրեմիա դպիրս, շնորհեալ եմք ինքեան որդեկութեան. կելով կեցցեն և խաղաղութեամբ և աւրհնութեամբ ուրախասցին ի վերայ իրերաց. ամէն։

Արդ՝ գրեցաւ սբ. և սրբոց ճեմարան Յայսմաւուրս ի մեծապանծ և ի բարձրափառ, ի ծովապատ և յարքայագահ քաղաքն Կոստանդնուպալիս, ի դուռն Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի թվին ՌՃ (1651) ... ի սոյն ամի լրացելոյ, ձեռամբ սուտանուն և մեղսամած Յովանէս գրչի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի արժանապէս բազմեցելոյն ի յաթոռ ամենայն Հայոց կաթողիկոսի, և ի թագաւորութեան Տաճկաց իսմայէլացւոց ի քաղաքիս սուլթան Մէհմէտին...: Ահա յայսպիսի դառն և դժնեայ և յոյժ անբարի ժամանակիս եղև աւարտ սբ. դրոյս մեծաւ շանիւ և բաղում աշխատութեամբ, վասն որոյ կրկին թախանձանաք և սեռն սիրով և հաւատով յերեսս անկեալ աղաչեմ զմանկունսդ սբ. Սիոնի զվայելողքսդ սմին, զի պահեսջիք զսա խնամով և բարւոք պատրաստութեամբ, թէ ի մոմէ և թէ [ի] գիջութենէ, և յայլ ինչ ներհակաց։

747

ՇԱՐԱԿՆՈՑ

ՁՁՄՆՍ, № 171

Ստացող՝ Մարկոս կրօնաւոր

Վայր՝ Յագուլիս

ա

748 Արդ՝ յիշեցէք, ով սբ. հարք և եղբարք, զմեղաւոր և զանարժան Մարկոս անուամբ կրօնաւորս և ծնողքն իմ՝ Փուլին և Գուլբաշնաւղէն, և եղբարքն իմ՝ Պետրոսն և Ալէքսանոսն, և քէոքն իմ՝ Փարին, և Գիրումն, և Մարգարիտն, Խաթունն և Եղիսաբէթն, նաև հօրեղբայրն իմ՝ Էվօղլին, և կողակիցն իւր՝ Մարին, և որդիքն իւր՝ Մալումն և Յովանէսն, և դուստրն իւր՝ Խանումն, և ամենայն արեան մերձաւորքն մեր յիշեցէք...։ Արդ՝ աղաչեմ զձեզ՝ որդեակս, խնամով պահէք, ով ոք զսա խընամով պահէ՝

Աստուած զինքն օրհնէ։ Ով ոք որ զՇարակնոցս այս յանապատէս հեռացուցանէ և ի Հոգւոյն Սրբոյ նզովեալ եղիցի։

Բ

Ով իմ Յիսուս Տէրդ ամենի,

. . . . . .

Յայսմ գրոցս ստացողի,
Զէր Մարկոս կրօնաւորի,
Եւ ծնօղացն իմում բարի։

Գ

749 Արդ՝ սրբազան դասք կրօնաւորաց և քահանայից և սարկաւագաց և մանկունք եկեղեցւոյ, յիշե[ս]ցէք զմեղաւոր և մեղսասէր և անարժան Մարկոս կրօնաւորս, որ ձևովս միայն եմ կրօնաւոր և գործովս ոչ, որ բազում փափագանօք ստացա զՇարակնոցս զայս, յիշատակ իմ և իմ ծնօղացն, և հօրն իմոյ՝ Փրկին...[69]։

Դ

. . . . . .

749 Ինձ ողորմեա քո ծառայի,
Այսմ գրոցս ստացողի,
Զտէր Մարկոս կրօնաւորի,
Եւ ծնօղաց նորա բարի։

Ով սիրելի եղբարք, ով ոք որ այսմ յիշատակարաններիս վնաս գործէ՝ նզովեալ եղիցի. ամէն, եղիցի եղիցի։

Ե

746 Յամի հազարերորդի վեցհարիւրորդի յիսներորդի երկրորդի թուահաշուութեան ըստ մեզ մարմնացելոյ բանին Աստուծոյ, և ի հազարերորդի հարիւրերորդի (1651) թուականութեանս արմենս ազին ըստ արեգական բերմանց։ Եւ ի հայրապետութեան հայկական զարմից տեառն Փիլիպոսի
747 երիցս // երանեալ և խստաճգուն կաթողիկոսին, նստողին յամենագով և երկնանման յաթոռ Լուսաւորչի զբնաւս Էջմիածնի, որ յԱրարատեան նահանգին[70]։ Եւ ի թագաւորութեան պարսից շահ Ապասին[71] երկրորդի։ Նաև յառաջնորդութեան տանս Գողթան՝ երշանկացելոյն ի համայնս՝ տեառն Խաչատրոյ յառաջնորդութիւն Ս. առաքելոյն Թումայի, որ յաստուծապահ գիւղաքաղաքն Յագուլիս։

Ես՝ ետնեալս ամենայնի Մարկոս, գոլով անուամբ և ձևով միայն կրօնաւոր, շնորհօք և մարդասիրութեամբ Փրկչին մերոյ... ստացայ ըզսբ. տառգիրքս, որ ասի Շարակնոց, ամենայն տեղի և ժողովարան շարեալ ականց փարթամութիւն աղքատութեան իմոյ և յուրախութիւն տրտմութիւն իմոյ, ի կարօտութենէ մտացս...։ Վասն որոյ և ետու ծաղ-

---

69 Գրչի անունը չի գրված, թեև մի շարք հիշատակարաններում թվում է հարազատների անուն, ոչ թե «իմ», այլ «նորա» կամ «իւր»։ Կրկնելու պատճառով չվերցրինք։

70 Ձեռագրում գրված է «հանագին» ձևով։

71 Ձեռագրում՝ «Շահապասին» ձևով։

կել անկ և ոսկեաւ պաճուճել ի հրճուանս մանկանց Սիոնի, և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Փուլոյն և մօրն իմոյ՝ Գուլպանաւշին, և եղբարցն իմոց՝ Պետրոսին և Ալիքսիանոսին, նաև քերցն իմոց՝ Փարոյն, Գերումին և Մարգարտին, և հօրեղբորն՝ Աւոլլին և կողակիցն՝ Մարիանին, և որդոցն՝ Յովանիսին, Մալումին, և դստերն՝ Խանումին: Զոր և ես բազում <ես> արտասուալի աչօք և <կո> տէր յաղօթս ձեր որ առ Աստուած։ Եւ պաղատանօք և սիրով աղաչեմ յիշել կողկողագին[72] սրտիւ հայցեմ ի ձէնջ, որ հանդիպիք սմա և վայելիցէք ընթեռնլով և կամ օրինակելով, խնամով պահել... և խնդրել զթողութիւն մեղաց իմոց և ամենայն ազգականաց...։

Ծաղկող՝ Հայրապետ

Գ

748 Զ Հայրապետ նկարօղս յիշեսջիք։

[72] Ձեռագրում՝ «փղկողագին» ձևով։

748
ԱՂՕԹԱԳԻՐՔ
Թ8ԱՎ, № 222

447 Փառք..., որ ետ կարողութիւն... յաւարտել, որ կոչի տառս Կիպրիանոս, թվականութեանս ՌՃԱ (1652), ի մարտի ամսոյ Դ (4), օրն հինգշաբթի, ի դուռն Ս. Սարգսի զօրավարին...։

749
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 10210

Գրիչ՝ Ենեֆրամ
Վայր՝ Երուսաղէմ

ա

297ա Ես՝ անարժան և անպիտան ծառայս Ենեֆրամ[1] ցանկացող եղէ այս փոքր, գեղեցիկ բանիցս և սկսայ զսա գրել ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի թվին Հայոց ՌՂ և Ը (1649)-ին, և աւարտեցաւ օգնականութեամբն Աստուծոյ ի թվին ՌՃ և Ա (1652)-ին, և մարտի ամսոյ ԺԸ (18)-ին, ի մուտ ատեան գարնանային, ե յօր ստեղծման նախահօրն։ Բայց աղաչեմ զտեսող բանիցս և զհանդիպողդ կամ զտեսանողդ հա-
297բ ր և ա ն ց ի զսայ ի դիպող ժամանակի անմե//ղադիր լինել և թողութիւն շնորհել սակս զանազանութեան գրոյս մանրութեան և կամ խոշորութեան, զի ի հասակի փոքրութեան և ի ժամանակի անվարժութեան գծեցաւ. և յիշել զմեղաւորս մի Հայր մերիւ և ողորմեայիւ, զի և ինքն ողորմեսցի մեզ ե ձեզ յիւր միւսանգամ գալստեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

բ

298ա Զայս երկրորդ գիր ստացեալ եղէ անարժան մատամբ իմով ի տասներորդի և երկրորդի ամի կենաց իմոց, նախ՝ սաղմոս և ապա այսմ ցանկացեալ եղէ և գրեցի, սկսեալ ի սբ. քաղաքն Երուսաղէմ զԱղօթս պատարագին և զՏնօրինականսն, իսկ զՏեսիլն տէր Աւագ աբեղայն գրե-

[1] Ծածկագիրը կարդացվում է Ենեֆրամ։

աց՝ պարգևս ինձ, յիշեցէք ի Քրիստոս և ղնայ և զայլն իմ աւարտմամբ ի թվականիս ՌՃԱ (1652), որ ԺԶ (16) տարոյ էի։

750

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 127 (ԺԵ դ.)

Հետ. ստացող՝ Միրզավալի

ա

176 *Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զ·ոացող սբ. Աւետարանիս զբարեմիտ և զհեզահոգի, աստուածասէր քրիստոնեան* Միրզավալին, *անշինչ յիշատակ եղիցի իւրն և կողակցին՝* Մարզարիթին, Տէրոնին, Գայեանէ, Վարթիկին, Հաւրվալաքին[2], Առաքելին, Աւետիքին, Պետրոսին, Աստուածատրին, Ղարիպջանին, Յակոբջանին, Սաքաիւին, Թազուհէ *և* Դունեաջավարին *և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

բ

*Արք՝ և ես երես անկեալ աղաչեմ զ*Միրզայվալիս *առ հայրտ և եղբայրքտ իմ, որ գնեցի զսբ. Աւետարանս զհալալ վաստակոց իմոց։ Կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զիս և զծնօղս իմ՝ հայրս* Տիրատուրն *և զմայրն իմ՝* Ամամվաշէն, *և հանգուցեալ եղբայրն՝* Մալիքն, Մալիք[ի] *կողակիցն՝* Խանփարվարն, *դուստրն՝* Շուշանն, *յիշեցէք...*

Ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652) շամս ամսին ԺԱ (11)[3] գրվեցաւ. ամէն։

751

ԱԻԵՏԱՐԱՆ

Արցախ, էջ 282

Գրիչ՝ Յակոբ քահանայ

Վայր՝ Մէլիքզատայ

Ի ՌՃԱ (1652) թուականիս Հայոց և ի յամսեանն մարտի ի Ա (1)[4], աղուհացից պահոց առաջին շաբաթին, երկուշաբաթ օրն, եղև սկիզբն գրութեան սբ. Աւետարանիս և կատարեցաւ ապրիլ ամսոյ ԺԵ (15), յաւուր մեծի հինգշաբթին[5]...։ Արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Զակամ, ի գիւղս Մէլիքզատայ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Թովմայ և այլ Ա. Նահատակի, որ աստ է, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի* Յակոբայ *յետնեալ քահանայի։*

---

[2] *Տպված է «հաւր Վալաթին» ձևով։*

[3] *Այսինքն՝ մարտի 31-ին։*

[4] *Տպված է «մարտի ԻԱ»։ Ս. Բարխուդարյանցը ճիշտ կերպով այդ համարելով սխալ, ցույց է տալիս, որ պետք է լինի «մարտի ի Ա» (տե՛ս Արցախ, էջ 282, ծանոթ. 1)։ Եվ իրոք, 1652 թ. մարտի 1-ը երկուշաբթի է։*

[5] *1652 թ. Զատիկը կլինի ապրիլի 18-ին, հետևապես ապրիլի 15-ն իրոք հինգշաբթի է։*

752

ՄԱՇՏՈՑ

Մեշեկ, VIII, № 2455

Գրիչ՝ Արիստակէս Ակրնցի
Վայր՝ Կ. Պոլիս

117 *Փառք...։ Արդ՝ ի յաւարտ հասանել տրչութեան Հոգոյն Արբոյ գրոցս, որ կոչի Մաշտոց, զի սայ է մայր հաւատոց...։*

Որ և փափագող եղև սորին Սաեփանոս *երէցն և իւր կողակից՝ իրիցկին* Մելիքն, *և իւր որդոցն՝* Ներսէսին, *տէր* Մովսէսին, Ղազարին *և նորին դստերացն՝* Ղաթունփաշին, Ղանփաշին, *այլև ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց, որք փոխեալ են ի Քրիստոս յոյսն ամենեցու[ն]։*

Այլև գրչի սորին անիմաս[տ] Արիստակէս *երիցուս, որ է ի գեղջէն* Ակրնցի, *և բնակութիւն այժմուս ի մայրաքաղաքն ի* Կոստանդինուպոլիս, *ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի, ի թաղն* Պալաթու, *ի թվականի հայոց ՌՃԱ (1652), ապրելի Բ (2), քառասնորդաց պահոց հինգ շաբաթուն, ուրբաթի։*

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի սբ. աղօթս ձեր և մեղաց թողութիւն խնդրել յիշատակ գնողացս, և գրի գրող գրչի սորին...։

753

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5909 (1626 թ.)

Գրիչ՝ Դաւիթ սարկաւագ
Վայր՝ Զամօսցայ

ա

75ա *Յիշեա տէր զԴաւիթ։*

բ

76բ *Թվին ՌՃԱ (1652), օրն Զատկին չորեքշաբթի, ես՝ Դաւիթ սարկաւագս գրեցի զիմ ձեռօքս*[6], *ողորմած հոգի* Գասպարին *որդին. ամէն։ Զայս գիրս գրեցի ի* Զամօսցայ *քաղաքն, որ եկայ տէր* Անդրէասս *եպիսկոպոսին յետ. ամէն*[7]։

754

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1960 թ., ե, № 105 (1468 թ.)

Ծաղկող՝ տիրացու Յովակիմ

59 *Յիշատակ է սբ. Կարմիր Աւետարանս տէր* Սարգսին, *և ծնողաց իւրոց* Հռումին, *և որդիք նորին տէր* Ավետիսին, *և ծաղկեալ որդիք նորին*

---

[6] *Այս բառը գրված է հապավված «չչփ» ձևով։ 1652 թ. Զատիկը կլինի ապրիլի 18-ին, Զատկի չորեքշաբթին՝ ապրիլի 21-ին։*

[7] *Խոսքը վերաբերում է ոչ թե ձեռագրի, այլ 75 և 76 թերթերի գրելուն։*

60 Յովա//գիմին, Եսային, Ղուկասին, և ծնօղն իւր՝ Խաքունին, և տուստրն՝ Ռեանին, Գուլենեանին, Սառիկին, և հանգուցեալ եղբայրն իւր՝ դիրայցու Յարութիւնին, դիրայցու Եսային, և նորապողպոշ Դանիէլին, որ տղայական հասակաւ առ Աստուած փոխեցաւ...

Ես՝ անարժան դիրայցու Յովայգիմս նկարեցի. թվին ՌՃ մէկին (1652) ամսեայն մայիսի Ի (20)-ումն ղրեցաւ։

755

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7630 (1329 թ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց

ա

՝ 252բ Գրիգոր էրէց[ս] ծառայ սբ. Աւետարանիս, թվիս ՌՃ (1651) էր որ խիստ ցեղուցեղ բաներ եղաւ Կաֆայ: Աստուած փրկէ ի փորձանաց ըղքրիստոնեայքն ի մեղաց [և] զեղ[կ]ելի մեղաւորս ի մեղաց. ամէն։

բ

322բ թվին ՌՃԱ (1652) մեծ անձրև ելաւ ի մայիսին ԻԴ (24)։ Ի տաճարն Ս. Յոհանիսին այս սբ. Յաւետարանս ի կաթելքին ի տակն մնաց։ Ամէն ի շրշայպատ չուր էր անցել։ Ետու ես՝ մեղաւոր և հողոյ հաւասար Գրիգոր էրէցս Աստուծոյ կարող զաւրութեամբն պէտարաք, այսչափ լեքէս մնաց ի լուսացքն. վասն իմ ծովացեալ մեղացն եղբարք...։

756

ԱԻԵՏԱՐԱՆ

Մ8260, V, № 1515

Գրիչ՝ Ներսէս դպիր

258 Կամաւ Հօր..., յանդ ելեալ աւարտեցաւ սբ. Աւետարանս, ձեռամբ յոգնամեղ և փծոյն գրչի Ներսէս անարժան դպրի, որ վարանեալ և տատանեալ կա ի յօտար երկրի. ի թվականիս Հայոց ազգի ՌՃ և Ա (1652) ամին, յունիս ամսոյ Ժ և մէկին (11)։

757

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 9367 (ԺԴ դ.)

ա

11բ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Կարկարցի մահդասի Եղիային, որ ետ զՇարակնոցս և զՍաղմոսարանս յիշատակ Ուռդիշու եկեղեցին, ի դուռն Ս. Մինասայ, յիշատակ իւր և իւր ծնօղացն, հօրն՝ Միխիթարին և մօրն՝ Խաքունին, և իւր որդոյն՝ Նիկողոսին, և իւր կողակցուն՝ Նազլուն, Աստուած ողորմի ասացէք։ Ո՞վ լոյսերամբ քահանայք, որչափ որ իմ եղբօրն որդոց որդիք լինայ և կարդացողք լինայ, նա զայս Շարակնոցս

և զՍաղմոսարանս վայելեն. և յետ նորա յիշատակ լինայ Ս. Մինասայ եկեղեցոյն։ Ապա չունի ոք իշխանութիւն կամ ծախելով կամ գրաւ գնելով կամ ի Ս. Մինասայ եկեղեցոյն հեռացուցանելով՝ նա զպատիժն ի յԱստուծոյ առցէ և զմասն ընդ Յուդայի առցէ և զանէծքն նախ ի յԱստուծոյ և ի ԻԴ (24) մարգարէիցն և երկոտասան առաքելոցն և ի ԳՃ և ի ԻԸ (328) հայրապետացն ի ներքոյ բանիւ սոցա եղիցի։

Ի թվին ՌՃԱ (1652) ամին, ի օգոստոսի ԺԵ (15), ի ժամանակն Իփշիր փաշային, որ այսմ ամի Հալպայ տէր է։ Եւ լաւ պահողն աւրենի Աստուծոյ[8]։

Նորոգող՝ Աստուածատուր քահանայ

բ

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ լոյսերամբ քահանայք, յիշեցէք զվերջի նորոգաւղ Շարակնոցիս զԱստուածատուր անուամբ ԼԷԹ քահանայի։ Նորոգաւղն յամենայնի փրկիչն Քրիստոս ի միանգամ գալըստեանն նորոգեսցէ զձեզ, և զմեզ, և զամենայն հաւատացեալսն. ամէն։

758
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1669

Գրիչ՝ Յովասափ

ա

37ա Նայև Յովասափ փծուն գծողիս և Քրիստոսի յԱստուծոյն մերոյ փառք յաւիտեանս. ամէն։

բ

71բ Այս եղև[9] ի թվականութեանս Հայոց ՌՃ և Ա (1652) յօգոստոսի ամսոյի Ի (20), ի կաթողիկոսութեանն տեառն Փիլիպոսի, որ ի բարձրագահ աթոռն սր. էջմիածնին, յորոց .բարեյիշատակութեամբն ողորմեսցի Քրիստոս յամենայն հաւատացելոց իւրոց, մանաւանդ զգծողի տառիս և լսողացդ. ամէն։

— 759 —
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Երևան, № 1502

Գրիչ՝ Քրիստոստուր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

6ա Որ ողորմի ստացողի գրոցս Խաչատուր երիցու և ծնօղացն՝ մահտեսի Սատաղային և Կուլաղային, և կողակցին՝ Գոհարին, և որդւոցն՝ Թորոսին, Յովհաննէսին և Ստեփաննոսին։

---

[8] Նույն էջի ձախ լուսանցքում գրված է. «սրգա (հապաված—Վ. Հ.) քանի որ որդոցա որդիքն կենդանի լինաք սախըն <սախըն> սորա վնաս չի լինա» հատվածը, բայց թե այն հիշատակարանի որ մասում պետք է դնել, չի նշված։

[9] Ձեռագրի 66ա—71բ էջերում գտնվում է ոմն Խաչատուրի նահատակության պատմությունը։ Խոսքն այդ մասին է։

Բ

7բ Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Յովանէս երիցուն և ծնողացն՝ Պալէին և Ոսկէնուտին, և կողակցին՝ Մարիամին, և դստերն՝ Սուլթանին և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողաց և լսողաց։

Գ

8բ Ողորմեա ստացաւղի գրոցս Մարտիրոս իրիցուն և կողակցին իւր, և ծնողացն Նահապետին և Տունեային, և նախնեաց նորին Սարգսին և Առաքելին և կողակցաց նոցին և դստերացն[10]։

Դ

40ա Զի ե ինձ եղկելոյս և մեղսամած գծողի և ստացողի գրոցս Մարտիրոս իրիցուն և կողակցին իւր, և ծնաւղացն՝ Նահապետին և Տունեային, քեռն՝ Մարթային և առն իւրում՝ Մուրատին, մահդեսի Ամբակումին, ե կնոջն՝ Փաշուկին, հօրեղբարցն՝ Ալէքսիանոսին, Մուրատին և Տատուրին, մօրեղբարցն՝ Շարաֆին և Մուրատին և մեղսամած գրչիս՝ Քրիստոսատուրիս կարդացողաց և լսողաց։

Ե

85ա Սրբոյն Գրիգորի բարեխօսութեամբ ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի դրոցս Յովանէս երիցուն և ծնողացն՝ Պալէ և Ոսկիին, կողակցին՝ Մարիամին, և դստերցն՝ Սուլթանին և Աննային, և պապուն՝ մահդասի Թորոսին և մամուն՝ Տուվաթին, հօրեղբօրն՝ Յոհանիսին, և հօրքուերն՝ Մարգարտին, և եղբարցն՝ Մարտիրոսին, Կարապետին և Սարգսին, և քրւերցն՝ Մարիամին, և Լուսիկին, և Պահրիկին, և Ոսկէ, ծնողացն՝ Տատուրին և Մարգրտին, և պապուն՝ տէր Յովանիսին, և կողակցին, ծնողացն՝ տէր Մինասին և Զոհալին, և եղբօրն՝ Նիկողոսին և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողաց և լսողաց։

Զ

186ա Բարեխօսութեամբ սբ. առաքելոյն Անդրէի, ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Խաչատուր իրիցուն և ծնողացն՝ Սաւաղային և Կուլաղային, և կողակցին՝ Գոհարին, և որդւոցն՝ Թորոսին, Յովանէսին և Ստեփաննոսին, և դստերցն՝ Աննային, Մարիամին և Եաղութին, և քրւերցն՝ Շամշէ և Խանաղային, և եղբօրն՝ Խաչերին, և մեծ պապուն՝ Պահատուրին, և անիմաստ գրչիս՝ Քրիստոսատուրին, և ծնողաց իմոց, կարդացողաց և լսողաց։

Է

581բ Փառք...։ // Արդ՝ այսպիսի /// անօթոյս ցանկացող եղեալ /// ժամանակ մանաւանդ /// դրեալքս՝ Խաչատուր, Յովաննէս և Մարտիրոս ի կարգի քահանայութեան հրաւիրեալք և թէպէտ ըստ գործոյն պահանջման աւն անդր ի բաց արտաքեցեալք, ոչ ինչ ունելով մեղ ի յոյս բարութեան ի վերայ երկրի։ Վասն որոյ միաբանեալ մեք երեքեանքս

[10] Նման հիշատակարաններ երեքի անունով գտնում ենք յուրաքանչյուր վկայաբանության վերջում, երբեմն ընդարձակ, ինչպես դ, ե և զ հիշատակարանները։

իբր մի անձն և մի հոգի, ձեռնարկեցաք ցայսմաւուրքս և աշխատասիրեցաք ի սա մերովս անձամբ։ Եւ արդ՝ ապաւինելով մեր ի կամս հեշտալուր Արարչին և յանդառնալի մաղթանք ամէնեարանուհի մօր նորին, հասուցեալ յաւարտ, տեսաք զկատար սորին, ըստ բոլոր բաղձանաց մերոց, որպէս որ տեսանէքդ, թէ զգիրսն և թէ զծաղիկսն ամենավայելուչ յօրինուածով, երփն երփն երանգօք ի փառս Արարչին և ի պատիւ նորին ծնօղին և ի վայելս մանկանց Սիոնի։ Եւ նուիրեցաք զսա ի գուռն խմբահոյլ և բազմահանդէս, աշխարհալուր և արփիաշէն սրբոյ աթոռոյն էջմիածնի, ի բնէ կաթողիկոսարանի ամենայն Հայաստանեայց, յիշատակ անեղծանելի մեզ և ծնօղաց մերոց[11]։

582ա Արդ՝ գրեցաւ սա ի մեծապանծ և ի բարձրափառ, ի ծովապատ ե յարքայագահ քաղաքն Կոստանդինուպոլիս, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդոյ նորայ Մարտիրոսին, ի թվականիս մերում Ռ և Ճ (1651) ի սոյն ամի լրացելոյ։ Ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի արժանապէս բաղմեցելոյն ի նոյնում աթոռի, որոյ զընծայս նուիրեցաք։ Եւ արդ՝ իրաւունս վարկանիմ սուղ ինչ բանիւ յիշատակել զհանդիսաւոր զգործ առնս այսորիկ՝ տեառնս մերոյ հայրապետի Փիլիպպոսի, որ փայլեաց յաւուրս մեր, իբրև զմի ի նախնեաց նշանաւոր արանց Ներսիսեանց և կամ Գրիգորիսեանց։ Քանզի սա ի սկիզբն մանկութեան իւրոյ ստացաւ զվարս միայնութեան և եմուտ ի ներքոյ լծոյ ծանր կրօնից և կացեալ ի ճգունս մինչև յարբունս հասակի, ի տիս երիտասարդութեան։ Եւ այնուհետև բռնաբարեալ ի վարդապետէն իւրմէ՝ ի Մովսիսէ մեծէ, առնու զկարգ քահանայութեան և վարդապետութեան։ Զի յառաջ քան զսա, նա նստաւ կաթողիկոս ի սբ. էջմիածին և արար հայրապետութիւն առաքելաշաւիղ գնացիւք ամս չորս և կէս։ Եւ յետ փոխման սորին առ իւր ցանկալին, նստուցին յաթոռ հայրապետութեան երկրահաւան վկայմամբ զհայրս մեր զտէր Փիլիպպոս վարդապետն ի թվին ՌԶԲ (1633) ամին, յոր և սկիզբն կաթողիկոսութեան իւրոյ։ Զօրացաւ ևս հանդիսի կրօնիւք և ամենավայելուչ քաղաքավարութեամբ և ելից զաշխարհս ուղիղ կարգօք և կրօնաւորոք, և ընդ արձակեաց դպրոցս և դասատունս։ Եւ ժողովեալ յոլով մանկունս, տայ յընթերցումն աստուածային բանից, յորոց ժամանեալ յարբունս ուսման և հասակին պարգևէ արժանաւորացն իշխանութիւնս և շնորհէ վիճակս, որք արձակեցան ի բաղում տեղիս և տակաւին ևս գիտեն արձակիլ։ Նաև զաթոռն հայրապետական աղատեաց ի հարկէ դիմոսական ինքն անձամբ իւրով գնալով կրկին անգամ ի դրունս Պարսից թագաւորաց և արար բաղում շահս և աւգտութիւնս Հայոց, որ ի ներքոյ լծոյ Պարսից։ Եւ ի վերայ այսր ամենայնի ևս փափաքեալ մեծի իմն տենչանաց, այսինքն՝ տեսանելոյ զտնօրինական տեղիսն Փրկչին մերոյ Աստուծոյ։

Բայց վասն մեծագործութեան հայրապետական հոգնացն անկարան այր, որոյ պատճառէ ի բաց եղեալ զամենայն զբաղմունք աթոռոյն, և յանձնեալ զհոգ առաշնորդութեան ի Յակոբ վարդապետն Ջուղայեցի, և ինքն չոգաւ ի սբ. քաղաքն Երուսաղէմ բաղում վարդապետօք և պա-

[11] Մոտ կես էջ դատարկ։

տուաւոր արամբք ի թվականիս Հայոց ՌՃ և Ա (1652)-ն, յորոց ուխտիցն և մեղ մասն՝ շնորհեսցէ. ամէն։

Զոր և ի սոյն ամի դարձեալ եկն ի թագաւորանիստ մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, զոր տէր Աստուած անփորձ և անսասան կենօք պահեսցէ ի պարծանս ամենայն հայկազան սեռի. ամէն։ Իսկ վասն բռնակալաց Իսմայելացւոց, որ ի քաղաքիս յաւուրս մերում էր թագաւոր սուլթան Մուրատն, որդի սուլ//թան Ահմատին, այր խրոխդ, և ահարկու, և յոյժ աջողակ ի գոլ թագաւորութեան իւրոյ, իբրև զԱղէքսանդրոս։ Սա ի հնկետասան ամի թագաւորութեան իւրոյ, չոգաւ ի վերայ Երևանայ եաւթն հարիւր հազար հեծելովք և էառ զնա ի թվին ՌՁ և Դ (1635)-ին։ Եւ անտի յառաջեալ մինչև ի Թավրէզ արար բնաջինջ զնա. և անտի դարձեալ ևս ի քաղաքս։ Իսկ ի միւսում ամի ևս եկեալ Պարսիկք առին զԵրևան։ Զոր լուեալ սուլթան Մուրատն կարի մրոսրբոռեալ ոխացաւ. և ի միւսում տարւոջ շարժեալ ևս զաւրօք քան զՅուլիանոսին, չոգաւ ի վերայ Բաբելոնի, և էառ զնա, և դարձաւ ի կայանս իւր։ Եւ ի լրանալ միւս ամին բարձաւ ի կենաց իւրոց, թագաւորեալ ամս ԺԹ (19)։ Եւ յետ սորա թագաւորեաց եղբայր սորին սուլտան Իպրահիմն ի թուին ՌՁԹ (1640). այր շռայլ և կնասէր, ամենևիմբ թողեալ զհոգս թագաւորութեան և զբաղեալ ի գործ իգամոլութեան։ Եւ այնքան յաճախեալ յայս մոլեկան գնացս, մինչ գրէթէ և ինքեանք, որ ըստ իւրեանց աւրինաց զայս գործ ոչ յամօթ համարին նա, զզուեցան ի սորին յաճախ պակտեալ և ի գարշ գնացիցն և բարձին զսա տարաժամ մահուամբ ի կենաց իւրոց թագաւորեալ ամս[12]։ Եւ թագաւորեցուցին զորդի սորին փոքրիկ սուլթան Մահմեա մանուկ Ե (5) ամեա ի թուին ՌՂ (1641)։ Արդ՝ և այս ուշ լիցի քեզ, զի յետ երկրորդ ամի թագաւորութեանն սուլթան Իպրահիմին եղև մեծ պատերազմ Հագարացոցս ընդ Վենետիկցոց ի վերայ Կրիտէս կղզոյն, զի յառաջին ամի պատերազմին առին սոքա զմասն ինչ ի կղզոյն և եդին ի զօրաց իւրեանց զօրքս բազումս և անուն զօրագլխին Հիւսէին փաշայ։ Եւ արդ՝ աւասիկ այս է (7) ամ է, որ սոքա գնան և նոքա ընդդէմ գան և յոգորին քաջ ընդ քաջի և ոչ պարտին ի միմեանց, բայց յաւարտն Աստուծոյ է գիտելի, թէ զիա՞րդ է լինելոց։

Եւս ծանիր ի սոյն ամի եղեալ արհօրանաց, քանզի յայսմ ամի զօրացան զօրք ի մէջ քաղաքիս, որոց էնկիչարի ասի և կարի բռնացան ի վերայ երկրորդի թագաւորին և ամենայն դատաստան քաղաքիս, և եկ և մուտ ինքեանք առնէին և տային, որպէս և կամէին, յաղագս տհաս դոյո արքային։ Արդ՝ մինչ սոքա յայս աջողութեանս անհոգացեալ կային, յանկարծակի ի մի վայր հաւաքեալ ամբոխ ռամկին և գրոհ տուեալ յարքունիս փոխեցին զքաղաքապետն, որ վեզիր ասի. և եդին զայր ոմն քաղաքապետ, այր խորհրդական. և ցրուեցան ի տունս իւրեանց, իբր զի յառաւօտն եկեալ արասցեն խորհուրդս վասն էնկիչարոցն, զոր իբրև տեսին նոքա զգործ ևս ի նոյնում գիշերի ժողովեցան առ գլխաւորս և

[12] Տարիների քանակի տեղը դատարկ է։

նորին խրատով զինեցան, կառուցան, կարգեցան հարիւրով և ԲՃ (200)-ով և առին զկիրճս ճանապարհաց, որով ի դրունս արքային դընային մարդիկք և պահեցին զանցս ճանապարհացն ի մէջ քաղաքին։ Այնպէս վաստեալ խմբմամբ զաւուրս երիս մինչ անճարացեալ ամենեցուն նստան ի տունս իւրեանց իբր թէ հաշտեցան ի կերպարանս։ Եւ եղև յետ այս յիրակութեանց աւուրս Ժ (10), յօգոստոս ամսոյ ԻԲ (22)
583ա ի լուսանալ // առաւօտին հանեցին զղրօշս առաջնորդին իւրեանց և տնկեցին ի վերայ պարսպի դրան արքային։ Եւ սկսաւ ձայնել մունետիկն ի մէջ քաղաքին.

Եթէ «Ով որ ի կողմ արքայի է, ի ներքո այս դրօշակիս գտցիս։ Յայն ժամ դղրդեցաւ քաղաքն ամենայն, զի բնաւին արք քաղաքիս իսկոյն ի վայրկեան ժամանակի խմբեցան ի տիւանի անդ՝ զօրք և զօրագլուխք, տեղականք և եկամուտք, վաճառականք և արհեստաւորք, ամենեքեան, որք յաւրէնս Մահմետի էին, ի յարքունիս գիզեցան, զատ ի նոցանէ որ երբեմն զկիրճս պահէին։ Յայն ժամ ծակամուտ եղեն և ոչ երևեցան ի համաժողով հանդէսն։ Վասն որոյ արտաքսեցան և ի սրոյ ճարակ գնացին։ Յայսմ աւուր սպանաւ մեծ վալիտան, որ ետես թագաւորեալ զիւր երեք որդիսն զկնի միմեանց և այլ ամենայն գըլխաւորք, ոմանք սպանուան, ոմանք ի փառաց անկան, ոմանք փախեան և ոմանք ևս ի բանտի կան։

Արդ՝ ահա այսպիսի դառն ու դժնեա և յոյժ անբարի ժամանակիս եղև աւարտ .սբ. գրոցս բազում աշխատութեամբ և մեծաւ ջանիւ։ Վասն որոյ կրկին թախանձանօք և սեռն հաւատով ողորք արկեալ աղաչեմք զվայելողդ սմին, զի պահեսջիք զսա խնամով և բարւոք պատրաստութեամբ, թէ՛ ի մոմէ, թէ՛ ի գիջութենէ և յայլ ինչ ներհակաց։ Նաև յիշել աննախանձ սիրով զվերոյ դրեալքս, որ ի սմա՝ զԽաչատուր երէց, զՅովանէս երէց և զՄարտիրոս երէց հանդերձ ամենայն արեանառու ընտանեօք, մերովք ննջեցելովք և կենդանօք, որք գրեցան և որք մոռացան, որով և դուք յիշեալ լիջիք յանմոռանալի յիշողէն Աստուծոյն մերոյ։ Որում փառք և զոհութիւն...։

760

ՄԱՍՆ ՍՐԲԱՍԱՑՈՒԹԵԱՆՑ

ԼԱՎԳԱՒ, № 233

Գրիչ՝ Դաւիթ
Վայր՝ Արզրում

1359 Գրեցաւ Սրբասացութեան տետրս ձեռամբ յոքնամեղ և անարժան գրչի, սուտանուն Դաւթի, ի քաղաքս Արզրում, ի գուռն Ս. Ստեփաննոսի Նախավկային, ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652), օգոստոս ամսոյ ԻԲ (22), և ետու յիշատակ ի ձեռն տէր Յակոբ սրբասնեալ կրօն[աւորի] ///

761
ԱԻԵՏԱՐԱՆ
ՍՁԿԱ, № 4(27)

Գրիչ՝ Մուրատ Սարգիս
Վայր՝ Եազլովկսլ

35 Գրեցաւ աւետաւոր կտակս... գրեցաւ և կատարեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան ծառայ Աստուծոյ Մուրատ Սարգսի, որդի ողորմածհոգի Միքայելին, Եազլովցա քաղաքի. կատարեցաւ օգնութեամբ Ս. Հոգւոյն, թվականին Հայոց մնծաց ՌՃԱ (1652)-ին, սեպտեմբեր ամսոյ Դ (4), աւրն հինգշաբթի։

Արդ՝ ստացաւ զսա հաւատարիմ և բարեպաշտ խոճա Թուման շատ փտփաքմամբ, ետուր դրել յիշատակ իւրէն, և իւր ծնողացն հոգուն, և եդ յիշատակ ի յերկիրն Օլախաց, ի քաղաքն Սէրաթ, ի Ս. Աստուածածինն։ յեկեղեցին. ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպ[պ]ոսին, և ի թագաւորութեան Վասիլ պսարոնին, և առաջնորդութեան տէր Մինասին. որում[13]

762
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՈՁՄՎ, № 685 (1612 թ.)

177 Թվին ՌՃԱ (1652) սեպտեմբեր ամսոյ Զ (6) աւրն, երկուշաբթի կէս աւուրն շարժ եղաւ և յետոյ միւսում աւուրն երեքշաբթի երեկոյին լուսինն խաւարեցաւ մինչև Գ (3) ժամ, վասն ծովացեալ մեղաց մերոց։

763
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1578 (ԺԴ դ.)

315ա Ի թվին ՌՃԱ (1652), Ֆռանգի 1652, Թուրքի (1063)[14] գրեցաւ Աղզռում, Աֆուլեցի Աղամիրի որդի Զաքարեայ, սէպտեմբէրի ամսոյն ԻԳ (23), օրն հինգշաբթի, Թիրայ ամսոյն է (7)։ Ով որ կարդայ ասէ Աստուած ողորմի. բաւ է[15]։

---

13 Ն. Ակինյանը հաղորդում է, որ հիշատակարանն այստեղ ընդհատվում է։ Շարունակությունը գրված է այլ դրով և վերաբերում է 1706 թ.։

14 Այսինքն՝ 1063+622—32/3։

15 Սույն հիշատակագրությունը Զաքարիա Ագուլեցու ինքնագիրն է։ Իր օրագրության մեջ 1652 թ. ներքո նա գրում է. «Օգոստոսի ԻԱ-ումն ես՝ Զաքարիայ որ եկի Առզրում Աստուծով։ Սեպտեմբերի ԺԲ-ումն ես Զաքարիայ շատ չումիաթով գնացինք Առզրումայ վանքն ուխտ։ Հոքտեմբերի ԺԸ-ումն ես Զաքարիայ Առզրումայ դուս եկի» (Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, էջ 40)։

764
ԺՈՂՈՎԱԾՈՅ
Վատիկանի գրադարան, № 24

Գրիչ՝ Զաքարիայ Սիւնեցի
Վայր՝ Ալապ

ա

31 Կատարեաց օգնականութեամբ ամենազօրին Աստուծոյն, փառք և գոհութիւն նմա, որ ետ կարողութիւն յանկ ելանել զրոցս թվին ՌՃ (1651)։

բ

Աւարտեցաւ սբ. մատեանս ի թուականիս Հայոց ՌՃԱ (1652), ի նոյեմբերի Ի (20), ի քաղաքն Տիբերայ, որ է Ալապ, ի ձեռն յոքնամեղ տէր Զաքարիայ Սիւնեցւոյ, աշակերտի Կղէմես աստուածաբան վարդապետի, ի վայելումն իւրոյ անձին և յիշատակ իւրն և ընտանեաց իւրոց։

765
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 237 (1651 թ.)

Գրիչ՝ Սանակ աբեղայ

ա

250ա Արդ՝ այսպիսում լուսազարդ տառի և աստուածախօս կտակի ցանկացող եղև ոմն մահդասի Առաքեալ անուն, որ և Ամիրիան յորջորջի, որ սիրովն Քրիստոսի հրաժարեալ յունայն ա[ն]ղբաղ կենցաղոյս... և տեսանելով զպայծառութիւն սբ. Աւետարանիս, զի սովաւ կատարին ամենայն կարգաւորութիւն Հայաստանեայցս եկեղեցւոյ և պայծառանան
250բ տօնախմբութիւնք մօրն լուսոյ մեծաւ փափաքանօք ցան//կացաւ ստանալ զսա ի վայելս անձին իւրոյ և ծնողաց իւրոյ, հօրն՝ Ամիրաղային և մօրն՝ Մանիխանին, և եղբարցն՝ Մուրատաղային, Կիրակոսին, և քրեերցն՝ Տօստաղային և Սօլթախաթունին և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն ի Քրիստոս։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, որք օ[գ]տիք ի սմանէ կամ միայն հարևանցի տեսանելով, յոլոր սրտիւ յիշեցէք...։

Եւ զիս զՍանակ աբեղայս մաղթեմ յիշել, որ զսակաւ յիշատակարանս մեղսամած մատամբս գրեցի։ Գրեցաւ ի թվին ՌՃԱ (1652)։

բ

73ա Եւ արդ՝ իսկ ցանկացող եղեալ սմա կրօնաւոր և մահդասի Առաքելն, որ մականուամբ Ամիրիան կոչի...[16]։ Գրեցաւ յիշատակարանս ի թվին ՌՃԱ (1652)։

գ

116բ Յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զտնտես Առաքելն և զծնողքն իւր...[17]։

[16] և [17] Երկու դեպքում էլ թվում է վերևում հիշված անունները։ Ձեռագրի 192 բ էջում գ հիշատակարանի նման մի հիշատակարան ևս կա։

766
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 331 (ԺԶ դար)

Կազմել տվող՝ Յակոբ

ա

242ա Դարձեալ յիշեցէք զվերջին կազմել տուող սբ. Աւետարանիս Յակոբ անարժան և սուտանուն. և հայրն իմ՝ Ղազար էրէցն, և մայրն իմ՝ Բակիսուլքան, և աւագ որդին իմ՝ Սարքիս էրէցն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և իւր կողակիցն՝ Հռումսիմա, և իւր որդի Մինաս դպիրն, Փանոսն, և միւս որդի Մկրտիչն և իւր կենայկիցն՝ Անբառնակին, և իւր որդի Կարապետն, և միւս որդի Ղազարն, և իւր կողակից Եղիսաբեթ, և իւր
242բ որդի Մա[ռտիր]ոսն, և միւս որդին՝ [Յովան]էսն /// որդին իմ՝ Աստուածատուրն /// և դուստրն իմ՝ Լաբիխանն, և եղբայրն իմ՝ Եղուրլուն, և իւր կողակից Թաջումն, և որդին իւր՝ Բաղդասարն, Մելքումն, Պայիենդուրն:

Ո՛վ հանդիպողք քահանայք և սարկաւագ, կարդալով կամ օրինակելով, մէկ բերան ողորմի ասացէք և Քրիստոս Աստուած ձեզ ողորմի. ամէն։

Կազմող՝ Հայրապետ

բ

Դարձեալ յիշեցէք զկազմող սբ. Աւետարանիս սուտանուն և անարժան չՀայրապետս: Ի թվականին Հ[այոց Ռ]Ճ և Ա (1652) էր։

767
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 835

Գրիչ՝ Մարտիրոս սարկաւագ
Վայր՝ Բաղէշ

ա

14ա Այս քանի կանոն վասն ազգականութեան, զոր ջինեաց քաջ հեռատորն Յակոբ Ղրմեցի վարդապետն, որ է հանգուցեալ ի դուռն Աստուածածնի տաճարին Արծկոյ քաղաքին։ Ո՛վ հանդիպողք, որք հանդիպիք սմա ընթեռնուլ, Աստուած ողորմի ասացէք ինձ մեղապարտ գրչիս
14բ Մուրատիս և իմ ծնողացն՝ Գոնարին և Խղաթին, և իմ ջոջ մօրն՝ Ջուա//-կէն. և Աստուած [զ]ձեզ ողորմի. ամէն։

բ

75ա Ո՛վ ընթերցողք բժշկարանիս, յորժամ ընթեռնուք զաստուածաբան
75բ հայրապետաց կանոնքն, յիշեցէք ի Քրիստոս զգծող սարկաւագ Մու//-ռատս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

գ

154բ ՀՄուրատս գծողս և զիւր կողակիցն և զամենայն արեան մերձաւորսըն իմ յիշեցէք ի Քրիստոս Աստուած և զհոգևոր մայրն իմ՝ զՀրեղի-

155ա եէն, յիշեցէք... // մանաւանդ ծնողացն իմոց, իմ հօրն՝ Խլղաթին, և իմ մօրն՝ Գօնարին, և իմ ջոջ մօրն՝ Ջուտկէն. ամէն։

Դ

242բ Փառք..., որ ետ կարողութիւն անարժան և անիմաստ Մարտիրոս[18] գրչիս հասանել ի յօարտ տառիս, որ կոչի Կանոնգիրք, քանզի ունի գիրքս այս գրեալ ի յինքն բովանդակ զսահմանք և զկանոնք սբ. հարցն մերոց՝ սրբոյն Թադէոսի առաքելոյն ասացեալ հարցմունք և պատասխանիք, և Փիլիպոսի առաքելոյն. դարձեալ սբ. ժողովոյն որ ի Նիկիայ, սրբոյն Աթանասի հայրապետին հարցմունք և պատասխանիք, տեառն Յոհաննու ի խնդրո[յ] սրբոյն Բասղի վասն պէսպէս ախտից, հարցումն Արձանա[յ] և պատասխանի եզնակայ Կողբացոյ Հայոց վարդապետի, Կղեմա հայրապետին, և սրբոյն Գրիգորի Պարթևի Հայոց լուսո-
243ա որչի սահմանք և կանոնք վասն մե//ղաց, և դարձեալ Սահակայ հայրապետին, սրբոյն վարդապետին Վարդանայ, Դաւթայ որդւոյ Ալաւկայ, որ վասն մկան սնգելոյ և այլ բազում կանոնք վասն պէսպէս մեղաց մարդկան։ Դարձեալ յաղագս ազգականութեան արարեալ հոգէլից առն Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ, ի խնդրոյ Թումայ վարդապետին աստուածաբնակ սբ. ուխտին Մեծոփայ վանից, և այլ սրբոց հայրապետաց և վարդապետաց կանոնք, որ աստ կան հօաքեալ. զի սովաւ ապաշխարեն մարդիկ, և դառնան ի մեղաց իւրեանց, և լուսաւորեալ արդարանան շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

Եւ արդ՝ ես ունայնս ի բարեաց գործոց մեղապարտ գծող Մարտիրոս սարկաւագս ըստ իմ տկարութեանս դրեցի զսբ. գիրքս ի քաղաքս
243բ Բաղէշ, ընդ հովանեաւ սբ. հինգ խորանացս՝ Ս. Խաչին և Ս. // Աստուածածնին և Ս. Պետրոսին և Ս. Պօղոսին և Ս. Սարգսի զօրավարին։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի յնտիր և ի ստոյգ աւրինակէ, կենօք տառապանօք և դառնութեամբ լի, յամենայն կողմանց ցնորիւք պաշարեալ, ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652), ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։

Ի բռնակալութիւն Բաղիշու Աբդալ բէկին, ի յայսմ տարիս Գ (3) ոգի կախեաց ի քրիստոնէից ի մէջ շուկային, վասն հարկապահանջութեան։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով և կամ հա-
244ա ռևանցի տեսանելով զաւելորդն բառնայք և զպակասութիւն // լնուք և խոշորութեանց և սղալութեանց սորա անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որ երես ի գետին դնելով աղաչեմք զձեզ, ով ընթերցողք սորին, զի լի սրտիւ և բոլոր հօատով Աստուած ողորմի ասացէք Մար-

---

[18] Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողները ա, բ, գ հիշատակարաններում հիշված Մուրատ գրչին և Մարտիրոս գրչին տարբեր անձնավորություններ են համարել (հտ. Ա, էջ 421), սակայն դրանք միևնույն անձնավորություններն են, հմմտ. ծնողների և տատի անունները։ Իսկ թե ինչո՞ւ է միևնույն անձնավորությունը նույն ձեռագրի հիշատակարաններում տարբեր անուններով կոչվել, դժվարանում ենք ասել։

տիրոս դպրիս և ծնողաց իմոց Խլղաթին և Գօնարին և իմ շոշ մօրն՝ Ջուտկէն, որ հանգուցեալ են ի Քրիստոս և իմ Բ (2) քեռոչն՝ Խլղաթին և Դալվաթշին, կենդանեաց և մեռելոց և ամենայն արեան մերօրաց իմոց, մանաւանդ Մարտիրոս գծողիս և իմ կողակցին՝ Նազիֆարին. ամէն։

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աստուած՝ իմ հօգեոր հօրն և վարպետաց վարպետին՝ տէր Սահական և իմ եղբօրն՝ Մեսրոպին և Սարգ-
244բ սին, և իմ պապուն՝ Ստեփաննոսին, և իմ եղ//բաւրն՝ Յակոբին, և իւրեանց ծաղկեալ որդւոցն և դստերացն <նոցին> Հոիփսիմին և Հրեղինին և Սիմոնին. դարձեալ Գուզալին և Գօլաղին։ Եւ դարձեալ իմ հոգեւոր հօրն՝ տէր Սահակին, և իւր ծնողին՝ Շահումաղին, որ բաղում աշխատութիւն հետ ինձ քաշեցին՝ մերկ էի և զգեցուցին, քաղցեալ է[ի] և ետուն ինձ ուտել, ծարաւ էի և արբուցին զիս, տառապեալ էի և սփոփեցին զիս, կորուսեալ էի և գտին զիս. ոչ ինձ միայն, այլ ամենայնի կու բաշխէ զիւր աստուածատուր շնորհն, ձրի տայ ամենեցուն ըստ տէրունական հրամանին...։

245ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարէն և զիւր որդիքն, որ հանգուցեալ են ի Քրիստոս, որ զմեղօրս ի յարկս իւրեանց ընդունեցին, միթէ Տէրն զերկնից յարկսն պարգևէ իւր և իւրեանց որդոցն...։

[Դ]արձեալ յիշեցէք զստացող սբ. գրոյս[19]

768
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1130 (Ժե դ.)

Հետ. ստացող՝ Կարապետ երէց

425բ—426ա Ներքևի լուսանցքում Ես՝ նուաստ ծառայ Աստուծոյ Կարապետ երէցս, որդի Խաչատուր իրիցու, գնեցի զսայ ի հալալ արդեանց իմոց ի յիշատակ հոգոյ իմոյ աղգականէ Մաղաֆիայ վարդապետի, Նալպանտեանց տէր Ղազարէ. թվին ՌՃԱ (1652)։

769
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1626

Գրիչ՝ Մովսէս երէց
Վայր՝ Ապահէն

405բ Յիշատակարան գրոյս

Փառք...։ Ի մերոց պետաց և ի հոգեկիր արանց ի հայկազեանց սեռից, յուղղափառ հայրապետաց և աստուածաբան վարդապետաց ներհմտացեալք կրթա[կան] վերծանութեամբ, քաշոլորակ բաժանմամբ ձայնից երաժշտականաց, վիպասան չափաբանութեամբ, բոլոր տարոյն ըստ հոլովման մեծ Արուսեկին յաղագս տէրունական տօնից և ամենայն

[19] Շարունակությունը չի գրված։

406ա սրբոց ի // պահքս ապաշխարութեան և ի հանգիստ ննջեցելոցն ի Քրիստոս, եղանակեցին երգս աւրհնութեան ի պայծառութիւն տօնից և ի պատիւ փառացն Աստուծոյ, ի համաձայնութիւն հրեշտակաց և ի մասնակցութիւն սրբոց և ի հրճուանս եկեղեցական գասուց։

Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղապարտ Մովսէս սուտանուն իրիցոյ, որ եմք բնական ի յերկրէն Ղափանայ, ի միւս յերկրէն Մագաձորոյ, ի գեղջէն Գորիսոյ, զոր հասեալ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ մեր մեղացս. խօճայ մի եկեալ ի մեր գեօղն վասն զապրիշում առնելոյ։ Եւ սատանայ բնակեալ ի սիրտ խօճային ոչ կամեցաւ մնալն ի Գորեսն, այլ ելեալ գնաց դէպի յերկիրն Դիզակայ. և առաջնորդ եղէալ նմա մարդ մի այլ Դիզակայ։ Եւ ի ճանապարհին ըմբռնեալ եղեն յաւազակաց և առեալ ի նո[ց]անէ բաղում ոսկի և արծաթ, զոր ունէին յինքեան /// մակին և զիւրեանքն սպաննեալ եղեն յաւազակացըն և թաքուցեալ։ Եւ շատ շրջեալ ընդանեացն իւրեանց և այլոց, ոչ կարացին յիմանալ զտեղին։ Եւ ի նոցին պատճառէ եկեալ դիմեցին ի վե-
406բ րայ մեր և ասացին. «Հայք և // Տաճիկք, եթէ ի յայսմ գեղջէ է գնացեալ խօճայն»։ Եւ ի յահէ նոցին փախրստեա եղեալ գնացաք յայլ յերկիր. և զյետամնացսն գեղին զոմն ի գեօղն թալանեցին և զոմն ի ճանապարհին։ Եւ ես թաբօրս ի բարեաց գործոց եկեալ հասա ի յերկիրն Մարայ, ի գեօղն որ կոչի Ապահէն։ Եւ էր ի ժամանակս Պարսից նորընձա փոքր շահ Ապասին, և ի հայրապետութեանն էջմիածնեա[յ] հեզահոգի տէր Փիլիպոսի բազմահանճար և սրբազան կաթուղիկոսի, և ի յԱղվանից հայրապետութիւն Գրիգորի քաջ և արի կաթուղիկոսի, և յառաջնորդութեանն ի յայսմ ուխտի ի տէր Ստեփաննոս արհեպիսկոպոսի, որ է սպասաւոր և ժրանան հովիւ ի սբ. Դաղի վանիցն և Մարդաղաւնեաց Ս. Նշանին. Աստուած զիւրեանն արքայութիւն տացէ և [ը]նդ սբ. հայրապետացն դասեսցէ, որ սա ձեռնադրեաց [անա]րժանս. ևս առաւել ջատ աշխատանք ունի ի վերայ իմ հոգևոր, այլ և մարմնաւոր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ մինչ ի խորին ծերութիւն։

Ի թուականութեանս Հայոց ՌՃԱ (1652) գրեցաւ, ծաղկեցաւ և կաղմեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ[20]

770

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 2105

Գրիչ՝ Կիւրեղ
Վայր՝ Կողոնիայ

ա

521բ Փառք . . . ։
Յորոց և մին ես անսլիտան,
Ղարասուրցի տեղեաւ բնական,
Եւ Կիւրեղ կոչի իմ անունն,
Ի սբ. գործոց զիրկ և ունայն։

20 Շարունակությունն ընկած է։

Քանզի գործովս եմ անարժան,
Եւ զձեզ ունիմ կղերիկոսութեան,
Դարձոյ մեղաց ըշտեմարան,
Աստուծոյ ինչ տամ պատասխան։
Զձեզ աղաչեմ հարք սրբազան,
Որք հանդիպիք երգոյս հարցման,
Զիս արժանի առէք յիշման,
Առ Արարիչ անմահ արքայն։

Բ

522ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ հոգիարուխ աստուածային գանձարանս ի հայկազանս տոմարի ՌՃ և մի (1652) ամին, ի յաստուածապահ քաղաքիս Կոստանիայ, որ այժմ ասի Ղարասար, ի յանառիկ ամրոցիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսին և ի վայելումն քաջ բարունապետին տէր Գաբրիէլ վարդապետին, ձեռամբ բազմամեղ և անիմաստ գրչի Կիւրղի, որ բնաւ չեմ արժանի յիշման։ Եւ յերես անկեալ աղաչեմ զձեզ, զսբ. ընթերցողդ, առնել արժան յիշելոյ ի ժամ սոսկալի և քստմնելի սբ. բաշխման խորհրդոյն։ Դարձեալ յիշեցէք զծնաւղն իմ՝ զԼևոնն և զմայրն իմ՝ զՆաղութն, և զեղբայրն իմ՝ զՏրդատն, և զայլ ամենայն արեան մերձաւորս և զազգայինս, որ փոխեալ են առ Քրիստոս ի յոյսն ամենեցուն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զուսուցիչն իմ զՄանուէլ քահանայն, որ բազում
522բ աշխատութեամբ և ջանիւք ուսուցեալ է և հասուցեալ է // յայս չափս, զոր տէր Աստուած զփոխարէնն միոյն Ճ (100)-ապատիկ և Ռ (1000)-պատիկ հասուցանէ աստ և ի հանդերձեալն. ամէն։

Դարձեալ երես ի գետնի դնելով և կողկողագին պաղատանաւք աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրիս, զի ժամանակս դառն էր և հարկապահանջութիւն այլազգացն բազմացեալ էր ի վերա մեր։ Վասն այն խելքս կորեալ էր և միտքս ապիկար և հոգով տկար, աղաչեմ յոյժ թախանձանաւք, զի խնամաւք կալցին, զի խընամեալ և պահեալ լիցին Աստուծոյ։ Եւ ով կարդա և աւրինակէ գրեսցէ զնոսա տէրն Քրիստոս ի գիրն կենաց...։ Դարձեալ յիշեցէք զհոգևոր եղբայրն իմ՝ զԱհարոն սարկաւագն, որ զթուխտս կոկեաց և բազում աշխատանք և երախտիք ունէր ի վերա իմ եղբայրական գթով, և ինքն յուսով փոխեցաւ առ Քրիստոս, զոր տէր Աստուած ողորմի իւր հոգւոյն ասացէք միաբան. ամէն։

771

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2303

Գրիչ՝ Մարկոս սարկաւագ

ա

149ա Եւ ես երես անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ եղբայրք, անմեղադիր լերուք սղալանացս և գրի խոշորութեանս, զի կարո մեր այս էր. զի զա-

նարժան սուտանուն Մարկոս սարկաւագս և զվարպետն իմ զտէր զԱստուածատուրն և զիւր ննջեցեալսն յիշեցէք, և զձեզ Աստուած յիշէ ի միւսանգամ գալստեանն։

Թվին ՌՃ և մէկին (1652)։

Ծաղկող՝ Ալէքսիանոս երէց

Բ

92բ Զծաղկող սորին Ալէքսիանոս երէցս և ոչ ի գործոց յիշեսջիք ի Քրիստոս. և զծնաւղսն իմ, աղաչեմ, ո՛վ եղբայր իմ[21]։

772

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2838 (1297 թ.)

Նորոգել տվող՝ Աստուածատուր քահանայ

Վայր՝ Դսեղ

Գահ-նակ Գ Զվերջին նորոգել տվաւղ սբ. Աւետարանիս տէր Աստուածատուր քահանայն [և] զհանգուցեալ հայրն իմ՝ տէր Գասպարն, և զմայրն իմ՝ Գուլիստանն, և զկուսակրաւն քոյրն իմ՝ Ուղիտէն, որ նա ետուր վարձն կազմելոյ, և զամուսինն իմ՝ Գուզալն, և որդոցն իմ՝ Զատիկն, Մէլիքոնն, Գասպարն, Բաղտասարն և այլ քվերցն իմ՝ Գուլիստանն, Հէրիքնազն, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղացն իմ. ամէն։

Արդ՝ ով որ հանել ջանա կամ ծախէ ՅԺԸ (318) հայրապետացն նզոված լինի, մասն Յուդայի առնու և անէծքն Կայենի. ամէն։

Ի հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի, ի յառաջնորդութեան մեր Սարգիս արհեպիսկոպոսին։ Կազմեցաւ ձեռամբ սբ. Աւետարանս Թումանի որդի Սարգիս քահանային, ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652), ի տանս Տաշրու, ի յերկիրս Լոռու. կազմեցաւ ի դուռն Ս. Լուսաւորչին, ի գիւղաքաղաքն Դսեղու։

773

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2846 (1471 թ.)

Հետ. ստացող՝ Ղուբաթ

307ա Փառք...։ Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. քահանայք և վարդապետք, յորժամ ընթեռնուք զսբ. Աւետարանս զայս, յիշեցէք ի մաքրափայլ սբ. յաղաւթս ձեր զվերջին ըստացաւղս Ղուբաթն, կողակիցն՝ Մ[ո]ւրվաթն, որդիքն իւրեանց՝ Միրվանարիջան, Մուրատ, Մարգարան, որ ըստացան զսայ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակս հոգոց իւրեանց, և ետուն ի դուռն Ս. Գէորգ զաւրավարին, ի յերկիրն Խo, ի գեաւղն որ գոյի Մանգագան, յիշեցէք լի բերանով և ուղիղ սրտիւ և հաստատուն հաւատով...։

Թվին Ռ և ՃԱ (1652)։

---

[21] Բ հիշատակարանը գրված է կարմիր մելանով։

774
ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Երևան, № 3589 (1319 թ.)

Կազմող՝ Շմաւոն վարդապետ
Վայր՝ Ապրակունեաց վանք

319ա Շնորհիւ աեառն և զօրութեամբ նորին վերստին նորոգեալ եղև այս կտակարան ողբոց և մատեան աստուածապարապատ, որ ըստ իւրոյն յաւրինողի, կազմողի, կառուցողի և յարմարողի անուանն վերաձայնեալ կոչի Նարեկագիրք, որ է սա սեփական վանուցն Փորադաշտայ խըրամակարկատ ցանկապատեցաւ այս այգի տեառնատունկ և դաշտաւոր առլցեալ բազմախիտ ծառօք ազգի ազգի ծաղկօք զարդարեալ պատնիշաձիր բոլորեցաւ այս բուրաստան երփնագունիւք և զանազան ակք ծաղկօք խոնեցեալ և փողփողեալ ճառագայթ արձակ փայլողականութեամբ,

319բ կրկնաշարիւք քարամբք նորակերտեցաւ այս ըշտեմարան // ամենունակ և անթերական բարութեան։ Ի խալխալեալ քայքայմանց ըստերիւրեալ կազմեցաւ այս դատարան կենդա[նա]խօս վիճողաբանութեանց. հօրդորէն հորդեալ յստակագեղացաւ այս հանդիսարան երկնահրաւէր ըմբշամարտաց քաջասրտաց։ Կարկատափերթ կցկցաւ այս սոփեստ կենդանաձիր ընդվերնական միշտ կենդանւոյն բազմավէճ զրուցատրութեան և գանգատաիղձ տոչորմանց։

Վերստին մխեցաւ տեառնաբաշխ և կենդանախարուկ արեամբ այս աշտէն [ս]այբասուր ընդ սիրտ Աժդահակայ զազրատեսութեան։

Վերստին յարմարեալ յօրինեցաւ այս պանդարանդան առլցեալ յոքնախիտ նետիւք ընդդէմ նէսաքարայ գնդին չարապնդութեան։ Վերստին հիւսեալ շինեցաւ այս պարսատիկող, որ կա տիպ քարամբք կրելեօք ի ճակատ կարծեալ գոռողին ամբարտաւանութեան. նորոգապէս, յստակապարզ սրբեցաւ այս սուր երկայրի և ազդողական և արագահաս ի վերայ պարանոցի քինաւոր և անհաշտելի ամաղեկացւոյն պղծու-

320ա թեամբ։ // Ի նիրհական նընջմանց թանձրութեանց յարուցեալ եղև հաւս քաղցրահնչիւն և գեղեցկանուագ ի ժամանակս երկաքանչիւրոց ըստ մեղաց մերոց յօրացեալ թագաւորութեանց և պետական միահեծան իշխանութեանց իսմայելականաց և ելիմայականաց պարսկականաց Անմատայ և շահ Սէֆու նորանուէր արքայից արքայի և կարի քրիստոնադաւան տոհմից սիրեցողի և պատուողի, յաւուրս նեղութեան և անձկութեան հայրապետին ամենայն հայկազարմից տեառն Յակոբայ Ջուղայեցու, ի յաթոռակալ առաջնորդական եպիսկոպոսութեան Սրբոյ Կարապետիս Երնջակայ տեառն Նսայեա և Առաքելի Շոռոքեցւոյ, ի թվահաշուական համարողութեան ըստ հոլովման ընթացից ամաց անցելոց քսան և երկուց յոբիլինաց և երկուց ընդոսնից կատարեալ թուոց (1652) աջխատախոնջ իմովք վաստակօք զլացա բարոյ և նենգաժեռ Յոհաննու Կարճաւանացւոյ զանուն և զբախտ վարդապետութեան ադեղացուցանողի և անգաւրողի ընդ հովանեաւ գեղապանծութեամբ շքեղացեալ տանս մեծի և տիեղերահրչակելի մենարանիս, որ Ապրակունե-

320բ [աց] // Ս. Կարապետ յորջորջի և գահ երիցութեան նահանգիս բոլո-

րից Նախնուանայ և Նրնջ[ակ]ոյ: Վասն որոյ զվայելող անձանցդ ցանկալեաց ժտեմք մեծաւ պաղատանօք յիշել զառաջին գրօղն հին և զմեզ և զկազմօղ սորին զտէր Շմաւոն վարդապետն անձկալի և զՄաթէոս վարգապետն ցանկալի և զմիաբանական դասս, որ յայսմ ժամանակի զմեծամեծս և զփոքունս և որք յիշէքդ՝ յիշեցեալք լիշիք ի Քրիստոսէ լուսոյն մերոյ...։

775

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4157 (1412 թ.)

Նորոդող՝ Պօղոս

1բ *[Ա]րդ՝ նորոդեցաւ ամենասուրբ և համապատիւ, միասնական... սբ. Աւետարանս ի ձեռամբ սուտանուն Պողոս դրչի, [ո]ր է սուտ աշակերտ Կիրակոս վարդապետի, ի յերկիրն աստուածապահ ՇաՀբունու ձոր ասի, ընդ հովանեաւ Ս. Մարտիրոսա[յ] վանիցն. ի յաթոռակալութիւն Ս. Կարապետին, ի հայրապետութիւն Փիլիպոս կաթողիկոսին և յառաջնորդութիւն Եսայեայ վարդապետին, որ նորոդեաց Ս. Կարապետն ի հրմիցն մինչ ի ս. կաթողիկէն։ Ի թագաւորութիւնն փոքր շահ Ապասին, ի թվին Հայոց [Ռ]ՃԱ (1652) ամին։ Զոր տէր Աստուած քոյին սբ. ողորմութեամբդ ի վերայ արարածոց եղիցի. ամէն։*

Արդ՝ երեսս անկեալ զձեզ աղաչեմ, դասս լոյս երամ քահանայից, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ սբ. և արժանաւոր յաղօթս ձեր զբարեմիտ և հեզահոգի տէր Ովանէսն, որ ետ կազմել զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ տէր Մելէիսեթին և կողակցին՝ Մայրիամին, որդոց իւրոց՝ տէր Ովանէսին, Ստեփանոսին. և թոռանց իւրոց՝ դեռաբոյս տէր Մովսէսին և Գրիգորին, Մարգարին, Պաղտասարին և արեան մերձաւորացն՝ մեծի և փոքու առ հասարակ տանեցոյն. ամէն։

Եւս առաւել տէր Սրմաւոնին, որ նա կամեցաւ նորոգել սբ. Աւետարանս։

776

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4176

Գրիչ՝ Առաքել երէց
Վայր՝ Լիզներ

ա

250ա *[Փառք]...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրս Աղուանից ի գաւառիս Վարբնդոյ, ի գեաւղս [ս]ր կոչի [Լ]իզներ[22], ի դուռն Ս. Յովաննէսին, ձեռամբ փծուն և անարհեստ գրչի [ս]ուտանուն Առաքել իրիցու և մի /// եղբա[ւրն] Պետրոս /// ի միասին սկսաք և աւարտեցաք։ Ո՛վ մանկունք Սիովնի, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր. ամէն։*

---

22 Գյուղի անվան առաջին տառը չի կարդացվում։ Մատենադարանի ձեռագրաց ցուցակի հեղինակներն այն կարդացել են «Լ» (Լիզներ, հտ. Ա, էջ 1164)։

Բ

250բ Թիւն ՌՃԱ (1652)։

777
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 4188 (1823 թ.)

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

217 Փառք...։ Արդ՝ զրաւ հասեալ և յանկ ելեալ աւարտեցաւ սա ի թուաբերութեան և ի շրջապարութեան հայկազան տումարիս ՌՃԱ (1652) ամի, ձեռամբ Կամենցի Յակոբ սարկաւագի, ի լաւ և յազնիւ աւրինակէ՝ խլիկ որջորջելոյ, առ դրան տաճարի Սրբոյ Նիկողայոսի՝ հայրապետի, յարքայանիստ և ի կայսերաբազմ գահոյս, ի մայրաքաղաքաց Պոլիս Կոստանդեայ յերջանկացելոյ, յիշխանութեանն ագարացեաց սուլտան Մահմետ մանուկ տիաւք՝ մետասանամեայ թագաւորի, նաև յառաջնորդութեանն քաղաքիս Յովհաննէս երջանիկ բարունեաց պետի, այլ ի հայրապետութեանն, որ ի սբ. Էջմիածինն տեառն Փիլիպպոսի սրբազնափայլ և երիցս երանեալ դիտապետի, որ ընդ ամենայն տիեզերս. որոյ վիպասանութիւն սրբութեան և մաքրութեան գովասանութեանն ոչ է մեզ յանկ և ի ճահ ընդ գրով արկանել, այլ զի գերագունիցն թողցուք պատմաբանել զայն։ Բայց նախախնամիչն ամենայնի մարդասէրն Աստուած, խորհուրդ իմն բարի արծարծեալ ի հոգի և ի սիրտ վերոգրեալ հայրապետիս, չուել յայսմ ամի և փութալ յերկրպագութիւն սբ. տնաւրինական տեղեացն Քրիստոսի, որ և եհաս իսկ ըղձման իւրոյ։ Քանզի
218 նոյն // ինքն սբ. հայրս այս ելեալ բազում վարդապետօք և եպիսկոպոսաւք և անթիւ միաբանիւք ի մեծաշուք գահոյից իւրոց ի բաց թօթափեալ յինքենէ զամենայն հոգ և զծանրութիւն աթոռոյ, շրջապատել ակն ածելով զժողովրդեամբք քարոզելով և ուսուցանելով վերստին զկարգ և զսահմանադրութիւն կանոնաց սրբոց հարց, որոց եկեղեցականաց աղագաւ, զոր միանգամ խախտեալ քայքայեալ էր յանուղղայ գնացից տգիտաց։ Այսպէս շրջելով ժամանեաց ի սբ. տեղիսն և մեծաւ պատուով և ճոխ շքեղութեամբ կատարեալ զուխտ իւր աշխարհախումբ ժողովով։ Եւ անդուստ նաւարկեալ և ծովապատեալ եհաս ի քաղաքս[23]. այլ և աստ ևս կացեալ զբազում աւուրս իբրև ամիս ԱԺ (11)-ան։ Եւ զամենայն ուղղութիւն վերստին հաստատեալ սերմանեաց ի մէջ աստուստ եղեալ քահանայից և ժողովրդականաց։ Եւ մանաւանդ զպարտսըն, զոր արարեալ էին վատաշուէր պատրիարգունքն յաղագս փառաց և ցանկութեան իւրեանց և հասուցեալ էին մինչև ի ԽՌ (40000) կարմիրն, զոր ծանրաբեռն լեալ ի ժողովրդեանն ոչ էր հնար զերծանիլ ի վտանգէ նեղութեանց և զազատիլ ի չարաթոյն յորոգայթից։ Զայն ևս վճարեաց, զոմանց տալով և զոմանց յողորմութիւն համարելով փրկեալ զքաղաքս ի ներքոյ եղեալ պարտուցն։ Եւ ելեալ աստի ի մէջն խաղաղութեամբ ժամանեաց ի գերազարդ աթոռն իւր, զոր տէր Աստուած մեր հաստատուն պահեսցէ զսա ի պարծանս մեր ընդ երկայն աւուրս. ամէն։

[23] Իմա Կ. Պոլիս։

Բայց դի սովորութիւն է արանց աստուածասիրաց և բարեպաշտօն քրիստոնէից, միշտ զերկնայնոցն խոկալ և յայնս վարժիլ և գործով կատարել, ըստ այնմ զվերինն խորհեցարուք, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ, և դարձեալ, թէ՝ «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս» և «Ուր գանձն ձեր է անդ և սիրտք ձեր եղիցին»։ Եւ ի հրամանատուութենէ այսմիկ ցանկացեալ եռափափագ սիրով և յոգնատարափ ըղձիւ քրիստոսասէր և մեծազգի այրս այս Յակոբ դպիր, որ էր երբեմն լեալ յԱկան գաւառէ, և ստացեալ եղև զսա ի յարդար ընչից և ի հալալ արդեանց և վաստակոց իւրոց, ետուր մեծածախ զարդարել զանազան որակութեամբ պէսպէս դունաւք և ծաղկաւետութեամբ տերևալիր և բազմախառն ըստ պահանջման տեղոյ քաղցրահայեաց ղիմաւք ի տեսութիւն բազմաց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հաւրն՝ ծերացելոյ և մեծաշուք պանծացելոյ մահտեսի Վանեռատի և մաւրն՝ մահտեսի Շազատայի, և քեռցն՝ Քնարին, Դշխոյին և Մարիամին, և կողակցին՝ Գոճարին, և ծաղկափթիթ որդւոյն՝ Յովհաննէսին, և դստերն՝ Մարթային, և հանգուցեալ զաւակացն՝ Յովհաննէսին, Սառային, Մկրտիչին, Դու-
219 կասին // և Մարտիրոսին, որ ի տղայական հասակս վճարեցին զկենցաղս, գնալով առ յոյսն ամենեցուն։ Բայց աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպեալ պատահիք սմա տեսանելով կամ գաղափարելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ ասացեալ Յակոբ դպիր հանդերձ ծնողիւք և ամենայն սեռատոհմիւք իւրովք։ Եւ տէր Աստուած մեր որ առատաբաշխն է ի տուրս...։

Այլ և արժանի արարէք յարժանաւոր յաղօթս ձեր զանարժան գրիչս Կամենցի Յակոբ սարկաւագ և զծնօղս իմ զՊաղտասարն և զՅուստիանէն, և ասացէք Աստուած ողորմի...։

Եւ գիտէք եղբայրք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոցն զանուանսն կու ջնջեն և զիւրեանցն գրէն. և ոչ է բարի սովորութիւնս այս. աղաչեմ մի՛ գործել զվնասդ զայդ։ Իսկ եթէ պատէհ իցէ դրելոյ, գրեսցէ և զիւր անուանսն յայլում տեղւոջ, և զառաճնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր, քանզի կարող է Աստուած ձեզ և մեզ հատուցանել ըստ վաստակոց, որ առատն է ի տուրս բարեաց...։

778

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4970 (1470 թ.)

Նվիրատու՝ ուստայ Սենեքարիմ

319բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զուսթայ Սենեքարիմ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք իւրն և իւր հօրն՝ ուսթայ Վարդանին և մօրն՝ Մուղալին, և իւր կողակցին՝ Ինախին, և կողակցի հօրն՝ Էնիաթին և մօրն՝ Եւային, և Սենեքարիմայ հօրեղբօրն՝ Սարգսին, և վարպետին՝ ուսթայ Յուսէփին, և հօրեղբօր Սենեքարիմին Աստուածատուրն և եղբօր Մնէրին։ Աստուած ողորմի ասացէք ամենեցուն և ձեզ լիցի ողորմութիւն Աստուծոյն ամենայնի. ամէն։

Եւ արդ՝ ես ուսթայ Սենեքարիմ *և կողակիցն իմ՝* Ինաիւ *գնեցինք զսբ. Աւետարանս ի թուին Ռ և ՃԱ (1652), ի հալալ վաստակոց մերոց և տուաք յիշատակ ի դուռն* Արեկանից *վանից Ս. Աստուածածնին, մերձ բերդի[ն]* Ամկոյ *ծովահայեաց ամրոցին։*

Եւ մի՛ ոք իշխեսցէ լսայ ծախել և կամ ղրաւել՝ ո՛չ ի մերոց աղդաց և ո՛չ յօտարաց, այլ կացցէ անշինչ յիշատակ ի դուռն Ս. Աստուա-
320ա *ծածնին։ Եւ լաւ պահողքն // վարձս առցեն ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։ Եւ որ զԱստուած ողորմին ասէ ուսթայ* Սենեքարիմին *և կողակցին՝* Ինաիւին *Աստուած առ հասարակ ամենեցուն ողորմեսցի. ամէն։*

779
ՃԱՇՈՑ
Երևան, № 5403 (ԺԵ դ.)

Վայր՝ Կծուակ

210բ *Արդ՝ յիշեցէք ի [Քրիստոս Աստուա]ծ զը[ռէս]* Սարգիսն *և զկողակիցն իւր՝ զԽան[զա]դէն, և զորդին՝* Վարդանն, *զկողակիցն՝* Խանբէկին, *զՆագարն, զԴարիսլջանն և զԽաթունիկն, և զՆղշուն, և զամենայն արեան մերձաւորսն նոցա, որ ստացան զսբ. տարենդիրգս, և եդին ի դուռն* Կծուակու *Ս. Գէորգեայ զաւրավարին, անշինչ յիշատակ իւրեանց հոգւոցն և ամենայն արեան մերձաւորաց։ Բոլոր սրտիւ և ուղիղ հաւատով Աստուած ողորմի ասացէք...։*

Թվին ՌՃԱ (1652). Աստուած անյիշաչար առնէ. ամէն։

780
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 5496

Գրիչ՝ Անդրիաս դպիր
Վայր՝ Վարագ

ա

116բ *Քրիստոս Աստուած... ողորմեա ըստացողի սբ. գրոցս* Խանբէկոյն *և իւր ծնողացն, հօրն՝ տէր* Ամատիսին *և մօրն՝* Հոռոմսիմին։

բ

149ա *Գրեցաւ սա ի* Վարագ, *թուին ՌՃԱ (1652) ամին։*

գ

179ա *Գրեցաւ սա ի* Վարագ, *ձեռամբ* Անդրիաս *մեղաւորի։*

դ

194բ *Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղապարտ գրչի* Անդրիաս *մեղաւոր և անարժան դպրի հասանել ի յաւարտ ձեռք Մաշթոցիս։ Որ գրեցաւ ի խնդրոյ աստուածասէր և բարեմիտ կնոջն* Խանբէկոյն, *որ ետ գրել զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ բարի հո-*

195ա գոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հօրն՝ տէր / [Աւետի]սին և մօրն՝ [Հոոո]մ-
սիմին, և [ե]ղբարցն՝ Կարապետին, Յովանիսին և Մարգարին, և կո-
ղակցոյն իւրոյ՝ Ղարիպչանին, որդոցն որ հանգուցեալ են առ Քրիստոս՝
Յովանէսին, Գրիգորին, Աւետիսին, Աւէտին, Գուլիարին և Սարգսին. կո-
ղակցոյն՝ Գուլումին, դստերացն՝ Եղիսին և Հոոոմսիմին. և դստերացն
իւրոյ՝ Ջանաղին, կողակցոյն՝ Նաւասարդին. և որդոցն /// մին, Ղարիպ-
չանին և Աւետին. և դստերն՝ Թուրանդին, և միւս դստերն՝ Նարնչին.
կողակցոյն՝ Փոլատին, և որդոյն՝ Մուխայելին, և դստերացն՝ Ասլիխա-
նին և Գաւնարսօլթանին և Յամասիին և ամենայն արեան մերձաւորաց
սոցա...

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող գրոցս
զխանբէկին և զծնօղսն՝ զտէր Աւետիսն և զՀոոոմսիմէն, և զհօրեղբայր-
195բ սրն՝ զԱւէտն և զորդին իւր՝ զտէր Մարտիրոսն, // զՅովասափն և զոր-
դիքն իւր՝ զՄկրտիչն և զտէր Գրիգորն, յիշեցէք...

Եւ արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Վասպուրականի, ի մայրաքաղաքս
վանորէից ի Վարագ, ընդ հովանեաւ Աւագ Ս. Նշանիս և յայլ է (7) սր.
տաճարացս, որ կառուցեալ կան ի պատիւ սրբոց և ի պահպանութիւն
երկրիս մերոյ, ի Ռ և ՃԱ (1652) ամի թուականիս մերոյ, ի դառն և ի
նեղ ժամա[նակիս] ի ձեռն յան[օրինաց] և մեր յուսալ և ի քաղցր
մարդասիրութիւն Աստուծոյ, զի ի խնամս իւր պահեսցէ զհաւատա-
ցեալս անուան իւրոյ, և ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս տէր Կարա-
պետ քաջ բաբունապետի և յայլ միեղէն եղբարցն՝ տէր Յոհանէս վար-
դապետի և տէր Սահակ վարդապետի, տէր Մխիթար լուսարարին, տէր
Աւետիսին, տէր Խաչատուրին, տէր Մարտիրոսին, տէր Յակոբին, տէր
196ա Մկրտիչ վերակացուին, որք կան ի սպա///[սաւորութիւն] /// և հայրա-
կան գթով և եղբայրական սիրով զլիրբս և զանարժանս իբրև արժա-
նաւոր ընդունէին...։

Դարձեալ յիշեցէք ի յաղօթս ձեր զստացող սբ. գրոց զխանբէկին և
զծնօղս իւր զտէր Աւետիսն և զՀոոոմսիմէն, որ ստացաւ զսա ի հալալ
վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն իւրոյ, և եդի ի
դուռն Արարատ Ս. Աստուածածնին և Ս. Միրանաւորին։ Եւ մի՛ ոք իշ-
խեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սոցա ոչ ի մերոց և ոչ ի յաւտա-
րաց...։

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զՅարարատ քահանայքն՝ զտէր Խաչա-
196բ տուրն, զտէր Պետրոսն, // զտէր Յուսէին և զտէր Ներսէսն, որք կան ի
սպասաւորութիւն Ս. Աստուածածնին և Ս. Միրանաւորին։ Եւ զտանու-
տեարք գիւղիս զռէս Աղշիբէկն և զՄարգարէն, զԴիլանշին, զհիւս Գրի-
գորն, զուսթայ Խուդաբաշխն, զՆագարն և զԵզիայն, յիշեցէք...։

Եւ զմեղօք լցեալ զԱնդրիաս սուտանուն գրիչս և զուսուցիչն իմոյ՝
Սահակ Վարադեցին, և զծնօղսն մեր աղաչեմ յիշել ի Տէր, զհայրն իմ՝
զՋաֆարէն և զմայրն իմ՝ զՍիրամարքն, և զեղբայրն իմ՝ զՅովանէսն և
Աստուած ողորմի ասել... և խոշորութեան և սղալանաց գրիս աղաչեմ
անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր և Քրիստոսի փառք...։

781
ՏԱՂԱՐԱՆ
Երևան, № 5623

Գրիչ՝ Յոհանէս երէց

ա

233բ Յաւարտման այսրմ բանիս շարադրական,
Որ յոլովից և ի բազմաց կարճ զրեցան,
Վա[յ]ել է Հօրն անեղին ւ անըսկսբան,
Անեղ Որդոյն, որ է ծնունդ Հօր բնութեան։
Նոյնպէս և Հոգոյն Սրբոյ անճառական,
Երդեսցուք փառք և պատիւ այժմ,
Սրբաբանեալ ի հրեշտակաց և յամենայն[24],
Յաւիտեան աղգի մարդկան։
Եւ ղանարժան և զեղկելիս թափառական,
Զթուլգուրանցիս և զԱւանցիս միշտ յիշեցէք
Հայրք պատուական։

Ռ և ՂԸ (1649) ամին գրեցաւ սա ի Վարագ ձեռամբ սուտանուն Յովանէս Կարմիր Լանուս։ Փառք Աստուծոյ. ամէն։

Բ

Ոո ու իթ նի մ ան ն
Կլ սա ր ճ մ ո ի ր ս[25]

Գ

235ա Ես որ ի նմանութիւն Կարմիր Լանուն ծառայ Աստուծոյ[26]։

Դ

63բ Արդ՝ աղաչեմք ըզձեղ, որք եղանակէք և քաղցրաձայն լեզուաւ սիրով զայս երդէք, զիս և զիմ ննջեցեալս աղաւթս յիշեցէք և թողութիւն մեղաց մերոց հայցեցէք։ Գրեցաւ Տաղարանս ձեռամբ սուտանուն Յոհան երիցուէս թվին ՌՃԱ (1652)։ Ով որ կարդայք և քաղցր երդէք Աստուած ողորմի ասացէք ինձ մեղուցելոյս։

Ե

214բ Զերեսս անգեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր սբ. մանկունք եկեղեցոյ, յորժամ կարդայք կամ աւրինակէք լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր և անարժան Յոհանէս երիցուս և ծնողացս իմոց, իմ Հօրն՝ Թաքարին և իմ մաւրն՝ Թուրվանդին, և եղբօրս իմոյ Յովանէսին, և որդոց իմոց Յովսէփին, Մարտիրոսին և Անանին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց. և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

---

[24] Տողերի առաջին տառերից հոդվում է «Յովանէս»։
[25] Կարդացվում է մեկընդմեջ տառերով. «Որ ի նմանութիւն Կարմիր Լանուս»։
[26] Սա դրված է աջից ձախ։

Զ

293բ Ես՝ Յովանէս քեղ ծառայ,
Ռահման ըռաւան քում առայ,
Նառար խիրթար սալարա,
Աստուածածին Մարիամ։

782
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 6112 (1462 թ.)

174ա Գրեցաւ և կաղմեցաւ Մաշթո[ց]ս թվին ՌՃԱ (1652)։ Հին թիւն այս է ՉԺԱ (1462)[27]։

783
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 6231

Գրիչ Ստեփանոս
Վայր՝ Նորգ

ա

9ա Որոց աղօթիւքն ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս խօջայ Գրիգորին և կենակցին իւրոյ՝ Հուսնիիանին, և հոգևոր որդուոցն՝ Մկրտչին և Յակոբին, և ծնօղաց նորին՝ պարոն Արզումբէկին և Եղիսաբեթին, և եղբօր նորին խօջա Աւետիսին, և կողակցին իւրոյ՝ Մանուշակին, և որդուոցն՝ Արզումբէկին, Սիմէօնին, Մարգարին և ամենայն արեան մերձաւորաց, ընթերցողիս և լսօղացդ և մեղսամակարթ Ստեփանոս գծողի։ Եւ որք զաղօթս [յիշէ]...։

բ

30բ Մեղօք լցեալ, հոգւով խաւարեալ... Սաեփաննոս գծօղս ի դուրս մնացեալ։

Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ մօր քո և կուսի, ողորմեա մեղսամակարթ Ստեփանոս գծողի, մանաւանդ խօջայ Գրիգորին, և ամուսնոյն Հուսնիխանին, և ծնօղացն՝ պարոն Արզումբէկին և Եղիսաբեթին, և եղբօրն՝ խոջա Աւետիսին և զարմից սոցին[28]։

Գրիչ՝ Կարապետ

գ

56ա Գրած է ի նաւասարդի. գիտ և կարդայ և զեղկելի Կարապետ գծագրողս յիշեայ. ամէն[29]։

---

[27] Ձեռագրի 174բ էջում, մեծ մասամբ եղծված, կարդացվում է. «Յակոբ որդի Յարութենին, որդւոյն տէր Յակոբայ, յորժամ ծնաւ էր թուականն ՌՃԼԴ, ի յամսոյն ///»։

[28] Մինչև սույն հիշատակարանը ձեռագրի 30ա էջում գտնվում է չափածո, որի սկզբնատողերից հոդվում է «Գրիգորի էջ։ Չափածոն պատմական արժեքից զուրկ է։

[29] Խոսքը վերաբերում է «Վկայաբանութիւն սրբոց Ոսկեանցն»-ին։

Դ

656բ Փառք..., որ ետ կարողութիւն անիմաստ և սխալամիտ զծողի և գրչարկի Կարապետ մեղսամակարթ դպրի հասանել յաւարտ և ի վերջ այսմ հոգէնորոգ և աստուածաբան մատենոյս, որ կոչի Յայսմաւուրս ... Եւ արդ՝ յաղագս բազում պատճառաց փափագին ջերմեռանդ սիրով արդիւնս բարութեան ե գործս հաճոյականս կատարել ի փառս Աստուծոյ. նախ՝ Վասն յուսոյ արքայութեանն...։

Երկրորդ՝ զի մեք ապականացու գոլով... ստանամք զգիրս. զի անապական կենացն արժանի լիցուք, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ։

656ա Երրորդ՝ ... // Գրեմք զգիրս, որ զամենայն աստուածային գանձս յինքեան պարունակեալ ունի, նախ զվերին իմաստութիւնն և ապա զամենայն սրբոց յիշատակութիւնս, որ գրեալ կան ի սմա։

Չորրորդ՝ վասն պայծառութեան եկեղեցոյ...։

Հինգերրորդ՝ վասն օգտութեան, բարեզարդութեան և իմաստութեան հանճարոյ և աստուածպաշտութեան մանկանց նորս եկեղեցւոյ...։

Վեցերրորդ՝ վասն բարեխօսութեան առ Աստուած...

Եւթներրորդ՝ զի զպատմութիւնս սրբոցն, որք ի հնումն և ի նորումս կատարեցան...։

Ութերորդ՝ վասն հաւաստեաւ կենդանի և անչինչ յիշատակութեան առաջի բարերարին Աստուծոյ...։

Տասներորդ՝[30] վասն պատուելոյ զտօնս տէրունականս...։

Մեռասաներրորդ՝ վասն տօնախմբութեան և ներբողական գովասանութեան իւրաքանչիւր իւր տօնի...։

Երկոտասաներորդ՝ վասն նախանձու և ի փափագ շարժելոյ այլս...։

657ա Արդ՝ ցանկացօղ եղև այսմ տա//ռի պարոն Գրիգորն մեծաւ փափագմամբ և յօժար սրտիւ, յետ թողեալ զամենայն հոգս մարմնական և ետ գրել զգիրքս յիշատակ հոգւոյ իւրոյ և բազմերախտ ծնողացն, հօրն՝ Արզումբէկին և մօրն՝ Եղիսաբեթին և ամենայն մերձաւորացն։

Արդ՝ եղև զրաւ գրչագրութեանս սորա ի յերկիրս Այրարատեան, ի գեղս, որ կոչի Նորգ, ընդ հովանեաւ Ս. Սիմէոն ծերոյն և Ս. Աստուածածնին, ի թուաբերութեանս հայկազեան տումարի ՌՃ և մէկ (1652) թուի, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի և աթոռակալութեան սբ. Էջմիածնայ Յակոբ վարդապետի, և յեպիսկոպոսութեան Ս. Ամենափրկչին Սիմէոն քաջ ռաբունապետի, և յեպիսկոպոսութեան սբ. Գեղարդեանն Դաւիթ պարոնտէրի, և յայսմ ժամանակի նորեգեցաւ Սուրբն Գայիանէ հրամանաւ սբ. հայրապետին Փիլիպոսի. և յիշատակ նոցին օրհնութեամբ եղիցի։ Ի յաշխարհակալութեան փոքր շահ Ապասին, ի ղանութեան Մահմատ-ղուլի խանին։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեանդ զսբ. հանդիպողդ, որք պատահիք սմա տեսութեամբ օրինակելով կամ կամ կարդալով և լսելով, յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Գրիգորն զստացող Յայսմաւուրիս, զի էր սա ի Այրարատեան ի գեղաքաղաքէն Երևանայ, որդի Արզումբէկի, որդւոյ Սիմէոնի, որ մականուն Մոծակ կոչի։ Եւ յաւուր միում մտաւ ածեալ զգործ վաճառականութեան յուսացեալ յԱստուած և յաջողութիւն

[30] Ձեռագրում իններորդը անուշադրությամբ բաց է թողնված։

նորա. և գնաց. և ի գնալն նորին էր հասակն իւր ամաց վեշտասանից։ Առաջնորդութեամբ Սատուծոյ և ձեռնտուութեամբ Հոգւոյն Սրբոյ ել յերկրէ և յազգէ իւրմէ վաճառական պատճառաւ, գնաց ի յերկիրն Իլախաց, որ է Լեհ, զոր բազում նեղութիւն և անձկութիւն կրեաց ընդ ծով և ընդ ցամաք շրջագայութեամբն իւրով ամս Ի (20). և յետոյ միտ էած դաւանգութիւն նախնեացն և զզանազանութիւն տիրախնամ, աստուածաշէն երկրին իւրոյ Այրարատեան և զիջումն Միածնին ի նմին և զայլ բազմութիւն սրբոցն, որ անդ կան կառուցեալ և զպայծառութիւն բարձրաբերձ եկեղեաց, որ շինեալ կայ ի թագաւորաց և յիշխանացն Հայոց ի բաղում ժամանակաց։ Զայս ամենայն ի միտ բերեալ աստուածասէր այսր այս խոջայ Գրիգորն և մեծաւ փափագմամբ յուղի անկեալ եկն եհաս ի բնիկ յերկիրն իւր Այրարատ, զոր տեսեալ ազգայինքն ուրախացան և բնակիչք քաղաքին յոյժ ուրախ եղեն ի գալ նորա։ Վասն զի լուեալ էին զբարեմտութիւն նորին և զսէրն, զոր առ Աստուած ունէր և Երևանու քաղաքիս մուլքն ազատեալ վախմ արար յիշատակ իւրն և ծնողացն իւրոց։ Եւ շինեաց զԿաթուղիկէի եկեղեցոյ ժամատուն ի հմանց
657բ բաղում ծախիւք և ետ ընծայս եկեղեցոյ մէկ Յայսմ//աւուր, Ա (1) Ճաջոց, Ա (1) ոսկէտուփ մագաղաթ Աւետարան, Ա (1) Ատենի Սաղմոսարան, Ա (1) զարբաթ շուրջառ իւր զգեստովն, Ա (1) արծաթէ բուրվառ, Ա (1) ջահ, Դ (4) թուջի կանթեղ, Ա (1) թիքմայ վակաս մարգարտաշար, Գ (3) պատկեր քաթանի վերայ շինած, Ա (1) թիքմայ[31] սաղաւարտ մարգարտաշար, Բ (2) պասմայ ծածկոց, Ա (1) թուջի բուրվառ, Գ (3) շապիք, Ա (1) ջուխտ ցնծղայ, Բ (2) զանկակ, Ա (1) ջուխտ արծաթէ քշոց, Ա (1) խաչվառի խաչ, Ճ (100) մարչլի իւր խաչվառովն, Ա (1) վարագուր նորոգեաց իւր խարճովն, Ա (1) կամուրճ շինեաց Փարաֆարայ ջրին վերայ, Ա (1) քահրէզով աղբիւր ջուր երեր ի Ղրբուլախի ջրէն, Կաթուղիկէի շրջապատի միջովն հասոյց ի մէջ քաղաքին կամարաձև կերպիւ, որ և Աստուած վարձահատոյց լիցի ի յաւուրն դատաստանին. ամէն։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սր. եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարոն խոջայ Գրիգորն և զկողակիցն՝ զՀուսնիխանն, և զհոգևոր որդիքն՝ զՄկրտիչն և զՅակոբջանն, և զծնողքն իւր՝ զԱրզումբէկն և զեղիսաբեթն, և զեղբայրն իւր՝ զխոջայ Աւետիսն, և զԱւետիսի որդիքն՝ զԱրզումբէկն, զՍիմէոնն և զՄարգարէն, յիշեցէք... Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ և զհեզահոգի այրս Աստուծոյ զԳրիգոր, որ ստացաւ զայս հոգէփրկանք ընծայքս և ընծայեաց ի դուռն Ս. Կաթուղիկէի եկեղեցոյն, անջինջ յիշատակ հոգոյն իւրոյ և ամենայն ննջեցելոցն. ամէն։

Եւ մեր տեսեալ զայնպիսի քաջ հաւատս սորա և զբարեգործութիւնս որ ընդ ամենեսեան՝ առ քահանայս և յեկեղեցիս, առ աղքատս և ի կարօտեալս, առ նեղեալս և ի բանտարգեալս, վասն որոյ և կամք մեր ստիպեալ յօժարեցին զմեզ գրել զինքն և զիւրսն ամենայն յիւրում ըստացուածիս, զի ամենեցուն տեսեալ զայս, յորդորեսցին ի բարիս գոր-

31 Ձեռագրում՝ «թիմյք» ձևով։

ծել։ Եւ արդ՝ օրհնութիւն ամենակալին Աստուծոյ եկեսցէ և հանդիցէ ի վերայ նորա և ցօղն ողորմութեան ցօղեսցէ յոսկերս ննջեցելոց նորա...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոշայ Գրիգորն և զպապն իւր՝ զՍիմէոն և զհայրն՝ զԱրզումբէկն, և զմայրն՝ զՆղիսաբեթն, և զմօրէ պապն՝ զՍամուզենց Ստեփանն, և զանեղբն իւր՝ զՍղաբէկն և զորդի նորա զպարոն Էալբէկն, յիշեցէք...։ Այլ և յիշեսջիք ի տէր զԳրիգորն և զկողակիցն՝ Հուսենիխանն, և զզոքանչն իւր՝ զՄահինանն, և զհոգոյ որդին իւր՝ զԻզեաիոս, և զաղախինն իւր՝ զԹիթրիխանն և զայլ ամենայն աշխատողս, որ ի տան սորա իցեն։

Դարձեալ աղաչեմք զսպասաւորք սբ. եկեղեցոյ, զի խնամով պահէք զգիրքդ ի յամենայն պատահարաց, ի ջրոյ, ի հրոյ, ի ձիթոյ, ի մոմոյ. և սպիտակ դաստառակով բռնէք և կարդայք և Աստուած զձեզ պահէ յամենայն չարէ. ամէն։

658ա Այլ և ի կատարման գրոցս և ի Յարութեան օրին կարդայք զյիշատակարան գրոցս։ ...

Կրկին անգամ աղաչեմ, յիշեցէք ի Տէր զանպիտան գծողս զԿարապետ դպիրս և զմայրն՝ զԳօզալաղէն և զամենայն արեանառու մերձաւորսն։

Դարձեալ յիշեցէք ի Տէր զԿաթուղիկէի եկեղեցոյ քահանայքն՝ զտէր Սարգիսն, զտէր Յակոբն, զտէր Մկրտիչն, զերկրորդ տէր Յովանէսն, զտէր Պետրոսն և զայլ սպասաւորք սբ. եկեղեցոյն։ Այլ և զԲ (2) Երեսի եկեղեցւոյ քահանայքն՝ զտէր Մելքիսէթն և զտէր Մաթէոսն, զտէր Յոհան, զտէր Անանիայն, զնորընծայ տէր Կարապետն և զայլ աշխատող սբ. ուխտիս։ Այլ և յիշեցէք զաշակերտն իմ՝ զՅակոբն, որ բազում աշխատանս կրեաց ի թղթոյս կոկելն և յայլ ձեռնատուութիւն գրքիս և դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ։

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Տէր զխոջայ Մաթէոսն, որ զմեզ միշտ յագեցուցանէր գոյնզգոյն կեր[ա]կրօք և անուշահամ բաժակաւ, որ և Աստուած իւրն զանմահական սեղանն և զանհատ բարիսն պարգևեսցէ աստ...

784

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 6731 (1614 թ.)

Հետ. ստացող՝ Ասվատուր

ա

32

68ա



Գիրքս այս որ կոչի Տօմարի մեկնիչ։ Արդ՝ աղաչեմ զձեզ, օվ եղբայրք, սայ կարդալով կամ օրինակելով մի Հայր մեր ասացէք Վանեցի

32 Ծածկագրությունը վերծանել է պրոֆ. Ա. Աբրահամյանը. «Զի զբո[է] արքայութիւն։ թվ. ՌՃԳ։ Վանեցի է» (տե՛ս «Պատմա-բանասիրական» հանդես, № 1, 1958 թ., էջ 183, նույ-

տէր Յովասափի որդի տրուպ Ասվաատուրին, որ անուամբ միայն եմ և գործովս դատարկ և ունայն։ Հ[այոց] ՌՃԱ (1652). ամէն։

Բ

210ա Գիրք այս Վանեցի տէր Յովասափի որդի Ասվատուրին է, որ ըստացաւ խալալ վա[ս]տակոց իւրոց. թվին ՌՃԱ։

785

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 6979

Գրիչ՝ Թուխման
Վայր՝ Բալու

ա

112ա Փառք...։ Արդ՝ դրեցաւ երգս Ներսեսի Կլայեցւոյ Հայոց կաթուղիկոսի, ի յիշատակ և ի վայելումն անձինն[33]։ Արդ՝ եղև զբրաւ սորա ի գիւղաքաղաքս Բալու, ընդ հովանեաւ Ս. Գրիգորի Լուսաւորչին, և ի թվականութեանս Հայոց ՌՃԱ (1652) ամի, ձեռամբ Թուխման գրչի, ի վայելումն[34] որ և Տէրն բարով վայելել տացէ. ամէն։

Բ

77ա Կենաց բաշխօք միշտ ղանթերին,
Ըզմեզ յիշեն առ ի բարին։

786

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6992

Ստացող՝ Մինաս վարդապետ

ա

292ա Փառք...։

292բ Արդ՝ իսկ ես՝ Մինաս վարդապետ հուսկ և տրուպ ամենայն վարդա-
293ա պետաց // ի բաղում ամաց յղձմամբ և տենչմամբ տոչորեալ էի ի յուղղաբան լուսընկալ սբ. Աւետարանիս։ Ահա հանդիպեցայ լաւ և ընտիր աւրինակի և իմ առեալ բաղում կարօտիւ և ջերմեռանդ սիրով ետու գրել զսա և ծաղկել որպէս կու տեսանէք, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց և ամենայն արեանառու մերձաւորացն, յաղագս լուսաւորութիւն հոգոյ իմոյ, յիշատակ յաւիտենական ըստ մարգարէին Դաւթի և թէ «Երանի...»։ Զի վասն այս յուսոյս ետու դրել հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնաւղաց մերոց, հաւրն մերոյ՝ Ամիրդոլվաթին, և մաւրս Խաթունիկին, և քևերցս մերոյ Նուրիխանին և Մղտեսուն. և առ միանգամ հաւ-

---

նի, Հայ դրի և գրչության պատմություն, Երևան, 1958, էջ 224)։ Ընթերցումը որքան է ճիշտ, դժվարանում ենք ասել, բայց հաստատ է այն, որ ձեռագիրը ոչ թե «ընդօրինակված է վանեցի Ասատուրի որդի տէր Հովասափի կողմից 1652 թվականին (տե՛ս ՊԲՀ, 1958, № 1, էջ 183, Հայ դրի..., էջ 223), այլ «Տէր Յովասափի որդի Ասվատուրին է», այսինքն հետագայի ստացողը։

[33] և [34] Երկու դեպքում էլ ստացողի անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

բեղբարցն՝ Ազիզին, և է (7) եղբար պապերուս մերոյ Սարգիսին և Ստեփանոսին, և առ հասարակ ամենեցուն. ամէն։ Եւ երես անկեալ աղա-
293բ ,եմ // հանդիպօղք զարմանագործ ոսկոյս և ծաղկանցս միով Տէր մեղայիւ արժան առնէք զվերոյ դրեալքս, և դուք զնոյն զտջիք ի Քրիստոսէ։

Գրիչ՝ Նիկողոս

Բ

Նաև զիս՝ զբազմամեղ և զանիմաստ զծող սբ. Աւետարանիս զՆիկողոս մեղաւորս, աղաչեմ յիշել ի Տէր միով Հայր մեղայիւ, և դուք զնոյն գտջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Նաև զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ սրբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ հասոյց զմեղաւորս ի յայսմ արհեստիս զրել և ծաղկել. զփոխարէնն ի Քրիստոսի առնուցու։ Նաև զմարմնաւոր ծնաւղսն իմ և եղբարքս և քորքս աղաչեմ յիշել ի Տէր։ Ընդ նմին և զտէր Յակոբ աբեղան, որ բազում աշխատանք կրեց ի ոսկի կոկելն կամ երթևեկ առնելն, Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ հանդեր[ձ] ծնաւղիւքն իւրովք. ամէն։ Գրեցաւ թվականիս մերում ՌՃ և Ա (1652)-ն ի փառս Քրիստոսի...։

Գ

151ա Զծոյլս ի բարեաց և զարագս ի չարեաց զանպիտան գծող սբ. Աւետարանիս զՆիկողոս մեղաւորս աղաչեմ յիշել ի Տէր. ընդ նմին և զստացօղ սբ. Աւետարանիս զՄինաս քաջ բարունապետն և դուք յիշեալ [լինցիք][35]։

Դ

230ա Զմեղաւք լցեալ և աղտեղաւք շաղախեալ զՆիկողոս զանարժան գրրչակս աղաչեմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ ([լինցիք]։

787

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7014

Գրիչ՝ Աւագ աբեղայ

ա

149բ Փառք...։ Ի թվին Հայոց ՌՃ ու Ա (1652)-ին գրեցաւ զԲառագիրքքս, ձեռամբ ումեմն միաբնաւորի երկոտասան դեռտր[36]. Աստուած ողորմի ասացէք իւրն և իւր ծնօղացն. ամէն։ Եւ յետ սորայ ի սուտանուն կոչեցեալ Աւագ կրօնաւորս զպակասն լցուցի, բազում աշխատութեամբ սրբագրեցի զսա, յիշատակ ծնօղաց իմոց և ինձ պարտաւորելոյս, Աս-
150ա տուած ողորմի ասացէք // և դուք ողորմութիւն գտջիք ի Քրիստոսէ. ամէն։

---

35 գ հիշատակարանն ամբողջութեամբ գրված է գլխատառերով և ոսկով, իսկ «ղՆիկողոս մեղաւորս»՝ սև մելանով։ Ձեռագիրը հավանաբար ընդօրինակվել է Կաֆայում։

36 Առաջին գրիչը գրել է ձեռագրի մինչև 138բ էջի կեսը, դարձյալ ծէ գարում, իսկ մնացածը՝ Ավագ աբեղան։

Այլ և այսմ ամի սբ. էջմիածնա[յ] կաթողիկոսն եկն ի սբ. քաղաքս յԵրուսաղէմ Ի (20) վարդապետաւք և այլ միաբանք ընդ նմա երկրպագութիւն ի սբ. գերեզմ[ան]ին Քրիստոսի և այլ տնօրինականացն։ Այլ և Սիսայ կաթողիկոսն երեկ և ԺԲ (12) միաբանք ընդ նմա, բովանդակք էին Ճ (100) կարգաւոր և Ռ (1000) աշխարհական, որ ուխտ եկին ի սբ. Երուսաղէմ։ Եւ այսմ ամի գեղեցիկ [յ]աւրինուածովք սալկապ արարին ի Ս. Յակոբ, յաթոռ Տեառնեղբօրն Յակոբայ, առաջնորդութեամբ քաջ և աստուածաբան և արհի Աստուածատուր վարդապետին, զոր և հատուցանողն ամենայնի տէր մեր Յիսուս Քրիստոս տացէ իւրեանց զերկնից արքայութիւնն և ձեզ՝ կարդացողացդ և լսողացդ, և ինձ գծողի Աւագի. ամէն։

Բ

174ա Աղաչեմ զձեզ, եղբարք, ով որ կարդայք կամ աւրինակէք կամ լսէք, Աստուած ողորմի ասացէք Աւագ գրչի ե-եպիսկոպոսի և իւր միաբան եղբարձն. ամէն։

Գ

237ա Ընթերցողացդ մաղթեմ մեղապարտ գրողիս մեղաց թողութիւն հայցեցէք Աստուծոյ և իմ ծնաւղացն և իմ Դ (4) եղբարձն և Գ (3) քուերցըն, և ազգակիցն և Աստուած զձերն թողցէ. ամէն։

Դ

244բ Աղօթասէր հաւրս Յոհանու Ոսկիբերանիս բարեխօսութեամբ, Քրիստոս Աստուած ողորմեայ բազմամեղիս՝ գրողիս Աւագ արեղային և իւրոցն...[37]։

788

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Երևան, № 7317

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ

ա

303ա Փառք քեզ Քրիստոս Աստուած, որ յանգ հաներ զմեղաւոր ծառայս զՅովանէս սարկաւագն։

Բ

314բ Աւարտեցաւ կանոնքս ձեռամբ Յովանէս սարկաւագի, թվին Հայոց հազար հարիւր և մէկին (1652)։

---

[37] Ձեռ.գրի 273բ էջում գրված է մի չափածո հիշատակարան՝ նվիրված Փիլիպպոս Աղրակեցի կաթողիկոսի 1652 թ. Երուսաղեմ գնալուն։ Չափածոյից պահվել է չորս քառյակ և հինգերորդի առաջին տողը. մնացածն ընկած է։ Քառյակի առաջին տողերի առաջին տառերից հոգվում է «Մարտի[ոս...]»։

789
ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Երևան, № 7574 (1239 թ.)

181բ Ի մեղաւոր և անարժան հողու հաւասար Գրիգոր<որ> իրիցուս մեղացն թողութիւն շնորհեայ, սբ. հայրապետաց աղաւթիւքն ողորմեայ մեղաւորիս։

Թվին ՌՃԱ (1652) եկաւ Փիլիպոս կաթողիկոսն ի Ըստըմբոլ, այն տարին էր, որ ալվի Զ (6) խուռուշ[38] խարաճ տվաք, մարդու գլուղ Բ (2), մէկ ժում[39] առաւ. Աստուած փրկէ ի փորձանաց[40]։

790
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7606

Գրիչ՝ Միքայէլ սարկաւագ
Վայր՝ Խզնավար

ա

275բ Փառք...։

276բ Զոր և տեսեալ զսոսայսն անճառ փրկագործութեան խորհուրդ սքրրասէր և մաքուր և բարեգործ այրն Զաքարայ և բարեհոգի և առատամիտ ամուսինն իւր՝ Նանէրն, ոչ ունելով իւրեանց գաւակ մարմնաւոր և կամ յիշատակ ի վերայ երկրի, այլ ի միտ առան զբանն Աւետարանին որ ասէ. «Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենայ...»։

Եւ արդ՝ ես յետինս ի կրաւնաւորաց և անարժանս ի կրաւնաւորաց մանկանց եկեղեցւոյ՝ Միքայէլ սարկաւագս, տեսի զսէր և զփափագ առատամիտ Զաքարին և ամուսնոյն՝ Նանէրին, և Նանէրի եղբաւր Սարքքսին, Աստուած իւր վարձն հատուցանէ աստ և անդ, որ կամակից եղև
277ա գրելոյ սբ. Աւետարանիս, զոր ունէին առ // /// իմ անընդունակ գոլով յարուեստս գրչութեան, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց Հոգին Սուրբ առ մեզ մա[ր]դասէր Հոգին, յանձն առի և բազում աշխատութեամբ և տառապանօք գծագրեցի զսա մեղսամած մատամբ իմով, ի յաստուածաբնակ և յանառիկ դղեակս Քաշքաղ, ի գ[ե]օղն Խզնավար[41], ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց վերադիտողի, ի թվաբերութեանս Հայոց ՌՃԱ (1652)։

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմք զսրբութիւնդ ձեր սբ. ընթերցողք, հարք և եղբարք, յիշեցէք զմեղաւոր գրող սորա և զծնօղսն և եղբարքն։

Դարձեալ [յիշեցէք] Զաքարէն, կողակիցն՝ Նանէրն, եղբայրն՝ Թա-

---

38 Ձեռագրում գրված է այսպես. «զխոռ» կարելի է կարդալ նաև «զխոՌ (40000)»։ Նախընտրեցինք առաջին ընթերցումը։

39 Ձեռագրում «մէկ ժում» բառերը ուղղված են, կարդացինք ենթադրաբար։

40 Ձեռագրի 1ա, բ էջերում կան 1617, 1625, 1633, 1639 թվականների խիստ համառոտ նշումներ, որոնք եղծված լինելու պատճառով դժվարընթեռնելի են։

41 Իմա Խոզնավար կամ Խազնավար. գյուղ պատմական Սյունիքի Աղահեճք գավառում։

մուրն, *ամուսինն՝* Շարբաթն, *միւս եղբայրն՝* Խաչատուրն, *ամուսին* Գուլխաթունն *յիշեցէք ի Քրիստոս...։*

Ստացող՝ Զաքարէ

Բ

277բ *Եւ արդ՝ ես* Զաքարէս *ստացայ սբ. Աւետարանս ի հալալ և յարդար վաստակոց իմոց, յիշատակ // ծնաւղաց իմոց, որք ընթեռնուն ի ժամ սբ. և սոսկալի պատարագին, և թողութիւն հայցեն մեղացն. հարն իմոյ՝* Իփակին, *մարն իմոյ՝* Հոռոմին, *ամուսինն իմ՝* Նաներին, *եղբօրն՝ տանուտէր* Սարքսին, *և իմ եղբօրն՝* Թամուրին, Խանումին, *կողակցին իւրոյ՝* Շարբաթին, *հարազատ որդին՝* Վարդանանին, *ամո[ւ]սինն՝* Խանումին, *միւս որդին՝* Գրիգորին, *ամուսինն՝* Մարիամին, Թամուրի *դստերն՝* Շնաւորին, Սանդուխտին, Խանումին, Ղումաշ[ին] /// *[հանգուցե]լոցն ամենայնի. ամէն։*

Դարձեալ յիշեցէք զբ[ա]րեմիտ Զաքարէն *և հիւրընկալ կին[ն] իւր՝* Նաներ /// *եղբայրն* Խաչատուրն, *հայրն՝* Ուլուխանն *և մայրն իւր՝* Հուրիխանն, *յիշեցէք ի Քրիստոս*[42]։

791

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7713

Գրիչ՝ Թադէոս Վանեցի

Վայր՝ Արծկէ

ա

421բ *Աւրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն գթածին, ... որոյ շնոր-*
422ա *հօք աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ // սբ. Աւետարանս...։*
423ա *... Որոյ ցանկացող եղեալ սբ. Աւետարանիս պատուական*[43]։

Աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թվին ՌՃԱ (1652) ամին, ձեռամբ անարժան և մեղաւոր Թաթոսի:

423բ *Եւ արդ՝ ես անարժանս և անպիտան ծառայս ծառայիցդ Աստուծոյ սուտանուն* Թադէոս *աւարտեցի սբ<զսբ.> Աւետարանս ի քաղաքն* Արծկէ, *ի դուռն Ս. Սքանչելագործին և Ս. Սիոնի և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ։ Եւ առաջնորդութեան սբ. ուխտիս տէր* Սիմէոն *արհեպիսկոպոսի և հերպետին մերոյ տէր* Կարապետին, *և միաբանաց սորին տէր* Թումայ *մեղմագունին, և* Սիոն *անիրաւին, և տընտես մամուն՝* Շանսոլթանին, *և հոգևոր եղբօրն իմոյ՝* Յակոբ *կրօնաւորին, Աստուած ողորմի ասացէք նոցա և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

Բ

424բ *Դարձեալ Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր գծողիս և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ մահդասի* Միրզին *և մօրն իմոյ՝* Նսէֆին, *և կո-*
425ա *ղակցին իմոյ՝* Շահադին, *և որդոյն իմոյ՝* Գրիգորին, *և դստեր//աց իմոց* Գուլաղին *և* Եփրեմսիմին. *և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

---

42 *Շարունակությունն ընկած է։*

43 *Վեց տող դատարկ։*

Նկարի տակ Ծաղկող՝ Սահակ

Գ

382բ Զտառուղեալ Սահակ ծաղկողս յիշեա առ Աստուած և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

792

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան, № 7839 (1438 թ.)

Վայր՝ Բժնի, Սևան

Նորոգող՝ Յովհաննէս բանասէր

359ա Արտ՝ ըստորազուղեալս մեղօք և խոր խոցեալս յանցանօք նետիւք, բանսարկուին Յովհաննէս սպասաւորս բանին, որ եմ յերկրէն Երընջակայ, որ յարևելեաս Նախիջաւանայ, ի դեղօս Շոնոթու, ի շրջաբերութեան արամեանս տումարի և թուի ՌՃ և մու (1652) ամի եկի յանապատ Սևան յորջորջեալ, որ ի կղզիս ծովուս Գեղամայ, և տեսի աստ զալս հոգերգու և աստուածազարդ Գանձարանս յոգնակի ամանակօք, անպէտս գոլով ամենևին՝ ձգեալ ի բաց, որպէս զդի մեռելոյ, փտեալ, աւերեալ և ապականեալ, որ և ոչ էր մարթ նուագիւ միով բանալ կամ հպել վասըն անօգտութեան, թէպէտ այժմս նորոգեալ տեսանէք։ Եւ իմ տեսեալ զսա ջերմեռանդ սի[րով, յ]ոգնակի տենչմամբ առեալ բերի զսա ի մեծավայելուչ յաթոռս Բշնոյ Ս. Աստուածածինս և նորոգեցի զսա ըստ իմում կարողութեան, զոր և հայցեմ ի հարցդ և յեղբարցդ, թողութիւն շնորհել պակասութեան սորին։ Եւ առեալ զսա դարձուցի ի տեղի իւր

359բ յանա//պատս Սևանայ, յորում եդեալ էր։

Արդ՝ հայցեմք ի լուսարեմ և հրեշտակակրօն հոգևոր հարազա-<զա>տաց իմ, զի [յոր]ժամ ընթեռնուցուք զսուղ ինչ և անյարմար յիշատակարանս, յիշեսջիք զզառածեալս մեղօք զՅովհաննէս չնչին բանասէրս և զքարտուղարս, նաև զհայրն իմ՝ զՎարդան քահանայն, փոխեցեալն առ Քրիստոս Աստուած, յոյժսն ամենայն հաւատացելոց իւրոց, իսկ դուք յիշողքդ զմեզ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոս...։

793

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 9552 (1413 թ.)

Գեր. աղատող՝ Յովանէս

ա

275ա Մանաւանդ զվերջին ըստացող սր. և աստուածայխաւս Աւետարա-

275բ նիս Ազարիայ քահանայն, որ ըստացաւ զսայ // ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն և հաւրեղբարն իւրոյ՝ Մելքիսեթեկ քահանային, Կարապետին և կողակցին՝ Բէկին, և որդոցն՝ Յովանիսին և կողակցին՝ Գուլբէկին. և որդոցն՝ Էվազին, Սալբանդուլին, Ամիրդուլին, և հանգուցեալ եղբարցն՝ Առաքելին և Սալբանդուլին, և քվարացն՝ Մարանին, Հեղինին, Հոտումսիմին, Ջանին և կողակ[ց]ին՝ Գուլբէկին. և որդոցն՝ Աղարիային, Մարզարին, Տէրունին և Սանուելին. և քվերացն՝ Եղիսաբեթին,

Սալթանին և որդոյն իւր՝ Անանիին, Սարքսին, Մարգարին, Զաքարին և մայր Հուտումսիմին: Աղաչեմք զձեզ, ով դասք սբ. երամից, որք աւգդիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր. Աստուած ողորմի ասացէք...։

Մանօանդ և ես՝ Յովանէսս ԳՌ (3000) դահեկան տվի զԱւետարանս թափեցի ի գերութէնէ։ Այլ մարդոյ [դ]օր չլինի։ Երախտաւորաց Տէր ողորմեսցի յաւիտեանս. ամէն։

Բ

Այլ գրով

Թվական ՌՃԱ (1652) էր որ տէր Մելքիսէքն աւրհնեցին։

794

ՄԱՇՏՈՑ

ՏԵՐԱՎԴ, № 93

Գրիչ՝ Մարտիրոս քահանայ

Վայր՝ Դաշտ

148բ Փառք...։ Արդ՝ աւարտեցաւ սբ. գիրքս այժմ, որ կոչի Մաշթոց ի թուականիս ՌՃԱ (1652), ի կաթուղիկոսութեան տեառն Ստեփաննոսի, Աստուած լուսաւորէ Սահականնոս կաթուղիկոսի հոդին. ամէն։ Եւ մերոյ արհեպիսկոպոսին տէր Յովհաննէսին, Աստուած լուսաւորէ իւր հոդին. ամէն։ Արդ՝ գրեցաւ աստուածախօս սբ. տառս, որ կոչի Մաշթոց ի գեաւղս որ Դաշտ կոչի, ի գուռն Ս. Յակոբայ հայրապետին։ Աստուած ողորմի ասացէք մեղսամած Մարտիրոսի[ն], որ գրեցի, և կապեցի, և բազում աշխատեցայ հետ գրքիս և ծնօղաց իմոց, հօր Կարապետին, մօր Շայումին. ամէն. և Մարտիրոս սուտանուն քահանայիս, և իմ կողակցոյն՝ Նուպարին, որդոյն՝ Կարապետին, Յովանէսին, Մխիթարին, Ինախին, մեծ պապուն՝ տէր Յովանէսին, հին և նոր ՆՆՁեցելոց նոցին. ամէն։

795

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏԵՐԱՎԴ, № 107

Գրիչ՝ Թումայ

Վայր՝ Աւրնդանց

182ա Փառք...

Ի թվականիս Ռ ամեան,
ՃԱ թիւ ընդ նման (1652),
Աւարտեցաւ սա ի լրման։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ մայելէք յայս բուրաստան,
Յիշման առնէք մեզ արժան,
Զթումայ հող և անպիտան։

. . . . .

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս... որ կոչի Շարակնոց ի լաւ և յընտիր աւրինակէ, որ խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի մեղաւոր Թումայիս: Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652), ի գեաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս. Գէորգա[յ] զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց. քանզի ես քան զես սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան դրծողս Թումայ, և զծընօղքն իմ՝ զԱետիս քահանայն և զմայրն իմ՝ զԱռիան, և եղբարս իմ՝ Վարդիկ, և զկողակից իմ՝ զԳոյայր, և զտղան իմ՝ զՅովանէս, և զքւեր իմ զԹանկիկ, և զՏրխուն և զՇիրին, և զպապն իմ՝ Վայաան քահանայն, և զվարդապետն իմ՝ զտէր Աետիս, որ բազում աշխատանք քաշեցին հետ անարժանիս, և ուսուցին զիս. Աստուած զնոցա հոգին լուսաւորէ և պայծառացուցանէ յիւր սուրբ միւսանգամ գալստեամբն. ամէն։ Ղև. զՋաջիկ իմ, և զՄաճուրն, և ըզխանումն...

796
ՃԱՌԸՆՏԻՐ
Մ3ԶԵՊ, II, № 368 (1300 թ.)

277 Ի թուոջ հայկազնէիս Ռ և ՃԱ (1652), ի սբ. քաղաքս Երուսաղէմ եկն մեծ հայրապետն Հայոց, սրբազան և երանաշնորհ և քաջ պրւետիկոս տեառն տէր Փիլիպպոս, յերկրպագութիւն գետնակոխ տեղեացն Քրիստոսի, բազում միաբանիւք աստուածաբան վարդապետօք, որք էին ձեռասնունդ և աշակերտք իւր Ի (20) թուով և այլ աւելի, և որք աբեղայից և այլ աշտիճանաւորաց, ամենեքեան առաւել քան զԿ (60) հոգի, միաբանք սբ. Էջմիածնի, զորս ընդ ինքեան բերեալ յերկրպագութիւն գերեզմանին Քրիստոսի։

797
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
Մ3ԶԵՊ, II, № 293

Գրիչ՝ Ղազար երէց
Վայր՝ Կ. Պոլիս

119 Փառք...։ Աստանօր գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ հոգեզուարճ
120 բուրաստանս, որ ասի // Հարանց վարք, որ արդարև ըստ անուան իւրոյ սկիզբն արարեալ պատմէ զվարս հարանց սրբոց և զմիանձանց, և զպատմութիւն թագաւորաց, հայրապետաց և զեղգնաւորաց սրբոց, որով յորդորէ զհաւատացեալս ի սէրն աստուածային։

Սա վարժարան կրօնաւորաց,
Ուսով ըզխաչըն բարձօղաց,
Եւ հրահանգիչ ճգնաւորաց,
Ընդդէմ չարին մարտնչողաց։
. . . . .[44]

Զորոյ զճաշակ առեալ մեծաւ փափաքանօք ստացեալ զսա ի յարդար գոյից իւրոց աստուածասէր Ակնցի Յակոբ դպիրն, ակն կալեալ բանին Պօղոսի առաքելոյն որ ասէ. «Զգիրս, սուրբս գիտես որ կարողն է զմեզ իմաստուն առնել»։ Այլ և վասն քաւութեան և թողութեան մեղաց, որպէս և ասէ Տէրն. «Արարէք պտուղ ապաշխարութեան»։ Եւ մարգարէն ասէ. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, և զանօրէնութիւնս քո տրօք տնանկաց»։ Նայև վասն օգտութեան և բարեզարդութեան և իմաստութեան մանկանց եկեղեցւոյ, զի ամենայն ուսումն և առաքինութիւն դրովք կատարի։ Այլ և ի նախանձ և ի փափաք շարժելոյ զայլս ճշմարիտ արդեանց և բարի գործոց ըստ ասիցն, թէ. «Նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են»։ Ըստ այսմ յարացուցի աստուածասէր և հաւատարիմ քրիստոնեայս Յակոբս, վասն վերոյ ասացեալ օգտակար պատճառացս, ցանկացող եղև այս պատուական դրոցս և ետ գրել յիշիտակ հոգւոյ իւրոյ և բարեսէր ծնողաց իւրոց մահտեսի Վահրատին և մահտեսի Շահզատային, և քրեերցն՝ Քնարին, Դշխոյին և Մարիամին, և պապերցն նորին՝ Շահսլազին և Յովանէսին, և մամերցն՝ Քնարին և Մեհրիին, և հօրեղբօրն՝ Կիրսկոսին, և որդւոց նորին Յովանիսին և Ղուկասին, և հօր քվերցն՝ Զուլալին, Աղկուլին և Խումարին. և նախնեաց նորին Աւետիքին, Սիրունին և Նրահոսին, և Քնարին, և Խոնարին, և ամենայն համօրէն զարմից նոցին, այլ և զաւակացն իւրոց կենդանեացն՝ Յովանէսին, Մարթային և Ղուկասին, և հանգուցելոցն՝ Յովանէսին, Սառային, Մկրտչին, նաև կողակցի նորին Գոհարին, և ամենայն արեան մերձաւորաց, թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք, զի և Տէր զձերն թողցէ, և աշխատաւորքն և երախտաւորքն ի սա բարի վարձս ընկալցին յԱստուծոյ, յորմէ և մեզ յիշելոցս, և ձեզ յիշողացդ, և Աստուած ողորմի ասացողացդ տացէ Տէր զերկնից թագաւորութիւնն ի փառս անուան իւրոյ. ամէն։

Կատարեցաւ պատմութիւնս հարանց ի թվականիս Հայկազան զարմի ՌՃԱ (1652) ամի, ի մայրաքաղաքն երշանիկ ի մեծն Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ հրաշագեղ տաճարի Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի և Միքայէլի։ Նաև ի հայրապետութեան որ ի սբ. Էջմիածինն՝ տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, որ և յաւուրս է ի միջի մերում, ի քաղաքս Կոստանդինուպոլիս, հանդերձ միաբանութեամբ բազում վարդապետաց։ Եւ յառաջնորդութեան Սբ. Յերուսաղէմայ տէր Աստուածատուր երջանիկ բարձրապետի. ի ժամանակս իշխանութեան Տաճկաց սուլթան Մուհամատ նորաբողբոջ բռնաւորի, որդոյ սուլթան Իպրահիմի, ձեռամբ անցաւոր գրչի Ակնցի Ղազար իրիցի։

[44] Եվ այսպես դարձյալ 36 տող, չվերցրինք։

Աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք յերկնաթռիչ յաղօթս ձեր զվերոյ ասացեալ ստացող սորա զաստուածասէր Յակոբ դպիր, և ... Եւ աշխատաւորացն ի սա և սրբադրողացն և օրինակիս շնորհողացն վարձս բարիս տածէ Աստուած...

798
ԺՈՂՈՎՍԾՈՒ
Մ3ԶԵՊ, V, № 1485

Վայր՝ Երուսաղէմ

ա

208 Գրեցաւ աղաւթքս սրբ. տընօրինականացն ի դուռն Ս. Յարութենին, և Ս. Յոհաննէս Աւետարանչին, և ի Ս. Աստուածածնին, և ի Ս. Հրեշտակայպետին, սբ. և հրաշալի Գողգոյգային, և վայելումն մեղաւոր գրչիս, ով կարդայ կամ ով աւրինակէ, յիշէ...։ Աւարտեցաւ յետին բարէկենդանին աւրն շաբաթ փետր[ու]ար ամսոյ ի ԻԸ (28), թվին ՌՁԵ (1636), հայրապետութեան տէր Գրիգորին։

Բ

Գրեցաւ տեարս ի թվին ՌՁԸ (1639), ի դուռն Ս. Յարութեան։

Գ

Գրեցաւ ի Յարութեան դուռն մեղապարտ ձեռաւքս, և իւր ամենայն տընօրինական, որ կայն հաւաքեալ. և սբ. կենսաբեր խաչն բարեխօս են ամենայն աշխարհի. թվին ՌՂԱ (1642)։

Դ

Գրեցաւ տնօ[ր]էնականս ի սբ. Երուսաղէմու աւտանաւորս ի թվին ՌՃԱ (1652), ի գալ Փիլիպոս կաթողիկոսին ու Սբսայ կաթողիկոս եկան սբ. Երուսաղէմ, ու Պիլիպոսն խ (40) աշակերտաւք, ու նորոգեաց Յակոբ դրոշ (?). ամէն, ու գնաց ի Ս[տան]ուպոլ կամաւք Աստուծոյ։

799
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ3ԶԵՊ, V, № 1674

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

530 Փառք..., որ տկար անձամբ սկսայ ողորմութեամբն Քրիստոսի և կատարեցի նուաստ Յովանէսս։ ... Արդ՝ այսպիսում լուսազարդ տառի և աստուածախօս կտակի ցանկացող եղեն Աստուածատուր և Յակոբ կրբօնաւորքն, Բ (2)-ուք եղբարք, որ սիրովն Քրիստոսի հրաժարեցան յոնայնղբաղ կենցաղոյս և հետևեցան երկնաւոր կենացն...։ Եւ տեսանելով զպայծառութիւն սբ. գրոյս, զի սովաւ կատարին ամենայն կար-

պատրուաքիւնք Հայաստանեայցս եկեղեցւոյ... մեծաւ փափաքանօք ցանկացան ստանալ զսա ի վայելս անձանց իւրեանց, և յիշատակ ինքեանց և ծնողացն իւրեանց...

Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով,
531 դրինակելով, և // կամ միայն տեսանելով, յիշել զստացող սորա զԱստուածատուրն և զհարազատ եղբայրն՝ զՅակոբոսն, որ բազում հոգացողութեամբ և հետևելով լաւութեան թէ՛ մագաղաթին, թէ՛ գրոյն և թէ՛ ծաղկելոյն, ծախելով և զինչ առատս որպէս ինքս է յայտնի։ Եւ այս սակս սիրոյն Քրիստոսի, և վասն յիշատակի ինքեանց և ծնողացն իւրեանց։

Վասն որոյ աղաչեմ զձեզ, որք օգտիքդ ի սմանէ, բոլորով սրտիւ յիշեցէք զԱստուածատուր և զՅակոբոս կրօնաւորսն, և զծնողսն իւրեանց, զհայրն՝ Խէխէրն, և զմայրն՝ զՏուտիկն, զպապն՝ զԱստուածատուրն, և զհանիկն՝ զԹուշիտարի, զմօրէ պապն՝ զՍիամոնն, և զհանիկն՝ զԹառանն, և զորդիս նոցին՝ զԱղապէկի, և զԱղապէկէ որդին՝ զՅովանէսն, Սիամոնի դուստրն՝ զԹանկիկն, և զԹանկիկի դուստրն՝ Սղմէրն, և զԳայիտանէն և զայլ ամենայն արեան մերձաւորս նոցին. և որք յիշեն՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ...։

Բ

530 Ո՛վ ընթերցողք սբ. երգարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զիս՝ անարժան Յովանէս գրիչս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ։

Գրիչ՝ Սաճակ աբեղա

Գ

Արդ՝ մեք Աստուածատուր և Յակոբոս տառապեալքս, աղաչեմք զձեզ, ով հանդիպողդ այսմ լուսերանգ գրոյս, միով Հայր մեղայիւ յիշել զմեզ և զվերոդրեալ զծնօղս և զազգականս մեր, ընդ սոցին և զհոգեոր հայրն մեր՝ զԴաւիթ վարդապետն և զԲարսեղ վարդապետն, որ բազում երախտիք ունին ի վերա մեր։ Ընդ նոսին և զմիաբանք սբ. ուխտիս Ամենափրկչի, զմեծ և զփոքր։ Եւ զիս՝ զՍաճակ աբեղայ ծրօղ սակաւ յիշատակարանիս, որ եմ հոգևոր եղբայր և սնընդակից սոցա։ Եւ որ սրտի մտօք յիշէ...։

Գրեցաւ երաժշտական երգս, որ և Շարակնոց վերաձայնի, ի թուիս Հայոց հազարերորդի և հարիւրերորդի և միակ (1652) թուում, ի քաղաքն Շաւշ, որ և Ասպահան յորջորջի, ի քիւղաքաղաքն Նոր Ջուղայ, ի
532 հայրապետութեանն յայսմ նահանգի Յակոբ // րաբունոյ, ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապասին. ամէն։

800

ԱՒԵՏԱՐԱՆ

Մշեկ, VI, № 1938 (1611 թ.)

478 Արդ՝ վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Դանիէլ աբեղի, ի թվին Հայոց ՌՃԱ (1652)։ Արդ՝ քահանայք և պաշտօնեայք սբ.

479 եկեղեցոյ, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զմահդասի // Տաւնապետն, որ թաւի մի շալ երետ նորոգելէ շաբաշ հազար ղարշաբաշ, Աստուած ողորմի ասացէք իւրն և իւր ծնաւղացն. ամէն։ Աստուած ողորմի ասացէք մահդասի Աւէսիսին, որ նա եղև միջնորդ շալին Աստուած իւրեանց բազում վարձս տացէ. ամէն և եղիցի։

801

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՏԲԵՊ, VII, № 2347

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Համիթ

478 Փառք...։ Վասն որոյ յաստուածպետականն ծաւալեալ բորբոքեցաւ ի սիրտ աստուածասէր Սալինանին այսմ լուսայիղձ և կենսակիր... Աւետարանիս՝ սրբոյ մատենիս. կամ եղև ղի և զայս ետ դրել յիշատակ իւրն և ծնողացն՝ Պարսամին և Ճուճարին, և կենակցուն իւրոյ՝ մղտեսի Մաղթումին, և քուերն՝ Մաստունին. ամէն։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յաշխարհս Միջագետաց, ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ այժմ ասի Համիթ, ի գուռն Ս. Կիրակոսի եկեղեցւոյն, յառաջնորդութեան տէր Յովհաննէս սրբազան հայրապետին և աստուածաբան վարդապետին, և ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տէր Փիլիպոս խարազգեստ և առաքինի, սրբասնեալ կաթողիկոսի, և ի թուաբերութեան
479 անցելոց ժամանակաց՝ յելանելոյն Ադամայ ի դ//բախտէն ՅՊԾԱ (6851), և ի մարդանալոյն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ ՌՈԾԳ (1653), և ի Հայոց մեծաց թուականութեանս ՌՃԱ (1652), և ի թուականութեանն Տաճկաց տղահասակ սուլթան Մահմատին, ի դառն և ի նեղ ժամանակիս։

Վասն ղի նեղութիւնն յոյժ պատեր է ամենայն ազգս քրիստոնէից անպատեհ հարկապահանջութենէ, ևս առաւել յերկիրն Կրետացւոց, որ այս Զ (6) ամ եղև առեալ են զնորա գևղսն և աւանսն, միայն մնացեալ է բերդն. և պաշարեալ է Տալի Հուսէն փաշան երկրորդ թագաւորին, ե նստեալ կա ի վերա բերդին մինչև այս ամ։ Աստուած զնոցին վերջքն ի բարին արասցէ։

Նաև զսրբազան դիտապետն զտէր Մարկոս հայրապետն և աստուածաբան վարդապետն, և զծնողսն իւր, և ամենայն արեան մերձաւորսն, յիշել ի Տէր...։

Այլ և զբազմամեղ, ծոյլ և պղերգ, սուտ և փուտ Խաչատուր գրիչս յիշել ի Տէր աղաչեմ...։

Դարձեալ աղաչեմ զի մնասցէ սբ. Աւետարանս յիշատակ անջրելի ի գուռն Ս. Աստուածածնի եկեղեցւոյս, և մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սբ. եկեղեցւոյս։ Եւ որք լաւ պահեն և խնամք տանին սբ. Աւետարանիս՝ զվարձն և զփոխարէն յԱստուծոյ առցեն. ամէն։

Դարձեալ աղաչեմ զդասսդ քահանայից չլինել մեղադիր սխալանաց իմոց, այլ թողութիւն ջնորհեցէք...։

802
ԱԻԵՏԱՐԱՆ
Մշբեկ, VII, № 2349

Գրիչ՝ Անդրէաս Լորեցի
Վայր՝ Տաթև

484 *Փառք...։ Արդ՝ եղև զրաւ գրչութեան սորա, ի յերկիրս Ռոտեան, ի մեծ և հռչակաւոր աթոռս Տաթև ԹՌԸՃ (9800) սրբոց նշխարաց, որ աստ կան հաւաքեալ ի մէջ սրբոյ տաճարիս։ Եւ ի առաջնորդութեան տէր Մեսրոպ արհեպիսկոպոսին, և ի կաթուղիկոսութեան սբ. Էջմիածնա[յ] տէր Փիլիպպոսին, և ի թագաւորութեան Տաճկաց փոքր շահ Ապազին, ոչ առաջին, այլ յետին։*

Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անսնունդ և սղալաբան Անդրէաս անարժան դպրի, ի գեղէն Լորեցի, ի թուականութեանս Հայոց ՌՃ և մէկ (1652) ամին։ Արդ՝ յիշեցէք զԱնդրէաս գրիչս և Աստուած ողորմի ասացէք...

803
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Մշբեկ, VIII, № 2558 (1615 թ.)

202 *Ես՝ նուաստ Յոհաննէս բանի սպասաւոր, աշակերտ տեառն Աստուածատրոյ՝ սբ. Երուսաղէմայ հայրապետի, որ և ես մեղաւորս՝ շնորհօք Ս. Հոգոյն եղէ առաջնորդ սրբոյ աթոռոյս ամենայն հայոց։ Յորժամ սկիսբն արարի ընթերցման դրոց՝ ի սոյն Աստուածաշնչիս վերա ընթերցայ, թվին Հայոց ՌՂԷ (1648) ամին սկիսբն արարի և՝ ՌՃԱ (1652) ամին աւարտ հասի Աստուծով։ Եւ Տէր լուսաւորեսցէ զհոգիս Մարտիրոս վարդապետին, որ եղեալ է զԱստուածաշունչս յիշատակ հոգոյ իւրոյ սբ. յաթոռս։*

804
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՅՁՎՍ, I, № 63

Գրիչ՝ Ալիքսան երէց

ա

302 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. ժամագիրքս ձեռամբ մեղսաներկ Ալիքսան իրիցու, ի խնդրոյ տէր Պետրոս վերակոչեցեալ, որ ցանկացող եղև քաղցրանուագ սբ. բուրատանիս։*

Ի թվականիս մեր հայկազեայ,
Որ պատահեցաւ անուն Աննայ (1652)[45]*,*
Եւ է ամսոյն դեկտեմբերայ,
Տէրն ինձ օգնեց որ աւարտեայ։

[45] *1+400+400+1+300=1102+551=1653։ Այսպես է հաշվել ցուցակի հեղինակը և կրկնել Աշ. Աբրահամյանը (տե՛ս Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 235)։ Սակայն Հայոց ՌՃԲ տարեթվի դեկտեմբերը կընկնի ոչ թե 1653 թ., այլ 1652 թ. մեջ։*

Ալիմսանոս ոչինչ ծառայ,
Նաստ գրողս այս սբ. տաճեայ,
Հայրք և եղբարք

Բ

Դարձեալ յիշեսցջիք զտէր Պետրոսի ղկրսեր եղբայրն՝ զԻսրայէլն, որ մանուկ գոլով՝ գնացեալ ի տար աշխարհ, և ոչ գիտացեալ մեր զնորա ղողջն կամ զմահն. և ասասցիք Աստուած ողորմի, աղաչեմ։

Գ

Ով տօնասէր եղբայր, դի կարգաւ գրեցաք զերդս գիտ և ասա. և ստացող զրոցս մաքրամիտ և հեզահոգի զտէր Պետրոս քահանայն և սմեղաթաւալ գրչակս յիշեա ի Տէր, աղաչեմ։

805

ԱՒՏԱՐԱՆ

ՄՁԳՍ, I, № 176

Գրիչ՝ Խուպասար
Վայր՝ Յուլաշ

138 Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղասլարտ և անարժան գրիչս՝ սուտանուն Խուպասար, ընդ հովանեաւ Աստուածածնին, որ ետուր կարողութիւն տկար անձին իմոյ, յստարել զԱւետարանս ի լաւ և
139 ընդիր օրինակէ, որ կոչի Խլկցի, ի թվաբերութեանս // Հայոց ՌՃԱ (1652) ամին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ հայրք և եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով անմեղադիր լերուք, զի կարիք մեր այսչափ էր։ Եւ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղապարտ, մեղսասէր և անարժան գրիչս, զծնաւղս իմ և զուսուցիչն իմ՝ զՇամլուն, ի Քրիստոս Աստուած մեր և տէր։

Ի տանս հազար Հայոց թվական,
Ճ և Ա (1652) սկսեալ նոր ամ,
Աւարտեցաւ բանս տէրունական,
Որ յորջորջի Աւետարան...։
Ոմրն կցորդ գոլով անուան,
Տարսոնացւոյ համակոչման[46],
Բաղձանք շարժեալ ներքուսական,
Իբր իմաստուն վաճառական։
Ստացաւ սա գանձ անզուգական,
Զարմ ի Սիոն երանութեան,
Եւ մարգարիտ գեղեցկական,
Ոսկոյ յեռեալ գոյն զանազան։

---

[46] Այս տողին Բ. Սարգիսյանը տալիս է հետևյալ ծանոթությունը. «Տարսոնացի յորջորջմամբ հաւանօրէն Պողոս առաքեալը կը հասկանայ, հետևաբար նաև անոր անուան «համակոչման» կցորդ եղողն ալ Պողոս ըլլալու էր» (էջ 739)։

Եւ յիշատակ բարի՝ յինքեան,
Եւ ծնաւղաց առուարեան,
Համանգամայն բոլոր ծնընդեան,
Աղգատոհմիցըն միաբան։

740 *Փառք...։ Յիշատակէ սբ. Աւետարանս* Մարկոսին, *որ առ Աստուած է փոխեր, և իւր կողակցին* Այլայն, *և իւր որդւոցն՝* Ղազարին, Միքայէլին, Պապիկին, Պաղտասարին, Խուպասարին, Սիմաւոնին, Մախմուրին *և* Աննային, *որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալուստն։ Եւս առաւել յիշեցէք զ*Մախմուր *քուրս և զիւր ախչիկն՝ զ*Կուլկազն, *որ մեզի տիրութիւն կանէր ու զայս Աւետարանս ի տունն աւարտեցաք. Աստուած մէկին հաղաբապտիկ տացէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք զ*Խուպասարն, *որ դրեց զ*Աւետարանս *և ետ իւր հաւր հոգոյն յիշատակ ի հալալ ենչից և ի վաստակոց, և ետ ի ձեռն տէր* Տիրատուրին, *ի գիւղն որ կոչի* Յուլաշ։ *Ո՛վ որ ի ծախել կամ գրաւական տալ՝ զմասն Յուդայի առցէ զպատիճն և զպատուհասն ՅԺԸ (318) հայրապետի անէծքն ի վերայ լինի[ի]։ Եւ դարձեալ ասէ, որ քանզի լուաւ զերանական բարբառն, որ ասէ «Ունիցի զաւակ ի Սիոնի և ընտանեակ յԵրուսաղէմի»։ Վասն որոյ բորբոքեցաւ ի սէրն և ի փափաքն սբ. և աստուածամերձ դրոյս՝ սբ. Աւետարանիս և եդ յիշատակ վախվ* Խուպասարն Սալչուկխանցի *իւր հաւր հոգւոյն և իւր ննջեցելոց հոգոյն, մանաւանդ և այլ պաղի եղբարցն։ Քրիստոս Աստուած լուսաւորէ զիւր ննջեցելոցն հոգիքն։*

806

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 182 (1609 թ.)

ա

761 *Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զհեզահոգի և զբարեմիտ՝ բարեմիտ, բարեպաշտ և երկիւղած ուստա* Սարգիսն, *և զծնօղսն իւր՝ զ*Մէլիքն *և զ*Մարիամն, *յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։ Դարձեալ*
762 *յիշեցէք ի Քրիստոս զուստա* Սարգիսն *և զկե//նակիցն իւր՝ զ*Խանջիջին, *և զորդին իւր՝ զ*Մնացականն, *և զդուստրն՝ զ*Խաթէին, *և զհանգուցեալ կողակիցն իւր՝ զ*Մանանեխն, *և որդիքն իւր՝* Յովանէսն, Խաչատուրն, *և դուստրն՝* Մարիտատն... *զմեծ պապն՝* Ամիրզատէն, *և զՀանիկն..., զեղբայրն՝ ուստա* Թորոսն, *և զսորա կողակիցն՝ զ*Խանաղէն, *և որդին՝* Մէլիքն, *և դստերքն՝* Անթառամն, Նազլուն, *և զմիւս կողակիցն՝* Դովլաթ *խանումն, յիշեցէք։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զուստա Սարգիսն *և զմիւս եղբայրն իւր՝ զ*Յովանէսն, *և զհաւրաքոյրն իւր՝ զ*Խուրմա *խաթունն, և զսորին որդին՝* Յակոբջանն, *և դուստրն՝* Խանզատէն. *մանաւանդ և զհօրեղբարքն՝* Պալին, Մուրատն *և զմիւս այլ* Մարտիրոսն *հանդերձ քերբքն և այլ ննջեցեալքն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

Բ

Աղաչեմ զձեզ հարք և եղբարք, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք ի Քրիստոս զուստայ Սարգիսն, *և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զուստա Սարգիսն *և եղբայրն՝* Թորոսն, *և սորայ որդին՝* Մէլիքն, *և զկողակիցն՝* Թուխաարն *և որդի* Գուգուր...:

Գ

Կրկին անգամ յիշեցէք ուստայ Սարգիսն, *և որդին՝* Մնացական, *և սորա որդին դեռաբուսիկ* Սարգիսն, *և դստերքն՝* Վարդխաթուն, *և սորա կողակիցն՝* Էլիազն, *և միուս դուստրն՝* Մինախաթուն, *և սորայ կողակիցն՝* Աստուածատուրն *յիշեցէք։*

Դ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զուստայ Սարգիսն, *և կողակիցն իւր՝* Խանջիշին, *և զդուստրն՝* Խաթային, *և սորա կենակիցն՝* Յարութիւն, *և որդին՝* Նազարէթն, *որ է հանգուցեալ ի Քրիստոս, և միւս որդին՝* Մըկրտումն, *և կողակիցն՝* Մաեսում *խանումն, յիշեցէք։*

Ստացող՝ Սարգիս Երևանցի

Ե

Ի թվականիս հայկազանի,
Հազար Ճ մէկ աւելի (1652),
Հայրապետիս մերոյ ազգի,
Տէր Փիլիպոս ճգնաւորի։
Որ յայսմ ամի գնացեալ լինի,
ՅԵրուսաղէմ մեծ քաղաքի,
Յերկրպագել գերեզմանի,
Մերոյ փրկչին տեառն Յիսուսի։
Այլ և յաշորդ և փոխանորդ,
Ի յաթոռոյս Նոր Ջուղայի,
Եպիսկոպոսն քաշ և արի,
Դաւիթ անուամբ Ջուղայեցի,
Որ յայսմ ամի նստեալ լինի
Յաթոռ տեառնէրն Խաչաբրի...:
Արդ՝ ես Սարգիս Երևանցի[47],
Աւետարանս սբ. ընծայեցի,
Ի դուռն Ամենափրկչի,
Յիշատակ ինձ և իմ ծնողի,
Եւ այլ մերոյ ազգականի,
Եւ ամենայն արեան առի,
Յիշեցելոցս որ ի կարգի...։

---

[47] Բ. Սարգիսյանի կարծիքով սա և ուստա Սարգիսը տարբեր անձնավորություններ են։

807
ՇԱՐԱԿՆՈՑ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1964 թ., ԺՐ, № 225

Գրիչ, ծաղկող՝ Ալէքսիանոս քահանայ

ա

59 Զբազմամեղ Ալէքսիանոս և զծնօղսն իմ յիշել ի տէր Աստուած աղաչեմ։

բ՝

Ո՛վ լուսամիտ մանկունք սբ. Սիոնի, զբազմամեղ Ալէքսիանոս քահանայ և ոչ ի գործոց, յիշեսջիք ի Քրիստոս, և զծնաւղսն իմ յիշել ի տէր Քրիստոս, որ յոյսն է ամենեցուն, աղաչեմ։ Գաղափարեցի և ծաղկեցի թվին Հայոց ՌՃ և Ա (1652)։

808
ՀԱԻԱՔԱՏՈՒ

ՈՑՉՄՎ, № 814

Գրիչ՝ Սիմէոն Բաբերթցի

ա

390 Ըսկիզբն սկսեալ զայս զիրքս Կիլիկիայ քաղաքին Բաբերթցի Սիմէոն վարդապետի, զոր գրեաց Քարոզ և Ողջոյն թագաւորաց, իշխանաց, նախարարաց, զինուորաց, տանուտերաց, ազնուականաց, ծերոց... մեծից և փոքուն ողջոյն և օրհնութիւն կը մատուցանեմ, ի Քրիստոս հաւատացելոց. ամէն։ Ըսկսեալ դիրքս յամի Փրկչին ՌՃԱ (1652)-ին ի տանն Կիլիկիայ։

բ

Աւարտեցաւ և գրեցաւ յամի Փրկչին[48] ՌՃԱ (1652), ի տանն Կիլիկիոյ։

809
ԱԻԵՏԱՐԱՆ

ՈՑՉՄՎ, № 841

Գրիչ՝ տէր Յովսկիմ
Վայր՝ Աղմտ

ա

420 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուին ՌՃԱ (1652) ձեռամբ սուտանուն տէր Յովակէմի, ի գաւառն Սեբաստիու, ի գեղն, որ կոչի Աղմտ, ի դուռն Ս. Կարապետին և Ս. Հրեշտակապետին, ի յառաջնորդութեան տէր Խաչատուր բարունապետին։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա կարդալով կամ ուրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս զանարժան դծաւղ սորա և զհայրն իմ՝ զՂազարն,

[48] Երկու դեպքում էլ տարեթվի համար նշված է «Փրկչին». եթե ճիշտ է սա, ապա ձեռագրի ընդօրինակությունը պետք է հաշվել ոչ թե 1652, այլ 1101 թվականը։ Սակայն Յուզակի հեղինակը «Փրկչին» արտահայտությունը սխալ համարելով՝ ձեռագրի ընդօրինակությունը երկու տեղ նշել է 1652 թ. (էջ 388)։

և զմայրն իմ՝ զՍուլթանն, և զկենակիցն իմ՝ զՍերանն, զոր հանգուցեալ է առ Քրիստոս. և զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Բ

Զդատապարտ ծառայս ծառայիցն Յիսուսի Քրիստոսի զՅովակիմ զանարժան գծողս, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Ստացող՝ տէր Խաչատուր

Գ

Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս ձեր զստացող սր. Աւետարանիս զտէր Խաչատուրն, և զիրիսկին զՄարիամն, և զեղբայրն՝ Սաֆարն և Կիրակոսն, և զծնողսն իմ՝ զԱռուծն, և զկողակիցն՝ զԹուրվանսան և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիրիսկինն և զԳ (3) որդեակս իմ՝ զՎարդանն և զՄովսէսն և զԵղիայն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց և եդ յիշատակ ի ձեռն տէր Խաչատուրին։ Ո՛վ ոք յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Ծաղկող՝ Շամլու

Դ

Զմեղապարտ ծառայս ծառայից զՇամլուն յիշեցէք ի Տէր և որ զյիշաւոն Աստուած յիշէ ի միւսանգամ գալուստն. ամէն, զի բաղում աշխատանք ի ծաղկելն կրեցի։

810
ԱՒԵՏԱՐԱՆ
ՅՁՀՍ, № 40

Գրիչ՝ Մուրատ
Վայր՝ Հալապ

ա

85 Փառք...։ Ողորմեայ անարժան ծառայիս գրողի գրոցս Մուրատ գրչի, ի քո ահաւոր գալստեանն։ Եւ քեզ փառք այժմ և սպառ յաւիտեան. ամէն։

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՃ և Ա (1652) ամին, ի մայրաքաղաքս Իրերիայ որ է Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասնիցն և այլ սրբոցն, որ աստ կան մեզ ի օգնութիւն, ձեռամբ անարհեստ գրչի Մուրատի, որդոյ Ղազարայ քահանայի հանգուցելոյն առ Քրիստոս, որոյ ողորմեսցի Քրիստոս։ Ի կաթուղիկոսութեան տեառն Ներսէս կաթուղիկոսի, և առաջնորդութեան յայսմ նահանգի տէր Խաչատուր վարդապետի, և թագաւորութեանն սուլտան Մնամէտին, և փաշայութեան Իփշիր փաշային, որ զՃաէյտի խանն և զաղբիւրն և զխանութիւնքն շինեաց։

Արդ՝ փափաքող եղև այսմ բարելի գրոցս բարեպաշտ և երկիւղած Աստուծոյ, այսինքն՝ մահտէսի սարկաւագ Գրիգորն և ստացաւ զսբ.

Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց, և եդ յիշատակ անջինջ, ի դուռն Ս. Աստուածածնին. իւր ծնողացն, հօրն՝ Ապտլանատին և մօրն՝ Աղբլ-մուլին, և կողակցուն իւրոյ՝ Սաֆարիին, և որդոյն իւրոյ՝ Գէորգին, որ այսմ ամի հանդեաւ առ Քրիստոս. և եղբօրն իւրոյ՝ մահտեսի Մամլա-քաթին, և կողակցոյ նորին Ղամարին: Դարձեալ միւս եղբօրն՝ Մուրատին, և քեռոցն՝ Մարանին և Շահզատին և այլ ամենայն արեան մեր-ձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած իւր միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։

Բ

Նուաստ Մուրատ:

Գ

Զդծագրող Աւետարանիս ղհալապցի Մուրատ, Ղազար քահանայի որդի, յիշեցէք և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ։ Գրեցաւ թվին ՌՃԱ (1652) ամին, ի դառն ժամանակիս։

Դ

Մեղաւոր տէր Սարգիս Աստուածածին ծառայ։

811

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏՅՀՄՎ, № 142 (1625 թ.)

Հետ. ստացող՝ մահտեսի Աստուածատուր

442 Յիշատակ է այսմ մեծահանդէս և հոգէլից տառս մահտեսի Աստուածատուրին և իւր կողակցին՝ մահտեսի Մարգարտին, և իւր որդոցն՝ մահտեսի Մանուկին և մահտեսի Միսիրին, Պօղոսին և յԱւետիքին, Պետրոսին և մահտեսի Աւագին, որ ստացաւ զսա յիշատակ իւր ծնողացն և ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ մինչև ի խորին ծերութեան, և յիշատակ ծնողացն և ազգայիցն ամենեցուն՝ եղբարց և քեռոց, որդոց և դստերաց, մեծի և փոքու. ամէն։ Ի շրջագայութեան հայկազան տումարիս ՌՃԱ (1652), ի յաթոռակալութեան տեառն Ներսէս կաթողիկոսին և քաջ ռաբունապետի Կիլիկեցոյ։ Եւ ի յայսմ ամի եկաւ Փիլիպոս կաթուղիկոսն էջմիածնա[յ] ի Բերիայ, և գնացին ի հետ Ներսէս կաթողիկոսին ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ ՌՃԱ (1652) թվին։

812

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏՅՀՄՎ, № 155

Գրիչ՝ Միխիթար քահանայ

Վայր՝ Միջագետք

458 Փառք...։ Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կըտակս և խնկալի տուփս... որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրի-

նակէ։ Գրեցի ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի մեղաւոր Մխիթար քահանայի, որ միայն զանունս ունիմ և գործովս ոչ։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌՃԱ (1652), ի ղեաւղս որ կոչի Միջա, ընդ հովանեաւ Սրբոյն Քրիստափորի, ի դառն ե ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկասլահանջութենէ անաւրինաց, քանզի ես քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն աշխարհիս ևս առաւել ազդիս Հայոց վասն ծովացեալ մեղաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան քահանայս և ղծնաւղքն իմ՝ զԿարապետն և զԱլամ, և զպապն իմ՝ զՅովանէս, և զհաւրեղբայրն իմ՝ զտէր Սրապիոն, և պայծառացուցանէք յիւր սբ. միւսանգամ դալըստեամբն. ամէն։

813
ՀԱՅԱՔԱԾՈՅ
ՑՁԱԲ, № 77

Հեղինակ՝ Մարտիրոս Ղրիմեցի
Վայր՝ Երուսաղեմ

388 Մեծահրաշ ծագմանէ Միածին բանին[49],
Վեշտասաներորդի ի հարիւրորդին,
Միով քառիւ տասանց շարադրեալ թվին,
Եւ ի չորեքտասան թիւ յարաբարդին (1654)[50]։

Այլ և յաբեղական մերում գրոհին,
Երկեակ քառից հարիւր կատարեալ թվին,
Վեցերորդ [յ]որելեան ի նոյն թվեսցին,
Եւ միակ թվին որ է առանձին (1652)[51]։

Բաբունապետք Հայոց մեծաց մեր զարմին,
Ժողովեալ կուտեցան մեծն ի Պաղեսային,
ՅԵրուսաղէմ քաղաք մեծի արքային,
Անդ ուր է գերեզման մերոյ կենսատուին։

Տեղեաց և այլ բաղում սբ. տնաւրինին,
Եւ ի սբ. ծնրնդեան յանբանից այրին,
Մեծի փափաքանօք յանդր գումարին,
[Յ]երկրպագութիւն ի փառս Արարչին։

Ի թիւ շարադրեսցուք զհովիւք մեր հաւտին,
Որք կան աստ հաւաքեալ մեծի երամին,
Եւ կարգաւ դրեսցուք մինչև աւարտին,
Տեսցուք դորքանութիւն մեծի ժողովին։

Բամից գլուխ կարգեալ մեծ դիտապետին,
Տեառն Փիլիպպոս կաթուղիկոսին,

[49] Այս չափածոն վերաբերում է Երուսաղեմի ժողովի մասնակիցներին. այն գրել է Մարտիրոս Ղրիմեցին, Վարդան աբեղայի պատվերով։

[50] Տպված է «յուրարարդին», այսինքն՝ 1600+40+14=1654։

[51] Այսինքն՝ [(2×4×100)+(6×50)]+1+551=1652։

Վերադիտող մեծի իշման Միածնին,
[Յ]աջորդող յաթոռոյն սբ. Լուսաւորչին։

[Յ]Ոլովք վարդապետաց որ ընդ իւր եկին,
Էին ամենեքեան աշակերտք նորին,
Դաւիթ և ի Բարսեղ Շաւշ քաղաքացիքն,
Եւ Ներսէս կոչեցեալն Տաթեացին։

Սոցին ընկեր Առաքել Շուտրեցին,
Դաբրիէլ և Յոհան Երևանեցիքն,
Յով[ն]աննէս վարդապետն որ է Մուղնեցի[ն],
Տեսուչ Տիգրանակերտ մայրաքաղաքին։

Ապա Յոհաննն կոչեցեալն Ասղընեցին,
Մինաս Նդոկիայ մեծ քաղաքացին,
Որ է հովիւ Գաղատացւոց նահանգին,
Սոքա և այլ բազում աշակերտք սոցին։

Բայց են և այլ վարդապետք ըստ կարգի նոցին,
Գրիգոր և Աւետիս Վանեցի կոչին,
Խաչատուր բանիբուն մեծ Բաղէշացին,
Թորոս Կեսարացի և Նիկողոսին։

Եւ Տանն Կիլիկ[ի]ոյ կաթուղիկոսին,
Ներսէս Սեբաստացի քաջ հով[ու]ապետին,
Այլ և Խաչատուրի իւր աշակերտին,
Որ է տեսուչ Բերիա մեծ քաղաքին։

Ղամպարք են լուսատու հոդ[ւ]ոց մարդկային,
Սոքա ամենեքեան որ են ի կարգին,
390 Բարունապետք արբեալք ի շնորհաց Հոգին,
Եւ են մաքրիչք հոգւոց մեղաց փըշային։

Իսկ եպիսկոպոսացն, որ են ընդ սոցին,
Թվեսցուք և զանունս նոցա ըստ կարգին,
Սահակ եպիսկոպոս Վանա[յ] գաւառին,
Եւ Մարկոս Սասրնցի, Յով[ն]աննէս յԱկին։

Այլ և Ստեփան[ն]ոս Մոկաց գաւառին,
Եւ Միքայէլ կոչեալ ծեր Բաղէշեցին,
Պետրոս եպիսկոպոս Սբսա վիճակին,
Սոքա ամենեքեան հովիւք են հաւատին։

Սար տեղին հրեղինաց սրբոյ քաղաքին,
Որ է արքայ[ա]նիստ անմահ արքային,
Դամբարանի սրբոյն Յակոբայ մեծին,
Փառաւորեալ երկնակառոյց տաճարին։

Աթոռակալ տեսուչ այս մենաստանին,
Աստուածատուր կոչեցեալ բարունապետին,

Խաչատուր վարդապետն Զնոուշեցին,
Եւ Առաքել Բարերբցի միաբանք նորին։

Յանկալին գրաբթնոց յանմահ խորհրդին,
Պատարագիչ Թորոս եպիսկոպոսին,
Ի Ոնոփրիոս Լեհցի եպիսկոպոսին[52],

Եւ այլ կրօնաւորաց բազումք ընդ սոցին,
Կան ի սպասու կացեալ սրբոյ տաճարին,
Առ ոտս Աստուածատուր մեծ վարդապետին,
Առ ի հնազանդութիւն հրամանաց նորին։

Այլ և ի թիւ համօրէն մեծի և փոքրին,
Ասասցուք ի կարգի զի յայտնի լիցին,
Երկու կաթուղիկոս գլուխք ժողովին,
Տասն և լութ վարդապետ[ք] կան ի միասին։

391 Լուարուք ի կարգի ասացեալն բանին,
Ութն եպիսկոպոս ի թիւ համարին,
Կրաւնաւորք երեսուն և հինգ աւելին,
Ամենեքեան վաթսուն և երեք լինին։

Երէցք որք աշխարհի քահանայք կոչին,
Վաթսուն և այլ աւել և նոքա լինին,
Սարկաւագք և դպիրք ի թիւ ոչ մտին,
Զանձրութիւն լսաւղացդ զի մի՛ լինիցին։

Բայց թէ ժողովս ամէն ի մի հաւաքին,
Ըսկսեալ ի մեծաց մինչև ցփոք[ր]ին,
Ռ (1000) կամ այլ աւել դոյ թիւ ժողովին,
Որք են յուսով եկեալ յերկրպագութիւն։

392 Աստանօր ցընծացեալ բերկրեց ուժգին,
Տեսլեամբ յանմահական լուսոյն երկնային,
Աղատեալ ի մեղաց կապից բանսարկուին,
Գրեցա[ւ յ]որդեգրութիւն Հաւրն երկնաւորին։

Նայև զայս պատմեցից ձեզ բանս ի կարգի[ն],
Աստանօր Նորոգումն եղև ուխտին,
Ս. Յակոբայ մեծահռչակ տաճարին,
Ձեռամբ Փիլիպ[պ]ոս մեծ կաթուղիկոսին։

Սակաւ բանս յարմարեալ գրեցաւ ի քարտի,
Ի սբ. Յերուսաղէմ աւրհնեալ քաղաքի,
Ձեռամբ Ղրիմեցի սոսկ Մարտիրոսի,
Սակըս մեծի խնդրոյն Վարդան արեղի[53]։

---

52 Ինչպես նկատել է Յուցակի հեղինակը, այս քառյակի վերջին տողը պակաս է։

53 Քառյակների առաջին տողերի սկզբի տառերից հոդվում է. «Մարտիրոս արեղի ասացեալ է բանս»։

814
ՅԱՆԿԳԻՐՔ
ՅՀՂԲ, № 125

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ (Նոր) Ջուղայ

795 [Ի] կամս և ի շնորհս բարերարին Աստուծոյ յաւարտ և ի կատար հասեալ եզերեցաք զմիայարութիւն և զյօդուածս ցանկի, կտակացն աստուածային աւանդութեանց Հնոց և Նորոց։ Նաև զբարդուածս այլոց վիպասանութեանց զորս վասն իրիք ինչ խռովութեան դրեալ եղև ի Ներսիսէ Կլայեցւոյ: Այլ և զմիադրութիւնս վեցից սկզբանց և զցանկի Հարցմանց և զՅայսմաւուրաց, ի խնդրոյ ումեմն բանասիրի Թումա անուն վերակոչեցելոյ, զոր երկասիրութեամբ իւրով գումարեաց զայս ամենայն ի մի վայր և ստացաւ զդումարտակս ի հրճուանս անձին իւրոյ, և յիշատակ ծնողաց իւրոց, ի փառս Աստուծոյ, որ է ի Գողթն դաւառէ և ի գեղջէն Վանանդայ:

Եւ արդ՝ զրեցաւ գիրքս յամի հազարերորդի հարիւրերորդի առաջներորդի (1652) հայկազեանս թուահաշուութեան, // ի ձեռն անարհեստ դբչիս Գրիգոր, մինչև ցայս վայր գրեցի[54]. իսկ զմնացեալն ումն բահանայ Աստուածատուր անուամբ էած յաւարտ, ի գիւղաքաղաքս որ կոչի Ջուղայ: Ուստի և յոգնաթախանձանօք հայցեմ ի տեսողացդ, զի մի ընդ եպերանօք արկանիցէք զերկասիրութիւն առնս ստացողի սմին, թէպէտ և անյարմար երևեսցի ձերում ենթադատութեան, այլ ի մշտապաղատ յաղօթս ձեր յիշեցէք զնա հանդերձ կրկին խնամարկօք իւրովք, որպէս զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

815
ՃԱՌԸՆՏԻՐ
ՏԵՐԱՎՋ., № 221

Գրիչ՝ Յովսէփ
Վայր՝ Թովրասկան

294 Փառք...։ Զոր տեսեալ ծառայն Աստուծոյ Միրզախանն, և մեծ փափագմամբ և ջերմեռանդ սրտիւ ցանկացեալ եղև սբ. տառիս, և ի խընդիր ելեալ այս համբարեալ գանձիս, և լուսափայլ անգին մարգարտիս, անուշահոտ մանուշակիս և վարդափթիթ բուրաստանիս, և ետ գծագրել ի հալալ և արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց Ասատուրին և Կօզալին, և կենակցին իւրոյ, և եղբարցն, և քեռցն, և այլ ազգականացն, և ամենայն արեան մերձաւորացն, զոր տէր Աստուած ընդ միոյն հարիւրապատիկ, հազարապատիկ վարձատրևսցէ, և ընդ այլ բարեպաշտացն դասակից և պսակակից արասցէ ի միւսանգամ գալստեանն իւրում. ամէն։

Արդ՝ եղև զրաւ հոգիաբուխ մատենիս ի թվականիս Հայոց ՌՃ և Ա (1652) ամի, ի յերկիրս Պարսից, ի մայրաքաղաքս Ասպահան, ի յետ

[54] Այսինքն, ձեռագրի 640 էջից՝ 326 էջը, որովհետև այս հիշատակարանը գտնվում է ձեռագրի 327-րդ էջում։

կոյս Նարնղալային, որ կոչի Թովրասկան, ի թագաւորութեանն Պարսից փոքրիկ շահ Աբասին, և ի հայրապետութեան մերոյ հայկաղան ազգիս տեառն Փիլիպպոսի խարազնազգեաց կաթողիկոսի, որ յայսմ ամի գնացեալ էր ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ՝ յերկրպագութիւն փրկական տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ, և եղեալ փոխանորդ իւր ի սբ. աթոռն Էջմիածին, զոր Յակոբ արքեպիսկոպոսն Ջուղայեցի. և ի արքեպիսկոպոսութեան Առպահանու գիւղաքաղաքին Նոր Ջուղայոյ տեառն Դաւթի, որ և ի սա գնացեալ էր յայսմ ամի ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ: Եւ եղև կատարումն գրոյս և սկիզբն առաջնորդութեանն նորա, զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ ընդ այլ հարքն և եղբարքն և յետ աստեացս ընդ սբ. հայրապետսն դասեսցէ. ամէն։

Եւ արդ՝ ես անարժան արժանաւորաց, մեղաւորս անմեղաց, անպտուղս ի բարեաց, պարտաւորս ազատաց, անարհեստս արուեստաւորաց և յետինս ի գրչաց, տառապեալ Յովսէփս, [քան]զի ոչ էի կարող և արժան այսմ սբ. արուեստի և կատարման սբ. գրոյս, սակայն առատ շնորհօքն Քրիստոսի կատարեցաւ։ Թողութիւն շնորհեցէք անկարողութեանս։ Աղաչեմ զհանդիպողդ սբ. գրոյս, հարք իմ և եղբարք, և համբուրեմ զգարշապարս ոտից ձերոց, յիշեցէք ի մաք//ռափայլ և ի գերապայծառ յաղօթս ձեր, զգեղեցիկ, զհարկաւոր, խոնարհ և հնազանդ, բարետեսիլ և իմաստուն երիտասարդն զՄիրզախանն, քանզի լուեալ էր սա յաստուածաշունչ դրոց մարդարէականաց, թէ «Երանի...». և ինքն ոչ ունելով յիշատակ մարմնաւոր՝ ոչ արու և ոչ էգ, ջերմեռանդ սրտիւ, և սիրով; և աներկմտօք, և զուրախ սրտիւ <և> ետ կատարել սբ. տառս, և ինքն յայսմ ամի փոխեալ կատարեաց զկեանս իւր առ յոյսն ամենեցուն. և սուգ մեծ եթող եղբարցն, և քեռեցն, և ընկերակցացն, և այլ բարեկամացն, զոր տէր մեր Յիսուս Քրիստոս արդար դատաւորն ներումն և ողորմութիւնն արասցէ յանցանաց սորա, և ընդ արժանաւորսն դասակից և պսակակից արասցէ՝ հանդերձ ծնողքն. ամէն։

Յիշեցէք և զմիւս քոյր Միրզախանիս Եղիսաբեթն, և զսորին կենակիցն՝ զՅովսէփ սարկաւագն, որ զսբ. մատեանս դծագրեաց, և զդստերսն իւրեանց՝ Մուրասանն և զԼապիխանն, և զհանգուցեալսն առ Քրիստոս՝ Շահնազարն, Գօզալն, յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍ. Գրիգոր եկեղեցոյ քահանայքն՝ զտէր Աստուածատուրն, որ զսբ. մատեանս ծաղկեաց, և ոչ ժամանեաց կազմել; այլ փոխեցաւ առ Քրիստոս, զոր տէր Աստուած ընդ սուրբս դասակից և պսակակից արասցէ. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ, սիրելի հարք իմ և եղբարք, և առ ոտս անկեալ արտասուօք համբուրեմ զգարշապարս ոտից ձերոց, Յովսէփ անարժանս այսմ արհեստի, թէպէտ յանդգնեցայ՝ զանձս ի գործ եդի, սակայն ներողութեամբն Աստուծոյ կատարեցաւ, դուք այլ ներեցէք մեղաւորիս միով ողորմիայիւ, զփափագս իմ յիշեցէք յորժամ հանդիպիք այս սբ. մատենիս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զտառապեալ Յովսէփս և զվարպետն իմ զարհեստ գրչութեանս զԳասպար քա-

295

հանայն, և զմարմնաւոր ծնողսն իմ՝ Աստուածատուրն և զՎարդխանունն, և զնղբարն իմ յիշեցէք...

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄեսրոպ դպիր Խիզանցին, որ փոքր ի շատէ և նա աշխատեցաւ ի վերայ սբ. տառիս, յիշեցէք...

816

ԱՒԵՏԱՐԱՆ

Վատիկանի դրադարան, № 70 (ԺԴ դ.)

121 Փառք...։ Ի թվականիս Հայոց հազար ՌԱ (1652)-ին ի Կոկ վարդապետէս, որ կոչի անուամբ Գրիգոր բարունապետ, էառ Հասպրմանցու որդի Մկրտիչն, յիշատակ իւր հոգւոյն և իւր ննջեցելոցն, հօրն՝ Մելքոնին և մօրն՝ Սուլթանին, եղբօրն՝ Նիկողայոսին, որդւոյն՝ Ովանէսին, Մկրտչի կողակցոյն /// աշուքին, որդոցն՝ Մելքոնին, Մարտիրոսին, Սերունին, որ հանգուցեալ են ի Քրիստոս։ Տեսողք և կարդացողք բանիս՝
122 յիշատակարանիս լի բերանով աղաչեցէք Աստուած ողորմի Մկրտչի // ծնողաց հոգւոյն, որ եդիր յիշատակ արծաթապատ սբ. Աւետարանս Շնֆուշու սբ. եկեղեցոյն, որ կանուանի Ս. Կարապետ, ի վայելումն գահանայից տէր Վարդանին, տէր Խաչատուրին, տէր Էլէֆսանին և տէր Սղեային, մահդեսի տէր Փիլիպոսին. առաջնորդութեանն Մինաս արքեպիսկոպոսի, տեղապահ նորին տէր Կարապետ վարդապետի։ Եւ ով որք հանիցէ ի դրանէ սբ. եկեղեցւոյս՝ կրաւ դնելով կամ ծախելով և կամ գողանալովս՝ անէծքն Յուդայի և դպատիժն Կայենի առցէ...։

817

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, էջ 65—66

Գրիչ՝ Յովաննէս Շոռոթեցի
Վայր՝ Կտուց

Արդ՝ ես... Յովաննէս ևթ անուամբ կոչեցեալ վարդապետ յերկրէն Նախչուանու, ի գաւառէն Երընջակայ, և ի գեղաքաղաքէն Շոռոթու, որդի Վարդան քահանայի առ Քրիստոս Աստուած փոխեցելոյ...։ Յետ ժամանակաց ինչ ելեալ ի վանաց մերոց և եկաք յերկիրս Վասպուրականի, յանապատս Ս. Աստուածածնիս և Ս. Կարապետիս, որ մականուն Կտուց յորջորջի, որ է ծովապատ և ծովահայեաց տեղի վայելուչ։ Եւ աստ ես կայր ընտիր օրինակ հին Քարոզգիրք մի, և մեք սկսաք գաղափարել, սկիզբն արարաք ի ՃԷ (107) քարողէն, որ է Մեծի երկուշաբթի քարոզէն մինչև ի վերջ գրքիս աւարտեցաք, զորս մեք գրեցաք և զորս քաղաքացի տէր Առաքել հոգիաշունչ և ճարտար քարտուղարն[55]։

[55] Հիշատակարանի բերված հատվածում տարեթիվը բացակայում է, սակայն աշխատության 65-րդ էջում Հ. Ոսկյանը գրում է, որ «1652էն հետո Կտուց կայցելեն Յովհ. Շոռոթեցին» և այնուհետև բերում է սույն հիշատակարանը։ Պայմանականորեն դրեցինք 1652 թ. ներքո։

818

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թեհրան, «ՀԱ», 1953 թ., էջ 599

Գրիչ՝ Պետրոս երէց

ա

Որում փառք և երկրպագութիւն...։ Զմեղօք մեռեալ գծողս զՊետրոս երէցս տխմար յիշնսջիք, ո՛վ հայրք և եղբայրք. ամէն։

բ

ՌՃԱ (1652) թվին։

819

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Լոնդոն, «ՀԱ», 1961 թ., էջ 508—510

Գրիչ՝ Խաչատուր Երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

Ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Զաքարիայ *ղալիֆայի և ծնօղացն՝* Գրիգորին *և* Բատիկին, *և կողակցին՝* Եղիսաբեթին, *և որդոյն՝* Յովհաննէսին, *եղբարցն և քրւերցն, և ամենայն արեան մերձաւորացն, և անիմաստ գրչիս* Խաչատուր *երիցուն և ծնօղացն՝* Սատաղայի *և* Կուլաղայի, *և ամենայն արեան մերձաւորացն։*

բ

Փառք...։ Արդ՝ յայսմ քաղցրանուագ երգոյս հետևեալ ի սէրն Քրիստոսի, ստացաւ զաւակ անմահ ըստ հոգւոյ և յիշատակ անջնջելի յաւիտենական ի դուռն Ս. Աստուածածնի վայելչայարկ և գեղեցկասար եկեղեցւոյ, ի մայրաքաղաքս Կոստանդինուպօլսոյ, *ի խնդրոյ աստուածասէր* Զաքարիա *ղալիֆայի, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնօղացն՝* Գրիգորին *և* Բատիկին, *և կողակցին՝* Եղիսաբեթին, *և որդւոյն՝* Յովհաննէսին, *և պապոցն՝* Զաքարիային *և* Ուղուրլուին, *և մեծ մամոցն՝* Շահրիստանին *և* Մուբլուին, *և եղբարցն՝* Պօղոսին, Եղիային, Աստուածատուրին *և* Սահակին. *և քրւերցն՝* Աննային, Մարիամին, Կուլիստանին, Շահրիստանին *և* Նազլուին, *և աներոջն՝* Պալէ, *և զոքընջին՝* Փաշային, *և հօրեղբօրն՝* Մանուկին, *և քեռոցն՝ մահտեսի* Տօնիկին, Գրիգորին, Պօղոսին *և* Ղարահէ, *և մօրաքրոջն՝* Նազլուին, *և կողակցին եղբարցն՝ տէր* Սարգսին, Գասպարին, Պաղասարին, Սահակին *և* Մելքոնին, *և ամենայն արեան մերձաւորաց...։*

Արդ՝ գրեցաւ ի մեծահանդէս քաղաքս Կոստանդնու, *ի թվականիս Ռ[ՃԱ][56] (1652)-ի, ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան իսմա-*

[56] Նկարագրության հեղինակը հաղորդում է, որ տարեթվի հարյուրավոր և միավոր արտահայտող երկու տառերը չնչված են։ Եվ նա 5-րդ ծանոթ. մեջ ապացույցներ բերելով ենթադրում է, որ պետք է լինի ՌՃԱ։

յելացւոց և հագարաց[ւ]ոց ի վերայ բազում ազգաց և ազանց, քրիստոնէից և այլասեռից սուլթան Մահամատի, որ Ը (8)-ամեայ մանուկ գոլով կալաւ թագ և թախտ թագաւորութեան հօր իւրոյ, և ի հայրապետութեանն Հայոց, որ ի սբ. էջմիածինն՝ տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսի, ձեռամբ տկար և փծուն գրչի՝ խաչատուր երիցուս։ ...[57]

Ծաղկող՝ Յովսէփ երէց

Գ

Զվերջի աշխատողակս զՅովսէփ երէցն[58] յիշել ի Տէր։

[57] ա հիշատակարանի նման կան մի քանի հիշատակարաններ, բայց որովհետև եղած անունները արտահայտված են բ հիշատակարանում, ուստի դրանք չվերցրինք։

[58] Նկարագրության հեղինակը ենթադրում է, թե այս անձնավորությունը ձեռագրի ծաղկողն է։

820

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1177

Գրիչ, ստացող՝ Զաքարիա
Վայր՝ Ստամպոլ, Արզրում

ա

330ա Փառք...։ Արդ՝ ես վերջին ծնունդս կանանց, յետնեալ ամենայն մարդկան, շողաբեր շատայշրջող վաճառական Զաքարիաս ցանկացող եղէ եռափտփաք սիրով Մեկնութեան Սաղմոսի, զոր մեկնեալ է երիցս երանեալ սբ. վարդապետն Ներսէս, որ է Լամբրոնացի, ետու գրել ի Ըստամպոլ, կէս մի ես գրեցի, որչափ որ իմ կարն էր, և զայլ ժողովեալ խրատական և առակաւոր բանս, ուր տեսի, ետու գրել մինչ որ հասի ի մայրաքաղաքն Թէոդուպոլիս, որ այժմ Արզրում ասի, անդ ետու գրել, աւարտել զգիրսն Սողոմոնի և եղի զամենայն ի մէկ տբի։ Զի եղիցի սա յիշատակ ինձ և ծնողացն իմոյ՝ Պետրոսին և մաւրն իմոյ՝ Փէրիխանին, և իմոյ կողակցին՝ զՍամբրին, և որդոցն իմոյ՝ Պետրոսին և Պողոսին և Թէոդոր[ոսին]. և դստերացն իմոյ՝ Ոսկիծաղկին, Դրշիռեին և Կատարինէն, և այլ ամենայն արեան մերձաւորաց իմո[յ]։ Ով

330բ ոք հանդիպիք դրոցս կարդալով և կամ տեսանելով զան//արժան Զաքարիաս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր և լի սրտիւ ողորմի ասացէք. և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Եղև զրաւ գրչութեանս ի թվականիս մերոյ ՌՃԲ (1653), ի սահմի ամսոյ Լ (30) և Հռոմայեցոց ամսոյ յունվարի Զ (6), ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսի սբ. Էջմիածնայ, յոյժ սրբասէր և առաքինի. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Գրիչ՝ Յարութիւն

բ

257ա Գրեցս սակս մի պատմութիւնս ձեռամբ անիմաստ Սեբաստացի Յարութիւն տիրացուս. որ ոչ մեղադրէք, զի շղագիր եղեալ է. ամէն։

821

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

CBNMac., № 96

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Երուսաղէմ

43 [Գրեցաւ] ի սբ. Երուսաղէմ, ի թվին Փրկչին ՌՈԾԳ (1653), փետրվարի ԺԹ (19), ձեռամբ Յոհաննու...

822
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ
Երևան, № 7392

Գրիչ՝ Ղուկաս
Վայր՝ Կաֆայ

ա

30ա Որ ողորմի ստացողի գրոցս մահդասի տէր Մինաս քահանային և ծնաւղացն մահդասի Գոճար խաթունին և Դաւթին, եղբարցն՝ Թոսորին և Խաչիկին, և ամենայն արեան մերձաւորացն։ Նաև գծողի սորին Ղուկաս գրչի . կարդացողաց։

Գրիչ՝ Խասպէկ

բ

181բ Որոյ աղաւթիւքն ողորմի Քրիստոս ստացողի գրոցս տէր Մինասին... և Խասպէկ գրչի, կարդացողաց։

գ

528բ Փառք...

529ա ... Արդ՝ ստացաւ զդիրքս պիտանի տէր Մինաս քահանայն, որ կոչի Յայսմաւուրք, զոր կարդեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մեռենց կոչեցեալ, բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցւոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարւոյն։

Արդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից, մանաւանդ զեշմարտախոհ քահանայքդ, որք հանդիպիք յայսմ խորհրդաւոր սուփերիս, յիշեսջիք զտատացաւ սորա զՄինաս քահանայն, և զմայրն իւր՝ զմահդասի Գոճար խաթունն, և զհայրն իւր՝ զԴաւիթն, և զեղբայրքն իւր՝ զԹոսորն և զխաչիկն, և զամենայն արեան մերձաւորսն, զայժմու կենդանիքն...։

Արդ՝ գրեցաւ սա յամի թուաբերութեան հայկազան սեռի ՌՃ և Բ (1653) ամի, և յամսեանն մարտի ԻԲ (22) և նիսանի Ա (1), յատուր հասարակածի գարնան, ձեռամբ անիմաստ և թարմատար, վերջին և յետին... անարհեստ Խասպէկ գրչի։ Արդ՝ աղաչեմ զեշմարիտ ծառայքդ Աստուծոյ, յիշեսջիք և զգրծողս անարժան գոլով, և զհայրն իմ՝ զմահդասի Անդրէասն, և զմայրն իմ՝ զմահդասի Խանումն, և զեղբարքն իմ,
529բ և զքորքս, և զորդեակն իմ, և զդստերքսն իմ, // և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ, և ի հռչակաւոր մայրաքաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյ տաճարիս Յարութեան, ի վեհագոյն տիրական իշխանութեան տեառն Փիլիպպոսի, ամենայն Հայոց կաթուղիկոսի, և յառաջնորդութեանն հայրապետական աթոռոյն սրբոյն Երուսաղէմայ տէր Աստուածատուր վարդապետի ծերունւոյ, և յարհիական եպիսկոպոսութեան յայսմ նահանգիս Ղրմու Ս. Նշանի տէր Գրիգոր արհի և պանծալի եպիսկոպոսի, և յաւագ երիցութեանն Կաֆայու տէր Մաղաքիային և տէր Գրիգորին։ Սակս որոյ խնդրեմք ի յամենասուրբ Երրորդութենէն...։

Այլ և կրկին պաղատանաւք աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք և գաղափարաւղք, յիշել ի մաքրափայլ և յընդունակ աղաւթս ձեր զմահ-

դասի տէր Սինաս երէցն, հանդերձ ծնաւղիւքն, որ ստացաւ զՅայսմաւուրս ի յարդար վաստակոց իւրեանց և եդ յիշատակ ի դրունս Սրբոյն Գէորգեայ զարտավարին, որ մականուամբ Քաշոտ կոչի: Յիշատակ աղատ, ազատ. ոչ ոք չունի իշխանութիւն գրաւելոյ և կամ ծախելոյ, թէ՛ յազգէ և թէ՛ յազանց, թէ՛ քահանայից և կամ ժողովրդոց և թէ՛ ոք յանդգնի և ձեռնամուխ լինի՝ պատժի ի յԱստուծոյ...։

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զշնորհաւղ աւրինակիս զտէր Մաղաքիա ծերունի քահանայն և զթղթիս կոկողքն և զաշխատողքն, և որք յաւգնութիւն հասին տրրաւք և խնամովք։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՂուկաս նաւտարն, որ զառաջին սակաւ բաժին դիրս նա գրեաց։ Այլ և խոշորութեան և անարհեստ գրիս և սրղալանացն մի՛ մեղադրէք, զի կար մեր այս էր, ըստ աղկացեալ մտաց։ Եւ որք յիշն զմեզ միով ողորմիւ՝ յիշեսցէ զնոսա Քրիստոս Աստուածն մեր...։

823

ՇԱՐԱԿՆՈՑ

ՍՅԲԵՊ, VII, № 2146 (1646 թ.)

193 Թվին Հայոց ՌՃԲ (1653), ապրիլ ամսո[յ] Ե (5), աւրն երեքշաբթի, ի յԱտանա քաղաքին, սպանեցին Իպրահիմ փաշան, վասն չարութեան իւրո[յ]։ Վասն զի շատ չարութիւն գործեաց ու շատ չարութեան խորհուրդ այլ ունէր, որ առնելոց էր Ատանա քաղաքին։ Գոհանամք Աստուծոյ ամենայն ժամ, որ զիւր խորհուրդն խափանեաց։

824

ՇԱՐԱԿՆՈՑ

ՍՁՂԲ, № 127

Գրիչ՝ Մուրատ սարկաւագ
Վայր՝ Սէրաք

802 Գրրեցաւ և կատարեցաւ շարադրած աւրհնութիւններս ձեռամբ մեղաւոր և անարժան, ծառայ Աստուծոյ Մուրատ սարկաւ[ա]գի Եազլովցայ քաղաքի, որդի ողորմած հոգի Միխայէլին. բայց գրրեցաւ [Օ]լախաց [եր]գիրն, ի յաստուածապահ քաղաքն Սէրաք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին. թվին ՌՃԲ (1653)-ին, ապրիլ ամսոյ ԻԵ (25), օրն երկուշաբթի կատարեցաւ։

825

ՄԱՇՏՈՑ

Կ. Պոլիս Պալատի Ս. Հրեշտակապետի եկեղեցի, № 47 (մանրաժապավեն, Երևան, № 511)

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

2բ Այլ և զանարժան Արիստակէս երեց գրիչս յիշեսջիք ի Քրիստոս...։

Բ

322ա Փառք...

323ա Այլ զի ոչ հասու լինելով մերոյ մտաց սակաւիկ մի գովեցի կարճ ի կարճոյ, յիշեցի իմում տկարութեանս զսբ. գիրգս այս Մաշտոցս։ Այլ և զստացող գրոցս զՏիվրիկցի, ի գեղէն Կիւռասոյ զոր և ինքն անուանի Նորաշենց, Յովաննէսին է յիշատակ, և իւր կողակցին՝ Գոհարին, այլ և ծնօղացն՝ Գիրգորին, և իւր հօրն՝ Նորանշային, և քրւերն՝ Մարիամին, Մարթային, Թուրվանդէ, Աւաքին, Շահաստանին, որդոյն՝ Յակոբին, և դստերն՝ Մարթային, այլ և հանուրց համօրէն կենդանեացն...։

Արդ՝ աւարտեցաւ սբ. գիր[ք]ս ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի, ի թվին ՌՃԲ (1653), մայիս ամսոյ Գ (3), աւրն երեքշաբթի, ձեռամբ անարժան և անպիտան Արիսակէս երէց գրչի։

Արդ՝ յերես անկեալ աղաչեմք հանդիպող սորա, կարդալով կամ աւրինակելով, զպակասն լնուք և զաւելորդն բառնայք[1]։

826

ԱՒԵՏԱՐԱՆ

«Բանասէր», 1905 թ., հա. է, էջ 195

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, որ աղատեաց ի ձեռաց անօրինաց զսբ. Աւետարանս զայս, և վերստին նորոգել ետուր, և ետ յիշատակ ի գուռն Ս. Հրեշտակապետաց [Գաբրիէլի] և Միքայէլի։ ...

Վերստին նորոգել ետուր զսբ. Աւետարանս ի թվին ՌՃԲ (1653) մայիսի ԺԶ (16)...։

827

ԺԱՄԱԳԻՐՔ

Կամենից, էջ 190—191

Գրիչ՝ Վարդերես

Վայր՝ Կամենից

Փառք...։ Արդ՝ գրեցաւ Ատենագիրքս ի յաշխարհս Իլախաց, ի քաղաքն Կամէնից, ի դառն և ի տրտում ժամանակիս, ի վշտալից և ի թըշուառական ատենիս, և ի նեղաց սրտիս, և ի այրեալ լերդիս, պիղծ և անօրէն Հոռոմ աղգէն, անուամբ կոչեցեալ չՊոկտան Խմէլենիցէն, որ հինգ[2] ամ պաշարեալ և դերեալ զաշխարհս Իլախաց. զքաղաքս, զդիւղըս, զգաւառս, զգիւղաքաղաքս, զժամս, զժամատեղս, զքահանայս և զկարդացողս, զկենդանիս և զմեռեալս, զամենայն զինչ ի միտս[3] անկանէր և ի ձեռն հասանէր։ Նա անխնայաբար և անողորմաբար տանջեալ,

[1] Շարունակությունը կորած է։

[2] Ալիշանի հրատարակության բնագրում նշված է «երկուս», իսկ Տաշյանի մոտ՝ «հինգ»։ Ճիշտ համարեցինք վերջինս, ընդունելով 1648 թ. Բոգդան Խմելնիցկու ղեկավարությամբ ըսկրսված ուկրաինական ժողովրդի ազատագրական շարժման սկիզբ։

[3] Տաշյանի մոտ «ի տեսս»։

գերեալ և տայր ի ձեռս այլազգեաց, որ կոչուէին թաթար ազգն։ Ոչ լալոյ և ոչ հառաչելոյ, ոչ պազատելոյ և ոչ աղաչելոյ կու նայէր, այլ իւր գոռոզութեամբ և հնարիւք սատանայիւք առնէր զինչ և կամէր։ Արդ՝ հայցեմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ վասն մեր խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ և յարեաւ... որ նա զիւր առատ ողորմութեամբ և մարդասիրութեամբ՝ զպեղծ և զանիծեալ բերանն բացեալ զառիւծն՝ կալցէ, կտրեսցէ և զգլուխն կործանեսցէ ի ձորն անդնդային և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ, և զմեզ զամենեսեան զհաւատացեալսն ազատեսցէ ի նորա անհաւատոյն ձեռանէն. ամէն։

Արդ՝ վասն խնդրելոյ եղբօրս իմոյ բան Միսոոյ, որդւոյ պարոն Քրբշոթոֆ Մուսթաֆային, ի սբ. եկեղեցին, ի քաղաքն Զամոսցայ, վասն իւր արևուն, և ընկերոջն, և գուստրորդոցն, և ծնողացն ննջեցելոց [հոգուն. զոր տէր Աստուած բարով վայել տայցէ իւրեանց քահանայից և բան Միսոոին. ամէն]։ Արդ՝ դրեցաւ ի յաբեթական մեծ տումարիս ՌՃԲ (1653) ամին և ի մայիս [ԻԲ] (22)-ին։ Ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր տէր Փիլիպպոս կաթողիկոսին, ի յառաջնորդութեան խառնակի ժամուն ոչ այս և ոչ այն, այլ մնացեալ վասն գալոյ պարոն Թորոսովից տէր Նիկողայոսին. և ի թագաւորութեան Ե[ան] Քաժիմիրին։ Գրեաց զսա խեղճ և անճարակ, մեղաւոր և անարժան ծառայ, ոտացնեբուդ կոխան Վարդերես, որդոյ պարոն Քրբշոթոֆ Մուսթաֆային։ [Հայցեմ զձեզ, հարք իմ և եղբայրք, ով որ կարդայ և աւրինակէ, զիս զմեղաւորս... յիշել չի ձանձրանայք և ղյիշողն Քրիստոս Աստուած յիշէ][1]։

828

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՅ

Սալտիկով Շչեդրինի անվան գրադարան, Арм. Н. С. 38
(մանրաժապավեն, Երևան, № 132)

Գրիչ՝ Յովան

ա

154բ Գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ Յովան և այրի սարկաւագի, ի թուաբերութիւնս հայկազեան սեռի ՌՃԲ (1653)-ին և մայիս ամսոյ ԼԱ (31)-ին, աւրն երեքշաբթի։

բ

Այլ գրով

Ի վայելումն տիրացու Աբրահամին, Օսկանին, Պետրոսին, Տատոյին։

829

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», Զ—է, 1971, № 266

Վայր՝ Կ. Պոլիս

89 Փառք...։ Որոյ խնամօք և ողորմութեամբ աւարտեցաւ աստուածախօս սբ. Աւետարանս ի գերահռչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս,

[1] Ուղիղ անկյուն փակագծերում եղած երկու նախադասությունները վերցրել ենք Տաշյանից։

որ այժմ ասի Ստամպօլ, ձեռամբ[5] գրչի. որ և ստացաւ զսա մահդասի խօճայ Բարսեղն, յիշատակ ինքեան և ծնողացն իւրոց, հօրն՝ Հաթինազարին և մօրն՝ Մուրվարին, և դստերացն՝ Մասփուտին, Աննային և այլ ամենայն արեան մերձաւորացն. որ և բաղում թախանձանօք հայցեմ հանդիպողացդ այսմ տառի, յիշել զվերոյ գրեալ մահտասի Բարսեղն և զկողակիցն իւր՝ զՄարիամն, և զորդին՝ զպարոն Մինասն և զկողակիցն՝ զՂամպարն հանդերձ ամենայն ընտանեօքն իւրովք։ Եւ որք յիշեն՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ...։

Եղև այս ի ՌՃ և Բ (1653) թուին, յունիսի ԺԳ (13)։

Դարձեալ յիշեցէք զԳրիգորն և զկողակիցն՝ Բադիշդէն, և զորդիսն իւր՝ զՆազարն և Սաֆարն, և զդստերքն իւր՝ Ուրուֆէն, Նազուիանն և Մարամտաաիկն, յիշեցէք և Աստուած ողորմի [ասացէք]։

830

ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

ԹՏԱՎ, № 184

Գրիչ՝ Մարգար երէց
Վայր՝ Բերիա

ա

331 Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերստին ստացօղն զՄարգար երէց, զորդի Ովանիսի Զաշոռնացի, որ ստացաւ զայս մինհատն իւր հալալ արդեամբ, ի վայելումն իւր և իւր որդոցն, ի թվին ՌՃԲ (1653), ի թագաւորութեան Մուհամմատին, և ի վեզիրութեան Տարուիշ Ահմատին, և ի փաշայութեանն Բերիոյ Իպշիրին, և ի կաթողիկոսութեանն Ներսէսի Սեփասացոյ, և ի առաջնորդութեան Խաչատուր բարունապետին Սեփասացոյ, ի քաղաքն Բերիա։

բ

Գրեցաւ Առաքինութեանց գիրգս ձեռամբ մեղսամած Մարգար երէցի[6]. յորժամ Իպշիր[7] փաշան շճտէն պատեցոյց թվին Հայոց ՌՃԲ (1653), ունիս ամսոյն ԺԹ (19)-էն...։ Ի թագաւորութեանն Մուհամմատին և ի կաթողիկոսութեան Ներսէսի Սեփասացւոյ...։

831

ՔԱՐՈՒԱՇՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

ՅՁԱՒ, № 37 (1606 թ.)

Վայր՝ Գաղատիա
Նվիրատու՝ Դանիէլ քահանայ

204 Յիշատակ է սբ. Աւետարանի Մա[տ]թէոս գլուխ կոչեցելոյ քաղուածուս ի դուռն Գաղատիու առաքելաշէն աթոռոյն, տէր Դանիէլ նորընծայ քահանայէս, որ ետու յիշատակ ինձ և ծնաւղաց իմոյ տէր Աստուֆելին, և մօրն իմոյ՝ Ոսկին, և կողակիցն իմոյ՝ Եղիսաբեթին, և նորա-

---

5 Յուցակի հեղինակի հաղորդմամբ գրչի անունը չի գրված և տեղը բաց է թողնված։
6 Մարգար երեցը ձեռագրի մի մասի գրիչն է։
7 Յուցակում «Ի պշիր» ձևով։

տունկ մանկանն իմոյ՝ Կարապետին: Ո՛վ որ ընթեռնու ողորմիս ասէ և աղօթէ, որ իմ Կարապետն երկայն աւուրս լիցի։ Ապա չունի ոք հրաման որ տաւի անէ առնելոյ կամ ի վտանգէս հանելոյ իմոց կամ աւտարաց, այլ մնասցէ ի Ս. Աստուածածին. ի սորանէ հանողն Աստուածածնին պարտական մնայ։ Այս եղև թվին ՌՃԲ (1653) և յուլիսի ԻԶ (26), ձեռամբ Մինաս վարդապետին, որ առաջնորդ էր այս մենաստանիս։

832

ՄԱՇՏՈՑ

ՏՅԶՄՎ, № 68 (1567 թ.)

Նորոդող՝ Առքստազէս երէց

3.10 Նորոգեցաւ և կազմեցաւ Մաշթոցս ձեռամբս մեղաւոր և անարժան նորընծայ Առքստազէս իրիցու, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), օգոստոսի ԻԱ (21)։ Խնդրեմ զձեզ հայրք և եղբայրք, յորժամ կարդաք կամ օրինակէք, Հայր մեղային յիշման առնէք։

833

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՅԶԵՊ, III, № 824

Գրիչ՝ Միքայէլ երէց

218 Զգծող սորա զՄիքայէլ երէցս յիշեցէք ի Տէր, և գուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։ Գրեցաւ թվին Հայոց ՌՃԲ (1653), օգոստոս ամսոյ ԻԱ (21)։

834

ՏՕՆԱՑՈՑ

ՄՅԶԵՊ, VIII, № 2509

Գրիչ՝ Թամուր Ակնցի

Վայր՝ Կ. Պոլիս

165 Փառք...։ Արդ՝ ի զրաւ լինել գրոյն սորա, ցանկացաւղ եղեալ աստուածասէր Խարակուզին որդին մահտեսի Մերունն և ստացաւ յիշատակ նընշեցելոցն։ Գրեցաւ ի գաւառն Ասիա, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ձեռամբ Ակնցի Թամուր դպրի, թվին ՌՃԲ (1653), սեպտեմբերի ԺԴ (14), օրն երեքշաբթի։

835

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՆԴՐԷԱՍ ԿԱՊԱԴՈՎԿԱՑՒՈՅ

Երևան, № 7099 (1686 թ.)

Գրիչ՝ Անաւոն եպիսկոպոս

Վայր՝ Եազլովցա

165 Կատարեցաւ մեկնիչն Յոհաննու Աւետարանչուն, ի քաղաքն Եազլովցու, ի դուռն Ա. Աստուածածնին Հաճատկատար անուն և աւետման Աստուածածնին և Սրբոյն Գրիգորի լուսաւորչին, ձեռամբ նուաստ Ան-

տօն եպիսկոպոսի և վարդապետի՝ մականուամբ Սէրէբոյենց, ի թվին Հայոց ՌՃԲ (1653), սեպտեմբերի ԻԷ (27), օրն երեքշաբթի, ի փառս Քրիստոսի...։

836
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1742

Ստացող՝ Յովհաննէս
Վայր՝ էջմիածին

ա

541ա Փառք...։ Յորմէ շնորհէ սատարեալ յանդեալ աւարտեցաւ տառս մակացական և գիծս իմաստասիրական, արտադրութիւնս փիղիսոփայական և ասացուածս նըրրաճառական յամի հազարերորդի հարիւրերորդի և երկրորդի (1653) թուահաշուութեան արամազեանս ըստ հոլովման մեծի չափողին և պատճառին ամանակի ի մարգաց ամսոջ[8], և
541բ Ի յոզոստոսի ըստ Հ//ռոմայեցւոցն քսան և մէկ, առ հովանեաւ լուսանկար և տիեզերածաւալ գերագահ սբ. աթոռոյս էջմիածնի։ Յորում միջի կայաւորեալք են բազմութիւնք եղբարց կուսակրօնից իբրև յիսնեակ թուով. միշտ յաստուածաշունչ դիրս պարապեալք և յար ի քն[ն]ութիւնս բնախօսական տառից կրթեալք։ Ունելով գլուխ և առաջնորդ ուսումնս այսորիկ զմեծ հռետորն և անյաղթ փիլիսոփոսն ամենավսեմականի Հոգւոյն ընդունարանն. և զինչ եթէ ոչ երկրորդ Դաւիթ և Մովսէս շնորհեալ ազգիս մերում, Սիմէօն[9] ասեմ զմայլեալն առատաբար ի վերնական զեղմանէն, յորմէ ուռճացան յոգունք քերթողութեան արուեստիւ և արտաքին գրոց տեղեկութեամբ։ Եւ աստուածախօս տառից ծանօթացան ըստ որում պատաճառի և զգիրս զայս ստացայ։ Քանզի ըստ յաւէտունակ իմաստութեան մտաց իւրոց, պարզագոյն իմացուածով քերականութիւն յօրինեաց և ուսոյց ամենայն ումեք։ Գոլով գաւառաւ ջուղայեցի, որ այժմ ի Շօշ քաղաքի բնակեալ են արքայարանի Պարսից, աշակերտ եռամեծին և բազմերշանիկ վարդապետին Խաչատրոյ։ Արդ՝ սկիզբն այսր գիտութեան եղև խստակրօն և ճգնազգեաց վարդապետն Մելքիսէթ[10], որ էր յԱրարատեանս գաւառէ, և ի նմանէ ծանօթացաւ սա։ Բայց սակայն բազմապատկաբար առաւելաւ գիտութեամբ սա. սակս յոյժ առատութեան մտաց իւրոց, որպէս և քերականութեանս իրողութեան, որում ոչ ոք երբէք էր տեղեակ յազգէս մերմէ ի վաղուց հետէ մինչև ցայսօր ամանակի ըստ այսմ։

542ա Ուստի և որքանութիւն իմաստութեան սորայ սովաւ ծանուցանի այնոցիկ մտաց, որք իսկապէս կարեն բացորոշել զդիտաւորութիւն քերթողութեանս։ Այլ մեք դարձցուք ի կարգ անկեալ բանիս, զոր սկսաք։ Արդ՝ գոլով այցելու և դիտապետ տոհմիս հայկական, երջանիկ և ճգնազգեաց իմն արտասանեալ տէր Փիլիպոս, բան ջահից մակադրեալ, որ

[8] Ամսաթիվը չի գրված և տեղը բաց է թողնված։ Պետք է լինի ԺԷ (17), քանի որ Հայոց ՌՃԲ թվականը շարժական տոմարով սկսվում է 1652 թ. հոկտեմբերի 9-ին։

[9] Իմա Սիմեոն Ջուղայեցի։

[10] Խոսքը վերաբերում է Մելքիսեթ Վժանցուն, Ներսես Մոկացու գործընկերը։

արդարև ըստ անուան իւրոյ փայլէ յաւուրս յայսոսիկ իբրև արեգակն միջօրէի, երանելի կենցաղավարութեամբ և առաքինաշաւեղ ընթացիւք, պատճառ բարեաց բազմաց լինելով ուղղութեան կարգաց, շինութեան եկեղեցեաց և այլ ամենայն բարեձևութեանց։ Ուստի և նոր նորոգեալ պայծառացոյց զտիեզերական աթոռս, թէպէտ և ոչ սկիզբն։ Սակայն զվաղճանն գեղեցկապէս յանդեաց, ըստ որում Դաւթին առաջարկութիւնն և Սողոմոնեան եզրակացութիւնն տեսանի։ Վասն զի յառաջ քան զսա սրբազան և երջանիկ հայրապետն Մովսէս, որ էր ի Սիսական նահանգէ, անհամեմատ դտեալն ամենայնիւ արդիս, զոր ոչ ոք կարասցէ ըստ քանիօնութեան նորա արտավիպել։ Եւ զի է քեզ կալչիր նպատակ զՊարթևն Սաճակ կամ զմեծն Ներսէս ըստ բնութեան բարուցն, ըստ մաքրութե[ա]ն կենացն, ըստ ուղղութեան ընթացիցն, ըստ առաւելութեան արդեանցն ի վերայ աղգիս և ըստ այլոց ամենայնի։ Սա երիցս չոգաւ առ թագաւորն Պարսից և յոյժ սիրեցաւ ի նմանէ, որով և աղատեաց զաթոռս մեծ ի դիմոսական հարկաց ծայրագունից, որ յանուղղա-
542բ գործ առաջնորդաց աղգիս մտեալ // էր։ Սա ի ներքոյ չարագոյն լծոյն այնորիկ խավեալ է բարձ զայն երջանիկս դէտ շնորհօքն Քրիստոսի։ Եւ զկնի այնորիկ սկիզբն արար ի մաքրել զսա յաղբևսից բազմակուտից, լայնանիստ պարսպօք բոլորեաց և զերից կողմանց շինուածսն աւարտեաց, որ ինչ միանդամ ըստ հարկութեան և ըստ պատշաճաւորեա պիտոյանայր քարիւ և կրով կարծակառոյց ամրութեամբ։ Նաև զկմբէթ մեծի տաճարիս ի բացառեալ շքեղացոյց. քանզի էր խարխալեալ և կարի նիստ։ Եւ յետ այնորիկ եղև զրաւ կենաց իւրոց փոխեցաւ աստուստ յանմահական կեանսն ի հազարերորդ ութսներորդ երկրորդ (1633) թուոյս մերոյ, գոլով վաթսուն ամաց, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս և ամիսս ըստ ամացն։ Իսկ զկնի երանելւոյն փոխանորդեաց աշակերտ նորին տէր Փիլիպպոս դիտապետն, զորմէ նախաճառեցաք։ Եւ սա լցոյց զթերին, քանզի զտանիս սբ. աթոռոյս պայծառապէս նորոգեաց մինչև ի գոտին և զբրգունսն եռակի, զդրունսն երից կողմանց և զաստիճանսն շուրջանակի և զարևելեան ձեռակերասն և զայլ ամենայն շինուածս ըստ պիտոյից սորա։ Յորոյ աւուրս ընդ շինութեան մեծի աթոռոյս նորոգեցան պայծառապէս և եկեղեցիք Սրբոյն Հռիփսիմէի և Սրբոյն Գայիանեայ հանդերձ յայտնութեամբ պատուական նշխարաց իւրեանց։ Ընդ որոյ հովանեաւ և մեք ընդ յոքունս բարուք տնօր[ի]նեալ խնամիմք և տածիմք։ Զոր շնորհեսցէ մեզ տէր Աստուած
543ա խորագոյն խաղաղութեամբ և յաւետ իմն յարամնա//ցական ամօք կալ մնալ բարի հովիւ ի պատճառս սփոփութեան վարատեալ աղանց մեր։ Եւ արդ գրեցաւ իմաստասիրական գիծս յամի հազարերորդի ինսներորդի հինգերորդի (1646) թուականութեանս արամազեանս տոհմի, սուր հովանեաւ հոյակապ մեծի աթոռոյս Ստեփէի յաշխարհիս Սիւնեաց, ձեռամբ Մկրտչի միանձնական և սրբակրօն քահանայի, երկրաւ լէհացի, որ անուանի Սարմատիա։ Բայց զթուղթ այսորիկ գրոց շնորհեաց տէր իմ և խնամօղ ըստ ամենայն պիտոյից ի մանկական տիոց մինչև ցայս վայր սրբազան բարունապետն Յակովբ, որ է փոխանորդ տեառն Փիլիպպոսի երջանիկ հայրապետի. և ի բոլոր անձնէ և արիական սրտիւ դոտևորեալ

ճգնող ի վերայ ամենայն գործառնութեանց նորին, իսկ և զտաճար Սբրոյն Ստեփանոսի Նախավկային, որ ի ձորն Շամբի անուանեալ, շքեղազարդ յօրինու[ա]ծով կառոյց, զորոյ կեանս պարսպեսցէ Տէր և պարգեւեսցէ ընդ երկայն աւուրս լինել ի գովեստ փառաց անուան իւրոյ. զոր յիշել աղաչեմ յաղօթս երկնանուէրս։ Այլ և գրողի զսկզբնագիր բանից գլխոց կարմ[ր]ագեղով տեառն Ստեփաննոսի հոգիընկալ քահանայի և իմաստից պարապողի, համագաւառաւ գրոցս գծողի, և ոսկէնկար ծաղկափթիթ որա[կա]ւք պաճուճողի Սիմէօնի վարդապետի ի Քրիստոս հանգուցելոյ. մասն բարեաց ձերովք մաղթանօք շնորհեսցի։ Իսկ և աւանդողի գաղափարի սորին այսորիկ գրոյս Մովսէսի քաջ բարունոյ մակացութեանց յարա//հետևողի, յորոյ աշխատասիրութենէ ըստուգաբանեցաւ ըստ քերթողական արհեստի և ճշգրիտ իմացուածով օրինակ գրոյս, ուստի և ածանցեցաւ, ընդ որոյ հատուցումն ըստ վաստակոց նորա տացի յամէնառատ դթութեանց անտի Աստուծոյ։ Նաև հարազատական գթով սիրեցեալ եղբօր մերոյ տէր Պօղոսի, որ աշխատակից եղեալ ի սրբագրութիւն տառիցս, փոխարինութիւն յանալատում բարեացն եղիցի հանդերձ համօրէն եղբայրական պարուք և դասուք կրօնակցօք զումարելոց ի տիեզերական աթոռս սբ. էջմիածնի։ Այլ և քանզի երանելին Սիմէօն վարդապետն ոսկեաւ օծանեալ զծաղկունս, որ ի սմա փոխեցաւ ի Քրիստոս։ Վասն որոյ և անկատար մնաց, բայց աւարտեցաւ ի Շօշ քաղաք, ի ձեռն Հայրապետի ուրումն, օգնականութեամբ և ծախիւք Միքայէլ վարդապետի սիրեցելոյ մերոյ, որում Տէր վարձատրեսցէ։ Իսկ բոլորապէս կատարումն էառ ամենայնիւ յամի հազարերորդի հարիւրորդի երկրորդի (1653), ի գերագահ մայրս լուսոյ սբ. էջմիածինս սեպտեմբեր սկզբանն։

Պաղատիմ առ լուսերամ մանկունսգ վերին Սիօնի, առ հարսդ և եղբարսդ հոգևոր, յիշել և զըստ մարմնոյ ծնօղսն մեր առ Քրիստոս յոյսն ամենից, զհայրն ի[մ]՝ զՇաբան, և զմայրն իմ՝ զՄարիամ, և զեղբարսն իմ՝ զտէր Գասպարն, զԲարեաքն, զՍարտարն, զՄինասն, զԱնդրէասն, զՍմբատն, զՀաիումն. և զքորսն իմ՝ զՍօթանեսին, որք են ի կեանս յայս, և որք ի հանդերձեալն առ Աստուծով, զսոսա և զսերունդս սոցա առ հասարակ. // քանզի ի վաստակոց իւրեանց ստացան զդիրս զայս ի զբօնանս անձին իմոյ, յորոց ներեսցէ Տէր ողորմութեամբ իւրով աղօթիւք ձերովք։ Զի համօրէն աշխատաւորք, ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, հանդերձ վերադրեցելով յայսմիկ տառի, յիշողօք և յիշեցելովք և միահաղոյն Քրիստոսի երկրպագողք, դասեսցուք ընդ աջեայսն և ընդ ,օդեայսն յարքայութեանն երկնից, վայելել զանսպառ բարիսն մշտնջենաւոր յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Ընդ որս և զանապատացեալս ի բուսոց բանականաց [բու]սացեալ ծառս ի մէջ պտղաբերաց իբրև փուշ ի մէջ շուշանաց զՅովհաննէս լոկ անուամբ պաշտօնեայ բանի, յիշեսջիք ի Տէր գթութեամբ և սիրով, որ յաւէտ իմն փափագմամբ ստացայ զգիրս զայս իմաստասիրական, որ է բանական գիտութիւն, յորում սակաւուք ծանու եղեալ, զլիագոյնն ձեզ թողեալ. որով պատճառաւ և յիշեցայց։

Արդ՝ ըստ փոփոխման ամանակաց և հոլովմանց կենցաղոյս, որում և լիցի ժառանգել զայս իմաստասիրական կտակ և վայելել <վա>, հայցեմ հեծածագոչ պաղատանօք, յիշել զիս յամենալս զՅովհաննէս, սորին ստացող առ Քրիստոս, յոյս ամենից, համօրէն գրեցելովք ի սմա և զսակաւ յիշատակարանս զրոշմեալս յայսմ գծի, մի՛ երբէք ի բա[ց] հանել ի սմանէ կամ եղծանել։ Զի և ձեզ շնորհեսցէ ըստ այսմիկ յապառնի եկելոց, և փոխարինութիւն առ հասարակ պարգևեսցէ մեզ...։

Բ

347բ Կատարեցաւ սկսեալս ի մէջն գրել տասն Ստորոգութիւնսն, ասացեալ յեռամեծէն Արիստոտեղէ, որ ասի յունարէն ձայնիւ Կատիղորիաս, թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ Անյաղթ ֆիլիսոֆէ Ներգինացւոյ։

837
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., Դ, էջ 59, № 337

Գրիչ՝ Սաեփանոս երէց

Փառք...։ Աստանաւր կատարեցաւ հողիաղուարճ երգս Դաւթի մարգարէին, որ ասի Սաղմոսարան, ի լաւ և յընտիր օրինակէ, ձեռամբ մեղապարտ և բազմամեղ, յոգնաթաւալ և մեղաց գերի Սաեփանոս իրիցու, ի թվականիս Հայոց Ռ և ՃԲ (1653) ամի, սեպտեմբեր ամսո[յ]ութի։ Ընդորս փափագող եղեալ յայսմ պերճացեալ սոփերիս[11] ///

838
ՃԱՇՈՑ

Երևան, № 7432 (ԺԴ դար)

Նորոգող, կազմող՝ Խասպէկ

Վայր՝ Կաֆայ

401բ [Փառ]ք ...։ Ռճ և մի (1652) ամաց շրջագայութեան աբեթական տումարի, մահդասի ոմն Թաղդամիշ անուն աստուածասէր, սպիտակ ալեաւք, խորհուրդ բարի արարեալ հանդերձ քաղաքիս տոլվաթաւորաւքն, որոց հրամանաւ ժողովեաց սակաւ ինչ ողորմութիւն և զայլն յիւրում քսակէ ետ ի շինումն սրբոյ եկեղեցւոյն, որոյ անուն Ս. Սիմէովն։ Եւ ինքն եղև վերակացու և առիթ շինութեան սրբոյ տաճարիս և նորոգման, որ ի վաղուց հետէ այնպիսի անբնակ ի բուլ եկեալ էր. որոյ առընթեր կայ աղբերն պատուական և քաղցր, յորմէ ըմպեն մարդ և անասունք։ Եւ ես քաղաքացիքն, որ աւգնական եղեն՝ տրաւք և ողորմութեամբ, վարձահատոյցն Քրիստոս հատուսցէ նոցա վարձս ըստ վաստակոց իւրեանց։ Իսկ յետ նորոգման սրբոյ տաճարիս ի միւսում ամին, որ թիւրն Ռճ և Բ (1653) էր, դարձեալ խորհուրդ իմն բարի ի մտի եդեալ, նոյն ինքն մահդասի Թողթամիշն, և ետ նորոգել զգանձս պատուական յանառիկն Սիոնն, յորդորմամբ մահդասի Խաչատուրին և խոճա Միասարին և

[11] Շարունակությունը կորած է։

եդ զսա ի սբ. տաճարս, որ ի ընէ իւր էր, գեղեցկայարմար և խորհրդաւոր գիրս, որ ունի բովանդակեալ ի ծոց իւր զբոլոր ամին ընթերցմունսըն...[12]։

492 ա Արդ՝ որք հանգիպիք ի զդալիսս յայս կեանս պիտանի տառիս ի պատիւ տանից տէրունեանց և կամ հաճոյացեալ արանց կատարել զյիշատակ նոցա, յիշեսջիք առ Տէր զվերոգրեալ զմահդասի Թողդամիշն զնորոգաւղ սորա, և զկենակիցն իւր, և զզաւակն, և զփեսայն՝ զխոճա Ն'իասարն, նաև զմահդասի Խաչատուրն, զեղբայր փեսին, որ եղև պատճառ և առիթ նորոգման սբ. գրոցս։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ և ի հռչակաւոր մայրաքաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյ Յարութեան, ի հայրապետական իշխանութեան տեառն Փիլիպպոսի ամե-
492բ նայն Հայոց կաթողիկոսի, և յարհիա//[կան ե]պիսկոպոսութեան յայսմ [նահ]անգի տէր Գրիգորի [և ա]ւագերիցութեանն Կա[ֆա]յու տէր Մաղաքեայի և [տէ]ր Գրիգորի, և երեսփո[խ]անութեանն խոճա Եալչիին, և մահդասի Խաչատուրին, և մահդասի Յարութեանն և այլ պաղի տուլվաթատրացն ամենեցուն, որք համակից եղեն սմա։ Եւ ի թուաբերութեան ծննդենէ Կենարարին ութերորդ երկերիւրի և երրեակ վեշտասանի և միակ ութնեկի (1655)[13], յամսեանն սեպտեմբերի երկոտասանի։

Արդ՝ աղաչեմ զձեզ կրկին պաղատանաւք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոգրեալսն. ընդ նոսին և զանպիտան նորոգաւղ և զկազմող սրբոյ սուրբիս զԽասպէկ գրիչս. և տուք ողորմի լի և առատ սրտիւ։

Եւ նա որ առատն է ի տուրս բարեաց պարգևեսցէ ձեզ զերկնից արքայութիւնն...։

839

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՁՁՎՍ, I, № 23 (ԺԳ դ.)

Նորոգող, հետ. ստացող՝ Առաքել Ծոռոթեցի

172 Արդ՝ վերստին նորոգեցաւ սբ. գիրքս Առակացն Սողոմոնի և այլոց իմաստասիրաց, ի տիրապահ և հռչակաւոր քաղաքս, որ կոչի Կոստանդնուպոլիս, ի թվաբերութեանս Հայոց ՌՃ և երկրորդի (1653), ի հայրապետութեանս սբ. էջմիածնի խստակրաւն և խարազանազգեաց առնն Աստուծոյ՝ Հայոց վերադիտողի տեառն Փիլիպպոսի, որ յայսմ ամի պատահել սմա աստ։ Քանզի երկու ամաւ յառաջ ելեալ ի սբ. աթոռոյն, շրջագայեաց ընդ Հայաստանեայցսս քարոզելով զբանն կենաց. և գնացեալ յԵրուսաղէմ յերկրպագութիւն Տեառն լուսընկալ սբ. գերեզմանին, և այլ ոտնակոխ տեղեաց Տեառն տնաւրինականաց, որ եղև իսկ առաջնորդութեամբ Ս. Հոգւոյն։ Զի մեծաւ հանդիսիւ և աջխարհախումբ ժողովով բազում վարդապետօք և յոլով եպիսկոպոսաւք նաև ան-

12 Մէկ էջում թվում է ձեռագրի ամբողջ բովանդակությունը։

13 Այսինքն՝ [(8×200)+(3×16)]+7։

թիւ քահանայիւք և ուխտիւք եկեղեցւոյ կատարեաց զուխտ իւր բազում զուարճութեամբ։ Եւ անդուստ եկեալ ի Լիւզանդիա՝ մայր քաղաքաց, ըստ խնդրոյ աստ եղեալ քրիստոնէիցն, զի բազում շահս և աւդուտս եղև սոցա. մի՝ զի գոյր երկպառակութիւն ի մէջ սոցա, զի ոմանք ներսցի և ոմանք դրսցի անուանէին. և այսմ անուանակոչութեանց բազում վնասս ծնանիւր, քանզի զմիմեանս մատնէին և աւերս ուժգինս ածէին ի վերայ իրերաց. և սա այնքան միաբանս արար, մինչ զի մի հատ և մի հովիւ եղեն։ Եւ երկրորդ՝ զի եկեղեցիքն սուտանուն պատրիարգաց պարտուց ներքոյ էին՝ մինչև ցի և ի Ռ (20000) զուրիշ. սա զամենայն վրճարեաց և նզովիւք փակեաց, զի այլ պատրիարգ մի՛ նստի ասդ։ Եւ երրորդ՝ զի զխանդարեալ կարգս հաստատեաց, և անկարգութիւնս յոքունս կարգաւորեաց և ուղղեաց։ Եւ աստուստ չու արարեալ գնաց յաթոռ իւր։

Եւ է սոյն աւուրս, որ էր նոյէմբեր ամսոջ Թ (9) և ի տօնի Յովհաննու Ոսկեբերանի սրբոյ, ի մէջ գիշերի՝ ի վաղորդեան չորեքշաբաթոյ անկաւ եանղուն բոլոր պաղաստանին, և այրեալ հրդեհեաց թուով ՃՌ (100000) ընդ տուն և ընդ խանութ. և արար բազում վնասս տաճկաց և ոչ քրիստոնէից, և թէ ոմանց ոդատահեալ՝ ե զայն ևս թերագունից։

Արդ՝ ես չինչինս ի բանասիրաց և յետնեալս ի վարդապետաց, զառածեալս մեղօք Առաքել անուամբ կոչեցեալ վարդապետ և գործով յոյժ հեռի, ծառայից ծառայ Տեառնս[14] ընդ սմա գոլով ի սպասաւորութեանս յամենայն ուրեք, որ եմս երկրաւ Նախիջևանու, ի Շորոր գեղջէ, ստացա զգիրքս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ամենայն արեան մերձաւորաց իմոց և ի վայելումն անձին իմոյ։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զհանդիպողսդ, որք աւգտիք ընթերցմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զպիտակս միով Տէր ողորմեայիւ. և թէ ծանր չթվիցի՝
173 միով Հայր մեղայիւ, զի թերևս արժանի գտայց շնորհի Տեառն և ողոր//մութեան՝ աղաւթիւք արժանաւորացդ։ Եւ ձեզ յիշողացդ լիցի մասն ի Քրիստոսէ Յիսուսէ տեառնէ մերմէ. որում փառք և գոհութիւն // ընդ Հօր և Ս. Հոգւոյն անդրաւ յաւիտենիս. ամէն։

840

ՇԱՐԱԿՆՈՑ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1950 թ., է—Ը, № 16

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Նախասպան

ա

85 Փառք...։ Արդ՝ գրեցաւ տառս այս աստուածային, որ կոչի Շարակնոց, ի յերկիրս Շօշ, որ է Ասպանան, ի գեօղս որ կոչի Նախասպան, ընդ հովանեաւ Ս. Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ի թուականիս Հայոց ՌՃԳ (1653)[15], ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնայ տեառն

[14] Իմա՛ Փիլիպպոս կաթողիկոսի. ծանոթագրությունը Բ. Սարգիսյանի։

[15] Քանի որ հայոց ՌՃԳ թվականը (ըստ շարժական տոմարի) սկսվում է 1653 թ. հոկտեմբերի 9-ին, իսկ շափածոյում ասված է, որ ձեռագրի ընդօրինակումն ավարտվել է «ի մուտ

Փիլիպոս կաթուղիկոսի, որ ի մարմնի զվարս անմարմնոց ունէր, որ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։ Եւ ի յառաջնորդութիւն Շօշ քաղաքիս քաջ բարունապետիս տէր Դաւթիս, ի թագաւորութեան այլասեռից փոքր շահ Ապասին։ Գրեցաւ սբ. տառս ձեռամբ անարժան և ախմար Յակոբիս, յիշատակ պարոն Ստեփանոսին, որ ստացաւ զսա հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն և ծնողացն իւրոյ՝ պարոն Աւետիկին և Սանամին, որ Աստուած վայելել տացէ և զիւրեանս անփորձ, անսասան պահեսցէ. ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և հօրեղբայրն իւր՝ զխոջա Դիլանչին, և որդին իւր՝ զպարոն Միրզաբէկն, և զՄիրզաբէկի որդին՝ զՈսկանն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և զմիւս հօրեղբայրն իւր՝ զպարոն Մուքայէլն, և զնորա որդիքն՝ զԲարաղամն և զԲարաքիազն։ Եւ առաւել յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և զհանգուցեալ եղբարքն իւր ի Քրիստոս՝ Ամիրջանն, Ոսկանն, Պարսամն յիշեցէք...։

Միւսանդամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և եղբայրքն իւր՝ Այզրն, Ոհանէսն, Զօրաբաբէլն, Պետրոսն, որ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և զպապն իւր՝ զխոջայ Ամիրջանն, որ հան[գ]ուցեալ է ի Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք, և զհանիկն իւր՝ Աղաբէկին, որ Աստուած իւր արքայութեանն արժանս առնէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և կողակիցն իւր՝ զՄարիամն, և մայրն իւր՝ զՍանամն, և քոյրքն իւր՝ զԷլին և զԱննային, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք։

Միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն, և զհայրն իւր՝ պարոն Աւետիքն, որ եկեղեցոյս մեր խնամածու և երեսփոխան է, Աստուած փոխարէն երկնից արքայութիւնն հատուցէ. ամէն։ Եւ առաւել յիշեցէք
86 ի Քրիստոս զքահա//նայք եկեղեցոյս Լուսաւորչի, նախ՝ զտէր Աստուածատուրն, որ հանգուցեալ է Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք։ Երկրորդ՝ զտէր Սարգիսն, երրորդ՝ զտէր Աստուածատուրն, որ ունին բազում աշխատանք և երախտիք ի վերայ մեր, վարձահատուցն Քրիստոս հատուցէ վարս բարիս ի յերկինս և ի յերկրիս. ամէն։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ստեփանոսն, որ շատ ջանիւ ետ գրել զսա, աղաչէ զձեզ ասելով, թէ յորժամ կարդաք կամ օրինակէք, միով ողորմեայիւ զփափաքս իմ լցէք և դուք վարձս ի Քրիստոսէ առնուք. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծաղկարար Աստուածատուրն, որ ոսկով և լաճվարտով, երանգ երանգ, դոյնզդոյն դեղօք զարդարեաց և պայծառացոյց, Աստուած աւելի շնորհաց արժանս արասցէ. ամէն։

Արդ՝ ես անարժան և պիտակ անուն Յակոբս, յերեսս ի գետնի դընելով աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, յորժամ կարդայք կամ օրինակէք, լաւ խնամս տարէք սորա, և դուք վարձս ի Քրիստոս առցէք,

---

ամսոյ դեկտեմբերիս», ուստի ձեռագրի ընդօրինակումն ավարտվել է 1653 թ. դեկտեմբերի սկզբներին։

և ինձ մի բերան ողորմի ասացէք, ողորմածն Քրիստոս ողորմեսցի ձեզ ի միւսանգամ գալստեան իւրոյ, և լսել տացէ ձեր երանաւէտ բարբառն, որ ասէ. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգակից երկնից արքայութեանն». ամէն։

Եւ այժմ եղև աւարտ տառիս,
Աստուածախօս սուրբ կտակիս,
Որ եղև խնդումն սրտիս,
Որ ծրեցի զվերջ գրիս։
Ի փոքր Հայոց թուականիս,
Ռճ աւել երիս (1653),
Որ աւարտեցաւ յա[յ]սմ տարիս,
Ի մուտ ամսոյ դեկտեմբերիս։
Զեռամբ անարժան Յակոբիս,
Որ անունս ունիմ, գործս ոչ բարիս,
Մեղօք սնացեալ է հոգիս,
Որ յաճախ կացեալ եմ ի չարիս։
Ոհ, վայ ասեմ քակտի հոգիս, `
Զի ոչ ունիմ մասն ի յերկինս։
Եւ արդ՝ ասեմ անօթ գրիս,
Նախ և յառաջ կաղամարիս,
Որ ի յինքն ունի սև թանաքիս,
Նա կու գրէ որչափ կամիս։
Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէժամ է՞ր կու հանգչիս,
Մատունս իմ ոսկոր է և միս,
Մինչ գրեց՝ զայրացաւ հոգիս։
Երրորդ՝ ասեմ, գրչատաշիս,
Որ կու հանէ սխալ գրիս,
Եւ գրչատաշ ասէ ի յիս,
Թէ որ զիս սուր մնալ կամիս,
Մի առաքեր զիս յայլ տեղիս,
Որ այլ զատ կոտորն կամ միս։
Չորրորդ՝ ասեմ սատաֆներիս,
Մինն զնջիւ, մինն ղրմզիս,
Ցորժամ գրեն գլուխ բանիս,
Նա կու խնդա[յ]սիրտս և հոգիս։
Հինգերորդ՝ ասեմ քանոնիս,
Որ ճշմարտութեան օրինակիս։
Վեցերորդ՝ ճարտավարիս,
Որ կու քաշէ պարիսպ գրիս։
Եւթներորդ՝ ասեմ տողշարիս,
Որ չեմ աշխատիր չափել տետրիս։
Ութերորդ՝ վասն փարկալիս,
Որ շինող է նա տողշարիս։
Ով ոք հետևի բաներիս,

Ուղէ թողութիւնս գրողիս։
Ըզքեզ ունիմ յոյս ի մտիս,
Տէր և Աստուած փրկեա դու զիս,
Ի փորձանաց որ ի յերկրիս,
Սատանայի որ պատրէ զիս։
Համարարի Տէր նայեա յիս,
Ի քո անարժան ծառայիս,
Ընդ սրբոց քոց հազորդեա զիս,
Յորժամ զազգս մարդկան դատիս։
Ով ընթերցող եղանակիս,
Յիշեա ի Տէր զիս եղկելիս,
Յակոբս խեղճ ողորմելիս,
Մի Հայր մեղայիւ յիշեսցիս։
Եւ դու առցես վարձս բարիս,
Ի յարարչէն որ ի յերկինս,
Թէ քահանայ ես՝ փառաւորիս,
Թէ սարկաւագ՝ ի փառս հասանիս։
Թէ պարոն ես՝ յիշեա և զիս,
Արքայութեան արժանասցիս,
Փոխան յիշման Հայր մեղայիս,
Եւ դու երկայնամեայ կացցիս. ամէն։

Բ

Ի Յակոբէ անպիտան,
Գրեցաւ դիրս որ է Շարական,
Ի յերկիրս Ասպահան,
Ի գեղս, որ կոչի Թովրասական,
Ընդ հովանեաւ եկեղեցոյն,
Որ անուանի Լուսաւորչեան։
Ստացող գրոցս այս բանական,
Ըստեփանոսն պատուական,
Զոր տէր Աստուած պահէ անփորձ, անսասան։
. . . .[16]

841

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 4788.

Գրիչ, ստացող՝ Ղազար Երէց
Վայր՝ Փառակայ

ա

188բ Փառք ամենազօ[ր]ին Աստուծոյ, որ ետ կարողութիւն իմոյ տկարիս աւարտել[17] զսբ. Տարոյգիրքս ի վանս Ջերմկոյ, ընդ հովանեաւ Ս.

[16] Շարունակությունը մաղթանք, ուր վերջում դարձյալ հիշում է գրչի և ստացողի անունները։

[17] Ձեռագիրը սկզբնապես ընդօրինակվել է 1525 թ. Զաքարիա Երեցի կողմից (էջ 656—

նախավկայիս, ի յերկիրս Գողտան, ի գեաւղն Փառակայ, ի թվին Ռ և ՃԳ (1653) ամին, յամսեանն դեկտեմբերի Ժ (10), զոր տանուտէր Կոյսըն կոչեցեալ, ի թագաւորութիւն Պարսից կրկին երկրորդ շահ Աբասին, ի հարկապահանջութիւն Սուրաբիսան սուլթանին, ի հայրապետութիւն Հայոց ազգիս սբ. Էջմիածնայ տեառն Փիլիպպոս կաթողիկոսին, ի յաթոռակալութիւն Թումայի աւաքելոյ վիճակիս Խաչատուր վարդապետին, ի քահանայութիւն տէր Մարտիրոսին, որ է Ս. Յակոբայ վանիցն առաջնորդ, և սպ[ասա]ւոր տէր Ոսկանին, տէր Սիմոնին, տէր Թադէոսին: Յիշեցէք ի բարին զտէր Սիմոն կրօնաւորն, որ է ի վանս Ջերմկու, մեր հոգ[և]որ հայր, եղբայր և ընկեր։ Որ և բաղում յոյսադրութեամբ մխիթարեաց զմեզ մեր կերակրիկն հոգալով և հացն տալով, մեզ սիրտ դնելով, ամենն պակասութիւն մեր նա լցոյդ, Աստուած զիւր վարձքն հատուցանէ և անթառամ պսակացն արժանաւորէ, և ինքն անփորձ և անսասան պահէ ի վերայ յերկրի։ Ով որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, ականջ դնելով, լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք

187ա մեր հոգև//որ հայր և եղբայր և ընկեր տէր Սիմոն կրօն[աւ]որին, որ բաղում աշխատանք ունի մեզ վերայ, զոր վերոյ ասացաք լաւութիւնն։ Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զյետնեալս մեզոք զվարանդեալս մեզ աշխարհի զ'Ղազար փցուն գրչակս, որ տեսի զպակասութիւն գրոյս, որ կոչի Յայսմաւուրք, որ էր կիսայկատար, զոր ձեռս առեալ յաժար կամաք և ընտիր օրինակաւ լցի զպակասութիւն սորա, որ և բան մի ոչ մնաց ամենայն պատմութեանց սրբոց, լիակատար արարի բաղում ջանիւ։ Յիշատակ ինձ և ծնողացն իմոց, և հօրն իմոյ՝ մահդասի Յեդկարին, և եղբարցն իմոց՝ Զաքարիին, Դաւթին, Ոնանիսին ///սուն Բարին, դարձեալ միւս փոքրիկ Բարին, և ծնող մօրն իմոյ՝ Եղիսապետին, Սառիկին, Մուրամին, և քրտէրն իմոյ՝ Գուլումին, և որդոյն իմոյ՝ Մովսէսին, Խաչումին, և դստերն իմոյ՝ Սառիկին, Եղիսապետին, և հօրեղբօրն իմոյ՝ Խաչումին, և իւր կողակից Սառիկին, և պապերուն՝ Զաքարիին, Բարին, Ջանիկին, Դաւթին, և հարսներուն՝ Մարիանին, Մառուն, և իմ ամենայն արեան մերձաւորացն։ Զի ով որ կարդայ և օրինակ դնէ առ հասարակ ամենեցուն լի սրտիւ ողորմի ասէ։ Քրիստոս Աստուածն, որ առատն է ողորմութեամբ և պարգևող է...։

187բ Դարձեալ յիշեցէք ի բարին զմեծ հեռատորն և քերթողական հանճարեղն և բանիբուն բաբունապետն զտէր Մովսէս վարդապետն, զոր ի նմանէ գրչութեան արուեստս ուսայ և եկեալ տեսի զկիսակատարութիւն գրոյս, որ էր հինգ ամսեան և կէս[18] անեղրած և զայլն պակաս, որ չէր գրած։ Ես յաժար կամաք գրեցի և լցի ընտիր և լաւ օրինակաւ։ Դարձեալ անմեղադիր լերուք խոշ[որ]անաց և սխալանաց և պակասութեան դրոյս, զի առաջինն էր, զեռ այլ դիրք չէի գրած, հազիւ այս չափս յառաջ ածի։ Աստուած վարձքն հատուցանէ մեր ուսուցողին, որ ի բաղում աշխատեաց ի վերայ մեր։

658). բայց մնացել է կիսատ, այն լրացրել և ավարտել է Ղազար գրիչը 1653 թ.։ Այստեղ նշված են 1653 թ. ընդօրինակության հետ կապված գրչի, վայրի և ստացողի անունները։

[18] Այսինքն 1525 թ. ընդօրինակությունը տևել է հինգ ամիս ու կես և ձեռագիրը մնացել է անավարտ։

Դարձեալ յիշեցէք ի բարին զտէր Սիմոն կրօնաւորն, որ բազում աշխատանք ունի ի վերայ Ս. Նախավկայի վանացս, զի ավերեալ էր և անբնակ մնացեալ։ Սա եղև պատճառ շինութեան վանացս, Աստուած զիւր վարձքն հատուցանէ և մասին սրբոցն արժանաւորէ. ամէն։

Ի թվին ՌԶ (1631) Խաչում առ Աստուած փոխեցաւ։

Ռ և ԶԲ (1633)-ին զիս ամուսնացուցին կարգ աշխարհի[19]։

Ռ և ԶԴ (1635)-ին Սառիկ մեռաւ։

Ռ և ԶԶ (1637)-ին իմ մայրն մեռաւ։

Ռ և ԶԹ (1640) զիս քահանայ աւրհնեցին։ Այլ այն տարին Սառիկ անուն դուստր մի ելաւ։

Ռ և ՂԴ (1644) Խաչում անուն տղայ մի ելաւ։

ՌՂԷ (1648) Մովսէս ելաւ։

Ռ և ՂԹ (1650) իմ ամուսին մեռաւ։

Ռ և ՃԱ (1652) իմ եղբայրքն մեռան՝ Դաւիթ, Ոհանէս։

Բ

2ա Մանաւանդ զստացող սբ. գրոցս Ղազար երիցուն, և հօրն՝ մահդասի Յեդ[կ]արին, և եղբարցն՝ Զաքարիին, Դաւթին, Ոհանիսին. ամէն։

Գ

98բ Եւ կարդայ և զստացող գրոցս յիշեա Ղազար երէցն, նոյն գծողի սորա, և ծնօղացն, և ամենայն արեան մերձաւորացն, և իմ գրչակ տէր Սիմոն քահանայի. ամէն[20]։

842

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 96 (1653 թ. առաջ)

106բ Այս գերս Մուղնու տէր Յեսա[յ]ու որդի Սէիթին է. թվին ՌՃԲ (1653)։ Պարունտէր Յեսա[յ]ի թէ միր ահալն հասէթէս, բարով տեառնէն միր Յիսուս Քրիստոս։

843

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 151

Գրիչ՝ Պօղոս երէց

ա

55ա Զամենածրօղս յիշեցէք ո՛վ անծկալիք իմ ի Տէր. թվին ՌՃԲ (1653)։

---

19 Ընտանեկան այս փոքրիկ ժամանակագրությունը գրված է միևնույն ձեռագրով և հանդիսանում է հիշատակարանի անմիջական շարունակությունը, ուստի այստեղ խոսքը վերաբերում է ձեռագրի գրիչ Ղազար երեցին։

20 բ և գ հիշատակարանների նման գտնում ենք յուրաքանչյուր վկայաբանության վերջում։

Բ

73ա Յոքնամեղ ծրող սորին զՊողոս երէց Այրարատու և զծնօղսն իմ՝ Եղիայն և զՀոիփսիմսյն, և զեղբարս իմ՝ զԱկոբն և զիւրսն և զՊետրոսն, և զքեռն իմ՝ զՄարիամն և զիւրսն, և զհոգևոր ծնօղսն իմ, և զորդիսն իմ՝ զՊողոսն[21] և զՍողոմօնն, և մայր սորին, յիշեցէք ի Տէր, ո՛վ եղբարք իմ բաղձալիք ի Քրիստոս Յիսուս, զի և դուք յիշեալ լիջիք։

Թվին ՌՃԲ (1653)։

Գ

107բ Այսմ վայրի սոսկացաւ անձն իմ, յիշեմ զերկայնամտութիւն Տեառն, զիա՞րդ ներէ և ոչ խրատէ պատուհասիւ զմեզ, թուի թէ առ մեզ է կատարումն մարդարէի ասացեալն. Երարձ, եթող զնոսա, վասն ըստ կամաց իւրե[ա]նց գնալոյ։ Վայ, վայ, վայ, զիա՞րդ անտերունչ մնացաք սակս անձրէնութեանց մերոց։ Ով ոք կարէ հաշտեցուցանել զմեզ, բայց մի մարդասիրութիւն նորա, որում փառք զօրութիւն։

Զգծող ամենամեղ Պողոս, զծնօղս, զեղբարս, զքորս, զորդիսն իմ յիշել աղաչեմ, ո՛վ սրբասէր եղբարք իմ, ի Տէր։

844

ԱԻՆՏԱՐԱՆ

Երևան, № 261

Գրիչ՝ Ազարիայ
Վայր՝ Ասպահան

ա

110բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սր. Աւետարանս ձեռամբ <և> անարժան, փծուն գրչի սուտանուն Ազարիայի, ի Շօշ քաղաք՝ Ասպա[հա]ն, ի թուականիս Հայոց ՌՃԲ (1653) ամին, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպպոսին, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր պարոն Շահղուլէ խուսրովապատու, յիշատակ իւրն և իւր ծնօղացն՝ Յովանիսին և մօրն
111ա իւրոյ՝ Մէհրիջա[ներ]ին // և եղբօրն իւրոյ՝ Միրզին և պապին՝ Ղազարին, և հանկանն՝ Մարիամին. Խանումաղին, և հօրեղբօրն՝ Ամի[ր]թօլաթին, և որդոյն՝ Մէլիքթօլօճին, Տօլանին, Շիրինին, Սարգսին, Միրիջանին։

Դարձեալ յիշեցէք զպարոն Շահղուլին, և կողակցին իւրոյ՝ Խաթուջանին, և որդիքն՝ Ղազարոսն, Յակոբջանն, Այվազն, դուստրն՝ Խանումաղէն, Մարիամն։ Դարձեալ յիշեցէք Միրզէն, [ո]ղդիքն՝ Երիջանն, Հայրա[պետն]։[22]

Բ

319ա [23]



[21] Անունը չնշված է. կարդացինք ենթադրաբար։

[22] Շարունակությունն ընկած է։

[23] Կարդացվում է «Յակոբ» և գրված է կարմիր մելանով. հավանաբար ձեռագրի ծաղկողն է։

845
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 363 (ԺԶ դ.)

311բ Դարձեալ աղաչեմ զամենեսեան ղձեղ, հայրք իմ և եղբայրք, քորք իմ և մայ[ր]ք, յիշեցէք ի մայքրայփայլ յաղաւթս ձեր զվերջին ստացաւղ Աւետարանիս զանզաւակ Սիիթարն, զՍարխոշի հաւրեղբայ[ր]ն, որ գնեաց ղսայ ի յանաւրէն գերողացն, յիշատակ իւրն, և ծնաւղացն, և կողակցին, և իւր զաւակաց Սարխոշին և իւր ծնաւզին՝ Սուլթանին, լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Մխիթարին, որ եւ սայ իւրն յիշատակ ի դուռն Ս.[24]

Ծնաւ Գիրիգորեն թվին ՌՃԲ (1653)[25]։

846
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 510

ա

93ա Ով սբ. քահանայ, յիշեա և զանարժան գծօղս։ Թվին ՌՃԲ (1653) էր։

բ

164ա Յիշատակ է Ժամայգիրքս Մարտիրոս քահանային և կողակցին՝ Բանաւշին, և ծնաւղացն՝ Յովանիսին և Դօլվաթին, և որդոյն՝ Ասառաւծատրովին, և կողակցին՝ Հուրիիանին և ամենայն յարեան մերձաւորաց նոցին։

Դարձեալ ով ոք հանդիպիք սրմա կարդալով կամ ալինակելով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ի միւսանգամ գալստեանն...։

847
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 516

Գրիչ՝ Յակոբ

ա

34ա Զիս զմեղաւոր և սուտանուն Յակոբ գրչակս յիշեա ի Տէր։

բ

39ա Փառք..., որ եւ կարողութիւն տկար և մեղապարտ թուրմայ յոգոյ, որ գրեցի սակաւ մի պատմութիւն և լուսանցոյցս վասն Ասլանբէկին, որ խնդրեաց սիրով, բաղում անգամ։ Դարձեալ խնդրեմք ի Տեառնէ, որ բաղում ամօք արասցէ և ուրախութեամբ վայելեսցէ. ամէն։

---

24 Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

25 Այս տողը հավանաբար նույն անձնավորության կողմից գրված է հիշատակարանի ներքևի մասում։ Այդ պատճառով հիշատակարանն էլ դրեցինք 1653 թ. շարքում։

Դարձեալ խնդրեմ ի ձեզանէ, խնդրէք զթողութիւն ի Տեառնէ վասն մեղաւոր Յակոբիս, թողցէ տէր Աստուած զամենայն յանցանս ձեր. ամէն։ Գրեցաւ թվականին Հայոց ՌՃԲ (1653)։

Գ

148ա Ո՛վ ընթերցող դրոյս, յիշեցէք ի Քրիստոս զՅակոբ գծողս և մի բերան Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Գրիչ՝ Սուքիաս

Դ

124բ Աղաչեմ ո՛վ սբ. ընթերցողք հայրք, ներեցէք իմում պակասութիւնս վասն գծայգրելոյս, որ վարդապետաց գիր ոչ եմ ուսաց, արէք թողութիւն պակասութեան իմում, ի ծառային ձեր սուտանուն Սուքիաս գրչոյս[28]։

848

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 800

Գրիչ՝ Մարգարիտ
Վայր՝ Շոնոթ

Ա

317բ Փառք...։ Ի թուաբերութեան հայկազեան տօմարի Ռ հարիւրերորդի և երկրորդի (1653) գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, որ կոչի Հարցմունք, ի թագաւորութեանն Պարսից շահ Ապազին, և ի հայրապետութեան Հայոց սբ. աթոռոյն Էջմիածնի տեառն Փիլիպպոսի, և փոխանորդի նորին տեառն Յակոբի, և յաթոռակալութեան մերոյս նահանգի Նսայեայ քաջ բարունապետի, գեղեցիկ և պայծառ զարդ զարմանալի, նորասքանչ նորոգողի և շինողի Ս. Կաթողիկէի։ Գրեցաւ սբ. մատեանս յերկիրս Երընջակայ, ի գեօղս Շոնոթ կոչեցեալ, ի սբ. մենաստանիս ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչին և Ս. Յակոբ հայրապետին, ձեռամբ ումեմն նուաստի և քան զհող և զփոշի, անարգի և տկարի, որ ոչ ունէի կարողութիւն և համարձակութիւն միոյ կէտի դրոշմելոյ, այլ ապաւինեալ ի տնօրինիչ և ի մարդասէր հրզօր՝ Ս. Հոգին, որ զտկարս զօրացուցանէ և բանայ զլեզուս համերց։ Նորին յուսովն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի հարկեալ ի հրամանաց և ի ջերմեռանդ եռափափագ սիրոյ վեհագոյն հարազատացս իմոյ, զոր ունէին անծուկ և բաղձանք ի սրտի՝ ի տուէ և ի գիշերի վասն դրոցս ստացման։ Զոր ե ես նուաստագոյնս քան զբնաւս ապաւինեալ ի յԱստուած, եղէ հրամանակատար և յօժարակից սիրոյ հարազատացս իմոյ վեհագոյն և բազմախնամ Ղազար քահանայիս և տէր Արիստակիսի բանի սպասաւորի, զոր վառեալ կային ի տուէ և ի գիշերի ի սէր և ի փափագ սբ. գրոցս. և ետուն գրել զսա ի վայելումն ան-

[28] Սույն հիշատակարանը գրված է կարմիր մելանով։ Նման մի հիշատակարան էլ տե՛ս 128բ, իսկ համառոտ՝ 102ա, 108բ էջերում։ Ձեռագրի 81բ—82բ էջերում գրի է առնված 1677—1692 թթ. միջոցում արևը և լուսինը որ ամսին, որ օրը և որ ժամին են խավարելու։

ձանց իւրեանց և որդոց իւրեանց, և յիշատակ մեզ և ծնօղաց մերոց Կիրակոս քահանային, Թուրվանդին, և որդոցն՝ Կոզմասին, Ալէքսանոսին, Յովանիսին, Կիրակոսին և դստերացն ամենեցուն՝ կենդանեայն և ննջեցելոցն. ամէն։

Ստացող՝ Ղազար քահանայ

Բ

Եւ արդ՝ ես Ղազար քահանայս և հարազատն իմ՝ տէր Արիստակէս սպասաւոր բանի, բաղում սիրով ցանկացաք այսմ լուսազարդ մատենիս Հարցմանց, և ետուք դրել զսա ի վայելումն մեզ և որդոց մերոց Կոզմասին և Ալէքսանոսին, Յովանիսին և Կիրակոսին և այլոցն ամենեցուն. և յիշատակ ծնօղացն մերոց Կիրակոս քահանային, Թուրվանդին, և եղբօրն մերոյ հանգուցելոյ առ Քրիստոս Ալէքսանոս քահանային, և քեռն մեր՝ Մարգարտի՝ ծրօղի տառիս, և միւս քեռն՝ Ղիմաբին և ամենայն արեան մերձաւորացն մերոց. ամէն։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զլուսերամ դասքդ, զորդիքդ Սիոնի, որք հանդիպիք գրոյս, կարդալով կամ օրինակելով կամ հարևանցի տեսութեամբ, յիշեցէք զմեզ առ Տէր ողորմայիւ. և գուք յիշողքդ և յիշեցեալքս՝ յիշեալ լիցուք...։

849

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Երևան, № 1327

Գրիչ՝ Հոիփսիմէ
Վայր՝ Հալիձոր

327ա Փառք...։ // Արդ՝ գրեցաւ սբ. տառս, որ կոչի Մեկնիչ, որ ունի սա առ ինքն զմեկնութիւն գիշերային աղօթիցն և առաւաւտու ժամուն, և արևագալին, և երրորդ ժամուն և վեցերորդին և զիններորդին, զերեկոյին ժամուն, և զպատարագի խորհրդոյն և ամենայն աստուածաշունչ աղօթից և բանից մեկնութիւն ի սմա ամբարեալ կայ ի գիտութիւն և ի փրկութիւն հոգոց հաւատով ընթերցողաց։

Գրեցաւ սա ի յերկիրս Էճանան, ի գեաւղս Հալիձոր, ի դուռն սբ. անապատիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Ստեփաննոսիս և Ս. Մինասիս, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), վասն փրկութեան հոգւոյ

327բ տէր Յովանէս կուսա//կրաւն արեղային։

Աղաչեմ զձեզ, ո՞վ սբ. մանկունք սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զերջանիկ և գերիմաստ տէր Մելիքսէդեկ և զվերակացու անապատիս զսրբամիտ մահդասի Սիքայէլ, որ գրել ետուն զսբ. գիրքս վասն փրկութեան հոգոյ տէր Յովանիսին և ծնօղացն և ամենայն ազգականացն իւրոց. ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, յիշել յերկնաթռիչ յաղօթս ձեր, զվերոյ դրեալքս ի սմա զվերակացուք անապատիս զվաստակասէր և ժիր մշակք Յիսուսի փրկչին մերոյ զտէր Մելիքիսեդեկ և զՍիքայէլս, որք ունին սոքա բազում աշխատանք ի վերա անապատիս և ինձ։ Ընդ նմին և զեղկելի գծողս և զանապատիս մայրապետ զՀոիփսիմէն և մարան-

պետ Ուստիանէն և այլ միեղէն մայրքս և քորքս, և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւս անգամ գալըստեանն իւրում...։

850
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1924

Գրիչ՝ Աւէտ

ա

139ա ... Այլ ակն ունելով յուսով սպասեմ սբ. ընթերցողացդ աղօթից, յիշել զիս՝ անարժան Աւէտ դրիչս, ընդ նմին և զծնօղսն իմ, և զյիշողքդ՝ յիշեալ լիշիք ի քաղցր ձայնին...։

Գրիչ՝ Աբրահամ

բ

335բ Փառք...։ Որոյ շնորհիւ և աւգնութեամբն յանկ ելեալ կատարեցաւ գիրքս, որ կոչի Սանդուղք աստուածային ելից, և միւսն որ կոչի Յոհան աստուածաբան, ձեռամբ անարժան Աբրահամի ՌՃԲ և Բ (1653) թվականի[ն], ի փառս Քրիստոսի աւրհնելոյն. ամէն[27]։

851
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 2484

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

249ա Փառք...։ Շնորհաւք ամենառատ և բարգևաբաշխ Հոգւոյն Սրբոյ, որ աւժանդակիցէ տկարութեան մարդկան, գրեցաւ քնարս հոգէպատում՝ երգս սաղմոսաց Դաւթի, ի թուիս Հայոց ՌՃԲ (1653), ի դառն և ի դըժնեա ժամանակի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, ի յաշխարհս Հոնաց, ի քաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրաւարին և որդոյ նորա Մարտիրոսին, յառաջնորդութեան տէր Գրիգոր արհիեպիսկոպոսի, ձեռամբ ախմար գրչի Նիկողայոսի, ի լաւ և յընտիր աւրինակէ Գառնեցոյ, ի խնդրոյ սրբասէր և բարե-
249բ տոհմ Գրի//գոր տիրացուի, զոր ստացաւ յարդար ընչից իւրոց, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ հոգեզուարճ ընթերցմամբ և խորին ծերութեամբ։ Արդ՝ որ աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զստացաւղ սորա զտիրացու Գրիգորն և զհանգուցեալսն ի Քրիստոս և զնախնիսն իւր[28]։ Եւ անմեղադիր լերուք գրոյս, զի ի ժամանակ ձրմե-

---

27 Ձեռագրի ճր էջում «Նորին (իմա Բարսեղ Կեսարացու—Վ. Հ.) սահմանք կրօնաւորականք» վերնագրի տակ, կարմիր մելանով գրված է «Յիշեա Յոհանս»։ Մեզ թվում է ծաղկողի հիշատակարանն է։

28 Զորս տող դատարկ է։

բայնի գրեցաւ։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

852
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 2494

Գրիչ, ծաղկող՝ Յոհան սարկաւագ
Վայր՝ Շօռոթ

354բ Փառք...։ Աւարտեցն սբ. Աւետարանս ձեռամբ սուղ և նուաստ, սուտանուն կոչեցեալ սարկաւագ Յոհանիս, որ և աշակերտ եղէ Մովսէս
բաբունապետի[29], որ և կոչի անյաղթ փիլիսոփայ, քանզի բազում աշխա-
տութիւն արար ի վերա իմ՝ թէ զրի և եթէ ծաղկի. վարձս ի Տեառնէ առ-
355ա ցէ։ Դարձեալ միւս վարդապետն իմ, որ // կոչի Առաքել. նայ այլ ես
բազում աշխատեցաւ, որ դասատու եղև ինձ։

Արդ՝ աւարտեցաւ սբ. Աւետարանս ի ժամանակս թագաւորութեան փոքր շահ Ապասին, և հայրապետութիւն տեառն Փիլիպպոս սրբազան կաթուղիկոսին, և աթոռակալութիւն Եսայեայ վարդապետին։

Գրեցաւ ի գէօղս, որ կոչի Շօռոթ, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653) ամին։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր տրուփ Յոհանս, և զհայրն իմ՝ զԳրիգորն, և զմայրն իմ՝ զՋօրիկն, և երկու եղբարքն իմ՝ զԹաթէոսն և Հայկազն, յիշեալ լիջիք ի Տեառնէ։

853
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Երևան, № 3007 (1772 թ.)

Նորոգող՝ Վարդան
Վայր՝ Բաղէշ

ա

147բ Նորոգեցաւ[30] տաճս և սուրբս և մատեանս աստուածախօս մարգարէին Եբեմիայի, մեկնեալ քաջ փաղեբային և երախտաւորին Հայոց Գօշին Սիիթարայ համառօտ և քաղցր բանիւ, յօգուտ ընթերցողաց, զոր և գրեսցէ զնա Տէր ի գիրն անջնջելի կենացն յաւիտենից և սբ. աղօթիւք նորին, և ընդ մեզ հաշտեսցի անոխակալութեամբ։ Եւ զի էր տառըս այս յանհոգութենէ աշխարհասիրաց՝ այրեալ և փտեալ և կարկամեալ դիւրաեղծ նիւթն սորա զօրէն տառապեալ տնանկի, զոր և տեսեալ զսորայս փարթամութիւն անկեալ ի գետնի, սիրելի եղբայրն մեր Սարգիս, որ ի կարգէ աստիճանաց Սրբոյն Ստեփաննոսի, և հասեալ ի վերայ կորզեաց զտառս ի ժահահոտ վայրէն, և վեր առեալ զսա իբր

[29] Հավանաբար ակնարկում է Մովսես Խոտանացուն։

[30] Այս ձեռագրի նյութն ընդօրինակվել է 1198 թ. (էջ 147ա), որը և նորոգվել է 1653 թ.։ Այս, ինչպես և 1187 թվականի հիշատակարանները պահվել են 1772 թ. ընդօրինակության մեջ։ Վերջին ընդօրինակության՝ 1653 թ. հիշատակարանի վերնագիրն է. «Յիշատակարան նորոգման հնագոյն գրոյն, յորմէ օրինակեալ էր օրինակն, սոյն այս գրոյս մեր նորագծեցեալ», որը գրված է կարմիր մելանով։

զմարգարիտ ի տղմէ, և ուրախամիտ մտօք կարկատեալ զսորայս հնութիւն, բազմաշխատ և վշտակիր ջանիւ և զկնի աշխատեալ ի խոյզս օրինակի, և հազիւ գտեալ, յաջողմամբ Տեառն, և տպա քաջալերեալ զտըկարութիւնս մեր առ ի յընկերել ինքեան ի գրել զպակասն և զեղծեալսն. և մեր վշտացուցեալ զնա մեր անհամբերութեամբս բազմադիմի և կարողութեամբ հաստչին Յիսուսի այժմ աւարտեցաք ի փառս նմա, ի թուականիս Հայոց ՌՃԲ (1653), ի քաղաքս Բաղէշ, ի մենաստանս Ամբրտօլու Ս. Յոհաննու Մկրտչին և այլոցն։ Զոր և կողկողագին պաղատանօք հայցեմ // ի հանգիպողացդ, հայցել աննախանձ գթոյն Քրիստոսի փշրանս ողորմութեան մեզ մուրողացս ի ձէնջ և յիշել յաղօթս զՍարգիս քաջ երաժիշտն և զարագագիր գրչապետն և զնկարողն. և ախորժ մտօք ողորմի ասել նորին և ծնողացն իւրոց, որ է սա ի Միջագետաց քաղաքէն՝ յԱմքայ, եկեալ աստ վասն տքնութեան սբ. դրոց ընթերցմանն։ Որ և իսկ ունի զցայգաջան աշխատութիւնն դեղերեալ ի գրունս իմաստից միշտ. զոր և լցուսցէ Տէր զանձկութիւն ըղձից փափամանն սորա, որ աննախանձ է ի տուրս շնորհաց, և յիշեսցէ անմոռացութեամբ զձեզ յիշողդ և զյուսողքս և զծնողսն մեր և զիս զսակաւ տաժանողս Վարդան ի միւս անգամ գալուստն. ամէն[31]։

Բ

Կաղմեցաւ սբ. դիրքս ձեռամբ Վարդան անարժան ստրկի, յիշեցէք զվայելող սորայ զՍարգիս և զծնողսն՝ զԼուսաձին և Վարդան հայրն, և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

854

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 4205

Վայր՝ Շոնոթ

ա

4ա Գրեցաւ /// ամենամեղ /// արեղաի։

Բ

55բ Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի սբ. Հարանց վարուցըս Վարդան քահանային և ծնողացն և ամենայն յարեան մերձաւորն...։

Գ

462ա Փառք..., որ ետ կարողութիւն զմտատուն վերջացեալ անարհեստ, փրծուն գրչիս, յաւարտ եղև յայսմ ամի՝ ի հայկաղան Հայոց սեռի թվաբերութեանս ՌՃ և Բ (1653) ասի։ Գրեցաւ ծաղկաւէտ զանազան առաքինութեամբ զարդարեալ, որ կոչի Հարանց վարք։ Արդ՝ փափագող եղև ոգէշահ, անգին մարգարտիս, զաստուածասէր արեղայն զտէր Վարդանն,

---

31 1772 թ. ընդօրինակողն սույն հիշատակարանի վերջում ծանոթագրում է. «Առաջին գրոցի յիշատակարանն անկեր էր (յորմէ օրինակիալ էր օրինակն սոյն գրոյս)։ Ցիշեսցէ զնա ևս Տէր ողորմութեամբ իւրով. Կաղմօղն նոյնոյ հնոտի գրոյն ի վերոյ յիշեցեալ Վարդանն հանգերձ ծնողիւքն յիշել ի Տէր գրեալ էր» (էջ 148ա)։

ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն և ծնողացն, հօրն՝ Մուրատին, *մօրն՝* Նուրումին, *եղբօրն՝* Մանուկին, *և որդոցն՝* Առաքելին, Հայկազին. *դստերացն՝* Մարթին, Մարգարտին. *կողակից* Մարինոսին, *քերցն՝* Մարթին, Թիւանդին. *հանգուցեալ եղբօրն՝* Առաքելին, *կողակից* Նիգարին, *հօրեղբայր* Եղիին, Շանիկին *և իւրեանց դստերացն և որդոցն՝* Ղարամանին, Գրիգորին, Աւաքին, Աստուածատուրին, Մկրտչին, Հերումին, Բարսեղին, *միւս* Ղարամանին, Աստուածատուրին, *դստերցն՝* Խաթունին, Թամամին, Սոլթանին, *որդոցն՝* Հայրապետին, Խաչատուրին, Յովանիսին, Նաւասարդին, Մամերին, Զինարին, *ապաշխարող* Խանուն, Խանլիլարին, *մայրենի ընտանեաց պապ* Սարգսին, *հանիկ* Խաթունփաշին, *մօրեղբարցն՝* Յովսէփին, Մելիքին, *մօրքուր* Խաթունին, Մանուշակին, *որդոցն՝* Մըսրին, Յիսրաեղին, *փեսայ* Մարգարին, *որդի* Արզանուն, *փեսայ* Սարգսին, *որդոցն՝* Մարտիրոսին, Նազարին, *դստերցն՝* Զիլփուն, Եղիսաբեթին, Շանումին *և ամենայն արեան մերձաւորացն։ Աղաչեմ զձեզ, ո՞վ եղբարք, յորժամ ընթեռնուք կամ օրինակէք, լի բերանով Աստուած ողորմի ասացէք տէր* Վարդանին *և իւր ծնողացն։*

Արդ՝ ես եղկելի Նորաշինկեցի,
Ծոեռնագործ և զազրելի,
Ձեռամբ իմով մեղսամածի,
Առաջնորդութեամբ Ս. Հոգւոյն,
Յաւարտ հասի յայսմ տառի.
Ի երկիրն Երնջակ *ասի,*
Ի գեօղն անուանեալ Շօնօք *կոչի,*
Ի հայրապետութեանն տեառն Փիլիպոսի,
Ի վիճակն Ս. Կարապետի,
Եւ մերոյս առաջնորդութեան քաջ և արի,
Հայրապետի տեառն Յեսայի *վարդապետի.*
Ի դուռն Ս. Աստուածածնին,
Ընդ հովանեաւ Ս. Լուսաւորչին։

Գրեցաւ սբ. Հարանց վարքս ի լաւ և յընտիր օրինակէ։ Եւ ես անպիտանս տեսի զփափագող յայս գրոյս, առեալ սկսայ Թ (9) տետրէն ի վեր մինչև Ի և Բ (22) և զմիջոցն Թ (9) տետրն մինչև ցվերջն։ Անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս, զի կար այս էր։

855

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 4930

Գրիչ՝ Ուստիանէ

ա

186բ *Ո՞վ ընթերցողք, յորժամ ընթեռնուք զատենադիրս, յիշեցէք զեղկելի և զչնչին* Ուստիանէ *կոյս, զհայրն իմ՝* Աւագն *և զմայրն իմ՝* Վարդխաթոնն, *քոյրն իմ՝* Մայրամն, *զեղբայրն իմ՝ տէր* Մկրտիչն *և որդիքն նորին՝* Աւագն։

Բ

218ա Այսպէս գրեայ շարաւած դողին
Ա /// [սոր]ա գրողին,
Եւս առաւել Աւագին,
Եւ իւր եղբայր Առամելին:

Գ

221բ Ո՛վ ընթերցողք, յորժամ ընթեռնուք ատենայդիրս, յիշեցէք զեղկեւ[ի] և զընչին Ուստիանէ, ծնօղօք իմովք և ամենայն արեանց մերձաւորաց, յիշեցէք եղբայր իմ [տէր] Մկրտիչ քահանայն և որդիքն իւր՝ Աւագն և Յովհանէսին, և փոքրիկ Կարայպետն և Խասաթունն, որ փոխեալ է առ Տէր։

Թվին ՌՃԲ (1653)։

856

ՏԱՂԱՐԱՆ

Երևան, № 5623 (1652 թ.)

Հեղինակ՝ Յոհան

224բ ՌՃԲ (1653) թվականին,
Գանգատ ունիմ ճրագի մրին,
Այլ և յետոյ այս խամ թղթին,
Որ չի երթար հետ իմ սրտին։
Սէֆիլ Յոհան[32] ու փանաքին,
Երբ չէք թողուր հետ իմ կամին,
Աչուերսէ բաց լուսոյ պակաս,
Գրիչն չերթար հետ շար տողին։
Որն է կազ և որն է կոր,
Թանաք տըղզի ի մէջ թղթին,
Ծառայ եղիր սբ. Պետրոսին,
Արագահաս սբ. Մինասին։
Սոսկալի սբ. Աւետարանին,
225ա Զաւրդ վճարէ ի յեղանակ // աշնանային,
Խնձոր բերեն վէր քեզ թափեն,
Գինի խմեն զդօստիքանին։
Սէր ու տէր եմ հաւ բլբուլին,
Եւս առաւել կարմիր վարդին,
Հասրաթ մնաց վէր իմ սրտին,
Քարամ արայ մէկէլի վեր,
Գինի խմիր հետ ի կարգին։
Ախ ինչ անեմ երբ ճար չկայ,
Ջումլայ ասէք ինձ զողորմին։

---

32 Ձեռագրի գրիչը, հիշատակարանը տե՛ս 1652 թ. շարքում։

Եւ ծնողացս իմոյ, հօրս Թաքարին *և մօրս իմոյ* Թուրվանդին, *և որդոցս* Յուսէփին, Մարտիրոսին, Անանին, *և եղբօրս իմոյ* Յովանէսին *և* Սարգսին, *որ փոխեցաւ առ Քրիստոս, եթող սուգ ծնողաց իւրոց, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ծընողացս։*

857

ՀԱՄԱՅԻԼ

Երևան, № 6186

Գրիչ՝ Յոհանէս

ա

41ա Աւէտին *և կողակցին* Գուլյանէին:

բ

51ա *Ըռէս* Աւետին:

գ

74ա Աւէտ *և որդիք տէր* Աւետիսն, Նաիպշէն, *ծնողք* Նաիպշէն, Գուլհաս, *կողակից* Գայիանէն:

դ

103ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. տառս, օր կոչի Համայիլ, որ է Աւետարան և Նարեկացի և սբ. աղօթք բժշկութեան և պահպանութեան, ի թվին*
103բ *Հայոց // ՌՃԲ (1653), ձեռ[ամբ] անարժան* Յոհանիսիս, *յիշատակ բարեմիտ և աստուածասէր [ըռէս]* Աւէտին, *և ծնողքն՝* Նայիպշէն *և* Գուլհասն, *որդիքն՝ տէր* Աւետիս, Նայիպշէն *և կողակիցն՝* Գայիանէն, *որ ետուն ղրել ղՀամայիլս, վայելումն անձին իւրոց, ի սբ. և յրս[տ]ակ յաւրինակ[է]*[33]

858

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6291 (1411 թ.)

Գրիչ՝ Սարգիս քահանայ

2ա *Ի թուին Հայոց ՌՃ (1653), ի բաժին և յարդար յիշատակ, որ ի յիշեալ թուին վիճակեցաւ սբ. Թուխ մանուկ Աւետարանս երից հարազատաց արենակցաց՝* Կարապետին, Միրաքին, *որ ի հարազատ տանէ* Յովհաննէսի, *որդւոց* Յովսեփայ. *իւրեանց հոգւոց, և որդւոց, և թոռանց յաւիտենական յիշատակ յազգէ յազգ։ Ուստի ո՛վ հանգիպողք սբ. Աւետարանիս, յիշեցէք զամենայն զմեղաւոր ազգատոհմս մեր ի մեծաց՝ ի փոքուն ի մաքուր աղօթս, ձեր։ Եւ ով ոք զրկանս արասցէ և*[34] *յափշտակեսցէ ի հաստատուն յիշատակէ ազգի հարազատ արենակցաց* Կարապետի *և* Միրաքին՝ *անէծս Կայենին առցէ. ամէն։*

Զի է հարազատ յիշատակ ազգի նոցա, որ գրեցաւ ձեռամբ Սարգիս *սուտանուն քահանայի. ամէն։*

---

33 *Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։*

34 *Ձեռագրում «իս»։*

859
ԺՈՂՈՎԱՆՈՒ
Երևան, № 6419

Գրիչ՝ Յակոբ

ա

65բ Ո՛վ հայրք և եղբայրք, յորժամ ընթեռնուք զհոգեզարդ բուրաստանս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զՕնուփրիոս վարդապետն, որ ետ դրել զսա, յիշատակ հոգւոյ իւրոյ և հօրն իւրոյ՝ մահդասի Խաչումն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, յիշեցէք...։ Ընդ նոսին և զիս զմեղադարտ Յակոբ գրիչս յիշեա, յիշողք՝ յիշեսջիք ի Քրիստոսէ. ամէն։

բ

101բ Մանուէլ ծառայ Աստուծոյ[36]։

Գրիչ՝ Վահրամ դպիր

գ

183բ Փառք...։ Արդ՝ ես տառապեալ և մեղսամակարդ, անարժան Վահրամ դպիրս, ի թուականութեանս մերում Ռ և Ճ և Բս-ին (1653), շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. դիրքս, որ կոչի Պարապմանց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ Արդ՝ աղաչեմ զհանդիպողացդ, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, յիշել բոլորով սրտիւ զստացողի սորա զՍրեւանցի խոջայ Յակոբն, և զորդին իւր՝ զՍարդիսն, և զծնողսն՝ զՍէթն և զԽանալէն, և զեղբարքն իւր՝ զԳրիգորն և զՏաւութն, և այլ ամենայն մերձաւորացն իւրոց կենդանեացն և հանգուցելոցն և առ հասարակ ամենայն ազգատոհմին իւրոյ. ամէն։

860
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7676

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

278բ Փառք...[36]։ // Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն ի Կոստանդինուպալիս, ի թվաբերութեանս հայկազեան և աբեթական տումարի Ռ Ճ Բ (1653), ձեռամբ մեղապարտ և անարժան Յովանէս դպրի[37]։

---

35 Գրված է կարմիր մելանով։ Այս անձնավորությունը գուցե ձեռագրի ծաղկողն է։

36 Բացի այս հիշատակարաններից ձեռագրի 13բ, 88բ և 140բ էջերում երեք ավետարանիչների նկարների տակ ծաղկողը, որի անունը չի պահպանվել և կամ գրիչն է, կարմիր մելանով գրել է սրանց անունների բացատրությունը։ Դրանք չվերցրինք։

37 Կարծես սրա շարունակությունն է 1756 թ. գրված հիշատակարանը. «Արծաթապատեցաւ և գնեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Կարնոյ առաջնորդ Անտին աստուածիմաստ վարդապետին, տրօք հաւասար ժողովրդեանն, և եղաւ յիշատակ Մուտուրկու Ս. Լուսաւորիչի վանիցըն...»։

861
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7758. տե՛ս նաև 82ՆԲԱՃ, № 31, էջ 30

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Փառակայ

ա

102ա Եղկելի Մարտիրոս գրիչս յիշեցէք, ո՛վ աչացս լոյս սաղմոսերգողք։ Ի թվիս ՌՂԴ (1645)։

բ

200ա Ի թվականիս Հայոց ՌՃ (1651) էր. անմեղադիր՝ լերուք, ով աչացս լոյս՝ հարք և եղբարք, ԿԳ (63) ամաց եմ. աչքս վատեր է։ Աւաղ թէ ինչ լինիմ, մեղօք փթեալ է հողիս։

գ

58ա Վայ է քեզ ախմար և փթեալ գրիչ[38]։

դ

62ա [Վ]այ է քեզ ախմար գրիչ, որ Կ (60) ամայ եղար, ոչ ունիս մասն լարի. վայ քեզ դատաստանին։

ե

73բ Փառք...։ Գրեցաւ Ատենագիրքս ձեռամբ անարժան գրչի Մարտիրոսի, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), ի թագաւորութիւն Պարսից շահ Աբասին, ի հայրապետութիւն աթոռոյս տէր Խաչատուր վարդապետին, ի կաթողիկոսութիւն Հայոց Փ[ի]լիպոս արի և քաջ բարունապետին։ Գրեցաւ ի յերկիրն Ազագիրան, ի գեաւղն որ կոչի Փառակայ, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ, որ կոչի Զորոյ վանք։

862
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8177

Գրիչ, ծաղկող՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

ա

14ա Եւ զմահդասի Աստուածատուրն յիշեսցես ի Տէր։

բ

243բ Զանպիտան զՆիկողայոս գրչակս աղաչեմ յիշել ի Տէր, ընդ նմին և զմահդասի Աստուածատուրն զստացաւղ սբ. և Դ

գ

310ա Փառք...։ Վասն որոյ և ես՝ մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառըս հոգեշունչ աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր ամենասուրբ հոգին հանգչելով...։

[38] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռագրի 29ա, 72ա էջերում։

311ա Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Սիկողայոս մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թուաբերութեանս ասքանաղեան և աբեթական տօմարի ՌՃԲ (1653) և ըստ նորում շրջանի ԼԴ (34) և ի գալստենէ Կենարարին ՌՈՄԶ (1656), ի ստոյգ և յրնտիր աւրինակէ ևս առաւել համարայիցն, զի գաղափար սորին էր ի դրանէ Ս. Սարգիս զաւրաւարին, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշեն և աստուածապահ քաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ բարձրակառոյց և կամարակապ աւագ եկեղեցոյ, որ յանուն Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի, և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ամէն։ Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի... Աւետարանս...։

312բ Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկացող եղեալ աստուածարեալ և պատուական մահդասի Աստուածատուրն ետ գրել զսբ. Աւետարանս, յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ գաղափար առնելով, յիշիցիք... յաղաւթս ձեր զարատուելի մահդասի Աստուածատուրն և զծնաւղսն իւր, զհայրն՝ զխոճայ Եվրիանոսն և զմայրն՝ զՄարիամն, և զկողակիցն իւր՝ զԳոհար պիքան, և զզաւակսն իւր՝ զխոճայ Աստուածատուրն և Գրիգորն, և զկանիաւ զննջեցեալսն և զայժմոյս զկենդանիսն։

313ա Որ մեծաւ փափաղանաւք... ետ դրել զ//սբ. Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց...։

Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսչիք զվերոյ գրեալքս ի սմա, և զիս զՆիկողայոս մեղաւոր գրիչ և զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիա սրբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ հասոյց զմեղաւորս ի յայսմ արհեստի, զոր Տէր մեր Յիսուս Քրիստոս իւր փոխարենն...։ Նաև զմարմնաւոր ծնողսն իմ, և զեղբարքս, և զքորքս, և զամենայն մերձակայսն իմ. և որ յիշէ սրտի մտօք և ինքն յիշեալ լիցի առաջին ահեղ ատենին Քրիստոսի...։

863

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 8204

2ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրքս որ գոչի Մաշտոց, ի թուական Հայոց ՌՃԲ (1653), ի հայրապետութեանն սբ. էջմիածնայ տէր Փիլիպպոսի և մերոյ առաջնորդութեանն տէր Գրիգորի, ի վայելումն Ս. Աստուածածնին, որ կոչի Սովուխ չոխրախ. և ետ յիշատակ Անտոնն իւր ծնաւղացն հոգւոյն և ամենայն արեան մերձայորաց և իւր հոգւոյն, իւր հարն հոգւոյն՝ Քրիստոստուրին և մարն՝ Մանուշակին, և իւր եղբարն՝ Ագսէտին։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ կողկողակին պաղատանաւք, ո՞վ դասք լուսերամից, յիշեսցիք...։

864

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8692

Ծաղկող՝ Պետրոս
Վայր՝ Աղբերիկ վանք

309ա Փառք...։

310ա Ուստի տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդն և զանճողոպրելի վեհագոյն մեծ փարթամութիւն և զանծախելի գանձիս անսպառութիւնն... ցանկացող եղեալ բարեմիտ քահանայն տէր Վարդան. և ստացաւ զսբ. քառաջահեան Աւետարանս, զոր էր գրեալ թարց նկարութեան, ձեռամբ Դաւիթ վարդապետի Բաղիշեցւոյ։ Զոր առեալ ետ ի ծաղկել զնկարագրութիւն սորին։ Զոր և ես մեղապարտ Պետրոս
310բ գրիչս յա//անձն առեալ կատարեցի զսա, որ շնորհիւն աստուածային և ողորմութեամբ նորին ձեռնարկեալ ի նկարագրութիւն և ի ծաղկելն զսա ի զուարճութիւն տեսողաց և ի փառս Աստուծոյ։ Եւ յանկ ելեալ աւարտեցաւ սա ի մեծ թուականութեանս հայկազան տումարի ՌՃԲ (1653), ի վանքս, որ կոչի սբ. Աղբերիկ, ընդ հովանեաւ երկնանման Ս. Աստուածածնին և Ս. Փրկչին և Քրիստոսի արեամբ ներկեալ Ս. Բևեռին և այլ սրբոց, որ կան ի սբ. ուխտս։ Ի հայրապետութիւն Էջմիածնայ տէր Փիլիպպոս կաթուղիկոսին, և ի յառաջնորդութիւն տէր Դաւիթ կրօնաւորին և այլ միաբանիցն. ամէն։ Եւ ի բռնակալութեանն Տաճկաց Մուրթուզայ բէկին, ի դառն և ի նեղ ժամանակիս, զոր նեղիմք ի սարակինուս բարբարոսաց, յորոց փրկեսցէ տէր Աստուած զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. ամէն։

311ա Արդ՝ աղաչեմ կողկողագին,
Զմանկունսդ նորոյ սբ. Սիոնին,
Զմեղսաքաւիչ յանցաւորին,
Զքահանայից դասք պանծալին։
Զի ի ժամ սբ. աղաւթին,
Յիշէ զստացող այսմ տառին,
Զտէր Վարդան Տարօնեցին։

Եւ զծնողսն իւր՝ զԴաւիթն և զմայրն իւր՝ զԽանումն, և զկողակիցն իւր[39] և զդուստրն իւր՝ զՋանազանն և զհանգուցեալ որդին իւր՝ զՍարգիսն, և զեղբարքն իւր՝ զԱրիստակէսն և Յուսիկն, և զհանգուցեալ եղբայրքն իւր՝ զԳրիգոր քահանայն և զՆերսէսն, յիշեցէք... նոցա և ինձ, փծուն և ախմար գրչիս Պետրոսի և ծնողաց իմոց։ Եւ որ առատ է ի տուրըս բարեաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսից յիւր միւսանգամ գալուստն. ամէն։

---

[39] Անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

865
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10362 (1491 թ.)

Հետ. ստացող՝ Սարգիս երէց

183բ Արդ՝ ես Սարգիս երէցս զնեցաք սր. Աւետարանս յիշատակ նախնեաց մերոց և ամենայն արեանառու մերձաւորաց. նաև որդոյ իմոյ տէր Արիստակիսի և թոռին իմ Սահակ դեռարուս մանկանն, որ թվականն ՌՃԲ (1653) էր, զոր Աստուած անփորձ պահէ, յիշեցէք...։ Յիշեցէք զհարսն իմ՝ զԱզիզն, և իւր որդիքն՝ զՇաղիկն, զՀեղնարն, զՄարիամ[ն], զՆազլուն, և զմեծ մամն՝ զԿարդէշահն, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

866
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վաշինկտոն, Կոնգրեսի գրադարան, Arm., MS, № 3

Գրիչ՝ Աբրահամ երէց
Վայր՝ Հալապ

515 Այս է յիշատակարան գրոցս

Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ ոգոյս Աբրահամ անարժան երիցւոյս հասանել աւարտ դրոյս, որ է պատմութիւն նախահարն մերում Ադամայ...։

517 Արդ՝ այս ամենայն բարու//թեանցս և աստուածատունկ բուրաստանիս ցանկացաւղ եղև սմայ աստուածամեծարն և հեզահոգին, հոգևոր որդեակս մեր՝ Յովանէս սարկաւագն, որ է երկրէն Արարկերու, ի գեղջէն Մաշկերու, և ետ գրել զսա ի հալալ ընչից և արդար վաստակոցն, յիշատակ իւր անձինն և իւր ամենայն արեան մերձաւորացն։ Զոր և հայցեմք և խնդրեմք ամէնաւրհնեալ տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ բարով վայելել տացէ սմայ երկար ամաւք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութիւն. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), ի մայրաքաղաքս ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս և այլ եկեղեցեացս, որ աստ կան // հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց։ Գրեցաւ սայ ի թագաւորութեանն Տաճկաց սուլտան Մուհամատ նորընծայ թագաւորին, ի կաթողիկոսութեան տանն Կիլիկ[ի]այ տեառն տէր Ներսէսի սրբազան հայրապետին և ի կաթողիկոսութեանն էջմիածնի տէր Փիլիպպոս խարազնազգեաց ճգնաւորի։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ և երկնաթռիչ աղաւթս ձեր զվերոյ զՅովանէս սարկաւագն և զիս զանարժան գծողս՝ զԱբրահամ երէցս, որ զանունս ունիմ և ոչ զգործս։ Այլ որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշելոցդ և մեզ յիշեցելոցս զիւր երկնից արքայութիւնն. ամէն։

867

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մշեցի, VI, № 1927, էջ 425—427

Ծաղկող՝ մանտեսի Ղազար

ա

407բ Զնկարաւղ սորայ մահտեսի Ղազարս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթքս ձեր, <ով> [և զուք] յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

բ

410բ Եւ ղեղկելի գծողս ղսոստանուն զԱստուածատուր դպիրս աղաչեմ յիշել...։

Նվիրատու՝ Խաչատուր վարդապետ
Վայր՝ Կ. Պոլիս

գ

491ա Փառք...։ Իսկ և ծրեցաւ ծրարս նախնեաց սրբոց նահատակաց, մարգարէից, թագաւորաց... Եւ ես՝ նուաստս ամենայնի և յետնեալս ի բանասիրաց Ատիշեցի Խաչատուր վարդապետս, պատահեցայ յայսմ վայրի մեծահանդէս քաղաքս Բուզանդիայ հանդերձ քաջ հեռետոր և անյաղթ պետիկոս տէր Աստուածատուր աստուածաբան վարդապետ, սբ. Երուսաղէմայ երջանիկ հայրապետաւն, տեսեալ Աստուածաշունչ տուփս այս գեղեցկագեղ ծրեալ միայն սեաւ տառսն, յոյժ ուրախացեալ ցնծացաւ հոգի իմ։ Սակս որոյ ստացա զսա մեծաւ փափաքանօք և յոյժ ըղձմամբ անպատմելի, ետու աւրինել որակութեամբք յունակութեանց գունով, զարդարել և օրինել ամենայն պայծառութեամբ ոսկով և լաճվարդով, կարմրով և ծիրանով, դեղինով և կանանչով։ Եւ գեղգեղեալ պայծառացեալք փայլեն առ յիբեարս, յեցեալ և մածեալ, կցեալ և միացեալ շողշողան և ցոլցոլան, որպէս զճաճանչս արեգականն խուռն լուսափայլութեամբ։ Խորանքն և ծաղկունքն, պատկերքն և անուանքն Յիսուսի Քրիստոսի Աստուած տեառն և Աստուծոյ նմանեալ յերկնից աստղալից կամարացն աւրինեալ և պաճուճեալ վայելչագեղ տեսութեամբ, որպէս կայ կայացեալ առաջի աչաց ձերոց իսկ։ Եւ ահա յանգ ելեալ լրացաւ ի մեծ մայրաքաղաքս Կոսսանդնուպալսի, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զաւրավարի և որդոյ նորա Մարտիրոսին, ի թիւ սեռիս հայկազանի քսան երկու յոբելեանի, ոչ գոլ լման կատարեալ լի և երկրորդ թիւ հարկ գոլ ի սմի (1653)[40], ի թագաւորութեան և ի մեծ բռնակալութեան Իսմայելացւոց և Հագարացւոց ի վերա բազում ազգաց և ազանց՝ քրիստոնէից և այլասեռից, սուլտան Մանամատին, որ ութ ամեայ տղա հասակաւ կալաւ թագ և թախտ թագաւորութեան հօրն իւրոյ։ Եւ ի հայ-
491բ րապետութեանն Հայոց որ ի սբ. Էջմիածինն՝ տեառն տէր Փիլիպ//պոս սրբազան կաթողիկոսի, ձեռամբ տկար և փծուն գրչի Աստուածատուր համբակի կրկնակին դրի։

[40] Ծանոթագրությամբ Ն. Պողարյանը հայտնում է, որ «Ֆրէտէրիք Մուրատ քսաներկու յոբելեանէն պակասեցուցած է 2 թիւ և ստացած է 1649...»։ Մեր կարծիքով պէտք է աւելացնել 2 թիւը քսաներկու յոբելեանին վրայ, որով կը ստացուի 1653, և որ կը համաձայնի Աստուածատուր պատրիարքի Կ. Պոլիս այցելութեան թուականին հետ (էջ 426—427)։

Արդ՝ երես անկեալ պաղատիմ հանդիպողացդ այսմ հոդէնուադ բուրաստանիս, յիշել ի ժամ աղօթիցն զիս անարժան ղԽաչատուր վարդապետս և զծնօղսն իմ՝ տէր Բարսեղն և Ղիմաքն, և զնախնիքս տէր Յակոբն, Խաչատուրն, Գրիգորն և Մալարդն, և զհարազատ եղբարքն իմ՝ մահտեսի Յովանէսն, Աւետիքն, Յոհաննէս և այլ ամենայն յարեան մերձաւորսն զկենդանիս և զհանգուցեալսն...։

Դ

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ո՜վ եղբարք, որ բնակեալ էք ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ, լի սրտիւ և բոլոր հաւատով յիշեսջիք ի Քրիստոս միով ողորմայիւ ինձ տառապեալ Խաչատուր վարդապետի, որ բաղում ծախիւք և արդեամբք ետու դրել և ծաղկելով զարդարել զԱստուածաշունչս՝ ոսկով և լանվարդով և երանդ երանդ գունով և ետու յիշատակ ի սբ. Երուսալէմ ի դուռն Ս. Յակոբայ, ի յառաջնորդութեան տեառն տէր Աստուածատուր սրբասքանունդ և ճգնազգեաց աստուածաբան վարդապետին, որ բաղում նեղութիւնս և հալածանս կրեաց նախանձոտաց ոմանց, նայև ի վերա մեր բաղում երախդիս և աշխատանս ունի, միթէ Աստուած զինքն ընդ երկաւուրս արասցէ և յետ աստեաց ընդ սրբոց երկոտասան վարդապետացն դասեսցէ։ Եւ որք հանդիպիք սբ. Աստուածաշունչ դրոցս՝ կարդալով կամ օրինակելով կամ յարևանցի տեսանելով, Աստուած ողորմի ասացէք ինձ՝ Խաչատուր վարդապետիս և ծնօղացն իմոց և ամենայն արեանառու մերձաւորաց մերոց...։

Եւ թէ ոք յանդգնի սբ. գրոցս, թէ՛ ծռեալով կամ գողանալով կամ թէ՛ ոք ընտանեաց իմոց և ազգականաց շորթէ և հակառակի և ոչ տայ սբ. զիրգրս սբ. յԵրուսաղէմայ ի դուռն Սրբոյն Յակոբայ՝ զպատիժն Գէհեղի առցէ, զանէծսն Կայենի...։

868

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վիեննա, № 55 (1368 թ. առաջ). ՏՅԶՄՎ, № 55, էջ 259—260

Հիշատ. հեղինակ՝ Փիլիպոս կաթողիկոս

Վայր՝ Բջնի

465բ [Շ]նորհօք ամենազօրին Աստուծոյ ի թուահաշուութեան արամեանս ազգի հազար ութսուներորդի (1631) ես՝ Փիլիպոս արհի եպիսկոպոս ձեռնադրեալ ի մեծ և սրբազան Մովսէս կաթուղիկոսէ և կրկին լուսաւորչէ տանս խաւարեալ ազգիս, որ և նորին հրամանաւ եգայ ի հռչակաւոր սբ. աթոռոյս Տիրամօր Աստուածածնիս սպասաւոր և տեսուչ ժողովրդեան վիճակի սորին։ Եւ իմ եկեալ աստ՝ տեսի զանշինութիւն և զանբնակութիւն սբ. աթոռոյս, միշտ այրեցեալ խորովէր լեարդ և սիրտ իմ։ Ապա մեծաւ յուսով ապաւինելով յողորմութիւն Ամենակալին, այն որ ասէ. «Ուր իցեն Բ և Գ ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա», սկսեցաք միաբանս ժողովել ըստ չափու և ըստ արժանաւորութեան տեղւոյս մեծի՝ թուով իբրև երեսուն աւելի և ոչ պակաս։ Յետ որոյ կարողութեամբ և կամակցութեամբ Տեառն, արարաք օր պաւոր ջինութիւն ըստ

մերում ուժոյ, ի փառս Ս. Աստուածածնին։ Նախ և առաջին զտանիս եկեղեցոյն, որ յոյժ քակեալ քանդեալ, ապականեալ և աւերեալ էր ի բաղում ժամանակաց, մինչ զի սակաւ ինչ անձրևելով, զամենայն ի ներքս դառնայր հաւասար և կաթիլ մի ոչ մնայր յարտաքս։ Եւ մեք բաղում աշխատութեամբ շինեցաք զգլուխ սբ. տաճարին։ Նաև ժամատունն ևս աւերակ և բակ էր եղեալ, զորմունս և զգլուխն փայտաշէն արարեալ հաստատեցաք։ Ապա յետ այսորիկ սկսեալ շինեցաք զձիթհանքն և զչրաղացն, և այլ ամենայն հոգևոր և մարմնաւոր պակասութիւն լցաք ըստ մերում չափու, իսկ մեք թէպէտ զայսոսիկ արարեալ կատարեցաք. սակայն ոչ դոյր ուրախութիւն սրտից մերոց վասն գերի լինելոյ սբ. և ամենասքանչ Աստուածաշնչիս, ոչ լինելով թէ ո՞ւր իցէ. այլ աղէկիզնալ յոգնատենչ սրտիւ, բաղում որոնմամբ խուզեալ գտաք զգանձս զայս անդին ի հին քաղաքն Երևան, բաղում ժամանակաւ գերի արարեալ ամօք [իբրև եօ]թանասնօք։ Եւ մեք յոյժ ուրա[խաց]աք ի դիւտ սորին, շատ ջանիւք [և բա]զում աշխատութեամբ և երթևեկու[թեամբ] ՃԺԲ (112) թուման տուաք և ազատեցաք [զսա] ի ձեռաց օտարաց և ի աեղե[աց ան]պատշաճից և յոյժ ուրախ[ութեամբ] և բաղում ցնծութեամբ հոգւով և մարմնով դարձուցաք յոյժ պատուով ի տեղի և ի սեփհական կայարան իւր յաթոռս Բջնու Ս. Աստուածածնիս, որում անդստին սորին սակի էր ծրագրեալ, և անուամբ սորին աւարտեալ, և եղեալ ի սմա։ Արդ՝ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ Ս. Աստուածածնէս, եթէ ոք հանել կամեսցի՝ պատիժ և պատուհաս յԱստուծոյ և ի սոցանէ կրեսցի...։

Գրեցաւ սակաւ յիշատակարանս ի դրունս Սրբուհւոյ Աստուածածնիս, ձեռամբ յոգնաբիծ Յովհաննէս բանասիրէ, թվին ՌՃԲ (1653), գոլով Շոռոքեցի։

569

ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Բանբեր Մատենադարանի», հատոր 12, № 26

Գրիչ՝ Աբրահամ երէց

Վայր՝ Հալապ

257 Այս է յիշատակարան գրոցս

Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ ոգոյս՝ Աբրահամ անարժան երիցւոյս, հասանել աւարտ գրոյս, որ է Պատմութիւն նախահաւրն մերում Ադամայ...։

Արդ՝ այս ամենայն բարութեանցս և աստուածատունկ բուրաստանիս ցանկացաւղ եղև սմայ աստուածամեծարն և հեզահոգին հոգևոր որդեակս մեր՝ Յովանէս սարկաւագն, որ է երկրէն Աւարկերու, ի գեղջէն Մաշկերու. և ետ գրել զսա ի հալալ ընչիցն և արդար վաստակոցն, յիշատակ իւր անձինն և իւր ամենայն արեան մերձաւորացն։ Զոր և հայցեմք և խնդրեմք ամէնաւրհնեալ Տեառնէն մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ, որ բարով վայելել տացէ սմայ երկար ամաւք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութիւն. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), ի մայրաքաղաքս ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս և այլ եկեղեցեացս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց։ Գրեցաւ սայ ի թագաւորութեան Տաճկաց սուլտան Մուհամատ նորընծայ թագաւորին, ի կաթողիկոսութեան տանն Կիլիկ[ի]ոյ տեառն տէր Ներսէսի սրբազան հայրապետին և ի կաթողիկոսութեանն էջմիածնի տէր Փիլիպոս խարազնազգեաց ճգնաւորի։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ և երկնաթռիչ աղաւթս ձեր զվերոյ յիշեալ զՇովանեէս սարկաւագն և զիս, զանարժան գծողս՝ զԱբրահամ երէցս, որ զանունս ունիմ և ոչ զգործ։ Այլ որ առատն է ի տուրս բարեաց...[41]։

870

ՇԱՐԱԿՆՈՑ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., ԺԱ, № 344

Գրիչ՝ Ալէքսիանոս երէց

ա

58 Զստացող զրոցս զպատուական Սարգիս կրաւնաւորն, որ հալալ արդեանցն իւր գնեաց զսա, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց և ամենայն ընդանեացն իւրոց։ Աստուած բարի վայելումն տացես. ամէն։

բ

Զմեղավոր Ալեքսիանոս ծրող սորա յիշեցէք ի Քրիստոս։

գ

Քրիստոս Աստուած... ողորմեա գծագրողի և ծաղկողի սորա Ալէքսիանոս երիցոյս, զհայրն իմ՝ Ազարիայ քահանայն և զմայրն իմ՝ զԽանումն, և քոյրքն իմ, որ հանգուցեալ են. բարերար և մարդասէր Աստուած ողորմեա նոցայ։ Գծագրեցի զսա Հայոց թվին ՌՃ (1651)։

դ

Փառք...։ Արդ՝ եղև աւարտ գրչութեան այսմ մեծահանդէս և հոգեւոր տառիս, ի շրջագայութեան հայկազեանս տօմարի Ռ-երրորդի հարիւրորդի երկրորդի (1653), ի հայրապետութիւն հայկազանս ազին տեառն տեառն Փիլիպոսի սրփազան կաթողիկոսի ի յաթոռն սբ. էջմիածնի Վաղարշապատու. Այրարատեանն նահանգի. և յառաջնորդութեան տանս Գողթն տէր Խաչատուր արհեպիսկոպոսի։

Գրեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ և փրծուն գրչի Ալէքսիանոս քահանայի, որ զանունս միայն ունիմ քահանայի և ոչ զգործս ի բարի, ի լաւ և ի յընտիր աւրինակէ Սրսոյ. առաջին վարժապետին և քաջ քարտուղարին Գրիգորի, մականուն Խալ կոչեցեալ...։

ե

59 Ո՛վ լուսամիտ մանկունք Սիովնի..., որք լուսաւորիք սովաւ ուսմամբ կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի Քրիստոս ամենայն արեան

41 Թվում է նույնն է № 866 հիշատակարանի հետ։

մերձաւորսն իմ, հանդերձ ծնաւղօսն իմ, ասելով ի խորոց սրտէ, թէ «Տէր Աստուած ողորմեա նոցա և ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա...»։ Այլ և վասն խոշորութեան և անարհեստ գրոյս աղաչեմ անմեղադիր լինել և ծաղկոյս, զի և կար իմ այս էր. և ես անձամբս տկար գոլով, քանզի յոյժ տառապանաւք և բազում նեղութեամբ գծագրեցի և ծաղկեցի ղսայ։ Եւ ինքն որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս...։

Ստացող՝ Սարգիս աբեղայ

գ

58 Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ... ես՝ տէր Սարգիս կրօնաւոր ի Մասրեան գեղջէ, որ և անուամբ միայն հաբեղայ, ցանկացող եղէ այսմ աստուածային և երկնապարգև գանձիս...։

59 Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան զձեզ, որ հանդիպիցիք այսմ գրոց և օգտիցիք յայսմանէ ընթեռնելով, և կամ օրինակելով, և կամ տեսութեամբ միայն, յիշեսջիք ի Քրիստոս զծնօղսն իմ՝ զՆաւասարդն և զՇահրի զմայրն իմ, և զեղբայրսն իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, զՄիքայէլն, որ ի Վանատիկ քաղաքի Ցռանկաց փոխեցաւ ի Քրիստոս, և զՄէլքոնն, որ ի տարաժամ հասակի ել յաշխարհէս. որք և տրտմութիւն յոյժ թողին թշուառացեալ անձինս, նաև զքոյրն իմ՝ զՓարին, և զեղբօր որդիսն իմ՝ զԴանիէլն և զՄելքոնն, և զամենայն արեան մերձաւորսն իմ, յիշեցէք...։

871

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

ՏԵՐԱՎՋ, № 13 (ԾԲ դ.)

Նորոգող՝ Ագարիայ դպիր

23 Նորոգեցաւ Պօղոս գիրքս ձեռամբ ախմար և անպիտան Ազարիայի դպրի, ի թուականութեան ՌՃԲ (1653) ամին. Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

872

ՔԱՐՈԶԳԻՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 453

Գրիչ՝ Իշխան
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

08 Փառք...։

Որ ետ կարողութիւն անարհեստ գրչի,
Հասանել աւարտ այսմ գրքի,
Որոյ անուն Քարոզգիրք կոչի,
Ի Ռ թվականի
ՃԲ յարաբարթի (1653)։
709 Գրեալ՝ եղև բան և գործի,

Եւ Նոր Ջուղայ կոչի,
Ի Շօշ քաղաքն Ըսպահանի,
Ի թագաւորութեան փոքր շահ Ապասի,
Ի հայրապետութեան Յակոբ կաթողիկոսի։
Ի դուռն Ս. Կատարինի,
Որ Կուսանաց վանք անւանի։
Եւ զգրող յայսմ գրի,
Ես՝ Իշխան մեղօք ի լի,
Ես ի յիմում ժամանակի,
Զգործեցի մաս մի բարի։
Այլ ծուլ կենօք յաստնաւորի,
Կեցայ տխմար ես աշխարհի,
Եւ յամենայն ժամանակի,
Յաւհանեցայ անշահ բանի։
Բայց խնդիր մի կայ իմ սրտի,
Որ ասէք մի Տէր ողորմի,
Ինձ եղկելի մեղաւորի,
Մեղսամակարդ Իշխանի։
Եւ ի Տեառնէ առնու զբարի,
Զոր պատրաստեաց յիւր հայրենի,
Դասէ ի դասս աջայկողմի,
Ի գալստեանն իւր Միածնի։
Իւր փառօք ի հետ իւր սիրելի,
Փառք տանք աւրհնենք զՀայր և զՈրդի,
Թէ ինչ բանք ստեղծեալ է աշխարհի։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք այսմ գրիս, յիշման առնէք զմեզ անարժանիս, զմեղաւոր գրչիս։ Եւ զծնօղսն իմ՝ Երզուլի և զմահդասի Թանումն, և որդիքն՝ Էվազն, Աբամէլիքն, Յարութիւնն, Մակարն, և դուստրն՝ Սողովմէն, որ հանգուցեալ են առ ի Քրիստոս, յիշեցէք...։ Եւ մի մեղադրէք գրոյս, եղբարք, և սղալանացս, զի խամ էի, և կար մեր այս էր, անմեղադիր լերուք։

Բ

Արդ ով աստուածասէր մանկունք նորոյ Սիոնի, որք հանդիպիք յայսմ աստուածատունկ բուրաստանիս ընթեռնելով և կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր ճշմարիտ մահդասի կուսան Իշխանն, որ եօթն անգամ ի կենսատու Քրիստոսի լուսաբուխ գերեզմանն է գնացեալ ի սբ. քաղաքն Երուսաղէմ և համբուրեալ. երանի նորա շերմ սիրոյն և հաստատ, անկեղծ հաւատոյն, որ աչօք իւրոք տեսեալ և բերանով համբուրեալ խնդրեմք ի սխրագործ տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ ի միանգամ գալստեանն իւրոյ արժանաւորս զԻշխանն արասցէ և անթառամ պսակաւն գնա պսակեսցէ, և ընդ սրբոց իմաստուն կուսանաց զասն դասաւորեսցէ և երկնից արքայութիւն պարգևեսցէ նմա և անմահական հացիւն և բաժակաւն կերակրեսցէ զնա անզրաւ և անտրտում ուրախութեամբ. ամէն։

873
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Զմմառ, № 443

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

ա

39 Ո՛վ սր. պատարագող յիշեա զԱստուածատուր դպիրս, թվին ՌՃԱ (1652) յուլիսի Ի (20), օրն երեքշաբթի, աւարտն այս է։

Նվիրատու՝ Մալազար Ջուղայեցի

Բ

Գրեցաւ սր. Խորհրդատետրս և յիշատակ Ս. Աստուածածնին ի թվին Հայոց ՌՃԲ (1653) ամին, և Հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոս կաթողիկոսին։ Աղաչեմք ղձեղ, ո՛վ սրբամիտ քահանայքդ Աստու-
40 ծոյ և յորժամ մատուցանէք պատարագ... // յայնժամ խնդրեցէք մեղաց թողութիւն վաճառականերոցս ես առաւել անարժան մեղաւոր Ջուղեցի Մալազարս, որ հետևեցա յիշատակ սր. գրոյս և փառք յաւիտեանս. ամէն։

874
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՔԵԻԱՑԻՈՅ
Զմմառ, № 487 (1651 թ.)

Հետ. ստացող՝ Մարտիրոս Ղրիմեցի

Վայր՝ Երուսաղէմ

ա

81 Զստացող սր. պատուական աստուածային գանձիս զՄարտիրոս Ղրիմեցի անուամբ ևթ աբեղաս և ոչ գործով, աղաչեմ ղդասս լուսերամիցդ, որք հանդիպիք սմա ընթերցմամբ... յիշեսջիք։... զՄարտիրոս եղեռնաղործս...։

Բ

Ես՝ Մարտիրոս անպիտան Ղրիմեցիս կոչեցեալ, անուամբ խաբեղայ և ոչ աբեղայ, ցանկացող եղէ այսմ աստուածազարդ բուրաստանիս, որ են հաւաքեալ ի սմա զանազան եղեմարոյս ծաղկունք... ձեռամբ... քաշ հռետորի Գրիգորի Տաթևացւոյ, որ կոչի սայ Քարոզգիրք հատոր Ամարան. և զիմ տեսեալ զգեղեցկութիւն սր. մատենիս եղէ ցանկացող սմա, ի բաց մերկացայ յինէն զամենայն ինչս իմ և ըստացայ զպատուական գանձս զայս ըստ հրաման Փըրկչին...։

Եւ եղև ըստացումս իմ ի շրջագայութեան հայկազեան տումարիս ՌՃ և երկու (1653) թվին։ ...

Դարձեալ յիշեսջիք ի Տէր զծընօղս իմ, զհայրն իմ՝ զԳրիգորն և զմայրն իմ՝ զԽաթունն, զքոյրս և զեղբայրս և զամենայն արեանառու մերձաւորս իմ։ Եւ զհոգևոր ծընօղս իմ՝ զնախնի ուսուցիչն իմ՝ զտէր Ստեփանոս սրբազան քահանայն, որ հանգուցեալ է առ Քրիստոս...։

Դարձեալ յիշեցէք ի Տէր զայժմուս ուսուցիչ իմ՝ զտէր Աստուա-

ծատուր քաշ բարունապետ, աստուածաբան վարդապետն, որ է այժմուս հայրապետ սբ. Երուսաղէմի, և կամ ես տրուպս առ ոտս սորին, ի ընթերցումն աստուածաշունչ կտակաց, զոր հայցեմք...։

Գրեցաւ յիշատակարանս սբ. քաղաքս յԵրուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ, ի փառս Աստուծոյ մարդասիրին. ամէն։

875

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆՔ, ՔԱՐՈԶԳԻՐՔ

Զմմառ, № 547

Գրիչ՝ Սահակ Շախսաբանցի
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

156 Փառք...։ Յանկ ելեալ զիրքս այս որ է Քարոզգիրք ձեռամբ ի // Սահակ աբեղայի[42], ի յերկիրս Պարսկաստանի, ի քաղաքն Շօշ, յոր և Ասպահան:

876

ԱՎԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 102 (ԺԲ—ԺԳ դդ.)

Նորոգող, կազմող՝ Սարգիս Եդեսացի
Վայր՝ Եդեսիա

454 Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին վերստին նորոգեցաւ և կազմեցաւ սբ. Աւետարանս հրաշալի ՌՃԲ (1653) թվին, ի քաղաքս Եդեսիա, ընդ հովանեաւ Բարձրահայեաց Ս. Աստուածածնին և Ս. Դաստառակին Քրիստոսի, և Սրբոց Գուրիասանցն, և Սրբոյն Սարգսի զաւրավարին, և Սրբոյն աբբայ Եփրեմի վարդապետին, յոր պարփակիմք ընդ հովանեաւ սոցին։ Ի վայելումն ամենամաքուր անձին Գաբրիէլ արի և քաջ վարդապետին. ձեռամբ յոքնամեղ անարժան, ստրուկ գրչիս Սարգսի Եդեսացոյ: Որք պատահիքդ սմա ընթեռնլով կամ տեսութեամբ, յիշեսջիք զվերոյգրեալ ամենաերջանիկ վարդապետն Գաբրիէլ և զանարհեստ կազմողս Սարգիս, ի պաղատանս յաղօթս ձեր և մեղայ թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Եւ դուք գտջիք ողորմութիւն ի Քրիստոսէ, ի միւսանգամ գալըստեանն. ամէն։

877

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՁՁՎՍ, II, № 289

Ստացող՝ Յովհաննէս Շոռոթեցի

1036 Փառք...։ Արդ՝ ես նուաստ և յետնեալս ի մէջ բանասիրաց Յովհաննէս անուամբ ևեթ կոչեցեալ վարդապետ, ի գեղաքաղաքէն Շոռոթոյ, ետու գրել զայս գիրքս ի հալալ արդեանց իմոց, որք են գիրք վեց, այսինքն՝ Յոբ, Կազմութիւն մարդոյ, Պատմութիւն Խիկարայ, Գործք առա-

42 Ցուցակ կազմողը հաղորդում է, որ այդ բառի վրա գրված է «վարդապետ»։

քելոց, Տեսիլք Յոհաննու աւետարանչի և Ճ (100) իմաստասիրաց. և եղի ի տփի միում, յիշատակ հոգւոյ իմոյ, ի գուռն Ս. Աստուածածնի անապատիս մերոյ. շնորհեսցի զսա ի վայելումն կուսակրօն օրիորդացդ Քրիստոսի։ Արդ՝ մի՛ ոք իշխեսցէ զսա հանել ի դրանէ Ս. Աստուածածնի
1037 անապատէս՝ յիմոց կամ յօտարաց, ի կարգա//ւորաց կամ յաշխարհականաց։ Եթէ ոք հանել ջանասցէ ի սբ. անապատէս, անիծեալ և նզովեալ եղիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա, և ի ԳՃԺԸ (318) հայրապետացն. ամէն եղիցի։

Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զհայրն իմ՝ զտէր Վարդան քահանայն, և զմայրն իմ՝ Շենհատրն, զպապն իմ՝ Սօլթանպէկն, և զմամն իմ՝ Մէհրիպանն, զհօրաքորսն իմ զկուսակրօն ե զեղբնազգեացն՝ զՄարիամն՝ մայրապետ անապատիս, և զեղիսաբեթն. զքորսն իմ՝ զՅուղիտա կուսակրօնն՝ մայրապետ սբ. անապատիս, և զԳուլբստանն. և զեղբայրն իմ՝ զՀայկազն, և զհարսն իմ՝ զԱննայն, և զորդիսն նոցա՝ զՎարդանն և զՍօլթանպէկն, զնազարէթն, զՂևոնդէնն և զնարվէլին. և զդստերսն՝ զՀուռիկն, զկուսակրօն Եսթերն, զՄարիամն և զայլ ամենայն առուարեան մերձաւորսն մեր զկենդանիս և զհանգու-
1038 ցեալսն մեօք հանդերձ, յիշեցէք ի // Քրիստոս Աստուած. և Աստուած զձեզ յիշէ, այժմ և ի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։

Գրեցաւ դիրքս և աւարտեցաւ թվին ՃՌԲ (1653). ամէն։ Բովանդակ դիրքս ԼԸ (38) տետր է։

878

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՅՆ ՄԵՐՈՅ ԱԴԱՄԱՅ ԵՒ ԵՒԱՅԻ

Մեզմս, II, № 40

Գրիչ՝ Աբրահամ երէց

Վայր՝ Հալէպ

124 Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ ոդոյս Աբրահամ անարժան երիցւոյս հասանել աւարտ գրոյս, որ է պատմութիւն նախահաւրն մերում Ադամայ և նախամաւրն մեր Եւայի և պատմութիւն վասն փառակենցաղ դրախտին և զանկանիլն Ադամայ պատճառաւն Եւայի խափմամբ աւձին, պատրանաւք բանսարկուին սատանայի։ Այլ և զմեկնութիւն արդարոցն ի դատաստանին և զտանջանք մեղաւորացն, այլ և մեկնէ զկայանք հոգոցն, և զգալուստն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի փրկութիւն ազգի մարդկան. և զմարմնանալն ի սբ. կուսէն Մարիամայ։ Այլ և զխաչն և զթաղումն և զՅարութիւն և զհամբարձումն և զգալուստն միւսանգամ փառաւք հաւր դատել զկենդանիս և զմեռեալս։ Այլ և դրեալ է ի գիրս այս զհանգիստն երանելոյն Յովհաննու աւետարանչին։ Այլ և զքարոզ Յարութեան Քրիստոսի և զքարոզ զղջման և ապաշխարութեան, այլ և զքարոզ խոստովանութեանն, այլ և զքարոզ ապաշխարութեանն, այլ և զքարոզ ողորմութեանն, այլ և զքարոզ մեծի աւագ ուրբաթուն վասն խաչելութեանն Քրիստոսի։ Արդ՝ այս ամենայն բարութեանցս և աստուածատունկ բուրաստանիս ցանկացաւղ եղև սմայ աստուածամեծ արն և հեզահոգին, հոգևոր որդեակս մեր Յովհաննէս սար-

կաւադն, որ է երկրէն Արաբկերու, ի գեղջէն Մաշկերու: Եւ ետ գրել զսայ ի հալալ ընչիցն և արդար վաստակոցն, յիշատակ իւր անձինն և իւր ամենայն արեան մերձաւորացն։ Զոր ե հայցեմք և խնդրեմք ամենաւրհնեալ տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ բարով վայելել տացէ սմայ երկար ամաւք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութեանն. ամէն։ Արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), ի մայրաքաղաքս ի Հալէպ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս, և այլ եկեղեցեացս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց։ Գրեցաւ սայ ի թագաւորութեանն Տաճկաց սուլդան Սուհամաղ նորընծայ թագաւորին, ի կաթողիկոսութեան տանն Կիլիկիոյ տեառն տէր Ներսէսի սրբազան հայրապետին, և ի կաթողիկոսութեան Էջմիածնի տէր Փիլիպպոս խարանազգեաց ճգնաւորին։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ և երկնաթռիչ աղաւթք ձեր դվերոյ յիշեալ զՅուվանէս սարկաւագն և զիս զանարժան գծողս զԱբրահամ երէցս, որ զանունս ունիմ և ոչ դործս։ ...

879

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁԼՍ, № 51 (1640 թ.)

107 Թվին ՌՃԲ (1653) վաղճանեցաւ Աբրահամ Էրէցն[43] և եդին յիշատակ զսբ. Աւետարանս ի դուռն Քառասունք եկեղեցոյ, ի հայրապետութեան տեառն Ներսէսի կաթողիկոսին, և ի առաջնորդութեանն Խաչատուր վարդապետին Սեբաստացոյն: Ոչ ոք չունի իշխանութիւն հանելոյ զսա ի դրանէ սբ. եկեղեցոյ։

880

ՄԱՇՏՈՑ

ՁՁԼՍ, № 89

Գրիչ՝ Ղազար երէց
Վայր՝ Հալապ

ա

171 Փառք...։ // Արդ՝ աւարտեցաւ գիրքս այս որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Մեսրովբ և Յոհան Մանդակունի: Գրեցաւ սա ձեռամբ մեղաւոր և անիմաստ անձին՝ Ղազար իրիցու, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653) ամին, ի մայրաքաղաքն ի Հալապ, ի դուռն Ս. Աստուածածին, և Ս. Քառասունք եկեղեցեացն, ի կաթողիկոսութեան տէր Ներսէսի Սեբաստացոյ, և ի առաջնորդութեան Հալապ քաղաքիս, արի և քաջ բաբունապետին տէր Խաչատուր վարդապետին, որ է ի նոյն երկրին Սեբաստիոյ, զոր տէր Աստուած մեր պահեսցէ ընդ երկայն աւուրս մինչև ի խորին ծերութիւն ի պարծանս մեր. ամէն։

Գրեցաւ սա ի խնդրոյ բարեպաշտ և իմաստուն հեզահոգի մահդեսի

[43] Այս անձնավորությունը Աւետարանի ստացողն է։ Հիշատակարանը տե՛ս 1640 թ. շարքում։

Ղուկասին, և ամուսնոյն իւրոյ, և որդոցն, և ծնաւղացն և ամենայն արեան մերձաւորացն և եդ յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ ժառանգաւորացդ. ամէն։ Յիշատակ է Մաշտոցս մահդեսի Ղուկասին հոգոյն, ի դուռն Ս. Աստուածածնին։ Յորժամ տեսանէք և կամ ընթեռնուք զսա, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք մահդեսի Ղուկասին, և ամուսնոյն իւրոյ, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Բ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդեսի Արարգերցի Ղուկասն[44], և զիւր հայրն՝ զԱվազարն, և զիւր մայրն՝ զԹուրվանտան, և զիւր կողակիցն՝ զմահդեսի Խաթունն, և զիւր որդին՝ զԳրիգորն, և զիւր կողակիցն՝ զԽանումն. և ողորմի ասացէք իւրեանց հոգոյն, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանդամ գալստեանն. ամէն[45]։

881

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՏՅԶՄՎ, № 270

Վայր՝ Ամիք

690 Փառք...։ Զայսու[ս]իկ զմտաւ ածելով հաւատարիմ և քրիստոսասէր այրն՝ մահդասի Ասլան կոչեցեալ, արուեստիւն նալպանտ, վասն զի զաւակ ոչ ունելով ի վերայ երկրի... եղև ցանկացող լուսազարդ և աստուածազիծ մատենիս, որ կոչի ժամագիրք, ի հալալ արդեանց եռափափաք և ջերմեռանդ սրտիւ ետ դրել յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց հաւրն՝ Մարտիրոսին և մաւրն՝ Խաթունպակուն, և կողակցին իւրոյ՝ Խանումին, և մաւրն կողակցոյն՝ Շահնուլթանին, և որդւոյն՝ Մարտիրոսին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, որ է ճշմարիտ բարի, պատուելի և երկրպագելի։ Եւ եդ զսբ. մատեանս ի մէջ սբ. եկեղեցոյս Սրբոյ Սարգսի զաւրաւարի, զի միշտ ընթերցմամբ զսա ի ժամ աղաւթից...։ Ի թուականիս Հայոց ՌՃ և Բ (1653), ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի, որ այս ամի նոր հիացումն եղև ի մայրաքաղաքս մեր Ամիք. զի այլազգի ոմն չքաւորեալ ի բազում ընչից իւրոց և հետևելով խաբեբայից ասելով, թէ «Ի մէջ քաղաքիս բազում գանձս պահեալ կայ ի ներքոյ գետնի»։ Եւ ելեալ գնաց ի Ստամպուլ քաղաք, առեալ ամր ի թագաւորէն և զափուճի, և եկեալ ի քաղաքս մեր, սկսաւ քակել և աւերել զնորաշէն տներն, ահ և սարսափ անկաւ ի վերայ քաղաքիս, և տարակուսեալ մնային, թէ զի՞նչ առնիցեմք սորա, զի զքաղաքս մեր աւերեաց։ Այլ միաբանեցան մեծամեծք և գնացին առ փաշայն, խորհուրդ արարին ի դատաւորէն, յարդ առին և ուղարկեցին առ թագաւորն, թէ «Թագաւորն ապրած կենա, սայ խելագարեալ է, բազում տունս քանդեաց և ոչ ինչ եգիտ, հրաման թա-

[44] Կարծելով, որ «մահդեսի արարգերցի Ղուկասն» ա հիշատակարանում հիշված «մահդեսի Ղուկաս»-ն է, այդ պատճառով բ հիշատակարանը դրեցինք 1653 թ. ներքո։

[45] ա և բ հիշատակարանները բառացիորեն կրկնվում են ծուցակում նկարագրված № 90 ձեռագրում (էջ 172)։ Այս նույնությունը ցույց է տալիս նաև վերևի ծանոթագրության մեջ մեր ենթադրության իրավացիությունը։

գաւորին է»։ Եւ ելեալ հրաման ի թագաւորէն, թէ «Բարձի թողէք զնա երթալ». և մեծ ուրախութիւն եղև քաղաքիս մեր։ Եւ քանի հազար ղուռուշ բռնութեամբ ի քրիստոնէից առին, որ մշակի էր տուեալ, և կու ասէին, թէ «Մալ ղաղան աղչասի է»։ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց։

882

ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 49 (1503 թ.)

135 Զվերջին նորոգող սբ. Աւետարանիս // զբարեսէր տանուտէրն՝ զՊուտախան և զիւր եղբայրն՝ զՍտեփանոսն և զխաչատուրն, և զիւր եղբօր որդին՝ զԱդամն և զՄխիթարն, ի թուին ՌՃԲ (1653), ի դուռն Պետրոս առաքելոյն, առաջնորդութեան Մարկոս Եպիսկոպոսին հաստատ կենաց աւազանին։

883

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ, № 1258, ՀՁՎՍ, I, № 14, էջ 138—140

Գրիչ՝ Աստուածատուր

ա

551ա Զբստացող սբ. դրոցս զՂազար կրօնաւորն, որ մեծաւ փափագանօք և աշխատութեամբ գրել ետուր և զմեղապարտ գծող Աստուածատուրս, աղաչեմ յիշել ի Տէր։

Թվին ՌՃԱ (1652)։

Գրիչ՝ Ալէքսիան

բ

1ա Ալէքսիանոս քարտուղար տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի գրեաց զմատեանս։

գ

402ա Զծրօզ գրոցս Ալէքսիանէ՝ քարդուղար տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի Հայոց, աղաչեմ յիշել միով Հայր մեղայիւ։

Գրիչ՝ Աբրահամ երէց

դ

419ա Սուրբդ և աստուածաբան աւետարանիչդ Յովհաննէս... յիշեա առաջի Քրիստոսի զստացող Աստուածաշունչ գրոյս զտէր Ղազար աբեղայս և զանպէտ գրիչս զԱբրահամ սուտանուն երէցս, որ է ի գեղջէն Բշնու. զի զքեզ ունիմ միջնորդ առ Տէր. ախ, ախ, ախ։

Ստացող՝ Ղազար աբեղայ

ե

35բ Զբստացող սբ. մատենիս,
ԶՂազար մեղօք մեռեալ ոգիս,

Փափագելով տենչմամբ սրտիս,
Լինիմ արժան կատար գրիս։
Տառապանօք հոգ կա մտիս,
Վասն տեսլեան զվերջ տառիս,
Հազար Ճ երկ (1653) թվականիս.
Քրիստոսի փառք։

զ

505բ Զընտացող սբ. մատենիս,
Ղազար անուամբ կրօնաւորիս,
Երբ ընթեռնում ցնծայ հոգիս։

884
ԱԽԵՏԱՐԱՆ
Մաղիստրոս, II, № 2617

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կարին

141. Փառք.... Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղաւոր Յովանէս իրիցուս, ի քաղաքս Կարնոյ, որ այժմ ասի Արզրում, ի դուռն Ս. Միարան Աստուածածնին, ի թվին Հայոց ՌՃԲ (1653)։ Յայսմ ամի աւաղակք մտան եկեղեցին և զօղացան անօթն ամենեքեան, յետոյ զօրութեամբ սբ. եկեղեցոյ, Սուրդազա փաշան դտաւ զգողեր, զամենեքեան չարաչար մահուամբ կորոյս և անօթն զամէն առ մեզ եռուր[48]։ Աստուած ողորմի իւր ծնողացն։ Դարձեալ յիշեցէք զհայրն իմ մահտեսի Ներուն և զմայրն իմ՝ Վարդիսաքուն, և զկողակիցն իմ՝ զԹուրվանտան։

885
ՄԱՇՏՈՑ
ՏՀՕՄՎ, № 123 (1511 թ.)

Նորոգող՝ Յոհանէս երէց
Վայր՝ Ակլայ

407 Փառք...։ Նորոգեցաւ Մաշտոցս ի քաղաքն Ակլայ, ի դուռն Ս. Նշանին, ի թվին Հայոց ՌՃԲ (1653) ամին։ Դարձեալ յիշեցէք զտէր Խաչատուրն, որ եռուր նորոգել զայս Մաշտոցս իւր հալալ արդիւնաւքն, յիշատակ է իւր ծնողացն և ամենայն արեան մեծի և փոքու առ հասարակ. ամէն։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս Յիսուս Աստուած զտէր Յոհանէս, որ ամենայն ժամ զմեզ կու կերակրէն, Աստուած ողորմի իւր ծնաւղացն. ամէն։ Ահա նորոգեցաւ ձեռամբս և մեղօրս ծառայս Աստուծոյ Յոհանէս երիցուն. և ով որ հանդիպիք...։

---

[48] Այս դեպքերն ավելի մանրամասն նկարագրել է Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր վերին Հայոց» աշխատության (Վաղարշապատ, 1903 թ.) կից մի հատվածում (էջ 53—61)։

886
ԱԻԵՏԱՐԱՆ
ԼԱՎԳԱՒ, № 74 (1569 թ.)

ա

423 Արդ՝ աղաչեմ զդասս քահանայիցդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակ դնելով, [յիշե]ցէք առ [Քրիստոս] ղստացող սբ. Աւետարանիս ղրոէս Թումանան, որ ստացաւ ղսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, ի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, հօրն՝ Տիլաքին, մօր[ն՝] Նուպարին, եղբօրն՝ Զիրաքին, Սաեփանոսին, կողակցին իւրոյ՝ Մարին, Միրաքին, որդոյն՝ Տիլաքին, Շիրաքին և ամենայն արեան մերձաւ[որաց]ն. և եդ ի դուռն Ս. Կիրակոսին։

424 Արդ՝ աղաչեմք զամենեսեանդ, որք հանդիպիք սմա լի // բերանով և բոլոր սրտիւ զԱստուած ողորմին ասացէք Թումանանին, և իւր ծնօղացն և ամենայն ազգականացն. ամէն։ Սաֆարին, Խզլին, Կուլվարդին։

Բ

Կարաւայ վանիցն միայբանք են՝ Մուսեղխ մահդասին, Անուշիկ տ[ն]տես, Բ (2) սարկաւագ՝ Խանէս, Թումէն, Գորգիկ մշակ, Սարգիս եպիսկոպոս՝ առաջնորդ նոցա։

Գ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարին, և զորդին իւր՝ զԴիլաքն, և զդուստրն իւր՝ զՆալշուն և զԱման, և զորդիք նոցա՝ զՌումէն և զՄիրաքն, զՍաֆարն, զՇիրաքն և Զիրաքն, յիշեցէք...։

Պլպուլին, Խանաղին. ամէն, Վարդանին, Միրաքին՝ Զիրաքի տեղէն, Հոզկոս՝ Զիրաքի տեղէն, Նազար՝ Զիրաքի տեղէն, Դիլաք՝ Զիրաքի տեղէն, Էքար՝ Զիրաքի կողակիցն, Ղէմաք՝ Միրաքի կողակիցն, Ալթուն՝ ուէս Թումանանի թո /// լի բերանով Աստուած ողորմիաս ասէք։ Ես՝ տէր /// էն որ գերաց այս անուանք, թվին ՌՃԲ (1653). ամէն։

Դ

425 Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զնորոգել տուող սբ. Աւետարանիս զհաւատարիմ տանուտէրն զԶիրաքն, և կողակիցն՝ զէքարն, և զծնօղսն իւրեանց, և զորդիքն՝ զՄիրաքն, զՂուկասն, զնազարն, և զԴիլաքն, և զԶի[րաք]ի եղբայրն՝ զԹումէն, որ [ննջ]եցեալ է առ Քրիստոս, և զդուստրն՝ զԱլթուն, և զնուքար և զամենայն [ազգատոհմն իւրեանց]... ամէն։

887
ՏՕՆԱՅՈՅՑ
Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 815

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Սուրս

223բ Փառք... սա [գրեցաւ] ի յերկիրն Մոկաց, ի գիւղն, որ կոչի Սուրս, ընդ հովանեաւ Ս. Գէորգայ զօրավարին և Ս. Յոհաննու Մկրտչին, ձե-

ռամբ անարժան փծուն գրչիս Պետրոսի, ի թուականիս Հայոց ՌՃԲ (1653)։

888

ՏՕՆԱՑՈՅՑ, ՇԱՐԱԿԱՆ

Մշբեպ, V, № 1403

Գրիչ, ծաղկող՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

57 *Եւ արդ՝ գրեցաւ և ծաղկեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան-կտակս,... որ կոչի Շարակնոց, ի լաւ և լընտիր աւրինակէ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ Յոհան Հիզանցի գրչի, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Ննդեան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թվին ՌՃ և Բ (1653)-ին. ի յաթոռակալութեան Հայոց Ս. Յակոբա[յ] առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին տէր Աստուածատուր քաջ և արի և աստուածաբան վարդապետին, և ի կաթողիկոսութեան սբ. Էջմիածնա[յ] տեառն տէր Փիլիպոսին, և Սբսա[յ] աէր Ներսէս կաթողիկոսին, և Աղթամարայ Ստեփանոս կաթողիկոսին։*

Եւ արդ՝ ես անիմաստս և անպիտանս ի գրչաց, երես ի գետնի դընելով, աղաչեմք զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք տեսութեան գրոցս՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զեղուկ գրչակս և ըզհոդևոր և ըզմարմնաւոր ծնօղսն մեր, և զմիաբան Ս. Ննդեան ուխտիս՝ զտէր Դաւիթն, զտէր Պետրոս ժամարարն, զտէր Ղազարն, և զՀէրպետ Գասպարն, և զմիակեց Պետրոսն, և զորդին իմ՝ զփոքրիկ Սէթն, որոյ զՇարակնոցս դրեցի ի վայելումն նորա։ Ո՛վ հարք, եղբարք, հանդիպողք տառիս, անմեղադիր լերուք սխալանացս, զի ծերութիւն և տըկարութիւն պաշարեալ է զմեզ։ Փառք Աստուծոյ յամենայն ժամ, որ զինչ և իցէ Աստուծով գիրս յաւարտ հանաւ։

889

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Մշբեպ, VII, № 2274

Գրիչ՝ Սարգիս Ամթեցի
Վայր՝ Ամիրդոլ մենաստան

ա

368 *Փառք անճառին անհասական,*
. . . ։
369 *Զի ապիկար անձս անարժան,*
Եւ յամենայն բարեաց ունայն,
Զ՝Սարգիս ևեթ անուանական,
Որ ջահրնկալ եմ ձայնական։
. . . . ///
Եղև տենչմամբ յոյժ փափագեալ,
Որ տէր Վարդան վերաձայնեալ։
Կըրօնաւոր փառօք պատուեալ,

Փառօք ի փառս բարգաւաճեալ,
Լուցեալ լապտեր է ինքն ի վառ,
Իբրև ըզշահ արփիափայլ։
. . . ///
Տըկար անձամբ և տառապեալ,
Հոգւով սրբբով եղաք սկսեալ,
Շնորհօք նորին այժմ աւարտեալ,
Եւ փառքս Հօր ընդ Որդւոյ լեալ։
Այլ և նկարել մեզ պատուիրեալ,
Մեք այլ զխընդիրըն կատարեալ,
Ոսկով ծաղիկ աստ արարեալ,
Այլ և ակամբ յոյժ զարդարեալ։
Թվական Հայոց Ռ եղեալ,
Այլ և Ճ ըղհետ եկեալ,
Ընդ որ երկու թիւ կըցորդեալ (1653),
Ի ժամանակըս յոյժ նեղեալ։
Ի մենաստանս եղև դըրեալ,
Որ Ամիրղոլ վերաձայնեալ,
Ս. Յովհաննու ընդ հուլ եղեալ,
Աստուածածնին առընթեր լեալ,
Ս. Ստեփաննոս յաջմէ կացեալ,
Սոքօք լիցուք չարեաց ղերծեալ։
Արդ՝ ես ի յոտքս ձեր անկեալ,
Կողկողակին և պաղատեալ,
Զի լի սըրտիւ և բոլորեալ,
Ըզմեզ յիշէք առ Տէր բարձրեալ։
. . . ։

Բ

Ստացող՝ Վարդան աբեղայ

Յիշեցէք ի Քրիստոս զեղկելի ստացողս զՎարդան չարայուշ աբեղայս և զծնօղսն մեր՝ զՆղիա և զՂարիպջան, և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ զծրագրողն՝ զՍարգիս սարկաւագ, բայց այժմ վարդապետ
370 ընտիր և առաքինի[47], և զնորայն ծնօղսն, և զարեան // մերձաւորսն առ հասարակ, և ամենեցուն Աստուած ողորմի ասացէք...։

Գ

Յիշեցէք... սեղօք մեռեալս զՎարդան չարամիտ աբեղայս, որ եմ բազում չարեօք անկեալ... մաղթէք յամենագութ բարերար փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զթողութիւն բազում սղալանաց իմոց, որ եմ արտաքսեալ ի գաւթէն լուսոյ...։ Այլ և յիշել զգրող սորա՝ զՍարգիս

[47] Գրիչ Սարգիսը 1653 թ., երբ ընդօրինակում էր սույն ձեռ.-ը, սարկավագ էր, իսկ հիմա վարդապետ. նշանակում է բ, գ հիշատակարանները գրվել են տարիներ հետո և ոչ թե 1653 թ.։ Պայմանականորեն այս երկու հիշատակարանները դրեցինք 1653 թ. ներքո, որովհետև վերաբերում էր և՛ գրչին, և՛ ստացողին։

Յամբեցին, որ յորժամ գրեաց սարկաւագ, և այժմ շնորհիւն Աստուծոյ հոգոյն և ողորմութեամբ նորին կրօնաւոր և վարդապետ Հայաստանեայց։

Այլ և աղաչեմ յիշել զծնօղսն մեր...։

Այլ և տրաւ սա ձեռամբ իմով յիշատակ ի սբ. և յաստուածաբնակ քաղաքն յԵրուսաղէմ, ի Ս. Յակոբ, ի փրկութիւն հոգոյ իմոյ...։

890

ԱԻԵՏԱՐԱՆ

Մ3ՁԵՊ, VII, № 2350

Գրիչ՝ Յոհանէս

ա

486 Զբազմավէր Յոհանէս գրիչս և զանգէտ բաբունս, աղաչեմ յիշել ի Տէր։

Թվին ՌՃԲ (1653) գրեցաւ։

բ

Ծաղկող՝ Աստուածատուր

487 Նկարող սորին զմեղաւոր Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս։

891

ՇԱՐԱԿՆՈՑ

Մ3ՁԵՊ, VIII, № 2465

Գրիչ՝ Թումայ
Վայր՝ Աւրնդանց

ա

130 Փառք...։

Զոր ես չարեացքս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Թումայ հողս և անարժան,
Կատարեցի զսա ի լրման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յաւժար և ժրրական,
Բազում ջանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ ամեան,
ՃԲ թիւ ընդ նրման (1653),
Աւարտեցաւ սա ի լրման։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Յիշման առնէք ըզմեզ արժան,
ԶԹումայ հող և անպիտան։

Բ

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է Խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի՝ մեղաւոր Թումայիս: Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ Նորին կատարեցի, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653), ի գեաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս. Դէորգա[յ] զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց. քանզի ես քան զես սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս ես առաւել ազգիս Հայոց վասն ծովացեալ մեղաց։

892

ՏՕՆԱՑՈՒՑ

ՄՏԶԵՊ, VIII, № 2508

Դրիչ՝ Մարտիրոս երէց
Վայր՝ Բալու

184 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տօնսցոյցս ի Բալու քաղաքս, ի դուռն Ս. Գրիգորայ, ձեռամբ անուամբ միայն Մարտիրոս Երիցու, որ անունս ունիմ և գործս ոչ. վայ ինձ Ռ (1000) բերան։ Խնդրեմ ի սբ. հարցդ, երբ ի ձեռս առնուք՝ կարդալով, տեսանելով կամ աւրինակ դնելով՝ Աստուած ողորմի ասացէք ինձ ե ծնողաց իմոց և որ առատն է ի տուրս բարեաց...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Պետրոս կրօնաւորն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն՝ Գրիգորին և մօրն՝ Ալթունին և իւր կողակցին փոխեցելոյն առ Քրիստոս, ամէն։

Ջունի ոք իշխանութիւն ի վերայ սորա՝ ոչ ընտանիքն և ոչ բարեկամքն, այլ իւր հոգոյն յիշատակ եղիցի յաւիտեանս յաւիտենից ի սբ. Երուսաղէմ՝ ի դուռն Ս. Ննդեան, ի Ս. Աստուածածին եկեղեցոյն, ի հայրապետութեան սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր աստուածաբան վարդապետին, ի թվին Ռ և ՃԲ (1653)-ուին։

893

ԱՒԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 44

... յամի թուաբերութեանս մերոյ սեռի ՌՃԲ (1653) կատարեցաւ սբ. Աւետարանս...։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս Աստուած զմահտեսի լուսարար Աւետիքն, որ ցանկացող եղև այսմ աստուածախօս մատենիս և լուսազարդ սբ. Աւետարանիս, և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, և ետ զարդարել ի ներքոյ և արտաքոյ ոսկով և արծաթով, և ետ յիշատակ ի սբ. Երուսաղէմ, և ի դուռն Ս. Յակոբայ Տեառնեղբօրն և Յակոբայ որդւոյն Զեբեթիա գլխադիր սբ. դամբարանին։ Արդ՝ յերես անկեալ մոխրամած դիմօք աղաչեմ մանկունդ սբ. եկեղեցւոյ..., յիշեցէք ի մաքուր յաղօթս ձեր զսասնցի մահտասի Աւետիքն, զլուսարար

Ս. Աստուածածնին և զՍ. Յակոբայ և այլ ամենայն սբ. տնօրինականացն Քրիստոսի. նաև զծնողս իւր զհայրն՝ Դանիէլ և զմայրն՝ Մանուշակ, և զհօրեղբայրն՝ զՍկրտիչն և զայլ ամենայն [մերձաւորսն]. ամէն։

894

ԱԻԵՏԱՐԱՆ

Կամենից, էջ 190

Գրիչ՝ Յովհաննէս վարդապետ
Վայր՝ Էջմիածին

Ի թուականիս մերում ՌՃ (1651) ամին ելեալ ի սբ. Էջմիածնայ՝ բարձրափառ և ամենահռչակ տէր Փիլիպպոս կաթողիկոսն, հանդերձ ԺԲ (12) վարդապետօք, չոգաւ յԵրուսաղէմ, առ որ և զամենաթշուառս [Յովհաննէս վարդապետս][48], կրսերս ի բեմբասացս և հուսկ վերջոտնեալս ի ծնունդս եկեղեցւոյ, ունելով ընդ իւր. որոյ այս ԻԵ (25) ամ է զի ծառայեցի նմա մտերմաբար. և գնացեալ մինչև ի քաղաքն Էնկիւրեայ, և անտի յղեալ զմեզ ի Բիւզանդիոյ՝ սակս զնոսին հրաւիրեցոյ ի սբ. Երուսաղէմ...

Եւ արդ՝ գնացեալ ի սբ. քաղաքն Երուսաղէմ ընդ վերոյ դրեալ տեառն մերոյ, և անտի ևս դարձաք ի յարքայական քաղաքն ի Կ. Պոլիս. և անդէն զմեզ ուղարկեաց Իլախաց աշխարհն՝ հայրն մեր, ինքն չոքաւ ի յաթոռ իւր ի սբ. Էջմիածին, նոյն միաբանօքն։

Իսկ իմ երթեալ յայս վերոյ ասացեալ երկիրն, իբրև կատարեցաք զգործս մեր, յետ երկուց ամաց դարձաք ի սբ. Էջմիածին։ ...[49]

895

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 340—341

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Ալնոցի վանք

ա

... Արդ՝ ես ծառայս Աստուծոյ Յոհաննէս սկսայ զսբ. Աւետարանս և կատարեցի ի ՌՃԲ (1653) թուականիս, ի կաթողիկոսութեան տեառն Անանիայի և յառաջնորդութեան տեառն Սիւիթարայ երկրիս Խաղտեաց. ի փոքր մենաստանիս, որ կոչի Ալնոցի վանք, ի դուռն Ս. Յովանիսի ձեռնադրողին Փրկչին մերոյ։

Յայսմ ամի սով եղեալ ի վերայ երկրի, ոմն դնեալ զհաց և սովամահ լեալ, և ոմն ծախեալ և յղփացեալ ի բազում ոսկւոյ և արծաթոյ. նոյն յայսմ ամի կատարեցաւ...։ Ով սբ. եղբարք աղաւթս արարէք, որ ոչ ածէ Աստուած այնպիսի սուր ի վերայ երկրի, զոր տեսաք աչաւք մերովք։

---

[48] Այս անունը փակագծերում ավելացրել է Ալիշանը։

[49] Հովհաննես վարդապետը Էջմիածնից դուրս է եկել 1651 թ. և վերադարձել երկու տարի հետո։ Ուրեմն հիշատակարանը գրվել է 1653 թ.։

Բ

Ստացող՝ Յոհաննէս քահանայ

Ես՝ Յոհաննէս քահանայս ստացայ զսբ. կտակս զայս զաւակ ի Սիովն և ընդանի ի վերինն Երուսաղէմ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց և եղբարն իմոյ՝ Ներսէս ընտրեալ քահանայի և կրաւնաւորի. և հանդանն իմոյ Գուլիկանն և Վարդեթփին..., յիշեցէք զծնողսն իւր և զեղբարսն և զամենայն սիրելիս, զոր և ինքն կամի, և զքեռի իմ՝ զԱստուածաւուր, որ սնուցիչ իմ էր և վարդապետ։ Եւ որ զմեզ յիշեն, առաշի ահեղ ատենին յորժամ բանք սպառին և գործք... թագաւորին ... ողորմեսցի Քրիստոս։

896

ՅԱՅՍՄԱԻՈԻՐՔ

Թորոս աղբար, Բ, էջ 404—405

Գրիչ՝ Եղիազար

Դարձեալ[50] ի թվին Հայոց ՌՃ և Բ (1653) այս Եղիազար վարդապետս ելեալ ի Կոստանդնուսպալսէ եկն ի վիճակեալ աթոռն իւր, այսինքն յԱրղնու Բարձրահայեաց Ս. Աստուածածինն, թագաւորական հրամանաւ և նոմոսիւ, որ յաղագս այնմ իրի էր գնացեալ անդ. և սկսաւ նորա նորոգել զսբ. մենաստանս, այս է զեկեղեցւոյն որմեր՝ ներքոյ և արտաքոյ սպիտակացուցեալ պայծառացոյց, և ի վերայ դրան սորին գաւիթ շինել ետ. որ յառաշն բնաւ իսկ ոչ գոյր. այլ և արտաքոյ շուրջ զեկեղեցեաւն սրահք պատշաճաւոր և զանազան խցեր. ի պէտս միաբանակեցաց և գալոցաց և գնացողաց մեծաւ ծախիւք։ Եւ գիտելի է, զի յաւրէ յորմէ հետէ շինեալ էր զսա տէր Մկրտիչ արքեպիսկոպոս Նաղաշն կոչեցեալ. մինչև ցայժմ ի յահէ անաւրինաց քար ի քարի վերայ աստ ոչ ոք էր եղեալ. բայց սա յԱստուած ապաւինեալ, բարեխաւս ունելով զՏիրածին կոյսն անկասկած լեալ յահէ անաւրինացն արիաբար գիմեալ ի գործ հոգևոր մշակութեանս և լիով կատարեաց ըստ փափաքսնաց սրտի իւրոյ, զոր տէր Աստուած պահեսցէ հաստատուն յուսով և երկար ամաւք։ Ես զաւրացուսցէ և արիացուսցէ ընդդէմ ներհակաց և չարափառաց ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ և ի պարծանս հաւատացելոց. ամէն։

Այլ և ես տրուպ Եղիազար մեղսամած գրիչս հրամանաւ սոյն Եղիազար վարդապետի ըստ կարեաց իմոց սակաւ ինչ զսբ. գիրքս սրբագրեցի, որ ի տեղիս տեղիս գտանէին սղալմունք, որպէս սովորութիւն է գրչաց, զաւելին բարձաք և զպակասն լցուցաք ըստ աւրինակի իմաստուն գրչաց։

---

50 Սկսած այստեղից գրեցինք առանձին, որովհետև տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը եղել է ձեռագրի ընդօրինակությունից հետո։ «Թորոս աղբար»-ում այս և ձեռագրի հիշատակարանը գրված է որպես մի ամբողջություն՝ 1651 թ. ներքո։

897

ԱԻԵՏԱՐԱՆ

Բորոս աղբար, Ը, 1454 թ. էջ 445

ա

Ստացեալ ի ձեռաց անաւրինաց. թվին ՌՃԲ (1653)...։

բ

Տէր Յովանէս. լաւ կաւտ մի մեղր ուղարկէ որ ուտեմ, քաղցրանամ, քո արքայութիւնն քաղցրանայ. ամէն։

898

ԱԻԵՏԱՐԱՆ (1450 թ.)

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 126

Ի թվին Հայոց ՌՃ և երկուսն (1653) դարձեալ նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ պարոն Նաճապետին, որ վերըստին կաղմեաց և նոր կապել ետուր զսբ. Աւետարանս, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, հաւրն՝ Խուշբնկին և մաւրն՝ Սառային, և կողակցոյն իւրոյ՝ Նաճբարին, և որդոցն՝ Գրիգորին, որ մանուկ հասակաւ մեռաւ, և սուդ անմխիթար եթող ծնաւղաց իւրոց. միւս այլ որդւոյն՝ Յակոբին, և դստերացն՝ Ազբգին և Սառային, և ամենայն արեան մերձաւորաց նորին՝ կենդանեաց և հանդուցելոց...։

899

ԱԻԵՏԱՐԱՆ (1358 թ.)

Վ. Ազուլիս, «Արարատ», 1911 թ., էջ 563

Նորոգող՝ Սիմոն երէց

Արդ՝ գվերջին ըստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ և զաստուածասէր կինն զՀերիքնազն, որ նորոգել ետ յիշատակ հոգւոյ իւրո և իւր ծնօղացն, հօրն իւրոյ՝ Խուդավերդուն և մաւրն իւրո՝ Մելիքաղին, և իւր որդոցն՝ Մուրատին և Յակոբին, և այլ ազգականացն։ Եւ որք հանդիպիք սմա լիաբերան Աստուած ողորմի ասացէք զբարեմիտ կնոջն Հերիքնազին և իւր ծնողացն. ամէն։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թագաւորութեանն Բարսից փոքու շահ Ապազին, ի կաթողիկոսութեան ի էջմիածնայ տեառն Փիլիպպոսի, ի յառաջնորդութեան ի թումաի սբ. ուխտին զԽաչատուր արհեպիսկոպոսին։

Նորոգեցաւ թվին ՌՃ և երկու (1653), ձեռամբ յոգնամեղ Սիմոն իրիցոյ, և զիս զբազմամեղս յիշել աղաչեմ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

900

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Մշեկ, VII, № 2269

Գրիչ՝ Ղազար

364 [Ո]վ սբ. պատարագող, յիշեա զՂազար գրիչս և զմայր իմ։

Թվին ՌՃԳ (1654), մարտ ամսոյ Բ (2), օրն հինգշաբթի, ի վայելումն /// քահանային։ Աստուած բարով վայել տացէ։

901

ՄԱՇՏՈՑ

«Բազմավէպ», 1886 թ., էջ 190, № 71

Գրիչ՝ տէր Սահակ

48 Փառք... նաև դիս՝ զանարժան գրիչս տէր Սահակս յիշել աղաչեմ... գրեցի զսա ի ժամանակին հայրապետութեան երիցս երանելո[յ] և երկրորդ լուսաւորչի Հայոց տեառն Փիլիպպոսի, և յաշորդութեան[1] նահանգիս Պարսկաստանի տեառն Դաւիթ արքեպիսկոպոսի, և ի թագաւորութեան փոքրիկ շահ Ապազին։ Գրեցաւ սա ի դուռն եկեղեցոյն[2], ի թվականիս Հայոց ՌՃ և Գ (1654), մարտի ամսո[յ] ԻԲ (22)[3]։

902

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 128, էջ 117

Վայր՝ Սպահան

177 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի խնդրոյ հաւատարիմ ի Տէր պարոն Ապովին, որ է որդի մահդասի Մարուքէ ազգէ Ջուղայեցի, որ կոչի Լուսիկէնց, ի վայելումն անձին իւրոյ։ Եւ ի թուականութեան Հայոց ՌՃԳ (1654), և ի կաթուղիկոսութեան տեառն տէր Փիլիպպոսի և արհիեպիսկոպոսութեան մերոյ տէր Դաւթին, և ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, և իշխանութեան Ջուղայ քաղաքգեղշիս խոշայ Սարֆառազին, ի քաղաքն Շօշ, որ կոչի Ըսպահան։ Աւագ Ջատկին[4] աւարտեցաւ սայ գրելն և ծաղկելն և կազմն շնորհօք Սբ. Հոգոյն։

---

[1] Թերևս «յաջորդութեան»։

[2] Քարամյանցի հաղորդմամբ եկեղեցու անունը չի գրված։

[3] Սույն հիշատակարանը «Բազմավէպ»-ում բերված է խիստ համառոտ, իսկ վերջում նշված է «ի Շօշ»։

[4] 1654 թ. Զատիկը հին տոմարով կլինի մարտի 26-ին, իսկ «Աւագ Զատկին» օրերը՝

Դարձեալ յիշատակ է սբ. Աւետարանս ստացողի սորին հաւատարիմ ի Տէր պարոն Ապովն, *և կողակիցն իւր՝* Ծաղիքին, *և ի ծնօղացն իւրոյ՝ մահդասի* Մարութէ, Սղմէրին, *և եղբօրն հանգուցեալ ի Քրիստոս՝* Սիմոնին, *և քվերցն՝* Ամափարէ, Ջանէզանին, Եղիսաբերթին, *և միւս եղբարցն՝* Գրիգորին, Թասալուին, *և քվերացն՝* Խանփաշին, Սօլթա[ն]փաշին: *Դարձեալ յիշատակ է* Ապովին *պապ* Թասալին, *և կողակիցն սորա՝* Խանփաշին, *և հօրն՝* Կիրակոսին, *և կողակցին սորայ՝* Թրինջին, *և հօրն՝* Լուսիկին, *և կողակցին սորա՝* Թառղումաշին:

903
ԱԻԵՏԱՐԱՆ
Երեւան, № 9022

Վայր՝ Առինջ

291ա *Փառք...։*

292բ *Արդ՝ դրեցաւ սբ. Աւետարանս ի գիւղն* Առինջ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածն[ին], ի բարձրադիղակ տեղւոջ, ի մեծ թվականիս Հայոց ի ՌՃԳ (1654) ամի ահկի ամսոյ ԻԸ (28), աւրն ուրբաթ և ի դալըստեանէ Կենարարին ՌՃՃԾԶ[6] (1656), ձեռամբ անարհեստ գրչի սուտանուն և մեղօք [ի] լին[7], որ անուամբս միայն եմ և գործովս մոլորեալ։ Ի հայրապետութիւն տեառն սբ. Էջմիածնայ տէր* Փիլիպպոս *կաթողիկոսի ամենայն Հայոց, և մերոյս* Յովնաննէս *արհեպիսկոպոսի, զոր տէր Աստուած Յիսուս Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւր. ամէն։*

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. դրոյս կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, անմեղադիր լերուք խուշտուութիւն զրոյս և կամ սխալանացն, զի կար մեր այս էր։ Ով դասք սբ. քահանայից, յիշեսցէք ի մաքրափայլ յաղաւթս զհայր իմ և դու յիշեալ լիջ[իս] միւսանգամ գալստեանն. ամէն։

904
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երեւան, № 3291

Գրիչ՝ Ազարիայ դպիր
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

124ա *Արդ՝ յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ և պատահողացդ, յիշեցէք ի Քրիստոս զմեղսամած նուաստ քարտուղայր, սուտանուն* Ազա-

---

մարտի 20-ից մինչև 25-ը։ Նշանակում է ընդօրինակությունն 1654 թ. ավարտվել է մարտի 20-ից մինչև 25-ը։

[5] *Հայոց ՌՃԳ թվականը սկսվում է 1653 թ. հոկտեմբերի 9-ին (հուլյան տոմարով), այստեղից էլ ահեկան ամսի 28-ը կհամապատասխանի 1654 թ. մայիսի 5-ին և այդ օրն էլ իրոք ուրբաթ է։*

[6] *Ձեռագրում տարեթիվը սխալմամբ նշված է ՌՃՃԽԶ, որը կլինի՝ 1656։*

[7] *Ձեռագրում «լին» բառից հետո գրված է «գրչի» և ջնջված։ Այդ բառը դիտեցինք ոչ թե ընդօրինակողի անուն, այլ վերևում հիշված «գրչի» («անարհեստ գրչի սուտանուն») բառի կրկնություն։ Այդ պատճառով չվերցրինք։*

rիայս և զծնօղսն իմ և ամենայն արեան մերձաւորսն իմ. և դուք վարձն ի Քրիստոսէ առնուցուք։

Ի թուին ՌՃԲ (1653) գրեցաւ, մարտի ամսոյ Ժ (10)։

Բ

165բ Յիշեցէք ի Քրիստոս զփծուն դրիչ սուտանուն Ազարիայս, և զծնօղսըն իմ և ամենայն արեան մերձաւորօք իմովք։

Ի թուին ՌՃԲ (1653) կատարեցաւ[8]։

Գ

282ա Զմեղաւոր և զապիկար Ազարիայս յիշել մաղթեմ ի Տէրս Թվին ՌՃ (1651) ամին գրեցաւ։

Դ

395բ Թվին ՌՃԱ (1652) գրեցաւ։

Ե

440բ Ո՛վ սբ. ընթերցողք, յորժամ հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զմեղաւոր և զապիկար Ազարիայս և զծնողն իմ՝ զտէր Մկրտիչն և Նղտիխասն։ Եւ բառնայք զսխալութիւնն և վարձն ի Քրիստոսէ առնուք։

Զ

470ա Յիշատակարանն է կանոնացս

Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ, մեղօք լցեալ, անարժան և անարհեստ գրչիս, յանդ և յաւարտ հասանել այս սբ. գրոցըս, որ կոչի Կանոնք։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թուաբերութեանն Հայոց ՌՃԳ (1654) և մայիսի ամսոյ է (7) և մեհեկի Լ (30). և ի մարդեղութենէն Քրիստոսի մինչև ցայս ՌՈՄԶ (1656), ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անծան և անծող գրչի Ազարիայ սուտանուն դպրի, չարութեամբ լցեալ և մեղօք զսուռածեալ։ Աստանօր կատարեցաւ հոգիակեցոյց և ցանկալի դրախտս, աստուածադիր ամենունակ առատութեամբ, յորմէ գնան դետք...։ Որոյ այսպիսի յընձալի փարթամութեանց

470բ ի համեստատեալ և փափագող եղէ ես և դրեցի սիրով զսբ. գիրքս ի վայելողաց։ Եւ ով ոք կարդասցէ՝ եպիսկոպոս կամ քահանայ, քանզի սա պարունակեալ ունի առ ինքն զմեկնութիւն կանոնացս, որ և սբ. հայրապետքն ասացին հոգւովն սրբով յաղագս վիրաւորեալ հոգւոց, որ է դեղ և սպեղանիք ցաւադնելոց և մեղանչելոց։

Բայց դրեցաւ սա ի յաշխարհս Պարսից, ի գեօղաքաղաքն Ջուղայու, ընդ հովանեաւ ի դուռն Ս. Յակոբու Սքանչելագործին, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոսին, և ի վերատեսչութեան նահանգիս Պարսկաստանի հեզահոգի արհիեպիսկոպոսի տեառն Դաւթի, որ Գ (3) ամ է նստեալ յաթոռ եպիսկոպոսութեան, որ ի յԵրուսաղէմ ձեռնադրեցաւ եպիսկոպոս, որ է սա բնիկ Ջուղայու. Աստուած ընդ երկայն աւուրս պահէ։ Եւ ի թագաւորութեան Պարսից շահ Ապասուն։

Աղաչեմ զձեզ հայրք իմ պատուականք և եղբայրք իմ ազնուականք,

[8] Խոսքը վերաբերում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ընդօրինակությանը։

որք յանդիպիք յայսմ տառիս կարդալով կամ գաղափար առնելով և կամ զմոլորեալս դարձուցանելով, բառնայք ի սմանէ զսխալութիւնն, և անմեղադիր լերուք խոշոր դրոյս, զի կարն մեր այսչափ էր և ոչ այլ աւելի գիտեմք։

471ա Եւ դարձեալ յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ, յիշեսջիք և զծնօղսն իմ՝ զտէր Մկրտիչ քահանայն և ամենայն արեան մերձաւորքն։ Նոյնպէս և զմայրն իմ՝ Եզտիիասն հանդերձ իւրայնովքն ամենայնիւ, և զեղբայրքն իմ՝ զԿուրապեա վարդապետն և զտէր Յոհան քահանայն, որ բաղում աշխատեցաւ ի վերայ Կանոնգրքիս, Ե (5) և Զ (6) տետր տէր Յոհանն գրեաց. Աստուած իւրն վարձահատուց լինիցի։ Եւ զմիւս եղբայրն իմ՝ զԳրիգորն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և զքոյրն իմ՝ զԳուլումն։ Եւ Աստուած արարիչ երկնի և երկրի յիշողացդ և յիշեցելոցդ առ հասարակ ողորմեսցի...։

Այլ և հայցեմ արտասուալի,
Հանդիպողացդ ամենայնի,
Զի թողութիւն ինձ պարգևի,
Յառատաձիր Տեառնէն ձրրի։
Այլ և անձամբ և եղկելի,
Մաղթեմ յիշմամբ աղօթելի,
Բաբունեացն և հրաշալի,
Դուք ընկալջիք մասրն բարի։
. . . .[9]

471բ Դարձեալ աղաչեմ ո՛վ սիրելի եղբայրք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զսուտանուն Ազարիայ դպիրս և զկողակիցն իմ՝ զՅուլուպիանն և զծնօղքն իւր, և զմիւս կողակիցն իմ՝ զԹագուհին և որդին և դուստրն իմ, որ սոքա հանգուցեալ են առ Քրիստոս։ Եւ դուք յիշեալ լիջիք...։

Է

Գրիչ՝ Յոհաննէս քահանայ

166ա Արդ՝ յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ, յիշեցէք ի Քրիստոս զմեղսամած, նուաս[տ] և անարժան սուտանուն Յոհաննէս քայանայս, որ եմ ազգաւ Յերևանցի, և զսիրելի եղբայր իմ սրբանուէր զՄկրտիչ քահանայն, յիշեցէք։

905

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7029

Ստացող՝ Թամուր Ակնցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

131ա Ոհ, ոհ զանիմաստ մեղսաթաւալ զԱկրնցի Թամուրս միոյ ողոր-

[9] Ձափածոյում պատմական ոչինչ չկա։ Ձափածոյի կենտ տողերի առաջին տառերից հոդվում է «Ազարիա գրչէս ընկալցիր»։

մեաիւ յիշողացդ՝ Աստուած ողորմի, և զմայրն իմ՝ զՊակին և դուք դրիք ի դպրութիւն կենաց. ամէն։

Բ

188ա Փառք...։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս սր. քահանայիցդ և սարկաւագաց, որք հանդիպիք այսմ ծաղկալից բուրաստանիս, յիշման արժանի վարկչիք զբազմամեղ Թամուրս Ակրնցի, որ ցանկացաւղ եղեալ սորա ետու նաւտրել զսա, որ պատմէ զգործ սրբոյն Ներսէսի մինչև ի բառնալ թագաւորացն Հայոց։ Եղև յանգ ելանել ձեռամբ աշակերտին իմոյ՝ Յովանէս դպրի, ի թվին ՌՃԳ (1654), մայիսի ԻԵ (25)։ Արդ՝ յաղագս սխալանացն անմեղադիր լեր, զի ի տախտակէ զսա ետու գրել ի մայրաքաղաքն Կոստանդինուպալիս։

906

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Երևան, № 151 (1653 թ.)

160բ [Ի] թուականիս Հայոց ՌՃԳ (1654)-ին, ի օգոստոս ամսոյ Բ (2)-ուսն, ի յինն ժամու մինչև ի կէս ժամն խաւարեցաւ արեգակն[10], և եղև սեաւ իբրև զրկապերտ այծեաց, և եղև իբրև ի մէջ գիշեր, և երևեցաւ աստեղք յերկնից։ Սակա[յ]ն բարերարն Աստուած ոչ կամեցաւ զմահ մեղաւորացս, այլ ըզդառնալն մեր ի չար ճանապարհացս, մերում, վերստին ծաղեաց զլոյս ի արեգականն։

Արդ՝ եղբարք և հարք, լուարուք և ի միտ առեք, դի Աստուած, որ զայս արար, կարող է հանապազ առնել, որպէս զայս օրս. այլ ի չարեաց հեռացարուք և ի բարոյն մերձեցարուք աղօթից...։

907

ՃԱՇՈՑ

Կամենից, էջ 191—192

Գրիչ՝ Անտոն վարդապետ
Վայր՝ Եազլովցա, Սէջով

Ողորմութեամբն Աստուծոյ սկիզբն ար[արաք] Ճաշոցն թվին ՌՃԳ (1654), ապրիլի ԻԶ (26), օրն չորեքշաբթի, Յինանց, առաջ մէկ շաբաթ

[10] Ի թվին ՌՃԳ (1654) օգոստոսի Բ (2), մարերի ԻԸ (28), Ճանկայ Ս. Շողակաթն կու շինէինք, աւուր չորէքշաբթի, ի մէջօրէի արեգակն խաւարեցաւ յօգոստոս, ժամս մինչ կի աստեղք երևեցան, վասն իմ մեղացն (Մատենադարան, ձեռ. № 745, էջ 1ա)։ Համաձայն պրոֆ. Ռ. Օպպոլցերի, արևը խավարել է 1654 թ. օգոստոսի 12-ին (տե՛ս Canon der Finsternisse, Wien, 1887, S. 272)։ Այս երկու տեղեկության մեջ սխալ չկա։ Բանն այն է, որ հիշատակագիրն առաջնորդվել է հուլյան (հին) տոմարով, իսկ պրոֆ. Ռ. Օպպոլցերը՝ գրիգորյան (նոր) տոմարով։

Այս եղելությունը հաստատում են նաև ժամանակագիրները (տե՛ս Մծ, հտ. 2, էջ 272, 519), իսկ երկու այլ ժամանակագիրներ տարեթիվը նշում են 1651 թ. (նույն տեղում, էջ 361, 395)։

քան զՀամբարձումն, և մինչև ցայս վայր կատարեցաք Գայիանեանց տօնի՝ մայիսի ԻԳ (23), ի փառս Քրիստոսի Աստուծոյ, ձեռամբ անարժան Անտօն եպիսկոպոսի և վարդապետի, ի քաղաքն Եազլովցա, ի դուռն Հաճկատարի։

Յայս հրաշափառ մեծի տօնիս,
Քեզ երանի որ հանդիպիս,
Լուսափրթիթ բուրաստանիս,
Յորժամ մի ծունըր խոնարհիս։
Սիրով հոգւոյդ յԱստուած հրպիս,
Յայնժամ յիշեա գու զեղկելիս,
Զայս անպիտան իլովցիս,
Զմեղօք ծածկեալս ի մէջ տղմիս,
Անտոն տնուն վարդապետիս,
Բայց տնուամբ կոչողիս.
Եւ եմ չարեօք լրցեալ գերիս։
Հազար հարիւր երեք (1654) թըւիս,
Յորժամ հասայ ի յայս տեղիս,
Մայիս ամսոյս երեսունիս,
Աւուր երեքշաբաթիս. ամէն։

Հոգի Ս. յօդնեա և աջողեա անարժան գրչիս Անտօն եպիսկոպոսի, սպասաւորիս Սրբոյ Խաչին։ Աղաչեմ և խնդրեմ ի քէն բարերար և բազումողորմ Աստուած, վասն քո սբ. չարչարանաց, զի զօրացուցես զիս զանարժանս ի անկ ելանել, որպէս՝ ի սկիզբն զօրացուցեր, մարդասէր, նոյնպէս տպաւորեա Ս. Հոգիդ, զի յօգնութեամբն հասից մինչ ի վերջն. զի յոյժ ծանր թուի ինձ այս սակաւմնաց գիրս կատարել. և քո սբ. և սքանչելի անուանն վերասկսանիմ, կենսաբեր Սբ. Խաչին աստուածաշունչ գիրս անտարակոյս, յուլիսի ԺԳ (13), օրն հինգշաբթի, թվին ՌՃԳ (1654), ի փառս Աստուծոյ։ Կատարեցաւ Ճաշու գիրքս ձեռամբ անարժան Անտօն վարդապետի, ի մայրաքաղաքն Սէջով, ի դուռն Ս. Խաչին, թվին ՌՃԳ (1654), օգոստոսի ամսոյն ԺԱ (11), փոխման Աստուածածնին պահոց. բայց և սկիզբն արաք ի Եազլովցա քաղաքն, նոյն տարի, ամսոյն մայիսի Գ (3) աւուր, յառաջ քան զՀամբարձումն, չորեքշաբթի· օր, ի փառս Աստուծոյ։ Փառք քեզ, Աստուած յաղագս յամենայնի։

908

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3430

Գրիչ՝ Կոզմաս

ա

234.ա Յիշեցէք զգծող սմնի[11],
Զկոզմաս համբակս եղկելի,

[11] Երևի հանգը տեղը բերելու նպատակով գրում է «սմնի»։

Ծաղր և ծանակ համայն ցեղի,
Թվոյս հազար հարիւր երկի (1653),
Ի յօգոստոս ԺԷ (17)-ի։

Բ

291ա [Փ]առք..., որ ետ կարողութիւն Կոզմաս բազմամեղ գրչի հասանել ի զրաւ բանիս, որ կոչի Բառ եբրայեցի, որ բան տառս մեր յար շարաղուգի, ի թուականութեանս հայկազնի հազարերորդի հարիւրեորդի երրորդի (1654), ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց կաթողիկոսի, և յառաջնորդութեան նահանգիս տէր Յեսայեա վարդապետի, ի յիշատակ և վայելումն Ղազար սրբազան քահանայի և Արիստակէս[12] բանի սպասաւորի, և որդոցն՝ Կոզմայի, Ալէքսի, Յովհաննէսի և Կիրակոսի. և ծնողացն՝ Կիրակոս քահանային և Թուրվանդին:

Աղաչեմ զձեզ, հարք և վարդապետք սբ., որ թէ գտանիցէք բան ինչ օգտի ի սմա, յիշեցէք զվերոյ գրրեալսն։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց՝ տացէ ձեզ յիշողացդ ներումն ամենայն սխալանաց. ամէն։

909

ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՅՍԳ, № 51

Գրիչ՝ Աստուածատուր Սեբաստացի
Վայր՝ Բոգնիկ

44 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի Սեբաստիա, և ի գիւղի որ կոչի Բոգնիկ, ի ձեռն մեղապարտ և անարժան Աստուածատուր երէցուոյս։

Զի եմ յետնեալ յամենայնի,
Եւ ներգևեալ սուտ հոգի,
Սատար եղէ սակաւ դրի։
45 Ես՝ Աստուածատուր Սե//բաստացի,
Կոչիմ, ի գեղջէն որ է Քոբնի,
Բարեաց թափուր եմ եղկելի...
Ի թվականիս Հայոց Ռ ամ,
ՃԳ (1654) սկսեալ նոր ամ,
Ի հոկտեմբերի յաւուր է (7)-եան,
Յաւարտ առեալ օր շաբաթեան,
Այս բանս սբ. տէրունական,
Որ յորջորջի Աւետարան...։

910

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ՄՅԶԵՄՍ, I, № 32

Գրիչ՝ Կիրակոս

77 Փառք...։ Արդ՝ գրեցաւ ժամանակրգութիւնս ի դուռն // Ս. Գէորգայ զօրավարին, առաջնորդութեան տէր [Յ]ով[հ]աննէս վարդապետին, ի

[12] Այս երկու անձնավորությունների պատվերով է գրվել նաև մեր Մատենադարանի № 800 ձեռագիրը, որի հիշատակարանը տե՛ս 1653 թ. շարքում։

թագաւորութեան դեռահասակ սուլթան Մէհէմէտին, ձեռամբ գրչիս Կիրակոսի, ի վայելումն Տիարպէքիրցի տիրացու Յակոբին. Աստուած իւրեան բարով վայելել տացէ. ամէն։ Գրեցաւ գիրս հոկտեմբեր ամսոյ ԺԹ (10), օրն երեքշաբթի. ամէն։ Թվին Հայոց ՌՃԴ (1654)[13]։

911

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8875 (1447 թ.)

ա

Հետ. ստացող՝ մանտեսի Յակոբ

287ա Զվերջին ստացող սբ. Աւետարանիս Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս, որ գնեցի զսա ի յարդար վաստակոց իմոց և ետու նորոգել ի թվականիս մերոյ ՌՃԴ (1654) ամի, ի նաւասարդի ամսոյ Ժ (10)[14], յիշատակ ինձ և իմ ծնողացն՝ Աւաքին, Եղիսաբեթին, և ամուսնոյն իմոյ՝ Անձրևին, և որդւոցն իմոյ՝ Խաչատուրին, Էլիազին, և եղբօրն իմոյ՝ Յոհանին, և քեռն իմ՝ Աննային, և ամենայն արեանառու աղգականաց իմոց, որք պատահիք սմայ մի բերան Աստուած ողորմի ասացէք...։

Այլ և աղերսելով խնդրեմ ի ձէնջ, եղբարք, եթէ ոք հանգիսլեսցի սմայ՝ եթէ յաիշատակեսցէ և կամ գնեսցէ, զյիշատակարանս մի՛ ոք չնչեսցէ, որպէս անադորոյնգ ոմանք առնեն, որպէս և ես ոչ չնչեցի զառաջին ըստացողի յիշատակարան։ Եթէ ոք աղաչանաց իմոց լուիցէ՝ ոչ հատանէ, խնդրեմ յԱստուծոյ որ ինքն ընդ արդարն գրեսցի. եթէ յանդգնի, հատանէ՝ պարտական լիցի առաջի Աստուծոյ։

287բ Դարձեալ յիշեցէք Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս և զեղբարն իմ՝ Յոհանն, և զկողակից նորա՝ Մրվաթն, և որդիքն՝ Էլիազն, Ոսկանն, Սահրատն և Աստուած ողորմի ասացէք։

բ

Նորոգող՝ Թաքէոս

Նորոգեցաւ Աւետարանս ի դրան իշման Միածնի, ի հայրապետութեան տեառն Փիլիպոս սրբազան կաթուղիկոսի, ձեռամբ ամենաթշուառ և մեղսաթաւալ Թաքէոսի, խնդրեմ անմեղադիր լերուք պակասութեան սորա։ Որք տեսանէք, թողութիւն խնդրեցէք բազում յանցանաց իմոց։

912

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ. 366—367

Հետ. ստացող՝ Եսայի քահանայ

Յիշեցէք զվերջին ստացող սբ. Աւետարանիս զԿիրակոսն... զՀազար... և զկողակիցն իւր՝ զՄանուշակ, զորդիք սոցին՝ զՈսկէտունկն և

---

[13] Հայոց ՌՃԴ՝ այսինքն 1654 թ., հոկտեմբերի 10-ն իսկապես երեքշաբթի է, իսկ 1655 թ. միևնույն օրը՝ չորեքշաբթի։

[14] Հայոց ՌՃԴ տարեթվի «ի նավասարդի ամսոյ Ժ (10)»-ն կհամապատասխանի 1654 թ. հոկտեմբերի 18-ին։

զՎարդանն, զՏիպալն, զթոռինքն՝ զՈվասափ և զՄովսէսն, զՍինանն, զՆորպարոնն, զՄինասն, զՏաւշիկն, զՍառան, զԳուլվարդն, զՄարքան, զՄանանդն, զԿուլխաթունն, [զ]Իսքէնտէրն, զՊապուկն և զիւր կողակիցն՝ զԳուլվարդն, ... և զԹուրվանտուն, զՂումրին... զԱկոբն, զՈվսէփն, զԱւադն, զհարսներն՝ զՀերիքոնն, զՇանինարն, զթոռունքն՝ զՆասիրաթունն, զՆովքն, զՍղիան, զՊէնատն, զԹփիկն, Սուրաթն, Մարիամն, Սուլթանն և զայլ ամենայն մերձաւորքն...։ Աստուած ողորմի Խաչանցոց հաւասար ննջեցելոցն ... տուին զայս սբ. Աւետարանս ի Ս. Սարգիս եկեղեցին յիշատակ...։ Աստուած ողորմի Կիրակոսին հոգւոյն և ծնողացն, որ ետուր նորոգել զսբ. Աւետարանս... ի թուին ՌՃԴ (1654) հոկտեմբեր ամսոյ ԻԸ (28), աւրն երկուշաբթի, ի յիշատակ Ս. Սարգիս եկեղեցւոյն, ի վայելումն տէր Նասայի քահանայիս...։

913

ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ

ՁՁԼՍ, № 112 (1643 թ.)

191 Նոյեմբերի ԻԲ (22) թվին ՌՃԴ (1654), ի քաղաքի Հալպայ հարին, յորժամ Սէյտի-Ահմատ փաշան հսար արար և աւար եհար զդրսի քաղաքն, ի նոյն աւարէ ստացա զայս Աղօթամատոյսս. Ես նուաստ /// երէց ///

914

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 198 (1628 թ.)

Վայր՝ Ասպահան

ա

360ա Արդ՝ ի վերջին դարոյս և ի սառնացեալ ժամանակիս, որ յամենայն կողմանց պատեալ են իբրև զսառն զհայկաղան ազգս, ոչ թէ միայն այլազգաց անօրինաց, այլ և քրիստոնէից երկաբնակաց հերձուածողաց, որ յամենայն ժամ աստուածային ջերմութեան սէրն արգելուն ի մէնջ...

360բ Եւ զայս լուեալ պատուական և իմաստուն, բարեմիտ և հեզահոգի՝ այրն ցանկալի՝ մահդասի Գրիգորն, որ մակդիրմամբ Մաճրումենց ասի, և սորայս իսկ վառեալ աստուածային սիրովն, ջերմեռանդ սրտիւ... մեծաւ ջանիւ փափագէր... // և ստացաւ զաստուածաշունչ սբ. Աւետարանս ի բարի և յարդար վաստակոց իւրոց... և ընձայեաց ի դուռն Ս. Ամենափրկչիս և այլ սրբոցս, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն և ամենայն արեանառու մերձաւորացն...։ Քանզի սորայս ծրագրութիւն և զծաղիկ կատարեր է այլ երկրի, զոր յառաջիկայդ դրեալ է[15]։ Եւ զայս յիշատակարանս գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՌՃ և Գ (1654) ամի, ի մայրաքաղաքս Ասպահան, ի հայրապետութեան էջմիածնայ սբ. աթոռոյն տեառն Փիլիպոսի հրեշտակակրօն և խարազնազգեաց կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան պանդխտեալ և տառապեալ ազգիս Հայոց,

361ա

[15] Խոսքը № 198 ձեռագրի գրչության հիշատակարանի մասին է. տե՛ս 1628 թ. շարքում։

որ կամք Ասպահան, *տէր* Դաւթի *արքեպիսկոպոսի և քաղցրուսոյց վարդապետի. զոր տէր Աստուած անփորձ պահէ. ամէն։*

361բ *Եւ ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ* Ապասին, *զոր բարեգութն Աստուած յամենայն ժամ զսիրտն ի գութ շարժեսցէ ի վերայ տառապեալ ազգիս քրիստոնէից, և զինքն խաղաղութեամբ և արիութեամբ ընդ երկար ամս պահեսցէ։ ամէն։*

Եւ ի ժողովրդապետութեանն վտարեալ և պանդխտեալ ազգիս Հայոց, կորովամիտ և արիասիրտ, իմաստուն և հանճարեղ... պարոն Յակոբջանին, *զոր տէրն մեր Յիսուս Քրիստոս... ընդ երկայն աւուրս բարեպաշտութեամբ և խաղաղ կենաց պահեսցէ հանդերձ ամենայն ընտանեօքն և առ հասարակ ամենայն ժողովրդեամբն. ամէն։*

362ա *Եւ արդ՝ մեծաւ պաղատանաց... // ընդ վերոյ յիշեցելոցս յիշման արժանի արարէք արժանաւոր աղօթիւք զմահդասի* Գրիգորն *և զծնողսն իւր, հայրն՝* Առաքելն *և մայրն՝* զԹարղումաշն, *և պապն՝* զՓիրիջանն, *և հանիկն՝* Ազիզփաշէն, *յիշեցէք...։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զմահդասի* Գրիգորն, *և զեղբայրքն իւր՝* զՍարգիսն, *և քոյրն՝* Ուղրիսոլթանն, *և սորա որդին՝* Մարկոսն *յիշեցէք։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի* Գրիգորն, *և կենակիցն իւր՝* զԲէկիխաթունն, *և որդին իւր՝* զՍիմոնխանն, *և զդրստերսն իւր՝* զՓիանաէն, Սէվարն *և* զՄարիտատն, *և հանգուցեալ որդիքն՝* Աւէտիսն, Մանուկն *յիշեցէք։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍիմոնխանն, *և զկենակիցն իւր՝* Խաթունն, *և զորդիքն իւր՝ դեռաբոյս և նորաբողբոջ* Պօղոսն *և* զՊետրոսն[16], *զոր բարերարն Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ և՛ հո-*

362բ *գով և՛ մարմնով // ծաղկեցուցէ. ամէն։ Նաև զդստերսն իւր՝* Եղիսաբեթն, Թարղումաշն, Ազիզիաշէն, Մարգարիտն *յիշեցէք։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս* զՊօղոսն, *և զկենակիցն իւր՝* Մինախաթունն, *և որդին՝* Յառաքելն, *որ է հանգուցեալ ի Տէր, և զդուստրն՝* Բէկզաէն[17]։

Այլ ևս յիշեցէք ի Քրիստոս զՓիանաէն, *և որդիքն իւր՝* զՍարգիսն, *[զ]*Ջունարն *և* զՅէմինն, *յիշեցէք...։ Եւ ևս յիշեցէք ի Քրիստոս* զՍէվարն, *և որդիքն իւր՝* Յակոբջանն, Կարապետն, Սարգիսն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* զՄարիատն, *և որդիքն իւր՝* Ռափայէլն, Աստուածատուրն, *յիշեցէք...*[18]։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՊետրոսն, *և զկենակիցն իւր՝* Քաթրինէն, *և որդին՝* Գրիգորն, *և հանգուցեալ որդին՝* Անգրիասն[19]։

363ա *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* զՍիմոնխանն, *և զանէրն իւր՝* զԳրիգորն, *և զսորա կողակիցն՝* Մարգարիտն, *և զորդիքն իւրեանց՝ զտէր* Կարապետն, Մկրտիչն *և* զԹարիղուլին, *յիշեցէք...։*

Եւս առաւել աղաչեմ յիշել ի Տէր Ամենափրկիչ եկեղեցոյ քահանայքն՝ նախ զտէր Կարապետն, *հանգուցեալն ի Քրիստոս, զտէր* Միքա-

---

16 Տողամեջ այլ գրով մեկ ուրիշն ավելացրել է «Մնացական»։

17 Մեկ ուրիշն ավելացրել է «Գալուստ»։

18 Ձեռագրում այս հատվածը գրված է վերևի պարբերությունից առաջ, սակայն գրիչը, կարմիր թանաքով, ոչերշինի մոտ գրել է. «յառաջ», իսկ մյուսի մոտ՝ «յետ»։ Այդպես էլ տեղափոխեցինք այդ երկու պարբերությունները։

19 Այլ գրով ավելացված է «Յարութիւն»։

յելն, տէր Բարսեղն, տէր Յովանէսն, տէր Սարգիսն, տէր Սահակն, տէր Պետրոսն և զտէր Յովանէսն. զոր բարերարն Աստուած սիրով և միաբանութեամբ և բարի կենցաղավարութեամբ պահեսցէ ընդ երկայն ժամանակս. ամէն։

Գրիչ՝ Աստուածատուր

Բ

303բ Ով դասք լոյսերամ քահանայքդ... յորժամ ընթեռնուք... յիշեցէք ի Քրիստոս յերկնաթռիչ աղօթիւք զմահդասի Գրիգորն, և զկենակիցն իւր՝ Ռէկիխաթունն, և զորդին՝ զՍիմոնխանն, և զծիծառնահնչող թոռունքքն՝ զՊօղոսն և զՊետրոսն, և զդստերսն, ամենայն արեան մերձաւորքքն... Ընդ նոսին և զանարժան Աստուածատուրս, որ զսակաւ բանս ծրեցի, յիշելոյ արժանի արարէք...։

304ա Քրիստոս Աստուած մեր, որ տէրն է փառաց և տրուող ողորմութեանց տացէ զիւր առատ ողորմութեամբն աշխարհի խաղաղութիւն, տանց շինութիւն, օդոց և տարերաց բարեխառնութիւն, անձրևաց ըստ ժամանակին առատութիւն, աղբերաց և դետօրէից յորդութիւն, անդաստանաց արդիւնաւորութիւն, ծառոց պտղաբերութիւն և ամենայն բարեաց լիութիւն, թագաւորաց բարեպաշտութիւն, իշխանաց քաղցրութիւն և միամտութիւն, զօրաց և զօրավարաց քաջութիւն, թշնամեաց հնազանդութիւն, հոգևոր առաջնորդաց ուղիղ վարդապետութիւն, եկեղեցւոյ հաստատութիւն, քահանայից սէր և միաբանութիւն, սարկաւագաց խոնարհութիւն և ուսումնասիրութիւն, ժողովրդոց սրբութեամբ քաղաքավարութիւն, ծերոց իմաստութիւն, տղայոց պահպանութիւն, երիտասարդաց ողջախոհութիւն, կանանց համեստութիւն, հիւանդաց առողջութիւն, վտանկելոց դիւրութիւն, բանտելոց ազատութիւն, պանդխտելոց անդրադարձութիւն, վշտացելոց մխիթարութիւն. և միաբան ժողովրդեանս կեանք և առողջութիւն և մեղաց թողութիւն, համօրէն ննջեցելոցքն հանգիստ և արքայութիւն։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք, պատիւ և գոհութիւն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Նվիրատու՝ Մաճուումենց Գրիգոր

Գ

Եւ արդ՝ ես մահդասի Գրիգորս ետու զսբ. Աւետարանս ի դուռն Ամենասուրբ Փրկչիս, յիշատակ ինձ և իմոցն, և ի վայելումն վերոյ դրեալ քահանայիցդ։ Որ ոք յանդգնեսցի դաւի անելոյ կամ ծախելոյ ի յազգականաց և յամենայն արեան մերձաւորաց, եթէ կարգաւոր իցէ մասն ընդ Յուդայի և ընդ Արիոսի առցէ. և եթէ աշխարհական՝ ընդ խաչահանողացն համարեսցի և ինքն նզովեալ եղիցի։

915

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 803

Վայր՝ Թորվասկան

Գրիչ՝ Ներսէս դպիր

388ա Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ.

Հարցմունքս Գրիգորի, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԳ (1654), ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի, ի յեղր Նարընղալային, ի գեօղն Թորվասկան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի յառաջնորդութեան մերոյ սբ. ուխտիս Ամենափրկչի Դաւիթ վարդապետի, և իշխանութեան մերոյ պարոն Յակոբին, և ի թագաւորութեան Պարսից մանկագոյն շահ Ապասին՝ Կարմիր գլխոյ, զոր աէր Աստուած հաստատուն պահեսցէ. ամէն։

388բ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ղարիպջանն, զԳրիգորն և զՁաքարէն, որ ստացան զսբ. դիրքս ի հալալ և ի յարդար վաստակոց իւրեանց, ի թողութիւն մեղաց և ի փրկութիւն հոգոց և մարմնոց, ծնողաց իւրեանց և ետուն զսա ընծայ և նուէր ի դուռն Ս.[20] և ի գեօղն Սուրշկան, յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք զՂարիպջանն և զպապն իւր՝ զՂուլիջանն։ Կրկին անգամ յիշեցէք զՂարիպջանն և ծնողքն իւր՝ զՄուրատն և զԿօգալն, յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք զՂարիպջանն և եղբարքն իւր՝ զԳրիգորն և [զ]Զաքարէն, յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք զՂարիպջանն, և զկողակից Ագամաքն, և որդիքն Հախնազարն, Ըսպանեիարն, Ըսքանգարն, և զդստերքն՝ Վարթիաթունն, Թուրվանդէն, Այմէլիքն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զպարոն Գրիգորն և զհանգուցեալ կողակիցն՝ զՀոռոմսիմէն, յիշեցէք։ Կրկին անգամ յիշեցէք զԳրիգորն, և զորդին՝ զՄանուկն, և զդստերքն իւր՝ Եթարն, Մարիամն, Եղիսիկն, Նազիկն, յիշեցէք...։ Միւսանգամ յիշեցէք զԳրիգորն և զմիւս կողակիցն՝ Ազիգն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զՁաքարէն, և կողակիցն՝ զՏալվաթն, և որդին՝ զՄարգարէն, և զհանգուցեալ որդին՝ զՄուրատն, յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք զՂարիպջանն, զԳրիգորն և զՁաքարէն, և զքոյր սոցայ զՍօլթանն և ամենայն արեան մերձաւորսն...։

Դարձեալ յիշեցէք զՂարիպջանն և զպապն իւր՝ զՋանազիզն...։

Դարձեալ յիշեցէք զՍուրշկանայ եկեղեցոյ քահանայքն՝ զհեզահոգի և հաւատարիմ, քաջ բարբունի և բանիբուն, զարդ եկեղեցոյ զտէր Ներսէս հրաշագեղ քահանայն, որ է գլուխ ամենեցուն, և զմիւս ծերունի և պատուական Քրիստոսատուր էրէցն և զԳրիգոր էրէցն, զի սոքա եղեն պատճառ գրոյս և յորդորեցին զստացող սորայ, զի ջերմեռանդ սիրով և աներկբայ սրտիւք ստացան զսայ և ետուն յիշատակ ի դուռն Ս.[21]

389ա Արդ՝ աղաչեմ զամենեսեան մանկունսդ սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. գրոյս, որ կոչի Հարցմունք, զաւելին բառնայք և զպակասն լնուք. և խոշորութեանն և սխալանացս անմեղադիր լերուք, զի կայր մեր այս էր, ո՛վ եղբարք։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ, ո՛վ հարք և եղբարք, յորժամ հանդիպիք սմա կարդալով և կամ օրինակելով, յիշեցէք զսուտանուն և զյեղկելի Ներսէս դպիրս և զվարդապետն իմ՝ զԳասպար քահանայն. զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք...։

[20] Ձեռագրում եկեղեցու անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

[21] Ձեռագրում եկեղեցու անունը դարձյալ չի նշված և տեղը բաց է թողնված։

916

ՄԵԿՆՈՒՐԻՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 1125 (1432 թ.)

Հետ. ստացող՝ Յովհաննէս Շոռոթեցի

Վայր՝ Շոռոթ

524ա Յիշատակարան սբ. զրոցս

Արդ՝ ես նուաստ և անպիտան[22] սպասաւոր բանի Յովհաննէս անուամբ ևեթ կոչեցեալ բարունի, բայց գործով յոռի, ի գեղաքաղաքն Շոռոթու, որդի տէր Վարդան քահանայի, ի թվին ՌՃԳ (1654) ամին ի դառնալն մեր ի սբ. Երուսաղէմայ, հանդիպեցաք ի Խարբերդ քաղաք կոչեցեալ։ Եւ անդ տեսաք զծերունի վարդապետն Խարբերդեցի Արիստակէս, մականուն Ղարփուզ կոչեցեալ։ Եւ ստացայ ի նմանէ Գ (3) գիրք՝ ի հալալ արդեանց իմոց Գ (3) թումանի, որ է ԾԱ (51) ռեալ զուշ. մէկն այս, մէկն Մեկնիչք Դ (4) դրոց, որ ընդ սմին յԱստուածածնի անապատս եմ եդեալ, յիշատակ հոգւոյ իմոյ. և միւս գիրքն Արարածոց մեկնիչ, մեկնեալ ի մեծ վարդապետէն Վարդանայ, զոր նոու հոգւոյս յիշատակ ի դուռն սբ. անապատիս Շատիկայ, որ եմք բնակեալ ի սմա շնորհօքն Քրիստոսի։ Եւ եդի զսա ընծայ ի դուռն Ս. Աստուածածնիս անապատիս Շոռոթու մնջնչելի յիշատակ, ի վայելումն մանկանց Սիոնի։ Եթէ ոք յիմոց կամ յօտարաց, ի կարդաւորաց կամ յաշխարհականաց հանել ջանասցէ զսա ի դրանէ սբ. անապատէս՝ մասն և

524բ բաժին ի Կայենէ և ի Յուդայէ առցէ, յԳՃ և ի ԺԸ (318) հայրապետացն // նզովեալ և անիծեալ եղիցի և մեր մեղացն պարտական եղիցի. ամէն։

Դարձեալ եթէ ոք զայս յիշատակարանի թուղթս կտրեսցէ և նա ևս յարքայութենէն Քրիստոսի զրկեսցի...։

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զհայրն իմ՝ զտէր Վարդան քահանայն, շինող և պատճառ սբ. անապատիս, և զմայրն իմ՝ զՇենաւոր, զպապն իմ՝ Սոլթանպէկն, և զմամն իմ՝ Մէնրիպանն, զհօրաքոյրսն իմ՝ զկուսակրօն Մարիամն բազմաշխատ և մայրապետ սբ. անապատիս, և զՆզիսաբէթն, նաև զքորսն իմ՝ զկուսակրօն Յուղիտայն մայրպետ անապատիս, և զԳուլբստանն. նաև զեղբայրն իմ՝ զՀայկազն, և զհարսն իմ՝ զԱննայն, և զորդիս նոցա զՎարդանն, զՍոլթանպէկն, զնազարէթն, զՂևոնդէսն և զԵարվէլին. և զդստերսն՝ զՀուտիկն, զկուսակրօն զԵսթերն և զՄարիամն, յիշեցէք...։

917

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1336

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Թովրասկան

ա

55բ Ո՛վ ընթերցողք, յորժամ ընթեռնուք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սբ. մատենիս զՕնոփրիոս վարդապետն, որ եւ գրել զսա, յիշատակ իւրն և ծնողացն՝ մահդասի Խաչումին։ Գրեցաւ սա ձեռամբ

[22] Մինչև այստեղ վերնագրի հետ գրված է կարմիր մելանով։

անարժան և ախմար գրչի Յակոբի, աղաչեմ զձեզ, յորժամ ընթեռնուք զյաւելորդն բառնայք և զթերին լցէք. և դուք վարձն ի Քրիստոսէ առնուք։

Բ

83ա Ո՛վ ընթերցողք, յորժամ ընթեռնուք զսբ. մատեանս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարոն Թորոսն և որդիքն իւր՝ զՅոհաննն և զՅարութիւնն, որ Աստուած ընդ երկար ամս պահեսցէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս միւս եղբայրն իւր՝ զխօջայ Մանուկն և զնորա որդին՝ զԳորգն, որ Աստուած անփորձ և անսասան պահեսցէ որչափ ի մարմնի կան և յետ աստեացս ելանելոյ ընդ սուրբսն իւր դասակից և պսակից արասցէ, հանդերձ ննջեցելօք իւրեանց, որ ետուն գրել զսա հալալ ընչից իւրոց, յիշատակ հոգոց իւրեանց, ի վայելումն Օնոփրիոս կրօնաւորին, որ Աստուած վայելել տացէ. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ Յակոբ գրիչս։

Գ

148բ Փառք...։ Արդ՝ եղև զրաւ և աւարտ սբ. դրքիս, որ կոչի Մոլութեանց, ի թուականութեանս Հայոց մեծաց ՌՃԳ (1654), ի յերկիրս Պարսից, ի քաղաքս Շօշ, որ է Ասպահան, ի գեօղս Թովրասկան, ընդ Հովանեաւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ի բռնակալութեան փոքրիկ շահ Ապասին, և ի հայրապետութեանն Հայոց անշարժ վիմին հաւատոյ, հանդարտախաղաց ծովուն, հա[ս]տահեղոյս և անառիկ պարսպին տեառն Փիլիպպոսի, զի ի մարմնի զվարս անմարմնոց ունէր ստացեալ, հրեշտակաց ցանկալի, մարդկան գովելի և դիւաց սարսելի, վասն զի կայր հիանալի քաղաքավարութեամբ, գործովք վարդապետ էր և քաղցրութեամբ խրատէր, նստեալ ի յաթոռն Թադէոսի սբ. առաքելոյն ընտրութեամբ Հոգոյն Սրբոյ յաշորդ և փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ։ ամէն։ Եւ ի արհեպիսկոպոսութեանս մերոյ վտարեալ աղդիս Հայոց, որ կեամք ի յերկիրս Պարսից տէր Դաւթի և քաղցրաբան վարդապետի, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։

Արդ՝ ո՛վ քրիստոսասէր քահանայք և վարդապետք, ի լուր յիշատակարանիս ուղիղ սրտիւ յիշեցէք զստացող սբ. տառիս, զհեզահոգի և բարեմիտ զխօջայ Թորոսն և եղբայրն իւր՝ զխօջայ Մանուկն, որ ստացան զսա յիշատակ իւրեանց և ծնողացն իւրեանց՝ Աւետիսին և զԱնթառամին, և եղբարցն իւրեանց՝ Մաթէոսին և Թադէոսին, և զպապն՝ իւրեանց՝ զԲոսակ Մելիքին և հանիկն՝ Ազիզխաշին, և զմայրենի պապն՝ Յոհաննին և հանիկն՝ զԽանբէկին, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Թորոսն և զկենակիցն իւր՝ զՄարգարիտն և զմիւս կենակիցն՝ զՄարիամն, և զորդիքն՝ Յոհաննն, Յարութիւնն, Վարդանէսն և Բ (2) Աւետիքն, և զդստերքն իւր՝ Խանբէկին, զԳայիանէն, զՎարթիսաթունն, Հռիփսիմէն, զԱնթառամն, յիշեցէք...։

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զխոջայ Մանուկն, և զկենակիցն՝ զՍալամն և միւս կենակիցն՝ Սղիսաբեթն, և զորդին իւր՝ զԳորգն և Սիմէոնն, և զդստերքն՝ զԳայիանէն, Ղարիպն, Խաթէին, Հեղինարն, յիշեցէք...։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զպարոն Թորոսն և որդին իւր՝ զՅոհաննն, և զկենակիցն իւր՝ զԳուլզատէն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Մանուկն, և զորդին իւր՝ Գէորքն, և զկենակիցն իւր՝ Սալամն, և զնորաբողբոջ հանգուցեալ որդին՝ զՄէլիքն, որ այսմ ամի հանգեաւ ի Քրիստոս, յիշեցէք...։

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զՄաթէոսն, և զկենակիցն իւր՝ զԽոնձաբէկին, և որդիքն՝ Մկրտիչն, Բ (2) Ակոբնանքն և զՈսկանն, և զդստերքն իւր՝ Վառվառն, Ազիզն և զՀոռիփսիմէն. յիշեցէք...։

Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զԹաթէոսն, և զկողակիցն իւր՝ զՇահումսղէն, և զորդիքն իւր՝ զԽաչատուրն, զՆիկողայոսն, և զՅէմինն, և Բ (2) Գրիգորն հանգուցեալ, և դստերքն՝ Վառվառն, Անթառամն և զՀռիփսիմէն, յիշեցէք...։

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զխոջա Թորոսն և զխոջա Մանուկն, և զքեռին իւրեանց՝ զԿարապետն, և զսորին կենակիցն՝ Գայիանէն, և որդիքն՝ զՊողոսն և Զաքարէն, և միւս այլ քեռիքն՝ Ամիրսէքն և զՆահապետն, յիշեցէք...։

Այլ ևս առաւել աղաչեմ զձեզ, հարք և եղբարք և մանկունք Սիոնի, և արտասուօք համբուրեմ զգարշապարս ոտից ձերոց, յորժամ հանդիպիք սբ. գրքիս կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան և զտատանեալս մեղօք Յակոբ գծողս, որ անունս ունիմ և գործս ոչ, այլ անարժան գոլով այսմ արհեստի, բայց շնորհօք Հոգոյն Սրբոյ կատարեցաւ գիրքս։ Դարձեալ աղաչեմ զձեզ, որք ընթեռնուք զսա, յիշելոյ մի՛ մոռանաք զՅակոբ գրիչս, թողութիւն արարէք խոշորութեան գրիս, զի ձմերային գրեցաւ, և միով ողորմայիւ զփափաքս իմ լցէք, և դուք վարձն ի Քրիստոսէ առնուք. ամէն։

Նվիրատու՝ Թորոս

Դ

148բ Արդ՝ ես Թորոսս և Մանուկս գրել տուաք զսբ. գիրքս, որ կոչի Մուլութեանց և տուաք զսա յիշատակ հոգոց մերոց ի ձեռն Օնոփրիոս վարդապետին վախմ։ Մի՛ ոք իշխեսցէ ծախել կամ գրաւել։ Ով ոք յանդգնի ծախէ կամ գրաւէ՝ պատիժն Յուդայի կրեսցէ. ամէն։

Ե

38բ Փառք...։ // [Ա]րդ՝ շնորհօքն Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զսբ. գիրքս որ կոչի[23], ի լաւ և յնտիր օրինակէ, ի մայրաքաղաքս Շօշ, այսինքն է Ասպահան, ի թուականիս Հայոց ՌՃԳ (1654) ամին, և ի հայրապետութեան սահմիս (sic) հայկային տեառն Փիլիպպոսի խարազնազգեաց կաթողիկոսի, և ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասի, և ի հովապետութեանն հօտիս տեառն Դաւիթ արհեպիսկոպոսի և քաջ բարունապետի, հեզահոգի, աստուածարան

[23] Գրքի անունը չի գրված և տեղը բաց է թողնված

վարդապետի։ Գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ անարժան և մեղապարտ զԸ-ծողի[24], որ անուամբս միայն եմ և գործովս թափուր և ունայն, ի գեղս[25], ի դուռն Ս. Աստուածածնիս։ [Ա]րդ՝ ո՛վ հայրք և եղբարք, յորժամ ընթեռնուք զսբ. գիրքս և կամ տեսանէք, յիշեցէք ի Քրիստոս զստացող սորա զԱբրահամն և զհայրն իւր՝ Կոստանդն։ Դարձեալ յիշեցէք զՀէ-ռապետն և զհայրն իւր՝ Մուրատն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴա-ւիթն և զհայրն իւր՝ Թորոսն։ Դարձեալ յիշեցէք զԱրգարն և զհայրն իւր՝ Յովհաննէսն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԹաթոսն և զհայրն իւր՝ Կիրակոսն։ Դարձեալ յիշեցէք զԱկոբջանն և զհայրն իւր՝ Ղազարն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳրիգորն և զհայրն իւր՝ Սարգիսն։ Դարձեալ յիշեցէք Ամիրջանն և զհայրն իւր՝ Յոհանէսն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՆիկողոսն և զհայրն իւր՝ Սարգիսն։ Դարձեալ յիշեցէք Պետրոսն և զհայրն իւր՝ Ասապովն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ղազարն և զհայրն իւր՝ Օվանէսն։ Դարձեալ յիշեցէք զՄուրատխանն և զհայրն իւր՝ Ուսէպն։

[Ո]ր և սոքա միաբանեցան գրել տուին զսբ. գիրքս և ետուն Յոնոփրիոս վարդապետին ի վայելումն անձին իւրեանց յաւիտեանս. ամէն։

918

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Երևան, № 1764

Գրիչ՝ Սարգիս կրօնաւոր

ա

196բ Յիշեցէք յաղօթս ձեր ի լուսաթռիչ զՍարգիս անուամբ համակ կրօնաւոր, և զծնօղս իմ և զամենայն աղքատ ոգիս մեղաց։ Եւ մի՛ մոռանայք զողորմի տալնն, զի և տացի յաննուազ գթութեանցն Աստուծոյ։ Եւ զՎարդան աբեղայ յիշել աղաչեմ կողկողագին կականմամբ և հեկեկանօք...

Յիշեցէք ի Քրիստոս զՎարդան աբեղան։

Գրիչ՝ Սարգիս աբեղայ
Վայր՝ Համիթ

բ

175ա Գրեցաւ արտաքնոց բնաբանս և սահմանաց բնաբանս և այլ բաղում օգտութիւնք մինչև ցայս վայր, թվին ՌՃ (1651), ի քաղաքս Համիթ, ի յիշատակ և ի վայելս անձին Սարգիս բանասիրի և որոց զկնի մեր գան։

Յիշեցէք ի Քրիստոս զիս և զհանգուցեալ ծնողքն իմ՝ զՎարդան, զՍուրաձին, զԳասպար եղբայրս ննջեցեալ, և զկին և զորդիք նորին, և զհոգևոր եղբայրն զՎարդան աբեղայ և զծնողսն յիշեսս ի Քրիստոս։ Եւ դուք և մեք առ հասարակ և որք ի մատեանս գրեցան՝ գրեսցին ի դպրութիւն կենաց. ամէն։

գ

389բ Գրեալ եղև շահաւէտ գիրս նորիմաց բանս սրբոյն Վարդանայ վարդապետի յԱրարածոց մեկնութենէն և այլ բաղում շահաւէտ բանք, հարց

24 և 25 Ձեռագրում գրչի և վայրի անունները չեն գրված և տեղերը բաց են թողնված։

և պատասխան. որ Դ (4) տեսը է նստր՝ ընդդիմադրութիւն ընդդէմ հերձ-
ածողացն. ի թվին ՌՃԳ (1654), ձեռամբ Սարգիս աբեղայի և սբ. կրօ-
նաւորի. ի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց՝ Վարդանին, Սուրահուն և
եղբօրն՝ Գասպարին, և հոգևոր եղբօրն՝ Վարգան աբեղայի[ն], որ ճըշ-
մարտադրեաց։ Յիշեցէք հանդիպողքդ ի տէր Յիսուս...։

Ստացող՝ Սարգիս սարկաւագ

Գ

120բ Ջստացող սորա զապիկար սարկաւագս Սարգիս և զծնողսն իմ յի-
շեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ։

919

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 2424

Գրիչ՝ Աթանաս
Վայր՝ Կարս

ա

102ա Ո՛վ պատուական քահանայք,
ՋՏեառնէ գոհանայք,
Որ այժմ այստեղս հասաք։
Քահանայ ոմն գտաք,
Ի յայսմ արվեստ ընկալաք,
Ջի թողութիւն մեղաց տաք,
Արժանասցի վերին կարգ։

բ

Աթանաս ծառայ նորին,
Գրեալ է ձեռամբ չարին,
Թվիս ՌՃ-ին
Եվ աւելորդ Դ (1654)-ին,
Ի Կարս քաղաքի[ն]։

գ

290ա Ձեռքըս փըտի հողանայ,
Գիրս յիշատակ ինձ մընայ,
Ո՛վ ոք հանդիպի սըմա,
Ասացէք Աստուած ողորմեա։

920

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3873

Գրիչ՝ Մարկոս

196ա Փառք...։ Նոյն շնորհիւն և ողորմութեամբն իւրով եւ կարողու-
թիւն ամենամեղ անձին և անպիտան ծառայի Մարկոսի հ[ասան]ել
յաւարտ այսմ սբ. գրոցս /// զոր արարեալ է սբ. հայր[ն և հայրապ]ե-
տրն մեր Մեսրաւպ և ա/// Մաշտոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մե-

րոյ, [ի թվին] Հայոց ՌՃԳ (1654), ի դուռն Ս. Սարգսի [և Ս.] Յա-
կորին, Ս. Լուսաւորչին և հ[ա]նգուցեալ եկեղեցւոյս Ս. Նշանին, ընդ
նմին և Ս. Ստեփաննոս Նախավկա[յ]ին։ Յիշեցէք ի մաքրափայլ յա-
ղաւթս ձեր զՄարկոս գրիչս, որ զանունս ո[ւ]ն[ի]մ, զգործս ոչ. և
196բ *զծնաւղսն իմ զՄ///, և զհոգոյ մայրս իմ զԹուրան // /// իմ զՄուրատն, և*
զհօրեղբայրն՝ զԳասպարն, որ աւել անունն Պաւ[?]ախ ասի, և զու-
սուցիչս իմ զՍար[գի]ս ս[ար]կաւագն և փոխելոցն առ [Քրիստոս։
Ընդ] նմին աղաչեմ յիշել ի Տէր զա[նարժան] Մարկոս գծող սորա [և
զհոգ]ևոր հայրն իմ՝ զՄելքիսէթ [վարդապե]տն և զԿարապետ վար-
դ[ապետն, որ ե]տ աւրինակ զդիւր Մա[շտոցս։ Եւ որ ա]ռատն է ի
բարեաց /// [ող]որմեսցի ձեզ. յիշ ///

921

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 3647

Գրիչ՝ Մարտիրոս
Ծաղկող, կազմող՝ Մովսէս երէց

ա

167ա *Զ*Մարտիրոս։ *փցուն գրիչ մի՛ մոռանայք, յիշեցէք ի Քրիստոս և*
Աստուած զձեզ յիշէ. ամէն։

բ

7ա *Զսակաւ ծրօղ բանիս զՄովսէս զանպիտան էրէցս և զծնօղսն իմ յի-*
շել աղաչեմ ի Տէր միով ողորմիւ, զյիշօղքդ՝ յիշեալ լիջիք...։

գ

346բ *Փառք...։*

342բ *Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ // Մարտիրոս կղերիկոսի,*
որ էր նա ի յերկրէն Ծագանորոյ, ի գեղջէն Խնծորեկոյ։ Յայսմ աստուա-
ծաշունչ տառիս ցանկացող եղեալ ի Հոգւոյն Սրբոյ եռացեալ, սիրա-
սնունդ և սրբամիտ, ողջախոհ և սրբասնեալ տէր Թադէոս նորընծայ քա-
հանայն, որ և ետ դրել զսբ. Աւետարանս ի Մարտիրոս դպրին, զսեաւ
գիրն։ Եւ եթեր ետ դիս զանարժանս, զհեքգս և զթշուառս զնուաստ ա-
նուն Մովսէս տրուպ ևեթ իրիցուկս։ Եւ ես թաքուրս ի բարեաց գործոց,
մեղսամած մատամբս ծաղկեցի և կազմեցի զսբ. Աւետարանս և զսակաւ
յիշատակարանս ծրագրնցի։ Միթէ քաւի մեղս ի մարմնի, որոյ յիշա-
տակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նոցին Տէրն մեզ ողորմեսցի։
Ի թվին ՌՃԲ (1653)[26] *զստացաւ սբ. Աւետարանս հեզահոգի Թադէոս*
էրէցն ի հալալ ընչից իւրոց, բարի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղացն,
որ էր նա բնական ի յերկրէն Մաղաւզայ, ի գեղջէն Բախիշոյ, որ և ազդ-
343ա *մամբ չարին փախըստեա եղեալ, եկեալ բնակե//ցաւ ի յերկիրս Մա-*
ռա[յ], ի գեօղն Մոս։ Եւ առաջնորդութեանն ի յայսմ նահանկի զտէր
Ստեփաննոս արհեպիսկոպոսն և ժրաեան հովիւն։ Եւ էր սպասաւոր ի
սբ. Դաղի վանիցն և Մարդալաւնեաց Ս. Նշանին։ Եւ դի էր երաշխաւոր

26 Ներքևում նշում է նաև ՌՃԳ (1654)։

և հոգացող ի տէր Թադէոսին՝ հոգևոր, այլ և մարմնաւոր։ Աստուած զինքն անփորձ և անսասան կենաց պահեսցէ ի յաթոռի իւրում մինչ ի խորին ծերութիւնն, և եղ ի յաստեացս ելանելոյ ընդ սբ. հայրապետացն դասեսցէ. ամէն։

Ի հայրապետութեան Աղուանից ի տէր Պետրոս կաթողիկոսի, արի և քաջ նորընծա հայրապետին, և ի թագաւորութիւնն Պարսից փոքր շահ Ապագին՝ նոր թագաւորին։ Ի թվին ՌՃԳ (1654) զստացաւ սբ. Աւետարանս զտէր Թագէոս քահանայն, յոյժ կարօտիւ և փափագանաց, գիմեալ ի
343բ յայն բանն Սողովմոնի, որ ասէ. «Ծրանի...». // և ետ գրել զսա բարի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Ումիտին և մօրն՝ Գուլադին, և մեծ հաւերուն իւրոյ՝ Վալադին, Պողոսին, Մեհրապին, և հօր հաւուն իւրոյ՝ Առաքելին, և հօրեղբօրն՝ Էվազին. ամէն։

Այլ և յիշեցէք զտէր Թադէոսն և իւր մեծ եղբայրն՝ զկուսակրօն Գրիգորն, որ էր անգամալոյծ ոտիւք և ձեռօք. Աստուած իւրեանն արքայութիւն տացէ։ Եւ միւս եղբօրն Պողոսին և հանգուցեալ եղբարցն՝ Պաղտասարին, Էվազին, ամէն։

Այլ և յիշեցէք զԹադէոս երէցն և կողակիցն իւր՝ զՊանին, և դստերացն՝ Մարիանին և Հռիփսիմին, և ուստր Աստուած տացէ. ամէն։

Այլ և յիշեցէք զտէր Թադէոս եղբայր Պողոսն, և իւր ամուսնոյն՝ Մարիանոսին, և որդոցն՝ Վսլատին, Սեւումին, Առաքելին, Էվազ[ի]ն։
344ա Արարիչն Աստուած զկենդանիքն առ//ողջ և անսասան կենաց պահեսցէ...

Այլ և յիշեցէք զտէր Թադէոսի մայր Գուլաղէն, և իւր ծնողացն, հօր Դասբարին, և մօրն՝ Խանբէկուն, և իւր որդւոցն՝ Գրիգորին, Խլին, Առաքելին. ամէն։

Այլ և յիշեցէք զտէր Թաքէոսն և նորաբոյս որդիքն՝ Մովսէսն, և Գրիգորն, և Դասբարն, և հանգուցեալն ի Քրիստոս Դաւիթն, և միւս այլ Դաւիթն. ամէն։

922

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 5350

Ստացող՝ Յոհան Արղնցի
Վայր՝ Կամենից

ա

415բ Փառք...։ Արդ՝ տաց եղբայրութեան ձերում սեռօրէն վիպաբանութիւն վասն Իլովայ եկեղեցւոյն։

Ի թվիս աբեթական ազանց ՌՃ (1651) ամին ելեալ տէր Փիլիպոս կաթողիկոսն ամենայն Հայոց, ճոխ փառօք և երևելի շքով, չոգաւ յԽրուսաղէմ յերկրպագութիւն լուսաբուղխ գերեզմանի Փրկչին և հանդերձ երկոտասան վարդապետօք և յոլով աբեղայիւք, սարկաւագօք և միանձնօք, որոց գրէթէ էին աւելի իւր սեղանակիցք քան զթիւս յիսունից, ընդ որոց գոլով և հուսկս յուսումնասիրաց սպասաւոր վերոգրեալ հայրապետին։ Եւ անդ փայլեցուցեալ բաղում կարգս ուղղութեան Տեառն մերոյ ըստ իւրում սովորութեան, և ես նորոդեաց և գեղեցկացոյց կոփա-

ծու վիմօք զյատակս եկեղեցոյն Սրբոյն Յակոբայ նորակերտ յօրինուածով սալայարկ առնելով։ Եւ ապա դարձեալ յԵրուսաղէմէ նաւու ճանապարհաւ ի Բիւզանդիա և առ ինքն կայացուցեալ զմիաբանսն, յորում ընկալան ստամբոլցիքն զնա մեծաւ ընդունելութեամբ և կատարեալ հնազանդութեամբ։ Եւ կացեալ անդ տեառնս մերոյ ամ մի ողջոյն։ Եւ քարոզեաց նոցա զվարս պարկեշտս և զկրօնս ուղիղս, հանդերձ երեւելի վարդապետօք, հարաշատ եղբարք մերովք, տեառն Յովհաննիսի, Ներսէսի, Յոհաննիսի, Առաքելով և այլ բազում սրբակրօն քահանայիւք։ Ընդ որս և աստ ևս արար շատ շանս և աշխատութիւնս՝ և աղատեաց զեկեղեցիս, որք կային ի ներքո ծանր պարտուց։ Եւ թէ որոց պատճառաց եղեալ էր, թողցուք զնոսա յայլում ժամու լիապէս հատուցման և կամ Տեառն դատաստանի։ Եւ անդէն դարձաւ սբ. հայրս մեր խաղաղական ուղևորութեամբ ի յաթոռն իւր ի Վաղարշապատ՝ ի սբ. Էջմիածինն։ Իսկ զիս[27] զփանաքիս և դձախադիպուածս, զցանկացող այսմ տառիս, յուղարկեաց ի նոյն արքայանիստ քաղաքէ յաշխարհն
416ա Ռու//զաց և Իլախաց, որ է ի կողմանս հիւսիսային, նուիրակ՝ սակս անդ եղեալ ազգիս մերոյ, վասն կրկին պատճառաց, զորոց զտեսութիւնս իւր սեռօրէն տացից եղբայրութեան ձերում։ Զի յառաջ քան զայս ժամանակաւ քսաներորդ չորրորդ ամ՝ ի թվին մերում ՌՀԹ (1630), ի հայրապետութեան սրբազանի տեառն Սովսէսի առն նշանաւորի, Խաչատուր անուն վարդապետ մի, գնաց նուի[ր]ակ ի սոյն աշխարհին Ռուզաց։ Եւ էր ընդ այն ժամանակ եպիսկոպոս յայնմ աշխարհին ազգիս մերոյ ոմն Նիկողայոս անուն, մանուկ տիոք, և էր նա բանիւ արարեալ յումեմնէ Գրիգոր վարդապետէ Կեսարացւոյ Բ (2) ամաւ յառաջ, և էր մեծ խռովութիւն աւուրս այնոսիկ ի մէջ եպիսկոպոսին և ժողովրդեան։ Եւ իբրև գնաց նուիրակն՝ վերոասացեալ տէր Խաչատուր սրբասնունդ և մեծահոգի վարդապետն, կանգնեցան ամենայն ժողովուրդն և ընդդիմացան առաջնորդին և ամենեքիմբ ընկենուլ կամեցան զնա յառաջնորդութենէն, ըստ բնակսն գոռոզ բարուց իւրեանց, իսկ նա էարկ բողոք առ նուիրակն և խնդրեաց դատաստան ըստ աշխարհին սովորութեան։ Եւ որքան ջանայր վարդապետն խաղաղացուցանել զերկուսին կողմունսն, նոքա ևս քան զևս կատաղէին և գրգռէին ի աղմուկն զվարդապետն, զի ի տէր էր խոտորումն նոցին։ Եւ իբրև անհնարին յանձնեաց վարդապետն, թօթափեաց զօձիս իւր և ասաց. «Զինքն անպարտ գոլ յարենէ նոցին»։ Իսկ նոքա կրկին խելագարեալ փակեցին զեկեղեցին ընդդէմ եպիսկոպոսին և ոչ միով իւիք կամեցան զխաղաղութիւն։ Յայնժամ սրտմտեալ եպիսկոպոսն և վիրաւորեալ յոտնահարութենէ նոցին, գնաց յեկեղեցիս Յոանգաց և գրաւեաց զկամս իւր ի ներքո հնազանդութեան Հռոմայ եկեղեցւոյն և խոստացաւ գլխովին գնալ ըստ կամաց նոցին, գոնեա զի յաղթեսցէ ընդդիմակացաց իւրոց։ Յայնժամ նոքա ընկալան զնա մեծաւ սիրով և գունդ կապեալ եկան ի դուռն Հայոց եկեղեցոյն և ասացին երկիցս և երիցս սիրով, եթէ «Բացէք զեկեղեցին»։

[27] Իմա Յոհան վարդապետ Արշնցի (Կամենից, էջ 140). մանրամասն տե՛ս նաև Ա. Դավրիժեցի, էջ 363—389. ԻԸ գլուխը. վերջին երկու էջը (388—389) ծածկում է հիշատակարանին։

Իբրև սոքա ոչ կասեան յապարասան բարուց իւրեանց, այլ ի կայսր
416բ ապաւինեցան, // ի խելս և ի յինչս պանծացան։ Յայնժամ հարեալ մըր-
ջօք խորտակեցին զփակս եկեղեցուն և բացեալ զդուռն մուծին զեպիս-
կոպոսն յեկեղեցին։ Իսկ բամքն որ յայն ժամանակի դատաւորք անուա-
նէին և իբրև զաքաղաղ վիքացեալ ճեմէին հազիւ զերծեալ ծակամուտ
եղեն։ Իսկ եպիսկոպոսն առեալ զնկեղեցին, տիրեաց հանդերձ ամե-
նայն զարդիւք, զոր ունէին ի վաղ ժամանակաց, բաղում անօթս եկե-
ղեցուն՝ ոսկեղէնս և արծաթեղէնս և կերպասեղէնս, նաև գրեանք ան-
թիւք, և ևս ջրաղացս, տունս և աղքատանոցս, զոր ինչ միանգամայն
վերաբերիւր եկեղեցոյն և վանորէիցն, զամենայն ընդ բռամբ արար ե-
պիսկոպոսն և սկսաւ ի ծայրէն ծախել և անցուցանել ի կարիս իւր ըն-
դարձակ գնացիւք։ Իսկ ընդդիմակքն իւր յայնմ աւուր մինչև ցայս
վայր բաղում անգամ ի դրունս արքայի չոգան և բաղում անգամ դես-
պանս առ կաթողիկոսն Էջմիածնա[յ] յուղարկեցին. և բաղում գանձս
աստ և անդ ծախեցին, ամենևիմբ զբանս իւրեանց ոչ կարացին յառա-
ջացուցանել։ Յեկեղեցւոյ անջատեցան և ի տունս անարժանս գաղտա-
գողի կատարէին զխորհուրդս եկեղեցոյ և զկրօնս քրիստոնէութեան,
զմեռեալս իւրեանց ի քուրձ դնելով, գիշերով քաղաքէ ի քաղաք բար-
ձեալ տանէին և զոմանս տարով և երկուքով ի վայտեա տապանի
եղեալ ի տունս պահէին։ Եւ զայլս որոց գոյր կարողութիւն բաղում գանձ
տալով եպիսկոպոսին և հրաման առեալ ի գերեզմանս թաղէին. և այն
ևս ի ծածուկ, իբր զի եպիսկոպոսն և կամ իւրքն մի՛ գնասցեն ի վե-
րայ մեռելոյն։ Եւ զի՞ է ինձ յերկարել զրէթէ աւելի քան զՀրէայսն ի
տառապանս էին ազգ մեր, յեկեղեցական գործառութենէ այսքան ժա-
մանակս։ Իսկ իբրև լցաւ չափ ժամանակին, զի քաղցրացաւ կամք մար-
դասիրին, որ եկն վերոգրեալ սրբազան հայրապետն ի Կոստանդինու-
պոլիս և զկնի տարւոյ միոյ յուղարկեաց զվրիպակս նուիրակ և միջ-
նորդ յերկիրս Իլախաց յաղագս վերոգրեալ սխալմանց երկոցունց կող-
մանց, իսկ եթէ ոյց որոց կողմանց հակամիտ էր ի կողմ ստորասու-
417ա զին // ի Տեառնէ լինելոց է քննութիւն, զի ես փութամ ի համառօտել և
յաւարտել զյիշատակարանս, վասն ի խոր խոցուածոյ սրտիս։ Եւ ես
յորժամ ելի ի Ստամպօլայ իբրև անցի ի սահմանս Լէհացւոց պատա-
հեցաւ ինձ Նիկողայոս վերոգրեալ եպիսկոպոսն, որ երթայր ի Կոստանդ-
նուպոլիս առ հոգևոր տէրն, գոնեայ զի առցէ բուժումն իւրոց վիրաց,
նաև հրաման ևս տիրելոյ ի վերայ ժողովրդեան, որ և եղև իսկ։ Զի գը-
նաց և դարձաւ իբրև զղջացեալ և ի յառաջին սխալանացն, յետս չոգեալ
ըստ հասարակաց կարծեաց, այլայն նա զթերին ևս ելից։ Եւ իմ մնա-
ցեալ Իլով քաղաքի ամիսս ինչ մինչև եկն եպիսկոպոսն, թէպէտ ունե-
լով հրաման ի հայրապետէն, զի երթայցեն ժողովուրդն զկնի նորին։
Բայց նոքա ևս քան դես նղովս կամէին լինել ի նմանէ։ Եւ խստագոյն
երդմամբ յետս չոգէին զմտաւ ածելով զկորուստ զարդուց եկեղեցուն
և հայելով յօտարաշաւիղ և ի զրահետ գնացս եպիսկոպոսին աղէկիզեալ
խորովէին։ Վասն որոյ և իմ աշխատանս յոլովս քարշեալ և թախան-
ձանս յերկուց կողմանց արարեալ, հազիւ կարացաք մուծանել զժողո-
վուրդն յեկեղեցին ընդ եպիսկոպոսին և ցուցին սէր առ միմեանս, թէ-

այէտ ոչ մտերմաբար։ Եւ յետ աւուրց ինչ գործառութիւնք մեր, լուր եղև արքայի, որ էր ընդ այն աւուրս ի Լէվ, Նլնալ պատերազմ ընդդէմ Ռուսաց, յոր և խնդրեաց զմեզ արքայ Նաև Գաժիմիր. և մեք եղաք յանդիման նմա ի սենեակ իւր, առանձին առնելով զմեզ հանդերձ թարգմանաւ միով և արար ընդ մեզ բաղում զրոյցս՝ հեզիկ և մեղմ բարբառով և շնորհուկս եղև մեզ իբրև, թէ զվաղնջաց խռովութիւն խաղաղուցանելոյ, որով և մեք սկսեալ ի գովասանութենէ հանդերձ աւրհնութեամբ վճարեցաք զրան մեր ի շնորհակալութիւնն և երկրպագեալ դարձաք։ Եւ յետ այսմ բանի ևս կացեալ ի նոյն քաղաքի քարողեցաք նոցա ըստ մերում աղքատութեան, որ վասն լեզուագիտութեան և խաղաղութեամբ արձակեալ ի նոցանէ յետ տարոյ միոյ դարձաք ի դղեակն Կամենից. և անդ հանդիպեալ ումեմն բարեսէր քահանայի համանուա-
417բ Ա/նկցի իմոյ տէր Յոհան, արտադրելոյ նա շնորհեաց զայս Սաղմոսի Քաղուածու դիրքս մեզ, որ էր գրեալ իւրով ձեռամբ։ Ընդ սմին և Աստուածաշունչ մի ի լաղին գիր և լեզու և տակաւին սա տետրեր գոլով. յոր և ընկալայ և լցուցի զթերին ևս ի վերոգրեալ քահանայէն և գրեցի զայս սակաւուկ բանքս ըստ նարդեանս ամանակի եղելոյ։ Վասն որոյ աղաչեմ զպատահողդ և զվայելողդ այսմ տառի, յիշել զմեզ՝ զանարժանքս զՅոհան զվերջոտնեալս ի հիւսս բեմբասացած, ի բարեսէր կամս ձեր. ևս և զկրկին Յոհան բաւիչ ընձեռող այսու սուիեստիս, յիշել ի Տէր աղաչեմ, զի և՝ գուք յիշեալ լիջիք յաներեկ աւուրն. ամէն։

Նաև տէր Արիստակէս նորընծայ քահանայ կազմող սորին յայսմ քաղաքին յիշեսցի ի ձէնջ։

Թվին մարդեղութեան Փրկչին ՌՈՆԴ (1654), իսկ ի մերս ՌՃԳ (1654)։

Գրիչ՝ Յոհան երէց

Բ

343ա Ով եղբայրք, յիշեցէք զմեղաւոր, զանարժան զՅոհան էրէցս։

923

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5562 (1402 թ.)

ա

2բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Եղիայ պարոնտէրն, որ արար անջինջ բարութիւն և ստացաւ ոխրը Ս. Գէորգեայ զաւրավարին ի յԵղեգիս[28] զհանգըստարանք ի արտ ներքև ճանապարհին՝ ի Մուրատի յարտէն մինչև ի Գուանեաց ճոթ՝ ներքին արտաճոթեր չորս կտոր՝ երկու դարբին Աւետիսին, իւր հայրենական մուլքն էր, ծախեց Եղիայ պարոնտիրին, և նայ արար ոխ Խնձորուտայ[29] վանից Ս. Գէորգեայ զօրավարին, և երկու ճոթ ի յՈւկուձուայ Գրիգորից գնեց յարջև Արբենից ջրին՝ ի Փառան դրախտի մօտ, և արար ոխ Ս. Գէորգեայ զաւրավարին, ձեռամբ Եղեգեց քահանայից և տանուտերաց՝ տէր Կիրակոսին, տէր Աս-

[28] Գյուղ Վանի Կարճկան գավառում։

[29] Աղթամարի կաթողիկոսութեան Վերին Կարկառի գյուղերից։

պատուրի[ն], և դարբին Աւետիսին, և Ամիրխանին, և Ուկուձուայ Գրիգորին, և Բերկրու տէր Յովանին, և Արբենից տէր Ներսէսին, և ռէս Խաչատուրին, ի թուականութեան Հայոց ՌՃ և Գ (1654) ամին, և ի հայրապետութեան Աղթամարայ տէր Ստեփաննոս կաթուղիկոսին, և ի պարնութիւն շերբնից Զինարբէկին, և ի նայիպութիւն Սակալուայ Իսին[30]: Այս ամենայնի վկայութեամբ գնեց Եղիայ պարոնտէրն զայս արտերս և
3ա արար որդի Ս. Գէորգեա[յ] զաւրավարին, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Միքաելին և մօրն՝ Գուլաղին, և եղբարցն՝ Նոյին և Խաչատուրին, և որդոցն՝ Յուսէփին, Գրիգորին, և դստերացն՝ Խոնոմին, Գոհարին, Ոսկիխատին, և կանանց Խանգաղին և Գաւգալին, և հօրեղբարցն՝ Զաքարին, Մինասին, տէր Յոհանիսին, Սալամին: Եւ որ ասէ նոցա զԱստուած ողորմին՝ Աստուած իւրն ողորմեսցի յահեղ դատաստանին. ամէն։ Եւ ով որ հակառակի և դաւի անէ՝ նայ ի յԱստուծոյ պատժի և պատուհասի, և զանէծք Կայենին առցէ և զպատիժն Յուդայի և զխաչհանուացն կրեսցէ. ամէն. եղիցի, եղիցի։

Բ

Աստուած ողորմի ասացէք Եղիայ պարոնտիրին, որ զՆերքին ջաղցի կանփոց (?) գնեց ի Միրաքից և արար որդի Ս. Գէորգեա[յ] զաւր[ա]վարին. Աստուած զիւր մեղքն թողու և զիւր ծնողացն. ամէն։

924

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5604 (ԺԶ դ.)

213ա Ցիշա[տա]կ է սբ. Աւետարանս մահդասի Ալէքսիանոսին և կողակցոյն՝ Ղզլարպէկէ, և որդոցն՝ Անորէասին և Պետրոսին, ի դուռն Ս. Նիկողայոսին։

Թվին ՌՃԳ (1654)[31]։

925

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6291 (1411 թ.)

19բ Դարձեալ յիշեցէք... Արապոյն, Ափտիսին, Ազատին, Մրքայիլին, Մաթէոսին, Սրայէլին, Խլղայթին, Անտոյնին, Սուքիասին, և իւր տղայոցն՝ Առաքէլին, Մարգարին, Ազատի տղային՝ Վարդանէնին <ի> և իւր մօր՝ Գուլաղին, Փանոսին, Մրքայէլի տղային՝ Միրզային, և իւր կընոջ Գուլալին, և Ազատի կնոջն՝ Նուքարին, և իւր Ափտին, իւր կողակցին՝ Ինախին. և Արապոյն և իւր կողակցոյն՝ Մեղուշին: Դարձեալ յիշէք... Մաւրաղին և իւր տղային՝ Արևին, և իւր որդոյն՝ Գրիգորին, Դալալին, և իւր ծնաւղին՝ Շարուրին:

---

30 Կարդա Ցիսուֆ։

31 Ե. Հալայանը սույն ձեռագրի գրչությունը համարում է ԺԶ դար, և ձեռագրի նկարագրությունից հետո բերում է 1792 թ. երկու հիշատակարան, սակայն սույն հիշատակարանը ծուցակում տեղ չի գտել (տե՛ս ՅՁՎԼ, № 332, էջ 779—782)։

Դարձեալ ողորմի ասացէք Ղազարին *և իւր կողակցին՝* Թուխաշին. *ամէն։ Աբրեխամոյն և իւր կողակցին՝* Ոսկոն, *և իւր տղային՝* Բարսեղին։

Դարձեալ ողորմի ասացէք Վարդանին, *որ ըստացաւ զսբ. Աւետարանս, <իւր> յիշատակ իւր և ծնաւղաց և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Սարգիս. *և թուականիս Հայոց ՌՃԳ (1654) ամին։*

926

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7111

Գրիչ՝ Միքայէլ երէց

218բ *Յիշատակ է սրբազան Աւետարանս* Տաբախմելիքեցի Թուման *մըղդըսոյն և կողակից* Նուշինին, *և որդի տէր* Ներսէսն *և կողակցին՝* Խանումն, *և որդիքն՝* Ասաատուրն *և* Աբրահամն, *և դստերաց իմոց* Սինդուխն *և* Մարիամն Թումիանն, Խանզատէն, *և* Հէրիքնազն *և առ Աստուած փոխեալ* Թումանն *և* Գրիգորն, Ղազարն, *և հօրեղբայրն իմ՝* Յովանէս *և կողակից իւր* Թինաթին, *իւր որդի* Արութիւն, Ալամօն, Շահզատէն, Լալօն, Գուլքանն, Մարիան, Մանժօն *և հօրքուրն՝* Ասքանդարն, *իւր որդի* Ռօստոմն *և* Գասպարն, Բէխօն *և առ հասարակ ամենեցուն զկենդանիս և ն[ն]չեցեալսն...։*

Արդ՝ գրեցաւ սակաւ յիշատակարանս ի թվին ՌՃԳ (1654), ի թագաւորութեան տանս Վրաց Ռօստոմ *խանին, ի հայրապետութեանն սբ.* Էջմիածնոյ Փիլիպոսի։ *Եւ գծող սորա* Միքայէլ *իրիցոյ. ամէն*[32]։

927

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 7112

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ

Վայր՝ Շէնեէր

ա

340ա *Զտարտամս ի բարեաց և զփարթամս ի չարեաց* զԱստուածատուր *գրիչս աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր։*

բ

361բ *Փառք..., որ ետ կարողութիւն տկար հոգոյ* Աստուածատուր *լոկ անուամբ քահանայի և գործով թափուր ի դասուց սրբազան քահանայից, հասանել ի յաւուրս եղանակաւոր տառիս, որ կոչի* Շարակնոց, *ի յընտիր և ի լաւ օրինակէ, յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն իմոց՝*

---

[32] Ձեռագրի գրչության հիշատակարանից առկա է միայն «Փառք»-ի մի մասը (217-րդ բ էջն ամբողջությամբ)։ Հիշատակարանն ինչ-ինչ պատճառներով չի շարունակվել և հաջորդ 218-րդ ա էջը դատարկ է։ Նշանակում է ձեռագիրը գրվել է մինչև 1654 թվականը՝ վերևում բերված հիշատակարանը ձեռագրի գրչության հետ կապ չունի։

Ղազարին և Գուլնիգարին, և կողակցոյն իմոյ՝ Մարիամին, և որդոցն իմոց՝ Մարուրին, Ղազարին, ի խնդրոյ սրբասնունդ դստերն իմոյ՝ Հէ-
ռիքնազ հաւատոր սարկաւագուհոյն, և այլ դստերացն իմ՝ Հռիփսիմին, Սուռին, Գուլասարին, Աննային, ճեղինին, Մարքին և ամենայն արեան մերձաւորացն իմոց. ամէն։ Ի թագաւորութեանն Պարսից Կարմիր գլխոյ
362ա փոքր // շահ Ասլազին, որդոյ շահ Սաֆուն, ի հայրապետութեան սբ. էջմիածնին տեառն տէր Փիլիպոսին, ի առաջնորդութեան սբ. աթոռոյն Ստեփէի առաքելոյն բարունապետին մերոյ տէր Ներսէս վարդապետին, որ յայսմ ամի աջորդեաց զաթոռն սբ. առաքելոյն Ստեփէի։ Խնդրեմք ի բարերարեն յԱստուծոյ ընդ երկայն աւուրս պահեսցէ զնա մինչ ի խորին ծերութիւն. ամէն։ Գրեցաւ սա յամի հ[ա]զարու հարիւր և երեքին (1654), ի գեօղն որ կոչի Շէնեէր, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսին և Ս. Աստուածածնի կուսանաց յանապատին։

Դարձեալ երեսս անկեալ աղաչեմ սիրելի եղբայրք, յորժամ հանգիպիք սմա երդելով և կամ օրինակելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զԱստուածատուր զանպիտան գրիչս և զհոգեւոր վարպետսն իմ՝ զտէր Մովսէսն և զԱրիստակէս վարդապետն։ Ոչ ծուլանալ, այլ խնդրել թո-
362բ ղութիւն մեղաց // մերոց ի Քրիստոսէ փրկչէն մերմէ, զի զանց արասցէ աղօթիւք ձեր և զձերն ոչ յիշէ ի յաւուրն ահեղին. ամէն։

928
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 7113

Գրիչ՝ Եղիայ
Վայր՝ Հալիձոր

362բ Փառք..., // որ ետ կարողութիւն փանաքի և տկար անձին հասանել ի յաւարտ սբ. տառիս, որ կոչի Շարակնոց։ Արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Էնանան, ի գիւղս Հալիձոր, ի դուռն սբ. անապատիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Ստեփաննոսիս և Ս. Մինասիս։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. մանկունք սբ. Սիոնի, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմաքրամիտ և սրբասնունդ Միքայէլ միայնակեացն և զհոգեւոր հայրն ///ն, որ է հարազատ հայր և հոգաբարձու սբ. ուխտիս, և մայրապետ սբ. կուսանոցիս Հռիփսիմէն և Մախմոռն, և մարանպետ Ուսաիանէն և ամենայն միաբան ժողովելոցս և բարդեալ բնակելոցս ի սմա, կուսից և պառաւաց խնդրեալ ի Տեառնէ, զի կատարումն սոցա ի բարին եղիցի ի Քրիստոս Յիսուս, զի Տէր մեր որում փառք յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և եղեռնագործ, թշուառ անձին
363ա Եղիսաբեթ[33] /// անձուկ ժամանակիս, վասն բազմանալոյ // անաւրէնութեան։ Ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի, ընդ հովանեաւ Ըստաթէի եպիսկոպոսութեան տէր Ներսէսին, ի թվականիս Հայոց ՌՃԳ

---

[33] Ձեռագրում գրված է հապավված՝ «Եղի» ձևով։ Մատենադարանի ձեռագրաց Ցուցակում հարցականով կարդացվել է «Եղի[սաբե՞թ]» (հտ. Բ, էջ 463)։

(1654)։ Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զբարեմիտ եղբարսդ, որք աւգտիք ի սմանէ երգելով կամ աւրինակելով, յիշեցէք և թողութիւն մեղաց խընդրեցէք զանազան մեղօք խոցոտեալ հոգոյս, զի և դուք լինիջիք յիշման արժանի ի Քրիստոսէ...։

929

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 7140

Գրիչ՝ Մարկոս սարկաւագ

ա

299ա *Ո՛վ եղանակաւորք, յիշեցէք զյեղկելի, զտատանեալ գրչիկս զՄարկոս սարկաւագն, և զծնողն իմ առ հասարակ. յիշողսդ՝ Աստուած յիշէ։ Թվին ՌՃԳ (1654)*[34]։

բ

369ա *Փառք...։ Գրեցաւ եղանակաւորս ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի երիցս երանելոյ և երկրորդ լուսաւորչի ազգիս, և յառաջնորդութեան նահանգիստ Պարսկաստանի Դաւիթ արքեպիսկոպոսի Ջուղայեցւոյ, և ի թագաւորութեանն Պարսից շահ Ապազին՝ երկրորդին, ընդ հովան[ե]աւ Ս. Աստուածածնին, ի թվականիս Հայոց ՌՃ և [Գ] (1654)-ին։*

Նաև զիս զանարժ[ան] և անարհեստ գրչիկս զՄարկոս սարկաւագն յիշել աղաչեմ, որ տեղեակ մատեամբ գրեցի զսա, անմեղադիր լերուք սակս պակասութեան սորա թէ՛ գոյն, և թէ՛ խազին, և թէ՛ զոր ինչ պատշաճիր գտանի ի սա, զի կարն իմ յայսչափ էր։

369բ *Եւս առաւել աղաչեմք, մանկունք սբ. եկեղեցւոյ, որ բոլոր սրտիւ հայցմամբ խնդրել ի Քրիստոսէ սակս, զոր ասէ մարգարեն «Երանի...» զոր և եհաս Ղղձից իւրոց կատարմամբ սբ. գրոցս։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զվայելողսդ և հանդիպողսդ այսմ գրոց զՖարղուզատ, որ ըստացաւ զսա ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց և ազգատոհմին իւրո[յ]. ամէն։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՖարղուզատն, և զհայրն՝ Ասատուրն, և զմայրն՝ Թանկազիզն, և զորդիքն՝ Ղազարն, տէր Սարգիսն, Մուրատն, Նասղիաէն. և զքուերքն՝ Ազիրմինդուիւն, Ասթանդարն, Սինդուխն, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ֆարղուզատն, և զմեծ պապն՝ Մատուրն և զկողակիցն՝ Սանդուխն, յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՂազարն, և կողակիցն՝ Մար-
380ա *դարիտն, // և որդին Սեխանէն, դուստրն՝ Խանփարին, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ասատուրն և իւր կողակիցն՝ Թուրվանդէն, յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Սարգիսն և զկողակիցն՝ Նուրիջանն, և որդին։

---

[34] *Սույն ձեռագիրն ընդօրինակել են Աստվածատուր (1644 թ.) և Մարկոս (1654 թ.) սարկավագները։ Առաջինի հիշատակարանը տեսնել 1644 թ. շարքում։*

930

Երևան, Ն 7583 (ԺԳ դ.)

Նորոգող, կազմող՝ Յովանէս
Վայր՝ Սովուիշորայս

272ա *Փառք...։ Վերտին նորոգեցաւ քառաբուղիս աղբերս Եղեմայ և կազմեցաւ ձեռամբ մեղսաներկ Յովանէսի, ի վայելումն մանկանց Սիոնի, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի ամենայն Հայոց կաթողիկոսի և յարհիական եպիսկոպոսութեան յայսմ նահանգի տէր Գրիգոր արհի եպիսկոպոսի և ի թվականութեանս Հայոց ՌՃԳ (1654) ամի։*

Արդ՝ ստացաւ զսա ի հալալ ընչիցն և ի յարդար վաստակոցն իւրոց Պէյմէլիքն և եղ յիշատակ յանառիկն Սիոն, յիշատակ իւր հոգւոյն և առն՝ Մինասին, որդւոյն՝ Աստուածատուրին և դստերացն իւրոց՝ Այիզպիքային, և Մարիամին, և Այպիքային, և իւր ծնաւղացն՝ Խաչկինային
272բ *և Խասպիքային և ամենայն արեան // մերձաւորացն, և եղ զսբ. Աւետարանս ի դուռն Ս. Աստուածածնին, յիշատակ անջնջելի ի Սովուիշորտի գիւղն։ Արդ՝ մի՛ ոք իշխեսցէ ի յաղդականաց իւրոց առնուլ զսա և ծախել և կամ դրաւ դնել։ Եւ թէ ոք ձեռնամուխ լինի յանդգնութեամբ՝ պատժի ի յԱստուծոյ և ի Տիրամայր Ս. Աստուածածնիս բարեխաւսութենէն զրկեսցի...։*

931

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Ն 7698

Գրիչ՝ Նիկողայոս

293բ *Փառք..., որ զտկարութիւնս իմ զաւրացոյց յաւետ իւրոյ իմաստութեանն, վասն որոյ և ես մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառս հոգեշունչ աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս...։*

294բ *Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թվաբերութեանս ասքանազեան և աբեթական տօմարի ՌՃԳ (1654) և ըստ նորումս շրջանի ԼԹ (39), և ի գալստենէ Կենարարին ՌՈՄԷ (1657), ի յստոյգ և լընտիր*
295ա *աւրինակէ, ևս առաւել համաբայիցն, զի գա//ղափար սորին էր ի դրբանէ Ս. Սարգիս զաւրականին, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշէն և աստուածապահ քաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ բարձրակառոյց և կամարակապ աւագ եկեղեցոյս, որ յանուն Սրբոյն Սարգսի զաւրաւարին և որդոյ նորայ Մարտիրոսին։ Ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսւսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, ըստացաւղ սբ. Աւետարանի[ս], զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։*

Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի... սբ. Աւետարանս, շորեք ճառագայթեան...։

295բ *Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկա-*
296ա *ցող եղեալ տէր Գրիգոր // արհի եպիսկոպոսն ետ գրել զսբ. Աւետա-*

բանս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղաւթս ձեր տէր Գրիգոր արհի եպիսկոպոսն և զծնաւղսն իւր, զհայրն՝ զՍարգիսն և զմայրն՝ զԳաւճարմելիքն, և զեղբայրսն՝ զՍաֆարն, զՍուլթանշան և զՅովհաննէսն, և զքւերքն՝ Խանիպիֆայն և զՇաճրին, և զեղբարց որդիսն՝ զԼուսպարոնն, և զՂազարն և զամենայն արեան մերձակայսն, զայժմուս կենդանիքն և զկանխաւ զննջեցեալքն։

296բ *... // Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք զվերոյ դրեալքս ի սմա և զիս զՆիկողայոս մեղաւոր գրիչ և զուսուցիչն իմ՝ զտէր Զաքարիայ սրբազան քահանայն, որ բազում աշխատանք կրեց ի վերայ մեր, տէր մեր Յիսուս Քրիստոս իւր փոխարէնն ընդ սբ. քահանայիցն ի միասին տաց։ Նաև զտէր Յովհաննէս քահանայն յիշեսջիք, որ սբ. Աւետարանիս գործառութեանն նա ևս աշխատանք կրեց, փոխարէնն ի Քրիստոսէ առնուցու։ Եւ զմարմնաւոր ծնաւղսն իմ, և զեղբարքս, և զքորքքս, և զամենայն մերձակայսն իմ...։*

932

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8106 (ԺԶ դար)

Զամենավրէպս Յովաննէս աղաւթս այց առնել մաղթեմ.



35 *Թիւ էր։*

933

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8131

Գրիչ՝ Յովաննէս

87ա *Անարժան Յովաննէս գրիչս յիշեսջիք ի Քրիստոս։ Թվին ՌՃԳ (1654)։*

934

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 9288

Գրիչ՝ Ալիքսան երէց

106բ *Զմեղուցեալս ծառայ ծառայիդ Աստուծոյ և զմեռեալ հոգիս և ի սրտէ խոցեալ գրչիս, մեղսաներկ Ալիքսան իրիցոյ, աղաչեմ յիշել միով Տէր ողորմիւ, զուսուցիչս, և զծնաւղս, և զամենայն արեան մերձաւորքս, և Աստուած յիշողացդ ողորմեսցի...։ Թվին ՌՃԳ (1654)։*

---

35 Կարդացվում է «զթվին ՌՃԳ» (1654)։

935
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9122 (ԺԳ դ.)

ա

312ա *Դարձեալ յիշեցէք զԱրիստակէս եպիսկոպոսն, որ ի թվին Հայոց ՌՃԳ (1654), յոյս ի յԱստուած եդեալ և սկսաւ նորոգել մեծ գմբեթ կաթուղիկէին Սրբոյն Սահականնոսի, բարձրաբերձ և սրբատաշ յօրինուածով, այլ և ղսաղեր Բ (2) գմբեթաց և ղդարիսպն շրջապատ և զաղբիւրն բարեհամ և զմեծ դարկան կամարակապ և երկաթապատ դռներովն և ղտնտեստունն խցներովն, այլ և զտեղի խոտաճարակ ճգնաւորացն խոյակ[ապ] (?) եկեղեցի և զայլ խախտեալ տեղիս նորոգեաց, զոր տէր Աստուած ամենայնի տացէ վարձս ըստ վաստակոց իւրոց. ամէն։*

Նվիրատու՝ Արիստակէս եպիսկոպոս

բ

Նաև Արիստակէս եպիսկոպոսս ստացայ զսբ. ժամագիրգս և եդի յիշատակ ի գուռն Ս. Կարապետի, այլ և ընդ սմին ստացայ և ազատեցի զգրաւ դրեալ գրեանս սբ. տանս՝ և Ասմաւուրք մի, և զՀեթում բարեպաշտ թագաւորի խազին սբ. Աւետարանն պատեալ և զարդարեալ ներ-
312բ *սքոյ և արտաքոյ զանազան յօրինուածովք և ոսկեխուռն երանգօք, ընդ նոսին և փոքր մագաղաթ Աւետարան մի նոյն գունակ և ոճով, և Բ (2) վառի խաչ և սէրռանկ շուրջառ մի և այլ բազում անօթք, որք էին գրաւ և գերի ի ձեռս այլազգաց։ Եւ իմ բաղում աշխատութեամբ ազատեալ զսոսա և անդրադարձեալ վերստին ազատեալ զսբ. գրեանքս, եդի յիշատակ ի դուռն Ս. Կարապետին ի փրկութիւն հոգւոյ իմոյ. ամէն։*

936
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9798

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

298ա *Փառք...։ Վասն որոյ և ես մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառս հոգեշունչ աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր ամենասուրբ հոգին հանգչելով...։*

299ա *Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թուաբերութեանս ասքանաղնսն և աբեթական տաւմարի ՌՃԳ (1654) և ըստ նորումս շրջանի ԼԹ (39) և ի գալստենէ Կենարարին ՌՈՄԷ (1657), ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ես առաւել համաբայիցն, զի գաղափար սորին էր ի դրանէ Ս. Սարգսի եկեղեցոյ, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշէն և աստուածապահ քաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զօրեղ զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին։ Ի հայրապետութեանն*

299բ Հայոց տեառն Փիլիպպոսի // և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։ Ի յայսմ ժամանակի դրեցաւ ամենագովելի և դերահռչակելի... սբ. Աւետարանս չորեք ճառադայթեան...։

200ա Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկացաւղ եղեալ աստուածարեալ և պատուական այրն պարոն Ուլուխանն և ետ դրել զսբ. Աւետարանս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ գաղափառ առնլով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղաւթս ձեր զպատուելի և քրիստոսասէր որեարն զՈլուխանն կոչեցեալ և զծնաւղսն իւր,

300բ զհայրն իւր զխոճայ Միրիճանն և զմայրն իւր՝ զՇահումաղէն // և զնախնի ծնողսն իւր՝ զհայր հօր իւրոյ զխոճայ Անդրէասն, և զհանիկն իւր՝ Զասլիզասն, նաև զհօրեղբայրն իւր՝ զԱռաքէլն և զհամօրէն ազգատոհմսն, և զառտնիսն զկենաց կցորդսն, իսկ և զնորաբողբոջ և զդեռաբուսիկ զորդեակն իւր՝ զԱնդրէասն, և զորս Տէր պարգևեսցէ, և զամենայն արեան մերձաւորսն զայժ[մ]ուս կենդանիսն և զկանխաւ ննջեցեալսն...։ Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահա-

301ա նայիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք զվերոյ գր//եալքս ի սմա. և զիս զՆիկողայոս մեղաւոր գրիչ, և զուսուցիչն. իմ՝ զտէր Զամարիայ սրբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ և ճշդրտիւ, զմեղաւորս հասոյց ի յայսմ արհեստի, զոր տէր մեր Յիսուս Քրիստոս իւր փոխարէնն ընդ սբ. քահանայիցն տացէ։ Նաև զմարմնաւոր ծնաւղս իմ և եղբարքս, և զքորքս, և զամենայն մերձակայսն իմ։ Եւ յիշէ սրտի մտաւք, և ինքն յիշեալ լիջի առաջի ահեղ ատենին Քրիստոսի...։

937

ԱՒԵՏԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 61 (մանրաժապավեն, Երևան, № 520)

Գրիչ՝ Սարգիս

Վայր՝ Կ. Պոլիս

Փառք...[36]։ Աստանաւր ժամանեալ եղև կատարումն սրբազան մատենիս և աստուածաբան Աւետարանիս, որոյ նշանակութիւնն յանուանէ իւրմէ անտի ճանաչեալ յայտնի է... // ...։

Արդ՝ զրաւ հասեալ և յանկ ելեալ աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թուաբերութեան և ի շրջագայութեան հայկազան տումարի ՌԾԳ (1654) ամի, ձեռամբ Սարգիս անիմաստ գրչի, առ դրան տաճարի Սրբոյն Սարգսի զաւրավարի, յարքայանիստ և ի կայսերաբաղմ գահոյս, ի գերախումբ մայրաքաղաքաց ի մեծ Կոստանդնուպօլիս, յիշխանութեանն ազգին ագարացոց, սուլտան [Մուհամեդ][37] մանուկ տիօք թագաւորի, և յառաջնորդութեան քաղաքիս Յովաննէս վարդապետի. այլ ի հայրապետութեանն, որ ի սբ. էջմիածին, տեառն Փիլիպպոսի սրբափայլ և երիցս

36 Ձեռագիրն էջահամար չունի։ Հիշատակարանը գտնվում է ձեռագրի վերջում։

37 Անունը ջնջված է։

երանեալ դիտապետի, որ ընդ ամենայն տիեզերս, որոյ վիպասանութիւն սրբութեան և մաքրութեան գովասանութիւնն ոչ է մեզ յանկ և ի ճահ ընդ գրով արկանել, այլ // գերագունիցն թողցուք պատմաբանել զայն, զոր տէր Աստուած մեր հաստատուն պահեսցէ ընդ երկայն աւուրս. ամէն։

Բայց զի սովորութիւն է արանց աստուածասիրաց և բարեպաշտօն քրիստոնէից միշտ զերկայնոցն խոկալ և յայն վարժիլ... այսմիկ ցանկացեալ եռափափագ սիրով և յօդնատարափ ըղձիւ քրիստոսասէր և մեծ ազգի այրս այս Յակոբ դպիր, որ էր երբեմն լեալ յԱկան գաւառէ, և ստացեալ զսա ի հալալ ընչից և արդեանց իւրոց և ետուր մեծածախ զարդարել զանազան ոսկոյ որակութեամբ և պէսպէս դունաւք և ծաղկաւք ոսկեաւ հանդերձ, քաղցրահայեաց դիմաւք ի տեսութիւն բազմաց սակս յիշատակի հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց, հաւրն՝ ծերացելոյ և մեծաշուք պանծացելոյ մահտեսի Վանուսի և մահտեսի Շաղա//տային, և քրւերցն՝ Քնարին, Դշխոյին և Մարիամին, և կողակցին՝ Գոնարին, և ծաղկափթիթ որդոյն՝ Յովանէսին, և դստերն՝ Մարթային և հանգուցեալ զաւակացն՝ Յովանէսին, Սառային, Մկրտիչին, Ղուկասին և Մարտիրոսին, և համաւրէն շառաւիղաց նորին։ Եւ եդ յիշատակ ի դուռն սբ. եկեղեցոյն, որ յանուն մեծաց հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի կառուցեալ է ի Կոստանդնուպալիս։ Բայց աղաչեմ զամենեսեանդ, որք հանգիպեալ պատահիք սմա տեսանելով և կամ գաղափարելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ ասացեալ ստացող սբ. Աւետարանիս զՅակոբ դպիր, հանդերձ ծնօղիւք և ամենայն ազգատոհմիւք և ասացէք Աստուած ողորմի...։

938

ԱՒԵՏԱՐԱՆ

Չիկագոյի համալսարան, № 234 (մանրաժապավեն, Երևան, № 607). տե՛ս նաև Ճանիկյան, № 41, էջ 95

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

173 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Ստամպօլ, որ է Կոստանդնուպօլիս, Բիւզանդիա, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, և թվականիս Փրկչին[38] ՌՃԳ (1654)-ըն, ձեռամբ[39] սուտանուն Յովանէս դպրի, զոր և յիշել զիս առ Տէր մաղթեմ։

Այլ և արդ՝ յիշեցէք զմահտեսի Ղազարն և զիւր եղբայր զՓիլիպոսն, զծնօղսն՝ մահտեսի Պետրոսն, մահտեսի զՄարիամն և զիւր որդիքն՝ զՅակոբն և զԹաթէոսն, և զկողակիցքն իւրեանց մահտեսի Վասվառն և զՕղիտայն և ամենայն արեան մերձաւորաց, որ եգեալ են յիշատակ յԱկնայ քաղաքն, ի գիւղ Կարուշլայ, ի դուռն սրբոց անարծաթ բժշկացն՝ Կոզմայի և Դամիանոսի[40]։

---

38 և 39 Այս երկու բառն այլ ձեռագրով գրված է ուրիշի կողմից։ Փրկչական ՌՃԳ-ն սրիալ է, այն պետք է ընդունել Հայոց թվական։ Այդպես է գրված հաջորդ ծանոթագրության մեջ։ Ճանիկյանի մոտ «Հայոց ՌՃԳ»։

40 Հիշատակարանը շարունակվում է 1681 թ. նորոգման հիշատակությամբ. «Վերստին նորոգեցաւ ի թվականիս Փրկչին ՌՃԼ (1681) ոգոստոսի ԻԴ (24)։

939
ՇԱՐԱԿՆՈՑ

Չիկաղոյի համալսարան, № 275 (մանրաժապավեն, Երևան, № 608)

Գրիչ՝ Աստուածատուր երէց
Վայր՝ Կ. Պոլիս

365ա Փառք..., որ ետ ինձ զօրութիւն հասանել յաւարտ ցանկալի // և
365բ փափագելի աստուծային գանձուս և հոգևորական երգոյս։ Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ մեղաւոր և անարժան գրչի Աստուածատուր երիցուն, ի Կոստանդնուպօլսի, ի դուռն Ս. Սարգսա[յ] զաւրավարին, ընդ հովանեաւ սրբոյն. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃԳ (1654)։ Կրկին աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, յորժամ հանդիպիք սմա տեսանելով կամ աւրինակելով կամ ուսանելով միով ողորմեալի յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ. ամէ[ն]։

940
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան (լուսանկար № 170)

Վայր՝ Ըստանոս

13 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի գաւառիս Սեբաստիոյ, ի գիւղն որ կոչի Ըստանոսի, ընդ հովանեաւ Ս. Թէոդորոս վկային, որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ աւարտել զսբ. Աւետարանս ի լաւ և ընտիր աւրինակէ, ի թվաբերութիւնս Հայոց Ռ և ՃԳ (1654) ամին։ Արդ երեսս անկեալ աղաչեմ զձեզ. հարք և եղբարք, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան դրիչն իմ ղծնաւղսն իմ, և զուսուցիչն իմ՝ զՇամլուն. և որ յիշէ...։

941
ԺԱՄԱԳԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչիարք», հտ. Ա, № 817

Գրիչ՝ Թադէոս դպիր
Վայր՝ Շոնոթ

223բ Փառք...։ Կատարեցաւ աստուածազարդ և ծաղկաւէտ տառս մատամբ փծուն դրչիս՝ սուտանուն Թադէոս դպրիս... ի յերկիրս Սրընչակ, ի գիւղաքաղաքս, որ կոչի Շոնոթ, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի արհի եպիսկոպոսին՝ տէր Արիոտակէսին...։

942
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչիարք», հտ. Ա, № 818

224ա Եւ դարձեալ Աստուած ողորմի ասացէք խոնարհ Սարուխանին և Տի-

բամբ[41] *առ հասարակ ժողովրդոց, զի միարանեալ ի միասին վերակացութեամբ տէր* Մեսրոպին *վերստին ի հմանց զժամատուն շինեցին, թուին ՌՃԳ (1654)։*

943
ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 821

Գրիչ՝ Մարտիրոս քահանայ
Վայր՝ Դաշտ

224բ *Փառք... թուական ՌՃԳ (1654) գրեցաւ գիրքս* Մոկս, *ի գեօղս, որ* Դաշտ *կոչի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ և* Կեցնայ *Ս. Աւետարանի և Քառասուն մանկան Ս. Նշանի, ձեռամբ անարժան* Մարտիրոս *քահանայի...։*

944
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 822

Նորոգող՝ Թումայ երէց

225ա *... Արդ՝ նորոգեցաւ գիրքս յերկիրն* Բասենու, *ի վանս Ս. Աստուածածնին՝ բարձրահայաց և գմբէթայարկ, յառաջնորդութեան տեղւոյն* Աւտիս *արհի եպիսկոպոսին* Բաղիշեցւոյ, *որ մականուամբ* Կորեկոնց *ասի, ձեռամբ սուտանուն* Թումայ *երիցու նորոգեցաւ ի թուին ՌՃԳ (1654)։*

945
ԴԻՈՆԷՍԻՈՍԻ ԱՐԻՍՊԱԳԱՑԻՈՑ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅՆՈՅՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ

Տիրայր վարդապետ, № 90

Գրիչ՝ Բարսեղ վարդապետ

ա

1699 *Զի որպէս ուրախութիւն է աշխատողաց առնուլ վարձս և նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել, նոյնպէս և գրչին՝ ի վերջին կէտն։ Վասն որոյ գոհացողական ձայնիւ փառք, պատիւ և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և անսպառ յաւիտեանս. ամէն։ Որ ետ կարողութիւն կարէվէր խոցելոյս* Բարսեղի
1700 *պիտակ անուն բանի սպասաւորին, հասանել ի վերջին գիծ տառիս // սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացոյ աստուածաբան վարդապետի։ Որ յոքնատենչ փափագանօք գծագրեցի զսա ըստ իմում կարի. և յաւելի զգիծ մատինս զգիրքս զայս, ի գանձ սբ. եկեղեցոյ, ի յիշատակ ինձ և բարեխօս առ Քրիստոս։ Սա ինձ սրտի հարազատ, որ միշտ յիշեսցէ զիս առ Աստուած և թողութիւն մեղաց իմոց խնդրեսցէ։ Նաև աղաչեմ*

---

41 Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է, որ եկեղեցին գտնվում է Վանում։

զհանդիպողսդ սբ. դրոցս և ոյք ընթեռնոյք զսա կամ օրինակէք, յիշեսջիք յաղօթս ձեր զմեղսաթաւալ ոգի նուաստ Բարսեղ վարդապետս, և զծնողսն իմ՝ զտէր Ստեփաննոսն, որ մականուամբ Ձիգ ասի, և զմայրն իմ՝ զԱննային և զամենայն արեան մերձաւորս իմ։ Եւ որք յիշեն սրտի մտօք՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ ի միւսանգամ գալստեան նորա, որ է ուրհնեալ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ թուին, որ ի ծննդենէն Քրիստոսի ՌՈԾԴ (1654) և Հայոց ՌՃԳ (1654)[42]։

Բ

Աղաչեմ զհանդիպողսդ սբ. գրոցս յիշել զԲարսեղ գրիչս[43]։

946

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տիրայր վարդապետ, № 103

Գրիչ՝ Մարկոս

ա

1830 Որոց աղօթիւքն ողորմի ստացողի գրոցս պարոն Ուլուխանին, հայրըն՝ Միրջանին, եղբայրն՝ Հայպաթին, որդին իւր՝ նորաբուս, դեռաբողբոջ Անդրիասն, և զիս՝ մեղաւոր Մարկոս գրիչս, որ փոքր ի շատէ աշխատեցաք ի վերայ սորա. թվին ՌՃԳ (1654)[44]։

Բ

Լի սրտիւ ասացէք ստացողի գրոցս ողորմի խոջայ Ուլուխան[ին], և որդին պարոն Անդրիասն[45]։

947

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տիրայր վարդապետ, Man. № 23

Գրիչ՝ Յովհաննէս երէց

Վայր՝ Արզրում

327 Գրեցաւ սակաւ պատմութիւնս ձեռամբ սուտանուն մեղաւոր Յովհաննէս երիցուս, ի քաղաքս Կարնոյ, որ այժմ ասի Արզրում. թվին ՌՃԳ (1654)։

---

42 Ինչպես հաղորդում է Տիրայր վարդապետը, այս ձեռագիրը բաղկացած է երկու մասից «ա. մասը ՌՃԺԳ (1664). բ. մասը ՌՃԳ (1654)», էջ 1652, 1699։

43 Ցուցակում նման երկու հիշատակարան էլ կա։

44 Գլխավոր հիշատակարանը խիստ ավերված է. այդ վիճակով այն չվերցրինք։ Կարելի է ենթադրել, որ ձեռագրի հիմնական գրիչը Մարկոսը չի եղել, գլխավոր հիշատակարանում կարելի է կարդալ «ձեռամբ [մեղաւոր Դաւ]թի դպրի»։

45 Ցուցակում կան նման մի քանի հիշատակարաններ ևս։

948
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՅԶՄՎ, № 391 (ժն դ.)

Հետ. ստացող՝ Պետրոս կրօնաւոր

844 Արդ՝ ի վերջին և յերեկոյացեալ ժամանակիս ես՝ Պետրոս կրաւնաւորս ստացայ զգիրք, որ կոչի Սաղմոսարան, և ձեռամբ իմով նորոգեցի զսա, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց՝ հօր իմոյ Ասլանին և մօր իմոյ Բեկիջանին, եղբարց իմոց Պօղոսին և Աստուածատուր դպրին, և քրւերն իմոյ՝ Գոնարին և ամենայն արեանառու մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի... ողորմի ասացէք անարժան Պետրոսի և ծնողաց իմոց և որ առատ է ի տուրս բարեաց ձեզ առ հասարակ ողորմեսցի. ամէն։ Ի թվին ՌՃԳ (1654)։

949
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՅԶՄՎ, № 528

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Եդոկիա

999 Փառք..., որ ետ կարողութիւն տկար մարմնոյս... Պետրոս անպիտան և անարժան գրիչս։ Արդ՝ դրեցաւ եղանակաւոր և շարունակ քաղցրահամ և անուշահոտ կտակս այս, որ կոչի Զայնաքաղ, ի քաղաքս Եւդոկիա, և այժմ տաճիկ բառով ասի Թոխաթ, ի վայելումն[16]. ի թագաւորութեանս Տաճկաց սուլթան Մանամմատ, և ի կաթուղիկոսութեանն էջմիածնայ տեառն տէր Փիլիպոսին, ի թվաբերութեան հայկազնեայ տումարին ՌՃԳ (1654)։ Որք հանդիպիք սըմա տեսանելով, ուսանելով և բան ինչ ի սմանէ աւգտելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՊետրոս փծուն ղրիչս և զծնաւղսն իմ և զայլ ամենայն արեան մերձաւորքս մեր՝ զկենդանիս և զհանգուցեալս...։ Ով պատուելի հայրք և եղբայրք, մի՛ մեղադրէք Զայնքաղիս այլայլելոյս, զի շարականն խա-
1000 ցակէի (SIC) և զտէրունին և զսրբոց // յիշատակն մինչ որ մէկ մէկի միջէ գտնէի, նայ բազում անդամ բանն ի բանէն կտրեր է և ի մէջ ժողովրդեանն ծաղր և նախատինք եմք եղեալ. եթէ հաճոյ թվի ձեզ ըստ Տեառն շնորհ։

950
ԱՒԵՏԱՐԱՆ
ՅԶՎՍ, № 173 (մինչև 1654 թ.)

ա

725 Փառք...։ Արդ՝ ցանկացող եղև սբ. Աւետարանիս աստուածասէր և բարեպաշտ, հեզահոգի վաճառականն Զուղայեցի Ջամալէնց պարոն Պօղոսն։ Եւ ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգ-

16 Ստացողի անունը չի նշված և կիս տող դատարկ է թողնված։

ւոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ խոճայ Գրիգորին, *և մօրն՝* Մուրասային, *և կողակցին իւրոյ՝* Վառվառին, *և որդւոյն՝* Յարութիւնին *և* Աղափիրոյն, *և դստերն՝* Էյլիջանին, *և ամենայն արեան մերձաւորացն։ Զի*
726 *արծաթապատ կոստխեաց // զմագաղաթ ոսկիատուփ սբ. Աւետարանս, և ետ ի դուռն Երևման Ս. Խաչ եկեղեցւոյն, ի գեղեցկաշէն քաղաքն* Վենետիկ, *ի թուականութեան ազգիս մերոյ Հայոց հազարերորդի հարիւրերորդի երեքերորդի (1654), ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնայ տեառն* Փիլիպպոսի՝ *երիցս երանեալ, սրբազան, ընդհանրից կաթողիկոսի։*

Հետ. ստացող՝ Ջամալէնց Պօղոս

Բ

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսերամ քահանայից և մանկունք սբ. եկեղեցւոյ ..., որք հանդիսիք սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ տեսանելով, յիշեցէք զմեղօք զառածեալ նուաստոգի Պօղոս *վաճառականս, և զծնողսն իմ, և զամենայն արեան մերձաւորսն իմ ի մաքրափայլ աղօթս ձեր և լիով սրտիւ ողորմի ասացէք. իսկ ողորմածն Աստուած զձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրում և նմա փառք յաւիտեանս. ամէն։*

Դարձեալ երեսս անկեալ աղ[աչ]եմ զձեզ, դի զգուշութեամբ պահել զսբ. Աւետարանս ի հրոյ և ի ջրոյ և ամենայն փորցանաց։ Եւ դարձեալ մի՛ ոք իշխեսցէ ձեռնամուխ լինել սբ. Աւետարանիս և կամ հանել ջանայ զսա ի քաղաքէս Վենէտիկու *և ի դրանէ Երևման Ս. Խաչ եկեղեցւոյս. զի որք լրբին և անդգնութեամբ առնեն՝ այնպիսիքն զմասն ի Յուդայի առցեն և զպատիժս ի Կայէնի, և ընդ սեղանակողոպտ քահանայիցն դասեսցին. ամէն։*

Գրիչ՝ Սահակ Թոխաթեցի

Գ

Արդ՝ ես նուաստ Սահակ *Էրէցս հրամանաւ երջանիկ հայրապետին մերոյ տեառն* Փիլիպպոսի *սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, կացի ի* Վենետիկ *երեք ամ և վեց ամիս՝ առ ի քահանայագործութիւն Հա-*
727 *յոց վաճառականաց և սպա//սաւորութիւն Երևման Խաչ եկեղեցւոյս, որ և վասն եկեղեցւոյս բաղում նեղութիւն և վիշտս կրեցաք ի ձեռն սուտ*
728 *և խաբեփա հերձուածողի միոյ. վերջն // ամօթալից և փախստական կորեաւ. վասն որոյ աղաչեմ յիշել զԹոխաթեցի* Սահակ *Էրէցս, որ փոքր ինչ պատճառ եղէ [ի] գնելն սբ. Աւետարանիս։*

951
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏԱՍ, № 61

Գրիչ՝ Մուրատ
Վայր՝ Հալապ

127 *Փառք..., որ ետուր կարողութիւն ապիկար անձին իմոյ և չընչին ծառայի քո, նուաստ* Մուրատ *գրչի հասանելի ի վճար՝ գրոցս, և շնոր-*

հեցեր ինձ տեսանել զաւարտ և զկատարումն իմոյ, աջողմամբ։ Վասն որոյ փառք քեզ և գոհանամ զքէն։ Արդ՝ գրեցաւ ժամագիրքս ի մայրաքաղաքս ի Հալասլ, ի դուռն Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս և այլ սրբոցն, որ կան աստ մեզ ի օգնութիւն։ Եւ եղաւ յիշատակ ի դուռն Ս. Աստուածածին եկեղեցոյս, յիշատակ յաւիտենական։ Զոր ետ գրել զսա վարպետ Սուլէյմանն, և մատոյց Հօրն երկնաւորի, զպատուական գիրքս որով փառաբանի ամենասուրբ Երրորդութիւնն, ե պատուին ամենայն ընտրեալք, յիշատակ անշնչելի վարպետ Սուլէյմանին, և կողակցուն՝ Փիրիխանին, և որդոցն՝ Նամդալային, Ներսէնին, Ֆարեալին և Աբդլսուլթանին, և դստերացն՝ Խաչխաթունին, Սաֆարիէին, Մարիամին և Անենային, և ծնօղացն, հօրն՝ Մանթուխին, և մօրն՝ Թուր-
128 վանտին և եղբարցն՝ Մկրտչին և Խաչատուրին, և քւերցն՝ // Մարիամին, Ֆարեային և Աղրլպնաթին, և ամենայն մերձաւորացն, զոր տէր Աստուած ընդունելի արասցէ և տացէ վարձս երախտեաց իւրոց։

Եւ որչափ ի մարմնի են խաղաղական կեանս պարգևեսցէ և անփորձ ի չարեաց պահեսցէ զՍուլէյմանն, և զկողակիցն, և զորդիքն իւր, և զամենայն արեան մերձաւորսն. և յետ աստեաց ելանելոյ յերկնից արքայութեանն և անթառամ պսակին արժանաւոր արասցէ փրկիչն մեր Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ գիրքս ի թվականիս Հայոց ՌՃ և Գ (1654) ամին, ի թագաւորութեանն սուլթան Սուլեամատին, և իշխանութեանն յայսմ քաղաքիս Իփշիր փաշային, որ զՃտէյտի խանն և զայլ շինուածսն շինեաց գեղեցիկ և հաստատեաց աղբիւր գեղեցկաշէն ի յարևմտեան կողմ շինուածոյն։ Եւ կաթուղիկոսութեան սբ. աթոռոյս Կիլիկիոյ տեառն տէր Ներսէս քաջ բաբունապ[ետ]ի, որ բազումհոլով աշխատանս կրեաց վասն ազգիս մեր. և ուղղեաց ըղկարգս և զսահմանադրութիւն եկեղեցականաց, զոր տէր Աստուած մեր ըստ խոստման իւրոյ տացէ նմա զվարձսն։ Եւ յառաջնորդութեան յայսմ նահանգի տէր Խաչատուր վարդապետի, ժիր և արթուն դիտապետի, որոյ հաստատութիւն տացէ Քրիստոս Աստուածն մեր և ձեռնտու լիցի նմա յամենայն գործս քաղաքավարութեան իւրո[յ] և արժանի արասցէ՝ ասել «Ահաւասիկ ես և մանկունք իմ» ամէն։ Արդ՝ ով մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք յայսմ տառի, յիշեցէք զգծող սորա զՄուրատ գրիչս, և զհայրն իմ՝ զտէր Ղազար քահանայն՝ զքաջ քարտուղարն, և զմայրն իմ՝ զՄարիամ, և զսիրելի եղբայրն իմ՝ զՊաղտասար սարկաւագն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, և զմիւս եղբայրն իմ՝ զՍարգիսն, և զորդեակն իմ՝ զԵղիա պատանին, զոր խնդրեմք ի Տեառնէ, զի պահեսցէ զսա ի կամս իւր և ի մխիթարութիւն մեզ. ամէն։ Եւ լի բերանով ողորմի ասացէք ինձ և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ամէն։

Դարձեալ յիշատակ է ժամագիրքս Սուլէյմանին, ի դուռն Ս. Աստուածածնին, ի մայրաքաղաքս ի Հալասլ։ Զունի ոք իշխանութիւն ի ազգականաց կամ յաւտարաց, հանել զսա ի դրանէ Ս. Աստուածածին եկեղեցոյս, ոչ գրաւել կամ ծախել կամ այլ պատճառաք առնուլ...։

952

ՏՕՆԱՅՈՅՑ, ՇԱՐԱԿԱՆ, ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ

Մշեղ, V, № 1676

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Եդեսիա

ա

534 *Յիսուս Քրիստոս արքայ երկնի,*
Սբ. Յարութեանդ աներեկի,
Արժան արա գրիչս եղկելի,
զՄկրտիչս ողորմելի։
Եւ զվարժապետն իմ պանծալի,
ԶՍարգիս կրաւնաւորն Եդեսացի,
Որ և հոգով զիս ղիեցոյց,
Ուսմամբ երկաւք խրատեալ լըցոյց,
Լիցի արժան քոյին փառաց,
Եւ անթառամ սբ. պըսակացն։

բ

Փառք եռակի Աստուածութեանն,
. . . . .
Այս մատենիս աստուածաբան,
Զանազանեալ ականցս որ կան,
Տէր Ներսէս եպիսկոպոսն,
Որ ցանկացող եղև սորայն։
Փափաքեցաւ իբր զեղջերայն,
Յաղբերըս ջուրց անմահական,
Ետ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացըս օթարան,
Ես ի բարի գործոցս ունայն,
Մկրտիչ դպիրըս անպիտան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
535 *Հոգովս յաւժար և ժրական,*
Բազում ջանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լըման։
Ի թվականիս արեթական,
ՌՃԳ (1654) ամեան,
Աւարտեցաւ սա ի լըման,
Տառս, որ կոչի Շարոց ական։
Ի քաղաքիս Եդեսիա,
Որ արդ Յուրհա ասի սորա,
Ընդ հովանեաւ Աստուածածնին,
Բարձրահայաց սբ. տաճարին,
Սբ. դաստառակըս Քրիստոսին,

Եւ Ս. Ակոբն հրաշալին,
Սբ. Գուրիասն Սամոնին,
Եւ Աբիբասն որ ընդ նոսին,
Ս. Սարդսի զօրավարին,
Աբրա Եփրեմ վարդապետին,
Եւ այլ սրրոցն որ աստ յիշին,
Յոր պարփակիմք ընդ հովանին։
Արդ՝ աղաչեմ արտասուաթոր,
Ըղպատահողդ տառիս բոլոր,
Ըղուսուցիչն իմ հոդեոր,
Ըզտէր Սարգիսն կրաւնաւոր,
Յիշել ի Տէրն երկնաւոր,
Հայցել ղմեղացն սրտիւ բոլոր։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Հայցեմ բառնալ զաւելորդն սորայն,
Զմեղապրել սրխալութեանն։
Զի կարրն մեր էր այսքան,
Տեառն են շնորհք, մեք անպիտան,
Միշտ ասայէք ղՏէր ողորմայն,
Եւ յետ նորա ըղՀայր մեղայն[47]։

* * * *

953

ԲԱՆՔ ՁԱՓԱԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Մշբեղ, VII, № 2345

Գրիչ՝ Կիրակոս դպիր
Վայր՝ Ըռատաւզ

476 Փառք...։ Արդ՝ դրեցաւ սբ. լուսաւոր բանս՝ Յիսուս որդիս, ասացեալ շնորհալից տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի նուէր մաղթանաց, ի թվաբերութեան հայկազան տումարի ՌՃ և Գ (1654), ի քաղաքս Ըռատաւզ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Յովհանեսի, և ի հայրապետութեան էջմիածնայ[ց] սբ. աթոռոյն տեառն Փիլիպոսի։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. մանկունք եկեղեցւոյ, յիշել ի սբ. և ի մաքրափայլ յազօթս ձեր զանպիտան և զկարի վա[տ]թար գրիչս՝ զԿիրակոս դպիրս, որ բազում աշխատութեամբ գրեցի զսբ. գիրքս, յիշատակ ինձ և ծնօղաց իմոց՝ խոճայ Փանոսին և մօրս՝ Խանպէկէ, և եղբարցն իմոց՝ Խաչատուրին և Պաղտասար չէլէպուն, և ընկերոշն՝ Խանզատէ, և քուրվտոցս՝ Հռոփսիմին, Աննային և Շուշանին, և այլամենայն առուարեան մերձաւորացն իմոց՝ կենդանեացն և ննջեցելոցն։ Եւ եղի յիշատակ ի Ս. Յոհան եկեղեցիս։ Այլ ոչ ոք չունի իշխանութիւն ի դրանէ սորայ հանելոյ և կամ գրաւելոյ։

[47] Զափածոյի ընդհանուր հենքը համապատասխանում է № 43 հիշատակարանին (տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620), հտ. Ա, Երևան, 1974, էջ 41—42)։

Արդ՝ կրկին աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, զթողութիւն մեղաց խնդրեցէք և Աստուած ողորմի ասացէք ինձ մեղապարտ գծողիս և վերոյ յիշեցելոցս...։

954

ԺՈՂՈՎԱՆՈՒ

Մ3266Գ, VIII, № 2417

Գրիչ՝ Եղիսաբէթ
Վայր՝ Սաղիան

՝ա

58 Ես՝ մեղաւոր Եղիսաբէթս գրեցի Աղօթամատոյցս յոյժ փափագանօք, վասն երջանիկ բաբունի հօրն իմոյ վարդապետին։ Յիշեա զիս ղմեղօք լցեալ եղկելիս. թողութիւն շնորհեա անգիտութեանս և սղալութեան դրոյս։ Երանի իմաստուն մարդոյն, որ յոյսն առ Աստուած է։

Բ

Ոհ սուտ կենցաղս, տէր Աստուած ազատեա զիս։

Գ

Բազում յոյժ փափագանօք դրեցի զայս Աղօթամատուցս, աչացս լոյս, քաղցրիկ հօրն իմոյ քաջ բաբունապետին Եղիեայ վարդապետ, ծառայ եմ քեզ, յորժամ մատուցանես աղօթս՝ յիշեա զեղկելի Եղիսաբէթս։

Դ

Ով սբ. պատարագիչք և սբ. քահանայք և վարդապետք, ընտրեալք Աստուծոյ, յորժամ մատուցանէք զբազկատարած պատարագն, յայնժամ յիշեսջիք զհանգուցեալ հայրն իմ՝ Շաղպաթն, և աշխատաւոր մայրն իմ՝ Գայիանէն, և զեղկելի մեղաւոր Եղիսաբէթս, և Աստուած ողորմի ասացէք մեր հոգոյն. ամէն։ Եւ Քրիստոս Աստուած իւր առատ ողորմութենէն ձեզ պարգևէ...։

Յօժար կամօք և ըղձմամբ սրտիւ գրեցի գիրքս այս վասն երջանիկ և բաբունապետ եղբայրն իմ՝ Եղիեայ վարդապետին Աստուած վայելում տացէ աստ...։

Թողութիւն արէք խոշորութեան դրոյս և սղալութեանս, որ խիստ ի տրտում և տարակուսեալ, նեղ և անձուկ ճանապարհի, մոլորեալ ե[մ] մտօք։ Վայ ինձ, վայ իմ կենացն, ինձ համար սուտ եղև կենցաղս։

Ե

Ծառայ եմ քեզ աչացս լոյս, եղբայր իմ բաբունի վարդապետ, թողութիւն արայ սխալութեանս և խոշորութեան գրոյս, որ խիստ էի մտօք մոլորեալ և տարակուսեալ, վայ ինձ։

Զ

Զվարանեալ մեղօք գրչակս, ով հայրք և եղբայրք, մի անտես առնէք, աղաչեմ արտասուօք, և բեկեալ սրտիւ խնդրեմ ի ձեղանէ, յորժամ բազմիք բազկատարած յաղօթքդ, յայնժամ յիշեսջիր զծնողքն իմ. ամէն։

Է

Ով Եղբայր, դիտացիր զի Ի (2) տօն այլ կայ սբ. Աստուածածնին և զնոսա ի տեղն գրեալ եմք. և յորժամ հանդիպին նոքա և սոքա, պարտ է պաշտմամբ և պատարագօք կատարել, զի տէրունի են. և զսոցա ճաշոյքն նոցա խրատովն արա։ Եւ մեղապարտիս Աստուած ողորմի ասայ. և թողութիւն շնորհեցէք մեղաւորիս, մեղայ Աստուծոյ։

Ը

Տէր Աստուած արարիչ իմ... ողորմնա ինձ մեղաւորիս, մի կորուսաներ զիս. և քո անարատ ձեռացդ ստեղծուածն եմ, պահեայ զիս անարատ մինչ ի վախճան իմ. վայ իմ մեռանելոյն։

Թ

Փառք..., որ ետ զօրութիւն իմոյ կրկնակի տկարութեանս, հասանել ի յաւարտ այսմ լուսափայլ, անդին մարգարտիս, որ և [զ]Աղօթամատոյց կոչի։

Արդ՝ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃԳ (1654), ձեռամբ բարեաց հեռացօղ, չարին յոյժ հետաղօտաւղ, Տեառն օրինաց դոլ դատօղ, [զ]Եղիսաբեթիս, որ միայն անուամբ կամ լոկ և ոչ գործօք բարեաց։ Արդ՝ կաթոգին պաղատիմ, որք լուսաւորիք սովաւ, ուսմամբ կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի Քրիստոս զգձաւղ տառիս հանդերձ ծնողքն, ասելով ի խորոց սրտէ թէ տէր Աստուած ողորմեա նոցա...։

[Գրեցաւ] ի դեաւղս որ կոչի Սաղիան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս։ Հայրապետութեան ազգիս Հայկազնեայ տէր Փիլիպպոսի, ի հայրենի աթոռն պատր[ի]արգանիստ նահանգի սբ. յէջմիածինն: Եւ ի խանութեան մեծաբախտ Մրեռալոյ, որ էր յիշխող և պէկլարպէկի հիւսիսայնոյ, որ այժմ Շուվան Շամախի բազմաց աշխարհաց ձայնի։ Ի խնդրոյ և ի հրամանաւ ստացողի սորին տեառն Եղիայի, տիեզերալուր վարդապետի[48]։

955

ՍԱՂՄՈՍ

Մշեկ, հ. IX, էջ 229

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Սամբոլ

406 Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի քաղաքն Սամբոլ, ձեռամբ Յակոբ դպրի, ի թվականիս մերո ՌՃԳ (1654) ի խնդրոյ ոմն Զուղայեցոյ..... փափագանաւք...։

---

[48] Շարունակությունը կորած է։ Ցուցակում կա այսպիսի ծանոթագրություն. «այսչափ շարունակությունը կորսուած՝ թերթ ինկած ըլլալուն» (էջ 59)։

956
ՇԱՐԱԿՆՈՑ
ՑՁՍԳ, № 128

Գրիչ՝ Բարդամ
Վայր՝ Քանավայ

79 Փառք..., որ ետ կարողութիւն տկար և տարտամ անձին իմոյ, սուտանուն Բարդամ գրչի Նոր քաղաքացւոյ, հասանել յաւարտ տառիս, որ կոչի Շարակնոց ի լաւ և յընտիր յաւրինակէ։ Հրամանաւ և արդեամբք տէր Աւետիս քահանայի Նուռկիացւոյ, որ ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն. որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ Արդ՝ գրեցաւ Շարակնոցս թվին Հայոց ՌՃԳ (1654), ի Նոր քաղաք, որ ասեն Քանավայ, աղաչեմ և ես նուաստ գրիչս անմեղադիր լինել սխալանաց գրիս և խոշորութեանն, քանզի հանց նստեալ էաք ի տանի, որպէս զբու ի յաւերակի, ի յահէ այլազգացն, որ են սարուճաքն, Աստուած պահէ ի փորձանաց։

957
ՃԱՇՈՑ
ՑՁԱԲ, № 155

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

770 Փառք..., զոր դիմեալ մեծաւ յուսով բարիարմատ շառաւեղ հաւատարիմ պարոն Զաքարիայ Ղալֆան, և կամեցաւ զաստուածաշունչ տառս զայս տանալ, ի միտ առեալ զբանն Եսայեա[յ] որ ասէ. «Երանի...» վասն այն յուսոյն և տէրունական հրամանին, սերտ սրտով և բոլոր հաւատով, ետ գրել զսբ. գիրքս և զաստուածաշունչ տառս, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Գրիգորին և Բատիկին, և մեծ պապոցն՝ Զաքարիային և Ոսկուրլուին, և մեծ մամոցն՝ Շէնիրիսանին և Մուրլուին, կողակցին՝ Եզիսաբեթին, և որդոյն՝ Յովան[ն]իսին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, և եղբարցն՝ Պողոսին և Եղիսային, Սանակին և Աստուածատուրին, և քրւերցն՝ Կուլիստանին և Նազլուին, հօրեղբօրն՝ Մանուկին, և հօրաքրւերն՝ Մանուշակին, աներոջն՝ Պալէ, և զոքընչին՝ Փաշային, և որդւոց նորին՝ տէր Սարգսին, Մելքոնին և Քընարին, և կնքահօրն՝ Պապուկին և Մարգարտին, և ամենայն արեան մերձաւորացն։ Եւ եդ յիշատակ ի քաղաքն Գաղատիայ, ի վանքն Ս. Աստուածածնայ, ի խնդրոյ քաջ ռաբունոյն՝ տէր Միհաս վարդապետին, որ էր առաջնորդ այս Ս. Աստուածածնայ վանացս։ Զի յայսմ ամի հանդիպեալ ի Կոստանդինուպոլիս, ի յԸստամբոլ քաղաքս, վասն պակասու-
771 թեան վանացս, և խնդրեաց զաստուածաշունչ տառս // ի Զաքարիայ Ղալիֆայէն, և նա փութով կատարեաց զխնդրուածս վարդապետին, զոր տէր Աստուած իւրեանն հաստատութիւն և արիութիւն տացէ և անփորձ պահեսցէ, որ զՍ. Աստուածածնայ վանքն շէն և հաստատ պահեսցէ ի պարծանս հաւատացելոց. ամէն։ Արդ՝ որք ճաշակէք յամէնաուատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, և հնդիպիք տեսութեան սբ. գրոյս, կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսա-

նելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, առաջի անարիւն զենմանն, ի ժամ սոսկալի սբ. պատարագին, լի բերանով և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի զբրոցս՝ Զաքարիայ Ղալիֆային և վերոյ գրեալ անուանցս, որ կան ի սմա։ Եւ որք յիշէք և լի բերանով ողորմի ասէք, նա ինքն ողորմած և մարգասէրն Աստուած, ողորմեսցի ձեզ յիւր միւսանգամ գալստեանն։ Եւ որ հաւատով ամէն ասասցէ և նա մասն և բաժին ընկալցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքն յԿոստամբոլ, ի դուռն Ս. Հրեշտակապետ եկեղեցոյս, ի թվականիս Հայոց ՌՃԳ (1654), ձեռամբ մեղսաթաւալ և փծուն գրչի Արիստագէս իրիցու, ի հայրապետութեանն սբ. Էջմիածնայ՝ տէր Փիլիպպոս ամենայն Հայոց կաթողիկոսի և ի մերոյս
772 առաջնորդութեանն Կոստանդնուպօլսի՝ տէր Յով[ն]աննէս քաջ // բարբունոյն, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ զինքն. ամէն։

Եւ արդ ունի զընթերցումն բովանդակ սարոյն, զեղեալ ընթերցուածն Հոփոբայ և Կիւրղի, և զ[յ]ինանց կարգն, զդործքն և զկաթուղիկէն, և զտօնից տէրունականաց և զյիշատակ սրբոցն, զկիրակէից և զշաբաթապահոց, զշորեքշաբաթու և զուրբաթու և որ սոցին...։

Եւ արդ Երես ի դեռին դնելով աղաչեմ, զմանկունսդ սբ. եկեղեցոյ, զհանդիսողքդ այսմ տառիս, յիշեսջիք զստացող սորա՝ զԶաքարիայ Ղալիֆան...։ Ընդ նմին և զիս՝ զմեղօք զատածեալ գծողս զԱրիստագէս երէցս միոյ Աստուած ողորմիի արժան առնիջիք։ Եւ այն որ առատն է ի տուրս բարեաց և ողորմութեան, ողորմեսցի ձեզ յիւր միւսանգամ գալստեանն, ամէն։

958

ԱՒԵՏԱՐԱՆ

ՈՃՁՄՎ, № 931

Գրիչ՝ Կատարինէ
Վայր՝ Թաղավարդ

ա

516 Փառք...։ Որ և ցանկացաւղ եղև սբ. Աւետարանիս սրբամիտ և աստուածասէր քահանան զտէր Սարգիսն. զի լիցի յիշատակ իւրն և իւր հօրն՝ Քամալին, և մօրն՝ Եթարին, և եղբարցն՝ Առաքելին, Աւաքին, Գրիգորին, Ղազարին, և քերցն՝ Շահումին, Շամամին, Մարգարիտին, և որդւոցն՝ Ներսէհին և Մելքեթեկին, և կողակցին՝ Հռիփսիմին։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՌՂԹ (1650) թուին[49]։

[49] Ցուցակում ձեռագրի ընդօրինակության սկիզբը ՌՂԹ (1650) թվականի փոխարեն նշված է ՌՃԹ (1660)։ Ստացվում է, որ Ավետարանը սկսել են և ավարտել ՌՃԹ (1660) թվին (տե՛ս հիշատակարան բ-ն, ներքևում), որից էլ 5 տարի հետո՝ 1654 թ. կազմել են։ Հավանաբար գրիչը անուշադրության պատճառով ՌՂԹ (1650)-ի փոխարեն գրել է ՌՃԹ (1660), կամ այդ սխալը տեղի է ունեցել ցուցակի տպագրության ժամանակ։ Ինչպես էլ եղած լինի այն, մենք ՌՃԹ (1660) թվականն ուղղեցինք ՌՂԹ (1650)։

Աւարտեցաւ սա ձեռամբ անարժան և մեղսանենգ և վիրաւոր և տառապեալ հոգւով Կատարինիս, ի երկիրս Վարանդու, կաթողիկոսութեան Աղուանից տեառն Պետրոսին, և եպիսկոպոսութիւն տէր Յովանիսի, և թագաւորութիւն շահ Ապազին, և իշխան՝ մալիք երկրիս մէլիք Բաղին, և խոստովանահայր սբ. անապատի, որ մերձ գօղաքաղաքիս Աւետարանոց, և զՏէր Առաքեալն և միաբան քոյրք վանացս զկուսանուհին Գայանէն, որ եղև ծաղկօղ սբ. Աւետարանիս և համաշիրակ, ընկերակից քոյրն իմ՝ զՀռիփսիմէն, որ է մայր սբ. անապատիս։ Արդ՝ հետ աւարտման սբ. Աւետարանիս Ե (5) ամ եկաց սայ [առանց] կազմելո[յ] և ապա կազմեցաւ թուին ՌՃԳ (1654)։ Եւ դարձեալ աղաչեմ, աղաչեմ, որք հանդիպիք սմա կարդալով կամ ուրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ և տեառնամերձ յաղօթս ձեր զզարիպս կրկին զարիպացեալ հոգւով և մոխ[ր]աթաւալ և հոգո[յ] հաւասար Կատարինէս և զմայրագութ և սենդամայր վարպետն իմ՝ զՄարիամ կուսանուհի, զոր սնոյց զիս և կարդացոյց բազում աշխատութեամբ և յետ իւրոյ աշխատութեանն ետ զիս ի ձեռն տէր Աստուածատուր քահանային վասն շարականի և դիր ուսուցանելոյ, որ էր խոստովանահայր անապատին Շէնեհերու, զոր և ուսոյց զիս իբրև զմայր մանկան իւրո[յ] բազում, բազում աշխատանաւք, զոր և տէր Աստուածն ամենայնի ինքն հատուսցէ զվարձս աշ[խ]ատանաց իւրոց հայրախնամ քաղցրիկ տէր տէրն իմ զտէր Աստուածատուր քահանայն, որ է նա բնիկ երկրէն Վանա[յ] և Մարիամ վարպետն էր երկրէն Նախջավանու ի գօղն որ կոչի Դարաշամբ[50]։

Բ

Ո՛վ եղբայր, աւարտ Աւետարանիս եհաս աւրս երեքշաբթի ամիս ահի, թուականս ՌՂԹ (1650), տարոգիրն Ռ-ն, տանուտէր տարոյն Ցուլն, ի յերկիրս Վարանդու, ի գեաւղս Թաղավարդ. և ես մեղաւք ներկեալ գրիչս զարիպ, կրկին զարիպացեալս, աղաչեմ զձեզ, յիշել գրչուկս միով Տէր ողորմի, հանդերձ հայրագութ տէրտէրին իմ զտէր Աստուածատրի, ևս առաւել անյիշատակ ծնաւղօք իմ. ամէն։

Գ

Ո՛վ եղբայր անմեղադիր լերուք, զի համարս յետ կազմելոյն գրեցաւ, թողութիւն հայցեցէք սևերես մեղաւորիս, ո՞հ սատանայի ձեռն։

Դ

Ո՛վ որ հարցիս ի սբ. տառիս,
Ցիշմամբ կարդաս յիշատակիս,
Նա մի ածես դու եղկելիս։

Նաև զհայրագութ և մայրասնունդ տէրտէրն իմ՝ զտէր Աստուածատուրն։

---

50 Ոսկյանը հաղորդում է, որ հիշատակարանը «կը մնայ թերի»։

959
ՏԱՂԱՐԱՆ
ՈՏՁՄՎ, № 1002

Գրիչ՝ Յովանէս

ա

559 *Փառք... թվականիս Հայոց ՌՃԳ (1654) դրեցի ձեռամբ բազմամեղ* Յովանիսի. *աղաչեմ երեսադեմին դնելով մէկ Հայր մեղայիւ մի յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն. ամէն։ Ո՛վ եղբայրք, անմեղադիր լերուք գրիս խամութեան և ցածութեան, զի կար մեր այս է։*

բ

Աղաչեմ զձեզ եղբայրք, երեսադեմին դնելով անկեալ աղաչեմ, երբ հանդիպիք յայսմ սակաւ բանի ինձ մեղաւորիս անարժան հող և մոխիր սուտանուն Յովանիսի, *ասացէք Աստուած ողորմի, բազում փափագանաւք ըսկսեալ եմ՝ ես սայ...։*

գ

Մեղաւոր գրիչս Յովանէս *յիշեցէք։*

դ

Ես եղաւոր Յովանէս *թվին ՌՃԳ (1654)։*

ե

Յիշատակ է այս Հերիսաի դիրքս՝ Խոնեէկիվեանց *մահտիզի* Մարտիրոսի *որդոցն է։*

զ

Յիշատակ է այս քաղցրիկ տաղարանս վասն հերիսի ասացեալ Ղօնչիկիվեան *մահտեսի* Թորոս *ամիրայի որքի* Միքայէլին։

է

Յիշատակ է գրգուկրս Խոնեէկիվատէ Մելքոն *աղի։*

960
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
ՈՏՁՄՎ, № 894

ա

479 *Ո՛վ քահանայք և վարդապետք, յորժամ հանդիպիք սբ. գրոցս տեսանելով կամ կարդալով, յիշեցէք ի Քրիստոս զբարեպաշտ և զաստուածասէր կինն* զՇահում *և զծնողսն իւր՝* Ամրիխանն *և* զէքարն, *և զկենակիցն՝* զԹասալին, *և զորդիքն՝* զՄսրն *և* զԽսախանն *և* զԱռաքելն, *և զթոռունքն՝* զԹադէոսն *և* զՎասվառն *և զմիւս* Խսախանն։ *Արդ՝ յիշեցէք և լի բերանով ողորմի ասացէք* Շահումին *և իւր ննջեցելոցն, որ ստացաւ զսբ. գիրքս իւրն անմահ որդի և ետ յիշատակ ի ձեռն* Առաքել *վարդապետին, որ հանապազ յիշէ յիւր աղօթքն և պատարագն։ Եւ դուք հանդիպողք, հաստատուն յուսով և հաւատով Աստուած ողորմի ասացէք* Շահումին *և իւր ընտանեացն և ողորմածն Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի աստ և ի հանդերձեալն. ամէն։*

Բ

Նվիրատու՝ Շահումի

Արդ՝ ես Շահումս գնեցի զգիրքս և վասն իմ հոգոյս փրկութեան և յիշատակի ետու զգիրքս Առաքել վարդապետին. այսուհետև ոչ ոք հրաման և իշխանութիւն չունի վասն այս գրոցս. որ գաւի անէ կամ յետ առնու, որ իմ կամաւս տուի Առաքել վարդապետին ոչ յօտարաց և ոչ յիմ ընդանեաց և ազգականացն...։ Գրեցաւ ի թվին ՌՃԳ (1654)[51]։

Դարձեալ յիշեցէք զՇահումն և զիւր հարսն՝ Զուլալն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Գ

Ստացող՝ Ղազար

Եւ ես անարժանս և տրուպս յամենայնի Ղազար, որ ցանկացայ նորաստեղծ բուրաստանիս՝ ոդեալ ի Գրիգորէ վասն մանկանց եկեղեցւոյ. յերեսս անկեալ աղաչեմ զընթերցողսդ յիշեցէք զվերոյ ասացեալ զՂազարս առաջի զենման դառինն...

Գրիչ՝ Սարգիս

Դ

Ով տէր Ղազար մարրամիտ զսակաւ դիրս ընկալ և զեղկելի Սարգիս յիշեա։

961

ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

ՔՅԶԶՎ, № 44

Գրիչ՝ Յովակիմ քահանայ

Վայր՝ Տումարզայ

Ա

74 Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ յանկեալ կատարեցաւ Աղօթամատոյցս և Տաւնացոյց[ս] ի լաւ [և] յընդիր յարիւնակաց, ձեռամբ մեղսաներկ և վատթար գրչի Յովակիմ քահանայիս, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարի և այլ ամենայն սրբոցն, որ աստ կան մեզ ի յաւդնութիւն ի գիւղն Տումարզայ, ի դուռն Ս. Աստուածածնի և Ս. Պետրոսի առաքելոյն, ի թվականիս ՌՃԳ (1654)։ Արդ երիս անկեալ աղաչեմք, ո՛վ մանկունք եկեղեցւոյ, յիշեցէք զհայրն իմ և զմայրն իմ[52]։

Բ

Արդ՝ պատուիրեմ կարդա և տես,
Եւ խրատեմ թէ միտ դընես,
Սրտի մտաւք զԱստուած սիրես,
Ըղպատուիրանն նորա առնես։
ԶՏաւնացոյցս լաւ պահես,
Եւ զամենայն տաւն տեսանես,

[51] Յուցակում նշված է «ՌՃԸ (1659)»։ Ձեռագրի նկարագրության վերնագրի տակ գրչության թվականը նշված է 1654 թ.։ «ՌՃԸ»-ն թերևս տպագրական սխալ է։ Հավանական համարեցինք 1654 թիվը, ուստի «ՌՃԸ»-ն ուղղեցինք «ՌՃԳ»։

[52] Հիշատակարանի վերջին մասը կորած է։

Ժամանեղաց հաստատ կացցես,
Զաւրքն սրբոց տանիւ պատուես։
Զնահատակն յիշատակես,
Եւ սաղմոսիւք միշտ աղաւթես,
Շարականաւ աւրհնաբանես,
Եւ զպատմութիւն նոցա պատմես։
Եւ խունկ անուշ մատուցանես,
Ի տաճարի սբ. մըտանես,
Ջահ լուցանես և մոմ վառես,
Ցեկեղեցւոյ աւել ածես։
Այս բաւական է թէ լսես,
Եւ Աստուծոյ միշտ ծառայես,
Եւ անխափան միշտ կատարես
Զսուրբն Աստուծոյ ուրախ առնես։
Յորժամ զկենցաղս վճարես,
Նոցին փառացն հասանես,
Զարքայութիւնն ժառանգես,
ԶԱստուած նոքաւք փառաւորես։
Արդ աղաչեմ լալագին ես,
Զգծողն Յովակիմ քահանայն յիշատակես,
Եւ զու յիշեալ ի Տէր լիցիս,
Յորժամ զեսցես (sic) փառաւք յերկիրս։

962

ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

CBCon., № 36

77 Գրեցաւ Պահպանութեան գիրս թվին ՌՃԳ (1654), ի վայելումն տիրացու Սիմաւոնին, զոր տէր Յիսուս բարով վայելել տացէ. ամէն։

963

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (1638 Թ.)

«Բանբեր Մատենադարանի», № 11, էջ 415

Գրիչ՝ Անդրէաս

ա

Զվարդան այր քրիստոսասէր զստացող սբ. կտակիս հանդերձ ծնողաք և ամենայն ընտանեաք յիշեցէք, ով հանդիպողք։ Թուին ՌՃԲ (1653)։

բ

Աւրհնութիւն որ կարդայ գովութիւն որ լսէ. փառք տուողին և յիշատակ գրչիս. ամէն։ Թվին ՌՃԲ (1653)։

գ

Յամի Ռ-երորդի Ո-որդի յիսներորդի և ի չորրորդի (1654) ըստ մեզ եղելոյ անեղական բանին Աստուծոյ, և ի Ռ-երորդի Ճ-որդի Երրորդի (1654) թուականութեան արամեանս ազին, և ի հայրապետու-

թեան գերամբարձ աթոռոյն էջմիածնայ տեառն Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի, և ի թագաւորութեանն Պարսից՝ երկրորդ շահ Ապասին, և յառաջնորդութեան գաւառիս Գողթնեաց տեառն Խաչատրոյ արքեպիսկոպոսի և քաջ վարդապետի։ Վարդան այր քրիստոսասէր և բարեպաշտ, որ էր գաւառաւ Գողթնացի, և տեղեաւ Ագուլեցի, որպէս սովորութիւն է վաճառականաց յամենայն տեղիս շրջել վասն շահուց և օգտակար վաճառաց, ի կարիս հոգւոց և մարմնոց ինքեանց և զաւակաց իւրեանց։ Այսպէս և սորա շրջելով յաշխարհ պատահեցաւ ի Շօշ քաղաք, որ է արքայանիստ Պարսից թագաւորութեանն, յորում վայրի և եգիտ զմեծ մարգարիտս զայս, և զակնս այս պայծառ, և դանծախելի զդանձս, և դանբերելի մեծութիւնս, և զկեցուցիչս հոգւոց և մարմնոց մարդկան, զի վաճառէին, որ էր դրեալ ի բաղում ամաց իբրև հնգետասանից[63] և մնացեալ անկազմ և անեռանգ ի չքաւորութենէ ստացողացն։ Եւ բորբոքեալ ի սէր և ի ցանկութիւն աստուածային մատենիս այսմ, որ ասի Աստուածաշունչ, որ է համանգամայն Հին և Նոր կտակք աստուծային մատենից մարգարէականաց իսկ և առաքելականաց։ Եւ շահավաճառ մեծ համարեալ զսա յօգտութիւն ինքեան և զաւակաց նաև համօրէն տոհմին իւրոյ՝ ծնողաց և եղբարց միանգամայն եղելոց, ննջեցելոց և կենդանեաց. բայց ոչ եթէ յընչաւէտութենէ հարկեալ, այլ ի կատարեալ սիրոյ և ի ճշմարիտ հաւատոցն, որ ի տէր մեր Յիսուս Քրիստոս, և յաներկուսանալի յուսոյն, զոր ունէր, որով և պտղաբեր եղեալ Աստուծոյ յիշմամ[բ] բանին կայծակ նամաքրին Եսայեայ, զոր ասէ. թէ. «Երանի...»։ Եւ արդարև պտղաբերեաց Աստուծոյ, զպտուղս այս ոչ կորստականս, այլ որ մնայ ի կեանսն յաւիտենականս ըստ փրկական հրամանին՝ թողեալ զանցաւորն, ստացաւ զանանցն. մոռացաւ զառօրեայն, յիշելով զյաւիտենականն. դոսացաւ վասն մահկանացուին և եղև աճեցեալ վասն անմահ կենացն. անտրդեաց զյաչաղելն որ միայն խնդրէ զիւր, սիրեաց երկունս վասն միանգամայն տոհմին իւրոյ. բարւոք համարեաց ոչ ունել զաշխարհիսս ետ դինս յարդար վաստակոց իւրոց և ստացաւ զանկողոպտելի զդանձս դանձելով յերկինս, վասն կենսունակ բանին Յիսուսի, զոր անացն, զի. «Ուր գանձն ձեր է անդ և սիրտք ձեր եղիցին»։ Գիտացեալ եթէ որ տայ զաշխարհիս, առցէ զերանելի զպսակն։ Զայս ամենայն արար ասաուծասէր այրս Վարդան։ Վասն որոյ ո՛վ սրբերամ և մաքրազարդ դասք երջանիկ մանկանց Սիօնի, աղաչեմ զձեզ յիշել ի Քրիստոս պապն՝ զՌուենեաբն, զծնօղսն սորա, զհայրն՝ զԹանդրիվէրմիշն և զմայրն՝ զԳուլխանտանն, և զինքն զՎարդանն, և զկենակիցն իւր՝ զՌէկին, և զորդիսն իւր՝ զդեռաբոյս և զնորահասակ մանուկն զԳրիգոր, որ և նա ևս յորդորեաց զհայր իւր ստանալ զաստուածախօս տառս, բայց ոչ ժամանեաց տեսանել, զի զկնի միում ամի հանդեաւ ի Քրիստոս ի Կոստանդնուպոլիս, նաև զԱստուածատուրն, և զԱլէքսիանոսն, և զդստերսն Վարդանին՝ զՀամինն, և զԱրզիխանն, և զԱնթառամն. ևս զճգնակիր և զհամակամ

[63] Ձեռագրի գրության հիշատակարանը տե՛ս 1638 թ. շարքում։

զեղբայրն իւր՝ զՊօղոսն, և զկենակիցն իւր՝ զՆազլուն, և զորդիս սոցա զՊետրոսն և զԱնդրէասն, և զդստերսն՝ զեղիսաբեթն, և զԳուլխանդն, և զՀռիփսիմէն, նաև զհանգուցեալ զեղբարքն սոցա և զքորքն՝ զԳրիգորն, Նազարն, Ջանումն, Նիկարն, Գուլբանսվշն, Հուրիիանն, Խոնդկարն, յիշեցէք...։

դ

Յիշատակարանիս Անդրէաս գծողի յիշել ընդ սոցին աղաչեմ։

Նվիրատու՝ Վարդան

ե

Դարձեալ մեք Թանդրիվէրմիշի որդիք Վարդան և Պօղոս հանդերձ ամենայն զարմօք մերովք շնորհօքն Աստուծոյ ստացաք զսբ. մատեանս, որ ասի Աստուածաշունչ, և ընծայեցաք Ս. Առաքելոյն Թումային, որ է աթոռ Գողթն գաւառի։ Մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի վանաց անտի, թէ՛ ի մերոց և թէ՛ յօտարաց, զի բազում սիրով և մեծ յօժարութեամբ ըստացեալ ընձայեցաք Սրբոյ Թումայի։ Եւ զերեսս ի դետին եղեալ աղաչեմք զհանդիպողսդ, յիշել զմեզ առաջի զենման գառինն Աստուծոյ, և դուք յիշեալ լիջիք յարքայութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

964

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Կարնոյ գիւղեր, «ՀԱ», 1963 թ., էջ 28—29

Գրիչ՝ Մելքոն երէց

Վայր՝ Երկէն մասուր

Փառք...։ Գծայգրեցաւ գիրքս որ գոչի Կանոնագիրք և սակաւ Մեկնիչ, Հարանց վարք, սակաւ մի հարցմանց, ձեռամբ անարհեստ և մեղսայթաթախ գրչի Մելքոնն իշիցու, և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Կիրակոսին և մօրն իմոյ՝ Մուրվաթին։ Գրեցաւ ի երկիրս Ա[r]զրումու, ի գիւղս յԵրկէն մասուր, ի դուռն Ս. Աստուածածնայ, թվին ՌՃԳ (1654), հայրապետութիւն Հայոց տէր Փիլիպոսին։ Արդ՝ և ես յերես անկեալ աղաչեմ, ո՛վ սբ. լուսերամք զձեզ, ով ոք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով յիշմամբ արժանի առնեսջիք զմեզօք խաւարեալ զանար-[ժան] ///

965

ՄԱՇՏՈՑ

«Սիոն», 1974 թ., № 1—2 (1267 թ.), էջ 70

Կազմող՝ Մաթէոս եպիսկոպոս

Զվերջին կազմող սբ. Աւետարանիս զՄաթէոս եպիսկոպոսն յիշեցէք առ Քրիստոս, որ կրկին նորոգեցի ՌՃԳ (1654)։ Դարձեալ յիշեցէք ի սբ. աղաւթս զԽուլիճանն և զեղբայրն՝ զՄանուկն, որ եւոն նորոգել իւրեանց հին և նոր ննջեցելոցն հոգոյն՝ Մարգարէ, Ալէքսանոսին, Առա-

էէլ, Ե[?]սին, *իւր հաւրն՝* Սահակին, *մաւրն՝* Մարուֆին, Խուլիճանին *և կողակցին՝* Մանպապին, *որդոցն՝* Առաբելին:

966

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Գումգարու, «ՀԱՆ», 1966 թ., էջ 484—485

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Կ. Պոլիս

ա

Անչարչարելիդ Աստուած.... աղատեա ի յաւիտենական տանջանացն զհոգի անարժան և փանաքի, հող և մոդիր, և ոտից կոխան, սոսկանուն և պիտակաբար Մինաս *բանի սպասաւոր, որ անուամբ եմ յորջորջեալ և գործով վերջացեալ, բայց զապագայն Տեառն եմք անձամբ ապաւինեալ աղաւթիւք սբ. հարցն և եղբարց ամենեցուն. ամէն։ Թվին ՌՃ (1651) փետրվարի։*

Բ

Գրեցաւ մէկ Բ (2) սակաւ տիրիկս ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի, միայն անուամբ յորջորջեալ Սինասի *բանի սպասաւորի, Թուին Ռ և Ճ և Գ աւելորդին (1654), ի քաղաքն* Սանպոլ, *որ* Թա ւ բլաբի *ասեն...*

Գ

Յիսուս Քրիստոս... ողորմեա ամենայն հաւատացելոց ի Քրիստոս... և գրչի անարժան Մինասի...:

Գրիչ՝ Զաքարիա

Դ

... Զայս ինչ խրատ տամ որ լսես,
Յորժամ որ դու սաղմոս ասես,
Զթուխտն թքով չապականես...
Յորժամ որ դու սաղմոս ասես,
Զոր ընթեռնուս և միտ պահես,
Զզաքարիա գրիչս՝ յիշես,
Եւ ողորմի դու ինձ ասես...

967

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՀՄՆՍ, № 143

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

648 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն* Կոստանդինուպալիս, *Թվին ՌՃԳ (1654), ձեռամբ ոգնամեղ և անարհեստ գրչի՝* Յովանէս *սարկաւագի, որ և ծանկացող եղեալ բարեսէր, երկիւղած կինն* Սառան, *և ըստացաւ ղսայ ի հալալ արդեանց իւրոց ի միտ ածեալ զա-*

սացեալն ի մարգարէէն... և եդ յիշատակի ի ձեռն Թոփղապուցի տէր Ղազարին, յիշատակ հոգոյ իւրոյ և հօրն՝ Ալիքսանին, և մօրն՝ Մանուշակին, և կողակցուն՝ Միրաքին, զփոխեցեալն ի Քրիստոս, Տօնիկին և Մուրատին և այլ ամենայն արեան մերձակայս՝ զկենդանիս և զհանգուցեալս, յիշման առնել արժանի...։

968

ԱԻԵՏԱՐԱՆ

ՑՁՄՆՍ, № 38

Դրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

202 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Ստամպոլ, որ է Կոստանդնուպոլիս Բիւզանդիա, ի զուռն Սրբոյն Սարգսի զօրավարին
203 և որգոյ // նորա Մարտիրոսին. ի թվականիս փրկչական ՌՃԳ (1654)-ըն, ձեռամբ սուտանուն Յովանէս զպրի, զոր և յիշել զիս առ Տէր մաղթեմ։

969

ՄԱՇՏՈՑ

Rapp. Mac., № 40

Վայր՝ Եդեսիա

104 Փառք..., որ ետ կարողութիւն ի գլուխ և յաւարտ հանել զսբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, ի մայրաքաղաքն Եդեսիա, որ կոչի Յուրհա, ի զուռն Բարձրահայեաց Տիրամայր Ս. Աստուածածնին և Ս. Դաստուսկին, ե այլ սրբոցն ի միասին, որ պարփակիմք ի հովանին. ի կաթողիկոսութեանն Փիլիպպոս սրբազան հայրապետին և երկրորդ լուսաւորչին, ի առաջնորդութեանն տէր Ներսէս արքեպիսկոպոսին, ի թվականութեանս ՌՃԳ (1654) ամին, ի դառն և ի նեղ ժամանակի։

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս աստուածասէր և բարեմիտ կինն խոնա Եաղուպենց Ղամարն, որ ետ գրել զսբ. գիրքս և եդ յիշատակ ի զուռն Ս. Աստուածածնա, կենդանեաց և ննջեցելոցն, և ամենայն զարմիցն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Արդ՝ աղաչեմ զհանդիպողք սբ. զբրոցս, անմեղադիր լինել սղալանացս, զի կար մեր այս էր և չէի հրմուտ զրի և ոչ արուեստի, այլ յուսալով ի բարերարութիւն մարդասիրին Աստուծոյ սկսա և աւարտեցի շնորհաւքն Քրիստոսի...

970
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1782

Գրիչ՝ Յակոբ երէց
Վայր՝ Կozլով

ա

170ա Եւ սայ եղեալ մաքրամիտ և հանճարեղ իմաստդն յուսումնասիրաց Աստուր Սեփաստացի սարկաւագի։

Եւ գրեցաւ սայ ձեռամբ մեղաւոր և անպիտան և անարժան Տիւրրիկցի Յակոբ քահանայիս, ի քաղաքն Կաւզլով, թվին ՌՃԱ (1652)։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

բ

114բ Զ[ծ]ոյլս ի բարիս,
Եւ զարագս ի չարիս,
Զգծող տէր Յակոբիս,
Մի՛ մոռանայցես,
Ցիշել ի բարիս։

գ

121բ Գրեցաւ ի թվին ՌՃԳ (1654) մեղապարտ գրչիս՝ տէր Յակոբ մեղաւորիս [յիշեցէք]։

դ

169բ Գրեցաւ թվին ՌՃԴ (1655), յաւարտ գրոյս մարտի Ը (8), յաւուրն հինգշաբթի, մեղաւոր քահանայիս Յակոբ իրիցու. ամէն։

971
ՄԱՇՏՈՑ
ՅՁՍԴ, № 84 (1448 թ.)

Նվիրատու՝ Տաւնիկ ժամկոչ

62 ... Ընտացաւղ սբ. գրգիս, որ կոչի Մաշթոց, զմահտեսի Տաւնիկն յիշեցէք յաղաւթս ձեր, վասն սիրոյն Քրիստոսի, որ ստացաւ զսա, այս մահտեսի և լուսակրտն Տաւնիկ ժամկոչն և եղ յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնի, որ կոչի Սեբաստիոյ քաղաքի Շուկի ժամ, զոր և տէրն մեր Յիսուս Քրիստոս զիւր յիշատակն օրհնութեամբ արասցէ։ Այլ և կրկին աղաչեմ, զի յիշեսջիք զիս և զծնաւղքս իմ՝ և զՍելվիարն, և

զԹուրինեն, և զեղբարն իմ՝ զԹարոսն, որք փոխեալք են առ Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիքն և զհանգուցեալք, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։ Եւ որ յիշէ և ողորմի տայ՝ Քրիստոս իւրեանն ողորմեսցի. ամէն։ Յիշատակս եղաւ թվին ՌՃԵ (1655), մարտի ԺԹ (16)։

972
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1628

Գրիչ՝ Աւէտ

430բ Փառք...։ // Արդ՝ ստացող եղև այսմ լուսաբողրոջ և բազմա[ծ]-
զի[կ] տառիս, որ կոչի Շարակնոց, որ է շարունակ երգոց երգ, Գրիգոր
431ա կուսակրօն, սրբասնունդ կրօնաւորն, վարժեալ ի վարդապետացն //
մերոց և ցանկացօղ եղեալ սմա, ետ դրել զսա անջինջ յիշատակ հոգոյ
իւրոյ և ծնօղաց իւրոյ, հօրն՝ Էմինին և մօրն՝ Հռիփսիմին, հոգևոր մօրն
իւրոյ՝ Նազ[լ?]ումին, և եղբարցն՝ Վարդանին, Աստուածատրին, Կիրա-
կոսին, Աւետիսին, քվերն՝ Մարիամին, դստերացն՝ Գայիսանին, Նազ-
զուլին, որդւոյ սորին Մաքէոսին, և եղբօր կանանցն՝ Դուլփարուն, որդ-
ւոյն՝ Ովսանիսին, Սահակին, Դալստին, և միւս եղբօրն կողակցին՝ Թան-
կազիզին, որդւոյ սորին՝ Շահնազարին և ամենայն արեան մերձաւո-
րաց նոցին՝ կենդանեացն և նընջեցելոցն հանգիստ և արքայութիւն տա-
ցէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն։

Արդ՝ ես յետինս ի գրչաց, ցժիրս ի չարեաց և զծոյլս ի բարեաց,
ընդ նմին և ես աղաչեմ զեղկելիս մեղաց դերիս, վաճառող գրքիս յԱւէտ
տկար ոգիս, յիշել ի Տէր բարի մտօք և ասել ողորմիս, բայց վայ ինձ
431բ հի//քիս, որ տուի զոսկին և առի զփոշիս։ Արդ՝ ես մեղապարտ և անար-
ժան Աւետ դծօղս ծրեցի զսա մեղսամած մատամբ իմով, ի թվիս Հայոց
ՌՃ և չորսի (1655), ի հայրապետութեան Հայոց տեառն սբ. Էջմիածնայ
տէր Փիլիպոսի, ընտրեալ և սրբասնեալ կաթուղիկոսի, փոխանորդ Գր-
իգորի սրբոյ Լուսաւորչի և քաջ պվետիկոսի, տիեզերալոյս բարեպա-
պետի, որ լուսափայլ բանիւ պայծառացոյց զաշդս Հայոց, և զարդա-
բեաց զեկեղեցիս նոբոգելով բազում և յոլով վանորայս և մենաստանս,
որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Արդ՝ եղև զրաւ սորա ի մարտի ամսոյ Ի (20), յաւուր երեքշաբթի,
ի խնդրոյ սրբասնունդ և սրբասնեալ Գրիգոր կուսակրօն և սբ. կրօնա-
ւորի։ Եւ որք ընթեռնուլն կամ օրինակելն յիշեն զմեզ՝ յիշեալ լիցին օրն
աներեկին և երանական ձայնին, որ ասէ. «Եկայք աւրհնեալք հօր իմոյ
ժառանգեցէք զանսպառ ուրախութիւնն» յաւիտեանս յաւիտենից. ամէն։

973
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ
Կամենից, էջ 192

Գրիչ՝ Անտոն վարդապետ
Վայր՝ Սէջով

Գրեցաւ Ապաշխարութեան երգ, մարտի մէկ, թվին ՌՃԴ (1655), աղուհացից առաջի շաբաթուն հինգշաբթի, ձեռամբ մեղաւոր Անտոն

վարդապետի, ի քաղաքն Սէջով։ Գրեցաւ ձեռամբ մեղաւոր Անտոն եպիսկոպոսի և վարդապետի, թվին ՈՃԴ (1655), մարտի ամսոյն ԻԱ (21), օրն չորեքշաբթի, միջնաց աղուհացից[1]։

974

ՏՕՆԱՑՈՅՑ, ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ

ՑՁԱՐ, № 231

Գրիչ՝ Յակոբ

ա

1061 Առ քեզ ցուցակ ժողովեալ նոր,
Կարգիւ նայեա քահանայ խոր,
Ունի լիով զամէնն իւր փոր,
Բարին յիշեա զՅակոբ բոլոր։

բ

Առ դասավարդ և ժամարարդ,
Կարգաւորէք ւ որչափ կայք մարդ,
Որ կու պարէք ղյարութեան պարդ,
Բարին յիշէք զՅակոբ ձեր պարդ։

գ

1062 Աւարտ եղև Տօնացուցիս,
Կաթողիկոսն Թորոսն ի Սիս,
Որ էր ՌԱՃԱՐ[2] (1655) կապ հայ թվիս,
Բայց ԺԷ քանակ է (24) ի մայիս՞։

975

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Կոր. «Բանասէր», հտ. Զ, 1904 թ., № 33 (1635 թ.)

Վայր՝ Կ. Պոլիս

175 Իսկ զկնի ամաց ինչ[4] որ եհաս թվականն Հայոց ՌՃԴ (1655), ի յեղիական պահոց շաբաթ աւրն[5], յետ արձակման ժամուն յանկարծակի լուծեալ ի մոմոյ ինչ կամ ի բուրվառէ, և հրդեհեալ այրեցաւ Ակինն եկեղեցին բովանդակ, և ոչ ինչ աղաւեցաւ՝ ի գրոց և յԱւետարանէ, ի խաչէ, յըսկիհէ և ի զգեստէ, բայց միայ [Ն]յայսմաւուրքս այս զերծաւ ի ձեռն արանց աստուածասիրաց, կարողութեամբն Աստուծոյ և աղո-

[1] Փիլիպոս Աղրակեցի կաթողիկոսը մահացել է 1655 թ. մարտի 25-ին (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 345), իսկ հաջորդը՝ Հակոբ Ջուղայեցին կաթողիկոս է օծվել 1655 թ. ապրիլի 8-ին (տե՛ս անդ, էջ 345)։ Այն հիշատակարանները, որոնք ամիս, ամսաթիվ չունեն, բայց որոնցում նշված են Փիլիպոս Աղրակեցի կաթողիկոսի մահը և Հակոբ Ջուղայեցու կաթողիկոս օծվելը, դրեցինք 1655 թ. մարտի 21-ի և ապրիլի 12-ի միջև։

[2] Այսինքն՝ Ռ—1000, Ա—1, Ճ—100, Ա—1, Բ—2=1104+551։

[3] Երեք քառյակների տողերի առաջին տառերից հողվում է Ակոբ։ Ցուցակի 1051—1062 էջերում գտնվում է 1655 թ. խիստ եղծված հիշատակարան։

[4] Այսինքն, ձեռագիրը ընդօրինակելուց՝ 1635 թ., տարիներ հետո, ինչպես երևում է, այս գրել է ձեռագրի գրիչը։

[5] Եղիական պահոց շաբաթը 1655 թ. կլինի հունիսի 4-ից մինչև 9-ը, իսկ շաբաթ օրը կլինի հունիսի 9-ին։

թիւք սրբոց... Եւ ուն յիշատակ անջնջելի ի գուն տաճարի մեծաց հրբեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, որ ի Կոստանդնուպոլիս...

976

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՑՁՎՍ, II, № 278

Դրիչ՝ Ամիրաս Եզնկացի
Վայր՝ Պաւնտոս

ա

953 *Փառք...։ Աւարտեցաւ գիրքս ձեռամբ տրուպ և անարժան սուտանուն* Ամիրասէ *յԵզնկացոյ, ի յամի մարդեղութեանն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՈՄԵ (1656) և թորգոմեան թվական ՌՃԵ (1656), և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան* Մահուսմատին *և ի կաթողիկոսութեանն տէր* Յակոբին՝ *Վաղարշապատ քաղաքին սուրբ Էջմիածնա, և ի հայրապետութեանն սբ.* Սրուսադէմայ՝ *տէր* Աստուածատուրին, *գրեցաւ ի քաղաքն* Պաւնտոս, *զոր այժմ ասեն* Տրապիզոն:

Ձեռքս երթա և գիրքս մնայ
Եւ մարմինս ի հող դառնա,
Ես ալ մեղաւոր եղայ,
Դժոխոց դուռն մատնեցա...։

Արդ՝ աղաչեմ զձեզ ով հայրք և եղբայրք, թողութիւն խնդրեցէք վասն իմ մեղաւորիս խնդիր ի յառատաձիր պարգևողէն ի Քրիստոսէ և ինքն Աստուած պարգևիչն շնորհաց պարգևեսցէ և զառատ ողորմութիւնն
954 *իւր յիշողացն և յիշեցելոցն։ Յիշեսջիք զհայր իմ՝ // զմահտեսի* Պալին *և զմայրն իմ՝ մահտեսի* Նասպաքն, *և զեղբն եղբայրքն ի[մ՝] հարազատ՝* զԱխիճանն, *զմահտէսի* Աղբիւն, *զեաղուպն, զԱսսք պարոնն, զՏատուրն և զՑուսէփն։*

բ

Վայ և եղուկ ինձ ՌՃ (1000) բերան որ կորեալ եմ. թվին [Ռ]ՃԴ (1655), յունիսի ԻԵ (25) աւարտեցաւ։

977

ԱԻԵՏԱՐԱՆ

ՑՁՎԼ, I, № 233 (ԺԵ դ.)

553 *Արդ՝ ով դասք քահանայից, խումբք սարկաւագաց և գունդք ժողովրդոց, որք հանդիպիք այսմ հրաշագործ սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորա զՇարապիանցի բարեպաշտ և աստուածասէր մահտեսացու* Զաքարիան, *զհայրն իւր՝ մահտեսի* Սանակն *և զմայրն՝* Փէրիխանն, *կողակիցքն իւր՝* Փորոզէն *և* Մրվաքն, *և որդիքն իւր՝* զՄարգարէն, զՍանակ[ն], զՄուրադիանն *և* զՂարիպշանն, *և դստերքն իւր՝* զՀռոմն, զՓարին, զՆարինն *և* զՍառէն, *և* Մարգրտի *որդիքն՝* զՍարուխանն *և* զԱստուածատուրն, *և զդուստրն՝* զՓորոզայն. *դարձեալ* Զաքարի *հօրեղբարքն՝ մահտեսի* Ատոմն *և մահտեսի* Պետրոսն, *մահտեսի* Ատոմի *կողակից* Զանազանն *և* Պետրոսի *կողակիցն՝* Աննայն: *Դարձեալ յիշեսջիք զմահտեսացու* Զաքարիայն, *որ ստացաւ զսբ. Աւե-*

տարանս ի հալալ վաստակոցն իւրոց, և ետ զթերին սորա լրացուցանել և կազմել, յիշատակ իւրն և իւրոցն ամենայնի։ Ի ՌՃԴ (1655) թվին, յունիս Լ (30)։

978
ԱԻԵՏԱՐԱՆ
ՅՁՍԴ, № 52

45 Փառք...։ Եւ արդ՝ աստուածային Սիոնէն վառեալ աստուածասէր և բարեպաշտ, բարեմիտ և բարեխոհ, հեզահոգի մահտեսի Մինասն ցանկացող եղեալ այսմ հոգևոր և աստուածային գանձուց սբ. Աւետարանիս, և ստացաւ զսա ի հալալ յընչից և ստացուածոց, անջինջ և յաւիտենական յիշատակ իւրն, որ մականուն Ծրնդի Մինաս ասեն, և կնոջն Ղուդրադին, և դստերն՝ Նազլուին, և ամենայն ազգայնոց իւր՝ կենդանեացն և մեռելոց. և ետ յիշատակ ի գիւղն Գիրգորէս, ի Ս. Յակոբ եկեղեցին։ Եւ աղաչեմ զհանդիպողսդ միով հայր մեղայիւ յիշել զստացաւղ սորին՝ զՄինաս մահտեսին, և զկողակիցն իւր՝ զՂուդրադն, և զդուստրն իւր՝ զՆազլուն, և Աստուած ողորմի ասել։ Ի թուականիս Հայոց ՌՃ և Դ (1655) օգոստոսի ԺԵ (15)։

979
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 6333, 270

Գրիչ՝ Խաչատուր քահանայ
Վայր՝ Արտամետ

65բ Աւրհնեալ է Աստուած. աւարտեցաւ Շարակնոցս ձեռամբ Խաչատուր քահանայի։ Խաչատուր քահանայս գրեցի Շարակնոցս ի քաղաքն Արտամետ, ի դուռն Ս. Տիկին եկեղեցւոյ, ի թուին Հայոց ՌՃԴ (1655), սեպտեմբեր Գ (3), աւուրն չորեքշաբթի[6]։

980
ՇԱՐԱԿՆՈՑ
Հ. Հաղարյան, № 10 (մանրաժապավեն, Երևան, № 777)

Գրիչ՝ Աստուածատուր երէց
Վայր՝ Բրոգնիկ

463ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ աստուածային տառըս, որ կոչի Շարակնոց, ի քաղաքն Սեբաստիայ և ի գեղն, որ կոչի Բրոգնիկ, ձեռամբն մեղապարտ, անիմաստ և անարժան Աստուածատուր երիցուս։

---

[6] Այս ձեռագրում պահվել է նաև Մարմետ գյուղի եկեղեցու կառուցման մասին հիշատակագրություն. «Ահա այն. «Ճաշոցողութեամբն Աստուծոյ, Մարմետ գիւղիս աստուածասէր ժողովրդոց աշխատանօք և արդեամբք կառուցաւ սբ. եկեղեցիս, յանուն Սրբոյն Գէորգայ, ի պատիւ և ի փառս Աստուծոյ ամենակալին; և յառաջնորդութեան [Կտուց] անապատիս մերոյ Յարութիւն արքեպիսկոպոսին, ի թվին Հայոց ՌԶ (1631)»։ Սակայն ՌԶ-ի դիմաց նշված է 1851, կամ սխալ է վերջինս, կամ ՌԶ-ն պետք է ուղղել ՌՃ։

Ի թւականիս Ռ ամի,
ՃԴ թիւ աւելի (1655),
Յամիսս, որ է սեպտեմբերի,
Ի յամսաթիւ Ե (5)-երրորդի։
463բ Աւարտ առի չորեքշաբթի,
Ի դառն և ի նեղ ժամանակի,
Այսպէս նստեալ աքտանի,
Որպէս զբու աւերակի։
Ի յրսբաղմանց յանաւրինի,
Միտքս մոլար և սղալի,
Եթէ սղալ գիր հանդիպի,
Անմեղադիր լերուք գրչիս։
Չեմ հրեղէն իբր հրեշտակի,
Այլ հողեղէն եմ անցալի,
Չի եմ յետնեալ յամենայնի,
Եւ ներքևեալ նուաստ հոգի։
Սատար եղէ սակաւ գրի,
Ես՝ Աստուածատուրս Սեբաստիացի,
Կոչիմ դեզչէն որ է Քօթնի,
Բարեաց թափուր ւ եմ եղկելի։
Որ ոչ ունիմ զիմաստ բանի,
Չի ձևս ունիմ քահանայի,
Եւ ի գործոյն յոյժ եմ հեռի,
Մեղաւք լցեալ ազգի ազգի։
Չունիմ մի մաս մի բոլորի,
Առ ձեզ գոչեմ աղերսալի,
Վասն միոյ ողորմիսի,
Ով ոք զմեզ յիշել կամի։
Արժան առնց Հայր մեղայի,
464ա Ի Քրիստոսէ յիշեալ լիցի,
. . . . . .

Եւ դարձեալ յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զհայրն իմ՝ զՄիրաքն, և զմայր իմ՝ զԹերաւժն, որ փոխեալ են առ Քրիստոս. և որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

981
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4316

Գրիչ՝ Մինաս աբեղայ
Վայր՝ Յոյժ

ա

150ա Վա՜յ քեզ Մինաս Ռ (1000) բերան։ Թվին ՌՃԴ (1655), օգոստոս ԺԷ (17)։

Բ

245բ Զմեղապարտ Միհաս ար[եղայս ա]ղաչեմ առաջի Քրիստոսի յիշել /// ով հորք պատուականք։ Թվիս ՌՃԴ (1655) [սեպտեմ?]բերի ամսոյ ԺԲ (12)։

Ո՛հ ժամանակ յետոյ տեսողացդ, ո՛հ։

Գ

317ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս, քառավտակ աղբիւրս, կենաց
317բ ճանապարհ ար//քայութեան և լոյս աշխարհի, և դուռն ողորմութեան, ձեռամբ մեղսաներկ ոգւոյ և ամենամեղս ի գրչաց Միհաս սոսկ անուամբ միայն աբեղայի, ի սբ. և ի հռչակաւոր ուխտս ի Ստաթէի առաքելոյն, ընդ հովանեաւ սորին և այլ իններեակ դասուց եկեղեցեացս, որ ունին ինքեանս մասն ինչ բազում սրբոց և աստուածապահ երկիրս Մարտանաղում, ի գեաւղն որ կոչի Յոյժ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ յաթոռս
318ա էջմիածնի /// ի թվականութեանս Հայոց // ՌՃ[Դ] (1655)[7]։

Ստացող՝ Յակոբ քահանայ։

Դ

Եւ արդ՝ աղաչեմ զսրբութիւնդ ձեր հարք և եղբարք, յիշեսջիք զՅակոբ քահանայն, որ անուամբս միայն միայն եմ քահանայ և գործովս ոչ, զի ա[հ]ա բազում փափագանօք ստացայ սբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ ի[մո]յ և իմ ծն[օղացն], հայրն իմ՝ Ամիրճանին և մայրն իմ՝ Շիրազին, և իմ կենակցոյն՝ Ըռեճանին, և իմ որդոցն՝ Ովանէսին, Մարկոսին, Անանիային, և դստերացն՝ Եղիսապեթին, Մարիանին, Մարթային։ Դարձեալ որք հանգիպիք սմա կարդալով կամ օրինակելով, աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Յակոբն և
318բ դուք յիշեալ լիջիք // առաջի ահեղ ատեանն Քրիստոսի. ամէն։

982
ԺՈՂՈՎԱԾՈՒ
82ԱԲ, № 77

Գրիչ՝ Թորոս Համբեցի
Վայր՝ Երուսաղէմ

Ա

386 Զծրաւղ սորին յիշեցէք ի Քրիստոս զԹորոս մորոսն, ո՛վ սբ. վարդապետք եկեղեցոյ, զի և։

Բ

Եւ ինձ անարժանի Թորոս եպիսկոպոսի գրչի, և նմա փառք յաւիտեանս. ամէն։

---

[7] Հայոց թվականի միավորը հավանաբար մոռացվել է, որովհետև Հայոց ՌՃ (1658) թվին կաթողիկոս էր Փիլիպոս Աղբակեցին։ Բացի այդ, բ հիշատակարանում նշված է ՌՃԴ (1655), սեպտեմբերի 12-ին։

Գ

Ջծրող սորին զԹարմատար և զապիկար աղգի ազգի մեզօք լցեալ զԹորոս եպիսկոպոս յիշեցէք ի Տէր, և զուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ։

Դ

Աւարտեցաւ Քարոզգիրքս մինչև աստ, ձեռամբ Թորոս եպիսկոպոսի, օգոստոս ամսոյն ԻԸ (28), թվին ՌՃԱ (1652) ամին։

Ե

Զմեղապարտ բիւր քանքարոյ զծրող սորին զԹորոս եպիսկոպոս։

Զ

Որ են թիւք ամացն յելիցն Աղամայ մինչև ի ժամանակ կատարելոյ դրոցս ի ձեռն Միխայէլի Ասորոյ պատրիարգի, ամք վեց հազար չորս հարիւր և երեսուն (6430), և այժմ է թիւս Հայոց Ռ հարիւր չորս (1655), որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառուղնալ Համքեզոյ Թորոս եպիսկոպոսի, ի Ս. Ծնունդն, ի վերակացութեան սբ. ուխտիս, ումե[մ]ն անդուռն բերան Դասպարի Մերսընցոյ (?), որ ի գնալն յիւր ի քաղաքի, դիս ի բերան առնելով, առ ի չարախօսութիւն։

Է

387 Փառք... // որ իւրով ամենազօր և անկարաւտ բարի բնութեամբն շնորհնաց ամենաթշուառ տկարիս, Թորոս եպիսկոպոսի կարողութիւն, ժուժկալութեամբ հասուցանել ի գլուխ աւարտման այսմ աստուածապատում մատենի, որ կոչի Քարոզգիրք, և այլ աստուածային բանս հաւաքելով ի սբ. գրոց և զմիջի պատմութիւնն Միխայէլի պատրիարգին Ասորոց դրելով մեղ, ոչ թէ զառաջն, այլ զՔաղկեդոնի ամբարտաւան ժողովն սկիզբն գրելով, այլ և զՅունաց և զԱրաբակաց և զՔրղաց և զՍարակինոսաց թագաւորութիւն և զՎրաց թագաւորութիւնն մինչև Խորազմիքն գրելով, և զայլ պատմութիւնն թողլով, զի աւարտում եղև գրքիս մինչ ի քառասուն տեսրն, վասն այն ոչ գրեցաք։ Կատարեցաւ սայ ի թուականիս Հայոց ՌՃԴ (1655) ամին, հոռի Ե (5) և սեպտեմբերի ԺԴ (14), աւուր ուրբաթու, ի առաքելաբուխ մայրաքաղաքն սբ. յԵրուսաղէմ, ի դուռն Սրբոյն Յակոբայ Տեառնեղբարն, որ է վանք Հայոց ազգիս, և դամբարան Սրբոյն Յակոբայ, որդոյն Զեբեթ[ե]այ, եղբարն սրբոյն Յո[վ]հաննու աւետարանչին, որ է սկիզբն ամենայն արարածոց. ի դառն և ի նեղ ժամանակիս, որ ի ձեռն Իսմայէլեան ազգին, որ բովանդակ յաշխարհս իբրև զծով կու ծփան և չունին հանգստութիւն ամենեին, և ոչ միջոցս և ոչ ի ծովու, որ են մեծամեծք կղզիք՝ Կրիտէ, որ այսքան ամաւք պաշարեալ ունին այլազգիք և ոչ կարեն առնուլ, զմեծ քաղաքն, որ մնացեալ է նահանգաւք, զոր և Աստուածն ամենայն զվերջն ի բարին դարձուցանէ։ Ով ոք որ աստուածայկոյս կողմանէ է, և միամտութեամբ պաշտէ և հաւատայ բոլորովին սրտիւ, որպէս ասէ Տէրն. «Եւ ոչ երկմտիցէ, ասէ, ցլերինն՝ բարձիր և անկիր ի ծով», կամ «Թեենոյն՝ խլեաց և տնկեաց ի ծովու», այն ազգին և թագաւորին իւրեանց, զաւրապետաց
388 և զաւրաց յաղթութիւն տացէ։ Թէպէտ սկիզբն ժողովածոյ գրքիս ի //

Ս. Յակոբ եղև, այլ աւարտ սորին ի Ս. Ծնունդն եղև. զի եղբայրքն իմ, որ են անգ հին ժամանակեայք, յարեան ի վերայ իմ՝ աղգի աղգի ծո[ւ]-ղակ, յորոգայթ և գուպ փորելով մեզ գաղտագողի, և չարախաւսութիւն առնելով մեզ առ հիպիտորն կենսատու գերեզմանին Քրիստոսի. մինչ անյոյս լինելով մեզ, ըստ յայնմ եղէ ես առանց օգնականի կամ թէ ոչ ոք էր որ աւգնէր ինձ. զի ոչ հայեցան Աստուած. այլ ասացին եկայք բարձցուք զսայ յերկրէ և ի միջոյ մերմէ, զի մեր լիցի ժառանգութիւն և պատիւն և փառքն և մեծութիւնն։ Զի քանիցս անգամ լսելով ինձ, ի յոմանց, եթէ այսպէս կասեն քեզ ժամանակեայքն. «Քանի այդ եպիսկոպոսն որ աստ է, մեր նասիպն այս է կտրեր, և վանիցն զարար է, թէ այս չէր, մեզ կու տային ուխտաւորքն և վանիցն շահ կու լինէր». եթէ ես զիւրեանց նասիպն կտրեր եմ, խնդրեմ իմ նաս[իպ][8]։

983

ՏԱՂԱՐԱՆ

Երևան, № 8605

Գրիչ՝ Նորհատ

ա

60բ *Ի թուականիս Հայոց ՌՃԱ, ե ի նոյն յարաբարտեալ (1655) է ոտնայշափ շինեցս այս* Նորհատ *կոչեցս բանին խնգրողէ, զգործս ձեռաց մի՛ անտես առնէր։*

բ

118բ *Թվին ՌՃԴ (1655) սեպտեմբեր ԺԸ (18) գրեցաւ անարժանօր* Նորհատիս:

984

ՄԵԿՆՈՒԹԻՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Զմմառ, № 466

Նորոգող՝ Դաւիթ երէց

63 *Թվին Հայոց ՌՃԴ (1655), սեպտեմբեր ամսոյ վերստին նորոգեցաւ Մեկնիչս երգարանի աստուածահաւրն Դաւթի մարգարէին, ձեռամբ նուաստ, եթէ տրուպ և ապիկար միայն անուամբ* Դաւիթ *երիցու։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ յիշել միով Հայր մեղայիս...*

985

ԱՒԵՏԱՐԱՆ (1444 Թ.)

Մագիստրոս, I, № 1022

Գեր. աղատ.՝ Օնոփրիոս կրօնաւոր

729 *Թվին ՌՃԴ (1655)*[9] *հոկտեմբերի Ե (5)։ Ես մեղաւոր և անարժան ծառայ Յիսուսի Քրիստոսի* Աւնոփրիոս *եպիսկոպոս ի տանէն* Աեհա

[8] Այնուհետև ընդհատվում է։

[9] Ցուցակում մեքենագրված է «ՌՊԴ»։

և ի քաղաքէն Կամինիցու, ընդ որ առաջնորդութեամբ եկայ ի սբ. Երուսաղէմ թվին ՌՂԸ (1649) և մնացի ի սբ. Երուսաղէմ, վասն սպասաւորութեան լուսաւոր հոգի Գրիգոր հայրապետին. յետոյ որ առ Աստուած փոխեցաւ, հաստատեցին առաջնորդ սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր վարդապետն։ Եւ նա քանի անգամ առաքեաց ղիս վասն նուիրակութեան։ Յետոյ գնացի թվին ՌՃԴ (1655)-ին Խուրմէլի Անդրասյոլիս քաղաքն և ղայս Աւետարան տեսայ մէկ ճրհտի ձեռին, որ ի Պոլտանու դերի է բերած տատարներու ձեռաց։ Ես այլ տեսայ և աղատեցի ի գերութենէ և ի ճհտի ձեռաց յիմ հալալ վաստակոցն, և բերի ի սբ. Երուսաղէմ և դրի յիշատակ ի Ս. Յակոբ իմ հոգուն և իմ ծնողացն՝ հորս Սարգսին և մօրս Մարթային, եղբօրս Զատիկին...։

986
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8386

Գրիչ՝ Ղուկաս
Վայր՝ Բուլֆ

ա

125ա Արդ՝ գրեցաւ Կանոնայգիրքս յերկիրն Դերշան, ի գ[ե]ատն Բուլֆն, ի դուռն Ս. Գէորգայ, ձեռամբն սուտանուն, հող և փոշի և մեղսայսէր Ղուկասիս, որ զանունս ունիմ և զկարգս ոչ ունիմ։ Այլ աղաչեմք զձեզ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր...։

Գրեցաւ թվին Ռ և ՃԴ (1654) նու[եմ]բերի Զ (6), աւր երկուշաբթի։

125բ Կանոնայգիրքս յիշատակ է Խաչատուրին և իւր կողակցին՝ Վառվառին, եղբաւր՝ Մնացականին, հաւրն՝ Դոլաթիարին և մաւրն՝ Մարգրտին, քուրոջն՝ Աննային, որ առաւ զԿանոնայգիրքս իւր հալալ ընչիցն և եղ յիշատակ իւր և իւրեանց ծնաւղաց...։ Հաւրեղբաւրն Կալտեկին, պարոն Գորգին, Կիրակոսին և հաւասար ամե[նե]ցուն. ամէն։

Թվին Հայոց ՌՃԴ (1655)։

Ստացող՝ Ղուկաս սարկաւագ

բ

39ա Մանաւանդ զստացող դրոցս Ղուկաս սարկաւագս յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր...։

987
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 588

ա

312բ Փառք...։ Արդ՝ և ես մոխ[ր]ամած դիմօք, երես անկեալ աղաչեմ և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց, ո՛վ սիրելի եղբայրք և մանկունք Սիոնի, որք հանդիպիք ի յայսմ տառի կարդալով կամ օրինակելով կամ ի ձեռս ունելով, յիշեցէք... զհանգուցեալ ծնօղն իմ՝ զհայր

Փրրամալն և զմայրն իմ՝ Յամիկն, և զհանգուցեալ եղբայրն իմ՝ Յովա-
313ա նէսն, և զքոյրն իմ՝ Ղրզլարն, և զմիւս եղբայրն իմ՝ Կիրակոսն: // Եւ
Քրիստոս Աստուած քո առատ ողորմութեամբն յիշեա զկուս[ա]կրօն
ապաշխարող Խանումին հոգին, որ բազում աղաչանօք ետ գրել զսայ՝
ծաղկաքաղ աստուածային քիւրասանիցն, որ կոչի ժամագիրք, յիշա-
տակ իւրն և ծնօղաց իւրոց։

Գրեցաւ անարժանիս պիտակ անուն սրջսրշի[10], վասն խնդրոյ զհոգևոր
քևերն իմոյ՝ Խանումին:

Արդ՝ գրեցաւ ի դուռն Ս. Ըստեփաննոս Նախավկային և ընդ հովա-
նեաւ Ս. Աստուածածնի, և Ս. Գրիգոր Լուսաւորչի, և Ս. Յովաննէս Մկրտ-
313բ չին, թվին ՌՃԴ (1655)։ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և դուք
// յիշեալ լիցջիք անմահ գառնէն, ի վայելումն փոքրիկ Հովանիսին, որ
է իմ եղբայր Կիրակոսին որդի, ծառայ Տիրայմայր Ս. Աստուածածնին
և Ս. Ըստեփանոս Նախայվկային։

Բ

296ա Յիշեցէք զփցոյն գրիչս և դուք յիշեալ լիջիք ի միւս յանգամ գա-
լըստեանն. ամէն։

Թվին ՌՃԴ (1655) ի դուռն Ս. Ըստեփանոս նորաբնու[ն]ք Նախավ-
կային զվերջին նորոգումն։

Գ

1բ Յիշատակ է գիրքս այս, որ կոչի ժամագիրք Շամբեցի Կիրակոսի
որդի Հովանէսին, յիշեցէք ի Քրիստոս, որ և դուք յիշեալ լցջի[ք]...։

988

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 977

Գրիչ՝ Նազարեթ

Փառք...։ Գրեցաւ զմատեանս տեառն մերոյ Աստուծոյն Յիսուսի
Քրիստոսի և բանս աւետաբեր, և մխիթարութիւնս հոգևոր, և գանձս
անկողոպտելի... ի թվիս Հայոց Ռ և Ճ և Դ (1655)-ին, ի հայրապետու-
թեան տեառն Փիլիպոսի, ի արհի եպիսկոպոսութեան Ստաթէի մեծի սրբ-
բասնունդ վարդապետին Ներսէսի և քաջ դիտապետի, զոր տէր Աստուա-
ծըն ընդ երկայն աւուրս արասցէ. և թագաւորութեան Տաճկաց շահ Ապա-
սին, զոր ես՝ նուաստ Նազարեթ չնչինս, վատթար գոլով, և ապաւինեցայ
բարերար և մարդասէր Սբ. Հոգին և դրեցի զսա ի լաւ և ընտիր աւրինակէ։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք
ի մաքրափայլ աղօթ[ս] ձեր զիս և զծնաւղս իմ և զամենայն արեան
մերձաւորս...[11]։

---

[10] Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողները կարդացել են Միքայէլ (հտ. Ճ, էջ 356)։ Այդ սկզբունքով կարդալու դեպքում կստանանք ոչ թե Միքայէլ, այլ Միքմիքի։

[11] Ստացողի հիշատակարանը տե՛ս 1657 թ. շարքում։

989

ՃԱՇՈՑ

Երևան, № 981

Գրիչ՝ Ստեփանոս Բահանայ
Վայր՝ Էջմիածին

ա

499բ Ցիշատակագրութիւն ստացողի այսորիկ մատեանի

Գոհութիւն օրհնութիւն...։ Յորոյ յարաշարժ բարերարութենէ սկզբնաւորեալ աւարտեցաւ տօնունակ և տարեցուցակ, հոգեկեցոյց և հրաշապատում մատեանս այս, որ ունի գումարեալ զըստ իւրաքանչիւր ամսոյ տօնախմբութեան խորհուրդս բոլոր տարւոյն, տէրունական կատարմանց և իւրոց հետոց հետեւողաց նահատակաց, միանգամայն և կանոնական աւանդից եկեղեցական հանդիսից որով վարի մերս ժողով. ճաշակելով զհոգևոր քաղցրութիւն պարգևաց վերնոյն օր ըստ օրէ, կարգեալ և սահմանեալ յերշանիկ հարցն մերոց և քարոզողացն Բանին կենաց՝ վարդապետացն Հայաստանեայց և քաշ հովուացն առաջնոց, յանգագոյն և պատեհագոյն յարմարութեամբ, առեալ յաստուածաշունչ գրոց Հին և Նոր Կտակարանաց, գրաւորական և աւետարանական օրինօք գլխաւորեալ, առ ի լրումն պայծառութեան տան Տեառն, յորում պարեն մանկունք իւր, երգովք հոգևորօք, բերկրեալ յիշատակօք նահատակութեանց անդամոց Քրիստոսի, որք ընդ գլխոյն միաւորեալք՝ հայցեն

500ա և զմերս յօդաւորութիւն ընդ նոյնն։ Քանզի հասեալք լաւ//ագոյն փրկութեան, ի ձեռն արեանն հեղման մերովք պաղատակոչ ձայնիւ միշնորդ և բարեխօս պատրաստին, զի կենդանեացս և փոխելոցն աստի մահուամբ հաւատացելոց անձանց ողորմութիւն՝ հանգիստ և փրկութիւն տացի, և ի միասին պսակազգեաց երևեսցին առաջի ահաւոր դատաւորին։ Վասն որոյ և ի բոլոր յաւիտենիս յայսմիկ, գերազարդ տօնախմբութեամբ ընթերցասէր կամօք, յորդորմամբ սիրոյ, զայս աւանդ պահեն, և ի սմին և սովաւ զուարճանան, ճանապարհ և ընթացման պատճառ և առիթ մտից դրանն երկնից համարելով, զի կարասցուք զելս մեր ուղղել առ վերինն, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հօր ի փառս Աստուծոյ։

Բայց քանզի գաղափար ստուգագիծ ոչ գտաւ ըստ խնդրոյ ախորժակաց մերոց յոր վայր և յուզումն արարաք, հայելով յօրինակս յոքունս բազում իրօք սխալեալ ի նախատիպ սկզբնագիր տառից շարագրութենէ, նաև ի կէս օրինակս ըստ սկզբնադիր դրութեանց անյարմարապէս կարդեալք, և վերշնովք ևս նոյն գունակ ոչ բարւոք աւարտեալք, և յայլս ոմանս՝ թիւրութիւնս յանհմուտ գրչաց զանազանապէս սփռեալս տեսանելով, ընդ որ ոչ հաճէր անձն ճշմարտասիրաց։ Վասն որոյ և լաւագոյն համարեալ զաստուածախօս գիրս Հնոց և Նորոց Կտակարանաց զնոյն ինքն զմայրն հարազատածին գաղափար առդնել, յորմէ և ածանցեցաւ գիրքս, ճշգրտապատում բանիւք, լիալիր ոճով, անթերի ունողութեամբ, ըստ որում խնդիրք իմաստուն քննողաց պահանջեն. զորմէ և փոյթ քաջապէս արարեալ պաճուճազարդ գեղեցկութեամբ ըստ նիւթականին և ըստ իմանալոյն աւարտեցաք զտօնալրական տառս, որ ըստ առաջնոցն

աւանդութեանց Տարեգիրք յորջորջի։ Որ ունի պարունակեալ ղողջոյն ամի զիւրաքանչիւր աւուրց տօնից ընթերցումն, տէրունական հանդիսից, և սրրոց նորին ընթացից, բովանդակեալ օրինական և շնորհական պատդամօք բանից՝ առ ի վայելումն մանկանց եկեղեցւոյ և ի զուարճութիւն նոցին մտաց, ի փ�առաքանութիւն ամենաղօր անուան Տեառն և ի գովեստ սիրողաց իւրոց։

Եւ արդ՝ գծագրեալ աւարտեցաւ դիրքս յամի հաղարերորդի հարիւրերորդի երկրորդի (1653) թուականութեան արամեանս տոհմի և ըստ մեկ մարդացելոյ բանին Աստուծոյ հազարերորդի վեցհարիւրերորդի յիսներորդի երրորդի (1653), որպէս աւանդեցին մեզ ճշմարտապատում օրինակագիրքն առաջինք, յաւուրս իշխանութեան Պարսից շահ Աբասի Երկրորդի, որդւոյ շահ Սէֆու, որդւոյ շահ Աբասի Առաջնոյ. ընդ որով տէրութեամբ և բոլոր Հայաստանեայցս երկիր նուաճի անկշռելի տուժից նեղութեամբ, և հարկաց ծանրութեամբ, և խիստ ծառայութեամբ, որպէս երբեմն Իսրաէղի ի հնումն, որոց հզօր բազուկն փրկող լիցի, որում ամենայն ինչ հնարաւոր է։ Իսկ ըստ հոգևոր վերադիտողութեան, տեսչութեան տեառն Փիղիպպոսի սրբազան հայրապետի, կրկին լուսաւորչի, նոյն և ստացողի այսորիկ մատենի. զորոյ հանդէս կենաց և զքաղաքավարութիւն վարուց և զնրրութիւն շաւղաց նորայ, տինա՝ և զարդիւնաւոր // վաստակ նորա առ ազգս հայկային և զջատագովութիւն Աստուծոյ օրինաց և զպահպանութիւն կանոնական հրամանաց։ Եւս և զնուիրողական փոյթ պնդութեան նորա յընծայել զբազում անձինս Հօրն վերին, և արթուն ակամբք հովուել զնոսին, մինչև նկարեսցի Քրիստոս յոգիս նոցին։ Նաև զպայծառացուցիչ կարդ նորա առ սահմանադրութիւնս եկեղեցւոյ, և անխոնջ տքնութիւն իւր առ ի անթերի պահել զայնոսիկ, և զերևելի տօնախմբութիւն հոգևորական պարուց առ ի նմանէ եղելոց, և զամենայն բարեձևութիւն ի նմին երանելւոյ յօրինելոյ, թողցուք այլում վայրի շարահիւսել, և կամ այլում վիպողի վեհի պատմագրել, ապա թէ ոչ՝ անվրէպ գիտողին միայնում մնալ, յորում ամենայն գանձք ծածկեալ կան, զի յայտնեսցի յաւուր արդարադատութեան իւրոյ և անխաբ դատաստանին։

Արդ՝ սոյն սա երջանիկ հայրապետս ընդ բազում ուղղութիւնս յաւել և զնորոգութիւն նախագահ աթոռոյս մեծի էջմիածնի։ Քանզի տանիս սորին գոլով քակեալ և խարխալեալ բոլորովին, վասն որոյ և կազմեաց ամրագոյն մածուցմամբ, ընդ նմին և զբրգունսն եռակի և զեզերս տաննացն շուրջանակի։ Առատացուցեալ և զսրբութեան սպասսն, զոսկեղէնս և զարծաթեղէնս, և զկերպասեղէնս, և զնկարակերտս կիւտուածոց հանդերձ այլովք վայելչական զարդուք, ըստ նմին և զգրեանց բազմութիւնս զանազան մատենից առ ի լրումն հոգևոր և մարմնաւոր ախորժակաց հասարակաց։ Եւս և զսրբեալեան կողման ձեռակերտսն ծագէ ի ծաղ սա շինեաց։ Եդ և արտաքոյ պարսպի սորին շինութիւնս ոմանս զերից յարկանց ձիթաստանաց և զասպաստանսն ի բնակութիւնս ձիոց և շորուց և զայլ մասնաւոր պիտոյից տեղիս հանդերձ այգեստանօք և բուրաստանօք յոլովիւք հոդացմամբ շուրջ զսովաւ և ի սմանէ բացակայ։ Այլ

500բ

նախկին դասիւ թէպէտ և վերջին ըստ կառուցման նորոգեաց մեծածախ և զվկայարանս հանգստեան սրբոյն Հռիփսիմէի և զԳայիանեայ նորուն դայեկի. յորոց բարեխօսութենէ յայտնեցան և մասունք նշխարաց մաքուր ոսկերաց նոցա, թաքուցեալք յանակնունելի վայրի, ուր ոչ գոյր կարծիք. ուստի երևի իսկ նշոյլ խնամոց Տեառն առ վշտացեալ ազգս տակաւին ծագիլ, որով բարեյոյս արասցէ առ ինքն, զի մի՛ իսպառ ընդվայր հարցին։

Սակայն և աստանօր զմնացելովքն ոչ զանց առնեմք, այլ ահա համառօտաբար անցանեմք ըստ որում և նախագրեցելովքս։

Քանզի սկիզբն և պատճառ ձեռնարկութեան նորոգման գերագահ աթոռոյս երանելի հայրն մեր և պայծառ շահն եկեղեցւոյ սրբազան հայրապետն Հայոց մեծն Մովսէս եղև, որ և յԱստուծոյ շարժեալ ի սէր առ սբ. աթոռս բազմաշարշար աշխատութեամբ, անբերելի կրիւք դուն գործեալ հոգւով չափ սկիզբն արարեալ. նախ մաքրեաց զսա ի զիզակուտեալ աղբից, յորում թաղեալ էր շուրջանակի յամենայն կողմանց, զորս և ջրով ողողեալ հարթայատակ գետին պատրաստեաց և ապա պարսպեաց ըստ որում և յաջողեցաւ։ Կատարեաց և զերից կողմանց շի-
801ա նուածսն, որ ի միշոցին, սրբեաց և զտաճար Սրբոյն Գրիգորի ի զա//զիր ծրտաց թռչնոց, ըստ որում աւերակաց վայրացէ անզարդութիւն, որպէս երբեմն և մարգարէն, վասն Բաբելոնի նշանակէր, թէ՝ «Ցուշկապարիկք բնակեսցեն ի նմա և ողնիք ձագս հանցեն ի նմա», դադարեցուցեալ զճռռոզական ձայնս նոցա, որ զլսելիս մարդոց խլացուցանէին և զլուսարանսն վանդակապատ յօրինաց։ Հանդերձեաց սալայատակ և զկոխելի երկիր որ ի նմա։ Եւ ևս յառաջեալ ի բաց էառ զգմբէթ նորին, որ էր նիստ ի բնէ և խախտեալ և բարձրաբերձ իմն տեսակաւ կանգնեաց, յորոյ կատարման և ինքն փոխեցաւ առ անծկալին իւր Քրիստոս. կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս և ամիսս ըստ ամացն։ Սա երիցս չոգաւ առ թագաւորն Պարսից և եգիտ շնորհս առաջի նորա, որով և ազատեաց զաթոռս ի բռնագոյն հարկաց ծանրութենէ, որ ի պատճառէ անուղղագործ առաջնորդաց եդաւ ի վերայ իբրև զանուր երկաթեայ։ Էր սա յերկրէն Սիւնեաց, ի գաւառէն որ կոչի Անեան, ի գեղջէն Խոտանանու։ Գոլով ամենևին պարզ բարոյիւք և ազատական մտօք, գեղեցկադիր և փառազարդ դիմօք վայելչացեալ, զմիջինն ունելով չափ հասակին, և բոլորովին ներքին և արտաքին մարդով շնորհաշուք ճոխութեամբ արտափայլեալ, որում յարացոյց զսուրբն զԻսահակ պարթևազինն համարեսջիր ըստ ամենայն բարեունակ տեսութեան, բնականօք և մակստացականօք առատացեալ գովաբանութեամբ։ Եւ այսպիսի ցանկալի երևեալ աշխարհի և փափագելի ամենեցուն ծանուցեալ՝ փոխադրի յանմահական կեանսն վաթսուն ամաց։ Եւ եդաւ պատուական մարմին նորա ի փոքրագոյն բլրին, որ հայի յարևմուտս կոյս ի վերայ Հրատան գետոյ, և ի հարաւակողմն ի կայարանն իւր սեպհական, ուր է շիրիմ առաքելոյն Անանիայի. որ և է իսկ մենաստան կրօնաւորաց պատեալ շուրջանակի պարսպաւ ի նորին աշխատանաց վաստակոց։

Յետ որոյ յաջորդեալ նստի ի տեղի նորա յաթոռ հայրապետական բարեփառ տէրս մեր, զորմէ նախ բանիւ յիշատակեցաք սակաւուք և զգործոց նորա համառօտաբար անցաք. որ և արդ փայլէ յեկեղեցի Աստուծոյ իբրև զշահ անշիջանելի հաստատեալ ի վէմն անդրդուելի և յեցեալ ի խարիսխն անշարժ յուսոյն պահպանեալ հայրական աշովն և զօրացեալ վերնական խնամօքն։

Արդ՝ սոյն սա երշանկապատիւ և սրբազան հայրապետս մեծաւ իմն սիրով և յաւետ փափագանօք ետ գրել զսբ. տառս զայս լիապատում և ընծայեաց սբ. /// [սբ. Էջմիածնի[12]], ընդ բազում նուէրս, ի պայծառութիւն իւր և ի զբօսանս մանկանց իւրոց։

[Բ]այց ի սկզբնառութեան գրոցս պատահեցաւ բարեպաշտուհի և քրիստոսասէր կին ոմն, որոյ անուն ճանաչիւր Նարիխան, ի Տիգրանակերտ քաղաքէ, որ և եկեալ էր յերկրպագութիւն աստուածակոխ տեղւոյս, յօժարեալ ցանկացաւ և ծախիւք ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, առ ի յիշատակագրութիւն յինքենէ ի սբ. աթոռս դանձ անճողոպրելի։ Վասն որոյ և թախանձանօք պաղատիմ առ հոգևոր հարսդ և եղբարսդ, որք զկնի մեր ժառանգէք զայս տառ և ոյք վայելէք հոգևորապէս՝ ընթերցմամբ կամ գաղափար առնելով և կամ իւիք ինչ օգտութեամբ, յիշեսջիք բարեպէս մտօք սրբանուէր աղօթիւք առ Քրիստոս յոյսն քնաւից զերանելի
501բ հայրս մեր զտէր Փիլիպպոս շնորհազարդ դիտապետ, որ առիթ եղև // բարեաց բազմաց և սոյն այսր մատենի ստացող հանդերձ իւրովք ամենայնիւք աշակերտեալ մանկամբք և համօրէն հոգեսնունդ որդեկօք։ Եւ զհամեստաշուք և զերկիւղած կինն այն՝ Նարիխանն զոյիւք բոլորիւք կըցորդող և զիւրային տոհման զամենայն՝ զայրն իւր՝ զՍաֆարն, և զծնօղսն իւր՝ զՀապիպն և զԲէկունն, և զեղբայրն իւր՝ զմահդասի Ֆոանգուլն, և զքոյրն իւր՝ զԵնկիխանն, և զզաւակսն իւր՝ զԱստուածատուրն և զՊանարն, և զմերձաւոր արեանառուսն։ Նաև զգծող սորա յոքնաշխատ շանիւք և կարի զգուշաբար հոգացողութեամբ յանդ հանող զՍաեփաննոս քահանայ։ Եւ զարդարող զսա ոսկեզօծ երանգօք և պէսպէս որակօք զՆաճապետ դպիր։ Տինա և զբոլոր զամենեսեան, որք հաղորդեցան իրօք իրօք զթուղթսն յարմարելով յընդունակութիւն արուեստականութեան և զսրբագրութեան կարողութիւնսն առ սա ցուցանելով։ Եւ և զյօժարամտութիւնս յոլովս երևեցուցանելով մինչև ի տիրապէս կատարումն. աղաչեմ և աղերսեմ յիշել ի խորոց սրտէ առ գթութիւնն և յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Որպէս զի ի միասին բոլորապէս յիշողք և յիշեցելովք գտցուք թողութիւն մեղաց և ներումն յանցանաց, փրկութիւն յաւիտենականաց և հանգիստ անանց կենաց...։ Ընդ որս և ինձ իսկ Մովսէսի բանասիրի վերշակարգեալ խունդրուցացս արարողի. ձիր հատուցման ընդ հուսկ յետինսըն շնորհեսցի, որ մի ժամու յայգուոջ տեառն առակագրի։

Բ

Եւ քանզի ընդ յապաղմամբ անկեալ սոյն մատեան առ ի բոլորապէս կատարումն իւր, եղերիլ փոխադրեալ լինի յաստեացս երանելի հայրա-

[12] Անունը և ուղղանկյուն փակագծերում եղածը միտումնավոր ջնջված է։

պետն Փիլիպպոս, զորմէ և համառօտիւ իսկ ճառեցաք։ Ընդ որոյ յաջորդէ զաթոռ Լուսաւորչին բարեփառ և երջանիկ հայրապետն Յակոբոս, յամի հազարերորդի հարիւրերորդի և չորրորդի (1655) թուականութեան հայկական սեռի։ Գոլով հայրենեաց ի Ջուղայոյ, որ է մերձ ի Նախճաւան, իսկ նախնականաց ի Նիւրակ գաւառէ, այլ ծննդեամբ և սնընդեամբ ի Շօշ քաղաքէ Պարսից, ուր հայաղունք յոլովք դոն պանդխտեալք այժմ։ Սա այր ընտիր և առաքինի եղեալ, ողորմած և քաղցր առ ամենեսեան։ Վասն որոյ և արժանաւորի գերադրական աստիճանի և դլուխ կոչի հանուրց հայկական տոհմի և նստի ի քրիստոսազարդ և ի մեծապայծառ աթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Առ որով և սոյն չքնաղատեսակ և լիապատում տարեցուցակ դիրքս այս աւարտեցաւ ոսկենկար երանգաւ և պատշաճագոյն նիւթովք և ենթակայիւք պաճուճեալ յօրինեցաւ ըստ ամենայնի։ Բայց գրեցաւ ձեռամբ Ստեփաննոս քահանայի և ծաղկափթիթ տեսակաւ զարդարեցաւ Ալէքսիանոսի և Նահապետի արուեստաւորաւ, հոգացողութեամբ և սատարութեամբ Ստեփաննոսի վարդապետի։

502ա Եւ արդ՝ ընդ ժամանակս քաջ և բարի հովուապետին տեառն Յակոբայ, յորում և մատեանս այս եղերումն ընկալաւ, կատարեցաւ մեծածախ շինուածովք և սիրատեսակ և ճոխադիտակ ձեռակերտս հնչարանաց[13], յարեալ ընդ մեծի կաթուղիկէին և մօր Հայաստանեայց եկեղեցեաց, ուրանօր ձայնք բարձրավանչ զանդակաց առ տիւ և առ գիշեր ըստ ժամու ժամու հնչեն և դոչեցուցանեն։ Սովաւ և ի ձեռն սորին յաւելան և սպասք յոլովք և անօթք բազմութիւնք մեծի տաճարիս։ Ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի ոչ սակաւք, և նոցին խոկացողք և ի նոյնս պարապողք յոգնակաճառք։ Առ որով և շինուածոց ոմանց վայելչականաց հիմնարկութիւնք, և այդեաց և բուրաստանաց յօրինուածք և համանգամայն բոլորապէս և մասնաւորաբար արդեանց վիճակելոց սեպհականութիւնք գործեցան։ Որք և աթոռոյս մեծի առ ի լրումն ճոխութեան սահմանեցան, ոմանք պիտոյք և այլք զարդք պատեհականք։ Եւ արդ՝ ի սկզբանց ի գրութեանց անտի մինչև ցաւարտումն մատենիս՝ են ամք հնգետասան, յորում լրապէս կատարեալ կնքեցաւ ի միառս և ի գովութիւն դերսկգբնական պատճառին ամենայնի, և բոլորից շարունակողին, և վախճանական, և յաւիտենական էին. եղիցի, եղիցի։

Գ

33ա Ներքևի յաւանցքում Եւ զՍտեփաննոս մեղաք ի լի գծողս յիշեաւ։

990

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ

Երևան, № 1268 (1603 թ.).

Հիշատ. հեղինակ՝ Յակոբ. Երէց

Գրիչ՝ Բարսեղ

297ա [Փ]առք...։ Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց,

[13] Իմա էջմիածնի վանքի զանգակատունը։

անկատարս ի կատարելոց... և յետինս ի սպասաւորաց եկեղեցւոյ, սոսկ անուամբ Յակոբ երէց կոչեցելոյ, ծոյլս ի բարիս և օտարս յամենայն տեսակս առաքինութեան։

Յոքնական և անթուելի բազմապատկեալ, բիւրաւոր բարեաց միաժողով բագձածօղ և պարունակեալ գրեանքս զայս աստուածունակ և գերազրական, երանաւէտ և երկնաւոր շնորհի ընդունակ և ունակական, ըստացեալ բաղում ըղձիւ և փափաքանօք յետ վախճանի ի գրեանց սբ. հօրս, այսինքն հօրեղբօրս։ Գրեանց վաճառելոյն պատճառն այս է, որ վախճանեցաւ բարձունապետս մեր ի սեպհական վիճակն իւր՝ ի Ստամպօլ, ՌՁԵ (1636) թուին։ Եւս և ունին սովորութիւն այլազգիք, որ ոչ թողուն թաղել զմեռեալս ի շինամէջս քաղաքին, այլ յանշէն տեղիս և հեռի ի քաղաքէ։ Զոր Շահին չելէպին արքունական հրամանաւ թաղեաց ի Ղալաթիա, ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին։ Եւ վասն թաղելոյ զնշխարսն ի Ղալաթիա և այլ ինչ խարճ, զոր արարեալ էր և էառ ի մէնջ ԳՌԽԷ (3147) ղուրուշ և միանգամայն եղև խարճ ԴՌ և ԽԷ (4147) ղուրուշ. և այս եղև պատճառ վաճառելոյ գրեանց և այդուոյն, զոր բաղում վիշտս և չարչարանս կրեցաք ի բազմաց վասն վախճանի սբբոյս։ Այլ նեղութեան մեր և բազում վշտի պատճառ լինողք ոչ յերկարեմք, այլ թողումք անաչառ ատենին Քրիստոսի Աստուծոյ, զոր ի մանկութեան վաստակող և ի հալալ արդեանց իմոց ի վայելումն անարժան անձին իմոյ։ Քանզի ոչ ունէի ժառանգ մարմնաւոր միութարութեան, աղցաւոր և ունայն կենցաղոյս վասն ամլութեանն։ Այլ ընթեռնլով զսբ. գրեանքս մխիթարեալ հանդարտէր այրեցեալ լեարդ իմ և տոչորեալ սրտիկս իմ, հանգոյն Աննայի, փղցնոյր սրտիկս արտասուաթոր աչօք։ Հայիմ ի՝ թուչունս երկնից դիտեմ անթիւ երամ է, դառնամ և յիս հայիմ կեանքս իմ հարամ է։

Ապա ըստ իմաստնոյն որ ասէ. «Երանի...»։ Զի թէպէտ և ի մարմնաւորէն զրկեալ եմք, այլ աղօթիւք հարց և եղբարց հայցեմք ի Քրիստոսէ, որ ի հոգևորէն ոչ զրկէ[14]։ Ըստ այսմ յուսոյ և երանաւէտ ձայնին ետու
297բ զսբ. գրեանքս այսոքիկ // ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի Կեսարիա քաղաքի ոչ թէ ի փարթամութենէ և ընչաւետութենէ, այլ յաղքատութենէ և ի չքաւորութենէ ի փառս Քրիստոսի և յուսոյ արքայութեան նորա, ի թուիս Հայոց ՌՃ և Դ (1655) ամին, ի ժամանակս խարազնազգեաց հայրապետին տեառն Փիլիպպոսի վերագիտողի սբ. աթոռոյն Էջմիածնայ, և դիտասլետութեան նահանգի տանն Կիլիկիոյ, տեառն Նեռսէսի Սեբաստացւոյ, և առաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարիոյ, որ է Մաժաք հին, տէր Թորոս վարդապետին, որ յետոյ կաթողիկոս եղև ի Սիս։

Այլ ըստ տերունական բանին, որ ասէ. «Ուր գէշն իցէ անդր ժողովեսցին արծուիք»։ Արծուիք են հոգևոր և աստուածաբան բարձունապետքն մեր։ Զի ի գալ նոցա յայսմ քաղաք, որոճելով և խրատելով փրկութիւն լիցի ամենայն հաւատացելոց։ Այլ և յիշատակ փոխելոյն տեառ Քրիստոս ՌՁԵ (1636) թուին հոգևոր հօրն իմոյ, տիեզերալոյս բարձունապետին՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, հօրեղբօրն իմոյ՝ տէր Գրիգոր աստուածաբան

[14] Այնուհետև մատ կէս էջ դատարկ։

վարդապետին, որ էր աշակերտ տիեզերալոյս և խարազնազգեաց ճգնաւորին, տէր Սրապիոն աստուածաբան բարունապետին Ուրհայեցւոյ և անյաղթ փիլիսոփային, առեալ գաւազան ի նմանէ ի Տիգրանաշէն մայրաքաղաքն Ամիթ ՌԽԴ (1595) թուին։ Սա գնաց ի Բիւզանդիա վասն սբ. Երուսաղէմայ պարտուցն ի ժամանակս տէր Ազարիա կաթողիկոսին։ Զոր տեսեալ զիմաստութիւն և զխոշոր վարուց ճգնութեան սորա և հաւանեալ միաբան ամենեցուն, գրեցին առ կաթողիկոսն սբ. Էջմիածնի ձեռնադրել իւրեանց առաջնորդ։ Եւ եկեալ մինչև ի Թողաթ երթալ յաթոռն սբ. և վասն
298 յոլովութեան ջալալուն ոչ կարաց գնալ ի սբ. Էջմիածինն // և անտի դարձաւ ի Սիս առ հռչակեալ կաթողիկոսն տէր Ովանէս ի թուին և ձեռնադրեալ ի նմանէ եպիսկոպոս և առաջնորդ ի Սուամպոլու. և գնացեալ անդ արար բազում ուղղութիւնս և նստեալ ժամանակս ինչ։ Եւ ի ՌԾԸ (1609) թուին նաւեալ ի Բիւզանդիոյ յեղիպտոս. ելեալ ի [լ]եառն Սինա, ընդ իւր ունելով զՄովսէս վարդապետն, տուեալ նմա գաւազան ի Ստամպոլ, որ յետոյ եղ[և] կաթողիկոս ի սբ. Էջմիածինն, այր սբ. և առաքինի յոյժ։ Եւ կատարեալ զուխտս իւրեանց աստուածախօս լեռնէն զարձան անտի Ամիթ։ Եւ արարեալ ժողով բազում եպիսկոպոսաց, վարդապետաց, զօլվաթաւորաց, վաճառականաց և ռամկաց, նաև Եկի խօճայն Ամբա, դրեցին առ առաջնորդն և առ զօլվաթաւորսն Վանայ՝ դալ առ նոսա։ Եւ դումարեալ բազմութիւնք առաջնորդաց եկեալ յԵրուսաղէմ ՌԾԹ (1610) թուին։ Եւ էր պարտք սբ. Երուսուղէմայ ԿՌ (60.000) ղուրուշ, որ առաջնորդ էր Դաւիթն Արդար։ Եւ սատարութեամբ հզօրին Աստուծոյ, վճարեալ զպարտքն և ազատեալ զրսգեստն, և եղեալ զԳրիգոր պարոնտէրն առաջնորդ սբ. Երուսաղէմայ ի սոյն ամին, որոց վարձատրութիւնքն ի Քրիստոսէ լիցի ի ժամ դատաստանին. ամէն։

Դարձեալ ՌԿ (1611) թուին տարան ի Բիւզանդիա արքունական հրամանաւ և նստեալ յոլով ժամանակս և ձանձրացեալ ի նոցանէ հրաժարեալ եկն ի Կեսարիայ։ Դարձեալ կրկին՝ անգամ տարան ի Կոստանդինուպոլիս[15] բազում քահանայիք և արքունի հրամանաւ, որ յարևման էր առաջին տիրապետացն մերոց՝ խստակրօն վարուքն և աստուածաբան վարդապետութեամբն փայլեաց աշխարհի որպէս զարեգակն ոչ փոխելով զխոշոր վարս և զճգնողական առքինութիւնս, զոր ստացեալ էր ի կրօնաւորութեան իւրում։ Ոչ կերեալ միս և ոչ ըմպեալ գինի ի ժամ ձեռնադրութեանն, այլ միով ժամու ջատանայր զաւուրս իւր։ Բայց ի շաբաթու և կիւրակէի, մանաւանդ խորգով մաղեղինեաւն կայր զամենայն կեանս իւր և էր վկայեալ յամենեցունց և յոյժ հմուտ աստուածայնոց Հին և Նոր Կտակարանաց։ Նաև տեղեակ արտաքնոցն հանճարոյ և ևս ուստուղլապին և երկրաչափականին լի և անթերի։ Այլ և ջատագով ճշմարտութեան օրինաց և կարգաց սբ. հարցն, զանձն իւր օրինակ տալով ամենեցուն։ Այլ և զբարի նախանձն, զոր ունէր առ Աստուած և առ մարդիկք, որ անդադար խրատոյ օրինացն ուսուցանէր զամենեսեան։ Նաև զտիւ և զգիշեր յԱստուածաշունչ դրոց ընթեռնլոյ ոչ պարապէր և մինչև ի ժամ ծերութեանն յու-

[15] № 10381 ձեռագրում այդ դեպքի մասին նշված է տարեթիվ «ՌՁԲ թվին» (էջ 345բ), այսինքն՝ 1633 թ.։

սուցանելոյ և խրատելոյ ոչ դադարէր։ Եւ զաշնոցիկն ոչ առնոյր յետ վասն աշխատասէր և ժրաջան կամացն և ընթեռնլոյն։ Եւ զդիշերն առանձնական աղօթիւքն զանձն յանկողինն ոչ տայր, տքնութեամբ և սաղմոսերգութեամբ վճարեալ զառօրեա կեանս իւր ի փառս ամենասուրբ Երրորդութեանն և թաղեցաւ ի քաղաքն Ղալաթիա, մերձ ի թագաւորանիստ քաղաքն Իս-
298բ տամպոլ ի դրան եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի // մեր լուսաւորչին, ՌՁԵ (1636) թուին։ Եւ առնէ Աստուած ի տապանէ սրբոյս բազում սքանչելիս ի հիւանդս, ի ցաւագարս և յամենայն ախտացեալս ի փառս տէրութեան իւրոյ և ի պատիւ սրբոց իւրոց։

Այլ և ժողովեաց և շարադրեաց երկու գիրք զմէկն թուականք և պատմութիւնք յԱդամայ մինչև ի մեր ՌՁԵ (1636) թուին, աշխատեալ մինչ ի վախճանն իւր։ Եւ երկրորդ՝ [թարգմանեաց] գիրք մի Ուստուղապի արապի լեզուէ ի մեր բառս. այլ և գունդ մի ի մեր գիր և լեզու յերկնից հանգոյն, աստեղազարդ՝ շարիւ զարդարեալ։

Այլ և ասաց մխիթարական բանս վասն մահուան վարդապետին իւրոյ տէր Սրապիոն քաջ հռետորին, համեղ և զանազան բանիւք։ Նաև ասաց՝ Բ (2) գանձ և երկու տաղ՝ շարադրեալ ի վերայ այբուբենից, զարմանալի և խրթին բառիւք, շարադասեալ ողբերգական բանիւք և առաքեաց ի Ամիթ։ Եւ հետևակ այս է՝ ցրիւ բանիւք և ներշափական տաղիւ սդեալ զնախադաս գիծն, հանդերձ վերջադասիւ փաղառութեանց ըստ ալփափեսից տառից արուեստաւորեալ։ Այլ և ներբողեալ աղօթք հոգէխառն մաղթողականք ի սբ. պատարագին ի դէմս ամենասուրբ Երրորդութեանն և միաստուածութեանն։ Այլ և շինեաց կամուրճ մի-բազում ծախիւք, ի սահմանս Գերմանիկոյ և Կեսարիոյ մերձ ի Տօմարզոյ ՌՀ (1621) թուին սկսեալ և ՌՁԱ (1632) թուին աւարտեալ, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։

Այլ և ես՝ անարժան Յակոբ էրէցս, եղբօր որդի տիեզերալոյս վարդապետին Գրիգորի, տգէտս և անիմաստս զորպիսի գովութիւնս դրուատեցից բաբունոյս մեծի, որ գեր ի վերոյ է քան զմիտք մարդկան։ Մի՞ գայթակղեսցիս յասելս, ով սիրելի եթէ կամիս և ոչ ձանձրանաս գիտ և ընթերցիր զողբերգական և զմխիթարական գիր և զասացեալ գանձերս և զներշափական տաղերս խրթնածածուկ բառերովն և զմեղաւորս յիշեայ ի Տէր աղաչեմ։

Այլ և յիշատակ լիցի նախնեաց իմոց մեծ պապն իմոյ՝ Եալուպին և մամուն իմ՝ Վարդխաթունին, հօրն իմոյ՝ Բաղասասարին և մօրն իմոյ՝ Մթխալին, հօրեղբօրն իմոյ՝ Խտրպալուն և հօրաքեռն իմոյ՝ Թուխտսարին, և հարազատ եղբարց իմոց և մանկութեան և յերիտասարդութեան առ Քրիստոս փոխեցելոց՝ Եաղուպին, Կարապետին, Ովանէսին, Յովսէփին և Ոհանին։ Նաև գեղեցկատիպ և քաղցրաձայն դպիր Աբրահամին, խնդրոդի բանի և ամենայն արեանառու մերձաւորաց՝ կենդանեաց և առ Քրիստոս փոխեցելոց. ամէն։

Կրկին և երեքկին աղաչեմ յիշել ի տէր զՅակոբ էրէցս և զկենակիցն իմ՝ զկոչեցեալն Խաթուն, և զմայր մօր իմոյ՝ զՄարթայն և զքեռին իմ՝
299ա զՊալին և զորդէգրութեամբ // սնուցեալ որդին իմ, վարժեալ բազում աշ-

խաաութեամբ, զտէր Սիմէօն քահանայն, որ առ Աստուած փոխեցաւ, աղաչեմ յիշել Տէր. ամէն։

Նաև զտէր Անտոնն և զհօրեղբօրորդին իմ, զմահտեսի Յարութիւնն և զմահդեսի Ուղուրլուն և զ'Ղայսար չելէպին, որ ի ժամ ձեռնադրութեանն բազում եկեղեցի աշխատութիւն կրեցին վասն մեր, հատուցէ նոցա Տէր վարձս ըստ վաստակոց իւրեանց, ևս առաւել ամենայն հաւատացեալ քրիստոնէից ողորմեսցի Քրիստոս Աստուած յաւուրն ահեղին. և ինձ մեղապարտ գծողիս Բարսեղի. ամէն։

Իսկ որ շարժողն է ամենի և շարժէ զամենայն էակքս ի բարի և ինքն անշարժ է ամենայնի Հոգին Ս. Աստուած ճշմարիտ, որ շարժեաց զշարժումն ի բարի...։

991

ԱԻՆՏԱՐԱՆ

Երևան, № 2577

Մաղկող՝ Մաթէոս դպիր

ա

329բ *Ալդ՝ ևս Մաթէոս դպիրս, որ եմ յերկրէն Ծարայ, ի գեղջէն Չափարու, նստար էի տեառն Փիլիպոս կաթողիկոսի, ելեալ գնացաք ի սբ. Երուսաղէմ, և յանտէն դարձաք ի Սամսպոլ. և անդ ուսայ ի Մարկոս վարդապետէն զպատկերն։ Աղաչեմ յիշել զՄաթէոսս և զՄարկոս վարդապետն։*

Գրիչ՝ Թամուր դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

բ

Փառք...։

329ա *Սմին այս աստուածաւանդ սբ. Աւետարանիս ցանկացող եղեալ աստուածասէր և բարեպաշտ Մարտիրոս վաճառականն, որ է սա յերկրէն Գոխտան դաւառէն, ի գեղջէն Փառակու, ստացաւղ եղեալ սբ. Աւետարանիս ի հալալ արդեանցն և ետ յիշատակ անշնջելի աստ և ի հանդերձեալն ի դուռն[16], յիշատակ իւրն և ծնաւղացն, հարն՝ Յոհանին և մօրն՝ Եզտիխանին, և [պ]ապոյն՝ Ղուկասին, և մամին՝ Գուլստանին, և մաւրապապին՝ Միրզաեանին, և [մօ]րէնի մամին, և եղբարց Մարտիրոսին, Մէրապին և Սարկաւագին, և հանգուցեալ եղբաւրն՝ Մուրատեասիրին, և քերցն՝ Ուստիանին, հանդուցելոյն՝ Սաւգուլին և ամենայն արեան մերձաւորաց։*

Արդ՝ յիշեցէք զստացաւղ սբ. Աւետարանիս զՄարտիրոսն, և զկողակիցն իւր՝ Խունտին, և զորդիսն իւր՝ զՍատուրն, զ'Ղարախանն, զտէր
329բ *//Թատ[ոսն], զՅակոբն, զՄուրատն և զՍարուխանն։*

Դարձեալ յիշեցէք զՄէհրապն, և զկողակիցն իւր՝ Մարիամն, ւ զորդիս իւր Յոհանէսն, Անդրէասն։

---

16 Եկեղեցու անունը չի գրված և մեկ տող բաց է թողնված։

Դարձեալ յիշեցէք զՍարկաւագն, և զկողակիցն իւր՝ Անթառամն, և որդի իւր զՎարդանն, և ամենայն արեան մերձաւորսն իւրեանց. ամէն։

Արդ՝ դրեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՃ և Դ (1655)[17], ի արքայանիստ և մեծահրչակ քաղաքս Կոստանդն[ու]պալիս, ի դուռն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն, ձեռամբ Թամուր դպրի, [և] նկարեալ [աւ]ա[րտ]եցաւ դոյն զդոյն [ծ]աղկաւք ոսկով և պատկերով ձեռամբ մեղապարտ և անարժան Մաթէոս դպրի, բարտուղարի [մերոյ] տեառն սրբազան Փիլիպպոս կաթողիկոսի։

330ա Աղաչեմ զհ[անդիպ]ողսդ /// ուգնել գրողի /// // /// [ի] հ[այրպետ]ութեան Հայոց տեառն Փիլիպպոս [ս]բբազան կաթողիկոսի, որ եղև [կրկին] լուսաւորիչ ազ[գիս Հա]յոց, նոր[ոգեաց] վանորայս և յանապատս ևս [փ]առա[տրե]ցոյց /// վարդապետաւք և եպիսկոպոսաւք։ Ե[ւ ի յ]այսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս /// վարդապետին Յակոբ բաբունոյն, որ Աստուած բարով վայել տացէ և մշակ առանց ամաւթոյ արասցէ. ամէն։

Ստացող՝ Մարտիրոս

Գ

Կատարեցաւ սբ. Աւետարանս ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մահմատին, որդոյն սուլթան Իպրահիմին, և թագաւորութիւն Պ[արսից] /// հայրն իմ՝ Յոհանն և մայրն իմ՝ Եզտիխանն, որ են հանգուցեալ առ Քրիստոս, և եղբարքն իմ՝ Մէն[ր]ապն և Սարկաւագն, և հանգուցեալ եղբայրն՝ Մուրատհասիլն, և քորքն իմ՝ Ռուսիանէն և հանգուցեալն Սաւգուլն, և զուստերս և զդստերս իմ և յեղբարց իմոց և զամենայն արեան մերձաւորս իմ...։ 330բ

Դարձեալ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զՄարտիրոսս, որ ստացաւ սա ի հալալ ընչից իւրոց ///

Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զձեզ, ով դաս քահանայից և սարկաւագաց, որք հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալով կամ օրինակելով, զգուշութեամբ պահեսջիք ի կրակէ և ի ջրէ, և յիշեսջիք զանարժան Մարտիրոսս ի մաքրափայլ յաղաւթս ձեր և դուք յիշեալ լիջիք...։

992

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4145

Գրիչ՝ Գրիգոր դպիր

Վայր՝ Ստաթէի անապատ

340ա Փառք..., որ ետ [կարո]ղութիւն սուտանուն [Գր]իգոր դրպրիս գրել լվ[ս]անդուխտս սբ. և կազմել [ի] ժամանակս քաջ բարու[ն]ի և խրստակրօն Արիստակէս վարդապետին, որ եդ գրել ի սբ. ուխտս ի մեծ անա-

[17] Ինչպես տարեթվի, այնպես էլ հիշատակարանի շատ մասերում մելանը թեև թափված է, բայց տառերի հետքերը մագաղաթի վրա մնացել են և հնարավոր է ղղալի մասն անսխալ կարդալ։

պատս Ըստաթէի, ի թուին Հայոց ՌՃ և Դ (1655) ամին, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի:

Դարձեալ յիշեցէք ըզԳալուստս միայնակեացն, որ զթուղթս կոկեաց։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

993

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5236. տե՛ս նաև՝ ՅՀՎԼ, № 393, էջ 915—916

Ծաղկող՝ Աստուածատուր դպիր

ա

15ա Աստուածածին Մար[ի]ամ բարեխօսեայ վասն մեզ մեղաւորացս՝ ղծրող սորին Բարսեղ քահանայն և զծաղկող սորին զԱստուածատուր դպիրս յիշեցէք ի Քրիստոս։ Թվին ՌՃԳ (1654)[18]։

Գրիչ՝ Բարսեղ քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

բ

392ա Յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր ծաղկող սորին[19]։

Զարագս ի [չ]արին և զծոյլս ի բարին, ո՛վ եղբարք, <անմեղ> անմեղադիր լերուք, զի կարն մեր այս է. եթէ սխ[ա]լանաց հանդիպիք անմեղադիր լերուք զանարժան Բարսեղ քահանայս, յիշեցէք ի Քրիստոս ի միւսանգամ դալըստեանն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։ Որ բաղում աշխատանօք դրեցաք սբ. Աւետարանս։

գ

392բ Փառք...։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թուականութեան Հայոց ՌՃԳ (1654), ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անծան և անծող գրչի Բարսեղի քահանայի և մեղօք զառածեալ։ Արդ՝ գրեցաւ սա ի յաշխարհ Պարսից, ի գեօղաքաղաքն Ջուղայու, ընդ հովանեաւ Ս. Բեթղէհմ (sic), ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, և ի վերայտեսչութեան նահանգիս Պարսկաստանի հեզահոգի արհեպիսկոպոսի տեառն Դաւթի, որ երեք ամ է նստեալ յաթոռ եպիսկոպոսութեան, որ ի Յերուսաղէմ ձեռնադրեցաւ,
393ա որ է սա Ջուղայու։ Եւ ի թագաւորութեան Պարսից շահ // Ապասուն։ Աղաչեմք զձեզ, որք հանդիպիք յայսմ աստուածաշունչ գրոյս կարդալով կամ գաղափար առնելով, բառնայք ի սմանէ սխալութիւն և անմեղադիր լերուք խոշոր գրոյս. զի կայրն մեր այս չափ էր, այլ աւելի ոչ գիտեմք։

Բայց ես հայցեմք արտասո[ւ]ալի,
հանդիպողացդ ամենայնի,
Այլ եմ անուամբ ե եղկելի,
մաղթիմք յիշմամբ աղօթելի։
Բարունեացն և հրաշալի,
դուք ընկալչիք մասն բարի,

[18] Հիշատակարանը գրված է Մարիամ Աստվածածնի նկարի խորքի վրա, գունավոր և զվխատառերով։

[19] Գրված է կարմիր մելանով և ապա հինգ տող դատարկ։

Սա և գործով յոյժ զազրալի,
և յիշման առնէք զիս արժանի։
Ղեկաւար եմ անցկանի,
Ի սոյն ժամու շարժմամբ կրթի,
է իմ գրեալ աշխատելի,
որ ոչ կայ յիս մասն բարի։
Բամեալ և ոչ արհեստ գրչիս,
այլ լոկ անուամբ կեամ կենդանի.
է և հայցեմ զմեղադրելի,
Թէ ևս սխալ ինչ աստ գտցիս։
Յորքան յիշէ մտօք սրտի,
վերագրեալս յիշատակի,
Այլ և եղբարցդ իմ ըստ կարգի,
և զծնողքն յամենայնի։
Նաև գրեցի յանձ եղկելի,
393բ զի ոչ ունիմ // գործս բարի,
Իսկ մեք հանցուք Յիսուսի[20],
ընդ Հօր հոգովքն ճշմարտի։
Եւ Քրիստոսի փառք. ամէն։

Դ



[21]

Գրիչ՝ Սարգիս դպիր

Ե

394բ ... // Զոր և գրեալ է, Թէ «Ծրանի...». քանզի և զայս լեալ յաստուածային գրոց Անեթիս քահանայն, որ ըստացաւ ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց զայս պատուական ակս շաբիւղայ, ուր կայ հանգուցեալ Աստուածն Իսրաեղի...։

---

[20] Կենտ տողերի առաջին տառերից հոդվում է «Բարսղ էրէցանի»։

[21] Ծածկագիրը կարդացվում է. «Քահանա Բարսեղ ծառա, քահանա Յոհանէս թվ. 1655 Մշախիրցի»։

Արդ՝ կատարեցաւ սբ. Աւետարանս ... ի քաղաքս Շօշ, որ է Ըսպահան՝, ի գեօղս Ջուղայ, ընդ հովանեաւ սրբազան, ձեռամբ Բարսեղ քահանայի,
395ա *ի թվականութեանս ՌՃԴ (1655), ի հայրապետութեան տեառն մե//ր*ոյ Փիլիպոսի *կաթուղիկոսի, և մերոյ աթոռոյս քաջ բարունապետ Դաւիթ վարդապետի, և ի թագաւորութեան փոքրիկ շահ Ապասին, և մերոյ յերկրակալութեանս Սաֆրազին:*

Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Քրիստոս և ի սբ. յաղօթս ձեր զքստացող սբ. Աւետարանիս Աւետիս քահանայն և զծնողքն իւր՝ Իփակն, Մարիամն, և եղբայրքն իւր՝ Միրումն, Աւաքն, Ովանէսն. և հանգուցեալ եղբայրքն՝ Մկրտիչն, և քոյրքն՝ Շարբաթն, Փարիխանն. ամէն։ Կրկին անգամ յիշեցէք Աւետիս քահանայն և կողակիցն իւր՝ Շուշանն, և որդին՝ Ընտրիասն, և դստերքն՝ Սողումն, Սափուրն. հանգուցեալ դուստրն՝ Սամպարն, Մարիամատիկն. ամէն։

Դարձեալ յիշեցէք Մկրտիչն և կողակիցն՝ Մարիամն, և որդին՝ Աղաջանն, Վարդանն, Թասայն, Թեանթորոսն. ամէն։

Դարձեալ յիշեցէք Միրումն և կողակիցն իւր՝ Թազազուկն, և որդիքն՝ Առութն, Յոհանջանն, և դուստրն իւր՝ Արզուխանն. ամէն։

Դարձեալ յիշեցէքն Աւաքն և կողակիցն՝ Խանումն, և դուստրն իւր՝ Մասփուռն, Վասիլսոն, Անային. ամէն։

395բ *Դարձեալ յիշեցէք Յովանէսն և կողակիցն իւր՝ Հուրումսիմէն, և դուստրն իւր՝ Սուպրիկն, Սալվարն. ամէն։*

Կրկին անգամ յիշեցէք Աւետիս քահանայն և պապն իւր՝ Ներսէսն, և հանիկն՝ Մարիամն, և զհօրեղբայրքն՝ տէր Յովասափն, և որդիքն՝ Փիլիպոս քահանայն, Բարսղամն, Բարսֆիազն, Բայինդուրն, Պարսամ քահանայն, հօրեղբայրն՝ Թաթէոսն, Ղազարոս քահանայն, հորեղբօր որդին՝ Մկրտիչն, որդին՝ Պապիկն:

Դարձեալ յիշեցէք Աւետիս քահանայն և կողակիցն իւր՝ Շուշանն, և աներն՝ մահդասի Մալիքն, և զոքանչն՝ Խանփարվարն. ամէն։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր մեղօք զառածեալ Սարգիս դպիրս, որ յիշատակարանս գծագրեցի, և զծնողքն իմ՝ Մարտիրոս քահանայն և Փարիխանն. ե դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

994

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7300

Գրիչ՝ Ղազար քահանայ
Վայր՝ Շէնեէր

Ա

121ա Ղազար *գրիչս յիշել խնդրէ ողորմայիւ։*

Բ

243բ *Փառք...։*

246ա *Ուստի և տեսեալ զորա անճառ փրկագործութեան խորհուրդ, պատուական և ընտրեալ տանուտէր Աղաջանն <և> ստացաւ զսբ. Աւետա-*

ոտնս, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հօրն՝ Միրումին, մօրն՝ Խաթունջանին, և իւր կողակցոյն՝ Մարիամին, և որդոցն՝ Սիմատնին և կողակցին՝ Մարգարիտին[22], Պետրոսին, և եղբօրն՝ Ղօնջին և կողակցոյն՝ Բաջուն, և որդոյն՝ Սմբատին և այլոցն. և միւս եղբօրն՝ Մարտիրոսին և կողակցոյն՝ Լեյլիխանին, և որդոյն՝ Միրումին, և քերց սոցին Փարուն, Բանալուին և ամենայն ազգականացն. ամէն։

Եւ արդ՝ ես յետինս ի քահանայս և անարժանս ի մանկունս եկեղեցոյ Ղազար սուտանուն, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. «Ցոր կոչումն կոչեցար, ի նմին կացջիր»։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բարեաց և թափուր։ Այլ յուսամ ի մարդասիրութիւնն Աստուծոյ, զի իմ բազում մեղացն թողութիւն արասցէ։

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրս Որոտան, ի գաւառս Շէնեէր,
245բ ընդ հո//վանեաւ Սրբոյն Ստեփանոսի, ի հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի, և ի թուականութեան Հայոց Ռ[ՃԴ][23] երեք և մի (1655), ձեռամբ Ղազար անիմաստ և ախմար գրչի։ Եւ ես բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատութեամբ գրեցի անարժան ձեռօք իմովք, ի յստոյգ և յընտիր աւրինակէ, կենաւք, տառապանաւք և բազում պանդխտութեամբ։

Արդ՝ որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր Ղազար գրիչս և ղծնաւղսն իմ՝ Կիրակոս քահանայն, և Թուրվանդէն, և զեղբարքն իմ՝ Ալէքսիանոս քահանայն և Արիսաագէս սարկաւագն, և կուսան քեռն իմ՝ Մարգարիտն և զայլս ամենայն. յիշողքդ՝ յիշեալ լիջիք յարքայութեան Աստուծոյ. ամէն։

Գ

246ա Դարձեալ յիշեցէք զՄարտիրոս քահանայն և զծնօղսն իւր, որ բազում աշխատանք ունի վերա սբ. Աւետարանիս, յիշողքդ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն։

995

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, լուսանկար, № 110

Ստացող՝ Մելքոն

Ա

170ա Փառք...։ Արդ՝ եղև աւարտումն գրոյս այսմիկ ի թուականութեանս Հայոց ՌՃԴ (1655), ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի սրբազան

---

22 Ձեռագրում «կողակցին Մարգարիտին» հատվածը գրված է «Պետրոսին» անունից հետո, բայց նշանով ցույց է տրված տեղը՝ «Սիմատնին և» հատվածից հետո։ Այս Մարգարիտի հիշատակարանը տե՛ս 1656 թ. շարքում։

23 Ինչպես այստեղ, այնպես էլ նույն ձեռագրի 1656 թ. հիշատակարանում հարյուրավոր ցույց տվող Ճ տառը շնչված է։

կաթողիկոսին և ի թագաւորութեան Պարսից փոքու շահ Ապազին:

Ես՝ վաճառական Մելքոնս ստացայ զսբ. փոքրիկ ժամագիրքս ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ իմ և իմ ծնողացն։ Ոչք հանդիպիք սմա՝ յնթեռնողն կամ ի յօրինակելն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք բերան մի Հայր մեղայիւ։

Գրիչ՝ Թաքէոս
Վայր՝ Էջմիածին

բ

170բ *Դարձեալ յիշեցէք ծրօղ սորին սբ. Էջմիածնայ // գրագիր Թաքէոսս և զծաղկօղն զդպիր Նահապետն, որ ընդ հովանեաւ սբ. Էջմիածնին բազում սիրով գրե[ց]ին և ծաղկեցին, յիշեցէք...*[21]։

996

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Կ. Ցուղբաշյան, ԻԲ, C—50

Գրիչ՝ Դաւիթ սարկաւագ
Վայր՝ Արտաւիլ

ա

5բ *... ընդ նմին ողորմի ասասչիք ի Դաւիթ գրիչս և զաշխատաւոր վարպետն իմ՝ զտէր Կիրակոսին և որդոյն իւրոյ՝ Յովանիսին, և դուք ողորմութիւն գտջիք ի Քրիստոսէ ապենիազ արարչէն և ամենայն արեան մերձաւորացն՝ կարդացողաց և լսողաց...։*

բ

6ա *...Վասն որո[յ] ցանկացող եղեալ յայսմ աստուածատունկ, ծաղկաւէտ և վարդայփթիթ բուրաստանիս երանելի, բարեմիտ և հեզ, խոնարհ... քաշ, բարի զէվազն և զորդին իւր՝ Յոհաննէսն, Ամիրխանն ստացան զսայ, ի հալալ ինչից իւրեանց, յիշատակ յաւիտենից։*

Վասն որոյ կոչեցեալ է սայ Այսմաւուրք, որ ժողովեալ ունի զամենայն աւուր պատճառս որիշ որիշ զ[յ]իշատակ սրբոց ի սկզբանէ տարոյն մինչև ի կատարումն տարոյն, զի սէր և յոյս ջերմեռանդ յիշատակել սրբոցն բարեխօսս ունելով վասն իւր առ Աստուած... զի յոյժ փափագէր ճաշակել

6բ *զհամ քաղցր//ութեան բան ի սորա [յիշ]ատակի տէրն Էվազին և ծն[ող]ացն՝ Յոհանիսին, Թուրվանդին, և կողակցին՝ Ղումրիփաշին, և Ինջուն, և որդոցն՝ Ամիրխանին, Յոհանիսին, Հայրապետին, Մարխասին. և դստերն՝ ///սրին խաթունին, մարց պապուն՝ Թունիաթին, կողակցին՝ Թուրվանդին, որդոյն՝ Ամիրին, Ամիրխանի որդոյն՝ Թումայչանին, Յովանէսին, Թունիաթին, դստերն՝ Թուրվանդին, Սայիպսուլթանին, Աղայփաշին, Գարիանին, Յոհանիսին, ...*

[Գ]րեցաւ Այսմաւուրքս, որ կոչի սրբոց վկայարան, [մե]ղաւորաց քաւարան ի քաղաքս Արտաւիլ, ձեռամբ Դաւիթ սարկաւագին։ Եւ աղաչեմ

---

[21] *Փարիզի Ազգային մատենադարանի* Arm. № 48 *ձեռագիրն է։*

յիշել ի Տէր զԿիրակոս քահանայն, որ փոխե[ա]ց ա[ս]տէս և Աստուած ողորմի ասասջիք...։

Ստացող՝ Յովանէս

գ

Արդ՝ երես անկեալ աղաչեմ յիշել զանարժան Յովանէս *զանարժանս, որ անունս միայն ունիմ և ոչ գործս։ Մասն մի բարի աղաչեմ լի սրտիւ ողորմի առաջի տէր* Կիրակոսին, *աղաչեմ, աղաչեմ...։ Ի թուականիս Հայոց ՌՃԴ (1655), ի հայրապետութեան տեառն [սրբա]սնունդ կաթուղիկոսին՝ տէր* Փիլիպոսին. *և ի երթալն նորա* Յերուսաղէմ *և ի դառնալ ի յէջմիածին իւր օթևանս և միւս իշխանի և հայրապետին մեր զՅակոբ վարդապետին, ի թագաւորութեան Պարսից շահ* Սէֆու, *որդի փոքր շահ* Ապագին, *որ նստեալ ի Լսպլբեան քաղաքին։ Արդէն աղաչեմ յիշել զտէր* Փիլիպոսն *և ողորմի ասել. ամէն։*

997

ԺԱՄԱԳԻՐՔ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏ

Rapp. Mac., էջ 18. տե՛ս նաև ՈՅՁՄՎ, № 687, էջ 178

Գրիչ՝ Թամուր դպիր

Փառք...։ Արդ՝ եղև զրաւ տառիս, որ ասի Աղաւթմատոյց ի թվականիս մերում ՌՃԴ (1655), ի թագաւորութեանն տաճկաց սուլտան Մահմէտ, *տղահասակ կայսեր և ի հայրապետութեան Հայոց տեառն տէր* Փիլիպպոս *սրբասնունդ կաթուղիկոսի, ձեռամբ բազմամեղ* Թամուր *դպրի։ Ի վայելումն նորաբողբոջ* Պետրոս *դպրի, նիւթ բարեգործութեան, և գործի արդարութեան... ողորմեսցի ծնաւղացն նորա՝* Ղազարոսին *և* Ազպահարին, *և ամենայն առուարեան մերձաւորացն, և տացէ ուրախ սրտիւ վայելել զսա մինչ ի ժամ ծերութեան. ամէն։*

998

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

ՏԵՐԱՎՔ., № 545

822 *Փառք...։ Յամի թուականիս մերոյ սեռի ՌՃԴ (1655) կատարեցաւ Դատաստանագիրքս և Կանոնագիրքս ձեռամբ ումեմն անարժանի, ընդ հովանեաւ կաթուղիկէ եկեղեցւոյն Ս. Գէորգի, ի հայրապետութեանն Հայոց տեառն Փիլիպպոսի սրբոյն կաթողիկոսի, նախ և առաջնորդութեան քաղաքիս* Յովհաննէս *երջանիկ րաբունեաց պետի։ Ընդ որս փափաղալ եղեալ այսմ պերճացեալ սուփերիս, հեզահոգի և պարզամիտ, հոգեսէր մահտեսի տաշճի* Ներսէսին, *որ ստացաւ զսա ի հալալ արդեանց և ետ յիշատակ ի դուռն Ս. Էջմիածնայ, ի ձեռն* Յովհաննէս *վարդապետին, որքան որ կենդանի է, և զկնի մնասցէ յիշատակ անջնջելի ի դուռն Ս. Էջմիածնա[յ]։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասդ սրբազանիցդ, որք հանդիպիք այսմ տառի, յիշեսջիք ի սբ. յաղօթս մահդեսի տաշճի* Ներսէսն, *և զծնօղսն՝* Խաչատուրն, *և զմայրն՝* Խանազատն, *և իւր կողակցուն՝* Մէն-

rիին, և եղբօրն Քէմալին, Վարդանին, և կենդանի որդոյն՝ Սատաղային: Նախ և զսբ. հայրն մեր՝ զտէր Յովհաննէս վարդապետն յիշեսջիք, որ պատճառ եղև ըստանալով զԿանոնգիրքս յիշատակ իւրն, մինչ որ կենդանի է և յետոյ Ս. էջմիածինն, իսկ յիշողքդ և յիշեցեալքդ վարձս Աստուծոյ ընկալջիք ի յահեղ դատաստանին Քրիստոսի. ամէն:

999

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3196

Ծաղկող, կազմող՝ Գրիգոր քահանայ

Վայր՝ Քարհատ

296բ Փառք...: [Շ]նորհիւն Տեառն ամենակալի և նորին օգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս, ձեռամբ մեղսաներկ Գրիգոր լոկ անուամբ քահանայի: Զոր էր շաղկապեալ երանեալ աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայն անկանելով հանճար...:

297ա [Ա]ռդ՝ այսպիսի բիւր գանձուց և մեծագին մարդարտաց ցանկացող և անցկալի սիրով փափագող սբ. և հրաշազարդ Աւետարանիս, երջանիկ և սրբազան հայրապետն Հայոց և Աղուանից տեառն Պետրոս մաքրասուն կաթուղիկոսն, որ էր վարժեալ ի վարժարանի վարժապետին Ղուկասոյ տիեզերաքարոզ և լուսազարդ բանիբուն հռետորի: Քանզի այս վարդա-

298ա պետս // Ղուկաս յոյժ փափադմամբ գրել ետ զԱւետարանս ձեռամբ Աւետսի քաշ քարտողի, որպէսզի թէ տարեալ հասուցցէ ի ձեռս վարպետաց կատարելոց և տայցէ զարդարել ոսկով և երփնափայլ գունով, վիճակեցաւ մահու և փոխեցաւ ի կեանս յաւիտենից: Եւ մնաց սա անկատար ի գործոյ: Որոյ Տէրն տերանց և կատարիչն անկատարից, տայցէ զվարձս վաստակաց իւրոյ աշխատանացն. ամէն:

Եւ յետուրջ սակաւ ինչ ժամանակաց[25] ի յարմատոյ սորա բուսեալ մեզ ողկոյզ լուսապտուղ, զլուսատուն հոգոց զտէր Պետրոս կաթուղիկոսն արժանացեալ կարգի հայրապետութեան և նստեալ ի յաթոռն Գրիգորիսի, թոռինն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի սբ. և հրաշափառ ուխտին Գանձասար, որոյ օգնականութեամբ Ս. Հոգւոյն ետ ձեռս և վերստին զարդա-

298բ րեաց զաթոռն, մանաւանդ զկարգ // և սահման, որ խախտեալ և ապականեալ կայր ի տանս Աղուանից, ուղղեաց և հաստատեաց զամենայն: Իսկ ի թուականութեանս Հայոց ՌՃ և Դ (1655) ամին բերեալ առ իս զԱւետարանս և հրամայեաց զարդարել ոսկով և բազմերանգ գունով: Եւ իմ տեսեալ զսա ընկալա, որպէս որդի հարազատ, առեալ աղերս ինչ ի ձեռաց հօր իւրոյ, և ետու ձեռն զարդարել ըստ իմում անվարժ տկարութեամբս: Եւ ինքն կաթուղիկոսն Պետրոս ի ստանալ այսպիսի մեծատանչ Աւետարան ուրախ եղև իբր ընծայ ի վերուստ առաքեալ. և յաղագս յիշատակի հոգւոյ իւրո[յ] ետ աւարտել, զի յետ խոյս տալոյն իւրո[յ] ի

---

25 Ուրեմն, սույն հիշատակարանը ձեռագրի գրչության հիշատակարանը չէ, այլ զարդանկարման, որը կատարվել է 1655 թ., իսկ ընդօրինակումը՝ դրանից «սակաւ ինչ ժամանակաց» առաջ:

սնոտի կենցաղոյս, առաշնորդեսցէ առ յոյսն ամենայնի յԱստուածն բոլորից, հանգուցանել զհոգի նորին ի գոգն Աբրահամու. ամէն։

Եւ արդ՝ ես նրուստս և եղկելի թշուառացեալս Գրիգոր ծաղկող և կազմող սորա, խոց լերդով և թախիծ կսկծալի սրտիս, հողամած դիմօք
299ա ա//ղաչեմ, զդասդ սրբազանից զպատահող սբ. Աւետարանիս, սրտի մտօք և բարի կամօք, երկար կեանք և ամենայն իրաց յաջողումն խնդրել ի յԱստուծոյ զվերոգրեալ հայրապետին տեառն Պետրոսի կաթուղիկոսի և աստուածագութ ծնօղի իմո[յ], և յետ աստեացս յելանելոյ արքայութեան արժանացուսցէ։ Այլ և աղաչեմ յիշել զպետն սբ., ընդ նմին և միագումար մերձակայսն, որք ընդ նմին կան՝ զտէր Կիրակոսն քաջ և հզօր ամենիմաստ վարդապետն՝ յաջորդն աթոռոյն և աջ բազուկն իւր, զվերադիտողն Եղիշէի առաքելոյ սբ. ուխտին, զտէր Աստուածատուր արհեպիսկոպոսն վերատեսուչ աթոռոյն Գանձասարու, զտէր Յովհաննէս եպիսկոպոսն, զտէր Եղիա եպիսկոպոսն, զտէր Մինասս եպիսկոպոսն, զդպրապետսն, և զդպիրսն. և զամենայն պաշտօնայսն ուխտին յիշել և ամենեցուն երկար կեանք և մեղաց թողութիւն խնդրել ի յԱստուծոյ. և Տէրն փառաց ձեզ ողորմեսցի. ամէն։

299բ Այլ և աղաչեմ յիշել զպարոն Ատիպէկն՝ զդաստիարակն ամենայնի, քանզի բազում նեղութիւնս կրէ ի դուրս թագաւորաց և մեծամեծաց, վասն աթոռոյն և տանս Աղուանից, որո[յ] վարձս բարեաց ի Տեառնէ ընկալցի. ամէն։ Եղև աւարտ սբ. Աւետարանիս ի յերկիրս Գանձու, ի գեօղս Քարճատ, ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին փոքու, ի հայրապետութեանս Աղուանից զվերոգրելոյն, յամսեանն Հոմայեցւոց ապրելի երկտասանոջն։

1000

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2680 (1378 թ.)

Նորոգող՝ Մխիթար

583բ Նորոգեցաւ ձեռամբ մեղսասիրի յոգնապարտի և թշուառակի Մխիթարի, ի ներ թուում՝ հազարում հարիւր և չորրորդում (1655), ի վայելուշ Ս. Աստուածածնում Զարէքայ սբ. անապատում, աղաչեմ յիշել անտրտում։

1001

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3003 (1500 թ.)

Նորոգող՝ Դաւիթ քահանայ

255բ Զվերջին նորոգիլ տրուղ սբ. աստուածախօս Աւետարանիս հեզահոգի, աստուածասէր Մխիթար քրիստոնեայն և ծնողացն՝ Ոսկանին, Եղիսաբեթին, և եղբարցն՝ Գրիգորին, և քրւերցն, և ամենայն արեան մերձաւորացն, որ ի Քրիստոս են հանգուցեալ...։

Դարձեալ յիշեցէք զՍնակն և զկողակիցն՝ Նազլուխանն և ծնողացն՝ Մխիթարին, Մարգարիտին, և որդոցն, և դստերացն։

Դարձեալ յիշեցէք զՄարգարէն և կողակիցն՝ Մարիանն, և որդին՝ Պապանան. Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ։

Դարձեալ յիշեցէք զնախահարքն՝ զտէր Սիմաւոնն, Ներսէսն, Մխիթարն, Մաթէոսն, Աստուած իւրեանցն արքայութիւն շնորհէ։ Վարդանն, Մարիանն։ Դարձեալ յիշեցէք Ովանէսն և կողակցին՝ Խանումաղին. Աստուած իւրն արքայութիւն շնորհէ. և ծնօղացն՝ Թամուրն և կողակիցն՝ Դավլաթխանումն։

256ա Դարձեալ յիշեցէք հեզահոգի աստուածասէր Խաչատուրն և ծնօղացն՝ Վարդանանն, Սելումն և կողակցին՝ Դաստագուլն, և որդին՝ Գասպարն, և նախա[հա]րքն՝ Գրիգոր քահանայն, և որդին իւր՝ Գասպարն, և եղբարցն, և քրտերցն, և ամենայն արեան մերձաւորացն...։

Նորոգեցաւ ձեռամբ Գաւիթ քահանայի, թվին ՌՃԴ (1655)-ին։

Դարձեալ յիշեցէք զտէր Աղազարն, որ [յ]որդորէց բազում շանիւք՝ Աւետարանս կազմիլ ետուր։ Աստուած զինքն փառաւորէ։

1002

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 3602

Նվիրատու՝ Յակոբ
Վայր՝ Արզրում

ա

256բ Արդ՝ ես նուաստս և անպիտան,
Յակոբ անուն անձն անարժան,
Լցեալ մեղօք յոյժ զանազան,
Եւ ի բարեաց թափուր ւ ունայն։
Զձեզ աղաչեմ ո՛վ պատուական,
Եղբարք և հարք իմ սրբազան,
Սբ. աղօթից ձեր մաքրական,
Յիշման առէք և զիս արժան։
Այլ և զեղբայր իմ՝ զտէր Վարդան,
Ըզքաջ մշակն քրտնաջան,
Որ իբր զշահ անշիջական,
Փայլէ նա միշտ ի մէջ յատեան։
Նաև զԴաւիթ հեզ քահանայն,
Եւ ըզՊետրոսն արուեստաբան,
Որ աշխատին այժմ անխափան,
Ի գրել զՍաղմոս մեծին Դաւթեան։
Ի թվականի մեծ հայկազան,
ՌՃ և չորեքեան (1655),
Եղև աւարտ գլխոցս այսքան,
Մատթեա, Մարկեա և Ղուկասեան։

բ

365ա Եղև աւարտ սբ. Աւետարանիս ձեռամբ երեք տէր Յակոբայ, ի լաւ և ստոյգ օրինակէ, որ զամենայն տուն և կէտ և ցրուացանկ քերթողութեամբ

յանգ հանեալ կատարեցաք։ Բուն սեաւ գիրն Զելէպի տէր Յակոբն, զՏեսիլն Յոհաննու և զտասն խորանաց Մեկնութիւնն գրեաց տէր Գէորգի որդի, աւագերէց գեղեցկաշէն մայրաքաղաքիս Արզրումայ տէր Յակոբն[26], *և զանազան ծաղկով զարդարեաց զսա մահղասի տէր Յակոբն։*

Որք հանդիպիք ներումն յանցանաց մերոց խնդրեցէք ի Քրիստոսէ, և ձեզ մասն լիցի ի տեառնէ Աստուծոյ մերոյ. որ է աւրհնեալ յաւիտեանս։

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զբարեմիտ քրիստոնեան զՅակոբն և զորդին՝ զՄնացականն, և կողակիցն, և զեղբայրն՝ զԱռաքելն, և որդի Առաքելին զԿիրակոսն, որ ստացան զսբ. Աւետարանս, յիշատակ իւրեանց հոգւոյն և ետուն ի ձեռն տէր Սարգսին։ Ով որ որ կարդայք, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք նոցա հոգւոյն. ամէն։

1003
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 3633.

Գրիչ՝ Թումայ
Վայր՝ Աւրնդանց

ա

376բ *Փառք...։*

379ա *Վարուք փայլեալ հրեշտակական,*
Վարժեալ ի վարս ճրգնողական,
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդւոց մարդկան։
Փափագեցաւ իբր զեղջերան,
Ցազբերրս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացրս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Թումայ[27] *հոգս և անպիտանս,*
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յաւժար և ժրրաշան,
Բազում շանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ-ամեան,
ՃԴ թիւ ընդ նրման (1655),
Աւարտեցաւ սա ի լրման։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
379բ *Ցիշման առնէք ըզմեզ անարժան,*

[26] Իմա Հակոբ կարդացին։
[27] Այս անձնավորությունը տէր Ավետիսի որդին է։

Զթումայս հողս և անպիտանս։
Եւ դուք յիշիք առ Տէրն բան,
Յորժամ գայցէ ի դատաստան,
Լրսէք զձայն երանական,
Զեկայք աւրհնեալք Հաւրն իմ արժան։

. . . . . .

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս..., որ կոչի Շարակնոց ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է Խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի մեղաւոր Թումայի: Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌԺԴ (1655), ի
280ա դեպաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւ//ղոսի և Ս. Գէորգայ[յ] զաւրաւարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան գրծողս զԹումայ և զծնօղն իմ՝ տէր Աւետիս և զմայրն իմ՝ Զառիան, զեղբայր իմ՝ Վարդան, և տղայն իմ՝ Խաչիկ, և զկողակից իմ՝ Գոյար, և քրւեր իմ՝ Թանկեկ, և Ախուն, և զՇիրօ, և զպապն՝ Վարդան քահանայն և Թումա քահանայն, և զշուշիկ իմ Մանմուր, և զխանում, և զՍրսաթ[28], զԱստուած զնոքա խաղաղական կենաւք անսասան պահեսցէ յամենայն փորձութենէ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. ամէն։

Բ

376ա Յիշեցէք ի Քրիստոս զստացող Շարակնոցիս զտէր Մխիթարն և զիւր ծնօղսն, զհայրն՝ զԱնդրէասն և զմայրն՝ զՁանազան, և զԳուլզադէն, և զկողակիցն՝ զխաթուն, և զդուստրն՝ զՍարթէն. և Աստուած ողորմի ասացէք նոցա, և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

1004
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3980

Գրիչ՝ Սաեփանոս Ամասիացի

130ա - Դարձեալ[29] աղաչեմ զսակաւ յիշատակէկս գծել ի վերջքս գրոց, որք գաղափարէք, զի և դուք գրեալ լինիջիք ի գիրն կենաց, և որք բառնան, թողցի նոցա ըստ գործոց իւրոց, բայց սխալանաց թողութիւն հայցեմ,

[28] Ձեռագրի «և զխանում և զՍրաթ» հատվածի փոխարեն Երուսաղեմի № 1670 ձեռագրում գրված է «և զվար[պ]ետն իմ՝ զտէր Աւետիս, որ բազում աշխատանք քաշեցին հետ անարժանիս և ուսուցին»։

[29] Սույն ձեռագրի մի մասն ընդօրինակվել է նախ ԺԶ դարում, իսկ մնացած մասը՝ 1655 թ. և ԺԹ դարում։

զի այնքան կարացի։ Որ և դիս զանարժանս և զունայնս յամենայն բարեաց Ամասիացի Ստեփանոս թերավարժ գրիչս և զծնողս իմ և զամենայն արեան մերձաւորս իմ և մեղաց թողութիւն խնդրել։ Այլ և զԴաւիթ վարդապետն յիշեսջիք, որ զօրինակն սբ. էջմիածնայ երեր և մեզ շնորհեաց, որ և մեք տեսեալ յօժար սրտիւ և փափագանօք գրեցաք ըստ կարողութեան մերում, ի թվականիս Հայոց ՌՃԴ (1655) ամին, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ գրեալսն, զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...։

1005

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 6196 (1227 թ.)

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Վիրինզեա

ա

611ա *Փառք... Նաֆասին, և ծնաւղացն՝ Ղարիպին և Աղամաթին, և միիւս որդոցն՝ Նուրիջանին, Խոջումին։ Դարձեալ, ո՛վ եղբայր, յիշեցէք զՆուրիջանն և իւր կողակիցն՝ Եղիսայպետին, և որդոցն՝ Եուվէլուն, Մկրտչին, Ոսկանին, և դստերացն՝ Թրուանդային, Մասուն։ Դարձեալ յիշեցէք զԽաւջումն և կողակիցն՝ Սալթանխանն, և որդոցն՝ Ղազարին, Հազրին, Գալուստին, և դստերացն՝ Ազամսթին, Մայրանին, Ազալին. ամէն։*

Յիշեցէք Եաւվէլին և իւր կողակիցն՝ Իշխանին, և դստերաց՝ Ղաամխանին, Նազուխանին, և որդին՝ Խաչունին։ Դարձեալ [յիշեցէք] զՄկրտչին, և իւր կողակիցն՝ Խոնթքարն, և դստերացն՝ Սալգուլին, Ազամաթին. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՆաֆասն, որ էառ և հատուր նորոգել զսբ. գիրքս զիւրն յիշատակ ի գիւղն որ կոչի Վիրինզեա, ի դո[ւ]ռն Ս. Ըստեփանոսին։ Ի գուղի քահանայն և դՀերունի տէր Յակոբն և զնորընձայ տէր Պարսամն։ Աստուած զիւրեանց հոգին լուսաւորի, որ բաղում աշխատեցան։ Եւ դարձեալ, ո՛վ եղբայրք և մանկունք եկեղեցոյ, յիշեցէք ի մաք[ր]ափայլ յաղօթս ձեր՝ զքաջ և զրաբունապետ տէր Խաչատուր վարդապետն, որ է արհեպիսկոպոս և աթոռայկալ սբ. առաքելոյն Թումայի. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհարազատ եղբարքն՝ զՆաֆասն և զՆուրիջան, Խաւնիկն և ծնողաց սոցայ՝ Ղարիպն և Ազամաթն. և Աստուած զիւրեանքն դասակից և պսակակից արասցէ ըստ. մարտիրոսացս և այլ սրբոցն ամ[են]այն եղիցի. ամէն։

Կազմեցաւ թվին ՌՃԴ (1655)։

բ

9բ *... քո սբ. արքայութեանդ արժանի արա զամենայն հաւատացեալքս, և առաւել զստացաւղ սբ. գրոցս հանգուցեալ Նաֆասին, և հայրն՝*
110ա *Ղարիպին, և մայրն՝ Ազամաթին //, և եղբայրն՝ Նուրիջանին և Խուջումին, և Սարգիս գրչիս։*

1006
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6393

Գրիչ՝ Ալէքսիանոս երէց

ա

62բ Թվին ՌՃ և Դ (1655) գրեցաւ։

բ

146բ Որք ընթեռնուք սիրով սրտի,
Ցիշման արէք զիս արժանի,
Ալէքսիանոս երէց մեղօք ի լի։

1007
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7293 (1655 թ. առաջ)

Ծաղկող՝ Մուրատ Մկրտիչ քահանայ

212ա Նկարեցան աւետարանիս ի մայրաքաղաքն Հալապ, ձեռամբ Սուրատ Մկրտիչ քահանայի, Թվին ՌՃԴ (1655) ամին[30]։ Աստուած ողորմի ասացէք[31]։

1008
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7305 (ԺԴ դ.)

213ա Դարձեալ յիշեցէք տէր Գրիգորն և կողակիցն իւր՝ Դալաքն, և որդիքն՝ Պարոնն, Աստուածատուրն, Բարսեղն, և դստերքն իւր՝ Սուրմէն, Հուրին, Փարին, և քուրն իմ՝ Հուռումն, և փառք յաւիտեանս. ամէն։
Թվին ՌՃԴ (1655)։

1009
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 7623

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

ա

32բ Զծոյլս ի բարեաց, և զարագս ի չարեաց, և զանպիտան զՆիկողայոս գրչակս աղաչեմ յիշել ի Տէր, ընդ նմին և զուսուցիչս իմ զտէր Զաքարիայ, և դուք յիշեալ լիջիք։

---

30 Հետագայում «ի մայրաքաղաքն... Մկրտիչ» հատվածը ջնջել են, իսկ «ՌՃԴ»-ն դարձրել «ՉԻ» (1271)։ Ջնջվածը կարդացվում է։

31 Ձեռագրի գրչությունը ԺԷ դարի է, պահպանվել է բուն հիշատակարանի միայն «Փառք»-ի մի մասը (էջ 276բ—277բ), մնացածն ընկած է։

Բ

173բ Քրիստոս Աստուած ողորմեա ստացողիս և գծողիս՝ Նիկողայոսիս և ծնաւղաց իմոց և ամենայն զարմից ննչեցելոց մերոց։

Գ

282բ Ողորմեա Քրիստոս Աստուած անարժան գծողի սորա մեղաւոր Նիկողայոսի և ծնողացն իմոց և եղբարց և ես աւրինակ շնորհաւղաց, որ անտրտունջ շնորհեց զսբ. Աստուածաշունչն, որ ես մեղաւորս, անարժան և յանիմա գոլով, աստուածային յաւգութիւնն և նախախնամութիւնն ապաւինելով ձեռնարկութիւն արարի սմա և աւարտեցի մինչև ցայս վայր։ Խնդրեմ յամենազաւր աւգնաւղէն, որ իւր յաւգնականութեամբն յաւգնութիւն հասուցանէ առ մեղաւորս, որ ես տկար գոլով աւարտեմ զսբ. Աստուածաշունչս. ամէն...։

Դ

459բ Զանարժան գրչակս աղաչեմ յիշել ի Տէր. ընդ նմին և զստացող սբ. Աստուածաշնչիս զՄինաս քաջ բաբունապետն միով Հայր մեղայիւ, և դուք յիշեալ լիջիք...։

Ստացող՝ Մինաս Բաբերդացի

Ե

485բ Եւ արդ՝ ես վերջացեալս բարեաց և տրուպս ի բանասիրաց, սոսկ անուամբ բանի սպասաւորի Մինաս փանաքի, քանզի սովոր է Աստուած վասն փրկութեան մարդկան ոչ արգելու զշնորհս մեղաւորաց, ուստի և ես անարժանս համբարձից զձեռս իմ և գլեզուս աւրհնութեամբ ի հանդէս և արձան կացուցից Աստուածաշունչ սբ. մատենիս՝ ի զարդ և ի պայծառութիւն եկեղեցոյ և ի վայելումն մանկանց Սիոնի...։

Եւ արդ՝ զբաց եղև գրիս ի հայկազան սեռի տոմսի տառիս կրկին հնգից հարիւրից և կրկին յիսնից, չորից <և> յարաբարղից (1655)[32], ձեռամբ անիմաստ Նիկողայոս գրչի, ի խնդրոյ Մինաս քաջ բաբունապետի, զոր տէր Յիսուս բարով վայելել տացէ և զինքն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

Յիշեսցէ տէր Քրիստոս զհոգիս հոգևոր եղբաւրն մեր՝ զԿաֆայու զԳրիգոր արքեպիսկոպոսն, որ անտրտունջ զաւրինակն շնորհեաց. շնորհեսցէ Տէր և մեծարեսցէ իւր արքայութիւն և ընդ կատարելոցն համարեսցի. ամէն։

Զ

610բ Փառք...։ Եւ այս կարող զօրութեամբն Աստուծոյ զօրասցի առ իմանալի հոգիս մեր, սատար յիշման և աղօթից ձերոց ըստ առաքելոյ սուտ
611ա և քմա յիմաստիցս մեր, յիշեսջիք ի // մաքրափայլ աղօթս ձեր, զիս անարժան, հուսկ և յետոյ տառապեալ յանձնէ միայն անուամբ Մինաս վարդապետէ և գործակցի մերոյ հոգևոր որդոյ աշակերտ Յակոբ կրաւնաւորի,

[32] Այսինքն՝ [(2×5×100)+(2×50)]+4+551։ Մատենադարանի ձեռագրաց ցուցակում ձեռագրի գրչության տարեթիվը թյուրիմացաբար նշված է 1669 թ. (հտ. Բ, էջ 572)։

մանաւանդ որ վատնիչ եղէ դանձուց տէրունի և քանքարաթաքոյց խնդրողի, յերես անկեալ աղաչեմ զձեզ...՝ յիշեսջիք սրտի մտաւք և ուղիղ կամաւք զՄինաս բանի սպասաւորս փաղերայից...։

611բ Այս աստուածաւանդ սբ. մատենիս եռանտնոտ սիրով տենչացայ ես անարժանս, հողս և փոշիս, տրուպ և հուսկ, նիազս և ոտից կոխան, և յետնեալս ամենայն բարեաց, որ եմ գաւառաւ Խախի, որ այժմ Բաբերդ վերածայնի, միայն անուամբ Սիեաս վարդապետ, որ զայս սբ. Աստուածաշունչս գրել ետու առ ի խրատ և օգուտ ամենայն մարդկան, որ և ամենեքին գազափարք են տնաւրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սիրով և փափաքմամբ, ի փառս Աստուծոյ և մանկանց Սիոնի, յիշատակ յաւիտենից, զոր սիրեաց անձն իմ, վասն որոյ հռչակաւոր և հոյակապ մայրաքաղաքիս Կաֆայոյ, որով ետուն լի ե առատ ողորմութիւն, զոր Աստուած վարձահատոյց առնէ զամենեսեան՝ զմեծամեծս և զփոքունս, զայրս և զկանայս, որ գին և պատճառ եղև սբ. Աստուածաշնչիս. ըստ մարգարէին Դաւթայ, որ ասէ. «Սփռեաց և ետ աղքատաց. արդարութիւն նոցա մնա յաւիտեանս յաւիտենից, և եղջիւր նոցա բարձր եղիցի փառաւք»։ Վասն որոյ ցնծութիւն և ուրախութիւն եղև մեզ, իբրև զունող աւարաց բազմաց ականց պատուականաց, որ զանազան գունով և որակ որակ գեղեցկանկար պատկերագրութեամբ աւրինաւածովք շքեղացուցաք, զի մի՛ լսելեաւք միայն, այլ և աչաց տեսողութեամբ, զուարճասցին հանդիպողք սոցին, առ ի խրախճանութիւն սքանչելի տօնից աստուածային տնաւրէնութեանն Քրիստոսի և ընտրեալ գնդից առաքելոցն...։

Այլ և գծագրող սորին և յոյժ աշխատողի ըստ հոգևոր զաւակիս մերոյ Նիկողայոսի, որ բոլորով սրտիւ և յոյժ աշխատութեամբ հետևող եղև սմին մինչև յաւարտ եհան յաջողմամբ Ս. Հոգւոյն։ Տէր Յիսուս կարող զօրութեամբն անփորձ և անսասան կենաւք պահեսցէ ներքոյ և արտաքոյ թշնամեաց և յիշատակ յաւիտենից արասցէ հանդերձ ծնողիւք իւրովք. ամէն։

Այլ եղև աւարտումն սբ. Աստուածաշունչ տառիս աբեթական տոհմից մերոյ ՌՃ և աւելորդացն քառորդի (1655), ի հայրապետութեան տեառն մերոյ Փիլիպոսի, որ, ևս այսմ ամի վերափոխեցան ի սբ. աթոռոցն էջմիածնա[յ] Փիլիպոս կաթողիկոսն, և Կիլիկու աթոռոյն Ներսէս կաթողիկոս, և ի սբ. Երուսաղէմայ Աստուածատուր վարդապետն, որ էր պատրիարգ և սպասաւոր լուսաբուխ սբ. գերեզմանին Տեառն մերոյ։ Որ և միանգամայն որք մնացաք ի սբ. հարցն և հովուապետացն, վասն ծովացեալ մեղաց մերոց...։

612ա Այլ և ի զգուշութեան պահելոյ զընաւորելն Աստուծոյ սերմանս առաքինութեան, յորմէ և ես կթեցի պտուղս քաղցրահամս ի սորայ ի աշխատաջան երկանց և ի բջիջս մտաց, ըստ օրինակի մեղուաց, զքաղցրն ամբարել խորիսխ և ի մարգս ծաղկոցաց Աստուածաշունչ տառից թռուցեալ ի համապատուիցն զանազանութեան գեղեցկագունիցն ծաղկանց ի նոյն մեղուացն հոգ տարա մուծանել ի նպաստ պիտոյից մեծամեծաց և փոքունց և ևս պաճարանս անձին իմոյ կենաց, որ արդարութեան և աստուածակերտ նմանութեան է...։

Յիշեսցէ տէր Աստուած զհոգիս հոգեւոր ծնողի և թէ մանաւանդ լուսաւորողի մերոյ տէր Գրիգոր քաջ բարբունոյ և զայլսն ամենեցուն, որ յայտնի է Տեառն մերոյ. ամէն։ Այլ և արեան մերձաւորացն մերոց զէ (7)-ն եղեալ եղբարցն պապերուն մերոյ՝ Սարգսի և այլն, և մօրս հօրն՝
612բ Ստեփանոսի, այլ և հօրս մերոյ Ամիրտալվաթի և զմօրս Խաթունիկի, // և քեռերս մերոյ Նուրիխանի, և միւսն մղտսի Ուալուի, և միանգամայն ամենեցուն. ամէն...։

Դարձեալ աղաչեմ և խնդրեմ պատահողք սբ. Աստուածաշունչ կտակիս՝ ընթերցողք, և կամ գաղաբարողք, և կամ հարևանցի տեսողքդ, խնամով բռնէք իւր եղեալ շորերովն, զի յոյժ աշխատութեամբ եմք գրեալ. և քրտաջան կազմեալ, և ի մի տուր եղեալ. և ծաղկեալ ոսկիատուփ աւրինեալ և գունակ գունակ գունով, և աւրակ աւրակ նկարով նկարեալ, որպէս կու տեսանեք մի ըստ միոջէ դաշխատութիւն և զջանս մեր. աղաչեմ, աղաչեմ լսողացն մեր Աստուած իւրն լսէ. ամէն։

1010
ՏՕՆԱՅՈՅՅ-ԱՂԻԻՍԱԿ
Երևան, № 9186

Գրիչ, ստացող տէր Վարդան

Ո՛վ աստուածասէր եղբայր, և զանարժան տէր Վարդանս յիշեայ ի տէր Աստուած, զի բազում փափաքանաւք խնդրեցի զայս խառնափընտրոս և գրեցի անմեղադիր լերուք, ով եղբայրք, գիր ոչ գիտէի։ Ի թվին ՌՃԴ (1655)[33]։

1011
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 8155

38բ Յիշատակ է ժամագիրքս տէր Եղիեային, ի դուռն Ս. Խաչի վանուցն, թվին ՌՃԴ (1655)։ Ով որ կարդայ Ա (1) Հայր մեղայիւ զմեզ յիշէ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

1012
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8208

Գրիչ՝ Վրդանէս

ա

278ա Զծրաւղ Վրդանէսս յիշեայ և ասայ միշտ Տէր ողորմեա։
Գրեցաւ ՌՃԴ (1655) թվին։

Ստացող՝ Խոջայ Պետրոս

բ

279ա Արգոյ, համափառ, համազօր...։

[33] Ձեռագիր ասվածը մի մեծ թերթ է, ուստի էջահամար չիք։

Եւ արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթսն ձեր, ո՛վ քահանայք և ժողովուրդք, ըզմեղսամած ղստածող սբ. Աւետարանիս խօշայ Պետրոսս, յիշատակ ինձ և ծնողացն իմոց, հաւրն իմ՝ Խաղուպին և մօրն իմ[34]։

1013
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8397

Գրիչ՝ Դաւիթ
Վայր՝ Արզրում

ա

60ա Կատարեցաւ Մարդակազմութիւնս ի փառս Աստուծոյ։ Իսկ այժմ սկսանիմք զՀազմագիրքս, զոր տէր Աստուած առաշնորդեսցէ և Հոգին Ս. կարողացուսցէ և զօրացուսցէ զանարժան գրիչս, յանգ ելանել գրոյս և նմա փառք յաւիտեանս. ամէն։

բ

154ա Կատարեցաւ Հազմագիրքս, ի վայելումն ուսումնասէր և բարեմիտ առն Աստուծոյ Ակընցի խոճայ Կարապետին և իւր որդւոցն. ամէն։

գ

Գրեցաւ սա ի թվին ՌՃԴ (1655), ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի սուտանուն Դաւթի, ի մայրաքաղաքս Արզրում։

1014
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 9433

Ստացող՝ Մարիամ
Վայր՝ Շոռոթ

347բ Յիշատակարան սբ. Աւետարանիս։
Փառք...[35]

34։բ ... Յոյժ փափագանօք և մեծատենչ ըղձամբ ստացաւ զաստուածախօս մատեանս, որ յորջորջի աւետաւոր երկնից արքայութեանն, ի յիշա-
349ա տակ // հոգւոյ իմոյ և ի փրկութիւն հոգւոց ննջեցելոց իւրոց, հօրն իւրոյ՝ Սօլթանպէկին և մօրն՝ Մեհրիպանին, և պապուն իւրոյ՝ Ծատուրին, եղբօրն իւրոյ՝ տէր Վարդան պատուական, արի և քաջ քահանայի, որ եռափափագ սիրով սկիզբն արար սբ. անապատիս մերոյ Աստուածածին կոչեցելոյ և շինեաց ի հիմանէ զամենայն շինուածսն՝ զպարիսպն և զեկեղեցին, զտնտեստունն և զսեղանատունն, զխուցսն միաբանից և զայլ ամենայն շինութիւնսն՝ բազում չարչարանօք և նեղութեամբ։ Եւ ժողովեաց բազում կուսանս և հաստատեաց զկարգ և զկրօնս նոցա, որպէս այլ անապատաց, և ինքն զհոգևոր և զմարմնաւոր պէտս նոցա, առաւելապէս լցու-

[34] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։
[35] Խորագիրը և «Փառք»-ի չորս առաջ գրված է կարմիր, նարնջագույն և կապույտ մելանով։

349բ ցանէր շնորհօքն Քրիստոսի։ Բայց // ոչ բազում ժամանակս արար ի վերայ երկրի, այլ երիտասարդական տիօք։ Եւ վեցիւք ամօք աւելի մահտարաժամ եղեալ, փոխեցաւ առ Քրիստոս Աստուած՝ յոյսն բնաւից և մեզ եթող սուգ անմխիթարելի։ Զոր և հայցեմք ի վերծանողացդ յիշատակարանիս միով Հայր մեղայիւ, արտասուաթոր աչօք Աստուած ողորմի ասացէք. զի և մեզ ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրում. ամէն։

Այլ և եղբօր որդւոյն իմոյ՝ Յովհաննէս վարդապետին[36] և փոքրիկ եղբօր որդւոյն՝ Հայկազ դպրին, և մօրն իւրեանց՝ Շնհատրին, և քեռն իւրոյ՝ Սղիսաբէթին, և եղբօր դստերացն՝ կուսակրօն Յուղիաային, որ է
350ա սբ. անապատս, և Գուլիսանին, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւր//ոց՝ կենդանեաց և հանգուցելոց ի Քրիստոս Աստուած. ամէն։

[Ա]րդ՝ ես ամենամեղս և ստորասուզեալս, ծանրաբեռնեալս և վարատեալս Մարիամ կրօնաւորս անուամբ ևթ և ոչ գործով, յօժար սրտիւ ստացայ ի հալալ վաստակոց իմոց զսբ. Աւետարանս, ըստ բանի մարգարէին Եսայեայ, որ ասէ. «Երանի...», ի թուականութեան հայկազնեան տումարի հազարերորդի հարիւր[եր]որդի և չորրորդի (1655), ի հայրապետութեան սբ. Էջմիածնի տեառն Փիլիպպոսի, և յաջորդի իւրոյ տեառն Յակովբայ Ջուղայեցւոյ, և առաջնորդութեան մերոյ աթոռի Ս. Կարապետայ տէր Եսայուն և յաջորդի նորին տէր Ղազարին։ Արդ՝ ե<ւ>ս ստա-
350բ ցայ զսա և եղի ընծայ ի Ս. // Աստուածածնի եկեղեցիս Շոռոթայ անապատիս, յիշատակ հոգւոյ իմոյ, և ի վայելումն մանկանց Սիմոնի։ Հօրն իմոյ՝ Սոլթանպէկին...։ Այլ և եթէ ոք իշխեսցէ հանել զսբ. Աւետարանս ի դրանէ Ս. Աստուածածնի եկեղեցւոյս, գրաւելով կամ ագահելով, յիմոց
351ա կամ յօտարաց, յաստիճանաւո//ռաց կամ յաշխարհականաց, յարուաց կամ յիգաց՝ մեղացն պարտական մնասցեն, սևերես առ մեզ եկեսցեն և Քրիստոսի դատաստանին սևերես լիցին. ամէն։ Բայց խնամօք և լաւ պահօղ, կարդացօղ և օրինակօղ սբ. Աւետարանիս՝ օրհնեսցին ի Քրիստոսէ յԱստուծոյ և ի տիրածին սբ. Աստուածածնէս. ամէն։

Ի թագաւորութեանն Պարսից երկրորդ շահ Աբասին։

1015

ԲԱՆՔ ՁԱՓԱԻ

Երևան, № 3601

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Բաղէշ

212բ Փառ[ք]...։
213ա Որ ետ տրկար հիւթո[յ] անբան,
Ի յարհեստից անվարժական,
Տրուպ Յոհան և անպիտան,
Ցանկ հասանել գրոյս որ աստ կան։
Որ ունի սա բազում ստեղունս,
Սաղարթախիտ պտղով յոքունս,

[36] Զորս տող դատարկ։

Գոյն համ հոտով հանդերձ ի նոյնս,
Բեղնաւորեալ յոյժ դերազօյնս։
Վեր հայելով աչաց մտաց,
Բուժիչ լինի շամանդաղաց,
Ջպատաղեալ սէր զբաղանաց,
Սովաւ հերքել հոգւոց ի բաց։

. . . . . .

213բ Սա ամբարեալ ունի յինքեան,
Տփիկս փոքրիկ և զանազան,
Երանգ երանգ դոյն զարմական,
Ոտան[աւ]որ տաղիւ յարմար։

214ա Աւարտեցաւ տառս գովելի,
Ի տառաւլեալ ամանակի,
Յորում նեղիմք յայսմ վայրի,
Հագարացւոց ազդէն չարի։
Ի թուականին Տեառրն մերոյ,
Ի հազարեանն ոլորելոյ,
Վեց հարիւր այլ յիսուն ւ երկու,
Բարդեալ ի կեասն (sic) լուսատու (1652)։
Այլ և ի մեր թուականի[ն],
Հարիւր ամ ընդ հազարին,
Այլ և քառեակ թիւ ընդ նմին (1655),
Արեգական ժամ դիտակին։
Յաթոռն սբ. Լուսաւորչին,
Նստեալ վեհին Փիլիպպոսին,
Որ յայսմ ամի փոխեալ յերկրէ,

214բ Ուղղեալ գնաց յերկիրն վերին։
Եւ յետ նորա նստեալ յաթոռ,
Տէր սբ. Յակոբ յաջորդ նորին,
Հովուել զհոտս հայ զարմին,
Լինել տեսուչ ըստ հա[յ]ման նորին։
Ի տեսչութեան այս քաղաքին,
Բաղէշ անուն վերաձայնի,
Մեսրովպ քովեալ վարդապետի,
[Ա]ւծեալ ձեռամբ մեծի հովուին։
Եւ ես տրուպ թշուառական,
Եւ յամենայն բարեացն ունայն,
Ջարեաւք ի լի տէրրս Յոհան,
Եմ ապիկար և անպիտան։
Որ ընթեռնուք զսա բաղձանօք,
Եւ ջերմեռանդ սերտ հաւատով,

215ա Ըզմեղաւորս յիշել յուսով,
Վասն Աստուծոյ ուղիղ սրտով։
Զի անճարակ ւ անաւգնական,

Տքնիմ ի հող մահու տապան,
Ի եմ ընդ մեռեալս անաւգնական,
Հոգիս սարսէ ւ է ի դողման։
Զձեզ աղաչեմ կողկոզական,
Մանկունք ճեմեալ ի մեծի տան,
Յորժամ մատչի անպարտականն,
Վասն իմ ասել զՏէր ողորմեանն։
Նաև ըստ մարմնոյ ծնողաց իմոց,
Դիլաքին և մօրս Զահանին,
Հանգուցեալ որդոցս կողակցին,
Եւ արեանառու մերձաւորին։

1016
ՀՄԱՅԻԼ
Երևան, № 9445

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Անձուկ

93բ ... Բարեխաւսեա վասն քո ծառայիցս Միրիճանին և որդոցն՝ Ղալամին[37] // և Յակոբին, և փրկեա ի չարէ, ի յորոգայթից սատանայէ, ի փորձութեանց դիւաց և ի մարդոց անիրաւաց՝ յերազական ցնորից ի պէսպէս ցաւոց։ Աչն տէրունական և բազուկն փրկչական աւգնական և պահա-
94ա պան լիցի ծ//առայից Աստուծոյ ուստա Միրիճանին և իւր կողակցուն՝ Անղալատին, և իւրեանց որդոցն՝ Ղալամին և Յակոբին, և իւրեանց տանց և ընդանեացն. ամէն։

94բ Եւ զիս՝ զանարժան Յովանէս անպիտան գրիչս յիշման արժա//նի արարէք՝ և դուք յիշեալ լիցի[ք] Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ Կիպրիանոս ի թուականութեանս Հայոց ՌԾԴ (1655)-ին, ի յերկիրս Մակուայ, ի գիւղն Անձուկ, ընդ հովանեաւ սբ. ուխտի[ս] Նիկո[ղ]աոսի, հայրապետի և սբ. Կաթողիկէ եկեղեցոյ[38]

1017
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9798 (1654 թ.)

Հետ ստացող՝ Մովսէս

80։ա Որ զկամելն և զառնելն յաջողէ Աստուածն ամենայնի յօժարեցոյց մեծաւ սիրով զազնուականն Ուլուխան, զայր բարեխոհ, ուստի և զանգին մարգարիտս զսբ. Աւետարանս զայս ընծայեաց ինձ Մովսիսի՝ իմաստութեան ցանկացողի, ի հազարերորդ հարիւրորդ և չորրորդ (1655) թուին։

---

[37] Ձեռագրում «Միրիճանին... Ղալամին» հատվածը ջնջված է ուրիշի կողմից և ներքևի լուսանցքում ավելացված է «Ալեքսանին», մնացած երկու տողը դժվարընթեռնելի է։
[38] Շարունակությունն ընկած է։

1018
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10584

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

271բ [Փ]առք...։

272ա Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թուաբերութեանս ասքանաղեան և աբեթական տօմարի ՌՃԴ (1655) և ըստ նորում շրջանի ԼԴ (34) և ի գալստենէ Կենարարին ՌՈՆԸ (1658), ի ստոյգ և ընտիր աւրինակէ ևս առաւել համաբայիցն։ Զի գաղափար սորին էր ի դրանէ Ս. Յովհաննէս աւետարանչին, ի յաշխարհիս Հոնաց, յանեղաշէն և աստուածապահ քաղաքիս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյ նորին։ Ի հայրապետութեանն Հայոց տեառըն Յակոբայ և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց տէր Խաչատուր աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։

272բ Արդ՝ մեք փառակա//ցիքս ցանկացեալ էաք վաղու ևս ոսկէզարդ Աւետարանի միոյ։ Եւ մեր եկեալ ի Կաֆայ տեսաք աչաք մերովք, որպէս որ կու տեսանէք. և յորդորեալ զմիմեանս և տուեալ ի ծախս սբ. Աւետարանիս ի հալալ արդեանց մերոց։

Աստուած ողորմի Աղաճանին հոգոյն, որդին՝ Յովանէսն երեսت ԺԵ (15) զուռուշ։

Աստուած ողորմի Ղաւալէնց Հայրապետին հոգւոյն, որդին՝ Յոհանէսն երեսت Թ (9) զուռուշ։

Աստուած ողորմի Մաղաբիային հոգոյն, որդին՝ Անանիան երեսت Թ (9) զուռուշ։

Աստուած ողորմի Դարմանին հոգւոյն, որդին՝ Մուրատն երեսت Թ (9) զուռուշ։

Աստուած ողորմի Յովանէսին կենդանի հոգոյն, որդին՝ Աւետիքն երեսت Բ (2) զուռուշ։

Աստուած ողորմի Ոսկանի հոգոյն, որդին՝ Ղազարն երեսت Գ (3) զուռուշ։

Աստուած ողորմի Հանէսին հոգոյն, որդին՝ Սահակն երեսت Է (7) զուռուշ։

Աստուած ողորմի Ասպանդու հոգւոյն, որդին՝ Ադամն երեսت Ժ (10) զուռուշ։

Աստուած ողորմի Մաղաբին հոգւոյն, որդին՝ Ուսկանն երեսت Բ (2) զուռուշ։

Աստուած ողորմի Դարմանի հոգոյն, որդին՝ Առաքելն երեսت Գ (3) զուռուշ։

Աստուած ողորմի Հանէսին հոգւոյն, որդին՝ Մանուէլն երեսت Գ (3) զուռուշ։

Աստուած ողորմի Գասպարին հոգւոյն, որդին՝ Անդրէասն երեսت Դ (4) զուռուշ։

2273ա *Աստուած ողորմի* Գասպարին *հոգոյն, որդին՝* Հայրումն // *տուաւ* Դ *(4) ղուռուշ։*

Աստուած ողորմի Յովանէսին *հոգոյն, որդին՝* Ղուկասն *երեսի* Դ *(4) ղուռուշ։*

Աստուած ողորմի Սարգսին *հոգոյն, որդին՝* Յովհաննն *տուաւ* Բ *(2) ղուռուշ։*

Աստուած ողորմի Աւետիսին *հոգոյն, որդին՝* Մարտիրոսն *երեսի* Բ *(2) ղուռուշ։*

Աստուած ողորմի Պօղոսին *հոգոյն, որդին՝* Մաքէոսն *երեսի* Գ *(3) ղուռուշ։*

Աստուած ողորմի Հայրապետին *հոգոյն, որդին՝* Մարգարէն *երեսի* Բ *(2) ղուռուշ։*

Աստուած ողորմի Գասպարին *հոգոյն, որդին՝* Դաւիթն *երեսի* Գ *(3) ղուռուշ։*

Աստուած ողորմի Սարգսին *հոգոյն, որդին՝* Մարտիրոսն *երեսի* Բ *(2) ղուռուշ։*

Աստուած ողորմի Աղանանին *հոգոյն, որդին՝* Եղիան *երեսի* Գ *(3) ղուռուշ։*

Աստուած ողորմի Թումանի *հոգոյն, որդին՝* Մալի *երեսի* Ե *(5) ղուռուշ։*

Աստուած ողորմի Թումանին *հոգոյն, որդին՝* Ճիհանն *երեսի* Գ *(3) ղուռուշ։*

Աստուած ողորմի Դարմանի *հոգոյն, որդին՝* Ղանպարն *երեսի* Ե *(5) ղուռուշ։*

Աստուած ողորմի Կեսակիմին *հոգոյն, որդին՝* Կիրակոսն *երեսի* Բ *(2) ղուռուշ։*

Աստուած ողորմի Տարմանի *հոգոյն, որդուն* Դաւթին *[...?]։*

Աստուած ողորմի Յովանիսին *հոգոյն, որդուն* Պօղոսին *[...?]։*

Աստուած ողորմի Բարսեղին *հոգոյն, որդուն* Պօղոսին, *որ պատճառ են այս սբ. Աւետարանին որ ի* Կաֆայ *քաղաքն գրել էտուն։*

Աստուած ողորմի Յովանիսին *հոգոյն, որդուն* Պօղոսին, *որ խաչ մի*
11 *ետուն, Աւետարանին վերայ է։*

Աստուած ողորմի Տարմանի *հոգոյն, որդուն* Դաւթին, *որ խաչ մի ետուր, Աւետարանիս վերայ է։*

Աստուած ողորմի Աղաջանի *հոգոյն, որդին Մ/// են իրեսի Ռ (1000) դեկան։*

1019

ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Բանբեր Մատենադարանի», № 11, էջ 358, № 1

Գրիչ՝ Աստուածատուր երէց

Վայր՝ Երուսաղէմ

248բ *Զողորմելի հոգս և գերի.*

Որ Աստուածատուր *սուտ երէց կոչի,*

Զկնի նորա Մարտիրոս հողս,
Որ քահանայ եմ
Եւ ի գործն յոյժ թափուր եմ։
Վայ է մեր դատաստանին,
Վասն այս բանիս որ ասացին,
Խուրով հայրն Գրիգորին,
Եւ Յովանէս Արնիշեցին,
Քաշ հեռետոր Լամբրօնեցին։
Գրեցաւ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբին, ի թվին ՌՃԴ (1655). Աստուած ողորմի ասացէք. ամէն.

1020
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ, № 4 (229). ՏՁՎՍ, I, № 4, էջ 48

Գրիչ՝ Մարկոս սարկաւագ

ա

ԲՀ₂ Ո՛վ հարք և եղբայրք, ընթերցողք սբ. աստիս և զմեղսամած և զտատանեալ Մարկոս սարկաւագն՝ զգրող սորին, մտօք խաւար, բարեաց ունայն, մեղօք զարդար երևական։ Եւ զհայրն իմ՝ զտէր Յովանէսն և զմայրն իմ՝ զԹագակուլին։ Եւ Քրիստոս որ առատն է ի տուրս բարեաց ձեզ և զմեզ ամենեցուն ողորմեսցի...։

բ

ՆԿ₁ Զբսաացող սբ. Աստուածաշունչիս զպարոն Վալանդէզն և զհայրն իւր՝ զխոճայ Դանիրն և զմայրն իւր՝ զՇուշանն, և զորդին իւր՝ զնորաբողբոջ Նազարբէկն, և զկողակիցն իւր՝ զՍողովմէն յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր...։

գ

ՈԸ₁ Զմեղապարտ Մարկոս գրիչս յիշեա. թվին ՌՃԴ (1655)։

1021
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 823

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Թորսկան

225ա Փառք...։

Ի թուականին Հայոց մեծին,
Հազար հարիւր և չորսին (1655),
Եւ երջանիկ մեր աթոռին,
Կաթողիկոս ///
Արք և արի տէր Դաւթին,
Եւ բարունի վարդապետին։

Ի յերկիրս Նոշ քաղաքին,
Ի գ[ե]օղս ի Թաւրսկան անուանին,
Ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին,
Ձեռամբ անարժան Յակոբ դպրին։
Ընդ նմին և ծաղկող սորին,
Որ զարգարեաց դոյնզդոյնին։
Ցիշել աղաչեմ ի բարին,
Քաշ քարտուղար Հայրապետին,
Եւ աշակերտք Հայրապետին,
Եւ Յակոբին որ ի Տեառնէ շնորհս ստացին։
Ըստացողի հոգւոյ սորին.
Խոշապեցի տէր Գրիգորն։

1022
ԺԱՄԱԳԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 824.

Գրիչ՝ Մարկոս
Վայր՝ Կ. Պոլիս

225ա *Արդ՝ գրեցաւ ժամագիրքս ի մայրաքաղաքն* Կոստանդնուպոլիս, *ի թուականիս Հայոց ՌՃԴ (1655), ձեռամբ անարժան* Մարկոս *ծառայիս...։*

Առին զսբ. ժամագիրքս Յովհաննէս *և կինն իւր, յիշատակ ի գիւղն* Բագրատունի, *ի դուռն Ս. Խոնոկդրի...։*

1023
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 569

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Բաղէշ

ա

461 *Արդ՝ գրեցաւ սբ. տառս որ կոչի Աստուածաշունչ ի քաղաքիս* Բաղէշ, *ձեռամբ* Գրիգոր *երիցու, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զօրավարին, ի թուականիս յաբեթական տումարի ՌՃԴ (1655) ամին, ի հայրապետութեան տեառն տէր* Փիլիպպոսի *սրբազան կաթուղիկոսի, որ յայսմ ամի փոխեցաւ ի դասս սրբոց հայրապետաց. և յաջորդեաց զաթոռ նորին տէր* Յակոբ *կաթուղիկոսն։ Եղև զրաւ սորին ի յառաջնորդութիւն* Բաղիշու *քաղաքի* Մեսրովպ *գովեալ վարդապետի և սրբազան արհի եպիսկոպոսի, որ հարկեաց զանարժան* Գրիգոր *Էրէցս ծրել զսբ. գիրքս Աստուածաշունչ, զքնարս աստուածախօս։ Եւ իմ անընդել գոլով ի գիրս գրչութեան և անգիմուտ ի գործառնութիւնս։ Սակայն յուսալով ի բարեգութն Աստուած և*
462 *յաղօթս հոգևոր հօրն իմոյ՝* Մեսրովպ *վար//դապետի, ուսուցչին իմոյ, կատարելով զհրամանս նորա, ի գառն և ի դժնեայ ժամանակիս, յորում նեղիմք ի ներքոյ բաղում հարկապահանջութեան այլասեռից։ Ցիշեցէք*

ի մաքրափայլ յաղօթս ձեր Գրիգոր *էրէցս և ղծնողսն իմ զտէր* Գրիգորն *և զմայրն իմ՝ զ*Մանուշակ*...։ Որ գրեցի զսորա սև զ[գ]իրն միայն և զայլն առեալ հոգևոր հայրն իմ՝* Մեսրովպ *վարդապետն զթերին ելից և իւր ձեռօքն ծաղկեաց զսա և զարդարեաց ոսկով պատկերօք։ Յիշեցէք ի Քրիստոս կրկին, կրկին զհոգևոր հայրն մեր՝ դ*Մեսրովպ *վարդապետն, որ այս ժէ (17) ամ է, որ հայր է մեզ հոգևոր և ուսուցիչ. և ունի բազում երախտիք ի վերայ մեզ։*

Ծաղկող՝ Մեսրովպ վարդապետ

Բ

Արդ՝ ես վերջինս ի մանկունս եկեղեցւոյ... տրուպ Մեսրովպ *անուամբ ևեթ սպասաւոր բանի, որ ետու գրել զսորա սև գիրն միայն և առեալ իմով անարժան ձեռօքս ծաղկեցի և ոսկով զարդարեցի, յիշատակ հոգւոյ իմոյ... նաև աշակերտեալ մանկանց մերոց տէր* Դաւիթ *բանի սպասաւորին,*
1 *տէր* Յոհանին, *և տէր* Թումին, *և այլ հոգևոր որդոց մերոց՝ քահանայից և սարկաւագաց...։ Այլ և ետու սբ. գիրքս յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց մղտսի* Աւետիսին *և* Աղամաքին, *ի դուռն* Բաղիշոյ *քաղաքի Ս. Գէորգայ եկեղեցւոյն, և Ս. Աստուածածնին, և Ս. Ամենափրկչին, և Ս. Յովանիսին, և Ս. Մինասին։*

1024

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՎԼ, I, № 394

Գրիչ՝ Պօղոս

Վայր՝ Ղալասար

918 *Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս մերոյ ՌՃԴ (1655), ի հայրապետութեան սբ.* Էջմիածնա[յ] *տեառն* Փիլիպոսի, *և յառաջնորդութեան սբ. ուխտիս Բարդուղիմէոսի* Ոհանէս *վարդապետի, և սրբասնեալ* Եսայի *բարունապետի, և ի թագաւորութեան փոքր շահ* Ապասին: *Եւ մեք՝ անյիշելի գրիչս* Պաւղոս *սուտանուն, չեղեալս և չյիշեալս ի մարդկանէ, զառածեալ մեղօք և ոխացեալ մտաւք, ի յերկիրս աստուածապահ* Սալմաստ, *ի դեղն որ կոչի* Ղալասար, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին։ Եւ մեք սկսաք ձեռնադրութեամբ Հոգոյն Սրբոյ գրծագրել զսբ. Աւետարանս, վասն խնդրոյ պատուական, աստուածասէր քահանային* Մարկոս:

1025

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

ՏԵՐԱՎՋ., № 494

Գրիչ՝ Մկրտիչ *երէց*

Վայր՝ Երևան

766 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ աստուածային այս մատեան, որ կոչի Հարցմունք, ի յերկիրս* Արարատեան, *ի քաղաքս* Երևան, *ի թվականութեանս*

Հայոց ՌՃԴ (1655) ամի[39], և ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի սրբազան դիտապետի։ Ի սոյն ամի փոխեցաւ առ յոյսն բնաւից, եկաց հայրապետութեան ամս ԻԳ (23), և յաջորդեաց, և նստաւ հայրապետ
767 Հայոց տէր Յակոբ Ջուղայեցի այր քաջագոյն //, լի ամենայն առաքինութեամբ, և վերադիտողութեան մերոյ գաւառի տեառն Սիմէօնի քաջ բարունապետի Ջուղայեցւոյ անյաղթ փիլիսոփայի, որ նստի ի սբ. մենաստանն Ամենափրկիչ՝ ի ձորն Գառնւոյ, ձեռամբ անարհեստ և փրծուն գրչի, մեղապարտ Մկրտիչ իրիցու, ընդ հովանեաւ Ս. Կաթուղիկէիս, ի վայելումն Մատթէոս վարդապետին, և յետ ելից կենաց իւրոց զաւակ բարի, և յիշատակ ծնողաց իւրոց, հօրն՝ Գրիգորին, և մօրն՝ Մարիամին, քրւերցն և ամենայն արեանառու ազգականաց՝ կենդանեաց և հանգուցելոց ի Քրիստոս. ամէն։ ...

1026

ՇԱՐԱԿԱՆ

Մեզեզ, հ. IX, էջ 426

Գրիչ՝ Նաղաշ Մաղսուա

ա

371 Ոհ աղաչեմ զձեզ, հայրք իմ եւ եղբայրք, յորժամ ընթեռնոյք զսուրբ եղանակաւոր տառս, յիշեցէք յաղօթս ձեր զնուաստ ծառայս Աստուծոյ զՆաղաշ Մաղսուաս, փծուն գրիչս, հանդերձ ծնողովք իմովք, եւ Աստուած զձեզ յիշէ իւր առատ ողորմութեամբն, ամէն։

բ

579 Փառք քեզ անսահման անուն եւ զուգական տէրութիւն Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ Շարակնոցս ի թվին ՌՃԴ (1655), ձեռամբ բազմամեղ եւ անարժան ծառայիս Աստուծոյ՝ Նաղաշ Մաղսուաիս, ի վայելումն խօճայ Պետ[r]ոսին, եւ որդոցն իւր, զոր Տէր Աստուած մեր բարով վայելել տացէ։

Արդ ով ոք հանդիպի սրմայ երգելով եւ կամ օրինակելով, վասն որոյ աղաչեմ զձեզ որ դասք լուսերամ քահանայից եւ սարկաւագաց եւ կաճառք աստեղափայլ սուրբ հանդիսից, որ կայք ի դրունս սուրբ Եկեղեցւոյ, օգնեցէք սուրբ եւ մաքուր աղօթիւք ձերովք՝ թողութիւն մեղացս խնդրել ինձ եւ ծնողաց իմոց, ամէն։

1027

ՇԱՐԱԿՆՈՑ

Մեզեզ, V, № 1659 (1644 թ.)

Նվիրատու՝ մահտեսի Գրիգոր

501 Զվերջին ըստացաւղ Շարակնոցիս զմահդասի Գրիգորն, որ մականուն Ապտալի Տղա կոչի, յիշեցէք... Գրիգորին և իւր ծնողացն և ամենայն

[39] Ցուցակում նշված է Հայոց ՌՃԴ, որը սխալ է, երբ շարունակության մեջ հիշում է Փիլիպոս կաթողիկոսի մահը և Հակոբ Ջուղայեցու կաթողիկոս ընտրվելը։ Այս ամենը եղել է 1655 թ.։ Հայոց ՌՃԴ-ն գուցե տպագրական սխալ է և պետք է լինի ՌՃԴ։

արեանառու մերձաւորաց՝ կենդանեաց և ննջեցելոց. որ ըստացաւ և եդ յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբա[յ], ի թուին Ռ և ՃԴ (1655), ի յաթոռակալութիւն Ս. Յակոբա[յ] տէր Աստուածատուր քաջ և արի աստուածաբան վարդապետին։ Արդ՝ կացցէ անջինջ յիշատակ ի դուռն Ս. Յակոբա[յ]։ Որք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով...։

1028

ԺՈՂՈՎՍԾՈՒ

Մշեցի, VI, № 1750

Գրիչ՝ Յովհաննէս երէց

ա

73 Յիշեա Քրիստոս... զստացող սորա զաստուածասէր զմղցի[40] Թումասն, զՄանսպուպն, զՄիսաքն, զՊատուականն, զքահանայքն և զժողովուրդն, զմեղապարտ գրիչս զՅովհաննէս երէցս. ամէն։

բ

Փառք...։ Նաև սրբասէր և պատուական Միսաք սարկաւագն ցանկացաւ յայսմ աւէտ սբ. գծի դրոցս և ետ դրել զսա յիշատակ իւրն և ծնողաց իւրոց։

Քրիստոս Աստուած.... յիշեա... և յանուանէ կոչեա զմղցի Թումասն և զորդիքն իւր՝ զՄիսաքն և զՊատուականն, զկողակիցն՝ զԹովլին, զՄանսպուպն, զդստերսն զՄարգարիտն, զՄարիամն, զՊաղտատն. զՄիսաք սարկաւագն, զկողակիցն իւր՝ զՎարդիւաթուն, զդստէրն իւր՝ զԻսմին և զԱնան. զիւոճս Անդրէասն, զմղցի Նիկողասն և զայլ ամենայն արեան մերձաւորս...։

Ցա առաւել յիշեցէք ի Քրիստոսի զՄիսաք սարկաւագն, որ եդ զիւր հալալ վաստակն գրեց զգիրքսն[41], որ եդ ի գիւղայքաղաքն Ջերմուկն, ի դուռն Ս. Պսհմսին[42], յիշատակ իւրայնոցն. որ գդա ծախէ կամ գրաւէ՝
74 զմասն Յուդային և զպատիժն ի Կայենէն առցէ...։ Գրեցաւ ի թվականին Հայոց ՌՃԴ (1655) ամին։

Դարձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ... ողորմի ասացէք ինձ մեղաւոր Յովանէս սուտուփուտ երէցու գրչիս. և յիշողքդ՝ յիշեալ լիջիք...։

1029

ԱԻԵՏԱՐԱՆ

Մշեցի, VI, № 1796 (ԺԲ դ.)

149 Յոհան վարդապետն և ես յայս օրինակիս վերա սրբագրեցաք զիւր Աւետարանն, թվին ՌՃԴ (1655)։

---

40 Մզասի։ Ցուցակում մի քանի անգամ այդպես. հապավումը չկարողացանք բացել։

41 Ցուցակում «զգիրսքն» ձևով։

42 Հապավումը չկարողացանք բացել։

1030
ՃԱՇՈՑ
CBN Mac., № 87

Գրիչ՝ Ստեփանոս Բջնեցի

40 Ո՛վ սբ. պատարագող յիշեա զՍտեփանոս ծրօղ Բջնեցի, զհայր իմ և զմայր. թվին ՌՃԴ (1655)։

1031
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 106 (ԺԲ—ԺԴ դդ.)

474 Յիշատակ է սբ. Աւետարանս Մուրատին և իւր հաւրն՝ Խոշիարին, և մաւրն՝ Ոսկիճատին, և եղբարծն՝ Վարդանին, Մոո[չ]եկին, Շարապխանին, Խոճայսարին, և իւր կողակցին՝ Վարդխաթունին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։ Եւ եթ յիշատակ տէր Ստեփանոսին[43], ով որ <ի> կալ[ր]ղայ կամ տեսանէ՝ Աստուած ողորմի ասէ։ Ոչ[44] որ չունի իշխանութիւն սորայ ծախելոյ կամ դէրաւելոյ։ Թվին ՌՃԴ (1655)։

1032
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 165 (1599 թ.)

Հետ. ստացող՝ Վարդան քահանայ

701 Ես՝ անարժան սուտանուն Վարդան քահանայս գիրեցի. Իսմաէիլ-Սուլթանի դաւօվն բաժին արինք հետ Գիրիգորին, Խոցիկին, զայս օետարանս ինձ տվին, ինչպէս որ ես ասեցի, թէ օետարանս քեզ որ նայ տէր չիկայ, թէ էն կառնեմ, որ ձեռն ծոցն ինկնի։ Մաշտոցն, Շարակ-
702 նոցն, // Խաչբուովառն երկու փայ ի լի, օետարան Ա (1) փայ ի լի։ Մաշտոցն, Շարականն մեզ, օետարանն քեզ։ Ո՛վ այլայլում գիցի՝ մասն Յուդայի առնէ, Կայենի առցէ, Քրիստոսի խաչ հանող[աց] նման ի լի։ Ովանէս պարոնտէրն վկայ, տէր Առաքելն վկայ, Բալամն վկայ, Առագելն վկայ, Խացիկն վկայ, Խէշիկն վկայ, Հրպէտն վկայ, Աստուած վկայ։ Թվին ՌՃԴ (1655)։

1033
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՆԲԱՃ, № 1

Գրիչ՝ Պօղոս Կտուցեցի

ա

44 Գրեցաւ յիշատակարանս ի թվականութեանս Հայոց ՌՃԴ (1655), ի խնդ[ր]ոյ և պատուական հանգուցեալ քահանային տէր Թումային, Ինախշին, Արթուխշին. Աստուած ողորմի ասացէք նոցա և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ Արդ՝ յիշեսջիք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր զտէր Թումայ քահանայն, որ գնեց զսբ. Աւետարանս հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց. ամէն։

---

43 Բ. Սարգիսյանն ուղղում է՝ Ստեփանոսին։

44 Ձեռագրում «ոչ» ձևով։

Բ

432 Զվերջըն ստացող սբ. Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք տէր Թումին, Արքուխշին, և Ինախշին, և Արայիշին, և տէր Մարտիրոսին. և մօր Սիարիխանին, և դստերն՝ Խաթունփաշին, Յախիշանին, Միրանշին, Փանոսին, Արամիշին, տէր Մաթէոսին, և մաւրըն նորա՝ Հիլալին, և դստեր նորա Կանարին, և Լատիւին. և կողակցին իւրոյ Սուլթանին, և որդոցն՝ Յակոբին և տէր Մկրտչին, տէր Յովանիսին և փոքր տէր Թումին, Եղիշին, Միրբապին և Ամիրխանին, փոքր Արքուխշին և Պազէկին, Ասլեկին և Թորամիշին, և որդոյն՝ Այլատին և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոցն ամենայն. Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք տէր Թումին, որ գնեց զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, բարի յիշատակ հոգոյ<ոյ> իւրոյ և ծնաւղաց իւրոց. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս զձեր տէր Թումայ եպիսկոպոսն և իւր եղբարձն՝ զտէր Մարտիրոսն, և իւր կողակցին՝ Հիլալին, որդոյն՝ տէր Մաթէոսին, Արայմիշին, դստերն՝ Լատիֆին, Գաւարին։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Մաթէոսին, և իւր կողակցին՝ Սուլթանին, և իւրեանց որդոցն՝ տէր Մարտիրոսին, և իւր կողակց[ի]ն՝ Եղիսին, որդոյն՝ Գալուստին, եղբարցն՝ Յակոբին, Փանոսին, Շխիշանին, և քեւերցն՝ Շուշանին, Գաւարին, Փարիխանին, Էթարին, Գրիգորին, ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Մարտիրոսն և իւր ծնողքն՝ Ինախշին, կողակցին՝ Փարիխանին։

43 Ո՛վ յիշիսէ յիշատակարանս կտրէ// նա զմասն Յուդայի առցէ, և զանէծքն Կայենի առցէ. և լաւ պահօղս Աւետարանիս՝ աւրհնի յԱստուծոյ և ամենայն սրբոց նորին. ամէն։ Ես՝ Պաւղոս Կտուցեցի, որ զյիշատակս գրեցի, անմեղայդիր լերուք խոշորութեամբ գրչի<ն>ս։ Ո՛վ եղբարք, Աստուած ողորմի ասացէք՝ և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

1034

ՄԱՇՏՈՑ

ՁՁՍԳ, № 88 (1590 թ.)

Կազմող՝ Շամլու

64 Կազմեցաւ Մաշթոցս ի Սեբաստիա, ի թվին ՌՃԴ (1655), ձեռամբ մեղապարտ Շամլուիս, աղաչեմ զձեզ, որ յիշէք ի բարին։ Յորժամ զհիւանդս բժշկես, Շամլու գրիչս յիշատակես, յաւժար սրտիւ ողորմի կամ Հայր մեր որ յերկինս՝ ասես։

1035

ՇԱՐԱԿՆՈՑ

ՋՁՁՎ, № 59 (ԺԲ—ԺԴ դդ.)

Նորոգող՝ Սարգիս

Վայր՝ Հալապ

ա

95 Փառք... Նորոգեցաւ Շարակնոցս ի մայրաքաղաքն Հալապ, ի թվին

Հայոց ՌՃԴ (1655) ամին, ի վայելումն Եզնկացի տիրացու Սահակին, յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն. Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Բ

Նորոգեցաւ ձեռամբ Սարգիս երիցուն մականուն Քաղախենց կոչեցեալ, եղբայր տէր Ներսէս վարդապետի։

1036
ՇԱՐԱԿՆՈՑ
ՔՅԶԶՎ, № 65 (1323 թ.)

1036 Զվերջին ստացող Շարակնոցիս զբարեսէր և զհեզահոգի խուճայ Ատեիֆն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ ծնողաց իւրոց, հօրն՝ մահդեսի Աստուածատուրին և մօրն՝ մահդեսի Խատէրին և ամենայն ազգականաց իւրոց. և եդ ի ձեռս որդոյն իւրոյ Յունանին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ և մի՛ ջնջեսցէ զյիշատակն իւր ի դպրութենէն կենաց. և զյիշատակն իւր խաղաղութեամբ պահեսցէ. ամէն։ ...թվին ՌՃԴ (1655) ի կաթողիկոսութեանն Կիւլիկեցւոց տէր Թէոդորոսին[45] և ի յառաջնորդութեան նահանգին Գերմանիկոյ, Զէյթունոյ տէր Գրիգոր աստուածաբան վարդապետին. որ էր տանուտէր տարւոյն Կշիռն։

1037
ՄԱՇՏՈՑ
ՔՅԶԶՎ, № 112

Գրիչ՝ Գրիգոր Զէյթունցի
Վայր՝ Զէյթուն

2:8 Փառք... Շնորհին Աստուծոյ սկսեալ եղև սա և ողորմութեամբ նորին կատարեցաւ գիրքս այս, որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Մեսրովբ, և Յոհան Մանդակունին, և այլք ի նախնեացն, զոր հաւաքեալ ի միում տփի Մաշտոց վարդապետն ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ։ Արդ՝ նուաստ Գրիգոր բանի սպասաւորս Զէյթունցւոյ, որդի տէր Վահան գրչապետի, ողորմութեամբն Աստուծոյ շրջագայելով ի գեղ և ի քաղաք, ի վանգ և յանապատ, և յամենայն շէնս, տեսանելով զմաշտոցքն այլ և այլ գրեալ, իսկ թագաւորաց ժամանակս և այլոց պուետիկոսաց գրեալ զօրինակն առնելով զպիտուականքն և զարարողութիւն, խրատական բանքն, զմկրտութեան, զնշանին, զերկրորդ նշանին և զհանդերձ աւրհնէքն և զկուսից պսակն, և զերկրորդ պսակն, և զհաղորդ տալն, և զաշխարհաթաղն, և զտղայաթաղն, և զգանձն, և զտաղն ըստ նմանութեան, և զՄաշտոցին բանքն գեղեցիկ և ուռնով, զպակասն ի արարողութեանց և շարականաց լցի ողորմութեամբն Աս-

45 Տպված՝ Թէոդոսորին։

տուծոյ, բաց ի հիմնարկէքն, և յեկեղեցի աւրհնէքն, և քահանայաթաղն, փոքրիկ գեղեցիկ կտակարանս [յ]օրինեալ՝ ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց Սիոնի, յիշատակ ինձ և իմոց ծնաւղաց և ննջեցելոց։

Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ գիր Մաշտոցիս ի թուաբերութիւն Հայոց ՌՃ և Դ (1655)-ին, ի նահանգս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի Զէյբունայ վանքն, ընդ հովանեաւ. Ս. Աստուածածնին և այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ։ Ծրագրեցաւ գիրքս ձեռամբ նուաստ Գրիգոր բանի սպասաւորիս ի խնդրոյ տէր Կարապետին և յիշատակ Ալթունին հոգւոյն, և որ հանդիպիք սորա կարդալով կամ աւրինակելով լի բերանով Աստուած ողորմի ասացէք. ամէն։

1038
ԳԱՆՁԱՐԱՆ
ՈՏՁՄՎ, № 1195

841 Զվերջին ստացող սորին զԱստուածատուր քահանայն, որ էր աւագերէց ի քաղաքիս Ղօնիու և բազում աշխատաւոր ի վերա սբ. եկեղեցոյս, զոր թուականիս Հայոց ՌՃԴ (1655) փոխեցաւ առ Քրիստոս յոյսն կենաց և եդ զայս Գանձատետրս յիշատակ յիւրն և իւր ծնողացն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա ասելով կամ լսելով կամ օրինակելով, միով Հայր մեղայիւ յիշեսջիք ի Տէր զվերոգրեալս և Քրիստոս Աստուած զյիշողք՝ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

1039
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 26 (1218 թ.)

240 Դարձեալ յիշեցէք զխօճայ Սինանն, և զկողակիցն իւր՝ Խանփարի և զորդիքն իւր՝ զպարոն Աղազարն, Սօլթանբէկն և զՄատուրն, և զդստերքն՝ պզտիկ Տատիկն, Փառանձիքն, և զթոռոնքն իւր՝ Մարիամն, պզտիկ Սինանն, և որ յիշէ Յուլպխանն, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Թիվն ՌՃԴ (1655)-ումն։

1040
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 119 (1627 թ.)

169 Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, յիշեսջիք զխօճայ Սլէմանն և զկողակիցն իւր՝ Ազատն, և դստերք իւր Խանզատէն և զԹագուհին, որ վերըստին նորոգեաց զսբ. զԱւետարանս։ Եւ դարձեալ յիշենջիք ի Քրիստոս Սօլթանբէկն, և կողակիցն իւր՝ զԹագուհին, և դուստրն իւր՝ Ազատխանն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և զորդին իւր՝ զՍարգիսն, Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ... Թուին ՌՃԴ (1655)-ումն նորոգեցաւ կազմս։

1041
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 127 (ժե դ.)

Գրիչ՝ Սալա տէր Ասսֆել

176 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄիրզավալին, և զկողակիցն՝ Մարգարիտն, և զորդիքն՝ Աւետիքն, Պետրոսն և Աստուածատուրն, և դստերքն՝ Սարաին, Թագուհին, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄիրզավալի և զորդին՝ Աստուածատուրն, և Աստուածատուրի կողակիցն՝ Դանայչաֆարն, և միւս կողակիցն՝ Յոլինարն, Թագուհի, և որդին ի նորայբողբոջ Ակոբջանն, և հանգուցեալ դուստրն Բ (2) Մարամատիկն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄիրզավալի, և զեղբայրքն՝ Մելինն և հանգուցեալ որդիքն՝ Ղարիպջանն, Ակոբջանն, յիշեցէք...։

Թվին ՌՃԴ (1655)։

Յիշատակս <և> ես՝ Սալա տէր Ասսֆելս գրեցի, յիշողս Աստուածէ առցէ վարցն։

1042
ԱԻԵՏԱՐԱՆ
Ջմմառ, № 505 (1443 թ.)

103 Աստուած Մէլիք իրիցուն տէր Գալուստին մեղքն... իր կողակցին՝ Սուլտանին, մեծ դստերն՝ Դոլիկին, Հաաիին, Դունիկին և իր որդուն՝ Խնդացողին, Վարդազին, Կիրակոսին... որ էս Աւետարանս գնեց, իր փէսին էրէտ՝ տէր Բարթուղիմէոսին, Թվին ՌՃԴ (1655)։

1043
ԱԻԵՏԱՐԱՆ
«Ազգագրական հանդէս», 1905, գիրք 12

Ստացող՝ Մաքսեսի էվազ

159 [Ես՝ մղդսի էվազս ստացա սբ. գիրքս և եռու][46] Ս. Աստուածածին եկեղեցուն ի ձորն Ազուլեաց, ի ժամանակս թագաւորութեան Պարսից փոքր շահ Աբազին, ի կաթողիկոսութեան էջմիածնայ տեառն Յակոբին, ի յառաջնորդութեան Թումայի սբ. ուխտին զտէր Պետրոս արհի եպիսկոպոսին և Մովսէս վարդապետին։ Դեղիս առաջնորդն Մանդվելն։ Թվին ՌՃ և չորրորդ (1655)-ումն[47]։

1044
ԱԻԵՏԱՐԱՆ
ՅՁԱՐ, № 300

1262 ... Նենգել, գրաւել, գողանալ և կամ հանել ի դրանէ Ս. Նշան եկեղեց-

[46] Ուղղանկյուն փակագծերում եղածը վերցրել ենք Ե. Լալայանի տեղեկություններից։

[47] Հայոց ՌՃԴ (1654) թ. Հակոբ Ջուղայեցին կաթողիկոս չէր, նա կաթողիկոս է եղել 1655 թ. Փիլիպպոս Աղթակեցու մահից հետո, սատի ՌՃԴ-ն սխալ է և պետք է ուղղել ՌՃԴ։

ույս յԱնկիւրիոյ, ի մերոց և յօտարաց, և որ յանդգնի և նենգէ՝ ջնջեսցէ ի կենաց կտակէ անուն նորայ և զրկեսցի ի փառաց որդուոյն Աստուծոյ. ամէն։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի թվին Հայոց ՌՃԴ (1655) և հայրապետութեանն սբ. էջմիածնայ տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի և ի
1263 *մերում վի//ճակիս Միհաս արի և քաջ աստուածաբան վարդապետին։ Եւ խնամով բահօղք սորին աւրհնին Աստուծոյ և ամենայն սրբոց նորայ. ամէն*[48]։

1045
ԱԻԵՏԱՐԱՆ
ՑՁՄՆՍ, № 148 (1655 թվից առաջ)

Գրիչ՝
Վայր՝ Կ. Պոլիս

663 Ակնեցի *երկու եղբարք՝ տիրացու* Ազարիա *և* Գասպար, *որոնք խօճայ* Յոհաննեսի *ի* Նստվերոյ, *քաջ ուսեալք զբարբառ թուրքաց, թարգմանեցին զԱւետարանն ի լեզու նոցա, ի* Կոստանդինուպոլիս, *ի թաղն* Պալատ. *թվին ՌՃԴ (1655)։*

1046
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՆ
ՑԺԴԹ, II, № 24

48 *Գրեցաւ գիրքս ի թվին ՌՃԴ (1655), ի վայելումն տէր* Վարդանին...

1047
ԱԻԵՏԱՐԱՆ
Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1960 թ., է, № 111

Գրիչ՝ Մուրատ դպիր
Վայր՝ Ակուռի

ա

55 *Ցիշեա գրիչս՝* Մուրատս։

բ

Ցիշեա զմեղապարտ գրիչս՝ դպիր Մուրատս *և Աստուած զմեղ յիշէ. ամէն։*

Փառք...։ Որոյ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղապարտ գրչի դպիր Մուրատի *հասանել յաւարտ սբ. Աւետարանիս. կարողութեամբ Աստուծոյ և զաւրութեամբն Ս. Հոգոյն, ի թվականիս Հայոց Ռ և ՃԴ (1655)։ Որ և ցանկացող եղև աստուածային պատուիրանացն զբարէմիտ և հեզահոգի* Ալանվերտին, *և կողակիցն իւր՝* Մարդէն, *և միւսն՝* Խաթունփաշէն. *ամէն։*

գ

Փառք... Որոյ ցանկացող եղեալ սրբազան սբ. Աւետարանիս աստուածասէր Ալլանվերտին *և կողակից իւր* Խաթունփաշէն։ *Եւ ստացան սրբազան սբ. Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրոց, որ դառն քրտամբք և չարչարանաւք վաստակեալ էր յիշատակ իւր և ծնաւղացն, և մեծ պա-*

48 Ինչպես հաղորդում է Ցուցակի հեղինակը, պահվել է հիշատակարանի միայն վերջին էջը։

պին՝ Շիրինին, և կողակցին՝ Դարիպ խաթունին, և որդոյն՝ Վէիսին, և նորա որդոյն՝ Նուրփաշին, և նորա որդոյն՝ Ալլավերտուն, և կողակցին՝ Լատիւին, որդոյն՝ Ամիրին, եղբարցն՝ Թուխիկին, Յաղուպին և Ամիրին, և կողակիցն՝ Գաւառն, և որդին՝ Ալլավերտին, և կողակիցն՝ Մարդէն, և միւս կողակից Խաթունփաշէն, և հանգուցեալ որդին՝ Ամիրն, և դուստր Գոարխանսոյթանն, և անդրանիկ որդին՝ Սուրիասն, դուստր Աղլանգարամն, զոր և Աստուած բարով վայել տացէ. ամէն։

դ

56 ... Արդ՝ գրեցաւ սրբազան սբ. Աւետարանս ձեռամբ մեղապարտ և մեղասէր, և մեղսաշաղախ դպիր Մուրատի, <և> յերկիր Արարատեան, ի գեաւղն Ակուտի, ընդ հովանեաւ Ս. Յակովբ հայրապետին, և Նոյեան տապանին, և Ս. Ստեփաննոսի Նախավկային, և ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ. յիշատակ Ալլավերտուն և իւրոցն ամենայնի մինչև ի քառասուն պորտն...

1048

ՇԱՐԱԿՆՈՑ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., ԺԱ, էջ 60, № 346

Գրիչ՝ Ղուկաս երէց

Վայր՝ Մբռուց

Գրեցաւ Շարակնոցս ձեռամբ անարժան Ղուկաս իրիցու, ի յերկիրն Որոտան, ի շէնս որ կոչի Մբռուց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։

Գրեցաւ թվին ՌՃԴ (1655)։ Ով որ հանդիպիք սմա և Աստուած ողորմի ասէք. ամէն։

1049

ՄԱՇՏՈՑ (1590 թ.)

«Բանբեր Մատենադարանի» № 9

Գեր. ազատող՝ Նիգոշ

ա

443 Դարձեալ ես՝ Նիգոշս, Նիկոլին որդին, գնեցի գաղաքին թաթն շուն էտև իմ հալալ հախովս ու դրի Ս. Խաչն, թվին ՌՃԴ (1655)։

բ

Ես՝ Նիգոշս, որդի Նիկոլին, գնեցի իմ հալալ հախովս ետ գերութեան գաղաքնուն ու տվի յիշատակ այլվի Ս. Խաչն եկեղեցին, թվին ՌՃԴ (1655)։

1050

ԱՒԵՏԱՐԱՆ

Ոսկան—ՀԱ, 1938 թ., էջ 206—207, № 8

Գրիչ՝ Յովհաննէս քահանայ

Վայր՝ Մոկք

ա

Փառք...։ ... մահտեսի Առաքել Մալկարացին և իւր կողակից Մարվարիդ

իւրոց մէջ խորհուրդ արին, թէ «Ինչ շահ է այս անցաւոր աշխարհս, երթանք զմեր հոգւոյ ճարն անենք քանի որ ողջ և առողջ ինքն։ Այսպէս խորհուրդ արարին իւրոց մէջ և գնացին ի սբ. Երուսաղէմ, և զիւրեանց կամաւոր ողորմութեամբն տուին սբ. Երուսաղէմայ զդարպասին և զՔառասնոց և լի աշահամբոյրն յամէն եկեղեցի։ Որիշ որիշ տուին և զինչ որ ուզեցին իսկի զիշանին (?)։ Ե (5) ամիս շրջագայեցին ի տնօրինական տեղրանք, զիւրոց փափաքն առին որ յԵրուսաղէմ։ Փորձեալ նոր ///[49] արարին բարի թէ «Մենք ինչ ունիմք աշխարհիս վրայ, երբ որ զաւակ չունիմք, յետի աւուր զմեզ յիշէ յետ և մեր անցման. այս քանի փող մնաց զայս ալ մարմնաւոր չի խարճենք, առնունք զմեր հոգևոր յիշատակ որ յետ և մեր անցման յիշեն և ողորմի տան»։ Իսկ Տէրն երկնի և երկրի զկամս երկիւղածաց առնէ աղօթից նոցա, լսէ և կեցուցանէ բարի միտ, իմաստուն Առաքել գտաւ Բ (2) քահանայ բարեկամ ասաց. «Ես այսպէս խորհուրդ ունիմ ինձ, ճարմ արէք»։ Քահանայք ալ կամաւն Աստուծոյ գտան մէկ Աւետարան մի առանց ծաղկեալ։ Իսկ բարեխնամն Աստուած աջողեց որ ծաղկողն այլ այն միջնորդ քահանան եղև, յորդորեց, թէ «Ես կը ծաղկեմ»։ Վասն որոյ առանք զսբ. Աւետարան և ծաղկեաց Թակրաղցի Սարգիս աբեղայն գոյնզգոյն ոսկով և երանգ երանգ դեղով, որպէս և վայել է սբ. Աւետարանին, որպէս է նա ակն պատուական...։ Վասն որոյ և այս Առաքել մահտեսին Մալկարացին ստացաւ զսբ. Աւետարանս ի սբ. Երուսաղէմ քաղաք և տարաւ ի Մալկարա գիւղաքաղաքն իւր, և ետ յիշատակ ոգւոյ և ծնողացն, հօրն՝ Աղաջանին, և մօրն՝ Մուրվաթին, և իւր կողակցոյն՝ մահտեսի Մուրվաթին, և եղբօրն՝ Սարգսի[ն], պզտիկ եղբօրն՝ Յովսէփին և Մարտիրոսին, որդւոցն՝ Սաքանսին և Զումսուրին, և Սուլթանին, և Կիրակոսին, և Մարտիրոսին, և Գոնարին, և իւր որդւոցն՝ Ստեփաննոսին, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և ննջեցելոց ողորմեսցի Յիսուս միածին. ամէն[50]։

Բ

Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և անկարգս ի կարգաւորաց... և անարգս ի քահանայից, բազմամեղ անուն Յովհաննէս գրեցի զսբ. Աւետարանս ի յերկիրն Մոկաց, ի գիւղաքաղաքն[51], ընդ հովանեաւ Գ (3) ս. խորանացն՝ Ս. Աստուածածնին, և Յովհանու Կարապետին, և Ստեփաննոսին Նախավկային, ի թուաբերութեան հայկազունիս ՌՃ և չորս (1655) ամ անցեալ եղև յաւարտ սբ. Աւետարանս գրելոյ և ծաղկելոյ. որ է կենդանակերպն Կշիռն և գիր տարւոյն Զայն, և եօթներեակն Հայոց ԻԱ։ Արդ՝ աղաչեմ զձեզ, քահանայք և ժողովուրդք Աստուծոյ, ողորմի ասացէք ինձ մեղաւոր և անարժան Յովհաննէս գրչիս, ծնողացն իմոց և հօրեղբօրն իմոյ՝ տէր Յովհաննէսին, և ստացողի սբ. Աւետարանիս մահտեսի Առաքելին և ծնողացն իւրոյ։

[49] Մի քանի բառ Ոսկյանի հաղորդմամբ անընթեռնելի են։

[50] Ինչպես Ոսկյանն է տեղեկացնում, այս հիշատակարանը ստացել է Ա. Ալպոյաճյանից և հրատարակել է, մեզ թվում է, թե հիշատակարանի բովանդակությունը վերապատմված է այստեղ։

[51] Անունը բաց է թողնված։

Գ

Ի հայրապետութեան սբ. Երուսաղէմի տէր Աստուածատուր մեծ բարբունին, հեզ և խոնարհ, և հնազանդ և ժողովս Հայոց ազգիս զվանքերն ամէն նոր նորոգեաց և ոչ եթող պակաս տեղի։ Տէր պահէ զինքն ի մեղաց և ազատէ ի չար աչաց. ամէն[52]։

1051

ՇԱՐԱԿՆՈՑ

Արցախ, էջ 388—389

Դրիչ՝ Աւետիս քահանայ

Վայր՝ Պապաջան

Արդ՝ եղև աւարտ գրչութեան... ի շրջակայութեան հայկազեան տումարի հազար հարիւր և չորս (1655) ամի, ի դառն և անբարի, վշտաշատ ժամանակի, որ երերուր և տատանեալ ազգս Հայոց, ի ձեռն այլազգեաց և անօրինաց և յանիրաւ պահանջողաց, ի հայրապետութեան տեառն Պետրոսի նորընծայ և սրբազան կաթուղիկոսի և առաքելական աթոռ սորին Գանձասար կոչի, և ի խանութեան երկրիս մերում Մուրթուզա խանին, ի սբ. և ի գերահռչակ ուխտիս որ կոչի... Զարեհայ անապատ... Բայց եղև սկսանել Շարակնոցիս ի երկրին մերում Վերին Զակամ, ի հայրենական գեօղն իմ, անուն Պապաջան։ Եւ այժմ օտարացեալ և փախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերոյ դրեցաք, ի գիւղս որ կոչի Խաւանիս, որ եղև աւարտ Շարականոցիս, զի ի շէնս այս կայ պատուական Ջուխտակ եկեղեցիս... Գրեցաւ ձեռամբ ամենամեղաւոր գրչի Աւետիս անպիտանի, [որ] քահանայ կոչի։

1052

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 372

Կազմող՝ Շամլու

Դարձեալ յիշեցէք զստացաւղ սորա զՀազրպէկն, որ մականունն Քանդրեճի կոչի, և զկողակիցն նորա՝ զԽանումն, և զորդիքն՝ զՍինան... և զմիւս որդիքն սորա զԻսկանդարն, որ ի թուին ՌՃԴ (1655) նահատակեցին, և զԱմասն և զՄուրատան և զԱբրահամն..., Զկազմող զՇամլուս...։

---

[52] Խոսքը վերաբերում է Աստվածատուր Տարոնեցուն, որը 1645—1670 թթ. ընթացքում Երուսաղեմի պատրիարք դարձավ երեք անգամ։

1053

ՏՕՆԱՑՈՑՑ

ՄՏԶԵՊ, VIII, № 2500

Գրիչ՝ Սրապիոն սարկաւագ
Վայր՝ Եւփառայ

ա

177 . Փրկութիւն, թողութիւն և ողորմութիւն ի Քրիստոսէ խնդրեցէք Սրապիոն դպրիկ, և իմոցկ, որք աւգտիք։։

բ

Աղաչեմ յիշել ի Տէր ղծրադրող սորա՝ Սրապիոն սարկաւագս, որ և բաղում աշխատանաւք որ ձաբրդեցի զսայ, ի մայրաքաղաքն Կեսարիա, ի գիւղն Եւփառայ, թվին ՌՃԵ (1656) ամին, ամէն։

գ

Թիշատակ է ի դուռն Ս. Ստեփաննոսի, Աստուած ողորմի։

Փառք քեզ յաղագս յամենայնի,
Զի հասուցեր վերջքն գրի,
Զի դանդաղկոտ գթոտէի,
Եւ վճարել ոչ կարէի։

դ

Զեռքս գնայ դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող,
Սրապիոն սորա գրող
Ոտից ձերոց կոխան ի հող։

ե

Փառք...։ Արդ՝ շնորհիւ տեառն Աստուծոյ գրեցաւ Տօնացոյցս և քաղուածոյս ըստ իւրաքանչիւր աւուրց ի միասին, ի թվականութեանս Հայոց ՌՃԵ (1656) ամի, և կատարեցաւ ի [յ]ունվարի ամսոյ Դ(4), աւրն շաբաթ, ի հայրապետութեան///, ի մայրաքաղաքս Կեսարիայ, ի գիւղն Եւփառայ, ի դուռն Ս. Կարապետայ և ամենայն սրբութեանցն, ձեռամբն ոգնամեղ անձին Սրապիոն ոմն անարժանի, պիտակ անուամբն սարկաւագիս։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք տիրանայք սմա, կամ օրինակէք և կամ հանդիպիք, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր ըղմեր անարժանութիւնս, և զհոգևոր, և զմարմնաւոր զծնաւղսն և զուսուցիչքն մեր, և որ յիշէ...։

1054
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1865

Գրիչ՝ Թորոս եպիսկոպոս
Վայր՝ Երուսաղէմ

ա

237բ Զեռամբ Թորոսի:

բ

288բ Զնուաստ գրիչս զԹորոս եպիսկոպոս և ղծնաւղս իմ մաղթել ի ձէնջ, ո՛վ գրակարդաց, յիշեցէք ի Քրիստոս, զի յոյժ տապատոչոր սրտիւ հարեալ, որպէս ի նետէ կարէվէր խոցմամբ ումեմն հիպիտոր կոչեցեալոյ գերեզմանին քրիստոնեան ի Ս. Մնունդն ծրելով իմով ձեռամբս, զի ահէ որղոցն Քանանու մաշեալ լինէր սիրտ իմ, զի ոմն ղըզրլու և ոմն աղլու, որ են Բ (2) ազգք ֆիլահ կոչեցեալք։ Սոքայ երկոքեանք տալով պատերազմ ընդ միմեանս ի Ռե[դ]ղէնէմ գիւղաքաղաքի, դեռ ևս վճարումն չեղև դոցա պատերազմին, զոր և վերջն բանի նմայ միայնոյ է գիտելի, այն որ արար զերկինս և զերկիր ոչընչէ։

գ

104ա Զեռս երթայ՝ դառնայ ի հող,
Գիրս մնա յիշատակող,
Զձեզ աղաչեմ, ո՛վ ընթերցաւղ,
Վասն իմ առ Տէր լինիք մաղթող։

Զի յոյժ տապատոչոր սրտիւ դրեցի զդիրքս ի Ս. Մնունդն։

դ

135ա Ո՛հ զամենամեղ անձն իմ զԹորոս եպիսկոպոս, անպիտան մեղուցեալ հողս և զհանգուցեալ հայրն իմ՝ ըզԴաւիթ և զմայրն իմ՝ զՄիհրանն զգնացեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի սբ. աղօթս ձեր...։

ե

198բ Այլ և ի զրաւ գրչութեան սըմին եղև ումեմն նուաստականի Թորոս[1] եպիսկոպոսի ի Ս. Մնունդն, որ է վանք՝ Հայոց ազգի, ի թվականութեանըս մերում ՌԾԵ (1656) ամին, յունուվարի, որ աւր ԺԱ (11) էր ամսոյն, ի ժամանակս բռնակալութեան Տաճկաց սուլթան Սահամատի անկատար գոլով, այս է ԲԺ (12)-ան ամեայ աւելի կամ պակաս, զի առ հասարակ աշխարհ՝ եթէ ծով, եթէ ցամաք խռովութեամբ և անկարգութեամբ լցեալ է ազգի շըփոթմամբ և մեծամեծ պատերազմաւ ոչ հընազանդելով իւրեանց թագաւորին՝ փոքր համարելով ըստ Սողոմոնի, որ ասէ. «Վա՜յ քեզ քաղաք, որոյ թագաւոր քո մանուկ է»։ Վասն այն ոչ հնազանդելով բըռնաւորքն տալ պատերազմ ընդ միմեանս, որ բազում քաղաքս, և աւանս, և գիւղս աւերեցին այսմ յամի, որ մինն է ի քաղացքաց Հալպ կոչեցեալ, զոր աւիրելով աւերեցին, փաշայքն տալով պատերազմ ընդ միմեանս. ոմն ասելով թէ «ես նստիմ», և ոմն ասէր թէ «ես նստիմ», զոր և Աստուածն ամենայնի զվերջն ի բարին կատարէ։

[1] Մինչև այստեղ գրված է կարմիր մելանով։

Զ

202ա Այլ և զծրաւղս, զԹորոս եպիսկոպոս կրկնակի ժտելով հայցեմ և խնդրեմ, մի Հայր մեղայիւ յիշեցէք զբազմամեղս, զի մեծաւ տառապանօք ծրեցի զսա ի Ս. Ծնունդն, յաղագս նախանձու յեղբարց իմոց, զոր արարին ընդ իս ի գահայմեծի Սրբոյն Յակոբայ Տեառնեղբաւրն, զի խորհեցան չար, և գուբ փորեցին ազգի ազգի, և մատնելով առ ոմեմն հիպիտոր անխել և անոպա և նախանձով վառեալ, զի երկրորդ դատ և դատաստան արարին ի վերայ իմ. մինչ մեք ան[յ]ոյս և անաւգնական լինելով ամենեցունց, եկի աստ, ըստ այնմ, որ ոչ էր որ աւգնէր ինձ կամ թէ եղէ ես առանց աւգնականի, զոր տէր Աստուածն ամենայնի հատուցէ նոցա աստ ի մարմնի, այլ և ի հանդերձելումն դատ արասցէ ընդ իս և ընդ սոքայ, զի կարէվէր խոցեալ եղև սիրտ իմ։

Է

240ա Բայց դու, ո՞վ կարդացողք պատմութեանս, անմեղադիր լերուք ինձ, զի աւրինակն այլայլելի էր և խիստ ծուռ, որն սակաւ մի գրեցի շիտակն և որն չի կարացի։

1055

ՃԱՇՈՑ (1356 թ.)

«Բանբեր Մատենադարանի», № 12, էջ 289

Կազմող՝ Դաւիթ երէց

Այլ և զվերջի կազմող տառիս՝ զանիմաստ, միայն անուամբ Դաւիթ երէց յիշել աղաչեմ, հանդերձ ծնօղիւք, որ բազում աշխատութեամբ յանգեալ կազմեցի ի թուականիս Հայոց ՌՃԵ (1656), յունվար ամսոյ Ի (20), վերակացութեամբ և խնդրո[յ] հեզահոգի և առաքինի տէր Կարապետ աւաք երէց վերաձայնեալ ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին, զոր տէր Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ...։

Այլ և զմեծաշուք իշխանսն և զերեսփոխանսն այնմ գանի՝ զխոճայ Քրիստոսատուրն, զխոճայ Եխտիարն, զխոճայ Մուրատն և զխոճայ Եղիայն յիշեսջիք ի սբ. աղօթս, զոր ջատագով եղեալ այսմ հոգէլից մատենիս, ետուն վերըստին կազմել. միթէ բարերարն Աստուած տացէ իւրեանց սխալանացն թողութիւն, հանդերձ ննջեցելովք իւրեանց. ամէն։

1056

ԺՈՂՈՎԱՏՈՒ

«Սիոն», 1966 թ., № 10—12, էջ 548—549

Գրիչ՝ Ոսկան վարդապետ

Վայր՝ Ցուշի

Պարագայութեամբ ամաց՝ ըստ շրջաբերութեան մեծագունտ լուսաւորին և իշխողին տունչեան, որոյ եթերաչափութիւն ի թիւ համարոյ արկեալ առ յաճոմն կալանդաց ամ յամէ յաւելեալ մինչև աստ առ մեզ բարեճահ կարգաւորութեամբ, ներ որոց ամենայն ներգործութիւնք և կիրք

իրականութեան, և գործառնութիւնք արուեստաւորութեան մերոյ, շարալրացեալ յաւարտս ժամանեն, սակս ոչ մարթելոյ համանգամայն ծայրաւորելոյ, այլ սակաւ սակաւ և դոյզն դոյզն յառաջ ածելով ըստ բնութեան կարգի ի կատարս իրի ժամանեալ վերջաւորեմք։ Ըստ այսմ սարասի և մերս ձեռնարկութիւն իրակութեան եղև։ Քանզի սկիզբն արարեալ սմա ներ քաղաքումն Եւդոկիում յորջորժեցելում, ներ թուաբերութենում տեառն Քրիստոսի Յիսուսի ՌՈՆԳ (1653)-ում, իսկ ընհայկականում ՌՃԲ (1653), նամսեանն օգոստոսի, որոյ էին աւուրք ԻԲ (22)։ Բայց վերջ աւարտման սորա եղև ներ թականութեան նունոյ Տեառն հազարորդի վեցհարիւրերորդի յիսներորդի վեցերորդի (1656), յամսեանն յունվարի, որոյ էին աւուրք քսանորգ վեցերորդ (26), իսկ ներ Հայկականում ամաց բարդութեան հազարորդի հարիւրորդի հինգերորդի (1656), նամսեանն տրէ առձայնեցելոյ, որոյ էին աւուրք քսան (20), ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսի, ներկրումս Արարատ վերակոչեցելոյ, իսկ տեղւոյս անուն Յուշոյ վանք կամ Յուշոյ Ս. Սարգիս, սահմանադրելոյ ներ նահանգումս Ամբերդոյ, որ է լեռնակողմն կողմամբքն հիւսիսոյ հանդէպ սբ. Էջմիածնի՝ Գրիգորաշինի և Քրիստոսակառի, ձեռամբ տէր Ոսկանի բանի սպասաւորի և թարմատար գրչի, օժանդակութեամբ և ի թիկունս հասութեամբ Ս. Հոգւոյն, որ յար պաշտպանութեամբ խնամեալ տածէ զհօտս էակցի իւրոյ տեառն Յիսուսի Քրիստոսի, յորմէ յանձնեցաւ նմա, ի փառս և ի գովեստ և ի պատիւ անուան իւրոյ։ Եւ ի տեղակալութեան յաջորդութեամբ հայրապետութեան տեառն Յակոբու, որոյ տէր Յիսուս զերկարաձգութիւն աւուրց տացէ և զուղղութիւն մտաց ե վարուց։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ գաղափար դնելով, յիշեսջիք զվերոյ գրեալ Ոսկան անուամբ ևեթ վարդապետս զշարածրող տառիս, նաև զթողութիւն շնորհել խառնիճաղանճութեան և սղալանաց գրոյս, զի ի բազմազան օրինակաց և ի զանազան տեղիս շարածրեցաւ։ Մանաւանդ յայլևայլ տեղիս և ի շրջագայութեան. զի մասն ինչ Եւդոկիայ սկիզբն արարեալ գծեցաւ, մասն ինչ Անդրիանուպօղիս, և մասն ինչ ի Կոստանդնուպօղիս, և մասն ի վանս մեր, որ է Յուշոյ Ս. Սարգիս, ընդ հովանեաւ սբ. եկեղեցեացս զերահռչակաց, որք են գերամբարձութեամբ երկնաքատակք կառուցեալք։

549բ Նաև յիշել ժոեմ զմիաբանութիւն սրբոյ ուխտիս՝ զծերունի տէր Պետրոսն, և զբանասէր տէր Կարապետն, և զհոգաբարձու Կարապետն, և զաւագ սարկաւագ Մկրտիչն, և զդեռաբողբոջ մանկունս զՋաքարիայն և զԴաւիթն, և զայլս բազումս։ Եւ որք յիշէք, յիշեալ լիջիք...։

1057

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 137

Գրիչ՝ Շամլու
Վայր՝ Սեբաստիա

ա

603 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի Սեբաստիա, ընդ հովանեաւ Ս. Սարգսի և Ս. Աստուածածնի և այլ սրբոցն, որ աստ հաւաքեալ

604 կան ի բարեխաւսութիւն ամենայն աշխարհի // ևս առաւել մեզ, որ անվնաս մնացաք [ի] դառն և դժուար ժամանակիս, որ զՀալասլ գերեցին, և եկեալ անթիւ զաւրաւք ի Սեբաստիա, ոմանք ասեն ԽՌ (40000) և այլք՝ թէ ԿՌ (60000), բայց չկարացաք գիտել զորպիսութիւն զաւրացն, թէ քանի են։ Եւ զայս դիտեմք, որ Ճրագալոյսն մեզ խաւար հանդիպեցաւ։ Ի թուաբերութեանս Հայոց ՌՃԵ (1656) ամի, ի փետրվարի Զ (6)-ն աւարտեցաւ։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ՝ հայրք և եղբարք, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, անմեղադիր լերուք, զի կարիք իմ այսչափ էր. և յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զմեղաւոր մեղաւք մոլորեալ ախմար գրիչս, հող և փոշի սուտանուն Շամլուս, որ բազում չարչարանաւք և փափաքանաւք գրեցի զսբ. Աւետարա[ն]ս, ի խնդրել հաւատարիմ և իմաստուն ոգւոցն, որ ակն ունիցին տեսանել զարքայութիւնն անսուտ խոստման տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր զծնաւղս իմ, և զուսուցիչս իմ զՆերսէս վարդապետն, որ մականունն Նորաունկ կոչի, որ և այժմուս սպասաւորէ Ս. Նշանիս։ Լի սրտիւ յիշաւղն՝ յիշեալ լիցի առաջի Աստուծոյ. ամէն։

Բ

Դարձեալ յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր զքրիստացող սբ. Աւետարանիս զԳրիգորն և զկենակիցն՝ Եղիսաբեթն, և ծնաւղս նորա Եղթիարն և զՄանուշակն, զեղբայրսն՝ Մելքոնն, զՊաքամուրն, Շահրիարն, զՍաֆարն, և զորդիսն՝ զԽաչատուրն, [զ]պապն՝ զՏաւնաւազն, և զդուստրն նորա՝ զՎարդիկն, [զ]Ոսկին, զՄարիամն, և զՄանուշակն, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց և եդ յիշատակ ի Կովտունն, ի ձեռն տէր Յովսեփին։ Զունի ոք իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ կամ ի ձեռաց սորա յափշտակելոյ. եթէ ոք յանդգնի՝ զմասն Յուդայի և զպատիժն Կայենի կրեսցէ. լի և առատ սրտիւ յիշողն՝ յիշեալ լիցի առաջի Աստուծոյ...։

1058

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Մ3ԶԵՊ, IV, № 1044

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ

Վայր՝ Ղարասու

ա

62 Գրեցաւ Յովհաննու քաղուածուս ձեռամբ Յովանէս սարկաւագի, թվին Հայոց ՌՃԵ (1656) ամին, ի յաշխարհս Հոնաց, ի գիւղաքաղաքն Ղարասուն, ընդ հովանեաւ Ս. Աւգուստինի եկեղեցոյս, առ ոտս Եգեր գետոյն, ի վայելումն քաջ հռետորին և բարձրագոյն մերոյ Իգնատիոս վարդապետին, զոր և Աստուած բարով վայել տացէ. ամէն։

Բ

Աւարտեցաւ Յոհաննու քաղուածուս ձեռամբ Յովանէս սարկաւագի, թվին Հայոց ՌՃԵ (1656) ամին, Հռոմայեցոց ամսոյ փետրվարի ԺԴ (14), օրն Տեառն ընդառաջին։ Դարձեալ յիշեսջիք զուսուցող գրիս զՀոգևոր

հայրն իմ՝ զտէր Յովանէս քահանայն քաջագրիչ, որ բազում աշխատանաւք և ջանիւք ուսոյց մեզ զիր։ Եւ մեր սկսեալ զայս Յոհաննու Մեկնիչս աւարտն արարաք։ ... Այլ և յիշեսջիք զմարմնաւոր ծնողքն իմ՝ զտէր Ալէքսանոս *քահանայն և զհայրն իմ՝ զ*Յակոբն, *որ ալեաւք ծաղկեալ փոխեցան առ Քրիստոս։...*

1059
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 10044

Գրիչ՝ Գրիգոր Երէց
Վայր՝ Քարանատ

ա

3բ Գրիգոր *ծաղկողս յիշեա ի Քրիստոս։ Ստացող սորայ* Սանդո[ւ]խտն *յիշեայ ի Քրիստոս*[2]։

բ

196բ *Զմեղապարտ* Գրիգոր *անարժան Էրէցս, աղաչեմ յիշել ի Տէր*[3]։

գ

377բ *Փառք...։ <Որոյ> շնորհիւ Տեառն և օգնականութեամբ նորին եղև աւարտ լուսազարդ Շարակնոցիս ի թվին Հայոց Ռ և ՃԵ (1656) ամին, փետրվար ամսոյն ԺԷ (17), ի յերկիրս* Գանձակ, *ի գևղս որ կոչի Քարա-*
378ա *նատ, ընդ հովանեաւ Ս. Յակոբիս և Ս. Աստուածա//ծնիս, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ* Ապասին, *և հայրապետութեան ի տանս*[4] *Աղուանից տեառն* Պետրոսի *սրբազան և մաքրափայլ կաթուղիկոսի, և եպիսկոպոսութեան նահանգի մերոյ տեառն* Կիրակոսի՝ *հզօր և իմաստուն վարդապետի, ձեռամբ բազմամեղ և անարհեստ* Գրիգոր *իրիցու, որ անուամբս միայն եմ, վա՜յ ինձ մեղաւորիս, ի խնդրոյ մաքրասուն և սրբասնունդ ապաշխարողի* Սանդրիդոյ, *որ ետ գրել զսա և զարդարել ոսկով և երփնափայլ գունով, յիշատակ հոգւոյ իւրն և ծնողացն, հայրն՝* Ագարիէն, *միայնացեալն ի յանապատի և մայրն՝* Մարիանն, *և եղբարքն՝* Յակոբն *և* Մուրատն, *քույրն իւր՝* Հոռոմն, *հօրեղբայրն՝* Ոդանանն, *Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ և յետ աստեացս ելանելոյ արքայութեան արժանացուսցէ. ամէն։ Այլ և աղաչեմ յիշել զ*Սանդուխտն *և պապն իւր՝*
378բ Մուրատն, *և կողակիցն իւր՝ // Դոլվաքն, որ հանգուցեալ են ի Քրիստոս, Աստուած իւր արքայութեանն արժանացուսցէ. ամէն։*

*Այլ և յիշեցէք զ*Սանդուխտն *և զհայրն իւր՝* Ագարիէն *և մայրն, և եղբարքն, որ ստացան զսա հալալ վաստակոց իւրեանց, որոյ վարձն ի Տեառնէ ընկալցին։ Այլ և յիշեցէք զ*Սանգուխ[տ]ն *և զհոգևոր մայրն անապատին՝ զ*Հոռոմն *և միեղէն աղօթաւոր քոյրքն իւր, որ զցայգ և ցերեկ աշխատին ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ ճգնին միշտ։ Աղա-*

---

[2] *Այս երկու տողը գրված է նկարի չորս անկյունների մոտ գրված քառակուսիների մեջ։*
[3] *Նման մի հիշատակարան տե՛ս նաև 245բ էջում։*
[4] *Ձեռագրում «տօնս»։*

չեմ յիշել միշտ զվերոյ գրեալսն ի աղօթս ձեր և մեղաց թողութիւն խնդրել ի Աստուծոյ. ամէն։

Արդ՝ և ես մեղապարտս Գրիգոր գծող և ծաղկող Շարակնոցիս, երես անկեալ աղաչեմ, յիշել զիս հանդերձ ծնողօք և մեղաց թողութիւն խնդրել ի յԱստուծոյ, որոյ Տէրն Տէրանց թողցէ զամենայն յանցանս ձեր. ամէն։

1060
ԱԻԵՏԱՐԱՆ
ՍԻՆՋ., № 16

Գրիչ՝ Բարսեղ քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

14 Փառք...։ Եւ արդ՝ ես [յետինս] ի բանականաց և առաջինս ի չարասիրաց և անիմաստ ի գրչաց, փծուն սուտանուն Բարսեղ քահանայս, որ եմ մեղօք զառածեալ, քանզի եմ հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելոցն բանէ, որ ասէ. «Յոր կոչումն կոչեցար ի նմին կացջիր»։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով յանձինս, այլ ունայն և այլ յամենայն բարեաց գործոց, և եմ թափուր մնացեալ, այլ յուսամ ի մարդասիրութիւն Աստուծոյ, զի առատ է նա, և սպասեմ վարձու յետի մշակին։

Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՃԵ (1656) ամին ահգի ԻԸ (28) և յունիսի Դ (4), ձեռամբ Բարսեղ սուտանուն քահանայիս, անիմաստ և տխմար գրչի, զի իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան, այլ և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ և շրջապատեալ։ Այլ ըստ կարի մերում, զոր պարգևաց մեզ շնորհաբաշխ Հոգին Սուրբ, անարժան յամենայն[ի] և ամենայն չարեօք շաղախեալ, ձեռօք ի հանգ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս ի գեղաքաղաքիս Ջուղայու, ընդ հովանեաւ Ս. Յովհաննիսի, ի հայրապետութեան տեառն մերոյ Յակոբի երից երանեալ հայրապետի, և ի վերատեսչութեան նահանգիստ ընդ[հ]անուր Պարսկաստանի հեզահոգի արեհեպիսկոպոսի, և շնորհաբաշխ տեառն Դաւթի, որ է բնիկ քաղաքի մերոյ Ջուղայոյ, և ի թագաւորութեան Պարսից շահ Ապասուն։ Եւ արդ՝ որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս, և յամենալի սեղանոյս, և որք պատահիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ և կամ գաղափար առնելով, բառնայք զսխալութիւն սորա և յիշեցէք յաղօթս ձեր Բարսեղ քահանայս, և զծընողքն իմ[5] զՍարուկն և զՍաթումն, և եղբարքն իմ՝ զԱփկարն, և Ղազարն, և քւերքն իմ՝ զՄախթոմփաշէ և զԻշխանն, և կողակիցն իմ՝ զԻշխունն, որ է հանգուցեալ առ Քրիստոս, և մի լի բերան սրտիւ յիշեցէք ի Քրիստոս, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ՝ ի[ր] միւսանգամ գալստեան...։

Ո՜հ, ո՜հ, ո՜հ հազար բերան մեղաւորիս, վա՜յ ինձ, վա՜յ ինձ, թէ զինչ լինիմ գերիս։

---

[5] Սկզբից մինչև այստեղ տե՛ս նաև ՏԵՐԱՎՋ, № 129, էջ 178։ Սակայն այստեղ ամսաթվերը տարբեր են. «ի թուականիս Հայոց ՌՃԵ (1656) ամին, արաց ԺԸ (18) ամսոյ և յունիսի Հոոմայեցւոց ի մարտի ԻԴ (24), կենդանակերպն Բ (2) որ խոյն»։

Բ

Զանարժան գծող սորին յիշեցէք ի Քրիստոս Բարսեղ քահանայս. ամէն։ Ոհ, ոհ, ոհ մեղաւոր եմ ես, վայ է ինձ Ռ (1000) բերան։

Ստացող՝ մահտեսի Սահակ

Գ

Յիշատակ է սբ. Աւետարանս մահգասի Սահակին, *որ ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, և ետ զսա ի դուռն ի Բեթղէեմ իւր հոգւոյն յիշատակ, և կողակիցն իւր՝* Դօլվաթխանն, *և որդիքն իւր՝* Յակոբն, Եսայուլի, Աւետիքն, Աղաջանն, Պետրոսն, Մկրտիչն, Ասատուրն, *և դրստերքն իւր՝* Մարիամն, Վառվառն, Խոռամսիմին, Աննմանն, *յիշեցէք... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի* Սահակն *և զհայրն իմ՝* Յովանէսն *և զմայրն իմ՝* Մբսրմէլիմն. *յիշեցէք...*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Սահակն *և զհարսն իմ՝* Սվիսաբէթն, *և թոռն իմ՝* Սարգիսն, *յիշեցէք...*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Սահակն *և զդուստրն իմ՝* Վառվառն, *և զթոռն իմ՝* Սարսուխանն, Անային, Մարիամն, *դուստրն իւր՝* Լէլի, *յիշեցէք...*

Դարձեալ յիշեցէք զմահդասի Սահակն, *և զաներն իմ՝* Յակոբջանն, *և սորին կողակիցն՝* Ղազալխաթունն, *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք զմահդասի Սահակն, *և զաներն իմ՝* Յակոբջանն, Խաչատուրն, *և սորին հայրն՝* Ջալալն, *և կողակիցն իւր՝* Գօզալն *յիշեցէք...*

1061

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 6977

Գրիչ՝ Գրիգոր Ալիփիճարցի

Վայր՝ Ալիփիճար

309ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Շարակնոցս ի թվականիս Հայոց ՌՃԸ (1656) ամին, յուլիս ամսոյ ԺԸ (18) եղև աւարտ սորա, ի գաւառն* Ամթայ, *ի գեօղըն որ կոչի* Ալիփիճար, *ի հայրապետութեան այսմ ճնահանգի տէր* Յակոբ *կաթողիկոսին, և ի թագաւորութեան Տաճկացն սուլտան* Մահմետին։ *Բայց գրեցաւ սա ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի և հաւատարիմ ծառային Աստուծոյ տէր* Առաքել *քահանային, կենդանեացն և հանգուցելոցն։ Յիշեցէք ի Քրիստոս զստացաւղ սբ. գրոցս զտէր* Առաքել *քահանայն, որ երետ մեզ սիրով Ի (20) զուրիշ, գրեցաք զՇարակնոցս, յիշատակ անձին իւրոյ։ Աստուած բարով վայել տացէ յերկար ժամանակօք, անփորձ և անսասան կենաւք մինչև ընդ երկայն աւուրս. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ո՛վ սբ. ընթերցողք, զիս՝ զանարժան գրողս սորա

309բ զՅալիփին[ա]ցի Գրիգոր // *քահանայն և անմեղադիր լերուք գրիս սխալանաց և խոշորութեան, քանզի կար մեր այսչափ էր։ Այլ միով Հայր մեղայիւ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք ստացողի սորա և գծողի։ Եւ Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց՝ ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի...։*

1062
ԱԻԵՏԱՐԱՆ
Կ. Ցուղրաշյան, UB. B—102

Գրիչ՝ Ովանէս
Վայր՝ Կ. Պոլիս

ա

136ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ ի տիրապահ և հռչակաւոր քաղաքս, որ կոչի Կոսսանդինուպալիս, ձեռամբ Ովանէս գրչի, ի գուռն Սրբոյն Նիկողայոսի, ի թվաբերութեանս Հայոց ՌՃԵ (1656), յուլիս ամսոյ ԻԲ (22), օրն չորեքշաբթի, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մեհամետի, ի հայրապետութեան սբ. Էջմիածնի տեառն Յակոբ կաթուղիկոսի, ղրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս, աստուածախաւս մատեանս...։

Աստուածասէր Յոհանն, և կողագցին իւր Մարիամին, և զհանգուցեալ որդին իւր՝ Ղուկասին, և դուստրն իւր՝ զԿուլինապաքն, և զՆազլուխանն, մին դուստր այլ Ոսկիտատիկն, և զաներսն իմ՝ Մուրատն և կողագցին իւր՝ Ոսկիտատիկն։ Դարձեալ յիշեցէք զՅոհանն և զեղբայրն իւր՝ հան-
136բ գուցեալ Միրաքն և զհայրն իւրեանց //Կիրակոսն և զկողագցին իւր՝ Մարիամին, որ մեծաւ սիրով ստացաւ յաղագս յիշատակի ոգւոյ իւրո[յ] և ծնողաց, լաւ համարելով զսա քան զամենայն պատուականութիւն վայելման աշխարհիս... յորոյ եռանդնայորդոր փափագմամբ եւ գրել զսա սիրով և մեծաւ հաւատով, տալով ի գուռն Ս. Անանիայ առաքելոցն։ Եւ մի ոք իշխեսցէ հանել զսբ. Աւետարանս ծախել և կամ գրաւ դնել՝ ո՛չ եպիսկոպոս, ո՛չ քահանայ, ո՛չ հաբեղայ, ո՛չ տանուտէր, ո՛չ հայրապետ, ո՛չ ի մերոց և ո՛չ աւտարաց։

Նվիրատու՝ Մուրատ

բ

Ես՝ Մուրատս սրտի մտաւք եղի յիշատակ ի գուռն Ս. Անանիա առաքելոցն, յիշատակեալ է զյիշատակեալսն, որ ի սմա յիշեալ լիցի...։

1063
ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻՈՅ
ՈՑՉՄՎ, № 843

Գրիչ՝ Ալէքսանոս դպիր

423 Փառք... Եւ[6] ես տկարացեալս մարմնով և կարկամս անձամբ զառածեալս մեղօք և ժիրս ի մեղս...։ Եւ ի ձէնջ հայցեմ մախթանօք և աղերսանօք խնդրել մեղաւորիս թողութիւն մեղաց և բժշկութիւն հոգւով տկարիս, ողորմութիւն ի բարերար Փրկչէն մերմէ, լի սրտիւ միով Հայր մեղայիւ յիշել զիս՝ Ալէքսանոս դպիրս, որ անուամբ միայն եմ, և զծնողս իմ զՍտեփանոս քահանայն և զմայրն իմ Զմրուքն, որ փոխեալն են առ Տէրն իւրեանց և հանգուցիչն ամենայնի Քրիստոս. և զձեզ նորոգեսցէ և յիշողացդ ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։ Գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌՃԵ (1656) և եղև աւարտումն յուլիս ամսոյ

6 Տպված է՝ ես։

Իե (25)։ Բայց խնդրեմ ի ձէնչ անմեղադիր լինիլ անյարմարութեան դրոյս, զի աչքս զօրէ[ի]ն և ձեռքս դողար և հազիւ կարացի ի դառն ժամանակս զբաղմանցն և նեղութեանցն։ Բայց ես զտկարութիւնս ի բաց եդեալ վասն սրտիս մխիթարանաց և յետ մնացիցն յիշատակ կալ մնալ. և զառանձեալս յիշելոյ, յիշատակ լից[ի] ապա[յ]գայ։ Ո՛վ ոք որ կարդայ և կամ օրինակէ սրբութեամբ և մաքրութեամբ խնամ տարցէ սմայ ի հիւթոյ և ի ջրոյ, պատրաստ պահելով ի կարդալն և ի թրխտատելն և Աստուած ամենայնի մաքրեսցէ զինքն ի մեղաց իւրոց. ամէն։

1064
ԱԻԵՏԱՐԱՆ
Արցախ, էջ 138

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Կ. Պոլիս

ա

Աստուածաւանդ սբ. Աւետարանս գրեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ձեռամբ [յ]ողնամեղ և անարհեստ Ղազար գրչի. ի թուականիս մերոյ ՌՃԸ (1656), աւգ[աւ]ստոս ամսոյ Է (7)։

Ստացող՝ Ղուկաս

բ

Ես՝ անարժան Ղուկաս ստացայ զսբ. Աւետարանս ի դուռն Ս. Ամենափրկչին։

1065
ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՏՕՆԱՑՈՅՑ
ՈՅՁՄՎ, հա. Բ, էջ 162, № 670

Գրիչ՝ Յակոբ քահանայ
Վայր՝ Կոզլով

ա

116բ Գրեցաւ Մակեդոնացի յԱղէքսանդրու պատմութիւնն ՌՃԸ (1656)[7], յաւգոստոս ամսոյ Ը (8), ձ[եռա]մբ մեղաւոր և յանպիտ[ան] Յակոբ քահանայիս, ի քա[ղաք]ն Կաւզլով. և ընդ հ[ովան]եաւ Ս. Աստուածածնին, ի վայելո[ւմն] Մկրտիչ սարկաւագին։ // Կամ կարդայք կամ յաւրինակելով զմեղաւոր տէր Յակոբս յիշէք...։
117ա

բ

118ա /// ... [է] սահմանած անփոփելի[8],
Մինչ ի գալուստն Քրիստոսի,
Որք ընթեռնուք սիրով սրտի,
Ցիշման արէք զմեղ արժանի։

---

[7] Ցուցակում նշված է «ՌՃԷ» (1658). սակայն հստակ երևում է ՌՃՆ։
[8] Ցուցակում տպված է «անփոխելի»։

Յակոբ քահանայս մեղաւք ի լի,
Եմ գլխիկոր ի ձեր միջի,
Որ յիշել[9] ոչ եմ արժանի։

1066
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 182 (1304 թ.)

755ա Վերստին նորոգեցաւ Աստուածաշունչ գիրքս ի թուականութեանս ՌՃԵ (1656), ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան հայրապետի, ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասի երկրորդի, յամսեանն օգոստոսի Ի (20)։ Որ եղև օժանդակ և օգնական Յակոբ մահդասին, որ բազում աշխատութեամբ ծառայեաց սբ. աթոռոյս դռնաբանութեամբ և այլ գործակալութեամբ, յիշեցէք առ Քրիստոս յոյսն բնաւից, ծնօղիւք հանդերձ և Աստուած ողորմի ասացէք...։

Ի սոյն ժամանակի կային առ դրան[10] սբ. աթոռոյս բազում վարդապետք և եպիսկոպոսունք, քահանայք և պաշտաւնեայք ՃԼ (130) և այլ գործակալք և վարձկանք ԳՃ (300), որ հանապազորդ կերակրէին առ դրան սբ. աթոռոյս. միթէ ինքն տէրն մեր Յիսուս Քրիստոս հաստատուն և անվրդով պահեսցէ զսբ. աթոռս և երկար ամօք զսբ. հայրապետս մեր ամենայն երևելի և յաներևոյթ թշնամեաց. ամէն։

1067
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8349

Գրիչ՝ Մարգարէ Յերևանցի

ա

28բ Փառք...։ Արդ՝ կամաւն Յիսուսի Քրիստոսի ես՝ անարժան և յետնեալ ծառայ Մարգարէ դպրիս Յերևանցի աւարտեցի զսբ. գիրքս[11]։ Հարցն սրրոց խարազնազգեաց ճգնաւորաց ասացեալ բանս...։ Ի խնդրուածոյն
29ա Շուտութեցի անարժան Առաքելին, որ բազում փափագ//անօք գրեցի անջնջելի յիշատակ իւրն և ուր ծնողացն և ազգայնօքն ամենայնի։ Էր ինքն ի քաղաքիս Տարայբլուս եսիրութենում. գլուխընիս բաց և տկլոր և ոտըրանիս բոբիկ, խիստ դառն և տխուր, որ հայցեմք անմահ թագաւորէն, որ ոչինչ քրիստոն[ե]այ ոչ տեսանէ. և այլ հայցեմք անմահ Քրիստոսէն և բարեխաւս Աստուածածնէն... որ բարեխօս լինին անմահ թագաւորին, որ մեզ ազատէ այս այլազգէս, այլ տէր Աստուած ի սաֆտայ Յաւաման փաշին որ մեզ ազատէ։ Եւ թագաւորութիւն էր սուլթան Մեհամատին, և ի
29բ հայրապետութեան Հայոց տեառն [Յակոբ] սրբազան կաթողիկոսի. // և ի թվականութեանս Հայոց ՌՃԵ (1656) կրեցաւ սբ. խաչին պասին[12], որ ամենայն քրիստոնէից աւգնական լինի սբ. ամէն։

---

9 Ձեռագրում «չիշել» ձևով։

10 Ձեռագրում՝ «գրան»։

11 Երկրորդ գրչի հիշատակարանը տե՛ս 1657 թվի շարքում։

12 1656 թ. Ս. խաչի պասը կհամապատասխանի միևնույն տարեթվի սեպտեմբերի 8-ից՝ երկուշաբթի, մինչև 13-ը՝ շաբաթ։

Բ

Դարձեալ աղաչեմ ես՝ պանդուխտս և անմխիթար գծող սորա, աղաչեմ և խնդրեմ, ով ոք ընթեռնուք և կամ կարդաք կամ օրինակէք, յիշեսջիք ի սբ. յաղաւթս զստացող սբ. գրոյս և Յերևանցի պարոն Յուլուխանն, որ զօրինակն ետուր։

1068

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 1624 (1488 թ.)

Նորոգող՝ Դաւիթ երէց

Վայր՝ Կարին

416ա Վերըստին նորոգեցաւ Շարակնոցս ձեռամբ մեղապարտ և անարժան Դաւիթ իրիցի, ի քաղաքիս Կարնոյ, ի դուռն Ս. Ստեփաննոսի Նախավկային, թուին ՌՃԵ (1656) սեպտեմբերի ԺԲ (12)։

1069

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 3771 (1353 թ.)

Նորոգող՝ Նիկոլ Տամաժիրսֆենց

143բ Եւ զիս՝ զանարժան զՆիկոլ Տամաժիրսֆենց, որ զայս թվականիս նորո[գե]ցի. յիշեցէ[ք] ի մաքրափայլ յաղօթս ձեր և զԱննա կողակիցն իմ և զամենայն զարմինս իմ. ամէն։

Նորոգեցաւ թվին ՌՃԵ (1656), սեպտեմբերի ԺԶ (16), երեքշաբթի[13]։

1070

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՀՎՍ, I, № 7, էջ 84—86

Գրիչ՝ Յովաննէս Լեճցի

ա

442ա Փառք..., որ ետ զաւրութիւն տառապելոյս Լէճցի Յովաննէս դպրիս, իմով մեղսաներկ ձեռամբ գծագրեցի զԱստուածաշունչ գիրքս։ Ով ոք հանդիպիք յայսմ աստուածախաւս տառիս, զիս՝ զանարժանս և զծնաւղսն իմ, յիշեսջիք Հայր մեղայիս...։

Բ

482բ Փառք...։ Արդ՝ ցանկացող եղեալ այսմ հոգէնուագ մատենիս, որ անուամբն իսկ Աստուածաշունչ [յ]որջորջեալ է ի հարցն սրբոց, զի զամենայն ինչ ունի ի ներս տրամադրեալ է ի ծոց իւր, ի սկզբանն ստեղծմանէ արարածոց մինչև զմիւսանգամ գալուստ Տեառն։ Վասն որոյ եռափափաք

[13] Ձեռագրում «ՌՃԵ»-ի մեջ «Ճ» տառը գրված է այնպես, որ կարելի է կարդալ նաև «Զ», այսինքն «ՌԶԵ». այս դեպքում կստանանք 1636 թ., սրանցից ո՞րն է հիշտ, 1656-ը, թե՞ 1636-ը։ Այստեղ մեզ օգնում է օրվա պատկերը, հին տոմարով 1656 թ. սեպտեմբերի 16-ը կլինի երեքշաբթի, իսկ 1636 թ. նույն ամսաթիվը՝ ուրբաթ։

սիրով տենչացեալ այրս այս բարեպաշտ և աստուածասէր Պէլբրղատցի Աբրահամ չէլէպի, որ ունէր նախկնաբար ի սրտի իւրում զչերմեռանդ տարփումն ուսումնասիրութեան առ աստուածային գիրս և փիլիսոփայական արհեստից հմուտ, մինչ զի յաւուրս յայս ոչ ոք գտաւ համեմատ սմա գրամարտիկս ի մէջ հայասեռ աղանցս և ունէր լիով զուսումն ամենայն աստուածաշունչ տառից զհնոց և զնորոց, ներտրամադրեալ յիւրումն սրտի սենեկին և արագ ի պատասխանիս ամենայնի, որ խնդրէ զբանն։ Բայց և զսա ևս ըստացաւ ի յարդար վաստակոց իւրոց։ Ով ոք
483ա հանդիպիք սմա կարդալով, // աւրինակելով՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհայրն իմ՝ զմահտեսի խոճայ Մուրատխանն և զմայրն իմ՝ Եայրիտանն, և առ Աստուած հանգուցեալ մանուկ տիօք զեղբայրն իմ՝ զՊետրոսն և զվայելչագեղ նորափթիթ հարազատ զորդիքն իմ՝ զՍարգիս չէլէպին և զՄաթուսալան և զամենայն արեան մերձաւորսն. և որք յիշէք՝ յիշեալ լիջիք...։

Արդ՝ ըստացաւ զսա ի թուաբերութեանս,
Հայոց · յամի քսաներորդի,
Եվ կրկին յաբելինի,
Նաև հինգերորդ յաւելորդի (1656)[14],
Ցամսեանն սեպտեմբերի,
Լրման աւուրցն նոյնակի
Եվ ի մուտն հոկտեմբերի,
Վերջին աւուրցն սեպտեմբերի,
Երեքշաբաթ վերաբերի,
Եվ մուտ աւուրցն հոկտեմբերի,
Չորեքշաբաթ և նա լինի։
Բռնակալութեան հազար ազգի,
Սուլթան Մէհեմէտ պատանեկի,
Հայրապետութեան արամեան ազգի,
Տեառն Յակոբ նոր կաթողիկոսի։
Նաև սբ. յաթոռին Քրիստոսի,
Եւ Տեառնեղբօրն յաջորդի,
Մեր Աստուածատուր վարդապետի,
Եւ սրբասնեալ հայրապետի։
Ստացող սորա յոյժ հոգելի,
Իմաստասէր Աբրահամի,
Ի վայելս մանկանն իւր գովելի,
Սարգիս անուն չքնաղատպի։
Զոր տէր Աստուածն ամենայնի
Անփորձ պահէ զսոսա յերկրի...։
Ռճե (1656)։

[14] Այս թվականի առթիվ Ցուցակի հեղինակը տալիս է հետևյալ ծանոթությունը. «Այս թուականս չի համապատասխաներ վերինին. ուստի «քսաներորդը պետք է կարդալ հազարերորդ, որով կըլլայ ՌՃԵ—1656» (էջ 86)։ Որովհետև 22=(20×2) հոբելյանը կլինի. 1100=(22×50), սրան ավելացրած 5 և 551, կստանանք ՌՃԵ և ՌՃԵ 1656։ Եվ իսկապես, 1656 թ. սեպտեմբերի 30-ը երեքշաբթի է, իսկ հոկտեմբերի 1-ը՝ չորեքշաբթի։

1071
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8642

Գրիչ՝ Սարգիս Ջուղայեցի
Վայր՝ Տրայպլուս

142ա Ողջոյն և ծանուցում պայծառ ընթերցողաց[15], հարց և եղբարց իմոց, և թէ յանդիպէք սբ. երգարանիս աստուածայհաւրն Դաւթեան, կարդալով և թէ օրինակելով, յիշէք անպիտան և զբաղմամեղս Ջուղայեցի Սարգիսս, և հայրն իմ՝ Սահակն և զծնօղն՝ Երուզսին, և զընեղբայրքն իմ՝ մեծըն՝ Գրիգորն, վարպետն իմ և զՓիրսալն, և զքուրն իմ՝ Եղիսաբերթն: Զոր և եդ Հոգին Սուրբն ի յոչընչիս կարողութիւն մուրալով ի թխթիս և ի մէջ բանդիս, տկար մարմնով և տառապեալ հոգով, բեկեալ սրտով և դառն արտասուօք դրեցայ ի[16] երկրիս Մաղրուքայ և ի կղզիս Տրայպլուսոյ[17], թիւն Հայոց ՌՃԶ (1656) դամայ ամսոյն ԺԷ (17)[18], պատկեր օրն՝ շաբաթ, աւարտուեցաւ. Հայր մեր։

1072
ՏՕՆԱՑՈՑՑ
ՑՁՂԲ, № 244

Գրիչ՝ Միքայէլ երէց
Վայր՝ Մարգուան

1177 Փառք...։ Շնորհիւ և ողորմութեամբ, կարողութեամբ և առաջնորդութեամբ ամէնազաւրին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ Ցուցակս, որ կոչի Տաւնացոյց և Աւետարանացոյց, լաւ և ընտիր օրինակէ, ձեռամբ Միքայէլ երիցու, ի քաղաքն Մարգուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի
1178 տաճարիս։ Գրեցաւ թվին Հայոց ՌՃԶ (1656), նոյեմբեր ամսոյ // ԻԳ (23), աւարտեցաւ ի խնդրոյ որդեակին իմոյ նորաբողբոջ մանկանն Թորոսին և միւսոյն՝ Սարգսին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ և երկայնակեացս արասցէ մինչև ի խորին ծերութիւնն հասուցանէ. ամէն։ Ո՛վ հանդիպողք մանկունք Սիոնի յայսմ Տաւնացոյցիս՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զվերոյ գրեալ Միքայէլ երէցս և զհայրն իմ՝ զԱռա-

[15] Մինչև այստեղ գրված է կարմիր մելանով։

[16] Ձեռագրում «ի»։

[17] Ձեռագրում հապավված «տրյպլուս» ձևով։

[18] Քանի որ Ազարիա Ջուղայեցու տոմարի ութերորդ՝ դամա ամիսը տվյալ դեպքում ընկնում է 1656 թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 15-ի շրջանում, նշանակում է հայոց ՌՃԶ տարեթվի դամա ամսի 17-ը կհամապատասխանի 1656 թ. նոյեմբերի 2-ին։ Շարժական տոմարով Հայոց ՌՃԶ, ՌՃԷ, ՌՃԸ և ՌՃԹ տարեթվերը համապատասխանաբար սկսվում են 1656, 1657, 1658 և 1659 թվականների հոկտեմբերի 8-ին։ Հայոց շարժական տոմարի սկզբունքից ելնելով, այս չորս տարիների հիշատակարաններում նշված ձեռագրի ընդօրինակությունը և այլ դեպքեր, եթե կատարվել են հոկտեմբերի 8-ից հետո մինչև դեկտեմբերի 31-ը (հին տոմարով), տարեթիվը պետք է նշել ոչ թե հաջորդ տարին՝ ասենք 1657, 1658, 1659 և 1660, այլ՝ 1656, 1657, 1658 և 1659։

Հիշատակարանում նշված ամսաթիվը և օրվա պատկերը մեկ օրով խանգարված է, այսպես, 1656 թ. նոյեմբերի 2-ը կլինի կիրակի, իսկ 1657 թ. միևնույն ամսաթիվը՝ երկուշաբթի։ Այդ պատճառով էլ սույն հիշատակարանը դրեցինք 1656 թ. շարքում։

ելն և զմայրն իմ՝ զնագլուն, և զամենայն արեան մերձաւորքն իմ, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք լի սրտիւ, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

1073
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 133

Գրիչ՝ Մուրատ

Արդ՝ գրեցաւ ձեռամբն մեղապարտ Մուրատի, *թվին ՌՃԵ (1656)-ին։ Եւ որք յիշէք՝ յիշեալ լինիջիք առաջի Քրիստոսի։*

1074
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 248

Վայր՝ Ասպահան

ա

113ա *[Յ]իշատակ է սբ. Աւետարանս Ջուղայեցի մահդասի* Սարգսին *և ծնօղացն, հօրն՝* Միրումին *և մօրն՝* Նաշիաարգուլուն, *և եղբարցն՝* Աստուածատուրին, Խաչատուրին, Ղուկասին. *և քուէրն՝* Թանկիկին *և ամենայն արեանառու ազգականացն՝ կենդանեաց և հանգուցելոց, որք պատահիք սմա միոյ ողորմայի արժանի արարէք...։*

բ

315բ *[Փ]առք...։ Արդ՝ ընդ նոյն ապացուցի աստուածայնոց իրաց հե-*
316ա *տևեալ մեծահաւ//ատ և քրիստոսասէր Ջուղայեցի մուղտասի* Սարգիս, *որ ստացաւ զսբ. Աւետարանս ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց ի[ւր]ոց, հօրն՝* Միրումին...:

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Շօշ արքայանիստ, որ այժմ ասի Առպահան, *ի թագաւորութեան շահ* Ապասին, *ի հայրապետութեան տեառն* Յակոբայ, *ի թուականութեանն մերում ՌՃԵ (1656)*
316բ *ամի, ձեռամբ ամենավրէպ և մեղ//ապարտ փծուն գրչի*[19]։ *Անմեղադիր լերուք սղալանաց և պակասութեան, զի կար մեր այս է։ Ով մանկունք սբ. Սիոնի, խնդրեմ կողկողագին պաղատանօք, զի խնամ պահէք և մի հատանէք զյիշատակարանս, զի բազում բացատ տեղիս թողեալ եմք, զձերն անդ գրեսջիք։*

Ստացող՝ Սարգիս Ջուղայեցի

գ

168ա *[Ե]ս անարժանս՝* Սարգիս *միայնակեաց ստացայ զսբ. Աւետարանս ի յարդար ընչից իմոց, ի վայելումն անձին իմոյ և յիշատակ յետ ելից կենաց իմոց...։*

---

[19] Գրչի անունը չի գրված և տեղը դատարկ է։

1075
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 362

Գրիչ՝ Աւետիս

42ա Փառք...։

42բ Յիշեցէք ի Քրիստոս զանարգ և զանարժան Աւետիս գրիչս և զհայրն իմ։

Որ մեղաւոր եմ յիրաւի,
Եւ ես չունեմ գործ մի բարի,
Քանզի ծնեալ եմ յաշխարհի,
Մեղք եմ գործեր անթողնելի։
Զկարգս առի յուխտի ոչ կացի,
Եւ զհայրենի ցանկն պատառեցի,
Զի կատարի բան մարգարէի,
Որ վկայէ մեկնիչն Եսայի։
Թէ «Ով քակէ զցանկ հայրենի,
Զնա խածանէ օձն անապատի»
Եւ ուխտ եդեալ եմ ես ի մտի,
Երուսաղէմայ վերին քաղաքի,
Սբ. գերեզմանն որ լոյսն ցաթի,
Տրտմեալ հոգիքն անդ լուսաւորի։
Առ ոտս անկեալ ձեզ ամենայնի,
Քահանայի և աշխարհականի,
Որք հանդիպիք այս ախմար գրչի,
Միաբան ասէք թէ Աստուած ողորմի՝
Գրողի և ստացողի,
Այն որ առատն է յամենայնի,
Մեզ և ձեզ Աստուած ողորմեսցի. ամէն։

Առ ոտս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դաս քահանայից, յորժամ ընթեռնոյք զսր. Աւետարանս, յիշեցէք ի Քրիստոս զանարժան Աւետիս գրիչս և զհայրն իմ՝ Հասան, և մայրն իմ՝ Սառիկն, և որդին իմ՝ Մարտիրոսն, որ փոխեալ են առ Տէր, և զկողակիցն իմ՝ Թանկումն, որդիքն իմ՝ Մարգարէն, Ովանէս[ն], Մկրտիչն, դստերքն իմ՝ Մարիամն, Սառէն, Նազլուն, Հոռոմսիմէն։ Աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք սխալանաց սորայ, զի կար մեր այս էր։

Ի թվին ՌՃԵ (1656)։

1076
ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻՈՑ
Երևան, № 456 (ԺԷ դ.)

1ա Այս գիրգէս կուչիյ բէժէժկարայն, որ էյ ամէնան ցաւորաց բժէկէյ, որ իմանայս որպոէս որ խորայգէտ և իմաստուն պիտիյ ամէնան բան իմանայ, այսպէս այս դիրէս գէրեցաւ, գիր տարուն ՌՃԵ (1656), որ Չիմիշիկ քաղաքցիյ հացայգործ յուստա Թաթոսէս առնայլ էյ որդոյց տի-

բացուն Աբգարին *և* Խազայրին, *թոռանց* Թարոսին: *Ով այս գիրքս կարդայ՝ մէկիկ Հարհ մեղայ այսէյ. ամէն։*

1077
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Երևան, № 809 (1629 թ.)

Հետ. ստացող տէր Ղուկաս
Վայր՝ Սուրբ Թորոս

67ա *Ի թվականիս Հայոց Ռ ու ՃԵ (1656)-ին ես՝* տէր Ղուկաս[20] *առի զայս Հարցմանցս ինձ յիշատակ, և իմ կողայկցին՝ <իմոյ>* Մարգարտին, *և իմ որդոյն՝ տէր* Լուսին, *և կողակցին իւրոյ՝* Զարդարին, *և որդին իւրոյ՝* Յովայսափին, *և ամենայն արեան մերձաւորացս։ Ով ոք չունի իշխանութիւն սայ ծախելոյ կամ գրաւելոյ կամ հանելոյ ի գեղէս* Սուրբ Թորոսու[21]. *ինամքով պահողք աւրհնին Աստուծոյ։*

1078
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 953

Գրիչ՝ Աղամալ

ա

114ա *Քրիստոս Աստուած մեր որ գաս հայրենի փառօք ի դատել զազգս որդւոց մարդկան, ողորմեա ամենայն հաւատացեալ քրիստոնէից, ևս առաւել ստացողի գրոցս աստուածասէր կնոջն՝* Գուլխաթունին, *և իւր ծնողացն և որդւոյն՝* Երեմիային *և այլ ամենայն առաւարեան մերձաւորացն ողորմեսցի. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօճասարն և զծնողսն իւր, զհայրն՝* Յովհաննէսն *և զմայրն՝* Մուլքիջանն, *և զեղբարսըն իւր՝* զՄիասարն *և* զԲաղտասարն: *Ներումն և թողութիւն արասցէ ամենայն սխալանաց նոցա Քրիստոս Աստուած. ամէն։ Ընդ նոսին և զմեղապարտ գծող* Աղամալ *յիշել աղաչեմ։*

բ

115ա *Յիշատակ է Մաշդոցս ի դուռն Ոհանավանից Ս. Կարապետին. թվական ՌՂ և է (1648) ամին։*

Ծաղկող՝ Հայրապետ

գ

259ա *Եւ ես՝ ծաղկօղս անարժան,*
Որ Հայրապետ *կոչիմ անուան։*

---

[20] *Սույն ձեռագրի Ա պահպանակի երկրորդ երեսում անվարժ ձեռագրով գրված է. «թվին Ռ*Ճ*Թ (1670) վաղճանաւ տէր Ղուկասն մեծի հրայշա[փա]ռ ծնընդեան գիշերին։ Ի սորայ ամին եղիսէն աղայ եղաւ։ Այս փասաը վերաբերում է ձեռագրի ստացողին։ Այդ ճշգրում է նաև մի այլ վկայությամբ. «Այսմ ամի մեռաւ երիցկին տէր Լուսիկին [Ռ]Ճ*Է (1668)» (նույն տեղում)։ Խոսքը վերաբերում է վերևում հիշված տեր Լուսիկին, որը տեր Ղուկասի որդին էր։*

[21] *Խոսքը հավանաբար վերաբերում է Բաբերդ գավառի Սուրբ Թորոս գյուղին։*

Դ

492բ Զծաղկօղ սբ. տառիս զՀայրապետն յիշել աղաչեմ ի Տէր, ո՛վ սբ. ընթերցողք, և զծնօղսն իւր, և զաշակերտն իւր՝ զԱստուածատուրն. յիշողն՝ յիշեալ [լիցի]։

Հիշատ. հեղինակ՝ Զաքարիա վարդապետ
Վայր՝ Յովանավանք

Ե

495ա [Շ]նորհօք և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ՝ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց զօրինակս և զճանապարհ փրկութեան, ըստ այլ և այլ բաբոյից հասակաց և արուեստից մարդկան...։ Յայս ամէնառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ, ես՝ ամենամեղս և վերջինս, ի ծնունդս եկեղեցւոյ Զաքարիա լոկ անուամբ, ևթ հանդիպեալ ի կարգս սպասաւորաց բանի ըստ վարժապետականին ձևոյ։ Քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցն շաւղաց կասեցեալ զարտուղի գնացիւք, մանաւանդ և յաղթեալ իսկ ի ծանրութենէ հողեղէն յարկիս։ Վասն որոյ բազում ամաւք և յոլովագոյն ժամանակաւք ցանկութիւն ի մտի կալեալ կարի փափագմամբ ստանալ զդիրս արարողութեան ըստ եաւթեանց խորհրդոց սբ. եկեղեցւոյ, արարեալ և եդեալ ի մէջ համօրէն հայասեռ ազգի սբ. վարդապետին Մաշտոցի Սեանցւոյ, որ էր եղծեալ խառնակու-
495բ թեամբ այլ և այլ կեր//պից արարողութեանց, և բազումս ի նոցանէ կորուսեալ և անհետ արարեալ ի թուլութենէ և յանհոգութենէ բազմաց։ Իսկ իմ յոլովագոյն աշխատութեամբ ի խնդիր ելեալ խնամօք և ոգորմութեամբ ամենազաւրին գտեալ զրովանդակն, և ի մի վայր դումարեալ, որպէս և տեսանի իսկ ի սիրելութենէ ձերմէ, ծախիւք և վարձատուութեամբ բարեպաշտ և մեծահաւատ, երկիւղած և աստուածասէր պարոն Խաւնայսարն, զի յորդորեցաք զնա և տուաք գրել ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, և եղաք յիշատակ անջինջ և մխիթար հոգոյ զաւակ և ընտանի ի սբն. Սիաւն, ըստ երանական բարբառոյ մարգարէին, ի դուռն և ի ծոց գերահռչակ և մեծավայելուչ Ամատունեաց Ս. Կարապետիս Յոճանավանից, որ է ի յոտն Արագածու Ս. Աստուածածնիս և Ս. Կաթուղիկէիս, վասն իւր և իւրոցն համաւրէն ազգայնոց և ամենայն ընտանեաց։ Վասն որոյ մի՛ ոք իշխեսցէ ի դրանէ սորա արտաքս հանել և կամ հեռացուցանել զսա ի նմանէ։ Իսկ թէ հանդիպեսցի հեռանալ արկածիւք ինչ կրից, խընդրեմք վասն սիրոյն Քրիստոսի վերստին առ նա դարձուցանել, և զյիշատակարանս մի՛ ջնջել և կամ կտրեալ ի բաց հատանել, որպէս սովոր են չարք ոմանք, զի զիւրեանցն գրեսցեն, այլ ընդ սմին և զձերն գրեսջիք։ Իսկ թէ ոք յանդգնեսցի կտրել՝ ջնջեսցի և հատցի՝ ինքն ի դպրութենէն կենաց։

Բայց գիտասցէ սիրելութիւնդ ձեր, զի որպէս գրեցաքն ի վերոյ, վասն
496ա բազում պատճառաց ելաք մեք ի խնդիր վասն ժողովման սբ. գրոցս, մանաւանդ սակս երկուց հարկաւոր պատճառաց. քանզի սո//վորութիւն է ի մէջ կարդացողաց ազգիս մերոյ, զի այնոքիկ որ աշակերտք են գրոց և անուանի վարդապետք, անհոգացեալ և անվարժ գոլով իբր զհեշտ ինչ

համարեալ զարարողութեան կարգ սորա, ոչ երբէք հոգան, բայց ի ժամու կատարման գործոյն անհմուտս երևին։ Իսկ տգէտքն և անուսմունքն ի գեղջկաց և յաշխարհի քահանայից ոչ երբէք գիտելով բնաւ զկարգ սորին արարողութեանց որպէս գիտէին, այնպէս աներկիւղածութեամբ վարէին։ Վասն որոյ հաւաքեալ մեր ի միասին զբովանդակ շարժմունս կարգաց ըստ իւրաքանչիւր յաճախութեան գնացից, եդաք ի ծոց մաւրս լուսոյ վերոյ գրեալ սբ. աթոռոյս, զի սովաւ ի ձեռն առեալ անվթար և թարց խառնակման զկարգաւորութիւն օրինաց յառաջեցուցեալ բարեպէս վարեսցեն բարւոյն կամեցողք։ Ցաղագս որոյ խնդրեմք մեծաւ պաղատանօք ի վայելողացդ և ի գաղափար առողացդ և կամ հարևանցի իմն տեսողաց, զի սակաւ աշխատօղս և զվերոյ դրեալ ստացօղ սորա յիշեսջիք միշտ բարեսէր մտօք ի մաքրափայլ աղօթս ձեր, զԱստուած ողորմին ասելով և զթողութիւն ի մեղաց խնդրելով։ Եւ որք յիշէք՝ յիշեալ լիջիք յառատ գթութեանցն Աստուծոյ։ Սկսեալ եղև սա ի ժամանակս թագաւորութեանն Պարսից շահ Ապասի երկրորդի և ի հայրապետութեան սբրբազան կաթողիկոսի Հայոց դիտապետի տեառն Փիլիպպոսի Աղբակեցւոյ, որ էր փոխանորդ և աշակերտ տեառն Մովսիսի Տաթևացւոյ կրկին լուսաւորչի հայկազեանս տոհմի և իմոյս վարժապետի և հոգևոր երկամբ
497բ դաստիարակողի։ Բայց կա//տարեցաւ յամի հազարերորդի հարիւրորդի հնգիւ թուոց յաւելուածի (1656), ի ժամանակս տեառն Յակոբայ նոցունց փոխանորդի Ջուղայեցւոյ։ Որ և մեք առաջնորդութեամբ և խնամօք ամենազօրին չոգաք ի Շօշ քաղաք, որ այժմ ասի Ըսպահան. և անդ մեծաւ աշխատութեամբ և բազում երկունս կրելով, ի տեղաց տեղեաց դումարեալ զբազում օրինակսն հաւաքեցաք ի մի տասն ամաւ հազիւ թէ կատարումն առնելով սակս գաղափարացն առ ձեռն պատրաստ ոչ գտանելոյն։ Եւ անտի դարձեալ եկաք մեք յաթոռ մեր և ի վանս մակագրեալ Սրբոյն Յովհաննու, որ էր հանգստարան մեր և տեղիք բնակութեան։ Բայց ի վազ ժամանակաց էր խախտեալ և հնացեալ բովանդակ շինուածքն սբ. եկեղեցեայցն, և ոմանց ի նոցանէ փայտիւ զտանիսն ծածկեալ։ Որ և օգնականութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաք մեծապայծառ ճոխութեամբ զբովանդակ հնութիւն սրբոց եկեղեցեացն գեղեցկապէս յօրինմամբ։ Նաև տունս գեղեցկաշէնս և սենեակս ըստ բաւականի հաստատեցաք ի ներքուստ կողմանէ շուրջ զպարսպաւն և զայգիս և զմուլքըս և զանդաստանս և զբովանդակ ջուլիրս կենդանեաց, ի թագաւորական հարկաց ի դուրս հանեալ ազատեցուցաք նօմոսաւ և կնքով հաստատեալ։

Դարձեալ մեծաւ ըղձիւ հայցեմք ի սիրելեացդ, զի բարեսէր կամօք յիշեսջիք յազօթս ձեր զաշակերտեալ որդեակս և զմանկունս զՅոհանէս վարդապետն, որ է յաջորդ իմ և փոխանորդ ի սբ. աթոռս ի կենդանու-
497բ թեան իմում և յետ մահուան, և զԲարսեղ, եպիսկ[ոպ]ոսն մեծա//հռչակ սբ. աթոռոյն Հաղբատայ, յազատ տանէ, և զնաչատուր վարդապետն առ Տէր հանգուցեալն, և զփոքրիկ տէր Մովսէսն սպասաւոր ծերունոյս, և զայլ համօրէն դասս աբեղայից և սարկաւագաց և զմիաբանելոց բազմութիւնս, որ աստ հաւաքեալ կան ի ծոց սբ. աթոռոյս։

Գրիչ՝ Յոհան Տաքեացի

Գ

Նաև զամենատարտամս կպկնակի մարդով, զծոյլս ի բարին և ա-
բագս առ չարն զՅոհան տառապեալ, սուտանուն քահանայ. տեղեաւ
Տաքեացի, յիշեսջիք ի սրբանուէր յաղօթս ձեր բարեսէր մտօք և զամե-
նայն վերոյ ասացեալքս ի սմա. և թողութիւն խնդրեցէք մեղաց մերոց
և Աստուած ողորմի ասացէք և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի
միւսանգամ գալստեանն. ամէն։

Է

476բ Քրիստոս Աստուած արժանի արասցես և աջակողմեան դասուն ընդ
առաքելոցն և ընդ մաքուր վարդապետացն դասեսցես զշնորհալի և զեր-
շանիկ վարդապետն Զարարիայ, որ ի յոտն Արագածու լերինն, զծնօղսն
իւր և զեղբարսն և ամենայն արեան մերձաւորսն...։ Ո՛վ պատուական և
սրբազան սբ. հայրապետ, յորժամ զսրբալոյս մեռոնն աւրհնես, զստա-
ցող սբ. տառիս զհամեստ և ամօթխած կինն Գուլիաթուն և զծնօղսն
իւր և զորդիքն և զազգահտոհմսն յիշես յերկնաթռիչ յաղօթս քո. ամէն։

1079
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1449

Գրիչ՝ Յովսէփ

336ա Գրեցաւ Պատմութիւնս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ թվին ՌՃԵ
(1656), ձեռամբ նուաստ Յովսէփի։

1080
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 1539

Գրիչ՝ Միքայէլ երէց
Վայր՝ Մարգուան

382ա [Փ]առք...։ [Շ]նորհիւ և ողորմութեամբ, կարողութեամբ և առաջ-
նորդութեամբ ամենազաւրին Աստուծոյ, յանգ ելեալ աւարտեցաւ աս-
տուածաշունչ և հոգիաբուղխ երգս, ասացեալ է հոգելից և լուսատուն
Հայոց հայրապետին մերոյ սրբոյն Ներսեսի Կլայեցոյ, սա որ կոչի Յիսուս
Որդի, լաւ և ընտիր աւրինակէ, ճոխ և յաճախ ըստ կարգի գրեալ կան։
382բ Վասն որոյ և ես՝ անպիտան ծառայս Միքայէլ երէցս յաւժա//րեցայ և
գրեցի ի խնդրոյ որդեակին իմոյ՝ նորահաս մանկանն Թորոսի, այլ և ըն-
թերցասէր մանկանց Սիովնի։ Ո՛վ հանդիպողք այս սբ. տառիս՝ և ընթեր-
ցողք այս սբ. կտակիս, հայրք և եղբայրք և որդիք, յիշեցէք զիս՝ զմեղաւք
զառածեալս զվերոյ գրեալ Միքայէլ երէցս հանդերձ ծընաւղիւք, զհայրն
իմ՝ զԱռաքելն և զմայրն իմ՝ զնազլուն, և քւերքն իմ՝ զԽասխաթունն, և
զՏիրուհին, և զՍուլթանն, և զՄարիամն, և միւս Մարիամն, և զաւակաց
իմոց, ուստերաց և դստերաց, որ հանգուցեալ են առ Քրիստոս, Առա-

383ա f//ելն, Գէորգն, և դստերքն իմ՝ զՆազլուն, Հեղինէն և միուս Հեղինէն, Մարիամն, Կատարինէն, որ և փոխեալ են աստի կենացս և ժամանեալ են յերկիրն կենդանեաց, և որք կան աշխարհի և են ի մարմնի Թորոսն, և Սարգիսն, և Աննայն, յիշեցէք լի սրտիս...։

Գրեցաւ թվին Հայոց ՌՃԵ (1656), ի քաղաքն Մարգուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ի հայրապետութեանն տէր Յակո-

383բ բին և թագաւորութեանն սուլ//տան Մէհէմմատ խանին։

Քրիստոս Աստուած մեր, որ առատն է ի տուրս բարեաց գծողի սորա և երգեցողի՝ առ հասարակ ողորմեսցի...։

1081

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 1628 (1655 թ.)

Նվիրատու՝ Գրիգոր կրօնաւոր

73բ Արդ՝ ես վերջինս, ի ծնունդս եկեղեցւոյ Գրիգոր լոկ անուն կրօնաւորս ստացա զերգս երաժշտականաց տառս, որ է շարունակ երգոց երգարան շարականաց, որ է անշինջ յիշատակ հոգւոյ իմոյ և ետու զսա յիշատակ հոգևոր եղբօրն իմոյ՝ Մելքիսեգ սարկաւագին. զի և կենդանութեան մերում ի միասին վայելեսցուք, և յետ մահուան իմոյ մի՛ ոք դիմադարձ կամ հակառակ լիցի առնուլ ի ձեռաց սորա։ Եւ եթէ ոք յանդգնեսցի առնուլ ի սմանէ՝ մասն և բաժին ընդ Յուդային առցէ և ընդ խաչահանունսն դասեսցէ։ Ընդ այսմ և վկայ լինի Սէվանեցի Մխիթար պարոնտէրն, որ ետու զսա հոգևոր եղբօրն իմոյ՝ Մելքիսեդ սարկաւագին, ՌՃ և ԵՋ (1656—1657) թվին[21]։

1082

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2399

Գրիչ՝ Յովաննէս

Վայր՝ Ասպահան

322բ Փառք...։ // Արդ՝ յանդ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և ձեռամբ Գասպար իրիցու, ի թվական հայկազեան տոմարիս ՌՃԵ (1656), ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի, և մերոյ աթոռակալիս Ջոսլայու սբ. վանացս Գալիթ սրբակրօն արհեպիսկոպոսի, ի թա-

323ա գաւորութեան մերոյ փոքր շա//հ Ապազին։ Արդ՝ աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցոյ, յիշեցէք ի Քրիստոս Խօջայմալն, և կողակից Սաղիկն, և որդին՝ Վալաթն, և դստերքն՝ Եզոփխանն և Մարիամն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Սուլթանումն, և կողակիցն իւր՝ Մարիամն, և որդիքն իւր՝ զպարոն Սաֆարն և Վալաթն. ամէն...։

---

[21] Ձեռագրում այդպես. կարող էր լինել նաև Ե+Ջ—ԺԱ, այսինքն ՌՃԺԱ (1662)։ Նշեցինք այնպես, ինչպես ձեռագրում է։ Այդպես է նշված նաև Մատենադարանի ձեռագրաց ցուցակում (հտ. Ա, էջ 595)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Սաֆարն, և կողակիցն իւր՝ Աննային, և որդին իւր՝ Խոջայմալն, և միւս կողակիցն՝ Ազատն, և դուստրն իւր՝ զՄամն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Վալաթն, և կողակիցն իւր՝
323բ Աննային, և զդուստրն իւր՝ Ծաղի//կն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմանուկ, նորաբողբոջ խոջայ Փանոսն, և կողակիցն իւր՝ զԷլիխանն, և նորաբողբոջ որդին իւր՝ զպարոն Գրիգորն, և դստերքն իւր՝ Եփրիքէն, և Մասփիտն և Տատկումն, յիշեցէք... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Եզտիխանն և Նաշխունն, յիշեցէք...։

Եւ ևս առաւել յիշեցէք ի Քրիստոս զհոգաւոր և բարեմիտ և աստուածահաճոյ զկրօնաւոր, պարկեշտ և զապաշխարող Սառէն, և որ յիշէ և յիշատակէ՝ յիշեալ լիցի ի միւսանգամ գալստեանն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Եւ զիս՝ անարժան զՅովաննէս ծրողս, յայլուստ սատ յիշեցէք ի տէր Աստուածն մեր։

324ա Այս սբ. Աւետա//բանս տուաք ի վայելումն Մինաս պարոնտիրին որչափ որ կենդանի է. և յետ Մինաս պարոնտիրին եղիցի Աւետարանս Գանձասարայ վանունց վախմ[23]։ Եւ ոչ ոք մի՛ իշխեսցէ հանել ի Գանձասարայ. և եթէ ոք յանդգնեսցի և հանէ զԱւետարանս ի Գանձասարայ՝ պարտական լիցի յաւուր դատաստանին, մասն և բաժին Յուդայի առցէ և այլ խաչահանուացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Յովանջանն, և կողակիցն իւր՝ Մասփիտն, և որդին իւր՝ Աստուածատուրն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծաղկող սբ. Աւետարանիս զվարպետ Հայրապետն և զեղբայրն իւր՝ զԲաղդասար վարդապետն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

1083

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 2534

Գրիչ, ծաղկող, կազմող՝ Նիկողայոս

Վայր՝ Կաֆայ

303 Փառք... որ զտկարութիւնս իմ զօրացոյց յաւէտ իւրոյ իմաստութեանն. վասն որոյ և ես՝ մեղապարտ ոգի Նիկողայոս անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ յոգւով չափ կատարեցի զտառս, հոգեշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր ամենասուրբ Հոգին հանգչելով...։

304բ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի մեղապարտի, ունայնագործ մելանաւորի, ի թուաբերութեանս ասքանազեան և աբեթական տամարի ՌՃԵ (1656), և ըստ թուոյ շրջանի Ժ (10) շրջան անցեալ (5320), և ըստ նորումս շրջանի Զ և Ե-ն (85)[24]

[23] Այդ մասին փորագրված է կազմի վրա, այդ հիշատակարանը տե՛ս 1658 թ. շարքում։
[24] Այսինքն 532×10։

մտեալ, և ի գալստենէ Կենարարին ՌՈՆԷ (1657). և ստոյգ և յնտիր
աւրինակէ ևս առաւել համարայիցն, զի գաղափար սորին շնորհեաց
մեզ աննախանձաբար քաջ բաբունապետ Մինաս Բաբերդացի. ի յաջ-
խարհիս Հոնաց և ի յերկիրս Ղրիմի, և հոյակապ և ի հռչակաւոր քաղա-
քիս, որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն
305ա Սարգսի զաւրավարին, և որդւոյ նորա Մարտիրոսին, և այլ բաղ//մա-
հաւաք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակոբայ, և յեպիս-
կոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց տէր Գրիգորի աւրհնեալ
քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ...։ Ի յայսմ ժամանա-
կի գրեցաւ ամենագովելի... սբ. Աւետարանս, չորեքճառագայթեան...։
305բ ... Յովանէս անուամբ ի քաղաքէն Կոդոնիու եկեալ և սնեալ յաջ-
խարհն Հոնաց, ի քաղաքն Կաֆայ, և կոչեալ ի կարգ իրիցութեան ի վե-
րայ գեղաքաղաքին Պաղչասարայի: Եւ յետ Ե (5) ամ անցանելոյ, որ
306ա // Հայոց ՌՁԴ (1634) էր, եղև Մռաղատիկ Հոռոմոց. և եղև զժտութիւն
ի մէջ Հայոց և Հոռոմոց։ Վասն որոյ քանտեալ աւերեցին զեկեղեցին
Հայոց։ Նոյն պատճառ ի նոյն ամին Յովանէս երեց թողեալ զտունն և
զհասկն, և զժողովուրդն Աստուծոյ յանձնեալ, եկն ի Կաֆայ քաղաք,
ուստ եղեալ երթալ յԵրուսաղէմ, զոր միաբանեալ ի մի խորհուրդ, դո-
լավաթաւորք Կաֆայու միջնորդ արկանելով զտէր Սուրգիս վարդապետն
յԵրուսաղէմի, որ և բաղում անգամ գաղտնի և յայտնի խրատեալ ասէր
և հազիւ հաւանեցուցանէր մնալ բնակիլ ի վանք Ս. Աստուածածնին, որ
ասի Նոր երեշխաւոր։ Եւ յետ հաւանութեան կամացն եկեալ յաջորդ
Սուրխաթոյ արքեպիսկոպոսն և մեծահանդէս ժողով արարեալ ի քա-
ղաքն Կաֆայ ի Ս. Սարդիս եկեղեցին, որք էին երեսփոխանք՝ խոճայ
Պենկլին, խոճայ Մարն, խոճայ Եալչին, մահդեսի Մինասն և այլ ամե-
նայն ազատք և ռամիկք միաբանեալ ետուն զբանալի Աստուածածնի
վանիցն։ Եւ յետ սակաւ աւուրց, ի նոյն ամի, հոկտեմբեր ամսոյն ԺԵ
306բ (15) սկիզբն արարին սբ. վանից // Աստուածածնի վերստին նորոգել
և ըստ կարեացն աւգնութիւն արարեալ Յովաննէս երէց, արդեամբք և
ջանիւ, աշխատանաւք և զանձն ևս տուեալ ի ծառայութիւն Ս. Աստուա-
ծածնի, ընդ իւր ունելով զգեստ պայծառ և մեծագին, և զարդ բազում
ի պայծառութիւն սբ. եկեղեցոյ։ Եւ ի թվականիս ՌՃԴ (1655) ամին
ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ՝ կատարել զուխտն. և դարձեալ եկն
ի վանս իւր ընդ իւր ունելով մասն ի սբ. Փրկչէն։ Եւ ի սոյն ամի սիրով
և փափաքանաւք և սրտաջան յաւժարութեամբ և քաջահաւատ յուսով
և քրիստոսասէր բաղձանօք ետ գրել սբ. Աւետարանս, ի փրկութիւն
կենաց իւրոց և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնողաց
և եղբարց և ամենայն զարմից, գանձ յաւիտենական և անկապոյտ ճո-
խութիւն...։

Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ,
որք ընթեռնուք և լուսաւորեսջիք, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբա-
307ա մատոյց յաղաւթս ձեր // զվերոյ դրեալ զՅովաննէս երեցն, և զհայրն
իւր՝ զՄուրատն, և զմայրն՝ Կիլէսէրն, և զիրիցակինն՝ զԻնինն, և զեղ-
բարքն իւր՝ զՄիասարն և զՀարանտոնն, որ փոխեցան ի տիս մանկու-

թեան իւրեանց յաշխարհն կենդանեաց, և զկենդանի եղբայրն իւր՝ զՊետրոսն, և զդուստրն՝ զԹագուհին և զամենայն արեան մերձակայքն իւր, զհաւրեղբայրն՝ զմահդասի Եվրէնն, և զմեծ հաւրն՝ զմահդասի Պետրոսն, և զհանն իւր՝ զԽանզէտէն, և զմեծ հաւրեղբայրն իւր՝ զմահդասի Պաւղոսն, և զորդին իւր՝ զմահդասի Գրիգորն, և զկենակիցն իւր՝ զՇահ-զատէն, և զդուստրն իւր՝ զՓաշան և զթոռն՝ զՆիկողայոսն, որ և շնորհաւք Ս. Հոգւոյն առնէ զամենայն արուեստս դժուարինս և անհնարինս, արագ և ճարտար ի գրչութիւն և ի դեղագործութիւն ըստ այնմ թէ «ի Հոգւոյն տուեալ են ումեմն բան իմաստութեան, այլում բան գիտութեան», շնորհս լեզուաց և այլն. և սմա տուեալ են շնորհս ձեռաց կատարեալ
307բ գիտութեամբ առնել զամենայն որ և սբ. Աւետարանս գրեաց և ոս//կէ-ղաւծ պատկերոք զարդարեաց, կապեաց և կազմեաց և շրշապատն արծաթազարդ աւրինեաց, զդիրն և զտուփ, զկերպն և զձևն պատկերացն ինքնին արարեալ ըստ աստուածատուր բազմարուեստ շնորհացն, որ-պէս և յայտնի իսկ է սբ. Աւետարանիս։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով, յիշեսջիք զվերոյ դրեալքս ի սմա, և դուք յիշողդ և յիշեցեալքս առ հասարակ վայելեսցուք զպատրաստեալն ի Տեառնէ զանսպառ ուրախութիւնն...։

1034

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 4043

Գրիչ՝ Հեղինէ

ա

20 Զանարժան գրիչս յիշել աղաչեմ, թողութիւն շնորհեցէք, քանզի կարն իմ այս էր։ Ո՛հ եղկելոյս, քանզի կաղամարս սառուցեալ էր, վասն այս պատճառիս շէկ եկաւ. աւրհնեալ է Աստուած յամենայն ժամ։

բ

34 Զմեղօք մեռեալ Հեղինէս յիշել աղաչեմ, հանդերձ ծնողօք։

գ

778 Զեղկելի, զթարմատար գծող Հեղինէս յիշել աղաչեմ անմեղադիր լինել, զի ձմեռն էր և թանկն աւեր, ոչ կարացի ըստ պատշաճին գրել։

Գրիչ՝ Մարինոս

դ

167 Արդ՝ պաղատիմ արտ[ո]ւասալի,
Միշտ բարեխօսդ ամենայնի,
Միջնորդ լեր տեառն Յիսուսի,
Ի գալստեան օրն մեծի։
Ջնջել զմեղս որ ի մարմնի,
Գծող սորա զՄարինոսի,
Հանդերձ ծնողօք ամենայնի,
Եւ հաւասար արեան մերձաւորի. ամէն։

Ե

625 Այլ և յիշեցէք զրաբունայպետ վարդապետն զՄեսրոպ և զանարժան գրիչս զՄարիենոս և զծնողսն մեր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

Զ

638—639 լուսանցքում Թողութիւն շնորհեցէք. քանզի արտասուօք գրեցի, յորժամ յիշեցի զմայրն իմ՝ զՀեղինէն, զսիրտ իմ նուաղեցաւ և աչք իմ շլացաւ, զի ոչ կարացի գրել ստուգիւ։

Է

639 Զանպիտան գրիչս յիշել աղաչեմ, ո՛վ ընթերցող եղբայր, քան և ես արտասուաց յոյժ կարօտ եմ, մեղայ տեառն Աստուծոյ։ Եւ առաւել յիշեցէք ի յաղօթս ձեր զրաբունապետ վարդապետն իմ զՄեսրոբն և ուսուցիչն իմ՝ զՀեղինէն, որ բաղում աշխատանք ունի ի վերա իմ. Քրիստոս Աստուած ընդ սրրոյն Հռիփսիմեանցն դասաւորեսցէ. ամէն։

Ը

668 Ո՛վ եղբայրք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զկուսակրօն և ճգնայազգեաց բաբունայպետն իմ՝ զվարդապետն զՍեսրոպն, որ բազում աշխատանաւք գրել ետ անարժան քրւերս, յիշեցէք...։

Թ

739 ... արքայութեան երկնից արժանի արասցէ զՄեսրոբ վարդապետն և զծնողն իւր և զքոյր սորին զանարժան գրիչս յիշել աղաչեմ...։

Ժ

868 Եւ զեղկելիս, որ միայն զանունս ունիմ և ոչ զգործս... աղաչեմ յիշել... մանաւանդ քեռն իմոյ, զի մինչև այս Գ (3) տետրս բազում աշխատութեամբ և տկար անձամբ դրեաց զսա և իմ տեսեալ զայն, օգնութիւն հասի։ Արդ՝ հայցեցէք յԱստուծոյ թողութիւն մեղաց նորա ևս առաւել ծնողաց իմոց, հօրն՝ Խաչիկին և մօրն՝ Թումանին, և զրաբունի եղբայր իմ՝ Մեսրոբն և զՅովսէփն, և զորդիքն, և ամենայն արեան մերձաւորքն իմ. ամէն։

Ժա

867 Զանարժան գրիչս յիշել աղաչեմ և զծնողսն իմ, զխաչատուր միայնակեացն և զմայրն իմ, յիշեցէք...։

Ժբ

877 Եւ զՄեսրոբ վարդապետն և զծնողսն իւր՝ զխաչատուր և մայրն իմ՝ զԹումանն, և զհոգևոր և զմարմնաւոր քոյրն իմ՝ զՀեղինէ, որ բազում աշխատանօք սնոյց զդրագրութիւնս և զանարժան գրիչս յիշել աղաչեմ...։

ԺԳ

885 Ո՛վ եղբայր թողութիւն արարէք էջս տեղ մնաց, չէ սխալ, այլ ձեռս վերայ էի եդեալ, տեղ էր մնացել, զի յոյժ ծանրացեալ էր գլուխս. վա՜յ ինձ։

ԺԴ

911 Ցիշեա Քրիստոս Աստուած զանպիտան գծողս զՄարիենոս սո[ւ]տանուն ապաշխարող և բաբունապետ զվարդապետն իմ, որ բազում աշխատանօք ետ գրել. և Քրիստոս Աստուած ողորմի ամենայն աշխատողաց...։

ԺԵ

962 Ցաւարտ բանիս տեառն Յիսուսի.
Եղև լրումն յայսմ ամի,
Ի թվականութեան հայ տոմարիս.
ՌՃ և ի Ե (1656)-իս,
Ձեռամբ գծուծ անիմաստից,
Բիւր քանքարոյ պարտապանիս,
ՁՄարիենոս մեղօք գերիս,
Ամեն բարեաց զրկեալ հոգիս։

Կրկնապատիկ ձեզ աղաչեմ... յիշմամբ միոյ արժան առնէք... զծնող Խաչիկ կրօնաւորն և զմայրն իմ՝ Թումանաղէն, և զեղբայրն իմ՝ զՄեսրոբ վարդապետն, զՅովսէփն, զկոյսակրօն քոյրն իմ՝ զՀեղինէ և զՎառվառան, հանգուցեալքն և զկենդանիքն, և զթղթի կոկողս զԱզարիայ սարկաւագն. և ի սմա աշխատողք, յիշեցէք ի Քրիստոս...։

1085

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՅՈՅՑ

Երևան, № 4208 (ԺԷ դ.)

Նվիրատու՝ Խանդվէլի

85ա Ողորմի ընտացողի սբ. գրոյս Խանդվէլուն, և իւր կողակցին՝ Մարիենոսին, և իւր որդոցն՝ Խաչիկին, Եանովմին, Ադամին, Աբելին. և իւր դստերացն՝ Շիրազին, Խէրին, և մօրն իւր՝ Կուլդաստին, և յարեան մերձաւորացն...։

Թվին ՌՃԵ (1656) առայ սբ. ժամագիրքս և տուայ վախմ Ս. Ամենափրկչին։ Եւ ով ոք հանել շանայ սբ. եկեղեցոյ՝ նզովեալ եղիցի սբ. առաքելոց և սբ. մարգարէից. ամէն։

1086

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4451 (ԺԵ դ.)

295ա Դարձեալ [ստացող] սբ. Աւետարանիս յիշեցէք Թամբալ մականուն տէր Յովհաննէս, եղբայր նորին՝ Սարգիսն, [նո]րա որդիք Սարուխանին, Խաչատուր քա[հանային], որդիք սորին միւս Խաչատուրին,

էվ[ատին], Յովանէսին. հա[ւու?]ն՝ Եազուլին, Հու//մին, այլ Մարա-
նին, Վարդանանին, կողակցին՝ Հ//նին, Պալասան սարկաւագին, Ալէք-
սանին, Դաւթին, Յոհանին, հանգուցեալ Դրիգորին, Սարքիսին, Պետրոս
սարգաւակ, Հաս/// էտկարն, Պողոսին, ///նին, Ադամին, Վարդանին,
Քասպարին ///

295բ /// ի հայրապետութիւն տէր Պետրոս կաթողիկոսի[25] /// թ[ագաւոր-
ու]թիւն շահ Ասլազի //։ ի թվակ[անութեան]ս [Հայ]ոց ՌՃԸ (1656)
///[26]

1087

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 5174

Գրիչ՝ Պետրոս սարկաւագ

ա

196բ Ո՛վ հայրք և եղբայրք, ըստ խոշորութեանն դրիս և սխալանաց
սակաւ մի անմեղադիր լեր, զի աւրինակն ամանաթ էր և սակաւ մի փու-
թացի։ Դարձեալ յերես անկեալ և կողկողագին աղաչեմ զձեզ, ո՛վ սըր-
բասնեալ հայրք, որ զիս՝ զմեղապարտս յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս
ձեր զՊետ[ր]ոս դպիրս և զուսուցիչս իմ։

բ

269բ Զյետինս ի գրչաց և զառաջինս ի մեղաւորաց զՊետրոս սուտանուն
սարկաւագս աղաչեմ զձեզ, յիշեցէք ի յաղաւթս ձեր և Աստուած զձեզ
յիշէ. ամէն. եղիցի, եղիցի։

գ

317բ Թվին ՌՃԸ (1656)։

1088

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 6231 (1652 թ.)

Գեր. ազատող՝ Ավաք

658ա Խնամօք արարչին Աստուծոյ և գթութեամբն իւրոյ ես՝ մեղուցեալ
Ավաքս, որդի Մարգարին, ի երկրէն Դանչայու, ի միտ ած ի բան մար-
գարեին, որ ասէ. «Երանի...». պարտ է զանանցն նկատել և ոչ զանցա-
ւորն, հայեցի ի Տեառնէ զդուռն փրկութեան, և ետու յիշատակ ինձ և իմ
ծնողաց հոգոյն ի դուռն Ս. Կաթուղիկէ յեկեղեցուն սբ. Յայսմաւուրքս,
որ մնայ մինչ ի կատարած աշխարհիս, որոյ յիշատակն օրհնութեամբ
եղիցի. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱվաքն և զծնողքն իւր՝ զՄարգա-
րէն, զՄարիանն, եղբայրն՝ զՅովանէսն, զքոյրն՝ Նազլուխանն։

---

25 Իմա՝ Աղվանից կաթողիկոս Պետրոս Դ Խանձկեցի։
26 Հիշատակարանը խիստ վնասված է։

Դարձեալ յիշեցէք զԱվաքն և զամուսինն իւր՝ զՉինարն, որ է հանգուցեալ..., որ է դուստրն Դալուղարտաշէցի էլումին:

658բ Թվին ՌՃԵ (1656)-ումն առի այս Այսմ[աւուրքս] ես՝ մեղաւոր Ավաքս Արզրում քաղաքումն, որ էր սայ եսիր և գերի ի ձեռս օսմանցու ենկիչարու, աղատեցի կամօքն Աստուծոյ ի հալալ ապրանաց իմոց մեծաւ փափաքանօք, բերի զսա և յեռու յիշատակ ի դուռն Ս. Կաթուղիկէ եկեղեցուն։

Դարձեալ երեսս անկեալ աղաչեմք զձեզ, օ՛վ սրբանուէրք և մեղսաքաւիչ քահանայք, յիշեցէք զմեղօք լ[ցեալ] զԱվաքս և ամենայն ազգայինքս, որ ետու Ս. Կաթուղիկէիս յիշատակ զմէկ Այսմաւուրքս և մէկ կարմիր զառբաւ բաղպանտ։ Եմ աղքատ, մեղքս շատ, և եմ, և կամք տառապեալ, յուսացեալ եմ Աստուած և Ս. Կաթուղիկէ զեկեղեցին, վերջին ըստացօղս յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն[27]։

1089
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 6569 (ԺԴ դ.)

471բ Ամենայն որ աստ գրեալ է՝ ըստ անուանց և ըստ շինողաց սուտ է, քանզի շինօղ սբ. եկեղեցոյց է տէր Յակոբ Յիսուսի, ի գաւառէն Արտազունեաց, ի գեղջէն Կէծկոյ. իւրովին աշխատանօք և դրամիւն հիմնարկեաց[28] և շինեաց. բաւ է։

Թվին ՌՈԾՉ (1656) կատարեցաւ։

1090
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 7143

Գրիչ՝ Ղազար քահանայ

ա

227ա Աստուած ողորմի Ալոի հօրն՝ բերեց խաղող, որ կերանք։

բ

235բ Փառք..., որ ետ զաւրութիւն տկարութեանս իմոյ հասանել յաւարտ
236ա Սա//ղմոսար[ա]նիս, հոգէնուագ երգոյս Դաւթի, ի լուսաւորութիւն հոգոց և ի պայծառութիւն մանկանց եկեղեցո[յ]. իսկ ի բարեմիտ և ի խնդ[ր]ոյ աստուածասէր քահանային՝ տէր Ղազարին, որ ետ տէր Աստուած կարողութիւն ելանել յաւարտ յայսմ գրոցս, ի թվին Հայոց ՌՃԵ (1656), յայսմ դառն ու նեղ ժամանակիս, որ տրտում և լալոտ աչաք գրեցի զՍաղմոսար[ա]նս, որ Բ (2) տղայ և Բ (2) աղջիկ, որ

[27] Վկայաբանությունների մեծ մասից հետո առաջին ստացողի հիշատակարանների վրա թուղթ է փակցված, և նշված է Ավագի փոքրիկ հիշատակագրությունները, տե՛ս 2ա, 5ա, 13բ և այլ էջերում։

[28] Ձեռագրի 471ա էջում կա մի ընդարձակ ցուցակ, թե ով ինչքան դրամ է մուծել ճահուկ գավառի Ս. Հովհան եկեղեցին կառուցելու համար։ Սույն հիշատակարանում խոսքն այդ մասին է։

[29] Ձեռագրում «հիմանրկեաց» ձևով։

փոխեցան առ Քրիստոս, և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք...։
Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զփծուն գրչիս զՂազար քահանայն, և զիւր կողակից զՄարգրիտ. և զիւր որդին՝ զՄուրատն։

1091
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7300 (1655 թ.)

246ա Ես՝ անարժան Մարգարիտս, հարսն Աղանանպէկին[30], որ զԱւետարանս գրել ետ, ի թվին Ռ[Ճ] և հնկին (1656) բաժանեցաք ի դեքորց մերոց. Ղունչի որդի Սումբատն Ա (1) ոսկէտուփ Շարակնոց ծախեաց, իւր հիսէն և այլ եղբայրամիշի խարճն ես ետու և զԱւետարանս նոր յիշատակ ետու Աղանան պէկին և վերոյ դրելոցն ամենայնի և որգոց մերոց հանգուցելոյն՝ Աղանանին, և կենդանոյն՝ Մէլիքին, և թոռին իմոյ՝ Շահնազարին։ Ով ոք մեր աղգայնոց և կամ այլք [ծա]խել չանան՝ պատիժն Յուդայի առցին և մասն ի Կայէնէ։ Եւ զխնամով պահողքն՝ աւրհնին ի յապինիաղ Տեառնէ մերմէ և ամենայն սրբոց նորա. ամէն։

1092
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 7491

Գրիչ՝ Աղամալ Ջուղայեցի
Վայր՝ Տրփխիս

ա

234բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար և անիմաստ, փծուն գրչի Աղամալ Ջուղայեցւոյ հասանել ի յաւարտ հոգիաբուղխ եղանակաւ[որ տառի]ս, որ կոչի Գանձարան, ի մայրաքա[ղաքն] Տրփխիս, ի դուռն Մօղնոյ Ս. Գէորգե[այ] զօրաւարին և Կամակատար Ս. Աստուածածնին, ի թուաբերութեանս հայկազեան տումարիս ՌՃԵ (1656), ի հայրապետութեան տեառն Յակոբ կաթողիկոսին, ի թագաւորութեանն տանս Վրաց յազգէն Բագրատունեաց Ռուսամ խանին, զոր տէր Աստուած
1 ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։
Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս Աստուած զստացող սբ. տառիս զբարեսէր պարոն Ջուարքն և զծնօղսն իւր՝ զՓիրօն և զվալինն, և կողակիցքն իւր՝ զԳունդինն և զԹէքրօն, և ծաղկեալ որդիքն իւր՝ զԽօսինն, ըզէսաաւէն, զԳասպարն և զնազարն. և դստերքն իւր՝ զՈուսուդանն, զՔիշմիշն, զԹիքօն և զվալօն, և եղբարքն իւր՝ զԽօսինն, զՊապին, զԲէրօն, զԳէօրկին, զՕտինն, զՇահվէրտին, զՄիրզէն և զՓասինն, և քորքն իւր՝ զՇամօն և զՄիրանդուխն, յիշեցէք և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

բ

211բ Զգծող սորա Աղամալ Ջուղայեցի յիշեցէք։

---

30 Ջեռագրի պատվիրատուն և ստացողը. հիշատակարանը տե՛ս 1655 թ. շարքում։

Նվիրատու՝ պարոն Զուրար

Գ

Արդ՝ ես բազմամեղ Զուրարս ստացայ զսբ. տառս և ետու յիշատակ ի դուռն Ս. Նշանին, ի ձեռն տէր Ոհան քահանային, յիշեցէք...։

1093

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7512 (ԺԵ դ.)

Գրիչ՝ Աղամալ Զուղայեցի

241ա *Զվերշին ստացող լուսազարդ սբ. Աւետարանիս զխոճայ Գուլին և իմ ընկեր խոճայ Շանպարոնն, և որդին իւր՝ Բէժանն, Մատուրն, և զծնողսն իւր՝ զԹադէոսն և զՎարդիւաքունն, և կողակիցն իւր՝ զԹէքրոն, և որդին՝ զՅարութիւն, և եղբայրն իւր՝ զՀասանն և ամենայն արեան մերձաւորսն իւր յիշեցէք...։*

Ի թուականիս ՌԺԾ (1656) ձեռամբ Աղամալ Զուղայեցւոյ *և* Միրի-նի Տրփխիս[եց]ոյ, *յիշեցէք ///*

1094

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7709

Գրիչ՝ Խաչատուր (Խաչգոուզ) երէց

Վայր՝ Կաֆայ

ա

37ա *Ես մեղաւոր և անարժան,*
Հող և մոխիր և անպիտան,
Սառացեալ մեղուք զանազան,
Զունիմ բարեգործ ողորմութեան։
Հայցեմ տէրանց ինձ թողութեան,
Որ փրկութեան լինամ արժան,
Գոչման փողոյն Գաբրիէլեան,
Զարհուրելով դամ ի դատման։
Աղաղակեմ առ Տէր հայցման,
Լալով ասեմ զՏէր մեղան,
Ապայդայիցըն փրրկութեան,
Խաչատուր էրէցս ի անպիտան։
Բիւր քանքարոյ է պարտական,
Փողմ չունիմ ճար հատուցման,
Խիստ անճարակ և անաւգնական,
Աստէն չունիմ տեղ մնացական,
Եւ ոչ անտէնրն հանգստեան։

Եւ դարձեալ էր այսպէս լալի և լալագին եմ, աղքատ մարմնով, հոգով տառապեալ եմ, ողորմութիւն չեմ տուեր աղքատի, ոչ քահանայի և ոչ պատարագի։ Եկեղեցի շինութեան ամենեքեան ոսկի կու տան և

արծաթ, գերի ազատութեան ամենեքեան ոսկի կու տան և արծաթ, ի դուռն բանդ արդելեաց չեմ գնացել և ոչ հիւանտի տես, վանուց շինութեան կամ յԵրուսալէմայ ճանփան լուս[ա]բուլ գերեզմանին տեսլեան,
37բ ի քաղաքն Եզրնկան ի Թիլն ///նի սբ. Լուսաւորչի դամբարան [դ?]իր հանգստեան, էջմիա//[ծ]նի փափաքման Ս. Կարապետի հայցման, սոքայ ամենեքեան հարկ է ի վերայ ամենայն քրիստոնէից, ոմանք հասանեն փափաքանաց, ոմանք ոչ՝ անմեղադրելի են։

Եւ դարձեալ պարտ է ի վերայ կարճաւորաց և քահանայից ջանք անել լուսաբուխ գերեզմանին և զտնաւէրնութեան Տեառն տեղին ընթանալ և հասանել փափաքանաց։ Ապայ և ես մեղաւորս Խաչատուր քահանայ գործովս եմ հեռի և վատթար ամենայնի, ոչ արժանացաք գիշեր ու ցերեկ հետ մեղաց դատեցայ, աւր մի բարի չի գործեցի և ոչ բարութիւն տեսայ, դատարկ և ունայն մնացի, ոչ ոսկի տրուի և ոչ արծաթ, վասն աղքատութեան և վասն ագահութեան զուրկ ու մահրում եմ մնացեր, մեղօք եղել եմ տարտարոսի։ Դարձեալ ունիմ անթիւ ննջեցեալ՝ հայր և մայր, քոյր և եղբայր, իրիցկին, դուստր և որդի, հարսն և փեսայ, սիրելիք և բարեկամք, չեմ տուել նոցա հոգոյն ոչ ժամի և ոչ պատարագի և ոչ ողորմութիւն աղքատի։

Եղեալ եմ ԿԴ (64) ամի,
Ի հասեալ եմ առ ափըն գերեզմանի,
38ա Ցիշեց[էք] // զիս եղկելի,
Եւ ասացէք Աստուած ողորմի։
Խաչիկ քահանայի, որ առատն է ամենայնի,
Ինձ թողութիւն ասողի և ողորմիս տուողի,
Աստուած իւրեանց տացցէ բարի,
Պատառէ զգիր պարտի,
Քաւէ զանձանքն ամենայնի։
Այս տաղերըս տղակուտի վեր դրեցի,
Ինչ վաս աւարտ չի հասուցի,
Մի մեղայդիր լինիմ,
Գիրեր է գրաց անպիտանի,
Որմն առաջի, ոմն յետի,
Տաղեր և հայրենեք, ոմն պիտի,
Ոմն հոգոց է պիտանի,
Ոմն մարմնաց ուրախալի։
Թվականներ անթիւելի ՌԾԷ (1608),
Եղեալ է յուշխար[հ]իս բաներ զարմանալի,
Ոմն պիտանի և ոմն անպիտանի,
Ումեանն ցանկալի և այլ ումեմըն աղորժելի,
Իմաստուն հետևի, կարդայ և աճապի,
Թէ այսպէս բաներ է եղել յերկրի։

Ինձ նման մթի չի գիտէ գիր կարդալու և ոչ մտիկ անէ այնպէս բաներու և հայհոյէ զիս, թէ գրողին ձեռքն շոբընտէր է զայս բաներս, իրաւ

թէ խև էի և մեղաւոր, որ հետևեցայ հետ թուականին մինչ ի ՌՃԵ (1656) թվականն. եթէ հասնիմ այլ կու գրեմ, թէ չի հասնիմ, դուք հասանիք ձեր փափաքանացն, յիշեցէք զիս և Աստուած ողորմի ասէք։ Այլ և զդարձրս իմ կամենայ, որ ի մեղաց փոշմանիմ, դուք ալ լինիք Քրիստոսի տեսուն արժանի։

Բ

86ա Թերավարժ գրչակս կի[ս]ասարկաւարք Խաչգոուս [յ]իշեցէք ի Տէր, ո՛վ եղբայրք, [յ]որժամ հանդիպիք տաղերոյս և երգերոյս եգանակէք, յիշեցէք և զիս զանարժանս և մի՛ մեղաթրէք թերավարժիս։ Զի գրեցաւ սա ի թվականիս ՌԿԹ (1620)։

Գ

138բ Արդ՝ դրեցաւ սակաւ գիրս, մայրաքաղաքս Կաֆա, ի դուռն Թէոթորոս զաւրավարին, ի ձեռն անարժան, և մեղաւոր, և մեղսասէր լի ամենայն մեղօք ... և [յ]իմար սարկաւաքս, յորժամ որ երթէք քաղցրայձայնիւ զմեղաւոր Խաչգոուզն [յ]իշէք և դուք լինիջիք [յ]իշման արժանի...։

1095

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 7794 (1645 թ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց

133ա Թվին ՌՃԵ (1656) էր ի Կաֆայ քաղաքն Ե (5) վարդայպետ կար. ա. Մինաս, բ. Յովանէս՝ Տէրտղիզոնին առաջնորդ, գ. Նեկ<ոկ ոխոսէն, դ. Իրնայթիոսն, ե. [Ս?]իմոյ եպիսկոպոս։ Սոքայ ամենեքեան ժողովարար էին. Աստուած տայ տվողացն։ Ես՝ մեղաւոր Գրիգոր էրէց, ես ծառաեցի սոցայ չափայոր ողորմութեամբ Աստուծոյ շնորհիւրն. ամէն։

1096

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7966

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Նեխամարգ

Ա

228ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ զսա ի թվականութեան ՌՃԵ (1656), ի ձորս Սազկոց, ի գեղս Նեխամարգ, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսիս, Ս. Հոմ-
228բ սիմիս, ձեռամբ բազմամեղ գրչի // սուտանուն Յովանէս դպրի, ի թագաւորութեան Պարսից փոքրիկ շահ Ապազն, ի կաթողիկոսութեան երիցս երանեալ տեառն Յակոբի, ի յառաջնորդութեան Բշնոյ Մովսէս վարդապետին և տէր Նէրսէսին։ Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ յիշել զանպիտան գծաւղս և զծնաւղսն իմ։ Ընդ նմին զտէր Վարդանն, զի հոգևոր հայր իմ Ե. և Աստուած ողորմի ասել և ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Ստացող՝ Յովանէս երէց

Բ

229ա Շնորհիւն ամենակալին Աստուծոյ...։ Ես՝ անարժան Յովանէս անպիտան էրէցս, որ զանունս ունիմ ոչ զգործս, լսեալ էի ի սբ. գրոց, զոր հրամանն և մեծ երանի տան, թէ՝ «երանի...»։ Զի յայսմ յուսով և բազմաթախանձ սիրով գրել տուի սբ. Աւետարանս, յիշատակ ինձ և ծնողացն իմոյ, հարսն իմոյ՝ Դաւիթին, և մօրն իմոյ՝ Այգունին, և կողակցին իմոյ՝ Գուլխաթունին, և աւաք որդին՝ իմ՝ Ալէքսանն, [միւս?] որդիքն՝ Խաչ[ա]տուրն, Նէրսէսն, Ակոբն, և եղբայրն իմ՝ Մարտիրոսն, կողակից նորին Գուլիստանն, և մեր ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և ննջեցելոց։

Դարձեալ երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք ի սմա կարդալով կամ տեսանելով կամ յօրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր և մէկ բերան Աստուած ողորմի ասացէք...։

1097

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 8210

Գրիչ, ստացող՝ Յովսէփ երէց

Վայր՝ Կովտուն

284ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Մաշտոցս ի Սեբաստիա, ի գիւղն որ կոչի Կովտուն, ձեռամբն Յովսէփ երիցու, ի թվականիս Հայոց ՌՃԵ (1656) ամին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդա-

284բ լով կամ տեսանելով անմեղադիր լերուք, զի կա//րիք իմ այսչափ էր։ Եւ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղապարտ [դ]րիչս և զծնօղս [ի]մ ի Քրիստոս Աստուած մեր. ամէն։ Զունի ոք իշխանութիւն ծախելոյ կամ գրօելոյ, քանզի փափաքանաւք գրեցի, յիշատակ հոգոյ իմոյ և վայելումն անձին իմոյ։ Եթէ ոք [յ]տնդգնի՝ զմասն Յուդայի և զպատիժն Կայենի կրէ. լի սրտիւ յիշաւղն՝ յիշեալ լիցի ատենին. ամէն։

1098

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8315

Գրիչ՝ Նիկողայոս

Վայր՝ Կաֆայ

301բ Փառք...։ Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ ամենագովելի և գերահռչակելի... սբ. Աւետարանս...։

302ա Արդ՝ ցանկացաւղ եղեալ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ամենայն պարկեշտութեամբ զարդարեալն... իմաստուն քահանայս Քրիստոսի տէր Գաբրիէլն, որ ետ գրել զսա, ձեռնատուութեամբ ոմանց աստուածասիրաց, ի վայելումն անձին իւրոյ և սպասաւորաց սրբոյ Սիոնի եկեղեցւոյ, զոր յիշատակ վարձատուողացն աւրհնութեամբ եղիցին...։ Բայց գրեցաւ սա ի յաշխարհիս Հոնաց և յերկիրս

Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Կաֆայ, առ ոտն Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարի և այլ բաղմահաւաք սրբոց, ձեռամբ անիմաստ գրչի Նիկողայոս մեղաւորի, ի թվաբերութեանս ասքանաղեան և յաբեթական տաւմարի ՌՃԵ (1656), և ըստ
1102բ նորում շրջանի ԼԵ (35) // և ի գալստենէ Կենարարին ՌՁ[Ճ]ԾԱ (1651), և յելիցն Ադամայ ի դրախտէն ԻՀԶ (7076), ի հայրապետութեան տեառն Յակովբայ և յաթոռակալութեանն ամենայն հիւսուսական կողմանց տէր Գրիգոր աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Աստուած պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։

Այժմ աղաչեմ զամենեսեան զդասս լուսերամից, որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Գաբրիէլ սրբազան քահանայն, որ բազում աշխատութեամբ և ջանիւք և աւժանդակութեամբ և բաղում երթևեկութեամբ խնամ տարաւ հայրագութ և մայրագորով ըղձիւ ղծախս շնորհաւղի և յերկոցունց կողմանց զծնաւղս նոցա և զեղբարքս նոցա.... Նաև թէ արժանի համարիք զանարժան գծաւղս ղՆիկողայոս զմեղապարտ ծառայ ծառայիցդ Աստուծոյ...։

1099
ՏՕՆԱՑՈՑ
Երևան, № 8460 (ԺԷ դ.)

1102բ Թվին ՌՃԵ (1656) էր, էջմիածնայ թաւիթ նիւրակն էկաւ Դ (4) հոգով. Ակոբ կաթողիկոսին աշայկերտացն, որ նոր ելան բանին վաճառական խրատիչ սբ. Աւետարանին։

1100
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8928 (1470 թ.)

890ա Դարձեալ յիշ[ե]ցէք ի Քրիստոս... Իլվայ Հէրայպետին, Ղազարին, Յովանէսին, Նուրարին, Փուշին, Մարխասին, որ ՃԿՌ (160000) տին Ս. Յով[ան]էս դիրքերն գէրութ[է]նից ազատեցին։

Թվին ՌՃԵ (1656)։

1101
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 9531 (ԺԶ դ.)

100ա Փառք...։ Արդ՝ առաւ Շարակնոցս տէր Մելքումն յիշատակ իւր և իւր ծնաւղ Մարիամին և իմ որդի Արիսաակէսն, եղբայր Պալտասարն և Մանկասարն, և իւ[ր] կողակից Եղիսաբետն և դուստրն՝ Մախմուրն, թվին ՌՃ և Ե (1656) էր։

1102
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10024

Գրիչ՝ Գրիգոր Ճվանորեցի
Վայր՝ Խարց

ա

72ա Ընտացող սր. Աւետարանիս զտէր Պետրոս քահանայն, զտանուտէր Խէչում, խիստ փափագանաք գրել տուին զսր. Աւետարանս, շինիլ տուին Ա (1) սկի, յիշատակ իւրեանց հոգ[ո]յ և ծնողացն և արեան մերձաւորացն։ Եւ իմ հոգւոյ նան Մարիանն խիստ աշխատանք արար, Աստուած զիւրեան արքայութիւն տայ. ամէն։ Ի վայելումն տէր Պետրոսին, որոց որդի, տէր Պետրոսի կողակի[ց] Աղտիաշին, որդոցն ամենեցուն. ամէն։ Եւ դիս՝ զբազմամեղս և զյետինս ի բարեաց, ծոյլ և պղերգ Գրիգոր անարժան գծողս, յիշեսցիք միով Տէր ողորմա[յ]իւ։

Ի թվիս ՌՃԵ (1656), ի դեղշէն Ճվանորոյ։

բ

124բ Սրբասնունդ և կուսակրօն տէր Պետրոս քահանայն <և> եղբարս սր. Աւետարանիս դեղագինն, ծաղկելոյ հախն, թխտի հախն, կօսալոյ հախն. ամէն։

գ

272բ Փառք...։ // Արդ՝ եղև զրաւ գրչութեան այսմ աստուածաշունչ սր. Աւետարանիս ի թվականիս Հայոց ՌՃ և Ե (1656), ի դառն և ի դժնեա, յանբարի և ի վշտաշատ ժամանակի, յորում նեղեալք անօրինաց[31] և յանիրաւ պահանջողաց, ի յերկնահանգէտ և ի գերահրաշակ սր. Աւետարանիս։ Գրեցաւ երկիրն Մաւազիխաթուն, գեաւղն որ կոչի Խարց[32]։ Գրեցաւ ի դուռն Ս. Ամենափրկչին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Նշանիս, ի հայրապետութեան տեառն Յակոբ կաթողիկոսի, ի առաջնորդութեանն Յով[հաննէս?][33], ձեռամբ անմեղամեղ, փցուն և անարհեստ գրչի Գրիգոր անարժան և ծոյլ, որ զանուս միայն ունիմ և գործս ոչ, ի խնդրոյ և արդեանցս երիցս երանեալ հոգէհեղ և բարեմիտ տա-
273ա նուտէր Խաչումի, կողակից // Մարիանին։ Առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղան այսմ աստուածաշունչ մատենի և անգին մարգարտի, յուսալով ի բան մարգարէին, որ ասէ. «Ծրանի...»։ Եւ ետ գրել զսր. Աւետարանս ըստ այսմ յուսոյ և պայմանի, ի հալալ վաստակոց իւրոց, ընտացաւ զսա, յիշատակ իւրն և ծնողացն՝ հօրն և մօրն, և կողակից Մարիանին և որդին իւր Դաւիթն, յիշատակ հոգւոյ ի մխիթարութիւն և ի սփոփանս ցաւալից կենաց...։

273բ Վասն. որոյ կողկողալով հառաչմամբ... աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, յորժամ կարդալով կամ աւրինակելով զփրկական աստուածաշունչ սր. Աւետարանս, յիշեսցիք զտացող տառիս

---

31 Ձեռագրում «անօրինաց»։
32 Գյուղ Տարոնում։
33 Այնուհետև երկու տող դատարկ։

զսրբասիրտ և բարեմիտ, հեզահոգի և հրեշտակակրօն տէր Պետրոս քահանայն, որ փափագանօք ըղձմամբ սրտի գրել ետուր զսբ. Աւետարանս և ընտացաւ յիշատակ անջինջ և գանձ անսպառ հոգւոյ իւրոյ, ի վայելումն հոգւոյ իմոյ, իմ որդի Մխիթարին, Աւետիսին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

1103

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 10355

Գրիչ, ծաղկող՝ Մկրտիչ
Վայր՝ Թոխաթ

ա

4ր Որ և բարեխաւսութեամբ սբ. Կարապետին ողորմեսցի Քրիստոս Աստուած ամենայն հաւատացելոց մանաւանդ ստացողի գրոցս մահդասի Կիրակոսին և ծնօղացն, հօրն՝ Նուրբէկէ և մօրն՝ Սուլթանփաշին, եղբօրն՝ մահդասի Եսայէ, որդոյն՝ Ներսէսին և կողակցոյն՝ Զմրութին, կարդացողաց։

բ

610բ Յիշատակարանն է Յայսմաւուրացս

Փառք...։

611ա Հազարք հազարաց և բիւրք բիւրուց ստացան զվարս աստուածային, աստուածածան օրինօքն և աճեալ զօրացան և բազմացան դասս դասս և երամ երամ, մին միոյ օրինակ լինելով, քաշացան արիութեամբ ընդդէմ խաւարային իշխանութեանն Բելիարայ և չար զօրաց նորա, մենամարտեալ սպառազինութեամբ, // յաղթեցին և հաճոյացան այնմ, որ

611բ զօրացոյցն զնոսա համբերել ազգի ազգի և պէսպէս տանջանաց, զի ոմանք գեղարդեամբ առին զկատարումն, ոմանք սուսերաւ, ոմանք քերչաւ, ոմանք նետիւք, ոմանք ճանկօք, ոմանք շանթիւք, ոմանք կատսայիւ եռացմամբ, ոմանք սղոցիւք, ոմանք բևեռօք, ոմանք ջրասուզեալ, ոմանք գազանահերձ եղեալ, ոմանք հրով այրեալ, ոմանք գահաւիժեալ, ոմանք քարկոծեալ և այլք այսպիսի ես քան զէս դառն տանջանօք փոխանակեցին զկեանս իւրեանց Փրկչին մերոյ։ Եւ ոմանք ի բազմաց զայս ամենայն տանջանս կրեալ և զօրութեամբն Քրիստոսի ամբողջ մնացեալ, զի տանջանքն ի նոսա ոչ մտանէին յամօթ և ի նախատինս չարչարողաց ի փառս, ի գովեստ անուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ոմանք մին չարչարանօք ելին աստեացս և կատարեցան և ընկալան յաղթութեան պսակն...։ Եւ այլ ոմանք դեր ի վերոյ յիշատակ առնել վասն իւր և վասն նախնեացն, որպէս խաչ և Աւետարան և այլ աստուածաշունչ տառիւք, վասն երանութեան մարգարէին, զոր ասէ, թէ՝ «Երանի...»։ Այսմ երանութեանս հետևեալ աստուածասէր և հեզահոգի, բարեմիտ և հաւատարիմ մահդասի խոճա Կիրակոսն և Ներսէսն, որ և արթնացեալ ի զբաղմանց աշխարհիս և զմտաւ ածեալ, թէ որպէս հաճոյասցի և մասնակցի սրբոց դասին ... և ըղձալի տենչմամբ ետ գրել

զսբ. գիրքս, որ կոչի Յայսմաւուրք, զի յամենայն աւուր ընթերցցի, յիշատակ արեամբ ներկեալ մարտիրոսացն...։

612ա Արդ՝ գրեցաւ և ծաղկեցաւ տառս ձեռամբ նուաստ, մեղսամած, անպիտան մահդասի Մկրտիչ ջահանկալիս, որ կոչի Յայսմաւուրք, ի թվականութեանս Հայոց ՌՃԸ (1656), ի քաղաքիս Յստոկիայ, որ այժմ ասի Թոփաք, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսի և այլ սրբոցն, որ աստ կան։ Եւ ի հայրապետութեան սբ. Էջմիածնի տեառն Փիլիպպոս կաթուղիկոսին, որ անցեալ ամին փոխեցաւ առ Քրիստոս և յաջորդեաց ձեռնասուն աշակերտն իւր, ամենեին յար և նման իւրն, տեառն Յակոբ կաթուղիկոս Էջմիածնի։ Եւ սբ. Յերուսաղէմայ առաջնորդ սրբասնեալն ի վարդապետս և ի հայրապետս տեառն Աստուածատուր վարդապետն, որ է գործովքն ի վեր քան զանմարմինս։ Եւ զնահանգիս առաջնորդութեանն սրբասնեալ աշակերտն Փիլիպոս կաթուղիկոսին զտէր Յովանէս վարդապետն։ Աւարտեալ եղև աստուածարելոց սրբոց պիտառութեան աղբիւրս, որ կոչի Յայսմաւուրք։ Արդ՝ աղաչեմ ըզձեզ մանկունք նորոյ Սիոնի, որք հանդիպիք յայսմ սբ. և աւետաքարող Յայսմաւուրացս, կարդայք կամ լսէք, օգտիք և աւրինակէք, յիշեցէք սրտի մտօք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող Յայսմաւուրացս զվերոյ ասացեալ մահդասի Կիրակոսն, որ հանգուցեալ է առ Քրիստոս և հանգուցեալ որդին զմահդասի Ներսէսն, և կողակիցն իւր՝ զմահդասի Զմրուքն, և զծնօղսն իւր, հայրն՝ Նուրպէկին և զմայրն՝ Սուլթանփաշան, և զթոռներն՝ Սահակն և զԱբրահամն, և զեղբայրն՝ մահդասի Եսային, և զկենակիցն իւր՝ զԽաթունասին, և որդին մահդասի Ստեփանոսն, և զքեռքն իւր՝ Շահզատան և զԽանումն, և զմահդասի Այտինն և ամենայն արեան մերձաւորքն՝ կենդանիքն և հանգուցեալքն առ Քրիստոս։

Գ

612բ Արդ՝ ես նուաստ հողս Մկրտիչ, ծոյլս և անարժանս ի աստիճանաւորաց. և շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցի զսբ. կենսունակ մատեանս ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց նորին։ Գրեցաւ սա ի դառն և ի դիժար ժամանակիս, յորում հաքարացիքն բազմացեալ են և ազգի ազգի տանջան<շան>օք կու չարչարեն զմեզ։ Որ անցեալ ամին Սեյտի Ահմատ փաշան գնացեալ ի Ղօնեայ, որ թագաւորն իւրն վիճակ էր տուեալ, զոր քաղաքացիքն ոչ ընկալան. Գ (3) օր կռուեցան և բաղում արիւնհեղութիւն եղև, յետոյ գնաց ի Հալապ և անդ ևս ոչ թողին. մտան ի քաղաքն ղափանմիշ եղան մինչև Բ (2) ամիս և անդ բազում և անթիւ չարիս գործեաց, զոր ոչ կարեմ գրով արկանել։ Յետոյ եկաւ ի Թոփաք ԲՃՌ (200000) ղուռուշ առաւ և ապա գնաց։ Եւ այսպիսի նեղութիւնս կու կրեմք ի յանօրինաց. տէրն Քրիստոս զմեզ ազատեսցէ և զձեզ՝ յապագայիցն. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ մանկունք սբ. եկեղեցւոյ, որ հանդիպիք յայս մատենիս, յիշեցէք սրտի մտօք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զփցուն գրչակս Մկրտիչ սուտանուն շահանկալս և յանդգնութեանս իմոյ ոչ մեղադրել, զի յօժարութիւն և փափաք սրտիս մոռացումն եղև տկարութեանս։ Յիշեսջիք և զծնօղսն մեր՝ զՇիրինրն, և զՄարտիրոսն, և զՇու-

շանն և ամենայն ազգատոհմք, որք յուսով առ Քրիստոս են փոխեալ։ Եւ ես՝ Մկրտիչ անպիտան և անարժանս, որ գրչութեան չէի հմուտ և միտքս իմ հանապազ ի տատանման կայր սղալանաց և խոշորութեանն, անմեղադիր լերուք, զի բազում չարիք և նեղութիւն հասուցին մեզ և բազում անգամ խափանումն եղև դրելոյս։ Այլ և նոյն ինքն բարին Քրիստոս Աստուած, որ առատն է յամենայնի և կարող, ձեզ յիշողացըդ...։ Մանաւանդ զստացող դրոցս, զոր վերոյ ասացաք, զմահդասի Կիրակոսն։

Ստացող՝ մանտեսի Կիրակոս

Դ

612ա Արդ՝ աղաչեմ զձեզ, սրբասնեալ զասս քահանայից և ամենայն աստիճանաւորաց և աշխարհականաց, յիշել յաղաւթս ձեր զմահդասի Կիրակոսն, որ ստացայ զսբ. Յայսմաւուրքս և ոսկետուի Աւետարան մի և եդի յիշատակ ի Տաշնէրտիվէնու Ս. Ստեփաննոս եկեղեցին, ի վայելումն տէր Աստուածատուրին, որ բաղում աշխատանք ունի ի վերայ Յայսմաւուրացս, և տէր Մարտիրոսին, և տէր Սարգսին, տէր Կարապետին, և տէր Միքաելին։

Արդ՝ չունի իշխանութիւն՝ ոչ ազգականաց իմոց և ոչ օտարաց, ո՛չ
612բ եկեղեցականաց և ո՛չ այլոց, որ հանէ // զսոսա ի սբ. եկեղեցոյն՝ ծախելով կամ գրաւական դնելով, բայց միայն օրինակ տալոյն ոչ է այսմ կարգի։ Եւ եթէ ոք յանգգնի և հանէ զիմ յիշատակս՝ պատիժն Յուդայի, Աքար Զարմենի և զՍաուղ Կիսանի և զխաչահանուացն առցէ զպատիժն...։

1104

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 10692

Գրիչ՝ Ալէքսիանոս քահանայ

ա

207բ Զմեղօք մեռեալ Ալէքսիանոս քահանայ և ոչ ի գործոց յիշեսջիք ի Քրիստոս, զծնօղսն իմ և դուք յիշեալ լիջիք։ Գծագրեցի թվին Հայոց ՌՃ և Բ (1653)։

Բ

21բ Որչափ կար քո է բարձր սկսիր, ով եղբայր, և անարժան տառապեալ գծողս յիշեա, ով ուսումնասէր տէրտէր։ Գծագրեցի թվին Հայոց ՌՃ և Ե (1656)։

1105

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԳՀՄ, № 571, էջ 1039

Գրիչ՝ Վարդան Բաղիշեցի

Վայր՝ Ամիրդոլ

335ա Վերստին նորոգեալ եղև սբ. գիրքս, որ է Մեկնիչ տեսլեան սրբոյն Յոհաննու աւետարանչի և Լուծմունք դժուարիմաց բանիցն Եւագրեա հօրն

անապատի, ձեռամբ Յովանէս սարկաւագի, ի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն՝ Խանէսին և Նղաշին, և հանգուցեալ եղբաւրն՝ Խըլխաթին, ի դուռն Ամիրդօլու Ս. Յովանէսին։ Այլ և յիշել աղաչեմ զեղկելի Վարդանս, որ բաղում սատարութիւն ցուցի, զի աշակերտ իմ էր. և տէրն Քրիստոս ձեզ ողորմեսցի. ամէն։

Թվին Ռ.Ճ.Ե (1656) յամին[34], յորում բաղում անցք անցին ընդ մեզ յազգէն Մարաց, զի ռազմ եղեալ ընդ իրեարս, զմիմեանս սպանանէին և զմեզ յաւարի առնուին, զոր Հայրն ամենագութ հաշտեսցի ընդ մեզ և բարձցէ զվտանգ պատուհասին մաղթանօք ձերովք. ամէն։

1106

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մշեցի, II, № 542, էջ 566

Գրիչ՝ Զաքարիայ մալազ
Վայր՝ Երուսաղէմ

ա

3ա Քիլիսցի Զաքարիայն եդ յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ։

բ

74ա Զնուաստ և զաարակուսեալս ի տարաշխարհ, զտկարս մարմնով և զմեռեալս հոգւով, զապիկար և զանարհեստս գծողս, որ յետինս իմ ի կարգն և առաջին ի մեզաւորսն զՖրա Յուհանէս[35] յիշեցէք ի Քրիստոս. և որ յիշէքդ՝ յիշուիք։

գ

201ա Յիշատակ է ի սբ. Երուսաղէմ, թվին Ռ.Ճ.Ե (1656)։

դ

454բ ... յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մանաւանդ զգծող սորա զսուտանուն Զաքարիա մալազս. ամէն։

ե

476բ Զգծող մատենիս զպիտակ անուն Զաքարիայ զզառածեալս մեղօք, որ ըստ կարի իմում գրեցի զսայ ի սբ. Բեթղահէմ ի դուռն Ս. Ծնընդեանն Քրիստոսի այրին և մսրին, և է յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի վայելումն բանասիրաց մանկանց Նորոյս Սիովնի։ Բայց աղաչեմ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով միայն Հայր մեղայի արժանի առնել։

զ

300ա Քիլիսցի Զաքարիայն եդ յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, թվին Ռ.Ճ.Ե (1656)։

---

34 Այնուհետև երկու տող դատարկ։

35 Տպված է «զՖրյուհան»։ Հապավված ձևով կարդում ենք «Ֆրա Յուհանէս»

1107
ԳԻՐՔ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 572

Նորոգող՝ Վարդան Բաղիշեցի

464 Նորոգեալ եղև սբ. գիրքս բազում տաժանմամբ և յոլով աշխատութեամբ, կարկատելով և զեղծածն գրելով, ձեռամբ իմ՝ մեղապարտ Վարդանի[36], պիտակ անուն կրօնաւորի, ի վանքս Ամիրդոլու, ընդ հովանեաւ Յոհաննու Մկրտչին և այլ սրբոցս, ի թվին ՌՃԵ (1656)։ Յիշեցէք... ինձ և
465 ծնողաց իմոց Ղարիպին և Եղիային, և եղբարցն՝ Խո//շոյին և Խաչատուրին, և աշակերտիս Յոհաննէս սարկաւագին և տէր Գրիգոր քահանային, և ուսուցչին իմոյ՝ Խաչատուր քաջ և արի բարունապետին. և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

1108
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 574

Գրիչ՝ Նիկողայոս

Վայր՝ Կաֆայ

466 Փառք...։ Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկացող եղեալ այրս այս՝ ամենայն առաքինութեամբ զարդարեալ, խոճայ Կարապետն ետ գրել զսա, յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնողացն և իւր եղբարցն ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ. ի թուականութեանս ասքանազեան և յարեթական տումարի ՌՃԵ (1656), և ըստ նորումս շրջանի ԽԱ (41), և ի գալստենէ Կենարարին [ՌՈՄԶ] (1656), և ելիցն Ադամայ ի դրախտէն [ԻՂԱ] (7091)[37], ի հայրապետութեան տեառն Յակոբայ և յառաջնորդութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Գրիգորիս օրհնեալ քահանայապետի, զոր տէր Աստուած պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ։ Բայց գրեցաւ սա յաշխարհս Հոնաց և յերկիրս Ղրիմու, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զօրավարին և այլ բազ//մահաւաք սրբոց, ձեռամբ Նիկողայոսի ոմն անարժանի։

1109
ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան, № 6333

Նորոգող՝ Մակար Հեղեցի

58բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և տեսեալ մատանցս անարժան Մակարի, որ հանի ի յաւարտ զԳանձատեարս ի յոսլայելու և զեղծածս գրելու, ի թուականին Հայոց ՌՃԵ (1656), ի դրունս Ս. Կարա-

---

36 Իմա՛ Վարդան Բաղիշեցի։

37 Երկու դեպքում էլ ուղղանկյուն փակագծերում եղածն ավելացրել ենք մենք, հիմք ընդունելով բնագրում նշված արաբերեն թվերը, որոնք վերցրել ենք կլոր փակագծերում։

պետին, և Ս. Աթանագինէ հայրապետին, և Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, և Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և Ս. Յարութեան...։ Եւ ես անարգս՝ Մակար Հենեցիս զտկարութիւնն անձին մոռացեալ սկսայ և յաւարտ հանի կամաւք և ողորմութեամբ բարեգութիւն Աստուծոյ։ Եւ արդ՝ դիտելի է [զի] Գանձասարս գրեալ էր յեզր Բսղէշ քաղաքի, ի վանքն Գոմոց կոչեցեալ, առ դրունս Ս. Աստուածածնին և Ս. Գէորգայ զաւրավարին, ձեռամբ Կարապետ աբեղայի քարտուղարի իմաստնոյ։ և ի յառաջնորդութեան վանիցն առաքելաշնորհ արքեպիսկոպոս տեառն Թումայի, զոր տէր Աստուած ողորմեսցի իւր միւսանգամ գալուստն տէր Կարապետին և տէր Թումայ արքեպիսկոպոսին. ամէն։

1110
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մագիստրոս, № 305

279 Յիշատակ է գիրքս սրբազան առաքելոյն Պօղոսի մղտսի Փուշանեանին, որ ետ զայս գիրքս Բարսեղ վարդապետիս... Ռճե (1656) թուին Հայոց մեծաց։

1111
ԱՒԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, I, № 72

238 Վերջին ստացողք Ղարիպջան և կինն Նազլու, որ ետուն յիշատակ ի գիւղն Մանեիսոն, ի թուին Ռճե (1656), ի դուռն Ս. Խաչին։

1112
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մագիստրոս, № 6

Զարդարող՝ Մալխաս

21 Սաղմոս առեալ հալալ ընչի[ց]ս իւր, զարդարեցի արծաթաւ, անարժան ձեռօք արծաթագործ Մալխասին, Ս. Յակոբ, թիւն Հայոց Ռճե (1656), վասն յիշողութեան...։

1113
ԱՒԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, I, № 4

9 [Նորոգեցաւ] ի թվին Ռճե (1656), ի քաղաքին Պասրա, ծախիւք խոճայ Սարգսի։

1114
ԱԻԵՏԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, Man., № 4

Գրիչ՝ Մարկոս

ա

97 Յիշեցէք զստացող սորա զհեզահոգի Թաբոսն, և զիս տառապեալ Մարկոս գրիչս մի Հայր մերիւ։ Թվին ՌՃԵ (1656)։

Ստացող՝ Բաղտասար

բ

Յիշեցէք ի Քրիստոս զըստացող սբ. Աւետարանիս զ(Թաբոսն, և զծնօղսն իւր, և զիս զանարժան Բաղտասար գրիչս և զտ (sic)։

1115
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՅԶՄՎ, № 570

Գրիչ՝ Եզեկիէլ եպիսկոպոս

1036 Զսակաւ ծրող տառիս Եզեկիէլ եպիսկոպոս, նաև զստացող սորա Յոհան քահանայ յիշեցէք սբ. աղօթս ձեր, թվին ՌՃԵ (1656)։

1116
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՅԶՎՍ, II, № 273

Գրիչ՝ Ամիրաս Եզնկացի
Վայր՝ Տրապիզոն

ա

954 Վայ և եղուկ ինձ Ռ (1000) բերան, որ կորեալ եմ։ Թվին [Ռ]ՃԴ (1655) յունիսի ԻԵ (25) աւարտեցաւ։

բ

953 Փառք...։ Աւարտեցաւ գիրքս ձեռամբ տրուպ և անարժան, սուտանուն Ամիրասէ յԵզնկացոյ, ի յամի մարդեղութեանն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՈԵԵ (1655) և թորգոմեան թվական ՌՃԵ (1656), և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մահմատին, և ի կաթողիկոսութեանն տէր Յակոբին, Վաղարշապատ քաղաքին սբ. Էջմիածնաւ[ւ], և ի հայրապետութեանն սբ. Երուսաղէմաւ տէր Աստուածատուրին։ Գրեցաւ ի քաղաքն Պաւնտոս, զոր այժմ ասեն Տրապիզոն։

Ձեռքս երթա և գիրքս մնայ,
Եւ մարմինս ի հող դառնա,
Ես ալ մեղաւոր եղայ,
Դժոխոց դռան մատեցայ։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, թողութիւն խնդրեցէք վասն իմ մեղաւորիս...։

Յիշեսջիք զհայր իմ զմահտէսի Պալին, *և զմայրն իմ՝ մահտէսի* Նասպաքն, *և զևթն եղբայրքն ի[մ] հարազատ՝* զԱխինանն, *զմահտէսի* Աշրին, *զ*Եադուպն, *զ*Ատաք *պարոնն, զ*Տատուրն *և զ*Յուսէփն...[38]:

1117
ՄԱՇՏՈՑ
ՅՁՎՍ, III, № 407

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Սուրս

ա

499 *Աղաչեմ զձեզ...։ // Յանկացող եղեալ այս աստուածային տառիս մահդասի* Խաչատո[ւ]r *և ետ զծագրել զսայ ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգ[ւ]ոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց, հաւրն՝* Սարգսին *և մօրն, և կողակցին իւրոյ՝ զ*Խաւրկդէն, *և իւր դստերացն՝* Խանումին *և* Թորվանդին, *և փեսայ* Մարտիրոսին, *և իւր կողակցին՝* Թորվանդին, *և Աստուած անսասան պահէ զիւր զեռաբո[յ]ս որդիքն՝ զ*Յովսէփ, *զ*Սարգիսն, *զ*Թէոդորոս. *ամէն։*

Եւ ե[ւ]ս առաւել Աստուած ողորմի մահդասի Խաչատո[ւ]rին, *և իւր կողակցոյն՝* Խամբէկոյն, *և դստերացն՝* Խանումին, Թորվանդին, Մարտիրոսին *և ամենայն արեան մերձաւորաց...։*

Գրեցաւ սր. տառս որ կոչի Մաշթոց, ձեռամբս Պետրոս *գրչիս, ի թվին ՌՃԸ (1656), ի յերկիրս* Մոկաց, *ի գիւղն որ կոչի* Սուրս, *ի դուռն Ս. Յովաննու Մկրտ[չ]ին և Ս. Գէորգեայ զօրավարին։*

*Դարձեալ միոյ ողորմի արժանի արարէք զ*Պետրոս *սուտանուն գրիչս, և զկողակիցս, և զծնօղսն իմ՝ զտէր* Յակոբ *և զ*Թաւրէզն, *և զեղբարն՝ զտէր* Աբրահամ *և զմեր ննջեցեալքն...։*

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զէջ Խաչատուրն *և զեղբարքն իւր՝ զ*Մարտիրոսն *և զ*Յոհաննէս, *և զորդիքն իւր՝ զ*Յովաննէս, *զ*Գրիգորն *և զ*Մարտիրոսի *որդին՝ զ*Աւետիսն, *և զ*Յովհաննէս, *և զդեռաբոյս որդիքն՝ զ*Դիլուն *և զ*Սարխոշն *և զծնօղսն իւրեանց՝ զ*Աւետիսն *և զ*Զոնարն, *և զհօրեղբայրն իւր՝* Յովաննէս, *և զկին իւր՝ զ*Հանիզէն, *և զորդին իւր՝ զ*Դիլաքն *և Աստուած ողորմի ասացէք սոցա. ամէն...։*

Կրկին անգամ Աստուած ողորմի ասացէք զմահդասի Խաչատուրն, *զ*Դաւիթն, *զէջ* Խաչատուրն, *զ*Ակակոսն, *և* Զաքարէն, *և զտէր* Ներսէսն, *և զտէր* Յովանէս, *և զտէր* Յուսէփն, *որ կամեցան...*

Նվիրատու՝ մանդեսի Խաչատուր

բ

Ես՝ Խաչատուր *մահդասի տուի զ*Մաշտոցս *ընծայ* Գէորգեա[յ] *զօրավարին, ի գեաւղս որ կոչի* Արքենց: *Եթէ մերոց կամ յաւտարաց ծախէ կամ գրաւէ՝ նա մասն զՅուդային առցէ և զխաչանողացն. ամէն։*

---

[38] *բ-Հիշատակարանի ընդհանուր շարադրանքը տե՛ս 1657 թվականի շարքում, № 1162 գ Հիշատակարանում։*

1118
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՅԶԵԳ, V, № 1549

Գրիչ՝ Յոհաննէս Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

312 Փառք....։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ես՝ Հիզանցի Յովանէս, զոր ի վաղուց հետէ ցանկայի աստուածախաւս այսմ մարգարտաշար, լուսափթիթ սբ. Աւետարանիս, գրել յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, այլ և որդոց և դստերաց, զարմոց և զաւակաց և ամենայն արեանառու ազգ և ազանց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, կենդանեաց և ննջեցելոց, յիշատակ է ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբա[յ], ի վերա սբ. աստուածածնի գերեզմանին...։

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց Ռ և ՃԾ (1656) ամին, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբա[յ] առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, ի հայրապետութեան սբ. // տեղեացս
313 Աստուածատուր սբ. և առաքինի, քաջ և արի, աստուածաբան և ճգնազգեաց, երջանիկ վարդապետին։

Ի յայսմ ամի նենգաւոր ազգն Յունաց, պատրիարգն Երուսաղէմի, ի Ստամպոլ ծածուկ, ի թագաւորէն խատուշէրիֆ է հաներ, թէ յԵրուսաղէմ քաղաք Ս. Յակոբ բաղչաներով, Ս. Հրեշտակապետն Ս. Փրկիչն, Ս. Ծնունդ Գ (3) օտայն, որ վերա դռան, և դուռն այլ մերն է, հայեր զՕրով են առեր։ Եւ մեր հայրապետ Աստուածատուր վարդապետն երբ լսեց զայս բանս, հարցան ի դատաւորէն, թէ իրա՞ւ է այս բանս։ Դատաւորն հաներ էր գնոցա խատուշէրիֆի սուրաթն, կարդացեր, որ այնպէս էր եղեր։ Եւ լաւ իւր աշակերտօքն, որն որ ծովով և որն ցամաքով, տկար և ցաւալից անձամբ, լալով և հառաչելով գնաց ի Ստամպոլ, ի դատ առ թագաւորն։ Եւ ազգս Հայոց որ ի սբ. Երուսաղէմ կային սգով լցաք։ Եւ ինքն լալով և հառաչելով հայցէր, թէ «Ով հարք և եղբարք, մայրք և դստերք, հոգեւոր որդիք մեր ի Տէր, հայցեմք ի ձէնջ, զի զՍ. Աստուածածինն հանապազ ի Ս. Տնօրինականքն միջնորդ և բարեխօս առնէք, որ մեր բանն Աստուծով յաջողմամբ լինի, որ Հայոց վիճակն, որ Ռ (1000) տարի այլ աւելի մեր ձեռս է, հաստատէ և հաստատ մնա։

Զոր և գոհութիւն և փառք Աստուծոյ բիւր անգամ, որ Եղիազար վարդապետն, Աստուածատուր վարդապետի կամակցութեամբ և Հայոց մեծամեծ իշխանացն մտեալ էր առ թագաւորն և ծանուցեալ էր սիշիլ սուրաթով, որ մեր Հայոց է եղեալ ՌԳՃ (1300) տարով, կրկին հաստատեցաւ Աստուծով։ Եւ Եղիազար վարդապետն տեղապահ Աստուածատրոյ եկն ի սբ. Երուսաղէմ ի հայրապետութեան սբ. Էջմիածնա[յ] տեառն տէր Յակոբին, և Սրսայ Թորոս կաթուղիկոսին, և Աղթամարայ տէր Սահփանոս կաթողիկոսին, և ի թագաւորութեան այլասեռից սուլթան Մահմուտաղ խոնդքարին և մերոյս պարոնութեան խան Մահմուտին, ի դուռն և վշտաշատ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ այլազ-

գեաց, քանզի ևս քան զևս սասականայ բռնութիւնն և նեղութիւնն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, զոր յուսամք և խնդրեմք և հայցեմք ի յամէնառատ քաղցր կամք մարդասիրէն Աստուծոյ, որ վերըստին նորոգեսցէ, կանգնեսցէ և հաստատեսցէ զաթոռ և զգաւազան իշխանութեան հայրապետին մերոյ և զթագաւորին յառաջին սէր և ի միաբանութիւն, և աներկիւղ և անվնաս պահեսցէ զազգս Հայոց յամենայն հէնից և հնարից սատանայի, ի պէսպէս չարաց և փորձանաց՝ ներքս և արտաքոյ. ամէն։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, և հանդիպիք տեսութեամբ սբ. Աւետարանիս, կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և այլ և այլ խոշորութեանս և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երեսս ի գետնի դնելով, աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և յիշեցէք մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդերես անարժան դպիրս։

Արդ՝ փափաքող եղև ի սբ. մատենիս աստուածասէր և հաւատարիմ Մելքոն անուն քրիստոնեայն, որ ըստացաւ ըզսա ի հալալ արդեանցն, և եդ յիշատակ ի գիւղն Խասկալ, ի դուռն Սրբոյն Յակոբայ, իւր հոգւոն և իւր ծնողացն՝ Միրինանին, և մօրն՝ Ոսկուն, Մելքոնին, և մահտեսի Աւետին, և Վարդանին, Կարապետին, և Յովանէսին, Մաթէոսին և ամենայն արեան մերձաւորաց, զարմից և զաւակաց նոցին...։

Այլ և յետ Եղիազար վարդապետի գալուն յԵրուսաղէմ, Երուսաղիմայ հոռմի պատրիարգն կրկին գնաց ի Ստամպօլ և խոստացեալ զինչ խնդրէ թագաւորին, թէ այլի առնու։ Յանկարծ իւրեանց չար կամօք որ ունին, թուղթ կու գրեն առ իւրեանց թագաւորքն ի Մոսկով և յամենայն տեղիս, թէ «Ինչ կանէք ի Ստամպօլ մարդ չի կայ, ելէք եկէք ի վերա որ առնուք»։ Յանկարծակի ծովու վէզիրին ի դէպ կու գան, զթղթերն կու տեսնուն և առնուն բերեն առ թագաւորն, և ձայնեալ էր զհոռոմի պատրիարգն թագաւորն, թէ «Հան զքո մօհրն՝ տուր տեսնում». և տեսեալ էր այն մոհրովն էր թղթերն։ Յայն պահ կախել էր տուեր զպատրիարգն և որչափ իւր համախոհ կային։ Եւ Ը (8) օր կախ էր թողեալ, յետոյ իջուցեալ էին և կապեալ ի ձիոյ ագի և տարեալ այնպէս ի ծովն ձգած։ Եւ յԵրուսաղէմայ
314 // պատրիարգն շատ էին որոնեալ և ոչ էին գտեալ։ Յայսպիսի նենգաւորաց միջի կամք հանապազ, և դեռ զվերջն ոչ գիտեմք ինչպէս պիտի լինի, բայց յոյս Աստուածածին ունիմք, որ բարեխօսէ յիւր միածին Որդին, զի փրկեսցէ ի յերևելի և յաներևութ փորձանաց։

1119
ԱՒԵՏԱՐԱՆ
ՄՏԶԵՊ, VI, № 1965

Գրիչ՝ Վարդերես դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

543 Փառք...։ Գրեցաւ սբ. Յաւետարանս լաւ և ընտիր օրինակէ, ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգեայ, որ

այժմ ասի Սուլու Մանաստիր, ձեռամբ Վարդերես դպրի, թվին ՌՃԵ (1656)։

Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով։

1120
ՄԱՇՏՈՑ

ՄՅՋԵՊ, VIII, № 2452 (1656 թ. առաջ)

113 Ղարիպշին կին Նազուն յիշատակ երետ Մաշտոցս և նորընծա տէր, Նէրսէսին իւր հոգուն և իւր ննջեցելոցն. ամէն։

Գրեցաւ յիշատակս թվին ՌՃԵ (1656), զոր տէր Աստուածն մեր բարով վայելել տացէ. ամէն։

1121
ԹՈՒՂԹՔ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ ԵՒ ԱՅԼՆ

ՏԵՐԱՎՔ, № 473

Ստացող՝ Յովանէս երէց

ա

739 Արդ՝ և ես մեղաւոր և անարժան Յովանէս, որ միայն անբւամբս քահանայ և ոչ գործով, գրել տվի[39] զայս Ընթհանրական գիրքս, յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց, հաւրն իմ՝ Տաւութին և մաւրն իմ՝ Գաւզալին, և պապն իմ՝ Պարին, և հաւր պապն՝ Նադարին, և կողակիցն իմ՝ Սէվարին, որ տղա տիրովք փոխեցաւ առ Քրիստոս, և եղբարցն իմոց՝ Մէլքումին, Բաղումին, հանգուցեալ եղբարքն իմ՝ Աղան Յովանէսն, Շահնուարն, Դասբարն, և քորքն իմ՝ Աղիխանն, Լաբիխանն, որ փոխեցան առ Քրիստոս և ինձ մեղաւոր Յովանէս երիցոյս ջերմեռանն[դ] սրտիւ և ուղիղ հաւատով ի լի բերանով Աստուած ողորմի ասացէք։

Որ եռոյ վաղմ ի դուռն Ս. Աստուածածնի, ի վայելումն քահանայիցն ի սբ. բուրաստանէս, որ է Աւետարան, որ անունն Կենսաբեր կոչի, մէկ Ընթհանրական գիրքս, մէկ Յիսուս որդի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց. և եղբարց իմոց, և ազգականաց իմոց. հայրն իմ՝ Դաւութին և մօրն իմ՝ Գօզալին, և պապն իմ՝ Բաբին, իմ հօր բաբին՝ Նադարին, և իմ մօր ծնողացն՝ Միրաքին և Ուստիանէ, և զհօրեղբայրն իմ՝ Յակոբն, և զորդիքն՝ Յովանէսն, Մաթոսն, իւրեանց մեղաց թողութիւն խնդրեցէք...։

Դարձեալ յիշեցէք զտէր Յովանէսն, և զմեծ եղբայրն իմ՝ զՄէլքումն, և զամուսին իւր՝ Սէրվարն, և զորդին իւր՝ զտէր Դաւիթն, և զամուսին իւր՝ Վասվասն, և զորդին իւր՝ Աւետիքն, և հանգուցեալ Կարապետն, որդին՝ Դասպարն, զամուսին իւր՝ Սանդուխտն, և որդիքն իւր՝ Անդրիասն, Գրիգորն, Մէլքումն, դստերքն՝ Խանումաղայն, Սառայն, հանգուցեալ որդիքն՝ Գրիգորն, դստերքն՝ Աննայն, Մարին, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զտէր Յովանէսն, և զմիւս եղբայրն՝ Բաղումն և

[39] Ձեռագրի մի մասը ընդօրինակվել է ուրիշի կողմից 1624 թ.։ Այս հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Բ հատորում՝ 1624 թ. շարքում։

զամուսինն իւր՝ Նազազն, և զորդին՝ Յակոբն, և զամուսին իւր՝ Դիտամն,
710 և զորդիքն՝ Սանակն, Ոսկանն, և հանգուցեալ Ովասափն, և միւս ամու-
սին՝ // Սիպուհի, և զդուսարն՝ Մարամն, և զմիւս որդին՝ Սիմոնն, և
զամուսին՝ Նազլումն, և զորդիքն իւր՝ Աղայն, Բաղտասարն, և Բաղումին,
դստերացն՝ Հռիփսիմէն և հանգուցեալ Գուլաղէն, յիշեցէք... Եւ ես՝ տէր
Յովանէսս խնդրեմ ի Քրիստոսէ Աստուծոյ, որ զձեր և մեր մեղացն թո-
ղութիւն առնէ. ամէն...։

Գրիչ՝ Կիրակոս երէց

Բ

Եւ զգծող սորին Կիրակոս երէցս յիշեցէք ի Քրիստոս, ի թուականիս Հայոց ՌՃԵ (1656)։

1122
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

CBNMac, № 171

Վայր՝ Զախսոմ

91 ՌՃԵ (1656) թուին գրեցաւ կանոնքս, ի գիւղն որ կոչի Զախսոմ[40], ի դուռն Ս. Խաչին։

1123
ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1965 թ., Ը—Թ, № 227

ա

119 Յիշեցէք ի բարին ստացող սբ. Աւետարանիս Ամիրսասաքէնց խաւ-
ջայ Սաֆարն, և կողակիցն՝ իւր՝ Խանզատէն, և իւր որդին՝ Ըստեփանոսն,
և դստերքն իւր՝ Կատարինէն, Սալարխանումն, Մատիլինէն, հարսն իւր՝
Լէլէ, և որ կարդայ կամ օրինակէ, լի բերան ողորմի ասէ, և ինքն յիշեալ
լիցի ի Տեառնէ։ Կրկին անգամ յիշեցէք խօշայ Սաֆարն, և կողակիցն
իւր՝ Խանզատէն, և՝ անդրանիկ որդին իւր՝ Ըստեփանոսն, որ խոստացան
սբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց, ետուն վաղմ առ դրան Ս. Ըստե-
փանոսի, յիշատակ իւրն և իւր ծնողացն, և որ կարդայ լի բերանով ողոր-
մի ասէ, և իւր հոգւոյն Աստուած ողորմի գալստեան իւրում. ամէն։

Բ

Աւարտ եղև թուին ՌՃԵ (1656) և յիշատակ ետուն ի դուռն Ս. Ստե-
փանոսի, որոյ Տէր ողորմեսցի. ամէն։

1124
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՂԲԱՒԱ, Բ8

Գրիչ՝ Իգնատիոս
Վայր՝ Ցիպրահմեկ

51 Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ստացողի գրքիս՝
բարեպաշտոն տանուտէր Մկրտչին, և ծնողացն՝ Աստուածատուրին, և

[40] Արդյո՞ք Բագրևանդ գավառի Զաղոնք գյուղն է։

Կուլամին, և Սառային, և եղբարցն՝ Կիրակոսին, Ղազարին, Սուքիասին, Մարտիրոսին, Յունանին, Աւէտին, և կողակցացն՝ Մարգրտին, Կօզալին, Հօռոմին, Սալամին, և Ալմաստին և Յեային... և որդւոցն նոցին՝ Նազարին, Սիմէոնին, Աւէտին, Աստուածատուրին, Գրիգորին, Խաչատուրին, Աբրահամին, Սահակին, Յովսեփին, Յարութենին, Խլղաթին, և դստերաց նոցին՝ Վարդիսթունին, Խանաղին, Անանին, Եղիսին, Զիյմաթին, Թուրվանդին, Նուպարին, Տիպարին, Շուշանին, և Զմրութին, և Սառային, և Գայիանին, և ամենայն ազգականաց նոցին, ամէն. այլ և Իգնատիոսիս՝ յիշատակարանի գրողիս, և ծնողաց իմոց. ոյք յիշէք՝ յիշեալ լիցիք յարքայութեանն Աստուծոյ. ամէն։ Գրեցաւ ի թվին ՌՃԸ (1656), ի Յիպրահիմեկ։

1125
ՄԱՇՏՈՑ
ՑՁԹԱԻԱ, Ջ 71 (1364 թ.)

Նորոգող, կազմող՝ Մարտիրոս երէց

136 Արդ՝ վերըստին նորոգեցաւ գիրքս, որ կոչի Մաշտոց և կազմեցաւ ձեռամբ մեղսամած և անարժան Մարտիրոս երիցու, որ զանունս իմ ունիմ և զգործս ոչ. վա՜յ զիս Ռ (1000) բերան. թվին ՌՃԸ (1656)։

Դարձեալ ողորմի տէր Եղիային, զոր ետ զսա նորոգել յիշ[ա]տակ իւր։

1126
ՇԱՐԱԿՆՈՑ
ՑՁԱԲ, № 177

Գրիչ՝ Խաչատուր Լէնցի
Վայր՝ Անկիւրիա

ա

865 Զթափուրս ի բարեաց // և զփարթամս ի չարեաց, զեղկելի գրիչս՝ Խաչատուր Լէնցի, աղաչեմ [յիշել] ի Տէր և Աստուած յիշողացդ ողորմեսցի. ամէն։

Ստացող՝ աէր Ղազար և այլք

բ

Թվին ՌՃ և Ը (1656)-ին, ի հայրապետութեան սբ. էջմիածնա[յ]տեառն Յակոբ կաթողիկոսին, և առաջնորդութեան քաղաքիս Անկուրիոյ Թոխաթցի արհեպիսկոպոս Մինաս վարդապետին, և թագաւորութեան Իսմայելացոց սուլթան Մէ<մէ>մէտին, մեք՝ Ս. Քառասունք եկեղեցւոյ քահանայքս՝ տէր Ղազարս, տէր Գրիգորս, տէր Յարութիւնս, մեր առաջնորդի ջանիւքն գրել տուինք զայս Շարակնոցս, ի յաթոռն մեր Ս. Աստուածածնի վանքն, և յետոյ, աստուածասէր քրիստոնեայքն կամեցան վասն իւրեանց հոգւոյն և վասն իւրեանց ծնաւղացն յիշատակ գնել, որպէս ասէ մարգարէն, թէ. «Երանի որ ունիցիս։

1127
ՄԱՇՏՈՑ

Արծնեան, «ՀԱ», 1962 թ., էջ 40—42

Գրիչ՝ Աւետիս քահանայ
Վայր՝ Սրոսոռուտ

ա

Զսակաւ ծրողս և նկարիչ մրողս, և տառիս կաղմող, և ծաղկօղս Աւետիս *բազմամեղ քահանայ, յիշեա առ Քրիստոս, աւգնեա Տէր տկարիս, որ հասնիմ աւարտ Մ[ա]շտոցիս ողջմամբ։*

բ

Յիշեա ո՛վ եղբայր զփափուշկար Կիրակոսն, *և իւր եղբայր* Տօնապետն, *որ մէկ ձևիչ ետուն ինձ քօսալա քերելոյ համար։*

գ

Ա՜խ զինչ արարից, մեղքս բազում է և օրինակ դրոյս սխալ, ծուռ և անուանս կորսաիչ, հոգւոյս խիստ վնաս։

դ

Ա՜խ վայ մեղսաներկ գրչիս, որ շատ յոլով տեղէ տեղ փոխելոյս, միտքս շմորէ անկեալ, ոչ կարեմ ուղիղ գրել։

ե

Արդ՝ անկ ելեալ կատարեցաւ Եօթն *խորհուրդ եկեղեցւոյ և* Լէ *(37) կանոնս, որ է կարգաւորութիւն քրիստոնէութեանս, ձեռամբ անիմաստ և փծուն, մեղսամած և մեղսաներ[կ]* Բ Ց Ջ Ր Լ-ն[41] *յետնեալ ևեթ երիցուկ հիքէ։ Գրեցաւ սբ. տառս ի յերկիրս* Շամքոռայ, *ի գեօղս որ կոչի* Սրոսոռուա, *ի թուաբերութիւնս հայկազեան մեծ տումարի տասն հարիւր երկ յիսուն և հինգ (1656)*[42] *ամի եղև աւարտ այսմ տարի։ Եղև ցանկացող սբ. տառիս և ստացող սբ. Մաշտոցիս հեզահոգի բարեմիտ և նորաբողբոջ, դեռաբոյսիկ* Ներսէս *քահանայ, որ ստացաւ զսբ. գիրքս ի հալալ արդար վաստակոց, յիշատակ իւրն և իւր կենակցին՝* Սանդրխտոյն, *և ծնօղացն իւրոյ, հօրն՝* Ղազարին *և երկու կնոջն՝* Գուլաղին *և միւսոյն՝* Խանին: *Եւ դարձեալ յիշեցէք զտէր* Ներսէսի *եղբայրն՝ հարազատ և անդրանիկ* Սարուխանն, *որ ի սկսման տարւոջ Մաշտոցիս ինքն և իւր հայր* Ղազարն *փոխեցան առ Քրիստոս Աստուած։ Եւս յիշեցէք զ*Սարուխանի *ամուսինն՝* Փարին, *և զաւակաց սոցին՝* Թամուրին, *և քուերն՝* Գուլին, *և այլ եղբարցն՝* Ղարախանին, Միրզանին, Գրիգորին, Դաւթին, *և յետ սոցին փոքունց* Խաչատրին *և* Մարտիրոսին: *Դարձեալ յիշեցէք զտէր* Ներսէսի *քոյրքն՝ զմեծն* Գօզալն, Ղուքին, *և յետ սոցին* Մարիանն *և զ*Սառիկն, *և կրտսերն՝* Թանկազիզն: *Աստուած իւրեանքն անփորձ և անսասան պահեսցէ հոգւով և մարմնով։ Դարձեալ յիշեցէք զտէր* Ներսէսի

---

41 *Եղբայրագիր ծածկագիր է. կարդացվում է* Աւետին։

42 *Այսինքն՝ [(10×100)+(2×50)]+5+551։ «Գրեցաւ»-ից մինչև «(1656)», տե՛ս նաև* Ղ. Փիրղալեմյան, *Նշխարք, հտ. Ա, № 826, էջ 225բ, ձեռ. № 6273, էջ 568բ։*

հօրեղբայրն՝ Փանոսն, և հանգուցեալ կինն իւր՝ զՄարիանն, և որդոցն՝ Յովանէսն, Մարտիրոսն, Ծատուրն: Դարձեալ յիշեցէք Խանին, որ մի շատ ծողեր ետ վարձուց համար։ Աստուած զինքն ի բարին յիշէ։ Եւ յետ աստեացս կրկին յիշեցէք զտէր Ներսէսի մայր Խանին, և իւր ծնող հայր Մխիթար, և եղբարցն՝ Վէլիխանն, Առաքէլն և ամենայն ազգ և ընտանիքն յիշեալ լիցին ի Քրիստոս։ Դարձեալ և կրկին անգամ յիշեցէք զտէր Ներսէսն հանդերձ ազգականօք, ծնողօք, կենդանեօք և ննջեցելովք, ամենայնօք որ վերոյ գրեալ կան հաւասար. ամէն։ Դարձեալ յիշեցէք զտէր Ներսէսի ընկեր և ընկերակից, փառաւոր և փառահեղ, զմաքրամիտ, սրբասնունդ Յակոբ քահանայն, որ է տէր Ներսէսին հոգևոր հայր և եղբայր, համշիրակ և համախոհ. և ինձ գծողիս յոյժ սիրելի և Կարկառ գեղին աւագ քահանայ նա կոչի։ Աստուած ինքն մշակ առանց ամօթոյ արասցէ և յետ աստեացս յերկնից արքայութիւնն դասեսցէ։ Եւ զիս զյանկեալ գրծող Աւետիս բազմամեղ քահանայ յիշեա առ Քրիստոս հանդերձ ամուսնով, որ անուամբ Դշգիլի կոչի, նայև ծնող հայրն իմ՝ Առաքեալ քահանայ և մայրն իմ՝ Նազլուխան յիշեցէք...։ Եւ յիշեցէք զիմ յուսուցիչ տէր Մխիթարն և ընդ սմին զյուստայ Կիրակոսն, որ մէկ մամուլք շնորհեց մեզ. ամէն։

1128

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՍԱՑՒՈՅ

Վ. Թորգոմյան, «Բազմավէպ», 1923 թ., էջ 140

Գրիչ՝ Աբրահամ

ա

Գրեցաւ ի թուին Հայոց ՌՃ և Ե (1656) ամի, ձեռամբ անարժան և անիմաստ Աբրահամ մեղաւոր դրչի. ա՜խ վայ է ինձ։

Ստացող՝ Թումա

բ

Յամի հազարերորդի հարիւրորդի և հինգերորդի (1656) թուականութեանն Հայոց, ես անպիկար և ամենավարան Թուման, ի Գողթ գաւառէ և ի գեղջէն Վանատայ, անուամբ լոկով ընկալեալ զբանասիրացն յորջորշմունս, այլ ի համախումբ ընթացից նոցին բազմազան տարբերութեամբ տարակացեալ...։

Որովք մշտապէս հարեալ ի խղճէ, ոչ առնու ի սփոփանս աղէտից իմոց, ուստի ստացայ զհամեղաբան մանուածս, հոգէկիր նրբանքնին առն Աստուծոյ Գրիգորի Նիսացւոյն, գՅաղագս բնութեան և կազմութեան մարդոյս և Վասն կուսութեանս ևս...։ Եւ արդ՝ ցաւագին անձամբ և խոնաւուտ տեսարանօք, աղաչեմ զհամայն տեսօղսդ այս մատենի, յիշման առնել արժանի զամենապատիկ խոցոտեալս ի յոգի զԹումա բանի սպասաւորս...։ Եւ և մաղթեմ յիշատակել զիմսն, որ են ըստ մարմնոյ արեանառուք, զհայրն իմ՝ զՆուրիջան, հանդերձ մարբ, և զեղբարսն զհարազատ՝ զԳրիգոր, զԱրիստակէս և զՅակոբ, և զորդի եղբօր իմոյ զՍիմոն դեռաբոյսն, նաև զքոյրն մեր՝ զկրտսեր զԱնիկն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս ի Քրիստոս...։

1129
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

«Արձագանք», 1888 թ.

Գրիչ՝ Մարգար
Վայր՝ (Նոր) Ջուղայ

113 Պատմագիրքս յիշատակ է Յակոբ եպիսկոպոսին, ի վայելումն անձին իւրոյ։ Արդ՝ գրեցաւ սա ի թվականութեանս Հայոց ՌՃԵ (1656), և ի հայրապետութեանն տեառն Յակոբայ ի տոհմէն Ջուղայեցի, և ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, որդւոյն շահ Սէֆին, որդոյն մեծ շահ Ապասին, ի քաղաքն Շօշ որ է Սպահան, ի գիւղաքաղաքն Ջուղայ, և արհի եպիսկոպոսին մերոյ Դաւիթ վարդապետին։ Որք հանդիպիք սմա և կամ օրինակէք, յիշեցէք ստացող սորին հաւատարիմ ի Տէր վկայասէր և հետևողք բարեացն նախնեաց և հեզահոգի Յակոբ եպիսկոպոսն, ե զդպիր Մարգար գրիչս, ի տէր Յիսուս, որում վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն, որ է աւրհնեալ անդրաւ յաւիտենից. ամէն։

1130
ԱՒԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 356—357

Գրիչ, նվիրատու՝ Յովհաննէս
Վայր՝ Երուսաղէմ

... Դարձեալ Աստուած ողորմի ասացէք ստացողի սբ. Աւետարանիս Յովհաննէս գրչիս, որ ի թվին ՌՀԴ (1625) եկայք ի սբ. Երուսաղէմ և այսքան տարիս զվանաց ա[ւ]րհնութեան նամակներն կու դրէաք, որ յամենայն երկիր կու յուղարկեն ի մխիթարութեան պատճառս, կա՛ որ ողորմութիւն է յուղարկած, թէ հասաւ ձեր ողորմութիւն, և կա՛ որ յորդորանք և վասն սբ. տանս դատաստանի, որ զան յերկրպագութիւն լուսաբուղխ սբ. գերեզմանին և ամենայն սբ. տնօրինականացս Քրիստոսի։ Թվին ՌՃԵ (1656) աւարտեցի զսբ. Աւետարանս և եդի յիշատակ ի Ս. Ծնունդ ի Հայոց վիճակն՝ ի Աստուածածնայ եկեղեցին...։

1131
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ
Երևան, № 1296

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Շղզենի

ա

46ա Զեղկելի հողս, զանարժան գծողս, զանպիտան ծառայ Ղազարոս, աղաչեմ զձեզ յիշեցէք ի Տէր։

բ

364ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի գաւառն Սեբաստիոյ, ի գեստղն որ կոչի Շղզենի, ի դուռն Ս. Սարգսի և Ս. Արսենոսի, ի յառաջնորդութիւն Ս. Նշանի Մելքիսեթ վարդապետի, և ի հայրապետութիւն տեառն Յակոբայ և տէր Խաչատուրի: Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ քաղուածու գրքիս, յիշեսջիք յաղօթս ձեր զանարժան գծող սորա զՂազար սարկաւագն և զծնօղսն իմ՝ զԱւդուլ Պալին և զմայրն իմ՝ Շազատան, և զեղբարքն իմ՝ զՄինասն և զԽուամասն և զայլ ամենայն մերձաւորսն իմ։ Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Ռ և ՃԶ (1657), մարտ ամսոյ Թ (9)։ Յոյժ աղաչեմ զձեզ արտասուալից աչօք և սրտիւ հառաչմամբ, յիշեսջիք յաղօթս ձեր զՂազարն և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

1132
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 130

Գրիչ՝ Բարսեղ քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

178 Վայ քեզ Բարսեղ քահանայ... վայ ինձ հազար եղուկ ու վայ ինձ...

բ

179 Զանարժան գրիչս Բարսեղ երեցս յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

գ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականէս Հայոց ՌՃԶ (1657) ամին, մեհեկի ԻԴ (24) և ապրիլի ԻԹ (29), ձեռամբ սուտանուն

Բարսեղ քահանայիս, անիմաստ և տխմար գրչի... ի գիւղաքաղաքիս Ջուղայու, ընդ հովանեաւ Ս. Յովանիսի, ի հայրապետութեան տեառն մերոյ Յակոբի, երից[ս]երանեալ հայրապետի, և ի վերատեսչութեան նահանգիստ ընդհանուր Պարսկաստանի, հեզահոգի արհեպիսկոպոսի և շնորհաբաշխ տեառն Դաւթի, որ է բնիկ քաղաքիս մերոյ Ջուղայու, և ի թագաւորութեան Պարսից շահ Աբասուն:

Եւ արդ՝ որք ճաշակէք աստուածային բուրաստանէս... յիշեսջիք յաղօթս ձեր Բարսեղ քահանայիս, և ղծնողքն իմ՝ զՍարուկն, և զՍաթոումն, և սնուցիչն իմ՝ Բօղչիկն, և եղբարքն իմ՝ զԱփկարն և զԴազարն, և քեռքն իմ՝ զՄախտումփաշէն և Յիշխանն, և կողակիցն իմ՝ զԴշխունն, որ է հանգուցեալ առ Քրիստոս, և լի բերանով յիշեցէք, և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն նորա. ամէն։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զգծողս սորին Բարսեղ քահանայն, և զհոգևոր հայրն իմ՝ զտէր Յակոբն, և եղբայրն իմ՝ զտէր Պետրոսն և զտէր Կիրակոսն, որ բազում աշխատեցայ և ուսուցի զգրագրութիւն, և Աստուած անփորձ պահեսցէ զնոսա ի չարէ. ամէն։ Ո՜հ, ո՜հ, ո՜հ հազար բերան...։

Ստացող՝ Յովասափ

Դ

Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս ի դուռն Ս. Բեթղեհէմ, և ըստացաւ զսա Յովասափն ի հալալ ընչից իւրոց և ետուր զսա յիշատակ իւր և իւր ծնողացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՅովասափն, և իմ ծնողքն՝ զչինաքաշ Գալուցն, և կողակիցն իւր՝ Եղիսաբեթն, և հայրն իմ՝ զՅովասափն, և նորին կողակիցն իւր՝ Ազիզն, և որդին իւր՝ հանգուցեալ Սաքլրդմիշն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէրոնն, և նորին կողակիցն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳալուցն, և զնորին որդին՝ Էվազն և կողակիցն իւր՝ Մարիամն, և որդին իւր՝ Աղազալուցն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳալուցն, և որդին իւր՝ Առաքելն, և կողակիցն իւր՝ Թիրվանդն, և նորին որդին՝ Իսրայէլն, և դուստրն իւր՝ Նանին. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳալուցն, և կողակիցն իւր՝ Թիլիկն, և դուստրն իւր՝ Գիշխունն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳալուցն, և իւր կողակիցն՝ Աղսաքերն, և իւր դուստր Դիշխունը, Ուսաիանէն, Մարիամն, Խոռասիմին, Ազիզն, Վարդէրն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զստացող սորա զՅովասափն, և <իմ> կողակիցն իմ՝ Վասվառն, յիշեցէք...։ Զգծող սորին Բարսեղ քահանայն յիշեցէք...։

Ե

178 Ես՝ Յովասափս ծառայ Քրիստոսի, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իմոց և ետու զսա յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, և ես ծառայ Մաթէոս աւետարանչին. ամէն։ Ո՜հ, ո՜հ, ո՜հ հազար բերան վայ քեզ, ով գերի թշուառական, վայ քեզ...։

1133
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Մշեվ, VII, № 2273

Գրիչ՝ Գրիգոր երէց

367 *Գրեցաւ և աւարտեցաւ ոսկիազարդ և ծաղկափթիթ տետրս Խորհրդեան, ի մայիս ամսոյ ԺԸ (18)-ին, ի խնդրոյ երիցս երանելւ և երջանիկ հայրապետի և սրբազան կաթողիկոսի՝ տեառն տէր Պետրոսի, վերադիտողի սրբոյ յաթոռոյն Գանձասարայ, որ և ետ ձեռն և զարդարեալ պայծառացոյց և վայելչացոյց հաստատ կարգաւորութեամբ, և եղև երկրորդ լուսաւորիչ տանս Աղուանից, որո[յ] տէրն փառաց Աստուածն ամենայնի լուսաւորեսցէ զհոգի և զմարմին նորա...։*

Արդ՝ և ես նաստս և յետնեալս ամենայնէ՝ Գրիգոր *բազմամեղ էրէցս գրեցի և ծաղկեցի զսա բազում աշխատութեամբ, ի թվականութեանս Հայոց ՌՃ և Զ (1657) ամին. իսկ ոչ թէ վասն ինչ իրաց և վարձու աշխատեցա, այլ վասն հայրական գթոյն և խնամոցն, զոր ունի առ անարժան ծառայս իւր։ Վասն որոյ երես անկեալ աղաչեմ զդասդ կարգաւորութեան ձերոյ, բոլոր սրտիւ երկար կեանք խնդրել ի Աստուծոյ զվերոզրեալ հօրն մեծի...։*

1134
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Զմմառ, № 445

Գրիչ՝ Մելքոն
Վայր՝ Վենետիկ

ա

41 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրքս ի քաղաքն Լաթենացո[ց], որ կոչի* Վենետիկ, *սբ. նշխարացն Մարկոսի և այլ բազում սրբոց։ Եւ թվականիս Հայոց ՌՃԶ (1657), մայիսի ամսուն ԺԸ (18)։ Ի ձեռամբ...* Զուղայեցի Մելքոն[ի]ս։ *Խնդրեմ զչէնչ յիշեցէ[ք] ի Քրիստոս զուսուցիչն իմ՝ զտէր* Սիմէոն, *զծնողս իմ զՊոզոսն, զմայր իմ զԼարիկն, որ բազում աշխատութեամբ սնուցին, և փոխարէնն ընկալցեն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Եւ զհայրապետութիւնն տեառն* Յակոբ *կաթողիկոսին։*

բ

Յիշեցէք ի Քրիստոս զՁուղայեցի զՄելքոնս, *գրչիս. ամէն։*

1135
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Տեղմվ, № 88, էջ 355

Գրիչ, ստացող՝ Ամիրաս Երզնկացի
Վայր՝ Տրապիզոն

ա

22բ *Զայս Երազահան գիրքս ի եաղլովցացի տէր* Յակոբին *գրքէն գրեցի*

ես՝ Երզնկացի *անարժան, սուտանուն* Ամիրասիս, *ի թվականութեանն Հայոց ազգին ՌԶԷ (1638), մայիսի Ժ (10), Պենտակոստէի շաբաթն, օրն ուրբաթ, ի դուռն Ս. Աստուածածնին, ի քաղաքն* Պոնտոս, *որ է* Տրապիզ[ո]ն. *աւարտեցաւ տեսրս։*

Բ

3ա Վազարշապատու *կաթողիկոսքն ես՝* Երզնկացի Ամիրասիս, *որ ականայտես եղէ՝ նախ* Դաւիթ *կաթողիկոս և ապայ տէր* Մելքիսէթն, *որ շահ* Ապասն *չարչարանք արաւ, մէկն այս է՝ ուրաքով զերկու բէճն տաշեց որպէս զփայտ. յետոյ յաջորդեց տէր* Սովսէս, *տէր* Փիլիպոսն *և տէր* Յակոբն՝ *ՌՃԴ (1655) թիւն էր։*

Գ

34բ *Փառք...։ Արդ՝ գրեցաւ դիրքս ձեռամբ տրուպ սուտանուն* Ամիրասէ *ի* Երզնկացոյ, *ի յամի մարդեղութեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՈՒԴ (1644) և Հայոց մեծաց թվական ՌԴԴ (1645), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան* Իպրահիմին *և ի կաթողիկոսութեան Հայոց տէր* Փիլիպոսին Վազարշապատ *քաղաքին, և հայրապետութեան տէր* Աւետիս *եպիսկոպոսին ի* Պոնտոս *քաղաքին, որ է* Տրապիզոն։

Զեռքս երթայ և դիրս մնայ,
Եւ մարմինս ի հող կու դառնայ...։

Դ

139ա *Զեռքս երթայ և գիրս մնայ,*
Եւ մարմինս ի հող կու դառնայ.
. . . . . ։

Արդ՝ աւարտեցաւ այս դիրքս ի թուականութեանն Հայոց ՌՃ և Զ (1657), յուլիսի մէկն. և ի հայրապետութեանն Հայոց Վաղարշապատ *քաղաքին սբ.* Էջմիածնայ *տեառն* Յակոբայ *կաթողիկոսին և ի հայրապետութեանն սբ.* Երուսաղէմայ *տէր* Աստուածատուրին, *և թագաւորութեանն Տաճկաց սուլթան* Մահմատին։ *Եւ որ գրեցաւ այս ձեռամբ սուտ և անպիտան անուն* Ամիրասէ Երզնկացոյ *ի* Տրապիզոն, *ի վայելումն իւր ծաղկեալ որդոցն՝* Մալիսասին *և* Պալէ, Թառուկին *և* Վարդանին *և* Մանուկին, *և թոռանցս՝* Ազարիային *և* Ասլանին. *Աստուած բարով վայելել տացէ. ամմէն։*

Դարձեալ աղաչեմ զզձեզ. ո՛վ հայրք և եղբայրք, որք հանդիպիք սմայ կարդալով և կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զնուաստ Ամիրասիս Երզնկեցի *և զծնաւղսն իմ՝ զմահտեսի* Պալին՝ *զհայրն իմ և մահտեսի* Նասպաթն՝ *զմայրն իմ, և զննջեցեալ հարազատ եղբարք իմ, որ էաք է (7)՝* Աւինանն *և մահտեսի* Աշրին, *ես որ դրեցի՝* Ամիրասիս, Եազուպն *և* Պարոնն, Տատուրն *և* Յովսէփն, *և զամենայն արեան մերձաւորքն մեր. և զվարպետն իմ՝ զտէր* Ղազարն, *և դուք յիշեալ լիցիք ի Տեառնէ...։*

1136
ՇԱՐԱԿՆՈՑ
Մշեղ., V, № 1535

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Հալապ

291 *Փառք..., որ կարողութեամբն Աստուծոյ սկսայ և շնորհիւ նորին աւարտեցի գիրքս այս, որ կոչի Զայնքաղ, ի լաւ և ի ընտիր օրինակէ Խլկցի, ձեռամբ* Աստուածատուր *քահանայի, ի մայրաքաղաքն ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս, ի հայրապետութեան տանն* Կիլիկիոյ *նորընծայ* Խաչատուր *կաթողիկոսին, և ի առաջնորդութեան մայրաքաղաքիս* Խաչատուր *վարդապետին. և ի թուականութեանս մերո[յ] ՌՃԶ (1657) ամին, ի յուլիս ամսոյ ի ԺԳ (13) եղև յաւարտումն դրոյս։ Ի վայելումն սորին տէր* Ովանէս *աւագ իրիցին, որ բաղում փափագանաւք ետ գրել վասն իւրոյ անձին, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ...։*

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ լոյս երամք մանկունք սբ. եկեղեցւոյ, թէ ժամ ասելով, թէ հարցատես անելով կամ օրինակ տանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԱստուածատուր *գրչիկս և դուք յիշեալ լիջիք ի միասանգամ զալստեանն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք մեր վարպետին՝ Ստեփանոս *սարկաւագին, որ բաղում աշխատութիւն ունի ի վերա անարժանիս, զոր և երկնաւոր վարդապետն իւրեան վարձահատու[ց] լիցի. ամէն։ Այլ և լաւ պահողն և խնամք տանողն գրքիս՝ զվարձն ի Քրիստոսէ առցէ. ամէն։*

1137
ԱԻԵՏԱՐԱՆ
Մինչ., № 155

Գրիչ՝ Ազարիայ Ջուղայեցի
Վայր՝ Ղարասու, Կաֆայ

ա

67 *Փառք...։ Եւ արդ՝ ես սուտանուն և փծուն գրչակս* Ազարիայ Ջուղա[յե]ցի *սկսա սբ. Աւետարանս ի Ղրիմ քաղաքի* Ղարասուն, *և կատարեալ եղև ի դուռն Ս. Սարգսին* Կաֆայու, *ի լցումն ըստ կրկնակի շրջանաշափութեան և մակքառեակ հնգիւ կրկնեալ և երկու թուոյ յարամազեանս (1657)*[1], *յամսեանն հոռմայեցւոց յուլիսի քսան և եւթներորդի։ Ի Քրիստոսէ մինչև ցայժմ երեսուն և երկու յոբելեան, և դարձեալ մակ քառեակ հնգիւ կրկնեալ և Ե (5) թիւ աւելորդութեան*[2], *և ի դիտապետութեան Հայոց հանուրց սեռի տեառն* Յակոբայ *երիցս երանեալ սրբազան կաթողիկոսի։ Եւ է բնիկ սա քաղաքաւ՝, որ երկու ամ է նստեալ յաթոռ հայրապետութեան։*

---

[1] *Այսինքն՝ (2×532)+[(2×4)×5]+2 551։*

[2] *Այսինքն՝ (32×50)+[(2×4)×5]+5=1645։ Սխալ է. Ե-ի փոխարեն պետք է լինի ԺԷ (17), այս դեպքում կստանանք 1657, այսպես՝ 1600 (=32×50)+40 (=2×4×5)+17։*

[3] *Իմա՝ Նոր Ջուղա։*

Արդ՝ ես թաղեալ մտաւք և թափուրս աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. քահանայք, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ գաղափար առնել[ով], բառնայք ի սմանէ զսխալութիւնն և անմեղադիր լերուք զխոշորագրոյս, զի կարն մեր այսչափ է և ոչ աւելի։ Յիշեսջիք զմաքրափայլ յաղօթս ձեր զմարմնաւոր ծնաւղսն իմ՝ զտէր Մկրտիչն և զԵզտիխասն, և զհոգևոր հայրն իմ և եղբայր զՎարապետ խոհեմ վարդապետն, և զտէր Յովանն, և զԳրիգորն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և զքոյրն՝ զԳուլումն, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Թվականիս ՌՃԶ (1657)։

Բ

Զմեղսամած փծուն գրչակ, սուտանուն Ազարիայ *դպիրս* Ջուղա[յե]ցի *յիշել մաղթեմ զձեզ։ Թվին ՌՃԶ (1657) ամին գրեցի։*

Գ

Արդ՝ և ես յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զՎարդանն, *որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և իւր ծնողացն՝* Հովադեղին, *և մօրն՝* Գուլինին, *և պապուն իւրոյ՝* Մէլքոնին, *և պապ* Շեխեկին, *և պապ* Մարտիրոսին, *և՝ իւր յորդոցն՝* Միրիջանին, Սարգսին, Խաչատուրին, Հովադեղին, Կիրակոսին, *և իւր որդոյն՝* Յովանիսին, Մարտիրոսին, *և* Յովանիսի *որդոցն՝* Շեխիկին, Ախիջանին, Շանիջանին, *և* Մարտիրոսի *որդոցն՝* Աթանիսին, Սարուխանին, Ամիրխանին, *և* Մարտիրոսի *կողակցին՝* Եսթրին: *Դարձեալ յիշեցէք* զՎարդանն, *և իւր կողակիցն՝* Զառիկն, *և որդոյն իւրոյ՝ դեռաբողջոջ* Աւետիքն, *Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, և հանգուցեալ առ Քրիստոս* զՀանէսն, Հազարն, Ղազիխանն, Մէլքոնն. *և դստերքն՝* Մարիամն, Դիխունն: *Կրկին անգամ յիշեցէք* զՎարդանն, *և զհանգուցեալ եղբայրն իւր՝* Միրիջանն, *և զկողակիցն իւր՝* Եղ[իսաբեթն?] ///

Դ

Ծաղկող՝ Յովհաննէս սարկաւագ

Յիշեսջիք զծաղկող սորա զՂարասուրցի Յովհաննէս *սարկաւագն։*

1138

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան, № 7148

Գրիչ՝ Գրիգոր

153բ *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Աղաւթամատուցս ի թվին ՌՃ և Զ (1657), աւգոստոս ամսոյն ԺԸ (18), աւրն երեքշաբթի, կամաւն Աստուծոյ. ամէն։ Ձեռամբն մեղաւոր և անարժան հողու հաւասար գրիչս* Գրիգոր *պատանուս։*

154ա *Եւ որք հանդիպիք ի սմայ ուսմամբ // կամ աւրինակելով, յիշեսցիք ի մաքրափայլ աղօթս ձեր* զԳրիգոր *գրիչս և զհայրն իմ՝* Յովանէս, *և զմայրն իմ՝* Անեայ, *և զեղբայրքն իմ, և զվարպետն իմ՝* զԽաչիք, *և զայլ ամենայն բարեկամքն. և Աստուած զձեզ յիշէ իւր առատ ողորմութեամբն...։*

1139
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՅԶՄՎ, № 358

Գրիչ՝ Աբրահամ երէց
Վայր՝ Հալապ

811 *Փառք..., որ եւ կարողութիւն տկար ոգոյ նուաստ և անարժան ծառայիս Աստուծոյ* Աբրահամ *երիցու հասանել աւարտ Շարակնոցիս, որ է ստոյգ և ընտիր աւրինակէ։ Վասն որոյ ցանկացաւղ եղև սմայ հոգևոր որդին իմ՝* Պակիճան *կոչեցեալ աշակերտն իմ, և եւ գրել զսայ հալալ արդեանցն և ընտիր վաստակոց իւրոց։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զստացող սորայ զ*Պակիճան, *որ եռափափաք սրտով եւ գծագրել զսայ։ Եւ ես՝ նուաստ և յետինս ի քահանայից* Աբրահամ *երէցս տեսի զյաւժարութիւն սորա և ձեռն արկեալ Աստուծոյ աներևոյթ զաւրութեամբն և կատարեցի կարողութեամբ նորին։ Այլ և ողորմի ասացէք ծնողաց սորին, հաւրն՝* Մուրատին, *մօրն՝* Հաւասին, *և մեծ հօրն՝* Աստուածատուրին, *և կողակցոյն՝* Մարթային, *և միւս մեծ հօրն՝ մահտեսի* ՇաՀրիարին, *և իւր կողակցոյն՝ մահտեսի* Զմրուխին, *և եղբօր* Պակիճանին, Յովսեփսին։ *Արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքս* Իբեհրայ *որ կոչի* Հալապ, *ի գուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացն, և այլ սբ. եկեղեցեացն, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց, ի կաթուղիկոսութեան տանն* Կիլիկոյ *տէր* Խաչատուր *ռաբունապետի, և առաջնորդութեան* Խաչատուր *վարդապետի* Սեբաստացւոյ, *և ի կաթուղիկոսութեան* Էջմիածնայ *տէր* Յակոբ *վարդապետի, ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան* Մահմատին։ *Արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657) ամի և աւարտեցաւ օգոստ[ոս]ի ԻԲ (22)։ Արդ՝ որք տեսանելով զսա, կարդալով կամ օրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ դրեալ զստացող սորա զ*Պակիճանն, *և զհայրն, և զմայրն, և զամենայն արեան մերձաւորքն. ամէն։*

1140
ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԱՑԻՈՑ
Երևան, № 457

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Թոխաթ

324 ա *Փառք...*

Յամին Հայոց մեծ թվականի,
Լցեալ ՌՃ վեցի (1657),
Աւարտեցաւ սեպտեմբերի,
Քանիքարուքց ԺԳ (13)-ի։
Շնորհիւ Տեառն ըսկսեցի,
Ողորմութեամբն աւարտեցի,
Զմուֆրատաթրս գովելի,
Ըստուգաբան և ճշմարտի։
Ջեռամբ ումեմն անարժանի,

Եւ պարտական բիւր քանքարի,
Ոտից ձեր կոխ հող և փոշի,
Տէր Յովանէսն անյիշելի։
Եւ է գիրքս սոյս պիտանի,
Բժշկութեան ցօց հարկի,
Ի վայելումն Արզումանի,
Որ և բժիշկ ինքն անուանի։
324բ Գրեցաւ սայ ի Թոխաթի,
Ընդ հովանեաւ Ս. Մինասի,
Խնամող պահողն ըզսայ՝ աւրհնի,
Եւ ընդ սրբոցն դասեսցի։
Աստուած տացէ վարձս բարի,
Ստացող սորայ Արզումանի
Եւ ողորմիս մեզ ասողին,
Տէրն իւրեանց ողորմեսցի. ամէն։

1141

ՇԱՂԿԱՊՔ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ ՊՐՈԿՂԻ

Երևան, № 1832

Գրիչ՝ Կարապետ Անդրիանացի
Վայր՝ Յուշի

158բ Յաղամային թուին 8 և Զ-երորդի Զ և է (6787)-երորդի ։ ի թուին Քրիստոսի Ռ և Ո և ԾԸ (1658)-երորդի, և ի Հռոմայեցւոց ամսոյ նոյեմբերի երկրորդի, և Հայոց թուականի Ռ և Ճ-երորդի և է (1657)-երորդի, և ի նաւասարդւոյ ամսոյ Ի-երորդի և Ե (25)-երորդի[4] ստորագրեցաւ մատամբըք նժդեհ Կարապետի բանի սպասաւորի Անդրիանացւոյ, որդւոյ Յովհաննէսի քահանայի Կարնցւոյ, որդւոյ Առաքելոյ, որդնոյ[5], յերկրիս Արարատայ, ի գաւառիս ցԱրագածոտան, նահանգիս Կարբւոյ, ի վայելուչ վանս, որ կոչի Յուշւոյ Ս. Սարդիս, ընդ հովանեաւ սրբէաճեմ և <և> քրօբէազարդ տաճարիս Աստուածածնի. և յաջակողման եկեղեցւոյն, ուր դամբարան է վերոգրեալ սրբոյն. և ձախակողմն կամարակապ և զարմանալի սբ. մատռանն։

Դիտապետութեան ուխտիս տեառն Ոսկանի ամէնիմաստ բաբունապետի Երևանցւոյ և թարգմանչի, որ ըստ դաղմատականին և աշակերտաց սորին՝ վերոգրեալ Կարապետի և տէր Մկրտչի կուսակրօն քահանայի, և սարկաւագացն՝ Յոհաննու և Դաւթի, և հոգաբարձութիւն տեղւոյս ըստ մարմնաւոր գործոց Կարապետի Կարբցւոյ կուրի և ծերագոյն տնտեսին խոհարարի։

---

[4] Հայոց Ռ-ից թվականը սկսվում է 1657 թ. հոկտեմբերի 8-ին (հուլյան տոմար), իսկ հայոց Ռ-ից թվի նավասարդի 25-ը կլինի 1657 թ. նոյեմբերի 2-ին, այստեղից էլ այս հիշատակարանը դրեցինք 1657 թ. շարքում։

[5] Անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

Արդ՝ տեարք իմ սուրբք և ծառայակիցք ի Քրիստոս, մինչ ընթեռնոյք զդիրս կամ օրինակէք, դիս զտառապեալ Կարապետս յիշեցէք ի Քրիստոս։

1142
ՇԱՐԱԿՆՈՑ
Կամենից, էջ 192

Գրիչ՝ Նիկոլ երէց
Վայր՝ Զամոսշչայ

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ Շարակնոցս ի յաշխարհս Իլախաց՝ Զամոշչայ, ի թվին ՌՃԶ (1657), նոյեմբերի Թ (9), օրն երկուշաբթի[6]։ Բայց գրեցաւ ձեռամբ թերավարժ ձաբրտող նօտրիս գրչի, հողս մեղապարտ Նիկոլ երէց կոչեցեալ անուամբ և ոչ գործով, ի կարգ քրիստոնէութեամբ. անպարապ անձամբ ձեռնարկեցի. և ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն տէր Յակոբին, և յառաջնորդութեանն արհի եպիսկոպոսին տէր Նիկողայոսին Թորոսովից, և ի թագաւորութեան գրուլ Քաժմիրին, և իշխանութեանն Զամոշչայ քաղքի Եան Զամոսմիյ։ Գրեցաւ ի դուռն սբ. Ննջման Ս. Աստուածածնի և այլ սրբոց, և սպասաւոր սբ. եկեղեցւոյս ժամանակիս մեղսաքաւիչ քահանայից, աշխատաւոր և ծերացեալ ալեօք ՂԴ (94) ամեայ տէր Յակոբ քահանայի, և միւս այլ տէր Յովհաննէս պատուական քահանայի, որ է որդի Քրիստոսատուրի Կաֆայի քաղաքի։ Նաև թէ արժանի համարիք զտկարս անարժան և զփծուն գրիչ Նիկոլ երէց ցաւակցաբար յիշել ի սբ. և ի փառաւոր յատեան. երես անկեալ կու խնդրեմ զդաղափարողսդ, որ մեղադիր չինիք նօտրիս, զի ծերացեալ ալեօք գծագրեցի Կ (60) ամեայ գոլով. աչքս ի լուսոյ էր պակասեալ և զգայարանքս ի յուժոյ. կ'աղաչեմ որ անպարսաւ թողուք, և զմեզ յիշէք յերկնաբացիկ աղօթս ձեր, և զծնողս իմ՝ Մուրատն և զմայրն իմ՝ Եաճուտն, և զիրիցկինս իմ հանգուցեալ Մարիամ։

1143
ՍԱՂՄՈՍ ՏԱՂԱՋԱՓԵԱԼ
Մեջեպ, հ. IX, էջ 504

Գրիչ՝ Զաքարիա

495 Արդ գրեցաւ ձայնաւոր Սաղմոսարանս ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657) ամին, նոյեմբերի ամսուն ԺԷ (17), օրն երեքշաբթի, ձեռամբն խոճայ Մսբրշանին երրորդ որդուն, նաստ Զաքարիայիս, որ գրեցի ի վայելումն աղայիս՝ խոճայ Մսբրշանին, չէլէպոցս՝ Պէկի չէլէպուն, Պէկլէր չէլէպուն, Եղիայ չէլէպուն, Յակոբ չէլէպուն։ Հայցեմք եւ խնդրեմք յԱստուծոյ, որ բարով վայելել տացէ մեզ եւ որդոց մերոց մինչեւ ի խորին ծերութիւն, ամէն։

Արդ աղաչեմ զձեզ, ով հայրք եւ եղբայրք, որ հանդիպիք ի սայ կարդալով եւ կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, զուսուցիչս իմ ըզՊէկլէր չէլէպիս, որ բազում աշխատանք ունի ի վերայ իմ,

[6] Իրոք, 1657 թ. նոյեմբերի 9-ը երկուշաբթի է, իսկ 1656 թ. միևնույն ամսաթիվը՝ կիրակի։

զոր տէր Աստուած առողջ կենաւք պահէ զինքն մինչեւ ի խորին ծերութիւն։ Եւ զիս նուաստ Զաքարիաս միոյ հայր մեղաի արժանի արարէք, եւ զուք յիշեալ լիցիք ահեղ յատենին Քրիստոսի որ ասէ. Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ ժառանգեցէք զանըսպառ ուրախութիւն, ամէն։

1144

ԽՐԱՏՔ ԽԻԿԱՐԱՑ

Ն. Քարամյանց, «Հազմավէպ», 1886 թ., № 53

Գրիչ՝ Պետրոս

ա

189 Եղբայր, պատմութիւն ոչ գրեցաք, զի օրինակ ոչ գոյր։

Այս է խրատ իմաստասիրի

Բ

Որոյ անուն Խիկար կոչի,
Սա էր դպիր մեծ արքայի,
Որ Սենեքերիմ անուն կոչի,
Բանըս այս է իմանալի,
Բազում մարդոյ օգուտ լինի,
Գրող խրատուս պարզաբանի,
Պետրոս որդի Բարախամի:

... Գրեցաւ ի թուին ՌՃ և է (1657) համիր ամսոյն է (7)[7]։

1145

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

ՄՅԶԵՊ, V, № 1552

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

317 Փառք...։ Արդ՝ գրեցաւ երգ երգոցն ի մայրաքաղաքս Կոստանդինուպոլսի, ի դուռն Ս. Սարդիս զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԶ (1657), ձեռամբ սուտանուն Յովանէս իրիցու, որ զանուն միայն ունիմ և զգործն ոչ, այլ օտարացեալ ի սբ. անուանէ և դատարկացեալ ի բարի գործոց։ Ի կաթողիկոսութեանն որ ի սբ. Էջմիածինն տէր Յակոբ ամենայն Հայոց կաթողիկոսի, զոր տէր Աստուած անդրդուելի կենօք պահեսցէ...։ Եւ ի հայրապետութեանն սբ. Երուսաղիմայ տեառն Աստուածատուր ճգնազեաց և սրբազան բարունապետի, և յաթոռակալութեան տեառն Եղիազարի և քաջ հռետորի, զոր հանդիպեալ շրջագայութեամբ ի մայրաքաղաքս Բիւզանդիա, քարոզութեամբ սբ. Աւետարանի ըստ վարդապետութեան իւրում։

---

[7] Համիրա ամսի 7-ը կհամապատասխանի հոկտեմբերի 22-ին։ Եվ որովհետև հայոց ՌՃԷ թվականը սկսվում է հոկտեմբերի 8-ին (հուլյան տոմարով), ուրեմն հայոց ՌՃԷ թվականի նոյեմբերի 22-ը կընկնի 1657 թ. մեջ։

«Հայոց թվին ՌՃԶ (1657), նոյեմբերի Իէ (27), մեռաւ Զաքիմոռ աբեղայն ի Լվ քաղաք, մահտարածամ մահուամբ. Աստուած իւրն ողորմի. ամէն։ Գուրէղոյ Ռէչեօվէցէի։ (Կամենից, էջ 192)։

Եւ եղև ղի աղգն Յունաց շարժեալքն ի դիւաց, որ ի բնէ գոլ թշնամի աղինս մեր, ամաւ մի յառաջ յանեալ ի ծածուկս գիր հրամանի ի թագաւորէս վասն Հապաշից տեղեացն, թէ իւրեանց է եամախ։ Եւ ելեալ գնաց յԵրուսաղէմ և տիրեաց նոցա տեղեացն, թէ հնար գտցէ ի մերս ևս ձեռն արկանել։ Զոր իմացեալ զայս բան ամենայն քաղաքիս, թէ բնակք և թէ եկք վաճառականք յայլոց քաղաքաց և ի գաւառաց մերս ասքանազեան քրիստոնէիցս ուղղադաւան, ի մի վայր դումարեալ արարին խորհուրդս, թէ զինչ առնիցեն վասն սբ. աթոռոյն և փառաց յարկին վիճակի, ուստի արկանիցեն ի գուբն, զոր փորեցին Քրիստոսիւ տէրամբ մերով։

318 Վասնզի Ասուածատուր վարդապետն անկարացեալ էր մարմնովն և ծերացեալ ըստ խստամբեր վարուցն, ոչ կարէր զայսպիսի հոգ և զծանրութիւն մեծի ցաւոյս ընդունել։ Այլ և ոչ կամէին յերեսս այլասեռից հանել և կամ ի դրունս և ի դիւանս դերօրինականաց Հագարացւոցն կացուցանել զսրբասուն երջանիկն և զզարդարեալն ի բնէ ամենայն առաքինութեամբ, մինչ զի և զառաջնոցն սրբոց բերէր յինքեան զվարս, որոց դրեալ են անուանք նոցա ի դպրութիւն կենաց։ Յաղագս այսոցիկ յամի յորում էր թվականն ՌՃԵ (1656), յօդոստոսի ԺԵ (15)-ին, կամաւ և հրամանաւ նորին բերեալ եդին զԵղիազար վարդապետն աթոռակալ սբ. Երուսաղէմի, և փոխանորդ նմին, զոր մեծաւ ջանիւ գուն դործեալ մինչև էառ հրաման ի թագաւորէս և գիր, և ել արշաւամամբ դիմեաց ի քաղաքն սբ.[8], և հաստատեաց զստուգութիւն եամախին, և տիրեալ կրկնակի տեղից և վանից Հապաշից, մինչ էր մեծ վարդապետն Ասուածատուր ի քաղաքս։ Որոյ լիցի Տէր հովանաւորեալ ընդ թևոց իւրոց ամերամ ժամանակօք ի պարծանս ամենայն հայկազնի, բարեխօսութեամբ սրբոց և հարցն առաջնոց, և աղօթիւք վարդապետիս մեծի՝ տեառն Ասուածատուրի սրբոյ. ամէն, եղիցի, եղիցի։

Եւ ի թագաւորութեանն Հագարացւոց սուլթան Մէհէմէտին, ի դառն և ի վշտաշատ ժամանակիս, յորում նեղիմք և հալածիմք ի յայլասեռից։ Զոր և յայսմ ամի եղև սաստիկ պատերազմ[9], զոր յառաջմէ ունէին ընդ Հռովմայեցիսն, զոր եկեալ Հռովմայեցիք պաշարեցին ատայ մի ի ՃԵրմակ ծովն[10] պօղազէն ի դուրս Պօղճայ անուն, զնա առին ամաւ մի յառաջ, և նստան անդ բոլոր տարի մի, և միւս այլ ատայ մի՝ Իլիմիէ անուն։ Եւ աստ ժողովեցան ի Հագարացոց զօրք բազումք և նաւք բազումք։ Եւ էր վէզիր աղէմն այսմուս Քօբրիլի Մէհէմէտ փաշան, և արար բազում հարկապահանջութիւնս ի Հայոց և ի Յունաց և ի Հրէից։ Զոր ամ յամէ Ճ (100) քուրէքճի կառնուին ի Հայոց։ Եւ յայսմ ամի ԲՃ (200) այլ յաւելի ձգեց ի վերա Հայոց, նոյնպէս և Յունաց և Հրէից այլ զնոյն արար։ Եւ գնաց ի ՃԵրմակ ծովու պօղազն մեծաւ խրոխտմամբ։ Ի մայիսի ԻԸ (28) ել ի յԿստամբոլու, և գնացեալ նստան անդ մինչև յօդոստոսի ԻԵ (25) և առին զՊօղճայ ատան, և զբազումս կոտորեցին և զբազում արիւնս հեղին։ Եւ դարձեալ զօրքս բազումս և նաւքս բազումս առեալ զափուտան

[8] Իմա Երուսաղեմ։

[9] Նկատի ունի Կանդիայի պատերազմը, որը տևեց մինչև 1669 թ.։

[10] Իմա Միջերկրական ծովը։

Թօփալ Մէհէմէտ փաշան, և գնաց ի վերայ Իլիմիայ ատայու ի պաշարել զնա։ Եւ մինչ վէզիրն և զափուտանն յայսմ պատերազմիս խմբեալ կային, ելեալ թագաւորն և կամեցաւ երթալ ի յէարէնէ, և ի սեպտեմբերի ԻԴ (24) ելաւ ի քաղաքէս գնալ ի յէարէնէ, և քաղաքս կայ ի յահ և ի սասան։ Եւ ի նոյեմբեր ամիսն հասաք, խապար եկաւ թէ զափուտան փաշան առաւ զԻլիմիէ, և գնաց ի վերայ Զուխայ ատասուն այսչափ զօրօք, զոր տէր Աստուած փրկեալ աղատեսցէ զհաւատացեալս անուն իւրոյ. և ընդ այս ուրախ եմք, զի ի վիճակն Քրիստոսի եմք։

Յայսմ դառնացեալ ժամանակի եղև զրաւ զրոցս, ի խնդրոյ սրբազան և կուսակրօն տէր Սարգիս աբեղայի, որ էր սպասաւոր սբ. Երուսաղէմի տնօրինականացն Քրիստոսի։

Արդ՝ երես ի գետին դնելով աղաչեմ զհանդիպողքդ այսմ տառիս, յիշեսջիք միով Աստուած ողորմէիւ մի զբստացող սորա զտէր Սարգիս կրօնաւորն, և զծնօղսն իւր՝ զՆորատունկն և զՄարիամբն, և զամենայն արեան մերձաւորսն։ Ընդ նմին և զիս՝ զյնտնեալս և զպղերգս և զյունայնրս ի բարեաց, զգծող զՅովանէս սուտանուն էրէցս, և զծնօղսն իմ միով Աստուած ողորմիի արժան համարեսջիք։ Եւ որք յիշէք...։

1146

ԱԻԵՏԱՐԱՆ

ՈՅՁՄՎ, № 893

Գրիչ՝ Մինաս աբեղայ
Վայր՝ Ստաքէի վանք

ա

476 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս քառավտակ աղբևրս կենաց ի թուաբերութեան ազգանաղասէր հայկական տոհմի հազար հարիւրոյ և ի սոսա վեց անկելոյ (1657). ի հայրապետութեան բոլորից մերոց ազնէից առն սրբազ[ա]նագործի տեառն Յակոբի Հայոց հեղինակ յէջմիածնի։ Ձեռամբ մեղսաներկ ոգւոյ և ամենամեղս ի գրչաց Մինաս սոսկ անուամբ միայն աբեղայի ի սբ. և հոչակաւոր ուխտս սբ. Ստաթէի առաքելոյ, ընդ հովանեաւ սորին ինն հազար և ութհարիւր սրբոց նշխարացս, որ աստ կան ժողովեալ և գեղեցկազարդ յարդինուածով շինեալ տաճարացս Ս. Աստուածածնի, Ս. Գրիգորի, Ս. Ստեփանոսի և սքանչելագործ սբ. նշխարացս, որ աստ կան սբ. Գրիգորի վարդապետի Տաթևացոյ։ Եւ սոցին սպասաւոր Յովհաննէս քաջ ըաբունապետ և առաջնորդ տանս Սիւնեաց։ Եւ ի թագաւորութեան Պարսկայնոց մահմետազարմ տոհմից մեծի քաջաբախտ և աստղայաջող և յաղթողազօր շահ Ապազի՝ ի տիոյ մանկութեան մինչև ցմիջամուխ երիտասարդութեան արիութեամբ հասակի, ի սուլթանութեան յերկրիս Ղաբանայ՝ Պաճկաարայ։ Եւ արդ՝ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, հարք և եղբարք, յիշեսջիք և զիմ անարժանութիւնս և լերուք ցաւակից կարեվէր խոցելոյս ի բանսարկուէն։ Վասն զի յոյժ աղտեղացեալ եմ մեղօք և քան զամենայն մեղաւորս երկրի անարգագոյն գոլով։ Զի զմանկութեան ժամանակն բազմադիմի չարիւք մթերեցի և անարժանութեամբն համարձակեցայ ի սբ. կարգս կրաւնաւորա-

կան։ Եւ այժմ ես անուղղայ վարիւք կեամ և շրջիմ ի գայթակղութիւն բազմաց. սիրտս՝ նանրախորհուրդ, բերանս՝ չարախաւս, աչքս՝ յարատեսս, ականջս՝ վրիպալուր, ձեռս՝ մահաձիգ, երիկամունքս՝ մահափորձ, ոտս՝ մոլորաշաւիղս, ընթացս՝ աներկիւղ։ Նմանապէս այսմ և զհոգոյ մասունք, զի եթէ յիշեմ զբազմութիւն մեղաց իմոց ոչ կարացից ի թիւ շարադրել։ Բայց ապաւինիմք ի Ս. Աստուածածինն և սբ. յաղաւթս ձեր, միշնորդ լինել առ ողորմած և բարեգութն Աստուած, զի անթիւ և ծովացեալ մեղաց մերոց թողութիւն շնորհեսցէ, որ առատն է ամենայնի փառք անզրաւ յաւիտենին. ամէն։ Դարձեալ յիշեցէք զծնօղսն իմ՝ Լալէն, Պանալուն, եղբարքն իմ՝ Սարգիսն, Անդրէասն, Մախմուրն և Փարին, Մարգարիտն. ամէն։

Բ

Եւ ես՝ Խոտանանցի մեղապարտ Մինաս աբեղայս ձեռամբ և մատաւք իմովք զմագաղադն, զգիրն և զկազմն տպագրեցի և հասա ի նաւահանգիստ։ Փառք և գոհութիւն տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ քահանայք պատուականք և մանկունք Սիոնի, անմեղադիր լերուք խոշորութեան գործոյս, քանզի կար մեր այս էր և ոչ աւելի կամ պակաս. ողջ լերուք։

Ծաղկող՝ Մովսէս

Գ

Զնկարող սակաւ ծաղկանցս զՄովսէս յեղեռնագործս փարիսեցի, յիշել աղաչեմ ի Տէր. զյիշողդ՝ յիշեալ լիջիք զտեառնէ Աստուծոյ, թվին ՌՃԷ (1657)։

Նվիրատու՝ Սիմէօն

Դ

Ի թուին Հայոց հազար հարիւր և եաւթն (1657), ի դեկտեմբեր ամսոյ տասն և հինգ, ես՝ Շաղատցի Սիմէօն միայնակեաց ստացայ զսբ. Աւետարանս ի հալալ ընչից արդեանց և ի վաստակոց իմոց, յիշատակ յաւիտենական ինձ և իմ ծնօղացն, հօրն իմ՝ Ճանուն և մօրն իմ՝ Խաթունին, և եղբարցն իմոց՝ Գրիգորին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, Մարտիրոսին և իւր որդոյն՝ Յակոբին, Ճանուն, և Գրիգորին, և Թադէոսին, և մօրն իւրեանց՝ Նանին ///Նին իմոյ, որ հանգուցեալ է, տէր զՓիլիպպոսին։ Ետու վախմ ի սբ. ուխտս, որ անուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային է կառուցեալ վերաձայնեն։ Աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, մարք և քորք, զսբ. Աւետարանս կարդալով և կամ օրինակելով, յիշեսջիք զանարժան Սիմէօն միայնակեաց ստացող զսբ. Աւետարանիս հանդերձ ծնողօք իմովք ի յահեղ և ի մեծ դատաստանին Քրիստոսի. և յիշողք՝ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։ Եւս դարձեալ ծաներուք սիրելիք, զի իմ կամաւ և յօժարութեամբ արարի զսբ. Ստեփաննոսի վախմ. մի՛ ոք իշխէ սմա ձեռնամուխ լինել իմոյ յաղգականաց և յօտարաց, ծախել, գողանալ կամ յայլ տեղ տանել։ Եւ եթէ յանդգնին զսբ. Աւետարանս յափշտակեալ զրկեն ի սբ. ուխտէս Շաղատոյ՝ զրկեալ լիցին ի յահեղ բարբառոյն Քրիստոսի, որ ասէ. «Ե-

կայք աւրհնեալք Հաւրն իմոյ ժառանգեցէք. մասն և բաժին ընդ Յուդայի և ընդ Բելիարայ առցէ»։ Մի՛ լիցին սմա գաւիճի և դաւէքար, որ ասեն, թէ սա իմոց ազգականաց է, պարտ է ինձ սմա տիրել և վայելել, ծախել և կամ դրաւել և կամ պահել ի պիղծ և ի մեղսաթաւալ տունս իւրեանց, զի ընդունիցիմք զոհս և զուարակս և մի՛ պահիցէք ի տունս նոցին, այլ պահէք զսա սրբութեամբ ի սբ. սեղանին և խորանին Շաղատու զգաստութեամբ։ Եւ կամ ո՛վ որ իշխէ կամ լրբի կտրել և ջնջել զյիշատակարան սբ. գրոյս՝ ինքն ջնջեալ եղիցի ի դպրութենէն կենաց և մի՛ մեղանչէք զսբ. գրոյս։

1147

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան, № 282 (1311 թ.)

Կազմել տվող՝ Յոհան Կարեաւանցի

255բ Զվերջին ստացող սրրոյ Պօղոսին դործոց և Կաթուղի[կ]էից զՍիմէոն ճգնաւորական աշխատութեանց սիրող և հետևող վարդապետն Յաղնեցի, յիշել աղաչեմ զվայելողսդ, որ ալի ի Մազանդրան սակս նուիրակութեան վասն սբ. Էջմիածնի հրամանաւ կաթուղիկոսին ամենայն Հայոց Յակոբայ Ջուղայեցւոյ, ի ճանապարհի սպանեալ եղև յաւազակաց։ Եւ ես՝ եղբայր սեառն Եսայեայ վարդապետին, շինողի Սրբոյ Կարապետին Երընջակայ, Յոհան Կարեաւանցի, որ և բանի սպասաւոր, սակս անխզելի սիրոյն, որ առ վերոյ դրեալ նահատակն ունէի, զՏեսիլքն և զէր ընդ եղբարսն Յոհաննու դրել ետու և կազմել առ ի յիշատակ նորուն և մեզ։

Ի թուականութեան մերում ի ՌՃ և վեցին (1657), ի սբ. աթոռս Էջմիածնի։ Վասն որոյ աղաչեմք յիշել զմեզ ծնողիւք մերովք։

1148

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 317

Գրիչ՝ Գրիգոր Համազասպեանց

ա

20ա Անեղանելի բանդ Աստուած... ընկալ զհոգի զստացողի սբ. գրոցս զխօջայ Սաֆարն և ծնողացն՝ Նազարին և Դշխոնէ, և եղբօրն՝ Բաղասարին, և կողակցին՝ Խանզատէ, և որդւոյն՝ Ստեփաննոսին, և դստերացն, ևս համօրէն արեանառուացն ամենեցունց։ Ընդ նմին և ապիկար Գրիգոր գրչիս և իմ ծնողացն, նաև ընթերցողաց սորին և յիշողացն...։

բ

110բ Ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի Քրիստոս Աստուած զստացող սբ. մատենիս զխօջայ Սաֆարն, որ բազում սիրով ըստացաւ զսա ի խնդրոյ հեզահոգի և առաքելաշնորհ քաջ հովի Խաճակ վարդապետին Ջուղա[յե]ցւոյ, զոր տէր Աստուած արժանացուցեալ ի ժառանգման սորին աստ և ի հանդերձելումն. ամէն։ Ընդ նմին յիշեսջիք զապիրատ Գրիգոր գրիչս և զծնողսն իմ՝ զտէր Մարգարէն և զմահդասի Խանաղէն, զոր տէր Յիսուս յարքայութեանն արժանացուսցէ. ամէն. եղիցի։

Գ

212ա Յիշեցէք զստացող Աստուածաշունչ սբ. մատենիս զխոջայ Սաֆարն որ ստացաւ զսա ի հալալ վաստակաւ իւրով, ի վայելումն ջուղացի բարբունոյ քաջ հովուի, հեզահոգի Իսահակ վարդապետի, զձեռամբ Գրիգոր ապիրատի, զոր տէր Աստուած բարեաւ վայելել տացէ աստ և ի հանդերձելումն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զխոջայ Սաֆարն, որ ըստացաւ զսա ի յիշատակ իւր և ծնողացն իւրոց՝ մահդասի Նազարին և Դիշխոնէ, և կողակցին իւրոյ՝ Խանզատէ, և միւս կողակցին իւրոյ՝ Ղարիպիանին, և նազելի որդւոյն իւրոյ՝ պարոն Ըստեփաննոսին, և թոռնն իւրոյ՝ պարոն Գրիգորին, և հարսին իւրոյ՝ Լէյլէ, և դստերացն իւրոց՝ Կատարինէ, և Սարալիխանումին, և Մադալինէ, և Գօզալին, զոր տէր Աստուած փոխարէնն...

Ընդ նմին և զտէր Առաքեալ քահանայն յիշեցէք, որ յոյժ սիրով միջնորդեաց սբ. մատենիս, Աստուած փոխարէն երախտեացն յարքայութիւնն շնորհեսցէ. ամէն։

Նաև զեղկելի ապիրատ գծողս յիշեսջիք ի Հայր մեղայիւ և զծնողսն իմ՝ զՄարգարայ քահանայն և զմահդասի Խանաղէն, և զեղբարսն իմ՝ զՀայրապետն, զՆղիազարն, և զԴաւիթն, և զՆիկողայոսն, և զորդիսն իմ՝ հանգուցեալ առ Քրիստոս Աստուած զՄարգարէն և զՆիկողայոսսն, և զՆազարէթն, յիշեցէք...։

Դ

149բ Ո՛վ մանկունք...։ Դարձեալ յիշեցէք զստացող սբ. մատենիս զխոջայ Սաֆարն... ընդ նմին և զապիրատ գրիչս զԳրիգորս Համազասպեանց. և յիշողքդ՝ յիշեալ լիջիք...։

Ե

Քրիստոսի ծառայէ[11]։

571բ

Զ

604ա Զի որպէս ուրախութիւն մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել, նոյնպէս և գծողին՝ ի վերջին կէտն։ Վաս նորոյ...։ Ի թուին Հայոց ՌՃԶ (1657) ամին։

Է

006բ Եւ որ յիշէ զապիրատ գծողս ւ անպիտան,
ԶգՐիգորս Համազասպեանց նուաստ բանեան,
Նաև ինքն յիշեալ լինի օրն ահեղեան,
Յորժամ նստցի Քրիստոս յաթոռ դատողական։
Եւ արտ՝ եղև Աստուածաշունչս այս սիրական,
Հին և Նոր Կրտակարանքն լիական,
Ի թուականիս Հայոց մեծաց և աբեթեան,

11 Ծածկագիրը կարդացվում է «Գրիգոր ապիրատ»։

ՌՃ և Զ (1657) ամին յարաբարդեան
եւ Քրիստոսի յուսոյն...[12]*։*

1149
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 829

Գրիչ՝ Կարապետ դպիր
Վայր՝ Սաղմոսավանք

ա

244ա *Ի թվականիս Հայոց ՌՃ և Զ (1657) ամին, ի կաթողիկոսութեան Հայոց սբ. էջմիածնայ աթոռոյն Ջուղայեցի Յակոբի երկրորդ ամին և Պարսից թագաւորութեան փոքր շահ* Աբասին, *գրեցաւ գիրքս այս* Սաղմոսավանից *ձորի անապատին ի փառս Աստուծոյ։ Ով որ որ վայելէ՝ գոհանա զԱստուծոյ և փառս տայ ամենայն բարեաց տվողին, սրբոյն* Բարսեղի Կեսարացոյ *Հարցողաց գիրքովս և սբ. հարցն* Նազարի *և* Նեղոսի *խրատովքս։*

բ

277ա *Ո՛վ հաճոյական անձն Աստուծոյ և միայնացեալդ, մեծ աղերսանօք և պաղատանօք հայցեմք ի խորոց սրտից, հայցեա ի Քրիստոսէ մեղաց իմ թողութիւն՝ մեղաւոր գրչիս սորայ* Կարապետ *անարժան դպրի և ծնօղացն իմ՝ հօրս մահդասի* Սէքին *և մօրն իմ՝* Գինարին, *որ փոխեցեալ են առ Քրիստոս...։*

1150
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 896 (ԺԴ գ.)

36ա *Ցիշեցէք* Սարգիս *սարկաւագս. թուին ՌՃԶ (1657)*[13]*։*

1151
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան, № 915

Գրիչ՝ Խաչատուր երէց

ա

39ա *Զգծող այսմ զաւգտակար և խրատական Հարցմանցս զմեղօք խաւարեալ և ազգի յազգի անառակ գործովք շաղախեալ զԽաչատուր անիմաստ երէցս, որ անուամբ միայն և գործով ոչ եմ։ Ապայ աղերսանաւք աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք սբ. գրոցս, եթէ կարդայք և կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստացաւղ սորայ զտէր* Գաբրիէլ *սրբասնունդ քահանան և զհայրն իւր՝ տէր Հայրապետ բարի քահանան, որ բարեգործով խրատատրութեամբն իւրով գործով լցեալ էր*

---

[12] Սույն հիշատակարանը շարունակությունն է Ղազար Բարերթացու հիշատակարանի՝ տե՛ս 1619 թ. շարքում։ № 919 բ հիշատակարան։

[13] Այս անձնավորությունը ընդօրինակել է ձեռագրի 4ա—36ա և 139ա—147ա էջերը, որոնք վնասված էջեր են եղել։

զանունն, զի հոգևոր հայր էր ամենեցուն ևս առաւել մեզ և զամենայն ազգատոհմն իւր և զիս անպիտանս, և զծնողսն իմ, և զուսուցիչսն իմ, և զամենայն արեան մերձաւորաց իմոց։ Աստուած ողորմի ասացէք...։

Գրեցաւ սա ի թվականիս ՌՃԶ (1657)։

Բ

345ա Եւ զիս յիշեա զյետնեալ Խաչատուր երէցս, միով ողորմեայիւ, զի Քրիստոս...։

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ

Գ

244բ Յիշեսջիք զգծող սորին զՅովանէս սարկաւագս և զհոգևոր հայրն իմ՝ զտէր Ալիքսիանոս քահանայն և հայրն իմ՝ Յակոբն, որ այժմ փոխեալ են առ Քրիստոս յոյսն ամենեցուն...։

1152

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 940

Նորոգող՝ Մելքիսեթ քահանայ

Վայր՝ Տանձափարախ

Վերջին ստացօղ և նորոգող սր. Աւետարանիս զբարեմիտ քահանայն տէր Յովանէս, որ նորոգել ետ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն՝ Ղասումին և մօրն՝ Պէկումին, և կողակցին իւր՝ Քաթանին, և որդիքն իւր՝ Ալիքսանոսն, Կոսաանդիանոսն, Պալասանն. և դուստրն՝ Մարինոսն, Սուսամբարն, Եղիսաբեթն, Բէկումխանն և զամենայն արեան մերձաւորս իւրոց, յիշեցէք...։ Զեռամբ յոգնամեղ Մելքիսեթի սուտանուն քահանայի, զի բանիւ քահանայ եմ և գործով հեռի ի կրօնից նորա։ Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ սորա, յիշել վերոյ դրեալս ի սմա և զծնողսն մեր և մեզաց թողութիւն խնդրել...։

Կազմեցաւ սբ. Աւետարանս ի ձեռն Մելքիսեդ անարժանի, յօժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ, ի Տանձափարախոյ յանապատս, ի թվականիս Ռ և Ճ և Զ (1657) ամին, ի մուտն է (7)-եկին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ...։

1153

ՊԱՏԱՌԻԿ

Երևան, № 977

Նվիրատու՝ Սիրիքուղթ

Վայր՝ Բանազուայ

Կամաւն Աստուծոյ, արդ՝ ես տառապեալ նուաստ Սիրիքուղթս ստացա զսբ. Աւետարանս յիշատակ ինձ և կողակցուն իմոյ, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ, Պապասուն, և իւր ծնողացն՝ Ղարագօզին և մօրն՝ Սառուգին, և եղբօրն՝ Կիրակոսին, Ամիրխանին. և դստերացն՝ Գոլասարին, Սանդխային։ Արդ՝ ես անպիտանս յամենայնի... Սիրիքուղթս, որ

եմ հօր կողմանէ ազգաւ հայ, ամուսին հռոմայեցոյ, որ ի մեռանել առն իմոյ, վասն ոչ ունելոյ մարմնաւոր յիշատակ՝ արու զաւակ, ըստացա զաւակ ստընդիա և հողևոր, ըստ այնմ որ ասէ, թէ՝ «Երանի...»։ Եւ կամաւ իմով ետու զսա յիշատակ ի յերկիրն Դիզակայ, ի գեօղն Բանազուրայ[14]։ Այլ ոչ ոք բան չունենայ, որ այս գեօղիցս հանէ։ Ով ոք որ հանէ կամ որիշ ծախելոյ կամ յիշատակն կտրէ՝ ի Քրիստոս դատաստանին պարտական լիցի։ Գրեցաւ թվին ՌՃԶ (1657)-ին։

1154
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1927

Գրիչ՝ Վարդենի

324բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձինս կոյս և ապաշխարող անուն Վարդենի, հասանել յաւարտ սբ. դրոցս ի թվին ՌՃ և Զ (1657)-երորդումն։

1155
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1487

Գրիչ՝ Ալէքսան դպիր
Վայր՝ Նորաշէն

ա

187բ Ծրոզ գրոցս Ալէքս գրիչ յիշեցէք։ Սկսումն թվի[ն] ՌՃ երկի (1653) և աւարտումն ՌՃ և հնգի (1656)[15]։

բ

189ա Ընդ որս և զմեր հոգի և զմարմին և զմեղապարտ գծողս Ալեքսան դպրի նորոգեա և փրկեա տէր Աստուած։

գ

215բ Գրեցաւ Մեկնութիւնս յարութեան Քրիստոսի ի գիւղն Նորաշէն, թվին ՌՃԶ (1657), ձեռամբ մեղապարտ Ալէքսան դպրի։

Հողի և մոխրի,
Ծառայ եմ ձեղի,
Ասէք ողորմի,
Սորա գծողի։

1156
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ
Երևան, № 1527 (1303 թ.)

ա

686բ Ես՝ Զուղայեցի Բազար Սաֆարս եղայ սոր[ա] առնելն պատճառ,

[14] Ցոր գյուղից հարավ, ձորի աջ ափին։
[15] 1657 թ. գրիչը լրացրել է ձեռագրի 188—215 թերթերը (տե՛ս գ հիշատակարանը)։

զիս մեղաւորս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, յիշ[ե]ալ լիջիք ի Քրիստոսէ։

Թվին ՌՃԶ (1657)[16]։

1157
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1610

Ստացող՝ Անտոն քահանայ

359ա Գրեալ աւարտեցաւ Շարականս ի խնդրոյ սրբասէր և աստուածասէր Անտոն քահանային, որ ըստացաւ զսբ. գիրս զայս, ի յարդար վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և դեռաբոյս որդւոյն իւրոյ՝ Աբրահամին և յիշատակ հոգւոյ իւրոյ և կենակցին իւրոյ՝ Մայրամին և ծնողացն իւրոց և ամենայն արեան մերձաւորացն։ Որ կարդայք աղաչեմ զձեզ, յիշել յաղաւթս ձեր զստացաւղ սորա զԱնտոն անարժանս ի բարին Քրիստոս, զի և դուք շյիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն։

Թվին ՌՃԶ (1657)։

1158
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 2399 (1656 թ.)

կազմի վրա Սբ. Աւետարանս յիշատակ է խօշայ Փանոսին, կողակցին՝ Լէ[?]ոա, մանուկ որդին իւր՝ Գրիգորին, դստերացն իւր՝ Իփրիթէ, Մասպուռին, Դըշխունին, ծնողացն՝ Խուլթանումին, Մամին, Վալաթին, կողակցին՝ Անաէ։

[Ի] վաելումն Գանձասարայ։ Թվին ՌՃԶ (1657)։

1159
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 2536

Գրիչ՝ Նիկողայոս

Վայր՝ Կաֆայ

318ա Փառք...։ // ... Արդ՝ այսմ աստուածային և հոգևոր գանձուցս և անշիջանելի լապտերացս և ամենագով գերահրաշ պարգևիս ցանկացաւղ եղեալ աստուածասէր և առաքինի վարուք լցեալ, սրբազան քահանայս տէր Մինաս մահդասին, հանդերձ որդւովն իւրով՝ տէր Քրիստոսատուրի,

318բ և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգւոյ և // իւր ծնողացն, հօրն՝ Ուլուպիին և մօրն՝ Ախպիֆային, և կողակցին՝ Ալամ իրիցկնոջն, որդոցն՝ տէր Քրիստոսատուրին[17] և Ուլուպիին, դստերացն՝ Եա-

---

[16] Ներքևի տողը մասամբ կտրված է և թվականի միավոր տառը կարելի է կարդալ նաև Ը։

[17] Ձեռագրում հապավված «Քիստ»։ Քանի որ վերևում հիշել էր որդու՝ Քրիստոստուրի անունը, հապավումն ընթերցեցինք այդպես։

խուրպիֆային և Ախկիվին, և ամենայն մերձաւորացն. և եդ ի դրունս Ս. Աստուածածնի։ Որոց լիցի սա առ ամենեցուն պատճառ փրկութեան ե առաջնորդ երկնաշու ճանապարհին։

Արդ՝ եղև դրաւ գրչութեան սորա ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657)[18], ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և եպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Գրիգոր աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Աստուած պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ի մայրաքաղաքն [Կաֆայ], ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարի[ն], ձեռամբ Նիկողայոս ոմն անարժանի[19]։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա և լուսաւորիք կամ աւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս զյառաջ ասացեալ պատուական[20]։

1160

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Երևան, № 2758 (1802 թ.)

108բ Գրեցաւ Մեկնութիւն տեսլեան Յովհաննու Աւետարանչի աստուածաբանի և սիրեցելոյն Յիսուսի ի թուականիս Հայոց ՌՃԶ (1657), ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Աբազի և ի հայրապետութեան սբ. էջմիածնայ Ջուղայեցի Յակոբ վարդապետ կուսակրօնի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ և երշանկի։

1161

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ

Երևան, № 3392

Վայր՝ էջմիածին

ա

71բ Գրեցաւ գիրս յէջմիածնոջ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ի վայելումն Սարգսին և թվիս ՌՃԶ (1657)։

բ

177բ Ի շրջաբերութեան Հայոց ՌՃԶ (1657)։

---

[18] Մատենադարանի ձեռագրաց Ցուցակում սուլն ձեռագրի գրչությունը նշված է «1655, 1657 թթ.» (հտ. Ա, էջ 821)։ Սակայն ձեռագրում 1655 թ. հիշատակարան չգտանք։ Միայն 1ա էջում ԺԹ—ի դարերի գրչությամբ (շատ նման է ձեռագրերում հաճախ հանդիպող Մեսրոպ Սմբատյանի ձեռագրին) գրված է. «Գրեալ յամի տեառն 1655 որ ի թուին Հայոց ՌՃԶ, ձեռամբ Նիկողայոս դպրի»։ Ցուցակի հեղինակները գուցե այս բանն են նկատի ունեցել։

[19] Ձեռագրում վայրի անունը շնշված է և փոխարեն գրված է «Պոլիս»։ Նախ՝ Նիկողայոս դրիչը ապրում էր Կաֆայում. երկրորդ, Կ. Պոլսի համար չեն գրում «եպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Գրիգոր աւրհնեալ քահանայապետի», սա վերաբերում է Ղբիմին և այդ ժամանակ այստեղ հոգևոր առաջնորդը Գրիգոր եպիսկոպոսն էր, ինչպես վկայված է այլ հիշատակարաններում ևս։ Ուստի ճիշտ են վարվել Մատենադարանի ձեռագրաց Ցուցակ կազմողները, երբ գրչության վայրը նշել են Կաֆա (հտ. Ա, էջ 821)։

[20] Հիշատակարանն ընդհատվում է։

1162
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 3393 (1309 թ.)

Նվիրատու՝ Յովհաննէս եպիսկոպոս

ա

257ա *Ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657) ի հայրապետութեան սր. էջմիածնա[յ] տեառն Յակոբայ և թագաւորութեանն Պարսից փոքրն շահ Ապագին, ես՝ Յով[հ]աննէս եպիսկոպոսս, սպասաւոր և վերակացու Սաղմոսավանից և Լուսաւորչի սբ. յանապատիս, տուէլ էր Ապարանցի մէլիք Յովասափ էրէցն վախմ, մեք այլ տեսինք ե [ի]մացանք այս սբ. Աւետարանս, որ Աստուածընկալ Ս. Նշանին էր. ահա այժմ մեք շնորհեցաք նմա։ Ով ոք որ խօսի՝ ղատի Աստուծոյ. ամէն։*

1163
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 3946

Գրիչ՝ Մարկոս քահանայ

Վայր՝ Բագառին

192բ *Փառք... որ տա կարողութիւն մարդկային բնութեանս և զօրացուցէ ի գործս բարութեան։ Նոյն շնորհիւ ողորմութեամբ իւրով ետ կարողութիւն ամենամեղ անձին և անպիտան ծառայիս Աստուծոյ, սուտանուն Մարկոս քահանայիս հասանել ի յաւարտ յայսմ սբ. գրոցս, որ կոչի*

193ա *Մաշտոց. զոր արարեալ է սբ. հայրն և վարդապետն մեր Մեսրոպ // և անուանեցաւ Մաշտոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։*

Արդ՝ գրեցաւ դիրքս այս, որ է Մաշտոց, ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657), ի յերկիրն Դերջնու, ի գիւղն որ կոչի Բագառին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Ստեփանոսին. ամէն։

Ընդ նմին աղաչեմ յիշել ի Տէր զանպիտան Մարկոս գծողս սորայ և զծնօղս, զհայրն իմ՝ Ղազար և զմայրն իմ՝ Տիկին, և կողակցին իմոյ՝ Շուշանին, և եղբայրն իմ՝ Գրիգորին, և ամենայն ննջեցելոցն մեր. ամէն։

Ո՛վ եղբարք, խոշորանացս կամ տղալանացս, այս է՝ մի մեղադրէք, ողորմիս ասացէք և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Ով որ հանդիպիք կարդալով կամ յօրինակելով, յիշեցէք զՄարկոս մեղաւոր քահանայս, անունս ունիմ և գործս ոչ և Աստուած զձեզ յիշէ...։

Դարձեալ, ո՛վ եղբայր, յիշեցէք զհոգևոր հայրն իմ՝ Մանուէլ եպիսկոպոս, որ այս ժամանակս վաղճանեցաւ, Աստուած ողորմի ասացէք իւր հոգոյն։

Ով որ մեղաւորիս հետ աշխատանք ունի, Աստուած ողորմի իւրեանց հոգոյն. ամէն։

1164
ՃԱՇՈՑ
Երևան, № 4614 (ԺԴ դ.)

Նորոգել տվող՝ Սիմէոն

ա

182ա Փառք...։ Ես՝ Սիմէոնըս և աւագ ե///եան և եղբայրք մեր Դանիէլն /// եղուք նորոգել զսբ. աղէնայ[ին տաոս?] յիշատակ հոգոց, հօրն մերոյ՝ Մխ[իթարին] և մօրն մերոյ՝ Խ[ա]թունին, Թորոսի[ն] /// Գոճարին, իւրեանց որդոց Մխիթարին, /// անին։ Դարձեալ յիշեցէք զՍիմ[էոն և կողակ]ին իւր՝ Փարին այսմ յամի որ /// որդի ոչ ունէր, Աստուած տացէ Սի[մէոնն] /// և եղբայրքն՝ Դանիէլն և Ղազար[ն] /// նչ իւր վարցս տացէ. ամէն։

Նորոգող՝ Յովաննէս աբեղայ

բ

Դարձեալ [յիշեցէք] զանպիտան նորոգողս սբ. դրոյս ///ուն Յովաննէս աբեղայս, վա՛յ ինձ [Ո] բերան. զբարէվար և զհոգելի հայրն իմ՝ տէր Տէրունն։ Ո՛վ սրբազան քահանայք, որք հանդիպիք լիաբերան ողորմի ասացէք վերոյ դրեալս և ձեզ ողորմեսցի Քրիստոս...։

Թվականիս մերոյ ՌԾ և Զ (1657)-ին նորոգեցաք։

1165
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4912 (1609 թ.)

254բ Զվերջին ստացող լուսաբուղխ և կենսակիր սբ. Աւետարանիս զքրիստոսասէր և զաստուածասէր, զհաւատ[ար]իմ և զբարեբարոյ այրն զՀամբեցի պարոն Դաւիթն և զկենակիցն իւր՝ զԱլմասան, և զդուստրն իւր՝ զՍափերն, մանաւանդ և զծնօղսն, զհայրն իւր՝ զԳրիգորն և զմայրն իւր՝ զՇարպաթն, և զեղբայրն իւր՝ զՊահատուրն և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն։ Որ վերստին ստացաւ զսա ի հալալ արդեա[ն]ց և վաստակոց իւրոց և եղև. զի թափեաց զսա ի ձեռաց այլազգեաց, այսինքն՝ մահմետականաց. զի տուիթու և գրաւ էր եդեալ առ նոսա։

255ա Իսկ ի գալ սորին յերկրիս Վասպուրական, տեսանելով եռայր սակս թափելոյ ի նոցանէ, և ջերմառանդ և սրտատրոփ ըղձմամբ էառ և ազատեաց ըստ նմանութեանն Քրիստոսի, և վերստին եդ անչինչ յիշատակ ի դուռն ի Ս. Իսահակ յորջորջեալ եկեղեցւոյս և այլ սրբոցս, ընդ հովանեաւ, որ աստ կան հանգուցեալ և հաւաքեալ ի պահպանութիւն ազգիս մերոյ և ամենայն քրիստոնէից, Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և Յոհաննու Աւետարանչին։

Եւ այսմ ամի եղև աւարտումն սբ. ուխտիս կամարակապ յարկիս և սագաչէն, թարց գմբեթաշէն խորանիս և տաճարիս։ Ի տեղակալութեան և յաջորդ առաքելական աթոռոյ կենսատու Ս. Նշանին Վարագայ, տեառն երիցս երանեալ և սրբազան Պօղոս արքեպիսկոպոսին, շնորհազարդ և աստուածաբան փաղերային, բաբունապետին և վարդապետին, որ իբրև

զշահ անշիջանելի, արփիափայլ ճառագայթիւք վառեալ քատակի ի մէջ սբ. եկեղեցւոյս և լուսաւորէ ուռճալիր բանիւն իւրով, զխաւարեալ ազգս արամեան. զոր տէր Քրիստոս ընդ երկայն աւուրքք պահեսցէ։...

Ի թուականութեանս աբեթական տումարիս ՌՃ և Զ (1657) ամին։ Տեսողք ասացէք զողորմին, զի և դուք կարօտէք ողորմութեանցն Աստուծոյ։ Եւ ի վայելումն հեզահոգի և սրբազան այժմու քահանայիցն՝ տէր Կարապետին, տէր Մարգարէին, տէր Յովհաննէսին, տէր Մելքեսեթին, տէր Խաչատրին. ամէն։

Եւ արդ՝ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սբ. եկեղեցւոյս՝ եթէ ծախելով կամ գրաւ դնելով։ եթէ ոք յանդգնի՝ զպատիժն Յուդայի և զԿայենի առցէ և զմասն ի խաչահանուացն. ամէն։ Նաև և զմիջնորդող սբ. Աւետարանիս զհաւատարիմ և զաստուածասէր պարոն Մարտիրոսն և զծնօղսն իւր յիշել աղաչեմ, զի և դուք յիշեալ լիջիք ի տեառնէ Աստուծոյ. ամէն։

1166

ՏՕՆԱՅՈՅՑ

Երևան, N 5302

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Մոկս

ա

57ա Ես՝ Մարտիրոս մեղաց դերի,
Որ ցնորեալ եմ յաշխարհի,
Զձեզ աղաչեմ եղբար սարի,
57բ Որ ինձ ասէք դուք // ողորմի
Զի տէրն Աստուած ողորմեսցի. ամէն։

բ

129բ Եւ զմեղաւոր Մարտիրոս յիշեա, որ է տառապեալ. Աստուած լուսաւորէ զՄարտիրոսի հոգին. ամէն։

գ

147ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և անիմաստ Մարտիրոս մեղապարտ գծողիս հասանել ի յաւարտ Տունացոցիս։

Արդ՝ գրեցաւ ի յերկիրս Մոկաց, ի դուռն Ս. Յակոբ///ին, ի թուին ՌՃԶ (1657) ամին, ի կաթուղիկոսութեան Մարտիրոսի. ամէն։

Աստուած լուսաւորէ զտէր Մարտիրոսի հոգին և իւր կողակցոյն՝ Նուպարին, որդոյն՝ Կարապետին[21]

1167

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, N 5567. (1601 թ.)

Նորոգող, կազմող՝ Հայրապետ

ա

142բ Զվերջին ըստացաւղ լուսազարթ սբ. Աւետարանիս, զբարեմիտ և

[21] Այնուհետև ընդհատվում է։

զհաւատարիմ մաղդասի Մնէրն, որ ետ վերստին նորոգել յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւ[ր]ոց, հօրն՝ Գուլազիզին, և մօրն՝ Արևին, և եղբարցն՝ Սանակին և Մելիտոնին, քւեր Դօլաթին, հօրեղբօրն՝ Աբրահամին, որդոյն՝ Աւէտին, Յակոբին, քւէր Բէկիիաթունին, Խլղաթին, Կարապետին, յիշեցէք...։

Կաղմեցաւ ձեռամբ Հայրապետի, ի թուականիս Հայոց ՌՃԶ (1657)։

Բ

397ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր [Աւ]ետիսն և զորդին՝ զՀայրապեան, որ կրկին անգամ նորոգեաց զԱւետարանս։ ՌՃԶ (1657) ամին։

1168

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5824 (1574 թ.)

Նորոգող, կազմող՝ Թումա երէց

234ա Զվերջին նորոդող սբ. տառիս զՓարիիանն յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք իւր հոգոյն, որ վերստին նորոգել ետուր զսբ. գիրքս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և իւր առն՝ Աիիջանին, որդոցն՝ Ատոմին և Խլղաթին, վոխեցելոյն Խոշոյին և Դասրմին, Խոշոյի կնոջն՝ Խսոմին, Ատոմի կնոջն՝ Գարիանին և Խլղաթի կնոջն՝ Մարգարտին և Սուիիասին։

Դարձեալ յիշեցէք...։

234բ Կազմեցաւ ձեռամբ սուտանուն Թումա երիցու, ի վայելումն տէր Յովսէփին, // որ մասնակից եղև և վերստին նորոգել տուին ինքն և բարեմիտ կինն՝ Փարիխանն, և եդին ի դուռն Ս. Ստեփաննոսին անջինջ յիշատակ։ Ոչ ոք կարէ հեռացուցանել զսայ ի դրանէ սորայ՝ ո՛չ ծախելով և ո՛չ գրաւելով։ Եւ թէ ոք յանդգնի՝ պատժի ի Քրիստոսէ. ամէն։

Թվին ՌՃԶ (1657)։

1169

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 5875

Գրիչ՝ Մարգար
Վայր՝ Շոռոթ

ա

339ա Զցանկացող սբ. տառիս զԱրիստակէս վարդապետն յիշեցէք, ո՛վ սբ. քարոզիչք, ընդ նմին և զգերի գծողս։

Բ

248ա Յիշատակարան սբ. մատենիս

Փառք...[22], որ ետ կարողութիւն տարտամ և ապիկար, անբժշկական վիրօք լցեալ անձինս հասանել յաւարտ սբ. մատենի՝ հաւաքեալ քարոզիս և մանաւանդ թէ անծկութեան և բաղձանաց սրտիս հասոյց ի

[22] Հիշատակարանի վերնագիրը և «Փառք»-ի երկու տողը գրված է կարմրագեղով։

կատարումն կատարողն խնդրուածաց, զոր ունէի վասն գրոյս աւարտե-
248բ լոյ։ Ի խնդրոյ կրկնակի սիրով սիրելոյն իմոյ... // ...Արիստակէս վար-
դապետին, զոր ապաւինեալ ի տնօրինիչն և լցուցիչն խնդրուածաց հզօր
Ս. Հոգին, զոր ըստ իմ կարի ոչ ունէի, և ոչ բնաւ և ոչ միոյ կէտի չափ
ձեռն շարժելոյ, այլ յուսով մարդասիրին և ողորմածին սկսայ և ողոր-
մութեամբ նորին կատարեցի զայսքան քարոզ Հաւաքեալ և ծաղկաքաղ
արարեալ յառաջին և յերկրորդ հատորոյն յիշատակ հոգոց մերոց և
օժանդակ քարոզութեան բաղձալոյն իմոյ Արիստակէս վարդապետին
Ղլաթեցոյն, առաջնորդի Մտանէվանից Ս. Աստուածածնին։ Որով և
աղբիւրն բարութեանց Ս. Հոգին Աստուած աղբիւրացուսցէ զշնորհս և
զողորմութիւն իւր և լցուսցէ զսիրտ և զհոգի, զմիտ և զլեզու Արիստա-
կէս վարդապետին և ծաղեսցէ սովաւ զնշոյլ ողորմութեան իւր ի հոգիս
լսողաց քարոզիս...։ Արդ դրեցաւ սբ. դիրքս ի թուականութեանս Հայոց
ՌՃ և վեցի (1657), ի հայրապետութեան սբ. աթոռոյն էջմիածնի տեառն
Յակոբայ սրբազան կաթուղիկոսի, ի յառաջնորդութեան մերոյ նա-
հանգի Եսայեայ քաջ ռաբունապետի, ի յերկիրս Երընջակ, ի գեղա-
քաղաքս Շուռբու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչի,
250ա և Ս. Յակոբայ եկեղեցեացս ի մէջ մաքրակենցաղ կուսաստանիս, // ձե-
ռամբ դերեալ ոգոյ, մեղօք վարանեալ և ի խորս ահեղ անօրէնութեան
կործանեալ, ուշամոռաց և հանճարազրաւ եղեալ, շարաւալից հոգով
Մարզար վերակացութեամբ և հոդացողութեամբ, վեհագոյն հարազատիս
մերոյ շնորհազարդ Ղազար քահանայի, վասն ցանկալի և ի պահպանու-
թիւն Ս. Հոգոյն յանձին եղեալ Արիստակէս վարդապետին, ի վայելումն
անձին իւրոյ, յերկար ամօք անփորձ և անսասան կենօք վերնախնամ
աջովն պահպանեալ ներքին և արտաքին վնասակար պատահմանց.
ամէն։ Եւ յիշատակ հոգոց մերոց և ծնողացն մերոց Կիրակոս քահա-
նային և Թուրվանդին, եղբարցն մերոց՝ Ղազար քահանային և տէր
Ալէքսիանոսին հանգուցելոյն առ Քրիստոս, և եղբօր որդոցն մերոց՝
Կոզմասին, Ալէքսիանոս սարկաւագին, Յովնանիսին, Կիրակոսին, դրս-
տերացն՝ Սանդուխտին, Վարդուհոյն, և այլոցն ամենեցուն՝ զորս գրե-
ցաք և զոր մնացին։

Գ

250բ Արդ՝ ով որդիք մօր Սիովնի,
Եւ ճաշակողք սորա պտղի,

. . . .

մեղաց թողութիւն Արիստակէս վարդապետին և անպտուղ ի բարեաց և
թափուր ի շնորհաց գծողիս եղկելի և հոգևոր, բազմերախտ քերցն իմոց՝
Հռիփսիմէին, Կիկլիին և Հեղինին, որ վասն սիրոյ Ս. Աստուածածնին
գութ և սէր արարին զարիպիս, զոր ամէնողորմ և ամէնառատ թագա-
ւորն... ահեղ ատենին քաղցր ակամբ հայեսցի...։

251ա Աղաչեմ անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրոյս, զի
հանճարոյ և մտաց իմոց այս էր կար։

Ո՜հ, ո ձեռք որ փտիս,
Ո՜ մատունք. որ հողանաս,
Ո՜ հոգի որ Աստուած դառնաս,
Ձեռս փտի և գիրս յիշատակ մնայ։

Ստացող՝ Արիստակէս խլաթեցի

Դ

250ա Եւ արդ՝ ես վերջինս ի ծնունդս եկեղեցոյ և յետինս ի կարգս բանասիրաց Արիստակէս սպասաւոր բանի, ետու դրել զսբ. գիրքս, յիշատակ ինձ և ողորմելի քեռն իմոյ Մարգարտին և ծնողացն մերոց՝ Կիրակոս քահանային և Թուրվանգին...[23] և քերցն իմոց՝ Ղիմաթին, Մար-
250բ գարտին և հոգևոր մայր // խուրովին և ամենայն արեան մերձաւորացն մերոց կենդանեացն և հանգուցելոցն. ամէն[24]։

1170
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6497 (1476 թ.)

Գրիչ՝ Ալէքսիան երէց

287ա Դարձեալ յիշեցէք տէր Մկրտիչն, և կողակիցն իւր՝ Մայրանն, և որդիքն՝ տէր Յակոբն, Դաւիթ[ն]: Դարձեալ յիշեցէք տէր Յակոբն և կողակիցն՝ Գուլաղէն, և որդիքն իւր՝ տէր Գալուստն, Շաբանն, Մովսէսն, Ագի[զ]բէկն, Մխիթարն. և դուստրն իւր՝ Եղուրն, և որդիք սորա Յակոբն, և մեւսն Մարտիրոսն, որ ի Քրիստոս փոխեցաւ։ Դարձեալ յիշեցէք տէր Գալուստ[ն], և կողակիցն իւր՝ Շրենաւորն, և դստերքն իւր՝ Սանդուխտն, Հո[իփսիմէն] /// ալվար, ո[ր ա]ռ Քրիստոս հանգեան, և որդին՝ տէր Մկրտիչն: Դարձեալ յիշեցէք տէր Մկրտիչն, և կողակիցն իւր՝ Մալթումն, և որդիքն՝ Դաւիթն, և միւս որդին՝ Ներսէսն, որ առ Աստուած փոխեցաւ, և դստերքն իւր՝ Մարգարիտն, Հոռոմսիմէն, Գուլաղէն, Հէրիֆնազն, և փեսայն՝ Յակոբն, և կողակիցն՝ Մարգարիտն, և դուստրն՝ Խաթուն:

Գրեցաւ թվականիս Հայոց ՌՃ և Զ (1657) ամի, ձեռամբ անարժան Ալէքսիան իրիցի։

1171
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 6501

Գրիչ՝ Ղազարոս սարկաւագ
Վայր՝ Բաղէշ

ա

218ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է սրբոյն Մեսրոպայ վարդապետի և այլ սրբոց, որ է սայ կատարող

[23] Դարձյալ թվում է Արիստակես վարդապետի հարազատների վերևում հիշված անունները։
[24] Ուշ տող դատարկ թողնելուց հետո գրված է դ հիշատակարանը։

է (7) խորհրդոյ եկեղեցոյ։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածա-
յին և պայծառ լուսով, մեծաւ հաւատով և բարէմիտ, սրբասնունդ տէր
Մխիթարն, և հայրն՝ Նազարն, և ծնօղն՝ Կոնարն, քորքն՝ Հուրիխան և
Խանտուկն, կենակիցն՝ Շահպաղն, քեռին՝ Մարտիրոսն և Մխիթարն,
182բ իւր եղբայրն՝ Պօղոսն, // որդին՝ Խլղաթն, հարսն՝ Սալչուկն, իւր թոռն՝
Մուրատն և Պաւղոսն միաբանեալ և ստացան զսա, յիշատակ հոգւոց
իւրեանց և այլ արեաւն մերձաւորացն. ամէն։

Արդ՝ գրեցաւ սբ. Մաշթոցս ձեռամբ անարժան և փծուն գրչի Ղա-
զարոս սարկաւագի, ի յընտիր և ի լաւ յարիւնակէ, ի մայրաքաղաքս որ
կոչի Բաղէշ, ի դրան Ս. է (7) խորան եկեղեցուն, ի թվականիս Հայոց
ՌՃԶ (1657), ի հայրապետութիւն տէր Մեսրոպին, ի դառն և ի նեղ ժա-
մանակի։

Քրիստոս Աստուած քո սբ. ծնաւղիդ... բարեխաւսութեամբն ողորմեա...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՂազար սուտանունս, որ զանունս
ունիմ և գործս ոչ ինչ։ Յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սբ.
եկեղեցոյ, յորժամ հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, ան-
մեղայդիր լերուք, զի կայր մեր այս էր, սորայ սխալութենին կամ պա-
կասութենին անմեղայդիր լերուք։

Բ

51ա Եւ եղկելի գրիչս յիշեա, զի յոյժ նեղած իմ։

1172

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6825

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Նոնուս

ա

138ա Զմեղապարտ զգրիչս զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս և դուք յիշեալ
լիջիք ի Տեառնէ։

Բ

287բ Փառք...։

288ա Արդ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարհեստ և փծուն գրչի
Յովանէս դպրի, ի թվականութեան ՌՃ և Զ (1657), ի թագաւորութեան
Պարսից փոքրիկ շահ Ապազին, ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ
տեառն Յակոբ կաթուղիկոսի։ Աւարտեցաւ յերկիրս Արարատեան, ի
գեաւղս որ կոչի Նոնուս, ընդ հովանեաւ Ս. Սարգիս և Ս. Նշանիս, և մե-
ծոյ առաջնորդի Բջնոյ Ս. Աստուածածնին տեառն Մովսէսի երիցս երա-
նեալ վարդապետին և զաշակերտ նորին զտէր Ներսէս։

Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ, յիշել զանպիտան գրիչս և զծնօղսն
288բ իմ. // և ընդ նմին զաշակերտն իմ՝ զտէր Մկրտիչ քահանայն յիշել
աղաչեմ։

Զոր տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ բարեմիտ

և սրբահաւատ այրն Գրիգոր և զծնօղսն իւր՝ Ասասլովն և Պաղտատն յիշեցէք ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ։

Կամակից տէր Գրիգորն։

Գ

86ա Որում ստացաւղ գտեալ սբ. Աւետարանիս ոմն աստուածասէր և քրիստոսակրօն Գրիգոր կոչեցեալ այր, ի գեղջէ յՕշականայ, սակս փրկութեան հոգւոյ իւրոյ և յիշատակ վասն ամենայն տոհմից և ազգականաց իւրոց, եդ անջինջ յիշատակ և արձան յաւիտենական ի դուռն սրբոյն Մեսրովպայ գերեղմանին։

Արդ՝ յերես անկեալ պաղատանօք մաղթեմ զհանդիպողսդ լի սրտիւ յիշեսջիք առաջի զառինն զենլոյ զԳրիգոր քրիստոսասէր, ընդ նմին և զծնօղսն նորին Ասասպովն, զՊաղտատն և զկողակիցն՝ զՀոնոմն, և զորդիսն իւրեանց՝ Յովհաննէսն, զԽաչատուրն, Ասասլովն, Առաքելն։ Եւ որք յիշէք՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

1173

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6373

Ծաղկող՝ Գրիգոր Երէց

ա

1բ Զմեղապարտ Գրիգոր Երէցս ծաղկօղ չորեսին աւետարանչացս հանդերձ խորաներօքն իւրովք, յիշեսջիք առ Քրիստոս։

բ

307բ Փառք...։ Կամաւ բարերարին Աստուծոյ և ողորմութեամբ նորին կատարեցաւ համազօր տառս աստուածա[յ]ին սբ. ծաղկազարդ Աւետարանս թվին ՌՃԶ (1657)։ Արդ՝ յիշեցէք Միրզէն ըղձմամբ սրտիւ և բազում ողոքանօք, որ յետ գրել զսբ. Աւետարանս հալալ ընչից իւրոց, յիշատակ իւր և ծընօղաց իւրոց։ Դարձեալ յիշեցէք հայրն իւր՝ Նաւասարդն,
308ա և մայրն իւր՝ Թաքառուկն, և կողակիցն իւր՝ Թաքառուկն, // որդիքն իւր՝ Սահակն, Ագարիէն, Ովանէսն, Մարտիրոսն, Ղազարն, հարսներն՝ Մարգարիտն, Սառէն, միւս Մարգարիտն, Հումէիսուլթանն. եղբայրն իւր՝ Ոնհանէսն։

Արդ՝ հանդիպողք սորա կամ կարդալով կամ օրինակելով, ողորմի ասացէք Միրզին, Աստուած ողորմեսցի ձեզ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

1174

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7475 (ժէ դ.)

Գրիչ՝ Յարութիւն

ա

205բ Յիշեցէք զտէր Բարսեղ նորընծայ քայհանայն և զԲարսեղ սարգա-

գակն և զՊալասան պարոն[25] և ինձ զՅարութիւն ծառայ Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Թվին ՌՃ վեցին (1657)։

Նորոգել տվող՝ մէլիք Հաթամ

Բ

Այլ գրով

206ա Արդ՝ ես մէլիք Հաթամս նորոգել և կազմել տուի Այսմաւուրքս ձեռամբ մեղսամած և մեղօք կացեալ Բարսեղ անուամբ իրիցու, յուսուցիչն իմ՝ հայրն Սարգիս քահանայ։

Դարձեալ յիշեցէք հեզայհոգի և բարեմիտ և աստուածասէր պարոն մէլիք Հաթամն կազմել ետ իւրեան յիշատակ։

Դարձեալ յիշեցէք մէլիք Հաթամն և կողակցին՝ Մարեան, և որդիքն՝ Պէկնազարն, Սարգիսն, Ղօրիմազն, Ղօխին, դստերքն՝ Խանպանին, Թէլիխան։

Դարձեալ յիշեցէք Սարգիսն, կողակցին՝ Զարիփն, միւս կողակցին՝ Զինիխան, որդին՝ Պապէն, կողակցին՝ Մալաքն[26]։

Գրիգորն, որդին՝ Պողոսն, Փարին, որդին՝ Ըս[ա]եփան, հօրեղբօրն՝ Պալասան, կողակցին՝ Հուրին, դստերն՝ Զանին, Նանին, տէր Մօսէսն, կողակցի[ն]՝ Խանաղէն, որդին՝ տէր Վանական, կողակցին՝ Մարեան, որդին՝ Սարգիսն, Իգնայտիոս, Մանուչարն, կողակցին՝ Խաթուն, Սիմոն, կողակցին՝ Գուլավգար, Պապին, որդին՝ Խաչատուրն, դուստր Խաթուն, տէր Իգնատիոսի որդի Պէկնազարն, Նէրսէս վարդապետնին։

Գ

196բ Ներքևի սուտանցքում Մէլիք Հաթամին, կողակցին՝ Մարեանին, որդոցն՝ Պէկնազարին, Սարգսին, Խանպանին, Թէլիխանին։

1175

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, Մ 7642 (1342 թ.)

Կազմող՝ Գաբրիէլ երէց

Վայր՝ Կաֆայ

184ա Արդ՝ վերըստին նորոգեցաւ գանձս աստուածային և իմանալի...։ Որոյ ցանկացող եղեալ բազումք յառաջին սրբոցն առարկելով փոխադրեցին հասուցանելով առ մեր անարժանութիւնս։ Ուստի ի նոյն հոգւոյ

184բ շարժեալ և ի նոցուն շառաւի//զէ արմատացեալ աստուածասէր քրիստոնէից ոմանց ետուն զսբ. Աւետարանս յիշատակ առ դրունս Սրբոյն Յովաննու Կարապետին, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Իսկ քրիստոսասէր ժողովուրդք սրբոյ եկեղեցւոյս, տեսին զսբ. գիրքս եղծեալ և ապականեալ, ետուն առ մեր անարժանութիւնս ի նորոգել։ Եւ մեք ըստ տկար մտաց մերոց այսչափ կարացաք նորոգել, վասն որոյ խնդրեմ ի

[25] Ձեռագրում «տպրն» ձևով։

[26] Մեկ տող դատարկ։

սրբասէր ընթերցողացդ անմեղադիր լինել սղալանաց իմոց։ Եւ արդ՝ եղև նորոգումն աստուածախաւս մատենիս յամի թուականութեան հայկեան սեռի ՌՃԶ (1657) ամի. և ի բարձրագոյն իշխանութեան տեառն տէր Յակոբ կաթուղիկոսի, և եպիսկոպոսութեան յայսմ նահանգի տէր
185ա Գրիգոր արհի եպիսկոպոսի, և երեսփո//խանութեան Ս. Յովհաննէս եկեղեցոյս խոճա Աստուածատուրին, որոյ հրամանաւ նորոգեցաւ սբ. Աւետարանս, ձեռամ[բ] մեղսամած և անարհեստ Գաբրիէլ ևթ անուամբ երիցու, ի յաստուածապահ քաղաքս Կաֆա, ընդ հովանեաւ Սրբոյ տաճարիս Աստուածածնի։ Արդ՝ երևս անկեալ աղաչեմ զսբ. ընթերցաւղսդ, յիշել ի մաքուր յաղօթս ձեր զառաջին ստացաւղբ սբ. Աւետարանիս և զվերջին նորոգաւղքն, նաև զտէր Գրիգոր ծերունի և ընտրեալ քահանայն, որ եղև պատճառ նորոգութեան սբ. կտակիս, յիշեսջիք ի սբ. յաղաւթս ձեր և զանարժան կաղմողս և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

1176

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8340

Գրիչ՝ Աւուրէլ
Վայր՝ Տարայքլուս

28բ Փառք...։ Արդ՝ կամաւն Յիսուսի Քրիստոսի ես անարժան և յետնեալ ծառայ Մարգարէ դպիրս յԵրևանցի աւարտեցի զսբ. գիրքս։

Հարցն սրբոց խարազնազգեաց ճգնաւորաց ասացեալ բանս աղետի աղերսանաց և ի խորոց սրտէ հառաչանաց։ Որ է ծաղիկ անթառամ և անուշ ահստութիւն խնկոց լոյս խորհրդոց և առ Աստուած ընթացք և դաստիարակ մանկանց Սիոնի, ի խնդրուածոյն Շուռուքեցի անարժան
29ա Աւուրէլին, որ բազում փափագ//անօք դրեցի անշնչելի յիշատակ իւրն և ուր ծնողացն և ազգայնօքն ամենայն. էր ինք ի քաղաքիս Տարայքլուս, ես՝ իրութենում գլուխնիս բաց և տկլոր և ստրբանիս բոբիկ, խիստ դառն և տխուր, որ հայցեմք անմահ թագաւորէն, որ ոչ ինչ քրիստոնայ՝ ոչ տեսանէ և այլ հայցմեք անմահ Քրիստոսէն և բարեխաւս աստուածածնէն և լուսատու լուսաւորչէն և ամենայն սրբոյ յաղօթիցն, որ բարեխօս լինին անմահ թագաւորին, որ մեզ ազատէ այս այլազգէս, այլ տէր Աստուած ի սաֆտայ յաւսման փաշին, որ մեզ ազատէ և թագաւորութիւն էր սուլթան Մհամատին։ Եւ ի հայրապետութեան Հայոց տառն սրբազան կաթողիկոսի։

29բ Եւ ի թվականութեանս Հայոց ՌՃԵ (1656) կրեցաւ սբ. խաչին պասին, որ ամենայն քրիստոնէից աւգնական լինի սբ. ամէն։

Դարձեալ աղաչեմ ես պանդուխտս և անմխիթար գծող սորա աղաչեմ և խնդրեմ, ով ոք ընթեռնուք և կամ կարդաք կամ օրինակէք, յիշեսջիք ի սբ. յաղաւթս զստացող սբ. գրոյս և յԵրեւանցի պարոն Յուլուփանն, որ զօրինակն ետուր։ Դարձեալ աղաչեմ եղբարք ձեզի Աուրէլ գրիչս մեղօք ի լի անմխիթար կայի վշտի և ի զբաղմանց։ Ժամանակի խորհրդակից, ոչ զոք չունի Աստուած ինքն դիտէ, որ ծածկագէտնէ ամենի, այժմ [յ]ոյս, փառք, պարգևողի Տեառն մերոյ, ամեն։

30ա *Դարձեալ աղաչեմ, եղբարք ձեզի, յիշման // առնէք մի Հայր մեղի զանպիտան գրիչս մեղօք, ի լի առ ոտս ձեր միշտ անկանի յիշողքն զիս, յիշեալ լիցի յաչաչ կողմեան դասն, դասն զասի յաւուր մեծի դատաստանի, ամէն։*

Բ

Արդ՝ աղաչեմ զձեզ, որ եղանակէք,
Եվ քաղցրաձայն լեզուաւ սիրով զայս երգէք,
Զիս և զիմ ննջեցեալն աղօթս յիշեցէք,
Եվ թողութիւն մեղաց մերոց հայցեցէք։
Եւ որ զմեղ յիշէ ի կամս բարի,
Եւ լի սրտիւ ասէ Աստուած ողորմի,
Անփորձ կենայ յիշողն ի յայսմ աշխարհի,
Եւ արժանի լինի տեսուն Քրիստոսի։

Կրեցաւ Տարայքլուս, *թվին ՌՃԶ (1657), ձեռամբն սուտանուն* Առաքելին:

1177

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8468

Գրիչ՝ Յովանէս դպիր
Վայր՝ Ասպահան

ա

261բ *Փառք...։ Արդ՝ սկիզբն եղև սբ. Աւետարանիս ի յերկիրն Պարսից, ի քաղաքն* Շօշ, *որ է* Ասպահան, *ի դուռն Ս. Աստուածածնին, ի յեզր* Նարբնղալային, *ի թուականութեանս հա[յ]կազան տոհմիս ՌՃ և Զ (1657) ամի, ի հայրապետութեան տեառն* Յակոբայ *սբ. յաթոռոյն* էջմիածնայ *և արքեպիսկոպոսութեան* Նոր Զուղայոյ *տէր* Դաւիթին, *և ի թագաւորութեան Պարսից <և> փոքրիկ շահ* Ապասին, *ձեռամբ անարժան* Յովանէս *դպրի, որ անուամբս եմ և գործովս ոչ եմ։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զվայելօղսդ և հանդիպօղսդ այս[մ] գրոց ի*
262ա *խնդրոյ բարեմիտ և հեզահոգի // Սհակն և զորդիքն իւր՝* Գալուստն *և* Ամինանն, *և դուստրն՝* Մունուպն:

*Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Սհակն *և եղբարքն՝* Յակոբն, Աբրահամն, Ամիրն: *Դարձեալ յիշեցէք զ*Գալուստն *և հանգուցեալ որդիքն՝* Նիկողոսն, Ղարիպն, Պետրոսն, *և դստերքն՝* Դօլվաթն, Մարգարիտն, Գարանէն, Մուրվաթն, Նսէֆն, Համանն:

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Ամինանն, *և կողակիցն՝* Խանզատէն, *և որդիքն՝* Ատոմն, Թումաջանն, Սհակն, Յակոբն, *դուստրն՝* Կօնվարն, Մարիամն, Ուստիանէն, Եթարն, Զանազէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Սհակն, *և կողակիցն՝* Կանվարն, *և*
262բ *միւս կողակիցն՝ //* Մուրվաթն: *Դարձեալ յիշեցէք* Գալուստն *և կողակիցն՝* Խանպէկին:

Դարձեալ յիշեցէք զՆիկողոսն, և կողակիցն՝ Գարիանէն, և որդիքն՝ Լալապէկն, Ադիպէկն, հանգուցեալ որդիքն՝ Աթապէկն, Այվազն, դուստրքն՝ Պաղչեկն, Արզուխանն:

Կրկին անգամ յիշեցէք Ղարիպն, կողակիցն՝ Նուրիխանն, որդիքն՝ Սարգիսն, Գրիգորն, Յարութիւն[ն], հանգուցեալ որդիքն՝ Վարդազիզն, Վարդանանն, դստերքն՝ Վարդխաթունն, Եղիսէն, Նսէֆն, հանգուցեալ Վարդխաթունն:

Ծաղկող՝ Յակոբ

Բ

201ա Աղաչեմք զձեզ, ո՛վ եղբայրք, յիշել ի Տէր զծաղկող սորա զՅակոբս:

1178
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 9694 (1457 թ.)

Հետ. ստացող՝ Յոհան

93բ Ես՝ նուաստ ծառայ Քրիստոսի Յոհան անուամբ ևեթ բանի սպասաւոր, ստացայ զայս ձեռնադրութեան գրքունքս ի թվին ՌՃԶ (1657):

1179
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 10023

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Բաղէշ

7բ [Գ]ոեցաւ խորհուրդ սբ. պատարագիս ի Բաղէշ քաղաքի ի վանս Ծրբոյն Յովհաննու Մկրտչին և առ ոտս տիեզերահռչակ դիտապետին Վարդանայ, ի թվականիս Հայոց [ՌՃ] և Զ (1657), ձեռամբ յոհնամեղ և /// Աւետսի, ի լաւ և յստոյգ օրինակաց և ի մեկնչկաց գեղեցկայարմար շարիւ և պայծառ արարողութիւն:

Մի՛ ոք տեսեալ զսա զանց [բ]անիցն հեքնելով զմեզ. զի ի բազում ախմար և ի տգէտ գրչաց այլայլեալ էր ար[արող]ութիւն սբ. պատարագին: Վասն որոյ այժմու ժամանակիս ի տգէտ քահանայից այսպէս է տարածեալ ըստ բնու /// աշխարհս Հ[այո]ց: Են ոմանք քահանայք, որ ի ժամ սբ. պատարագի ողջունին, սակաւ ինչ շեղեալ ի սբ. /// և զձախն ի միջի նորիս /// կացուցանեն և յետոյ դառնայ խաչակնքէ զժողովուրդն: Ոչ գիտենալով յորտեղի պարտ է օրհնեա Տէր ձայն և կամ յորտեղի զխաղաղութիւն տալ և կամ զսաղմոս որպէս պարտ է ասել: Ահա զամենայն ստուգապէս լի և անթերի գրեալ եմ: ... /// [Խո]հրդատետր /// ի դուռն Արծկոյ /// սբ. վանից ///

1180
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մագիստրոս, № 34 (ԺԷ դ.)

33 Ի թվին ՌՃԶ (1657), որ շարժ եղև ի քաղաքն Վասպուրական, որ է

Վան, *դիշեր է (7) անգամ, յետոյ ժ—ի (10—20) դիշեր եղև, որ շատ մարդ տնով գնաց յէգէստան:*

1181
ԺԱՄԱԳԻՐՔ
Տիրայր վարդապետ, Ն՝ 24

Գրիչ՝ Սարգիս

ա

350 *Գրեցաւ ժամագիրքս ի վայելումն պարոն* Մարտիրոսին, *ձեռամբ սուտանուն* Սարգիս *գրչիս, միով Հայր մերով յիշել խնդրեմ:*

բ

Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր պարոն Մարտիրոսն, *որ ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց. ամէն: Ընդ նմին և* զՍարգիս *գրողս, զծ[ն]օղքն իմ՝* Մարտիրոս *քահանայն և* զՓարիխանն *և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն:*

գ

Գրեցաւ ժամագիրքս ի խնդրոյ պարոն Մարտիրոսին, *զոր Աստուած բարով վայելել տացէ. ամէն:*

դ

Գրեցաւ ժամագիրքս թվին ՌՃԶ (1657), ի խնդրո[յ] պարոն Մարտիրոսին, *ձեռամբ սուտանուն* Սարգիս *գրչիս, որ եմ մեղօք թաւալեալ և բարեաց դատարկ:*

1182
ԱՒԵՏԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, Ն՝ 55

Գրիչ՝ Սարգիս քահանայ
Վայր՝ Բարկիս

917 *Փառք...: Եւ արդ ես յետինս ի գրչաց և անարժան ի կարգաւորաց սուտանուն քահանայ* զՍարգիս *հրաման առեալ...:*

Արդ՝ գրեցաւ ի սբ. Աւետարանս ի երկիրս Գեղամայ, *ի գեօղս որ կոչի* Բարկիս: *Եւ ես՝* Սարգիս *գրիչս եմ ի յերկրէն* Ղափանայ, *ի գեղջէն* Գորիսոյ, *որ ազդմանէ չարին փախեալ եկաք բնակեցաք ի գեօղս* Բարկիս, *և աստ գրեցաք զսբ. Աւետարանս ի թվիս Հայոց ՌՃԶ (1657) էր, ի հայրապետութեան սբ. էջմիածնայ* Յակոբ *կաթողիկոսի. և ի առաջնորդութեան սբ. ուխտիս Մաքենոց* Գրիգոր *վարդապետի. ի թագաւորու-*
918 *թիւն* Տաճկաց *փոքր շահ* Ապասին. *և ի // զանութիւն* Էրէվանայ Ղաղախ *խանի, որդի* Նաչափղուլուն, *և ի մելիքութեան երկրիս* Գեղամայ Մելիք *բեկին: Եւ յիշեցէք զտառապեալ* Սարգիս *գրիչս և զծնօղսն իմ՝* զՊետրոս *քահանայն և* զԳուլին, *նաև զեղբայրն իմ՝* զՅակոբ *քահանայն, և է ուսուցիչն իմ, որ հանդեաւ ի Քրիստոս և սուգ անմխիթար եթող ինձ մե-*

զաւորիս։ Աղաչեմ եղբարք, թողութիւն արէք սղալանաց և խոշորութեանն սորա։ Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործութեանն խորհուրդ հաւատարիմ և բարեպաշտ և հեզահոգի Մխիթարն, որ ետ գրել զսբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց. զհայրն իւր՝ Խեչումն և զմայրն իւր՝ զԽաթունենանն, և զկենակիցն իւր՝ զսրբասէր և քահանայասէր, բարէմիտ Մանրիրն և զամենայն արեան մերձաւորսն. ամէն։

Քանզի որք ի մեծութեանն ընչից ըղծան ոչինչ աշխատութեանն զմտաւ ածեն այլմէ անցանել գաւառս հեռագնացս ուղևորութեան որպեսզի շահն աճեցուցանել, յիշելով զասացեալս ի մարգարէին, թէ «Երանի...»։ Եւ քանզի գիտելի և զի ոչ ունէին սոքա որդի մարմնաւոր յայսմ աշխարհի։ Եւ ի միտի եդեալ գրել ետուն զսբ. Աւետարանս, որ եղիցի որդի հոգևոր և ոչ կորընչին անուանք սոցա ի յայսմ աշխարհէս,
010 և ի հանդեր//ցեալն բարէխօս լինի առ Տէր վասն հոգոց սոցա, և փրկեսցէ ի յաւիտենական տանջանացն. ամէն։

Այլ և յիշեցէք զՄխիթարն և խնդրեցէք Աստուծոյ որ մխիթարուի ի Հոգւոյն Սրբոյ. և Աստուած ողորմի ասացէք Մխիթարին, և իւր կողակցին՝ Մանրիրին, և ծնօղացն՝ Խեչումին և Խաթունենանին, և եղբարցն՝ Պատիրին, Սարգիսին, Մարտիրոսին. և քրտերցն՝ Մարիանին, Խաթունին և Շենաւորին. և որդոցն՝ Խաչատուրին, Մարտիրոսին, և Գիրակոսին. և դստերն՝ Էթարին, Խաթունին, որ հանգուցեալ են առ Քրիստոս, և սուգ անմխիթար թողին ծնօղաց իւրոց. և կենդանի դստերացն՝ Փարուն, և Սուլթանին, և Հերիֆնազին, Յեթարին. և թոռանցն՝ Յոհանին, Սարգիսին, և Խլին, և Մարինոսին. և փեսայիցն՝ Մինաս վարդապետին, Յակոբին և տէր Պալասանին։

Դարձեալ յիշեցէք զՄխիթարն և զպապն իւր՝ Ալբերշանն, և զտատն՝ Երեսխին, և զհօրեղբայրքն իւր՝ Մարգարէին, Սարգիսին, տէր Վարդանին։ Այլ և յիշեցէք զՄանրիրն որ շատ աշխատանք ունի ի վերայ մեր հոգևոր և մարմնաւոր, Աստուած վարցս հարիւրապատիկ տացէ յայսմ յաշխարհի և ի հանդերձելումն ընդ սրբոյն դասեսցէ. ամէն։ Եւ ծնօղսն Մանրիրին՝ հօրն՝ Ոլուխանին, մօրն՝ Թամամին. և եղբարցն՝ Միրզա-
020 խանին, Վար//գանին. և եղբօրորդոցն՝ Մելֆումին, Վարդանին, Խաչատուրին, և միւս եղբարցն՝ Դաւութին, Յովանէսին. և մօրքուերցն՝ Կիլիփարին, Խանումին. և պապին՝ Մարտիրոսին և տատին՝ Մարիանին. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՓարին, և զհանգուցեալ որդիքն իւր՝ Կիրակոսին և Մկրտչին, և դստերացն՝ Սաղվարին և միւս Փոֆրիկին. ամէն։ Այլ և յիշեցէք զՄխիթարն, և զեղբայրն իւր՝ զտէր Խաչատուրն, և Աստուած ողորմի ասացէք հին և նոր ննջեցելոցն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄխիթարն և Աստուած ողորմի ասացէք սմա, որ արար կտակ, եթէ ոք ի դստերաց կամ ի թոռանց կամ ազգականաց բերան բերցէ առ ի վաճ[առ]ելոյ զսբ. Աւետարանս ԳՃԺԸ (318) հայրապետացն, և ԻԴ (24) մարգէիցն, և ԲԺ (12)-ան առաքելոցն անիծաց լիցի։ Եթ[է] ոք լրբուի և հակառակի՝ Քրիստոսի խաչահանողացն եղիցի։ Այլ և յիշեցէք զՄխիթարն և զքոյրն իւր՝ Հուռումն. ամէն։

1183
ՄԱՇՏՈՑ
ՏԵՐԱՎԴ, № 88

Գրիչ, նվիրատու՝ Յակոբ Ջուղայեցի
Վայր՝ Էջմիածին

ա

151ա Փառք... Արդ՝ աղաչեմ զձեզ եղբարք, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զՋուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս, որ բաղում փափկանօք գրել տվի Մաշտոցս զայս, յիշատակ ինձ և իմ ծնողացն՝ Աւաքին և Եղիսաբեթին, և իմ կողակցին՝ Անձրևվարթին, և որդոյ իմոյ՝ Խաչատուրին, Էլիազին, և եղբա[ւ]րն իմոյ՝ Ոնանին, և քվերն իմոյ՝ Անայէ, և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Եթէ ոք զմեզ մի բերան յիշեսցի՝ նայ ի գիրն կենաց յիշեալ լիցի. ամէն։

Դարձեալ աղաչեմ եղբարք Մաշտոցիս համար վասն չարութեան ժամանակիս, թէ գերի անկանելով կամ յափրշտակելով կամ վաճառելով. եթէ ոք ի սմայ հանդիպեսցի, վայելեսցէ զայս Մաշտոցս, աղաչեմ առանց որ զյիշատակս իմ մի՛ շնչեսցէ, եթէ ոք յանդգնի զյիշատակս իմ ջնչեսցէ՝ նայ ի յա///այս ղրկեալ լիցի ամենայն գոյականօք, ընչիւք և ի հանդերձեալս Քրիստոսի տեսութեան զրկ[եյալ լիցի։ Եթէ ոք զայս Մաշտոցս վայելեսցէ և զիւր յիշատակն ի մէջ սորայ դրեսցէ՝ խնդրեմ ի յԱստուծոյ, որ իւր առատ ողորմութեամբն ի ահեղ ատենին ձեզ և ինձ ողորմեսցի։

Դարձեալ յիշեցէք զմահդասի Յակոբ վաճառականս, որ Մաշտոցս դրել տվի թերի մնաց, սորա Գ (3) տետրն ես գրեցի, թողութիւն շնորհէք որ զչափ կարողութեան իմոյ այս էր, զոր գրեցաք, վարպետաց չէի ուսեալ, թէև ել պակաս լինի գրած՝ անմեղադիր լերուք։ Մաշտոցս գրրեցաւ ի դուռն սբ. Էջմիածնայ, ի հայրապետութեան... երիս սրբազան Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին, ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657) ամին։

Աղաչեմ զձեզ եղբարք, որ Մաշտոցս վնասակար բանից պատրաստ պահեցէք, թէ ջրէ կամ թաց տեղէ, թէ աւազակաց, եթէ ոք զայս խընամօք պահեսցէ՝ խնամօղն արարածոց գնայ անփորձ և անսասան պահեսցէ յայսմ աշխարհիս, յետ այս կենացս ելանելոյ արքայութեան արժանի արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՅակոբ վաճառականս և զեղբարն իմ՝ Ոնանն, և զիւր կողակցին՝ Մրվաթն, և որդիքն՝ Ոսկանն, Սարատն։ Եթէ ոք զմեր ընդնշեցեալսն յիշեսցէ՝ նայ արքայութեան արժան լիցի. ամէն։

Ի թվականիս Հայոց ՌՃ [?] (165[?]) ըսկիզբն եղև Մաշտոցիս, ՌՃԶ (1657) թվին կազմեցաւ ի դուռն սբ. Էջմիածնայ։

151բ Ես՝ Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս իմ կենդանութենովն Մաշտոցս յիշատակ տվի Շամբայ գեղին եկեղեցին, որ զանուն Աստուածածին կոչի, որ ընդ հովանեաւ է Ս. Ըստէփանոսի Նախավկային. յիշատակ ինձ և իմ ծնողացն։

Բ

150բ Յայտնի լիցի ձեզ եղբարք, որ Մաշտոցումս բան շատ կայ գրած, որ կարգին չէ, վասն այն պատճառի, որ օրինակ չի լէր, յետևեաց օրինակ ընկել յորտեղ հանգիպէլ այ, գրվէլ այ. անմեղադիր լերուք։ Զինչ որ կամենաս ցանկովս դիտ և կարդայ Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս յիշեայ ի Տէր և զուն յիշեալ լիցիս ի Տեառնէ։

1184

ՏՕՆԱՅՈՅՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 827

Գրիչ՝ Մուռն
Վայր՝ Երընջակ

225բ Փառք...։ Արդ գրեցաւ սա յերկիրն Երընջակայ, ի վանքն Ս. Կարապետու, ձեռամբ Մուռն կրօնաւորի...։ Ի թուին Հայոց ՌՃԶ (1657)։

1185

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 828

Գրիչ՝ Կարապետ Վանեցի
Վայր՝ Վան

ա

225բ Օրհնութիւն, գոհութիւն..., որ ետ կարողութիւն սուտանուն գրչի
226ա Կարա//ետ քահանայի Վանեցւոյ հասանել յաւարտ յայսմ սբ. կտակիս, յամի ՌՃԶ (1657) թուականին Հայոցս, ի խնդրոյ պատուական և Քրիստոսի օրհնեալ արմատոյն խօջայ Սարուխանին...։ Եւ ամենակարող զօրութեամբն Աստուծոյ ի յանկ և յաւարտ հասուցի զսա ի յերկիրս Վասպուրականի, ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին, ի յաշխարհական թագաւորութեան Տաճկաց սուլթան Մանմատին, ի հայրապետութեան տեառն տէր Յակոբ կաթողիկոսի սբ. աթոռոյն էջմիածնայ և յառաջնորդութեան սբ. ուխտիս Վարագայ տէր Պօղոս բաբունապետի...։

Բ

Յիշել աղաչեմ ի Քրիստոս զՏիրամայն Աստուածածնի ժամատան քահանայքն՝ զտէր Յովհաննէս, զտէր Մարտիրոսն, զտէր Ստեփաննոսն, զտէր Նիկողայոսն, զտէր Մեսրոպն, զտէր Գրիգորն, զտէր Աւետիսն և զմեղաւոր Կարապետ էրէց գծող սորին։

Գ

471 Օրհնութիւն..., որ ետ կարողութիւն սուտանուն գրչի Կարապետ մեղաւորի, յամի ՌՃԶ (1657), ի խնդրոյ... խօջայ Սարուխանին, որ ստացաւ զսա, յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, հօրն իւրոյ՝ խօջայ Յովասափին, մօրն՝ Խումարին, կողակցոյն՝ խանում Խաթունին, որդւոյն՝ Գրիգոր չալապուն...։ [Աղաչեմ] Աստուած ողորմի ասել անարհեստ

գծողիս՝ մեղաւոր վանեցի Կարապետի[ն] *և ծնողացն իմոց՝* Ախիջանին *և* Խանաղին... *և վարպետացն իմոց՝ տէր* Կարապետ *քահանային և տէր* Ստեփանոս *քարտողարին, որ սոքա բազում երախտիք ունին ի վերայ մեղաւորիս...։*

Ծաղկող՝ Սահակ դպիր

Դ

Զտառապեալ անձս Աւանցի,
Սահակ *դպիր յիմար գերի,*
Զսուրբ Յայսմաւուրքս ծաղկեցի,
Պայծառ գեղով և ակներով զարդարեցի։
Ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնին,
Եւ Գաբրիէլ *Ս. Հրեշտակապետի,*
Որք հանդիպիք այսմ տառի...[27]*։*

Ստացող՝ խոջայ Սարուխան

Ե

226ա *Ես՝ խոջայ* Սարուխանս *ստացայ զսբ. գիրքս ի հալալ արդեանց իմոց և եդի յիշատակ ի դուռն Տիրամայր Ս.* Աստուածածնին *և* Գաբրիէլ *Ս. Հրեշտակապետին...։*

1186
ԱՀԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Ա, № 829

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Եայլախ

226ա *Փառք..., որում ցանկացող եղև այսմ աւետաւոր սբ.* Աւետարանիս Քարատակեցի Մատուռն...: *Արդ՝ գրեցաւ սբ.* Աւետարանս *ի վիճակն Ստաթէի սբ. առաքելոյն, ի յերկիրն* Սիւնեաց, *ի գեօղն* Եայլախ, *զաւառն որ կոչի* Ակուռք, *ի դուռն* Ակնայ *Ս.* Աստուածածնին, *ի հայրապետութեան* Յակոբ *կաթողիկոսին, ձեռամբ* Կիրակոս *գրչի, ի թուականիս Հայոց ՌՃԶ (1657)։*

Արդ՝ սբ. Աւետարանս *վախմն տուինք* Քարատակի *եկեղեցին՝ Ս. Մարտիրոսին։*

1187
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 579

Գրիչ՝ Սամուէլ քահանայ
Վայր՝ Գեսաթաղ

470 *Փառք..., որ ետ կարողութիւն տկար* Սամուէլ *գրչի, սուտանուն քա-*

[27] Գ և Դ հիշատակարանները վերցրել ենք նույն հեղինակի «Ընչխարք» Բ հատորից (№ 582, էջ 471)։ Քանի որ վերոհիշյալ երկու հիշատակարանները վերաբերում են միևնույն ձեռագրին և անձնավորություններին, ուստի դրեցինք միատեղ։

հանայի...։ Արդ՝ գրեցաւ սա յերկիրն Ռոռտան, ի գեղն Գետաթաղ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ձեռամբ Սամուէլիս, ի թուականութեանս մերում հայկազեան սեռի ՌՃՉ (1657), ի կաթուղիկոսութեան սբ. Էջմիածնին և Հայոց ամենայն քրիստոնէից բուն աթոռի, երիցս երանեալ բարունապետի, հովուապետ Հայոց երջանիկ մեծի, ամենախմաստ և վեհ Յակոբի, նորընծայ աթոռակալ սբ. հայրապետի. և մերոյս աթոռոյս Թաղէի սբ. առաքելոյն Յոհաննէս վարդապետի նորին աշակերտի, զոր Աստուած անփորձ՝ պահեսցէ։

1188
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընդխարք», հտ. Բ, № 580

Վայր՝ Յուկուրծու

470 Փառք...։ Աւարտեցաւ քրիստոսահիմն... գիրքս յամի ՌՃՉ (1657), ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, ի յերկիրն Կեցնայ[28], ի գիւղն Յուկուրծու, ձեռամբ փծուն գրչիս, ի խնդրոյ բարեմիտ տանուտէր Խաչատուրին...։

1189
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընդխարք», հտ. Բ, № 581

Գրիչ՝ Յարութիւն դպիր

Վայր՝ Քարքման

471 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի գեօղս Քարքման գաւառ, ի թուականութեանս Հայոց ՌՃՉ (1657), ձեռամբ Յարութիւն դպրի, ի հայրապետութեան սբ. Գանձասարայ տեառն տէր Պետրոս կաթուղիկոսի....։ Զվարպետն իմ՝ Գրիգոր սրբազան քահանայն և հայրն իմ՝ Յակոբ քահանայն։

1190
ԺԱՄԱԳԻՐՔ

ՏՀՁՄՎ, № 404

ա

856 Մեղաւոր գրչիս[29] /// յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ։

բ

Գրեցաւ ձեռամբ անարժան[30] թվին ՌՃՉ (1657)։ Աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Քրիստոս, և[31] դուք յիշեալ լիջիք։

---

28 Հավանաբար Կեցան գավառն է Վանի փաշայությունում, Կարճկանից հարավ-արևմուտք։

29 և 30 Երկու դեպքում էլ գրչի անունը չնշված է և միայն առաջին դեպքում գրված «Պետրոս»։

31 Տպված է «ի»։

1191
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 30

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Նորագաւիթ

196 Փառք...։ Գրեցաւ աստուածախօս մատեանս՝ աստուածահօրն՝ Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ յոգնամեղ և ամենաթշուառ Մարտիրոս գրչի, ի թուականութեանս Հայոց տօմարի ՌՃԶ (1657) ամի, ի թագաւորութեան փոքր շահ Ապազի, ի գեղն Նորագաւիթ, ի տեղապահութեան Նաճաւդուլի խանին, ի հայրապետութեան Հայոց քաջ բարունապետի, տեառն Յակոբ կաթողիկոսի, որ յայսմ ժամանակի նորոգեաց զսբ. էջմիածինն և այլ բազում եկեղեցիս շինեաց, և զժամատունս նորոգեաց, զկարգ և զհաւատս հաստատեաց, և ուղղեաց ի կարգ և զկանոն առաջին սբ. հայրապետացն, որ յայսմ ժամանակի ճառագայթեալ փայլի ի մէջ հաւատացելոց, որպէս զարեկագն ի միջօրէի ամարան և լուսինն լրացեալ ի մէջ գիշերի աշնան։

1192
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 51

Գրիչ՝ Յովան
Վայր՝ Մազրագրակ

262 Փառք...
Գրեցս սբ. երկարանս Դաւթի մարգարէին,
Ձեռամբ անպիտան և անիմաստ գրչի,
Հոգոյն Սրբոյ պարգևողի։
Զայս երգ աւրհնութեան յանուն նորին,
Տուեալ որգոց աղամածնի,
Հաստատելոց որդոյն Միածնի,
Յան[կ]ացող եղև այս երգարանի։
Գրել զսա մեղսամած գրչի,
Որ Յովան անուն կոչի,
Զոր ես զանունն այն առի,
Գործովք ի լի եմ աղտեղի։
Գրեալ զսա ի գիւղս Մազրագրակ կոչի,
Ընդ հովանեաս Ս. Աստուածածնի,
Եւ այլ ամենայն սրբոցն. ամէն։
Աղաչեցէք զՏէրն բարի,
Զի դարձ առնէ Հայոց ազգի,
Դառնալ յիւրաքանչիւր տեղի,
[Յ]աթոռն հայրենի,
Թվին ՌՃԶ (1657) Հայոց թվի,
Եւ տէր Աստուածն աւրհնեալ յամենայնի։

Ո՛վ եղբայրք, ուսանելով կամ կարդալով յիշեցէք յաղօթս ձեր ե Աստուած յիշողացդ ողորմեսցի։ Ո՛վ եղբայրք, ամենայն ինչ սղալանացս, որ ի սմա կա, մի՛ մեղադրէք, զի կայր մեր այս է. զուգակշիռս արէք, թերին լցէք, զաւելին ի բաց ձգեցէք, ի լաւ և ընդիր աւրինակէ Գառնեցոյ։

1193

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՄՏՉԵՊ, I, № 8

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Ըստամպոլ

ա

66 Փառք...։ Արդ՝ աղաչեմք բանիմաստ հանճարունոզ սրբասէր եղբարցդ, որք հանդիպիք այսմ տառիս, յիշեցէք զստացող սորա մահդասի տէր Աստուածատուրն և զծնողսն իւր՝ զՅովանէսին և Աննային, և զկողակիցն՝ Մարիամին, և հոգևոր զաւակն իւր՝ Նային, և ամենայն արեան մերձաւորսն. և զիս անպիտան գրիչս զՅակոբ սարկաւագս և զծնողսն իմ՝ զՊաղտասարն և զՈւստիանէ յիշեցէք ի միւսանգամ գալստեանն. ամէն։...

Գրեցաւ և աւարտեցաւ սրբոց պատմութիւնս, որ կոչի Այսմաւուրք,
67 թվականիս // ՌՃԶ (1657), ի քաղաքն Ըստամպոլ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսու, ի դպրատանն վարպետիս, զոր մեզ զգիրս ուսոյց։

Ստացող՝ մանտեսի Աստուածատուր

բ

Եւ ես՝ մեղաւոր և անարժան Աստուածատուր երէցս Ըստամբոլու, անյիշատակս ի հոգևոր և ի մարմնաւոր զաւակէ, ի միտ առեալ միայն զայս գտի յոյս ևեթ անձին իմոյ և հոգոյ սփոփանս, և գրել ետու զվարս և զպատմութիւնս սրբոց առաքելոց, մարգարէից, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց և ամենայն ընտրելոցն Աստուծոյ, առ ի յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց՝ Յովանէսին և Մարիամին, և կողակցին իմոյ՝ Աննային, և ամենայն անցաւորացն իմոց, եդի յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Սբ. առաքելոյն Յակոբայ, որդոյն Զեբեդեայ. սա եղիցի ինձ յոյս իբրև զարձան կանգնեալ յաւիտենական...։

1194

ՈՍԿԷ ՓՌՐԻԿ

ՄՏՉԵՊ, I, № 11 (1634 թ.)

87 Դարձեալ յիշե//ցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Աւանաց գիւղի քահանայից և տանուտէրաց, որ արարին լաւ բարութիւն՝ գեղով միաբան զսբ. գիրքս գնեցին, յիշատակ իւրեանց հոգոյն, և եդին ի դուռն Ս. Յովանիսայ՝ անջինջ յիշատակ։ Ո՛վ ծախէ կամ գրաւէ կամ հեռացուցանէ ի դրանէ Ս. Յովանիսայ՝ նա զանէծքն Կայէնին և զպատառն Յուդայի առցէ. ամէն։ Թվին ՌՃԶ (1657)։

1195
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մշեցի, I, № 232

Գրիչ՝ Թումայ Բաղիշեցի
Վայր՝ Երուսաղէմ

638 *Փառք..., որ ետ կարողութիւն անպիտան և տկար ոգոյ և մեղսամած մատին իմոյ հասանել ի յաւարտ այս սբ. տառիս, որ կոչի Սաղմոսարան, Աղօթամատոյց և Տօնացոյց, ի լաւ և յընտիր, յԸստոյգ յօրինակէ։ Ի խնդրոյ սրբասէր և մաքրամիտ, քրտնաջան և աշխատաւոր առն Աստուծոյ տէր Նիկողոսին, որ է փակակալ և սպասաւոր Յակոբայ Տեառնեղբօր սբ. տաճարիս և Յակոբայ Գլխադիր սբ. դամբարանին։ Զոր եռափափագ կարօտիւ և ջերմեռանդ սիրով ետ դրել զսա, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Ղազարին և մօրն՝ Մարիամին, և մեծ մօրն՝ Ղիմաթին, և կողակցին իւրոյ՝ Ալթունին, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և զաւակաց նոցին և ամենայն արեանառու մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոցն։ Քրիստոս Աստուածն մեր յորժամ գայցէ ի դատաստան անպատում ղօրօք և հայրենի փառօք առ ի*
639 *դատել զերկիր, ի յայնմ աւուր ահեղին և ի սոսկալի տեզերահրաշ // ատենին թողցէ զյանցանս աէր Նիկողայոս քահանային և զզարմից նորին, ամէն։*

Գարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և ի մաքրափայլ յաղօթս ձեր ի ժամ սբ. պատարագին զտէր Նիկողայոսն, որ ստացաւ զսա յիշատակ յեկեղեցի վասն փրկութեան հոգոյ իւրոյ։ Ընդ սմա և յիշել աղաչեմ զհոգևոր ծնողն՝ զՇահումն, որ իբրև զհարազատ որդի կու խընամէ, Աստուած զիւր մեղք թողու. ամէն։ Զի թէ միով ողորմայիւ յիշէք դուք զսոսա ողորմութեան և արքայութեան արժանի լինիք. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքս ի սբ. Երուսաղէմ, ընդ հովանեաւ Յակոբայ Տեառնեղբօր երկնանման սբ. աթոռին և Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, որ ցանկալի է հրեշտակաց և բարեխօս վասն հայկազան սեռի, ևս առաւել վասն ստացողի սորին, և այլ սբ. և աստուածահոտ տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյն մերոյ. ձեռամբ սևերես և մեղապարտ մեղօք հարստացեալ և յառաքինութեանց աղքատացեալ Թումայ երիցոյ Բաղէշացոյ, որ զանունս միայն ունիմ և զգործս ոչ։

Արդ՝ գրեցաւ սա յամի հազարերորդի ընդ նմին Զձ (600)-որդի միակ յոբելինի և Թ (9) նմին յաւելորդի[32] *գալստեան Կենարարին մերոյ, և ըստ խոսրովային թրւոյ հայկազանցս քսաներորդ և երկրորդ յոբելինի և ի նմա Զ (6)-երորդ աւելորդի*[33]*, ի հայրապետութեան ամենայն Հայոց, որ ի սբ. Էջմիածին տեառն Յակոբայ Զուղայեցւոյ, և տանն Կիլիկեցւոց տեառն Թորոսի, և ի թագաւորութեան Իսմայելացւոց սուլտան Մէհմէթին, և յառաջնորդութեան սբ. ուխտիս բարձրագոյն աթոռոյս Երուսաղէմայ տեառն Աստուածատրոյ խստակրօն հայրապետի, յորում*

---

[32] *Այսինքն՝ 1000+600+50+9=1659։*
[33] *Այսինքն՝ (22×50)+6+551=1657։*

ժամանակի առաւել զօրացան չարաճճիկ ազգն Ցունաց ի վերայ անմեղ ազգիս Հայոց, և ազգ և ազգ խորհուրդ չարութեան ի մէջ առին և արեամբք ևս ի գլուխ հանին, կարծելով թէ ոչ գոյ Աստուած ի մէջ մեր։ Բայց նա որ յամենայնի կարողն է և Տէր ոչ իսպառ թողացոյց կոխան առնել զմեզ թշնամեաց մերոց, թէպէտ և առ ժամանակ մի զկծեցոյց զմեզ։ Բայց զկծեցուցանողսն զայնոսիկ էարկ ի ներքոյ յաւիտենական ամօթոյ, զոր փոքր ի շատէ ճառեցից զվտանգ աղետի մերոյ ի ձեռաց չար ազդիս, որ ոչ թէ այլազգաբար դրամի և փողի հակառակեն, այլ հանգոյն կռապաշտից հաւատոյ թշնամի եղեալ զմեր հոգոյ տուն կամեցան յափշտակել ի մէնջ, զի ունէին զմեղմեխ խորհուրդս իւրեանց, ծածկեալ յառաջագոյն ժամանակաց, և յանցեալ ամիս փոքր ինչ յայտնեցին, ի ժամ բխման սր. լուսոյն, գալով ամբոխեալ մտօք, և վրդովումն արարեալ ի մէջ խառնիճաղանճին, որ և լծերունի երիցս երանեալ հայրապետս մեր առ ոտին ձգեալ քայքայեցին, և զթագն ի գլխոյն փայտիւ ընկեցին, և կալեալ ի վարսիցն երես ի քարշ կոփանօք տանջեցին, և նա ամենայն տանելով վասն Աստուծոյ ոչ եղև վրէժխնդիր և ոչ եթող այլոց լինել։ Վասն որոյ և Կայեն պատրիկն Հոռոմոց, որ առիթ էր այս չարեացս, տեսեալ զմիամտութիւն ազգիս անտէր և ամայի կարծելով, սկսաւ փոքր առ փոքր ձեռն արկանել ի վիճակս Հայոց։ Եւ այսպիսի չար մտօք ելեալ գնաց ի Կոստանդնուպոլիս և գտեալ զհոմանիս չարութեան իւրոյ, և նոքօք զանուն թագաւորին աղճատելով, սուտ խէթիշէրիֆ մի յայտնեալ, յորում միշի զիւրեանց ձեռին լեալ զվանք և զվիճակքն մեր, և զՀապաշ ազգին, զամենայն գրեալ էին ըստ իւրեանց չար մտացն, ոչ ոք ի թագաւորական դրանցն գիտելով զայն։ Եւ եկեալ աստ սուտ հրամանաւն յափշտակեաց զվիճակսն Հաբաշիցն, և ձեռն արկեալ ի վիճակս Հայոց։

Նախ զՍ. Յակոբ կամեցաւ յափշտակել, վասն որոյ և ծերունի սբ. հայրապետն մեր սթափեալ ի տկարութենէ և յոգի եկեալ իմացաւ, զի վճարեալ էր չարութիւն նոցա առ մեզ։ Եւ նորին աղագաւ ելեալ ի սբ. աթոռոյս և դրանէ ի դուռն շրջելով ծանուցանէր ամենեցուն զաղէտ վտանգի ազգիս մերոյ, զի զրկելոց էին ի փառաւորագոյն աթոռոյս։ Եւ այնպէս աղաղակելով եհաս ի մեծահանդէս քաղաքն յԿոստանդնուպոլիս։ Եւ անտանօր գտեալ զերամս քրիստոնէից զմերս Հայոց, և ծանոյց ամենեցուն զեկեալ փորձութիւնսն. որով սկսան ամենեքեան հոգալ և ցաւել, ե ոչ գիտէին թէ զի՞նչ արասցեն։

640 Ապա ի խնամոցն Աստուծոյ ազգեցութենէն անկաւ ի սիրտ նոցա վասն երիցս երանեալ // առն Աստուծոյ տէր Եղիազար վարդապետին, որ էր այր խորհրդական և հանճարեղ, գաւառաւ Հռոմկլայեցի, վարժեալ առ ոտս տեառն Յովանէսի Շնֆուշեցւոյ, վարժապետի սրբասնեալ հայրապետիս մերոյ տեառն Աստուածատրոյ, ի միում հրահանգի սնեալ համշիրակ աշակերտք։ Եւ սա կալեալ զաթոռակալութիւն Տեառնեղբօր, և նա առաջնորդ եղեալ Արղնոյ Բարձրահայեաց Ս. Աստուածածնին յորջորջեալ տեղեացն, և այժմ վասն նորին պակասութեան գնացեալ Կոստանդինուպոլիս, և հոգացեալ զամենայն հոգս իւր դառնալոց էր անդրէն։

Բայց վասն վերոյ գրեալ փորձութեանցն վերոյահասելոցն սբ. աթոռոյս, ամենայն ազգս միաբանութեամբ և կամօք Աստուածատրոյ, սոյն աթոռիս առաջնորդի, ի մէջ բերեալ զվերոյ ասացեալ Եղիազար վարդապետն, և ոչ իւր կամաւ, այլ ի հարկէ յանձնեցին ի նա զգործ վէքիլութեան սբ. աթոռոյս, զի թերևս վասն փորձութեանս ևս հոգասցէ փրկութիւնս։ Որ և իսկապէս քաշասբտեալ և գօտէպնդեալ, ի ժամանակս տասնեկի ամսոց և յաւուրս Ե (5) և Զ (6) վաղիրաց. և ի դէմս բռնաւորաց ճակատ առ ճակատ ընդ Յունաց ազգին խազմ արարեալ և ընդդիմաբանէր ընդդէմ լեզուագարութեան նոցին։ Եւ իբրև յաճախեաց ժամանակն զիր աղաղակի առաքեաց առ Հայոց ազգս որ յԱմիթ և յԱրզրում և յայլ քաղաքս, զի թէ գուցէ ուրուք օգնութիւն և ձեռնտրութիւն ինչ հասուսցեն ինքեան։

Վասն որոյ ամենեքեան շերմաջերմ սիրով փութացան յօգնութիւն. ոմանք անձամբ անձին գնացին, որպէս Վանեցի խոճայ Բօճիճանճ, և ոմանք զհայրենական գանձս բացեալ գտին, զի վաղեմի թագաւորաց տուեալ հրամանսն առ մեզ, զի սեպհական լիցին վիճակքս մեր։ Զոր այնոյ յոյժ զօրացեալ սբ. հայրն մեր տէր Եղիազար վարդապետն, և բացեալ զայնոսիկ ի դիւանս բռնաւորացն և կարկեցոյց այնու զբերանս դատախազիցն ազգին Յունաց, և ամենեքեան հաճեալ ընդ հնոյ թագաւորաց հրամանս, և տարեալ ցուցին այժմու մանկահասակ թագաւորիս մերոյ սուլտան Մահմատին։ Եւ նա տեսեալ զգիր հրամանի նախնեաց իւրոց, և ինքն ևս երկ[բ]որդեալ հաստատեաց զվիճակքն մեր ի ձեռս մեր. ո՞չ թէ յորոց այժմ ջանային զրկել զմեզ, այլ ի ժամանակէ հարց մերոց յափշտակեալ զվիճակսն մեր, ընդ բռամբ ածեալ տիրեցաք ամենայնի, զոր կարի վայելուչ է գրել զամենայն, թէ ոյք են վիճակքն զորս առաք, այսինքն զգերապատիւ և զհրաշափառ Սննդեան սբ. այբն և զմսուրն սբ. առ ի մատուցանել զփրկական սբ. պատարագն։ Եւ անդանօք կախեցաք ԻԱ (21) կանթեղս և բացաք զվաղուց հետէ փակեալ դուռն ազգիս մերոյ։ Եւ ի վերայ գերեզմանին Քրիստոսի Ե (5) կանթեղս, և ի պատանատեղն Քրիստոսի եղաք Բ (2) աշտանակս մոմոյ և կանթեղ մի, և ի մէջ Ս. Յարութեան լեալ ջրհորն մեզ սեպհականեցաք. նաև զամենայն վիճակս Հաբաշ ազգին, զոր գրելն տաղտկութիւն բերէ լսողացն։ Եւ այս ամենայն յաջողումս ի շնորհացն Աստուծոյ պատահեցաւ մեզ, որ զօրացոյց զվերոյ գրեալ հայրս մեր զտէր Եղիազար աստուածաբան վարդապետն ի գործս յայս դժուարին։ Վասն որոյ և համայն ազգիս սիրեցեալ եղև և ի հարկէ եդին զինքն տեղապահ և փոխանորդ տեառն Աստուածատրոյ սբ. Երուսաղէմայ հայրապետի և իւրն համշիրակի, զոր և մեք խնդրեմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զի զինքն ընդ երկայն աւուրս արասցէ վասն մեզ ուղիղ վարդապետութեամբ, և զսբ. աթոռս բարով վայելել տացէ ինքեան. ամէն։

Եւ արդ՝ ես անարգս և անպիտանս ի մարդկանէ, ունայնս և թափուրս ի յամենայն բարեգործութեանց, ծոյլս և պղերգս ի յաղօթից և ի փառաբանութենէն Աստուծոյ և ամենայն մեղօք լցեալ Թումայ սուտ և ոչինչ անուն երէց Բաղէշցի, շնորհիւ Տեառն սկսայ զսբ. գիրքս և ողորմութեամբ նորին կատարեցի մեղսամած ձեռօք իմովք։

Եւ աղաչեմ զամենեսեանդ զմանկունս սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, միով ողորմայիւ արժան առնէք զմեղաւոր գրիչս հանդերձ ծնողօք իմով՝ մօրս Եքարին և հօրս Քարիմին, նաև զհոգևոր ծնօղն իմ և դուսուցիչն՝ զտէր Սահակ քաշ քարտուղարն, որ հագուցեալ է ի Քրիստոս։

641 Դարձեալ աղաչեմք զհանդիպող սորին որ լի սրտիւ և բոլոր հաւատով յիշման ար//ժան առնէք զմիաբան սբ. ուխտիս զհրեշտակագումար երամս միաբան սբ. աթոռիս, թէ եպիսկոպոս, թէ վարդապետ, թէ քահանայ, թէ մշակ և թէ այլ ինչ դործավար, որ աստ կան հաւաքեալ, զի մի ամ բոլոր նսաա առ ի դրել զդիրս և սոքա ոչ ձանձրացան ի մէնջ, այլ իբրև զհայր և զեղբայր ինամ տանէին ի վերայ անարժանիս. խնդրեմ ի Քրիստոսէ որ ինչպէս մեք աստ հանդաք ի սգալի Սբ. Քաղաքս, նա[և] իւրեանքն ընդ սրբոյն Աստուծոյ ի վերինն Երուսաղէմ հանգիցեն ի փառս փրկողին։ Եւ աղաչեմ վասն խոշորութեան և սխալանաց դրիս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Եւ դուք ընկալջիք վարձս ի Քրիստոսէ Աստուծոյն մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

1196
ՅԱՂԱԴՍ ԵՐԿՆԱՅՆՈՅՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Մշեկ, IV, № 1108

Ստացող՝ Կոստանդին
Վայր՝ Սաղմոսավանք

ա

163 Ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657) ամին, ի կաթողիկոսութեան Հայոց էջմիածնայ սր. աթոռոյն Ջուղայեցի Յակոբի երկրորդ ամին, և Պարսից թագաւորութեան փոքր շահ Աբասին, գրեցաւ գիրքս այս Սաղմոսայվանից ձորին անապատին, ի փառս Աստուծոյ։ Ով որ որ վայելէ զոհանայ զԱստուծոյ և փառս տայ ամենայն բարեաց տվօղին, սրբոյն Դիոնիսիոսի դիրքովս։

բ

Որ զանազան վիրաւք մեղաց եմ պաշարեալ,
Եւ ի յախտից բազմազանից եմ ներգևեալ,
. . . . .
Արդ ես ստացա զգանձս ըղձալի ի զգօնութիւն,
Որով անձինքս տրտմութեան գոլ սփոփութիւն,
. . . . .
Յերես անկեալ պաղատանաւք առ մաղթութիւն,
Յիշել զաղքատ զԿոստանդին յողորմութիւն։
. . . . .

1197
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՆԴՐԷԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Մշեկ, IV, № 1134 (1822 թ.)

209 Գրեցաւ Մեկնութիւն տեսլեան Յոհաննու աւետարանչի, աստուածա-

բանի և սիրելոյն Յիսուսի, ի թուին հայոց ՌՃԶ (1657), ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Աբազի. ի հայրապետութեան լուսանկար սրբոյ և մեծ աթոռոյն էջմիածնի, երիցս երանելի տեառն տեառն Յակոբու սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց, որ է Ջուղայեցի:...

Աշխատասիրութեամբ և շանիւք, նորոգ ընդօրինակեալ ի ձեռն իմ, յոգնամեղ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննու մեղսամած ապարդուն քահանայիս, որ եմ անարժան սպասաւոր և աւելածու Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն Իզմիտոնոյ, ի վայելս անձին իմոյ։

1198
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՅԱՆՊ, VI, № 1761

Գրիչ՝ Ղուկաս կրօնաւոր
Վայր՝ Լիմ

ա

101 Ո՛հ զի շատ տրտում է անձն իմ ի վերա գրելոյս, զի չեմ հմուտ. վա՜յ ինձ եղկելոյս։

բ

... Թվին ՌԾԸ (1609)-ին գրեցաւ ի սեպտեմբեր ամսոյ ի ԻԸ (28), յաւուր հինգշաբ[աթ]ին՝ Ս. Գէորգի, մինչև աստ հասուցաք Աստուծոյ ողորմութեամբն...։ Յաղագս գրիս անշնորհութեան մի՛ մեղադրէք, հոգեվոր հայրք և եղբայրք, զի կար իմ այս է։

գ

Փառք...։ Յորոց հմտութենէ խուն ինչ ներհունացեալ և իմս չանարդարութիւն, որ եղէ մականուն պիտակ և իսկիւ Ղուկաս կրաւնաւոր, ի ծովապատ անապատի Լիմ կոչեցեալ, յերկիրն Վանայ, համայն փափաքող ըստ ծարաւեացն աստուածայնոցն եղէ կայլակմանց, և ծրեցի տրկար և տառապեալ անձամբ իմով, սակայն ըստ կարի յոլովս, քան թէ սակաւս վաստակեցա ի հոգէկեցոյց մատեանս, ի վայելս զբօսանաց իմում պարապորդութեան և վայելչասիրութեան, համայն և արձան անխախտելի՝ սակս յիշատակելոյ զմեզ պատահելոցն։

Հրամանաւ և օժանդակութեամբ բաբունեաց մերոց Յոհանիսի և Կիւր[ակոս?]ի, նաև հոգոյ և մարմնոյ մեր տածողաց, ուխտի սրբում հռչակաւոր նախնաւանդ տանս առաջնորդք, յատուկ անուամբ Ս. Խաչ յորջորջեալ, կրօնիւք ընտիրք և ի Քրիստոս մերձաւորութեան արժանիք, և հմուտք աստուածաշունչ մատենից, որք վարժիչք և ուսուցիչք եղեն փանաքութեանս մերո[յ], զորս և ընդ սոսա[34] գրեսցէ // Տէր ծնօղաք իւրեանց ի դպրութիւն կենաց յաւիտենականաց։

Արդ այսուհետև զպատահողքդ այսմ տառիս... աղաչեմ մաղթանօք յիշել ի Քրիստոս Աստուած զմեզ և զմերսն զամենեսեան, զնուաստ և անպիտան Ղուկաս կրօնաւորս, նաև զհոգևոր և զմարմնաւոր զծնօղսն իմ, զկենդանիքն և զհանգուցեալքն...։ Նաև զեղբայրքն իմ, որ ըստ մարմնոյ, զՅակոբջանն և զԱռաքել միայնակեացն, և զքոյրն իմ՝ զԱպա-

[34] Ձեռագրում «ընդսոսաս» ձևով։ Հրատարակիչը հարցականով ուղղել է «ընդ սոսա»։

լարն, և զամենեսեան որ ունին երախտիք ե աշխատանք ի վերա իմ և ի վերա գրոցս, յիշեցէք ի Քրիստոս...։

Արդ գրեցաւ Սրգ երգոցս ի Թուականութեանս հայկազեան տումարի Ռ և ՃԶ (1657) ամին։ Լաւ պահողն և խնամ տանողն աւրհնի յԱստուծոյ...։

Եւ գանպիտան գծողս յիշեցէք ի Քրիստոս և սխալանացն անմեղագիր լերուք, զի կար մեր այս էր։

1199
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՅԶԵՊ, VI, № 1964

542 Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Կիրակոսն, և զհայրն իւր՝ զմահդասի Պետրոսն, և զմայրն իւր՝ զՆուռնուֆարն, և զեղբայրն՝ զմահդասի Ղարիպշան, և զմեծ մամ Մախթումշան, որ ստացան զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց իւրեանց, և եղին յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ և նորաշէն եկեղեցոյս Ս. Էջմիածնայ, ի թվին ՌՃԶ (1657)։ Աստուած վարձահատոյց լիցի. ամէն։

1200
ԳԱՆՁԱՐԱՆ
ՃՁԱՐ, № 168

Գրիչ՝ Յարութիւն դպիր
Վայր՝ Գաղատիայ

542 Փառք...։ Գրեցաւ Գանձարանս ի թվականիս Հայոց ՌՃԶ (1657)-ին, ի յերկիրս Գաղատիոյ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգս[այ] զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ե ի թագաւորու[թեան] Տաճկաց սուլթան Մեհեմէտին, և ի հայրապետութեան սբ. Էջմիածնա[յ] տեառն Յակոբ սրբազան կաթողիկոսի, և առաջն[որդ]ութեան Ս. Աստուածածնի յաթոռիս Մինաս արհեպիսկոպոսի և քաշ բաբունապետի, և ձեռամբ անիմաստ և փծուն գրչիս Յարութիւն դպրի, ի խնդրոյ պարոն Խոնապէկին, և ծնաւղացն՝ մահտեսի Նուսուֆին և մահտեսի Խումարին, և կողակցին՝ Հռիփսիմէին, և որդոյն՝ Միքայէլին, և դստերացն՝ Ղայային, Սառային և Մարթային, և եղբաւրն՝ մահտեսի Սահակին, և քւերն՝ Մարիամին, և մեծ պապուն՝ Պէկին, և մամիկանն՝ Ալթունին, և ամենայն արեան մերձաւորացն, որ ստացաւ զսա, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց և եղ յիշատակ ի Ս. Նշան եկեղեցին։ Արդ աղաչեմ զամենեսեան, որ աւգտիք ի սմանէ՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զստացաւղ սորա՝ զԽոնապէկին, և վերոյ դրեալք ի սմա, և զամենայն մերձաւորսն իւր, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց՝ կենդանեաց և հանգուցելոց. ամէն։

Ընդ նմին և զիս անիմաս[տ] գրիչս՝ Յարութիւն դպիրս աղաչեմ վասն սխալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Եւ ես աղաչեմ յիշել ի Քրիստոս զհայրն իմ՝ զտէր Խաչա-

տուր քահանայն, և զմայրն՝ Մարիկն, և հանգուցեալ եղբայրքն իմ՝
843 զՆերսէսն և զՍահակն, և այլ եղբայրն իմ՝ զՊատուականն և զ//Գրի-
գորն, և ամենայն արեան մերձաւորսն<ին>։ Եւ Աստուածն, որ առատն
է ի տուրս բարեաց...։

Եւ ո՛վ ոք Գանձարանս այս ի Ս. Նշան եկեղեցո[յ] հանցէ և գրա-
ւեսցէ՝ բաժինն Յուղայի առցէ և մասն կայենի և խաչահանացն. շորով
ռոնողքն և լաւ պահողքն՝ աւրհնին ի Քրիստոսէ...։

1201
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 155 (Թ—ԺԴ.)

Նվիրատու՝ Իսախան Բալիշեցի

205 Յիշատ[ակ] է սբ. Աւետարանս տէր Գրիգորին և ուր կողակցին՝
Համանգուլի[ն], և որդոյն՝ Ներսէսին, Մարտիրոսի[ն]: Այս աւետաւորն
աստուածասէր ոմն եկեալ ի յերկիրն Ալինջան, վասն շրջեցուցանել և
վասն բժշկութիւն ամենայն ցաւ, և յեկայ հասայ ի դողն որ կոչի Ղո-
տարա, և տեսայ թէ Աւետարան ոչ գոյր այս գեղիս։ Ես՝ Բաղէշեցի
Իսայխանս տվի տէր Գրիգորին որ կարդայ, ղիս յիշէ և յիշատակէ։
Գրվեցաւ ի թվին ՌՃԶ (1657)-ումն։

1202
ԱԻԵՏԱՐԱՆ
Մինա, № 15

Գրիչ՝ Աստուածատուր

ա

225 Արդ՝ գրեցաւ սբ. և աստուածաշունչ Աւետարանս և կատարումն
էառ ի թուականիս Հայոց ՌՃ և Զ (1657) ամին, յերկիր ///

բ

Եւ արդ՝ ես անգէտս ի գրչաց, անկարգս ի կարգաւորաց, մեղաւոր
և անարժան, անմիտ և տկար, և առաշի ամենեցուն ամօթալի, և տրուպ,
և թշուառական Աստուածատուրս որ միայն ///

1203
ՄԱՇՏՈՑ
ՄՍՍԳ, № 107

Գրիչ՝ Ղազարոս
Վայր՝ Շրղզենի

ա

70 Գրեցաւ Մաշթոցս ի գաւառն Սեբաստեան, ի գեաւղն Շրղզենի, ի
թվին ՌՃԶ (1657)։

բ

...Արդ՝ գիրքս գրեցաւ ի լաւ և ընտիր օրինակէ, որ կոչի Մաշթոց և
գանձարան և յինքն ունի զամենայն համասփիւռն կարգս. ամէն։ Արդ՝

աղաչեմ զամենեսեան, ո՛վ ժամասէր քահանայք ևս առնողք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զմեղօք խաւարեալ սուտանուն Ղազարոս և զծնողս իմ՝ զՕղուլպալին և զՇանղասան, և զեղբարքն իմ՝ զՄինասն և զԹումասն և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ. ամէն։ Քրիստոս Աստուած ողորմի ստացողի գրոցս՝ տէր Մկրտիչին, եղբօրն՝ Կիրակոսին, կնոջն՝ Մանուշակին, դստերն՝ Մարիամին, Տիրուհէ, Հեղինէ, որդւոյն՝ Թորոսին, որ փափաքեցաւ այդ սբ. տառիս և ետ գրել և զարդարել յիշատակ իւր հոգւոյն և ծնողաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն...։

1204

ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Մուրմար, № 95

Վայր՝ Թօխաք

ա

167 Փառք...։ Բարեմիտ և հաւատարիմ Սաֆարն, որ ետ դրել յիշատակ անջնջելի /// զսբ. դիրքս, որ կոչի Յայսմաւուրք, զի յամենայն աւուր ընթերցցի յիշատակ արեամբ ներկեալ մարտիրոսացն և տօնիւ պատուեսցին ի սեղանացն իւրեանց...։

Արդ՝ գրեցաւ ի մայրաքաղաքն Թօխաք, ի թվականիս Հայոց ՌՃՉ (1657), ի վայելումն Ս. Աստուածածնի եկեղեցւոյն, հայրապետութեան էջմիածնայ Յակոբ կաթողիկոսին Ջուղայեցւոյ, և թագաւորութեան Պարսից փոքր շահ Ալպազին, և պատրիարք Ըստամբոլու [Յովհաննէս] վարդապետ Մուղնուցուն, որ հանեալ վարեցին, եկն սբ. էջմիածին։

Ստացող՝ Սաֆար

բ

Եւ ըստացող սբ. գրոյս մեղսամած և անպիտան Սաֆարբս, և հայրն իմ՝ Դավուռն, և մայրն իմ՝ Գոնարն, և կողակիցն՝ Աննէն. և եղբայրն իմ՝ Սարգիսն, Իսկանդարն, Սաատուն, Նուրմուզն. և քվրեքն իմ՝ Շանզասէն, Գուլզուլն և եղբոր որդին իմ՝ Մաթոսն, և քվեր որդին էսիկարն, ամենայն արեան մերձաւորսն իմ։ Ով ոք յիշէ կամ յիշատակէ՝ յիշեալ լիցի։

1205

ԺՈՂՈՎԱԾՈՒ

KarHB, № 31

Վայր՝ Շէնեեր

24 Փառք... հասանել աւարտ այսմ հոգէլի և աստուածաբան տառի, որ կոչի Պարապմանց, արարեալ սրբոյն Կիւրղի, ընդդէմ մարդադաւան Նեսաորի, ուստի և մեր տեսեալ զի նմանէ արարեալսն երկամբք բազմօք... գծագրեցի զսա սակս սրբասէր և հեզահոգի տէր Մովսէսին... յերկիրն Որոանոյ, ի գեօղն Շէնեեր, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին

և Ս. Ստեփաննոսին, յամի հազարերորդի հարիւերորդի վեցերորդի (1657) թուականութեան աբեթական տոհմի. ի հայրապետութեան սրբոյ աթոռոյս էջմիածնի... տեառն Յակոբիս, և ի յառաջնորդութեան սբ. ուխտիս Արիստակէս վարդապետին...

1206

ԱԻԵՏԱՐԱՆ (1657 թ. առաջ)

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1950 թ., ԺԱ—ԺԲ, № 30

85 Զվերջին ըստացող սր. Աւետարանիս յիշեցէք, ով պատուական հարք և եղբարք... Յրղնցի/Միրզէն, և զկողակիցն իւր՝ Շուշանն, և զորդիսն իւրոց՝ զԲաղումն. և զդստերքն իւրոց՝ զԴաստամիութիւն և զՄարուսն, և զխարասն, և զամենայն արեան մերձաւորսն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զտէր Նիկողայոսն, որ ԻԴ (24) ամաց, մանուկ տեօք փոխեցաւ առ Քրիստոս, յիշեցէք...։

Գրեցաւ ի թուին ՌՃԶ (1657) ամին ի փառս Քրիստոսի։

1207

ՏԱՂԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1964 թ., ԺԲ, № 224

Վայր՝ Կ. Պոլիս

ա

88 Փառք...։ Գրեցաւ ամենափարթամ և գեղգեղափայլ ծաղկածածան տփիկս, որ կոչի մեղիդարան, ի հոյակապ և ի գերահռչակ յարքայանիստ մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, որ և Նոր Հռոմ, և ըստ արեգակնայիցն յաւէտարանթաց համառօտականի որ ըստ մերո[յ] գրոհի հազարորդի և հարիւրորդի և վեցերորդի (1657) ամի, ձեռամբ Յով[ն]աննէս սարկաւագի, որ ի նոյնոյ քաղաքէն Կոստանդնոյպոլսի, հանգուցելոյ ի Քրիստոսի, որոյ Տեառն ողորմեսցի։ Եւ գեղազարդ յօրինողի սորին Մարկոսի շնորհազարդ և անհաս նկարակերտի, ի վայելումն մաքրամիտ և հոգիածին աշակերտի իմոյ Աստուածատուր սարկաւագի։

Հիշատակ. հեղինակ՝ Մարտիրոս Ղրիմեցի

բ

Արդ՝ աղաչեմ զդասս լուսերամ մանկանցդ եկեղեցւոյ, որք հանդիպիք յայսմ գեղապաճոյճ և ծաղկափրթիթ սրբոյ գանձիս աստուածայնոյ, լիով սրտիւ և սեռն սիրով, մի բերան Աստուած ողորմի ասացէք ինձ մեղսաներկ անձին և բիւրաքանքար պարտաւորի Մարտիրոս վարդապետիս Ղրիմեցւոյ հանդերձ այլովքն, զորս ի վերոյ յիշատակեցաք, զի և դուք զնոյնաշատ ողորմութիւն գտանել արժանասջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։

1208

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., Դ, էջ 58—59, № 336

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Պարսկաստան

///...Յիշեցէք ի Քրիստոս զԴովլաթ խանումն, և զծնողսն իւր՝ զմահ-դասի Թարիղուլին, և զԹարխունփաշէն, և զհօրեղբայրն իւր՝ զտէր Սարգիսն, յիշեցէք...։

Եւս առաւել յիշեցէք[35], *զԴովլաթ խանումն, և զեղբայրն իւր՝ զՅովանէսն/// զՄար///ին կո// և զա///* Մաթ[էոսն, Յս]վանէսն, *յիշե-[ցէք]*[36]*///։*

*Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴովլաթ խանումն, և զկողակիցն իւր՝ զ*Կարապետն, *և զորդին իւր՝ զՓիլի[պոսն] /// Կրկին անդամ յիշե-[ցէք] զ*Փիլիպոսն, *և զպապն՝ զ*Կիրակոսն, *և հանիկն՝ զ*Մարիամն, *և զսոցին որդին՝* Կարապետն, *դուստրն՝* Խաթունաղէն, *յիշ[եցէք]։*

*[Եւս առ]աւել յիշե[ցէք] /// զ*Փիլիպոսն*///ն իւր զ///որ[դին] իւր՝ զհանգուցեալ* Կարապետն, *և զդստերքն իւր՝ զ*Շուշանն, *զ*Սալաթին *և զ*Սոդովմէն, *յիշեցէք։ /// Կրկին անդամ յիշ[եցէք] զ*Դովլաթ խանումն, *և զպապն իւր՝ զ*Ղուլիշանն, *և զհանիկն՝ զ*Գայանէն, *և զսոցա որդիքն՝ զ*Բաբաջանն *և զ*Յէմինն, *յիշ[եցէք]։ Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զ*Բաբաջանն, *և զկողակիցն իւր՝ զ*Մէլիքխաթունն, *և զորդիքն իւրեանց՝ զ*Մէլքոնն, *զտէր* Անդրիասն, Բաղդասարն *և զ*Սիմոնն, *և զդստերքն իւրեանց՝* Փաշաբէկին, Անապիանն, Էվամելիքն, *յիշեցէք...։*

*Դարձեալ յիշեցէք զ*Մելքոնն, *և զկողակիցն իւր՝ զ*Սալամն, *և զորդին՝* Աստուածատուրն, *յիշեցէք։*

Կրկին անդամ յիշեցէք զտէր Անդրիասն, *և զկողակիցն իւր՝ զ*Սալամն, *և զորդին՝ զ*Վարդանէսն, *և զդստերսն՝ զ*Մէրանողրն, *զ*Սալվին, *և զ*Գայիանէն, *յիշեցէք։*

*Եւս առաւել յիշեցէք զ*Բաղդասարն, *և զկենակիցն իւր՝ զ*Շահզամանն, *և զոր[դին՝]* Մարտիրոսն*///...։*

Արդ՝ գրեցաւ սբ. և աստուածաշունչ Աւետարանս և կատարումն էառ ի թուականիս Հայոց ՌՃ և Զ (1657) ամին, ի յերկրրս [Պարսկաս]-տա[նի] *///։ Եւ առաջնորդութեան մերոյ նահանգիս* Պարսկաստանի, *սրբասնեալ և մաքրամիտ, հեզահոգի և բարեհամբաւ, քաջհռետոր և ///։*

Եւ արդ՝ ես անգէտս ի գրչաց, անկարգս ի կարգաւորաց, մեղաւոր և անարժան... Աստուածատուրս *///...։*

1209

ԱԻԵՏԱՐԱՆ

Կարնոյ գիտեր «ՀԱ», 1963 թ., էջ 36—37

Նուիրատու՝ Յովանէս երէց

ա

Դարձեալ աղաչեմ զամենեսեան յիշել զվերջին ստացող սբ. Աւետա-

[35] *Տպված է «յիշել» ձևով։*
[36] *Տպված է «յիշե(ալ)» ձևով։*

բանիս զՋուղացի խոճայ Ամիսարգիսն, և զհայրն՝ զՆասիպն, և զմայրն՝ զՔուլփաշէն, և զկողակիցն՝ զՎարթխաթունն, և զեղբարսն՝ զՅովանէսն, զՄարգարէն, զՍամոնն, զՇաուրն, Մէլիքջանն, և զքոյրն՝ զԹանկիկն, զՋօրամն, զեղիսաբէթն, և զորդիսն՝ զՍարուխանն և զտէր Յովանէսն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն. ամէն։

Բ

Արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի գործս քահանայութեան Յովանէս երէցս Ջուղացի, որդի Ամիսարգսին, ետու զսբ. Աւետարանս յիշատակ Ս. Ամենափրկչին, որ ի Հայոց թուն, զի կեցողքն անդ վայելեսցեն, և յիշեսցեն զիս և զծնողն իմ, զհայրն իմ՝ զԱմիսարգիսն, և զմայրն իմ՝ զխանգզատէն, և զորդիսն իմ՝ ըզՄկրտումն, զՄարգարէն, և զդստերսն իմ՝ զԹագուհի և զսա Մարոնի, և զվերոյ գրեալ զարեան մերձաւորսն իմ՝ զհեռաւորս և զմերձաւորս...։

Դարձեալ աղաչեմ զվայելողդ սբ. Աւետարանիս, զի խնամօք պահիցէք ի հրոյ և ի ջրոյ և յայլ պատահարաց, և որք խնամենն վարձս ի Քրիստոսէ առնուցուն ի միւսանգամ գալըստեան նորա, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ թվին ՌՃ (1651)։

Ծղև այս միջնորդութեամբ Սիմէօն քաջ բաբունապետին Ջուղացւոյ, որ արար ըղՔերայկանութիւն հեշտայլեզու, որ ամենայն մարդ դիւրին իմանա։ Սայ ոչ թէ պակաս արար քան զառաջին, այլ աւելի արար ըզմաղայմուտ մի ըստ միոջէ։ Սայ կամեցաւ մեկնել զՎրաց գիրն, առաւ ի ձեռն և մնաց կիսայկատար արար, և գնաց ի Թօխաթ և անդէն վաղջանեցաւ ի թվին ՌՃԶ (1657). Աստուած ողորմի։

1210

ԱՒԵՏԱՐԱՆ (1570 թ.)

«ՀԱ», 1965 թ., էջ 227—228

Կազմող՝ Մելքիսէթ

Զկազմող սբ. Աւետարանիս զանարժան Մելքիսէթ աղաչեմ, ո՛վ սբ. ընթերցողք, յիշել ի Տէր մի բերան ողորմայիւ և Աստուած ողորմութեան ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեանն, և ամենայն աշխատաւորաց վարձս բարեաց պարգևեսցէ. ամէն։ Ի թվականիս ՌՃԶ (1657) և մուտ է (7)-ին..., ձեռամբ Միքայելին սրբագրեցաւ և կազմեցաւ։ Նմա ևս տացէ վարձս Տէրն ամենայնի հանդերձ ծնողօք, և ամենայն արեան մերձաւորօք մեր ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ...։

1211

ԱՒԵՏԱՐԱՆ

ՑՁՆԲԱՃ, Բ3

Գրիչ՝ Ղուկաս երէց

45բ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Ղուկաս իրիցու, թվին ՌՃԶ (1657)։

1212
ԱԻԵՏԱՐԱՆ (ԺԵ դ.)

Кучук–Иоаннисов, труды, № 5, տե՛ս նաև Кучук–2, № 2, էջ 21։

Նորոգող, կազմող տիրացու Խաչատուր

Վայր՝ Վաղարշապատ

53 Արդ՝ կազմեցաւ և նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ տիրացու Խաչատուրին, ի թուականութեան Հայոց ՌՃԶ (1657)-ին և հայրապետութեան Հայոց տեառն Յակոբ կաթուղիկոսի, և աթոռապահ Յոհանէս վարդապետի։

Կազմեցաւ ի Վաղարշապատ քաղաք, ի յաթոռս սբ. Էջմիածնին, յիշատակ և ի վայելումն տիրացու Խաչատուրին և իւր ծընաւղացն՝ Գրիգորին, Մարիամին և ամենայն զարմից նորին...[37]։

1213
ՇԱՐԱԿՆՈՑ

Кучук–3, № 3

Գրիչ՝ Սուրգիս

36 Սուրգիս գրիչս յիշեցէք ի Քրիստոս և ըզծնաւղսն իմ՝ պարոն Թուման, պարոն Գաւչակն, և ամենայն արեան մերձաւորսն իմ. ամէն։ Թվին ՌՃԶ (1657)-երորդի։

1214
ՃԱՇՈՑ

Ճանիկեան, № 42

Գրիչ՝ Անդրէաս երէց

Վայր՝ Ագուլիս

96 Այլ և գրե//ցաւ սա Ագուլիս, ի դուռն Ս. Քրիստափորի... ի հայրապետութեան տեառն Յակոբայ, իշխանութեան Պարսից փոքր շահ Աբասին... յետոյ ընդ նոսին և զիս անյիշելի գրիչս Անդրէաս երէց. երկրէն Սիւնեաց... թվին Հայոց հազար հարիւր վեց (1657)։

1215
ՇԱՐԱԿՆՈՑ

Ալիշան, Սիսական, էջ 292

Վայր՝ Գեց

Գրեցաւ սա ի յերկի[ր]ս աստուածապահ Գեղուանոր ասի, ի գեղն Գեց, ընդ հովանեաւ Ս. Ըստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին, և Ս. Աստուածածնին, և ամենայն սրբոցն որ- աստ կան հաւ[աքեալ]։ Եւ արդ՝ ես ամենամեղս և անկարգս ի մէջ կարգաւորաց...[38]։

---

37 Այս հիշատակարանը, ինչպես նշում են մեր Մատենադարանի ձեռագրերի ցուցակ կազմողները, պատկանում է № 7568 ձեռագրին, ուր հիշատակարանն այժմ չի պահվել (հա. Բ, էջ 561)։

38 Հիշատակարանից բերված է միայն այրքանը։ Գրչության թվականը՝ թեև չի բերված, բայց Ալիշանը նշում է 1657 թ.։

1216

ԱԻԽՏԱՐԱՆ

Մաղիկ, 1892 թ., № 38, էջ 439

Կազմող՝ Գարեգին

Փառք...։ Կատարեցաւ խնդրու[ա]ծս Յաւետիս եպիսկոպոսիս և միարանացն ամենեքեան, որ է առաջնորդ Հայոց Սուրբ Նշանիս յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք հոգևոր մայր իւր Ազիզ ապաշխարողս, որ շատ աշխատանք[39] ունի այս սրբոց դրունս[40], յիշեցէք...[41]։

Զվերջին կազմողս մեղսայպարտ և սուտանուն Գարեգին ապաշխարողս յիշեցէք և Աստուած զի ձեզ յիշէ, եղբայրք իմ թողութիւն շնորհեցէք ինձ աչքս վատ այ տեսեր, խիստ խաղաղութիւն էր ժամանակս, թ[ա]գաւորութիւն Առեստում խանին էր, առաջնորդութիւն՝ Էջմիածնայ տեառն Յակոբայ, որ երեկ Վրաստան Թիֆլիս քաղաքն Ե (5) ամիս եկաց, եպիսկոպոսունքն ամենեքեան յինքեան ունէր, շէն կենայ քաղաքն, դարձաւ ուրախութեամբ աթոռն իւր, որ շինեալ էր Յաւետիս եպիսկոպոսն եկեղեցիքն իւր և խիստ աշխատեցան ամենեքեան, յիշեցէք...։

---

39 *Տպված «աղտք»։*

40 *Տպված «սրոց, դուանս»։*

41 *Թեև ընդօրինակության տարեթիվը չի նշված, բայց պայմանականորեն դրեցինք 1657 թ. շարքում. նկատի ունենալով Վրաց թագավոր Ռոստոմի 1634—1658 թվականների թագավորության և Հակոբ Ջուղայեցու 1655—1680 թվականների կաթողիկոսության տարիները, այսինքն՝ Ռոստոմի թագավորության վերջին և Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության սկզբի տարիները՝ 1655—1658 թթ.։*

1217
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ
ՄԻՆՉ, № 122

Գրիչ՝ Խաչատուր Խաչգոուզ

133 *Գրեցաւ սակաւ գիրս Պատմութեան Աղէքսանդրի ի թվին ՌՃԷ (1658) և յունվարի ԻԲ (22), ձեռամբ մեղսամած* Խասպէկի, *որ և* Խաչատուր *անարժան երէց կոչեցեալ։*

1218
ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ
ՑՁՂԲ, № 116 (1421 թ.)

Նորոգող՝ Հայրապետ եպիսկոպոս

ա

744 *Զվերջին նորոգոս զտէր Հա[յ]րապետ եպիսկոպոսս յիշեցէք ի Տէր և Աստուած զձեզ յիշէ իւր միուսանգամ գալուստն ամէն։*

Բ

Թվին ՌՃԸ (1659) փետրվարի Զ (6), օրն կիրակի մեծ շարժ եղաւ։

1219
ՀԱՍՏԱՏԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՃՎՈՐԱՑ ԵԱԶԼՈՎԻ
ՏՑԶՄՎ, № 453

Վայր՝ Լով

924 *Կատարեցաւ այս կօնդակս ի մայրաքաղաքն որ կոչի* Լով, *ընդ հովանեաւ Ննշման Ս. Աստուածածնին, ի յաթոռանիստ տեղն, թվին Հայոց ՌՃԷ (1658), փետրվարի Ժ (10), օրն չորեքշաբթի։*

1220
ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ
Հ. Քյուրտյան, «Հասկ», 1939 թ., էջ 92

Գրիչ՝ Ալէքսիանոս քահանայ

Վայր՝ Սուրուբ–Բանտար

ա

Եւ այս բժշկական գիրքս գրեցի ձեռամբ իմոյ զԱլէքսիանոս քահանայիս, ի խնդրոյ Շաալղեց Ատեաիֆի *որդի աղայ* Փիրումն՝ *անձին իւրոյ. ամէն. ի թուականիս Հայոց ՌՃԷ (1658)-ին փետրվարի ամսին ԻԵ (25)-ումն։*

Բ

Եղկելի և խոշորեալ մտօք զԱլէքսանոս գրչակս յիշեա ի Տէր։

Գ

Քրիստոսի ծառայ /// գրեցաւ ի յերկիրն Հնդկաց, որ կոչի Սուրաբ-Բանտար[1], թվին Հայոց հազար ՃԼԷ (1658)։

1221
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 825

Գրիչ, ստացող՝ Մարկոս Կեղեցի

Ա

2բ Ո՛վ եղբայր, յորժամ որ զմկրտութիւնն կատարես մին Հայր մեզա հրամայես Կեղեցի սուտանուն Մարկոս գրչիս, որ զանունս ունիմ և զգործս ոչ...։

Վա՛յ ինձ և վա՛յ իմ արևուս. եթէ յիշես՝ յիշեալ լիցիս ի Քրիստոսէ...։ Վա՛յ ու մոխիրն ծածկէ զգծող Մաշտոցիս. խնդրեմ ի քէն զայս։

Բ

128ա Գոհութիւն Աստուծոյ...։

Գրեցաւ սբ. Մաշտոցս ձեռամբ անարժան Կեղեցի Մարկոսիս, թվին ՌՃԷ (1658), մարտի ԻԴ (24), աւրն չորեքշաբթի։

Աստուած ողորմի ասացէք Կաւկտաշեցի Թումանին և խազարին, որ հացն անոնցն կուտէի և գիրքն ինձի կու գրէի. ամէն։

1222
ՔԱՐՈԶԳԻՐՔ
Երևան, № 6071

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Ղանղալու

Ա

8՝բ Որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած այնպիսի մեղաց ևս առաւել զմեղաւք ի լի Թորոսն, որ չունի գործի բարի։

Բ

157ա /// Յուսէփին, որ առ Աստուած է հանգուցեալ <է> Մարտիրոսին առ հասարակ. ամէն։

157բ Գրեցաւ Քարոզգիրքս ի գիւղն Ղա[ն]ղալու, ձեռամ[բ] անարժան Թորոս իրիցու, ի թվին ՌՃԷ (1658). Աստուած բարով վայել տայ. ամէն։

Գ

157ա Յիշատակ է Քարոզգիրքս տէր Մկրտիչին իրիցկնոջն, որդուն՝ Աստուածատուրին, դստերն՝ Մարիամին, և մաւրն՝ Աննային, և հաւրն՝ Վարդանին։

[1] «Հասկ»-ում սխալ. Բանդարտ ձևով։ Ուղղեցինք ըստ Տեր Ավետիսյանի ցուցակի։

դ

166ա Գրեցաւ քարոզս ձեռամբն անարժան Թորոսի, ի գիւղն Ղանղալու, ի դուռն Ս. Յակոբայ, մարտի ԻԶ (26), թագաւորութեան Տաճկաց սուլտան Մահամատին. ՌՃԷ (1658) թվին. և ի կաթողիկոսութեանն Հայոց սրբազան տէր տէր Խաչատուրի: Եւ որք հանդիպիք սորա, ասէք Հայր մեղայ...։

1223

ՀԱԻԱՔԱԾՈՒ

Երևան, № 7010

Գրիչ՝ Խաչատուր

ա

739 Որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր ևս առաւել Խաչատուր մեղսամած գրիչս։

բ

Որոց փրկեսցէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս ի ծովածուփ կենցաղոյս, մանաւանդ Խաչատուր գրիչս. ամէն։

Գրիչ՝ Ղուկաս

գ

Կատարեցաւ Տուբիթայ կարողութեամբն Աստուծոյ ձեռամբ Կարուղլացի Ղուկաս երիցու, թվին ՌՃԷ (1658), աւարտեցաւ ապրիլ ամսոյ է (7) չորեքշաբթի։

1224

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7010

Գրիչ՝ Աբրահամ երէց
Վայր՝ Ղարս

ա

13ա ԶԱբրահամ ծրոցս զմեղսաներկ անձն աղաչեմ յիշել, վասն սիրոյն Քրիստոսի և անմեղադիր լինել պակասութեան արվեստի սորա, զի կար մեր այս էր, շատ ջանացաք ոչ կարացաք հասանել ի կատար արվեստի, այլ այս այնչափ շնորհողին, թէ որ խնդրէ՝ առնու և այլն։ Ի թվիս ՌՃԷ (1658)։

բ

86ա Յիշեա յառաջի Քրիստոսի զգծագրաւղ սորա սուտանուն Աբրահամ երէց և զուսուցիչն իմ՝ հօրեղբայր տէր Սահակոնս սրբազան քահանայ և զհարազատ եղբայրն իմ՝ Արիսդաքէս հանդերձ ծնօղիւք և ազգականաւք. ամէն։

գ

285բ Փառք...։

286ա Արդ, ողորմութեամբ բարերարին անկ ելեալ աւարտեցաւ Աւետա-

բանս ի թուաբերութեանս Հայոց ՌՃԷ (1658)-ի ի յելս ապրիլ ամսոյն, որ և իսկապէս ապրիմք հոգւով, աւրն շաբաթ[2], նաև շաբաթանամք մարանագա, ընդ հովանեաւ Ս. Դէորգ զաւրավարիս, ի քաղաքս Ղարս կոչեցեալ, հուպ ի Շիրակայս յԱնու, ի ձեռնատուութեամբ բաղմաերախտ և պատուական Սերուն սրբասնեալ քահանայի, ծնաւղի և ուսուցչի իմոյ տէր Ստեփանոս, ահր իրիցի, զոր տէր Աստուածն և ճշմարիտ քահանայապետն մեր Յիսուս Քրիստոս...։

Այլ և սիրելի և պայծառատես, դեռափթիթ բուրաստանի Արիսդաբէս համբելի,

286բ Քանզի է // դիտուն և յոյժ յարի,
Ի աղաւթից և սաղմոսի,
Նաև հմուտ շարականի.
Եւ երաժիշտ արտաձայնի...,
Որ և հսկայ և մեծ լինի,
Իւր ընկերակցովն աղայի,
Զոր Կիրակոս կու յորջորջի։

Այլ և յիշեցէք զծնաւղն իմ՝ զՄկրտիչ հանգուցեալն ի Քրիստոս և զմայրն իմ՝ զՆաղիկն և բազմաաշխատ հօրեղբաւր կողակիցն՝ զԳայիանէն, զոր բազում անգամ վիշտս ընդունեաց վասն իմ. որ և շատ անգամ ի մահ մերձեցաւ վասն մեր։ Զէրայ մնք ի բնիկ երկրէ ելանք և վտարանդեցաք դեղովք [մ]երովք։ Գնացաք մինչև ի սահմանս Կիլիկեցոց։ Եւ անդ աստուածասաստ պատուհաս եկեալ ի վերա մեր, զոր և մարգարէն հրամայէ Հոգւովն Սրբով, թէ «Այս ամենայն եկն ի վերա մեր վասն մեղաց մերոց»։ Եւ ապայ հայրս իմ և եղբարքս անդ փոխեցան առ Քրիստոս և մնացինք որբ և տնանկ, և մայր իմ այրի. և մնացինք անկար ի վերա տէր Ստեփանոսին և իւր կողակցին՝ Գայիանին։ Եւ սա բազում աշխատութեամբ և սրոյ և ի հրոյ պահեաց, աստուածապէս խնամս տանելով. և ըստ աշխատանաց իւրոց վարձս ի Քրիստոսէ առցէ։

Գրեցաւ ի ժամանակի հայրապետութեան տեառն Յակովբ կաթողիկոսի երիցս երանեալ եր[ջ]անիկ հայրապետի, յաթոռ մեծի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ...։

Ղարձեալ անմեղադիր լերուք, զի բազում տառապանք և վրշտիւք գրեցի, զէրայ թագաւորք ի միմեանց պատերազմէին. զոր ասէ Տէրն, թէ «Յարիցէ ազգ յազգի վերա և թագաւորութիւն ի թագաւորութեան»։ Եւ խիստ նեղութիւն կայ ի մէջ քրիստոնէից, յաղագս հարկապահանջութեան և տոկոսի, շատ ոք հալածականս եղեալ ի տան և ընտանեաց զրկեալ։ Եւ ի մէջ այսպիսի տառապանաց սկսեալ աւարտեցի Աւետարանս այս։ Աղաչեմք ընթերցողաց և աւրինակողաց միով ողորմայիւ յիշել զզառածեալս մեղաւք և զամենայն արեան մերձաւորսն իմ...։

[2] Թեև ամսաթիվը չի գրված, բայց որոշեցինք այսպես. բնագրի «ի յելս ապրիլ ամսոյն... աւրն շաբաթ» նշումը պետք է հասկանալ ոչ թե ապրիլի վերջին՝ 30-ին, այլ վերջերին՝ երրորդ տասնօրյակի օրերից մեկնումեկը։ Ամսաթվի իսկությունը կարելի է որոշել բնագրում նշված օրվա պատկերից՝ «աւրն շաբաթ»։ 1658 թ. ապրիլ ամսվա շաբաթ օրերը հին տոմարով կլինեն 3-ին, 10-ին, 17-ին և 24-ին, հետևապես «ի յելս ապրիլ ամսոյն... աւրն շաբաթ» նշումը նկատի ունի ապրիլի 24-ը, իսկ ապրիլի 30-ը ուրբաթ է։

1225
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 9299

Գրիչ՝ Ալէքսիանոս քահանայ
Վայր՝ Սուրաբ-Բանատար

246ա *Փառք...։*

247ա *Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեանն խորհուրդ ոմն ի լուսայծնեալ զարմից սրբոյ Սիոնի[3] խաչայ Սաֆարն, որ ստացաւ սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց և ետուր յիշատակ հոգոյ իւրոյ, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք Ալթունշահն, և զկողակիցն՝ Գուլվարդն՝ և որդիքն՝ խաչայ Սաֆարն, Նղիէն. և զդուստրն՝ Նուրիխանն, յիշեցէք...։ Եւ արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրն Հնդկաց, որ կոչի Սուրաբ-Բանատար, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԷ (1658), ի մայիսի ամսին Ը (8), ի կաթո-
247բ *ղիկոսութեան հայկազեան սեռի տեառն Յակոբ, որ է շուղաեցի, ի թա-գաւորութեանն Շօշա[յ], փոքր շահ Ապասի, // զոր տէր Աստուած յեր-կար ամաւք պահէ, ազգիս մերում քաղցր հաի, դիւրաւ բնութիւն ի միտ առցէ. ամէն։*

Եւ արդ՝ դուք, մանկունք սբ. Սիոնի, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ աւրինակելով, անմեղադիր լեր խոշորութեան գրիս, զի կայրս մեր այս է։ Աղաչեմ զձեզ... յիշեցէք ի յերկնաթռիչ յաղաւթս ձեր, զիս զանարժան գրիչս զԱլէքսիանոս քահանայ և զհայր իմ Թորոսն, յիշեցէք...։ Եւ առաւել ուսուցիչքն յիշեցէք...։

1226
ՀԱԻԱՔԱԾՈՒ
Քեշիշ, № 136

Գրիչ՝ Կիրակոս Պէլանկցի
Վայր՝ Ամասիա

292 *Գրեցաւ ձեռամբ Պէլանկցի Կիրակոս վարդապետի, ի քաղաքն Ամասիա, ի թվին ՌՃԷ (1658) մայիս Լ (30) աւուրտումն [եղև]։ Արդ՝ որք հանդիպիք սմայ՝ Աստուած ողորմի ասացէք հօրն իմոյ՝ Կիրակոս եպիսկոպոսի և մօրն իմոյ՝ Եղիսաբեթի և ինձ մեղապարտ գրչի. ամէն[4]։*

1227
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ
Մեշեվ, II, № 430

Գրիչ՝ Վարդան

ա

292 *Ստուգիւ ծրրեալ աւարտեցա,*
Էսայիու Մեկնիչ է սա,

---

[3] *Այնուհետև մեկ տող դատարկ։*

[4] *Այս ձեռագրի տարբեր մասերը, ինչպես հաղորդում է Քեշիշյանը, տարբեր գրիչների կողմից և տարբեր ժամանակներում է գրված։*

Նրկրրտելով յոյժ ցանկացա,
Անթիւ գանձին որ ի սմա կա։
Դէտ Մարտիրոս յերկրէն Հոնա,
Բաբուն և յոյժ պըւետիկոս,
Ապայ դա[5] տե՛ս սուղ ինչ իմա,
Վերոյ տողին թըւին սորա[6]։

Բ

Փառք..., որ ետ կարողութիւն սոսկ և վատթար անձինս անվարժ գրչութեան Վարդան եղկելոյս հասանել ի յաւարտ աստուածաճեմ երգիս, որ կոչիւր Մեկնիչ Եսայեա տեսանողին, զի և թելադրութեամբ Հոգւոյն Սրբոյ ունի յինքեան լիապէս զխորհուրդ տնաւրէնութեան Քրիստոսի։ Արդ առաւելապէս եռափափաք և յոգնատենչ սրտիւ ցանկացող եղև յայսմ հոգիազուարճ բուրաստան և աստուածաբան տառիս զԴրիմեցի Մարտիրոս վարդապետս՝ յայսմ ամի կարողութեամբն Քրիստոսի եղև դէտ և իշխող աշխարհին Հոնաց, ի հերուն հետէ տիւ և գիշեր փափաքեր իբր զեղջերու ի ծարաւի գոլ։ Նա որ զկամս երկիւղածաց լնու և Աստուած ելից յիղձս փափաքանաց սորին՝ այսր և անդր որոնելով մինչ եգիտ զաւրինակն տրւաւ թշուառիս, և յիմարս ըստ տկար և անդէպ մտաց իմոյս գաղափարեալ յանդ ելեալ շնորհեցի պետիս և համշիրակ մեղապարտ անձինս, մինչ կենդանի է դասիւ և քարոզութեամբ սփոփէ զժողովուրդ իւր լիապէս ամենայն բարութեամբ ի գաւիթս եկեղեցւոյ, և արբուսցէ զշուրն կենդանի ի հոգիս ծարաւի անձանց։ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զինքն ընդ երկայն աւուրս խաղաղ և յանդորրութեամբ պահեսցէ։...

Զրրաւ և յաւարտութեան գրիս եղև ՌՃ և է (1658)-ն թվին, յունիս ամսոյ Իէ (27), ի միջօրէի։

Նուիրատու՝ Մարտիրոս Դրիմեցի

Գ

Եղաւ սա անջինջ յիշատակ ի սբ. Երուսաղէմ ի Մ. Յակոբայ աթոռն։

Մերոմս յատուկ ջրջականի,
Ամանակաց որ հոլովի,
Բոպէից թիւ միանգամի,
Տըրամատեալ յայլոց սեռի։
Ի մետասան հարիւրորդի,
Բուպ ընդ նմին եօթնեակ թըւի (1658)[7]
Ունակացաւ սա ի քարտի,
Ստացմամբ հիքոյս չուառալի։
Վերծանողացըդ մաղթեսցի,
Աղերսանօք կողկողալի,

[5] Ցուցակի հեղինակը «Ապայ դա» բառերի տառերի թվական համարժեքով ճիշտ լուծել է գրության տարեթիվը՝ 1107. այսպես՝ ա(1)+պ(800)+ա(1)+յ(300)+դ(4)+ա(1) =1107+ +551=1658։

[6] Ցուցակի հեղինակը տողասկզբի տառերով ներքևից վեր կարդացել է՝ Վարդանէս։

[7] Այսինքն՝ [11×100(+7)]+551։

Բաբունօրէն յորժամ վիպի,
Դասիւ ի ձէնջ լուր յատենի։
Անդէն յիշել յանձն եղիցի,
Պուետիկոսացըդ պանծալի,
Եւեթ անուն զիս զեղկելի,
Տէր Մարտիրոս Ղրիմեցի։
Ինձ մասն ընդ ձեզ հայցեմ լիցի,
Էկլէսական վարդևոյդ ձրի,
Սեղմանողք դուք կենաց բանի,
Սոփիք յիշման զմեզ արժանի[8]։

Դ

303ա Յիշատակ է Մարտիրոս վարդապետին ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ աթոռ ամենայն Հայոց։

1228

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՅ (1246 թ.)

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 883, տե՛ս նաև № 6333, էջ 54աբ

Նորոգող՝ Վարդան Բաղիշեցի

303բ Նորոգեցաւ սբ. դիրքս, որ է պատմագիր ասացեալ տեառն Միխայէլի Ասորոյ ուղղափառաց պատրիարքի, ձեռամբ իմ մեղապարտ Վարդան պիտակ անուն բանասիրի։ Քանզի տեսի զգիրքս անկեալ ի ձեռս թուլամորթաց և հնոտեալ և յանպետս լքեալ, այլ և փերևեռտեալ, խախտեալ և խարխարեալ և ի վերջին փտելութիւն հասեալ և ժամանեալ ի վերայ կսրչեալ ի յաղբիւսաց՝ զօրէն փտեալ և բեկբեկեալ անդամօք մեռելոյ և առեալ ի ձեռն բազում տաժանմամբ և երկօք կարկատեալի և զեղծեալն գրեցի և զպակասն և զսխալն լցի, ի յընթերցումն հարց և եղբարց իմոց բանասիրաց, զի որք պատահիքդ լի սրտիւ զԱստուած ողորմի տայցէք սովեալ և մեղօք հնոտեալ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց Ղարիպին և Եղիային, և եղբարցն, և ամենայն երախտաւորացն. ամէն։

Արդ՝ նորոգեալ եղև գիրքս ի յերկիրս Բզնունեաց, ի լայնանիստ քաղաքս Բաղէշ ի բդեշխաշէն, ի սբ. մենաստանս Ամիրդօլու, ի Հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի և ի վերատեսչութեան վանացս տեառն իմոյ, և հօր հոգևորի, և բազմերախտի Խաչատուր հռետորի, և բանիբուն իմաստասէր, և գորովամիտ գիտնականի, և քաջ փիլիսոփայի. որ ի յերեկոյացեալ, և ի մթնեալ և ի նսեմ ժամու ծագեցաւ մեզ՝ Հայաստանեայցս տառապեալ զարմի, իբր զշահ անշէջ և
303գ իբր զարեգակն պայծառ, տարածելով զճառագայթս իմաս//տութեան ուրոյ և զշառաղիւս գիտութեան ընդ ոլորտս տիեզերաց քառորդ կողմանց։ Առնելով և ուսուցանելով զպատուէր Փրկչին մերոյ՝ զխոնարհութիւն և զսէր, որ է զարդ կատարման ամենեցուն փարելի գոլով և ցանալի, ծաղկեալ այլեօք և բարի քաղաքավարութեամբ, զոր տէր Յիսուս

[8] Սկզբնատողերից հոդվում է «Մարտիրոս վարդապետի է սաղ»։

պահեսցէ զսա մեզ ընդ երկայն աւուրս ի պարծանս եկեղեցւոյ և ի խընամածումն որրոց և այրեաց և ի յուրախութիւն մեզ. ամէն։ Այլ և ի տեղոյս պարոնութեան Աւտալ բէկին, որ սպան զեղբարսն և զորդիսն իւր անհաւատն այն և տեսեաց զքառասուն ամ իշխանութիւնն ներելով Տեառն, և դեռ տակաւին է մինչև բարձցի և առցէ զառհաւատչեայն լաւիտենականին[9]։

54ա Եւ ի թուին Հայոց ՌՃԷ (1658), յորում նեղիմք ի ձեռս այլազգեաց, որք տակաւ զօրանալով յԱսիա, յԵւրոպա և յԱփրիկէ, և բարձին զթագաւորութիւնն Հոռոմոց, զՀայոց, զՎրաց, զԱղուանից, զՄարաց, զԱսորւոց, զԱրաբացոց, զՀունաց, զԲուլղարաց, զՄաղքթաց, զԱփխազաց, զՄակեդոնացւոց, զ[Ֆռանգ?]կաց և զՊարսից[?]...։ Ի թուին Հայոց ՌՃԳ (1654) յորում կեամք և թագաւորէ ի վերայ Տաճկաստան սուլթան Մահմէտ, փեսայ սորին Մահմատ փաշա, որ պաշվաղիր էր, ամբաստանեալ առաջի թագաւորին, թէ «Կամի ապստամբել». և զոր կամեցաւ սպանանել արքայն, այլ վասն աղաչանաց քեռն իւրոյ թողաւ կենդանի, ի կեալ ի Շամիրամակերտ, որ է Վան, և մեծ փաշայութիւն։ Զի գլխահարկ Բաղիշոյ հայոյ ի Վան տանիւր, քանզի թագաւորն զհարկն Բաղիշոյ ոռճիկ սահմանեալ էր ծառայից իւրոց, որք պահպանէին զբերդն Վանայ ընդդէմ Պարսից։ Իսկ չար ոստիկանն մեր Աւդալ խան, հնարագէտ և անբարտաւան, ընդդիմացեալ, ոչ տայր զհարկն ծառայիցն թագաւորին և ինքն ուտէր։ Վասն որոյ յորժամ Մահմատ փաշայն, որ մականուն Մէլէք առձայնիւր, եկն ի Վան։ Բերդապահ ծառայք թագաւորին [ԺՌ] և (10000) զուտուշ ժողովեալ ետուն նմա, զի եկեալ ի վերայ Բաղիշոյ սպանցեն զԱւդալ բէկն։ Թէպէտ և նա երկչոտ էր և ոչ կամէր, բայց ի սէր արծաթոյն հաւանեալ ժողովեաց երկոտասան հազար զօրս ի ծովեզերայ, ի մոտոյ էին[10] թող զչրկիրս, զչորեպանս և զայլ ծառայս, եկն ի վերայ Աւդալ բէկին, որ ժողովեալ էր առ ինքն զզօրս իւր և զդրացի ամիրայս իբր [ԸՌ] (8000) անձինս. պահէր զքաղաքն և կամէր մարտնչել ընդ նմա։ Բայց յաւուր միում ի շաբաթի, որ էր բարիկենդան պահոցն Վարդավառի[11], թուղթ ինչ ի փաշայէն ետուն յամիրայն, որ էր գրեալ այսպէս. «Ընդէ՞ր է քեզ դիմամարտ լինել մեծիս քում, որ չէ օրէն կամ որո՞վ զօրութեամբ կամիս մարտընչիլ ընդ իս կամ թէ չգ<ե>րեցին արդեօք, զի այսքան ձեռագիր ի մեծամեծաց և յիշխանաց առ իս են, զի բանիւ նոցա եկեալ եմ ես, և զօրքն քո յորս յուսացեալ ես, կամին սպանանել զքեզ և կամ տալ ի ձեռս իմ։ Բայց դու լուր ինձ, և եկ հրնազանդիւ, և ապրեցիս»։ Իբրև ետես ամիրայն սրտաբեկ և միշակոտոր
54բ եղեալ ապշեցան, զի պարծէր ի զօրն իւր, // որք սպանանել զինքն կա-

[9] Սկզբից մինչև այստեղ խիստ համառոտ վերցրել է Բարղամը (տե՛ս № 6333, էջ 54ա), այդ պատճառով նախընտրեցինք այստեղ ներկայացնել Ղ. Փիրղալեմյանի միևնույն հատվածի ընդարձակ տարբերակը։ Այնուհետև, շարունակությունը Ղ. Փիրղալեմյանի մոտ խիստ համառոտ է, իսկ Բարղամի մոտ բավական ընդարձակ։ Նպատակահարմար գտանք ներկայացնել Բարղամի տարբերակը (տե՛ս № 6333, էջ 54բ, № 235)։

[10] Հաշորդ բառը դժվարընթեռնելի։

[11] Եթե խոսքը վերաբերում է 1658 թ., ապա բարիկենդան Վարդավառի պահոցը կլինի հուլիսի 12-ից մինչև 17-ը, քանի որ ըստ շարժական տոմարի 1658 թ. Վարդավառը կլինի հուլիսի 18-ին, կիրակի։

մէին։ Վասն որոյ ակամայ ի փախուստ դիմել կամէր, ուստի և աւտար զաւրքն ցրուեցան, զի նեղեալ էին ի սովոյ։ Իսկ զօրքն իւր, զի տեարք էին ընտանեաց, տան, գիւղից և անդաստանաց, ուստի յակամայս դընացեալ դարձուցին զնա աղաչելով և երդմամբ, զի հաւատարիմ կացցին նմա մինչև ի մահս։ Դարձաւ, ամիրայն, և մինչդեռ ի միւսում աւուր, ի Վարդավառի կիրակէին[12], մարտնչէին երկուստեք ընդ միմեանս։ Տեսեալ ամիրայն զակներև պարտութիւն իւր փախեաւ, և գնացեալ անկաւ ի քարանձաւս լերանց, հանդերձ որդւովքն իւրովք։ Իսկ զօրք փաշային մտին ի քաղաքն, առանց բնաւ հետապնդելոյ զամիրայն, յաւարի առին զոր և գտին, և սպանին զքառասուն քրիստոնեայս, յորս էր և Սարգիս անուն ոմն սարկաւագ, երիտասարդ, զօրեղ. և զբազումս վիրավորեցին, և զվանքս կողոպտեցին և մերկ արին, այլ ողորմութեամբն Աստուծոյ ոչ կարացին գտանել զպահարանն, ուր էին բազում աստուածային մատեանք և սպասք եկեղեցոյն. և այսպիսիսն հասուցին մեզ սուգ մեծ։ Եւ ի միւսում աւուր գտեալ փաշայն զմի յորդւոյն ամիրային զԴիագին բէկ, կարդեաց զնա ամիրայ և խրատեաց զնա չինել իբրև զհայր իւր։ Եւ կողոպտեալ զամենայն[13]։

228ա Յայսմ ժամանակի մի ոմն յազգէն Հոռոմոց կարի ճարտար կրօնափոխ եղև և եմուտ ի պալատն արքային և եհան մինչև յաստիճան վաղիրութեան. ուստի և Հոռոմք ի ձեռն սորա ետուն [ՄՌ] (200000) զուռոշ և կորզեցին ի մէնշ վանս Սրբոյ Յակոբեանցն, որ յԵրուսաղէմ։ Այլ ոչ է պարտ յուսահատել առ այս։

Աղաչեմ յիշել ի տէր Քրիստոս յոյսն իմ զմեղուցեալ սպասաւորս բանի զՎարդան և զծնողսն իմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որ զգիրքս կազմեցի և զյիշատակարանն և զսակաւ պատմութիւնս, որ եղև ի ժամանակի մերում, արարի, թէ տկար մտօք և ոչ որպէս վայել ի ձեզ, այլ ըստ իմում չափոյ. և դուք յիշեցէք ի Քրիստոսէ։ Նաև համշիրակ եղբայրն իմ՝ զՏիգրանակերտցի Սարգիս բաբունին զհետ յիշեցէք. ամէն։

228բ Քրիստոս յոյսն իմ զմեղու//ցեալ բանի սպասաւորս Վարդան և զծնողսն իմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որ զգիրքս կազմեցի վերստին և զյիշատակարանս և զսակաւ պատմութիւնս արարի տկար մտօք, ոչ որպէս ձեզ վայելէ, այլ ըստ իմում չափոյ և դուք յիշեսջիք ի Քրիստոսէ. նաև զհամշիրակ եղբայրն իմ՝ զՏիգրանակերտցի Սարգիս բաբունին ի հետ յիշեցէք. ամէն։

1229

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 8207

Գրիչ՝ Նիկողոս

ա

319ա Փառք...։

319բ Արդ՝ եղև աւարտ գրչութեան այսմ մեծահանդէս և հոգելից տառս ի

---

12 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։

13 Այնուհետև դարձյալ վերցրինք Ղ. Փիրղալեմյանից, որովհետև վերջին պարբերությունը չի պահվել Բարղամի № 6333 ձեռագրում։

շրջագայութեան հայկազեան տումարի ՌՃ[Է][14] (1658), ի յաւգոստոսի ԺԲ (12), աւրն հինգշաբթի, ի հայրապետութեան տեառն տէր Յակոբա[յ] և յառաջնորդութեան յայսմ նահանգի տէր Գրիգոր արհի եպիսկոպոսի, որ այսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ձեռամբ ամենամեղ և փցուն գրչի Նիկողոս ոմն անարժանի, ի խնդրոյ տէր Սիմէոն հեղահոգի քահանայի։ Որ [յ]որդորմամբ և սիրով զժողովուրդս իւր [յ]որդորեաց, որ ետուն ի սէրն Քրիստոսի զհալալ արդիւնսն իւրեանց, ոմն առատ և ոմն սակաւ ըստ իւրեանց կարի և ըստացան զգիրքս սր., որ կոչի Շարակնոց։ Եւ եղին յիշատակ ի Ս. Գէորգ եկեղեցին։ Ոչ ոք չունի իշխանութիւն հանել ի դրանէ Սրբոյն Գէորգայ։

Ով սր. քահանայք և մանկունք եկեղեցւոյ, յորժամ եղանակելով երգեք, յիշեսջիք զստացողքս սորա և դուք յիշեալ լիջիք յահեղ ատենին Քրիստոսի։

320ա Դարձեալ յիշեսջիք // ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Վարդան աբեղան, որ նա ևս պատճառ եղև գրքիս, որ զմագաղաթն շնորհեց, ոմն դրամով և ոմն ձրի։ Խնդրեմք ի տեառնէ Աստուծոյ, որ զիւր արքայութիւնն ձրի պարգևեսցէ ի միւսանգամ գալստեանն։ Դարձեալ յիշեսջիք սեռն սիրով զտէր Գաբրիէլ սրբասնունդ քահանայն, որ բազում աշխատանք կրեց, երթևեկ առնելով առ գրոցս. խնդրեմք ի Քրիստոսէ Աստուծոյ, որ աշխատանացն փոխարէն ի միւսանգամ գալստեանն ընդ սր. քահանայցն վարձատրեսցի...։

Բ

190բ Ո՛վ ոք հանգիպեսցի,
Այսմ տաւնի պաղատեսցի,
Առ մայր Յիսուսի...
Թերևս մեռեալ ոգւոյս ողորմեսցի,
Նիկողոս գրչիս. և իւրն ձեզ պարգևեսցի։

1230

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑ

Երևան, № 7227 (1603 թ.)

1ա Ընտամբոլ. թիւն ՌՃԷ (1658) սեպտեմբերի Ժ (10), աւրն ու[ր]բաթ. ի խանն Վալիտայ. ես հիւանդացայ, պարոն Խոստրովին օգնութեամբ մեք Ամուլեաց ջումիա[թս], որ մէկ տեղ հաց էինք ուտ[ում], Աստուած անփորձ պահեաց։ Թմբ[ր]ճենց Գալուստն իւր աղբ[ար] Բաղտասարն, Խոստրովն, Մելիք-Շանազարի տղայ Մելք[ոնն], Վերի գտեցի Ծատուրի թոռ Առաքելն, Հունանի թոռ Թորոսն, Խաչումի թոռն Վարթանն, Մաժլումի թոռ Աւետիսն, Թումանի տղայ Խուլտրվերդին, Մելիք ղուլչի Սնակն[15]

[14] Ձեռագրում «էշ»-ն ջնջված է, բայց հետքը լավ երևում է։ 1658 թ. օգոստոսի 12-ն իրոք հինգշաբթի է։

[15] Այնուհետև ընդհատվում է։

1231
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8568

Գրիչ՝ Տիրատուր դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

318ա Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս, որ կոչի Շարակնոց լաւ և ընտիր օրինակէ, որ է խլկեցի, ձեռամբ մեղսասէր և անարժան Տիրատուր դպրի, ի դրան Ս. Նիկողոսի հայրապետին, ի թվականիս Հայոց ՌՃԷ (1658), ի սեկտեմբեր ամսոյ ԻԱ (21), ի քաղաքն Կոստանդինուպօլսի, ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մէհէմէտի, ի հայրապետութեանն սբ. Էջմիածնի տէր Յակոբ յամենայն Հայոց կաթողիկոսի, ի վայելումն Կեսարացի տէր Միքայէլի որդոյն՝ Կարապետին: Ով[16] ոք հանդիպեսցի՝ ասասցէ Աստուած ողորմի։

1232
ԱՒԵՏԱՐԱՆ (1545 թ.)
Գասապեան, ՀԱ, 1947 թ., № 5

635 Արդ՝ զվերջին ստացող սբ. Աւետարանիս զԶաքարիայ ղալիֆայն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից և յարդեանցն, և եդ յիշատակ ի հայրենական գաւառն Խնծորի, ի դուռն Ս. Աստուածածնայ վանացն, յիշատակ իւր հոգւոյն և իւր ծնօղացն՝ Գրիգորին և Բատիկին, և կողակցին՝ Նղիսաբեթին, և հանգուցեալ որդւոյն՝ Յովանէսին, և միւս Յովանէսին և Մարտիրոսին, և մեծ պապոցն՝ Զաքարիային և Ուղուրլուին, և մեծ մամոցն՝ ՇաՀրիստանին և Մուքլուին, և եղբարցն՝ Պօղոսին, Եղիային և Աստուածատուրին. և քրւերցն Կուլիստանին, Աննային, Մարիամին, ՇաՀրիստանին և Նազլուին. և աներոջն՝ Պալիին, և զոքընչին՝ Փաշային, և որդւոցն նորին՝ տէր Սարգսին, Մելքոնին և Քնարին, և փեսայնոցն՝ Յովանէսին և մահտեսի Աստուածատուրին. և քրւեր որդւոյն՝ Կարապետին և քեռուն՝ մահտեսի Տօնիկին, և կնքահօրն՝ մահտեսի Պապուքին, Աննային և Կուլիստանին, և ամենայն արեան մերձակայից իւրոց՝ կենդանեաց և մեռելոց։...

Արդ՝ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայիցդ...։ Թվին ՌՃԸ (1658) հոկտեմբեր ամսոյ ի ԺԱ (11)։

1233
ԳԻՐՔ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՅ
Երևան, № 1472

Գրիչ, ստացող՝ Սահակ վարդապետ
Վայր՝ Սպահան

444բ Փառք..., որ ետ կարողութիւն մեղսամած և ամենաթ[շ]ուառ անփինս Սահակ անուամբ վարդապետիս ի յաւարտումն գրոցս Մոլութեանց

[16] Ձեռագրում «տէր Միքայէլի... ով» հատվածը գրվել է հետագայում, նախորդ գրածը ջնջելուց հետո։

ի յաշխարհիս Պարսկաստանի *և ի շահանիստ մայրաքաղաքիս* Սպահանի, *և թուաբերութեանս հայկազեանս տումարի ի Ռ, ի Ճ և ի եօթն անցեալ և ի յութն մտեալ ամին (1658)*[17] *և ի նաւասարդի ԺԴ (14)-ին և ի պատկեր օրն հինգշաբթին, ի կաթուղիկոսութեանն սրբազանի* Յակոբի Ջուղայացի *վարդապետի և ի թագաւորութեանն շահ* Ապասին, *յիշատակ իմոյ անձինս և հոգևոր հօրն իմոյ և ուսուցչի* Խաչատուր *վարդապետի, որ* Կեսարացի *կոչի. և մարմնաւոր ծնողացն իմոց՝ հօրս* Մելքոնին, *և միւս հօրս* Միրումին, *և մօրս* Խաթայուն; *և պապին իմոյ՝* Սուլթանվէլումն *և կողակցին՝* Թանայիսաթունին *և իւրեանց ուստերացն և դստերացն. և միւս պապին՝* Խէրբաշիին *և կենակցին՝* Անապխանին, *և քերցն իմոց՝* Էանիփուռին *և* Վարվառին, *և որդոց և դստերաց՝*
445ա Խանիփոռին, // Սիմէոնին *և* Աննային, *և փոխեցելոցն առ Քրիստոս մանուկ* Սարգսին *և* Ստեփանոսին, *և դստերացն՝* Թագուհոյն, Եւանուոյն, *և զաւակաց* Վարվառին, Դաւթին *և* Ղատամդուլուն: *Աստուած զկենդանիսն անփորձ և անսասան պահեսցէ։ Եւ հօրեղբարցն իմոց՝* Աբիպապին *և* Գասպարին, *և հօրաքեռն իմոյ՝* Սինափաշային, *և մօրաքեռն իմոյ՝* Զանազանին, *և որդոցն՝* Կուտուրկին, Սարգսին *և* Թասալուն, *և քեռոց իմոց՝* Նազարին, Սաֆարին *և* Մինասարին, *և մեծ պապին իմոյ՝* Ղարդանին, *և որդոյն՝* Անդրէասին, *և որդոյ[ն]* Անդրէասէն, Սուլթանվէլուն, *և նորին որդոյն՝* Մելքոնին, *և որդոյն՝* Մելքոնին, Սահակ *վարդապետիս։ Ով ոք ասացէ մեղ դրելոցս մի Տէր ողորմեա՝ ինքն Քրիստոսի ողորմութեանն արժանանայ...։ Եւ հոգևոր քեռն իմոյ* Թիրվանաէ *Աստուած ողորմեսցի ասացէք։*

1234

ՏԱՂԱՐԱՆ

Երևան, № 10006 (ԺԹ դ.)

Նախագաղափարի գրիչ՝ Նիկողոս

65ա *Գրեցաւ տոմս*[18] *ըղձակերտիկս ի նուաստ* Նիկողոսէ *հազարերորդի հարիւրերորդի և ութերորդի (1658) թուաբերութեան հայկազնեաց տումարիս և Հռովմայեցւոցն մետասան ամսոյն ի մուտն յիններորդի նոյեմբերին։*

1235

ՇԱՐԱԿՆՈՑ

ՈՅՍՄՎ, № 666

Գրիչ՝ Յովհաննէս

158 *Զանարժան և զանպիտան ծառայս* Զյով[ն]աննէս *գծողս յիշեցէք միով Հայր մեղայիւ և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն։ Գրեցաւ թվին ՌՃԸ (1658) դեկտեմբերի ԻԶ (26) օրն։*

---

[17] *Հայոց ՌՃԸ թվականը սկսվում է 1658 թ. հոկտեմբերի 8-ին (հուլյան տոմարով), իսկ նավասարդի 14-ը կլինի հոկտեմբերի 21-ին և այդ օրն էլ իրոք հինգշաբթի է։*

[18] *Իմա՛ հատոր (հուն. τόμος)։*

1236
ԱԻԵՏԱՐԱՆ
Զմիւռնիա, № 3 (1456 թ.)

137 *Զմեղաւոր* Մնացականս *յիշեցէք, յիշեա[լ] լիշիք ի Քրիստոսէ. ամէն։ Թվին Ռ հարիւր և ութն (1658), սահմի ամսոյն քսան և հինգ, աւրն ուրբաթ. ամէն*[19]։

1237
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 200

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ (Նոր) Զուղայ

ա

01ա *Յիշեսչիք ի Քրիստոս զպարոն* Աւետիքն *և հարազատ որդիքն իւր՝ պարոն* Աղամալն *և զ*Պողոսչանն, *և դուք յիշողացն հանդիպիցիք։*

*Զմեղաւոր և անպիտան զ*Յովանէս *դպիրս՝ զծրող սորա, յիշեսչիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր։*

բ

224ա *Ո՛վ ընթերցողք սբ. Աստուածաշնչիս, յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարոն* Աւետիկն *և զկողակից* Եղիսաբեթն։

*Զմեղաւոր և անպիտան գրիչս զ*Յովանէս *դպիր յիշեսչիք ի Քրիստոս։ Թվին Ռ*ՃԲ *(1653)։*

գ

308ա *Զմեղաւոր գրիչս* Յովանէս *դպիր, յիշեսչիք ի Տէր։ Թվին Ռ*ՃԲ *(1653)։*

դ

400բ *Թվական Ռ*ՃԴ *(1654)։*

ե

518ա *Յիշեցէք ի Քրիստոս զաէր* Սաեփանոս *և զտէր* Յակոբն *սրբագրողք սբ. մատենիս և զուք յիշեալ լիշիք ի Քրիստոս։*

զ

610բ *[Ի]ՊՅառք...։ // [Դ]արձեալ յիշեցէք ի Քրիստոս զհեզահոգի և խոնարհ սրտիւ պարոն* Աւետիկն. *և ցանկացեալ յայսմ աստուածային և փարթամ գանձուցս...։ Ըստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և բարեպաշտ ծնողացն իւրոց, հօրն իւրոյ՝* Զիգ Պետրոսին, *որ հանգուցեալ է առ Քրիստոս, և մօրն՝ համեղ և հարկևոր, բարեպաշտ և ուղղափառ, նման իւղաբերից կանանցն՝* Մէրտատիկին, *որ հանգուցեալ է առ Քրիստոս, և եղբօրն՝* Վասիլին, *դեռարուս և մանուկ, որ հանգուցեալ է առ Քրիստոս, զոր տէր Աստուած ընդ սուրբս դասեսցէ, և հանգուցեալ զքոյրն իւր՝* Ոսկիտատիկին։

---

[19] *Հայոց Ռ*ՃԸ *թվականի սահմի 25-ը կհամապատասխանի 1658 թ. դեկտեմբերի 31-ին և այդ օրն էլ իրոք ուրբաթ է։ Տոմարական մեր դիտողությունները տե՛ս № 1191 հիշատակարանի № 91-րդ ծանոթագրությունում։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ատեիկն, և զկողակիցն իւր՝ հեզահոգի և ողորմած Եղիսաբեթն, և հարազատ որդիքն իւր՝ պարոն Աղամալն, և շնորհալից և բուրաստան Պողոսչանն. և նորատունկ դրստերքն իւր՝ Նանաչանն և զՄէրչանն, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։

611ա ... /// Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ատեիկն և զծնողսն իւր՝ Ձիք Պետրոսն, որ է հանգուցեալ առ Քրիստոս և զպապն իւր՝ Երվելին և զՊետրոսին պապն՝ Աղախոնդվելի։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս պարոն Ատեիկն և զհանգուցեալ եղբայրն իւր՝ զՎասիլն, և զի առ Քրիստոս հանգուցեալ քոյրն իմ՝ Ոսրէտատիկն, և զորդիքրն իւր՝ պարոն Ոսկանն, Յովանէսն, Խաչատուրն յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս պարոն Ատեիկն և զսրտով սիրեցեալ մուսահիպն իւր՝ տէր Անդրէասն պահեսցէ տէր Քրիստոս ամենայն չարէ. ամէն։

[Ե]ւ արդ՝ ես անարժան և մեղօք լցեալ և որոշեալս ամենայն մասանց բարեաց Յովաննէսս, որ շնորհօք Ս. Հոգւոյն հանգ ելեալ աւարտեցի զսբ. Աստուածաշունչս ի թվաբերութեանս Հայոց ՌՃԷ (1658)-ումն։ Բայց գրեցաւ զսբ. գիրքս ի քաղաքս Ասպահան, ի գեօղաքաղաքս Ջուղայ, ընդ հովանեաւ ի գուռն[20], և ի հայրապետութեան մերոյ տեառն Յակոբայ սրբազան և ճգնաւորական վարուք, որ է ինքն բնիկ շուղացի, և ի վերատեսչութեան նահանգիս Պարսկաստանի հեզահոգի և խոնարհ սրտիւ, նման սրբոյն Պողոսի և Անտոնի ճգնաւորի, զարհի եպիսկոպոսն մեր տէր Դաւիթս, որ և սայ է բնիկ շուղացի, և ի թագաւորութեանն մերոյ փոքր շահ Աղասի որ է թոռն մեծ շահ Ապազին, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Յովանէս գրիչս և զծնողսն իմ՝ զխաչատուրն և զՅուրիխանն, յիշեցէք։

Է

Կազմի երկրորդ կողի վրա

Յիշատակ է Աստուածաշունչս Աւետիքին և ծնողացն Ձիք Պետրոսին, Մէրաատիկին, և որդոցն՝ Աղամալին, Պողոսին և մօրն Եղիսաբեթին։

1238

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 338

Հիշատակ. հեղինակ՝ Պետրոս քահանայ

Վայր՝ Երևան

ա

310ա Փառք...։

---

20 Եկեղեցու անունը չի գրված և տեղը դատարկ է։

311ա Արդ՝ ես ունայնս ի բարեաց և զառածելս մեղօք Պետրոս անուամբ ևեթ քահանայ, բայց գործովս տարակացե[ա]լ մեկուսի և հեռի պարտական բիւրոց քանքարի ծարեալ ի ծուլութենէ վարշամակի, ի հաղրս աշխարհի, որ ի վաղ ամանակաց գոյր անենումն բաղձանաց սրտիս, յաղագս այսմ ծաղկաւէտ և ցանկալի սովփերի, որ է վարդապետութիւն Տեառն բանի և Յիսուսի Քրիստոսի։

Բազում աշխատութեամբ և յոդնաջան կրիւք հոգացի զմագաղաթ սորայ ձեռամբ իմով, զոր և տեսեալ զբաղձանք սրտիս աստուածասէր և բարեպաշտ կինս այս, որ անուամբ կոչի Ղզլար, որ է հօրաքեռ ինձ, ոչ ունելով զաւակ ի վերայ երկրի՝ ոչ դուստր և ոչ որդի, վասն որոյ ի միտ ածեալ զբան մարգարէին, որ ասէ. «Երանի...» օժընդակ եղեալ գնոյն և ետ դրել զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ի վայելումն ինձ աղտաւորիս ցորքան յամից եմ ի վրանս Կեդարու, եղիցի սա ինձ անմահ որ-
311բ դի և յետ ընթանալոյն իմ անդառնալի յուղին // եղիցի յիշատակ բարի առ վայելողսդ բարեպաշտօն։

Գրեալ եղև սա ի յերկիրս Արարատեան, ի մայրաքաղաքիս Երեվան կոչեցեալ, ձեռամբ քահանայի միոյ Գրիգորի, յամի հազարերորդի հարիւրերորդի և եօթներորդի (1658) թվի տոհմիս արամեան սեռի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ Ջուղայ[ե]ցւոյ, յաջորդ և փոխանորդ սրբոյն Գրիգորի մեր լուսաւորչին, ի Վաղարշապատ քաղաքի, ի գահ իջման Միածնի բանի և մերոյս առաջնորդի Ամենափրկչի, որ Հատուց թառ կոչի, տեառն Յովհաննիսի բարձունոյ մեծի և ի թագաւորութեան Պարսից արքայի փոքերն շահ Աբասի։

Եւ յորժամ աւարտեալ սորա զսեաւ դիրն առեալ տարա ի յերկիրն Պարսից, յարքայանիստ քաղաք՝ ըստ դրոց Շօշ ասի, որ այժմ յարտաձայնեալ կոչի Ըսպահան, ի գիւղաքաղաքն Նոր Ջուղայ կոչեցեալ։

Աստուածասէր կին մի բարի,
Քրիստոսասէր երկիւղածի,
Որոյ անուն բացայայտի,
Որ Թանկխաթուն արտաբերի։
Առն իւրոյ պերճապատուի,
Պարոն Վաքան իշխան բարի,
Որդոյն իւրոյ դեռաբուսկի,
Պարոն Սաֆրազ անուն ասի։
Յոր պատահեալ յայս սովփրի,
Միտ ածեալ բան մարգարէի,
Ետուր ծաղկել իւրովք ընչի,
Վասն հոգոյն զաւակ Սիօնի։
312ա Կամաւ իւրով օժ//տեաց ոսկին,
[ ] ի հետ սորին,
Տէրն լինի սմա հովանի,
Եւ պահեսցէ անփորձ երկրի։
Տացէ սմա դուստր և որդի,

Որպէս Յակոբ նահապետի,
Խաղաղ կենօք պահէ երկրի,
Եւ հաւատովն Քրիստոսի։

• • • •

Դարձեալ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զվերոյ գրեալ կինս այս Ղզլար, հանդերձ ծնօղօք իւրովք, զհայրն՝ Մելիքսէթն, զմայրն իւր՝ Շանինիկարն. և զեղբարքն իւր՝ զՍարգիսն և զՈսկանն. և զքոյրն իւր՝ զՀռիփսիմէն. և զդուստր Հռիփսիմին զԵղիսաբեթն, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերա մեղ, մանաւանդ սբ. Աւետարանիս։ Բարերարն Աստուած փոխանակ վարձուցն իւրոց՝ հատուսցէ զերկնից արքայութիւնն...։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՂզլարն, և կենակիցքն իւր՝ զՈնանն և զՂազարն, և զորդիքն իւր՝ Կարապետն. և զդստերքն իւր՝ զԽանիփարին և զ[21]

312բ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք հաւասար ազգայնոց սորա կենդա//նեաց և ննջեցելոց. ամէն։

Բ

256բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբարեպաշտուհի կինս այս Գուլզաստայն, որ ինչ աւգ[ն]ականութիւն արար ծաղկելոյն սորա, վարձատրեսցի Աստուծոյ. ամէն։

1239

ՊԱՏԱՐԻԿ

Երևան, № 848

2բ Ես մեղապարտ Եաւրիս դիրեցի, որ Գիրքոր պարոնտէրն առ Աստուած փոխեցաւ, թիվ ՌՃԷ (1658)-ը էր։ Օվ ոք իւր բերանաւք[22] Աստուած ողորմի ասէք։

1240

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 857 (1618 թ.)

Գրիչ՝ Սահակ

469բ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զվերջի ըստացող սբ. գրոյս զԱմիրասաբէնց պարոն խօջայ Սաֆարն, որ ըստացաւ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ և ննջեցելոց իւրոց, հօրն՝ խօջայ Նազարին, և մօրն՝ Դշիուռնին, և կենակցին՝ Խանզադին, և որդւոյն՝ պարոն Ստեփաննոսին, և դստերն՝ Կատարին, որք են սոքա հանգուցեալ ի Քրիստոս։ Այլ և կենդանի ընդանեացն երկրորդ կենակցին՝ Ղարիպխանին, և հարսին՝ Լէլին և դստերացն՝ Սարարիանումին[23] և Մադալին և Գօզալումին և այլ ամենայն ազգա-

[21] Այնուհետև ընդհատվում է և նորից սկսվում նոր տողից։

[22] Բնագրում «իւ բերաւք» ձևով։

[23] Այս անձնանունը այսպես է գրված 149բ, 234ա էջերում եղած հիշատակարաններում, իսկ 5բ էջի հիշատակարանում՝ «Սալարխանումին»։ Պահեցինք առաջին ձևը։

կանաց իւրոց։ Որք ընթեռնուք և տեսանէք խնդրեցէք... պարոն խոջայ Սա[ֆ]արին և ընդանեաց իւրոց թողութիւն...։

Գրեցաւ յիշատակարանս ի թվին ՌՃԷ (1658)։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ Սանակն, որ գրեաց զպարոն զԱմիրասաթէնց խոջայ Սաֆարին յիշատակարանն։ Ով կարդայ մէկ Հայր մեղայ ասի...։

1241
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 906

Գրիչ՝ Կիրակոս քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

195բ Փառք..., որ ետ կարողութիւն սխալամիտ և մատնագէտ և մեղսամած գրչի Կիրակոս իրիցէ անարժան, որ անուամբս եմ քահանայ, գործովս եմ մոլորեալ։ Աւարտ եղև սբ. տառս, որ <այժմ> Մաշտոց կոչի, ի թուականութեանս Հայոց ՌՃԷ (1658) ամի, ընդ հովանեաւ Ս. Աս-
196ա տուածածնիս՝ ի Շօշ քաղաքիս, ի գեօղն Ջուղայ, ի հայրա//պետութեան տեառն տէր Յակոբայ, և ի թագաւորութեան փոքր շահ Ապասին, և յեպիսկոպոսութեան երկրիս տէր Դաւթեա[յ] արհի և քաջ վարդապետի, խնդրեմք զոր տէր Աստուած անփորձ պահեսցէ ի վերայ ծաղկեալ գաւազանի։ Որ եղև լրումն և կատարումն աստուածապատում սբ. Մաշտոցիս ձեռամբ սուտանուն Կիրակոս իրիցուս և զգրչիս ուսուցօղ տէր Բարսեղն, որ յայսմ ամի եղև կրօնաւոր հաբեղայ։

Ո՛վ աստուածասէր քահանայք սբ. եկեղեցոյ կամ եպիսկոպոս, հանդիպիք սմա կարդալու կամ օրինակելոյ Ա (1) Հայր մեղ[ա]ի յիշեցէք, որ բազում աշխատութեամբ շանեցաւ ի վերայ գրչիս ուսուցանել
196բ Աստուած զի // յիշօղքս մեր յիւր արքայութիւնն յիշէ։

Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զմեղաւոր և մեղսամած Կիրակոս էրէցս, որ աւարտեցուցի զգիրս, որ կոչի Մաշտոց։ Եւ զհայրն իմ՝ Զաքարայն և զմայրն իմ՝ զԵղիսաբեթն յիշեցէք ի Քրիստոս...։ Ո՛վ պատուական հարք և եղբարք, անմեղադիր լերուք սխալանացս, որ կարս այս է։ Յիշեցէք Աստուած զձեզ յիւր արք[24]

1242
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1597

Գրիչ, ծաղկող՝ Յովանէս սարկաւագ

ա

193ա Զզածանող գրչիս զՅովանէս գրիչս յիշեսջիք ի Տէր[25]։

բ

320բ Գրեցաւ, նկարեցաւ Շարականս ձեռամբ Յովանէս սարկաւագի, ի

[24] Այնուհետև ընդհատվում է ձեռագրից թերթ ընկնելու պատճառով։

[25] Ձեռագրի 246բ էջում գրիչը գրում է. «ԶՅովանէս ծրող յիշեա ի Տէր. թվին ՌՃԸ» (1659)։

թվին ՌՃ ԼԹՆ (1658), կենայ յիշատակ հոգոյ պարոն Յակոբին և ծնողացն՝ մուղդասի Յախնազարին, Եղնէրին, քուր Գուլխանդանին, կողակցուն՝ Նանուխին, յիշեցէք...։

1243
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1606 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Մովսէս

301ա Եղանակաւոր երգարանս այս պատուելի ի Հայաստանեայց եկեղեցի, որ ըստ հասարակաց բարբառոյ Շարակնոց կոչի և սոյն տուփս, որ արդ տեսանի, նորոգեալ եղև՝ սատարութեամբ անձինս նուաստի և անարժանի Մովսէսի յետին բանասիրի, ի խումբս ուսումնականաց համարելի, յամի հազարերորդի հարիւրորդի և եօթն (1658)-երորդի թուականութեան արամեանս տոհմի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազանի, յաթոռոջ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի հայկականս ազգի։ Արդ՝ որք պատահմամբ շահիք և կամ վայելող լինիք զկնի մեր ելից աստի, պաղատիմ յիշել առ յոյսն ամենայնի մեր Յիսուս Քրիստոս... հանդերձ ծնողօք, որ ըստ մարմնոյ պատճառի տինա ևս և ըստ հոգեվորապէս ստացողի և նուիրողի։ Միանգամայն և որ ոք առ այս գիրս աշխատութիւն ինչ ունի Յոհաննու երիտասարդի, որ ընծայեաց մեզ իբրու իր իմն յիշատակելի առաջի Աստուծոյ ողորմածի. որոց յիշողաց ամենայնի // և յուսողացս առ շնորհն ձրի Տեառն պարգև հասարակեսցի։ Ընդ որս և սորին վայելողի մերում հնազանդ հոգևոր որդեկի Եռովք դպրի նոյնն տացի և եղիցի. ամէն։

1244
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1918

Գրիչ՝ Թումաս դպիր
Վայր՝ Քարթիման

125բ Փառք... որոյ խնամօքն և ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ աստուածախօս կտակս, որ կոչի Պրոկղ, ձեռամբ անարժան և սուտանուն Թումաս դպրիս, որք հանդիպիք սմա, ո՛վ եղբարք, կարդալով կամ օրինակելով սղալանացն և խոշորութեանն անմեղադիր լերուք, քանզի կար մեր այս է, միոյ ողորմայիւ զմեղաւորս յիշմամբ արժան առնէք, աղաչեմ զձեզ և դուք յիշեալ լիջիք Յիսուսէ Քրիստոսէ. ամէն։

Աւարտեցաք զսա ի յերկիրս Պարսկաստանի, ի մայրաքաղաքն Շօշ, յոր և Ասպահան յորջորջի, ի գիւղն Քարթիմանու։ Եւ ըստացաւ սա ջուղայեցի հեզահոգի և բարեմիտ իմաստասիրի զպարոն խոջայ Անտիքն. յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց, և որդոցն՝ զպարոն Սահակն և զպարոն Մարտիրոսն[26]։

Եւ որ յիշէ՝ յիշեալ լիջի ի Քրիստոսէ Յիսուսէ. ամէն։ Ի թուականիս Հայոց ՌՃԷ (1658)։

[26] Այնուհետև տող ու կես դատարկ։

1245
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1940

Գրիչ՝ Մարկոս քահանայ
Վայր՝ Տաթև

ա

197ա Ո՛վ ընթերցող, զուարդ բարի, յիշեա զփծոյն գրչի սորայ սուտանուն Մարկոս քահանայիտ, նաև հանդերձ ամուսնեաւն իմով միով ողորմիւ յիշել աղաչեմ ի սբ. յաղօթս ձեր. ամէն։

Գրիչ՝ Սիմոն

բ

373ա Արդ՝ Եղև ղրաւ սբ. գրոցս, որ Յաղագս Հոգւոյ և զօրութեանց նորին և երկրորդ. Ըստ առաքինութեանց հոգոյն, և երրորդ. Յաղագս բնութեանն հրեշտակաց։ Նախ խնդրի թէ ամենևին են անմարմինք, ի սբ. աթոռոյս Ստեփէի, ընդ հովանեաւ Թ (9) հաղար և ութ հարիւր սրբոց նշխարացս, որ աստ կան հաւաքեալ, ի խնդրոյ ումեմն բանասիրի Պօղոս վարդապետի և քաշ դիտապետի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Աղաչեմ զձեզ յիշել զիս՝ զանարժան Սիմոն գրիչս և զծնօղսն իմ։

գ

414ա Գրեցա գիրս Զ (6)-օրէից հոգեաց և հրեշտ[ակ]աց ի թվոջ ՌՃ և է (1658), ի վանս գերազարդ աթոռոյն Տաթևու, ի վայելումն Պօղոս վարդապետին, որ և աթոռակալ նոյնոյ դահի։

1246
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍԻՄԷՕՆԻ ՋՈՒՂԱՑԵՑԻՈՑ
Երևան, № 2308

Գրիչ՝ Թուման
Վայր՝ Քարթման

84ա Զբսաացօղ տառիս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ո՛վ եղբարք, զԲարսեղ վարդապետն, հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնօղիւք և աղգայնօք և զհոգևոր հարազատն իւր՝ զՍահակ բաբունապետն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

Թվին ՌՃԷ (1658), ծրեցաւ ի երկիրն Պարսից, ի գիւղն Քարթման։

Ով ընթերցողք սբ. գրոցս, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք սուտանուն Թուման և գց (sic)։

1247
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 2399 (1656 թ.)

Գրիչ՝ Սահակ

316բ Կրկին անգամ յիշ[ե]ցէք ի Քրիստոս զխօջայ Սաֆարն, և կողակիցն իւր Խանզադէ, և զորդին իւր՝ զպարոն Փանոսն, որ հանգուցեալ է

առ Քրիստոս, և կողակիցն՝ Լէյլին, և դուստրն՝ Կաաարինէ, որ փոխեցեալ է ի Քրիստոս, Սառա խանումին, Մադալէ, Գօզալէ և այլ հին և նոր ննջեցեալսն յիշեցէք...։

Եւ զիս զՍահակ աբեղայս յիշեցէք, որ զսակաւ յիշատակարանս գրեցի ի թվին ՌՃԷ (1658)։

1248

ՃԱՇՈՑ

Երևան, № 2940

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

452ա Փառք...։

452բ Զոր դիմեալ մեծաւ յուսով բարի արմատ շառաւեղն հաւատարիմ մահտեսի Պետրոսն և կամեցաւ զաստուածաշունչ տառս զայս ստանալ, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, ի միտ առեալ զբանն Եսայեա, որ ասէ. «Երանի...»։ Վասն այն յուսոյն և տէրունական հրամանին սերտ սրտիւ և բոլոր հաւատով ետ գրել զսբ. դիրքս, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնո[ղաց][27], ի դուռն Սրբոյ Աստուածածնի վայելչայարկ և գեղեցկասար եկեղեցւոյ, ի մայրաքաղաքս Կոստանդինուպօլսոյ, ի վայելումն մանկանց սր. եկեղեցւոյ։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէն և հանդիպիք տեսութեան սբ. դրոցս կարդալով կամ
453ա աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշես//ջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր առաջի անարիւն զենմանն և ի ժամ սոսկալի սբ. պատարագին, լի բերանով և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն հայցեցէք լաւ և բարի քրիստոնէին և բարեմիտ մահդասի Պետրոսին, որ է ի գաւառէն Ակնայ, ի գեղջէն որ կոչի Ապուշեխ, յիշատակ հոգւոյ[28]

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, կողկողագին պաղատանօք և սբտահառաջ ողբովք, զի լի սրտիւ և սերտ հաւատով Աստուած ողորմի ասացէք հաւատարիմ և բարեմիտ, իմաստուն և աղքատասէր մահդասի Պետրոսին և ծնողացն[29]։

Եւ առաւել անյիշատակ ննջեցելոցն...։

Եւ արդ՝ ես՝ անարժանս, հող և մոխիր, թափառնիկս և ունայնս ի գործս բարեաց, սուտանուն Յովաննէս երիցուս, որ անուամբս միայն եմ և գործովս ոչ, այլ հեռացեալ եմ ի բարի գործոց և աւտարացեալ ի սբ. անուանէ...։

453բ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զդիրքս ի քաղաքիս Կոստանդինուպօլիս, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և

---

[27] Հիշատակարանն ընդհատվում է, ապա տասներկու տող դատարկ և դարձյալ շարունակվում է։

[28] Հիշատակարանը դարձյալ ընդհատվում է, ապա տասը տող դատարկ և նորից շարունակվում է։

[29] Դարձյալ ութը տող դատարկ։

որդոյ նորա Մարտիրոսին, ի մեծ թուականիս Հայոց ՌՃԷ (1658), ի հայրապետութեան տեառն էջմիածնայ տէր Յակոբին ամենայն Հայոց կաթուղիկոսի, ի բռնակալութեան Տաճկաց սուլթան Մահմատ խոնդքարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք և հալածիմք ի յանօրինաց և ի սուտ եղբարց և յանիրաւ հարկապահանեսդաց։

Արդ՝ գրեցաւ սայ ձեռամբ անարժան և մեղսաթաւալ և անպիտան փծուն գրչի Յովանէս երիցիս։

Եւ արդ՝ ունի ղընթերցումն բովանդակ տարոյն ղեղեալ ընթերցուածն Յակոբայ և Կիւրղի և ղինանց կարգն, ղդորձքն և ղկաթուղիկէքն և զտօնից տէրունականաց և զյիշատակ սրբոցն զկիրակէից և զշաբաթապահոց՝ ղչորեքշաբաթու և ղուրբաթու։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ զմանկունս սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. գրոցս կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեան և սխալանացս գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զամենեսեանդ, զի լի սրտիւ և սերտ հավատով անարժան, սուտանուն Յովանէս երիցիս Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն հայցեցէք ինձ և ծնողաց իմոց Շէնրիին և մօրն իմոյ՝ Մելէքին, և մեծ պապուն իմոյ՝ մահդասի Այվաթին, կողակցուն՝ մահդասի Սուլթանին, և կողակցիս իմոյ Մայրամին, և զաւակաց իմոյ Գրիգորին և Սարգիսին, Շանզէտէին և Հուրիին, և Նուրիին, և ամենայն ազգականաց իմոց կենդանեաց և հանգուցելոց, ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանօք, զի լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք մահդասի Պետրոսին[30]։

454ա Դարձեալ երեսս գետին դնելով աղաչեմ /// զի լի սրտիւ /// անարժան, հող և մոխիր Յովանէս երիցուս Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն հայցեցէք ինձ և ծնողաց իմոց, և զվարպետն իմ Կեսարացի զԽաչատուր երէցն, որ ի վերայ իմ բաղում աշխատանք ունի յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զամենայն արեան մերձաւորս իմ...։

1249

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3697

Գրիչ՝ Գրիգոր

ա

69ա Զմեղուցեալ Գրիգորս յիշեցէք։

բ

118ա Ի թվիս Հայոց ՌՃԷ (1658), գրեցաւ ձեռամբ սուտանուն Գրիգորիս։ Ո՛վ երգեցողք անմեղադիր լերուք, զի ամենայն մարդ զոր ունի, զայն վաճառէ։

---

30 Դարձյալ տես և կես տող դատարկ։

Գ

142ա Զխիստ ամաչեցած և սևերես զԳրիգոր, ի ձեր մաքրամիտ յաղոթեաց մի՛ միռանաք։ Աստուած բարով վայելել տացէ տէր Գրիգորին. ամէն։

Դ

155ա Աղաչեմ զձեզ, ո՛վ երգողք թողութիւն առնել սխալանաց սորայ և ասացէք Աստուած ողորմի Գրիգոր գծող տառիս և Աստուած զձեզ յիշէ...։

Ե

184բ Գրեցաւ այս ի թուին ՌՃԷ (1658) խոշորութեան գրիս անմեղադիր լերուք. զի կար մեր այս էր։

1250

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 4620

Գրիչ՝ Վարգան
Վայր՝ Սուրբ

390ա Փառք...։

392ա Այս մատենիս աստուածաբան,
Զանազանեալ ականցս որ կան,
Տէր Յոհանէս այր պատուական,
Եւ գրծագրել զսա զանազան։
Վարիւք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճգնողական,
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդւոց մարդկան։
Փափագեցաւ իբր զեղջերայն,
Ցաղբերքս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացքս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Վարդան հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յաւժար և ժրական,
Բաղում շանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։

392բ Ի թվականիս Ռ ամեան,
Ճ և է թիւ ընդ նրմայն (1658),
Աւարտեցաւ սա ի լրմայն։
Որք հանդիպիք սրմա տեսլեան
Կամ վայելէք յայս բուրաստան,
Ցիշման առնէք ըղմեզ արժան,
Զվարդան գրիչս հողս ւ անպիտան։

Եւ դուք յիշիք առ Տէրն բան,
Յորժամ գայցէ ի դատաստան,
Լրսէք զձայնն երանական,
Զեկայք աւրհնեալք հաւրն իմ արժան։
Սգաչեսցուք զՀայրն գրթական,
Զներրորդութիւնն միական,
Նմա տացուք փառս անխափան,
Որ է աւրհնեալ միշտ յաւիտեան։

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս, և խընկալի տուիս..., որ կոչի Շարակնոց ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոլնամեղ և անիմաստ մեղաւոր Վարդան դրչի։

393ա *Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին աւարտեցի զսա*[31], *յիշատակ տէր Յոհանէսին և ծնաւղաց նորա Դարիպչանին և Գաւզալին, և եղբարցն՝ Յովանէսին, և կողակցին՝ Համբէկոյն, և միւս եղբօրն՝ Սուրգսին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

Դրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃ և է (1658), ի յերկիրս Մոկաց, ի գեաւղս որ կոչի Սուրս, ընդ հովանեաւ Ս. Յովանու Մկրտչին և Ս. Գէորգա[յ] զօրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան գծողս և զծնօղն իմ՝ զՅոհանէս քահանայն և զՄրջան, և Աստուած զձեզ յիշէ։ Եւ սխալանաց գրիս անմեղադիր լերուք աղաչեմ։

393բ *Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զընստացող գրոցս զտէր Յոհաննէս կրօնաւորն...։*

1251

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6363 (ժե դար)

Նորոգող՝ Աւէտ
Վայր՝ Եղեգիս

ա

65բ *Փառք...։ // Արդ՝ վերջին նորոգող այսմ տիեզերալոյս, փրկաւէտ և առատաբուխ... սբ. Աւետարանիս հեղահոգի և ծնունդ եկեղեցւոյ, ձեռնասնունդ իմաստից, աստուածասէր քահանայն զտէր Միխայէլն և զեղբարքն իւր՝ զԿիրակոսն և զԱբրահամն նորոգել ետուն զսբ. Աւետարանս, յիշատակ հոգւոյ իւրեանց և ծնօղացն, հօրն՝ Մարտիրոսին, և մօրն՝ Սօլթանին, և հանգուցեալ եղբօրն իւրեանց անդրանկին՝ Միխթարայ, որ է նա եղև պատճառ ստանալոյ զսբ. Աւետարանիս։ Աստուած զհոգի նորա*

31 Ձեռագրում «զսաա» ձևով։

դասեսցէ ընդ երջանկացն և զյարկսն լուսեղինացն. ամէն։ Եւ իւրեանց կողակցին՝ Մարինոսին, և որդին իւր՝ Կարապետն, և միւս կողակցին՝ Մարգարտին, և որդւոցն իւրոյ՝ Աստուածատրին և Ալէքսիանոսին, և միւս կողակցին՝ Թամամին, և որդւոցն իւրոյ՝ Սարգսին և Սահակին, և միւս կողակցին՝ Համանգուլին, և ամենայն ընտանեացն իւրոց և աղդայնոքն՝ կենդանեացն և նընչեցելոցն առ հասարակ...։

Արդ՝ ես յետինս ի գրչաց, զժիրս ի չարեաց և զծոյլս ի բարեաց, նուաստ Աւետ ոգի նորոդեցի զսբ. Աւետարանս թվիս Հայոց ՌՃ և եօթնից (1658), ի յերկրիս Վայոց Ձորոյ, ի գեղաքաղաքիս Յեղեգիս, ի նահանդիս Սատիկոյ Նորավանից սբ. յանապատիս, առ ոտս երջանիկ և քաջ բարունապետայն մերոց արհի և պանծալի Յովհաննէս եպիսկոպոսացն. ամէն։

Նկարող՝ Աւետիս

Բ

Նկարի տակ

66բ Զնկարող ծաղկիս զանարժան Աւետս յիշեցէք միով Տէր ողորմէիս։

1252

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6364 (1372 թ.)

331ա Եւ զվերջին ստացող սբ., Աւետարանիս զմահդեսի Խաչուկն, որ ըստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց և եդ յիշատակ ի դուռն Ս. Խաչին ի Մանճիսոն գեղջիս, վասն հանգուցեալ հօրն իւրոյ՝ մահդեսի Տէ-աէին և մօրն իւրոյ՝ Սալվէրին և ամենայն նախնեացն իւրոց, և եղբօրն՝ Խաչատուրին, որ հանգուցեալ է առ Քրիստոս։ Մանաւանդ կողակցուն իւրոյ՝ Սուլթանին և դեռաբոյս որդոցն իւրոց՝ Սարգսին, Պուռնաթին և Խաչատուրին. և դստերաց իւրոց Կուլանային և Եագնուլին և ամենայն արեան մերձաւորացն իւրոց։ Անջնջելի յիշատակ եդ մահդեսի Խաչուկն ի Մանճիսոնու Ս. Խաչ եկեղեցին ի թվին ՌՃԷ (1658)։

1253

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԷԼԻ ԱՍԻՐԻՈՅ

Երևան, № 6411

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

103բ Զըստացող յայսմ տառիս պարոն [Աւետիքն] և որդիքն՝ պարոն Սահակն և զՄարտիրոսն[32]. զի Աստուած անփորձ և անսասան պահեսցէ...։

---

[32] Հիշատակարանում այս երկու անվան տառերից չնչումներ կան, բայց հստակ կարդացվում է։ Ամբողջովին ջնջված է Աւետիք անունը և չի կարդացվում։ Հաջորդ հիշատակարաններում հիշվում է ստացողի այլ անուն։

Ը

Յիշեսջիք և զիս ըզգծողս մեղօք լի Սարգիսս. և Աստուած յիշողսդ յիշէ...։

Գ

109բ Ո՛վ պատուական ընթերցողք, յիշեցէք զստացող այսմ տառիս պարոն [Աւետիքն]. ամէն, իւզպաշի. մեղսամած Սարգիս գծողս։

Դ

221բ Զբստացող սբ. գրոցս պարոն [Աւետիքն][33] յիշեցէք հանդերձ ծնողօք իւրովք. ամէն։

Ե

248ա Ո՛վ ընթերցողք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր պարոն Պետրոսն և զանարժան Սարգիս գծողս, և Քրիստոս զձեզ յիշէ...։

Զ

298ա։ Ընստացող սբ. գրոցս Միխայէլիս զպարսն Աւետիքն և որդիքն՝ պարոն Սաֆարն և զԱլէքսիանոսրն[34]. Աստուած անփորձ և անսասան պահեսցէ...։ Ով ընթերցողք յիշեցէք Սարգիս փծուն գրիչս և Յիսուս Քրիստոս յիշէ զձեզ...։

Է

298բ Փառք...։ Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին գրեցաւ գիրքս Պատմութեանց տեառն Միխայէլի՝ Ասորոց կաթողիկոսի, ձեռամբ անարժան Սարգիս[35] գրչի, ի խնդրոյ քրիստոսասէր և բարեպաշտ պարոնաց պարոն Աւետիքի առն իմաստնոյ հանճարեղի, որ հանճարեղութեամբ և իմաստութեամբ կարկեցուցեալ էր լեզուս հերձուածողաց և ջատագով ճշմարիտ հաւատոյ։...

Յամի հազարերորդի հարիւրորդի և ութնեակ (1658) թվի, ի Պարսից երկրի յարքայանիստ քաղաքի, գրոց Շօշ ասի, որ այժմ Ըսպահան արտաձայնի, ի մեծ գիւղաքաղաքի, որ Նոր Ջուղայ կոչի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթողիկոսի ի գահ աթոռոյն իշման Միածնի, որ եկն ի Ջուղայ յայսմ ամի տեսուչ և սփոփիչ տառապեալ ազգիս մերոյ հայկան, որ պանդխտութեամբ բնակեալք եմ ի երկիրս Պարսից,
299ա վտարանդեալ և տարամերժեալ երկրէն մերմէ Հայոց։ // Միթէ բարեբարն Աստուած վերջն ի բարին կատարեսցէ և ողորմեսցէ տառապեալ ազգիս, որպէս հնոյն Իսրայէլի։ Ի յառաջնորդութեան տեղւոյս՝ Նոր Ջուղայոյ տեառն Դաւթի բարունւոյ մեծի, և ի թագաւորութեան Պարսից փոքերն շահ Աբասի, և իշխանութեան Ջուղայոյ պարոն Հայկազի. զի ցանկացող եղեալ պատմութեանցս վերոյ դրեալ պարոն Աւետիքն[36]: Վասն զի յոյժ սէր ունէր և ուսումնասիրութիւն ի սբ. գրոց Հնոր և Նորոց Կտակարանաց, արտաքնոց և փիլիսոփայական արհեստից, մինչ զի ոչ

33 «Պետրոսն» անունը դրված է փոքրիկ թղթի կտորի վրա և այն փակցված է նախորդ Աւետիք անվան վրա։

34 Այս երկու անվան հետ կատարվել է այն, ինչ նշված է 33-րդ ծանոթագրությունում։

35 Անունը գրված է ներքևի լուսանցքում։

36 և 37 Ջնջված է և ուղղված է «Պետրոսն»։

պարապէր և ոչ ժամ մի ընթերցման դրոց ի գիշերի և ի տուընձեան ոչ դադարէր, այլ հանապազ խօսակցութիւն իւր ընդ սբ. գրոց էր, վասն որոյ հարկ ի վերայ իմ եղեալ սակս ծրելոյ։ Եւ ես յանձն առի յօժարութեամբ գրեցի և աւարտ հասի Պատմութեանցս ի վայելումն անձին իւրոյ...։

Արդ՝ յիշեցէք յաղօթս ձեր բարի,
Իւզպաշի Աւետիքն[37] այր ցանկալի,
Յոյժ հըմտասէր գրոց բանի,
Այր իմաստուն հանճարով լի։
Վաղուց հետէ գոյր տենչում սրտի,
Վասն Պատմութեանցս Միխայէլի,
Գրել ետուր իւրով քընչի,
Ի վայելումն իւրոյ անձին։
Սա եղիցի զաւակ բարի,
Ըստ Եսայեա մարգարէին,
Եւ ազգայնոցն իւր համայնի,
Ընդունելոց և կենդանի։
Հօրն իւրոյ՝ Մանուկ պսակաւորի[38],
Մօրն իւրոյ՝ Ոսկի[39] ձայնի,
Ընման անուան իւր յիրաւի,
Եղբօրն իւրոյ պարոն Պողոսի[40]:
Գնացեալ յուղին անդառնալի,
. . . . .։
Միւս եղբօրն մինչ կա մարմնի,
Պարոն Յոհանէս և Գալուստի[41],
Եւ քերցն իւրոց հարազատի,
Աննայի, Ուռուղլու[42], Սանամ[43], Եղիսաբեթի[44]:
Եւ ազգայնոցն իւր համայնի,
. . . .
Եւ կողակցին իւրոյ մարմնի,
Շըքեղ խաթուն Թագուհի[45], Ղարիպ խաթունի[46],
Որդոցն իւրոյ անդրանկի,
Պարոն Սաֆար վաճառողի,
Փոքր որդոյն Ալէքսանոսի[47],
Նորաբողբոջ Բարուանակի:
Բարեբարոյ մանուկ բարի,
Քաղցր և անուշ յոյժ ցանկալի,
Միւս որդոյն Յակոբեանի,
Փոխնցելոյ յոյսըն բնաւի։
. . . .
Եւ դստերացն սաղարթալի,
Թամար, Վարթեր և Մէրիկի,

[38]—[48] Նշված անունները կամ չնշված են և նորը գրված կամ թղթի փոքր կտորների վրա գրվել են նոր անուններ և փակցրել հին անունների վրա։ Նշմարելի է, որ նախորդ ընտանեցողի Աւետիք անունը ուղղել են Պետրոս, Սահակ անունը՝ Սաֆար։

Աչն Աստուծոյ և անեղի,
Լինի Պետրոսն[48] միշտ հովանի

. . . .

300բ Արդ՝ աղաչեմ զձեզ, զամենեսեան հարք իմ և եղբարք, տեայրք իմ
301ա և վարդապետք, որք հանդիպիք սմայ կարդալով, օրինակելով և // կամ միայն հարևանցի տեսանելով, յիշեցէք բոլորով սրտիւ և թողութիւն մեզաց հայցեցէք հոգոյս գծագրողի այսմ տառի Սարգիս փանաքիս և զհօրն իմոյ՝ Մարտիրոս քահանայի։...

1254
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6697

Գրիչ, ստացող՝ Յակոբ Ջուղայեցի
Վայր՝ Տաքև, Եղեքաձոր

ա

79բ Ո՛վ պատուական քահանայ, յորժամ որ զննչեցեալն ի Քրիստոս ողորկես, զՋուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս յիշես, որ բազում սիրով Մաշտոցս դրեցի ես, մէկ բերան ինձ Հայր մեղայ ասես...։

բ

723ա Ի թվականիս Հայոց հազար ՃՁ (1657) ամի գրեցաւ Մաշտոցս, ընդ հովան[ե]աւ սբ. յանապատին, ի ձեռամբ կրօնաւոր Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականիս, յիշատակ ինձ և իմ ծնողացն և ամենայն արեան մերձաւորեաց իմոց։ Թողութիւն շնորհէք, որ կրօնաւոր եղայ, առաքինութեան ոչ հասի։

գ

230ա Եւ զաշխատող տոմարիս զՋուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս մի բերան յիշես...։

դ

269բ Յորժամ կարդաս, հմուտ լինիս, Ջուղաեցի մահդասի Յակոբ վաճառականս յիշեցէք, որ բազում աշխատութեամբ զՏոմարս պարզեցի ողորմութեամբ Տեառն իմոյ...։

Դարձեալ եթէ ոք ի սմանէ օրինակ առցէ, աղաչեմ առ նա, որ յիշատակս իմ գրեսցէ. տէր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ...։

ե

27 1ա Յայտնի լիցի ձեզ եղբայրք, յորժամ ըսկիղրն արարի Տոմարիս, նախ և առաջին Տոմարն որ գրեցի՝ Անկաստղն, Ելաստղն, Արեգակ ծով մըտանելն, ցամաք ելանելն, այլ բազում բան կայ, որ ի մէջ նորա չէ գրած. յետևաց զաւելորդն դուս գծեցի, զթերին զամէնն լցի ի մէջ սորա, այլ աւել բանք կայ գրած, որ առաջին Տոմարումն չէ գրվել։ Յետևաց բազում աշխատանօք այնպէս բան գրեցի, որ թէ օրինակն սղալ գրեն, այն բանովն սրբայգրել կու լինի, որ Տոմարին մէջն սղալ չմընա։

Դարձեալ յա[յ]տնի լիցի ձեզ, որ Ճ (100) տոմար գրել տվի վասն ի սէրն Քրիստոսի՝ ոմն այս օրինակովս է դրած, ոմն առաջին օրինակովն է գրվէլ, թէպէտ պասն, ուտիսն միապէս է։ Այնպէս աւելի բան
270բ կայ, որ // ի մէջ սորա գրած է, նոցա չէ գրած։ Այս Տոմարս, Մաշտոցս ես՝ Յակոբ վաճառականս ձեռամբ իմով դրեցի, վասն յիշատակի իմոյ։ Ճ (100) տոմարն՝ զորն գնովն զայլոց տվի, զորն բաշխեցի վասն ի սէրն Քրիստոսի։ Եթէ ոք Տոմարիս հանդիպեսցի զաշխատող Տոմարիս Ջուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս մի բերան յիշեսցի՝ նա ի դիրն կենաց յիշեալ լիցի. ամէն։

Զ

271բ Փառք...։ // Արդ՝ աղաչեմ զձեզ, եղբարք, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զՋուղայեցի մահդասի Յակոբ վաճառականս, որ ծերութեան իմոյ բազում աշխատանօք գրեցի զայս Մաշտոցս, իմ պարզած Տոմարն էլ ի մէջ սորա գծեցի, յիշատակ ինձ և իմ ծնողացն՝ Աւաքին, Նղեսայբեթին, և իմ կողակցին՝ Անձրևվարթին, և որդոյ իմոյ Խաչատուրին, Էլիազին, և եղբարն իմ՝ Յովհանին, և քվերն
272ա իմոյ՝ Անայէ, և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ // Եթէ ոք զմեզ մի բերան յիշեսցի...։

Դարձեալ աղաչեմ զձեզ, եղբարք, Մաշտոցիս համար վասն չաարութեան ժամանակիս՝ թէ գերի անկանելով կամ յափըշտակելով կամ վաճառելով, եթէ ոք ի սմայ հանդիպեսցի, վայելեսցէ զայս Մաշտոցս, աղաչեմ առ նայ, որ զ[յ]իշատակս իմ մի՛ ջնջեսցէ։ Եթէ ոք յանդգնի, զյիշատակս իմ ջնջեսցէ՝ նայ ի յայս կենաց զրկեալ լիցի...։

272բ Դարձեալ յիշեցէք զմահդասի Յակոբ վաճառականս, որ Մաշտոցիս ԺԶ (16) տետրն Տաքեոյ յանապատումն դրեցի, Ը (8) տետրն Եղէքայ-ձորին յանապատումն գրեցի, թողութիւն շնորհէք, որ զչափ կարեղութեան իմոյ այս էր, զոր գրեցաք. վարպետաց չէի ուսեալ. թէ եւել պակաս լինի գրած, անմեղայդիր լերուք։ Մաշտոցս գրեցաւ ի հայրապետութեան երիս սրբոյն Ջուղայեցի Յակոբ կաթողիկոսին, Պարսից թագաւորութեան փոքր շահ Ապասին, թվականիս Հայոց ՌՃԷ (1658) ամին։

Աղաչեմ զձեզ, եղբարք, որ Մաշտոցս վնասակար բանից պատրաստ պահեցէք՝ թէ՛ ջրէ կամ թաց տեղէ, թէ՛ աւազակաց։ Եթէ ոք զայս խրնամօք պահեսցէ...։

273ա Դարձեալ յիշեցէք զՅակոբ վաճառականս և զեղբարն իմ՝ Յոհանն, և զիւր ամուսինն՝ Մրվաթ, և որդիքն՝ Ոսկանն, Սարատն։ Եթէ ոք զմեր նընջեցեալսն յիշեսցէ՝...։

Կազմող՝ Թումայ Արպատեցի

Է

270բ Փառք..., որ ետ կարողութիւն Թումայ քահանայի Արպատեցոյ, որ կազմեցի զսբ. Մաշտոցս, յիշատակ և վայելումն Ջուղայեցի մահդասի Յակոբին և իւր ամենայն արեան մերձաւորացն սորայ...։

Արդ՝ և ես գովեմ զՏոմար սորա, քանզի յոյժ գովելի է։

Բանք Պարզատոմարիս է յոյժ գովելի և պատուական,

Գեղեցկայարմար զարմանալի և աննման,
Հինգ հարիւր և ԼԲ (32) թիւն ունի ի լման,
Դարձեալ շրջի ի դայէն սկիզբն առնէ մինչ ի կէտ կատարման։
Խիստ օգուտ է Տօմարս յիմար տգիտաց և անուսում մարդկան,
Յորժամ ողորմիս ասէ շինողի Տոմարիս լցեալ աստուածական,
Յակոբ Զուղայեցւոյ մահդասի և վաճառական,
Կրօնաւորեա ի լուսաճէմ խ[ո]րանն ի սբ. Էջմիածինն ի մենաստան։

Թվիս Հայոց ՌՃԷ (1658) ամի կազմեցաւ Մաշտոցս։

1255
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6825 (1657 թ.)

ա

Հա Սբ. Աւետարանս յիշատակ է Գրիգորին, ծնօղացն՝ Ասապովին, Պաղատատին, դստերն՝ Մարիանին, որդոյն՝ Յովանիսին. կամակից տէր Գրիգորն։

Թվին ՌՃԷ (1658)։

բ

85բ Ստացաւղ Աւետարանիս Գրիգոր բարեմիտ այրն ըստացաւ յիշատակ ծնաւղացն՝ Ասապովին, մօրն՝ Բաղտատին, կենակցին՝ Հօոմին, որդոցն՝ Յովանիսին, Խաչատուրին, Ասապովին, Առաքելին. թօռին՝ Վարդանին. դստերացն՝ Դրուանդին, Կարանին, Զամանին. թոռին՝ Ուստիանին, կամակից Գրիգոր քահանային, քահանայից՝ տէր Գրիգորին, տէր Անառնին, տէր Կիրակոսին. ամէն։

Թվին ՌՃԷ (1658)։

1256
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 7122

Գրիչ, ստացող՝ Ղուկաս քահանայ
Վայր՝ Մրուց

95ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Շարակնոցս ձեռամբ և անարժան Ղուկաս քահանայի, ի յերկիրն Ռոռտան, ի գեօղն, որ կոչի Մրուց. ի հայրապետութիւն տեառն Յակովբայ սրբազան կաթողիկոսի և մերոյ ուխտիս նահանգի Ստաթէի սբ. առաքելոյ Յովհաննէս արհեպիսկոպոսի և քաշ դիտապետի, ի թագաւորութիւն կարմրագլուխ ազգին Պարսից, որ անուանի Ղըզըլպաշ, շահ Ապազ անուն վերաձայնի։ Յիշատակ ինձ և իմ ծնօղացն՝ տէր Կիրակոսին, Գուլշիչակին և կենակցին իւրոյ՝ Նազլուխանին, և իւր որդւոցն՝ նորարողբոջ սարկաւագ Աղազարն, Ներսէսն, Ազարիէն, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Ի թվականիս Հայոց ՌՃԷ (1658)։

1257
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 7131

Գրիչ՝ Դաւիթ քահանայ

ա

104ա Աւարտեցաւ ցանկ կանոնեաց ձեռամբ անարժան Դաւթի:

բ

128ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար և անպիտան, սուտանուն Դաւիթ քահանայի հասանել աւարտ սբ. կանոնագրոցս, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր քրիստոնեայ Մուրատիս, որ ետ հալալ արդեանց իւրոց գրել սա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրում՝ Աստուածատուրին, Սուլթանին, և կողակցին՝ Նունուֆարին, և դստերացն՝ Շարեստանին,
128բ Ասմի//ենին, Սալթանին, և եղբարցն՝ Ղուրթին, Եգիբէգին, Ատեիսին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց ամենից։

Ո՛վ սբ. ընթերցողք և լսողք, յորժամ ընթեռնուք և կամ օրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ և երկնաբացիկ յաղօթս ձեր զվերուգրեալ զՄուրատն...։

129ա Արդ՝ ե ես անպտուղս ի բարեաց, մեղանչականս յանմեղաց... սուտանուն Դաւիթ, որ անու[ն]ս ունիմ և գործովս ունայն, և զծնօղս իմ Ստեփաննոս և Եբարեն, և հօրեղբօր որդին և ընկերայկիցն իմ՝ տէր Մելքէսէթն, որ կամակից եղև սորա։

գ

129բ Գրեցաւ ի սայ ի թուականիս Հայոց Ռ և ՃԷ (1658) ամին։ Ո՛վ եղբայր անմեղայդիր լերուք, զի կար մեր այս է։

Նվիրատու՝ Մուրատ

դ

129ա Արդ՝ և ես Մուրատս[49] ետու զսբ. գիրգս ի դուռն Երընկանու Ս. Ստեփաննոս Նախավկային։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսայ ի դրանէ
129բ սորա՝ գողանալ//ով[50] կամ գրաւելով կամ ծախելով։ Քահանայից և կամ ազգականաց իմոց ճանդգնի և հեռացուցանէ՝ անէծք Կայենին առցէ և պատիժն Յուդայինն...։

1258
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7270

Գրիչ՝ Դաւիթ երէց
Վայր՝ Բաղէշ

160ա Փառք...։

162ա Արդ՝ տեսեալ և իմացեալ զսորա անճառելի աւետիքն, և զահագին սպառնալիքն, և զամենեցուն փրկագործութեանն խորհուրդ ամէնաւգնեալն, և հոգիացեալն ի գործս ամենայն առաքինութեան, Սսփայ գիւղի

[49] Ձեռագրում «Մուրատ»։
[50] Ձեռագրում «գողանալով»։

այրի տէր Յովանէս և ետ եռափափագ և բոլոր հաւատով գրել զաստուածախաւս տառս ի յիշատակ հոգոյ իւրոյ և բարի ծնողաց և զաւակաց իւրոց, հօրն՝ Կանանշին և մաւրն՝ Խատբէկուն, և որդոցն՝ Մխիթարին և Յովասափին. և հանգուցեալ դստերն իւրոյ՝ Եղիսին, և քրւերն՝ Մարիամին, և հօրեղբօրն իւրոյ՝ Ղազարին, և աներոյն իւրոյ՝ Լանադին, և հոգևոր եղբօրն իւրոյ՝ տէր Դրիգորին, և այլ ամենայն արեանառու մերձաւորաց։ Եւ դուք մանկունք եկեղեցւոյ, սրբասնեալ հայրք և եղ-
182բ բայրք, յորժամ հան//դիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ղվերոյ ասացեալ ստացող սբ. Աւետարանիս զտէր Յովանէս...։

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անպիտանս և անարժանս... սուտանուն Դաւիթ էրէցս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի սբ. տէրունական Աւետարանս, ի թուականիս Հայոց մե-
183ա ծաց ՌՃ և է (1658) ամին, ի մայրաքաղաքիս Բաղէշ // կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին և Կարմրակ Ս. Նշանին, ի հայրապետութիւն տեառն Յակոբ կաթողիկոսին մեծ աթոռոյն Էջմիածնի, և քաղաքիս մերոյ աթոռակալի Մեսրոպ քաջ և արի բարունապետի, որ է ուսուցիչ և երախտաւոր ինձ անարժանիս՝ Դաւիթ գծողիս։

Արդ՝ որք ճաշակէք յամենալի սեղանոյս և յաստուծային բուրաստանէս, լիակատար սրտիւ և ուղիղ հաւատով աստուած ողորմի ասացէք ստացաւղի այս մարգարտաշար կտակի Յովանէս այրի առատապէլի իրիցո[յ] և վերոյ դրելոցն ամէնի։ Նաև ինձ անարժան գծողիս և ծնողացն իմոց՝ Սուրիասին և Հուրիփաշին, և իմ եղբարց Բլբուլին, Մովսէսին, և Եզեկիելին, և նորահաս մանկան իմոյ Ստեփանոսին, և կենակցոյն իմոյ,
183բ և իմ մեծ պապ Ստեփաննոս քահանային // և իւր կնոջն՝ Սոլթանին։ Եւ Աստուածն որ առատն է ի տուրս բարեաց ձեզ և մեզ ողորմեսցի...։

Ի սոյն ամի եղև մահ արդար աղոց և նորահաս մանկանց և նորապսակ հարսից, վասն ծովացեալ մեղաց մերոց, զոր տէր Աստուած ի բարին փոխարկեսցէ. ամէն։

Բ

179բ Աւարտեցաւ Աւետարանս ձեռամբ մեղաւոր Դաւիթ անարժան և սուտանուն իրիցոյ, ի վայելումն տէր Յովանիսին և ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց։

1259

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7364

Ծաղկող՝ Յակոբ երէց
Վայր՝ Մեծ անապատ

ա

13ա Որոյ մաղթանօքն ողորմեսցի Քրիստոս միածին որդին Ովանիսին և կողակցին՝ Մարիամին, և ծնողաց նորին Ճուանուն, Գուլումին, և եղբօրն՝ Աստուածատրին, և քեռն՝ Ուստիանին, կարդացողաց և լսողաց։

Բ

35բ Զեղկելի և ղսևերես Շոռոթցի ծաղկող Յակոբ էրէցս յիշեցէք աղաչեմ. ո՛հ, ո՛հ, ո՛հ գերիս։

Գ

297բ Զեղկելի և սևերես Շոռոթցի ծաղկող Յակոբ էրէցս յիշեցէք ի տէր Աստուած։ Թվին ՌՃԶ (1657)։

Դ

333ա Ծաղկեցաւ ղսբ. գիրքս ի Մեծ անապատս. թիվ ՌՃԶ (1657) էր։

Ե

497ա Զեղկելի և սևերես Շոռոթեցի ծաղկող Յակոբ էրէցս յիշեցէք ի Տէր։ Թվին ՌՃԷ (1658)։

1260

ՃԱՇՈՑ

Երևան, № 7412

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Ղարասու

Ա

207բ Եւ զանարժան գծող սորին զՅովանէս մելանաւորս [յիշեա]։

Բ

310ա լուսանկարում Յայսմ ամի՝ թըւարերութեանս Հայոց ՌՃ և երեքին (1654) եհաս աւր մահուանն Ըսլամքէրէ խանին և եկն փոխանակ նորա Ըստամպալայ Մահմէտքէրէ խան [և յ]աջորդեաց զաթոռ նորա նստիլ թագաւոր Պաղչասարայն, տիրութիւն առնել Հոնաց երկրիս ///

Գ

495ա /// խաւար[51], այլ զարծաթն իւրեանց անցաւոր արկին ի տրապէզս գործոյ...։

Արդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից, մանաւանդ զՇըշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սուփերիս, յիշեսջիք զստացաւղք սորա առաջի զենլոյն Քրիստոսի զմոմճի Մարտիրոսն, զՇահբենն, զՄիրինան, զՂարիպեան, զՎլգան, զՊաղտասար, զԼուսիկ, զԱստուածատուր, զՍահակ, զՄինաս։

Արդ՝ և այրքս այսոքիկ լապտերակազմք, զի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով եսուն գրել յիշատակ հոգւոյ և ի քաւութիւն սղալանաց և ի բարեխաւսութիւն անձանց. և որպէս յիշէք առ Տէր, յիշիք և դուք ի նոյն տեառնէ՝ Յիսուսէ Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

51 Հիշատակարանի սկիզբը կորած է։

Դարձեալ յիշեսջիք զուսուցող դրիս զհոգևոր հայրն իմ՝ զԳալուստ
495բ սարկաւագն, քաշագրիչն, որ բաղում աշխատանաւք և շա//նիւք ուսոյց մեզ արհեստ գրագրութեան և մեր սկսեալ զաստուածաշնչիս աւարտն արարաք, և դուք յիշեալ լիջիք ի յապենիազ Արարչէն՝ տեառնէ յԱստուծոյ մերմէ։

Արդ՝ գրեցաւ սա յամի թուաբերութեան հայկազեան սեռի ՌՃԷ (1658) ամին, ձեռամբ անարժան թարմատարի Յովանէս մահդեսի իրիցու փցնագրչի, աղաչեմ զՃշմարիտ ծառայքդ Աստուծոյ, յիշել և զմեզ առ Տէր սեռն սիրով ի միտս բարիս և զծնաւղս մեր զՍարգիսն և զմայրն իմ՝ զԿուլվարդն, յիշեսջիք և զբարեմիտ զեղբայրն իմ՝ զմահդեսի Շիրինն և զհանգուցեալ զորդեակքն երիս և զչորեսին դստերքն իմ, որ տիս և ի տղայական մանկութեանցն առ Աստուած փոխեալ եղեն և ինձ վիշտ մահու պատեալ եղէ, վասն իմ ծովացեալ մեղաց իմոց զմահն տարայարոյց ի վերայ քաղաքիս՝ Ղարասուիս, զի բազումք ի սուգ անկան և այլքն ուրախ կացին. և ես Ա (1) դստերբ միայն մնացի. զոհութիւն տուող Միածնին որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի փառք...։

Եւ եղև ծրագրութիւն մատ[ե]նադիրք յիշատակարանիս ի յաշխարհիս Հոնաց, որ կոչի Ղրիմ, ի մեծի գիւղաքաղաքիս Ղարասու ի քրիստոնեաժողով վայրիս, տներ առ յափն եզեր Բ (2) գետոյն, որ կայր ընդ հովանեաւ սրբանորոգ, տիրաբնակ Ս. Աւգուստէնդ եկեղեցւոյս և այլ սրբոց խորանացս. և կաթուղիկոսութեանն տեառն տէր Յակոբին ընդհանուր ամենայն Հայաստան ազգիս և առաջնորդութեանն յայսմ նահանգիս տէր Մարտիրոս վարդապետին ամենայն հիւսիսական կողմանցս վերադիտողի և աւագիրիցութեանն տէր մահդեսի Յովանէս իրիցու գրչի։

Յայսմ սկսման ամի մեծ և յաղթաւղ խանն աղեղնաւորաց ազգի Ըսլամքէրէյ, ել բաղում զաւրաւք և անթիւ անհամար հեծելովք խաղաց էանց և գնաց աշխարհն Իլանխաց. և ի գնալն ի ճանապարհին բաղում աւերիս և չարիս գործեաց, զոր ոչ ոք կարէ մարդ գրով պատմել կամ ասել, զոր արարինն զգիւղս և զքաղաքս թալանէլ, աւերել, գերել և այրել
496ա հրով և զեկեղեցինն կողոպ//[տե]լ՝ զխաչ և զԱւետարան և զամենայն անաւթս եկեղեցեայցն աւար արարեալ։ Եւ ի դառնալն որպէս զհաւտս խաշանցն ի հետ մտեալ բերեին հազարք հազարաց և բիւրք բիւրոց ի յազգէն Ռուսաց մինչև ի մեր Հայոց ազգէս այլ գերեալ բերեին. զոմանս ի հուրն արկանեին, զոմանս ի սուր մաշեին, զոմանս ի յոտս ձիոց ձիաթաւալ առնէին և զոմանս ի սովոյ ճանապարհին մեռանէին, և կէսք մի բերեալ ի բնիկ յաշխարհն իւրեանց վաճառէին, որպէս զառշառս և զոչխարս։ Հայր ի յորդոյ բաժանէին, և դուստր ի մաւրէ, և քոյր յեղբաւրէ, և մեր տեսեալ զայսպիսի աղէտս և զգառն կսկիծ վայ տայաք անձանց մերոց, թէ էշ աստուածասաստ բարկութիւն ի վերայ աշխարհին Իլանաց։ Յետ այնորիկ շինութիւն բընաւ ոչ մընաց մինչ ևթն ութն ամ զայս պատիժս կրեալ[52]։ Որպէս հրամայէ մարգարէն Դաւիթ ի Սաղմոսին, թէ «Ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր և ըստ անաւրէնութեան մերում հատոյց մեզ»։ Եւ դարձեալ «Եթէ ոչ Տէր շինէ զտուն ի նանիր վաստակին

52 Ուրեմն, ձեռագիրն սկսել են ընդօրինակել 1650/51 թթ.։ Իսկ Իսլամքերե խանի արշավանքը սկսվել է «յայսմ սկսման ամի», այն է՝ ընդօրինակել սկսելու տարին։

շինողք նորա»։ Այս այսպէս եղելոց ՆՀաս վախճան Ըսլամքէրէյ խանին, և ի մեռանելն սորայ բաղում աղմուկ լինէր՝ պարոնք և իշխանք, մէկ ի մէկ անկանէին և երկիրս Հոնաց որպէս զալիս ծովու էրերայր և ծերք մեր ասէին, թէ «Ոչ լինի խաղաղութիւն»։ Ապայ ի տարակուսի եղեալ վարանէին, թէ զի՞նչ առնիցեն։ Եւ եկեալ ժողովեցան մեծամեծք պարոնք և իշխանք, խորհուրդ արարին, իւրեանց միջին առաքեն թուխթ առ ի Կոստանդինուպալիս խնդրել հրաման Թուրքաց թագաւորէն զՄանմէտքէրէյ խանն և նորա հրաման եղեալ։ Եւ նայ եկեալ տիրեաց զաթոռ սորայ և վարէր զթագաւորութիւնն իւր։ Այսոցիկ այսպէս եղելոց կատարեցաւ քանոնս և յիշատակարանս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

1261

ՃԱՇՈՑ

Երևան, № 7419

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ
Վայր՝ Ղարասու

ա

1ա Աւգնեա հոգիտ սբ. Աստուած ճշմարիտ, որ տաս կարողութիւն տկարիս զաստուածաշունչիս գրելն մինչև ի յաւարտն. ամէն։

բ

97բ Զմելանաւորս Յովանէս ի Տէր յիշեա։

գ

382բ Աւարտեցաւ ձեռամբ Յովանէս սարկաւագի՝ թարմատար և փծնագրչի։ Աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, մի՛ մեղադրէք սխալութեան կամ անզարդութեան գրոյս. հանապազ սատանայ խուժանն ի վերայ մեր կուտէր և հոգք աշխարհիս և ցնորք բանի։ Յիշեցէք զծնաւղքն իմ, զհոգևոր հայրն իմ՝ տէր Ալիքսիանոս քահանայն, և հայրն իմ՝ Յակոբն և մայրն իմ՝ Անապիքայն ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք յապէնիազ արարչէն Աստուծոյ։

դ

562ա Փառք...։

563ա Քանզի ի նոյն Հոգւոյ շարժեալ և խորհուրդ բարի արարեալ, այրս աստուածասէր մահդեսի տիրացու Վարդերեսն և հայրն իւր՝ Թեմիրն, և մայրն իւր՝ Սուլթան խաթունն, և կենակցին իւրոյ՝ Գոնար խաթունին, և քրւերն՝ Մանանային, դստերն՝ Մարիամին, որդոցն՝ Թեմիրին, Խաչերեսին, Գրիգորին, Միասարին, Յակոբին, խոճայ Թորոսին և Ասլանին, որ բաղում աշխատանս կրեալ զաստուածաշունչիս գրելն, զոր տէր Աստուած վարձահատոյց լինի փոխարինաց նորա և լաւ համարեցան ստանալ զաւակ ի Սիոն...։ Կամեալ ստացան զգիրքս պիտանի ժամակարգ ընթերցուածոց ի հնոց // աստուածամերձից արանց և ի նորոց
563բ ընտրելագունից կարգեալ և եդեալ ըստ խորհրդեան տաւնից տէրունա-

կանաց Յակոբայ մեծէ յեղբարէ Տեառն և ի Կիւրղէ Երուսաղէմի հայրապետէ ի ստոյդ դիտողաց և ի ճշմարիտ վկայից, որք զծնունդն Տեառն կարգեցին և հաստատութեամբ գրեցին և աբձանացուցին ի մէջ եկեղեցւոյ տաւնել ի Զ (6)-ն յունվարի և զայլ տաւնսն ըստ եդելոց աւուրցն, որպէս ընթերցուածն ցուցանէ։ Իսկ ի ժամանակին յորում երանելի հայրապետն տէրն Ներսէս յաջորդեաց զաթոռ կաթողիկոսութեան ըստ իւրում խոհական իմաստութեանն կարգեաց զբովանդակ տարւոյն ընթերցմունք ըստ պատշաճի աւուրցն խորհրդոյ և իբր անմոլար ճանապարհ դիւրընթաց հորդեցին հետևողաց ճանապարհի այսմ կենցաղոյս, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանել ի կատարսումն տարւոյն ի դուռն Ս. Գէորգայ, որ կոչի Քաշատ։

Արդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից, մանաւանդ զճշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սոփերիս, յիշեսջիք զստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի մահդեսի տիրացու Վարդերեսն, և հայրն իւր՝ Թեմիրն, և մայրն իւր՝ Սուլթան խաթունն, և կողակիցն իւրոյ՝ Գոհար խաթունին, և քրտերն իւրոյ՝ Մանանային, զրստերն՝ Մարիամին, որդոցն՝ Թեմիրին, Խաչերեսին, Գրիգորին, Միասարին, Յակոբին։

Այրս աստուածասէր տիրացու Վարդերեսն, զի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով ետ գրել յիշատակ հոգւոյ, և ի քաւութիւն սխալանաց, և ի բարեխաւսութիւն անձանց. և որպէս յիշէք առ Տէր՝ յիշիք և դուք ի նոյն Տեառնէ...։

564ա Դարձեալ յիշեսջիք զուսուցող գրիս զհոգևոր հայրն իմ՝ տէր Յովանէս քահանայն՝ ժրաջան գրիչն, որ բազում աշխատանաւք և ջանիւք ուսոյց մեզ արհեստ գրագրութեան։ Եւ մեր սկսեալ զաստուածաշունչիս աւարտն արարաք և դուք յիշեալ լիջիք ի յապէնիազ արարչէն տեառնէ յԱստուծոյ մերմէ։

Արդ՝ գրեցաւ սա յամի թուականութեանս հայկազեան սեռի ՌՃԷ (1658) ամին, ձեռամբ անարժան թարգմատարի Յովանէս փցնագրի։ Աղաչեմ զճշմարիտ ծառայքդ Աստուծոյ յիշել և զմեզ առ Տէր սեռն սիրով ի միտս բարիս և ծնաւղսն մեր զհոգևոր հայրն իմ՝ տէր Ալիքսիանոս քահանայն, և հայրն իմ՝ Յակոբն յիշեսջիք և զբարեմիտ մայրն իմ՝ տիկին Անապիքայն, հանդերձ ծնողիւք և ազգայնաւք. և տէրն Քրիստոս յիշէ զձեզ...։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի յաշխարհիս Հռոնաց, որ այժմ կոչի Ղրիմ, ի մեծի գիւղաքաղաքիս Ղարասու, ի քրիստոնեաժողով վայրիս, ի հողայարմար տներս՝ առ ափս եզեր գետոյն, ընդ հովանեաւ սրբանորոգ տիրաբնակ Ս. Աւգստէնդ եկեղեցւոյս և այլ սրբոց խորանացս. և կաթուղիկոսութեանն տէր Յակոբին ընդհանուր ամենայն Հայաստան ազգիս. և յարհիական եպիսկոպոսութեանն տէր Գրիգորի յայսմ նահանգիս ամենայն հիւսիսական կողմանցս վերադիտողի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս ի ճանապարհին Երուսաղէմայ և եթող մեզ սուգ մեծ և տրտմութիւն անմխիթար, որ և անտերունչ մնա-

լով, մեր ոչ դիտեմք զառաջիկայն թե զինչ լինելոց է։ Եւ յառագ երիցու-
564բ թեանն // տէր Յովանէս քահանայի։

Յայսմ ամի մեծ և յաղթաւղ խանն աղեղնաւորաց ազգի՝ Մէնմէն-
ֆերէ, ել բազում զաւրաւք և անթիւ, անհամար հեծելովք խաղաց էանց,
գնաց աշխարհն Մաճառաց անհաւատիցն։ Եւ ի գնալն ի ճանապարհին
բազում աւճիրս և չարիս գործեալ, զոր ոչ ոք կարէ մարդ գրով պատմել
և լեզուաւ ճառել. զգիւղս և զքաղաքս հրով այրեաց և զերկիրն նոցա
հրձիգ արարեալ և բազում աւար առեալ ի նոցանէ։ Եւ ի դառնալն իւրե-
անց որպէս զհաւատս խաշանց ի հետ մտեալ բերէին հազարք հազարաց
և բիւրք բիւրոց ի յազգէն Մաճառաց։ Զոմանս ի հուրն արկանէին և զո-
մանս ի սուրն մաշէին, զոմանս. ի յոսս ձիոց ձիաթաւալ առնէին և զո-
մանս ի սովոյ ճանապարհին մեռանէին։ Եւ կէս մի բերեալ ի բնիկ յաշ-
խարհն իւրեանց վաճառէին, որպէս զարջառս և զոչխարս։ Հայր ի յոր-
դոյ բաժանէին և դուստր ի մայրէ և քոյր յեղբարէ։ Եւ մեր <տեսեալ>
տեսեալ զայսպիսի աղէտս և զդառն կսկիծ, որ նոցա լինէր, թե էջ
աստուածասաստ բարկութիւնն ի վերայ աշխարհին Մաճառաց անհաւա-
տիցն, բիրտ և սոպռ ազգին։ Եւ զայս պատիժս կրեալ անիծեալ ազգն
այն։ Որպէս հրամայէ մարգարէն Դաւիթ, թէ «Ըստ մեղաց մերոց արար
մեզ Տէր և ըստ անաւրէնութեան մերում հատոյց մեզ»։ Եւ դարձեալ.
«Եթէ ոչ Տէր շինէ զտուն ի նանիր վաստակին շինողք նորա»։

Այսոցիկ այսպէս եղելոց կատարեցաւ քանոնս և յիշատակարանս ի
փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

1262

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7546

Գրիչ՝ Գրիգոր քահանայ

ա

4ա Զծնողն իմ՝ Սամուրխան յիշեցէք, հայրն իմ՝ զԱնգրէասն։ Մեղա-
զլխա- պարտ Գրիգորս յիշեցէք։ Աստուած ձեզ յիշ[է]։ Թվին Ռճէ (1658)։
զարդի մեջ

բ

68ա Աստուած ողորմի մեր հոգևոր վարպետացն՝ Աւէտին, և հայրն իմ՝
Անտրէասին, և մօրն իմ՝ Սամուրխանին։

գ

249ա Փառք...։

250բ Ուստի տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, հեզա-
հոգի և բարեմիտ Անգրէասն, և ամուսնին իւր Սամուրխանն, և քահանա
որդին սոցա Գրիգոր անարժանս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր...։

1263
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7881 (ԺԷ դ.)

Նվիրատու՝ Աւալչան

ա

149բ Արդ՝ ես Աւալչանս ի գեղջէն Գաղայ, ի հալալ ընչից իմոց ստացայ զսբ. Աւետարանս ծաղկափթիթ, յաղագս փրկութեան մեղաց իմոց և յիշատակ անշնչելի հոգւոյ իմոյ և ամենայն մերձաւորաց իմոց կենդանեաց և հանգուցելոց. հօրն իմոյ՝ Սատուրին, և մօրն իմոյ՝ Նոյեամին, և կենակցին իմոյ՝ Թուքակին, և որդւոցն իմոց՝ Սատուրին, Պետրոսին, Խաչիկին, Երեմիային, Սահակին, Ղազարին, և դստերն իմոյ՝ Հոռոմին: Եւ եդի ընծայ և վախմ ի սբ. եկեղեցիս Գրիգորի: Ոչ ոք չունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ Սրբոյն Գրիգորի։

Գնեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՃ և է (1658)։

բ

236բ Թվին ՈՃ և եօթին (1658) ստացաւ։

Արդ՝ ես Աւալչանս՝ յերկրէն Երընջակայ, ի գեղջէն Գաղայ ստացայ զսբ. և զկենսաբեր Աւետարանս ի մայրաքաղաքն Ըստրմբոլ և ուրախացեալ հոգւով բերեալ եդի ի Ս. Գրիգոր եկեղեցիս մեր՝ վախմ, յիշատակ հոգւոյ իմոյ և...։

գ

302ա Այլ և ես՝ նուաստ և մեղաւոր Աւալչանս Գաղեցի ըստացայ զայս մեծ և անգին գանձս... և եդի ընծայ և վախմ ի դրունս Ս. Գրիգորի եկեղեցիս, յիշատակ հոգւոյ իմոյ...։

Գրիչ՝ Հովհաննէս վարդապետ

դ

301ա Փառք...։ Արդ՝ ստացող եղև այսմ աստուածախօս և կենսունակ սբ. մատենիս, որ ասի Աւետարան... պարոն Աւալչանն, որ է յերկրէն Երընջակայ, ի գեղջէն Գաղ կոչեցելոյ։ Լսելով զբանն երանաւէտ, որ ասէ.
301բ «Երանի...» և ստացաւ զսա յօժար // սրտիւ և եռափափագ տենչմամբ, յաղագս յիշատակի հոգւոյ իւրոյ...։

Ի թվաբերութեան աբեթականաց ազգի Ռ-երորդի հարիւրորդի և է աւելի (1658), ի թագաւորութեան Պարսից ազգին փոքր շահ Ապասի, թոռին մեծի շահ Ապասի, ի հայրապետութեան սբ. Էջմիածնի տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց և յառաջնորդութեան աթոռոյն մերոյ Ս. Կարապետին տեառն տէր Եսայի քաջ և արի բաբունեաց պետի և արհի եպիսկոպոսի, զոր բազում աշխատութեամբ և մեծաւ շանիւ զեկեղեցի Ս. Կարապետին ի հիմանէ շինեաց բարձրաբերձ կմպէթիւ, կոփածու քարամբք, զարմանալի տեսողաց։ Եւ բազում աշակերտեալ վարդապետս եհան ի ձեռաց իւրոց, որոց մի ես եմ ստրուկս և
302ա յոռին, // յետնեալս և անպիտանս Յովհաննէս վարդապետս գոլով ի գեօղաքաղաքէն Շոռոթայ, որում զյիշատակարան սբ. Աւետարանիս ծրրեցի, յաջորդ Եսայի վարդապետին և առաջնորդ Ս. Կարապետի աթոռոյն մերոյ Ղազար վարդապետին, քաջի և հանճարեղին ///

[Այլ և] յիշե[ցէք] զգեղիս քահանայսն զտէր Աւագն, զտէր Յոհանէսն և զտէր Գրիգոր նորընծայն։

Ե

302բ Այլ և զիս՝ Յովհաննէս վարդապետս Շոռոթցի ծրօղ յիշատակարանի սբ. Աւետարանիս, յիշեցէք ի Քրիստոս Աստուած։ Դարձեալ յիշեցէք զպարոն Աւալչանն և...։

Թվին ՌՃԷ (1658)։

1264

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 9799

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

Ա

348բ Որոյ խնամօք և ողորմութեամբն Քրիստոսի աւարտեցաւ աստուածախօս կտակս և ամէնունակ դրախտս, որ կոչի Շարակնոց, որ կատարին և զարգարին սո[վա]ւ բոլոր կարգաւորութիւն և տօնախմբութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ, ի գերահռչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, որ այժմ ասի Իսթամբոլ, ձեռամբ Թոխաթցի Միքայէլի։ Որ և ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, բարեպաշտ կինն Ասլիկ, յիշատակ յինքեան և ծնօղաց իւրոց, հօրն՝ Փանոսին, մօրն՝ Հռիփսիմէին, որ հանգուցեալ են առ Քրիստոս, և կենակիցն իւր՝ Մատուրն, և դեռաբուսիկ որդին իւր՝ Ոսկանն, որ փոխեցեալ է, և զդուստրն իւր՝ Վառվառն, և այլ ամենայն արեան մերձաւորսն, ղկենդանես և ննջեցեալսն և ծնօղսն իւր հանդերձ ամենայն ընտանեօքն իւրով։ Եւ որք յիշէն...։

Բ

Ստացող՝ Ասլիկ

Արդ՝ ես Ասլիկս ստացայ Շարակնոցս զայս ///[53] ի թվին ՌՃԷ (1658), /// իմոյ Կիրակոսին /// վայելեսցէ /// այլ և այլ խօսք զանէ /// հետ իմ կամաւս ետու /// ծնօղօք իմովք /// յաղօթս իւր։

1265

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 10382 (1636 թ.)

Գրիչ՝ Ովանէս քահանայ

161բ Փառք...։ Այրդ՝ գրեցաւ ի թուականիս Հայոց ՌՃ ու է (1658), ի ձեռնամն անայ[ր]ժանիս՝ Ովանէս քահանայից. անուն կայ և գործն բարի, ի ծնաւղաց տէր Ներսէհ քահանային և իւր հաւասար ննջել[ո]ցն, Աստուած ողորմի ասողին...։

---

[53] Թերթի ձախ մասի տառերը քերված են և չեն ընթերցվում։

1266
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՋՂՎՍ, I, № 14, էջ 140

Կազմող՝ Թումայ Արպատեցի

674ա Փառք..., որ ետ կարողութիւն Թումայի քահանայի Արպատեցւոյ, կազմողի սբ. Աստուածաշունչ գրգիս, ի վայելումն յարղրումցի տէր Ղազարին: Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս բարով վայելել տացէ. ամէն։

Թվին ՌՃԷ (1658) ամին։

Այս առաջին կազմուած սբ. գրգիս ի ժամանակս սրբազան հայրապետին մերոյ տեառն Յակոբայ Հայոց կաթողիկոսի սբ. էջմիածնի:

1267
ՇԱՐԱԿՆՈՑ (1328 Թ.)
Երուսաղէմ, № 2438 (մանրաժապավէն, Երևան, № 24)

Գրիչ՝ Մինաս

236ա Յիշատակ է եղեալ ի սբ. յԵրուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, թվին
236բ ՌՃԷ (1658) // Նծնշմհ գղբբ. ախ խշ. ոք. խշ. բծ. շփ. շփ. ժ.[54] Սորմբոլցոյ //.. ///.. /. //..... /. //... //... /..... ///....[55] Ճուպալուոյ: Աստուած բարով գլ. ժճռ. գլվ. ծշր. գլվ. ծշր. գլվ.[56] տացէ. ամէն։

Գրեալ ձեռամբ ճճ. ժժ. մմ. ա. ռռ. ժժ.[57] դրպրի.

ա..... ճ..... ժ... ա ա..... ռ..... ճ..... ճ...[58]

Թէ դպիր ես դու կարդայ,
Թէ չէ վզիտ տուր և հազայ։

1268
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, լուսանկար № 170

Գրիչ՝ Սանակ արեղայ

30 Այս սբ. Աւետարանս տուաք ի վայելումն Մինաս պարոնտէրին, որչափ որ կենդանի է. և յետ Մինաս պարոնտէրին եղիցի Աւետարանս Գանձասարայ վանուցն։ Եւ եթէ ոք յանդգնեսցի և հանէ զԱւետարանս ի Գանձասարայ՝ պարտական լիցի յաւուրն դատաստանի, մասն և բաժին Յուդայի առցէ...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Յովհաննէսն, և կողակիցն իւր՝ Համասփիւռն, և որդին իւր՝ Աստուածատուրն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ծծաղկող սբ. Աւետարանիս զվարպետ Հայրապետն և զեղբայրն իւր՝ զԲաղդասար վարդապետն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

---

54 Ծածկագիրը չկարողացանք վերծանել։

55 Ծածկագիրը կարդացվում է «ի մահալլէն»։

56 Ծածկագիրը կարդացվում է «վայելելը»։ Այսպես՝ (վ)գլվ (ա)ժճռ, (յ)գլվ. (ե)ծշր, (ս)գլվ. (ե)ծշր, լ(գլվ)։

57 ճճ=մ, ժժ=ի, մմ=ն, ռ=ա, ռռ—ս, ժժ—ի = Մինասի։

58 Ծածկագիրը չկարողացանք վերծանել։

Կրկին անգամ յիշեցէք զխօջա Սափարն, և կողակիցն իւր՝ Խանզատէն, և զորդին իւր՝ զպարոն Փանոսն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և կողակիցն՝ Էյլին, և դուստրն՝ Կատարինէ, որ փոխեցեալ է ի Քրիստոս, Սառա խանումին, Մադալէ, Գոզալէ և այլ հին և նոր ննջեցեալքն... և զիս զՍանակ աբեղայս յիշեցէք, որ և զսակաւ յիշատակարանս գրեցի ի թվին ՌՃԷ (1658)։ Եւ գիտելի է, [զի] հազար հինգ հարիւր զուռուշի պարտք կայր ի Ս. Նշան։ Եւ եղև սա առաշնորդ և ազատեաց զՍ. Նշան վանքն ի պարտուցն, թող զայն որ անօթ եկեղեցւոյն խաչ, սկի, Աւետարան, ինչ սպաս որ կայր յեկեղեցին, ամենեքեան գրաւական էին թուրքերուն քով. և սա ազատեաց զամենայն, որ և կրկին լուսաւորիչ կոչեցաւ Հայոց ազգիս, զոր տէրն մեր Յիսուս Քրիստոս զսա պահեսցէ պարագայց ամօք և յերկար ժամանակօք մինչև ի խորին ծերութիւն և յետ աստեացս ելանելոյ սբ. հայրապետացն և վարդապետացն դասեսցէ և պսակեսցէ։

Արդ՝ գրեցաւ Հարցմանց գիրքս ի հայկազեան թուիս ՌՃԷ (1658), ձեռամբ անարհեստ և փծուն գրչի՝ սուտանուն Ղազարոսի... և խնդրոյ բարեպաշտ Խաչատրի...։

1269

ՃԱՇՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 585

Գրիչ՝ Սարգիս երէց

Վայր՝ Անդրիանուպօլիս

ա

473 Օրհնութիւն... թուականիս Հայոց ՌՃԷ (1658) ամին գրեցաւ սա Անդրիանուպօլիս, ի դուռն Ս. Թորոս եկեղեցւոյս, հայրապետութեան տեառն Յակոբ կաթուղիկոսին, և թագաւորութեան Իսմայէլացւոց սուլթան Մահմատին, և Պարսից թագաւորութեան շահ Աբասին, իշխանութեան Թումայ առաքելոյն[59] խաչատուր վարդապետին, ձեռամբ Սարգիս անուամբ միայն երիցուս, և ծնողաց իմոց Ուռումբէկին և Բուրաստանին...։ Եւ եղև զի շարժեցաւ Ըստամբոլու թագաւորն Իսմայէլացւոց՝ սուլթան Մահմատն և եկն Ադրեայ. նստաւ ՃՌ (100000) զօրօք և այլ աւելի մինչև գարունն. և եղև սով սաստիկ մինչև Ծ (50) դրամ հաց մէկ ըստակ եղև և ոչ գտանիւր, բազումք սովամահ եղէն, և ես՝ Սարգիս Երէցս գրէի զգիրքս։ Սիրելի հարք և եղբարք, յորժամ լիութիւն, առատութիւն տեսանէք՝ զաղքատն մի մոռանայք և ողորմութիւն տալ մի ձանձրանայք, և ողորմի ասացէք յիշատակիս խոճայ Դաւթին և դուք զողորմութիւն յԱստուծոյ գտջիք. ամէն։

Բ

Յիշատակ է գիրքս խոջայ Դաւթին և ծնողաց Ադարէկին... և եդ զսա յիշատակ ի գիւղն, որ կոչի Տէրունիս, ի դուռն Ս. Ստեփաննոսի, ի վանքն Թումայի առաքելոյն, ի յառաջնորդութիւն տէր Խաչատուր վարդապետի։

[59] Ղ. Փիրղալեմյանը կլոր փակագծերում ավելացրել է «վանուց Աղուկաց»։

1270
ՄԱՇՏՈՑ
Մոսկվա, ԼԳ, № 27

Գրիչ՝ Յոհան երէց
Վայր՝ Հոռոմայր

150բ Փառք...։ Գրեցաւ սբ. Մաշտոցն և Աւետարանոցս աւարտեցաւ ի թուին Հայոց ՌՃԷ (1658). և ի հայրապետութեան տեառն տէր Յակոբ կաթողիկոսի, ի յերկիրս Լոռի, ի գիւղն որ կոչի Հոռոմայր, ի դուռն Ս. Նշանին, որ է արեամբ ներկեալ, և ի սպասաւոր սբ. ուխտիս Պաւղոս եպիսկոպոսն։

151ա Արդ՝ գրեցաւ Մաշտոցս ձեռ//ամբն Յոհան իրիցին։ Ընդ նմին աղաչեմ և ի խոշորութեան գրիս և սխալանացս որ ի սմա, անմեղադիր լերուք, զի այսչափ էր կարն մեր։ Եւ Աստուած յիշողացդ և յիշելոցս առ հասարակ ողորմեսցի...։ Յիշատա[կ] է սբ. Մաշտոցս։

1271
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 831

Գրիչ՝ Ղազարոս
Վայր՝ Շղզենի

226բ Փառք...։ Արդ գրեցաւ աստուածային մատեանս այս, որ կոչի Հարցմանց գիրք, արարեալ և հաւաքեալ արի և քաջ հռետորի, և անյաղթ փիլիսոփայի լուսաւոր ոգոյ Գրիգոր բաբունապետի փոխեցելոյն ի դասս
227ա սերովբէից և ի տե//սութիւն Քրիստոսի։ Եւ եղև զրաւ աւարտման սորա ի մայրաքաղաքն Սեբաստիոյ, ի գիւղն, որ կոչի Շղզենի, ընդ հովանեաւ Ս. Սարգսի եկեղեցւոյ. և Ս. Նշանի առաջնորդութեան Մելքիսէք վարդապետի. որ նեղ և յետին ժամանակիս առաջնորդ և լուսաւորիչ է եկեղեցւոյ և պարծանք քրիստոնէից և պատճառ ուսման մանկանց եկեղեցւոյ և քաղցելոց կերակրիչ և աղքատաց մխիթարիչ, գերեաց ազատիչ և ամենեցուն սփոփիչ։

1272
ՃԱՇՈՑ (1450 Թ.)
Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 587

474 Յիշեցէք ի Քրիստոս... Ամիրդոլին և Գրիգորին, որք զգիրքս յիշատակ եդին ի դուռն Ս. Յովանիսին. և մի՛ որ...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբարեպաշտ և զքրիստոսասէր տանուտէրն՝ զԱֆանասարն և Աստուած ողորմի ասացէք նմա, որ ոխֆի աւլատ արար զիւր արտի կէսն, և զօտէն, և զոռշն, և զնոր տունն, և զտքէն, և զիւր տներն բովանդակ Ս. Յովանիսի վանացն յաւիտենական, քանի որ յիւր որդոցն և ի թոռներուցն մէկ գտնվի կենայ յայն տներն և շէն պահէ և լիտր մի ձէթ տայ վանացն. և երբ յիշատակ չմնայ ամէնքն ոխֆ լինին Ս. Յովանիսին։

Ումար չալապին վկայ, Նապիջանն վկայ, Դիզար հիւսէն վկայ,

Վարդմանուկն վկայ, էզգանն, Գուլօն և Խէրօն վկայ։ Ի թուին ՌՃԷ (1658)։

1273
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՁՀՍ, № 27

Գրիչ՝ Մկրտիչ քահանայ
Վայր՝ Հալապ՝

63 Փառք...։ Արդ՝ տեսեալ և իմացեալ զսորա անճառելի աւետիքն և զամենեցուն փրկագործութեան խորհուրդն ամէնիմաստ և հոգիացեալս ի գործս ամենայն առաքինութեան տէր Գրիգոր հեզահոգի քահանայն, զսբ. Աւետարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ և մեծաւ սիրով և ջանիւք ետ գրել և յորդորեաց զբազումս ի վաճառս այս, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Վասն որոյ աղաչեմք զձեզ, որք հանդիպիք և վայելէք յաստուածային բուրաստանէս և ամենալի սեղանոյս, լի բերանով Աստուած ողորմի ասէք տէր Գրիգոր քահանային, և կողակցուն իւրոյ՝ Տիրուճոյն, և իւր ծնողացն՝ [3]ակոբին և Սղբլիին, և իւր զաւակացն՝ Յակոբին, Փանոսին, Նղիային և Զմրուբին, և այլ ամենայն արեան մերձաւորացն. ամէն։ Եւս առաւել և զբարեմիտ և զերկիւղած քրիստոնեայքս, որք և եղեն իսկ, հաղորդ անբաւ բարոյս այսորիկ, և ետուն իւրաքանչիւր ոք ըստ կարեաց իւրոց՝ ի գին և ի նուիրումն սբ. Աւետարանին, և եդին յիշատակ անջնջելի յաւիտենական ի ձեռն տէր Գրիգոր քահանային։ Զի և ասիցէք լի բերանով ողորմի Ասլուն, և իւր կողակցուն՝ Գրիգորին, և հօրն՝ Խաչին, և մօրն՝ Մարիուն, և որդոյն՝ Ղարիպին։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Մուրատին, և իւր կողակցուն՝ Սուլթանին, և իւր որդւոյն՝ Ովանիսին. ընդ սոցին և զԴանիէլն և զՀէյլանէն յիշեցէք ի Քրիստոս Աստուած, որ և արժանի արասցէ ողորմութեան իւրոյ. ամէն։

Գրեցաւ սա ի մայրաքաղաքն ի Հալապ, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, ի թուականիս Հայոց ՌՃ և է (1658) ամին, ի կաթուղիկոսութեան Կիլիկեցւոց տէր Խաչատուր քաջ բարունապետի, և ի թագաւորութեանն սուլթան Մհուամատին, և առաջնորդութեան այսմ նահանգիս տէր Խաչատուր վարդապետին։ Եւ գրեցաւ ազնիւ և յամէնընտիր օրինակէ։ Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ և վայելօղսդ աստուածութեան տառիս, սրտի մտօք յիշել ի Քրիստոս, զիս՝ զմեղուցեալ գրեչս զՄկրտիչ քահանայն, և զհայրն իմ՝ զտէր Ղազար քաջ քարտուղարն, և զամենայն արեան մերձաւորսն իմ. և Քրիստոս որ մեծն է ի պարգևս բարեաց զյիշօղսդ և զյիշեալսս արժանի արասցէ ողորմութեանն իւրոյ։

1274
ԱԻԵՏԱՐԱՆ
Մուրմար, II, № 25 (1455 թ.)

Հետ. ստացող՝ Ղազար

117բ Ստացաւ այս Աւետարանս թվին ՌՃԷ (1658) Ղազարս և մօրս Նրխշունին, ի յիշատակ ծնողաց իւրոց։

1275

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՊՅԶԿ, № 8 (1407 թ.)

Նորոգող՝ Գրիգոր Կեսարացի

18 Ի թուականութեանս մերոյս տոհմի և ասպանազեանս համարի, և ի թորգոմեանս սեռի հազարերորդի հարիւրերորդի ի յեօթներորդի (1658) ես՝ Գրիգոր պիտակ անուամբ ևեթ բանի սպասաւոր, յերկրաւ և աշխարհաւ Կապադովկացի, ի քաղաքէն Կեսարիու, որ ի հինսն Մաժաք ասի, ըստ մերոյն նախնոյն Արամայ կոչեցելոյ։ Ի տիս մանկութեան, և ի հասակս տղայութեան եկեալ դիպեցայ ի լուսակազմ յաթոռս մեծ, յորում էջմիածին ասի, ըստ սրբութեանն յորջորջելոյ, հանդերձ երկոքոմբ ընկերակցօք, և երիցագունօք քան զիս, որ մինն Սարգիս ասիւր, որ ի տես գեղուղէշ տղայութեան, ես ի նորանուէրս քահանայութեան փոխեցեալ, եղև առ կուսագլուխն սրբութեան, ըստ իւրոյն կուսութեան մարմնոյ ասեմ ևս հոգւոյ։ Եւ միւսոյն Ղազար պարզամիտն ղուարճատես պաշտօնեա բանից և առաքինաշան, և սոքօք հրանգեալք յաթոռս արեգակնափայլ, և ի տեղիս սպիտակափառ, և սնեալ և առոյգացեալ առ ոտս երիցս երանեալ սր. հօրն մերոյ, և արդարև յերկրորդ ծնօղին մերոյ ըստ Աւետարանին ծննդեամբ տեառն Փիլիպոսի կաթողիկոսի ամենայն Հայոց, և Սարգիսն նորանուէր ի նմանէ օծեալ, և յետ սակաւու ինչ փոխեցեալ առ ցանկալին բնաւից։ Եւ Ղազարն հեզահոգի այժմէն դեռևս կացեալ, և հեքս ևս ընդ սոսին զարգացեալ, և հասեալ ի յարբունս քահանայագործութեան սնեալ առ Փիլիպոսի, և ձեռնադրեալ քահանայութեամբ և բանից իշխանութեամբ առ ի Յակոբայ տեառն ամենայն Հայոց կաթողիկոսի, որով երկասիրեալ ի յաւուրս սորա և ի ժամանակս վերստին նոր նորոգեցի զքարոզ զայս. և զվարժիչս դեռաբոյս մանկանց, և զուղղիչս զարտուղի գնացողաց, որ ասի Ամառան հատոր, որ էր հնացեալ իսկ և բնաւին քայքայեալ, վերստին նորոգեցի, նորացուցի, ըստ իմում չափու գեղեցկացուցի, տխեղծ և փանաքի ձեռօքս, էր որ յառաջն, էր որ ի վերջն և էր ուրեք որ ի մէջն, թղթովք միովք և երկոքոմբ և ևս առաւելութեամբ, և արարի իբրև ի գեղեցկատպաց։ Արդ՝ կողկողագին պաղատանօք, և սրտաթառաչ սիրով, նիազեալ ոգով և նուաղեալ մտօք հայցեմ ի հանդիպողացդ այսմ կտակի՝ ի վայելողացդ սոյնում հոգևոր տրապզիդ խրախճանութեանս յիշեսջիք ի վայելմանն աւուր, և ի դիպուածոյն ժամանակի զվերոյ գրեալսն ըղձալի, և զվարժիչս հեքոյս ցանկալի, որք միանգամ նօթիճք եղեն իմոյս խակութեան, և ևս առաւել զպետն ամենայն Հայաստանեայց զտէր Յակոբ կաթողիկոսն հրաշալի, որ էր երրորդ ամ նորուն իշխանութեան, և զցանկալի աթոռապահն նորուն զտէր Յովհաննէս զքաղցրոգի։ Նաև զամենայն եղբարսն իմ, համշիրակ և սննդակիցք ևս ըղձալիք[60], և ըստ մարմնոյ ծնօղսն իմ՝ զՏիլանն հայր հիքոյս և զմայրն իմ՝ զՄարիամն, և զեղբայրն՝ զԲաղաասարն, երիտասարդ գոլով փոխեցաւ առ Աստուած, և զքոյրսն իմ՝ զԴշխոյն, և զնունին, զԳուհարն, և ըզՋուհարն. և հօրեղբայրն՝ զնազարն և զամենայն արեանառուսն առ հասարակ, և զաշխա-

[60] Ինչպես հաղորդում է Տ. Գալյանը, «ըղձալիք ևս»-ի միջև տասը տող դատարկ է թողնված։

տողսն ի վերայ թշուառութեանս ըստ հոգոյ և ըստ մարմնոյ, և որք յիշէքդ՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Յիսուսէ. ամէն։ Ընդ սոցին զմեղապարտ Գրիգորս զգծող յիշատակարանիս յիշեցէք ի Քրիստոս։ Բայց արդ՝ եղև նորոգութիւն այսմ գրոցս քարոզութեան ի յանապատս Երևանայ, առ շիրմի նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի, ի կաճառս բազմակոյտ եղբարց սրբազանից, յերրորդում ամի հայրապետութեան տեառն Յակոբայ աստուածազարդի։ Եւ իշխանութիւնս մահմետականաց՝ երկուց թագաւորացն ինքնակալաց, որովք ի մէջ ճիրանաց պետութեանցն ունին զերկուս մասունս աշխարհի՝ զԱսիացոց, զորս այ[ժ]մս ունի մերս թագաւոր, որ անուանեալ կոչի շահ Ապազ, որ նստեալ ի Շօշ, որ այժմ ասի Ասպահան, և միւսն Կոստանդինուպօլիս, որ ասի օսման՝ Մահմատ. ի ժամանակի աստի որում ոգորի սա ընդդէմ արիականացն, որ կոչին Ֆրանգք։ Եւ այս ընդ վեշտասան ամ է յորմէ լինի այս գործ դառնութեան[61] ի վերայ ծովուն ովկիանու, զորս լսեմք զհաւաստին ի ձեռն վաճառականաց մերազնէից, սակայն յորմէ յետէ այս խազմ և բախմունք յիրերաց, որ բուսաւ մինչև ցարդ՝ որ եմքս, ոչ լուաք բընաւ պարտութիւն իմն Ֆռանգաց։ Եւ զայս ոչ թէ ամենայն ազգքն Ֆռանգաց կռուին, այլ վնէժացիքն, որ այժմ Վենիտեկ կոչին, զի զբազում կղզիս առին ի նոցունց Ֆռանգքն յաւուրս այսոքիկ, այլ զկատարածն Աստուած դիտէ, իսկ մերս կոչեցեալ արքայ ի դրանէն Հոնաց և աշխարհէն Վրաց, որ Կախէդ ասի, մինչև ցՀնդիկս բռնակալեալ ունի զօրապէս. այնքան ի նուաստութիւն հասուցեալ զաղգս մեր զտառապեալ՝ մինչ զի կղերք և տանուտէրք թուրք նստեալ լինին ի գիւղս և յաւանս և բնաւ ոչ կարեմք հանեցուցանել զմիտս մեր, թէ արդեօք լեալ իցէ երբեմն իշխանութիւն ազգիս մերոյ, և կամ լինելոց է տակաւին, այլ ի սպառ ի սպուռ յետինն կամք ժամանեալ ի յելումն շնչոյ։ Եւ թէպէտ այս այսպէս է, որպէս և է ճշմարտութեամբ, սակայն ողորմութեամբ փրկչին մերոյ Քրիստոսի, գաւազան իշխանութեան հայրապետութեան իբրև զչահ մի վառեալ ի մէջ խոր գիշերոյ բորբոքի, ևս առաւել վարդապետք ժրաջանք, որ ամենեքեան ըստ իւրեանց չափու կարողութեան՝ որքան և կարէ, նորոգեալ վայելչացուցանեն զվանօրայս աւերեալս և զկարգս ի վաղընջուց խանգարեալս։ Եւ հոգւոր կաթամբ զբազում տղամիտս, և զտհաս դիեցուցեալ յարբունս կատարելութեան հասուցանեն։ Յորոց և մինն ի բազմաց թարմատարս և ես՝ Գրիգորս պիտակ անուամբ վարդապետ, վասն այսորիկ կրկնակի մաղթանօք հայցեմ, յիշատակել զստածիչս և զուսուցիչս իմոյ անձին զՅոհան վարդապետն։ Այլ արդ՝ եթէ ոչ ձանձրացեալ ախորտանայքն, այլ խոնհարեալ զիշանիք, զխայխայտեալս ամենայնի, և զարիւնբուռշտ մեղօք տրորեալ Յոհանս բանի պաշտօնեայ և զյարմարողս դոյզ բանիս յիշատակարանի, յիշել ջերմեռանդ սիրով, բարեգոյն ևս բարի է, զի կաթոգին սաստիկ կարօտին, և յոյժ ցաւագնեալ սրտիւ։ Եւ ևս առաւել զհամասնունդ և զհամահրանգ զեղբարսն իմ, զհարազատն ըստ հոգոյ, որ է անուն նորա Յակոբոս[62]։

---

61 Տպված «գործդ առնութեան (՞)» ձևով։ Նկատի ունի Կանգիայի պատերազմը։

62 Տ. Պալյանի հաղորդմամբ այս անունը այլ գրով է գրված։

20 Նաև համախոհ և համշիրակ, սակաւ աշխատող վերջին կազմութեան գրքիս զՄանուէլ վարդապետն։ Այլ և զամենայն զօրիորս (sic) յոլովս, և զընդ փեսային ճշմարտի միացեալս անախտ կուսութեամբ, զմեծամեծս և զփոքունս, որք ի հրահանգս տեսականին և գործնական դեգերեալ մարդին ի մայրս լուսոյ, ի յիշումն մեծի ի կաթուղիկէս Վաղարշապատու, և որք քաղցրանայք ի յիշումն ածել զհոգևորն և զմարմնաւոր սնուցիչս զայսոսիկ, և դուք ևս քաղցրութեամբ յիշեալ լիջիք առաջի գառինն զենլու և դատաւորին անաչառի. ամէն։

1276

ՄԱՇՏՈՑ

ՄՅՍԳ, № 110

72 ... Աղաչեմ զամենեսեան ո՛վ ժամասէր քահանայք և տաւնողք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղաւք խաւարեալ սուտանուն զՅովանէս երէցս և զուսուցիչն իմ՝ զԽաչատուր վարդապետն, և զծնողս իմ զՍարխօշն և զԽանփաշան, որ առ Քրիստոս փոխեալ են...։ Գրեցաւ ի թվին Հայոց ՌՃԷ (1658)[63]։

1277

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄՈՎՍԷՍ ԵՐՋՆԿԱՑԻՈՑ

ՄՅԶԵՊ, III, № 1000 (1706 թ.)

010 Թվին ՌՃԷ (1658) եղև աղմուկ և խռովութիւն ի մէջ Ըսաամպոլու. Թումայ անուն վարդապետ մի պատրիարգ եղև, յիսուն հազար ղուրշ[64] գնաց։ Մին քանի ամիս նստաւ, յետոյ զնտան դրին, ի մէջ դնտանին խեղդել տուին. գնաց ԵՌ (50000) ղուրշ. այլ վերջն խիստ շար եղև քան զառաջինն, որ այլ խալբսելոյ հնարք չիկա, միթէ Աստուած ի բարին աջողէ։

Այսմ ամի Յոյնք առին զՍ. Յակոբ ի Հայոց ձեռացն, շատ դրամ խարճ եղաւ, չեղաւ հնարք, խիստ խեղճ եղաւ Հայոց ազգին, միթէ Աստուած ողորմի մեզ։

Որ էր Երուսաղիմայ առաջնորդ Աստուածատուր վարդապետ, և իւր վէքիլ Եղիա վարդապետն, և այլք բազում։ Թէ անօրինաց զուլումն նոցա ոչ կարեմք գրել և ոչ միտք կու բերէ, թէ ծովու և թէ ցամաքի, միթէ Աստուած ողորմի իւր ծառային, քան զառաջին նահատակութիւն այլ աւելի է. որպէս ասէ Դաւիթ «Վասն քո մեռանիմք զօր հանապա<ր>ղ համարեցաք»։

---

[63] Հիշատակարանում այդպես, սակայն ձեռագրի նկարագրության բաժնում Թ. Գուշակյանն ունի հետևյալ նշումը. «ժամանակ՝ ՌՃԴ (=1104+551)=1655» (էջ 71)։ Թե այս երկու նմուշներից ո՞րն է ճիշտ, չգիտենք։ Մենք հետևել ենք հիշատակարանում նշված տվյալին՝ ՌՃԷ։

[64] Պոզարյանը հաղորդում է, որ «յիսուն հազար ղուրշ»-ը գրված է բժշկական ծածկագրով։

1278
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅԶԵՊ, V, № 1558 (1597 թ.)

330 Յիշատակ է Շարակնոցս Երուսաղիմայ, ի դուռն Ս. Յակոբայ։ Ով որ յանդգնի և հեռացուցանէ ի սմանէ կամ ծախելով կամ գրաւելով և կամ գողանալով, ղանէծքն ղԿաենին, ղՅուդային և զխաչհանողացն առցէ. ամէն։ Լաւ պահողն աւրհնեալ լինի յԱստուծոյ. ամէն։

Յիշատակ է ի սբ. յԵրուսաղէմ, թվին ՌՃԽ (1658)։

1279
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅԶԵՊ,V, № 1575 (1305 թ.)

Հետ. ստացող, նվիրատու՝ Առաքել

355 Այլ և ես՝ Կոլպաշցի լուսարար տէր Առաքելս կրկին ստացա զՇարակնոցս ի հալալ արդեանցս, ի թվական հայկական սեռի ՌՃԷ (1658)-ին, և եղի յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ։

1280
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՄՅԶԵՊ, VI, № 1925 (1269 թ.)

416 Եղբարք իմ, ով ոք շնորհակալ լինի սրբագրելոյս, ինքն շնորհաց ասպնջական լինի և ով ոք դսրովօղ գոլ եղկելոյս, նոյնն հզութեան հոգի ինքն ընկալցի, բայց զայս գիտասցէ, մտադիւրութեամբ ընթերցցի զիմաստութեան գլուխն. ահա ուրեք ուրեք թողաք զփորձ առնուլ վիպասանութեանն իւրոյ։ Քանզի յոյժ հաշումն եղև մտացս մեր ընթռնուլն սորա։ Վասն որոյ լաւ վարկանեցա զեղբարցս բանն առ նհատս. մանաւանդ սորեկ օրինաՀ հանդերձ մեկնչև երեսս Աստուած։ Սակս այդմ ըստ համարի սակի իմոյ դուն գործեցի ի մէջ Ս. Յարութեանն. և դուք միով ողորմիւ Աստուած ողորմեսցի...։ Թվին ՌՃԷ (1658), որ զՍ. Յակոբն էառ անմիաբան ազգն Յունաց, ևս Զատկին լուսոյ բղխմանն մեծ շփոթ արին հետ Հայոց ազգին։ Դարձեալ նոքա խայտառակ եղեն, կամելով զհայն, չընթողուլ ի սբ. գերեզմանն, ինքն փաշան օգնական եղև Հայոց ազգին, Գ (3) անգամ զՅունաց մեծի վարսէն բռնելով երեսի վերան ի դուրս քարշեցին ի գերեզմանէն, և այլ բազում բան, զոր Աստուած ամենայնի վերշն բարին շնորհէ. ամէն

1281
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՅԶԵՊ, VII, № 2103

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

140 Եւ արդ գրեցաւ և ծաղկեցաւ եղանակաւոր տառս..., որ կոչի Շա-

բակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, ձեռամբ ամենամեղ և անիմաստ Յոհան Հիզանցի եղկելի գրչի, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբա[յ] առաքելոյ դլխադիր սր. դամբարանին, ի թվին ՌՃ և է (1658)-ին, ի հայրապետութեան սր. աթոռոյս տեառն Աստուածատրոյ սբ. Երուսաղէմայ, և տեղապահ և փոխանորդ տէր Եղիազար վարդապետի, և սբ. Էջմիածնայ տեառն տէր Յակոբին, և ի թագաւորութեան այլասեռից սուլտան Մահումադ խոնդքարին, յորում նեղիմք ի սաստիկ հարկապահանջութենէ նորին, որ այս ԺԴ (14) ամ է ի վերայ ծովուն հետ Ֆռանգին ի պատերազմի կայ, զոր հայցեմք միջնորդութեամբ սբ. Աստուածածնին, զի տացէ երկուց կողմանցն խաղաղութիւն, և հաւատացելոցս Քրիստոսի անդորրութիւն, և ազատութիւն ի սաստիկ նեղութենէ նոցին։

Եւ արդ՝ որք հանդիպիք տառիս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք... ստացողի սորին մահդասի Ալէքսանին, որ ԺԲ (12) ամ է, որ կայ ի դուռն Ս. Յակոբին, և իւր ծնողացն, հօրն՝ Խաչատուրին և մօրն՝ Վառվառին, և իւր քվերցն՝ Նապաքին, Աննային, և Հրէփսիմին, և եղբարցն՝ Թորոսին և Վարդանին, և ամենայն ատեանառու մերձաւորացն...։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք մահդասի Ալէքսանոս ստացողին և հօրեղբարն՝ Մարտիրոս վարդապետին, որ բազում երախտիս և աշ[խա]տանս է արար ի մանկութենէ ի վեր ի վերայ Ալէքսիանին՝ ի կարդացնելն, և զիւր ամենայն պետք և կարիքն սիրով խնամարկեր և հոգացեր է, մինչև ի կատարեալ հասակն. Աստուած զիւր երախտեաց փոխարէնն ի վերինն Երուսաղէմ հատուցանէ...։

Եւ դարձեալ եդ զՇարակնոցս յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Փրկչի կափարիչ վիմին անջինջ յիշատակ... և չունի ոք իշխանութիւն հեռացուցանել զդա ի դրանէ Ս. Փրկչին։

150 Գրեցաւ սայ ի յայսմ ամի, որոյ նենգաւոր ազգն Յունաց հակառակ եղեն ազգիս Հայոց, վասն Ս. Յակոբա[յ], և բազում խազինա ետուն թագաւորին թէ զՍ. Յակոբ խլեն, և ահա Լ (30) օր եղև, որ զՍ. Յակոբայ դուռն փակ է, և զբանալին առեալ տարան առ Շամա[յ] փաշայն, և զվերջն ոչ գիտեմք թէ որպէս տի լինի։

Բ

149 Զբստացող գրոց զԱլէքսիանոս սարկաւագն նաև զեղկելի գծողս յիշէք ի Տէր...։

Գ

Ստացող՝ Ալէքսիանոս սարկաւագ

Փառք եռակի Աստուածութեանն,
.....
Այս մատենիս աստուածաբան,
Զանազանեալ ականցս որ կան,
Ես մեղաւոր և անպիտան,
Որ ցանկացող եղայ սորայն։
.....։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,

Կամ վայելէք յայս բուրաստան,
զՄարտիրոս վարպետս իմ զայն,
Յիշման առնէք ըզզինքն արժան։
....։

1282
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏԶՀՄՍ, II, № 4

Գրիչ՝ Յովհաննէս

36 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ .սբ. Աւետարանս /// ի Թուաբերու//թեանս*
37 *Հայոց ՌՃԷ (1658) և ի յառաջնորդութեան տեառն* Յակոբայ։ *Արդ՝ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, որ հանդիպիք սմա ընթեռնլով և կամ ուսմամբ, յիշեսջիք զիս՝* զՅովհաննէս *և զպատուական ծերունի քահանայն, զհայրն իմ /// և զմայրն իմ՝ ///։ Եւ արդ՝ աղաչեմ և անպիտան գրիչս* Յովհաննէս *յերես անկեալ ///*

1283
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 73 (1488 թ.)

109 *Զվերջին ստացող սբ. Աւետարանիս յիշեցէք* զԱւետիքն, *և զկողակիցն իւր՝* զՄարիամն, *և զորդիսն իւրեանց՝* զՄարգարէն *և* զԶՀայրապետն, *և զկողակից նոցին* զՆղիսաբեթն *և* զԶաֆարն, *և* զԹոռն՝ Հակոբջանն, *որ ԽԶ (46) ամաց տիոք առ Քրիստոս փոխեցաւ, և ի մարմնի Թոռունսն իւր՝* զՆերսէսն *և* զԱւետն, զԽոնդաղէն *և* զԱսլխանն *յիշեցէք...։*

Գրեցաւ ի Թուին ՌՃԷ (1658) ամին, զյիշատակարանս ի բարին։

1284
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՏԵՐԱՎՋ, № 249

Գրիչ՝ Դասպար քահանայ
Վայր՝ Դոլվաքապատ

ա

401 *Փառք...։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով, զոր տեսեալ ծառայն Աստուծոյ* Մշկնազ *և մեծ փափաքմամբ և ջերմեռանդ սրտիւ ցանկացող եղև սբ. տառիս, և ի խնդիր ելեալ այս համբարել գանձիս, և լուսափայլ, և անգին մարգարտիս, անուշահոտ մանուշակիս և վարդափթիթ բուրաստանիս, և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց, և եղբարցն, քրեերցն և ամենայն ազգականացն։*

Եւ արդ՝ ես Դասպար քահանայ անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ. գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն արեամբ ներկեալ սբ. մարտիրոսացս։

Յորս և յիշատակի և գերահրաշ տօնք տէրունականք, և առաքելականք, և մարգարէականք, և երկնադոմար արեամբ թաթաւեալ սրբոց մարտիրոսացն և վկայից, նահատակացն և միանձնացելոցն, կրօնաւորացն և սբ. կուսանացն, արանց և կանանց, և ամենայն չափու հասակի, քանզի ունի սա զբոլոր տարոյն յինքեան հաւաքեալ ըստ Հռոմոցն երկոտասան ամիս, և ըստ Հայոց երկոտասան ամիս, և Ե (5) օր[65] աւելիքն, և զամենայն աօնից տէրունականաց և զսրբոց նահատակացն, ղնախահարցն և զմարգարէիցն, զառաքելոցն՝ և ըզհայրապետացն, զվարդապետացն և զքահանայիցն, զսարկաւագացն և զմիանձնացելոց ճգնաւորացն, զկուսանացն և զկանամբացն, զարանց և զկանանց, զծերոց և ըզտղայոց, և զամենայն չափու հասակի՝ ի փոքրականց մինչեւ ցմեծամեծսն։...

Արդ՝ ես Գասպար մեղոք ի լի,
ՁԾ և Դ (54) ամն լցի,
Զամէնն ի հետ մեղաց կացի,
Ու զմահու օրն չյիշեցի։
Զօրն ուտէի և ըմպէի,
Ես ծոյլ և թոյլ ամենայնի,
Աշխարհըս ծով էր ու ես ծրփի,
Մի՞թէ իմ Տէրն ինձ ողորմի։
Զինչ որ այլոց խրատ տայի,
Յօժար կամօք զայն գործէի,
Զայլոց զշիւղն յայտնէի,
Եւ զիմ գերանն ծածկէի։,
Զըգրոց կոճակն արձակէի,
Եւ և այլոց քարոզէի,
Ես որպէս սալ եմ դարբնի,
Եւ կամ ղորց քար ի մէջ ջրի։
Տէրն հրամէ իւր քարոզի,
Թէ վայ սր ի կին մարդն հայի,
Ըգհրաման Տեառն ես անցի,
Վայ ինձ ւ եղուկ յամենայնի։
Ես կարգ առի քահանայի,
Եւ զայն գործով չըկատարեցի,
Յանմեղ մարդկանէ գովէի,
Բայց վայ հազար բերան ընձի։
Աստուածածին կոյս սրբուհի,
Իմ յոյսն դու յաւուր մեծի,
Բարեխօսեա քո միածնին,
Վասն անարժան քո ծառայի[66]։
Ով որ զսակաւ բանքս լսէ,
Նա մեզ ասէ Տէրն ողորմի,

[65] Ցուցակում տպված է «էր»։
[66] Այնուհետև գովք հայամավուրքի։

Զի Տէրն քաղցր է և բարի,
Ինձ ւ ամենիցդ ողորմեսցի. ամէն։

Եւ արդ՝ ես անպտուղս բարեաց, մեղաւորս արդարոց և անկատարս ի կատարելոց... սոսկ անուն Գասպար քահանայ, որ զձև ունիմ քահանայի և գործոյն թափուր և ունայն գտանիմ, տեսեալ Մշկնազ *զսէր և զփափագ սորա, զոր ունէր առ հոգևորսն, և իմով իսկ տկարութեամբս յանձն առի, և յամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսբ. դիրքս զայս մեղսամած մատամբ իմով և իմոյս աշակերտի* Մալխասի. *բաղում և մեծ աշխատութեամբ հատուցաք զսա յաւարտումն ի յանուանի գեղս* Դոլվաքապատ, *որ է եզր* Զուղայոյ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն* Յակոբին, *և առաջնորդութեամբ* Զուղայոյ Դաւիթ *վարդապետին, և ի թագաւորութեանն Պարսից փոքրիկ շահ* Ապասին, *որ է թոռն մեծ շահ* Ապասին, *և ի թբւականութեանս Հայոց հայկազան տոհմին Ռ ու Ճ և է (1658) ամի, ի դառն և ի վշտալից ժամանակին, յորում կամք ընդ հարկի և ընդ ծառայութիւնն ազգին Պարսից։ Վասն որոյ բարեիսուութեամբ սբ. և փառաւորեալ աստուածածնին Մարիամու, և ամենայն ընտրելոց սրբոց, Քրիստոս Աստուած, որ տէրն է փառաց և տրւող ողորմութեանց, տացէ զիւր առատ ողորմութիւնն, և զանբաւ բարերարութիւն, և զերկնից արքայութիւն ստացողի տառիս* Մշկնազին, *և ծնողացն՝ խոջայ* Շահրիմանին *և* Շահզատին, *և ամենայն յազգականաց, ինչ մարդ որ յաշխատանք ունի ի վերայ սբ. գրոցս, խորհրդակից և դասակից արասցէ վերին զօրացն և զուրախարար ձայնն արձակեսցէ առ նոսա...։*

Դարձեալ ես՝ մեղապարտ և բազմավէր հոգի Գասպար *սոսկանուն քահանայ, գծագրող սորա... յիշեսջիք և զիմ անարժանութիւնս... նաև զծնողսն իմ՝* զԲաղասար *քահանայն և* զԹուրվանդէն։

Դարձեալ յիշեցէք զխոջայ Ազիջանն, *և զծնողսն իւր՝* զՁարուխբաբայն *և* Խաթունաղայն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք* զՄշկնազն, *և զծնողսն իւր՝ զխոջայ* Շահրիմանն *և* զՇահզատէն, *յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք զխոջայ* Ազիջանն, *և եղբայրքն իւր՝* Ամիրբաբայն *և* զԱղաբաբայն։

Դարձեալ յիշեցէք զխոջայ Ազիջանն *և քրւերքն իւր՝* Խոնաղէ *և* Թիրվանդէ, *և որդոցն* Սիամոնին *և* Թաուրին, Միքայէլին *և* Մարիամին, *յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք* զՄշկնազն, *և հոգևոր որդիքն իւր՝* Ավէտն, Յովանէսն, Սատաղէն, *յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք զխոջայ* Ազիջանն, *և զհարսներն իւր՝* զԳուլփէրիխանն, զԽանումաղէն, *[զ]*Խանզատէն, *և* զՍանդուխտն։

Գ

Որոց աղօթիքն Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոյս խոջա Ազիջանին, *և ծնողացն, հօրն՝* Զարուխբաբային *և մօրն՝* Խաթունաղային, *և եղբարցն՝* Ամիրբաբային, *և քվերաւն՝* Խոնաղէ *և* Թերվանդէ, *և որդոցն՝* Սիամոնին *և* Թաուրին, Միքայէլին *և* Մարիամին, *հարսներացն՝* Գուլփէրիխանին, Խանումաղէ *և* Խանզատէ, *և* Սանդրխտին...։

Դ

Ողորմի Քրիստոս Աստուած ըստացողի գրոյս զբարիմիտ և հանճարեղ կնոջն՝ Մշկնազին, և ծնողացն՝ խոջայ Շահրիմանին և մօրն՝ Շահզատին, և հոգևոր որդոցն՝ Աւետին, Յովանիսին, և Սատաղին, և փծու[ն] գրչիս և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողիս և զլսողացդ, առ հասարակ Աստուած ողորմեսցի. ամէն։

Ե

Տէր դ. բ. վ. չ. բ. ց[67] գրիչս յիշեա ի Տէր։

Զ

Գրիչ՝ Յարութիւն

668 Դարձեալ յիշեցէք զպարոն Զաքարայն, և զիւր ծնողն՝ զխոջայ Սարատն, և զիւր եղբարքն առ հասարակ։ Դարձեալ յիշեցէք զՇահվելոնց յեկեղեցւոյ քահանայքն՝ զտէր Սահականոսն և զտէր Մխիթարն, և զայլ ամենայն քահանայքն։

Արդ՝ ես Յարութիւն դրչեակս յերեսս ի դետին դնելով աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, յիշեցէք զեղկելիս և զփոքրիկ եղբայրն իմ՝ զԲաղտասարն և զաշակերտն մեր զՄալին, որ բաղում աշխատեցաք ի վերայ գրիս և մագաղաթիս։ Ով որ զմեզ մի Հայր մերիւ յիշէ՝ ինքն յիշեալ լիցի առաջի Քրիստոսի։

Ո՛վ մանկունք սբ. Սիովնի, յորժամ հանդիպիք սբ. գրքիս կարդալով կամ օրինակելով, թողութիւն արարէք սղալանացն մերոց կամ գրիս խոշորանացն և դրչափոխութեանն, զի ոչ են միահամուր, վասն զի զմեզ ի տանէ և ի բնակութենէ ցիրուցան արարին, և մի օր ոչ էաք ի միում տեղւոջ, այլ զմեզ ի Նախասպանայ աւար հարին և բերին ի եզր Ջուղայու՝ ի դաշտն Մարանան, Գ (3) ամ ի տարտարոսի էաք և ոչ ունէաք բնակութիւն։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զծաղկող սորա զտէր Ըստեփանոսն և զորդիքն իւր՝ զՄալումն, զՎարդանն և զՄուրատջանն, որ երանգ երանգ ծաղկեաց զսա, յիշեցէք...։

Է

403 Ո՛վ ընթերցողք, յորժամ ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս զծաղկող սորա զտէր Ըստեփանոսն, և զորդիքն իւր՝ զՄալումն, զՎարդանն և զՄուրատջան, յիշեցէք...։

1285

ՇԱՐԱԿՆՈՑ

«Բանբեր Մատենադարանի», Մ 12, էջ 258, Մ 27

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Իկոնիո երկիր

Փառք...։ Արդ՝ դրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, այսինքն՝ շարեալ ակունք, ի լաւ և յընտիր լաւրինակէ, որ ասի Խլու Պա-

[67] Այսինքն՝ Գասպար, այսպես՝ գ=գ, բ=ա, վ=ս, չ=պ, բ=ա, ց=ր։

պու, որ է յըզկեալ և յըստակեալ առաջին վարդապետացն և վարժապետացն, ձեռամբ մեղսամած Գրիգորիս, ի յերկիրս Իկոնիոն, որ ասի Ղօնիա, ի դուռն Ս. Աստուածածնին, ի թվականիս Հայոց յամի ՌՃԷ (1658)։

Արդ՝ որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զդծող սորա զԳրիգորն միով Տէր ողորմեայլ, որ և ձեզ լիցի ողորմութիւն յամէնողորմ Արարիչէն. ամէն։ Եւ դարձեալ յիշեսցէք ի Տէր զստացող սորա՝ զմահդասի Աստուածատուրն, որ այժմ հանդեաւ ի Քրիստոս։ Ով որք յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ, ամէն։

1286
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՋՁՄՆՍ, № 13

Գրիչ՝ Եղիսաբեթ
Վայր՝ Ստաթէի վանք

100 Փառք..., որ ետ կարողութիւն փանաքի և տկարն անձին՝ Եղիսաբեթի հասանել ի յաւարտ տառիս, որ կոչի Տաւնացոյց, Թագաւոր ալէլուք, Տումարք և այլ բազում երգք։

Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և թշուառ անձին՝ Եղիսաբեթի, ի նեղ և յանձուկ ժամանակիս, վասն բազմանալոյ անաւրէնութեան։ Ի հայրապետութեան տեառն Յակո<կո>բայ։ Ընդ հովանեաւ Ըսաաթէի։ Եպիսկոպոսութեան տէր Մեսրոպին և տէր Պաղոսին։ Ի թվականիս Հայոց ՌՃԷ (1658)։

Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զձեզ, ով մաքրամիտ ընթերցողք, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք...։

1287
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Ջմմառ, № 489 (1339 թ.)

Կազմող՝ Ներսէս

87 Ձվերջին կապող գրոցս Ներսէս և անարժան գրչիս զայս ժողովածու գիրքս ի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Ս. Կարապետին, և Ս. Նշանին, և Ս. Սարգսի զօրավարին, և որդւոյ նորա Մարտիրոսին. ի յառաջնորդութեան սբ. ուխտիս Խաչատուր եպիսկոպոսին և ԺԲ (12) անձ կրաւնաւորին, որ կան ի յայս սբ. ուխտարանիս։ Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր Խաչատուր ա[ր]հի եպիսկոպոսն որ[68] կապել տուեց
88 այս ժողովածու գիրս, ա//ռաջին հայրապետացն դասեսցէ...։

Ի թվականիս ՌՃ ու է (1658). ամէն։

1288
ԱՒԵՏԱՐԱՆ
Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1950 թ., ԺԱ—ԺԲ, № 34

Վայր՝ Մոկս

ա

87 Թուին ՌՃԷ (1658) ամին գրեցաւ սբ. Աւետարանս յերկիրն Մոկաց։

[68] Տպված է «ուս»։

Բ

Ի յառաջնորդութիւն աստուածապահք քաղաքիս Զաքարիա քաջ և քրտ[ն]աջան աշխատող ի վերայ յաւրինաց և խրատիչ ախմարաց և թիւրից, զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։... Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր, որ ըստացաւն իւր հալալ ընչից և յետ յիշատակ ըսբ. Յաւետարանս ի ձեռն տէր Վարդանին և իւր տղին։ Եւ զոր տէր Աստուած ընդունելի արասցէ զյիշատակս նոցա և եղիցի ամենայն թողութիւն. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր աղշարեցին Դաշտէն, ալամանցի Մելիքոնն, և իւր զհայրն՝ զԽաչիկն, և զմայրն՝ Թուրվանտանն, և զկողակիցն՝ զՄայրամն ուռուսն հաւրն՝ Հումային, մաւրն՝ Հասնային, և զեղբաւրն՝ զԱստուածատուրն, և զքուրն՝ Փաշեկանն։

1289

ՃԱՇՈՑ

ՋՁԼԱ, № 7

Գրիչ՝ Մելքոն

7բ Գրեաց թվին Հայոց ՌՃԷ (1658) Մելքոն՝ Արևի որդի։

1290

ՑԱՑՍՄԱԻՈՒՐՔ

Մաղնիսա, № 11 (1475 թ.)

255 Ցիշատակ է գիրս տէր Գրիգորին, որ ետ Լուսաւորիչին եկեղեցին[69], թվին ՌՃԷ (1658). ամէն։

1291

ՑԱՑՍՄԱԻՈՒՐՔ

Տրդատ Պալյան, «Մաղիկ», 1891 թ., Բ տարի, № 10, էջ 111

Գրիչ՝ Թորոս

Ա

Փառք...։ Արդ՝ պատուական և աստուածասէր և բարեմիտ խուճայ Սգանդարն <և> ըստացաւ զմարգարտաշար տառս զայս և զանառիկ մեծութիւնս, զպայծառութիւնս մանկանց սբ. եկեղեցւոյ։ Եւ ես՝ Թորոս գրիչս տեսի զեռափափաք սէր սորա, զոր ունէր հետ սբ. գրոցս, և ի ձեռն արկեալ գրեցի ըստ իմում տկարութեանս և ըստ Աստուծոյ յաջողութեանն յաւարտ ածի զսբ. գիրքս, որ կոչի Ցայսմաւուր, որ ունի հաւաքեալ ի յինքեանս, զճառս տէրունական տօնից և պատմութիւնս...։ Եւ եղև գրաւորութիւն գրոցս ի ՌՃԷ (1658) թուականին Հայոց, ի լաւ և յընտիր օրինակէ, որ ասի Ներիցն, և այլ աւելի քան զնորայն, զի շատ նոր վկայք աստ գրեցան և հարստացաւ գիրքս այս քան զայն, ընդ հովանեաւ սբ. եկեղեցւոյս, որ անուամբ կոչի Ս. Աստուածածին, ի հայրա-

[69] Մաղնիսայում։

պետութեան տեառն Խաչատուր կաթողիկոսի, ի յառաջնորդութեան առաքելաշնորհ արհերշանիկ բաբունապետին մերոյ Գրիգոր վարդապետին։ Արդ՝ որ հանդիպիք սբ. գրոցս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սբ. աղօթս ձեր, զվերոյիշեալ ստացող սբ. գրոցս զՍմանդարն և զծնողսն իւր՝ Էմպիկն և զՇանանայն, և զամուսին իւր՝ զՊանարն, և զեղբայրն իւր՝ զԳրիգորն, և զորդին՝ Սիմաւոնն, և քեռն իւրոյ՝ Շանզուդին, և կրկին քեռն իւրոյ՝ Շանսուլթանին, և փեսային իւրոյ՝ Սարգսին, և մեծ պապուն՝ Աստուածատուրին, և պապօրն՝ Հերֆային, և քեռ պապուն՝ Սնանին, և քեռ մօրն իւրոյ՝ Ասլրին, և մօրն քեռն իւրոյ՝ Ղատեմին, և որդոյն՝ Էսիային, և հօրեղբօրն՝ Փոլատին[70] և խուճա Սգանդարին դստերացն՝ Մարիամին և Ղէմտրին, և որդւոյն՝ Սայապալին, և զոքանչին՝ Ոսկեհատին, և հօրեղբօր որդոյն՝ Աստուածատուրին, և զամենայն ազգայինս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն, և լի բերանով Աստուած ողորմի ասացէք բարեհոգի Սգանդարին և իւրոցն ամէնին, որք յիշատակեցան աստ...։

Բ

Ծաղկող, կազմող՝ Յովանէս

Զծաղկող և զկազմող սրբոյ տառիս զհող և զփոշի Յովանէս նուաստ և վատթար գրիչս յիշեցէք ի Քրիստոս, որ աշխատեցայ ի սբ. տառս, զի Գ (3) խորանին ընդդիմակայ պատկերքնովն և զայ[լ] տնօրինական տեղիքն, ցրուապատկերքներն ըստ կարեաց մերոց զարդարեցաք զտառս, աղաչեմ և սբ. գարշապարաց ձերոց մաղթեմ մոխրամածեալ երեսօք յիշեցէք...։

Թվին Հայոց ՌՃԷ (1658)։

1292

ԱՒԵՏԱՐԱՆ

Միհրդատեանց, «ՀԱ», 1894 թ., № 5 (1489 թ.)

51 Դարձեալ ի գերութենէն ազատեցինք, վաս[ն] ամենայն արիւնամերձ ազգականացն և թոռնիկ մահտեսի Գաբրիէլին, և կողակցոյն՝ Նուրխանին, և մայրն՝ Թուրվանտին, և յեմմուս տղայոցն՝ Աբրահամին և Մանուկին։ Եւ ետուն յիշատակ ի դուռն Ս. Կիրակոս յեկեղեցւոյն ի Ֆոանաւս, ի թվին ՌՃԷ (1658). և լի սրտիւ ասասցէք Հայր մեր։

1293

ԲԱՌԳԻՐՔ

«Բանբեր Մատենադարանի», № 9

Գրիչ՝ Վարդան

Վայր՝ Երևան

453 Բառարան Հայոց գրեցեալ ի թվին Հայոց ՌՃԷ (1658), յանապատին Երևանայ, ի Վարդանայ համբակէ։

---

70 Տպված «Փոալտին»։

1294

ԱՎԵՏԱՐԱՆ

Թորոս ագրար, Բ, էջ 277—278

Գրիչ՝ Թադէոս քահանայ
Վայր՝ Վան

Ա

...Յիշեցէք... և հաւատարիմ Աւէտն *և զիւր եղբայրն՝ պարոն* Ամիրաղէն, *զհայրն՝* Խլղաթ, *զմայրն՝ զ*Թուրվանդէն, Շուշանն, *զորդիքն իւրեանց... զ*Միրաքն... *զ*Սալարն, *զ*Մրութն, *զ*Զարուին, Եղիսէն... *Ես՝* Թադէոս *սուտանուն քահանայ սկսայ և կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թվին Հայոց ՌՃ և է (1658) ամին, ի մայրաքաղաքն* Վան, *ընդ հովանեաւ Ս. Էջմիածնայ և Սբ. առաքելոյն Թադէոսի և ի հայրապետութեան տէր* Յակոբ *կաթողիկոսի...* Աւէտն *և* Ամիրաղէն *ստացան զսա յերկրին Արծրունեաց և եդին ի դուռն* Բասկրբու *Ս. Ստեփաննոսին...։*

Բ

Ծաղկող՝ Սահակ դպիր

...Զտառապեալ անձս վանեցի,
Սահակ *դպիր յիմար դերի,*
Զսբ. Աւետարանս ծաղկեցի,
Զեռամբ իմով մեղսամածի...



1295
ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
Երևան, № 5571

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Զմուռնիա, Սուրաթ

Ա

184ա *Ողորմի Քրիստոս Աստուած զստացող սբ. գրոյս զմոլորեալ Պետրոսն որ մեռեալ եմ հոգով, մոլորեալ մտօք, միանգամ մարմնով (?), որ բազում փափագանօք զԱստուածաշունչէ օրինակեցաք՝ նախ Մովսէսական Ելքն, երկրորդ Առաջին Թագաւորութիւնքն, երրորդ. Ե (5) գիրքն Սողովմոնի։ Այլ չկար, զի օրինակէլ էաք այլ գիրք, նորն գրեցաք։ Որ հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զգծօղս, որ գրվեցաւ ի Իզմուտին քաղաք, ի թիւն Հայոց ՌՃԶ (1657) ամի, ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Բ

192 *Գրուեցաւ յերկրիրն Հընդկաց ի քաղաքն Սուրաթն, թվին ՌՃԸ (1659) ամին և ամսեանն փետրվարի ԻԳ (23)։*

1296
ԱՒԵՏԱՐԱՆ
«Բանբեր Մատենադարանի», № 12, էջ 259—260

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Քարանատ

Փառք...։ Աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս ձեռամբ բազմամեղ Գրիգոր լոկ անւամբ իրիցու, ի թվականութեանս Հայոց ՌՃ և Ը (1659)-երորդի, ի մարտ ամսոյ Ի (20), զոր էր շախկապեալ երանեալ աւետարանչացն ըստ բազմաերանգ գունոց...։ Այսպիսի բիւր գանձուց և մեծագին մարգարտաց յոյզ և խնդիր էր զսրբասնեալ և ի մանկութենէ միայնացեալ մահդասի միայնակացն Եղիա, ի մանկութենէ լուեալ զհրամանս Տեառն, որ ասէ. «Եթէ որ ոչ թողցէ զտուն իւր և զամենայն ինչ-որ աշխարհայի[ն], ոչ կարէ իմ աշակերտ լինել»։ Վասն

որոյ թողեալ յաշխարհ և որ ինչ աշխարհի է, աշակերտեցաւ հրամանացն Քրիստոսի, որ ասէ. «Առ սխալ քո և եկ ըզկնի իմ»։ Ի մանկութենէ իւրմէ առեալ յանձն զչարչարանս մարմնոյ և գնացեալ ի մէնարանն Ղարամուրատու ի յանապատն սբ.։ Եւ կեցեալ անդ ժամանակս ինչ և հրամանաւ սբ. հօրն իւրոյ տեառն տէր Տէրունի մաքրազարդ և սրբաներկ կրօնաւորի, գնացեալ ուխտ ի սբ. քաղաքն Երուսաղէմ և համբուրեալ լուսարուզիս գերեզմանն Քրիստոսի։ Եւ անտի դարձեալ եկն առաջին ուխտն իւր՝ ի անապատն սբ. և ստացաւ բազում գրեանս, և շատ շինութիւնս աւելացոյց ի յանապատին։ Եւ յետ ժամանակաց վառեալ ի սէր սբ. Աւետարանիս, հրամանաւ հօրն իւրոյ՝ սրբոյ տէր Տէրունին և կամակցութեամբ եղբարցն ամենեցուն, եկեալ առ մեզ. և խնդրեաց կատարել զցանկութիւնս սրտի իւրոյ։ Եւ իմ ձեռն եդեալ աւարտեցի զԱւետարանս սբ., և ծաղկեցի երբներբն դունովք, և ոսկէզօծ որակօք, ի խնդրոյ նորին։ Եւ յետ գծագրել զսա վասն յիշատակի հոգւոյ իւրոյ և հոգևոր հօրն՝ տէր Տէրունին։ Վասն որոյ հողմամած դիմօք աղաչեմ զդասդ սրբազանից զպատահողդ տիեզերաքարոզ սբ. Աւետարանիս, յիշել սրտի մտօք յաղօթս ձեր զԵղիայ միայնակացն, որ բազում շանս և աշխատանս կրեաց ի վերայ սբ. Աւետարանիս և բազում անգամ որդորեաց մեզ աւարտ հասուցանել, յիշել զնա և Աստուած ողորմի ասել իւրն և ծնողացն իւրոց. ամէն։ Այլ և աղաչեմ զձեզ յիշել զմաքրասուն կրօնաւորն զտէր Տէրունն և զմիաբանսն սբ. ուխտին՝ զԳրիգոր եպիսկոպոսն, և զԿարապետ աբեղայն, և տէր Եղիայն և զամենայն միաբանսն սբ. ուխտին յիշել և Աստուած ողորմի ասել...։

Եղև աւարտ սբ. Աւետարանիս ի յերկիրս Գանձոյ, ի գեղս որ կոչի Քարահատ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի ժամանակս շահ Ապասին փոքոյ և ի կաթողիկոսութեան Հայոցս Աղուանից տեառն տէր Պետրոսի մաքրասուն և սբ. հայրապետի և կրկին լուսաւորչի, որ և խնամօք Աստուծոյ և շնորհօք Ս. Հոգւոյն և բարի քաղաքավարութեամբն իւրով լուսաւորեաց զխաւարեալ տունս Աղուանից և պայծառացոյց զեկեղեցիս կարգաւորութեամբ, որոյ Աստուածն ամենայնի տացէ նմա երկար կեանք և մեզաց թողութիւն։ Եւ մերում եպիսկոպոսութեան բազմահանճար և պատուական քաւշապետի տեառն տէր Անտոնի՝ վերադիտողի սբ. աթոռոյն Կաթուղիկէի վանիցն, որ յայսմ ժամանակի սա ևս բազումք քաշութիւնս արար ի կարգս և հաստատութիւնս հաւատոյ։

Այլ և աղաչեմ յիշել զգծող, ծաղկող և կազմող սբ. Աւետարանիս Գրիգոր բազմամեղ երէցս հանդերձ ծնողօք իմովք և Աստուած ողորմի ասել։ Այլ և աղաչեմ անմեղադիր լինել պակասութեան սորա, զի մագաղաթն յոյժ վատ էր, մանաւանդ թէ ի ծաղկէլ համաբարբառին, զկէս աւուրն տենդէի և սարսափէի և կէս աւուրն ի ստիպմանէ նկարէի ըստ խորհրդին և ոչ վայրապար։

Այլ և աղաչեմ յիշել զամենեսեան, որք ունին աշխատանս ի վերայ մեր և ի վերայ սբ. Աւետարանիս։ Այլ և յիշել զվարպետ գործոյս իմոյ զտէր Դաւիթն և զծնողն իւր, յիշել զամենեսեան վերոգրեալսն և լի սրտիւ Աստուած ողորմի ասել ամենեցուն, մանաւանդ ինձ գրողիս, որ յոյժ մեղաւոր եմ և ի մէջ նեղութեանց և ձեռաց չարեաց...։

1297
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՅԶԵՊ, հ. IX, էջ 364 (1558 թ.)

Հետ ստացող՝ Խոճայ Սրապիոն

565 Զվերջի ստացող սորին զխոճայ Սրապիոնն և զծնօղսն իւր, զհայրն իւր զՅովանէսն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, եւ զմայրն իւր զմահդեսի Զոհալն, եւ զեխբայրն իւր զԳրիգորն, եւ զկողակիցն իւր, եւ զհօրեխբայրն իւր զմահդեսի Տարվիշն եւ զկենակիցն իւր զմահդեսի Զոհալն, այլ եւ զորդիսն իւր զՏարվիշն, զՈվանէսն, զՀայրապետն, զԴանէլն, զխաչերն, եւ զԱբրահամն, եւ զգուստրն իւր զԵղիսան, եւ զքւերսն զՍառան եւ զՀոիփսիմէն, եւ զամենայն արեան մերձաւորսն, զկենդանին եւ զհանգուցեալն. որ ստացաւ զսա ի հալալ արդեանցն, եւ եդ յիշատակ ի դուռն Սուրբ Աստուածածնին եկեղեցոյս, յիշատակ իւրն եւ ծնաւղաց իւրոց։ Զունի ոք իշխանութիւն ի վերա սուրբ Աւետարանիս գողանալոյ կամ ծախելոյ կամ դրաւ դնելոյ. եթէ ոք յանդգնի՝ զանէծսն Յուդայի եւ զպատիժս Կայենի առցէ։ Եւ դուք, դասք քահանայից, յիշեցէք զստացող սուրբ Աւետարանիս եւ զծնաւղսն իւր, եւ դուք յիշեալ լիջիք։

Աղատումն Աւետարանիս՝ թվին Հայոց ՌՃ եւ Ը (1659) ամին, մարտ ամսոյ ի ԻԹ (29) աւուրն աւաք երեքշաբթի, ամէն։

1298
ՔԱՐՈԶԳԻՐՔ
ՏԵՐԱՎՋ, № 464

Գրիչ՝ Հեղինէ
Վայր՝ Շէնեներ

730 Գրեցաւ սակաւ բանս ձեռամբ ապիկար և անարժան Հեղինէի ապաշխարողի, ի յանապատն Շէնեներու, ի դուռն Ս. Աստուածածինն, ի խնդրոյ հարազատ եղբօրն իմոյ՝ Մեսրոպ վարդապետի Սիւնեաց երկրին, թուին ՌՃԸ (1659)-ին մարտի ԼԱ (31)-ն. ի փառս Արարչին։

1299
ՄԱՇՏՈՑ
ՅՅՍԳ, № 106

Գրիչ՝ Պետրոս լուսարար
Վայր՝ Սեբաստիա

70 Արդ՝ գրեցաւ սայ ի քաղաքն Սեբաստիայ, ի վանսն Սրբոյն Հրեշտակապետի, ձեռամբ լուսարար Պետրոս կրաւնաւորի, ի վայելումն Մարդուանցի մահտեսի Նորհատին և իւր ծնողացն՝ Ալփիարին և մօրն՝ մահտեսի Մարգրիտին, և միւս այլ մօրն՝ Թուրվանդային, և իւր կողակցին՝ մահտեսի Խանտէրին, իւր հօրն՝ Պաղտասարին, և մօրն՝ Աղվորին, և իւր բոլոր ննջեցելոցն հոգւոցն, որ ստացաւ Մաշթոցս ի հալալ արդեանցն, կատարեալ զտէրունական հրամանն որ ասէ. «Ծերանի...»։ Արդ՝ ցանկացող եղեալ յայսմ հոգելից մատենիս բարեմիտ և հաւա-

տարիմ քրիստոնեայն Մարզուանցի մահտեսի Նոռհատն, որ ստացաւ զսայ յիշատակ հոգոյ իւրոյ և հանգուցեալ զաւակացն, և ղծնաւղքն իւր, և ամենայն արեանառու մերձաւորքն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։ Արդ գրեցաւ Մաշթոցս ի թուականութեանս Հայոց ՌՃԸ (1659), ապրիլ ամսոյ Ժ (10), օրն Նոր կիրակի, ի հայրապետութեան մերոյ Յակոբ կաթողիկոսի։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք յայսմ մատենիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմահտեսի Նոռհատն և գուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

1300

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 9322

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Քորբէզ

ա

17ա Քրիստոս Աստուած ողորմի ըստացողի տառիս մեղսայթօալ Մարտիրոսին և իւր ծնողացն՝ Յակոբին և մաւրն՝ Սավգուլին, և եղբարց Տէրոնին, Մկրտիչին, Պոզոսին, Պետրոսին, Մարքարին և ամենայն արեան մերձաւորացն, գարդացողաց և լսողաց, մասն և բաժին ընկալցի...։

բ

69ա Եւ ոչ էր լիայկատար գրեալ պատմութիւնս այս. ի սղալանացս
69բ մերոց անմեղայղիր լերուք, որ է // յօիտեանս. ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբարք, անմեղայղիր լերուք ի սղալանացս մերոց, զի կար մեր այս էր և ոչ կարացաք առօել գրել. ոչ եմք յուսեալ ի վարդայպետաց։ Յիշեցէք զմեղսայթավալ Մարտիրոսն և իւր ծնողքն...։ Ո՛վ հայրք և եղբայրք, և թէ հանդիպէք ի փոքրայշնորհ գրիս և թէ կարդալով և օրինակելով, լի բերանով ողորմի ասասշիք մեզ և մեր ծնողացն...։

Ի թվականիս Հայոց ՌՃԸ (1659) ամի գրեցս, ապրելի Ը (8) և օրն յուրբաթի, ի հայրայպետութեան տեառն Յակոբայ, գրվեցս ի մայրայքաղաքն Քորբէզ. որ է փառք [յ]օիտեանս. ամէն։

գ

85ա Քրիստոս Աստուած արայ թողութիւն ըստացողի տառիս մեղսոր և անարժան գրնիս Մարտիրոսին...։ Գրվեցս ի այս փոքր պատմութիւնս ի մայրայքաղաքն Քորբէզ, թվին ՌՃԸ (1659)-ին, ապրելի ԺԴ (14), օրն հինգշաբթի. որ է փառք [յ]աւիտեանս. ամէն։

1301

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

ՄՏԶԵՊ, II, № 430 (1658 թ.)

Հիշատակարանի հեղինակ՝ Մարտիրոս Ղրիմեցի
Վայր՝ Սամպոլ

393 Ի թվականիս մերոյ ՌՃԸ (1659), յամսեանն հռովմայկանի ի մայի-

սի Իե (25), օրն չորեքշաբթի, Հոգւոյն Սրբոյ գալստեանն պահոց, կամօքն Աստուծոյ և հրամանաւ Քեօփրուլու Մէհմէթ փաշա վէզիրին, զգեցաք զնշանն արքունարնձեռ պատրիարք անուամբ, որ և տեսուչդէտ և հովիւ կոչմամբ ի վերայ տեառնական հօտիս մեր, ի քաղաքս Ըստամբոլ, նուաստ վարդապետս Մարտիրոս Ղրիմեցի, աշակերտ տեառն Աստուածատրոյ սբ. Երուսաղէմայ հայրապետի, զոր տէր Աստուած խաղաղութիւն տացէ քաղաքիս և ամենայն աշխարհի։

1302

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՍՊԱԳԱՑԻՈՅ

Երևան, № 5053

Գրիչ՝ Բարսեղ աբեղայ

ա

7ա Եւ զիս մեղաւոր Բարսեղ աբեղայս յիշեա ի Տէր յաղօթս քո։

բ

286բ Փառք...։ Եւ փափագ և ցանկութիւն ունայնակրի և փինատական հոգւոյ Աւետեաց Տփիւեցւոյ անուամբ ևեթ համանաւորի[1] և աշակերտի երիցս երանեալ և երջանկազարդ Յակովբայ հայրապետի Ջուղայեցւոյ և կաթողիկոսի իշման Միածնի բանին։ Վասն որոյ սէր արքեալ ըղձմամբ բաղձացօղ այսորիկ Դիոնէսիոսի իմաստալից գանձարանիս և աստուածատեսակացն թաքնուեաց կարգաց աւրհնաբանողի եղէ տառիցս յիմում կենդանութեանն հոգի և ներանձինն արարողականի և կրբոզականի ճառագայթ։ Եւ զկնի իմ յելիցն յաղցաւորէս թողցի յիշատակ ինձ հոգւոյ և զաւակաց Սիօնի առ մեծարգոյ հարցդ և բարեբաստիկ յեղբարդ, որպէս զի յընթերցմանն ժամու և յառնելն գաղափար և կամ ի տեսութիւնն ժամանել, յիշեսջիք ի ձերում յարաձօնականն աղօթս և ներերկնաճեպական իղձսն առաջի արդար և էին և գերակատարողապետ պատարուն տուփելոյն զոստաքանցս և պտղածախս հանդերձ հոգևոր և
287ա մարմնաւոր ծնօղքն, որք յոգնալիր պատարուն երկամբք //դարմանեալ հասուցին յայսմ աստիճանի, որոց վարձահատոյց Տէրն բոլորից և Աստուածն բարձանց լիցի այժմ և յապագայն և յարակայ երանութեանն։ Ընդ սմին մաղթեմ յիշել զքաջաբան բարունիսն զԳալուստ Նորգցին և զԻսահակ Մակուեցին, որք են երախտաւորք առ յիմաստս աստուածային գրոց։ Եւ մանաւանդ սիրասնունդ և հարազատ եղբայրն մեր զՎարդան արշիդիակոնն, որ եղև առիթ առ ի ստացումն մատենիս այսորիկ։ Եւ զգծող սորին զՄարգարէն և զծաղկող տէր Յակոբն։ Գրեցաւ ի թուոջս արամեանս ազնի Ռ-երորդի հարիւրերորդի ւ ութերորդի (1659) և արեգի ամսոյ ի Իե (25)[2]։

---

[1] Այս բառի վերևում՝ տողամեջ, հավանաբար մեկ ուրիշը գրել է «վարդապետ»։

[2] Հայոց ՌՃԸ թվականի արեգի 25-ը շարժական տոմարի հաշվով կլինի 1659 թ. մայիսի 30-ին։

1303

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ ԹՂԹՈՑՆ

Երևան, № 1317 (1413 թ.)

Նորոգել տվող՝ Յոհան քահանայ

537ա *Արդ՝ ի հայրապետութեան աստուածալան և քրիստոսաղարդ սրբոյ քաւչապետի տեառն [Յակոբա]յ [Ջ]ու[ղայեցւ]ոյ, ի թագաւորութեան արքայութեան Պարսից շահ Ապազսանի, որ է յազգէ Թուրմանի, և ի թուաբերութեան արամեանս զարմի ի հազար հարիւր և ութ (1659) ամի, ամսոյն մայիսի, ես Յոհան քահանայ երկրաւ Շամբեցի, վերստին նորոգել ետու զայս կտակ պանծալի, վասն յիշատակի հօրեղբօր որդւոյն իմոյ Առաքելի, սակս այս ինչ մեծ իմն պատճառի։ Քանզի այս Առաքել եկեալ ի տանէն Յունաց յերկիրս Արարատեան, որ սակս շահավաճառութեան շրջէր։ Եւ դիպեալ աստէն յամեցեալ եղև ամիսս ինչ, [ո]րոյ պատահեալ արք սիրիկայք [և ա]ռիւնախանձք յարբեալ յա[ռեն]է անմեղաց և ծարաւեալք ևս միշտ։ Սակս ագահութեան պիղծ ցանկութեան իւրեանց ի մէջ գիշերի խեղդամահ սպանին զերիտասարդն զայն ցանկալի և թողին ի վերայ մեր սուգ անպատմելի, զոր բարձեալ զմարմինն, ես՝ կսկծահարս թաղեցի ի քաղաքն Երևան։ Եւ վասն նորոյն հոգւոյ փրկութեան, զայս Սարգիս կոչեցեալ գիրքս նորոգեալ կազմել ետու նորին դրամով, քահանային Թումայի, որպեսզի մնասցէ յիշատակ յաւիտենական ի մէջ աթոռոյս մեծի, բազմածնունդ մօրս լուսոյ՝ սրբոյ Իշմանս տեղի։ Յաղագս որոյ զհանդիպողդ և վայելողդ թաղանձեմ աղերսանօք, յիշել սրտի մտօք զմնացեալն կարօտ հայրենեաց և ծնողաց, զԱռաքելն տաժանամահ և զամենայն ծնողսն, և զարեանառուսն. ընդ նմին և զառիթս զՅոհան քահանայս և զամենայն զազգայինսն տառապելոյ և զքստ հոգւոյ և զմարմնոյ զեղբարսն իմ։ Եւ որք յիշէք հաստատուն սրտիւ, յիշեալ լինիք ի Քրիստոս քաղցրալուր ձայնիւ. ամէն։*

1304

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅՕՄՆՍ, № 127

Գրիչ՝ Յովհան[ն]էս
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

570 *Եւ զիս անպիտան Յովհան[ն]էս գրիչս յիշեսջիք ի Քրիստոս. թվին ՌՃԷ (1658)։*

բ

569 *Եւ արդ՝ աղաչեմ վերըստին յիշել ի սրբամատոյց աղօթս ձեր Ամիրասաթենց զպարոն խոճայ Սաֆարն, որ ստացաւ զայս աւետարիր և մարգարտաջար, աստուածախօս կտակս անչինչ յիշատակ յաւիտենական հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և զաւակաց...։*

գ

588 *Շնորհ և վաշ ամէն երանեան բնութեանն...։*

Ուստի և իմ ամենավրիպակ ոգի տառապեալ Աւետիք, անուամբ ևեթ

կրօնաւորի, բաղձացօղ եղեալ անճառելի սորին քաղցրութեան, ժամանեցի ի վեր քան զիմ արժանն, օժանդակութեամբ և ծախիւք մեծահաւատ և ողորմած խոճայ Սաֆարին, որ էր զարդարեալ աստուածային առաքինութեամբն և հայր եկեղեցականաց երևեալ, ևս առաւել կրօնաւորական դասուց, որք միանգամ մխիթարեալք գոն յառատաձեռնութենէ նորա։ Յորոց մի և ես նուաստ ոգի նորին աշակերտ սրբազան հայրապետին Հայոց // տեառն Յակոբայ, ըստ հոգւոյ որդի, Աւետիք աբեղայ՝ վայելեցի զգանձս աստուածային։ Յամի հազարերորդի վեցհարիւր[եր]որդի վաթսներորդի (1660) առաջներորդի գալըստեան մերոյ Կենարարի և ի Հայկազեան թվականի հազարերորդի հարիւր[եր]որդի ութերորդի (1659), յամսեան յուլիսի երկոտասաներորդի (12)։ Ի դիտապետութեան տեառն Յակոբայ կաթողիկոսի սբ. աթոռոյն Էջմիածնի, որ էր ազգաւ Ջուղացի, այր քաջ և արի, և հոգւով սրբով լի։ Եւ ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Աբասի երկրորդի, և գեօղաքաղաքս Նոր Ջուղայ, ի վանս Ամենափրկչին, և առաջնորդութեան Դաւիթ վարդապետին։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք օգտիք ինչ ի սմանէ, զփոխարէնն հատուսջիք առ ի բարին յիշատակել զստացող սորա՝ զյոգնահանճար և զխորհրդամեծար զխօջայ Սաֆարն և զծնօղս նորա, զհայրն՝ բարեպաշտօն խօջայ Նազարն և զմայր նորա՝ համեստաբարոյ զԴշիւոյն, և զկենակից նորա՝ զսգաստագոյն զԽանգզատէն, և զորդի նորա՝ ազնուամեծար և ցանկալի պարոն Ըստեփաննոսն, և զթոռն նորա՝ գեղեցկատիսլ պարոն Գրիգորն, և զդուստր նորա՝ զնազելի Կատարինէն, որք ամենեքեան միանգամայն փոխել ի կենաց աստի ի յանանց կեանս, ՝կարօտին ձերում մաղթանաց։ Նաև որ այժմ դեռ ևս են ի մարմնի, զերկրորդ զկողակից նորա՝ զպարկեշտ և հարկեւոր Ղտրիպիսանն, և զհարս նորա՝ զբարեսուն Ըզլելի, և զդստերս նորա՝ զպայազատազան զԽանումն, և զՄաղալի, և զԳօզալ, զորս տէր Աստուած անփորձ կենօք և ծաղկափթիթ զաւակօք պահեսցէ...։

1305
ՄԱՇՏՈՑ
ՏԵՐԱՎՔ, № 323

Գրիչ՝ Ազարիայ
Վայր՝ Նոր Ջուղայ

22 Փառք...։ Որոյ ամէնառատ շնորհիւն յանդ ելեալ կատարեցի, զմեղաւոր և փծուն, սուտանուն գրչակ Ազարիայս զսբ. գիրքս, որ կոչի Մաշտոց ի բուն, զի սովաւ կատարի ևթն խորհուրդ սբ. եկեղեցւոյ, և սովաւ ոռոգանեն տիեզերք ամենայն Հայաստանեայց եկեղեցեաց հաւատացելոց, յամի հազար և ՃԸ (1659) թուոյ, յամսեանն Հռոմայեցւոց յունիսի ԻԲ (22), յաշխարհիս Պարսից, արքանիստ քաղաքիս ըստ գրոց Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան արտաձայնի, ի գեօղաքաղաքիս Նոր Ջուղայու, ընդ հովանեաւ ի դուռն Ս. Յակոբու Մծբնա[յ] հայրապետի. ի թագաւորութեան Պարսից շահ Ապասոյն փոքրի, և ի դիտապետութեան

Հայոց հանուրց սեւի տեառն Յակոբա[յ] երիցս[3] երանեալ երջանիկ հայրապետի, որ է բնիկ աղգաւ ջուղայեցի, որ յայսմ ամի սկիզբն արար շինել վանս Բուրվառու և Փէրիու համար։ Եւ ի վերատեսչութեան նահանգիս հեզահոգի արհի եպիսկոպոսի և շնորհաղարդ վարդապետի, տեառն Դաւթի, որ և իսկ սա է։ Որ և մաղթեմ վայելողացդ և հանդիպողացդ, որք ի սմա կարդալով կամ դաղափար առնելով բառնայք ի խոշոր ղրոյս զսխալութիւնն և դուք զվարձն ի Քրիստոսէ առնուցուք եղբարք, ոի կար մեր այս չա[փ էր][4]։

1306

ԱՒԵՏԱՐԱՆ (ԺԴ դ.)

«Բանբեր Մատենադարանի», № 9

Գրիչ՝ Աւետիք սարկաւագ

440 Փառք...։ Ի թուաբերութեան Հռովմայեցոց ՌՃԸ (1659) և օգոստոս ամսոյն Բ (2)-ըն գրեցաւ, ընդ հովանեաւ առ դուռս Ս. Խաչին, ի հայրապետութեան տէր Յակոբին, և առաջնորդութեան Սահակին և թագաւորութեան Կիզային[5]։

441 Ի յայսմ ժամանակի գրեցաւ զկէս Աւետարանն՝ երկու գլուխն[6] ամենագովելի և հռչակելի, դերակատար և գերապանծ, պաշտելի և երկրպագելի սբ. Աւետարանս, ձեռամբ մեղաւք լըցեալ և անպիտան ոգւոյ Աւետիք սարկաւագի. և եմ որդի Մինաս եպիսկոպոսի Սէչովցի, որ զինքն դաղախնին սպանեցին։ Եւ զերկու գլուխ Աւետարանն դաղախի ձեռաց ի գերութենէ ազատեցին այս տասն եղբարքս, որ են անուամբք այսոքիկ՝ տէր Սիմոն աւադիրիցոյ որդի, Մանուկ վաթահ, Կիւրեղ վաթա, Ասվատուր վաթահ, Մանուկ՝ Գրիգոր վաթին, Խութլուշ՝ Գրիգորին, Միտֆաւն՝ Դաւթին, Յովանէ[ս]ն՝ էնպէկին, Խաչատուրն՝ Յովանէսին, Պուկտանն՝ Նիկոլին։

1307

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 103 (1595 թ.)

146 Դարձեալ յիշեցէք Ամամփարի և որդին իւր՝ Մուքէլն, և դստերքն իւր՝ Մուրասէն, Շուշանն, որ տվին Ա (1) դամաղղի շիշակ, յիշեցէք...։ Գրվեցավ թիվն ՌՃԸ (1659), Աստուածածին կիրակի օր[7]. ամէն...։ Ցի-

---

[3] Ցուցակում «երէցիս» ձևով։

[4] Ինչպես հաղորդում է Տեր Ավետիսյանը, այս հիշատակարանի ձեռագիրը մեզ չի հասել։ Հիշատակարանի մեկ էջը գտնվում է Ցուցակի № 323 Մաշտոցում (էջ 522), որն ընդօրինակված է 1651 թ.։ Հիշատակարանի վերջին մասը կորած է։

[5] Ցուցակի հեղինակ Ս. Քոլանջյանը տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Խոսքը վերաբերում է Մուղովայի իշխան Գեորգե Դիկային (իշխել է 1658 թ. մարտի 3—1659 թ. նոյեմբերի 2)» (նույն էջում, ծանոթ. 1)։

[6] Ավետիք գրիչը գրել է ձեռագրի կեսը, իսկ մյուս կեսը նրել է ԺԴ դարի գրչությամբ։

[7] Մեր կարծիքով, խոսքը վերաբերում է Ասավածածնի վերափոխման տոնին։ 1659 թվին այդ տոնը կլինի օգոստոսի 14-ին և այդ օրն էլ իրոք կիրակի է։

շեցէք Յակոբն, *կողակիցն՝* Շանիգարն, *հանգուցեալ դուստր* Վարդխաթուն, Գուարն, Յերիքն, Մարգարիտն, *Աստուած ողորմի։ Յիշեցէք՝* Ովանէսն, *կողակիցն՝* Ծաղիկն, *հանգուցեալ որդին՝* Բարդաղմոսն, Միրզայխան, Վասվասն, Յուսումսիմէն, Նաշխունն, Մարանն, Մանիշակն, <*Աստուած*> Սամարքունի Անանային, *Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

Դարձեալ յիշեցէք Միտիքն, *կողակիցն՝* Գուլիստանն, *հանգուցեալ որդին՝* Բաղդասարն, Մոլքումն, Դասպարն, Ասատուրն, *կողակիցն՝* Թանիկն...։

1308

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8029 (ԺԴ գ.)

245ա *Յիշատակ է սբ. գիրքս տէր* Եղիեայ *քահանայի հոգոյն, որ ետ ի ձեռն տէր* Սիմէոն *անարժան աբե[ղ]ային իւր հոգոյն և իւր ննեցելոցըն։ Թվին ՌՃԸ (1659) հոգըտեմբերի Ա (1) օրն։*

1309

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1315 (1272 թ.)

Հետ. ստացող՝ Խաչատուր վարդապետ

1ա *Ի թուականիս Հայոց ՌՃԹ (1659) և ի նաւասարդի ի Ժ (10)*[8]*, ես՝* Խաչատուր վարդապետ *ստացա գիրքս զայս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ընտանեաց. և դուք, որք օգտիցիքդ ի սմանէ, յիշեսջիք զիս յաղօթս ձեր ի Քրիստոս. ամէն։*

1310

ՏՕՆԱՑՈՅՑ, ՀԱՐՑՆԱՑՈՅՑ, ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ

ՈՏՁՄՎ, № 688

Գրիչ՝ Յոհան քահանայ

Վայր՝ Թալաս

179 *...Արդ՝ շնորհիւ տեառն Աստուծոյ գրեցաւ Տօնացոյցս և քաղուածոյս ըստ իւրաքանչիւր աւուրց ի միասին, ի թվականին Հայոց ՌՃԸ (1659) ամի և կատարեցաւ հոկտեմբերի Ի (20), աւրն հինգշաբթի*[9]*։ Գրեցաւ ի գիւղն Թալաս, ընդ հովանեաւ Ա. Թորոսին, ձեռամբ [յ]ոգնա-*

---

[8] *Այսինքն, հոկտեմբերի 17-ին և քանի որ հայոց ՌՃԹ տարին սկսվում է 1659 թ. հոկտեմբերի 8-ին (շարժական տոմարով), ուստի հայոց ՌՃԹ տարեթվի նավասարդի 10-ը (հոկտեմբերի 17-ը) կընկնի 1659 թ. մեջ։*

[9] *Շարժական տոմարով ՌՃԸ (1659) թվականի հոկտեմբերի 20-ն իրոք հինգշաբթի է, իսկ 1658 թ. միևնույն ամսաթիվը՝ չորեքշաբթի։ Դուցե օրվա պատկերն է սխալ նշված, այնուամենայնիվ դրեցինք 1659 թ. շարքում, թեև ՌՃԸ տարեթիվը, համաձայն հայոց շարժական տոմարի, սկսվում է 1658 թ. հոկտեմբերի 8-ին (հին տոմարով), բնական է, որ հայոց ՌՃԸ թվականի հոկտեմբերի 20-ը կընկնի 1658 թվականում։ Տոմարական մեր դիտողությունը տե՛ս № 1191 հիշատակարանի № 3-րդ ծանոթագրությունում։*

մեղ անձին սուտանուն Յոհան քահանային, որ անունս ունիմ, գործս՝ ոչ։...

1311

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՅԻՈՅ

Երևան, № 2831

Գրիչ՝ Մկրտիչ Լէճցի
Վայր՝ Տաթև

ա

60ա Զսբ. գրոցս սաացօղսն զսբ. ուխտն Շատկու նորաշէն անապատիս միաբան եղբայրութիւնս, հանդերձ գծագրիւս ծնողիւք իւրովք, յիշեցէք ի Քրիստոս։

բ

358ա Հայցեմ զսբ. եղբարսդ գրիչս բծաւոր,
Սրբել աղօթիւքդ զանձն իմ մեղաւոր,
Ցիշել և ղծնօղս իմ ի մաղթանս բանաւոր,
Ողորմութիւն շնորհել յայն օրն ահաւոր[10]։

գ

383 Ներսէս որ է տեսօղ։

Թվին ՌՃՀ (1659) նոյեմբ[երի] Ա (1) աւարտեցաւ ի փառս Քրիստոսի փրկչին մերոյ, ձե[ռա]մբ Ղազարի որդւոյ՝ Լէճցի Մկրտիչ ապեղիս, ի վանս Տաթևու ի Ղաբան, յօրն երեքշաբթի, յորում ձիւն անկանէր։

Երախտաւորաց մեր և աշխատաւորի սպասաւոր Յակոբին Տէր տացէ վարձս ընդ գրչիս. ասացէք ամէն։

1312

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԻՆՋ, № 74

Գրիչ՝ Միքայէլ քահանայ

ա

88 Զանպիտան մեղսամած Միքայէլս, աղաչեմ յիշել ի Տէր։

բ

Զմեղսամած փծուն ծրողս Միքայէլ քահանայս, աղաչեմ առ սր. և պատուական ընթերցողդ [յիշել] ի Տէր. թվին ՌՃԹ (1659)-ին նոյեմբերի Լ (30)-նեկին։

---

[10] Հայոց ՌՃՀ (1659) տարեթվի նոյեմբերի 1-ն իրոք երեքշաբթի է։ Գրիչ Մկրտիչ Լեհցին թեև տարեթիվը նշել է հայկական շարժական տոմարի նման, բայց սկզբունքի տեսակետից նա հետևել է լեհերի տոմարական հաշվումներին։

1313
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2459 (ԺԷ դար)

66բ Յովանէ[ս]ն վաղշանեցաւ սբ. Հակոբայ բարակե[ն]դ շաբաթ օրն, թվին ՌՃԹ (1659)-ումն[11]. ամէն։

1314
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 131

Գրիչ՝ Ալէքսիան քահանայ

Գրեցաւ Կիպրիանոսի,
Թվականիս հայկազանի,
Հազար հարիւր ութի (1659) ամի,
Դառն և դժվար ժամանակի։
Փրծուն գրծող քահանայի,
Միայն անուամբս Ալէքսիանի,
Ոչ թէ գոբծովրս նմանի,
Մեղօք ի լի անարժանի։
Զի կարըն մեր այս կու բերի,
Եւ աշակերտ Ստեփանոսի,
Եմ փախըստեան Ծաղկեձորի,
Հալածական անօրինի։
Կամ հիացեալ դողման ահի,
Գունդք ժողովեալ պարսիկ ազգի,
Յիսուս Որդի Հօր միածնի,
Նա ազատի ազգ քրիստոնէի։

1315
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 190

Գրիչ՝ Վարդան արեղայ

ա

329ա Ո՛վ մանկունք սբ. Սիոնի,
Հարք և եղբարք աւազանի,
Վարդան գրչակս մեղաւք ի լի,
Ձեզ աղաչեմ սիրով սրտի։
Յորժամ որ կայք միշտ աղաւթի.
Կամ ընթերցաւղ սբ. մատենի,
Յիշման առնէք զիս եղկելի,
Յիշեալ և դուք ի Քրիստոսի։

---

[11] Հայոց ՌՃԹ տարվա Ս. Հակոբի բարեկենդանը կլինի 1659 թ. դեկտեմբերի 12-ից մինչև 17-ը (շարժական տոմարով), այստեղից էլ դեկտեմբերի 12-ը երկուշաբթի է, իսկ 17-ը՝ շաբաթ։ Նշանակում է մահը տեղի է ունեցել 1659 թ. դեկտեմբերի 17-ին։

Կատարեցաւ սա ի ամի,
Զրհոս անուամբ տանուտէրի,
Ի թուականիս Ռ ամի,
Ճ և Ը թիւ աւելի (1659)։

Բ

329բ [Գ]րեցաւ սա ի յամի,
Զրհոս անուամբ տանուտէրի,
Թվին ՌՃԸ (1659)-ի
Տգեղ ձեռամբ ծուլ Վարդանի:
...։

Գ

387գ Երես անկեալ աղաչեմ վասն աղօթիւք ձեր, յիշատակել զեղկելի գծագրող ոչ արեղայս Վարդան:

1316
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1153

Գրիչ՝ Յունան

Ա

166ա Զգծող սորա զանպիտան, մեղօք լցեալ Յունանս յիշեցէք և դուք յիշեալ լինէք ի Հօրէ...։

Գրիչ՝ Միքայէլ քահանայ
Վայր՝ Սպահան

Բ

310ա Արդ՝ աւարտեցաւ աստուածաշունչ տառս ի քաղաքն, որ կոչի Սպահա<հա>ն, ի դրանն Սրբոյն Յակոբա[յ] Մծբնա[յ] հայրապետին, ձեռամբ մեղաւք լցեալ և ապիրատ Միքայէլի, ի խնդրո[յ] Բարսեղ կրաւնաւորին, զոր տէր Աստուած վայել տացէ, ի թվականիս Հայոց ՌՃ և Ը (1659) ամին։

Ես եմ Մուքէլ ողորմելի,
Եւ քահանայ մեղաւք ի լի,
Որ եղկելիս զկարգն առի,
Եւ զպատուիրանն ոչ պահեցի։
Այս մեկնիչ գիրքս գրեցի,
Սպահան քաղաք Պարսկաստանի,
Ով որ կարդայ կամ հետևի,
Ըզմեզ յիշէ ի աղօթի,
Անփորձ մնայ ի յաշխարհի,
Առքայութեան արժան լինի։

1317
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ
Երևան, № 1255 (1644 թ.)

271ա Դարձեալ վէրջի ստացող սբ. տառիս Ղազար վարդապետ Փուզանդացի, թուին ՌՃԸ (1659). ամէն։

1318
ԳԻՐՔ ՄՈՂՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՅ
Երևան, № 1469

Գրիչ՝ Կոզմաս

314բ Անբաւ է չարիքս իմ Տէր, անհամար խարեաց սատանայ,
Նմանիմ անառակ որդոյն, ի հօրէն իմ բաժանեցայ,
Ճիշտ առի զբաժին և յօտար երկիր վարեցայ,
Մեծ և վայելուչ փառաց, փոխանակ խոզարած եղայ։
Ի սաստիկ սովու նեղեալ չարաչար վիրաւորեցայ,
Նորօգող հացին փոխան, կերակրոց խոզից ցանկացայ,
Յուզեալ տեսութեան մտացս և յանկարծ ապա իմացայ,
Եղուկ մեղուցեալ անձինս, զի անճառ լուսոյ հեռացայ։
Գարշ պէսպէս աղտիւք լցայ, հազար վայ աւուրն որ ծնայ,
Պարտապան մեղաց գտայ, զլուսեղէն զգեստն մերկացայ,
Ջանամ և առ Հայր դիմիմ կարդալով ասեմ Հայր մեղայ,
Բաբունից էից ստեղծիչ, թողութեան դիս արժան արա։
Եղեալ եմ բազում ամաց և զմահու օրն մոռացայ,
Վախեմ թէ մեռնիմ մեղօք ինձ յետին համարն մնայ,
Լալով աղաչեմ զքեզ Տէր, քո արեամբդ եմ գնեալ ծառայ,
Մի՞ թողուր զիս ի ձեռ[աց], սբ. խաչիւ քո, զիս պարըսպեա։
Ի քեզ եմ յանձնեալ սբ. Կոյս ս///ւ բարեխօսեա,
Մեղսասէր Կոզմաս գրչիս [մի]թէ նա յահեղին գթայ։
Գրեցաւ թվին ՌՃ-երորդի և երկ քառի (1659),
Ի վայելումն Խաչատուր քաջ բաբունոյն[12]։

1319
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Երևան, № 1510 (ԺԶ դ.)

ա

Հետ. ստացող՝ Յովանէս վարդապետ

613բ Ես՝ Յովանէս վարդապետ, որ վաճառեալ էի զԱսմաւուրս վերստին գալստեան իմոյ ի Վայոյ ձոր ի թվիս ՌՃ և Ը (1659) վասն կնքոյն իմոյ, այլ լինելոյ զայս գծեցի և կնքեցի միոյս կնքաւ իմով, զի ոք այլ և այլ մի՞ արասցէ վաճառումն սորա, քանզի Փիլիպոսի հոդ[և]որ տէրն հրամանաւ վաճառեցի ի ժամանակին, որ նուիրակ և վէքիլ էի նորա։ Դաւաճանք առ իս եկեսցեն. բաւ է։

[12] Ձեռագրում «Խաչատուր»-ը ավելացվել է նախորդի անունը շնչելուց հետո։ Հավանաբար սա այն անձնավորությունն է, որը ձեռագրի 171ա էջում թողել է հիշատակարան, այն տեսնել 1694 թ. շարքում։

Բ

615ա Ես՝ Յովանէս բանի սպասաւոր հրամանատար Հայոց տեառն Փիլիպոսի վաճառեցի զԱսմաւուրս կամաւ նորին Ծատուրին որդոյ Ղամպարին: Ապա մի՛ ոք իշխեսցէ ընդ սմա դաւի առնել, քանզի Փիլիպոս կաթողիկոսի հրամանաւն վաճառեցաւ Ո[վ] ոք բան ինչ անիցի, առ մեզ եկեսցէ։

Եւ սորա վկայ է՝ Գրիգորն, Սարգիսն, Կի[ր]ակոսն. սոքա Փնձաթաղու։ Սրկղունցի Հայտարղու[լ]ին, Ուկղվանցի տէր Յովանէսն, Հայրապետ եպիսկոպոսն վկա։

1320
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1586

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Ղալասար

370ա Փառք..., // որ ետ կարողութիւն տրկար անձին իմոյ և տարտամ հոգւոյ և մեղսամած մատամբ սուտանուն Պաւղոս հասանել ի վերջին գիծ աստուածաշունչ Շարակնոցիս։ Եւ արդ՝ ես ամենամեղս և անարժանս ի մէջ կարգաւորաց Պօղոս անպիտան և մեղուցեալ չէրէցս, ըստ իմում տկարութեանս յանձս առի և ամենակարող զաւրութեամբն Քրիստոսի կատարեցի մեղսամատամբս իմով տասանիցն, ի յերկիրս աստուածապահ Սալմասա, ի գ[ե]օղն որ կոչի Ղալասար, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին, ի յառաջնորդութիւն Եսայի քաջ բարուն վարդապետի, որ է աթոռակալ սբ. ուխտիս Բարդղմ[իոսի] առաքելոյն /// ի թագաւորու-
370բ թեանս փոքր շահ Ապասի, // ի թըվականութեանս Հայոց ՌՃԸ (1659)։ Եբոբդին։

Եւ արդ՝ երեսս անկեալ ըղձեղ աղաչեմ, դասս լոյսերամ քահանայիցդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ, սբ. և արժանաւոր յաղաւթս ձեր ըղբարեմիտ և հեզահոգի։

1321
ԺՈՂՈՎԱԾՈՅ
Երևան, № 1714

Ստացող՝ Յոհան Կարճաւանցի

150ա Արդ՝ կողկողագին և գետնամած տենչանօք հայցեմ ի վայելողացդ այսմ բնագիր արտաքնոցս, յիշեսջիք սերտ սիրով զտէր Ղազար քրիստոսատենչ քահանայն, զնոտար մեծի հայրապետին Մովսէսի, որ զարտաքնոց բնաբանս մինչև ի Պերիարմենասի վերջն գրեալ և ինքն ի թվոյս ՌՁ և Ե (1636) ամին ի տիս երիտասարդութեան վաղճանեցաւ[13]։ Գ (3) անգամ պատարագեալ զՔրիստոս ի յանապատն Ստաթէի։ Եւ ես՝ Յոհան մասամբ աշակերտ նորին, առեալ նշան սիրոյն, որ առ նա պահեցի մինչև ցթվականն ՌՃ և Ը (1659), և ապա այլ զայլ ինչ որ կայ ի սմայ ետու գրել,

[13] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

և ի մի տուփ արարեալ կազմեցի սակս յիշման նորին և ինձ մեղապարտիս. ի ժամանակս Յակոբու սրբազան հայրապետին Ջուղայեցու: Վասն որոյ յիշեսցի վասն սիրոյն Քրիստոսի տէր Ղազարն ցանկալի և Յոհանես բանի սպասաւոր տեղեաւ Կարնաւանցի, որ ի յԱրևելք գաւառի, որ այժմս Մեղրի ասի։ Եւ ինքն հեշտալուրն մեղ և ձեզ ողորմութիւն արասցէ ի միւսանգամ գալստեանն. ամէն։

1322

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 2175

Գրիչ՝ Շմատն

Վայր՝ Երնջակ

219ա Ծառայդ եմ պարոնտէր, թողութիւն շնորհեսցես, ձմեռն անկաւ այլ չկարացի գրել, անմեղադիր լեր, զի կար մեր այտ էր։ Գրեցաւ ձեռամբ Շմատն փծուն գրչի, թվին ՌՃԸ (1659), անուամբ միայն կրօնաւորի։ Երընջակայ Ս. Կարապետումն գրեցաւ։

1323

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2277

Գրիչ՝ Յոհաննէս երէց

ա

154ա Ի թուականութեանս Հայոց Ռ-երորդի Ճ-երորդի և Ը (1659)-երորդի ես՝ պիտակ անուն և տխմար, սուտանուամբ Յոհաննէս իրիցուկս, որ եմ ի գեղջէն Ապահինու, եկի ի սբ. աթոռոս Գանձասար, ի պատրիարգութեան Աղուանից տեառն մեծին Պետրոսի[14]։ Եւ այս սուղ ինչ քերականութեան արհեստս ծրագրեցի թեկամբ իմով։ Բայց աղերսեմ զձեզ, ո՞վ ոք որ հանդիպիք սմա վերծանելով կամ օրինակելով, թողութիւն շնորհեցէք սակս վրիպմանացս կամ խոշոր և վատ գրոյս, քանզի կար մեր այս էր. տինա յոյժ վարանեալ և տարակուսեալ կայ ի մտօքս, վասն զբաղմանաց աշխարհիս։ Կրկին մաղթեմ յիշել մու Հայր մեղաւ զառածեալս մեղօք։

բ

Գրիչ՝ Յոհան

234բ Հայցեմ յիշել գիս եղկելիս,
Զտառապեալ Յոհան գերիս,
Գոլով ի կարգ քարոզ բանի,
Գործս ունելով ոչ յիշելի։
Սիրով զանուն ես ստացայ,
Ջանիւ ի գործն ոչ մխեցայ,

[14] Ձեռագրում «ի պատրիարգութեան... Պետրոսի» հատվածի վրա այլ մելանով, թերևս ուրիշի կողմից, գիծ է քաշված։

Բայց յոյս ունիմ ես յարակայ,
Մաղթել ղեղբարսդ իմ գերակայ։
Ունել զհայցուածս վասն իմ առ նա,
Որ համայնէց է Տէր արքայ,
Զի մաքրեսցէ զյանցանս իմ նա,
Առնել սրբեալ և մերձակայ։

1324
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2567

Գրիչ՝ Գրիգոր Զեթունցի
Վայր՝ Եդեսիայ

ա

31ա Թվին ՌԾԸ (1659) գրեցաւ գիծս ի Եդեսիայ, ձեռամբ Գրիգոր վարդապետիս Զեթունցւոյ, որ եկի ի Նորոգումն անդրանիկ եկեղեցեաց մօրն լուսոյ Ս. Աստուածածնին տեառն տաճարին։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք...։

Սարգիս

բ

97բ Եւ այժմ զանարհեստ գրչիկս՝ Սարգիս՝ աբեղայս յիշել ի Տէր աղաչեմ...։

1325
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ
Երևան, № 2693

Գրիչ՝ Ալիքսանոս երէց

ա

292ա ԶԱլիքսան. չերէցս յիշեցէք աղաչեմ, ոհ Տէր։

բ

442ա Ստացող տառիս յոյժ ցանկալի,
Մարտիրոս ///[15]
Գովեալ գնտին սբ. Պետրոսի,
Ի բարեաց լի և անթերի։
Որ ցանկացաւ հոգով ի լի,
Այս քաղցրահամ բուրաստանի,
Մեծին Դաւթի երգարանի,
Մեկնեալ Ներսէս Լամբրոնացի։
Մաղթեմ յիշել ըզգեղկելիս,
Թարմատ զԱլիքսանոս գէրիս,
Եւ տէր Աստուածն ամենիս,
Ողորմեսցի մեզ յիշողիս։

[15] Հաշորդ երկու բառը եղծված է. ուրիշներն ավելացրել են. «գրիչս գրեցի»։

Գ

492ա Եղբարք իմ աղաչեմ յիշել զսրբասնեալ քահանայս զտէր Վարդան, որ սրբայքերեաց զդիրքս թվին ՌՃԸ (1659)[16]։

Դ

497բ Շլացած աչքունք,
Թարշամեալ շրթունք,
Անիմաստ մտկունք,
Անարուեստ մատունք,
Կորդացեալ ձեռունք,
Կոկացեալ մջկունք,
Ծոկոեալ ծնկունք,
Գօսացեալ ոտունք։
Ցնծա և գոհացիր աւրհնէ և գովէ և փառաւորէ զմարդասէրն Աստուած որ հասոյց զոչինչս և արժանացսյց ի յաւարտ տառիս /Ռ/Ճ ///

1326
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 3415

Գրիչ՝ Տիրատուր

348ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՃԸ (1659), ձեռամբ մեղաւոր Տիրատուր գրչի, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր. և որ յիշէ զմեզ՝ յիշեալ լիցի արքայութիւնն Աստուծոյ. ամէն։

Այլ և յիշեցէք զտէր Մարգարն, որ բազում աշխատանք կրեց՝ թէ՛ քերելն, թէ՛ կոկելն. աղաչեմ զձեզ Հայր մեր ասացէք։

1327
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 3542

Գրիչ՝ Աւետիս քահանայ
Վայր՝ Պապճան

Ա

297ա Փառք...։

298բ Եղև զրաւ գրչութեան քրիստոսախօս և տիեզերալոյս սբ. Կարմիր Աւետարանիս ի թուաբերութեանս հայկազեան տոհմի հազար հարիւր և ութ (1659) ամի, խաղաղութիւն ժամանակի, յերկիրս Վերին Զագամ, ի դեղս Պապճան կոչի, ընդ հովանեաւ Ղար[ա]մուրատի յանապատի։ Եւ առաջնորդ սբ. ուխտիս պարաւնտէր Գրիգոր կոչի, նաև սրբազան հօրն՝

[16] Մատենադարանի ձեռագրերի ցուցակում սույն ձեռագրի ժամանակը նշված է 1652—1659 թթ. (հտ. Ա, էջ 856), իսկ ժամանակագրական ցանկում՝ 1667 թ. (հտ. Ա, էջ 1349)։ 1667 թ. վերաբերյալ հիշատակարաններում հաղորդումներ չգտանք։ Ինչպես երևում է գ հիշատակարանից, ձեռագրի սրբագրությունը կատարվել է 1659 թ., ուստի սույն հիշատակարանները պայմանականորեն դրեցինք 1659 թ. շարքում։

տէր Տէրունի, որ բազմացոյց զդասս կրօնաւորի։ Գծագրեցաւ և ծաղկեցաւ
209ա ամենափրկիչ Աւե//տարանս ձեռամբ փանապի, անարհեստ Ա, էռ, բդ, դռ, ժժ, բռ, ժժ[17] սուտանուն քահանայի, ուսուցչի իմոյ քաջաբան տէր Սխիթարի աննման վարպետի. ի յԱդվանից աթոռս Գանձասար կոչի։ Հայրապետութիւնն տեսուն Պետրոսի Երիցս Երանելոյ և նորընծայ կաթողիկոսի, և առաջնորդ Երկրիս մերում տէր Սարգիս վարդապետի և քաջ բարունապետի և սմին բանի համեմիչ և առաջնորդ տէր Յակոբ շնորհազարդ քահանայի. Աստուած ի յինքն փառաւորի։

Եւ արդ՝ ցանկացող և ստացող հղեալ սբ. Աւետարանիս Պասակերեցի Հախումն, որ էառ սբ. տառս և մտաւ ածեալ զբանն տէրունական, որ ասէ.
209բ «Երանի...»։ Եւ այսու խորհրդով էառ զգիրքս ի հալալ, արդար վաս//տակոց, յիշատակ իւրն և իւր ծաղկեալ դուստր և որդւոցն, որք են թվով որդիք հինգ՝ մինն է հանգուցեալ և դուստր Ե (5)։ Առաջի որդին տանուտէր Էդկարն և ամուսինն իւր՝ Սօյքանն, և որդին Նազարն և այլոցն, Ավանին և կողակցին՝ Հուռումսիմին, [և որդոցն՝ Մխիթարին, Ղօրխ]մազին[18] և միւս եղբօրն՝ Սարուպէկին, նաև Յովանիսին, որ հանգեաւ առ Քրիստոս և ամուսնոյն՝ Մարգարտին և որդւոյն՝ Ղազարին. ևս հանգուցեալ դստերն՝ Թէզին, Մանպուրին. մանաւանդ պանծալի և նորընծայ Բարսեղ քահանային և կողակցին՝ Սէվախանին, և դստերցն՝ Շիրինպա-
300ա ցին, Թէզին. և միւս // եղբօրն՝ Գանջին և կնոջն՝ Եղսաբեթին։

Ցիշեցէք և Աստուած ողորմի ասացէք հանդիպողդ՝ Հախումին և կողակցին՝ Գուլխաթանին, որք առին զգիրքս իւրեանց հոգոյ բաժին և ետուն իւրեանց որդի Բարսեղ քահանային։ Էլ ոչ ում բան չկայ՝ ո՛չ եղբօր, ո՛չ ազգականի։ Մեր կամաւ տուինք ի ձեռն տէր Բարսեղ քահանային, մեր յարգանդէ ծնեալ որդոյ։ Այլ և այլ բան չկա՝ ո՛չ եղբօր և ո՛չ ազգականի, ո՛չ օտարի և ո՛չ բարեկամի։ Այս եղև մեզ յիշատակ և մեր հոգոյս փրկան։ Ով ոք հանդիպի սմա կարդալով կամ օրինակելով կամ գաղափարիւ, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք Հախումին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Բ

137բ Զգծագրող և զմրող նորասքանչ սբ. Աւետարանիս անպիտան Աւետիս յիշեա <և> և Աստուած զքեզ յիշէ։

1328

ՊԱՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Երևան, № 3573

Գրիչ՝ Աղամալ

Վայր՝ Սուրաբ-Բանդար

155բ Ի Հայոց տումարիս Ռ թուական,

Ճ և Ը (1659) յաւել հարայբադ[ե]ալ կան,

---

[17] Ծածկագիրը կարդացվում է «Աւետիսի», այսպես՝ Ա, էռ=ւ, բդ=ե, դռ—տ, ժժ—ի, բռ=ս, ժժ=ի։

[18] Ուղղանկյուն փակագծերում եղածը գրված է այլ ձեռագրով։

Ես գրիչս էի Շօշ քաղաքական,
Ջուղայոյ գեղջէն քրիստոսայդաւան։
Տառս է դրեալ տնօրինական,
Ոչ թէ իմում մտաց, այլ օրինական,
Ի քաղաքիս Սուրաբ-Բանդար ծովական,
Ի զարիպութիւն տեղիս որ է Հնդուսաան։
Ի մէջ եկեղեցոյս, որ է աւգնական,
Ի ամէն զարիպի նավ տանի հանգըստեան։
Փառք քեզ Հա[յ]ր և Որդի հոգիս շնորհական,
. . . . . .
Աղամալ անուամբս է վաճառական,
Հա[յ]րն իմ՝ Մալխաս, մայրն իմ՝ Թիրվանդան,
Ըսկիզբն եղի բանիս եհաս կատարման,
Ձեռամբ իմով գրեցի օրինակի լադինական։
Լալով ձեզ աղաչեմք ընդերձողք սրբազան,
Որք լի սրտիւ ասէք վասն իմ Հայր մեղայն,
Աստուած զձեզ աւրհնէ անփոյծ, անսասան[19]։

1329
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3979

Գրիչ՝ Պետրոս քահանայ
Վայր՝ Ղուլթիկ

ա

79բ Զբազմամեղ գրծողս զՊետրոս սոսկ անուամբ քահանայս աղաչեմ զձեզ յիշել ի Տէր զզառածեալս, ո՛վ ը[ն]թերցող։

բ

100ա Զթխտի կոկող զտէր Յուսէփն յիշեցէք ի սբ. յաղօթս։

գ

134ա Արդ՝ գրեցաւ գիրքս ասացուածոց հաւաքեալ և շարադրեալ խորին և նուրբ տեսութեամբ, և լուսաւոր իմաստութեամբ հայազնի վարդապետացն մերոց և հողևոր նախնեացն և լուսաւորչացն և Յոհաննու Սրուանեցոյն, որ մականուն Կախիկ կոչի, որ կախեալ էր զբանէն Աստուծոյ և Գրիգոր Տաթևացոյն՝ երկրորդ լուսաւորչի[ն] և նորոդողին Հայոց. զոր թէ ոք անյագ լիցի յընթեռնուլն սորա, փարթամասցի առ սմա լցեալ գանձիւքն աստուածային, ի թվին Հայոց ՌՃԸ (1659), ընդ հովանեաւ Ս. Յովանէսին և Ս. Գէորգայ զօրավարին։

դ

136բ Արդ՝ գրեցաւ գիրքս ասացուածոց ի յերկիրն Բաղիշու, ի գիւղն որ կոչի Ղուլթիկ, ընդ հովանեաւ Ս. Յովանէսին և Ս. Գէորգայ զօրավարին

[19] Ձեռագրի 206ա էջում գտնվում է փոքրիկ հիշատակարան, ուր հիշված է միայն գրչի ծնողների անունը։

և Ս. Յունանին, որ շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ սոցին կատա-
137ա *րեցի։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զամենեսեանսդ, որք // օգտիք ի սմա-*
նէ ընթերցմամբ կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր
ղիս՝ զանարժան գրիչս Պետրոս, և զծնողսն իմ՝ զտէր Յուսէփն, և զմայրն
իմ՝ զԽանդէն, և զեղբայրսն, և զամենայն ազգատոհմսն իմ։ Այլ և հո-
գևոր ծնողին և ուսուցանողին իմոյ՝ Մեսրոպ բարունապետին, աղաչեմ
զհանդիպողսդ յիշեցէք և զսոսա ի սբ. յաղօթս ձեր։ Եւ թէ ոք ողորմի-
ասի...։

1330
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 4032

Գրիչ՝ Նորոունկ վարդապետ
Վայր՝ Հրեշտակապետաց վանք

ա

182բ *Փառք..., որ արժանաւորեաց զանարժանութիւնս իմ հասանել յաւարտում աստուածախօս մեկնութեան սբ. Մաթէի Աւետարանի, ի շրջագայութիւն հայկազան թուականի ՌՃԸ (1659)։ Ես՝ անարժանս ի բանասէրս* Նորոունկ[20] *վարդապետս Հռոմկլայցի, սիրատարափ ըղձմամբ սկսայ սատարութեամբ Հոգոյն Սրբոյ գծագրել զծածկեալ գանձս աստուածային սբ. Աւետարանիս։ Արդ՝ աղաչեմ, որ ընթեռնուք կամ օրինակէք կամ դաս ասիցէք, յիշեսջիք ի Քրիստոս, զի զանարժանս և զծնօղս իմ և զաշխատող սորա, որ զթուխթս կոկեաց զԽաչատուր սարկաւագն և զմիաբանութիւնս մեր, որ կեամք ի սբ. ուխտս Հրեշտակապետ* Սեաստ[21] *քաղաքի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի*[22]*։*

բ

Յօրինակն այսչափ էր, յիշատակարան Արիստակիսի *զայն որ կատարեալն էր չգտաք, անմեղադիր լիշիք*[23]*։*

1331
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4101 (1603 թ.)

Նորոգող՝ Շմաւոն աբեղա, Յակոբ սարկաւագ

ա

573 *Արդ՝ նորոգեցաւ սբ. Աւետարանս ի դրան* Երինջակայ *Ս. Կարապետին, ձեռամբ* Շմաւոն *աբեղայի և.* Յակոբ *սարկաւագի, ի թուականութեանս Հայոց ՌՃԸ (1659) ամի, ի հայրապետութիւնն տեառն սրբազան* Յակոբ *կաթուղիկոսի և մերոյ Ս. Կարապետիս առաջնորդացն* Եսայեայ

---

20 Անվան սկզբնական գիրը ջնջված է և ավելացված է «Նորոունկ» անունը։

21 «Հրեշտակապետ Սեաստ» անունները ավելացված է սկզբնապես գրվածը ջնջելուց հետո։

22 Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռագրից թերթ ընկնելու պատճառով։

23 Խոսքը վերաբերում է նախագաղափար օրինակի հիշատակարանին, որը գրված է նախքան բ հիշատակարանը։

և Ղազար վարդապետացն. և միաբանք սոցին՝ տէր Արիստակէսն, տէր Շմաւոնն և տէր Զաքարիայն. և սարկաւագունքն՝ Պետրոսն, Յակոբն և զՄարգարայն յիշեսջիք ի Քրիստոս. ամէն։

Բ

Դարձեալ յիշեցէք զՍ. Շողակաթիս քահանայքն՝ տէր Սիմէոնն և տէր Պօղոսն, և դպիրք սորին՝ Աստուածատուրն, Մարգարէն և Սարգիսն, որ կան միշտ ի սպասաւորութիւն Ս. Շողակաթիս։

Գ

Արդ՝ ստացող սբ. Աւետարանիս Ճանկեցի Շաճրիստանն, կողակից է Յոհաննիսին, ստացաւ սա ի հալալ<ալ> ընչից իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Փիրիշանին և մօրն՝ Բէկուն, եղբարցն՝ Ջինանշին, Բայրամին, դստերացն՝ Սեվլուն, Կայիդխանին, Մարիամին, Բէկին, և որդոցն՝ Եղիկին և Առաքելին. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՇաճրիստան, որ ստացաւ սբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ փրկութեան իւրոյ, որ ետ յիշատակ ի դուռն նորակնունք Ս. Շողակաթիս, որ այսմ ամի օրհնեցաւ. Ով որ այս տեղացս հանէ կամ ծախէ՝ նզովեալ եղիցի. ամէն։

1332

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 4130

Ստացող՝ Առաքել Դավրիժեցի

Յիշատակարան գրոցս

349ա Փառք...։ Շնորհիւ և ողորմութեամբ բարերարին Աստուծոյ յանկ ելեալ և եզերեալ կատարեցաւ աստուածախօս, և հոգեկեցոյց, և իմաստազեղ սուրբս այս՝ Քարոզգիրքս, ի մեծ թվականութեանս Հայոց հազարերորդի հարիւրերորդի յութերորդի (1659), որոյ սկիզբն եղեալ էր ի ՌՃԷ (1658) թվին, ի կաթողիկոսութեան աստուածազարդ և երիցս երանեալ և հոգեընկալ հայրապետին ամենայն Հայոց տեառն Յակոբայ, յաջորդի աստուածանկար և լուսակառոյց սբ. յաթոռոյն Էջմիածնի, որ ի Վաղարշապատ քաղաքի. ի թագաւորութեանն Պարսից Երկրորդ շահ Ապասին։ Արդ՝ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ և տրուփս ի հոյլս բանասիրաց Առաքեալս կոչմամբ[24] ևեթ վարդապետ բազմայօժար փափագմամբ ցանկացող եղէ այսմ աստուածաշունչ մատենիս գրոյս քարոզի, ստացայ զսա և ետու դրել աստուածապարգև արդեամբք իմովք, յաղագս երից պատճառաց. նախ՝ ի մխիթարութիւն ի զբօսանս և ի սփոփանս չանարդի անձին իմոյ, ի տրտմաթախիծ կենցաղումս ցորքան իցեմ պանդխտութեամբ

[24] Իմա՞ Առաքել Դավրիժեցին։ Սույն ձեռագրում պահվել է 1681 թ. հիշատակարան (էջ 352բ)։ Վերջինիս հեղինակը՝ Առաքել Դավրիժեցու աշակերտ Ղազար վարդապետ Թավրիզեցին ահա թե ինչ է գրում իր ուսուցչի մասին. «Այլ և բուն Քարոզգիրքս այս, որ է Բ (2) հատոր՝ Ամառան և Ձմեռան, լի և անթերի, և ևս աւելի այլուստ հաւաքեալ և ի մի տուի բովանդակեալ երշանիկ բապունապետն և վերջին պատմագիրն Առաքեալ վարդապետն» (էջ 352բ, ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

գրաւեալ ի վրանս Կեդարու։ Երկրորդ՝ յուսովն որ առ Աստուած ի հատուցանողն բարեաց, որ և ոչ անտես արար զվարձս միոյ բաժակի ջրոյ ցըրտոյ։ Երրորդ՝ զի եղիցի սա ինձ անմահ որդի և առիթ յիշատակի առ վայելողսդ բարեպաշտօն, որոց և յաջորդեսցի ժառանգել զսա յանցն իւր դարս և ի ժամանակս։ Նաև անլռելի հայցմամբ բարառնաբար մաղթող յիմս կուսէ, նազելի հարցդ և եղբարցդ, սմին պատահողացդ զինչ և իցէ կերպիւ՝ եթէ ժառանգելով, եթէ օրինակելով, եթէ ընթռնլով, եթէ հարեվանցի տեսութեամբ զբօսնելով... բոլորով սրտիւ և հաստատուն հաւատով շնորհեցէք մեզ զխնդրելին մեր, այսինքն՝ Քրիստոս որդի Աստուծոյ միով Հայր մեղայիւ։ Ոչ միայն ինձ ապաշնորհիս և քանքարաթաքոյց ծառայիս Քրիստոսի Առաքեալ վարդապետիս, այլ և ամենեցուն, որք ունին երախտիք և աշխատանք ի գիրքս յայս զինչ և իցէ կերպիւ՝ եթէ յոլով և թէ սակաւ գրողացն, ծաղկողին, կազմողին, նշըշտողին, կոկողին և այլոցն ամենեցուն. մանաւանդ Վարդան սարկաւագին՝ հոգևոր որդեկին իմ և աշակերտին, որ յոքնակի աշխատանս կրեաց ի վերայ գրոյս ի նաշօղտելն, և ի սրբագրելն, և հանապազ առ գրագիրսն, և առ ծաղկողն, և առ կազմողն երթևեկ առնելով յարդարէր զգործն մինչև ցկատարումն, որում Տէր լիցի վարձահատոյց։

Յիշեսցին աստանօր ձերովդ հաճոյական մաղթանօք, առ Տէր ողորմած և հոգևոր ծնօղն մեր ճգնազգեաց հայրապետն ամենայն Հայոց՝ տէր Փիլիպոս կաթողիկոսն սբ. Էջմիածնայ, որ սնուցեալ հասոյց ի յարրունս հասակի, և վեհագոյն պատուոյ վարդապետութեան, և եպիսկոպոսութեան արժանացոյց զանարժանս, և աստուածային և սբ. գրոց տեսութեամբ լուսաւորեաց զմիտս մեր, որում տէր Յիսուս Ճշմարիտ վարդապետն լիցի
349բ վարձահատոյց։ Ընդ սմին յիշեցէք ի Քրիստոս զփառազարդ և զ//մեծապատիւ իշխանքն՝ զքալանթար Աղաբաբէն և զնորին որդին՝ զքալանթար Իսկանդարն ամենայն ընտանեօք իւրեանց, վասն զի չորս դաստայ թուղթ նոքա շնորհեցին, զորս խառնեալ ընդ այլոց թղթոց գրոցս և դրեցաք։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զմարմնաւոր ծնօղն մեր, զպապն իմ՝ զխաչատուր և զմամն իմ՝ զՈւսաիանէն, զԳրիգորն և զԳուլումն՝ և զհայրն իմ և զմայրն իմ, և զեղբայրն իմ՝ զԿիրակոսն, որք են սոքա ննշեցեալք ի Տէր։ Իսկ զկենդանիսն մեր՝ զաւաք եղբայրն իմ՝ զՄարաիրոս և զնորին որդիքն՝ զՄանուկն և զխաչատուրն, և զկրսեր եղբայրն իմ՝ զՆուրիշանն և զնորին որդիսն՝ զԳալուստն և զՓիլիպոսն, յիշեցէք...։

Դարձեալ այլ ևս յուշ առնեմ վեհագոյն և արգոյական հարցդ և եղբարցդ, յաղագս գանձիս հոգևորի և ցանկալի սովփերիս և աստուածախօս կտակիս այսմիկ, որ զՁմռան հատորն և զԱմռան հատորն ի միում տփի տեղաւորեալ կազմեցաք[25], ոչ թէ պատահմամբ և թարց խորհելոյ, այլ պատահեալ սուղ ինչ պատճառ որով արարք. նախ և առաջին՝ զի յորժամ հանդերձեաք ասել քարոզ ի Ձմեռան հատորէն պիտոյանայր ի նոյն կարգ

[25] Ձեռագրի առաջին մասը՝ Ձմռան հատորը (էջ 1ա—352բ) ընդօրինակվել է առանձին, 1659 թ., իսկ երկրորդ մասը՝ Ամռան հատորը (էջ 359ա—693ա) 1641 թ. առանձին։ Ապա 1659 թ. այդ երկու հատորները կազմել են մի կազմում։ դրա համար էլ 1659 թ.հիշատակարանը ձեռագրի առաջին կեսում է՝ 349ա—350ա էջերում, իսկ 1641 թ. հիշատակարանը՝ երկրորդ կեսում՝ 687բ—688ա էջերում։ Վերջինս տե՛ս իր շարքում։

և ի շար խօսիցն, բան ինչ որ ի յԱմռան հատորին էր, և խնդրելին ձեռն պատրաստ ոչ լինէր առ մեզ գտեալ։ Սոյնպէս պատահէր և յասելն ի յԱմռան հատորէն և մնայաք կարօտ բանին այնմիկ։ Եւ ըղձացեալ ցանկայաք մեծաւ բաղձանօք օշ թէ լինէր, մերձ մեզ պիտոյացեալն հատոր առ ի տեսանել, և ոչ լինէր, զի ծանրաբեռնութիւն թըւէր երկու գրոց շուրջ ածելն, և մանաւանդ որ ոչ ունեաք։ Վասն որոյ վայելուչ համարեցաք զերկու հատորն ի մի տուի կազմել, որպէսզի ի բառնալն ընդ ինքեան ոչ լինիցի ծանրաբեռնեալ, մանաւանդ ի ժամ հարցնատեսին և ի մտածել բանին, ընդ որ հատոր և յառաջեսցի ոճն և տեսութիւն բանին, զայն հատոր և զբան վաղվաղակի առ ձեռն պատրաստ բանալ և տեսանել և զուարճանալ ի փառս տուողին բանի Հոգւոյն Աստուծոյ։ Երկրորդ պատճառ՝ յետ կատարման Ամռան հատորին յորժամ կազմեցաք, տեսաք երկայնութիւնն և լայնութիւնն ընդարձակ և ճապաղ էր, և թանձրութիւն և հաստութիւնն բարակ էր, վասն որոյ յամենայն ժամ ազդէր ի սիրտս մեր, թէ Զմռան հատորն դիր ընդ իս, զի լցցի թերին իմ։ Այլ և եղբարք ամենեքեան, որք տեսանէին, այնպէս վկայեալ քաջալերէին։ Արդ՝ եթէ ի բաբակութենէ տըփին, և եթէ ի յորդորմանէ եղբարցն, և եթէ ի պահանջելոյ ոճոյ և մտածութեան քարոզին, և եթէ յօժարութենէ սրտից մերոց, հոգացաք զգիրքս այսպէս։ Աստանօր զվերոյ դրեալ ազաչանսն կրկնեմ և յոքնակի պաղատանօք խնդրեմ ի ձէնջ՝ վասն երկուց այս հատորացս, զոր ընդ միմեանս եդեալ ի մի տուի կազմեցաք։ Մի գուցէ որոշեալ տրոհիցէք ի միմեանց, զի հանդերձ վերոյ գրեալ պատճառօքդ կարի առաւել և յաւէտ յաղագս յիշատակի այսպէս արարաք և ոչ թէ սակաւ աշխատութիւնս կրեցաք մինչ ցայսպէս առնելն։

Եւ թէպէտ ըստ բարոյից մարդկան որ բնաւորեալ է, ումեմն այսպէսն թւի պատշաճաւոր և ումեմն այնպէսն։ Այլ մեք զսէրն Քրիստոսի միջնորդ արարեալ առ ձեզ աղաչեմք, զի մի՛ բաժանեալ անջատիցէք զերկու հատորն ի միմեանց. և թէ ոք գոռոզացեալ մտօք բաժանիցէ զսոսա և անտես առնիցէ զաշխատանս և զաղաչանս մեր, մանաւանդ զսէրն Քրիստոսի,
360ա զոր միջնորդ բերաք, և ինքն բաժանեսցի ի Քրիստոսէ, և լսիցէ զայն // որ ասէ. «Կտրեցէք զդա ընդ մէջ, և հանէք ի խաւարն արտաքինն»։ Դարձեալ յայտ լիցի ամենեցուն, զի բաղում գրոց պատահեալ եմք, որ զյիշատակի թուղթն կտրեալ են, և կամ զգիր անուանն եղծեալ են։ Արդ՝ յոքնակի քան զառաջին աղաչանքն աղաչելով խնդրեմ, մի՛ առնիցէք զչար սովորութիւնն զայն, այլ թէ կամիք զձեր յիշատակն ևս գրել, ի բազում տեղիս սատակ թուղթ թողեալ եմ, զձեր յիշատակն անգ գրեսջիք, և զմերն թողջիք, զի ի պատահոզացն Աստուած ողորմի առցուք։ Եւ եթէ ոք յանգգնեալ ջնջեսցէ՝ և ինքեան անունն ջնջեալ եղծցի ի գրոյն կենաց և մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ...։

Հանդերձ վերոյ գրեցելովքդ յիշել մաղթեմք զնազելի և զհանճարաշնորհ կուսակրօն քահանայն՝ զտէր Ատեփան, որ բարեաց եղև ըղձացեալ սակս առ ի ձէնջ յիշելոյ ի Տէր օժանդակ եղեալ մեզ ի սրբագրութիւն գրոյս բազում ջանիւ և օգտիւ, որոյ լիցի վարձահատոյց ինքն Քրիստոս հաճոյական մաղթանօք ձեր. ամէն։

1333
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 4183

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

383ա Փառք...։ Գթութեամբ և մարդասիրութեամբ է-ին Աստուծոյ յանդ ելեալ աւարտեցաւ եղանակաւոր տառս տէրունի ի լրումն կաթուղիկէ եկեղեցւոյ ըստ քատակութեան վիմին կեփայեան նախագիծ շարադրութեան մարմնոյ գլխոյն պսակեալ գլխոցն, յաւդաշար միութեան զըստ յաւդականիս մերոյ զկերպ և զգաղափար պաղպաջուն իրագործեալ ըստ եթերականացն խորհրդազգածութեանն եզ առ մու կենսեղուտ սպետափառեալ։ Որոյ ցանկացաւղ լեալ յետինս ի գրիչս և փանաքիս ի քարտուղայս, չուառըս և աղկաղկս յամենայնի և մոռացեալ գիս և զընիկ տկարութիւնս ցանկացաւղ եղեալ սմա, թեպէտ և յոյժ անընբոն ապաւինեալ յայն որ տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ, ձեռնարկեցի սմա ես՝ Նիկողայոս Թարմատար մելանաւորս հասի ի ստրաւ գրչութեան սորա, ոչ թէ ըստ արհեստիցս և զաւրութեան անձինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանի մարդասիրին ամենայն, որ խնդրէ՝ առնու։

Արդ՝ ցանկացաւղ եղեալ այսմ պատուական գանձարանի այրս այս նազելի Խաչերեսն՝ ետ դրել զսա յիշատակ հոգւոյ իւր ե. կողակցացն՝ Ախպիֆային և Գոհարպիֆային, հարսն՝ Սարգսին, մարցն՝ Քուլաֆ խաթունին և Եաղութին, եղբաւրն՝ Աստուածատուրին, քւերցն՝ Խաթունպիֆային և Պիֆաշային և ամենայն արեան մերձաւորացն. և եդ ի դրունս Սրբոյն Թէոդորոսա[յ] ղաւրավարին, յիշատակ անջնջելի ի վայելումն մանկանց Սիոնի։ Արդ՝ որք հանդիպիք սմա երգելով կամ գաղափարե-
383բ լով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր // զԽաչերեսն, որ բազում սիրով և փափաքանաք ետ դրել ի քսակէ գանձից իւրոյ, վերակացութեամբ տէր Խաչատուր քահանայի։ Խնդրեմք ի Տեառնէ, որ զինքն ընդ երկայն աւուրս արասցէ և յետ աստեացս ելանելոյ ընդ սբ. քահանայիցն դասակցեսցէ իւր սբ. արքայութեանն իւրում։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի հոյակապ և ի հռչակաւոր մայրաքաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգ[ի]ս ղաւրավարին, ի հայրապետութեան տեառն Յակոբայ ամենայն Հայոց կաթուղիկոսի և յարհիական եպիսկոպոսութեան տեառն Գրիգորի, որ ի յայս ամի փոխեցաւ առ Քրիստոս, զոր տէր Աստուած ընդ սբ. հայրապետացն պսակեսցէ։

Արդ՝ աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոյ դրեալքս և զՄկրտիչն, որ բաղում աշխատութեամբ աշխատեցաւ ի գրելն սորա, նաև զԹղթիս կոկոզն և զաշխատաւդն ի սմա և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, յորժամ գայ ի նորոգել զպատկեր խոնարհութեան մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Թվին ՌՃԸ (1659)-ին եղև աւարտ։

1334

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Նոևան, № 4559

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Գասապագ

ա

3ա *Որ ողորմի ստացողի գրոցս* Ալէքսանին, *և ամուսնոյն՝* Խանսօլթանին, *և որդոցն՝* Միքայէլին, Եղիշին, Սիմէոնին, Աստուածատրին, [Աղա]պալի[ն] *ընթերցողին և մատնագէտ գրչի* Յովանիսի: *Այլ և կարդացողաց...։*

բ

659ա *Փառք..., // որոյ շնորհօք և յօժանգակութեամբ յանկ ելեալ աւարտեցաւ գերափառ և հոգիազարդ տառս, որ կոչի Յայսմաւուրք, ձեռամբ յոգնամեղ և անպիտան, գործօք աղտեղի և մեղօք լի* Յովանէս *անարժանի, ի թուականիս Հայոց ՌՃ և Ը (1659) ամի։*

Վասն դի, որք մեծութեան ընչից ըղծանան ոչ ինչ աշխատութիւն ղմտաւ ածեն, այլմէ յայլ անցանեն ընդ գաւառս հեռագնացս ուղևորութեան, որպէսզի շահն աճեցուցանել մարդասցին և այլքն... օտարասէր առնս Ալէքսան *և որդին իւր՝* Միքայէլ *որ յեռափափագ սիրով ցանկացան... //*

666ա *...յայսմ երանաւէտ մեծութեանս...։*

Արդ՝ ես Ալեքսան *ծառայ Աստուծոյ, ըստացայ զսբ. մատեանս աստուածազարդ, յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղացն, հօրն իմոյ՝* Սիմէոնին *և մօրն՝* Սառիկին, *եղբարց և քերց իմոց հանգուցելոց, մանաւանդ* Աստուածատուր *երկրորդ հօրն իմոյ, որ բազում երախտիք ունի ի վերայ իմ։*

660բ *// Վասն որոյ աղաչեմ զդասք սրբազան ընթերցողացդ, որք հանդիպիք յայսմ կտակի, սիրով ընթեռնուցուք զյիշատակարան գրոյս և յիշեսջիք յաղօթս ձեր զ*Ալէքսանն, *ամուսինն՝* Խանսօլթանն, *որ եռափա[գ սիրով ստ]ացան զսա յի[շատակ իւրեա]նցն և նախնեա[ցն* Ալէքս]իանոսի, *հօրն՝* Սիմէոնին *և մօրն՝* Սառիկին, *պապուն այլ անուակցին իւր՝* Ալէքսիանոսին *և հանկանն՝* Եթար *խաթունին, և հօրեղբօրն՝* Կարապետին *և կնոջն՝* Հուռումին, *և իւր եղբարցն՝* Խաչատրին, Մինասարին. *և քրւերցն՝* Խաթունին, Մանանդին. *և որդոցն՝* Միքայէլին *և կենակցին՝* Եղիսաբեթին, *ե սոցա որդոցն՝* Ղազարին, Ամքին, *զորս երկայնակեաց պահեսցին. և հանգուցելոցն՝* Խաչատրին, Հախնազարին: *Եւ երկրորդ որդոյն՝* Եղիշէին *և կնոջն՝* Սայիպին, *և սոցա որդոցն՝* Մինասարին, Պաղտասարին, Ասկանին. *և դստերացն՝* Շանանդուխտին, Մանուշակին, Եթարին: *Եւ երրորդ որդին՝* Սիմէոնին *և կենակցին՝* Հուռումին, *և սոցա որդոցն՝* Խաչատրին, Հախնազարին: *Եւ չորրորդ որդին՝* Աստուածատրին *և ամուսնոյն և կենակցին՝* Խանզատին, *և սոցա որդոցն՝* Ատեփսին, *և դստերն՝* Եղիսաբեթին: *Եւ կրսեր որդոյն՝* Կեսարիոս *սարկաւագին, որ* Աղապալի *վերաձայնեն, և ամուսնոյն՝* Նազլուիանին *և դստերն՝* Փալաքնազին, *և դստերացն՝* Ալէքսանին, Մարիամին, Շանանդխտին *և ամենայն ծնընդոց և զաւակաց նոցա։ Այլ և հօրեղբօրն՝* Ալեքսանին, Կարապետին *և անեերացն, որ են ծնօղք ամուսնոյն իւրոյ, հօրն՝* Աղապեկին *և մօրն՝* Շանումին, *և եղբօրն՝* Ատեփսին, *և քրւերն՝* Սալվինազին *և ամենայն աղգաց նոցին...*

Դարձեալ յիշեցէք կրկնակի ևս առաւել զաւագ որդին Ալէքսանին՝ զՄիքայէլն և թողութիւն խնդրեցէք...։

Դարձեալ յիշեցէք զմեղօք ղառածեալս և զվաղխայթեալս, թափուրս... զՅովհաննէս փցուն գրիչս և զծնօղսն իմ՝ Ղազար քահանայն և Գուլճանն. և Աստուած որ առատն է...։

661ա Շնորհիւ տեառն սկսաւ և ողորմութեամբ նորին կատարեցաւ զաստուածապատում մատեանս ի յերկիրս Նամքոր, ի գեօղս Գատապագ[26], ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և սբ. հէրձանիս վախմ է յեկեղեցոյս, ձեռամբ յոգնամեղ և բազմավէր, հէդ Յովհաննիսի, ի թուաբերութեանն յաբեթականս տոհմի ՌՃ և Ը (1659)-ի. ի հայրապետութեան տեառն Պետրոս կաթողիկոսի տանս Աղուանի սրբոյ աթոռոյն Գանձասարայ վերադիտողի. և ի մենաստանին Զարեհանն Շամքորու Հ (70) ճգնազգեաց կրօնաւորացն, առաջնորդի տէր Սարգիս բարունապետի, և առաջնորդութեանն Քարդման գաւառի տէր Դաւիթ արհեպիսկոպոսի։ Եւ ի ղանութեանն Գանձակայ՝ Մուրթուզաղուլին, որ էր խաղաղարար ըստ օրինին, թէպէտ ծնունդ էր Մահամմատին, այլ գովելի էր իւր ազգին և հաւատար հայկեան զարմի։ Եւ ի թագաւորութեան կարմրագլխին՝ փոքու Ապազին, որ այսմ ամի զօրագլուխ և պէտ ծառայիցն իւրոյն գնդի Ալլահվէրդի անուն, առաքեաց ի Վրաց աշխարհն և հրամայեաց բերթորայս շինել Գ (3) տեղիս. վասն ղի ՌՂԷ (1648) թուին էառ զորդի Թամրազ խանին՝ Բագրատունին Ըռուստամ և փախոյց զԹամրազն ի Պաշաչուխն և ինքն տիրեաց աշխարհին մինչի ԺԱ (11) ամն։ Եւ [ՌՃԸ (1659)] թուին մեռաւ [Ռուստամ] խանն Բագրա[տունի], յոյժ խաղաղարար աշխարհի և նստաւ յետ նորա Պատօնաշուիլի, որ անուանեցաւ Շահնավազ. և իրիցթաւն, որ էր պարոն Ղարաղա խանին, ոչ միաբանեցաւ ընդ Շահ[նա]վազա խանին, այլ ելեալ գնաց ի դրունս արքունի և չարախօսեաց զնմանէ։ Վասն որոյ տեսեալ զոչ միաբանութիւն Վրացն, առաքեաց զուլար աղասին Ալլահվէրդի խանն, որ եկեալ ամարեաց ի լեառն Սիւնեաց և առաքեաց Ղազախ Ջամալ խանն և Պօզչալու Ցիսա խանն և Նախչուանայ սուլթանն, զի շինեսցէն երիս բերթս ի Վրաց տուն ///

1335

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4599

157ա Թողութիւն արէք հարք իմ և եղբարք, հին գիրք էր, թուխթ էր անկեալ, այլ օրինակ չկայր։

Թվն ՌՃ և Ը (1659)։

1336

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 4677 (ԺՍ դ.)

63բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աւետիս անարժան էրէցն, որ նորոգեց

[26] Գանձակից հարավ-արևմուտք, մոտ 50 կմ. հեռու, Շամքոր գետակի ձախ ափին,

զայս ճառս և եթ Ս. Անանանային, յիշատակ է Տկուց[27]. ամենեք[ե]ան Աստուած ողորմի ասացէք...։

Գրեցաւ թվին ՌՃՀ (1659)։

1337

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6772

Ստացող՝ Մանուսի Վարդան

Վայր՝ Նոր Ջուղայ

ա

1բ Նկարի շրջանակում — *Ցիշեցէք ի Քրիստոս զտէր* Առաքելն, *զծնողսն իւր։*

բ

2ա Նկարի շրջանակում — *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* Յակոբջանն. *ամէն։*

գ

29բ խաչաձևի ներքևում — *Ցիշեցէք ի Քրիստոս քաղցրիկ* Խանասաիկն *և մայրն իւր։*

դ

30ա խաչաձևի ներքևում — *Ցիշեցէք ի Քրիստոս զ*Մարգարն *և մայրն իւր՝* Մաղիքն։

ե

32բ *Ջստացող սորին զ*Վարդան *մահդասին յիշեցէք ի Քրիստոս և ղուք յիշեալ լիջիք...*

Թվին ՌՃՀ (1659)։

զ

116բ *Ով պատուական տեարք իմ և վարդապետք, աղաչեմ զձեզ յիշել զանարժան [Վարդան գծ]ողս։*

է

175բ *Աշխատող սբ. Աւետարանիս յիշեցէք զ*Վարդան *սարկաւագն և զվարժապետն իմ՝ զքաջ հռետոր զ*Առաքել *բարունապետն, և զազգակից հիքոյս զ*Սանակ *վարդապետն, և զեղբայր նորին՝ զ*Նահապետն, *և հոգոյս հարազատք զտէր* Ատեփէն *և զ*Ոհանն։

ը

331ա *Ծառոյ...։*

330ա *Յամի հազարերորդի հարիւրերորդի և ութերորդի (1659) թուիս ա-*

---

27 Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է, որ այս վանքը գտնվում է «ի մէջ Բզնունեաց գաւառին», Արծկեի հյուսիսարևմտյան կողմում։

րամեան տոհմի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, *ի*
335բ Վաղար//շապատ *քաղաքի ի դահ իշման Միածնի բանի և ի թագաւորութեան տոհմի Իսմայելի փոքերն շահ* Աբ<աբ>ասի *երկրորդի։*

Արդ՝ ես ունայնս ի բարեաց և վրիպեալս Վարդան *անուամբ ևեղ մահդասի կոչեցեալ, գոլով աշակերտ տիառն* Առաքելոյ *բաբունապետի մեծի, որ ի վաղ ամանակաց դոյր տենչումն ներբաղձանաց սրտիս յաղագս այսպիսի ցանկալի սովփերայ, որ և իմ պատահեալ ընդ հոգևոր տեառն* Յակոբ *կաթողիկոսի և ընդ վարդապետիս իմոյ ի տեառնաշէն և աստուածապահ գեղաքաղաքն* Նոր Ջուղա, *մերձ յարքայանիստ քաղաքին* Ըսպահանայ, *ըստ գրոց* Շօշ *կոչեցեալ, բաղում աշխատութեամբ և հոգաբարձութեանց ոմանց քրիստոսասիրաց ընտացաք զայս սբ. Աւետարանս, որ ոսկէզօծ և երանկ երանկ գունիւ յօրինեալ զպատկեր տնօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ սոսա համաբարբառն, որպէս և տեսանէիք իսկ, յիշատակ հոգւոյ նոցա և ինձ աղցաւորիս ան-*
336ա *մահ որդի//...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զաշխատող սբ. Աւետարանիս զպարոն Մարտիրոսն, *պարոն* Սաեփաննոսն *և մահդասի* Սահակն, զՍիրզիանն *և* Աստուածատուր *սարկաւագն, որ ծաղկեաց սբ. Աւետարանս. զքրիստոսասէր և բարեպաշտ կանայքն՝* զԵղսաբեթն, զԽաթայի, զՍոլթափաշէն, զՓառանձին, զՈւղուրլուն *և* զԽանփարի, զԹագոյին, զՓաթանն, *և* զՎառվառն։ *Ոմանք զոսկին շնորհեցին և ոմանք գնոյն օժանդակ եղեն. որոց փոխարէն վարձուցն վարձատրողն ամենայնի հատուսցէ նոցա...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհոգևոր և զմարմնաւոր ծ//նողքն իմ, որ բազում աշխատանք ունին ի վերայ իմ, որոց փոխարէն վարձուցն բարերարն Աստուած հատուսցէ նոցա...։ Ընդ նմին և զՍահակ *բաբունապետն, որ է արեանառու ազգակից հիքոյս։ Նաև հարազատ հոգւոյս զտէր* Յովսէփն *նորընծայ քահանայն, և մահդասի* Յոհանն, *և* զՄկրտիչն՝ *հարազատն իմ, պահեսցէ Տէր երկայն աւուրքք...։*

336բ *Դարձեալ երեսս ի գետինն եղեալ աղաչեմ բարէպաշտօն վայելողացդ, մի՛ առնէք զչար սովորութիւն ոմանց, որպէսզի կամին թէ զ[յ]իշատակն կտրել և զիւրեանցն գրել՝ այնպիսին ընդ ուրացողսն դասեսցէ և մասն Յուդայի առցէ։ Եթէ կամիշիք զձեր յիշատակն գրել, ահա թողեալ եմ բազում տեղիս սադա թուղթ, եթէ կամիք զձեր յիշատակն գրել, անդ գրեսշիք և զմերն աստ թողշիք։*

Գրիչ՝ Սարգիս

Բ

266բ *Ընտացող սբ. Աւետարանիս զմահդասի* Վարդանն *յիշեցէք ի Քրիստոս...*

267ա *Թվին ՌՃ և է (1658) գրեցաւ գեղաքաղաքն* Նոր Ջուղայ, *//[ձեռամբ սուտանուն* Սարգիս *գծողիս, յիշեցէք ի գծնողն իմ* Մարտիրոս*] //)* և զՓարիխանն, *զի արքայութեան արժանի լինիք...*[28]։

---

[28] Ձեռագրում ուղղանկյուն փակագծերում եղածը միտումով չնշված է, բայց կարդացվում է։ Չի կարդացվել միայն մեկ բառ։

ծ

Ծաղկող՝ Հայրապետ

39բ Զմեղաւոր Հայրապետ նկարողս յիշեցէք ի Քրիստոս, ով հայրք։

Նկարի շրջա-
ա-
կում

ժա

Գրիչ՝ Փիրիմալ

336բ Դարձեալ յիշեցէք զմեղապարտ Փիրիմալն, որ անուամբս եմ սուտ և գործովս յիրաւ, որ գրեցի յիշատակարանն. յիշողն յիշեալ լիցի։ ամէն։

1338
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 7220

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Կ. Պոլիս

136բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Մաշտոցս ի Կոստանդինուպոլսի, ի դուռն Ս. Սարգսայ զօրաւարին և որդւոյ նորայ Մարտիրոսին, ի թուականութեանս մերում Հայոց ՌՃԸ (1659) ամին, ձեռամբ յոգնամեղ և տարտամ ոգոյ Աստուածատուր սուտանուն երիցուս. և ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տեառն տէր Յակոբ կաթողիկոսի[29]։

1339
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7874 (1374 թ.)

Նորոգող՝ Լուսեղէն դպիր

267ա Փառք...։ Արդ՝ նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղսաներկ և մոխրաթաւալ Լուսեղէն դպրէ։ Եւ եդին յիշատակ սբ. Աւետարանս Գրիգորին հոգոյն, օրն՝ Սէլվիեարին, մօրն՝ Շահնէզէն[ին, եղ]բօրն՝ Սարգիսին, Մարտիրոսին, քրոջն՝ Անահտաքունին, Մարիա[մի]ն, Ճուճարին, Գ[իլ]վարդին և ամենայն արե[ան մերձա]կայիցն։ Ի [թուական]ութեանս հ[այո]ց ՌՃԸ (1659)։ Ոչ ոք չուն[ի իշխ]անութիւն հանել ի դրանէ Ս. [Աւ]գսէնդ եկեղեց[ոյ]ս։ Ով ոք յանդգնի [ձ]եռնամուխ աբաս[ցէ] կամ գրաւելով՝ նզովեալ լիցի...։

1340
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7881 (ԺԷ դար)

302բ Դարձեալ յայսմ ամի[30], որում սբ. Աւետարանս ստացաւ, ի հիմանէ սկիզբն եղև Ս. Գրիգորի եկեղեցւոյս Գաղայ և ի գալ միւս ամին աւար-

---

29 Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

30 Իմա՛ 1658 թ.։ Հիշատակարանը տե՛ս այդ թվականի շարքում։

տումն եղև ի թվին ՌՃ և ութին (1659), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

1341
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8388 (1357 թ.)

360ա Փառք...։ Վերըստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ ոմն անարժանի, ի խնդրոյ տէր Գրիգոր սրբազնամաքուր քահանայի, ի վայելումն յանձին իւրոյ և ի քաւութիւն մեղաց իւրոց և ծնողաց իւրոց Պարոնֆային և Պիֆալրիւին. և կենակցին իւրոյ՝ Սէֆէրպիֆային և եղբարցն՝ մահտեսի Միհասին և Խութլուշային, և զաւակացն՝ տիրացու Պետրոսին և տիրացու Յովհաննիսին, և դստերացն՝ Շիրինին, Հեղինէին և Ճուճարին և ամենայն զարմիցն։ Եւ է յիշատակ ի դուռն Ս. Յոհաննիսին, յիշատակ անշնջելի։ Ոչ ոք չունի իշխանութիւն հանելոյ զսբ. Աւետարանս ի դրանէ Ս. Յոհաննիսին։ Յայսմ ամի հանգեաւ տէր Գրիգոր քահանայն ի Քրիստոս, որ էր թվական Հայոց ՌՃԸ (1659). Աստուած ողորմի ասացէք, որ Տէրն ձեզ ողորմի. ամէն։

1342
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 10075

Գրիչ՝ Մարտիրոս Կամրկապցի

84ա Ահդ՝ ծըրեցաւ փոքրիկ տառի,
Նոյտար դպիր Մարտիրոսի,
Որ ի երկրէն եմ Ակրնցի,
Եւ ի գեղջէն Կամրկապցի։
Յեղի իմում Միսաք կոչի,
Թոռ ծերագուն մեծ Տօլվէթի,
Որդի Միսաք հացագործի։
Ի մանկութեան ժամանակի,
Ամաւս իմով ԺԸ և ութի (18),
Մահն պատեաց զիս խղճալի։
Ով հանդիպօ եղբայրք բարի,
Դուք հանդիպիք այսմ տառի,
Աղերս խընդրեմ աղետալի,
Ցիշման առնէք մի Հայր մերի։
Այլ և զվարպետս իմ Պօղոս դրպրի,
Որ ի երկրէն էլ Բալրցի,
Ուսուց նա ինձ գրրչագրրի,
Աշխատութեամբ զայս գրեցի։
Ներումն առնէք իմ սրղալի,
Եւ հայկազեան թվականի
Հազար հ[ար]ի[ւր և] ութի (1659)։

1343
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10299

Գրիչ՝ Վրդանէս երէց
Վայր՝ Լոր

ա

232ա *Փառք..., որ եւ կարողութիւն տկար և անարժան, մեղաւոր* Վրդանէս *իրիցու։ Գրեցի աւետարանս տառս ի երկիրս* Որոտան, *ի գեղս որ գոյի* Լոր, *ընդ հովանեաւ Ս. Գէորգեայ զաւրավարիս, ի թվականիս Հայոց ՌՃԸ (1659), ի հայրապետութիան սբ. Լ[ուսաւոր]չեան։ տէր* Յակոբին *և մերումս նահանկի մետրապոլ[տութեան] Սիւնեաց տեառն* Յոհանիսի *երջանիկ բարձունապետի։ Գրեցաւ սբ. Աւետարանս յիշատակ* Լճկեցի Սարքիսին, *և հաւրն նորա՝* Մկրտչին, *և մաւրն նորա՝* Կուվարդին, *և* Սարքիսին <*իւր*> *կողակցին՝* Ճանսալթանին. *և որդիքն նոցա՝* Մեսրոբին *և* Մանկուն. *և դստ[եր]քն իւրեանց՝* Զիլփի[նն], Սանդուխտ. *և* Սարքիսին *եղբայրն՝* Յակոբին *և իւր կողակից* Հուսանին, Սարքիսին *հաւրեղբայրն՝* Կիրակոսին *և իւր կողակից* Թիրվանդին, *և որդիքն իւրեանց՝* Գրիգորին։ *Յիշե-*
232բ *ցէք զվերոյ գրեալս և //Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգոյն. ամէն...։*

Դարձեալ յիշեցէք ծերունի սրբասէր և սրբասնունդ քահանայն՝ տէր Թադէոս, *որ է հովիւ հոգևոր և դարձուցիչ չարեաց ժողովրդեանն լիճ-կեց[ւ]ոց և որդորեցուցիչ բարեաց առ Քրիստոս, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք Սարքիսն *և իւր կողակից* Ճանսալթանն, *որ իւրեանց հոգէպահուստն և իւրեանց մայրվն կալան սբ. զԱւետարանս։ Ո՛չ եղբաւրն և ո՛չ հաւրեղբաւրն չկայ դրամ ի մէջ վարձուց սր. Աւետարանիս։*

Դարձեալ որք հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, ողորմի ասացէք Վրդանէս *գրչիս և հաւրն իմ՝* Յոհանէսին *և մաւրն իմ. յիշողքդ՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։*

բ

Նվարատու՝ Սարգիս Լճկեցի

Ես՝ Սարքիս, *իմ կողակից* Ճանսալթան *կալանք Աւետարանս տվինք*
233ա *Ս. Գէորգին վախմ։ Ով որ հանէ սբ. եկեղեցոյս՝ // թէ՛ քահանայ, թէ՛ աշխարհական, թէ՛ իմ ազգէ, թէ՛ որդի, թէ՛ թոռն, ով որ ծախէ՝ նզովեալ լիցի սբ. առաքելոց, սբ. մարգարէից...։*

1344
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10403 (ժԼ դ.)

ա

79բ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր* Մարտիրոսն, *և զիւր կողայկիցն՝ զՀերիֆ, զորդին՝ զտէր* Կիրակոսն, *զկենայկից* Մարքան, Վարդերեսն, Ոսկիհատ, Առաքելն, Մարքան, Յովանէս, *քուր՝* Դալլաքն, *հաւրեղբայր՝*

Պողոսն, իւր կողայկից Մարքսն, զորդին՝ զՄիքայէլն, զկին զխանբեկիճ, եղբայր Նիկողոսն, և զամենայն արեան մերձաւորն, նոցա յիշեցէք...։
Ի թվին ՌՃԸ (1659). եղիցի։

Բ

Զտէր Սարգիսն և զորդին տէր Մարտիրոսն յիշեցէք ի Քրիստոս։

1345
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ

Գրիչ՝ Թուխման սարկաւագ
Վայր՝ Ցամիթ

Ա

133ա Փառք...։ // Արդ՝ դրեցաւ տպոս, որ կոչի Սաղմոսարան, որ է երգեալ մեծի Դաւթին..., թարգմանեցին ի դիրս Հայոց առ ի յուսումն և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ, քանզի սովաւ լինին և կատարին է (?) խորհուրդ սբ. եկեղեցւոյս։ Այլ և աւարտեցաւ սա ի թվականութեանս Հայոց ՌՃԸ (1659) ամ.ն, ի մայրաքաղաքս Տիգրանակերտ, որ այժմ Ցամիթ [յ]որջորջի, ի դուռն Ս. Սարգսի և որդւոյ նորա Մարտիրոսի, ձեռամբ զառածեալ և անիմաստ, սուտ և փուտ գրչիս՝ Թուխման սարկաւագի, որ անուամբս եմ միայն և գործիւքս ոչինչ և անպիտան։ Ցառաջնորդութեան մայրաքաղաքիս տէր Ոնոփրիոս դիտապետին և աստուածաբան վարդապետին, որ իբրև զշահ արփիափայլ լուսաւոր առնէ ազգս մեր դաս և քարոզ ասելով, զոր տէր Աստուած պահեսցէ զսա հաստատուն ի վերայ գաւազանի իշխանութեան իւրոյ, ի պարծանս ուղղափառաց և ի հերքումն երկարն//ակ հերետիկոսացն. ամէն։

133բ Արդ՝ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում... ներեցէք իմում տկարութեանս, խոշորութեանս և սխալութեանս, օրինակ չկայր ի մօտ յիս. Ե (5) Սաղմոսարանի վերայ է գրուէր՝ Ա (1) տետր Ա (1) Սաղմոսարանին, Ա (1) տետր Ա (1) Սաղմոսարանին, այսպէս աւարտեցաւ։ Եւ երկայնամիտ լերուք, զի կար մեր այս էր։

Բ

Զմեղաւոր, անարժան Թուխման գրիչս յիշեա քո սբ. բերանովդ, միթէ Տէրն ողորմեսցի ի հանդերձեալն ինձ...։
Արդ՝ աղաչեմ զձեզ, մանկունք եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի սբ. աղօթս ձեր զանարժանս. ամէն։

Գ

213ա Ով ընթերցողք յիշեցէք... զԹուխման սարկաւագս, որ միոյն Ճ (100) ապատիկ Ռ (1000)ապատիկ առցէք...

Դ

237ա Ախ, ախ ճանճի ձեռացն։

1346
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, Ձ՝ 10766

Գրիչ՝ Սարգիս երէց

312բ *Փառք...։ Գրեցաւ և ծաղկեցաւ աստուածաբուղխ սբ. Աւետարանս Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ, և անարժան, և անիմաստ մեղաւոր գրչի՝* Սարգիս *իրիցուն, ի թվականիս Հայոց ՌՃՀ (1659)։ Եւ ցանկացող եղև սմա հոդէսէր և բարեմիտ* Ուսկուտարցի *էսկիճի* Փիլիկին, *կողակցին՝* Աննային *և որդոյն՝ մահտեսի* Պողոսի[ն], *և* Պետրոսին, *և* Ըստեփաննոսի[ն], *և դստերն՝* Սերեանին։ *Եւ ըստացաւ զսայ ի հալալ ընչից իւրոց և եդ ի դուռն Ս. Կարապետին յիշատակ իւր <իր> հոդոյն էսկիճի* Փի-
31ա *լիկին, կողակցին՝* Աննային *և որդոյ[ն՝] մահտեսի* Պողոսի[ն] *և* Պետ//-*րոսին, և* Ըստեփաննոսին, *և դստեր* Սերեանին, *և այլ ամենայն առու արեան մերձաւորացն։ Եւ այլ ոչ ոք չունի իշխանութիւն հանել ի դրանէ սորայ՝ ծախելով և կամ գրաւելով, և կամ այլ ինչ իւիք. և եթէ ոք յանդգնի զմասն Ցուդայի և զանէծսն Կայենի առցէ։*

Արդ՝ աղաչեմ զձեզ, եղբարք, որք հանդիպիք ի սմա կարդալով և կամ յօրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զվերոյ գրեալսն, և Աստուած զձեզ յիշէ...։

1347
ՇԱՐԱԿՆՈՑ
ԼԱՍԺԻ, № A—46 (մանրաժապավեն, Երևան, № 185)

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Ալընդանց

ա

Նկարագրակ *Կարապետ պարոնտէրն է. խնդրէ զթողութիւն իւր և ծնողաց իւրոց։*

բ

Փառք... եռակի աստուածութեանն,

. . . . . .

Այս մատեն<են>ս աստուածաբան,
Զանազանեալ ականցս որ կան,
// Վարուք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճրգնողական։
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդւոց մարդկան.
Փափաքեցաւ իբրև դեղչերայն,
Ցաղբերրս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել եւ հրաշազան։
Զոր ես չարեացքս աւթարան,
Եւ ի բարեաց գործոցս ունայն,
Աւետիս *հոգս և անպիտանս,*

Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործական.
Հոգւովս յաւժար և ժըրաչան,
Բազում չանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լման։
Ի թվականիս Ռ-ամեան,
ՃԸ թիւ ընդ նմայն (1659),
Աւարտեցաւ սա ի լրման։
Որք հանդիպիք սմա տեսլեան,
Կամ վայելէք յայս // բուրաստան,
Ցիշման առնէք զմեզ արժան,
ԶԱւետիս հողս և անպիտան։

. . . . . .

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս և խնկալի տուփս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնեմեզ և անիմաստ գրչի՝ մեղաւոր Ասետիպի։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս Հայոց ՌՃԸ (1659), ի գլուս, որ կոչի Անրնդանց, ընդ // հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս. Գէորգա[յ] զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ յանաւրինաց, քանզի կս քան զկս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս, կս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան գրիչս զԱւետիս և ծնաւղքն իմ, զհայրն իմ՝ զՎարդան քահանան և զմայրն իմ՝ զՄանմուրն, և զպապն իմ՝ զԹումա քահանայն, և զվարպետն իմ՝ Կիրակոսն, և զտղայքն իմ՝ զԹումեկ, և զՎարդիկն, և զՇիրուն, և զխաչիկն, զԹանեկեկն, և զՑրխուն. Աստուած զնոքա անփորձ և անսասան կենաւք պահեսցէ յայսմ աշխարհիս...։

Գ

Եւ զստացող սբ. Շարակնոցիս, յիշեցէք ի Քրիստոս զԿարապետ պարոնտէրն, որ ստացաւ զսա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հօրն՝ տէր Յովսէփին և մօրն՝ Խաթունին, և կընոջն՝ Վարդխաթունին, և քևերցն՝ Մարգարտին և Նշխունին. և հաւրեղբարն՝ Սրապին և Մխիթարին, և հօրեղբաւր որդոյն՝ Յովանէսին. Աստուած զսոցին գործեցեալ մեղքն թողու...

1348

ՇԱՐԱԿՆՈՑ

«Բանբեր Մատենադարանի», № 11, էջ 364

Գրիչ՝ Կոսանդ սարկաւագ
Վայր՝ Կէց

ա

395ա [Փառք]...։ Արդ՝ եղև զրաւ տպագրութեան շքիրոնիս ձեռամբ անար-

395բ ժանէ, ի խնդրոյ ումեմնէ, ՌՃ և Ը (1659) թվի, ի դեզս որ կոչի Կէց[31], ընդ հովան[ե]օ Ս. Ստեփանոսէ և Ամենայն փրկչէ։

Որք հանդիպիք սրբոյ տառիս,
Ցիշման առնէք և զեղկելիս,
Նեխեալ մեղօք հոգո զերիս,
Որ տատանեալ կամ ի յոգիս։
Բայց սրմա ով որք դիպեսցի,
Գրծող տառիս այս յիշեցի,
Ցիշեալ լիջիք ի յատենին,
Զայն որ ասէ քաղցրը ձայնին,
Օրհնեալք հօրն իմ երկնօրին,
Ժառանգեցէք ըզձեր տեղին։

Աւրհնեալ է յամենայն ժամ, ամենայն սրբոց։ Ի յաթոռակալութիւն Սիւնեաց Ըստթադէի տէր Յովանիսի արքեպիսկոպոսի, կաթողիկոսութիւն սբ. էջմիածնա[յ] տեառն Յակոբայ, թագաւորութիւն փոքր շահ Ապասին Պարսից։

396բ Գրեցաւ ձեռամբ Կոստանդ սարկաւագին, հօրն իմ՝ տէր Մանուէլին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, զեղբայրն իմ՝ Գրիգոր քահանան, և զմայր իմ, և զորդիս իմ Կարապետիս։ Որք հանդիպիք սրմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք մաքրափայլ աղօթս ձեր առ Աստուած։ Դուք այլ յիշեալ լիցիք...։

Բ

||:: |||:: ||||.. ||||:: |. |||:: ||||:. ին

||:: |||:: ||||. ||||::[|.] |||:: ||||:: [32]

1349
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, լուսանկար № 170

Նորոգող՝ Տէր Յոհան

52 Արդ՝ ի վերջին ղարիս և անձկացեալ ժամանակիս ցանկացող եղեալ փրկական սբ. Աւետարանիս Խանիգուլ և ետ նորոգել և կազմել, ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց. Զի հացն զմարմինն բուծանէ, սա զհոգին կեցուցանէ...։

Սա յանգիտաց յոյժ հրաժարի,
Ե՛ւ իմաստնէ տենչալի,

[31] Սյունիքի Կովսական գավառում գտնվում է Կից անունով մի գյուղ։ Թերևս խոսքն այդ մասին է։

[32] Առաջինը կարդացվում է Կոստանտին, երկրորդը՝ Կոստան։

Պատճառ յիշման զայս կազմեցի,
Որ միշտ առնէք զմեզ արժանի։
Ի սոսկալի աւուր մեծի,
Կամքն Աստուծոյ ձեզ քաղցրասցի,
Ի Հայրապետարանն անառն տէր Յակոբի,
Եւ սրբազան կաթողիկոսի,
Քաջ և արի երանելի,
Խարազնազգեաց ճգնաւորի։
Ի թուականութեանս հայկազան տումարի,
ՌՃԸ (1659) ամի։

Զեռամբ անարժան, սուտանուն տէր Յօհանէս, որք հանգիպիք սմա կարդալով կամ օրինակելով..., յիշեցէք... նորոգել տուող սբ. Աւետարանիս հեզահոգի և բարեմիտ, կոյս և մաքուր Խանիգուլն, հայրն իւր՝ Ուլաղան[33] և մայրն իւր և եղբայրն իւր՝ հանգուցեալ Կիշաղան և Մրատն, եղբօր որդիքն իւր՝ Մարտիրոսն, Մարկոսն, Ղուկասն, Ղոշաղան ի մեղաց թողութիւն խնդրեցէք...։ Ընդ սմին և ինձ բազմամեղ տէր Յօհանին և զուսուցիչն իմ՝ Ղազար կուսակրօն աբեղայն, յիշեցէք...։

1350

ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ

Երևան, լուսանկար № 170

Գրիչ՝ Յօհան

31 Շնորհօք և ողորմութեամբ... Ե՛ս ամենանուաստ և ներգնեալ... Յօհան վատաշուէր և լոկ անուամբ բանի երևեալ սպասաւոր, բայց յոյժ ըստ գտմամբ յորշորշանս ի գործոյն հեռաւոր..., աշխարհաւ որոտնեցի,
32 // ըստ բնական տեղւոյ սննդեան տաթևացի, սնեալ և վարժեալ ի նախնի աթոռ հայկազունեաց սեռի սբ. կաթողիկոսարանին Էջմիածնի, որ առ այսու ժամանակաւ գեղեցկազարդ պայծառութեամբ շքեզացեալ գոյ հոգեվորին և մարմնաւորին սահմանաւորութեամբ ի ձեռն քաջ և առաքինասէր, ճշմարիտ հովուապետացն և կրկին լուսաւորչացն ազգինս խաւարաւ տգիտութեան և մոլար ուղեգնացութեամբ յափն մահու ժամանեցելոյ և խսպառ կործանեցելոյ սբ. Մովսիսի Տաթևացւոյ և Ֆիլիպպոսի Աղբակեցւոյ առ Քրիստոս գնացելոցն և նոցունց փոխանորդի և վեհափառ դիտապետի Յակոբայ Ջուղայեցւոյ, որոց ըստ արժանւոյն գովաբանութիւն և ցուցումն երախտիաց ըստ անձն իւր որդիանատրութիւնից, թէ զինչ և կամ ինչպէս վարեցան և արարին բազում և զանազան նորոգութիւնս կարգաց և կրօնից, չինուածոց և ապաբանից, այլոց ուշիմամտաց և հարստաբանից, քաջ ուսումնասիրաց թողցուք յիշատակել, և ըստ իւրաքանչիւրոցն արժանեաց հատուցանել դրուատս նոցունց գովեստից և միանգամայն բաւական համարեալ զառ ի հոլովից սակս նոցունց վաղագոյն ճառեցեալ վիպաբանութիւնս։ ... Որոյ գլուխ և առաջնորդ լեալ մեծ վարժապետն
33 Սիմէօն, որ էր տեղեաւ //Ջուղայեցի ի մեծ մայրաքաղաքին և թագաւո-

[33] Կարելի է կարդալ նաև Ուշաղա։

բանիստ արքայակերտցն Շօշայ, որ այժմ ասի Ըստաճան, որոյ ըստ տուեցելոյն նմա իմաստութիւնն յԱստուծոյ արարեալ քերականութիւնս նորոգս և զնրբին մանուածոյ շարադրութիւնս արտաքին դրոց դիւրացոյց և հեշտընկալ արար հետևողաց նորավարժից և հաւաքեալ ի Դէրք տրամաբանութեան անուանեաց։ Եւ յետոյ եպիսկոպոս լեալ նստաւ ի վանս Ս. Ամենափրկչին, որ ասի Հաւուց թաւ։ Եւ անզէն արարեալ բաղում նորոգութիւնս շինուածոց և դպրոցս կարգեալ, ուստոյ յոլովից զարհեստս իմաստից։ Միայն իմ չուառականիս անհաղորդ և ծարաւ ի նմանէ դտանելով և յետ ժամանակաց երթեալ քարոզութեամբ յաշխարհն Յունաց մեռանի ի քաղաքին Թոխատու, ոչ հասեալ ի հասակ ծերութեան և անդին հանգուցեալ կան մեծաւ պատուով նշխարք սբ. վարդապետին մերոյ, յորոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի...։

Իսկ ի ժամանակին յոքում այս ամենայն այսպէս կարգաւորեալ հաստատուր ի խնդիր եղեալ մեր մեծաւ փափագանօք կամէաք գտանել զօրինակ գրոցն ճարտասանութեան, որ է արարեալ մեծի քերթողահօրն Մովսիսի Խորենացւոյ, զորոյ անունն միայն էք լուեալ, բայց զինքն տեսեալ ոչ բնաւ, զի էր բնաւին անհետացեալ ի մերոյին գրոց և յետոյ դտեալ եղև յոմանց յարկեղս գրեանց սբ. ուխտին Սաղմոսավանից, որ է հանդէպ Յոհան[ա]վանից մերձ Արագած լերինն։

Եւ իմ առեալ զայն վատաշուէրս անձին, սիրալիր տենչմամբ գաղափարեցի և գրեցի իմովս տխեղծ մատամբ և խոշորացեալ անարհեստ և վատերանգ գրչագրութեամբ անհմուտ գոլով այսմ գործառնութեանն, բայց զփափագ սրտիս միայն կամելով լնանիլ յօժարիցի քան զկար ձեռնարկել։ Եւ եղև թիւ աւարտման սորա յամի հազարերորդի հարիւերորդի ութի յաւելուածի (1659), ի վերադիտողութեան սբ. և երջանկափառ մեծ հայրապետին վերոգրեցելոյ Յակովբայ Ջուղայեցւոյ, և ի թագաւորութեան

34 *<Թուրքաց> Պարսից շահ Ապպասի փոքու։ // Եւ գրեալ եդաք ընդ սմին զբանս իմաստասիրացն զնախերգանս և զաւրհնութիւնս լիով և զսահմանս ժողովեալս և կարգեալս ընդ Սահմանացն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ի վայելս և ի զրոսանս անձանց մերոց և յետ մեր, ում Տէր տացէ ժառանգել։ Բայց զերեսս ի գետին խոնարհեցուցեալ ժտեմք և աղաչեմք, կողկողագին պաղատանօք և մոխրամած դիմօք զընթերցողսդ և զգաղափարողսդ և վայելողսդ, զի միով ողորմեսցին և լիաբերան ձայնիւ յիշեցէք, զհոգինն հանգուցեալ առ Քրիստոս սրբազան վարդապետացն մերոց՝ Ներսիսի և Պետրոսի, որ բազում երկամբք և պէսպէս նեղութեամբ շինեցին և յօրինեալ կառուցին զշքեղազարդ եկեղեցին Տաթևու բնիկ գեղջն իւրեանց և ինքեանք ի տես երիտասարդութեան վախճանեալք առ Տէր գնացին, անասելի կոծով և ողորմելի տեսական, որքս և անտերունչս զմեզ թողլով յետ ինքեանց մնացեալս։*

Դարձեալ յիշել մաղթեմք ի մտանուէր աղօթս ձեր զառաքինասէր և հրեշտակակրօն վարդապետս մեր և զարիւնամերձ հարազատ եղկելոյս զտէր Արիստակէս քաջ րաբունիս, որ է առաջնորդ և վերակացու սբ. անապատիս և մենարանիս Տաթևու, զի փոխանակ գնացելոց առ Տէր մե-

րոց վարդապետաց, զսա ունիմք յետ նոցա ի մխիթարութիւն անձին և ի սփոփանս վշտացելոց սրտից, որում տացէ Տէր պարագայից ամօք և երկայնաձիգ ժամանակաւ վարիլ զկեանս իւր..., ընդ որս և զբազմավեր Յօհան տառապեալս հայցեմ յիշատակել...։

1351
ՇԱՐԱԿՆՈՑ
ԼԱՎԴԱՒ, № 184

Գրիչ՝ Ալէքսանոս քահանայ
Վայր՝ Ագուլիս

ա

1083 *Փառք...։ Արդ՝ եղև աւարտ գրչութեան այսմ մեծահանդէս և հոգելից տառիս ի շրջագայութեան հայկազեան տաւմարի Ռ և ՃԸ (1659) թվականի, ի հայրապետութեանն տեառն տէր Յակոբ կաթողիկոսի, ի յաթոռ սբ. Էջմիածնի, և մերոյ նահանգի առաջնորդութեանն սբ. Թումայի առաքելոյն Խաչատուր ահր և պանծալի եպիսկոպոսապետին և եղբօր որդին զՊետրոս քաշ բաբունին։ Գրեալ և ծաղկեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ, մեղաւոր և փրծուն գրչի Ալէքսանոս քահանայի, որ զանունս միայն ունիմ քահանայի և ոչ զգործս ի բարի. ախ, վայ է ինձ Ռ (1000) բերան. ի լաւ և ի յընտիր աւրինակէ Սրսոյ՝ առաջին վարդապետացն մերոց.*
1084 *ի յերկիրս Գողթան և ի գեղաքաղաքս Ագուլիս գո//վելի և աւրհնեալ, և ընտիր ազգ քրիստոնէից, որ աստ կան սիրով և միաժողով։ Եւ ի դրան սբ. և աստուածանկար, և առաքելայարկ խորանիս, և քրիստոսաբնակ սբ. տաճարիս, որք կան ի սմա սպասաւորք սբ. եկեղեցոյս սրբասնունդ քահանայք՝ զտէր Գրիգորն, զտէր Ալէքսանոսնն, զտէր Խաչատուրն, զսարկաւագ Ղազարն, զբարէմիտ և հէզահոգի մահդասի երէցփոխան Փիրումն և այլ դպիրք։ Սոքայ են իմ՝ անարժանիս ընկերք և սիրելի, որդիք և եղբարք, միաբան և սիրով, զոր և խնդրեմ անմահ Արարչէն անփորձ և անսահման պահեսցէ ի վերա երկրի, և յետ աստեացս ելանելոյ երկնից արքայութիւնն ժառանգեսցեն. ամէն։ Եւ մեր զամենայն տկարութիւն անձին և զբազմունք աշխարհիս ի բաց գնելով ապաւինեցաք ի յԱստուած, որ կարողն է յամենայնի. և սկսաք զսբ. տառս Շարակնոց, և Քրիստոսի աւգնականութեամբն և Ս. Հոգւոյն ձեռընտրութեամբն աւարտեցաւ սբ. գիրքս, ընդ հովանեաւ վերոյ ասացեալ սրբոցս և միեղէն եղբարցս։ Ով լուսամիտ մանկունք Սիովնի, վասն որոյ յերեսս անկեալ աղաչեմ և կողկողագին պաղատիմ ամենեսեանսն, որք լուսաւորիք սովաւ ուսմամբ կամ գաղափար առնելով կամ յերևանցի տեսանելով, յիշեսջիք ի Քրիստոս զծրողս և [զ]ծաղկողս, զբազմամեղ Ալէքսանոս անպիտան երէցս, զհայրն իմ՝ Ազարիայ քահանայն, և զմայրն իմ՝ Խանումն, զեղբարքն իմ՝ Ըստեփանոսն, և որդին՝ Ազարիայն, և միւս եղբայրն իմ՝ զԽաչատուրն, և քորքն իմ՝ Սուճուպատն, Սուլթանսուշէն, որ հանգուցեալ են առ Քրիստոս՝ հանդերձ ընտանեօքս ասելով ի խորոց սրտէ, թէ «Տէր Աստուած ողորմեա նոցա և ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա, և գրեա զնոսա ի գիրն կե-*

նաց. ամէն, և եղիցի, եղիցի»։ Եւ միւս քոյրն իմ՝ Մասումն, և զայրն իւր՝
1085 // զխոշայ Պողոս, և որդիքն իւրեանց՝ պարոն՝ Ֆոանգգուլն, զՅարութիւնն
և Աստուած ընդ երկայն աւուր պահեսցէ. և եղբօր որդին իմ՝ Ազարիայն,
և դուստրն /// և զամուսինն իմ՝ զՂարիբսուլթանն, փոխեցեալն ի կենդանեաց առ Աստուած ցամաք սրտիւք՝ ոչ ուստր ունելով, ոչ դուստր, և եթող ինձ սուք անմխիթար։ Այլ և վասն խոշորութեան և անարհեստ գրոյս աղաչեմ անմեղադիր լինել, որ ոչ եմ ուսեալ և ոչ վարժեալ, այլ ԼԸրբարբ ձեռն աստ արկեալ։

Այլ ցանկացող եղեալ այսմ աստուածային և երկնապարգև գանձիս, և պատուական, և մաքուր մարգարտիս Ս. Հոգւոյն աւգնականութեամբն, վեց աւարտեալ մագաղաթ և ծաղկեալ, թերևս լիցի մեզ յիշատակ հոգւոյ ի գուռն Սրբոյ /// գողացի պատժեսցէ զնա Աստուած, զի մագաղաթս խոշոր էր և եղանակս ամառնային և չորային, և ես անձամբս տկար գոլով և բեկեալ սրտիւ, քանզի յոյժ տառապանօք և մեծաւ տրրտմութեամբ և չարչարանաւք գծագրեցի զսայ։ Եւ ինքն, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս ի սմա և գծողիս, և իմոցն ձեաւք հանդերձ, զանրսպառ բարիսն ժառանգեսցէ և զերկնից արքայութիւնն. ամէն։

Այլ և խնդրեմ ի ձէնջ, ո՜վ հարք իմ և եղբարք, սիրելի որդիք և մանկունք սբ. եկեղեցւոյ, Շարակնոցս խնամ տանել և լաւ պահել, վարձս ի Քրիստոսէ առնուցուք և աւրհնիք ի սրբոց նորա։

Բ

1086 Զաւրացոյ Տէր զմատունք բազկիս,
Առ շարժումն մելենիս,
Եւ գծագրել ի քարտիսիս։

Գ

Զբազմամեղ Ալէքսիանոս գծողս և զծնողսն իմ յիշել ի տէր Աստուած, աղաչեմ։ Թվին ՌՃ և Ը (1658)։

Դ

Ո՜վ լուսամիտ մանկունք սբ. Սիոնի զբազմամեղ Ալէքսիանոս գրիչս յիշել աղաչեմ։ Թվին ՌՃԸ (1659)։

Ե

Յայս հրաշափառ մեծի տաւնիս,
Քեզ երանի, որ հանդիպիս,
Լուսափթիթ բուրաստանիս,
1087 // Հոգիաբուխ սրբոյ տառիս։
Երբ լի սրբոց ծունդրը կրկնես,
Սիրով հոգւոյդ յաստուած հրպիս,
Յայն ժամ յիշեա դու զեղկելիս,
Ալէքսիանոս գծող տառիս։
Զմեղաւք ծածկեալս ի մէջ տրղմիս,
Ա՜խ, վայ ինձ։

1352
ՆԱՐԵԿ

Ղ. Փիրզալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 835

Գրիչ՝ Անդրիաս սարկաւագ
Վայր՝ Արարատ

228բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգւոյ մեղապարտ գրչի՝ Անդրիասի, սուտանուն սարկաւագի, հասանել ի յաւարտ սբ. Նարեկիս, զոր հրամանաւ և հաւանութեամբ երջանիկ և սրբասնունդ վարդապետին Պօղոսի՝ մերոյ առաջնորդին Վարագայ, զոր և յանձն արար երկու տանուտէրոջ, աստուածասիրաց և բարեպաշտից՝ Զաքարիայ և Յոհաննէս անուն, ստանալ զգիրքս ի յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ բարի հոգւոց իւրեանց...։ Եւ արդ՝ դրեցաւ գիրքս այս ի յերկիրս Վասայ, ձեռամբ Անդրիաս մեղաւորի, ի ՌՃԸ (1659) թուականի, ի գլօղս որ Արարատ ասի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Միրանաւորի...։

1353
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրզալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 836

Գրիչ՝ Ղուկաս երէց
Վայր՝ Մրուց

229ա Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Ղուկաս իրիցու, թուին ՌՃԸ (1659), ի շէնս որ կոչի Մրուց: Աղաչեմ յիշել ի Տէր։

Զարժանագով զարհին Գողթան
Զաէր Խաչատուր այր սրբազան,
Յաղօթս առնել զնա յիշման,
Արժան զարկջիք դուք միաբան։
Որք տեսանէք զայս բուրաստան,
Զծաղկափթիթ տեառն անդաստան,
Որ ստացաւ անձին սփոփան,
Եւ յիշատակ իւր յաւիտեան։

1354
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրզալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 837

229ա Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Սարգիս իրիցուն, ի թուականիս Հայոց ՌՃԸ (1659). և ցանկացող եղև սմա Ուսկուտարցի էսկիճի Փիլիկն... և ետ ի դուռն Ս. Կարապետին։

1355
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրզալեմյան, «Նշխարք», հա. Բ, № 590

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Իկոնիոն

476 Փառք...։ Արդ՝ յանդ ելեալ աւարտեցաւ... Շարականոցս ի լաւ և

ընտիր օրինակէ, որ կոչի Խլու պապու, ի մայրաքաղաքն Իկոնիոն, ձեռամբ Գրիգոր անուն [գրչի]..., ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։

Գրեցաւ թվին ՌՃԸ (1659) ի վայելումն տէր Յոհանին...։ Այս Շարակնոցովս ԺԵ (15) շար Լղն որ գրեցի[34]։

1356
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 591

476 Զվերջին ստացող Շարականոցիս զբարեմիտ և զբարունի, քաջ և արի աստուածաբան Պողոս վարդապետն և զծերունի պատուական հայրն իւր՝ Ազարիա վարդապետն, և զհանդուցեալ մայրն իւր Էթարն, քանզի արար լաւ բարութիւն և եա նորոգել զսբ. տառս, որ է Շարականոց...։ Կանգնեցաւ Շարականոցս ի հայրապետութեան տեառն Յակոբ կաթուղիկոսին և առաջնորդութեան սբ. ուխտիս Վարագայ Պողոս վարդապետին։

Թվին ՌՃԸ (1659)։

1357
ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 592

Նորոգող՝ Վարդան Ղարասուեցի

476 Քրիստոս Աստուած ողորմի Դարունից տէր Ղազարին..., որ եա նորոգել զսբ. գիրքս, յիշատակ հոգւոյ իւրոյ և եդ ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին. և զինչ ի յայս եկեղեցիս...

Եւ ես՝ Վարդան մեղապարտ Ղարասուեցիս նորոգեցի զսա ի թուին Հայոց ՌՃԸ (1659) ամին։

Այս տարուս բաղիշեցիք[35] եկան զԴարունց[36] թալանեցին, ևս առաւել

477 զտէր Ղազար, խիստ չնչեցին, որ իսկի զատ չի թողին, // թող զգրեանքն զամէն դերեցուցին, հանդերձ ու անօթ իսկի չի թողին։

1358
ԱՒԵՏԱՐԱՆ

ՏՅՁՄՎ, № 85

Գրիչ՝ Յովանէս դպիր

345 Ճառագայթ փառաց և լոյս անշիջանելի, ով Տէր իմ Յիսուս Քրիստոս,

---

34 Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք»-ի Ա հատորում գտնում ենք դարձյալ Շարակնոցի մի այլ հիշատակարան. «Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարականոց, այսինքն՝ շարեալ ակունք՝ ի լաւ և յընտիր օրինակէ, որ ասի Խլու պապու, որ է յընդկեալ և ընտակեալ առաջին վարդապետացն, ձեռամբ մեղսամած Գրիգորիս, [ի քաղաքս] Իկոնիոն, որ ասի Ղոնիայ, ի դուռն Ս. Աստուածածնի, ի թուա//կանիս Հայոց ՌՃԷ (1658)» (№ 832, էջ 227աբ)։

35 Իմա՛ Բաղեշի բրդերը։

36 Կյոր փակագծերում Ղ. Փիրղալեմյանն ավելացրել է. «գիւղ Մոկաց»։

ողորմեա մեղօք ի լի լցեալ Յովանէս նուաստ դպրի, և ծնողաց իմոց եւ ալդականաց և ստացողի սբ. մատենիս[37]։ Թվին ՌՃԸ (1659)։

1359
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
ՑՁՎՍ, I, № 198 (1624 թ.)

Հետ. ստացող՝ Ովանէս դպիր

834 Զցանկացողս սբ. դրգիս զՈվանէս դպիրս յիշեցէք ի Քրիստոս, կարդալով կամ սուրինակելով, և դուք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ. ամէն. Թվին ՌՃԸ (1659) ամին։

1360
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՑՁԵԹ, I, № 232

Գրիչ՝ Թումայ Բաղիշեցի
Վայր՝ Երուսաղէմ

838 Փառք...։ Որ ետ կարողութիւն անպիտան և տկար ողոյ մեղսամած մատին իմոյ՝ հասանել ի յաւարտ այս սբ. տառիս, որ կոչի Սաղմոսարան, Աղօթամատոյց և Տօնացոյց, ի լաւ և յընտիր լըստոյդ յօրինակէ։ Ի խընդբոյ սրբասէր և մաքրամիտ, քրտնաջան և աշխատաւոր առն Աստուծոյ տէր Նիկողոսին, որ է փակակալ և սպասաւոր Յակոբայ տեառնեղբօր սբ. տաճարիս և Յակոբայ գլխադիր սբ. դամբարանին։ Զոր եռափափագ կրօտիւ և ջերմեռանդ սիրով ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Ղազարին և մօրն՝ Մարիամին, և մեծ մօրն՝ Ղիմաթին և կողակցին իւրոյ՝ Ալբունին, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և զաւակաց նոցին և ամենայն արեանառու մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոցն։ Քրիստոս Աստուածն մեր յորժամ գայցէ ի դատաստան
839 անպատում զօրօք...։ // Թողցէ զյանցանս տէր Նիկողայոս քահանային և զզարմից նորին. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և ի մաքրափայլ յաղօթս ձեր ի ժամ սբ. պատարագին զտէր Նիկողայոսն, որ ստացաւ զսա յիշատակ յեկեղեցի վասն փրկութեան հոգոյ իւրոյ։ Ընդ սմա և յիշել աղաչեմ զհոգևոր ծնողն՝ զՇահնուն, որ իբրև զհարազատ որդի կու խնամէ Աստուած զիւր մեղք թողու. ամէն։ Զի թէ միով ողորմայիւ յիշէք դուք զսոսա ողորմութեան և արքայութեան արժանի լինիք. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքս ի սբ. Երուսաղէմ, ընդ հովանեաւ Յակոբայ Տեառնեղբօր երկնանման սբ. աթոռին, և Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, որ ցանկալի է հրեշտակաց և բարեխօս վասն հայկազան սեռի և առաւել վասն ստացողի սորին, և այլ սբ. աստուածահոտ տնօրինակատացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Զեռամբ սևերես և մեղապարտ մեղօք հարստացեալ և յառաքինութեանց աղքատացեալ Թումայ երիցոյ Բաղէշացոյ, որ զանունս միայն ունիմ և զգործս ոչ։

Արդ՝ գրեցաւ սա յամի հազարերորդի ընդ նմին զՁ-որդի միակ յոբե-

[37] Հ. Տաշյանը նշում է, որ անունը չի գրված և մի քանի տող դատարկ է թողնված։

լինի և Թ (1659) նմին յաւելորդի գալստեան կենարարին մերոյ, և ըստ խոսրովային թըւոյ հայկազանցս քսաներորդ և երկրորդ յորելինի, և ի նմա Զ-երորդ աւելորդի (1657), ի հայրապետութեան ամենայն Հայոց. որ ի սբ. էջմիածին տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, և տանն Կիլիկեցւոց տեառն Թորոսի, և ի թագաւորութեան Իսմայելացւոց սուլտան Մէհմէտին, և յառաջնորդութեան սբ. ուխտիս բարձրագոյն աթոռոյս Երուսաղէմայ տեառն Աստուածատրոյ խստակրօն հայրապետի, յորում ժամանակի առաւել զօրացան չարաճճիկ ազգն յունաց ի վերայ անմեղ ազգիս Հայոց, և ազգ և ազգ խորհուրդ չարութեան ի. մէջ առին և արեամբք ևս ի գլուխ հանին, կարծելով թէ ոչ գոյ Աստուած ի մէջ մեր. բայց նա որ յամենայնի կարողն է և Տէր՝ ոչ իսպառ թողացոյց կոխան առնել զմեզ թշնամեաց մերոց, թէպէտ և առ ժամանակ մի զկծեցոյց զմեզ։ Բայց զկծեցուցանողսն զայնոսիկ էարկ ի ներքոյ յաւիտենական ամօթոյ, զոր փոքր ի շատէ ճառեցից զվտանգ աղետի մերոյ ի ձեռաց չար ազգիս, որ ոչ թէ այլազգաբար դրամի և փողի հակառակեն, այլ հանգոյն կռապաշտից հաւատոյ թշնամի եղեալ զմեր հոգոյ տուն կամեցան յափշտակել ի մէջ, զի ունէին զմեղմեխ խորհուրդս իւրեանց ծածկեալ յառաջագոյն ժամանակաց. և յանցեալ ամիս փոքր ինչ յայտնեցին, ի ժամ բխման սբ. լուսոյն, գալով ամբոխեալ մտօք, և վրդովումն արարեալ ի մէջ խառնիճաղանճին, որ և զծերունի երիցս երանեալ հայրապետս մեր առ ոտին ձգեալ քայքայեցին, և զթագն ի գլխոյն փայտիւ ընկեցին, և կալեալ ի վարսիցն երես ի քարշ կոփանօք տպանջեցին և նա ամենայնի տանելով վասն Աստուծոյ ոչ եղև վրէժխնդիր և ոչ եթող այլոց լինել։ Վասն որոյ և կայեն պատրիկն հոռոմոց, որ առիթ էր այս չարեացս, տեսեալ զմիամտութիւն ազգիս անտէր և ամայի կարծելով, սկսաւ փոքր առ փոքր ձեռն արկանել ի վիճակս Հայոց։ Եւ այսպիսի չար մտօք ելեալ գնաց ի Կոստանդնուպոլիս և գտեալ զհոմանիս չարութեան իւրոյ, և նոքօք զանուն թագաւորին աղճատելով, սուտ խէթիշէրիֆ մի յայտնեալ, յորում միջի զիւրեանց ձեռին լեալ լզվանք և զվիճակքն մեր և զՀապաշ ազգին, զամենայն գրեալ էին ըստ իւրեանց չար մտացն, ոչ ոք ի թագաւորական դրանցն գիտելով զայն։ Եւ եկեալ աստ սուտ հրամանաւն յափշտակեաց զվիճակսն Հաբաշիցն, և ձեռն արկեալ ի վիճակս Հայոց։

Նախ զՍ. Յակոբ կամեցաւ յափշտակել. վասն որոյ և ծերունի սբ. հայրապետն մեր սթափեալ ի տկարութենէ և յոգի եկեալ իմացաւ, զի վճարեալ էր չարութիւն նոցա առ մեզ։ Եւ նորին աղագաւ ելեալ ի սբ. աթոռոյս և դրանէ ի դուռն շրջելով ծանուցանէր ամենեցուն զաղէտ վըտանգի ազգիս մերոյ, զի զրկելոց էին ի փառաւորագոյն աթոռոյս։ Եւ այնպէս աղաղակելով եհաս ի մեծահանդէս քաղաքն յԷստամպոլ։ Եւ անտանօր գտեալ զերամս քրիստո[ն]էից զմերս Հայոց, և ծանոյց ամենեցուն զեկեալ փորձութիւնսն։ Որով սկսան ամենեքեան հոգալ և ցաւել և ոչ գիտէին թէ զինչ արասցեն։

Ապա ի խնամոցն Աստուծոյ ազգեցութենէն, անկաւ ի սիրտ նոցա
640 վասն երիցս երանեալ//առն Աստուծոյ տէր Եղիազար վարդապետին, որ էր այր խորհրդական և հանճարեղ, գաւառաւ Հռոմկլայեցի, վարժեալ առ-

ոտս տեառն Յովանէսի Շնորհուշեցւոյ, վարժապետի սրբասնեալ հայրապետիս մերոյ տեառն Աստուածատրոյ, ի միում հրահանգի սնեալ համշիրակ աշակերտք. և սա կալեալ զաթոռակալութիւն տեառնեղբօրն, և նոյն առաջնորդ եղեալ Արղնոյ Բարձրահայեաց Ս. Աստուածածնին յորշորջեալ տեղեացն, և այժմ վասն նորին պակասութեան գնացեալ Կոստանդինուպոլիս, և հոգացեալ զամենայն հոգս իւր դառնալոյ էր անդրէն։ Բայց վասն վերոյ գրեալ փորձութեանցն վերոյահասելոցն սր. աթոռոյս ամենայն ազգս միաբանութեամբ և կամօք Աստուածատրոյ, սոյն աթոռիս առաջնորդի, ի մէջ բերեալ պվերոյասացեալ Եղիազար վարդապետն, և ոչ իւր կամաւ, այլ ի հարկէ յանձնեցին ի նա զգործ վէքիլութեան սբ. աթոռոյս, զի թերևս վասն փորձութեանս ևս հոգասցէ փրկութիւնս։ Որ և իսկապէս քաջասրտեալ և գօտէպնդեալ, ի ժամանակս տասնեկի ամսոց և յաւուրս Ե (5) և Զ (6) վաղիրաց. և ի դէմս բռնաւորաց ճակատ առ ճակատ ընդ յունաց ազգին խազմ արարեալ և ընդդիմաբանէր ընդդէմ լեղուադրութեան նոցին։ Եւ իբրև յաճախեաց ժամանակն գիր աղաղակի առաքեաց առ Հայոց ազգս, որ յԱմիթ և յԱրզրում, և յայլ քաղաքս, զի թէ գուցէ ուրուք օգնութիւն և ձեռնտուութիւն ինչ, հասուսցեն ինքեան։

Վասն որոյ ամենեքեան ջերմաջերմ սիրով փութացան յօգնութիւն, ոմանք անձամբ անձին գնացին, որպէս Վանեցի խոճայ Բօնիճանն, և ոմանք զհայրենական գանձս բացեալ զտին զի վաղեմի թագաւորաց տուեալ հրամանսն առ մեզ, զի սեպհական լիցին վիճակքս մեր։ Զոր այնոյ յոյժ զօրացեալ սր. հայրն մեր տէր Եղիազար վարդապետն և բացեալ զայնոսիկ ի դիւանս բռնաւորացն և կարեկցոյց այնու զբերանս դատախազիցն ազգին յունաց, և ամենեքեան հաճեալ ընդ հնոյ թագաւորաց հրամանս, և տարեալ ցուցին այժմու մանկահասակ թագաւորիս մերոյ սուլտան Մահմատին։ Եւ նա տեսեալ զգիր հրամանի նախնեաց իւրոց, և ինքն ևս երկ[ր]որդեալ հաստատեաց զվիճակքն մեր ի ձեռս մեր. ոչ թէ յորոց այժմ ջանային զրկել զմեզ, այլ ի ժամանակէ հարց մերոց յափշտակեալ զվիճակս մեր, ընդ բռամբ ածեալ տիրեցաք ամենայնի. զոր կարի վայելուչ է գրել զամենայն, թէ ոյք են վիճակքն զորս առաք՝ այսինքն զգերապատիւ և զհրաշափառ Մնոնդեան Սբ. Այրն և զՄսուրն սբ. առ ի մատուցանել զփրկական սբ. պատարագն։ Եւ անղանօք կախեցաք ԻԱ (21) կանթեղս և բացաք զվաղուց հետէ փակեալ դուռն աղգիս մերոյ։ Եւ ի վերայ գերեզմանին Քրիստոսի Ե (5) կանթեղս, և ի պատանատեղն Քրիստոսի եղաք Բ (2) աշտանակս մոմոյ, և կանթեղ մի և ի մէջ Ս. Յարութեան լեալ ջրհորն մեզ սեպհականեցաք, նաև զամենայն վիճակս Հաբաշ ազգին, զոր գրելն տաղտկութիւն բերէ լսողացն։ Եւ այս ամենայն յաջողումս ի շնորհացն Աստուծոյ պատահեցաւ մեզ, որ զօրացոյց զվերոյգրեալ հայրս մեր զտէր Եղիազար աստուածաբան վարդապետն ի գործս յայս դժուարին։ Վասն որոյ և համայն ազգէս սիրեցեալ եղև և ի հարկէ եդին զինքն տեղապահ և փոխանորդ տեառն Աստուածատրոյ սբ. Երուսաղէմայ հայրապետի, և իւրն համշիրակի, զոր և մեք խնդրեմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զի զինքն ընդ երկայն աւուրս արասցէ վասն մեզ ուղիղ վարդապետութեամբ, և զսբ. աթոռս բարով վայելել տացէ ինքեան. ամէն։

Եւ արդ՝ ես անարգս և անպիտանս ի մարդկանէ, ունայնս և թափուրս ի յամենայն բարեգործութեանց, ծոյլս և պղերգս ի յաղօթից և ի թառաբանութենէն Աստուծոյ և ամենայն մեղօք լցեալ Թումայ սուտ և ոչինչ անուն երէց Բաղէշացի, շնորհիւ Տեառն սկսայ զսբ. գիրքս և ողորմութեամբ նորին կատարեցի մեղսամած ձեռօք իմովք։

Եւ աղաչեմ զամենեսեանդ զմանկունս սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, միով ողորմեալիւ արժան առնէք զմեղաւոր գրիչս հանդերձ ծնողօք իմով՝ մօրս Եթարին և հօրս Քարիմին, նաև զհոգևոր ծնօղն իմ և դուսուցիչն՝ զտէր Սահակ քաշ քարտուղարն, որ հանգուցեալ է ի Քրիստոս։

Դարձեալ աղաչեմք զհանդիպող սորին, որ լի սրտիւ և բոլոր հաւատով
641 յիշման ար//ժան առնէք զմիաբան սբ. ուխտիս զհրեշտակագումար երամըս միաբան սբ. աթոռիս, թէ եպիսկոպոս, թէ վարդապետ, թէ քահանայ, թէ մշակ և թէ այլ ինչ գործավար, որ աստ կան հաւաքեալ, զի մի ամ բոլոր նստա առ ի գրել զդիրս և սոքա ոչ ձանձրացան ի մէնջ, այլ իբրև զհայր և զեղբայր խնամ տանէին ի վերայ անարժանիս. խնդրեմ ի Քրիստոսէ, որ ինչպէս մեք աստ հանգաք ի սգալի սբ. քաղաքս նա իւրեանքն ընդ սրբոցն Աստուծոյ ի վերինն Երուսաղէմ հանգիցեն ի փառս փրկողին։

Եւ աղաչեմ վասն խոշորութեան և սխալանաց գրիս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Եւ դուք ընկալջիք վարձս ի Քրիստոսէ Աստուծոյն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

1361
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՏՁԵՊ, II, № 532

642 Յայսպիսի աւուրս շփոթութեանց ի քանի մի ամաց յետէ, ի մեծն Պոլիս էր Աստուածատուր պատրիարգ յԵրուսաղէմի...։ ...Եւ այս եղև մօտ յաւուրս Խաչվերացին, ի թուին Հայոց (1659) առեալ յայնժամ Եղիազար զհրովարտակ գնաց յԵրուսաղեմ. և գրուեաց անդրէն զՍուրբն Յակոբ ի ձեռաց յունաց։

1362
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՏՁԵՊ, IV, № 1209

Գրիչ՝ Աստուածատուր կրօնաւոր
Վայր՝ Երուսաղէմ

ա

644 Այս են բառք հակիրճ աստուածաշունչ սբ. գրոցն, զոր և գծեալ ձեռամբ անիմաստ կրօնաւոր Աստուածատուրէ[38], համառօտաբար ընտրեալ ի շինածուցն ի յԵրեմիայի վարդապետի, ըստ տարակուսանաց բանա-

[38] Ձեռագիրը բաղկացած է երկու մասից. ա. Գիրք պարապմանց, ընդօրինակվել է 1414 թ., Սարգիս Ղրիմեցու կողմից. բ. Գիրք գանձուց։ Վերջինիս է վերաբերում 1659 թ. Աստուածատուր կրոնավորի հիշատակարանը։

սիրացն։ Զի և խնդ[ր]եմ ի սրբասուն ընթերձասիրացդ, զոր հանդիպիք ընթեռնելով զտետրակս, միով ողորմիւ արժանի արէք գնահատս, զոր բազում վշտի կայաք ի գծել սորին, ի սբ. Երուսաղէմ քաղաքի, ի յարտաքոյ Ս. Յակոբա[յ], զոր խուժադուժ ազգն Յունաց առին ի մեզանէ, վասն մեղաց մերոց։ Զինչ և իցէ Աստուած ենք յուսացի։ Բայց Աստուած ողորմի ասացէք։

Թվին ՌՃԸ (1659)-ին։

Բ

345 Զգծող սորին տետրակիս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զԱստուածատուր կրօնաւորս։

1363
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
ՄՏՁԵԳ, VII, № 2313 (1659 թ. առաջ)

ա

418 Վերըստին նորոգեցաւ սբ. տառս շնորհաւք ամենազաւրին Աստուծոյ, ի Վասպուրական քաղաքի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, ի վայելումն Յոհաննէս բանի սպասաւորի, թվին ՌՃԸ (1659) ամին։

Բ

Գնորդ՝ Յոհաննէս վարդապետ

Ես՝ Յոհաննէս վարդապետ, սպասաւոր սբ. Երուսաղէմայ, գնեցի զգիրքս յիշատակ ինձ։

1364
ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՏՁԵԳ, Հ. Ա, էջ 508

Գրիչ՝ Եղիա
Վայր՝ Հալապ

ա

43[illegible] Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Որ ետուր կարողութիւն տկար անձինս իմոյ, հանել յաւարտ զսուրբ մատենիկս, որ կոչի Տօնացոյց, լաւ եւ ընտիր յօրինակէ եւ հաւաքեալ ի մի։

Արդ կատարեալ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՌՃԸ (1659), ի մայրաքաղաքն Հալապ, որ կոչի Բերիա, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Քառասնիցն, եւ այլ սրբոցս որ աստ կան մեզ ի պահպանութիւն եւ ամենայն քրիստոնէիցն։ Ձեռամբ մեղաւոր եւ անպիտան Եղիա գրչի, որ զանուն ունիմ եւ զգործս ոչ։

Ի հայրապետութեան Կիլիկեցոց տեառն տէր Խաչատուր կաթողիկոսին, զոր տէր Աստուած պահեսցէ զինքն ընդ երկայն աւուրս ի պարծանս մեր եւ յամենայն Հայկազան տոհմիս, ամէն։

Որ եւ ցանկացող եղեւ սմա տէր Աստուածատուր քահանայն, որ մականուամբ Ապղըլայ երէց յորջորջի, եւ ետ դրել զՏօնացոյցս հալալ ընչից իւրոց, յիշատակ անձին իւրոյ, զոր Տէր Աստուած մինչեւ ի խորին ծերութիւն հասուցանէ հանդերձ դեռաբոյս որդովք իւրովք, եւ բարով վայելել տացէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

Արդ պատուիրեմ կարդայ եւ տես,
զքեզ խրատեմ թէ միտ դընես,
Եւ զպատուիրան նորա առնես,
սրտի մտօք զԱստուած սիրես։
Զ Տօնացոյցըս լաւ պահես,
եւ զամենայն տաւն տեսանես,
զժամատեղրն ժիր պահես,
զօրըն սրբոց տօնիւ պատուես։...
Արդ պաղատիմ լալագին ես,
զղառածեալս գրծողս յիշես,
եւ դու ի Տէր յիշեալ լիցիս,
յորժամ տեսցես փառաւք յերկրիս։

1365

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՏՁԵՄՍ, I, № 7 (1552 թ.)

Նորոգող՝ Սարգիս վարդապետ

11 Արդ՝ նորոգեցայ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Սարգիս վար-
12 դապետ ///ցին, որ զանուն միայն ունիմ և ոչ զգործս բարութեան, առաջ-
նորդ Մաքինեաց Ս. Աստ//ուածածին, յիշատակ իմոյ և իմ ծնողաց, հաւրն՝ պարոն Միրզամին, և մաւրն՝ պարոն Խաթունին, և եղբայր իմ Բարուտն և Շանենազարն և տէր Բալրամն, Ամինանեց Ասլիպէկն, Աթամպէկն։ Դարձեալ յիշեցէք մելիք Ասլանպէկն, և հայրն իմ մելիք Պապէն և մայրն իմ՝ Մարիամն, և որդիք իմ՝ Նատիրխան, Միրզամն, և դուստրն իմ՝ Գուլզաւէն, և կողակիցն՝ Մեռասն, որ հանգուցեալն է, և միւս կողակից Նազլուի։ Եւ դարձեալ յիշեցէք մելիք Ասլանն և իւր հարազատ եղբարքն՝ պարոն Ալիւան, պարոն Ադիպէկն և իւրեանց զարմն և զաւակն աւրհնեալ լինեն ամենայն ժամ։ Դարձեալ կրկին անդամ աղաչեմ զձեզ յիշել ի Տէր անարժանն Սարգիս վարդապետս, որ իւրում փափաքանօք և կատարեալ սիրով /// յիշատակ իմ հոգուն /// թիւս ՌՃԸ (1659)։

1366

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՄՁՀՍ, № 62

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Բուզանդիայ

Ա

130 Փառք...։ Շնորհիւ Տեառն յանգ ելեալ կատարեցաւ Սաղմոսարանս հոգելից մարգարէին Դաւթայ, ի քաղաքին Բուզանդիայ, ի դուռն Սրբոյ

Սարգսի զօրավարին, և որդւոյ նորա Մարտիրոսին, ի թվարերութեանս աղքանաղեան և արեթական տումարի ՌՃԸ (1659), ձեռամբ Խաչատուր երիցու։ Արդ՝ ով աստուածասէր սիրելի և տռփացող ցանկալի և քան զկանս պատուականս սբ. հոգւոյն նուագի, բաղձալի բանից մարգարէին Դաւթի, որով ամենայն կեանք մեր սովաւ աւարտի, եթէ խաչ աւրհնի, եթէ եկեղեցի, եւ ամենայն քահանայագործութիւն սաղմոսիս կատարի։ Եւ պատուի բանք մարգարէին Դաւթի՝ ի հրեշտակաց և ի հրեշտակապետաց, նաև ամենայն հաւատացեալ մանկունք եկեղեցւոյ ի բերան ունին զայս նուագս իբրև ըզսաին դիւբադիեցուցիչ մօր ի քիմս ստընդիաց։ Եւ որքան յայտնի կարէ կացուցանել ղգովասանութիւն սորին, այլ որ արբին ի սիրոյ սորին, նա միայն դիտէ ըղճաշակ քաղցրութեան սորին, քանզի սաստիկ աղաւաղեալ թիւրեցաւ բանք սաղմոսիս՝ ի ձեռն գրչաց և անփութութեան, ուսումնասիրաց, և խեղաթիւր բառից, և լեզուաց, և յայլասացիկ սաղմոսաց. և յիբա համարձակաց որ յանձնապաստան ի բերան ևս գրեն առանց օրինակի, որպէս և ես։ Իսկ ես՝ վատթար և անպտուղս ի բարեաց, աղտեղեալս ի բանսարկուէն Խաչատուր գրիչս ի բաղում ամս տենչմամբ տոչորեալ էի ի ուղղաբան Սաղմոսարանի՝ վասն օրինակելոյ, այլ նա որ կատարիչն է խնդրուածաց՝ լցոյց զփափագս իմ, և որոնեալ գտի զփափագելիս իմ զայս. և յոյժ ուրախացայ. և գրեցի օրինակէն այսպէս, որպէս օրինակն էր, լուսաւոր հոգի վարդապետաց վարդապետ մեծն Գրիգոր Կեսարացւոյն սրբրագրածն էր։ Արդ[39]

Բ... Ճ... Ջ... Ջ... Ջ... Ի...[40] վարդապետ յիշեցէք, ստացողին սորին։

Գ

Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յ. Բ. Ր. Ժ. Ը. Ջ. Վ. Ս.. Օ. Տ.. Գ.. Օ. Ջ.. Դ.. Վ.. Յ..[41]։

Ո՛վ սրբասնունդ մանկունք Սիովնի, որք հանդիպիք այսմ տառիս՝ կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զբստացող դրոցս [Մատթէոս][42] զալիֆան, և զծնօղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն, նաև զմեղսասէր գրիչս՝ զԽաչատուր երէցն, հանդերձ նընչեցելովք մերովք. և Աստուած զյիշողդ յիշէ ի միւսանգամ գալստեանն իւր. ամէն։

1367

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՅՁՎԼ, № 4 (ԺԴ դ.)

Նորոգող՝ Վարդան Բաղիշեցի

26 Յիշել աղաչեմ զեղկելի անձս Վարդան ի յոյսն իմ Քրիստոս, որ զԱստուածաշունչս նորոգեցի բազմամեայ տաժանմամբ. ամէն։

---

39 Շարունակությունը կորած է։

40 Եղբայրագիր ծածկագիր Բ=Մ, Ճ—ա, Ջ=թ, Ջ—է, Ջ=ո, Ի—ս, այսինքն՝ Մաթէոս, ինչպես կարդացել է Ա. Սյումեյանը։

41 Ա. Սյումեյանը կարդացել է ճիշտ. «Մատթէոս վարդապետն»։ Անվան համար նշված տառերի հաջորդն է վերցրել, օրինակ Մ-ի փոխարեն Յ, ա-ի՝ բ-ը և այլպես, իսկ երկրորդ բառի տառերի համար խառը՝ հաջորդ և նախորդ, օրինակ, Վ-ի փոխարեն Ս-ը, Օ-ի՝ ա և այլն։

42 Ձեռագրում ստացողի անունը քերված է։

Վերջին ստացող և զկրկին նորոգող սբ. կտակիս, որ Աստուծոյ շնչ։ վերաձայնի, յիրէն ընկալեալ զանուանակոչութիւն, որ է հին կտակարանքն ԻԴ (24) գիրք պատմագրական և պիտանին, ձեռամբ իմ մեղապարտ Վարդան յոյժ եղկելոյ և թշուառի, պիտակ բանասիրի։ Ի վայելումն անձին իմոյ մեղաւորի և ի խրատ անխրատ և անուղղայ գնացից իմոց։ Եւ ի յիշատակ վիրաւորեալ և խոցոտեալ հոգւոյ, որ եղև սա գրեալ ի գուռն Ամիրդոլու Ս. Յովանիսին և Ս. Ստեփաննոսին և Սրբոյ ամենաւրհնեալ Աստուածածնին, որ և ընդ հովանեաւ սոցա նորոգեցաւ, ի ժամանակս յոյժ նեղութեանց և վշտաց անթվելեաց, ներքնոց և արտաքնոց բազմադիմի բերմանց կենցաղոյս, յորում անցեալ է սովին վայելչութիւն, որ ըստ հոգոյ և մարմնոյ, և մնացեալ վէճն և վիշտն, յորում տրուաղն խաղաղութեանց Քրիստոս տացէ մեզ զիւրն խաղաղութիւն. զայն, զոր խոստացաւ առաքելոցն և փրկեսցէ յամենայն փորձանաց զմեզ. ամէն։

17 Վասն որոյ // յիշել աղաչեմ ի սրբազանիցդ հանդիպողացդ և ընթերցողաց, և ներումն և թողութիւն խնդրել ի Քրիստոսէ անկշիռ և անհամար մեղաց իմոց։ Այլ և ղըստ հոգոյ ծնօղն իմ՝ զԽաչատուր անյաղթ պուետոսն և փիլիսոփոսն Հայոց, զհայրն իմ որ բազում երկամբ ծնաւ զիս վերստին ի յոյսն իմ կենդանի Քրիստոս և զծնօղսն իւր, տացէ սոցա Քրիստոս Աստուած իմ զերանաւէտ կեանքն և զերկնից արքայութիւնն և զողորմութիւն, ամէն։ Ըստ սոյն և զծնօղսն իմ ըստ մարմնոյ, զհայրն իմ՝ զԵղիայ և զմայրն՝ զՂարիպ, և զեղբարսն իմ՝ զՂարիպչան հանգուցեալն, և զԽաչատուրն և Խոշխապարն, մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալս, և զամենայն երախտաւորսն. ամէն։ Եւ արդ՝ մի ոք հեռացուսցէ զսայ ի դրանէ Լրմայ անապատի Ս. Գէորգայ զօրավարին, այլ կացցէ անդ անջինջ մինչև յաւիտեան։

Նորոգեցաւ ի մայրաքաղաքս Բաղէշ, ի վանքս Ամիրդոլայ։ Եւ կէս գրեցաւ ձեռամբ Տէր Գրիգոր քահանայի և զնա յիշեսցէ Տէր ի բարի, ե յողորմութիւն, և այլն ձեռամբս իմով աւարտեցաւ բազում տաժանմամբ ի թվին ՌՃԸ (1659), ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան մա-

28 քուր հայրա//պետի։ Յիշեցէք զմեզ ի սբ. հայցուածս ձեր, ո՞վ սբ. հարք և դիտապետք, և դուք յիշէք յանբաւ գթութիւն Քրիստոսի. ամէն և եղիցի։

Ես՝ Վարդան վարդապետս Բաղիշեցի, աշակերտ տեառն Խաչատուր վարդապետի, ետու զսբ. Աստուածաշունչս, որ է ԻԴ (24) գիրք բովանդակ՝ պատգամականն[43] և պիտանին, մինչև ի Սաղմոսն Դաւթի. այլ և ընդ սմին խաչ մի ոսկէզօծ և ականակուռ ձեռամբ իմով ի դուռն Լմայ անապատին՝ Սրբոյն Գէորգայ զօրավարին, յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղացն՝ Եղիային և Ղարիպին, և եղբարց Ղարիպչանին, Խաչատուրին, Խոշխաբարին և ամենայն արեան մերձաւորաց, նաև ուսուցչին իմոյ և հոգևոր երկամբք ծնօղի՝ մեծի րաբունոյն Խաչատրոյս և ամենայն երախտաւորաց և բարերարաց. նաև աշակերտին իմոյ Աբրահամ վարդապետին։ Վասն որոյ ժտիմ մաղթելով ի ժրաջան ընթերցողացդ և ի սրբասէր աղօթողացդ յիշել ի միտս բարիս և յաղերսս պատկանաւորս զղստացողս սորա և

[43] Հիշատակարանի սկզբի մասում այս բառի փոխարեն գրված է «պատմագրական»։

զընծայօզս ի դուռն Սրբոյ Գէորգայ զօրավարին ի Լիմն կոչեցեալ անապատի, զՎարդան /// և զծնօղսն և զվերոյիշեալ առ հասարակ. ամէն։

1368
ՏՕՆԱՅՈՅՑ, ԽԱՉՏԵՏՐ, ՊԱՐՉԱՏՈՒՄԱՐ

ԿՅԶՉՎ, № 57

Գրիչ՝ Միքայէլ Եռզնկացի
Վայր՝ Պոնտոս

ա

91 Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Միքայէլ Երէց գրչի Եզնկացոյ հասանել ի յաւարտ Տաւնացուցիս և Խաչատետրիս և Պարզատումարիս և այլ քաղցրաբարբառ երգոցս, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի թվականութեան Հայոց հազար և ՃԵ (1659) ամին, ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբ սրբազան կաթուղիկոսի և թագաւորութեան Տաճկաց սուլթան Մահմատին և առաջնորդութեան քաղաքիս Յովանէս վարդապետի և դիտապետի։ Արդ՝ գրեցաւ գիրս ձեռամբ Միքայէլ անարժան իրիցու ի թագաւորանիստ քաղաքս Պոնտոս, որ Տրապէս յորշորշի, ընդ հովանեաւ մաւրս Զարխափան անուն և ծնողի իւրոյ Սրբոյ Աստուածածնի, և Սրբոյն Յակոբայ հայրապետին, և Սրբոյ Նիկողայոս Սքանչելագործի և այլ ամենայն սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի վայելումն Սաֆար սարկաւագի, որ ետ գրել յաւժար կամաւք և եռափափ[ք] սրտիւ յիշատակ իւրն և իւր բարի ծնաւղացն և նորահաս որդոցն իւրոց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց. ամէն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՜վ դասք քահանայից և մանկունք սբ. եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զհոգևոր ուսուցիչն իմ զՄովսէս վարդապետն, որ զգիրս ուսոյց մեզ. անմեղադիր լերուք սղալանաց և խոշորութեան գրիս, զի կար մեր այս էր։ Ո՜վ եղբայրք, զծաղիկն ի վարպետաց ոչ եմ հանեալ, այլ ըստ իմ մտացս արարի, <արարի>, թողութիւն շնորհեցէք և զմեղաւորս ի յաղաւթս ձեր յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

բ

Եւ զմեղաւք զառածեալ Միքայէլ երէցս յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ամէն։

գ

. . . . . .

Որք ընթեռնուք սիրով սրտի,
Յիշման առնէք ըզմեզ արժանի,
Զ՝Միքայէլ երէցս Եզընկացի
Մարմնով՝ ցաւաւք, մեղաւք ի լի,
Որ ես յիշման չեմ արժանի։

1369
ՀԱՒԱՔԱԾՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ
ՈՅՁՄՎ, № 574

8 Թվին ՌՃԸ (1659) պատրիարք Եղև այր Մարտիրոս վարդապետն և եհան նուիրակ Աստուածատուր վարդապետն և Յոհան Եպիսկոպոս յերկիրն Գաղատիոյ և Կեսարիս[յ] մինչև ի Կաֆան և Ուռումելի. և էին այնմիկ քահանայքն՝ տէր Յակոբ, որ է ուսումնասէր և աղքատասէր, և է կատարեալ վարդապետ եպիսկոպոս և որբոց հայր, որ բազում վարձս ունի և ոչ ոք գիտէ ի մարդկանէ, Աստուած ընդունելի արասցէ. և է բնութեամբ հեզ և խոնարհ, աստուածասէր և մարդասէր, իբրև Աբրահամու նման, որ ասէ Պօղոս թէ հարազատ որդի զնմանութիւն հօրն կու բերէ...։

1370
ԳԱՆՁԱՐԱՆ
ՅՁԱԲ, № 239 (1460 թ.)

Նորոգող՝ Յարութիւն Երէց
Վայր՝ Քաղատիայ

1094 Ի թվին ՌՃԸ (1659) վերստին նորոգեցաւ Գանձս, ձեռամբ սուտանուն Յարութիւն Էրէց[ի], ի մայրաքաղաք Քաղատիոյ, ի յառաջնորդութեան Մինաս վարդապետ[ի]։ Յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զանարժան
1095 տէր Յարութիւնս, // իւր Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալուստն. ամէն։

1371
ՃԱՇՈՑ
ՏՎՐԱՎՋ, № 211

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Մարուման

265 Փառք...։ Աստանօր սկզբնաւորեալ աստուածային և հոգեկիր գանձս
266 եկեղեցոյ, ընթերցմունքս // բովանդակ տարւոյն, որ ունի շարադրեալ յինքեան զամենայն տօնս տէրունականաց, նաև զյիշատակս սրբոցն զառաջնոցն, զնախահարցն սրբոց. և զմարգարէեցն հոգեկրից, զառաքելոցն սրբազանից, զհայրապետացն ուղղափառաց, մարտիրոսացն քաջամարտից, և զթագաւորացն բարեպաշտից, զվարդապետաց հոգիացելոց, և միանձնից ի ճգնաւորաց, զզօրավարացն քաջաց, և զսբ. կանանցն պարկեշտից, այլ և կայ ի սմա գրեալ ընթերցմունք սբ. Քառասնորդացն պահոց՝ սահմանեալն ի սբ. առաքելոյն Յակոբայ յեղբօրէն Տեառն ըստ մարմնոյ, և ի քաջ ախոյանէն Կիւրղի հայրապետէն Երուսաղէմի, այլ և Գործք առաքելոցն հանգերց եւթն թղթովքն կաթուղիկեաց, և չորս գլուխ Աւետարանաւն, և Դաւթեան սաղմոսարանացն, չորս ընթեռնումն ի Քառասնորդաց աւուրն ի սբ. յարութեան Քրիստոսի, և զբովանդակ չորեքտասան թուղթսն Պօղոսի, և աստուածաբան մարգարէին Եսայեայ, զոր միշտ յօրինեալ կայ միով նշանաւ։ Սկսեալ յաւուր ծննդեան Քրիստոսի

անմոլար գնայիք բոլոր տարուոյն մինչև գայ հասանէ ի նոյն օր ծննդեան Փրկչին, զի հեշտութեամբ և դիւրեաւ տօնեն ուղղափառ մանկունք եկեղեցւոյ և ամենայն հաւատացեալք։

[Եւ] որ սնսնալ զայսպիսի զանձն սուտուածային և պայծառ լուսով, հաւատարիմ ծառայն Աստուծոյ պարոն Զէյնին, որ շերմեռանդ սրտիւ ցանկացող եղև որ. տառիս, ի խնդիր ելևալ յայսմ համբարևալ զանձիս և լուսափայլ անգին մարգարտիս, անուշահոտ մանուշակիս և վարդափթիթ բուրաստանիս, և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, կենդանեաց և մեռելոց, որ ամենայն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

Արդ՝ եղև գրաւ հոգիաբուխ մատենիս ի թվականիս Հայոց ՌՃ և Ը (1659) ամի, ի յերկիրս Պարսից, ի մայրաքաղաքս Ասպահան, և յետկոյս Նոր Ջուղայ, ի գեօղն որ կոչի Մարունան: Բայց եղև սկիզբն գրոցս ի գեօղն որ կոչի Թորասկան, յետկոյս Նարնղալային, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և եղև վերջ գրոցս ի գեօղս Մարունան, ընդ հովանեաւ Ամենափրկչին, ի թագաւորութեանն Պարսից փոքրիկ շահ՝ Ապասին, և ի հայրապետութեան մերոյ հայկազեան ազգիս տեառն Յակոբայ խարազնազգեաց կաթողիկոսի, և ի արքեպիսկոպոսութեանն Նոր Երևանու տեառն Սահակայ, և տեառն Դաւթի առաջնորդ Նոր Ջուղայու, զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ զսոսա ընդ այլ հարքն և եղբար[ք]քն, և յետ աստեացս ընդ սբ. հայրապետսն դասեսցէ. ամէն։

Եւ արդ՝ ես անարժանս արժանաւորաց, մեղաւորս անմեղաց... տառապեալ Յակոբս, քանզի ոչ էի կարող և արժան այսմ սբ. արուեստի կատարման սբ. գրոցս, սակայն առատ շնորհէքն Քրիստոսի կատարեցաւ, թողութիւն շնորհեցէք անկարողութեանս։ Աղաչեմ զհանդիպողսդ սբ. գրոցս, հարք իմ և եղբարք. համբուրեմ զգարշապարս ոտից ձերոց, յիշեցէք ի մաքրափայլ և ի գերապայծառ յաղօթս ձեր, զգեղեցիկ... զպարոն Զէյնին. քանզի լուեալ էր սա յաստուածաշունչ գրոց մարգարէականաց, թէ «Երանի...», որ շերմեռանդ սիրով և աներկմտօք և զուարթ սրտիւ ետ կատարել զսբ. տառս բարի յիշատակ։ Զի էին պատուաւոր արքս այսոքիկ պարոն Զէյնին, և մեծ եղբայրն՝ պարոն Հոմզն, ազգաւ ուղղափառ Յակոբիք, որ կոչի Յեաղուպի, զի էին արք պատուականք և թարգման, և քալամաչի ընկլիզ, ֆռանդաց առաջի թագաւորին, Պարսից փոքր շահ Ապասին, որ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍ. Գրիգոր յեկեղեցոյ քահանայն՝ զտէր Սարգիսն, որ բարի պատճառ եղև զսբ. տառիս... Եւ առաւել յիշեցէք երեսփոխան և խնամատար եկեղեցոյս Ս. Գրիգորի զպարոն Աւետիկն, որ Աստուած ընդ երկան աւուրս պահեսցէ։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս այսմ արհեստի, որ շնորհօք տեառն կեամք յայսմ ժամանակի, նախ՝ զտէր Աստուածատուրն, երկրորդ՝ զՅովհաննէսն, երրորդ՝ զՄարկոսն, չորրորդ՝ զՅարութիւնն, հինգերորդ՝ զՅովսէփն, վեցերորդ՝ տառապեալ Յակոբս...։

Յիշեցէք զվարպետն իմ զարհեստ գրչութեանս զԱստուածատուր քահանայն, որ հանգուցեալ է առ Քրիստոս Աստուած և զմարմնաւոր ծնողսն իմ՝ զԷվազն և զՄարգարիտն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱստուածատուր նորընծայ քահանայն, որ զոր. մատեանս ծաղկեաց և պայծառացոյց. Աստուած առաւել շնորհաց արժանս առնէ։

1372
ՄԱՂԿԱԳԻՐՔ
ՏԵՐԱՎՔ., № 439

Գրիչ՝ Դաւիթ քահանայ
Վայր՝ Սուրաբ-Բանդար

ա

681 Փառք...։ Գրեցաւ Մաղկայգիրքս ձեռամբ սուտանուն Դաւիթ քահանայիս, ըստացող սր. գրոցիս Սարգիսն, որ մականուն կոչի Ղաւշղայ, և զհայրն իւր՝ Աւետիսն և զմայրն՝ Դոլվաթխաթունն. ամէն։

Դարձեալ յիշեցէք Ղաւշղէն և զեղբարքն իւր՝ Պալիաղաջանն, Խոնմբջանն, Յակոբջանն, Ալքայբէկ[ն], Էլչիբէկն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք Ղաւշղէն, և կողակիցն՝ Խաթունն, և որդին իւր՝ Ալէքսանն, և դուստրն իւր՝ Էլիխանն, ուր որդիքն՝ Յակոբջանն, Էլէքսանն, և որդիք Սարգիսն յիշեցէք...։

[Գ]րեցաւ թվին ՌՃԸ (1659)-ումն ի քաղաքն Սուրաբումն, որ կոչի Բանդար, ի վայելումն պարոն Ղաւշղէ, որ մականունն Սարգիս կոչէ և արեան մերձաւորացն ամենայնի։

բ

Յիշատակ է Էլէքսանին. ամէն։ Օ՛վ կարդայ կամ օրէնակայ ըզմեղ յիշել բաւէն։ Թողութիւն շնորհեայ զմեզ, զի կայր մեր այս է։ Յիշատակ է Ղաւշղէ որ մականուն Սարգիս կոչէ. և հօրն, և մօրն, և եղբարցն, և քեռցն ամենեցուն. ամէն։ Թվին ՌՃԸ (1659) գրվեցաւ Սուրաբ-Բանդարումն։

գ

Սարգսին, և իւր որդի Էլէքսանին, և իւր դուստր Էլիխանին ևս առայվել իւր ծնողացն՝ Ավետիսին, ևս իւր ծնողաց Դոլվատխանումն, և իւր կողակից Խաթունին, և մեռելոցն իւր և կենդանոցն. ամէն։

1373
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Զմմառ, № 577

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրենդանց

186 Փառք..., որ ետ կարողութիւն անարժան և անիմաստ գրչիս Աւետիսի հասանել յաւարտ աստուածախաւս և լուսազարդ տառիս կոչեցեալ Սաղ-

մոսարան, ի թւականիս հայիս ՌՃԸ (1659) ամին, ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բունութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել սպդիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ սուրինակելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւն լնուք և խոշորութեանց և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որո[յ] երեսս ի դետին դնելով աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք անարժան գծողիս Աւետիսի, և ծնօղաց իմոց, և ամենայն ազգականաց իմոց. ամէն։

Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս, որ կոչի Սաղմոսարան ի յերկիրս Մայեկաց, ի գեօղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ սբ. երիք խորանացս՝ Ս. Պետրոսի և Պօղոսի և Ս. Գէորգա[յ] զօրավարին, սր է արևելեան կուսէ հանդէպ Ապարանից Ս. Նշանին։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հարք և եղբարք իմ, յիշեցէք ի Քրիստոս ըղտէր Գալուստն և Աստուած ողորմի ասացէք նմա, որ ստացաւ զՍաղմոսարանս ի հալալ վաստակոց իւրոց ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնօղաց իւրոց, հաւրն՝ Ասմանդարին և մաւր Մարգարտին, և եղբօրն՝ Յուսեփին և կողակցին՝ Խաթունին. լի սրտիւ և բոլոր հաւատով ասացէք Աստուած ողորմի...։

1374
ԱԻԵՏԱՐԱՆ
ՅՁՄՆՍ. № 2

Գրիչ՝ Ղուկաս Երէց
Վայր՝ Մըսրուց

ա

66 Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Ղուկաս իրիցու, թվին ՌՃ և ութ (1659), ի շէնս որ կոչի Մըսրուց, աղաչեմ յիշել ի Տէր։

բ

Զարժանագով զարհին Գողթան
Զտէր Խաչատուր այր սրբազան,
Յաղաւթս առնել զնա յիշման,
61 Արժան վարկջիք դուք միաբան,
Որք տեսանէք զայս բուրաստան,
Զծաղկափթիթ տեառն անդաստան,
Որ ստացաւ անձին սփոփան,
Եւ յիշատակ իւր յաւիտեան,
Եւ ծնողացն իւրոց համայն,
Սա յիշատակ միշտ անխափան։

1375
ՅԱՅՄԱԻՈՒՐՔ
ՅԶՄՆՍ. № 12

Գրիչ՝ Ըստեփանոս երէց
Վայր՝ Ասպահան

ա

97 ... որոյ աղօթիւքն ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս խօջայ Նազարին և կողակցին՝ Խաթուչանին և որդոցն՝ պարոն Սաֆրազին, Էլիազին, Վաթանին, և եղբօրն՝ խաւջայ Սաֆարին, և գծողի տառիս, կարդացողաց։

բ

... որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս՝ խաւջայ Սաֆրազին և կողակցին՝ Յուդիդէ Գուլնաբաթին և որդոցն՝ պարոն Վաթանին, Մէլիքաղային, դստերն՝ Մամին։

գ

... ստացողի գրոցս խոջա[յ] Նազարին և կողակցին՝ Խաթուչանին, որդոցն՝ պարոն Սարֆրազին, Էլիազին, Վաթանին, և ծնօղացն՝ խօջայ Խաչիկին, Մամին և Ըստեփանոս գծողիս։

դ

96 ...Արդ՝ զայս լուսալ և տեսեալ պարոն և խաւջայ Վաթանն ցանկացաւղ եղեալ աստուածային տառիս այս և ի բարեխաւսութիւն սրբոցս ապաւինեալ, որ հաւաքեալ կան ի սմա, ի միտ առեալ զբանն Եսայեա, որ ասէ. «Երանի...»։ Եւ ետ [գր]ել զԱյսմաւուրս և պատմութիւն սրբոցս, որ հաւաքեալ [կան] ի սմա, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց՝ պարոնաց պարոն և իշխանաց իշխան խաւջայ Սարֆրազի, և եղբարացն՝ խաւջա[յ] Էլիազին, խաւջայ Յէկազին, Վաթանին և ծնողացն իւրեանց՝ խաւջայ Նազարին և պապուն՝ խաւջա[յ] Խաչիկին, Մամին և որդոյն՝ Սարֆրազին, նորաբողբոջ Մէլիքաղային և մօրն՝ Գուլնաբաթին։

Արդ՝ յիշեցէք... խօջայ Սարֆրազին, և կողակցին իւրոյ՝ Յուդիդէ, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն, և յիշողդ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ...։

Արդ՝ գրեցաւ տառս ի Շաւշ քաղաքն, Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Յովանիսի, որ աստ կան բազում նշխարք սրբոց. ձեռամբ անարժան և անպիտան, հող և մոխիր Ըստեփանոս երիցի։ Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին, աւարտեցի զգիրքս զայս, ի թուականիս Հայոց ՌՃ և Ը (1659) ամին, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին, և ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ Յակոբ կաթողիկոսին, և մեր գեաւղիս Ջուղայոյ՝ Դաւիթ արքեպիսկոպոսի և առաջնորդի։ Այլ արարէք գծող տառիս Ըստեփանոս Էրէցս և զիմ ծնաւ[ղ]քս՝ զտէր Մարտիրոսն և զԹանկն, արժանի վասն միոյ Տէր ողորմի։ Եւ դարձեալ աղա[չեմ] զձեզ,
97 զի անխափան կատարէք զվկայութիւն սբ. մարտիրոսացս՝ կարդալով// զյիշատակ վկայութեան յիւրաքանչիւր յաւուր տաւնի, զի վասն այն է յարմարած համառաւտ և կարճաբան, զի մի ոք ձանձրասցի։ Այլ ամառն և

աշուն, ձմեռն և գարուն, անձանձրոյթ կարդայք, և ընկալջիք ի սր. վկա. յիցս և ի Քրիստոսէ փսխուսրէնն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, զաւելն բառնայք և զՊերին ընուք, և խաչորութեան և սխալանացս անմեղադիր լերուք, վասն Աստուծոյ, զի կար մեր այս էր։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ քահանայքդ և ոամիկ ժողովուրդդ, որք ընթեռնուք զսա ուղիղ հաւատով և լի սրտիւ և բեր[ան]ով ողորմի ասէք ստացողի տառիս, պարոն խաւշայ Վաքանին և կողակցին իւրոյ՝ Թանկխաթունին, և որդոցն՝ Դրիգորին, Սարֆրազին, Նազ[ա]րին, Ղազ[ա]րին և դստերն՝ ///

1376

ԱԻԵՏԱՐԱՆ

ԾՁՄՆՍ, № 106

Գրիչ՝ Ալիքսան

442 Ի մահտարաժամ յաւուրքս կոչման,
Ես եմ վարանման, խեղճ և լալական,
Ոչինչս Ալիքսան՝ գրողս մեղական,
Չէ արժան գերիս անուանակոչութեան։
Այլ զձեզ աղաչեմ, ով դասք լոյսերամ,
443 Զմեղսանելիս յիշել ի սր. հայր մեղան,
Որ է արհնեալ յաւիտեանս. ամէն
Թվին ՌՃԸ (1659)։

1377

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1963 թ., Թ—Ժ, № 198 (ԺԴ—ԺՆ դ.)

Հետ. ստացող՝ Նանիկ

ա

61 Վերջին ստացող սր. Աւետարանիս յիշեսցէք զտառապեալ աղախին զՆանիկս, որ հալալ արգեա[ն]ց իմոյ գնեցի սր. Աւետարանս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հարն իմոյ՝ Քրիստոսայտուրին և մարն իմոյ՝ Սալմին, որ առ Աստուած փոխեցան, և յեղբայր իմ զՅովանէսն, և զաւակն իմ՝ զԳրիգորն, զոր տղայ հասակ[աւ] ի Քրիստոս փոխեցաւ, և նորայհասակ որդիս իմ զԽաչատուրն սարկաւագն, և նորայբոխբոջ Պետրոսն։ ...

Ի թվին ՌՃԸ (1659). ամէն։

բ

Դարձեալ կրկին անգամ յիշեսցէք Քրիստոսայտուրն և իւր կողակիցն՝ Սալմին, և իւր որդին՝ Յովանէսն, և իւր կողակիցն՝ Խաթուն, և իւր որդին՝ Այվազն և Հայրապետն[14]։ Կամ կարդալով կամ աւրինակելով Աստուած ողորմի ասէք, ողորմի Աստուած ձեզ ի գա[լս]տեան իւր. ամէն։

[14] Տպված «Հայրատէտն» ձևով։

1373
ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 9—է, 1971, № 270. տե՛ս նաև «ՀԱ», 1947 թ., էջ 474, № 2, Ա. Ալոյոյանյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1590—1591

Գրիչ՝ Պետրոս դպիր
Վայր՝ Զիլայ

93 *Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՃ և ութին (1659), ի գիւղաքաղաքն Զիլայ, ի դուռն Ս. Յակոբայ։ Արդ՝ աղաչեմ սբ. Հանդիպողդ տեսութեամբ կարդալով կամ սուրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտան մեղաւք լցեալ Պետրոս անուն դպիրս, որ անուամբս եմ կոչեցեալ և զործովս եմ հեռացեալ։*

Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս ձեր։ զծնաւղս իմ զտէր Խաչատուր քահանայն և զմայրն իմ՝ զԳեղեցիկն երեցկին, և զեղբայրն իմ՝ զՄարտիրոսն, և հաւրեղբայրն իմ՝ զմահտեսի Վարդերեսն, որ առ Աստուած փոխեալ է...։

1379
ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՏՁՀՄՍ, II, № 53

Գրիչ՝ Սահակ դպիր
Վայր՝ Ատանա

149 *Փառք..., որ ետուր ինձ կարողութիւն տկար անձինս իմոյ հասուցանել յաւարտ զսբ. դէրքս այս, որ կոչի Շարակնոց, ձեռամբ յոգնամեղ և անիմաստ գրչի Սահակ դպրի։ Արդ՝ գրեցաւ սայ ի մայրաքաղաքն ի յԱտանայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Ստեփանոս եկեղեցեացքս, ի թվականութեանս մերում ՌՃԸ.(1659), ի հայրապետութեան տեառրն տէր Խաչատուրին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, անմեղադիր լերուք խոշորութեան և սղալանաց գրիս, զի կար մեր այսչափ էր։ Դարձեալ աղաչեմ ըղձեղ, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զծառայն Աստուծոյ ըզՍահակ դպիրն, և ըզհայրն իմ՝ ըզԹորոսն և ըզմայրն իմ՝ Հեղենի և եղբարքս իմ։ Եւ ողորմի ասացէք ծնողացս իմոց և վարպետաց. և Աստուած ձեզ և մեզ ողորմի աւուրն ահեղին. ամէն։*

1380
ԱԻԵՏԱՐԱՆ

Բաս. «Բանասէր», հտ. Բ. 1900 թ., № 12.

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Վենետիկ

ա

147 *Յանարժան Յակոբ գծողս, և զհայրն իմ՝ զտէր Ստեփաննոս քահանայն, և զմայրն իմ՝ ըՍանայն միով ողորմ[ե]ալի յիշել աղաչեմ, և դուք յիշեալ լինիջիք ի խաչեալ արքայէն ի միւսանգամ գալստեանն։ Գրեցաւ թվին Հայոց ՌՃԸ (1659), ի վայելուչ քաղաքն Վենետիք։*

Բ

Զբազմամեղ Յակոբ գրիչս, և զհայրն իմ՝ զտէր Ստեփաննոս քահա-
148 նայ, որ մականուամբ կոչի Ձիք, և զմայրն իմ՝ զԱնայն, // յիշեցէք միով
ողորմեայիւ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ։
Գրեցաւ ի Վէնէտիկ, թվին ՌՃԸ (1659)։

Գ

Զբազմամեղ Յակոբ դրծողս աղաչեմ յիշել միով Հայր մեղայիւ, և
դուք ընկալջիք զնոյնն։

1381

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՑԻՈՅ

«Արձագանք», 1888 թ.

Վայր՝ Սպահան

412 Փառք...։ Արդ՝ սկզբին եղև սբ. գիրքս ի յերկիրն Պարսից, ի քաղաքն
Շօշ, որ այժմ Ըսպահան վերակոչի, ի թագաւորութեան շահ Աբասին,
հայրապետութեան տեառն Յակովբ կաթուղիկոսի, թվականին Հայոց ՌՃԸ
(1659) ամին։ Արդ՝ ստացաւ սբ. գիրքս բարեմիտ և քրիստոնեա հաւա-
տովն և գործովն բարի անուն Սիմոն և կնոջն՝ Դուլիաջավարձ ի հալայ
և ի վաստակոց իւրեանց, և ետուն յիշատակ որդւոյ իւրոյ Մարկոս եպիս-
կոպոսին, ի վայելումն իւր հոգւոյ և յիշատակ յաւիտենական. ամէն։

1382

ԱԻԵՏԱՐԱՆ

«Բանբեր Մատենադարանի», № 9

Գրիչ՝ Սիմէօն Մահանայ

Վայր՝ Եաշ

453 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականութիւնս Հայոց
ազգի ՌՃ և Ը (1659) ամի, ի յերկիրն Պուղտանաց, ի մայրաքաղաքն
Եաշն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչոյն, ձեռամբ յոգ-
նամեղ և մեղսաթաւալ սուտանուն Սիմէօն քահանայ[ի]։ Որք հանդիպիք
սմա կարդալով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր
ըզծրող սորին և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է
աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

1383

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վ. Ագուլիս, «Արարատ», 1915 թ., էջ 382

Գրիչ՝ Ազարիայ

ա

Զմեղսամած Ազարիայ փծուն գրչակս յիշել մաղթեմ ի Տէր. թվին
ՌՃԸ (1659)-ում ծրեալ եղև։

Բ

Զփծուն գրչակ Ազարիայս յիշել մաղթեմ զձեզ. թվին ՌՃԸ (1659)-ում դրեալ եղև։

Գ

Փառք...։ Որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք երկնաընթաց աղօթս ձեր զՄարկոս աբեղայս և ծնօղքն իմ՝ զՍիմէօն և Դունիշաֆարն, զՍարգիսն և Հոռոմսիմէն, և կողակիցն իմ՝ Գուլշիշակն, յիշեսջիք...։

1384

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Գեղարքունի, էջ 389.

Գրիչ՝ Բէգիջանենց Գասպար

Վայր՝ Շոռոթ

Աւարտեցաւ քրիստոսահիմն և քաջ նահատակաց և մարտիրոսաց հոգաբուխ սբ. տառս ի թուականութեան Հայոց ՌՃ և Ը (1659), ի յերկիրն Երնջակայ, ի գեօղաքաղաքս որ կոչի Շոռոթ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին և Ս. Յակոբ հայրապետին, ի հայրապետութեան էջմիածնին տեառն Եղիազարի սրբազան կաթուղիկոսի և արհի եպիսկոպոսութեան մերոյ տէր Գրիգորի[45]։

Արդ՝ աղաչեմ զձեզ ծնունդք եկեղեցւոյ, որք հանդիպիք կարդալով և օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զԲէգիջանենց Գասպարն և ծնողացն՝ Պապասին և Խանաղին և որդոցն՝ Պալասանին, Յակոբին և Պապասին։

[45] Սմբատյանը կլոր փակագծերում ավելացնում է. «թերթը ճղուած և գրերը ջնջուածք»։

1385

ԱԻԵՏԱՐԱՆ

Գ. Ասլանյան, «Տաճար», 1912 թ., № 4, էջ 53—54

Գրիչ՝ Տիրատուր դպիր

Վայր՝ Պողազ հիսար

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի դիւղաքաղաքս որ է Պողազ հիսար[1], ի դուռն Ա. Գէորգայ, ի թվականիս Հայոց ՌՃԹ (1660), ձեռամբ և մեղսասէր գրչի Տիրատուր դպրի։ Այլ և յիշեցէք ... Խարբերդցի տէր Մարգարէին և իւր ծնօղացն, որ ինձ աշխատեցաւ ի մագաղաթիս քերելն և ի կոկելն։ Յիշատակ է սբ. և աստուածախօս Աւետարանս աստուածասէր և պայծառ, բարեպաշտ և երկիւղած առնս խոճայ Դասպարին և իւր կողակցին՝ Մարիամին, որ փոխեալ է ի կենացն, և ծնօղացն իւր՝ նոյն բախտին, և մօրն՝ Պէհրէ, և ամենայն արեան մերձաւորացն, որ հանգուցեալ են ի Քրիստոս։ Եւ ըստացաւ զսբ. Աւետարանս Ս. Գէորգայ։ Զունի ով որ իշխանութիւն սորա՝ զսբ. Աւետարանս գրաւ դնելոյ կամ ծախելոյ, թէ որ յանդգնի՝ ոմասն Յուդայի առցէ։ Յաւարտումն եղև սբ. Աւետարանիս յունվար ամսոյ Ե (5), օրն հինգշաբթի[2], յաւուրս ճրագալուցի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. փառք...։

1386

ՎԱՐՔ ՀԱՐԱՑՆ

Մշեցի, V, № 1636

Գրիչ՝ ստացող՝ Նազար Հիզանցի

549 Փառք...։ Արդ՝ դրեցաւ Վարք սբ. հարց ի թվականի ՌՃԹ (1660) յաբրաց Դ (4) և մարտ Թ (9)։

Ո՜վ սբ. հայրք և եղբայրք, մի՛ մեղադիր լինիք ինձ վասն այսպիսի քաղուածոյս, վասնզի յոյժ փափաքէի լսել զվարս և զառաքինութիւնն նոցա, վասն խստասրտութեան իմոյ գրեցի, զի ընթերնում յամաւթ և ի նախատինս ինձ։

Արդ՝ ի յաբեթական տոհմի տոմարիս

---

[1] Հրատարակիչը ծանոթագրում է, որ «Տարտանելի հին անունը Պողազ Հիսար է եղեր»։

[2] 1660 (ՌՃԹ) թվականը նահանջ տարի է, հունվարի 5-ն իրոք հինգշաբթի է։

Երկու քառեակ թիւ հարիւրի,
Վեց յոբելեան և իններկի (1660)[3].
Գրեցաւ ձեռամբ եղկելի Նազար անուն այր Հիզանցի:
Ի ԺԶ (16) տետրս այլ՝ափ գիր կայ [illegible][4].

1387
ՀԱՄԱՅԻԼ
Երևան, № 10324

Գրիչ՝ Մարուք

ՀԷ Այլ ակն ունելով յուսով սպասեմ սբ. ընթերցողաց, աղօթիւք յիշել զիս՝ անարժան Մարուք նիհար զրչիս։ Թվին ՌՃԹ (1660) մարտի ամսոյ ԺԱ (11) էր։

1388
ԳԱՆՁԱՐԱՆ
ՄՍՁՍ, № 71 (1497 թ.)

1ա1 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս, և լի բերանով ողորմի ասէք մահտեսի Ղուկասին, և ծնօղաց նորին, և զաւակացն, և կենակցին իւրոյ՝ մահտեսի Խաթունին, և Եաամինին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորացն, որ ետ նորոգել զԳանձատետրս ի հալալ ստացուածոց իւրոց, Թվին Հայոց ՌՃԹ (1660) ամին, ի մարտ ամսոյ. Աստուած ողորմի ասէք. ամէն։

1389
ԱԻԵՏԱՐԱՆ
ՈՍՁՄՎ. № 1053

Գրիչ՝ Ստեփանոս քահանայ

ա

720 Զսուտ Ստեփաննոս քահանայս Թվին ՌՃԹ (1660), ապրիէլի Զ (6)։

բ

Զգծօղ Ստեփանոս քահանայ յիշէ Թիւ ՌՃ[Թ] (1660)։

1390
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 702

Գրիչ՝ Յակոբ երէց

ա

148ա Յակոբ գծողս տառապեալ,
Ի սրբութեանցն հեռացեալ,

---

[3] Այսինքն՝ [2×4×(100)]+(6×50)+9+551։
[4] Այսինքն՝ 16397։

Բիւզանդիոյ ելեալ եկեալ,
Եւ այս երկրիս եմ պատահեալ։
Ո՛հ թէ լինէր մեզ երանի,
Ելեալ գնացաք մեք յայն տեղի,
Զեկեղեցիսն տենչալի,
Տեսանէաք Սրն. Սոփի։
Անհաւատիցն Մարացոց,
Եւս առաւել Հագարացոց,
Բանն Աստուծոյ կատարելոյ,
Եւ տայ զերկիրս Հռոմայեցոց։

բ

189բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ ծաղկալից բուրաստանս ձեռամբ բազմամեղ գրչիս Յակոբ երիցուս, թվին Հայոց ՌՃ և Թ (1660), ապրիլ ամսոյ Ժ (10), աւրն երեքշաբթի։ Դարձեալ յիշեցէք ղցանկացաւղ սորա Յափուշեխացի
190ա զտէր Ինգնատիոսն, որ եռաւիտիաք // սրտիւ ետ գրել զգործ սրբոյն Ներսէսի մինչև ի բառնալ թագաւորացն Հայոց։ Արդ՝ յաղագս սխալանացն անմեղադիր լերուք։

Ասրիլ թէ լուսին բակ առնու՝ շուրք պակասին։
Մայիս թէ լուսին բակ առնու՝ պատերազմունք լինի[5]։

1391
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6518

189ա Գրեցաւ Հայոց թվականին,
Հազար հարիւր և յինն ամին (1660),
Ընդ հովանեաւ Ս. Նշանին,
Ձեռամբ որդւոյ Բարղամ գրչին։
Որ ըսկսայ ի յուրբաթին,
Ցունիս ամսոյ տասն և վեցին,
Աւարտեցայ ի շաբաթին,
Ցունիս ամսոյ տասն և վեցին[6]։

1392
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՔ, № 140

Վայր՝ Սուրաթ Բանդար

189 Փառք...։ Եւ արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրն Հնդկաց, որ

[5] Այնուհետև էջը մնում է դատարկ և հաջորդ էջից այլ գրով շարունակվում է նման գուշակում։

[6] Հավանաբար պետք է հասկանալ այսպես՝ գրելը սկսել է 1659 թ. հունիսի 16-ին, ուրբաթ, թեև այդ օրը հինգշաբթի է և ավարտել 1660 թ. հունիսի 16-ին, շաբաթ։

կոչի Սուրաթ-Բանդար, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԹ (1660) յունիս ԺԹ (19), ի կաթողիկոսութեան հայկաղան սեռի տեառն Յակոբայ:

1393
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Զմմառ, № 445 (1657 թ.)

ա

41 Աւարտեցաւ և կատարեցաւ սբ. ժամանակագրութիւնս ի նուէր Ս. Երրորդութեան, և եղեալ աստուածապահ քաղաքիս ի Լիվոռնու ի վաղմիաթ, յիշատակ մնասցէ ի սբ. եկեղեցոյս Սան Կոզմոյն, մնասցէ աստ մինչև ի կատարած սորին... ի յիշատակի հանգուցեալ ի Քրիստոս Ամիրասաթին, որ է աստ ի տապանի:

բ

[Յ]իշատակ ժամագիրքս ըստացող սբ. տառիս Բաբէն ի սեռէն աղգաւ Դիլաֆէնց, զհայրն՝ Եղիազարն և զմայրն՝ Շէնզաայն և Փէրիիրանն, զեղբայրն՝ Ամիրասաթն, որ է հանգուցեալ առ Քրիստոս. զիս յընչից Ամիրասաթին գնվեցաւ, վասն յիշատակի յոգոյ իւրոյ. և զեղբայրքն սոցայ՝ Աւետիկն, Միասարն և քվերքն սոցա՝ Խանփարվարն, Փէրիխանն, որ է հանգուցեալ, Թարվէզն, Խաթիշան և այլ արեան մերձաւոր սոցին, յիշեցէք...:

[Ե]ւ արդ՝ գիրքս զայս տվաւ վաղմիաթ Սան Կաւզմուն սբ. եկեղեցոյն, որ գեր[եզ]մանն կայ ի մէջն եկեղեցոյն Ամիրասաթին: [Ո]ւխտունին դրած, որ գիրքս այս ի քաղաք Լիվոռնոյ ոչ ելանէ ի այլ[7] տեղ: Ով որ որ սա ի դուրս տանէ համ ի ծախս ձգէ՝ պարտական լիցի առաջի ահեղ դատաստանին Քրիստոսի Աստուծոյն մերոյ: Տուաւանք սայ յիշատակ ի Սան Կոզմուն թվին ՌՃԹ (1660), յուլիսի Ը (8)-ումն: Մնասցէ աստ մինչ ի կատարած սորին:

գ

42 Այս ժամագիրքս յիշատակ է Ամիրասաթի հոգւոյն յԱլէկսոնայ /ի քաղաք ի դուռն սբ. եկեղեցւոյն, ուր զետեղեալք կան Հայոց վաճառականք:

1394
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՑՑ, ԺԱՄԱՄՈՒՏՔ
ՈՑՉՄՎ, № 903

Գրիչ՝ Արիստակէս երէց

ա

489 Փառք...: Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ, որք հանդիպիք այսմ երգարանիս, եղանակելով կամ օրինակելով, երգելն զսղալանաց գրչիս մի՛ մեղադրէք, զի գոյ՝ միա չգրի և գոյ՝ որ միտքս չի հասաւ, ներել և թողու-

7 Տպված է «յայլ»:

թիւն շնորհել գրողի սորին։ Այլ և աւարտ ի թվին ՌՃԹ (1660) յուլիսի Ի (20)։ Տօնացուց և Շարակնոց ի մի տուփ եդաք։ ...

Բ

Այլ և զանարժան Արիստակէս երէցս յիշել և ողորմի ասել։

1395
ՄԱՇՏՈՑ

Մուրման., II, № 97

Գրիչ՝ Մատթէոս երէց

168 Փառք...։ Գրեցաւ, կազմեցաւ Մաշթոցս ձեռամբ // անարժան Մատթէոս երիցու... թվին ՌՃԹ (1660) հոկտեմբեր ամսոյ Դ (4) աւուրն։

1396
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Օրևան, № 9113

Գրիչ՝ Յոհանէս աբեղայ

ա

58ա Ո՛վ տօնասէր, յորժամ հանդիպիս տօնս տեսանելոյ, միով Տէր ողորմայիւ յիշեսջիր զտրուփ Յոհանէսս, որ յայսմ ամսոյ ձեռնադրեցայ՝ հոկտեմբերի ԻԲ (22), թվին ՌՃԺ (1660)[8]։

Բ

71ա Ո՛վ տօնասէր, ես՝ մեղապարտ և սևացեալ մտօքս Յոհանէս արուփ աբեղայս, յորժամ հանդիպիս տեսանելոյ կամ օրինակելոյ միով Տէր ողորմայիւ յիշեսջիր։

1397
ՊԱՏՄԱԳԻՐՔ

Երևան, № 3071

Գրիչ՝ Զաքարիայ դպիր
Վայր՝ Յոհանավանք, Յուշի

ա

3ա Յիշատակարան տառիս և միտ առնուլ պատմութեանս մեղաւոր Զատ. Ատ. Քատ. Ատ. Բատ. Իտ. Ատ. Յատ. Սատ[9]. յիշեցէք։

Բ

81բ Աստուծով աւարտեցաւ զեօթներորդ տետրս ձեռամբ ամենամեղ Զաքարէի դպրի, թվին Ռ և Ճ (1651)։

---

[8] Հայոց ՌՃԺ, ՌԺԱ, ՌՃԺԲ, ՌՃԺԳ տարեթվերը շարժական տոմարի համաձայն սկսվում են 1660, 1661, 1662, 1663 տարեթվերի հոկտեմբերի 7-ին, ուստի ՌՃԺ թվականի հոկտեմբերի 22-ը պետք է հաշվել 1660 տարեթվում։

[9] Այսինքն՝ «Զաքարիայս»։ Կարդալ միայն մեծատառերը։

Գ

89բ Ընդ որում և փրկեսցէ Քրիստոս և զստացող և գծող տառիս զՁաքարէ գրիչս. ամէն։

Դ

130բ Մանաւանդ սրբասնեալ և աստուածուսոյց հօրն իմոյ՝ Յովհաննէս վարդապետին և ուսուցչին իմոյ՝ Խաչատուր վարդապետին, հանգուցեալոյն ի Քրիստոս...։

Ե

139ա Գիտեա ով եղբայր, այս Թամուքիս պատմութիւնն քան ղչափն աւելի սխալ էր յօրինակն և զմնացեալն պատուով, որ երբէք չկարէի իմանալ զբանն։

Զ

283բ Վասն յիշատակարանի տառիս և ի պատմութեանս Փառք...

Արդ՝ եղև զրաւ և աւարտ և ի ծայր կատարման գրչութեան տառիս, որ կոչի Պատմագիրք, ըստ անուան երիցս երանեալ և երջանիկ տեառն Կիրակոսի վարդապետի[10], ի թուաբերութեանս աբեթեանս զարմի և թորգոմեանս շառաւիղի, հայկականս սեռի և արամեանս տոհմի, Արշակունեացս ազգի և Պարթևացս տոմարի, սրբոյն Գրիգորի մեր լուսաւորչի Ռ-երորդի Ճ-երորդի առաջիներորդի (1652) ի մարգաց ամսի ի ԺԶ (16)-ի, աւուր ուրբաթի[11], փոխման սբ. Կուսի սր. Աստուածածնի[12], ի յերկիրս յԱրարատեան, ի գաւառս Կարբոյ, ի հռչակաւոր ուխտս և աստուածաբնակ
283գ տեղիս, հրեշտակաճեմ տաճարս և լուսակառոյց կաթուղ//ղիկէս, որ կոչի Յոհաննու վանգ, ընդ հովանեաւ Մօրս լուսոյ՝ Ս. Աստուածածնիս և սբ. Նշխարաց Յոհաննու Կարապետին և սբ. Լուսաւորչին և մասանց Պարսամա ճգնաւորին և Ստաթէի առաքելոյն և գերեզմանի Վաչէ Շահնշահ իշխանի շինողի սր. եկեղեցւոյս, ի թագաւորութեանն Պարսից շահ Աբասի Երկրորդի, յամիրայութեանն յերկրիս Մահմետի, ի հայրապետութեանն էջմիածնին տեառն Փիլիպպոսի սրբասնեալ կաթողիկոսի, և առաջնորդութեան սբ. տեղեացս երիցս երանեալ և երջանիկ քաջ Ղարամնապետի տէր Ձաքարեա, որ իբրև շահ անշէջ և պարիսպ անդամ անդեա և որպէս զվեմ հաստատուն կայր ի մէջ եկեղեցեացս Հայաստա[ան]եաց, զի բազում ինչս եթող յիշատակ ուխտիս հոգևոր և մարմնաւոր. որ և վերստեան նորոգեաց զեկեղեցիքս, որ աւերեալ էր յանօրինաց։ Եւ տէրս մեր շինեաց և նորոգեաց բազում ծախիւք առաջ քան զամ մի, վասն փրկութեան հոգւոյն իւրոյ և յուսոյ արքայութեանն։ Արդ՝ և մեք աղաչեսցուք բոլորով սրտիւ զտէրն մեր Յիսուս Քրիստոս, զի ամուր և հաստատուն ձեռօք պահեսցէ սա, մինչ մարմնի աստ է և յետ աստեացս յերկնից արքայութեանն արժանի արասցէ պսակակից առնելով ԹԺ (12)-ան վարդապետացն. ամէն։

[10] Սկզբնապես գրված է «կաթողիկոսի», ապա չնչված է և ձախ լուսանցքում ավելացված է «վարդապետի»։

[11] Այսինքն՝ 1652 թ. օգոստոսի 20-ին (շարժական տոմարով), այդ օրն էլ իրոք ուրբաթ է։

[12] 1652 թվի Աստվածածնի վերափոխման տոնը կլինի օգոստոսի 15-ին, կիրակի։ Աստվածածնի վերափոխման ուրբաթը կլինի օգոստոսի 20-ին (տե՛ս ծանոթ. 13)։

ի վայելումն հոգևոր ծնողին իմոյ՝ հեզահոգի և սրբասնունդ Յովհաննէս վարդապետի՝ յառաջնորդի աթոռոյս։

Արդ՝ որք հանդիպիք սմա օրինակելով կամ գաղափարելով և կամ ակամբ նայելով, յիշեցէք ի մաքրափայլ և յերկնաթռիչ յաղօթս ձեր, զվերոյ գրեալ տէր մէր զԶաքարեա բարունապետն և զհայրն իմ՝ զՅովհաննէս վարդապետն, և ուսուցիչն իմ՝ զխաչատուր վարդապետն, որ երիտասարդական տիօք փոխեցաւ ի Քրիստոս դասաւորելով ընդ աւուրբս, Ռղէ (1648) թվի սահմի ԻԸ (28), յաւուր Յայտնութեանն և ջրօրհնէքին[13] և սուգ
283գ անմխիթարելի եթող մեզ ամենեցուն։ Յիշեցէք զնոսա ի Քրիստոս հան//դերձ ծնողքն իւրեանց, և բոլոր միաբանք ուխտիս և մանկունք սորա։ Նաև զմարմնաւոր ծնողսն իմ՝ զՄկրտիչն և զխանաղայն, և զեղբայրն իմ՝ զխաչատուրն, ընդ նմին և զիս՝ զտառապեալս և զեղխեալս մեղօք զղեղկելիս և զդապիկար գրիչս զԶաքարէ զպիրս զդծող տառիս, որ միայն անուամբ կոչիմ ի կարգէ եկեղեցականաց, բայց գործովս հեռի և որոշեալ, ծոյլ և պղերգ ի բարիսն, արագ և փոյթ ի չարագործութիւնն...։

Ծանիք ո՛վ պատուական ընթերցողք և վայելողք, զի ոչ թէ իբրև ճարտար գրագիրսն և կամ որպէս զիմաստուն ընթերցողսն համարեցէ զանձն իմ, այլ մէջայն զանգիտութիւնս իմ յօժարեցաւ գրել զայս, ըստ խնդրոյ հօրն իմոյ՝ Յովհաննէս վարդապետին։ Ապա և դուք թողութիւն շնորհեցէք վատթարութեան գրիս, պակասութեանն և սխալանացս, վասն զի օրինակն կարի սխալ էր, և զոր ինչ կարացաք զայն հազիւ գրեցաք և զմնացեալն դու քո վեհ իմաստութեամբդ ստուգեա և զիս մի՛ բամբասես, այլ մանաւանդ ի մեղադրանաց անպարտս արասցես։ Բայց և զայս ծանիք, ո՛վ աստուածասէր և սիրող ուսմանց, աղաչեմ, աղաչեմ և դարձեալ կրկին անգամ աղաչեմ, յերեսս իմ ի ներքո դարշապարհաց ձերոց դնելով, խնդրեմ թախանձանօք, զի յորժամ տեսանէք զգիրքս ելեալ ի վանիքն, սակս դոյզն պատճառանաց կամ դողացեալ լինի և կամ գրաւ եդեալ կամ իրերաց շնորհեալ, վասն սուտ սիրո մարմնաւորաց, դու ազատեա զսա գնելով և տուր ի դուռն սբ. ուխտիս Յովհաննու վանից և զքո յիշատակն գրեա ի ներս, զի և սակաւ յիշատակն մեր մի կորիցէ ի դրանէ վանիցս։

Զայս ևս իմա, ո՛վ սիրելի սրբոց, զի սովոր են ոմանք ի մէջ գրոց անէծս, վասն զի մի՛ հանիցեն ի տեառնէն իւրմէ. բայց ես ոչ այդպէս,
284ա այլ մանաւանդ զՔրիստոս ամենայն սրբովքն բարեխօս// և միջնորդս արկանեմ առ այդպիսիսն, զի մի՛ հանիցեն ի դրանէ Յովհաննու վանիցն վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն և նմա փառք յաւիտեան. ամէն։

Է

Յիշատակարան

389բ Փառք...։ Որոյ ամենակար շնորհիւն եղև աւարտ և ի կատար պատմութեանս, որ կոչի Բիւզանդ, որ է Փաստոս, ի թուականութեանս հայկազնեա Ռ-երորդի Ճ-երորդի և Զ-եակ (1657) թուոյ[14], ի յերկրիս Արարատեա-

[13] Այսինքն՝ 1648 թ. հունվարի 6-ին։

[14] Զեռագրի ընդօրինակությունը սկսվել է 1651 թ. (տես բ հիշատակարանը) և ավարտվել 1660 թ. (տե՛ս ը և ծ հիշատակարանները)։ Իսկ Բուզանդի պատմությունն ընդօրինակվել է 1657 թ.։

ան, ի նահանգիս Կարբոյ և ի սբ. ուխտ, որ կոչի Յոհանավանք, ընդ հովանեաւ մօրս լուսոյ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետիս և սրբոց առաքելոցն Մատթէոսի և Ստաքէի և սբ. մասանց Պարսամայ և այլ միա-
390ա հոյլ սրբոցս, որ աստ կան գումարեալ // ի թագաւորութեանն Պարսից շահ Աբասայ Երկրորդի և յիշխանութեան տանս Արարատեան Նանաֆ խանին, ի կաթողիկոսութեան սբ. Էջմիածնայ սրբազան և պատուական հեղինակի տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, և առաջնորդութեան սբ. ուխտիս երջանիկ և քաջ բարեբարեպետին Ջաֆարեայ, յորում ժամանակի նորոգեաց ղխաղքեալ եկեղեցիքս, որ էր քակեալ յանօրինաց. և տէրս մեր նորոգեալ վերստին պայծառացոյց, յոր և շինեաց ինքեան տաճար շինեալ ձեռացն ամենակար Տեառնի կաճառս հրեշտակաց։

Արդ՝ որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ և աստուածամերձ աղօթս ձեր զտէրն մեր զՋաֆարեայ բարեբարեպետն, և հոգևոր հայրն իմ, և դաստիարակն գերամաքուր և սրբասնունդ, հեզահոգի Յոհաննէս վարդապետն, փոխանորդն տեառն մերոյ Ջաֆարեա։

Եւ գիտեայ, զի կատարումն սորա եղև ի վանս Յուշոյ, ի դրունս Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորայ Մարտիրոսի, և առաջնորդ սրբոյս մեծ հռետորն և քաջ փիլիսոփոսն Ոսկան վարդապետն, որ և շինեաց պարիսպ ապառաժ վիմէ մեծածախ և գեղեցիկ շինուածովք։ Արդ՝ յիշեցէք գնոսա ի Քրիստոս հանդերձ ծնօղաց իւրեանց. և զիս ղտրուպ փանաքի և ցնոտի գարշելի և անարգ Ջաֆարիայ ևեթ միակեաց հանդերձ իմովք ծնօղաքն՝ զՄկրտիչն և զԽանաղայն, և զհոգևոր եղբայրն իմ՝ զկուսակրօն և դեռաբոյս զՄկրտիչ քահանայն, յիշեցէք ի Քրիստոս։ Եւ ինքն որ առատն է և ձրի շնորհօղ ողորմութեան, ձեզ և մեզ [առ] հասարակ ողորմեսցի։

Եւ դարձեալ ծանիք. զի եթէ տեսանիցէք ելեալ գիրք ի սբ. ուխտէս և դուք դարձեալ աղատեցէք զսա, և դուք ի դուռն Ս. Կարապետին, և զձեր յիշատակն ևս գրեսջիք ներումն, զի և զմերս մի՛ ջնջեսցի վասն սիրոյն Քրիստոսի...։

Կատարեցաւ և աւարտեցաւ յաւուրս ամսոցն արեգի ի քսան և չորս, յաւուր ուրբաթու[15]։

Ը

458բ Թուին ՌՃԺ (1660) հոռի ի ԺԳ (13) գրեցաւ[16]։

Բ

459բ Փառք...։ // Եւ արդ՝ ես մեղուցեալ և անպիտան ծառայս՝կիցս ձեր, իբրև տեսի թէ ոչ գոյ փրկութիւն վիրաւորեալ հոգւոյս իմոյ, զմտաւ ածի զբան մեծի մարգարէին Եսայեայ, թէ՝ «Երանի...»։ Վասն որոյ ես չարեօք լցեալս և մեղօք զեղխեալս, ծոյլս և պղերգի բարեգործութիւնս, արագս և փոյթս ի չարագործութիւնս, սուտանուն Ջաֆարիայ ևեթ անուն քրիս-

15 Այսինքն՝ 1657 թ. մայիսի 29-ին և այդ օրն էլ իրոք ուրբաթ է։

16 Այսպես է նշված նաև ծ հիշատակարանի վերջում։ Հայոց ՌՃԺ տարեթիվը սկսվում է 1660 թ. հոկտեմբերի 7-ին (շարժական տոմարով), իսկ նույն տարեթվի հոռի ամիսը սկսվում է նոյեմբերի 6-ից և ավարտվում դեկտեմբերի 5-ին։ Այստեղից էլ հայոց ՌՃԺ հոռի 13-ը կհամապատասխանի 1660 թ. նոյեմբերի 18-ին։

տոնեայ և գործով ունայն և թափուր, յօժարեցայ գաղափարել զգիրքս տխեղծ մատամբ և անվարժ մտօք ղչորեսինս զայսոսիկ. նախ՝ Կիրակոս պատմագիր, որ ունի առ ինքն զամենայն պատմութիւնս կաթողիկոսացն
460ա Հայոց, և թագաւորացն, և կայսերացն // Յունաց, և սուլտանացն Տաճկաց, և թագաւորացն Բագրատունեաց, և Կիլիկեցւոց, և շարս կաթողիկոսացն Աղուանից, նաև գալուստ ազգին նետողաց, և աւերումն աշխարհաց, և քաղաքաց, և այլ այսպիսիք գրուածք, զոր գրեալ է մեծին Կիրակոսի: Յաճախապէս որ կամիս իմանալ ցանկովն գտցես զնա։

բ. Երկրորդ պատմագիր Թումա վարդապետ, զոր պատմէ յսկզբանցն Լանկ Թամուրի մինչև ի վերջն և զամենայն աղէտս, զոր կրեաց ամենայն տիեզերք ի ձեռաց նորա, և զոր ինչ յետ նորա եղև աշխարհի, նաև վերըստին նորոգումն էշմիածնայ և կաթողիկոս ձեռնադրութեանն և աքսորելն նորա, որոյ անունն Կիրակոս ճգնաւոր. և այլ որ ինչ նմայ գործեալ է, գրեալ է զայն ամենայն Թումայ վարդապետ։

գ. Երրորդ պատմագիր Բիւզանդ, որ նա ինքն է Փoumou, որ պատմէ Խnurովա[յ] և Տրդատա[յ] սակաւ. և փոքր Խnurովա[յ] և Տիրանայ և զոր ինչ<և> եղև առ սա. նաև Արշակա[յ] քաջութիւնն և ԼԴ (34) ամ պատերազմ ընդ պարսիկս և մահ նորուն, և թագաւորելն Պապայ, և Վարազդատա[յ], և Մանուէլի սպարապետի և որդւոցն Պապա[յ] և Բ (2)-ո բաժանումն թագաւորութեանցն Հայոց, և զոր կամիցիս ուսանիլ ցանկն տեսցես։

դ. Չորրորդ Տամարական մակացութիւնն, զոր մեկնեալ է շնորհալից վարդապետն Յակոբ Ղրիմացին, համեղ և քաղցրաբանիւ ի քիմս ճաշակողացն և գեղեցիկ շարադրութեամբ. նաև ամենայն ազգաց տոմար և ամիսքն են աստ. որ է այս. նախ և առաջինն՝ Հայոց, Հռոմայեցւոց, Ասորւոց, Յունաց, Եբրայեցւոց, Արաբացւոց, Մակեդոնացւոց, Եգիպտացւոց, Եթովպացւոց, Աթենացւոց, Բիւթանացւոց, Կապադովկացւոց, Վրաց, Աղուանից, Պարսից և Տաճկաց։ Եւ Հռոմայեցւոց դարձեալ ոտանաւորաւ։

Արդ՝ ես ախնթոր Զաքարիա գրեցի զայսոսիկ և աւանդեցի ի դուռն Յոհաննավանից Ս. Կարապետին յուսումն մանկանց սորա և վայելումն հոգևոր ծնողին իմոյ և գորովալիր հօրն իմոյ՝ սրբասնունդ և մաքրաուսումն, երջանիկ և հեզահոգի Յոհաննէս բաբունտ[յ], ի թուականութեանս Հայոց ի ՌՃԺ (1660), ի թագաւորութեանն Պարսից շահ Աբասի կրսերոյ, և յիշխանութեանն տանս Արարատեան՝ Նանաֆ խանին, ի հայրապետութեանն սբ. էշմիածնա[յ] տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, և առաջնորդութեան սբ. ուխտիս Յոհաննովանից վերոյ գրեալ սրբազան վարդապետին՝ Յոհանի-
460բ սի, աշակերտի մեծին և // քաջ բաբունապետին Զաքարեայ Վաղարշապատցւոյ։

Արդ՝ տէր իմ Յիսուս, զի թէպէտ ոչ է ընդունելի քեզ զվաստակն իմ և ոչ է ի պէտս, ըստ այնմ ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց և թէ ոչ ընդունիմ ի տանէ քումմէ զուարակս, և թէ իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, և թէ նաշիհ ձեր անընդունելի են ինձ։ Արդ՝ սակս մարդասիրութեան քո ընկալ զսա լոմայս այրուոյն կամ որպէս ոտս մի յուռոց և կամ որպէս հատ մի յողկուզաց։ Եւ յիշեա գթութեամբ քո զառաջնորդ սբ.

ուխտիս Յովհանէս վարդապետն և զտէրն մեր զԶաքարիայ բաբունապետն զհանգուցեալն ի կաճառս սրբոցն, և զուսուցիչն իմ զխաչատուր վարդապետն վվտ (SIC) փոխեալն առ Քրիստոս։ Եւ այլ միեղէն միաբանք ուխտիս զՍարգիս վարդապետն, զտէր Մովսէսն զվերակացու տանս, զտէր Գրիգորն, զտէր Թումայն, զտէր Կիրակոսն, և զհոգևոր զաւակսն իմ՝ զտէր Խաչատուրն, և զՎարդան սարկաւագն, և զԱբրահամ խահարարն և զհոգևոր եղբայրն իմ՝ զտէր Մկրտիչն Ս. Սարգսի վանացն, նաև զիս զտրուպ Զաքարիայս, և զծնողսն իմ՝ զՄկրտիչն և զԽանադայն, և զեղբօր որդին իմ՝ զԿիւրեղ պատանին։

Արդ՝ որք հանդիպիք սմա, յիշեսջիք ի մաքրափայլ և յաստուածընկալ յաղօթս ձեր զվերոյ գրեալսն ի սմա, մանաւանդ Զաքարիա բաբունապետն և զՅովհաննէս վարդապետն՝ առաջնորդ Ս. Կարապետիս։ Եւ որք յիշեսցեն զմեզ՝ յիշեսցին ի Քրիստոսէ, և գրեսցին ի դիրն կենդանի։

Դարձեալ ծանիք, ո՛վ պատուական երամք քրիստոնէից, աղաչեմ զձեզ, աղաչեմ և դարձեալ աղաչեմ, վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն և կատարեալ հաւատոյտ ձեր թաղեալ սրտիս հայցեմ ի ձէնջ, յորժամ տեսանիցէք զգիրքս ելեալ ի վանացս Յոհաննու, աղաւեցէք սա և տուք դարձեալ ի սբ. ուխտս և զձեր անունն գրեցէք ի ներսն, զի և սակաւ յիշատակարան մեր մի՛ կորիցէ ի դրանէս, և դուք ըստ ողորմութեան ձերում առնուցուք ի Քրիստոսէ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ժ

Քաղաք մի կայր յոյժ անառի,
Երեսուն և ինն դռնի,
Նկ և Ը (468) բրքի,
Բնակողսն ի ներսն անթուելի։
Ես՝ Զաքարիայ մեղօք ի լի,
Զձեզ աղաչեմ արտա[ս]ուալի,
Զիս յիշեցէք սրտով ի լի,
Զի և Քրիստոս ձեզ ողորմի։

Թվին ՌՃԺ (1660) հոռի ի ԺԳ (13)։

1398

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁԱԲ, № 241

Գրիչ՝ Մարտիրոս երէց

ա

1099 Զանարժանս ի գրչաց և զթարմատարս ի բարեաց Մարտիրոս երէց անուամբ ևեթ, և գործով տարամերժեալ, յիշեցէք ի միտս բարիս, ո՛վ վե-
1100 րածնող հարք և եղբարք, և դուք յի//շեալ լիջիք ի միւսանգամ գալըստեանն։

Բ

Փառք..., որ ետ զօրութիւն տկար և փծուն գրչի Մարտիրոս երիցի, յանգ ելեալ աւարտեցի այսմ լուսազարդ և գերունակ աստուածեան աւե-

տաքարող Աւետարանս...։ Որոյ փափագող եղեալ յայսմ աստուածաշունչ տառիս Սրջուացի Նազարս, առի հալալ զսա. վաստակոց իմոց և ետու վախմ եկեղեցոյն մերոյ Ս. Ստեփաննոսի Նախավկային[17]։ Վասն որոյ և ես՝ տրուպս ամենայնի՝ Մարտիրոս երէց՝ գծող սորին աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ ընդ աղօտ տեսանելով կամ գաղափար դնելով՝ յիշեցէք ի սրբանուէր աղօթս ձեր, մանաւանդ զստացող սորին Սրջուացի Նազարն, և հայրն իմ՝ [Յ]ովասափն, և զեղբարսն՝ Սաֆարն և Վարդամիրն, և զկողակիցն նորին՝ Խալինարն. և զորդին՝ Հայրապետն, և զթոռունսն՝ [Յ]ովանէսն, [Յ]ովսեսափն, Սաֆարն, և զդստերս նորին՝ Եսայն, Խաթունն, Մարիամն, Հերիֆնազն։ Այլ և յիշեցէք զաներ նորին՝ զտէր// Մանկասարն։ Այլ և յիշեցէք զընստացող սբ. Աւետարանիս Նազարն, և զվերոյդրեալ ծնողսն իւր, և զորդին՝ Հայրապետն և զկողակիցն իւր, զթոռունսն, և զդստերսն իւր, և զամենայն
1102 արեան մերձաւորսն, յիշեցէք և Աստուած //ողորմի ասացէք. ամէն։

Գրեցաւ թուին Հայոց հազար հարիւր տասն (1660), դեկտեմբեր ամսոյ ի մէկն, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

1399

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 201

Ստացող՝ Զաքարիա վարդապետ

Վայր՝ Ասպանան

ա

610բ Փառք...։

612ա Եւ արդ՝ որ ոք կամեսցի սբ. գիրս ստանալ, պարտ է տասն իրս ունել յանձին.

Նախ՝ կատարեալ հաւատս ունել ա

Երկրորդ՝ սբ. սիրտս ստանալ. բ

Երրորդ՝ մեծ յոյս գ

Չորրորդ՝ բաղում յօժարութիւնս. դ

Հինգերորդ՝ առաւել խոնարհութիւն. ե

Վեցերորդ՝ յոլովակի համբերութիւն. զ

Եւթներորդ՝ աստուածային ստուգութիւն և ճշմարտութիւն. է

Ութերորդ՝ աստուածատեսակ առաքինութիւն. ը

Իններորդ՝ բարձրագոյն և աստուածանման սէր. թ

Տասներորդ՝ գարագոյն խաղաղութիւն առ Աստուած և առ եղբարս...։

Եւ արդ ես՝ վերջինս ի վերջին գարուս և վերջացեալս ի ծնունդս սրբոյ եկեղեցւոյ, ամենեցուն հող և մոխիր, նաև ես աջիւնս ոտից եկեղեցականաց, ապիրատս, փինատս, հէքս և թշուառացելոց թշուառացեալս Զաքարիա ևեթ բանի սպասաւորս կոչմամբ վարդապետ, աշակերտ գոլով մեծի և տիեզերահռչակ, երկրորդ լուսատուին Հայոց և վերստին նոր նո-

[17] Ցուցակի հեղինակի հաղորդմամբ, «Սրջուացի» բառից մինչև «նախավկային» բառը գրիչը տեղում բաց է թողել. ձեռագիրը գնելուց հետո ավելացրել են ստացողին վերաբերող տեղեկությունները։ Այդ վերաբերում է նաև ներքևի անձնանուններին։

ռոդոդի սբ. էջմիածնի *տեառն տէր* Մովսիսի *կաթուղիկոսի, որ էր նա յերկրէն* Սիւնեաց, *ի գաւառէն* Աճանանու, *ի գեղ[ջէն* Խո]տանան *կոչեցեալոյ, կրթեալ և վարժեալ ի մամուլս առաքինութեան ի ներքոյ ձեռին* Սրապիոնի Եդեսացւոյ, *որ էր կաթուղիկոս սբ.* էջմիածնի *և մեք նուաստացեալքս այսոքիկ աշակերտք գոլով նորին։ Նախկին և առաջին՝ առաջնորդ մեծի անապատին* Ստաքէի, *արի և ճգնաղգեաց* Արիստակէսն Շամբեցի։ *Երկրորդն՝* Իսրայէլ *վարդապետն* Մեղրեցի։ *Երրորդ՝ ճշգրտահանն, զմրրխտահանն և կինդանագրող քաջ քարտուղարն և աստուածաղարդ վարդապետաց վարդապետն* Խաչատուր Կեսարացի, *առաջնորդն մեծին* Ջուղայու։ *Չորրորդ՝ սրբաղնամաքուր և բաղմահանճար վարդապետն* Փիլիպպոս, *որ և յետ վախճանի առն Աստուծոյ տեառն* Մովսէսի *եղև կաթուղիկոս ամենայն Հայոց՝ ի թուականիս մերում ՌՁ և երեք (1634) ամին ի յաթոռս* էջմիածնի, *լուսաւոր հովուապետութեամբ զբաղում որդիս ի փառս աճեալ ի լուսաւորութիւն սրբոյ Սիոնի։ Եւ յետ ի Ի և Ա (21) ամի հայրապետութեան իւրոյ ժողովեցաւ ի յշշեմարանս ամենայն սրբոց քաջ հովուապետաց։ Հինգերորդ՝* Խաչատուր *վարդապետն* Երնջակեցի, *ի գեղջէն* Հոտլսա, *առաջնորդն* Արգուլեաց *և աթոռակալ սրբոյն Թումայի առաքելոյն, որ և սա նոր նորոգեալ պայծառացուցեալ զաթոռն զայն շքեղապանծ վայելչութեամբ ի հիացումն կարգեալ տեսողաց իբրև զդրախտ Աստուծոյ զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ հոգևորօք և մարմնաւորօք։ Վեցերորդ՝ ծերունի մաքուր աղանին, կուսութեամբ պերճացեալն և հոգւով բարդաւաճեալն* Յակոբ *վարդապետն* Ասապատեցի, *որ և սա այս սրբանուէր եղբայրս մեր զվանքն* Աստապատու, *որ ի վերայ* Երասխայ *գետոյն կայ ի կատարս քարանձաւին, շինեալ պայծառացոյց զբովանդակն՝ զպարիսպն, և զեկեղեցին, և զամենայն զորս ի նմա կան շինուածք։ Եւթներորդ՝* Եսայի *վարդապետն* Մեղրացի, *ի գեղջէն* Կարճաւան *կոչեցեալ, առաջնորդ* Երնջակայ *Ս. Կարապետին, որ և սա բազում աշխատութեամբ և անհանգիստ տքնութեամբ ի հիմանց ի վեր նոր իմն սքանչելատեսութեամբ շինեաց զեկեղեցի Սրբոյ Կարապետին, պարոսպաւն ամենայնիւ՝ կոփուածոյ վիմօք և ձուլածոյ կրով, ի փառս Փրկչին մերոյ և Աստուծոյ։ Ութներորդ՝ շնչին ես և եղուկ եղկելիս և ամենամեղ պարտականս բիւրոց և Ռ (1000)-աց քանքարաց* Զաքարիայ, *ի տանէս* Արարատեան, *ի* Վաղարշապատ, *շողակաթիկ սբ. աթոռոյս* էջմիածնի, *առաջնորդ* Ամատունեաց *Սրբոյ Կարապետիս, որ ի ստորոտս* Արագածու *և ի գաւառիս* Կարբոյ *և* յԱնբերդոյ, *բազում և ազգի ազգի տուայտութեամբ հեծեծէի տեգերեալ մտօք մանաւանդ սեռն արտասուօք յուսացեալ ի յու-*
612բ *սալին ամենից // յամենասուրբ Երրորդութիւնն, որ ետ կարողութիւն նորոգել զսբ. տաճարքս զայսոսիկ աստուածաբնակք։ Որ և ամենայն զարդիւք շնորհօքն Քրիստոսի զարդարեցի զսբ. զեկեղեցիքս ամենայն գոյականօք՝ շարժուն և անշարժուն, հոգևոր և մարմնաւոր շքեղութեամբ։ Բայց սակայն ցանկայի սրտառուչ տենչմամբ և պասքատոչոր կարօտիւ ի վերայ ամենայն ստացուածոց, զորս ըստ կարի ստացայ, ստանալ ևս գիրս Աստուածաշունչ կտակարանաց, սակս յիջատակի սրբոց տաճարացս, տոչորէի, այրէի, խորովէի և գալարէին աղիք իմ, թէ արդեաւ հասանիցեմ ցանկութեան սրտիս և ստիպման տենչանացս։ Այս ըստ տկար*

իմոյ կարողութեան ի դիպող ժամու տասն թուման ետու ի Դաւիթ վարդապետն, որ էր առաջնորդ Ջուղայու, որպէսզի գրել տացէ։ Բայց ի չրդոյէ նիւթոյ վարձու, կեղակարծ իսկ էի յուսոյն իմոյ։ Այլ ողորմածն Աստուած իսկոյն հասոյց ձեռնտու և օգնական զպարոն Վաքանն, գորգի մեծի աստուածասէր խօճայ Սաֆրազին, որ էառ յանձն հասուցանել ի վերջ կատարման, դրել տալ և ծաղկել ամենավայելուչ տեսութեամբ։ Բայց աստանօր յուշ առնեմ, սիրելեացդ, զայս ինչ, զի իմ գոլով ի Շօշ քաղաք Ասպահան, վարժեալ և սնեալ ի տիս մանկութեան ի մէջ ցուղայեցւոց քահանայից և առ հասարակ ժողովրդոց՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, ամենեքեան նոքա խնամք տանելով առ մեղաւորս, յօրացուցեալ զօրացուցին և ի յարրունս հասակի հասուցեալ և ի կարգ կուսակրօն քահանայութեան նուիրեալ հարսնացուցին և առաքեցին յաշակերտութիւն առ վերագոյն ասացեալ տէրն իմ՝ ըստ հոգւոյ ի սբ. կաթուղիկոսն Մովսէս։ Բայց հռչակաւորն յայնժամ և այժմուս ի մէջ ջուղայեցեացն Շանիիասենց խօճայ Խաչիկի որդիքն էին, երևելիք, փառաւորք, մեծաշուք և մեծահանդէսք արքայամաջլիս մուսահիպքն թագաւորին Պարսից՝ համաղուպանքն, համփիալայքն մեծի շահ Ապազին, ե խորհրդակից յամենայն իրագործութիւնս խօճայ Սաֆարն ասեմ և խօճայ Նազարն բազմաբախտք։ Ընդ սոսին և որդիք խօճայ Սաֆարին՝ պարոն և նազելի Մէլիք աղայն, աղօթասէր պարոն Ֆռանկիգուլն, պարոն Սուլթանումն, պարոն Ջալալն։ Եւ աստուածատունկք հարազատածին որդիք խօճայ Նազարին՝ խոհեմամիտն և բազմահանճարն, լայնասիրտն և արդարակշիռն, ծառն հաստատմատ և գերամբարձ զարդարեալն աստուածայնով և մարդկայնով առաքինութեամբ, որոյ ընդ հովանեաւ երկնաբերձ բարձրութեան նորա բանակետղեալ մակաղէին բազմութիւնք գազանամտաց և ջոլիրք խաշանց և երամք թռչնոց, յոստս աստուածապաշտութեանն, մեծահաւատն խօճայից խօճայ Սաֆրազն, որ ամբծութեամբ վարուց և արդարութեամբ հոգւոյ կենցաղավարեալ զառօրեայս և ի ծայրս ծերութեան ժամանեալ փոխեցեալ եղև ի գունդս սրբոց ընտրելոց և իշխանացն բարեպաշտից, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն. նաև պարոն Էլիազն և պարոն Հայկազն։ Այլ և ի տիս տղայութեան մանկութեան սնեալ և վարժեալ եղև ի ծոց և ի գոգ սոցունց, աղնուատոհմ իշխանազուն իշխանացս իբրև զմի յորդւոց իւրեանց և սիրեցեալ յաչս սոցունց իբրև զհամակամ և համամիտ որդի, ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ, զի զառաւելութիւն և զյաճախութիւն հարազատ երախտեաց սոցա, որ առ փանաքի հէքս. ո՞ իսկ կարէ ճառել կամ գրել։ Միայն երախտահատոյցն ամենայն քրիստոնէից, օծեալն Աստուած Յիսուս Քրիստոս հանգիցէ ի հոգիս սոցա...։

Այլ արդ՝ հարազատատունկ որդի խօճայ Սաֆրազին գեղեցկարմատ շառաւիղն... պարոն խօճայ Վաքանն ըստ զգուանաց ցանկացող եղեալ այսմ աստուածակերտ բուրաստանիս մեծաւ սիրով և անթերի հաւատով և ետ գրել և յաւարտումն հասուցանել զանազան երանգօք և երփն երփն գունաւորութեամբ, ոսկէնկար վայելչութեամբ ըստ խորանին վկայութեան առ ի յաւիտենական՝ յիշատակութիւն յաղագս նախնեացն և հարցն իւրոց ընտրելոց և ծնօղացն իւրոց գովելեաց պարոն խօճայ Սաֆրազին, և մօրն

իւրոյ համեստամեծար և պարկեշտաղարդ... Յուղիտային, *հանգուցելոցն ի Քրիստոս Յիսուս յոյսն ամենայն երախտաւորաց, և զվերջի մօրն իւրոյ՝* Դուլնաբաթին *և որդւոյն՝* Մէլիքին: *Նաև առաւել յիշեցէք ի Քրիստոս*
013ա *զպարոն* Վաքանն *և զրաղմհամեստ կողակիցն իւր՝ զ//Թանկիաթունն, զդեռաբոյս և զնորաբողբոջ որդիքն իւր՝* Աղաջանն *և զ*Ստեփանն, *զոր տէր Աստուած յերկար ամօք անփորձ և անսասան պահեսցէ հանդերձ ծնողօքն. ամէն։*

Այլ և մեծակական ողբով և թախծեալ սրտիւ հառաչանօք պաղատիմ... զի զիս զամենաթշուառ Զաքարիա *վարդապետս յիշել ի մաքրապանծ յաղօթս, ո՛վ հանդիպողք և վայելողք սմին, նաև զծնողսն հիքոյս, զհայրն իմ՝* զՅովանէս *քահանայ և զմայրն իմ՝* զԲէկիսօլթանն, *և զեղբայրն իմ՝* զԱռաքելն *և զորդի նորուն՝* զԳրիգորն, *և զթոռն եղբօր իմոյ՝ զքաղցրատեսակ և զախորժահասակն* Յովսէփ, *որ ի տարաժամու կենաց իւրոց փոխեցան ի Քրիստոս։ ...*

Այլ և յիշել աղերսեմ զհօրեղբայրն իմ՝ զՍանդիանոս *և զկենակիցն իւր՝* զՇանդիաշայ, *և զորդի նոցունց զտէր* Սարգիսն, *և զթոռն սոցին՝ զկուսակրօն քահանայն զտէր* Մովսէսն, *որ այժմս կայ ի սպասու յիմումս ծերութեան, աշխուժ դեգերանօք մինչև հասցէ յարբունս կատարելութեան հասակի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ մանաւանդ շնորհաց և աստիճանի որոց և Տէր կամեսցի։ Այլ և վերստին յիշել մաղթեմ զցուպ ծերութեանս իմում ձեռնասուն ցանկալին հոգւոյս զաշակերտալն ի մանկութենէ զսրբասէրն իմ* զՅովհաննէս *վարդապետն* Կարբեցի, *որ ունի զաթոռն իմ, որ և ինքն տէրն մեր Յիսուս Քրիստոս զսա ընդ երկայն աւուրս պահեսցէ՝ սակս սրբոյ աթոռոյս և իմոյս ծերութեան։ Նաև զհանգուցեալն ի Քրիստոս զորդեակն իմ ըստ հոգւոյ* զԽաչատուր *վարդապետն, որ ի կիսաւուրց իւրոց գնաց առ անկծալին բնաւից։ Եւ զքեռին իմ՝* զԿարապետսն, զՅով-հան[ն]էս *պարոնտէրն, հայրպետ* Մկրտիչն, *քաղցրիկ և քաղցրաձայն* Բաղտիկն, *դռնապան* Ղազարն...:

Այլ և կրկնակի ժտեմ յիշել ի մաղթանս զերախտաւոր Սրբոյ Կարապետիս զծերունի տէր Պետրոսն, *զծերունի տէր* Թումայն, *և զօրիորդ մանկունսն՝ զտէր* Յոհաննէսն *և զտէր* Յովանէսն, *զփոքրիկ տէր* Գրիգորն *և զտէր* Ղազարն. *նաև զսարկաւագունսն՝* Զաքարիայն, զՊետրոսն *և* զՎարդանն: *Եւ զժրաչան մշակն, երախտաւոր բազմամեա* Աբրահամն, *աղօթասէր կենդանի նահատակն, զի Ի և Զ (26) ամ է, որ աստ ի դրան սրբոցս աշխատի, անխոնջելի երկամբք և զմիաբանիցս բովանդակ վար և ցան և արտորայքն անձամբ իւրովի հասել ածեալ ժողովէ զցորեանն առատապ[է]ս, զոր և Տէրն բոլորից հատուցէ զվարձս ըստ իւրոյն վաստակաց. ամէն։*

Դարձեալ ևս զայս ի միտ առէք, ո՛վ ընթերցողք և հանդիպողք այսմ սբ. գրոցս՝ Աստուածաշնչիս, յորժամ զայս ի Շօշ քաղաք գրէին, ես նուաստ ի թուին ՌՃ և Ե (1656) գնացի յԵրուսաղէմ *ուխտ լուսաբուխ սբ. գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ և այլոց տնօրինականաց։ Եւ ի գնալս իմ ի* Կարին *քաղաք, որ է* Յարզրում, *շնորհօք շնորհողին ամենասուրբ Երրորդութեանն՝ Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, շնորհեաց ևս զայսպիսի շնորհս. զի Աստուածաշունչ մեծի արքային* Հեթմոյ *բերեալ*

էին ի ծախս. յորժամ տեսի գալարեցին աղիք իմ ի փորի իմում և նուաղեաց սիրտ իմ սարկս սիրոյ սբ. գրոյս. և յիշատակի մեծի արքային ե սրբոյ, որ իւրովի հոմերական տաղիւ չափաբանութեամբ շարամանեալ ունէր զաստուանս նայնեաց մինչև ղյինքն գեղեցիկ յօրինուածովք։ Եւ զայն ևս գնեցաք պաշար և առիթ հոգոյ մերոց և կենաց բերկրութիւն մանկանց Սիոնի։

Դարձեալ մեծաւ սիրով աղաչեմ զձեզ՝ կաթողիկոսք, եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք մելիքք, աանուաէրք, քեաթխուտէք, ժողովուրդք, աշխարհականք մեծ ու փոքր, արք և կանայք, ծերք և տղայք, ամենեքեան դուք, իմ ճշմարիտ հարք և մարք, քորք և եղբարք և որդիքէք, հրեշտակք և մարդիկք, վկայք լինիք առաջի Աստուծոյ, որ ես իմ կամօքս և իմ սրտիս յօժարութեամբն և իմ հիւսն ողովս, զիմ գոյքն ամենայն ետու Ս. Կարապետի լոյս գերեզմանին վախմ և ս. կաթուղիկէին, ի յեկեղեցւոյ դլխի խաչէն հետ՝ թէ՛ ոսկեղէն, թէ՛ արծթեղէն, թէ՛ գիրք, թէ՛ Աւետարան, Շարակնոց, Այսմաւուրք, Մեկնիչ, Քարոզգիրք, Տօնացոյց, Աղօթմատոյց մինչև ցմէկ թուղթ մի, մանաւանդ զայս երկու լուսին և արեգակս հոգւոց մերոց, այս սբ. Աստուածաշունչքս նուիրեցի սբ. տաճարացս, թէ՛ զարրաֆեղէն, թէ՛ ապրիշմեղէն, թէ՛ բրդեղէն, թէ՛ պղընձեղէն, թէ՛ երկաթեղէն, թէ՛ չինի, թէ՛ փայտեղէն, թէ՛ ձի, թէ՛ ջորի, թէ՛ գոմէշ, թէ՛ եղն, կով, ոչխար՝ թէ՛ շարժուն և թէ՛ անշարժուն, ամէնն վախմ ետու սբ. աթոռոյս և Ս. Կարապետիս, մինչև ցաւել և սընտուակալն ևս, այլ մարդ իշխանութիւն չունի ի դրանէ սորին շորթել կամ գողանալ կամ ծախել կամ գրաւել կամ հանել։ Ով ոք յանդգնի՝ թէ եկեղեցականաց, թէ աշխարհականաց, թէ՛ մերոց, թէ՛ օտարաց, թէ՛ իշխանաց, թէ՛ իշխեցելոց կամ եթէ ոք ասիցէ վասն ազահութեան, թէ՛ ես ազգական եմ Զաքարիայ վարդապետին՝ այնպիսին նզովեալ և կալած կալած եղիցի հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք աստի և հանդերձեալն ընդ Կայենի, Աքարտ Գէեզի, Կորխայ, Դաղանայ...։

613բ Եւ կամ թէ յայլազգեաց Տաճկաց իշխանաց և դատաւորաց, ով որ զիմ սուաշանս լսեն էնքեան իւրեանց ռասուլէն պսակ առնուն։ Եւ թէ ոք վասն ազահութեան ճողոպրել կամիցին յԱստուծոյ և ի հրեշտակաց և յիւրեանց ռասուլէն շարամանդայ ապիզար դատանիցին։ Այս իմոյ ձեռին զՔրիստոսի Յիսուսի վախմիաթ և նամակ գրեցի ի թվականիս Հայոց ՌՃ և է (1658)-երորդի յունիսի մէկն, ի դրան սբ. Էջմիածնայ։ Եւ արդ՝ դարձեալ երիթացեալ դիմօք և կականագոչ ողբօք... պաղատանօք հայցեմ ի վայելողաց այսմ աստուածատուի սոփեստիս և մօսիսակերտ մատենիս, զի ի խրախճանալն ժամու աներկեան ցընծութեամբ յիշեսջիք ուղիղ սրտիւ և սեռն հաւատով զվերոյ դերեալս զամենայն զհոգևոր և զմարմնաւոր զհարս և զեղբարս, զերախտաւորս և զաջխատաւորս, և մանաւանդ զլուսատուակն հոգւոյս և զանգին մարգարիտն, զջահն անշիջանելի և զատողն անջամանգաղելի զտէր Մովսէս կաթողիկոսն հրաշազան, որ ի ՌՀ և Ը (1629) թուին նստաւ կաթողիկոս և զաթոռս սբ. ի յաղբիւսաց ի վեր առեալ հաւասար արար երկնից, ի յամին յորում մեռաւ խրոխտազօր արքայն Պարսից շահ Ապազ, և քառ ամ կեցեալ ի վառ սրբազանն և ի ՌԶ և Բ (1633) թուին եմուտ ընդ անմուտ արեգականն, ի ծագումն ան-

ստուեր լուսաւորաց մշտնջենաւորաց ի լուսաւորութիւնն աներեկի։ Եւ յետ նորին կացեալ ամենաղգաստն տէր Փիլիպպոս կաթողիկոս մինչև ցթիւն ՌՃ (1651) ամ. և[18] յետ յոքնահրաշ ուղղութեանց գնացեալ յԵռուսաղէմ և պատեալ զԿոստանդինուպոլսեաւ ամենայն բարգաւաճութեամբ և վեհափառ ճոխութեամբ դարձեալ ի դահն իւր և կատարեալ զընթացս առօրեայ փոխեցաւ ի կեանսն անսպառ առ բաղձալին իւր։ Իսկ ի յինն ամի հայրապետութեան սորին՝ ՌՂ և Ա (1642) թուին նստաւ շահ Ապազն Սանի, ի տեղի հօր իւրոյ շահ Սէֆուն. և մարդ եղեալ ընդ Հնդկաց արքային, դադարեցուցեալ զգոռ նորին։ Եւ առեալ զառեցեալ դղեակն ի հօրէն իւրմէ Ղանդահար կոչեցեալ բերդն, նստաւ ամենայն անհոգութեամբ ի յԸսպահան։

Այլ և յաւուրս սորին եղև սղմուկ շփոթմանց հագարացեաց ընդ ազգն Ֆրանգաց, որ Վէնէտիկ կոչի, և այս չորեքտասան ամէ զի մրցին սաստկապէս և ի վերայ ծովու, և ոչ երբէք լուաք եթէ պարտեցաւ կողմն քրիստոնէից, այլ միշտ յաղուրդ կերակրին ձկունք փափկասուն մարմնօք հագարածնացն։ Այլ և յարևմտական հիւսիսայինքն ևս ընդ միմեանս ելեալ ոգորին անհնարին դառնութեամբ, որք և լէհք և մաճարք, զազախք և շուէտք, բուլխարք և թաթարք անուանին։ Սակայն ըստ դիպուածոյ ամանուկիս միշերկրայս խաղաղացեալ գոյ ի պատերազմական հինից ի նպաստութեանց մշտանուէր պաղատանաց հարցս մերոց, զորս և յիշատակեցաք ի վերոյ։ Եւ թէպէտ ի սրոյ անքութացեալ կան պարանոցք մեր, սակայն անուր ծանրութեան հարկապահանջութեան կեղեն և կեղեգեն զկեանս մեր, որ և զորքանութեանցն անկարանամք վիպել։ Բայց գթութեամբ հօրն գթածի էջահաւրեալ գերազարդապէս փառօք մայրս մեր ազնեաց ըստ Հոգւոյ և տունս փրկութեան, հարսն փեսային Քրիստոսի, որոյ և իշման տեղին, որ և հարսնածու գոլով սմին տէր Յակոբ սրբազան պետս ամենայն Հայոց. զի յետ վաղճանի տեառն Փիլիպպոսի, սա նստաւ ի տեղի նորին կաթողիկոս ամենայն Հայոց ի հազար Ճ և Դ (1655) թուիս. և է այժմ Գ (3) ամ և կէս հայրապետութեան սորին, ի թուականիս ՌՃԷ (1658)-երորդի, ի ժամանակս արքայութեանն Պարսից շահ Ապազ Սանի կոչեցելոյն, որ է վեշտասան[19] ամ միահեծան իշխանութեան սորին ի վերայ Արևելեան կողմանցս։

Դարձեալ մեծաւ պաղատանօք ղերեսս առ մայրն մեր եղեալ աճիւնաթաթաւ դիմօք խնդրեմ ի հանդիպողացդ... մի գուցէ ըստ շար սովորութեանց ոմանց, զոր ունին անաստուածք, խորհիցիք ի յիշատակարանացս այսոցիկ բան ինչ ջնջել և կամ թուղթ հատանել, զի այն գործ սատանայի է և կամ արարաց նորին. և կամ նենգութեամբ կամել զայս Աստուածաշունչս գրաւել, ծախել և կամ ի դրանէ Սրբոյ Կարապետիս հանեալ, զի եթէ իցէ ոք, որ այնպիսի ինչ խորհիցի, ի ներքոյ աջոյն սրբոյ կապեալ և կաշկանդեալ եղիցի...։

[18] Ձեռագրում «ՌՃ և ա» հատվածը սկզբնապես գրված է «ՌՃ և գ ա». հետո Ջաքարիա վարդապետը ուղղել է, որը պարզ չի դիտվում։ Նկա. ի ունենալով, որ Երուսաղեմի ժողովը տեղի է ունեցել 1651 թ., որին մասնակցել է նաև Փիլիպոս կաթողիկոսը, ուստի նշված ուղղումը կարդացինք «ՌՃ ա ա»։

[19] Ձեռագրում «վեշտատան»։

Բ

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Ասպահան

204բ Զտառապեալ Աստուածատուր գծողս յիշեա միով Տէր ողորմիայիւ։

Գ

288բ Զընտացող Աստուածաշունչ սբ. մատենիս Զաքարիայ զերջանիկ սբ. վարդապետն յիշեցէք ի Տէր։

Դ

614ա Շնորհիւ ամենազօր Ս. Հոգւոյն... սկսայ զԱստուածաշունչ սբ. մատեանս տկար անձամբս և ողորմութեամբ նորին կատարեցի ի յետին դարուս և ի սառնացեալ ժամանակիս ի յերկիրս Պարսից, ի քաղաքս Շօշ, որ կոչի Ասպահան, ի թուականիս Հայոց ՌՃ և Թ (1660) ամի. և ի հայրապետութեան տանս Հայոց տեսուն Յակոբայ սբ. աթոռոյն էջմիածնայ, և ի թագաւորութեանն աղդին Պարսից փոքր շահ Ապասին, և ի դիտապետութեան Նոր Ջուղայոյ Ասպահանու և ամենայն ազդիս Հայոց, որ աստ կամք հաւաքեալ, տեառն Դաւթի քաջ և արի, մաքուր և անբիծ սբ. վարդապետի, որ վերակաց էր այսմ սբ. մատենիս, քանզի բազում ջանս հասուցի սմա ես մեղաւոր գծողս, վասն շարաշար ծուլութեանս իմոյ, զի սբ. հայրս բազում անգամ ներեաց ինձ, զոր տէր Աստուած վարձս բազումս տացէ...։ Կատարեցաւ սբ. մատեանս ի դուռն Ս. Յակոբայ, ձեռամբ անարժան, մեղաւոր և տառապեալ, հոդով տկարի... Աստուածատուր միայն անուամբ քահանայս...։ Նաև առաւել յիշեցէք ի Քրիստոս զծաղկող և զարդարող սբ. մատեանս զվարպետաց վարպետ Հայրապետն, որ ծաղկեալ զարդարեաց զսբ. մատեանս ոսկով և լաճվարտով, և գոյնզգունօք յոյժ աշխատութեամբ տքնեալ ի վերայ սորա, զոր տէր Աստուած զարգարեսցէ զնա հոգւով և մարմնով...։

1400

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան, № 231 (1312 թ.)

367բ Ի թվականիս Հայոց ՌՃԹ (1660) նորոգեցաւ և կազմեցաւ ի փառս Աստուծոյ։ Գիրքս Սաղմոսայվանիցն է։

1401

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 254

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

Ա

98բ Յովանէս ծրողս յիշեա ի Տէր։

Բ

278բ Թվին ՌՃԸ (1659)։

Գ

278բ Փառք...։ Որոյ խնամօք և ողորմութեամբ աւարտեցաւ աստուածախօս սբ. Աւետարանս ի գերահռչակ Շօշ քաղաք, որ կոչի Ասպահան և ի գիւղաքաղաքն Ջուղայ, ի թվականութեանս Հայոց ՌՃԹ (1660) ամին, ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Ապասին, և ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն Յակոբայ, և ի առաջնորդութեան դեղոյս Դաւիթ վարդապետին, և իշխանութեան պարոն Հայկազին, որ է որդի խօճայ Նազարին. ի խնդրոյ սրբասնեալ, քաջ և բարունի վարդապետին Զաքարիային, որ այսմ ամի փոխեցաւ առ յոյսն ամենեցուն, և վերակացութեամբ հաւատարիմ և բարեմիտ, աստուածահաճոյ պարոն Ղուստամին:

279ա Ստացայ զսա ի հալալ // արդեանց իմոց և եռու վաղմ ի դուռն Ոհանավանից, ի վայելումն Ոնանէս վարդապետին։ Մի՛ ոք իշխեսցէ հանել զսբ. Աւետարանս ի Ոհանավանից, այլուրեք տանել կամ վաճառել։ Եթէ ոք յանդգնեսցէ արասցէ զայս՝ մասն և բաժին Յուդայի առցէ։

Դարձեալ յիշեցէք զվերոյ գրեալ ղխօճայ Ռուստամն, զծնօղսն իւր՝ Թօփչի Գրիգորն, Ասփաշէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Ռուսաամն, և զկողակիցն իւր Աղատն, և զորդին՝ զՅովանէսն, և զստերքն իւր՝ Սաթիոն և Անային:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Ռուսաամն և զհանգուցեալ որդիքն իւր՝ Վասիլոսն, Ղազարն և հանգուցեալ դստերքն իւր՝ Մարիամն և Ասփաշէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Ռուսաամն և զհանգուցեալ
279բ եղբարքն իւր՝ զխօճայ Սուլթանումն, խօճայ Աղավալի, խօճայ // Նիկոդոսն և զխօճայ Մարտիրոսն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զծրող սորա Յովնաննէս և զծնողսն իւր ամէն։ Ընդ սմին յիշեցէք ի Քրիստոս զծաղկող սորա զՀայրապետն և զծնօղսն իւր, զկենակիցն. և զեղբայրն իմ՝ սրբասնեալ Բաղդասար վարդապետն, յիշեցէք...։ Եւ ոք յիշէք՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ...։

1402

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 348

Գրիչ՝ Թամուր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

5ա Ցիշատակ է ի դուռն սբ. Էջմիածնայ ի թվականիս Հայոց ՌՃԴ (1655)։

Նկաթի մեջ

Բ

113բ Յայսմ վայրի էր թվականն Հայոց Ի և Բ յոբելեան և Գ (3) (1654)[20] ամ, որ մոլար մտաւք գրէի։

[20] Այսինքն՝ (22×50)+3+551։

Գ

197բ—198ա Ի Հայոց թվին ՌՃԳ (1654) աւգոստոս ամսոյ Բ(2), աւրն երեքշաբթի, խաւարեցաւ արեգակն կէս ժամ ի Զ(6) ժամու աւուրն մինչև աստեղք երևեցան[21], զորոյ պատճառն միայն Ստեղծաւղն գիտէ։ Յորում պահու զերերեալ մտաւք գրէի յայսմ տեղւոջ. յիշևա [ի Տէր]։

Դ

262ա Նկարի մեջ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց։

Ե

263ա Ո՛հ, ո՛հ զեղկելի մեղսաթաւալ Ակրնցի Թամուր գրիչս հանդերձ ծընաւղիւք միոյ ողորմնաիւ յիշել արժանի համարողացդ՝ Աստուած ողորմի յիւր միւսանդամ գալստեանն։

Զ

303բ Յիշատակ է Աստուածաշունչ մահղասի Ամբակումին և ծնօղացն՝ Մարտիրոսին և Խուպիին, և պապուն՝ տէր Յակոբին, ի դուռն սբ. էջմիածնի, ի վայելումն տէր Յակոբ ամենայն Հայոց կաթողիկոսին։ Թվին ՌՃԹ (1660)։

Է

576ա Փառք...։

577բ Եւ արդ՝ ի սոցունց դասուն հանդունակից տեսանի իսկապէս մահտեսի այրս այս Ամբակում և համափառ ի նոցին գովանսանութեան... առնէր յիշատակս մատենից գրոց և կահուց և զարդուց վանորէից և եկեղեցեաց ըստ արդար արդեանց և հալալ ընչից իւրոց, զի ի սոյն եղանակի ունէր ի նկրտումն մշտականի, ուր Քրիստոս նստի...։ Նաև ի հայրն հանուրց և առ սրբազան կաթողիկոսն Փիլիպպոս... վառէր ի սբ. սէր և ըղձայր միշտ ըստ բաղձանաց իւրոց երթալ ի քաղաքն աստուածահոտ ի սբն. Սաղիմ, և առաքէր նախնատուրբ նամակ ողջոյնի և աւրհնութեան առ անտես սիրելին իւր յԱմբակում. «Թէև դու յօժարեսցիս պատրաստեսցիս ելանել յԵրուսաղէմ, զի անդէն տեսեալ զմիմեանս առցուք ըստ փափաք տենչանաց մերոց ի միասին կատարելով զուխտն աստուածային»։ Իսկ
578ա երանելիս յորժամ լուեալ զլուրն սբ. և զհամբաւ սխրագոյն, առեալ ըղ//տոմսն սբ. եդեալ ի վերայ աչաց իւրոց, որով և ի բաց լքեաց զամենայն աշխարհական զբաղմունս, յարեաւ փութապէս և դիմեաց սիրասուն Երեմիա թոռամբն և հանդերձ ընտանեօք ի սբ. քաղաքն, որ և ի նոյնում ամի ոչ ժամանէր հոգևոր տէրն սբ. անդրէն ի սբ. ուխտն. վասն զի ի չուս ճանապարհաց ի հարկէ արդելեալ ի մեծ քաղաքս քրիստոնէից փառաւորեալ յամենեցունց։ Եւ ապա հասանէր ի թվականութեանս ՌՃ (1651)։ Եւ ի միում ամին մեծաւ հանդիսիւ և գերալիր փառօք կատարելով ըստ զհրաշափառ սբ. ուխտն որ յԵրուսաղէմ։ Եւ անտի չուեալ գայր յարքայարանս Ըսաամբօլ, որ և օթեալ աստ ամ մի ողջոյն. և անտանօր փառաւորեալ մեծարեցաւ յամենայն ազգաց և ի մերային ազնէ։ Իսկ ի տեսանելն զմիմեանս զնոյն իրգ և էսէր ի հերուն հետէ, զոր ուՀէին ծրարեալ

[21] Այս հաշվված է հուլյան (հին) տոմարով, նորով կլինի օգոստոսի 12-ին։ Այսպես է նշված պրոֆ. Ռ. Օպպոլցերի մոտ (տե՛ս Canon der Finsternisse, Wien, 1887, S.272)։

աստանօր, լրապէս յանկեցաւ տինայ և այնու բաղձմամբ խնդրեաց հայրն սբ. ի նմանէ, թէ յաղագս առ ի սէր իմ և առ քոյդ յիշատակի արասցէս Աստուածաշունչ մատեան մի, զի լիցի անջինջ յիշատակ և արձան վասն քոյդ, որ առ իմ ի սբ. և յամենաւրհնեալ յաթոռն։ Որ և անդէն խոնարհեալ Ամբակումայ երկիր պագանէր սբ. հօրն և զիղձ բաղմափարփ սիրոյն անտանօր կրկին հաստատէր, և ի բերկրանաց յորդաբուղխ բարեսէր բարուց յօժար կամօք, քաղցր պատասխանէր, ասելով «Եղիցիմ կամք քո աւրհնեալ»։ Եւ ապա այնու սկիզբն արարեալ պատրաստէր մինչ ի քաղաքս էր հայրն հանուրց։ Իսկ ի կատարեալ ամին եկ գնաց աստի մեծաւ բերկրութեամբ և խաղաղութեամբ ժամանելով յաթոռն իւր սբ. անվնաս յամենայնէ. ուստի գերազանցեալ ամենայնիւ հոգեկանօք և մարմնականաւ ի վեր քան զճառումն մտաց մարդկան։ Եւ հասեալ ի կէտ կոչմանն, յետ երից ամաց ըստ անդարձ հրամանէ Արարչին, որով սլացաւ անպատում խնդութեամբ ի կաճառս զուարթնոց, ուր բամքն են երանելեաց, որ և կենդանի աղօթք և անդառնալի հայցուածք նորին եղիցի միշտ յօժանդակ և զօրավիգ մեզ և համայն աւատացելոց. ամէն։

Վասն որոյ ճառեցաւ յաղագս հանդամանց տառիս, թէև սկիզբն սորայ ի ժամանակս մեծին Փիլիպպոսի եղեալ. վասն զի զգոյն աւարտումն ի մարմնի անդ լուաւ և վախճան ընկալաւ, իսկ զրաւ և աւարտ սրբոյն Յակոբայ ընկալեալ, իսկ այլ ի լրումն տառիս և ի եզր անկել սորին ետես Ամբակում և անտէն ի կեանս իւրում յաւէտ զուարճացաւ, որպէս և սպասէր միշտ, մեծաւ յուսով յաւարտ և ի կատարած սորին տեսանել։ Ուստի ի տեսանելն բերկրեցաւ յաւէտ խնդութեամբ և ապա կացեալ սուղ ինչ աւուրս և անդէն զգոհացողականն մատուցանելով հանդեաւ առ Քրիստոս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Եւ արդ՝ եռեակ և մու ամի եղև սկիզբն և աւարտ սորին, վասն որոյ յոյժ տենչայր տեսանել երանելին զվախճան սորին, այլ և զգծագրութիւն յիշատակարանիս ոչ ետես։ Եւ երկոքինն ևս ոչ ընկալան աստ ի մարմնի զփափաք սրտից իւրեանց որ յաղագս յայսմիկ. վասն զի անդէն յանզրաւ հրճուարանն ի միասին խրախասցին ի փառս անճառ ցնծութեամբ ի բարի յարդիւնս իւրեանց։ Եւ մինչ չև էր ննջեցեալ ի հանգիստն կենդանութեան, այլ ի բարի խոստովանութիւն պանծացեալ առ մահճօքն առնէր անդարձ գամագամ բարեփառ խորհրդով, սոյն և կրկին պատուէր առ սխրալի և հոգեածին որդեակի իւր Երեմիայի, որպէսզի աւարտեալ զսա ամենայն իւիք և յիշատակարանօք ընծայեսցեն յաթոռն սբ. և առ ի սբն. Յակոբ կաթողիկոսն-Հայաստանեաց։ Եւ նոյն ինքն Երեմիաս, բարի ժառանգ նորին և ուղիղաշաւիղ շառաւիղն հանդերձ հարազատ ըստ մարմնոյ ծնօղաւ իւրով Մարտիրոս իրիցաւ և վարժապետաւն տէր Յովանէսիսի քահանայիւք, որ էին գործակալ ի վերայ բարի արդեանց առն Ամբակումայ, զոր ունէր առ համայնս ըստ վերոյ յիշեցելոյն. վասն զի այնքան էր կամք նորա առ ի սէր և ի ջան յիշատակի, քանզի անկարօտ գոլով յամենայնէ բաց ի մարմնական ծնընդոց, որ և պահէր առ իւր ի ստեղէ, զսիրասունն Երեմիաս զաւակ ըստ հոգոյ առնելով, ուստի և ի նոյն փոյթ ևս ոչ շատացեալ զնոյն և առնէր անդարձ, եթէ տացէ քեզ Աստուած որդի յանուն իմ լիցի անուն նորին. վասն զի մի՛ ջնջեսցի անունն իմ ի միջի ձերում և

ազգաց ազգս առ յազինս ձեր, Ուստի և ի լրանալ զկնի վախճանելոյ նորին յամսեանն վեցերորդի ետ Աստուած արու զաւակ Երեմիայի, որ և Ամբակում կոչեցաւ, ըստ կտակի ծերունոյն Ամբակումայ. զոր և տէր Քրիստոս անփորձս և ամբողջս պահեսցէ յերկար ամօք ձերոյին սբ.
578բ մաղթանօք և աղօթիւք ծե//ռոյն առ ի յիղձ նորա և յիշատակ ազգաց յաղգրս. ամէն։

Բայց մնայր մինչև ցարդ սբ. և յոգեբուղխ գանձս աստուածային խոցել և ծածկեալ սակս զբաղանաց վերոյ ասացելոցն, որ կային ի մեծամեծ հոդս. մինչ զի և լինէր ցաւն մեծ հուրն անպատմելի յարքայարանս վաղածախ բոցով, վասն ամենայն մեղաց մերոց, որ ի բարձրանալ թվականութեանս ՌՃ և Թ (1660)-երորդի և ապա ձեռամբ տեառն Մարտիրոսի քաջ բարունոյ առաքեցին առ սբն. Յակոբ կաթողիկոսն, որ և նա յետ ելանելոյ յաթոռոյ պատրիարգութեան չուեալ գնաց առ սբ. հայրապետն առնուլ զաստիճան մեծի եպիսկոպոսութեան։ Եւ հրաւիրեալ զսբ. հայրապետն մեծաւ փառօք տարան ի սբ.[22]

Եւ արդ՝ գրաւեալ յանկաւ հրաշաղան և աստուածազարդ տոմսս այս զանազան գունափորութեամբ,-որպէս և տեսանի[ք] իսկ, զի եղիցի արձան յաւիտենական և յիշատակ անջնջելի հոգոյ իւրոյ և ըստ կողակցին և բարեծնօղաց իւրոց և համաւրէն ազգականաց և մերձաւորաց իւրոց, հօրն՝ Մարտիրոսին և մօրն՝ Խուպիին, պապուն՝ տէր Յակոբին, և հօրեղբարցն՝ Խտրշին, Առաքելին, Թորոսին. և եղբօրն՝ Աստուածատուրին և Պէկլէրին. և քրւերցն՝ Մանուշակին, Վարդեծոցին և Թուրվանտին և համայն գնացելոցն ի Քրիստոս։ Զի և ես զսա յիշատակ անջնջելի ի սբն. Սիոն բարձրաբերձ գահն դրիգորաշէն և ուռարաց աթոռն առ սբ. Էջմիածին, ի վայելս տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսին մեծի, ընդ որս խնդութեամբ և զուարճութեամբ վայելեսցէ ընդ երկայն աւուրս ամենայն բարեփառութեան, հանդերձ մանկամբ իւրոյ և ամենայն աշակերտեալ մանկանց իւրոց ուղղափառաց, որ ընդ զիր և պարեալ, պաշարեալ և շրջադրեալ կան միշտ առ ի սիրասնունդ սրբութիւն յաւէրժական։

Արդ՝ գրեցաւ գանձս աստուածեղէն ի թուականութեանս հայկազան սեռի, որ և ի նըշկաճակէ[23] անկեալ եղերի, ի քաղաքս Կոստանդինուպօլսի, և ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զօրավարի և որդոյ նորայ Մարտիրոսի, գահավիժելոյն ի հրակիզմանէ և ծոցարաց ընդդէմ արեգական խիղճ գիմօք յաղագս անօրէնութեանց մերոց։ Այլ և ի հայրապետութեան Հայոց մեծաց տեառն սրբոյն Յակոբայ, որ ի սբ. Էջմիածին, այլ և ի թագաւորութեան Իսմայելացոց և Հագարացոց ի վերայ բազմազգաց սուլտան Մահմատի, որդոյ Իպրահիմի, որդոյ Ահմետի, որդոյ Մահմատի։ Այլ և ստրատելատ նորին Մահմեա փաշայի Քեօբրուլի յորջորջելոյն, որ յոքնագէտ և բազմահանճար գոլով, անհուն զօրութեամբ բազմականացն նուաճեաց, որ ի ներքոյ բռնակալութեան։ Այլ և ի թագաւորութեան ազգին Պարսից շահ Ապասի որդոյ շահ Սէֆոյ, որդւոյ ի միրզէ Սէֆոյ, որդոյ մեծին շահ

---

22 Շարունակությունն այստեղ ընդհատվում է և տասը տող դատարկ։

23 Այսինքն՝ Ն=400, ը=8, շ=500, կ=60, ա=1, հ=70, ա=1, կ=60, է=7=1107+551=1658։

Ապասի: Այլ և յաջորդութիւն աստուածահոտ սր. քաղաքին Երուսաղէմ տեառն Աստուածատրոյ և տեղապահութեան տեառն Եղիազարի նորին փոխանորդի։ Այլ և հեղինակի ծովապար արքայանիս[տ] տեառն Սարտիրոսի մեծահամբաւ հռետորի Ղրիմեցոյ աշակերտին Աստուածատրայ աստուածահաճոյ և առաքելաշաւիղ հայրապետի[24]։

Արդ՝ երես անկեալ հողմամբ դիմօք պաղատիմ հանդիպողացդ այսմ սբ. և աստուածազարդ մատենիս, յիշել զվերոյ գրեալ անունսն ի սէրն Քրիստոսի ի ժամ աղօթիցն... ի փառս ամենազօր անուան իւրոյ, որ և նմա փառք ի մէնջ և աւրհնութիւն ընդ Հօր իւրում։

Ծաղկող՝ Մարկոս

Ը

1բ Նկարի տակ Ջստացող սբ. Աստուածաշընչիս մահտեսի Ամբակումն և զՄարկոս պատկերահանս յիշեսջիք ի Տէր։

Թ

139ա Ցծաղկող սբ. Աստուածաշընչիս և գնկարող պատկերիս զմեղօք զառաքեալ Մարկոսս եթէ յիշման արժան առնէք և դուք յիշեալ լիջիք ի սբ. սեղանն Քրիստոսի...։ Կատարեցաւ թվականիս ՌՃԴ (1655)։

1403

ԲԱՌԳԻՐՔ

Երևան, № 533

Ստացող՝ Մէլքիսէթ, Գրիգոր աբեղայք
Վայր՝ Սևան

235բ [Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ [յ]ոքնամեղ[25], ի խընդրոյ սրբասընունդ, խստակրօն, խարազնազգեստ Մէլքիսէթ և Գրիգոր աբեղայիցս։ Ընստացաք զսա յարդար վաստակոց յիշատակ մեզ հարազատ եղբարցս, ի դուռն սբ. Սէվանայ, ի միասին վայելեսցուք. եթէ միւսոյն վաղճան օր մահուան հասցէ, միսն վայելեսցէ ի դուռն Ս. Առաքելոցս. յետ երկուցունց մահուան՝ անջինջ յիշատակ լինի երկոյնասան Ս. Առա-
236ա քելոցն։ Մի՛ ոք // հակառակեսցէ որոշել ի դրանէ սբ. Սևանայ. եթէ ոք հակառակեսցէ՝ պատիժ ի յապէնիազէն կր[ես]ցէ։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմք, ո՛վ ընթերցող գրոյս, յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր մեղաւոր գծօղս կարդալով կամ օրինակելով։

Աւարտեցաւ սբ. գիրքս ի թվականութեան հայկազան տումարի հազար հարիւր իններորդ (1660) ամի, ի հայրապետութեան տեառն սբ. էջմիածնայ սրբազան Յակոբ կաթուղիկոսի, ի առաջնորդութիւն սբ. ուխտիս Սևանայ խստակրօն, հեզ և հնազանդ Բարսեղ վարդապետի և այլ միաբան եղբարցն ի միասին վայելե[ս]ցեն. ամէն։

---

[24] Այնուհետև ութ տող դատարկ։

[25] Գրչի անունը չի գրված և տեղը բաց է թողնված։

1404

ԳԻՐՔ ՄՈՂՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՅ

Երևան, № 1472 (1658 թ.)

Հետ. ստացող՝ Խաչատուր Ջուղայեցի

445ա *Զ[վ]երջին ստացող գրոցս Մոլութեանց ի հալալ վաստակոց ընչից իմոց առ ի զվերոյ դրեալ*[26] Սահակ *վարդապետէն*[27], *ԺԵՌ (15000) դեկան, ի թվականութեան ՌՃԹ (1660), յիշատակ ինձ* Ջուղայեցի Խաչատուր *վարդապետիս և իմ ծնողացն, հօրն իմոյ՝ մահդասի* Յակոբին *և մօրն իմ՝* Ղատամղուլէ, *և ազնիվ եղբարցն՝ պարոն* Առաքելին *և ամուսնոյն իւր*

445բ Թագուհէ, // *և ուստերաց նորա, և դստերացն՝* Նազէրթին *և* Ղատամին, *և միուս եղբօրն իմ՝* Օուստամին *և կողակցին՝* Մասփիտին, *և որդոցն՝* Յակոբճանին *և* Շրվանշէ, *և միուս եղբօրն՝* Վարդանին, *և որդոցն՝* Մատուրին, Ավետին, *և միուս եղբօրն՝* Պո[ղ]ոսին *և ամուսնոյն իւրոյ՝* Մարամատիկին, *և որդոյն իւր՝* Պետրոսին, *և քեռն իմոյ՝ հանգուցեալ* Խաթունին, *և դստերն իւր՝* Եղնարին *ևս։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհօրեղբայրն իմ՝ զՀայրապետն և զկողակիցն իւր՝ զԲարն, և զորդիքն՝ զՍահակն և զՄարութէն. զոր տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր անմահ տեսուն արժանի արասցէ...։

1405

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ՅՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՒԻՈՍ

Երևան, № 1909

Թարգմ.՝ Սաեփանոս Լեհացի

ա

210բ Յիշատակարան թարգմանողի Պատմութեանս Յովսեպոսի Երրայեցւոյ

Շնորհիւ և գթութեամբ բարերարին Աստուծոյ, ես՝ Ստեփաննոս Լեհացի, *յետին ի մանկանց եկեղեցւոյ և կրտսեր ի սպասաւորացն բանին Աստուծոյ բազում անգամ յառաջագոյն հարկեալ ի հրամանէ երիցս երանեալ տեառն* Փիլիպպոսի *կաթողիկոսի և ապա աղաչեցեալ ի թախանձանաց եղբարցն, որք կային ի հրահանդ դեգերանաց իմաստից ի սբ. աթոռս* Էջմիածին, *ի թուաբերութեան տումարին Հայոց ՌՃԹ (1660) և ի հայրապետութեան սրբազան տեառն* Յակոբայ *զայս պատմութիւն* Յովսէպոսի *թարգմանեցի ի լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու։ Բայց գիտելի է, զի արտաքոյ այս պատմութեանս, զոր գրեաց յաղագս պատերազմի Հրէիցն ընդ Հռովմայեցիս, այլ մատեանս սորա ունիմք, որ ասի Պատմութիւն առաջնոցն Հրէից, ի քսան դպրութիւնս պարունակեալ, յորս ճառէ սկսեալ յաշխարհաստեղծութենէն մինչև ի վերջին աւերումն* Երուսաղէմի: *Են և այլ խօսք սորին, որ ասի մաքառումն ընդդէմ Ապիոնի*

1 *յերկուս գլուխ բաժանեալ. նաև բան գովեստի ի նահատակութիւն եօթն մանկանցն Մակաբայեցւոց։ Իսկ ես միայն զայս գիրս ի մեր լեզու փո-*

[26] *Սույնը կազմում է գրչի հիշատակարանի շարունակությունը, ուր գրված է գրչի անունը, գրա համար էլ նշված է «զվերոյ գրեալ»։*

[27] *Ձեռագրի գրիչը. հիշատակարանը տե՛ս 1658 թ. շարքում։*

խարկեցի, զի է յոյժ պիտանի և օգտակար ուսումնասիրացն, մանաւանդ, որք ցանկան գիտել զժամանակն անցեալ ի Յուդայէ Մակաբայեցւոյ մինչև յաւերումն Երուսաղէմի, *զոր յառաջագոյն կանխաւ գուշակեաց Տէրն մեր ի սր. Աւետարանն Ղուկասու։*

211ա *Արդ՝ աղաչեմ, զի // որք օրինակէք զայս ժամանակագրութիւնս զայս և դուզնաքեայ յիշատակարանս ընդ սմին դրեսջիք, զի և դուք եղիջիք դրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեանն։ Եւ եթէ ինչ պակասութիւն գտանիցի ընդդէմ ուղղաշաւիղ թարգմանութեան, ինձ թողութիւն շնորհեսջիք, զի այսչափ էր կարողութիւնս, քանզի ի յայս ձեռնարկել համարձակեցայ այսու պատճառաւ միայն, զի մի՛ գտայց նման ծառային, որ զքանքարն Տեառն իւրոյ ի վարշամակն ծրարեաց և մանաւանդ, զի յայսմիկ փառաւորեսցի տուօղն ամենայն շնորհաց, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Ստացող՝ Յոհան Կարնաւանցի

Բ

212ա *Արդ՝ ես* Յոհան *զառածեալ մեղօք, անպիտան ի գործ պաշտաման բանին քարոզութեան, եղբայր ըստ մարմնոյ տեառն* Սսայեայ *շինողի Սրբոյ* Կարապետին Ալրակունեաց, *բայց քեցեալ և տարակացեալ ի գործոց արիութեանց և քաջաորդութեանց, սորին գաւառաւ* Մեղրոյ *և գեղջաւ* Կարնաւանցի, *լսէի միշտ ի գիրս ամենայն պատմագրութեանց Հայոց յաղագս* Յովսէփոսի. *և տեսանէի զվկայութիւնսն առ ի նմանէ. և ցանկայի բազում տարփանօք և ոչ երբէք տեսանէի ի մէջ ազգիս մերոյ։ Վասն այսորիկ ընդ այլոց սրբազնագոյն եղբարց, միշտ թախանձէի ղերջանկապատիւ զեղբայրն մեր՝ զտէր* Ստեփաննոս *վարդապետն* Լեհացի *առ ի թարգմանել։ Որոյ խոնարհեալ յաղաչանս մեր սիրով թարգմանեաց զսա։ Եւ ես տրուպս ամենայնի, նորին ընչիւքն ընդօրինակել ետու այլոց գրչաց։ Եւ զսա որ իւրով ձեռամբ է դրեալ, առեալ վասն իմ՝ պահեցի. զի եղիցի սա յիշատակ յաւիտենական նորին և ծնողացն բարեպաշտից և ինձ եղկելի բանասիրիս* Կարնաւանցւոյ։ *Արդ՝ որ ոք կամիցի ի սրբամիտ ընթերցողաց և յօրինակողաց զայս ինչ փոքրիկ յիշատակութիւնս գրեսցէ և կամ յիշատակեսցէ ընդ աշխատողի սորին և ինքն յիշեցեալ լիցի ի բարիս։*

Ի թուականութեանս մերում ՌՃԹ (1660), ի հայրապետութեանն տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ։

Գ

5ա *Յիշատակ է գիրս Պատմութեան* Յոհան *վարդապետին, ի Ս. Կարապետ[ին Ե]րընջակ[ոյ]։*

1406

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան, № 1926

Գրիչ՝ Գրիգոր Բահանայ

Վայր՝ Տարեն

369բ *Փառք...։ Ի թուիս Հայոց ՌՃԹ (1660) ամին աւարտեցաւ գիրքս, որ*

կոչի Սանդուղք աստուածային ելից և միւս Յոհան, որ կոչի Աստուածաբան։ Գրեցաւ ի գեղս Տաթև, ի հայրապետութեան երից երանելոյ տեառն
370ա Յակոբայ սրբազան կաթուղիկոսի Հայոց // և առաջնորդութեան սբ. ուխտիս Ստաթէի Յոհաննէս արհեպիսկոպոսի և ձեռամբ մեղաւոր Գրիգոր քահանայի, որ անուամբս միայն եմ և գործովս ունայն։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

1407

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 2135 (ժամանակ ԺԷ դ.)

Ծաղկող՝ Յակոբ Շոռոթեցի

477ա *Ծաղկեցաւ ձեռամբ* Շոռոթեցի *շնծեր* Յակոբ *իրիցուս. թվին ՌՃԹ (1660)*[28]։

1408

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 2705 (ԺԴ դ.)

Գրիչ՝ Նիկողայոս
Վայր՝ Կաֆայ

193բ *Արդ՝ յամենառատ շնորհացն Աստուծոյ լցեալ արժանապէս այրն Աստուծոյ՝ սրբազան և առաքինի, վեհիմաստ և հանճարեղ... եպիսկոպոսն տէր Գրիգոր, առաջնորդ հիւսուսական աշխարհի, վերստին նորոգեաց զգիրքս սբ. և զտառս Հնոց կտակարանաց, զոր զեղծեալ և շնչեալ էր յանփոյթ ըմբռնողաց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց և եղբարց առապա յաւիտեան։ Եւ այնչափ ունէր փոյթ յանձն իւր և սէր, և սիրեր յոյժ զբանն Աստուծոյ և խորհեր ի մտի, թէ զբովանդակեալ Կտակարան գիրքս զամենեսեան նորոգել, ապա ոչ եղև հասու յզձի իւրոյ, փոխեցաւ առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն։ Արդ՝ աղաչեմք զկնի եկեալ մեր հարցդ և եղբարցդ սիրովն Քրիստոսի, որք պատահիք հոգիաձիր տառիս և հանդիպիք աւգտութեան ինչ իւիք, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր և յԱստուած զարժանին յիշատակի զերշանիկ Գրիգոր արհեպիսկոպոս և զծնողսն իւր, նաև զտէր Մինաս քահանայն, և զտէր Վարդան բանասերն, և զտէր Մարկոս կրօնաւորն, և զԽոշկի սարկաւաքն, յիշեսջիք ի Քրիստոս, որ բազում աշխատութիւն կրեցին ի սբ. գրիս կատարման։ Խնդրեմք ի Քրիստոսէ, որ իւրեանց աշխատանաց փոխարենն ի Քրիստոսէ առնուցու։*

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զԿաֆա *քաղաքիս իշխանաշուք դոլվաթաւորքն մեր՝ զմադասի* Խաչատուրն, *և զմահդասի* Եալչիքն, *և զմահդասի* Խաչերեսն, *և զեղբայր իւր ըստ հոգւոյ՝ զմահդասի* Ալէքսանն, *և [զ]խոճայ* Յակոբն *և զխոճայ* Կուսիկն, *և զխոճայ* Միասարն, *որ բազում աշխատանք կրեցին երթևեկ առնելոյս իմոյ. աշխատանաց փոխարենն՝ ի Քրիստոսէ առնուցուն։ Հուսկ յետոյ եթէ ախորժէք, յիշեսջիք ի Քրիս-*

[28] Ձեռագրի Ջբ էջում գրված է. «Ի վայելումն ճահկեցի Աւետիք վարդապետին» և մոտն էլ խփված է նույն վարդապետի կնիքը Հայոց 1135 (1686) թվա անով։

տոսէ և զանպիտան գրիչս զՆիկողայոս մեղաւորս, զհոգևոր ծնօղսն իմ՝ զտէր Զաքարեա քահանայն և զմարմնաւոր ծնօղսն իմ. և դուք զնոյն գտջիք...։

Եղև զրաւ գրիս ի քաղաքս Կաֆայ, որ և Ղրիմ առձայնի, ի թվականութեանս ՌՃԹ (1660), ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդոյ նորին Մարտիրոսի։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ընթերցողք և գաղափարողք սորին, մի՛ իշխեսցէ ոք զգիրքս զայս քակելոյ։ Ով ոք յանգգնի՝ նզովեալ եղիցի...։

1409
ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՐՂԻ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Երևան, № 3326 (1608 թ.)

Գրիչ՝ Նիկոլայոս Թորոսենց

3ա Նիկոլայոս Թորոսենց, արքեպիսկոպոս Լեվա[յ] Հայոց, թիվ ՌՃԹ (1660)[29]։

1410
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍԻՄԷՈՆԻ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՑ

Երևան, № 3382

Գրիչ՝ Աբրահամ
Վայր՝ Լոր

109բ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս դրամաբանութեան և Պոկղի, ձեռամբ անարժան Աբրահամ գրչի, ի թուաբերութեանս մերում Հայոց ՌՃ և ինն (1660) ամի, ի յերկիրս Ռոռտան, ի գեօղն որ կոչի Լոր։

1411
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՍԻՄԷՈՆԻ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՑ

Երևան, № 3392 (1657 թ.)

Նվիրատու՝ Ներսէս կաթողիկոս

ա

360ա Յիշատակ է իմաստութեան զիրս Ներսէս կաթողիկոսին ի դուռն Ս. Երից մանկանց։

բ

364բ Յիշատակ ետու այս գիրս Մեսրոբ կաթուղիկոսին. ես՝ մեղապարտ Ներսէս կաթուղիկոսն. թվին ՌՃԹ (1660)։

1412
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3442

11բ Տանուտէր Եկա[ւ]որ /// սեպտեմբերի Դ (4), յաւուր երեքշաբթի ծնա

[29] Նիկոլ Թորոսովիչի ինքնագիրն է։

առաւօտուն. զի տանուտէրն Եկա[ւ]որն էր։ Թվական ՌՀԶ (1627), զիր տարոյն դայն էր, ԺԶ (16) սեպտեմբեր, յաւուր կիրակէի Ս. Խաչին մկըրտեցա յաւազան։

ՌՂԱ (1646) յուսումն գնացի գրոց։

ՌՂԹ (1650) թիւ քահանայ եղայ։

ՌՃԹ (1660) գաւազան առի։

1413

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3496

Գրիչ՝ Ալէքսիան

Վայր՝ Նախամարգ, Կակաղա

ա

10բ Ո՛վ ընթերցող սբ. Աւետարանիս, յորժամ ընթեռնուք զկենսաբուխ սբ. Աւետարանս Յովհաննու, ցանկն իւր գլխի վերջն գտիր և կարդա և Քրիստոսի փառք...։

Հազար հարիւր ընդ յինն (1660) տառի,
Հայկիականրն թվականի,
Զրեցաւ մատեամբ մեղսամածի,
Ալէքսն չընչին քարտուղարէ։
Նայև խնդրող ստացողի,
Հեզարր հասակրն ծերունի,
Վարդան քաջն բաբունի,
Քահանայ ըստ իւր կարգի,
Առցէ վարձս ի Քրիստոսէ[30]։

բ

143ա Զստացաւղ կենսաբեր սբ. Աւետարանիս զտէր Վարդանն և զՄարգարիտ տատն յիշեսջիք ի Տէր, նաղելի մանկունք Սիոնի. ամէն։

գ

291ա Փառք...։

291բ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց հազար հարիւր յինն (1660) ամի, ի հայրապետութեան տեառն սբ. Էջմիածնայ սրբազան Յակոբ կաթուղիկոսի, ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապազին։ Գրեցաւ ձեռամբ յոգնամեղ և անարուեստ և անիմաստ գրչի, նկար[չի?] ժգհջբմժտբ[31], ի դառն և անբարի ժամանակի. և զգծող սորին Յովհաննէս

292ա զապիկար։ Գրեցաւ ի յեր//կիրն յԱրարատեան, որ կոչի Մաղ[կ]ունէ ձոր, ի գեղն, որ կոչի Նախամարգ, և նկարեցաւ ի Կակաղա, որ է Պոռտակ,

---

30 95ա էջի զարդանկարի շրջանակում գրված հիշատակարանը անընթեռնելի է, բայց չկարողացանք ընթերցել վատ պահված լինելու պատճառով։

31 Կարդացվում է Ալէքսիանս. այսպես՝ ժ—ա, գ=լ, հ=է, ջ=ք, բ=ս, մ=ի, ժ=ա, տ=ն, բ=ս։

ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նախավկային և բազմահաւաք սրբոցս, որ աստ կան։

Եւ ստացող սբ. Աւետարանիս քրտնաջան, հեզահոգի, բարի և գրասէր, սրբասնունդ և սաղմոսերգող Վարդան ծերունի քահանայն, որ ստացաւ զսբ. կենսաբուխ Աւետարանս յիւր հալալ ընչից և արդար վաստակոց, յիշատակ հոգոյ իւր և ծնողացն իւրոց, հօրն[32]։

Գրիչ՝ Յովհաննէս։

դ

285բ Զմեղապարտ գրիչս Յովհաննէս յիշել աղաչեմ։

1414

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 4109

Գրիչ՝ Թումայ քահանայ

Վայր՝ Բաղէշ

352բ Փառք...։ Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և բազմամեղս ի կարգաւորաց Թումայ սուտ և լոկ անուն քահանայ և ունայն յամենայն բարեաց, վիրաւորեալ նետիւք բանսարկուին, երես ի գետին եդեալ և արտասուաթոր դիմօք խնդրեմ ի ձէնջ, զի բոլորով սրտիւ Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրէք, ինձ անարժանիս և ծնողաց իմոց Քարիմին և Եթարին և հանգուցեալ դստերն իմոյ՝ Հռիփսիմին, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, յոյսն ամենայն քրիստոնէից և ամենայն արեանառու մերձաւորաց իմոց կենդանեաց և հանգուցելոց. ամէն։ ...

[Շ]նորհիվ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զտառս աստուածայարմար, զքնարս աստուածաշունչ..., որ կոչի Մեկնիչ չորեքտասան թղթոյն սրբազան առաքելոյն Պողոսի, մեկնեալ սրբոյն Յոհաննու Ոսկիբերանին և Եփրեմի Խորին Ասորոյ։ Զոր տ[ես]եալ զսորին անչափ քաղցրութիւնն և զանառիկ մեծութիւնն, սրբազան և քաջ փիլիսոփայն, անյաղթ իմաստունն և երանաշնորհ հռետորն և աստուածաբան վարդապետն Դաւիթ, սիրողն սրբութեան և մեկնողն ամենայն խրթնածածուկ գրոց Հին և Նոր Կտակարանացն, որ եռափափագ սրտիւ և յօժար կամօք ետ գրել զսա, յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէին, որ
353ա ասէ. «Երանի...»։ // Վասն որոյ ետ գրել զսա վարդապետն Դաւիթ Բաղեշացին, յիշատակ բարի հոգոյ իւրոյ <իւրն> և ծնաւղաց իւրոց, հօրն՝ Ալէքսիանին և մօրն՝ Խանաղին, և եղբօրն՝ Մելքիսեթին, և քուերն՝ Խաթունաղին, և ամենայն արեանառու մերձաւորացն, կենդանեաց և հանգուցելոցն. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի մեծ թվականիս Հայոց ՌՃ և Թ (1660) ամին, ի Բաղէշ քաղաքի, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զօրավարին և այլ սրբոց տաճարացն, որ կան ի միջի, ի կաթուղիկոսութեանն սբ. Էջմիած-

[32] Հիշատակարանն այնուհետև ընդհատվում է։

նայ տեառն Յակոբայ և ի հայրապետութեան Բաղէշ քաղաքի տէր Մեսրոպ քաջ բարունապետին։ Զոր և միաբանութեամբ ամենայն հաւատացելովք հայցեմք յամէնառատ մարդասիրէն Աստուծոյ, բարեխօսութեամբ սբ. Աստուածածնին և ամենայն սրբոցն և սբ. առաքելոյն Պօղոսի և ընկերաց նորին, զի պահեսցէ զսոսա ընդ երկայն աւուրս իբրև զպայծառ ջահ անշիջանելի, ի մէջ սբ. եկեղեցոյ. և իբրև զարեգակն ի կամարն երկնից, և իբրև զլուսին լրացեալ, և զպայծառ աստեղունք ի պարծանս մեր. և ամենայն Հայոց ի փառս Ա. Երրորդութեանն անզրաւ յաւիտենիւ. ամէն։

1415

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Երևան, № 4921 (1416 թ.)

Նորոգող՝ Յակոբ Կոզլեցի

248բ Ի թվին Հայոց ՌՃԹ (1660). մեղաւոր տէր Յակոբս Կոզլեցի նորոգեցի զՀարանց վար[քս]։ Ով կարդայ և Տէր մեղայ ասէ՝ Տէրն ողորմեսցի իւրն։

1416

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5152

Ստացող՝ Խաչատուր վարդապետ

361բ Սրդ՝ ես յետնեալս ի ծառայիցն Աստուծոյ նուաստացեալ և ապիրատ Խաչատուր ևեթ վարդապետս և կամօքն Աստուծոյ իշխող Գողթն գաւառի, շնորհօք Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ ստացայ զգիրս Մաշտոցի, յորում գանձեալ կան ամենայն պաշտամունք կարգաց քրիստոնէութեան, զոր պաշտի ի մերս եկեղեցի, որպէս յայտ է ի մատենէս յայտմանէ, որում և ի բազում ամաց փափակէի ըղձմամբ սրտիս, ի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց Կարապետին և Սառային, և ամենայն տոհ[մ]ից, և աղանց նոցին, և ի վայելս հիդոյս անձին, և ամենայն մանկանց Սիօնի։ Էր կատարումն գրոցս ի թագաւորութեանն Պարսից յաւուրս Երկրորդ շահ Ապասին, և ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնի տեառն Յակօբայ սրբազան կաթողիկոսի, և ի թուականութեան աղինս արամեան [Ո] ի
362ա հարիւր//երորդի և յիններորդի (1660)։

Արդ՝ աղաչեմ զհանգիպողսդ սբ. դրոցս, յիշել զանարժանս յիշման ի սբ. աղօթս ձեր՝ ի քաւութիւն մեղաց և ի հաղորդութիւն հանդերձելոյն բարեաց, որում և դուք արժանասջիք շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում և փառք յաւիտեանս. ամէն։ Եւ ի կատար այսր խորհրդածութեանս մեծի, յիշեսջիք զարհին Գողթեաց զքաջ բարունին զԽաչատուր և հարազատ որդին իւր՝ զՊետրոս վարդապետն հանդերձ ամենայն ազամբք իւրովք ի Տէր։

1417
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, N 5263

Ստացող՝ Մէլիքսէթ, Գրիգոր աբեղաներ

273բ Փառք...։ // ..., որ զօրացոյց զիս զապիկար գրիչս[33] անգ և աւարտ հանի զսբ. կենսաբեր Աւետարանս ի հայրապետութեան տեառն[34] սբ. Էջմիածնա[յ] սրբազան կաթուղիկոսի, յառաջնորդութիւն Սէվանա[յ] սբ. Առաքելոց Բարսեղ վարդապետի և այլ միարան սբ. ուխտի։

271ա Ի թվականիս հայկազան տումարի հազար հարիւր յիններորդ (1660) ամի, մեք հարազատ հոգևոր եղբարքս Մէլիքսէթ և Գրիգոր աբեղայքս ստացաք զսբ. Աւետարանս, յիշատակ մեզ հալալ ընչից և արդար վաստակոց մերոց, ի միասին վայելեսցուք։ Եթէ միւսոյն օր մահուվադճան հասցէ՝ միւսն ժառանգեսցէ։

1418
ՄԱՇՏՈՑ
Երևան, N 5491

Գրիչ՝ Պետրոս երէց
Վայր՝ Սուրս

ա

74բ Ողորմեա՛ ստացողի գրոցս Ադիշին, կողակցոյն՝ Խանադին, Շեխիջանին, մայրն՝ Ղալայբէկոյն. ամէն։

բ

185ա Փառք...

180ա Զոր լուեալ բարեմիտ Ադիշ զՔրիստոսի մարմնառիկ տնաւրէնութիւն, որ արար վասն մեր և ո[ւ]սո[յ]ց մեզ զապաշխարութիւն և ի թ[ող]ութիւն մեղաց, վասն որո[յ] ետ գրել զսա ի հալալ յարդեա[ն]ց և յարդար վաս[տա]կոց իւրոց, յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց, հաւրն՝ Շեխիջանին, և իւր կնոջ Ղալաբէկոյն, և կնոջ Խանադին, Ինաիին և Թառիաթու[ն]ին, և դստեր Շախբէկոյն, և որդոց Թումին, Բարղոդէմոսին, Սարգսին, Աւէղին. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Ըստեփաննոս և ըզգուզի տանուտեարք զրուէս Ասլան //, և Վարդիկ. որ լաւ պահէք ըզՄաշթոց. Աստուած զձեր մեղքն թողու. ամէն։ Եւս առաւել Աստուած ողո[ր]մի պարոն Ադիշն, որ էառ զդիրք և եդ ի դուռն Ս. Ստեփաննին. ով հակառակէ՝ պատժէ։

186բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱդիշ, որ ըզշաղցի արտն ոխով արար Նարեկացոյն։ Ով դաւի անէ՝ ամաչէ. ամէն։ ...

187ա Դարձեալ ես մեղուցեալս և անարժանս, զերեսս ի դետնի դնեմ և զոտս ձեր համբուրեմ, որ ասէք զԱստուած ողորմին ինձ և ծնաւղաց իմոց տէր Յակոբին, Թաւրէղին, և իմ եղբօրն՝ Աբրահամին, և քւերն՝ Գայաղին։

---

[33] և [34] Գրչի և կաթողիկոսի անունը չի նշված. առաջին դեպքում անվան տեղը բաց է թողնված։

Գրեցաւ տառս որ կոչի Մաշթոց ձեռամբ յոկնամեղ և աիտամած Պետրոսի, ի թըւականութեան Հայոց ՌՃԹ (1660) ամին, յետ տարաժամ խոցոյ, որք բաղում մարդիկ փոխեցան ի Քրիստոս և դեռև[ս] կամք իբրև ղնաւ ի մէջ ծովուն՝ ալէկոծեալ հողմով մեղաց. և ոչ ունինք ճանապարհ բարի, որ և փրկեսցէ զմեզ և դժոխոց և տանջանաց. մանաւանդ զստացող սբ. տառիս զԱւդիշն և զկողակիցն՝ զԽանաղէն. ամէն, Կրկին անգամ աղաչեմ և առ ոտս ձեր անգեալ համբուրելով ժտեմ ո՛վ քահանայք և ժողովուրդք, որ յորժամ ետ տեսանէք և կարդաք և կամ հարանցիկ հա-
184բ յիք՝ զԱստուած ողորմին ասէք Աւգիշին և կողակցոյն՝ // Խանաղին և ծնողաց նոցին. և ինձ մեղուցեալ գծողիս, որ սկսա ի դրել և Աստուծոյ յաջողութեամբ աւարտեցի. և Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց տէր Յակոբին, Թաւրէգին, և մեծ մամուն՝ Շաղգաղին, և պապուն իմ՝ Գուլիջանին, և եղբաւրն՝ Մարկոսին, և կնոջն՝ Սալամին, և տղայոց նոցին. ամէն։ Եւ իմ եղբաւրն՝ տէր Աբրահամին և մեր կողակցայց Խանումխաթունին և Շամամին, և իմ քւերն՝ Գուլալին, Շաղգաղին փոխեալն ի Քրիստոս. ամէն։

Աւարտ բանիս Տէր ողորմեա...։

Գրեցաւ գիրքս որ կոչի Մաշթոց յերկիրս Սոկաց, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Պետրոս երիցու, ի դեաւղն, որ կոչի Սուրս, ընդ հո-
188ա վանեաւ Ս. Յովաննու Մկրտչին և Գէորգեա[յ] // զաւրավայրին, ի գառն և ի նեղ ժամանակիս, ի յանուն Աւդիշին, զոր տէր Աստուած ընկալցի զսա և ընդունելի արասցէ, որպէս զ[ը]նծասն թագաւորացն մոգոց...։

1419

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5537 (1225 թ.).

Վայր՝ Արտամետ

7բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք հիւս Գրիգորին, հաւրն՝ Սահակին, մաւրն՝ Շահումին, և իւր կողակցին՝ Սօլթանին, որդոցն՝ Ատումին, կողակցին՝ Ղզլարին, որդոյն՝ Մինասին, դստերն՝ Շահումին, Գրիգորի հանգուցեալ որդոյն՝ պարոն Վարդին, միւս որդոյն՝ Սահակ սարկաւագին, Թումին և Յսպանիսին, դստերացն՝ Յամանին, Ղզլարին և Այգունին, Գրիգորի եղբօրն՝ Մարտիրոսին, կողակցոյն՝ Էքարին, որդոցն՝ Սարգսին, Յովանիսին, դստերացն՝ Թազագուլին, Նանին և Գօզալին, միւս եղբօրն՝ Աւէտին, կողակցոյն՝ Մբրաթին, որդոցն՝ Պետրոսին, Պօղոսին և Աբրահամին, միւս եղբաւրն՝ Ատգին, կողակցին՝ Ղարիպին, դստերն՝ Ալմաստին, որ հանգուցեալ են մայրն և դուստրն առ Քրիստոս[35]։ Գրիգորի քրւերն՝ Խաթունաղին, Գրիգորի մեծ պապուն՝ Ատոմին, կողակցին՝ Յամանին. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

[35] Այս գրով շարունակվում է. «Այլ և Ատոմի որդոյն՝ մահտեսի Գրիգորին, նորին կողակցուն՝ Մուճիպին և որդոցն՝ մահտեսի Սուրատին, Մարտիրոսին, Աւէտին, Ատոմին, Ասլանին,

Քանզի և այս սբ. Աւետարանս կրկին անկաւ ի ձեռս աւազակաց, որ մտեալ ի վանքն և թալանեցին սպասք Ս. Աստուածածնին և սպաննին զհայր վանիցն և զայլ սրբութիւնք զամէն աւար առին և տարան յերկիրն Պարսից ի Սալմաստ, ի գեօղն Սաւրի կոչեցեալ։ Եւ անդ կայր քահանայն մի պատուական՝ տէր Գաբրիէլ անուն. և տեսեալ զսբ. Աւետարանս ի ձեռս Մարաց ազատեալ ի ձեռաց նոցա։ Եւ լուեալ զհամբաւ սբ. Աւետարանիս հաւատարիմ ծառայքն զհիւս Գրիգորն, զեղբայրն իւր՝ Աւէտ, որ միաբանեցան և գնացին ի Սալմաստ և բաղում ջանիւ ազատեցին զսբ. Աւետարանս՝ տուեալ փողս բազում։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիսա Աւէտն և զկողակիցն իւր՝ Շանզաման, որ ընկեր եղև ճանապարհին և բերեալ ի գեօղն Արտամետ և
8ա *եդին ի // դուռն սբ. եկեղեցեացն, յիշատակ հոգոց իւրեանց և ծնողացն ևս. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհիւս Գրիգորն և զեղբայրն իւր՝ զԱւէտն, որ ստացան զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրեանց և եդին ի դեաւղն Արտամետ, յիշատակ հոգոյ իւրեանց և ամենայն արեան մերձաւորաց սոցին. Աստուած ողորմի ասացէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զգեօղի քահանայքն՝ զտէր Աւետիսն, զտէր Յովանէսն, որ վկայ են վասն սբ. Աւետարանիս։ Քանզի յառաջ գեօղի տանուտերացն ասաց հիւս Գրիգորն. թէ՝ «Դուք գնացէք՝ զԱւետարանն բերէք». և նոքա ոչ գնացին, այլ ասացին, թէ՝ «Դու գնա բեր՝ քեզ համար»։ Եւ նա յօժարութեամբ գնացեալ բերեր, յիշատակ հոգոց իւրեանց և ամենայն ժողովրդեանդ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՅուսարուց տէր Աւետիսն, որ նա եղև կամակից վասն գտանելոյ զսբ. Աւետարանս. Աստուած զիւր հոգին լուսաւորէ. ամէն[36]։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Գրիգորն, զէս Ղազարն, զէս
9ա *Գրիգորն, // զԲաբօն, զՌըստակէսն, զԻէղէոնց Խլղաթն և զՂազարն, զՄիքայէլեանց Խլղաթն, և զԱրիջանն, և զՄիրիջանն, զԷմրնկիսնց Աւետիսն և զայլ ամենայն ժողովուրդն առ հասարակ, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք սոցա և ձեզ մասն և բաժին լիցի...։*

Ի թուականիս մերոյ ՌՃ և Թ (1660) ամին, ի հայրապետութեան տեառն Աղթամարայ Մարտիրոսի և Էջմիածնայ սբ. աթոռոյն տեառն Յակոբ կաթողիկոսի, զոր տէր Աստուածն մեր հաստատուն պահեսցէ զերկոսեանն ի պարծանս մեր. ամէն։

այլ և դստերացն՝ Սառայիճ. Մարգարտիճ. այլ և մահտեսի Մուրատի որդոցն՝ Միհասիճ, Թումիճ. դստերն՝ Գուլամպարիճ, որդոյն՝ Մարտիրոսիճ և հարսանցն՝ Թուրուանդիճ, Նազիֆարիճ»։ Դարձեալ այլ դրով. «Մուրատի որդի Նիկողայոսիճ և դստերացն՝ Հիմաթխաթունիճ. ամէն։ Դարձեալ յիշեցէք զԱռոմի որդի Ամբար և մայրն իւր՝ Յուրիճան և հօր քոյր իւր Սուսիճ յիշեցէք»։

[36] *Սույն պարբերությունը գրված է էջի ներքևի լուսանցքում, բայց ցույց չի տրված, թե որտեղ դնել։ Նպատակահարմար գտանք դնել նշված տեղում։*

1420
ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ
Երևան, № 5681

Գրիչ՝ Սահակ դպիր
Վայր՝ Վան

ա

60ա Զմեղսամած գծողս յիշեա և զձեզ յիշէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն։ Յորժամ աւրինակէք միայն սբ., միայն Տէր հետևակ գրեք. և այսպէս է օրինակ և չէր գրած։

բ

69բ Ողորմի տէր Աստուած ստացողի սբ. գրոցս աստուածասէր և մաքրամիտ Գրիգոր սարկաւագին և ծնօղացն՝ տէր Յովասափին, կողակցին՝ Գինէիաթունին, և իւր կողակցին՝ Սօլթանին և իւր որդոցն. ամէն։

գ

94բ Ողորմի տէր Աստուած ստացողի գրոցս աստուածասէր և քաղցրիկ Գրիգոր սարկաւագին, կողակցին՝ Սօլթանին, որդոյն՝ Յովսէփին, Ղազարին, կողակցին՝ Փէրօզին և ամենայն ազգականացն. ամէն։

դ

220ա Մեծ[37] մսոմուն՝ Ջանաղին և իւր ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն։ Որք հանդիպիք սմա տեսանելով, կարդալով և կամ աւրինակելով, լի բերանով և բոլոր սրտիւ յիշեցէք... ստացողի սբ. տառիս Գրիգոր սարկաւագին և որ ասէ...։

Եւ արդ՝ գրեցաւ աստուածախօս սբ. տառս, որ կոչի ԺԱՄԱԳԻՐՔ, ի յամուրն Շամիրամակերտի, որ այժմ Վան քաղաք վերաձայնի, ի դուռն Ս. Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, և արագահաս Ս. Մինասի, և սոսկալի Ս. Աւետարանի, և այլ սրբոցն, որ աստ կան, ձեռամբ տարտամ և տառապեալ սուտանուն Սահակ դպրի, որ զանունս ունիմ և գործս ոչ, այլ ըստ կայրի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէրն Աստուած, զի տըկար անձամբ և ցաւալից աչերովս, յանձն առի և աւարտ ածի կարողութեամբն Աստուծոյ։ Աղաչեմ զձեզ, որ զԱստուած ողորմին ասէք մեղաւոր Սահակ դպրիս և իմ ծնաւղացն. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք իմ և եղբայրք, զի վասն Աստուծոյ լաւ պահէք զսբ. գիրքս ի հրէ, ի ջրէ, ի թաց մատէ և ձէթէ և յամենայն պատահմանէ...։ Այլ և զխոշորութիւն և // սխալանաց գրիս անմեղադիս լերուք, զի կարն մեր այս է և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

220բ

Արդ՝ գրեցաւ սբ. տառս ի թվականիս Հայոց ՌՃ և Թ (1660), ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն Յակոբ կաթողիկոսի ամենայն Հայոց և առաջնորդութեան սբ. ուխտիս Վարագայ քաջ և արի ջատագով և բարբունի Պաւղոս աստուածաբան վարդապետի։ Խնդրեմք և հայցեմք ի Տեառնէ, զի ընդ երկայն աւուրբս պահեսցէ զինքն ի պարծանս մեր. ամէն։

---

[37] Հիշատակարանի սկիզբն ընկած է։

1421
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 6053

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Սուրս

411բ Փառք Հռակի Աստուածութեանն,

. . . . . .

414ա Զոր հս չարեացքս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Յովանէս հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգովս յաւժար և ժրական,
Բաղում ջանիւ աշխատական,
Կատարեցի զսա ի լրման։
Ի թվականիս Ռ-ամեան,
Ճ ու Թ թիւ ընդ նրման (1660),
Աւարտեցաւ սա ի լրման[38]։
Որք հանդիպիք սրմա տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Ցիշման առնէք ըզմեզ արժան,
ԶՅովանէս հողս և անպիտանս։

414բ . . . . .

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեզ և անիմաստ գրչի, մեղաւոր և անարժան Յովանիսի։

Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի թվականիս ՌՃ ու Թ (1660), ի սբ. ուխտս, որ կոչի Ապարանց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Նշանին, և Ս. Գէորգա[յ] զաւրավարին, և
415ա Ս. Կարապետին, և Սրբոյն Ապղլմսեհին // ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց իմոց։

1422
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Երևան, № 6220

Ծաղկող՝ Մովսէս երէց

ա

1բ Զնկարող սակաւ ծաղկանցս և պատկերացս զՄովսէս յեղեռնադործ իրիցուկս աղաչեմ յիշել ի Տէր միով ողորմիւ...

Թվին ՌՃԹ (1660)։

---

38 4-րդ տողը պակասում է և տեղը բաց է թողնված։

Գրիչ՝ Շմաւոն երէց

Բ

4բ Մանաւանդ // ստացող գրոցս Պաղտասարին և կողակցին՝ Շահումին, և որդոցն՝ Աթին, Բարսեղին և եղբայր Թուքակին, ամուսնոյն իւրոյ Մարինոսին, և որդոցն՝ Գիշուն, Էտիլշին, Միրաքին, կարդացողաց և լսողաց...[39]։

Գ

577ա Քրիստոս ... ողորմեայ ստացողի սբ. դրոցս Պաղտասարին և ծնողացն՝ Գիշուն, Խանվարվարին, և ամուսնուն՝ Շահումին, և որդոցն՝ Աթին, Բարսեղին և ինձ մեղապարտ Շմաւոն ԱԵԹ իրիցու. գրեցաւ ցանկս թվին ՌՃ և Թ (1660), Կարդացողաց...։

Ո՛վ եղբարք, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք զՇմաւոն էրէցս և դուստրն իմ՝ նաղելի Խուպանն, այլ ոչ ունիմ որդի ժառանդ, յոյս և ապաւէն զՔրիստոս ունիմ...։

1423

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Երևան, № 7004

Գրիչ՝ Մկրտիչ երէց

ա

115բ Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեցէք ի մաքրայփայլ յաղօթս ձեր զսուտանուն Մկրտիչ էրէցս և զծնողքն իմ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յԱստուծոյ մերոյ։

Բ

Գրիչ՝ Գրիգոր Երևանցի

311ա Գրեաւ ի թուականիս Հայոց հազար հարիւր և ինն (1660), ձեռամբ անարժան Գրիգորի Երևանցոյ: Արդ՝ զվայելօղսդ մաղթեմ, զի զկնի ընթերցման ձերոյ, յիշման արժան առնէք զիս և զծնօղսն իմ[40]։

1424

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 7070 (ԺԵ դ.)

Կազմող՝ Թումայ Արպատեցի

296ա Փառք..., որ ետ կարողութիւն Թումայի քահանայի Արպատեցւոյ, քանզի նորոգեալ կազմեցի զսբ. Շարակնոցս. յիշատակ և վայելումն Բագրատունեաց յերկրէ Պետրոսի սարկաւագին և իւր ծնողացն, հօրն[41]

---

[39] Սակայն, հետագայում ուրիշները փորձել են չնչել այդ հիշատակարանները, թուղթ փակցնելով վրան, գրել իրենց հիշատակարանները, որոնցից ձեռագիրը գերազանցապես մաքրված է։

[40] Բ հիշատակարանը տե՛ս նաև № 679 ձեռագրի 171ա էջում։ Այստեղ «ընթերցման» շարի փոխարեն նշված է «երթերցման»։

[41] Հիշատակարանն ընդհատվում է. վեց տող դատարկ։

Ի [Հ]այր[ապետութեան սբ.] Էջմիածնին տեառն [Յ]ա[կո]բա[յ ս]րբազան կաթողիկոսին և ի թագաւոր[ութեան շահ] Ապասին փոքու, ի թվականիս մերոյ [Ռ-երոր]դի Ճ-երորդի և Թ-երորդի (1660) /// [ա]մէն։

1425

ՀԱՐՅՄՈՒՆՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՅԻՈՅ

Երևան, № 7697

Գրիչ՝ Մկրտիչ կղերիկոս

48ա *Գրեցաւ Հարցմունքս ի թվականիս Հայոց ՌՃԹ (1660), ձեռամբ* Մկրտիչ կղերիկոս գրչայպետի, *ի վայելումն*[42]...

1426

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7842 (1313 թ.)

Նորոգել տվող՝ Մեսրոբ քահանայ

337ա *Յամի հազարերորդի հարիւրերորդի յիններորդի (1660)։ Արդ՝ ես* Մեսրոբ *քահանայս նորոգել տրւի զսբ. Աւետարանս, յիշատակ ինձ և իմ ծնողացն, հօրն իմոյ՝ տէր* Խաչատրին *և մօրն իմոյ՝* Թիրվանդին, *և կողակցին իմոյ՝* Բակիիանին, *և որդոցն իմոյ՝ տէր* Սիմատնին, *տէր* Մելիքսէթին, Թումասին, *և թոռանցն իմոյ՝* Վարդանին, Յովանիսին, Զաքարիային. Իգնատիոսին, *և հարսներն իմոյ՝* Շարպաթին, Մարիանին, Եղիսապեթին, *և դստերացն իմոյ՝* Ղադամին, Մարիամին, Մարգարիտին, Ոսկոյն. *և քրւերցն իմոյ՝* Սիրաթուխտին, Նուրատանին *և պապերին իմոյ՝* Աբիսողոմին, Սիմոնին։

1427

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 7918

Գրիչ՝ Բաղտասար
Վայր՝ Բոլենց

ա

233բ *Փառք...։ Գրեցաւ սբ. տառս աստուածային յորջորջեալ Յուցակ արարուած սբ. հօրն* Մաշթոցի, *ի թվականիս Հայոց ՌՃԹ (1660), ձեռամբ*
/ *յոգնամեղ և անարհեստ գրչի* Բաղտասար *սուտանունի, որ զանունս ունիմ*
224ա *և զգործս ոչ։ Գրեցաւ ի դառն // և ի նեղ ժամանակիս, ի յերկիրս* Մուկաց, *ի գեօղս* Բոլենց, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Գէորգա[յ] զօրավարին, է (7) Ս. Նշանացն և Ս. Սարգսի զօրավարին ե այլ սրբոցն, որ աստ են հաւաքեալ, ի խրդրոյ պատուական և բարեմիտ տէր* Շմատնին, *կողակցոյն՝* Թարէզին *և ծնաւղաց նորին հաւրն*[43] *և մաւրն*[44] *և զաւա-*

---

[42] *Հիշատակարանն այնուհետև չի շարունակվում։*

[43] *և* [44] *Երկու դեպքում էլ անունները գրված չեն և տեղերը բաց են թողնված։*

կաց տէր Մովսէսին և Ներսէսին, և այլոց, որ փոխեցեալ են առ Քրիստոս, և ամենայն մերձաւորացն. ամէն։ Տէր իմ Յիսուս, արդար բարի...։

Բ

[illegible]ա Ո՛վ դասք լոյս երամ քահանայից... բոլոր սրտիւ ասացէք, թէ Քրիստոս Աստուած յորժամ գաս... թողութիւն շնորհեա մեղօր և բազմավէր գծողիս սուտանուն Բաղդասարի և ծնողաց իմոց տէր Սարգսի և Բալջին, և կողակցոյն իմոյ՝ Խանդուտին, և զաւակաց իմոց Միքայէլին և Սամուէլին, և եղբարց իմոց Կարապետին և Սրապիոնին և ամենայն ազգահատոհմաց իմոց. ամէն։

Նվիրատու՝ տէր Շմաւոն

Գ

225բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... տէր Շմաւոնին և իւր կողակցոն՝ Թաւուէզին, իւր ծնաւղաց առաջին հաւրն՝ Իսրաէլին, և կողակիցն իւր՝ Նէրզիզնին, և վերջին հայրն՝ զՄուրատ և զորդիքն իւր՝ զտէր Մովսէսն, և զղեռաբուսիկ որդին՝ զՆերսէս, և զմեծ եղբայրն իւր՝ զՄելքոն, որ յա[յ]սմ ամի փոխեցաւ առ Հայր...։

Ես՝ տէր Շմաւնրս գնեցի զՄաշթոցրս խալալ վաստակոց իմոց և ոխֆվ արի ի վերայ ի Ս. Սարգսի զօրայվայրին և ի վերայ միւս ե[կե]ղեցոյն Թէոդորոսի զօրավարին։ Ով որ հակառակէ կամ ծախէ կամ գրաւէ կամ այլ և այլ անէ՝ նա զանէծքն Յուդայի առցէ և զխաչանողաց առցէ, ամէն։

Դ

226ա Դարձեալ յիշեցէք... տէր Շմաւոնին և զառաջին հայր իւր Իսրաէլն, և զետին հայրն՝ զՄուրատ, և զկողակիցն իւր՝ Նէրգիզին, և տէր Շմաւոնի կողակցոյն՝ Թարվէզին, և իւր որդոյն՝ տէր Մովսէսին, իւր կողակցոյն՝ Թիւրանդին, և իւր որդոյն՝ Յովսէփին, և իւր եղբաւր Նէրսէսին, և իւր եղբօրն՝ Մելքոնին, և իւր կողակցոյն՝ Մոջանին, և իւր որդոյն՝ Խանէսին, և միւս եղբօրն՝ Յորդանանին, կողակցոյն՝ Խանումին, և իւր որդոցն՝ Խուրովին, Յովանէսին. Անդրսին, և միւս եղ[բ]աւրն՝ տէր Աւետիսին, կողակցոյն՝ [Մտն]ուշակին, որդոյն՝ Կարապետին։

Ես տէր Շմաւոն քահանայս Մաշթոց մի, ժամու հանդերձ մի գնեցի, Ճորբենձանդի վերին կտոր գնեցի, լաւ ժիրիջուից ոխֆ արի ի վերայ Ս. Աստուածածին, անչինչ յիշայտակ իմ և <ի> ծնողաց իմոց և ամենայն արեան մերձայաւորաց իմոց...։

1428

ՇԱՐԱԿՆՈՑ

Օրևան, № 8384

Վայր՝ Ասպահան

242ա Փառք..., որոյ ամէնառատ շնորհիւն յանկ ելեալ կատարեցաւ ձայնքաղ Շարակնոցս, ի թուականութեան հայկազան տօմարիս յամի ՌՃ և

Թ (1660) թուոյ, յաջխարհիս Պարսից, արքանիստ քաղաքիս ըստ գրոց
542բ Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան արտահայ//[տի] /// և ի դիտապետութեան հանուրց [սեռ?]ից տեառն Յակոբայ երիցս երանեալ, երջանիկ հայրապետի, որ է բնակ[ան] ջուղացի և ի վերայտեսչութեան նահանգի[ս] հեզահոգի արհիեպիսկոպոսի և շնորհազարդ վարդապետի տեառն Դաւթի. որ և իսկ սա է ջուղացի։ Որ և ցանկարող եղև սմայ զԹարվէզցի տէր Զաքարիայ և ետ գրել զսա անշինչ յիշատակ իւր և իւր ծնողացն։

Որ և մաղթեմ վայելողացդ և հանդիպողացդ անմեղադիր լերուք զմեծութեան սորա, զի անմտից ճանապարհ է և քանոն։ Եւ յորժամ ընթեռնուք, յիշեսջիք զտէրն Զաքարիայն և փծուն գրչակս, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

1429

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 893?

Գրիչ՝ Սարգիս

ա

144ա Եւ զեղկելի Սարգիս գրիչս յիշեա։

բ

200ա Փառք...։

201ա Ուստի և տես[ե]ալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, հաւատարիմ և բարէպաշտ տանուտէրն Սիմայոն, որ ետ գրել զսբ. Աւետարանս /// իմ ոչ /// պիսի /// այլ /// եաց /// այլ [յ]ուսաս /// սիրու-
201բ թիւնն այ/// // /// ամ /// մեր /// ապավին և ///թի Երևանայ /// [տ]եսեալ [աստուած]ասէր և բարէ[պաշ]տ տանուտէրն /// տարեալ զիս /// ենին և խնդիր արարեալ ի Գրիգոր վարդապետէ ձեռնադրել զանարժանս քահանայ. և նորա գթացեալ վասն խարիպութեանս, արար զիս քահանայ. Աստուած յարքայութիւն պարգևեսցէ սոցայ. ամէն։

202ա Ցիշեցէք // /// զի կար մեր այս է։ Այլ և յիշեցէք [ստ]ացող սբ. Աւետա[բա]նիս զտանու[տէր] Սիմայոնն, և զհայ[ր]ն իւր՝ զՊապէն, [և զմայ]րն իւր՝ զԽանումն, [և եղ]բարքն՝ Պաղասսար[ն], Թումանն և Զամանն և հանգուցեալն ի Քրիստոս Միրզաբէկն, Պալասանն և Յով[ա-
202բ նէսն] /// դին/// հա /// Պայրնդ[ուրն] /// սալին և մարի/// // /// ի [թվիս] ՌՃԹ (1660) էր։

[Ողորմ]ութիւն արարէք [յիշ]ատակարանս /// գրեցի։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

1430

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 8985 (ԺԶ դ.)

Նվիրատու՝ տէր Սանակ

196ա Ես՝ տէր Սանակս յիշատակ է Աղօթմատոյցս, հօրն իմոյ՝ Նազարին

և մօրն՝ Գօարին, եղբօրն՝ Գուլուզի՛ին, Շահնազիզին և Մկրտչին: //աես անէք մէկ բերան Աստուած ողորմի ասացէք...։

Ի թվին ՌՃԹ (1660) աւրհնուեցայ և ձեռն[ա]դրեցայ քահանայ։

1431

ԱՂԱԻԻՏ

Երևան, № 10193

Գրիչ՝ Թոխման սարկաւագ

231ա Գրեցաւ Աղաւատ[ո]ւ դիրքս ձեռամբ սուտանուն սարկաւագ Թոխման անունիս, ի թվին ՌՃԹ (1660) ամին։

1432

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 10198 (1420 թ.)

Կազմող՝ Թումայ քահանայ

402բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար հոդով Թումայի [քա]հան[այիս], որ նորոգեալ կազմեցի զսբ. Հարցմունքս. որ է յիշատակ սբ. Էջմիածնի [ ] տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսին, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասի փոքրուն, [ի] թվականիս մերոյ ՌՃԹ (1660) ամին. և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

1433

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, Անտիպ ձեռագրացուցակներ, 104

Ցիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սբ. Աւետարա[ն]ին զբարեմիտ կին զՇահզատեն և զհայրն իւր՝ զԴիլան, և զորդին իւր՝ զԷլբեկին, Ղուկասն, Յովանէսն, զՀայրանն, Շահրիստանն, Խանզատանն, զՅարութիւնն, Շահզատան, Միրին, Այլախաթունն, Սառան և ամենայն արեան մերձաւորքն իւր։ Ով ոք կարդայք կամ աւրինակէք, մէկ լի սրտիւ ողորմի ասացէք Շահզատին և իւր ննջեցելոցն. ամէն։ Եւս առաւել անմեղ քրիստոնեան զԱւետիսն, որ եկեալ ի գեղեցկաշէն քաղաքս Թէոդուպոլիս, որ այժմ Արզրում ասի. եղև պատճառ բարութեան՝ գնեաց զսբ. Աւետարանս յիշատակ Շահզատին հոգւոյն և տարեալ եղ իւրեանց գեղն Յերիախսոնուխ, յերկիրն Բասենոյ, ի թվականիս ՌՃԹ (1660)։ Ով ոք հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս։

1434

ԱՒԵՏԱՐԱՆ

Հ. Հազարյան, № 5 (մանրատապավեն, Երևան, № 772)

Գրիչ՝ Մինաս աբեղայ

Վայր՝ Մանաշու

սա

304բ Փառք...։

305ա *Ի թուարիրութեան աղքանուղասէր հայկական տոհմի հազար հարիւր ինն երորդի (1660), ի հայրապետութեան բոլորից մերոց ազնէից առն սրբազնազործի տեառն Յակոբայ Հայոց հեղինակի և ի թագաւորութեան պարսկայնոց մահմետաղարմ տոհմից մեծի քաջաբախտ և ասաղայաջող, ըստ արտաքնոց յաղթողաղօր շահ Ապազի ի աիոյ մանկութեան մինչ ցմիջամուխ երիտասարդութեան արիութեամբ հասակի //*

305բ *ոչ թէ մեծն շահ Ապազ, այլ և փոքրիկն։ Արդ՝ գրեցաւ քառավտակ և յորդառատ աղբերս և աստուածարան սբ. Աւետարանս ձեռամբ Մինաս չընչին քարտուղարի, զի անուամբ կոչիմ աբեղայ և կրօնաւոր, և գործով իբրև զմի աշխարհական ի սբ. և հրաշափառ և գերահռչակ սբ. աթոռոյս Ստեփէի առաքելոյ գեղեցկազարդ յօրինուածով շինեալ տաճարիս, անուն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և այլ սրբոց նշխարաց, որ աստ կան ժողովեալ։ Եւ ի տեղիս առաջնորդ տեառն Յովհաննիսի աստուածազարդ վարդապետի և Յիսուսի բանին պաշտօնէի, որ էր եպիսկոպոս, արհիական կահիւք ճոխացեալ հոլիւ և վերատեսուչ տանս Սիսական, շնորհեսցէ Յիսուս զսա (?) կենօք բազումք և անդրդուելի խաղաղութեամբ։*

306ա *Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, ոյք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զՄինաս սոսկ անուամբ աբեղայս և ըստ հոգւոյ հայր մեր զտէր Սարգիսն և զտէր Հայրապետն, և զմարմնաւոր ծնողքն իմ՝ Լալէն և Պանալուն, և եղբարքն իմ՝ զտէր Յովհաննէսն, զԱնդրէասն, որ նոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս, զորգիսն և զքոյրքն իմ զՍախմուրն, և զՏարին, և զՄարգարիտն։*

306ա *Արդ՝ ի խնդրոյ սրբասէր, բարեմիտ և հեզահոգի քահանայի միոյ՝ Ալէքսիանոսի, որ եղև ցանկացող, ջերմեռանդ սրտիւ ետ դրել յիշատակ իւր և ի ծնողացն իւրոց, հօրն՝ տէր Բարսեղին և մօրն՝ Շահմելիքին, և համեստ կնոջն իւրոյ՝ Արզուխանին, և որդոցն՝ Ովանիսին, Կարապետին և Մինասին, դստերացն՝ Հեղինին, հարսն՝ Սիրումին, քուերացն՝ Մար-*

306բ *գարտին, Հնազանդին, Մարիանին, // Եղիսաբեթին, Զանազանին, Մարթին. դեռաբոյս և նորաբողբոջ թոռանն՝ Բարսեղին, պահեսցէ զսա զմանկացեալն Յիսուս մինչև ի խորքն ծերութիւնն, անփորձ և անսասան. ամէն։*

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՜վ պատուական քահանայք և մանկունք սբ. Սիովնի, կարդալով կամ օրինակելով զսբ. Աւետարանս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Աղէքսիանոսն, հանդերձ ծնողովքն իւրովք և Աստուած ողորմի ասացէք, որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց և ընչից իւրոց, յիշատակ անշնջելի...։

Բ

307ա *Դարձեալ յիշեցէք զՄինաս վատահամբաւ գծագրող զսբ. Աւետարա-*

307բ *նիս և թողութիւն շնորհեցէք // մեղաց իմոց և ծնողաց, մանաւանդ խոշորութեան և ապագրութեան սբ. գրոյս, զի այս է կար մեր, աղաչեմ աղերսեմ մեծակական արտասուօք յիշել միշտ ի յաղօթս ձեր, որ եմ ես նահանգիս Անանանցի և գեղշովք Խոտանանցի։*

Դարձեալ յիշեցէք զձեռնասուն աշակերտսն իմ՝ զԱռաքելն, զՀաքարեայն, զԱստուածատուրն և զՄելքոնն, որ եղեն ձեռնտու ըստ գործոց մերոց՝ շինել և ի կոկելն։

Դարձեալ յիշեցէք զտէր Ալէքսանոսն, եւ գրել զսբ. Աւետարանս ի գեղս որ կոչի Մանաշու, ի դուռն նորակունք Ս. Յովանիսին, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն. եղիցի, եղիցի։

Ստացող՝ Ալէքսանոս քահանայ

Գ

Եւ արդ՝ ես կրկնամեռ անձն Ալէքսիանոս քահանայս ստացա զսբ. Աւետարանս յիշատակ յաւիտենական, հալալ ինչից և վաստակոց իմոց,
307ա ինձ և ծնողաց իմոց // զտէր Բարսեղին և զՇահմելիքին: Աղաչեմ զամենեսեանդ, ով որ հանդիպիք սմա, քահանայք և սարկաւագունք, արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդ և կուսանք, կարդալով, օրինակ դնելով և կամ յունկն և ի յականջ առնելով և ի միտ պահելով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք զստա[ց]օղ զսբ. Աւետարանիս և մեր մեղացն թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ...։

1435
ԱՒԵՏԱՐԱՆ
ԼԱՎԳԱՒ, № 21 (1568 թ.)

Նվիրատու՝ Պետրոս կաթողիկոս

129 Ես՝ Պետրոս կաթուղիկոս կամաւ և յօժարութեամբ զԱւետարանս տուի Աշուղի որդի տէր Յովանիսին: Եթէ իմոց, թէ օտարաց այլ մարդոյ բան և խօսք չլինի։ Ով որ այսմ բանիս բան ասասցէ՝ զատի ի յԱստուծոյ։
Գրեցաւ սակաւ բանս թուին ՌՃԹ (1660)-նին։

1436
ՏՈՄԱՐԳԻՐՔ
ԼԱՎԳԱՒ, № 178

Գրիչ՝ Հայրապետ երէց

Ա

1011 Գրեցաւ Տոմարգիրքս ձեռամբ Հայրապետ սուտանուն երիցուս, ի խնդրոյ Բարսեղ վարդապետին, որ այս ամի գաւազան առեալ ի տէր Յուսկայ որդին՝ ի տէր Մարգարայ քաջ և բարունապետ վարդապետէ, ի թուականիս Հայոց ՌՃԹ (1660) ամին և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Բ

Եւ զբազմամեղ տարասքօղ Հայրապետս յիշել ի պաղատանն յաղօթ, ձեր և զբստացօղ սորա Բարսեղ վարդապետն, որ այս ամի գաւազան առեալ ի Մարգարայ վարդապետ[է], ի ՌՃԹ (1660)։

Գ

Թողութիւն արա հայր, տրտում է անձն իմ մինչ ի մահ։

1437
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏՅՁՄՎ, № 460 (1315 թ.)

Նվիրատու՝ Յովանէս

931 Յիշատակ է սբ. Աւետարանս Յովանիսին, կողակցոյն՝ Մարիամին, Դուլին որդւոյն՝ Ղուկասին, հարսն՝ Յուլիանին, թոռն Մարիամին, եղբօրն Թասալուն և իւր կողակցոյն՝ Շիրազին, որդոցն՝ Մարկոսին, Սահակին, Հայրապետին և ամենայն աղգականացն։ Եւ եւտու ի դուռն Թումայի առաքելոյ եկեղեցւոյն մերոյ, ի դեղն Տեի, թվին ՌՃԹ (1660). յիշեցէք...

1438
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ՅՈՎՍԵՓՈՍ
ՄՅՁԵՊ, II, № 755

Թարգմանիչ՝ Ստեփաննոս Լեհացի

882 Շնորհիւ և գթութեամբ բարերարին, ես՝ Ստեփաննոս Լէհացի, յետին մանկանց եկեղեցւոյ և կրտսեր ի սպասաւորացն բանին Աստուծոյ, բաղում անգամ յառաջագոյն հարկեալ ի հրամանէ երիցս երանեալ տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի, և ապա աղաչեցեալ ի թախանձանաց եղբարցն, որք կան ի հրահանդս դեգերանաց իմաստից ի սբ. աթոռս Էջմիածին, ի թուաբերութեան տօմարին Հայոց ՌՃԹ (1660), և ի հայրապետութեան սրբազան տեառն Յակոբայ, զայս Պատմութիւն Յովսէպոսի թարգմանեցի ի լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու։

Բայց գիտելի է, զի արտաքոյ այսր Պատմութեանս, զոր գրեաց յաղագս պատերազմի Հրէիցն ընդ Հռովմայեցիս, այլ մատեանս սորա ունիմք, որ ասի Պատմութիւն առաջնոցն հրէից, ի Ի (20) Դպրութիւնս պարունակեալ՝ յորս ճառէ սկսեալ յաշխարհաստեղծութենէն մինչև ի վերջին աւերումն Երուսաղէմի: Են և այլ խօսք սորին, որ ասի Մաքաբայեցոցն Մակաբայեցւոցն։ Իսկ ես միայն զայս գիրս ի մեր լեզու փոխարկեցի, զի է յոյժ պիտանի և օգտակար ուսումնասիրացն, մանաւանդ որք ցանկան գիտել զժամանակն անցեալ ի Յուդայէ Մակաբայեցւոյ մինչև յաւերումն Երուսաղէմի, զոր յառաջագոյն կանխաւ գուշակեաց Տէրն մեր, ի սբ. Աւետարանն Ղուկասու։

Արդ՝ աղաչեմ, զի որք օրինակէք զայս ժամանակագրութիւնս, զայս և դուզնաքեայ յիշատակարանս և ընդ սմին գրեսջիք, զի և դուք եղիջիք դրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեան. և եթէ ինչ գտանիցի ընդդէմ ուղղաշաւիղ թարգմանութեան, ինձ թողութիւն շնորհեսջիք. զի այսչափ էր կարողութիւնս։ Քանզի ի յայս ձեռնարկեալ համարձակեցայ այսու պատճառաւ միայն, զի մի գտայց նման ծառային, որ զքանքարն իւրոյ ի վարշամակն ծրարեաց. և մանաւանդ զի յայսմիկ փառաւորեսցի տուօղն ամենայն շնորհաց, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Վերջ։

1439
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՄՏՁԼԿ, IV, № 1253

Կազմող՝ Մինաս

421 Կազմեցաւ վերըստին գիրքս, որ կոչի Աղօթից մեկնիչ, զոր սահմանեալ է սրբոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, ձեռամբ Մինաս բանի սպասավորի, ի առաջնորդութեան Շէնքուշա[յ] նահկի Սարկոս աստուածաբան վարդապետի, ի թուականիս Հայկազեան սեռի հազար հարիւր և ընի (1660)։ Եւ որք ընթեռնուք, լի սրտիւ ասացէք Աստուած ողորմի...։

1440
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵԿ, V, № 1629 (1507 թ.)

Կազմող՝ Սարգիս քահանայ

442 Զվերջին կազմել տվող սբ. Շարակնոցիս զՍարգիս արհեպիսկոպոսն և զծնօղսն իւր՝ զպարոն Պապաքին և պարոն Խանումաղին, և եղբօրն՝ Բայիրամին, և այլ եղբարցն, որ հանգուցեալ են ի Քրիստոս, ևս առաւել եղբօր որդին իւր՝ Արղութէն, յՈռնակայ հողի վրայ դառն մահուամբ ըսպանեցին թվանքով վրացիքն։ Կազմեցաւ սբ. Շարակնոցս ձեռամբ Թումանի որդի Սարգիս սուտանուն քահանայի[45], որ անուամբս միայն եմ և ոչ գործովս։ Կազմեցաւ սա ի խաղաղ ժամանակի և ժամատեղաց հաստատեալ։ Եւ որք յիշէ ի Քրիստոս...։

Ի թվականութեանս Հայոց ՌՃ ինեերորդի (1660) կատարման սորա վերջ։

Եւ այլ միարանքս, որ աստ կան հաւաքեալ, զտէր Կիրակոսն, որ փոխեցաւ ի Քրիստոս, զտէր Դաւիթն, զտէր Ալէքսանն, զտէր Աթանէսն և զտէր Յովանէսն, մականունն Բօշի կոչեցեալ, յիշեցէք ի Քրիստոս...։

Ի շահութեանն Պարսից փոքր շահ Ապազին, ի հայրապետութեանն Յակոբ կաթողիկոսին և թագաւորութեանն Վրաց Շանենուազ դանին, ի խանութեան Լօռու Խաայ խանին։

1441
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵԿ, V, № 1665 (ԺԷ դ.)

516 Արդ՝ ով սբ. մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք աստուածաշունչ տառիս, որ կոչի Շարակնոց, որ է զարդ տօնից տէրունական և ցնծութիւն եկեղեցեաց, զոր սիրով և հոգևոր եռմամբ ստացան զսա Պարոնն, և Աւետիքն, և Ոսկանն, ի հալալ արդեանց իւրեանց, յիշատակ իւրեանց հոգոյն և ծնօղացն՝ Իվանէ և Սապրիխանին, և եղբարցն՝ Սիմէոնին, և ի Քրիստոս

---

45 Այս անձնավորության փոքրիկ հիշատակարանը, երբ տակավին սարկավագ էր, տե՛ս 1647 թ. շարքում։

հանգուցեալ Յովանին, Պողոսին, և քեռացն՝ Ղամանդուխտին, Մարիամին, Նանաջանին, զոր Քրիստոս զիւրեանք անփորձ պահէ և բարեաւ վայելել ասցէ Նանաջանին մինչ ի ծերութիւն. ամէն։

Թվին ՌՃԹ (1660)։

1442
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏՁԵՊ, VI, № 1947

Ծաղկող՝ Խաչատուր
Վայր՝ Համիք

503 Փառք...։ Յորոց և ի քրիստոնէից երամոցն ի Հայկազեան տոհմէն և ի Լուսաւորչի շառաւիղէն, ի Միջագետաց սահմանէն, ի մայրաքաղաքէն Համբայ, քրիստոնեա ոմն Ասատխան անուն ցանկացաւ սբ. մատենիս, որ և ետ գրել զսբ. Աւետարանս Յոհաննէս ումեմն սարկաւագի, յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, հաւրն՝ Աստուածատուրին, և մաւրն՝ Պալաշխին, և կենակցուն՝ Շահպակուն, և որդոցն՝ Կարապետին, Յովհաննիսին և Յունանին, և ամենայն արեանառու մերձաւորացն. և եգ զսա անջինջ յիշատակ ի Տեառնակոչ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սրբոյն Յակոբայ, զի մի՛ ոք յանդգնեսցի հանել զսա ի դրանէ Սրբոյն Յակովբայ՝ ծախելով կամ գրաւելով և կամ այլ ինչ իրօք։ Եթէ ոք իշխեսցէ՝ տացէ պատասխանի յաւուրն անաչառատենին...։

Արդ՝ ծաղկեցաւ և կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտ ու փուտ Խաչատուր գրչի, ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ այժմ ասի Համիք, ի դուռն Ս. Կիրակոսի և մօր նորա Ուղիտայի, և Ս. Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի յառաջնորդութեան տէր Ոնուփրիոս բարեւնապետին և աստուածաբան վարդապետին, և ի հայրապետութեան սբ.
504 էջմիածնայ // տէր Յակոբ խարազնազգեստ և առաքինի սրբասնեալ կաթողիկոսի, ի թուականութեան հայկազեան տոմարիս ՌՃԹ (1660), ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մահմատին, ի դառն և ի նեղ ժամանակիս, զի կարի յոյժ նեղութեան միջի են աղգքն քրիստոնէից ի ձեռն հարկապահանջութեան, զոր տէր Աստուած փրկեալ աղատեսցէ. ամէն։

Արդ՝ ես մեղաւոր Խաչատուր գրիչս, արտասուաթոր դիմօք և կողկողագին պաղատանօք աղաչեմ զդասս սրբազան վարդապետացդ, և զերամս մեղսաքաւիչ քահանայիցն, Աստուած ողորմի ասասջիք ինձ և ծնաւղաց իմոց, հօրս Քասպարին և մօրս Շնահաւորին, և կենակցուս, և դստերըս Աննային, և այլ որդւոցս և դստերացս առ Աստուած փոխեցելոցն, և ամենայն արեան մերձաւորացս...։

1443
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
ՄՏՁԵՊ, VII, № 2265

Գրիչ՝ Պողոս Ուրհայեցի
Վայր՝ Երուսաղէմ

360 Փառք...։ Գրեցաւ սբ. Խորհրդատետրս ձեռամբ անարժան Պողոս Յուրհայեցոյ, որ անուամբս եմ աբեղայ, և գործովս ունայն...։

Զեղ աղաչեմ հայրք և եղբարք սրբազան,
Որ պաղատիք վասն իմ առ Տէրն ամենայն,
Ներել մեղաց իմոց որ է բաղմական,
Եւ ձեզ ողորմեսցի այժմ և յաւիտեան։

Դարձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ վասն խոշորութեան և սղալանաց գրոցս անմեղադիր լերուք, զի չէի հմուտ զրոյ հարհեստի, միայն թէ փափաքեցայ և դրեցի զսա յիշատակ ինձ և ծընօղաց իմոց և ննջեցելոց իմոց. ամէն։

Գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՌՃԹ (1660), ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Ծննդեանն։ Ոչ ոք ունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ Ս. Ծննդեանն։ Եւ որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ օրինակելով կամ պատարագ մատուցանելով, յիշեսջիք զմեզ ի մաքրափայլ աղօթքս ձեր և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

1444
ՄԱՇՏՈՑ
ՄՅՋԵՊ, հ. IX, էջ 455

Գրիչ՝ Տօնիկ տիրացու

502 Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն, որ ետ կարողութիւն տկար եւ մեղապարտ անձին իմոյ հասանել ի կատար գրոցս, որ կոչի Մաշտոց, ի յամի թուականութեան Հայկաղան սեռիս, ձեռամբ յոգնամեղ եւ մեղապարտ անարժան զրչի Տ[օ]ն[ի]կ տիրաց[ո]ւս, ի թվականիս Հայոց ՌՃԹ (1660), ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակոբին սրբազան կաթողիկոսի, ի յառաջնորդութեան Կաֆայեցի Մարտիրոս վարդապետի, ի վայելումն տէր Յովանիսի որդի Պրոխորոն չէլէպուն, զոր Տէր Աստուած բարով վայելումն տացէ, ամէն։

Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի յաղօթս ձեր զմեղապարտ գծողս եւ զվերոյ գրեալ զտիեարս սորա, որք տենչացեալ բազում սիրով ետուն գրել զսա յիշատակ իւրն եւ յետնամնացած զաւակացն, զոր Աստուածն մեր ամերամ ժամանակաց, պարագայց ամաց, մինչեւ ի խորին ծերութիւնն հասուցանէ, ամէն։

1445
ՄԱՇՏՈՑ
ՄՅՀՍ, № 99

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Հալապ

178 Փառք...։ Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ գիրքս այս, որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Մեսրովպ և Յոհանն Մանդակունի։ Գրրեցաւ սա ձեռամբ մեղսաներկ և եռաթշուառ անձին Աստուածատուր անուամբ ևեթ քահանայի, ի ինդրոյ սրբասէր, և հեզահոգի, և բա-

ռեպաշտի Արարգեռցի Մարգարի, *որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց և ետ զսա յիշատակ անջնջելի ի Ս. Քառասունք եկեղեցւոյ։ Արդ՝ եղև զրաւ և աւարտ զրոյս ի թվաբերութեանս Հայոց տումարիս ՌՃԹ (1660), ի մայրաքաղաքս* Բերիայ, *որ է* Հալապ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածին, և Ս. Քառասունք եկեղեցեացս, և այլ ամենայն սրբոցն, որ աստ կան հաւաքեալ՝ ի յաւգնութիւն քրիստոնէից։ Ի կաթուղիկոսութեան տէր* Խաչատուրի, *որ է այժմ բաղմեալ ի յաթոռ սբ. Լուսաւորչին, ի մայրաքաղաքն ի* Սիս։ *Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս քահանայից և զգիտնականաց, յորժամ տեսանէք զմատեանս աստուածային կամ աւրինակէք կամ մահ և կեանք կատարէք, յիշեցէք ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սբ. գրոցս վերոյ յիշեցեալ հաւատարիմ առն* Մարգարին, *և ծնաւղաց նորին, հաւր* Աստուածատուրին, *և մաւրն իւրոյ՝* Ղըրմըզին, *և կողակցոյն իւրոյ՝ մահդասի* Կուլֆանին, *և դստերին իւրոյ՝* Ղըրմըզին, *և փեսային իւրոյ՝* Գրիգորին, *և թոռին իւրոյ՝* Եղիային, *և ի Քրիստոս հանգուցեալ զաւակացն՝* Եղիային *և* Վարդխաթունին, *և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն։ Ընդ նոսին և զանարժան գրծողս՝* զԱստուածատուրս, *և զծնաւղսն իմ, և զամենայն ազգատոհմս իմ յիշեցէք ի Քրիստոս, և՛ լի և՛ առատ սրտիւ մեղաց թողութիւն խնդրեցէք, և Քրիստոս թողցէ ըզմեղս ձեր. ամէն։*

Ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, աղաչեմ զձեզ յիշել ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրել ուսուցչին իմոյ՝ զԵստեփաննոս *սարկաւագն քարտուղարին, որ բազում աշխատանք ունի ի վերայ անարժանիս, զոր հատուսցէ նմա Քրիստոս զփոխարէնն ի միւսանգամ գալըստեանն իւրոյ. ամէն։ Եւ այլ ոք չունի իշխանութիւն առնելոյ զմաշտոցս զայս ի դրանէ Ս. Քառասնից։ ...*

1446

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՂԲ, № 145

Գրիչ՝ Մատթէոս

ա

926 *Յիշեցէք զանպիտան գծող* Մատթէոս *գրիչս և զվարպետքն իմ՝ զտէր* Գասպարն, *և զորդին իւր՝* զՅարութիւնն, *և զիմ ծնօղսն՝* ըզՍլֆաբէկն *և* զՆղիստրեթն, *և զեղբայրն իմ՝* Գրիգորն, *յիշեցէք։*

բ

Յիշեա զՄալի *գրիչս։*

Գրիչ՝ Բաղտասար
Վայր՝ Ասպահան

գ

Փառք...։ Արդ՝ շնորհօք Տեառն *սկըսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զսբ. Աւետարանս, ի լաւ և ընտիր օրինակէ, ի մայրաքաղաքս* Շօշ, *այսինքն է՝* Ասպահան, *ի թուականիս Հայոց ՌՃ և Թ (1660) ամին. և ի հայրապետութեան տոհմիս Հայկային՝ տեառն* Յակոբի *խարազնա-*

զգեաց կաթողիկոսի, և ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապասին, և ի հովլապետութեանն հօտիս տէր Դաւթի արհի եպիսկոպոսի և քաշ բաբունապետի, հեղահոդի աստուածարան վարդապետի։ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան և մեղապարտ գծողի Բաղուասարի, ի գեւղս... որ է նորաշէն, ի զուռն Ս. Աստուածածնին, ի խնդրոյ բարեպաշտ և երկիւղած Աստուծոյ աւն Եաւրիխանին, որ բոտացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և իւր ծնողացն՝ Սարգիսին, Նազլուխանին, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍարգիսն և զիւր որդիքն՝ Եաւրիխանն, Մուրատխանն, և Այվազն յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք [զ]Ավրիխանն, և զիւր եղբայր Մուրատխանն, և զնորա կողակից Նունիֆարն, և զդուստր զԳուլզաուէն, յիշեցէք։

927 Միւսանգամ յիշեցէք [զ]Անտոնն, և զիւր կողակից Անային։

Կրկին անգամ յիշեցէք [զ]Էվազն և իւր կողակից Շահսօլթանն։

/// Կողակիցն զՍառա խաթունն և զմիւս կողակիցն զՄարեանն, և որդիքն՝ զՍարգիսն, Յարութիւնն, Խէշիկն, Գասպարն, և զդստերքն՝ Սվսանէն, յիշեցէք։

Դարձեալ յիշնցէք զՄուրասէն. և զկողակիցն իւր Նուրումն։

928 Դարձեալ յիշեցէք Յեաւրիխանն և // զիւր մեծ պապն՝ զԽէշիկն, և զկողակիցն իւր՝ Թուղբարփաշէն, և որդիքն՝ Գրիգորն, Սարգիսն, Էվանէսն, Զաքարէն, և զդստերքն՝ Խանեիշին, Հոռոմսիմէն, յիշեցէք։

Կրկին անգամ յիշեցէք զՅեաւր[ի]խանն և զիւր հօրեղբայրն՝ Գրիգորն, և զնորա կողակիցն՝ Խոնտաղէն, և որդին՝ Ասապովն ///

1447

ՄԱՇՏՈՑ

ՅՁԱՒ, № 195

Գրիչ՝ Երեմիա դպիր
Վայր՝ Երուսաղէմ

ա

934 Զեղկելի և զմեղօք լցեալ և զանպիտան ըղգծող և ղծաղկող սորա, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ դասք քահանայից, զԵրեմիա դպիրս, և զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։ Որ գրեցաւ սա ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ, ի թվ[ին] ՌՃԹ (1660)։

բ

Պսակն աւարտեցաւ, և գծողս մեղօք կորեաւ։

գ

Ապաշխարող արձակելն աւարտեցաւ, և սևերես պոռնիկ գծող Երեմիայ դպիր մեղօք կորեաւ։

դ

Հանգստեան Աւետարանն Յոհաննու ԱՁ, ԳՁ կարդաւ։ Ռահ գործեալ Երկնաւորաց, ասա, և զսևերես զԵրեմիայ գծողս յիշեա. ամէն։

1448
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՔՅՁՁՎ, № 2 (1634 թ.)

17 Ես՝ Մովսէս քահանայս [ ][46] զայս Աստուածաշունչս թվին ՌՃԹ (1660)։

1449
ԱՒԵՏԱՐԱՆ
ՈՅՁՄՎ, № 89։

Գրիչ՝ Յովհաննէս երէց
Վայր՝ Ախտայ

ա

474 Փառք...։ Ի թուականութեանս Հայոց ՌՃ և Թ (1660), ի թագաւորութեան Պարսից շահ Ապլազին, գրեցաւ սբ. Աւետարանս, ձեռամբ յամենամեղ անձնէ Յովհաննէս իրիցու, գործով թափուր և ունայն։ Գոհանամ զՏեառնէ իմմէ, որ ետ կարողութիւն ի տկարութեանս իմոյ մանաւանդ փոփոխմամբ խորհրդով և անհաստատ մտովք ըստ Սողոմոնի, որ ասէ. «Ճանապարհս առն երիտասարդի ոչ գիտացի» և այն, հասանել ի յաւարտն սբ. Աւետարանիս ողորմութեամբն Աստուծոյ։ Աւարտեցի ի յերկիրն Մաղկունեաց, ի դեաւղն որ կոչի Ախտայ, ի դրան նորակնունք Ս. Գէորգին և այլ սրբոցն, որ կան աստ հաւաքեալ։ Ի հայրապետութեան սբ. էջմիածնայ Յակոբ բարձունապետին և միաբան ուխտին նորա. և տեղւոյս առաջնորդ սբ. ուխտիս Աստուածածնին երիցս երանեալ Սովսէս վարդապետին և զտէրն Ներսէսն (sic) և միաբան ուխտին նորա. ամէն։ Աղաչեմ զձեզ եղբարք, թողութիւն շնորհեսցէք ինձ և անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս և սղալութեանս, ո՞վ եղբարք, թէպէտ գիրս ախմար է և վատ, դրեալն ի սմա ընտիր աւրինակ է և յստակ, անսուտ և անապակ և անպատճառ։ Արդ՝ ցանկացող եղև յայսմ աստուածաշունչ տառիս, հեզահոգի և բարեպաշտ այրն Էվազ, յուսով և սիրով, ըստ բանի, որ ասէ թէ. «Երանի...»։ Նոյնպէս և սա եղիցի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն՝ Բաքին և Ազիզին։ Դարձեալ յիշեցէք Այվազն, և կողակիցն իւր՝ Ազիզն, և զորդիս իւրեանց՝ Ասատուր, Կիրակոս, Ատին, դուստրն իւրեանց՝ Մարիամ, Փաւին, Ջանումն։ Մաղթեմ յիշել Ատին և զկողակիցն իւր՝ Դոլվաքրն, որ առ Քրիստոս փոխեցան։ Դարձեալ յիշեցէք Էվազն, և երկրորդ ամուսին Անթառանն, և զպապն իւր՝ Ղազարն, և զեղբայրն՝ Վարդումն, և զկողակիցն իւր՝ Զուլալն, և զմեղապարտ գրիչս զՅովհաննէս երէցս յիշել աղաչեմ և զծնօղսն իմ։ Դարձեալ յիշեցէք Այվազն, որ ստացաւ սբ. Աւետարանս և ետ յիշատակ /// եթէ ազգական կամ ընթանի համարձակի ծախելով՝ նզովեալ եղիցի սբ. հայրապետացն։ Մի՛ ոք իշխեսցէ ծախել։ Ո՛վ ընթերցողք, յորժամ օրինակելով կամ կարդալով, յիշեցէք Յովհաննէս երէցս և Աստուած ողորմի ասացէք. և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ. զալստեանն. ամէն։

[46] Ինչպես հաղորդում է Ցուցակի հեղինակը, «երկու բառը չկրցանք կարդալ» (էջ 17)։

Բ

Ո՛վ սբ. ընթերցող, զմեղապարտ գրիչս Յովհաննէս երէցս յիշել աղաչեմ և զծնողսն Յմ և ընդ նմին զԱւագ սարկաւագն. ամէն։

Գ

Զմեղապարտ գրիչս յիշել աղաչեմ, ո՛վ մանկունք Սիոնի։ Զստացող կենսարեր սբ. Աւետարանիս զԱրիստակէս քահանայն յիշեսջիք ի Տէր, նազելի մանկունք Սիոնի։ Եւ ընդ նմին Այվազն և զորդին իւր՝ Ատիրէկն, որ երեսնամեայ փոխեցաւ առ Քրիստոս։

Դ

Զհոգիաւսէր... զԱրիստակէս զքահանայն զստացաւդ աստուածային փրկագործ իմաստիցս յիշեսջիք Տէր, որդիք վերին Սիոնի։ Ժտեմ և ես յոռնամեղ խոշորագիծս զրՅովհաննէս երէցս և զծնաւղսն իմ անմոռաց լինել ի ձէնջ, զի և դուք յիշեսջիք ի Տիառնէ։

1450

ՄԱՇՏՈՑ

ՈՅՁՄՎ, № 907

Գրիչ՝ Կոզմայ
Վայր՝ Նորաշէն

491 Փառք... Գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անիմաստ և բազմամեղ Կոզմայ գրչի, ի թվիս Հայոց ՌՃ և Թ (1660)-ի, ի հայրապետութեան տեառն Յակոբի և մերոյս առաջնորդի Ղազար բաբունապետի, ի յերկիրս Ալինայ, ի գեօղն Նորաշէն, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի՝ մերս եկեղեցւոյ։ Ո՛վ հարք իմ հոգևորք, որք հանդիպիք սմա, յիշեցէք զԿոզմաս գրիչս, և զհայրն իմ՝ Ղազար քահանայն, որ զարհեստս զայս ուսոյց ինձ, և բազում չարչարանս կրեաց զհետ իմ, որոյ փոխարէն վարձուն խնդրուածովք ձերովք և իմ մեղաւորիս։ Արգար[ա]դատն Աստուած հատուսցէ նմա վարձս ըստ ջանին իւրոյ, որ ունէր առ հէքս։ Ընդ նմին խնդրեմ և ներել սխալանաց դրոյս, զի կար իմ այս էր։

1451

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 131

Գրիչ՝ Յակոբ քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

180 Աւրհնութիւն...։ Արդ՝ գրեցաւ սաղարթափթիթ բուրաստանս և անգին մարգարիտս, որ կոչի Աւետարան, ի թուականութեանս Հայոց ՌՃ և Թ (1660), ի քաղաքն Սպահան, ի գեօղն որ կոչի Ջուղայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, ի հայրապետութեանս Հայոց տեառն Յակոբին, և առաջնորդութեան Ջուղայոյ Դաւիթ վարդապետին, ձեռամբ անարհեստ, ծուլ ի գործոյս և անսէր արուեստիս, մեղսամած սուտանուն Յակոբ քահանայիս, ի խնդրոյ ոմն ի լուսածնեալ զարմից սրբոցն Սիովնի, զբարեսէր, զհանճարեղ ծառա Գառուիկին, որ բազում հետէ ցանկայր փափագ-

մամբ, եւ գրել յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոյ։ Եւ յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, որ է մերձ ի վանս Կուսանացն, ի վայելումն տէր Յովանիսին, զոր տէր Աստուած խաղաղութեամբ վայելել տացէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք Գտուրիկն և զծնողսն իւր՝ Իվանին և Զուլիկն, և զեղբայրն իւր՝ զՀայրապետն, և քուերքն իւր՝ Ասլիխան, և զհանգուցեալ քուերքն՝ Մարիամն։ Դարձեալ յիշեցէք Դատուրիկն, և կողակիցն իւր՝ զՄարեամն, և զծաղկեալ որդիքն իւր՝ զԳորգինն և զՅովանէսն, Կուսանեղն. և փթթեալ դստերքն իւր՝ զԲթէն, Պեղիգէն, Ոլումպէն, և զհանգուցեալ որդին իւր՝ զՅոհանն, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Հայրապետն, և կողակիցն՝ Անային, և ամենայն արեան մերձաւորքն՝ կենդանիսն և զհանգուցեալսն, յիշեցէք...

Դարձեալ յիշեցէք զքահանայք սբ. ուխտիս զտէր Խաչատուրն, զտէր Անանիէն, զտէր Ըստեփանոսն, զտէր Ատեփսն, զտէր Պողոսն, և զտէր Յովանէսն։

Դարձեալ յիշեցէք զանարժան Յակոբ քահանայս և զծնողս իմ՝ զՄարաիրոսն և զԽաթունբեկին, և զհոգեւոր մայրն իմ՝ զՍանդուխտ կրօնաւորն, և ամենայն արեան մերձաւորքն իմ։ Եւ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, սղալանաց և կամ թէ խոշորութեան գրոյս և ամենայն պակասութեանս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Յիշեցէք զվարպետն իմ՝ Մարգարէն և զծնողս իւր։

Եթէ ոք իշխեսցէ հանել զսբ. Աւետարանս՝ ծախել և կամ թէ գրաւ դնել, թէ՛ եպիսկոպոս, թէ՛ քահանայ, թէ տանուտէր, թէ՛ հայրապետ, թէ՛ մերոց, թէ՛ օտարաց՝ պատիժն Յուդայի առցէ։

1452

ԺԱՄԱԳԻՐՔ

ՏԵՐԱՎՔ, № 279

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Կովտի Զանտալուտ

ա

485 Ո՛վ հարք և եղբարք և մանկունք սբ. եկեղեցւոյ, յորժամ կարդալք զհամեղաճաշակ բան Սաղմոսի, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՄարգարէն, որ երիտասարդ տիօք փոխեցաւ առ Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք. և ինձ՝ զՅակոբ գրիչս, յիշեա ի Տէր։

բ

486 [Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ ժամադիրքս ձեռամբ անարժան Յակոբ սարկաւագէ, ի թուականիս Հայոց ՌՃԹ (1660), ի յերկիրս Շօշ, որ կոչի Ասպահան, ի գեղս որ կոչի Կովտի Զանտալուտ[47], ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի հայրապետութեան սբ. աթոռոյն էջմիածնայ տեառն տեառն Յակոբ կաթուղիկոսի, և զարհի եպիսկոպոսն մեր զտէր

[47] Յուցակի հեղինակը ծանոթագրում է. «թարգմանվում է՝ Զայանդէռուտ գետի փոսա»։

Սահակն, *ի թագաւորութեան փոքր շահ* Ապասին: *Գրեցաւ սբ. ժամագիրքս ձեռամբ յոդնամեղ* Յակոբի, *յիշատակ* Մարգարի՝, *և կենակցին իւրոյ՝* Թամարի՝, *և ստացան զսա հալալ ընչից իւրեանց, յիշատակ իւրեանց ծնողացն և ամենայն արեան մերձաւորացն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* զՄարգարէն, *և զկենակիցն իւր՝* զԹամարն, *և զծնողս սորին՝* զէրիսէն *և* զԱնային, *և զեղբայրսն՝* զԴորգին, *և* զխախուէն, *և զքրեբսն՝* զԹէթրուէն, զԱնօէն, զՄանիէլն, զԻթիթիէն, *և զդուստրն իւր՝* զՄարիամն, *յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* զՄարգարէն, *և զհայրն իւր՝* զԲաղատասարն *և զմայրն* ///

1453

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՏԵՐԱՎՔ, № 308

Գրիչ՝ Յակոբ քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

510 *Փառք...։ Աւարտեցաք կենսատու խորհուրդ սբ. պատարագիս ձեռամբ անարժան* Յակոբ *քահանայիս, ի քաղաքն* Ընպահան, *ի գեօղն որ կոչի* Ջուղայ, *ի դուռն սբ. կուսին* Կատարինեա, *ի թվականութեանս Հայոց ՌՃԹ (1660), հայրապետութեանս Հայոց տեառն* Յակոբին, *և առաջնորդութեանս* Ջուղայոյ Դաւիթ *վարդապետին, և թագաւորութեանն Պարսից փոքր* Շահնպազին[48], *ի խնդրոյ բարեմիտ մահդեսի* Իշխանին, *զոր բազում սիրով և փափագմամբ ետ գրել զսբ. խորհուրդս մտածելով զբան մարգարէի որ ասէ. «Երանի...» Եւ ետ ի վանս Կուսանացն, որ կոչի Կատարինեա, յիշատակ իւրն և ծնողացն, ի վայելումն վարդապետաց և քահանայից, զոր տէր Աստուած խաղաղութեամբ վայելել տացէ. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Իշխանն, *և զծնողս իւր՝* Յեղուլին *և* զԹանումն, *և զկողակիցն իւր՝* Այվազն, *և զորդիսն իւր՝* Աբամելիքն *և* զՅարութիւնն, *որ են հանգուցեալ ի Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորքն յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղսամած և չարօք լի, անուամբս միայն եմ և գործովս ունայն, անարժանս արժանաւորաց, և յիմարս ի մէջ իմաստնոց, և գործովս ամենևիմբ չար և դաղիր, ոչ արժան անուանս Յակոբ *քահանայս, և զծնողսն իմ՝* զՄարտիրոսն, *և* զխաթունբէկին, *և ամենայն արեան մերձաւորքն իմ։*

Դարձեալ յիշեցէք զսրբասնեալ Աստուածատուր *քահանայն և զծնողսն իւր, որ բազում աշխատեաց ի վերայ ծաղկանցն։*

Դարձեալ յիշեցէք զտէր Յովանէսն, *որ օգտեաց սրբագրութեան սորին։*

Դարձեալ յիշեցէք զմիաբան սբ. ուխտիս, որ ե՛. ժողովեալ աստ զսրբասնեալ կուսանքս, և որ ի սմա են եկամուտ, զսարկաւագուհիքն՝ զՍառէն *և* Տրիսիէն, զՍանդուխտն *և փոքր* Սառէն, զԳայիանէն, Ցուղիտէն,

[48] *Այսինքն՝ շահ Ապաս Բ։*

Մարինոսն, Թագուհին, Հռիփսիմէն, Եղիսաբեթն, Դշխոյին, Վարվառն: *Զմահդասիքն՝ միւս* Ուղիտէն, *զմայրապետ* Թանկիկն, Մարսիմն *և* Անային, Իշխանն, *զ*Նունին *և զմիւս* Անային: *Եւ սպասաւորք եկեղեցւոյն՝* Հռուփսանէն, Շուշանն, Մարթէն, Եպրաքսէն, Սուփիէն, *զմիւս* Վարվառն, *զ*Նանաջսանն, *միւս* Թագուհին, *միւս* Հռիփսիմէն, Թալիթէն, *դռնապան* Մարգրիտն, *բազմաշխատ* Պօղոսն, *և հանգուցեալ միաբանք սոցին, տէր Աստուած զննչեցեալսն արքայութեան հաղորդս արասցէ, զկենդանիսն խաղաղութեամբ պահեսցէ, անշարժ և հաստատուն մինչև ի կատարածն. ամէն։*

Բ

Յիշեցէք սբ. եկեղեցոյս զսպասաւոր Թեկղիէն, Եղինարն, Մարսիմն, Մամարն, *յիշեցէք...։*

1454

ԱՒԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 70 (1587 թ.)

148 *Զձեզ աղաչեմ եղբայրք, բարի յիշման արէք զիս անարժան* զՊետրոս *սուտանուն մեղաւք ի լի. ի թվին ՌՃԹ (1660)։*

1455

ՇԱՐԱԿՆՈՑ

Թալաս, № 1. տե՛ս նաև «Լոյս», № 27, 1905 թ., էջ 662—663

Գրիչ՝ Սահակ դպիր
Վայր՝ Վան

ա

616 *Յիշատակ է Շարակնոցս տէր* Նիկողայոսին, *և իւր ամենայն արեան զարմին, որք հանդիպիք յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և ինձ մեղապարտ* Սահակ *գրծողիս և ծաղկ[ո]ղիս։*

Բ

Զտառապեալ և մեղաւք լցեալ սուտանուն Սահակ *գծողս և զծնաւղս իմ յիշեա, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։*
Թվին ՌՃՐ (1659)։

Գ

Փառք..., որ ետ կարողութիւն, տկար ողոյ և անիմաստ գրչի, սուտանուն և տառապեալ Սահակ *դպրի, և մեղսամած մատամբ իմով գծագրեցի, և զանազան ոսկւով և պայծառ դեղով ծաղկեալ զարդարեցի, ի վայելումն սրբասնունդ, բարէմիտ և հեզահոգի տէր* Նիկաւղայոսին, *որ*
017 *ստացաւ զշարեալ ակունս, որ է Շա//րակնոց, ի լաւ և ընտիր աւրինակէ Հլիկ կոչեցեալ, յիշատակ իւրն և իւր ծնողացն փոխեցելոյն առ Աստուած, և իւր կողակցին՝* Արուսին, *և որդւոցն՝ տէր* Բարսեղին, Ատոմին, Պետրոսին, Պաւղոսին, Փիլիպպոսին, *և քւերց նոցին, և իւր ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն, որք հանդիպիք սմա տեսանե-*

լով և կամ աւրինակելով, լի բերանով և բոլոր սրտիւ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք սոցայ. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի քաղաքն Շամիրամակերտի Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ Տիրամայր Ս. Աստուածածնին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին և այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ։ Կարողութեամբն[49] Աստուծոյ սկսայ և ողորմութեամբն նորին ի յաւարտն հասուցի, որք հանդիպիք սմա տեսանելով և կամ աւրինակելով, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք տառապեալ Սահակ գրծողիս, և ծնողաց իմոց, հօրն իմ՝ Ամերջանին և մօրն իմ՝ Զենարին, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալուստն. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի թվականիս մերում ՃՌ և Թ (1660) ամեն, ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տեառն Յակոբ կաթողիկոսի, և մերումս առաջնորդի սբ. ուխտիս Վարազայ տէր Պօղոս վարդապետի և աստուածաբան դիտապետի, ի խնդրոյ սրբազան քահանային տէր Նիկոլայոսին, և կողակցին, և որդոցն՝ տէր Բարսեղին, Առոմին, Պետրոսին, Պաւղոսին, Փիլիպպոսին։ Որք հանդիպիք սմա յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, տառապեալ գծողի և ծաղկողի. և սղալանացն թողութիւն շնորհեցէք, զի կարողութիւնն մեր այդքան էր. ողջ լերուք ի Տէր. ամէն։

1456

ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Kar HB, I № 70

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Նոր Ջուղայ

53 Շնորհօք զօրութեամբ... և հրամանաւ Իսահակ վարդապետին, ի թուականութեանս Հայոց մեծաց ՌՃԹ (1660) ամին, ի մարդեղութեան մերոյ Փրկչին ՌՉՃԿ (1660) ամին ես՝ Յովհաննէս նուաստ նստարս ըսկըզբնաւորեցի զգիրս Առաքինութեանց, որ է թարգմանեալ ի լեզուէ Լատինացուց ի Հայոց լիլու։ Ի յարքայանիստ մայրաքաղաքիս Շօջ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան ասի, ի հրաշազարդ և պայծառագոյն հռչակելոյ ընտ ոլորտս տիեզերաց գիւղաքաղաքիս Նոր Ջուղայ, յորջորշեալ Հին Ջուղայոյ անուամբ գիւղի նախնեաց մերոց, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ, ոսկեաւ լաճվարդով և տնօրիանականաց պատկերովք զարդարեալ. եկեղեցոյն։ Ի հայրապետութեան տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, ի թագաւորութեան շահ Ապասին փոքու, որ է որդի շահ Սէֆուն, թոռինն յոգնահանճար և քրիստոնեայսէր շահ Ապաս մեծ արքային։ ...

---

[49] Տպված՝ «կարողութեանն»։

1457
ՇԱՐԱԿՆՈՑ

Ն. Միքայելյան, «Էջմիածին», 1975 թ., ԺԱ, էջ 60, № 346

Ստացող՝ Մինաս Խոտանանցի
Վայր՝ Խոտանան

ա

Զստացող Շարակնոցիս զՄինաս վատահամբաւ աբեղաս աղաչեմ յիշել ի Տէր զհայրն իմ՝ Լալէն, մայրն իմ՝ Պաճալուն:

բ

Ես՝ Մինաս քանքարակորուս աբեղաս ստացա զՇարակնոցս հալալ աշխատանաց իմոց և վաստակոց, յիշատակ ինձ և ծնօղացն իմոց, հօրն իմոյ՝ Լալին, մօրն իմոյ՝ Պաճալուին, և եղբարցն իմոց՝ տէր Յովանիսին, Սարգիսին և Անդրէասին, որ նոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս, քոյրքն իմ՝ զՄաաիմուրն, և զՖարին, և զհանգուցեալ քոյրն իմ՝ զՄարգարիտն, որո[յ] յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Ի յերկիրս Անանան, ի գեղս որ կոչի Խոտանան, թուին ՌՃ և իններորդի (1660)։

1458
ԱԻԵՏԱՐԱՆ

Կարնոյ գիւղեր, «ՀԱ», 1964 թ., էջ 158

Զվերջին ստացողի սբ. Աւետարանիս Գորկէ, հօրն՝ Շարեիսանին, կողմացին՝ Մարիամին, որդոցն՝ Անդրիասին, Վարդանին, Խաչատրին, դստերն՝ Ոսկէճատին, Աստուած զիւրեանցս հոգին լուս[աւ]որէ...։ Որ իւր հալալ ընչիցն ետես և առաւ սբ. Աւետարանս ի վայելումն տէր Աստուածատուրին: Ոչ ոք չունի իշխանութիւն կամ ծախել կամ գրաւ գնել. թէ ով ոք [յ]անդգնին՝ պատիժն Աստուծոյ կրեն։
Առաւ ի թվին ՌՃԹ (1660)։

1459
ՄԱՇՏՈՑ

Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք..., էջ 38

Ազգս մերային որ եկեալ բնակեալ ի գաւառս Նիկոմիդացւոց ի սահմանս Արմաշ կոչեցեալ վանիցն Ս. Աստուածածնի, ի գիւղս որ Ղըշլայ յորջորջի, չև ևս էին շինեալ յարկս աղօթից և ժամատունս։ Իսկ ի յետին ժամանակիս, յետ բաղում տարոյ, որ էր թուականն ՌՃԹ (1660), ի հայրապետութեան տեառն Յակոբայ որ ի սբ. Էջմիածին, և յառաջնորդութեան սբ. Երուսաղեմի տեառն Աստուածատրոյ վարդապետի, և ի պատրիարգութեան տեառն Մարտիրոսի նորին աշակերտի... մինն ի նոցանէ Խասկալցի Ղումրին... ես ... Երեմիաս եկաք ի նաւակատիս եկեղեցւոյս և ի պատճառս ուխտի սբ. վանից տիրամօրն Աստուածածնի, և զթերին լցաք...։

1460
ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 405

... Դարձեալ Աստուած ողորմի ասացէք մահտեսի Բաղիշեցի Ասկիանին և իւր հօրն՝ տէր Մարգարին, և իւր մօրն՝ Շահպազին, և եղբարցն, և քուերցն, և ամենայն արեան մերձաւորացն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց և ետ զսա յիշատակ անջինջ ի դուռն Ս. Յակոբայ դրլխաղրի դամբարանին, ի թվին հայկազեան տումարին ՌՃ և Թ (1660)-ին...։

1461
ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Ա, էջ 78—79

Գրիչ՝ Ալէքսանոս

Փառք ամենասուրբ Երրորդութեան... որ և զմեզ մեղուցեալս փրկեսցէ... և զծնաւղսն իմ՝ զտէր Ստեփանոս քահանայն, որ մականուն Ղատի տէրտէր ասի, և զմայրն իմ՝ զՁմրուքն, և զեղբայր նորին զՄաղաքիա զմեծ բարունապետն, որ բազում աշխատանս ունին ի վերայ իմ և տկարութեանս իմ սփոփիչ... և զքոյրն իմ՝ զՀեղինեան, և զդուստրն իմ՝ զկրկին Հեղինեան, որ հանգեաւ ի Քրիստոս ՌՃԶ (1657), արար աղէխարշ զզառածեալ ծերս անմխիթար, որ եղև վասն մեղաց իմոց։ Եւ հուսկ յետոյ տկարս մարմնով, այլ և հոգւով յետնեալս ի ժամանակաց ես՝ Ալէքսանոս գրիչս ի ծերութեան ժամանակիս, հաւաս կալայ, որ աչքս վատեալ, որ չանոցով հազիւ կարէի նկատել, և ձեռս դողայր, որ ի դրել, և ի ծաղկել, և նկարել զպատկերաց ոչ կարէի ուղիղ գծել. և հաւաս անձին կալայ վասն յետ մնացից յիշատակ յիշման արժանի առնելոյ զիս անարժանս, որ յիշելոյ չեմ արժանի։ Եղև աւարտումն սբ. Աւետարանիս ի Թուականի Հայոց ՌՃԹ (1660) ի փառս Քրիստոսի...

1462
ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 414

Գրիչ՝ Յոհաննէս Մշեցի
Վայր՝ Գոմա

Գրեալ ի յերկիրն Աքխայ[50], ի գեաւղն Գոմա[51], ի դուռն Ս. Նշանին, ի թուին ՌՃԹ (1660), ձեռամբ Մշեցի Յոհաննէս երիցու...։ Քրիստոս Աստուած ... յիշեա և քաղցր աչաւք նայեա և յանուանէ կոչեա զխաչատուր վարդապետն... որ ետ գրել զսբ. Աւետարանս...։

---

[50] Հավանաբար պատմական Անգեղտուն նահանգի Աքաք գավառը նկատի ունի։

[51] Խոսքն հավանաբար վերաբերում է Տիգրանակերտի Հաղրու գավառի Գոման գյուղին։

Ց Ա Ն Կ Ե Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբամէլիք—568, 960
Արաս (նաև Արաղ, Ապաս) 14, 30, 57, 60, 61, 63, 71, 83, 91, 103, 115, 118, 164, 171, 174, 179, 181, 185, 200, 222, 231, 253, 256, 261, 267, 278, 279, 286, 313, 318, 331, 332, 347, 364, 369, 371, 373, 374, 382, 383, 385, 389, 390, 391, 399, 408, 410, 425, 441, 443, 449, 452, 462, 466, 468, 473, 489, 493, 500, 511, 513, 515, 526, 543, 546, 550, 553, 559, 568, 583, 584, 586, 593, 595, 597, 598, 602, 608, 609, 627, 631, 645, 647, 656, 658, 660, 661, 663, 673, 680, 687, 697, 698, 702, 706, 710, 712, 717, 723, 742, 744, 746, 751, 758, 762, 763, 769, 773, 775, 781, 786, 787, 790, 794, 800, 807, 809, 810, 812, 820, 823, 824, 832, 835, 839, 845, 852, 856, 857, 864, 871, 876, 878, 885, 887, 902, 905, 908, 915, 918, 922, 924, 927, 930, 931, 936, 938, 945, 948, 949, 952, 955, 957, 960, 962, 964
Արգար (նաև Ափկար) 177, 183, 294, 344, 599, 698, 708, 744
Արդալ Բաղիշու 487
Արդլաղիզ 620
Արել 717
Արիսողոմ 945
Աբրահամ Պէլբրղատցի 704
Աբրահամ Ջուղայեցի 58
Աբրահամ, դրչ. 338, 552, 562, 565, 571, 574, 749, 935
Աբրահամ (նաև Ահրիհամ) (զան.) 19, 23, 51, 69, 102, 177, 223, 230, 268, 299, 316, 350, 363, 378, 388, 404, 409, 413, 444, 452, 534, 566, 572, 599, 607, 653, 691, 728
Աբրահամ 734, 739, 749, 761, 766, 773, 818, 849, 853, 899, 919, 923, 939, 940
Աբրիկեան 10
Աբրահամյան Ա. 435, 502, 515
Աբրո 205
Արուամէլ 247
Ագաթանգեղոս 364
Ագէտ 560
Ադամ 396, 467, 675, 717, 718
Ադբլպնաթ 620
Ադիխան 737
Ադիպէկ (նաև Ատիպէկ, Ատիբէկ) 262, 663, 774, 897, 958
Ադլքուլ 521
Ազաթլուէ 333
Աղալ 667
Աղամաթ 32, 191, 233, 374, 595, 667
Աղայմաթ 465
Ազատ 45, 123, 132, 179, 309, 314, 460, 606, 686, 713, 927
Աղատխան 686
Ազարի 264
Ազարիոյ Ակնեցի 688
Ազարիայ Ջուղայեցի դրչ. 747, 748
Ազարիայ, դրչ. 548, 585, 857, 908, 909
Աղարիայ (զան.) 57, 115, 193, 223, 320, 445, 508, 566, 567, 586, 587, 717, 746, 888, 889
Աղարե, դրչ. 164
Աղարիէ 10, 265, 310, 697, 770, 824
Ազիզ 47, 92, 196, 231, 504, 562, 583, 595, 598, 744, 795, 957
Ազիզբէկ 222, 403, 768
Ազիզփաշ 231, 593, 597
Ազիչան 845
Ազիրմինդուխ 609
Ազպահար 661
Աթայպէկ (նաև Աթապէկ, Աթամպէկ) 217, 774, 897
Աթանաս, դրչ. 74, 137, 143, 600, 798
Աթանաս (նաև Աթանէս, Աթանիս, Աթանիաս) 137, 450, 487, 748, 952
Աթ 944
Աթլաս խաթուն 55

Ալագոզ (նաև Ալագօզ) 272, 273
Ալահվերտի (նաև Ալլահվերտի) 85, 688, 689, 876
Ալամ 107, 377, 521, 761
Ալամխաթուն 288
Ալամթ 607
Ալէքս 590, 936
Ալէքսան Աթանասի 179
Ալէքսան Անգրանուպոլսցի 131
Ալէքսան Էտրէնեցի 137
Ալէքսան (նաև Ալէքսիան), գրչ. 131, 179, 223, 334, 515, 574, 611, 760, 768, 861, 906, 936
Ալէքսան (զան.) 19, 112, 114, 137, 187, 188, 224, 357, 375, 457, 527, 634, 718, 724, 842, 875, 876, 903, 934, 937, 952
Ալեքսանդր Մակեդոնացի 701
Ալեքսիանոս (նաև Ալիքսանոս), գրչ. 81, 357, 519, 566, 668, 700, 729, 797, 866., 888, 889, 964
Ալեքսիանոս (նաև Ալիքսիանոս, Աղէքսանդրոս) զան. 24, 30, 52, 142, 196, 247, 249, 293, 330, 349, 350, 362, 366, 400, 407, 449, 454, 468, 472, 474, 480, 482, 491, 516, 551, 606, 631, 632, 650, 659, 697, 759, 767, 819—821, 829, 830, 842, 875, 888, 949, 950
Ալթընպիքայ 26, 112, 195
Ալթուն (զան.) 80, 109, 110, 121, 124, 273, 323, 350, 372, 381, 397, 576, 580, 783, 788, 892
Ալթունշահ 800
Ալիխան 85, 276
Ալիշան 533
Ալխան 897
Ալմաստ 739, 764, 940
Ալպոյաճյան Ա. 690
Ալփաղէն 18
Ալփիար 853
Ալֆաթուն 442, 443
Ախիշան (նաև Ախիճան) (զան.) 69, 119, 174, 374, 418, 638, 734, 746, 748, 766, 773, 779
Ախկիւլի 762
Ախպիքայ 761, 874
Ախուն 666
Ակակոս 734
Ակինյան Ն. 96
Ակոբ 164, 370, 381, 548, 592, 724, 725
Ակոբշան 599, 687
Ակոբշանք 231, 598
Ակսենտ (նաև Աքսէնտ) 113, 121
Ահամատ 693
Ահարոն 490
Ահլի 227
Ահլիման 389
Ահլիփաշ 69
Ահմատ փաշա 284, 482, 492, 592, 728
Ահմատ Տարուիշ 535
Ահմետ 930
Աղաբաբ 264, 265, 845, 872
Աղագալուց 744
Աղաղար 573, 664, 686, 824
Աղալար 788
Աղախոնդվէլի 809
Աղաճանպէկ 720
Աղամաթ 667, 680
Աղամալ, գրչ. 315, 333, 335, 373, 374, 384, 405, 406, 708, 808, 809, 868, 869
Աղամալ Ջուղայեցի, գրչ. 720, 721
Աղամիր 431, 484
Աղայն 738
Աղայփաշ 660
Աղապալի 875
Աղապակէ 47
Աղապէկ (նաև Աղայրէկ, Աղաբէկ) 57, 109, 242, 299, 372, 502, 513, 543, 835, 875
Աղաճան (նաև Աղաչան) 1, 63, 136, 658, 675, 677, 690, 699, 720, 923
Աղասի 174, 176
Աղասօլթան 421
Աղավալի 927
Աղափաշ 726
Աղափիր 315, 619
Աղբերշահ 776
Աղէ 191
Աղբէն 638
Աղկուլ 364, 511
Աղճայ 26
Աղշիրէկ 497
Աղսաբեր 744
Աղվոր 853
Աղրիխան 251
Աղութ 273
Աղուպ 228, 456
Աճապխան 10, 61, 184, 792, 807
Աճառյան Հ. 235, 433
Ամամփար 858
Ամամփաշէ 476
Աման 576
Ամաս 691
Ամատունեաց 709, 921
Ամափարէ 585
Ամբակում 469, 471, 480, 928
Ամբար 941
Ամերշան 962

Ամիճանկ 897
Ամիսարգիս Ջուղացի 793
Ամիր 164, 354, 660, 689, 773
Ամիրա 120
Ամիրազիզ 250
Ամիրազայ 485
Ամիրազէն 850
Ամիրաս, գրչ. 359
Ամիրաս Եզընկացի, գրչ. 417, 419, 638, 733, 745, 746
Ամիրասաթ Ջուղայեցի 65, 200, 746, 913
Ամիրբարա 845
Ամիրգուլ 451
Ամիրգօլվաթ 67, 106, 503, 671
Ամիրեղտի 170
Ամիրզատէ 517
Ամիրթօլաթ 548
Ամիրխան, գրչ. 92, 93
Ամիրխան (զան.) 73, 224, 228, 276, 302, 371, 485, 606, 628, 660, 684, 748, 759
Ամիրղուլ 508
Ամիրշահ 381
Ամիրշան 105, 176, 213, 543, 549, 641
Ամիրսէթ 228, 232, 329, 598
Ամիրսուլթան 251
Ամիրվէլուն 443
Ամրախաթուն 228
Այան 326
Այգր 543
Այդուն 724, 940
Այգին (նաև Այտին) 236, 298, 728
Այիզպիբայ 610
Այիպշէն 270
Այիփաշէ 121
Այլա 517
Այլախաթուն 948
Այլամելիք 184
Այմելիք 327, 595
Այպիբայ 610
Այվազ 548, 774, 906, 956—958, 960
Այվաթ (նաև Այատ) 684, 816
Այտաուղմիշ 217
Անաէ 761
Անախաթուն 61, 63, 71, 73, 90, 309, 354, 355, 396, 879
Անայ 265, 658, 699, 778, 823, 927, 956, 959—961
Անայփիէ 91, 373
Անանիայ Մարզուանցի 464
Անանիայ, գրչ. 109
Անանիայ (զան.) 98, 375, 502, 581, 652, 839, 891
Անանիէ 121, 959
Անան 498, 509, 557
Անապիբայ 288, 349, 829, 830
Անդրա 946
Անդրէաս (նաև Անդրիաս), գրչ. 205, 218, 331, 339, 340, 496, 630, 794, 890
Անդրէաս (զան.) 4, 35, 75, 88, 96, 97, 109, 110, 121, 122, 135, 161, 174, 177, 195, 197, 206, 219, 232, 233, 249, 374, 391, 397, 440—442, 445, 477, 497, 531, 539, 593, 606, 613, 617, 632, 654, 666, 675, 682, 737, 755, 792, 807, 809, 820, 831, 949, 963
Անդրէաս Լորեցի, գրչ. 515
Անդրէաս, Կավրոյ եպս. 28
Անեկ 452
Անթառամ 82, 231, 397, 517, 631, 655, 957
Անթառան 413
Անթառնակ 486
Անթփցոյ 16
Անիկ 741
Անիկամ 341
Անձրև 301, 436, 438, 591
Անձրևավարթ 777, 823
Անղալատ 676
Անմիրշում 235
Աննա (նաև Անա) 10, 12, 44, 49, 57, 91, 116, 119, 122, 132, 133, 239, 314, 320, 332, 353, 360, 370, 373, 384, 388, 436, 443, 445, 459, 480, 517, 528, 535, 543, 571, 591, 608, 617, 620, 632, 638, 644, 682, 703, 712, 713, 737, 739, 748, 782, 797, 806, 807, 821, 842, 883, 907, 953
Աննա Սամարքունի 859
Աննար 49
Աննէ 790
Աննման 699
Անտոն Ջուղայեցի, գրչ. 63
Լովցի Սերերբոյենց 208
Լովցի Ղարաղաճցի Վագոնց 31
Լովցի (նաև Անդոն) 37, 38, 43, 63, 221, 443, 444, 537, 560, 589, 606, 637, 654, 761, 824, 852, 956
Լովցի, գրչ. 43, 208, 234, 429, 536, 537, 588, 636
Անրէվ 329
Անուշիկ 576
Անոէ 960
Աշարաթ 83
Աշքխ 418, 746
Աշտ 734
Ապով (նաև Ապաւ) 91, 92, 262, 372—374, 584, 585
Ապտին 412

Ապտլլահատ 521
Ապտլհէ 381
Ապտուլ 239
Առաքեալ 7, 14, 20, 143, 212, 305, 404, 485, 627, 741, 757, 872
Առաքեալ Բաբերթացի 250, 524
Առաքեալ Դավրիժեցի 20, 75, 212, 278, 603, 637, 871
Առաքեալ Կոլպաշցի 841
Առաքեալ Մալկարացի 689, 690
Առաքեալ Մուժամպարցի 119
Առաքեալ Սալա, գրչ. 687
Առաքեալ Շոռոթեցի 492, 523, 541, 702, 772
Առաքեալ, գրչ. 25, 493, 772
Առաքեալ (զան.) 25, 36, 51, 64, 67, 72, 104, 112, 116, 123, 132, 140, 177, 184, 188, 196, 224, 228, 238, 254, 262, 276, 280, 281, 295, 307, 313—315, 347, 360, 384, 405, 420, 426, 444, 476, 480, 485, 508, 527, 535, 542, 553, 555, 556, 593, 602, 603, 606, 613, 626, 628, 629, 633, 665, 675, 683, 690, 699, 706, 711, 712, 741, 744, 750, 770, 773, 787, 805, 824, 841, 856, 871, 877, 878, 881, 923, 930, 932, 949
Առեան 183
Առեսաում 795
Առիան 510
Առիւծ (նաև Առուծ) 374, 520
Առիտ 220
Առլին 389
Ասանեթ 384
Ասասպով 374, 599, 770, 824, 956
Առատխան 953
Ասատուր (զան.) 83, 112, 179, 222, 360, 452, 525, 607, 609, 699, 859, 857
Ասար Սեբաստացի 635
Ասթանդար 607, 609
Ասիլի 174
Ասլամազ 85
Ասլան (զան.) 10, 36, 76, 109, 110, 119, 210, 573, 618, 746, 829, 897, 939, 940
Ասլանբէկ (նաև Դսլանպէկ) 549, 897
Ասլեկ 684
Ասլիզատէ 374
Ասլիխաթուն 406
Ասլիխան (նաև Ասլխան) 312, 497, 843, 959
Ասլիկ 833
Ասլիպէկ 897
Ասլին 256, 452, 719; 837, 849
Ասլում 311, 312
Ասմին 277, 462, 825
Ասպանդու 675
Ասպանիչավար 354, 355
Ասպաբուն 300
Ասպաուր 606
Ասպարիթուղթ 63
Աստուածաբան 98
Աստուածապով 173, 549
Աստուածատուր, գրչ. 54, 64, 89, 125, 139, 165, 166, 203, 231, 233, 251, 297, 332, 379, 408, 441, 563, 569, 574, 594, 607, 615, 639, 677, 747, 789, 792, 879, 895, 896
Աստուածատուր Երուսաղեմայ 100, 101, 233, 330, 364, 365, 376, 418, 467, 470, 511, 515, 531, 563, 573, 580, 638, 644, 670, 691, 728, 733, 746, 758, 785, 840, 842, 854, 893, 894, 931, 963
Աստուածատուր Հալապեցի, գրչ. 58
Աստուածատուր Համգեցի 1, 2
Աստուածատուր Ղրիմեցի 931
Աստուածատուր Սեբաստացի, գրչ. 590, 640
Աստուածատուր Սրսցի 26
Աստուածատուր (նաև Ասվատուր, Աստուայծատուր) (զան.) 10, 15, 16, 23, 27, 47—49, 51, 59, 65, 71, 72, 82, 83, 90, 99, 101, 114, 120, 142, 172, 184, 185, 188, 200, 214, 227, 228, 231, 232, 235, 239, 249, 256, 268, 276, 278, 301, 305, 351, 366, 368, 371, 378, 380, 381, 391, 404, 405, 410, 414, 415, 423, 429, 450, 452, 455, 457, 458, 460, 464, 469, 476, 479, 486, 491, 502, 503, 505, 512, 513, 518, 521, 523—528, 543, 559, 560, 564, 577, 579, 582, 593, 594, 608, 610, 618, 625, 627, 631, 636, 638, 649, 656, 663, 668, 682, 685—687, 706, 709, 713, 723, 735, 738, 739, 749, 753, 772, 782, 785, 791, 797, 806, 815, 825—827, 834, 847—849, 871, 874, 875, 878, 894, 897, 901—903, 930, 949, 953, 955, 960, 963
Աստուր 196, 274
Ասփաչէն 927
Ասքանդար տե՛ս Իսկանդար
Աւագ, գրչ. 216, 504, 505
Աւագ, գրչ. (նաև Աւաք) (զան.) 83, 116, 174, 186, 270, 302, 305, 436, 438, 440, 475, 521, 533, 555, 556, 591, 592, 626, 638, 658, 718, 719, 724, 777, 823, 833, 875, 940, 958
Աւագան 8
Աւալչան 832, 833
Աւալչան Գաղեցի 832
Ավան 868
Ավանէս տե՛ս Յովանէս

Ավանճան 73
Աւգսենտ (նաև Աւգսենդ) 26, 370
Աւդիշ 939, 940
Աւգլէ 295
Աւգլէ Ղարատանէնց 295
Աւդման 574
Աւետ Որոտնեցի, գրչ. 379, 395
Աւետ Որոտնեցի, գրչ. 178, 420, 552, 636
Աւետ Որոտնեցի (նաև Աւեդ, Աւիտ) (զան.) 144, 277, 313, 314, 379, 380, 421, 451, 497, 557, 606, 736, 739, 766, 818, 831, 843, 845, 846, 850, 932, 939
Աւետափաշէ 373
Աւետիս Բաղիշեցի 616
Աւետիս Եւդոկիացի 625
Աւետիս Էմբնկանց 941
Աւետիս Կարնոյ 558
Աւետիս Մաժլումի Թոռ 805
Աւետիս Մշեցի 457
Աւետիս Կարարուց 941
Ավետիս Սպահանցի 448
Ավետիս Վանեցի 523
Ավետիս, գրչ. 74, 182, 219, 395, 691, 707, 740, 774, 883, 884, 903, 904
Ավետիս (նաև Ավիտիս) (զան.) 22, 32, 33, 40, 64, 65, 132, 166, 176, 177, 179, 181—183, 187, 196, 216, 220, 221, 228, 230, 231, 237, 238, 253, 259, 273, 301, 307, 310, 314, 349, 374, 380, 396, 447, 451, 463, 477, 496, 497, 499, 501, 510, 513, 557, 593, 597, 605, 606, 636, 657, 658, 662, 666, 677, 680, 691, 727, 734, 741, 746, 766, 778, 795, 805, 819, 825, 868, 873, 875, 876, 903, 941, 946, 948, 959
Աւետիք Էրզնկացի 98
Աւետիք Ճահկեցի 934
Աւետիք Շատլղեց 796
Աւետիք, գրչ. 278, 288, 858
Աւետիք (նաև Ավետք, Աւետիկ) (զան.) 26, 27, 31, 46, 53, 75, 88, 111, 207, 231, 250, 289, 364, 376, 423, 442, 459, 476, 511, 521, 543, 564, 580, 597, 675, 685, 687, 699, 737, 748, 808, 809, 813, 819, 821, 856, 877, 902, 913
Աւէլճան 316
Աւթանդիլ 354
Աւլքայբէկ 903
Աւղալնփաշ 36
Աւղլանդարաք 689
Աւղլանփաշէ 468
Աւղուլ Պալի 743
Աւնոփրիոս եպս. 457, 643
Աւտալ բէկ 393, 803
Աւրան 398
Աւրիխան 956
Աւօղլի 449, 474
Ատին 957
Ատոմ 451, 638, 766, 773, 940, 941, 961, 962
Արամիշ 684
Արայիշ 684
Արապշին 255
Արապոյն 606
Արբեն 605
Արզան 253, 555
Արզիխան 631
Արզիման 116
Արզուխան 305, 316, 658, 774, 949
Արզուման 750
Արզումբէկ (նաև Արզամբեկ) 499—502
Արզուն 135, 306, 452
Արզուքան 179, 222
Արթուխշին 683, 684
Արիշան 941
Արիստակես Ակռնցի, գրչ. 477
Արիստակես Խարբերդցի 12, 434, 596
Արիստակես Խլաթեցի 767, 768
Արիստակես Շամբեցի 921
Արիստակես Տարօնացի 25
Արիստակես, գրչ. 10, 242, 249, 290, 342, 532, 533, 625, 626, 913, 914
Արիստակես (զան.) 10, 52, 175, 201, 213, 234, 266, 365, 369, 400, 407, 434, 463, 464, 469, 536, 550, 551, 561, 562, 590, 605, 608, 612, 615, 655, 658, 659, 725, 741, 766, 767, 768, 791, 798, 799, 870, 871, 887, 958
Արիստոդեմ 540
Արխոնսապիքա 129
Արձանայ 478
Արղութէն 952
Արշակայ 918
Արշակունի 95
Արշաւիր 294, 344
Արսլան 135
Արութ 658
Արութիւն 607
Սրուս 961
Արքո 370
Արև 606, 766, 848

Բաբ 546, 737, 913, 957
Բաբաջան 792
Բաբաք 18, 88
Բաբէն 88, 372, 374, 913
Բաբուլ 329

Բաբուռ 897
Բաբօ 941
Բագարատ, դրչ. 309, 432, 433
Բաղիշդէն 535
Բաղէ 464
Բալամ 683
Բալայխաթուն 318
Բակ 184
Բակիխան 945
Բակիսուլթան 486
Բահադուր 13
Բահազիզ 270
Բահալու 426, 659
Բաղդասար (նաև Բազտասար), դրչ. 37, 38, 945, 955
Բաղդասար Հղուեցի 457
Բաղդասար (զան.) 51, 63, 92, 132, 179, 199, 200, 201, 277, 314, 350—352, 363, 372, 384, 386, 389, 463, 486, 491, 653, 708, 713, 733, 738, 756, 792, 805, 834, 838, 845, 859, 927, 946, 956, 960
Բազի 71, 627
Բազիր 295
Բոզո Վաղատնեցի 71
Բազչի 946
Բաղատ 824
Բաղրամ 897
Բաղում 191, 737, 738, 791
Բայինդուր 13, 658
Բայիսոզլուն 425
Բայկրամ (Բայրամ) 871, 952
Բայխան 372
Բանաշ 549
Բանդուր 372
Բաշարաթ 38, 40—42, 454, 455
Բաշի 659
Բասօս 329
Բատիկ 528, 625, 806
Բար 314, 932
Բարաղամ, դրչ. 54, 268, 427
Բարաղամ (զան.) 144, 268, 463, 543, 752
Բարաշ 17
Բարաքիազ 543, 658
Բարդուղիմիոս (Բարդազմոս) 120, 687, 859, 939
Բարեաք 539
Բարեդ (Բարեք) 71, 448
Բարխուդարյանց Ս. 476
Բարղամ Սեբաստացի, դրչ. 402
Բարղամ, դրչ. 36, 135, 452, 625, 912
Բարղամ (Նաև Բարեղամ) 109, 220, 803
Բարսեղ, դրչ. 81, 116, 616, 617, 650, 656, 698, 732, 743, 744, 855, 862
Բարսեղ Աթախցի 327
Բարսեղ Բրքայմարդեցի 309, 310
Բարսեղ Կեսարացի 758
Բարսեղ (զան.) 8, 28, 30, 55, 65, 97, 113, 142, 168, 170, 173, 177, 189, 221, 223, 229, 230, 309, 315, 353, 376, 430, 466, 487, 513, 523, 535, 555, 564, 594, 607, 654, 658, 668, 677, 770, 771, 812, 814, 868, 931, 939, 944, 949, 950, 961, 962
Բարունակ 184, 452, 821
Բերի 17
Բէժան 354, 721
Բէկ (զան.) 112, 188, 253, 254, 508, 631, 649, 871
Բէկազ 176
Բէկզատ 316, 593
Բէկիխաթուն 188, 233, 593, 594, 766
Բէկիխան 372
Բէկիճան 103, 618
Բէկիսուլթան 923
Բէկխի 399
Բէկումխան 759
Բէհրուտ 425
Բէրօ 607, 720
Բթէն 959
Բժշկյանց 27
Բինիաթ 164
Բիրում 42
Բլբուլ 826
Բողդան (Պօկտան) Խմելնիցկի 290, 533
Բուլոթ 363
Բուլչար 43
Բուլութ 189
Բուհար 350
Բունաթ (նաև Բունեաթ, Բունիաթ) 164, 631, 660
Բուրաստան 835
Բուրվար 858
Բքենց 81
Բոզչիկ 744

Գաբրիել Երևանեցի 523
Գաբրիել (զան.) 51, 129, 142, 163, 188, 294, 378, 398, 446, 490, 570, 724, 725, 758, 771, 772, 805, 849, 941, 942
Գալուստ (դրչ.) 330
Գալուստ Նորդցի 855
Գալուստ (զան.) 73, 144, 194, 195, 270, 276, 280, 315, 330, 351, 383, 394, 410, 413, 636, 656, 667, 684, 687, 768, 773, 821. 828, 872, 904

Դալուց 744
Գահվարսօլթան (նաև Գաւարսուլթան, Գաւհարսօլթան) 36, 85, 497
Դամազիէլս 343
Գայանէ, գրչ. 14
Գայանէ (զան.) (նաև Գայեանէ, Գայիանէ, Գայիան) 119, 132, 231, 232, 351—353, 413, 476, 513, 557, 597, 598, 623, 627, 636, 739, 792, 799, 960
Գանջի 868
Գասպար Ակրնցի 99, 100, 688
Գասպար Բէգիշանենց, գրչ. 909
Գասպար Երուսաղեմայ 292
Գասպար Ղարանեցի 57
Գասպար Մերսընցոյ 642
Գասպար Շեկոնց 1
Գասպար, գրչ. 383, 392, 410, 843—845
Գասպար (զան.) (նաև Գաղբար, Գազպար) 30, 53, 99—102, 113, 136, 164, 173, 194, 195, 232, 236, 237, 239, 252, 262, 281, 307, 314, 315, 385, 386, 397, 413, 452, 457, 477, 491, 526, 528, 539, 577, 595, 599—602, 607, 664, 675, 677, 712, 718, 720, 737, 807, 859, 910, 953, 955, 956
Գաւահար (նաև Գաւհար) 273, 464
Գաւար 684, 689
Գաւզալ (զան.) 69, 196, 242, 273, 300, 302, 606, 737, 818
Գաւզալխան 388
Գաւլաղ 939
Գաւհարմելիք 611
Գաւչակ 794
Գարանէ (նաև Գարեանէ, Գարիանէ, Գարիան) 256, 660, 766, 773, 774, 795
Գդուրիկ (նաև Գտուրիկ) 121, 298, 958, 959
Գեղեցիկ 122, 907
Գեորգ Սկևռացի 245
Գեորգ (արք.) 197
Գերաք 92
Գերում 474
Գէորգ (նաև Գէօրգ, Գորգ, Գօրգ) 24, 67, 112, 231, 347, 384, 466, 521, 597, 598, 644, 665, 720, 959, 960
Գըզալ 196
Գըրում (նաև Գիրում) 18, 449, 472
Գիկա Գեորգե (Մոլդովայի իշխան) 858
Գինարբ 758
Գինէխաթուն 942
Գինէվան 194
Գինոո 142
Գիշաղ 318
Գիշուն 944
Գիրակոս տե՛ս Կիրակոս
Գիրեք 302
Գոզալ (նաև Գօզալ) (զան.) 15, 38, 196, 454, 455, 488, 491, 526, 699, 737, 740, 757, 811, 815, 835, 857, 940
Գոլբէկ 270
Գոլի 424
Գոլիար 174
Գոլիջան 409
Գոհար Ղուտնավիլցի 178
Գոհար (նաև Գօհար, Գօար, Գուար, Գոյար) 31, 47, 101, 116, 161, 181, 184, 196, 247, 249, 267, 271, 364, 365, 416, 463, 479, 480, 486—488, 495, 510, 511, 531, 533, 560, 606, 614, 618, 666, 690, 734, 764, 769, 790, 829, 830, 838, 859
Գոհարպիքան 168, 874
Գոհարսալթան (նաև Գօհարսալթան) 36
Գոհարվարդ 112
Գոչկակ 269
Գորգիկ 576
Գորկէ 963
Գրիգոր Ալիփինարցի, գրչ. 699
Գրիգոր Աղբզցի 105
Գրիգոր Ամթեցի, գրչ. 244
Գրիգոր Անկուրացի 128, 129
Գրիգոր Ապտալ 228
Գրիգոր Բաբերթացի 68
Գրիգոր Գանձակեցի 41
Գրիգոր Դարանաղեցի 101
Գրիգոր Երևանցի 944
Գրիգոր Զեյթունցի 82, 685, 866
Գրիգոր Լուսաւորիչ 20, 60, 179, 231, 364, 636
Գրիգոր Խոշապեցի 679
Գրիգոր Մերենց 1, 110, 350, 531
Գրիգոր Կամենիցի 129
Գրիգոր Կաֆայեցի 165, 669
Գրիգոր Կեսարացի 63, 603, 838, 898
Գրիգոր Համազասպեանց, գրչ. 311, 312, 347, 756, 757
Գրիգոր Հռոմկլայցի 229
Գրիգոր Ծվանորեցի, գրչ. 726
Գրիգոր Մահրումենց 592, 594
Գրիգոր Մեղայպարտ, գրչ. 113
Գրիգոր Նիւսացւոյ 741
Գրիգոր Պալախարցի 361
Գրիգոր Պարթև 487
Գրիգոր Ջուղայեցի 315
Գրիգոր Վանեցի 523
Գրիգոր Տաթևացի 20, 208, 457, 569, 869

Գրիգոր Ուկուձուայ 605, 606
Գրիգոր, գրչ. 3, 16, 17, 83, 87, 89, 97, 102, 206, 310, 318, 322, 399, 419, 429, 445, 447, 450, 477, 525, 655, 679, 723, 745, 748, 756, 816, 831, 846, 851, 890, 891, 933, 934, 939
Գրիգոր (զան.) 2, 10, 11, 14, 19, 23, 31, 38, 39, 42, 47, 50, 53, 56, 62, 72, 75, 77, 79, 84, 91, 92, 97, 101, 103, 105, 110, 112, 115, 118—120, 123, 129, 135, 137, 140, 143, 160, 161, 165—167, 172—174, 177, 178, 182—184, 188, 189, 196, 199—201, 207, 219, 223, 226—228, 230, 232, 233, 238, 248—250, 256, 258, 259, 268, 286, 287, 298, 299, 301, 305, 307, 311, 312, 314, 315, 325, 326, 333, 347, 348, 351, 352, 354, 356, 360, 369, 370, 373, 376, 384, 388, 389, 397, 398, 406, 411, 413, 420, 421, 424, 427—429, 440, 444—447, 456, 461—463, 466, 470, 472, 480, 489, 493, 497, 499—502, 506, 507, 512, 520, 527, 528, 531, 533, 535, 541, 549, 552, 553, 555, 558, 560, 561, 564, 566, 569, 573, 580, 583, 585, 587, 592—595, 598, 599, 602, 606, 607, 610, 611, 613, 619, 625, 626, 629, 631, 632, 636, 644, 651, 653, 662—664, 668, 671, 678, 680, 681, 683, 684, 686, 696, 698, 705, 712—715, 725, 726, 731
Գրիգոր 734, 737, 739—741, 748, 755, 756, 757, 761, 762, 770—772, 774, 775, 778, 780, 789, 794, 805, 806, 810, 816, 817, 824, 826, 829, 830, 832, 833, 836, 837, 839, 847, 849, 852, 853, 857, 858, 864, 867, 872, 874, 879—881, 885, 888, 899, 906, 909, 915, 919, 923, 927, 931, 940, 941, 955, 956
Գրիգորիս 103, 331, 389, 463, 662, 731, 816
Գրտոն 327
Գուգուր 518
Գուզալ 424
Գուլազ 345, 451
Գուլաղիզ 69, 179, 766, 948
Գուլաղ 300, 301, 389, 393, 454, 463, 488, 507, 602, 606, 740, 940
Գուլաղէ 64, 219, 738, 768
Գուլամիր 203, 205
Գուլամպար 941
Գուլամիաշէ 307
Գուլան 193, 196
Գուլասար 228, 608, 759
Գուլաւզանդ 425
Գուլաւգար 73, 771
Գուլբանավշ 632
Գուլբաշնաղէ 472
Գուլրէգ (նաև Գուլրէկ) 270, 508
Գուլգազ 388
Գուլդուլ 790
Գուլգաստ 811
Գուլդաստէ (նաև Գուլտաստէ) 265, 335, 384
Գուլզատ 161, 184, 309, 329
Գուլզատէ 310, 316, 598, 666, 897, 956
Գուլէ 77
Գուլի 103
Գուլիար 497
Գուլիխան 262
Գուլիկան 582
Գուլինար 360, 466
Գուլիչան 35, 940
Գուլիստան (նաև Գուլըստան) 17, 491, 571, 596, 654, 673, 724, 859
Գուլխաթուն 213, 507, 708, 711, 724, 868
Գուլխանգ (Գուլխանտ) 631, 632, 813
Գուլխանգէ 352
Գուլհաս 557
Գուլճհան 478, 875
Գուլնարաթ 923
Գուլնիդար 608
Գուլչիչակ 824, 909
Գուլպակէ 184
Գուլպանաւշ 474
Գուլպանուշ 449, 450
Գուլշահան 175
Գուլսէվան 262
Գուլսուլթան 427
Գուլվարդ 332, 333, 394, 592, 800, 879
Գուլում 10, 24, 41, 174, 196, 222, 256, 307, 348, 443, 497, 546, 587, 748, 826, 872
Գուլուն 341
Գուլփարուն 636
Գուլփէրիխան 845
Գուլքան (Գուլքեան) 189, 607
Գուլօն 837
Գուհարազիզ 374
Գուհարշատ 188
Գունդի 720
Գուշակյան Թ. 840
Գուշփաշ 24
Գուրէլօյ Ռէշնովէցքի 752
Գուրգո 10
Գօզալխաթուն 425
Գօզալաղէ 64, 502
Գօարխանսոլթան 689

Դագոշէն 374
Դադէոս տե՛ս Թաթեոս

Դալալ 606
Դալուաթիար 299
Դաղիթառ 121
Դանայչաֆար 687
Դանիէլ, գրչ. 172
Դանիէլ Եդեսացի 431
Դանիէլ (զան.) 193, 222, 229, 230, 238, 328, 381, 401, 413, 467, 478, 513, 535, 567, 581, 764, 837, 853
Դաստագուլ 172, 451, 664
Դաւիթ, գրչ. 55, 80, 292, 294, 308, 325, 334, 343, 344, 414, 433, 451, 467, 477, 483, 660, 672, 825, 903
Դաւիթ Ալաւկայ որդի 487
Դաւիթ Անհաղթ 400, 540, 887
Դաւիթ Արդար 652
Դաւիթ Բաղիշեցի 561, 937
Դաւիթ Երերեսացի 87
Դաւիթ Համթեցի 764
Դաւիթ Մոկացի 457
Դաւիթ արք. Պարսկացանի 24, 42, 584, 586
Դաւիթ Նոր Ջուղայեցի 169, 391, 518, 609, 656, 698, 773, 744, 820, 845, 902, 922, 958, 960
Դաւիթ (զան.) 45, 55, 73, 76, 80, 83, 86, 87, 92, 99, 101, 119, 129, 131, 135, 162, 166, 168, 170, 179, 210, 229, 230, 237, 265, 268, 276, 293, 295, 309, 311, 314, 325, 347, 358, 366, 369, 372, 379, 391, 406, 413, 421, 426, 434, 464, 468, 500, 513, 523, 526, 531, 537, 543, 546, 547, 577, 593, 595—597, 599, 602, 643, 658, 663, 664, 667, 677, 678, 680, 693—695, 703, 712, 717, 724—726, 734, 737, 740, 742, 746, 748, 750, 757, 768, 807, 809, 812, 826, 835, 852, 857, 858, 876, 926, 927, 937, 947, 952, 956
Դալաթ 103, 174, 225, 255, 668, 881
Դալաթխանում 664
Դալին 256
Դալաթշին 488
Դալուբ 18, 61, 62, 164, 181, 189, 256, 737, 776, 790
Դարման 15, 44, 388, 675, 677
Դէոսկորոս 216
Դիադ 804
Դիզտար 836
Դիլան 397, 410, 948
Դիլանչ 316, 399, 497, 543
Դիլաք (զան.) 175, 305, 329, 332, 333, 394, 576, 676, 734, 913
Դիլգար 107
Դիլուն 734
Դինար 103
Դիշխուն (Դշխուն) 200, 384, 698, 744, 748, 757, 761, 811
Դիոնէսիոս Արիսպագացւոյ 296, 341
Դիտամ 738
Դշխոյէ 199, 267, 320, 364, 365, 424, 364, 365, 466, 495, 511, 614, 838, 857, 961
Դշխուհի 468, 530, 756
Դշցիլի 741
Դոլաթ 68
Դոլաթիար 644
Դոլիկ 687
Դովլաթ 194, 517, 792
Դրուանդ 824
Դունեաշավար (Դունիշաֆար) 476, 908, 909
Դունիկ 687
Դուրգան 76
Դուրմիշ 63
Դոիթ 140
Դոլվաթ 83, 184, 187, 327, 549, 697, 766, 773, 957
Դոլվաթիեար 256
Դոլվաթխաթուն 903
Դոլվաթխան 699
Դոլվաթխանում 61, 62, 441
Դոլոէնց 70

Եազգուլի (Եազկուլ) 56, 636, 819
Եազուլ 718
Եալչիք 934
Եախութպիքայ (Եազութպեքայ) 248, 288, 762
Եազութ (Եահուտ) 12, 168, 464, 480, 751, 874
Եազութխաթուն 243
Եազուպ (զան.) 261, 404, 418, 464, 638, 653, 734, 746
Եայրիտա 704
Եասազուլի 699
Եասմին 911
Եալչի 541, 714
Եաւրի 811
Եաւրիխան 649, 956
Եարվէլի 571, 596
Եգար (Եգաար) 371, 452
Եդդար տե՛ս Էդդար
Եզդան (Եզտան) 242, 329
Եզեկիէլ, գրչ. 733
Եզեկիէլ 826
Եզնիկ Կողբացի 487
Եզտիխան 10, 384, 391, 392, 654, 655, 712, 713, 748
Եթար (զան.) 175, 184, 204, 213, 216, 242, 273, 302, 307, 328, 352, 396, 451, 576,

595, 626, 628, 684, 773, 776, 786, 825, 875, 891, 895, 937
Եխտիար (Եղբիար) 694, 696
Եղեգեց 605
Եղի 177, 555
Եղիա Կարկարցի 478
Եղիա Համբեցի 209, 214
Եղիա Հռոմկլայեցի 97
Եղիա, գրչ. 608, 896
Եղիա (զան.) 258, 291, 343, 361, 446, 497, 520, 527, 528, 548, 578, 592, 605, 606, 620, 623—625, 663, 671, 677, 694, 731, 739, 751, 800, 802, 806, 837, 840, 851, 852, 859, 899, 955
Եղիազար Հռոմկլայեցի 365, 784, 893
Եղիազար, գրչ. 582
Եղիազար (զան.) 201, 212, 240, 269, 426, 470, 471, 734, 736, 752, 753—757, 785, 842, 894, 909, 913, 931
Եղիկ 871
Եղինար տե՛ս Հեղինար
Եղիշ 364, 684, 774, 850, 875
Եղիս 49, 196, 354, 497, 595, 684, 739, 826, 853
Եղիսարեթ, գրչ. 623, 847
Եղիսարեթ (Եղիսարերդ, Եղիսարետ) 9, 43, 44, 69, 71, 102, 112, 132, 170, 174, 179, 213, 222, 232, 233, 256, 276, 333, 372, 373, 404, 436, 438, 461, 468, 472, 486, 499—502, 508, 526, 528, 535, 546, 555, 571, 585, 591, 593, 596, 598, 608, 624, 625, 632, 641, 663, 667, 673, 696, 699, 705, 721, 744, 748, 759, 777, 793, 800, 806, 808, 809, 811, 812, 821, 823, 843, 868, 875, 945, 949, 955, 961
Եղիսարեր (նաև Եղսարեր) 460, 878
Եղիսաբերդ (նաև Եղսաբերթ) 306, 424
Եղիսէր 120
Եղմուր 256
Եղնազար Ամիրսաթէնց 392
Եղնազար 88, 384, 391
Եղնէր 80, 813, 932
Եղնիկ 31
Եղսալամ 61, 426
Եղսիկ 463
Եղոտիխան 586, 587
Եմին տե՛ս Էմին
Ենգիրէդ 825
Ենեիրամ, գրչ. 475
Ենկիխան 649
Ենկիպար 256
Ենովս 312
Ենովր 592, 717, 813
Եպրաքսէ 961
Եսայի Շոռոթեցի 492
Եսայի Մեղրացի 921
Եսայի, գրչ. 72, 181, 182
Եսայի (զան.) 65, 73, 77, 104, 121, 252, 265, 275, 303, 318, 319, 348, 369, 396, 400, 404, 406, 409, 493, 547, 550, 553, 555, 728, 756, 767, 832, 870, 864, 933
Եսթեր 571, 748
Եսին 633
Եւա 49, 239, 269, 361, 388, 396, 495, 782, 920
Եւագր 59, 216, 758
Եւահուոյն 807
Եւղուր 15, 768
Եւղուրլուն 486
Եւսա 120
Եվրէն 715
Եվրիանոս 560
Եւրվէլուն 667
Ետիկար 181
Երան 378
Երանոս 364, 511
Երրանոս 171
Երեմիա, գրչ. 956
Երեմիա (զան.) 214, 261, 262, 460, 471, 472, 708, 832, 895, 928—930, 963
Երեսխ 776
Երիճան (նաև Երիչան) 316, 548
Երղուլի 568
Երվալի 191, 809
Երուղսին 705
Եուսուֆ 788
Եփեսոս 95
Եփէնփաշա 405
Եփրեմ 98, 182, 431, 622
Եփրեմ Խորին Ասորոյ 937
Եփրիանոս 223, 247, 350
Եփրիթա 200, 332, 333, 713
Եփրիսիմէ 19, 507
Եփրոսինէ 188
Եօթանէս 539

Զալի 354
Զաղուտր 235
Զաման 179, 824, 947
Զամանգուխտ 953
Զամոսքի 751
Զանազան 561, 638, 666, 807, 949
Զանեզան 91, 373, 585
Զանին 771
Զառիան 666
Զառիկ 748
Զասլիզատ 613
Զատա 281, 295

Զաամխութլու 121
Զատէ 316
Զատիկ 196, 491, 644
Զարգար 51, 83, 113, 239, 300, 460, 708
Զարգրիկ 184, 360
Զարիսխան 73, 262
Զարիսի 771
Զաբար (Զայար) (զան.) 35, 36, 233, 340, 461, 506, 509, 606, 812, 846
Զաքար, գրչ. 176
Զաքարեա 915—917, 935, 949
Զաքարեա, որդի Աքուլեցի Աղամիրի 484
Զաքարէ, գրչ. 914—916
Զաքարե (զան.) 61, 232, 442, 497, 507, 595, 598, 734, 056
Զաքարի 546, 547, 638
Զաքարիա, գրչ. 90, 530, 633, 730, 751, 914
Զաքարիա (զան.) 2, 20, 26, 27, 90, 92, 110, 168, 201, 209, 217, 219, 243, 244, 253, 287, 320, 339, 341, 348, 351, 354, 357, 373, 374, 428, 444, 504, 528, 530, 560, 611, 613, 625, 638, 668, 695, 709, 711, 751, 806, 848, 871, 890, 917—921, 923—927, 945
Զաքարիա Թարվէզցի 947
Զաքարիա Դալիֆայ 625, 626
Զաքարիա Շարապխանցի 638
Զաքարիա Սիւնեցի գրչ. 163, 485
Զաքարիա Վաղարշապատցի 918
Զաքարիա Քիլիսցի 730
Զերեթ 57
Զերեգեա (Զեփեթե) 61, 66
Զեփրիթ 394
Զէյնի 902
Զիլիխան 71
Զիլփի 173, 256, 309, 310, 555, 881
Զիլփիխան (Զիւֆլիխան) 262, 295
Զիյմաթ 739
Զինարբէկ 606
Զիրաք 576
Զմրուխտ 10, 320, 700, 727, 728, 739, 749, 837, 964
Զոհալ 168, 480, 853
Զոսիմոս 752
Զոսիմա, գրչ. 319, 320
Զուլալ 55, 249, 358, 364, 511, 629, 957
Զուլիկ 959
Զուհալ 122
Զումսուր 690
Զուրապ 143, 720, 721
Զօհրապ (Զորհապ) 174, 187, 189, 234, 421
Զօհրապ Երևանցի 184, 186, 187
Զոյզօ 83
Զօրարարէլ 543
Զօրամ 793
Զօրիկ 553
Էրիսէն 960
Էրրիմ 451
Էզգար 18, 213, 262, 868
Էզգան 837
Էզիզ 272
Էթար տե՛ս Եթար
Էլբեկ 948
Էլէքսան տե՛ս Ալեքսան
Էլիազ 436, 437, 518, 591, 777, 823, 905, 922
Էլչիրէկ 903
Էլպակ 184
Էլում 424
Էլում Դալուղարտաշէցի 719
Էմէնփաշ 335
Էմէնփար 182
Էմին 142, 174, 255, 593, 598, 636, 792
Էմին Թոխաթցի 370
Էմինսօլթան 307
Էմպիկ 849
Էնիայթ 51, 460, 495
Էնպէկ 858
Էպրահամ Ջուղայեցի տե՛ս Աբրահամ Ջուղայեցի
ԷսաՀան 135
Էսիա 849
Էսլէմեզ 26
Էստատէ 720
Էվազ (զան.) 298, 389, 424, 508, 568, 602, 660, 687, 744, 903, 956, 957
Էլալբէկ 502
Էվամելիք 792
Էվանէս 112, 956
Էվ (ատին) 718
Էվէտփաշեն 43
Էվօղլի 472
Էտգարշահ 341
Էտիլշին 944
Էտիկար 790
Էտկեար 103
Էրէնայ 217
Էրաէլի Ռագովգի 243

Ըզէստատէ 720
Ըզլելի 857
Ըկերնիմ 171
Ըղթիար 142
Ըմբրում 92
Ընտրիանոս 394
Ընտրիաս 658
Ըռամանոս, գրչ. 13

62—277

Ըռհան 196, 641
Ըոըստակէս տե՛ս Արիստակես
Ըոուփ 427
Ըռուստամ տե՛ս Ռուսամ
Ըսլամքէրէյ 827, 829
Ըսպանտիար 595
Ըսպիլ 92
Ըստեփաս (նաև Ըստեփանոս) տե՛ս Ստեփան, Ստեփտնոս
Ըսբանդար տե՛ս Իսքանդար

Թարառուկ (նաև Թարառուք) 451, 770
Թագո 878
Թագուհի 66, 88, 313, 314, 376, 378, 368, 476, 587, 686, 687, 715, 793, 807, 821, 932, 961
Թադեոս, գրչ. 276, 307, 507, 615, 660
Թադեոս (նաև Թաթէոս) 187, 188, 231, 280, 323, 369, 372, 431, 468, 507, 546, 553, 591, 597, 598, 601, 602, 614, 628, 658, 707, 721, 755, 850, 881
Թազագուլի (նաև Թաղակուլի) 178, 248, 658, 678, 940
Թաթար 498, 557
Թաթո 447
Թաթոս (նաև Թագոս, Թոտոս) 238, 389, 440, 507, 599, 654, 708, 733
Թաթոս, գրչ. 21, 22, 199
Թաթուլ 32, 129, 299
Թաժդնին 259
Թալէլում 91, 373
Թալիթէ 961
Թահմազ 446
Թաղդամիշ (նաև Թողդամիշ) 540, 541
Թաղէմիշ 35
Թաղվէրտէ 347
Թաճիկ 345
Թաճում 463
Թամամ 249, 335, 352, 366, 555, 776, 819
Թամար 28, 410, 821, 960
Թամրազ 27, 876
Թամու 231
Թամուր Ակնցի, գրչ. 536, 587, 588, 928
Թամուր, գրչ. 654, 661, 927
Թամուր (զան.) 73, 248, 507, 655, 664
Թամուրխան 19
Թանդաղիղ (Թանկագիղ) 270, 609, 636, 740
Թանդա 196
Թանգաւ 196
Թանայխաթուն 807
Թանթաք 57
Թանիկ 859
Թանկ 905
Թանկեկ 666, 884
Թանկիկ 510, 513, 706, 793, 961
Թանկխաթուն 9, 810, 906, 923
Թանկմէր 119, 133, 298
Թանկումն 707
Թանկօղ 256
Թանզրիվէրմիշ 631
Թանսուխ 172, 281
Թանտար 85, 217
Թանում 568, 960
Թաշում 486
Թառան 256, 513
Թառխաթուն 939
Թառղումաշ 18, 19, 187, 233, 585
Թառուկ 418, 746
Թաւփաշ 607
Թասալէ, գրչ. 11
Թասալի 91, 314, 373, 585, 628, 658, 807, 951
Թաւաք 184
Թաւաքալի 184
Թաւիթ տե՛ս Դավիթ
Թաւղա 290
Թաւրէղ 196, 409, 463, 734, 939, 940
Թարիզուլ 441, 442, 593, 792
Թարիվերմիշ 316
Թարխունփաշ 441, 442, 792
Թարղումաշ 593
Թարշիման (նաև Թարճիման) 421, 456
Թարվեղ (նաև Թարվէղ, Թարվիզ) 88, 300, 913, 945, 946
Թելէփաշա 249
Թեթրօն 425, 720, 721
Թեկղի 73, 961
Թեզան 66, 427
Թեմիր 829, 830
Թեւում 191
Թէղախան 262
Թէզի 868
Թէլիխան 771
Թէթրուէն 960
Թէոդորոս 530, 685, 734
Թիթան 425
Թիթիէն 960
Թիթրիխան 502
Թիթօ 720
Թիլի 256
Թիլիկ 744
Թիլխաթուն 238
Թիկղի 182
Թինաթ 28, 217, 607
Թիրվանդ 333, 461, 744, 807, 845, 869, 881, 945, 946

Թորէկ 230
Թովմա 101
Թովմա Կեմպացի 274
Թովմաս 99
Թոտոր (նաև Թօտոր, Թօթոր) 248, 288, 531
Թորամիշ 684
Թորիկ 464
Թորինճ 379
Թորոս, գրչ. 138, 693, 694, 797, 848
Թորոս Կեսարացի 224, 523
Թորոս Հուհանի թոռ 805
Թորոս Համբեցի, գրչ. 55, 641, 642
Թորոս Ղօնչիկիզեան 628
Թորոս Սերաստացի 15, 16, 165
Թորոս Սքսայ 735
Թորոս (գան.) 12, 15, 16, 55, 72, 103, 122, 161, 178, 184, 231, 233, 307, 327, 341, 348, 381, 396, 432, 442, 457, 462, 479, 480, 517, 518, 524, 534, 597—599, 636, 637, 641, 642, 651, 705, 711, 712, 764, 783, 790, 798, 829, 842, 893, 907, 930
Թորվանգ 734
Թորուանտ 451
Թրինչ 585
Թութակ 832, 944
Թուլգարանցի 498
Թուխ 339
Թուխիկ 689
Թուխլի 682
Թուխման, գրչ. 503, 882, 948
Թուխտար 518, 653
Թուղթարփաշէ 956
Թումա 525, 666, 741, 766, 884, 918
Թումաճան (նաև Թումայչան) 405, 576, 660, 773
Թումայ Արպատեցի 823, 834, 944
Թումայ Բաղիշեցի, գրչ. 783, 785, 892, 895
Թումայ Ըստամպոլցի 840
Թումայ Մալաղիկ 75
Թումայ, գրչ. 75, 328, 447, 509, 510, 579, 580, 665, 937
Թումայ (գան.) 8, 69, 76, 105, 107, 115, 179, 220, 222, 230, 256, 269, 294, 299, 301, 382, 396, 401, 487, 507, 616, 665—667, 683, 684, 732, 856, 919, 923, 948
Թումայնաղ 256, 399
Թուման Կաւկտաղեցի 797
Թուման Տարախմելիքեցի 607
Թուման, գրչ. 813, 814
Թուման (զան.) 484, 491, 607, 677, 716, 794, 805, 814, 947, 952
Թումանտղեն 717
Թումանլուն Բ. 356
Թումաչան Հիզանցի 299
Թուման 144, 328, 682, 743, 790, 945
Թումար 342
Թումեկ 884
Թումէ 183, 220, 461, 576
Թումիան 424, 607
Թումիկ 424
Թումին 83, 421, 680, 684, 939—941
Թումիս 301
Թուշխար 513
Թուրաճ 601
Թուրապի 26
Թուրինշ 636
Թուրշիճուն 370
Թուրվանգ (նաև Թուրուանգ, Թուրվենգ, Թուրվանտայ, Թուանգ, Թրվանտայ, Թրանգէ) 10, 27, 49, 52, 71, 80, 109, 110, 122, 166, 178, 181, 196, 227, 230, 280, 302, 308, 329, 357, 384, 394, 400, 407, 410, 447, 464, 497, 498, 520, 533, 551, 557, 573, 575, 590, 592, 609, 620, 659, 660, 667, 739, 767, 768, 848—850, 853, 930, 941
Թուրուանայ 451
Թփիկ 592
Թէանթորոս 658

Իբրահիմ (Իպրահիմ) (զան.) 20, 47, 80, 81, 86, 93, 96, 97, 100, 101, 117, 140, 162, 192, 197, 206, 227, 229, 233, 239, 264, 267, 268, 281, 283, 294, 319, 324, 358, 364, 452, 482, 511, 532, 655, 746, 932
Իբրահիմ Աւամանցու 211
Իբրանոս 342
Իգնատիոս, գրչ. 738
Իգնատիոս Ցափուլեխացի 912
Իգնատիոս (զան.) 98, 246, 502, 626, 723, 739, 771, 945
Իմամզուլու Նախէջանու 104
Ինախ 69, 177, 350, 354, 495, 496, 509, 606, 939
Ինախրաշ 38
Ինախշի 683, 684
Ինախփաշ 454, 455
Ինճի 741
Ինճիպիրայ 19
Ինջուն 660
Իշխան 567, 568, 667, 698, 960, 961
Իպշիր Բերիոյ 535
Իսախան 184, 188, 316, 628
Իսախան Բաղիշեցի 789
Իսախան Լաւու 388
Իսախուն 667

Իսահակ (դրչ. վրդ.) 139
Իսահակ Մակուեցի 855
Իսահակ Ջուղայեցի 756
Իսահակ (զան.) 266, 648, 757, 962
Իսաղուլ 672
Իսկանդար (Իսկէնտէր, Սքանդար, Ասքանդար) 20, 26, 181, 183, 431, 592, 691, 790, 836, 848, 849, 872, 904
Իսմին 682
Իսպիլ 357
Իսրայէլ Մեղրեցի 921
Իսրայէլ 72, 73, 182, 191, 309, 421, 516, 744, 946
Իվան 952, 959
Իրիշան 191
Իփակ 507, 658
Իփշիր 479, 520, 535, 620
Իփրիթէ 761
Իփրուսինէ 460

Լաբիկ 745
Լալա Մատուր 247, 248
Լալայան Ե. 606, 687
Լալապէկ 774
Լալէ 755, 949, 963
Լալի 720
Լալկաւնաշ 445
Լալօ 607, 720
Լահադին 826
Լանկ Թամուր 114, 918
Լալին 16, 350, 351
Լապիխան (նաև Լաբիխան) 316, 486, 526, 737
Լատիֆ 234, 350, 684, 689
Լելէ 424, 738, 757
Լելլիխան (նաև Լէլիխան) 191, 374, 659, 713, 903
Լէլլի (նաև Լէլա, Լէլի, Լէլու) 28, 166, 200, 421, 543, 699, 811, 815, 835
Լէլլիշան 619
Լէռա 761
Լիանոս Բարերթացի, դրչ. 67
Լիլիփար 776
Լիպարիտ 28, 350
Լուսաւորիչ 400
Լուսիկ, գրչ. 36
Լուսիկ (զան.) 36, 72, 91, 480, 585, 827
Լուսին 81, 109, 110, 708
Լուսթան 399
Լուսխաթուն 124
Լուսպարոն 114, 298, 611
Լևոն 126, 490

Խազատ 394
Խազար (նաև Խազայր) 708, 797
Խաթայ 62, 189, 518, 807, 878
Խաթէ 517, 598
Խաթիշահ 913
Խաթոյնպիքայ 90
Խաթուն 174, 178, 179, 182, 215, 222, 230, 234, 239, 254, 313, 314, 330, 357, 381, 411, 443, 445, 447, 472, 478, 555, 569, 573, 593, 653, 660, 666, 755, 764, 768, 771, 776, 778, 875, 884, 897, 903, 904, 906, 911, 920, 932
Խաթունաղ 176, 302, 845, 937, 940
Խաթունաղեն 792
Խաթունաս 728
Խաթունիկ 67, 106, 496, 503, 671
Խաթունկան 239
Խաթունջան (նաև Խաթունճան) 19, 62, 189, 301, 659, 776
Խաթունմելի 120
Խաթունպակ 573
Խաթունպէկ 1, 421, 959, 960
Խաթունպիկայ 109, 111, 874
Խաթունփաշ 142, 555, 684, 688, 689
Խաթուշ 462
Խաթուշան 548, 905
Խալինար 88, 307, 920
Խալիփգուհար 388
Խալիֆ 401
Խալխաթուն 301
Խախուէ 960
Խամրէկ 188, 231, 426, 734, 826
Խայրին 230
Խան 683, 740, 741
Խանազատ 661
Խանաղ (զան.) 176, 177, 203, 204, 302, 329, 348, 350, 389, 393, 480, 739, 779, 909, 916, 917, 919, 937, 939, 940
Խանաղէ (զան.) 61, 62, 68, 73, 103, 312, 347, 411, 517, 558, 756, 757, 771, 870
Խանբաբ 173
Խանբէկ (նաև Խանպէկ) 178, 242, 496, 497, 597, 602, 662, 773, 882
Խանդա (նաև Խոնդա) 175
Խանդվէլի 717
Խանզադ 105, 161, 194, 203, 316, 606, 811, 875, 948
Խանզադէ (նաև Խանզատէ, Խանզէտէ) 199, 200, 316, 333, 360, 466, 496, 517, 607, 622, 686, 715, 738, 756, 757, 773, 793, 814, 835, 845, 857
Խաննէս 576, 730, 946
Խանիգուլ 318, 885, 886
Խանիկ 184, 445

Խանիպիքայ 611
Խանիփաշ 421
Խանիփուռ 807
Խանլար 374
Խանլիլար 555
Խանճիչ (նաև Խանչիչ) 517, 518, 956
Խանպակ 408
Խանպաճ 771
Խանսօլթան (նաև Խանսուլթան) (զան.) 36, 136, 188, 215, 221, 301, 481, 875
Խանվալատ 119
Խանաաաիկ 877
Խանաէր 853
Խանտուտ 324, 769, 946
Խանում (զան.) 15, 43, 63, 69, 73, 103, 107, 174, 223, 225, 270, 363, 372, 379, 393, 409, 449, 459, 472, 474, 507, 510, 531, 561, 566, 573, 607, 645, 658, 666, 691, 728, 734, 776, 857, 888, 946, 947
Խանումաղ 251, 548, 664, 737, 952
Խանումաղէ 215, 548, 845
Խանումխաթուն 940
Խանուն 555
Խանփաշ 91, 184, 373, 585, 840
Խանփար 120, 609, 686, 811, 878
Խանփարէ 121
Խանփարվար 88, 476, 656, 913, 944
Խաչատուր Ատիշեցի 375, 563
Խաչատուր Բաղէշացի 523
Խաչատուր Գողթնեաց 212, 260, 631, 904, 938
Խաչատուր Երնջակեցի 921
Խաչատուր Լէհցի, գրչ. 128, 246, 739
Խաչատուր Խաչգռուղ, գրչ. 721, 796
Խաչատուր Կարափկերցի 172
Խաչատուր Կամենցի 198
Խաչատուր Կեսարացի 12, 43, 807, 816, 921
Խաչատուր Կիլիկեցի 749, 896
Խաչատուր Կուլապետի 98
Խաչատուր Ղրիմեցի 110
Խաչատուր Ջնքուշեցի 524
Խաչատուր Ջուղայեցի 64, 115, 314, 932
Խաչատուր Սեբաստացի 535, 749
Խաչատուր, գրչ. 172, 195, 198, 238, 244, 274, 287, 319, 368, 514, 528, 639, 758, 798, 897, 898, 953
Խաչատուր (զան.) 2, 5, 6, 9, 12, 13, 18, 20, 24, 27, 30—32, 44—46, 48, 51, 60, 63—65, 70, 72, 76, 79, 82, 90, 101, 103, 104, 111, 112, 114, 117, 118, 121, 132, 165, 167, 179, 180, 185, 195, 198, 201, 223, 225, 228, 231, 238, 240, 249, 251, 253, 256, 258, 272, 276, 382, 386, 394, 413, 427, 436—438, 441, 442, 444, 445, 449, 457, 459, 461, 463, 467, 473, 479, 480, 483, 488, 497, 517—520, 523, 527, 529, 537, 540, 541, 546, 555, 559
Խաչատուր 563, 564, 566, 572, 574, 575, 583, 591, 598, 603, 606, 620, 622, 644, 661, 664, 667, 674, 696, 699, 706, 710, 716, 717, 722, 724, 731, 734, 739, 740, 743, 747, 748, 759, 765, 770, 771, 776, 777, 780, 789, 794, 798, 802, 809, 819, 823, 824, 835, 837, 840, 842, 847, 849, 858, 859, 863, 870, 872, 874, 875, 890, 899, 906, 907, 915, 916, 919, 923, 934, 938, 945, 953, 955, 959, 963, 964
Խաչգռուս 723
Խաչեր 116, 462, 853
Խաչերես 829, 830, 874, 934
Խաչերես Սըսցի 357
Խաչիկ (զան.) 1, 35, 132, 174, 191, 244, 347, 399, 531, 610, 666, 716, 717, 822, 832, 848, 884, 905
Խաչիկ Կաֆայեցի, գրչ. 242—244
Խաչիկ Շահխասենց 922
Խաչխաթուն 620
Խաչմանուկ 329
Խաչուկ 819
Խաչում 161, 546, 547, 558, 596, 726
Խաչքոն 130
Խաչքոն Իլովցի 129
Խաչօ 307
Խաչօ Պըզնձացի 70
Խասաթուն 556
Խասխաթուն 72, 711
Խասպէկ, գրչ. 89, 94, 96, 165, 194, 414, 531, 541
Խասպէկ (զան.) 111, 195, 351, 398, 435, 540, 796
Խասպիքայ 610
Խասպուլա 272
Խաւճիկ 667
Խաւպակ 835
Խաւրում 667
Խատէր 685
Խատին 425
Խարակաւզի 536
Խարաս 791
Խարիպխան 184
Խարկգէ 734
Խաքանցուց 592
Խզլի 576
Խէխլտ 371
Խէխէր 513
Խէլիկ 683, 956

Խէչում 410, 726, 776
Խէրաա 215
Խէրբաշխի 807
Խէրի 117
Խէրխաթուն 301
Խէրում 91, 373
Խէրօն 837
Խլեբերշա 12
Խիլա 262
Խիկար 124
Խլի 602, 776
Խլղաթ Բէդէոնց 941
Խլղաթ Միքայէլենց 941
Խլղաթ Մոկացի 230
Խլղաթ (ղան.) 107, 178, 228, 242, 350, 393, 447, 463, 464, 486—488, 606, 730, 739, 766, 769, 850
Խճյուր 83
Խմէլի 292
Խնդացող 687
Խնթուշ 88
Խոճաբակ 184
Խոճաղատէ (նաև Խօճաղատէ) 184, 188
Խոճայսար (նաև Խօճասար) 683, 708, 709
Խոճապէկ 788
Խոնար 364, 511
Խոնդա 175
Խոնդաղէ (Խոնտաղէ) 72, 182, 188, 843, 845, 956
Խոնդքար (նաև Խոնդկար) 369, 632, 667
Խոնծաբէկ 231, 598
Խոնդի (նաև Խօնձի) 174, 177, 340, 348
Խոշ 766
Խոշիար 683
Խոշկի 934
Խուասիմ 744
Խումչան 903
Խուում 350, 606, 766
Խոսրոֆ Անձևացեաց 952
Խոսրով (Խան) 278, 279
Խոսրով (նաև Խոստրով) 35, 52, 73, 166, 215, 217, 678, 768, 805, 918, 946
Խոցիկ 683
Խոռոմսիմէ—տե՛ս Հռիփսիմէ
Խտրպալու 653
Խտրշին 837, 930
Խրմղ 10
Խուբիար 174
Խուդաբաշխ (նաև Խուտապաղչ) 452, 497
Խուդայվետտ—Խուտավէրտ 350, 383, 805
Խութան 74
Խութլուպէկ 90
Խութլուշ 858, 880
Խուլիճան 632, 633
Խումա 142
Խումար (ղան.) 221, 233, 364, 411, 511, 778
Խումարշի Բունակոթեցի 71
Խունդիկ 254, 432
Խունծի 341
Խունտի 654
Խուշընկի 583
Խուպան 944
Խուպասար Սալլուկիանցի 517
Խուպասար, դրչ. 516, 517
Խուպիար (Խուպիար) 25, 271, 272
Խուպի 928, 930
Խուշում 667
Խուտեղ 302
Խուտրաթ 135
Խուրմա 517
Խոշխաբար 899
Խո//շոյ 731
Խոչաճան 47
Խոչայմալ 712, 713
Խոչում 667
Խոսին 720

Ծաղիկ (նաև՝ Ծաղիք) 35, 91, 92, 113, 333, 373, 425, 585, 712, 713, 859, 877
Ծամեր 555
Ծամիկ 250
Ծամոսկ 119
Ծաուկ 180
Ծատուր Դիլաքանց 333
Ծատուր, որդի Ղամպարի 864
Ծատուր Քարատակեցի 779
Ծաուր (ղան.) 18, 71, 119, 120, 144, 164, 173, 179, 181, 222, 253, 262, 313—315, 332, 333, 394, 461, 609, 654, 672, 686, 721, 741, 790, 793, 805, 832, 833, 845, 932
Ծերիկ 198
Ծերուն 226, 423, 527, 536, 575, 799
Ծովինար 258, 259, 464

Կաղիմիր (Քաժիմիր) 403, 534, 605, 751
Կալտեկ 644
Կակոս 300
Կահուար 684, 773
Կայիդխան 871
Կանանչին 330, 826
Կաւղաս 445
Կատարինէ, դրչ. 626
Կատարինէ (ղան.) 200, 530, 627, 712, 738, 757, 811, 835, 857
Կարան 824

Կարապետ (գրչ.) 324, 325, 362, 499, 500, 758
Կարապետ Ադիշեցի 377
Կարապետ Ակռնցի 672
Կարապետ Անգրիանացի 750
Կարապետ Բազշեցի 230
Կարապետ Թոխաթեցի, գրչ. 79, 138
Կարապետ Կարրեցի 750
Կարապետ Վանեցի, գրչ. 240, 241, 778
Կարապետ (զան.) 8, 10, 23, 35, 47, 49, 54, 56, 65, 66, 68, 69, 74, 78, 80, 86, 108, 123, 130, 196, 213, 221, 230, 232, 238, 258—260, 263, 268, 273, 276, 295, 299, 305, 306, 316, 321, 354, 363, 366, 378, 394, 403, 426, 440, 441, 443, 462, 463, 480, 486, 488, 497, 502, 507—509, 522, 527, 536, 556, 557, 587, 593, 598, 601, 653, 686, 694, 695, 729, 731, 732, 736, 737, 748, 750, 751, 765, 766, 778, 779, 792, 806, 811, 819, 852, 875, 883—885, 923, 938
Կեսարիա 677
Կեսարիոս 875
Կիրա 1
Կիգա տե՛ս Գիկա
Կիկլի 767
Կիչաղան 886
Կիրակոս, գրչ. 136, 115, 464, 590, 591, 622, 738, 779, 812
Կիրակոս Առջակեցի 69
Կիրակոս Թալինցի, գրչ. 466
Կիրակոս Կեցոնի 326
Կիրակոս Շամբեցի 645
Կիրակոս Պէլանկցի, գրչ. 800
Կիրակոս Վարաղայ 224, 307
Կիրակոս (զան.) 1, 12, 23, 24, 30, 51, 52, 66, 69, 72, 75, 76, 83, 107, 108, 124, 137, 142, 161, 177, 179, 183, 184, 203, 212, 214, 220, 233, 237—239, 252, 262, 266, 267, 272, 273, 310, 318, 319, 323, 329, 333, 335, 350, 364, 365, 373, 377, 396, 400, 407, 416, 417, 424, 434, 441, 452, 457, 463, 465, 485, 493, 511, 520, 551, 585, 590—592, 599, 605, 622, 632, 636, 644, 645, 659, 660, 663, 665, 677, 687, 690, 697, 700, 727, 729, 739—741, 744, 748, 759, 767, 768, 776, 787, 788, 790, 792, 799, 818, 824, 833, 864, 872, 881, 884, 916, 918, 919, 952, 957
Կիրակոսբ 228
Կիլիմին 273
Կիլէսէր 714
Կիլիխաւ 452
Կիւրեղ, գրչ. 489, 490
Կիւրեղ Երուսաղէմի 830, 901
Կիւրեղ Քարձեցի 233
Կիւրեղ 790, 858, 919
Կղեմա 485, 487
Կողմայ, գրչ. 958
Կողմաս, գրչ. 589, 590, 863
Կողմաս 52, 551, 767
Կոկ 527
Կոհար տե՛ս Գոհար
Կոճէն 164
Կոչպեկ 174
Կովտուն 696
Կոստա 291
Կոստանդ, գրչ. 884
Կոստանդ 216, 444, 590, 959
Կոստանդիանոս 759
Կոստանդին 396, 786
Կոստիկան 371
Կուլաղայ 12, 479, 480, 528
Կուլամի 739
Կուլան 88, 819
Կուլասգր 431
Կուլաֆ 180
Կուլգաստ 717
Կուլինապաթ 700
Կուլիստոն 10, 213, 233, 464, 528, 625, 806
Կուլխաթուն 592
Կուլկազ 517
Կուլճիհան 161
Կուլիչէկ 47
Կուլպուտախ 276
Կուլսանամ 431
Կուլսար 363
Կուլվար 210
Կուլվարդ 576, 828, 881
Կուլփար 217
Կուհար 371
Կունաղ 445
Կուտուրկին 807
Կողալ 525, 595, 739
Կողալաղեն 410
Կոնվար 773
Կո//կիպայ 217

Հազար 591, 667, 748
Հազարպէկ 691
Հազրէվարդ 210
Հաթունաղ 196
Հտխնազար 136, 213, 535, 595, 813, 875
Հախվետ 116
Հախում Պասակերեցի 868
Հախում 539, 868
Հակոբջան 843

Հաճաթ 272
Համան 242, 773
Համանդուլ 789, 819
Համասփիւռ 119, 834
Համաւոր 184
Համափար 295
Համրեկ 818
Համին 631
Հայկազ Ջուղայեցի 820
Հայկազ (զան.) 136, 553, 555, 571, 596, 673, 922, 927
Հայպաթ 617
Հայպաթիան 374
Հայտարդուլի Սրկղունցի 864
Հայրան 948
Հայրապետ Մոկացի 393
Հայրապետ Նաղուքենց 432
Հայրապետ Ղաւալէնց 675
Հայրապետ Ճարակ 404
Հայրապետ Ջուղայեցի
Հայրապետ, դրչ. 163, 950
Հայրապետ (նաև Հայրայպետ) 23, 38, 44, 63, 91, 104, 177, 178, 186, 196, 237, 242, 247, 250, 297, 298, 314, 315, 339, 340, 341, 348, 373, 386, 393, 396, 425, 440, 450, 474, 486, 539, 548, 555, 660, 677, 679, 708, 709, 713, 757, 758, 765, 766, 796, 834, 843, 853, 864, 879, 906, 920, 926, 927, 932, 949, 951, 959
Հայրում 677
Հանէս 675, 748
Հանիզէն 734
Հանիկ 517
Հանուխնայ 42
Հանում 196, 310, 463
Հապիպ 649
Հասան 707, 721
Հաս//էտկար 718
Հասնա 848
Հաւաս 749
Հաւատվոր 98
Հաւրվալաթ 476
Հատի 687
Հարապետ 327, 351, 378
Հարանտոն 714
Հարզիկ 302
Հեթում 29, 67, 444, 612, 323
Հեզինար (նաև Հեղնար) 313, 314, 384, 562, 598, 961
Հեղինէ, դրչ. 256, 715, 853
Հեզինէ (զան.) 52, 80, 194, 195, 399, 712, 716, 717, 767, 790, 880
Հեզինի 508, 608, 907, 949, 964
Հերէկ 124
Հերիք 68, 72, 715, 810, 881
Հերիքոն 592
Հերովդէս 294, 344
Հերում 555
Հերքայ 849
Հեյլանէ 837
Հէնդարդուլի 71
Հէրայպետ Բէլվայ 725
Հերայպետ 69, 107, 176, 196, 228, 307, 315, 333, 383, 393, 410, 413, 599
Հերիքնազ 491, 583, 607, 608, 768, 776, 920
Հէր (Հեր) 250
Հիթում 26
Հիլալ 684
Հիմաթխաթուն 941
Հիւսէին 482
Հիւրին 73
Հնազանդ 949
Հ//ին 718
Հողկզ 576
Հոռոմ (նաև Հռոմ) 83, 242, 360, 371, 411, 424, 638, 697, 793, 770, 824, 832
Հոռոմսիմ 174, 179, 184, 242, 306, 316, 496 497, 595, 699, 744, 768, 909, 956
Հոռում 507
Հովադեղ 748
Հովանիս տե՛ս Յովանիս
Հոիփսիմէ, դրչ. 551
Հոիփսիմէ (զան.) 12, 14, 18, 31, 33, 43, 49, 52, 66, 73, 92, 119, 144, 181, 184, 188, 231, 246, 248, 254, 266, 272, 275, 277, 298, 302, 307, 318, 326, 407, 413, 424, 434, 462, 463, 465, 466, 467, 468, 486, 488, 547, 597, 598, 602, 608, 622, 626, 627, 632, 636, 707, 738, 767, 768, 788, 811, 833, 842, 853, 947, 960
Հոմզն 902
Հոում 477
Հրեղինէ 487, 488
Հրոմզ 47
Հրպէտ 300, 683
Հրաթ 196
Հուհան 805
Հումա 142, 848
Հումայիխան 136
Հումէիսուլթան 770
Հում//ին 718
Հուռիկ 571, 596
Հուռում 440. 668, 776, 875, 881
Հուռումսին 35, 36, 174, 333, 508, 509, 658, 868
Հուսնիխան 499, 501, 502

Հուրիխան 19, 410, 507, 549, 632, 769
Հուրին 372, 668, 772, 816
Հուրիփաշ 826
Հուրմուզ 184, 188, 316

Ցուդան 425

Ղարար 85
Ղազամղուզլու 36, 64, 65, 144, 313, 314, 791, 807, 932
Ղալալխաթուն 699
Ղազախ Ջամալ խան 876
Ղազար Ակնցի 233, 511
Ղազար Բարերթացի 185, 202, 297, 758
Ղազար տէր Դարունից 891
Ղազար Թօփղաւիուցի 634
Ղազար Լեհցի 170
Ղազար Նալպանտենց 488
Ղազար Սիսցի 58
Ղազար Փուզանդացի 863
Ղազար, դրչ. 52, 83, 169, 178, 181, 203, 232, 273, 323, 389, 443, 510, 545, 572, 584, 658, 701, 719, 743
Ղազար (ղան.) 4, 15, 35, 63, 81, 82, 85, 103, 112, 119, 134, 142, 161, 170, 174, 179, 215, 228, 237—239, 247, 266, 304, 307, 312, 319, 323, 334, 350, 369, 375, 381, 391, 399, 400, 401, 407, 408, 423, 477, 486, 517, 519—521, 546—548, 550, 551, 563, 574, 575, 577, 590, 599, 607—609, 611, 614, 620, 626, 629, 659, 667, 673, 675, 698, 720, 725, 739, 740, 744, 746, 763, 764, 767, 769, 770, 783, 811, 826, 832, 834, 837, 838, 860, 864, 865, 868, 871, 875, 876, 886, 888, 892, 906, 923, 927, 941, 942, 957, 958
Ղազարան 294
Ղազարոս, դրչ. 197, 769, 789, 790, 835, 836, 868
Ղազարոս 286, 384, 392, 548, 661, 743
Ղաղիխան 748
Ղաղում 388
Ղաթունփաշ 477
Ղալամ 676
Ղալայբէկ 332, 939
Ղազախ խան Էրէվանայ 775
Ղամար Եաղուպենց 634
Ղամար 114, 366, 402, 521, 864
Ղամբար (Ղամպար) 71, 535
Ղամիշ 161
Ղայան 116, 135, 788
Ղայէփաշ 327
Ղայսար 654
Ղայրա 370
Ղանպար 677
Ղանաուրալ 28
Ղանփաշ 477
Ղաչաղայ 318
Ղաչո 45
Ղասում 405, 759, 766
Ղասումչան 174
Ղարիմազ 217
Ղատամ (Ղադամ) 313, 314, 849, 932, 945
Ղատամխան 667
Ղատամխութլու 120
Ղարա Քաքուլի 174
Ղարադոզ 759
Ղարախան 45, 276, 654, 740
Ղարաղախան 876
Ղարաղոչ 449
Ղարաճա 247, 528
Ղարաման 555
Ղարատան 295
Ղարդան 807
Ղաբիբսուլթան 889
Ղարիպ (ղան.) 451, 452, 598, 667, 689, 731, 773, 774, 802, 821, 837, 899, 940
Ղարիպխան 182, 757, 811, 857
Ղարիպխաթուն 316
Ղարիպհան (Ղարիպչան) 45, 237, 460, 476, 496, 497, 578, 595, 638, 687, 732, 788, 818, 827, 899
Ղարիպշին 737
Ղարտաշ 43, 63
Ղզլարպէկ 606
Ղէմաթ 579, 849
Ղըզլար 645, 940
Ղըզլարխան 188
Ղըրմըզ 955
Ղիմաթ (ղան.) 52, 175, 327, 376, 461, 551, 564, 768, 783, 892
Ղոչ 174
Ղոչաղան 886
Ղուրաթ 175, 185, 187, 188, 491, 825
Ղուդրադ 639
Ղուզիչան 792
Ղութ 740
Ղուլիչան 595
Ղուկաս Արաբգիրցի 573
Ղուկաս Կարուզլացի 798
Ղուկաս Կեղեցոյ 34
Ղուկաս, դրչ. 174, 218, 333, 531, 644, 689, 787, 793, 798, 824, 890, 904
Ղուկաս (ղան.) 16, 34, 49, 68, 72, 82, 119, 121, 174, 217, 222, 228, 256, 257, 277, 298, 309, 310, 318, 326, 333, 363—

365, 441, 457, 463, 478, 495, 511, 531, 532, 573, 576
Ղոմաշ 461, 507
Ղումսար 10
Ղումրի 592
Ղումրիփաշ 660
Ղևոնդ 571, 596
Ղոխ 771
Ղոնջի 659
Ղորխմաղ 771, 868

Ճալալ տե՛ս Ջալալ
Ճանէ 381
Ճանիկյան 376, 614
Ճանիպէկ 440
Ճանսալթան 881
Ճանուն 755, 826
Ճաշխաթուն 72
Ճաւար 85
Ճափխան 298
Ճիհան 677
Ճիհանշահ 376
Ճոհար (Ճոխար) 178, 277
Ճուէյտի խան 520, 620
Ճուհար 379, 514, 879, 880
Ճուֆար 72

Մաախմուր (նաև Մախմուր, Մախմոր) 517, 608, 725, 755, 949, 963
Մագալ 200, 811, 815, 835, 857
Մագալինէ 757
Մահամ 518
Մաղման 235, 375
Մաթկոս (նաև Մաթէոս գրչ.) 11, 914, 955
Մաթէոս (նաև Մաթոս) 73, 94, 119, 181, 182, 200, 201, 213, 222, 231, 259, 277, 325, 375, 389, 391, 423, 493, 502, 597, 598, 606, 632, 636, 654, 655, 664, 677, 681, 684, 736, 737, 790, 792, 898
Մաթուսաղան 704
Մաթէոս Ջուղայեցի 383
Մալազար Ջուղայեցի 569
Մալազէ 248
Մալաք 467, 771
Մալդահիխան 57
Մալի 144, 476, 658, 677, 846
Մալի, գրչ. 955
Մալիրարէ 121
Մալիճան 323, 514
Մալխաս 323, 418, 732, 746, 845, 869
Մալում 449, 472, 474, 846
Մալքում 173
Մախթամաշ 698, 744
Մախթումշան 788
Մախսատ 88
Մախսուտ 239
Մակար Հեննեցի 731, 732
Մակար 67, 568
Մահամատ 285, 418, 529, 563, 618, 638, 746, 749, 798
Մահամէտ փաշա 285
Մահամմատղուլի 71, 104, 500
Մահրիր 776
Մահթուխ 620
Մահիճան 502
Մահմատ 23, 319, 323, 514, 655, 733, 778, 785, 803, 816, 835, 839, 894, 900, 930, 953
Մահմեքարալ խան 96, 829
Մահմետ 283, 358, 376, 482, 494, 661, 699, 803, 916
Մահմէտ Քեօրրուլի 930
Մահմէտքերէ Ըստամպոլցի 827
Մահմուտ 735
Մահմուր 220, 396, 666, 884
Մահպուր (Մահպուպ) 14, 72, 868
Մահպուտ 682
Մահուես 171, 371
Մահումադ 735, 842
Մահուր 510
Մահփար 374
Մաղաքեայ, գրչ. 430, 431
Մաղաքիա Կաֆայեցի 531
Մաղաքիա 332, 466, 488, 532, 541, 675, 964
Մաղթում 514, 768
Մամ 713, 761, 905
Մամադ սուլթան 281
Մամար 460
Մամէ 250, 404
Մամլաքաթ 521
Մայրամ 49, 174, 179, 184, 281, 463, 493, 555, 761, 816, 848
Մայրան 112, 413, 667, 768
Մայրէան 71
Մանան 184, 466, 829, 830
Մանանդ 233, 592, 875
Մանանեխ 517
Մանասէ 213
Մանդվել 687
Մանժոն 607
Մանիէլ 960
Մանիխան 485
Մանկասար 164, 250, 309, 348, 725, 920
Մանկի 295, 389, 881
Մանպապ 633
Մանվել 462

Մանուել Ամարասայ 362
Մանուէլ Դարասարցի 57
Մանուէլ, գրչ. 56
Մանուէլ (զան.) 47, 57, 70, 215, 281, 403, 490, 558, 675, 763, 840, 885, 918
Մանուկ Բալիշեցի 457
Մանուկ, գրչ. 56
Մանուկ (զան.) 10, 87, 213, 228, 231, 232, 250, 270, 316, 334, 418, 442, 521, 528, 555, 593, 595, 597, 598, 625, 632, 746, 821, 849, 858, 872
Մանուշակ Փաշական 291
Մանուշակ (զան.) 51, 113, 288, 370, 445, 460, 499, 555, 560, 581, 591, 625, 634, 680, 696, 790, 859, 875, 930, 946
Մանուչար 771
Մաշթոց (նաև Մաշտոց, Մաշգոց) 192, 685, 708, 945
Մաշթոց Սևանցի 709
Մապուր 9
Մառ Ն. 416, 417
Մառուն 546
Մասահ 164
Մասպուռ 761
Մաստունի 448, 514
Մասում 223, 889
Մասուն 667
Մասուտ 104
Մասումփաշա 62, 184, 188, 189
Մասփուռ (նաև Մասփիւր, Մասփուր, Մասֆիւռ) 92, 132, 200, 313, 314, 535, 658, 713, 932
Մավարդ 376, 564
Մաւճուտ 328
Մաւրադ 301, 606
Մատիլինէ 738
Մարամ 44, 132, 738, 961
Մարամտատիկ 535, 687, 932
Մարան 1, 508, 521, 718, 859
Մարաս 791
Մարասխանում 136
Մարգար, գրչ. 191, 252, 360, 391, 535, 742, 766
Մարգար (զան.) 29, 184, 194, 227, 230, 238, 252, 393, 394, 426, 493, 497, 499, 508, 509, 555, 606, 718, 757, 767, 854, 867, 871, 877, 960, 964
Մարգար Արարգերցի 955
Մարգարայ, գրչ. 404
Մարգարայ 253, 348, 404
Մարդարան 491
Մարգարէ Երևանցի, գրչ. 702, 772
Մարգարէ Խարբերդցի 910
Մարգարէ Նոռոթցի Փշրկենց 339, 340, 341, 948
Մարգարէ (զան.) 18, 61, 65, 92, 103, 170, 232, 265, 312, 316, 333, 347, 446, 488, 497, 501, 595, 632, 638, 664, 677, 707, 718, 756, 757, 765, 776, 793, 843, 855, 871, 959, 960
Մարգարիտ, գրչ. 303
Մարգարիտ (զան.) 27, 35, 41, 45, 52, 99, 101, 112, 120, 122, 124, 176, 179, 181, 231, 256, 262, 265, 266, 276, 299, 300, 302, 305, 308, 341, 408, 440—442, 446, 447, 449, 452, 472, 474
Մարգարիտ 476, 480, 550, 551, 555, 593, 597, 609, 625, 626, 636, 644, 659, 663, 708, 720, 739, 755, 766, 768, 770, 773, 819, 853, 859, 868, 884, 903, 904, 936, 941, 945, 949, 961
Մարեամ 26, 333, 363, 959
Մարեամպիքայ 26
Մարեան 103, 440, 771
Մարեմ (նաև Մարէմ) 272, 447
Մարեն 956
Մարթա (նաև Մարգա) 10, 80, 88, 103, 129, 184, 193, 237, 267, 271, 281, 291, 327, 334, 364, 365, 379, 480, 495, 511, 533, 592, 614, 641, 644, 653, 749, 788, 881, 882
Մարթէ (նաև Մարգէ) 666, 688, 689, 961
Մարթին 25, 256, 555, 608
Մարի 389, 472, 737
Մարիա 215
Մարիամ, գրչ. 256, 387
Մարիամ (զան.) 10, 12, 15, 28, 29, 36, 41, 47, 66, 80, 81, 86, 88, 101, 106, 109, 110, 112, 116, 118—121, 161, 166, 174, 179, 182, 191, 196, 213, 214, 222, 229, 231, 237, 247, 254, 265, 267, 272, 273, 275, 286, 298, 304, 305, 309, 314, 316, 326, 332, 333, 350, 357, 358, 360, 364, 370, 372, 381, 384, 386, 388, 389, 396, 407, 410, 411, 427, 430, 431, 450, 452, 462, 467, 468, 480, 495, 507, 511, 517, 520, 527, 528, 533, 535, 539, 543, 548, 562, 571, 592, 595, 596, 597, 607, 608, 610, 614, 620, 627, 636, 654, 658, 659, 672, 673, 681, 682, 686, 696, 699, 700, 711, 712, 725, 744, 748, 751, 754, 773, 782, 783, 788, 790, 792, 794, 797, 806, 826, 829, 830, 838, 843, 845, 849, 871, 875, 879, 892, 897, 910, 920, 927, 945, 951, 953, 957, 959, 960, 963
Մարիամանց 341

Մարիամտատիկ 394, 658
Մարիան 23, 256, 262, 299, 445, 449, 461, 474, 546, 602, 607, 641, 664, 697, 718, 726, 740, 741, 776, 824, 945, 949
Մարիեան 707
Մարինոս, դրչ. 386, 388, 399, 715—717
Մարինոս (նաև Մարիանոս) 179, 347, 555, 602, 717, 757, 776, 819, 944, 961
Մարիտատ 61, 441, 452, 517, 593
Մարիուն 837
Մարխաս 660, 725
Մարկոս Սասնցի 523
Մարկոս Կեղեցի, դրչ. 68, 127, 128, 316, 490, 600, 601, 609, 617, 678, 733, 763, 814
Մարկոս (զան.) 123, 256, 302, 317, 319, 409, 449, 450, 452, 457, 459, 472, 473, 491, 514, 517, 574, 593, 641, 654, 680, 791, 886, 902, 908, 931, 934, 940, 951, 952
Մարուքէ 384
Մարշան 182
Մարշամ 351
Մարտիրոս Ակընցի 880
Մարտիրոս Աղթամարցի 941
Մարտիրոս Խիզանցի 370
Մարտիրոս Խոնճէկիլեանց 628
Մարտիրոս Կամրկապցի 880
Մարտիրոս Ղարան 28
Մարտիրոս Ղրիմեցի 522, 524, 569, 791, 801, 802, 854, 855
Մարտիրոս Կաֆտյեցի 954
Մարտիրոս . Շէքիրիցանց 222
Մարտիրոս, դրչ. 131, 299, 422, 434, 486, 509, 559, 580, 601, 616, 765, 781, 854, 919
Մարտիրոս (զան.) 10, 11, 14, 23, 42, 51, 72, 91, 02, 107, 161, 162, 176, 177, 179, 183, 193, 196, 198, 201, 222, 228, 232, 239, 240, 246, 252, 276, 281, 286, 294, 299, 307, 316, 318, 354, 363, 369, 373, 389, 392, 402, 410, 411, 445, 447, 451, 457, 463, 471, 472, 480, 483, 486, 487, 488, 495, 497, 498, 509, 515, 517, 546, 549, 555, 557, 569, 573, 614, 634, 654, 655, 659, 677, 678, 684, 690, 707, 724, 727, 729, 734, 739, 740, 741, 748, 755, 765, 768—770, 775—777, 789, 792, 801, 806, 813, 818, 819, 822, 827, 828, 842, 843, 866, 872, 878, 879, 881, 882, 886, 901, 905, 907, 920, 927—931, 940, 941, 959, 960, 963
Մարութ, դրչ. 911
Մարութ (զան.) 91, 92, 311, 312, 314, 373, 445, 585, 608, 932
Մարութա Ամխսիացի 196
Մարուքէ, դրչ. 214, 255
Մարուքէ 215
Մարուֆ 633
Մաքրուհի 682, 793
Մելէք 816
Մելին 687
Մելիտոն, դրչ. 382
Մելիտոն 316, 766
Մելիտոս, դրչ. 68
Մելիք Գեղամայ 775
Մելիք Հաթամ 771
Մելիք Քոսակ 597
Մելիք (զան.) 231, 451, 477
Մելիքաղ 583
Մելիքզադ 451
Մելիքներ 410
Մելիքնիազ 191
Մելիքոն 848
Մելհամ 10
Մելտոն 194
Մելքեթեկ 626
Մելքիսէթ Սերաստացի 135
Մելքիսեթ Վժանցի 537
Մելքիսէթ Քոթահեացի, դրչ. 25, 26
Մելքիսէթ, դրչ. 245, 282, 337, 341, 366
Մելքիսէթ (նաև Մէլքեսէթ) 4, 5, 26, 38, 135, 161, 171, 173, 174, 212, 213, 228, 300, 305, 306, 338, 388, 451, 454, 455, 458, 468, 493, 502, 509, 537, 551, 601, 712, 743, 746, 759, 765, 793, 811, 825, 836, 931, 937, 939, 945
Մելքիսեթեկ 508
Մելքոմեանց 262
Մելքոն Խոնճէկիլզատէ 628
Մելքոն Ջուղայեցի 745
Մելքոն Սերաստացի, դրչ. 3
Մելքոն, դրչ. 632, 745, 848
Մելքոն (զան.) 2, 3, 47, 88, 99, 101, 120, 166, 182, 184, 256, 257, 307, 371, 372, 381, 451, 467, 491, 527, 528, 567, 625, 659, 660, 696, 736, 748, 792, 805—807, 946, 949
Մելքոմն 486, 725, 737, 776
Մելքուն 329
Մեծրիկ 250
Մեհամետ 700
Մեհան 216
Մեհրապ 602
Մեհրի 267, 364, 511
Մեհրիշատ 222
Մեհրիպան 672
Մեղուշ 216, 606
Մեմի 290

Մեկենոիոս 235
Մեսրոպ Բաղիշեցի, գրչ. 115, 168
Մեսրոպ Թաթևոյ (արք.) 164
Մեսրոպ Խիզանցի 62, 92, 369, 370, 527
Մեսրոպ Մանդակունի 277, 572, 954
Մեսրոպ Սիւնեաց 171
Մեսրոպ Սմբատյանց 398
Մեսրոպ Վանեցի 181
Մեսրոպ (նաև Մեսրոբ), գրչ. 84, 224, 320
Մեսրոպ (նաև Մեսրովբ) 32, 33, 76, 77, 82, 168, 182, 228, 238, 256, 292, 293, 298, 324, 344, 399, 401, 421, 425, 452, 488, 515, 600, 616, 674, 679, 680, 685, 716, 717, 768—770, 777, 826, 847, 853, 870, 881, 935, 938, 945
Մերա 879
Մերհուրահ 103
Մերում (Մէրում) 18, 35
Մեքուն 53
Մէլիք 35, 83, 99, 101, 191, 231, 249, 320, 477, 517, 518, 555, 598, 720, 922, 923
Մէլիքաղա 905
Մէլիքբաբ 213
Մէլիքբօլօճ 548
Մէլիքխաթուն 792
Մէլիքշան 793
Մէլքում 333
Մէհզան 440
Մէհէմմաա 712
Մէհէմմէա 272, 591, 753, 806
Մէհէմմէտ Թուխալ 754
Մէհէմմէտ Քօբրիլի 753, 855, 930
Մէհմէտ 472, 783, 893
Մէհմէտքէրէ 831
Մէհրապ 654, 655
Մէհրի 661
Մէհրիշահ 548
Մէհրիպան 571, 596
Մէհրուբահ 143
Մէհէմէտ 739, 788
Մէրապ 654
Մէրանող 792
Մէրիկ 170, 821
Մէրհապ 120
Մէրշան 200, 201, 384, 391, 392, 809
Մէրտատիկ 18, 57, 314, 332, 333, 394, 427, 809
Մէրտնին 460
Մէրփաշ 332, 333
Մըսբր Շահրհաճենց 26
Մըսրմէլիք 699
Մքքայիլ 606
Մթխալ 26, 109, 110, 357, 653
Մթխաշ 234
Միասար (նաև Միայսար) 88, 311, 312, 398, 540, 541, 708, 714, 829, 830, 913, 934
Միխայէլ 216, 343, 344, 364, 820, 821
Միխայէլ Ասորոց 642, 802
Միխալ 53
Միլիտոն 307
Միհրան 693
Մինաս Բաբերդացի 14, 67, 106, 669
Մինաս Եղովկացի 127, 523
Մինաս Երզընկացի 363
Մինաս Ըսպերցի 167
Մինաս Թոխաթցի, գրչ. 35, 98, 271, 272, 326, 370, 739
Մինաս Խոտանանցի 755, 963
Մինաս Հազպատայ 354
Մինաս Սէլովցի 858
Մինաս Ստամբօլցի 135
Մինաս, գրչ. 144, 274, 633, 640, 641, 754, 834, 948
Մինաս (զան.) 16, 26, 28, 51, 59, 66, 79, 90, 99, 101, 103, 106, 119, 133, 135, 167, 168, 194, 195, 208, 210, 219, 228, 239, 245, 246, 271, 272, 282, 287, 298, 309, 315, 320, 326, 327, 337, 338, 341, 358, 370, 398, 421, 422, 457, 463, 480, 484, 486, 503, 504, 527, 531, 532, 535, 536, 539, 592, 606, 610, 625, 639, 663, 669, 670, 688, 713, 714, 723, 743, 761, 776, 788, 790, 827, 880, 901, 934, 940, 941, 949, 952
Մինախաթուն 518, 593
Մինասար 807, 875
Մինասյան Լ. 9, 374
Միսաք 682, 880
Միսիր 521
Միսքոյ 534
Միտքաւ 858
Միտիճ 859
Միրազիզ 181
Միրանդուխ 720
Միրանշին 684
Միրաք 72, 101, 307, 452, 557, 576, 606, 634, 640, 700, 737, 850, 944
Միրբապ 684
Միրզա 606, 740
Միրզախան (նաև Միրզայխան) 231, 295, 374, 525, 526, 776, 859, 878
Միրզաճան (նաև Միրզայճան) 105, 440, 654
Միրզամ 897
Միրզապէկ 103, 372, 543, 947
Միրզավալ 476, 687
Միրզէ Ցըզնցի 791

Միրզէ 720, 770
Միրզի 307, 507, 548
Միրիան 85
Միրիչան (նաև Միրիճան, Միրճան) (զան.) 41, 105, 203—205, 228, 251, 374, 377, 548, 613, 617, 676, 736, 748, 827, 941
Միրին 948
Միրին Տըփխիսեցի 721
Միրվանարիչան 491
Միրում 66, 658, 659, 706, 807
Միրուման 225
Միրուն 299
Միքայէլ Աչանեցի Ահլիման 389
Միքայել Բաղիշեցի 523
Միքայել Երզնկացի, գրչ. 900
Միքայել Թոխաթցի, գրչ. 45, 833
Միքայել Կեսարացի 806
Միքայել, գրչ. 1, 58, 85, 86, 110, 205, 280, 281, 318, 402, 506, 536, 607, 705, 711, 860, 862
Միքայել (զան.) 1, 85, 111, 170, 188, 191, 228, 229, 258, 280, 291, 292, 316, 328, 342, 347, 351, 370, 384, 388, 389, 414, 420, 461, 484, 517, 532, 539, 551, 567, 594, 606—608, 628, 729, 788, 793, 818, 845, 875, 876, 882, 900
Միքէլ 466
Մխիթար Գոշ (նաև Գօշ) 553, 586
Մխիթար Մշեցի, գրչ. 216, 217
Մխիթար Սեվանեցի 712
Մխիթար, գրչ. 247, 521
Մխիթար (զան.) 7, 23, 43—45, 141, 144, 176, 177, 179, 217, 302, 315, 350, 427, 461, 464, 478, 497, 509, 522, 549, 581, 663, 664, 666, 727, 741, 764, 768, 769, 776, 816, 826, 846, 868, 884
Մկրտիչ Լէհցի, գրչ. 860
Մկրտիչ Հապըրմանցու որդի 527
Մկրտիչ Նուռնուսեցի 193
Մկրտիչ Տաթևացի 255
Մկրտիչ, գրչ. 28, 85, 89, 124, 170, 212, 354, 448, 621, 680, 727, 837, 944, 945
Մկրտիչ (զան.) 10, 19, 29, 35, 53, 65, 69, 71, 73, 80, 81, 92, 103, 119, 192, 211, 213, 215—217, 228, 231, 234, 235, 239, 243, 244, 250, 257, 267, 271, 276, 296, 298, 305, 332, 333, 342, 355, 364, 365, 373, 389, 391, 394, 402, 408, 423, 424, 426, 435, 466, 486, 495, 497, 499, 501, 502, 511, 527, 538, 555, 556, 581, 582, 586, 587, 593, 598, 614, 620, 658, 667, 668, 681, 684, 695, 699, 701, 707, 727, 729, 730, 748, 750, 708, 769, 776, 790, 797, 799, 854, 874, 878, 881, 917, 919, 923, 948
Մկրտումն 92, 333, 443, 518, 793
Մհամատ 702, 772, 837
Մհամէտ սուլթան 520
Մհէր 495, 766
Մզտեսուն 503
Մնացական 328, 333, 410, 517, 518, 644, 665, 808
Մշկնազ 843, 845, 846
Մոգոս 161
Մոլքում 859
Մոռչեկ 683
Մովսէս Բշնոյ 723
Մովսէս Խոտանացի (նաև Տաթևացի) 6, 553, 710, 886
Մովսէս Խորենացի 139, 364, 887
Մովսէս, գրչ. 30, 228, 230, 488
Մովսէս (նաև Մօսէս—Մուսէս) (զան.) 5—8, 19, 22, 60, 119, 121, 134, 139, 168, 177, 211, 213, 225, 229, 235, 247, 249, 257, 260, 261, 296, 320, 323, 324, 327—329, 373, 379, 382, 390, 402, 434, 448, 477, 481, 489, 493, 520, 537—539, 546, 547, 553, 564, 592, 601—603, 608, 648, 649, 652, 676, 687, 710, 746, 755, 768, 769, 771, 790, 813, 826, 864, 900, 919, 921, 924, 943, 946, 957
Մոզա 349
Մոչան (նաև Մրչան, Մըրչան) 107, 354, 818, 946
Մսըր 19, 26, 113, 246, 411, 555, 576, 628, 714
Մսըրշահ 751
Մսխուտ 574
Մսրիկ 174, 789
Մրաթ (նաև Մրատ) 196, 666, 886
Մրվաթ (նաև Մրուաթ) 230, 299, 302, 451, 463, 591, 638, 777, 823, 941
Մրութ 850
Մուռամ 546
Մութլու 528, 625, 806
Մուլքի 47, 363
Մուլքիչան 708
Մուլքուն 363
Մուհամատ 294, 338, 365, 403, 511, 535, 562, 566, 572, 620
Մուհամմէտ (նաև Մուհամեդ) 367, 613
Մուհիպ 940
Մուհարաթ 223
Մուհուպ 773
Մուզալ 397, 495
Մուգամ 57

Մունաթ 13
Մուշքինար 379
Մուսթուղայ բէկ 561
Մուռն, գրչ. 778
Մուսեղիս 576
Մուրասահ 119, 527, 619
Մուրասէն 858, 956
Մուրաստիկ 18
Մուրատ Ակռնցի 13
Մկրտիչ Սարգիս, գրչ. 484
Մկրտիչ, գրչ. 82, 291, 520, 532, 619, 620, 688, 706
Մկրտիչ (զան.) 10, 16, 46, 49, 51, 82, 196, 228, 234, 253, 265, 272, 277, 292, 301, 302, 307, 318, 326, 329, 354, 361, 408, 448, 480, 482, 486, 491, 517, 521, 555, 583, 595, 599, 601, 605, 634, 654, 668, 675, 683, 689, 691, 694, 697, 700, 714, 720, 749, 781, 825, 837, 940, 941, 946
Մուրատող 485
Մուրատխան 184, 188, 347, 546, 599, 638, 704, 956
Մուրատհասիր (նաև Մորատհասիլ) 443, 654, 655
Մուրատմէլիք 452
Մուրատպալի 47
Մուրատպիքայ 250
Մուրաչան 846
Մուրգաղա փաշա 575
Մուրթուզա խան 691
Մուրթուզաղուլ Գանձակայ 876
Մուրվաթ 210, 222, 242, 276, 329, 491, 535, 632, 689, 690, 773
Մուքայէլ 64, 65, 189, 391, 392, 497, 543
Մուքէլ 347, 413, 858, 862

Յազամաթ 451
Յազուլին 389
Յախիճան (նաև Յախիչան) 10, 684
Յախնազար տե՛ս Հախնազար
Յակոր Ակռնցի 99—101, 266, 271, 294, 365, 511, 667
Յակոր Աստապատեցի 105, 921
Յակոր Արղրումցի (Կարնեցի) 444, 666, 575, 665
Յակոր Բիրումի որդի 42
Յակոր Երզնկացի 36
Յակոր Երևանցի 558
Յակոր Իլովցի 268
Յակոր Լէհցի, գրչ. 161
Յակոր Կամենցի 494, 495
Յակոր Կոզլեցի 938
Յակոր Հայաստանեայց 838, 929, 930
Յակոր Ղրիմեցի 486, 487, 918
Յակոր Մեղապարտ 131
Յակոր Շոռոթցի 827, 934
Յակոր Չէչէպի 665
Յակոր Ջուղայեցի 292, 435, 481, 492, 500, 526, 591, 624, 637, 641, 673, 681, 687, 688, 700, 710, 712, 728, 739, 742, 746, 749, 751, 752, 754, 756, 758, 762, 763, 767, 769, 773, 775, 778, 780, 781, 783, 786—788, 790, 791, 795, 806, 807, 810, 816, 822, 823, 824, 834, 842, 855, 857, 865, 879, 881, 885—888, 893, 905, 917, 918, 927, 928, 933, 936, 938, 941, 942, 945, 948, 953, 957, 959, 962, 963
Յակոր Տիարպէքիրցի 591
Յակոր Տիրիկցի 636
Յակոր, գրչ. 54, 59, 60, 66, 76, 100, 130, 171, 198, 226, 329, 353, 423, 476, 494, 542, 549, 558, 596, 598, 624, 635, 637, 678, 701, 702, 782, 901, 907, 908, 911, 912, 958, 960
Յակոր (գան.) 8, 10, 19, 20, 22—24, 27, 29, 35, 36, 42, 54, 64, 86, 99, 101, 102, 112, 114, 161, 166, 170, 171, 180, 184, 185, 196, 203, 215, 225, 226, 228, 235, 246, 250, 257, 263, 265, 267, 268—271, 280, 281, 292, 295, 304, 313, 317, 320, 330, 344, 349, 350, 363—365, 371, 373, 376, 379, 381, 385, 393, 400, 409, 410, 413, 415, 416, 424, 425, 435—439, 459, 466, 481, 483, 486, 488, 495, 497, 499, 502, 504, 507, 511, 512, 533, 543—545, 550, 564, 568, 583, 591, 595, 597, 598, 614, 638, 641, 650, 651, 653—655, 661, 664—667, 669, 674, 676, 679, 695, 697—699, 702, 712, 719, 723, 726, 733—735, 737, 738, 741, 742, 744—746, 751, 755, 759, 766, 768, 772, 774—776, 779, 780, 782, 794, 800, 808, 813, 823, 826, 828—830, 835—837, 845, 850, 854, 855, 858—860, 870, 871, 878, 881, 885, 891, 900—902, 909, 925, 926, 928, 930, 932, 934, 939, 940, 952, 954, 955, 958—960
Յակորայ 164, 181, 464, 650, 664, 675, 702, 706, 714, 725, 731, 743, 747, 762, 794, 802, 809, 812, 813, 820, 824, 832, 838, 839, 843, 847, 851, 854, 857, 858, 871, 874, 899, 902, 913, 929, 932, 934, 946, 949, 951
Յակորչան (նաև Յակոբեան) (զան.) 19, 61, 68, 88, 119, 188, 189, 313, 314, 427, 476, 501, 517, 548, 653, 699, 787, 821, 877, 907, 932

Յակոբոս 66, 513, 650, 839
Յակովբ 80, 174, 255, 296, 463, 538, 720, 799, 908
Յազուպ 689
Յամամ 301
Յաման 204, 270, 302, 940
Յամասի 497
Յամիկ 645
Յայիզպիքայ 250
Յաննա 189, 298, 450
Յապտուլին 450
Յառաքել տե՛ս Առաքել
Յաւգսէնտ 250
Յաւեախս տե՛ս Ավետիս
Յաւնան, գրչ. 412
Յաւսմ՚ան 702
Յաւրիկ, գրչ. 18
Յարարուց 497
Յարիկ 35
Յարիճան 215
Յարութեն 78, 184, 291, 541
Յարութիւն Սեբաստացի 530
Յարութիւն Սըսցի 109, 110
Յարութիւն Քեաւթահեացի 275
Յարութիւն, գրչ. 109, 111, 129, 530, 770, 780, 788, 846
Յարութիւն (ղան.) 36, 109, 110, 188, 224, 231, 363—365, 384, 411, 419, 447, 452, 478, 518, 568, 597, 619, 654, 721, 739, 771, 774, 889, 901, 902, 955, 956, 960
Յեաւրիխան 956
Յեգկար 546, 547
Յեթար 424, 776
Յեխանիս 302
Յեկան 388
Եղիսափեթ տե՛ս Եղիսաբեթ
Յեզսիկ 68
Յեսայի տե՛ս Եսայի
Յերբահրիմ 134
Յերիք 859
Յերղուլի 960
Յերոգարշեն 166
Յէայլաբէկ 424
Յեբաթ 250
Յէմին տե՛ս Էմին
Յէրապետ տե՛ս Հէրապետ
Յիշխան 744
Յիպրահմեկ 739
Յիսախան 187
Յիսաղուլու 431
Յիսայ 15
Յիսրաեղ 555
Յիսուս 400
Յիսուփ Սակալուայ 606
Յլղաթ 81
Յոհան, Յովհան, Յովան
Յոհան Առշընեցի 523, 602
Յոհան Երուսաղեմայ 85
Յոհան Երեանեցի 523
Յոհան Ըստամպոլցի 268
Յոհան Կարճաւանցի 252, 492, 756, 864, 865, 933
Յոհան Հիզանցի 226, 227, 269, 321, 366—368, 393, 394, 577, 735, 841, 842
Յոհան Մանդակունի 82, 277, 572, 685, 954
Յոհան Ոսկիբերան 505, 937
Յոհան Որոտնեցի 869
Յոհան Տաթևացի, գրչ. 711
Յոհան, գրչ. 277, 317, 330, 401, 408, 412, 530, 553, 605, 673, 835, 859, 865, 886, 888
Յոհան (ղան.) 7—10, 15, 31, 38, 73, 74, 80, 132, 136, 170, 182, 184, 228, 231, 262, 280, 316, 318, 367, 375, 377, 379, 389, 424, 436, 440, 443, 452, 498, 502, 552, 553, 556, 587, 591, 597, 598, 605, 654, 655, 674, 680, 682, 700, 718, 733, 750, 774, 776, 813, 823, 839, 856, 860, 872, 885, 886, 891, 901, 959
Յոհանէս, Յոհանիս, Յոհաննէս
Յոհանէս Անկուրցի 89
Յոհանէս Եղընկացի 126, 430
Յոհանէս Երուսաղէմայ 896
Յոհանէս Երևանցի 587
Յոհանէս Խիզանցի 457
Յոհանէս Մշեցի, գրչ. 964
Յոհանէս Շնքշեցի 470
Յոհանէս, գրչ. 225, 251, 300, 391, 405, 498, 557, 579, 581, 587, 865, 914
Յոհանէս (ղան.) 4, 8, 14, 22—24, 30, 41, 45, 96, 106, 108, 109, 120, 122, 137, 174, 195, 196, 213, 228, 257, 262, 263, 265, 271, 300, 319, 332, 338, 347, 349, 354, 366, 368, 387, 388, 405, 414, 423, 433, 454—455, 457—459, 463, 480, 497, 498, 515, 547, 553, 557, 564, 575, 582, 599, 600, 603, 654, 660, 675, 680, 710, 731, 734, 770, 780, 787, 794, 817, 818, 821, 833, 881, 885, 889, 896, 915—919, 923, 927, 934, 953
Յոհաննեան Նարվերոյ 688
Յոհանշան 658
Յոնոփրիոս 599
Յովակիմ, գրչ. 224, 519, 629
Յովակիմ (ղան.) 333, 459, 478, 519, 520, 630
Յովան Բերկրու 606

Յովան, գրչ. 534, 781
Յովան 748
Յովանէս, Յովաննէս
Յովանէս Աղան 737
Յովանէս Արճիշեցի 678
Յովանէս Գառնեցի 40, 116, 337
Յովանէս Եզէգէցի 112, 113
Յովանէս Լէհցի, գրչ. 703
Յովանէս Կարմիր էաՀուս 362, 498
Յովանէս Հնդանցւոյ 75
Յովանէս Ղրեցի 221
Յովանէս Ղութեցի 75
Յովանէս Մշեցի 223
Յովանէս Մոկացի 38, 453—455, 457
Յովանէս Նախիչևանցի 527
Յովանէս Շնքուշեցի 784, 894
Յովանէս Շոռոթեցի, գրչ. 340, 527
Յովանէս Պլուզ 466
Յովանէս Ջուգացի 793
Յովանէս Վանեցի 457
Յովանես Ուկզվանցի 864
Յովանէս, գրչ. 65, 72, 78, 118, 177, 211, 249, 258, 263, 278, 315, 348, 362, 378, 420, 469, 472, 505, 512, 551, 557, 558, 575, 611, 614, 628, 633, 634, 676, 696, 700, 723, 749, 759, 769, 773, 808, 809, 812, 815, 816, 827, 829, 875, 891, 943
Յովանէս (զան.) 2, 7, 15, 18, 19, 21, 24—27, 29—31, 36, 49, 52, 61, 63, 66, 70, 78, 79, 91, 92, 102—107, 109, 111—113, 119, 122, 133, 137, 142, 173, 174, 177, 179, 183, 184, 188, 189, 214, 219, 222, 223, 227, 228, 237, 240, 248—250, 264, 265, 267, 275, 280, 286, 289, 291, 294, 298—300, 302, 315, 330, 332, 349, 354, 357, 358, 360, 364, 365, 369, 373, 374, 378, 387, 388, 391, 394, 396, 397, 398, 411, 413, 426, 440, 443, 449, 452, 456, 458, 462, 463, 471, 480, 483, 486, 493, 497—499, 508—513, 517, 521, 527, 528, 533, 543, 562, 564—566, 572, 583, 588, 594, 599, 607, 610, 613—615, 641, 645, 658, 660, 661, 664, 675, 677, 678, 682, 683, 697, 699, 707, 713, 714, 718, 723—725, 728, 730, 734, 736—738, 741, 747, 748, 750—752, 754, 764, 770, 776, 782, 792, 793, 806, 808, 809, 818, 826, 828, 830, 831, 833, 840, 845, 849, 853, 858, 859, 861, 863, 864, 875, 881, 884, 892, 900, 906, 921, 923, 926, 927, 941, 946—949, 951, 952, 959, 960
Յովանէսք 502
Յովանիս, Յովաննիս
Յովանիս որդի Աշուղի 950
Յովանիս Ջաշոոնացի 535
Յովանիս Թուխայ 22
Յովանիս (զան.) 15, 38, 49, 112, 114, 176, 178, 213, 279, 280, 282, 300, 301, 309, 329, 333, 432, 447, 459, 462, 474, 497, 508, 511, 546, 548, 549, 551, 555, 625, 627, 628, 636, 645, 653, 660, 677, 684, 748, 749, 824, 826, 837, 868, 875, 876, 885, 929, 940, 943, 945, 949, 951, 954, 959, 963
Յովանշան 88, 713
Յովանց 315
Յովանց Ղրիմեցի 259
Յովասափ Ապարանցի 763
Յովասափ Սեբաստացի 25
Յովասափ Վանեցի 503
Յովասափ, գրչ. 479
Յովասափ (զան.) 1, 75, 82, 103, 228, 309, 310, 354, 366, 413, 443, 451, 464, 497, 592, 658, 708, 738, 744, 778, 826, 920, 942
Յովիկ Ղրեցի 183
Յովհան Լեհացի, գրչ. 88
Յովհան 464, 677, 787, 828
Յովհաննէս, Յովհանէս, Յովհանիս
Յովհաննէս Ակնեցի 376, 523
Յովհաննէս Թլկուրանցի 419
Յովհաննէս Խիզանցի, գրչ. 161
Յովհաննէս Համթեցի 239, 412
Յովհաննես Կարբեցի 923
Յովհաննես Կարնեցի 750
Յովհաննես Ղարասուրցի 748
Յովհաննէս Մուղնեցի 58, 523, 790
Յովհաննէս Շոռոթեցի 565, 570, 596, 833
Յովհաննէս Սիւնեաց 754
Յովհաննէս Քարմատաննց 379, 414
Յովհաննէս, գրչ. 77, 360, 361, 370, 435, 446, 581, 682, 689, 832, 843, 875, 926, 937, 957, 962
Յովհաննէս (զան.) 9, 24, 45, 60, 73, 77, 114, 123, 131, 193, 196, 211, 228, 237, 239, 276, 288, 291, 314, 317, 333, 357, 369, 371, 376, 378, 392, 396, 404, 409, 410, 494, 495, 499, 508, 509, 514, 528, 537, 539, 540, 556, 557, 585, 590, 599, 603, 611, 626, 661—663, 673, 679, 682, 690, 708, 734, 748, 763, 765, 767, 770, 778, 791, 810, 819, 824, 834, 888, 843, 876, 880, 902, 923, 927, 936, 949, 953, 957, 958
Յովնան 239
Յովսեփ, գրչ. 451, 525, 711

63—277

Յովսեփ (նաև Յովսար, Յովսէպ) 45, 78, 92, 134, 142, 196, 215, 256, 307, 309, 329, 373, 379, 384, 385, 399, 411, 418, 452, 498, 526, 529, 555, 557, 592, 653, 690, 696, 716, 717, 724, 734, 739, 746, 766, 878, 884, 902, 904, 923, 932, 933, 942, 946, 951
Յորդանան 53, 446, 946
Յոբստաքէս տե՛ս Արիստակես
Յոուի 201
Յուլիան 951
Յուլիանոս 482
Յուլուպխան Յերևանցի 703, 772
Յուլուպխան 587, 686
Յուղիտա (նաև Յուդիտէ) 92, 212, 332, 387, 405, 571, 596, 673, 923, 960
Յուղիտա Գուլնաբաթ՝ 905
Յունան, գրչ. 98, 322, 862
Յունան (զան.) 66, 239, 240, 318, 389, 685, 739, 953
Յուռոմսիմէ 859
Յուսէին 135
Յուսէփ 23, 196, 228, 495, 497, 557, 606, 638, 734, 797, 869, 870
Յուսիկ, գրչ. 308
Յուսիկ 12, 35, 36, 315, 561
Յուսկայ 308, 950
Յուստիան 256, 267, 332, 333, 348, 495
Յուսուփշայ 467
Յուրիխան 809, 941

Նաբատ (Նապաթ) 174, 842
Նաղազ 738
Նազախ 372
Նազար Հիզանցի 910, 911
Նազար Մրչուացի 920
Նազար (նաև Նզար) (զան.) 49, 171, 174, 175, 199, 200, 276, 307, 339—341, 348, 384, 399, 410, 496, 497, 535, 555, 576, 632, 720, 739, 756, 757, 769, 807, 811, 838, 857, 868, 905, 906, 920, 921, 923, 927, 947
Նազարրէկ 678
Նազարեթ, գրչ. 645
Նազարէթ (զան.) 313, 314, 384—386, 391, 392, 518, 571, 596, 757
Նազէրթ 932
Նազիկ 595
Նազին 413
Նազիֆար (նաև Նազեֆար) 135, 488, 941
Նազու (զան.) 302, 316, 342, 379, 478, 528, 562, 625, 632, 639, 706, 707, 711, 712, 732, 737, 806
Նազուխան (զան.) 173, 182, 184, 188, 262, 339—341, 413, 535, 663, 667, 700, 718, 741, 824, 875, 956
Նագլում 636, 738
Նազում 351
Նախշում (նաև Նրխշում, Նզշում, Նշխում) 191, 406, 463, 496, 576, 713, 837, 859, 884
Նահապետ 176, 232, 433, 480, 583, 598, 649, 650, 660, 877
Նաղաշ Մաղսուտ, գրչ. 681
Նաղաշ (նաև Նզաշ) 463, 582, 730
Նաճաֆ խան 917, 918
Նաճաուզուլի խան 78
Նամղալայ 620
Նայիպշէն 270, 557
Նանա 68, 184, 302, 443
Նանայգուլի 15
Նանաշան (նաև Նանաճան) 191, 452, 809, 953, 961
Նանաս 45
Նանէր 506, 507
Նանի 184, 744, 755, 771, 940
Նանիկ 313, 906
Նանուխ 813
Նաշխարգուլու 706
Նապիշան 836
Նաջափղուլու 775
Նառլու 335
Նառխաթուն 592
Նաումելիք 29, 452
Նաուվաւզ 172
Նասիպ 793
Նասղիտէ 609
Նասպաթ 638, 734, 746
Նասառխնայ 130
Նասումփաշ 388
Նաւասար 73
Նաւասարդ 103, 242, 406, 497, 555, 567, 770
Նաւբոուզ 253
Նատիրխան 897
Նարեկացի 44
Նարին 638
Նարինշ 196, 347, 497
Նարխաթուն 466
Նարկուլ 342
Նաֆաս 667
Նիկոկ 723
Նեղոս 758
Նեպի 290
Ննստոր 790
Ներդիզ 196, 463, 946
Ներսես տէր Արբենից 606

Ներսես Լամբրոնացի 22, 95, 213, 347, 400, 530, 866
Ներսես Կիլիկեցի 93, 456, 562, 572, 620, 670
Ներսես Կլայեցի (Շնորհալի) 126, 163, 400, 503, 525, 711
Ներսես Հայաստանեայց 94
Ներսես Հռոմկլացի 73
Ներսես Մոկացի 537
Ներսես Սեբաստացի 138, 268, 376, 523, 535, 572, 651
Ներսես Սրսայ 367, 368, 378, 577
Ներսես Տաթևացի 429, 523
Ներսես, գրչ. 166, 369, 478, 594
Ներսես (զան.) 6, 36, 72, 73, 92, 95, 113, 114, 122, 124, 126, 139, 140, 165, 175, 177, 178, 196, 205, 210, 211, 229, 280, 302, 324, 327, 338, 344, 346, 360, 361, 373, 379, 381, 388, 390, 399, 400, 415, 463, 467, 468, 477, 497, 520, 521, 538, 561, 566, 572, 582, 588, 595, 603, 608, 620—622, 626, 634, 645, 658, 661, 664, 680, 696, 723, 724, 728, 734, 737, 740, 741, 768, 769, 771, 824, 830, 833, 843, 847, 887, 946, 957
Ներսէսյան 468
Նըսրաթ 174
Նիկար (Նիկար) 555, 632
Նիզոզ 689
Նիկոլ Տոմաժիրսքենց 703
Նիկոլ, գրչ. 751
Նիկոլ (Նիկոլ) 68, 689, 858
Նիկողայոս (նաև Նիկողոս, Նեկաղոս, Նիկաւ-զոս, Նիկողաս) (զան.) 12, 122, 123, 134, 168, 184, 185, 187, 188, 205, 211, 228, 233, 246, 247, 281, 287, 289, 357, 358, 375, 397, 398, 421, 460, 478, 480, 523, 527, 534, 598, 599, 603, 604, 670, 757, 773, 774, 778, 783, 791, 882, 892, 927, 941, 961, 962
Նիկողայոս, գրչ. 167, 252, 275, 286, 355, 356, 397, 427, 428, 448, 504, 552, 559, 560, 610, 668—670, 713, 715, 724, 725, 731, 761, 804, 805, 807, 874, 934, 935
Նիկողայոս Թորոսեանց, գրչ. 209, 935
Նիկողայոս Թորոսով 751
Նիկողայոս Ջալապի 239
Նիւատղա 120
Նոյ 606
Նոյեմ 832
Նոպաթ 418
Նորանշայ 533
Նորատունկ (Նորտունկ), գրչ. 53, 124, 870
Նորատունկ Հռոմկլացի 870
Նորատունկ 86
Նոբի 57
Նորիկ 35, 425
Նորխաթուն 83
Նորհատ, գրչ. 643
Նորհատ Մարզուանցի 853, 854
Նորհատ 184, 854
Նորպարոն 592
Նորսիկ 124
Նոնահատ 111
Նսէֆ (նաև Նըսէֆ) 307, 310, 329, 458, 507, 773, 774
Նուինճան 424
Նուղի 607
Նունիկ 347
Նունի 838, 961
Նունուֆար (Նունիֆար, Նենուֆար) 204, 425, 452, 463, 788, 825, 956
Նուպար (Նուբար) 237, 299, 301, 347, 509, 576, 606, 725, 739, 765
Նուռ 51
Նուրաստան 945
Նուրբէկ 727, 728
Նուրի 57, 170, 816
Նուրիխան 1, 67, 106, 503, 671, 774, 800
Նուրիկ 70, 178
Նուրիճան (Նուրիչան) 88, 119, 388, 424, 609, 667, 741, 872
Նուրխան 849
Նուրմուղ 790
Նուրպիքայ 246
Նուրում 373, 555, 956
Նուրփաշ 689

Շաբան 539, 768
Շաղատայ 100, 101, 271, 364, 495, 743
Շալլուք 101, 172, 237
Շալու 28
Շախաղ (նաև Շահաղ) 69, 307, 507
Շախբէկ (նաև Շահբէկ, Շահպէկ) 106, 123, 939
Շախնիգար 69
Շահ 19, 26, 651, 827
Շահազիզ 948
Շահան 849
Շահանդուխտ 52, 276, 875
Շահաստան 533
Շահատան 161
Շահբար 583
Շահզաման 305, 440, 792, 941
Շահղատ 120, 164, 184, 316, 521, 845, 846, 849
Շահղատա 161, 349, 365, 511, 728, 790, 948

Շահզատէ 88, 305, 316, 317, 360, 384, 607, 715, 790, 816, 948
Շահիկ 555
Շահինար 592
Շահիշան 748
Շահխաթուն 119
Շահղուլ 354, 548
Շահմանանգ 379
Շահմանուկ 184
Շահմէլիք 88, 452, 949, 950
Շահնազար 45, 173, 213, 276, 526, 636, 720, 897
Շահնավազ խան 876
Շահնէզ 879
Շահնիկար 811
Շահնիս 119
Շահնուազ 952
Շահպաղ տե՛ս Արաս
Շահպակ 953
Շահպանտ 173
Շահպարոն 354, 355, 721
Շահպուլ 464
Շահվալաթ 119
Շահվատէ 121
Շահվելոնց 846
Շահվէրտ 354, 720
Շահսուար 262, 737
Շահսուլթան (Շահսուլթան) 239, 262, 316, 426, 507, 573, 849, 956
Շահրի 249, 567, 611
Շահրիար 696, 749
Շահրիման 845, 846
Շահրիստան (նաև Շահրստան) 114, 214, 396, 528, 806, 825, 948, 963
Շահրիստան Ճահկեցի 871
Շահում (զան.) 14, 19, 45, 98, 196, 440, 550, 626, 628, 629, 783, 875, 892, 940, 944
Շահումաղ 257, 262, 488
Շահումազէ 192, 374, 598, 613
Շահուն 452
Շահփաղ 114, 184, 923
Շաղակաթ 273
Շաղաւաթ 196, 302
Շաղատայ 267, 614
Շաղզաղ (նաև Շաղզատ, Շաղզայտ) 22, 176, 409, 940
Շաղիկ 562, 799
Շաղպաթ 623
Շաղուպաթ (նաև Շաղուբաթ) 70, 176
Շամայ փաչա 842
Շամամ (զան.) 235, 300, 310, 354, 413, 626, 940
Շամանդուխտ 384
Շամլու, գրչ. 116, 324, 346
Շամլու (զան.) 330, 516, 520, 615, 684, 691, 695, 696
Շամխաթուն 342
Շամշէ 480
Շամու 462
Շամօ 720
Շայում 176, 299, 447, 509
Շափգար 859
Շանզէն 28
Շատարև 221, 305
Շատլուղ 201
Շարաֆ 35, 480
Շարբաթ (նաև Շարպաթ) 10, 507, 658, 764, 945
Շարխաթուն 184
Շարուր 606
Շաքար 262
Շաքարբեկ 120
Շաքարպիքայ 19, 20
Շեխեկ (նաև Շեխիկ) 748
Շեխիշան (նաև Շեհիշան) 447, 939
Շեխում 57
Շահղատ 913
Շեհրի 250, 275, 816
Շեհրիստան 625
Շեհրիսլիքայ 349
Շէմի խաթուն 195
Շէրբէկ 300, 454, 455
Շեխիճան (նաև Շեխիշան) 225, 684
Շիրաղ 641, 717, 951
Շիրան 884
Շիրաք 105, 175, 177, 273, 576
Շիրին (զան.) 135, 327, 357, 384, 510, 518, 689, 728, 828, 880
Շիրինբեկ 120
Շիրինպաճ 868
Շիրինսլիքայ 248, 288
Շիրվան 161
Շիրօ 666
Շղի 301
Շղիսապետ 440
Շմաւոն, գրչ. 865, 944
Շմաւոն (զան.) 316, 491, 493, 517, 630, 659, 660, 664, 870, 871, 945, 946
Շնահաւոր (տե՛ս Շնաւոր, Շնորհաւոր—Շնհաւոր) 31, 178, 239, 250, 276, 388, 432, 507, 571, 596, 673, 768, 776, 953
Շնոյֆի 184
Շողակաթ 463
Շոֆրա 141
Շրվանշէ 932

Շուշան (զան.) 31, 88, 119, 123, 133, 234, 247, 298, 370, 392, 446, 466, 476, 622, 658, 678, 684, 729, 739, 763, 791, 792, 850, 858, 961

Ոհան (զան.) 122, 318, 372, 384, 438, 653, 721, 777, 811, 877
Ոհան Ծուղեցի 242, 244
Ոհանէս տե՛ս Յովանէս
Ոհանջան 332, 333
Ոնոփրիոս, գրչ. 50, 134
Ոնոփրիոս 228, 251, 317, 558, 596—598, 643, 882, 953
Ոնոփրիոս Լեհցի 524
Ոսէփ տե՛ս Յովսեփ
Ոսկան, գրչ. 8, 58, 73, 93, 694, 695
Ոսկան (Օսկան) (զան.) 3, 18, 74, 231, 374, 384, 410, 431, 468, 534, 543, 546, 591, 598, 667, 675, 738, 778, 809, 811, 823, 833, 875, 917, 952
Ոսկան Դաստիակցի 430
Ոսկան Երևանցի 750
Ոսկէբերան 98, 206
Ոսկէհաա 276, 480, 849, 963
Ոսկէտունկ 591
Ոսկի (զան.) 175, 286, 298, 335, 342, 406, 480, 535, 607, 696, 736, 821, 945
Ոսկիան Բաղիշեցի 964
Ոսկիխատ (Ոսկիհատ) 606, 683, 881
Ոսկիծաղիկ 468, 530
Ոսկիտատիկ 200, 460, 808, 809
Ոսկյան Հ. 86, 97, 122, 233, 627, 690
Ոստիան 335
Ովանէս տե՛ս Յովանէս
Ովանէս, գրչ. տե՛ս Յովանէս գրչ.
Ովանիս տե՛ս Յովանիս
Ովանիս Զաշոնացի տե՛ս Յովանէս Զաշոնացի
Ովասափ տե՛ս Յովասափ
Ովթանտիլ 27—29
Որդանան 697
Ուրուրփան 10

Զաման 215
Զամչյան Մ. 319
Զարուխ 850
Զարուխբաբա 845
Զենար 962
Զինար 555, 719
Զինի 16
Զինիխան 421, 771
Պաղէկ 684
Պալախշին (նաև Պալաշխին) 1, 953
Պալասան 461, 718, 759, 771, 776, 909, 947
Պալէ 462, 480, 528, 625, 746
Պալի 47, 229, 286, 357, 418, 517, 638, 653, 734, 746, 806
Պալիաղաշան 903
Պալյան Տ. 838, 839
Պակէ 281, 464
Պակի 588
Պակիճան 749
Պակուրից 397
Պահալու 754, 949, 963
Պահատուր 335, 480, 764
Պահար 246, 649, 849
Պահրէ 114
Պահրիխան 276
Պահրիկ 480
Պաղին 256
Պաղշին 129, 243
Պաղչեկ 774
Պաղտասար Կամխցի 171
Պաղտասար Հրզուեցի 460
Պաղտասար Ջուզայեցի 55
Պաղտասար (զան.) 10, 46, 47, 53, 101, 135, 173, 174, 197, 262, 267, 272, 302, 357, 384, 389, 397, 460, 464, 493, 495, 517, 528, 602, 620, 622, 725, 782, 827, 853, 875, 944, 947
Պաղտատ, գրչ. 171
Պաղտատ (զան.) 210, 229, 376, 450, 682, 770, 824
Պաղտոստ Ջառուցի 116
Պաճի 602
Պայազիթ 173
Պայանդուր (նաև Պայընդուր, Պայինդուր) 173, 411, 486, 947
Պայրամ 16, 222
Պայրամլիկ 26, 111
Պաշարաթ 431
Պապ 14, 35, 114, 135
Պապ Սերաստացի 323
Պապախան 71
Պապաճան 262, 462, 664
Պապայ 918
Պապա(ն) 174
Պապաս 909
Պապասու 759
Պապաք 952
Պապէն 411, 771, 897, 947
Պապիկ 298, 517, 658
Պապին 720, 737, 771
Պապկէն 302
Պապուկ 592, 625
Պտպուն 366
Պառապ 116

Պատուական 46, 682, 789
Պատիր 776
Պատօնաշուքի 876
Պարանամ 369
Պարասկև 132
Պարաքիաս 406
Պարխուտար 379, 432
Պարոն 53, 418, 668, 746, 952
Պարոնիաթուն 188
Պարոնքայ 880
Պարսամ Ծլղաթի 81
Պտրսամ, գրչ. 350, 462
Պարսամ (ղան.) 19, 20, 196, 230, 259, 378, 462, 463, 514, 543, 658, 667
Պարուք 57, 806
Պաւախ 601
Պաւղոս, գրչ. 108, 109
Պաւղոս (ղան.) 121, 122, 177, 281, 295, 298, 323, 360, 369, 680, 715, 769, 836, 847, 942, 961, 962, 964
Պաւրանեի 110
Պաքթամուր 696
Պաքթայ բեկ 28
Պետրոս Խանձկեցի 103
Պետրոս Կառկառեցի 470
Պետրոս Զիդ 808, 809
Պետրոս Ջուղայեցի 133
Պետրոս Սրսայ 523
Պետրոս, գրչ. 224, 306, 346, 375, 392, 409, 440, 460, 461, 464, 528, 576, 618, 718, 734, 752, 851, 853, 869, 907, 939
Պետրոս (ղան.) 1, 10, 19, 46, 56, 57, 68, 76, 88, 103, 119, 133, 136, 142, 144, 161, 184, 188, 189, 191, 193, 196, 206, 212, 216, 222, 226, 233, 234, 260, 261, 298, 314, 324, 347, 351, 381, 384, 396, 404, 411, 440, 444, 448, 449, 452, 460, 461, 462, 465, 467, 472, 474, 493, 497, 502, 515, 516, 521, 530, 534, 543, 548, 561, 577, 580, 593, 594, 599, 602, 606, 614, 618, 627, 632, 638, 659, 661, 664, 671, 672, 681, 684, 687, 691, 695, 697, 699, 704, 715, 717, 726, 727, 744, 745, 752, 773, 775, 780, 788, 809, 810, 815, 816, 820, 826, 832, 852, 854, 865, 868, 870, 871, 876, 880, 883, 887, 888, 906, 923, 932, 938, 940, 944, 950, 961, 962
Պեղիզէ 959
Պենկլի 714
Պեժան 28, 85
Պէժի 217
Պէկի 751, 788
Պէկիխան 173, 421
Պէկլէր 124, 751, 930
Պէկնազար 771
Պէկում 759
Պեհատ 592
Պէհրէ 910
Պեյմելիք 610
Պիլօր 235
Պիճո 384
Պիրհազիզ 445
Պիքալխի 111, 880
Պիքաշայ 874
Պլպուլ 576
Պլուզ 430
Պխկէ 300
Պղատոն 141
Պղնձա 70
Պոզարյան Ն. 419, 563
Պոշ 19
Պստիկ 273
Պտում 424
Պրեխորոն 954
Պուկտան 858
Պունեաթ 819
Պուտախ 425, 574
Պուտախ Սրսցի 350
Պօղոս Ագուլեցի 75
Պօղոս Այրարատցի 548
Պօղոս Թանդրիվէրմիշ 632
Պօղոս Կտուցեցի, գրչ. 683
Պօղոս Ջուղայեցի, գրչ. 281, 618, 619
Պօղոս Վարազայ 778, 890, 891, 962
Պօղոս Ուրհայեցի, գրչ. 953
Պօղոս Փաշաեան 732
Պօղոս, գրչ. 265, 298, 407, 547, 680, 864
Պօղոս (ղան.) 8, 10—12, 19, 34, 35, 46, 53, 56, 64, 86, 88, 89, 92, 108, 112, 113, 115, 119, 132, 142, 173, 189, 232, 233, 240, 264, 295, 298, 313, 314, 316, 334, 347, 360, 369, 373, 374, 381, 384, 388, 392, 411, 413, 448, 461, 493, 521, 528, 530, 539, 548, 593, 598, 602, 618, 625, 632, 677, 718, 745, 764, 769, 771, 806, 809, 814, 821, 854, 871, 880, 882, 883, 889, 891, 932, 940, 953, 959, 961
Պօղոսչան 808, 809

Ջալալ 119, 164, 426, 699, 922
Ջահան 676
Ջանաղ 425
Ջանաղիզ 595
Ջանաղ 38, 176, 177, 366, 447, 454, 455, 497, 942
Ջանաղա 176

Ջանաղէն 176, 384, 464, 773
Ջանիրլկ 223, 305
Ջանիկ 546
Ջանիէ 508
Ջանշէն 299
Ջանսալթան 105
Ջանում 14, 632, 957
Ջանփաշ 230
Ջանփուր 374
Ջաշիկ 510
Ջարղալան 335
Ջաֆար 184, 843
Ջիհանշիէ 871
Ջոյար 310
Ջուհար 316, 593, 838
Ջուտկէն 486—488

Ռայիս 298
Ռաւատամ 355
Ռաֆայէլ 196, 593
Ռհան 478
Ռոստոմ (Ռուստամ) Բագրատունեան 85, 354, 720, 876
Ռումէէ 576
Ռու(ս)նիազ 277
Ռուսաակէս (Ռստակէս) 9, 200, 420, 941
Ռուստամ (Ռուադամ) 27, 64, 92, 313, 927, 932
Ռուսուդան 720
Ռոստոմ 607

Սարախ 476, 687
Սաբերան 427
Սաբու 9
Սաղաթխար 174
Սագաղայ 12, 304, 479, 480, 528, 662
Սաթիլմշ 71
Սաթխաթուն 102
Սաթլըղմիշ 744
Սաթոում 744
Սաթում 698
Սալաթ 792
Սալամ 176, 188, 231, 598, 606, 792, 940
Սալարխանում 738
Սալմին 906
Սալշուկ (նաև Սալչուգ) 161, 168, 196, 210, 250, 410, 411, 769
Սալվար 371, 374, 421, 658, 850
Սալվերիխան (նաև Սալվարիխան) 18, 44, 262
Սալվէր 819
Սալիվեար 124
Սալվին 792
Սալվինազ 120, 262, 384, 391, 392, 421, 875
Սախակ 196
Սահակ Բաղիշեցի 76
Սահակ Եղնկացի 685
Սահակ Նոր Երևանի 902
Սահակ Էջմիածնեցի, գրչ. 46
Սահակ Թոխաթեցի, գրչ. 619
Սահակ Կեչառեցի 18
Սահակ Շախսաբանցի, գրչ. 570
Սահակ Պարթև 6, 304, 538
Սահակ Ջուղայեցի 13, 295
Սահակ Վարագեցի 497
Սահակ, գրչ. 17, 32, 118, 143, 171, 192, 203, 257, 380, 381, 467, 485, 513, 584, 806, 811, 814, 834, 907, 942, 962
Սահակ (զան.) 8, 13, 18, 19, 33, 49, 59, 61, 69, 75, 76, 107, 109, 112, 115, 119, 120, 123, 172, 184, 189, 193, 196, 222, 228, 257, 265, 266, 270, 272, 300, 303, 314, 315, 320, 339, 340, 341, 348, 349, 350, 377, 381, 388, 430, 446, 462, 463, 466, 485, 487, 488, 497, 508, 523, 528, 562, 594, 619, 625, 633, 636, 638, 663, 678, 699, 705, 728, 738, 739, 766, 770, 773, 779, 786, 788, 789, 805, 807, 812—815, 819, 825, 827, 832, 835, 850, 877, 878, 895, 932, 940, 947, 951, 960, 961
Սահրատ (նաև Սահրաթ) 431, 591
Սազվար 776
Սամայնփար 118
Սամարխան 831
Սամբրի 530
Սամէլիք 352
Սամոն 793
Սամպար 658
Սամուէլ Անեցի 294
Սամուէլ Բիլուեցի 457
Սամուէլ, գրչ. 779
Սամուէլ (զան.) 343, 363, 435, 780, 946
Սամուրխան 831
Սայապալ 849
Սայիբ 24
Սայիպսուլթան 660
Սանամ 120, 121, 440, 543, 821
Սանդուխ 609, 845
Սանդուխան 215
Սանդուխտ 30, 31, 118, 182, 461, 507, 697, 737, 740, 759, 767, 768, 881, 959, 960
Սաէուէլ 508
Սապահմէլիք 188
Սապրիխան 374, 952
Սապրիկ 658
Սառա, գրչ. 334
Սառա (զան.) 25—27, 35, 61, 80, 116, 142,

166, 175, 238, 260, 267, 271, 291, 334, 345, 364, 365, 451, 495, 511, 583, 592, 614, 633, 737, 739, 788, 815, 835, 853, 938, 941, 948, 956
Սառագի 759
Սառէ 175, 307, 351, 352, 384, 410, 411, 638, 707, 713, 770
Սառիկ, 301, 451, 608
Սաւար 213
Սաւգուլ 654, 655, 667, 854
Սալին 318
Սալլում 66
Սատաղ 265, 314, 823, 846
Սատագէ 845
Սաարիճիհան 85
Սարալախանում 200, 757
Սարալու 443
Սարատ 18, 777, 846
Սարատխան 699
Սարարխանում 811
Սարաֆ 451, 520, 535, 576
Սարգիս Ամթեցի, գրչ. 577, 579
Սարգիս Անմէղուկ 114
Սարգիս Արզրումցի 345
Սարգիս Դսեղցի 269
Սարգիս Եգեսացի 59, 362, 570, 621
Սարգիս Նրեւանցի 425, 426, 518
Սարգիս Ըստամբուլցի 457
Սարգիս Թակրտաղցի 690
Սարգիս Թումանի որդի 491
Սարգիս Լճկեցի 881
Սարգիս Հիղանցի 176
Սարգիս Մարդվանցի, գրչ. 402
Սարգիս Ցալպիցի 458
Սարգիս Ջուղայեցի, գրչ. 705, 706
Սարգիս Սանահին 85, 217, 276, 388
Սարգիս Սարկաւագ 98
Սարգիս Տիգրանակերտցի 804
Սարգիս, գրչ. 234, 236, 557, 599, 613, 629, 657, 667, 775, 794, 819, 835, 878, 883, 947
Սարգիս (զան.) 1, 2, 8, 13, 19, 27, 29, 34, 36, 47, 50, 57, 61, 62, 65, 79, 85, 87, 88, 91, 103, 107, 112, 116, 121—124, 140, 144, 173, 189, 199, 200, 210, 222, 228, 240, 250, 258, 269, 276, 277, 300, 301, 315, 316, 326, 335, 350—352, 355, 361, 370, 371, 389, 392, 393, 402, 410, 421, 422, 424, 426, 440, 445, 448, 450, 457, 461, 463, 466, 477, 480, 484, 486, 488, 491, 495—497, 502, 504, 506, 507, 509, 517, 518, 521, 528, 543, 548, 553—555, 557, 558, 561, 562, 566, 567, 570, 576, 577, 593, 594, 599, 600, 601, 607, 609, 611, 620, 622, 625, 626, 644, 658, 665, 667, 671, 677, 684—686, 690, 699, 704—706, 712, 714, 717, 718, 729, 732, 734, 748, 754, 755, 758, 771, 774, 776, 790, 792, 803, 806, 807, 811, 816, 818, 819, 822, 828, 838, 849, 856, 864, 866, 868, 871, 874, 876, 879, 881, 882, 890, 897, 902, 903, 909, 910, 923, 939, 940, 946, 949, 952, 956, 963
Սարգիսյան Բ. 79, 117, 225, 421, 422, 462, 516, 518, 542, 683
Սարգար (նաև Սարտար) 120, 539
Սարշոշ (նաև Սարխոշ) 549, 840
Սարկաւագ 98, 654, 655
Սարո 318
Սարրայ 110, 459
Սարուխան Շաղպանցի 331
Սարուխան (զան.) 132, 181, 182, 451, 615, 638, 654, 717, 740, 778, 779, 793
Սարուկ 744
Սարֆբրաղ 9, 43, 91, 347, 391, 584, 658, 810, 905, 906, 922
Սարֆբրաղ Ջուղայեցի 63, 64
Սարուպէկ 868
Սուլթանզաա 388
Սալթանխան 667
Սալթանղուլի 508
Սափար 835
Սափեր 764
Սափիր 132
Սափրխան 92
Սափու տե՛ս Աեֆի
Սափուր 92, 658, 927
Սաք 319
Սաքանսին 690
Սաքար 35
Սաքիրի 181
Սաֆար Ամիրասաթենց 738, 811, 812, 856
Սաֆար Ճուղայեցի 199
Սաֆար Մէլիք 175
Սաֆար Ջուղայեցի Բաղար 760
Սաֆար Վանեցի, գրչ. 274, 275
Սաֆար (զան.) 18, 47, 182, 184, 199, 200, 201—203, 225, 228, 384, 406, 611, 620, 649, 696, 712, 713, 738, 756, 757, 790, 800, 807, 814, 820, 821, 857, 900, 905, 920, 922
Սաֆարիս, գրչ. 275
Սաֆարխաթուն 288
Սաֆու 18, 23, 27, 57, 62, 71, 424, 608
Սգելելին 837
Սեբեերիանոս 98

Սեբվիար 635, 879
Սեխնէ 609
Սենեքերիմ Աստուածատուր 495
Սենեքերիմ (ղան.) 73, 182, 250, 273, 409, 496, 752
Սեվլուն 871
Սերան 520
Սերեան 883
Սեֆեր 26, 86
Սելան 43
Սելել 333
Սէթ 61, 62, 68, 269, 270, 558, 577, 758
Սէթ, դրչ. 190
Սէթխան 300
Սէվար 593, 737
Սէվտիխան 868
Սէրվար 737
Սէֆար Նուսիացի
Սէֆերպիքայ 165, 250, 880
Սէֆի 43, 44, 60, 61, 64, 104, 317, 427, 492, 647, 661, 742, 925, 930, 962
Սիամոն 35, 302, 451, 513, 845
Սիարիխան 684
Սիմայ 440, 947
Սիմէոն Ապարանեցի 123, 220, 221, 258, 259
Սիմէոն Բաբերթցի, դրչ. 519
Սիմէոն Դտունեցի 433
Սիմեոն Կիլիկեցի 16
Սիմէոն Ջուղայեցի 37, 391, 433, 452, 537, 581, 793, 886
Սիմէոն Սեբաստացի 82
Սիմէոն Շատախցի 755
Սիմէոն Սրսայ 227
Սիմէոն Դաղենեցի 756
Սիմէոն, դրչ. 254, 814, 908
Սիմէոն (կթղ.) 128, 165, 166, 192, 211, 219, 221, 228, 229, 233, 235, 236, 279, 280, 314, 319, 433
Սիմէոն (նաև Սիմոն) (ղան.) 3, 5, 7, 8, 10, 29, 30, 44, 63, 74, 75, 92, 132, 138, 161, 233, 250, 259, 296, 314, 330, 336, 347, 363, 370, 373, 374, 404, 406, 425, 435, 441, 442, 451, 452, 457, 466, 468, 488, 499, 500—502, 507, 537, 539, 546, 583, 585, 598, 654, 738, 739, 741, 745, 755, 764, 771, 792, 805, 807, 859, 871, 875, 908, 909, 945, 952
Սիմոնխան 374, 593, 594
Սինան 26, 191, 592, 686
Սինափաշա 807
Սինաքարիմ 454
Սինդուխ 607, 609
Սինտուխտ 217
Սիոն 507
Սիլուհի 738
Սիրայն 342
Սիրամարգ 276, 309, 310, 497
Սիրիթուղթ 759, 945
Սիրում 949
Սիրուն 11, 68, 364, 393, 511
Սլէման 465, 686
Սղմէր 91, 373, 384, 513, 585
Սմբատ 539, 659
Սյուրմէյան Ա. 38, 381, 898
Սողոմոն 233, 277, 295, 302, 320, 466, 548
Սողովմէ 57, 333, 424, 568, 678, 792
Սողոմն 658
Սոփի 181, 426
Սպաղատ 374
Սպանգիար 174
Սսիսիլէ 316
Ստեփանոս Ախթամարցի 109, 176, 265, 299, 300, 367, 368, 393, 577, 606, 735
Ստեփանոս Ամասիացի, դրչ. 666, 667
Ստեփանոս Բշնեցի, դրչ. 683
Ստեփանոս Լեհցի 210, 335, 336, 932, 933, 951
Ստեփանոս Մոկացի 41, 42, 457, 523
Ստեփանոս Սամուղենց 502
Ստեփանոս Սիւնեաց 98, 400
Ստեփանոս Վարդապետ, դրչ. 442
Ստեփանոս, դրչ. 199, 251, 265, 277, 331, 345, 499, 646, 905, 911
Ստեփանոս (ղան.) 12, 21, 22, 33, 42, 59, 73, 75, 80, 90, 107, 129, 132, 182, 200, 201, 202, 223, 228, 232, 248, 250, 257, 261, 269, 296, 299, 311, 315, 320, 328, 332, 333, 345, 353, 354, 361, 409, 442, 443, 451, 463, 477, 479, 480, 488, 489, 493, 504, 509, 539, 543, 545, 569, 574, 576, 601, 649, 650, 671, 683, 690, 700, 728, 738, 747, 756, 757, 771, 778, 779, 793, 799, 807, 808, 811, 825, 826, 846, 857, 861, 878, 883, 888, 907, 908, 923, 929, 955, 959, 964
Սրայել 606
Սրապ 68, 884
Սրապիոն Եղեսացի (նաև Ուրհայեցի) 652, 921
Սրապիոն, դրչ. 143, 217, 692
Սրապիոն (ղան.) 29, 73, 85, 143, 176, 182, 355, 390, 409, 463, 522, 653, 853, 946
Սուլէյման 620
Սուլթան (նաև Սոլթան, Սոլթան, Սուլտան, Սալթան) 82, 105, 121, 201, 222, 238, 248, 278, 286, 320, 357, 358, 366, 367,

459, 480, 509, 520, 527, 549, 555, 592, 595, 684, 687, 690, 711, 776, 816, 819, 825, 826, 829, 830, 837, 868, 940, 942
Սուլթանաթ 164
Սուլթանաշէն 136, 223, 403, 888
Սուլթանզադ 120
Սուլթանշահ 72, 611
Սուլթանպէկ 1, 596
Սուլթանապիթայ 250
Սուլթանում 712, 761, 922, 927
Սուլթանփաշ 585, 727, 728
Սուլխան 28
Սուլուխտն 276
Սուհուպատ 888
Սումբատ Ղոնչի որդի 720
Սուշայխան 388
Սուսամ 56
Սուսամբար 759
Սուսին 941
Սուրաթ 592
Սուրահ 554, 599, 600
Սուրի 372
Սուրխաթ 714
Սուրմէն 668
Սուփիէ 961
Սուքիաս, դրչ. 550
Սուքիաս (դան.) 120, 121, 176, 179, 223, 277, 314, 339—341, 347, 348, 411, 606, 689, 739, 766, 826
Սքանդար տե՛ս Իսկանդար
Սեբրիանոս 378
Սելում 664
Սեում 602
Սողկար 431
Սոլթախաթուն 485
Սոլթանպաշ 191
Սոլթանպէկ 571, 672, 673, 686
Սոլթանշան 91, 309, 373
Սոլթանվէլում 807
Սոլթափաշէ 878
Սողրաթ 124
Սոս 193
Սոսնի 77
Սորազան 28

Վաթան 810, 905, 906, 922, 923
Վաթանչան 468
Վալանդեզ 678
Վալատ 430, 431, 602, 712, 713, 761
Վալի 295, 406
Վալիտայ 805
Վահան 31, 685
Վահրամ 126, 369
Վահրամ, դրչ. 60, 425, 558
Վահրամ Բաբունի 245
Վահրատ (զան.) 100, 101, 267, 271, 364, 365, 415, 416, 495, 511, 614
Վայտան 510
Վանական 771
Վանէս 302, 307
Վալէ 916
Վառիկ 256
Վառվառ (Վարվառ) 73, 182, 200, 231, 399, 598, 614, 619, 644, 658, 699, 737, 744, 807, 833, 842, 859, 878, 961
Վառվառ 265, 717
Վառվառա, դրչ. 254
Վասիլ (զան.) 27, 53, 121, 122, 291, 484, 808, 809
Վասիլ, դրչ. 53, 207
Վասիլոս 927
Վասլին 168
Վարազդատ 918
Վարդ 183, 184, 354, 940
Վարդազ 687
Վարդազիպ 774
Վարդամիր 920
Վարդան Բաղիշեցի 729, 731, 802, 898, 899
Վարդան Թանդրիվէրմիշ 632
Վարդան Կիլիկեցի 67
Վարդան Ղարասուեցի 891
Վարդան Ղըրմայեցի 469
Վարդան Տարօնեցի 561
Վարդան, դրչ. 378, 434, 671, 800, 817, 861, 862, 849
Վարդան (զան.) 10, 13, 49, 56, 64, 71, 72, 88, 105, 107, 108, 142, 161, 174, 183, 196, 210, 220, 222, 256, 260, 280, 287, 313, 314, 327, 340, 364, 366, 367, 384, 388, 396, 430, 463, 495, 496, 508, 520, 522, 524, 527, 553—555, 561, 571, 576—578, 592, 596, 599, 600, 607, 630, 631, 632, 636, 655, 658, 664, 666, 672, 683, 688, 718, 723, 730, 736, 748, 776, 797, 801, 802, 805, 824, 842, 846, 855, 867, 872, 877, 878, 884, 899, 900, 919, 923, 932, 934, 936, 937, 945, 963
Վարդանայ 487, 596, 599, 774, 849
Վարդանան 507, 664, 717, 774
Վարդանէ 606
Վարդանէս 354, 597, 792
Վարդանիս, դրչ. 260
Վարդանիս (զան.) 301, 316, 317, 447
Վարդանք 228
Վարդաշահ 801
Վարդարան 464

Վարդարև 184
Վարդեթփ 582
Վարդեն, դրչ. 760
Վարդեն 210, 342
Վարդեա, դրչ. 465
Վարդերես 90, 112, 408, 534, 829, 830, 881, 907
Վարդերես, դրչ. 49, 129, 403, 533, 736, 737
Վարդէծոց 291, 930
Վարդէշահ 562
Վարդէր (Վարթեր) 744, 821
Վարդիթեր 36, 426
Վարդիկ (Վարթիկ) 108, 476, 510, 696, 884, 939
Վարդխաթուն (Վարդհաթուն, Վարթխաթուն) 11, 86, 172, 178, 196, 210, 231, 242, 305, 333, 360, 381, 447, 452, 465, 518, 527, 555, 575, 595, 597, 653, 682, 683, 721, 739, 774, 793, 859, 884, 955
Վարդմանուկ 184, 837
Վարդմելիք 250
Վարդպակ 194, 329
Վարպետ 456
Վարպետ Մշեցի 457
Վարդցաւղ 194
Վարդուհի 767
Վարդումն 410, 957
Վարդուրախ 194, 329
Վտրդեան 418, 661, 746
Վարոյ 220
Վարթեր 265
Վէխ 689
Վէլիխան 741
Վելիճան 103, 119, 133, 298, 424
Վէլոսմ 421
Վլաս 421
Վլդան 827
Վլատիսլավ 85, 122, 180, 197.
Վրդանէս (Վրթանիս, Վարթանէս) (զան.) 9, 23, 67, 83, 117, 118, 254, 300, 464
Վրդանէս, դրչ. 671, 881

Տաթուն 27
Տալի Հուսէ փաշա 514
Տալվաթ 595
Տամուր 85
Տաշյան Հ. 453, 534
Տատ 408
Տատիկ 43, 686
Տատկում 313, 314, 713
Տատում 333
Տատուր 234, 276, 418, 480, 638, 734, 746
Տատս 534, 566
Տարաճան 28
Տարման 677
Տարվէշ 450
Տարվիշ 452
Տաւիլ 423
Տաւէթ 233
Տաւնապետ 228, 514
Տամաւադ 696
Տանիկ 342, 451, 456, 635
Տանմազ 217
Տամա 116
Տաշիկ 592
Տաւուք 558, 737
Տեր-Ավետիսյան Ս. Վ. 44, 332, 406, 797, 858
Տերպապայ 19
Տերուն Ջուղայեցի 118
Տէտէ 819
Տէրեճան 174
Տէրոն (զան.) 18, 71, 103, 182, 410, 427, 476, 508, 744, 764, 854
Տէրտէր 410, 411
Տէրուն 103, 835, 852, 868
Տիլան 221, 250, 410, 838
Տիլաք 576
Տիլպար 739
Տիկին 763
Տիպալ 592
Տիպար 194
Տիրայր 35
Տիրան 918
Տիրատուր, դրչ. 358, 806, 910
Տիրատուր (զան.) 116, 135, 328, 332, 333, 394, 424, 451, 476, 517, 867
Տիրուհի 320, 711, 790, 837
Տովլէթ 327
Տրդատ 490, 918
Տրխիէ 960
Տրխուն 510, 884
Տուլվաթ 480
Տուտիկ 513
Տուտում 371
Տուրմիշ 217
Տոլան 548
Տոլվաթպիքա 397
Տոլվէթ 93, 880
Տոլվէթ Եւդոկիացի 93
Տոնապետ, դրչ. 345
Տոնապետ 740
Տոնիկ, դրչ. 97, 954
Տոնիկ (զան.) 456, 528, 634, 806
Տոստազ 485

Ռտրնտ 247
Ռոհիճան Վանեցի 785, 984

Ցողինար 687

Ոլպաղայ 318
Ուպաղան 886
Ուլիան 309
Ուլսխաթուն 184
Ուլուխալա 466
Ուլուխան (զան.) 189, 374, 507, 613, 617, 676, 776
Ուլումպէ 761 959
Ուղիդա (Ուղիտա) (զան.) 213, 333, 394
Ուղիդէ 191, 491, 961
Ուղիտիկ 166
Ուղրիսօլթան 593
Ուզուրլու 528, 625, 654, 806, 878
Ուզուրսօլթան (Ուղուրսալթան) 184, 188, 388
Ումաիխան 136
Ումար 836
Ումիտ 602
Ումրշաա 424
Ուսումրէկ 835
Ուսէպ 599
Ուսիկ 111
Ուսլու 671
Ուսկան 675
Ուստիան, գրչ. 555
Ուսիտան 85, 225, 264, 265, 339—341, 410, 552, 556, 608, 654, 655, 737, 744, 773, 824, 826, 872
Ուքուաար 76
Ուրուղլու 821
Ուրուֆէն 535

Փաթան 341, 424, 878
Փալաքնաղ 775
Փաղին 15
Փաղչան 302
Փանոս (զան.) 45, 92, 177, 224, 235, 250, 253, 273, 298, 486, 606, 622, 684, 713, 741, 761, 814, 833, 835, 837
Փաշա 528, 625, 715, 806
Փաշաբէկ 396, 792
Փաշապակ 135
Փաշաճան (Փաշաչան) 41, 732
Փաշամ 161
Փաշեկան 848
Փաշէն 411
Փաշիկ 161, 455
Փաշին 38, 177, 354, 454, 725
Փաշուկ 480
Փառանձին 878
Փառանձիք 686
Փառասէր 121
Փարաղամ 463
Փարաս 314
Փարասխան 88
Փարեհան 173
Փարիզաա 256
Փարիխան (զան.) 88, 203, 204, 248, 268, 460, 658, 684, 766, 775, 878
Փարին 103, 413, 472, 567, 638, 668, 740, 755, 764, 771, 776
Փարսադան 143
Փարվար 184, 233, 474
Փարուն 449, 659, 776
Փերաւժ 640
Փեվրոն 307
Փէրիխան 530, 638, 913
Փէրոզ 942
Փըրքամալ 645
Փիանդէ 424, 593
Փիրօ 720
Փիլիկ Ուակուտարցի 833
Փիլիպոս (նաև Փիլիպպոս, Փիղիպոս Աղրակեցի, կաթողիկոս Հայոց) 2, 5, 6, 8, 9, 14, 18—20, 22—24, 28, 33, 43, 44, 47, 51, 52, 56, 57, 59—64, 67, 71, 74, 75, 81, 83, 85, 86, 89, 91, 93, 94, 97, 100, 101, 104, 105, 107, 108, 113, 115, 117, 118, 121, 123, 129, 132, 136, 140, 144, 162, 164, 165, 167, 168, 171, 174, 176, 177, 179, 181, 185, 195, 197, 200, 202, 206, 208—210, 211, 212, 215, 217, 222, 224, 227, 231, 232, 235, 239, 247, 249, 251, 255, 256, 264, 265, 267, 268, 272, 273, 276, 278, 279, 283, 287, 289, 292, 293, 296, 297, 299, 303, 307, 309, 311, 313, 317—319, 324, 326, 329, 331, 332, 334, 336, 344, 347, 348, 351, 354, 356, 358, 359, 364, 365, 367—371, 373, 376, 382, 385, 387, 390—394, 397, 398—400, 403, 404, 406, 410, 412, 424—426, 428, 429, 432, 437, 439, 441—443, 448, 449, 452, 456, 462, 466, 467—470, 472, 473, 479, 481, 484, 489—491, 493, 494, 500, 506, 510—512, 514, 515, 518, 521, 522, 524, 526, 527, 529—531, 534, 538, 541, 543, 546, 548, 550, 552, 553, 555, 559, 560—564, 569, 572, 574—577, 581, 583—586, 590—592, 595, 597, 598, 602, 607—610, 613, 614, 618, 619, 622, 624, 626, 631, 632, 634, 636, 637, 641, 645, 647, 649—651, 654—656, 659, 661, 670, 673,

674, 679—681, 687, 710, 728, 838, 863, 864, 872, 886, 915, 925, 928, 929, 932, 951
Փիլիպոս, գրչ. 51, 132, 263
Փիլիպոս Կեչառեցի 18
Փիլիպոս (զան.) 418, 421, 440, 441, 537, 538, 658, 746, 755, 792, 872, 921, 961, 962
Փիրալիզ 179
Փրրաթամ 92
Փիրզանդ 445
Փիրիխան 620
Փիրիճան (Փիրիշան) 107, 164, 593, 871
Փիրիմալ, գրչ. 879
Փիրհամզ 57
Փիրզալեմյան Ղ. 27, 34, 74, 76, 195, 240, 256, 266, 272, 304, 433, 451, 616, 740, 803, 804, 835, 877, 891
Փիրզուլէ 446
Փիրմալ 705
Փիրսուլթան 15
Փիրում 120, 796, 888
Փոխան 401
Փսբրիկ 194, 776
Փուլին 419, 450, 472, 474
Փոլատ 497, 849
Փոստոս Բուզանդ 344, 364, 916, 918
Փորոզ 638

Քաթան 795
Քաթրինէ 593
Քամիմիր տե՛ս Կազիմիր
Քահան 142
Քամալ 351, 626
Քասբար տե՛ս Գասպար
Քաւշար 103
Քարամյանց Ն. 584
Քարան 313
Քարիմ 786, 895, 937
Քաֆար 196
Քեշիշյան 800
Քէթէվան 217
Քէմալ 662
Քէշիշ 461
Քընքուշ 393
Քըրշոֆ Մուստաֆա 403, 534
Քիշմիշ 120, 720
Քիշխաթուն 328
Քնար 249, 267, 281, 364, 365, 495, 511, 614, 625, 809
Քոլանչյան Ս. 243, 858.
Քոսակ Մելիք 231
Քրշոֆ 129
Քրիստոս 114, 116, 119, 247, 258
Քրիստոսատուր 86, 112, 231, 250, 282, 283, 560, 595, 694, 751, 761, 906
Քրիստոսատուր 86, 112, 231, 250, 282, 283, 560, 595, 694, 751, 761, 906
Քրիստոսատուր, գրչ. 377, 469, 479, 480
Քրիստոսատուր Թոխաթցի 370, 371
Քուլաֆ 874
Քուլփաշէն 793

Օագին 440
Օգոստոս 294, 344
Օգսէնդ 549
Օլթարէկ 230, 955
Օլթին 222
Օղիտա 4, 388, 614
Օղլան 247, 352
Օղլանդարաք 247
Օղլանփաշա 188, 374
Օղուլպալ 790
Օնուփրիոս տե՛ս Ոնուփրիոս
Օպպոլցեր Ռ. 588, 929
Օվանէս տե՛ս Յովանէս
Օվսան 956
Օտին 720

Ֆատրատ 57
Ֆարիգատ 136
Ֆարին 949, 963
Ֆարհաթ 431
Ֆարհալ 620
Ֆարդուզատ 609
Ֆարճալի 620
Ֆատլալայ, գրչ. 33, 34, 117
Ֆռանգուլ 224, 374, 649, 889
Ֆռանկ 308, 371
Ֆռանկիգուլ 922

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ամիրխան Առաքել 485
Ապդըլայ Աստուածատուր 897
Ապտալի տղա Գրիգոր 681

Բաղմիկ Յովաննէս 75
Բոշ Յովանէս 952

Գաղաքլու Կիրակոս Առշակեցի 69

Դամուրդուան Սարգիս 277

Երկու Երես Յակոբշան 62

Թամբալ տեր Յովհաննես 717

Խուլ Գրիգոր 360, 566

Կախիկ Յոհան Որոտնեցի 869
Կորեկոնց Ավետիս Բաղիշեցի 616
Կրճոն Յովաննէս 75

Զիգ Ստեփանոս 617, 908

Ղաոչղայ Սարգիս 903
Ղատի Ստեփաննոս 964
Ղարփուղ Արիստակէս Խարբերդցի 596

Ճընգի Մինաս 639

Մէլէք Մահմատ 903
Մոծակ Սիմեոն 500

Նորտունկ Ներսէս 696

Սարկաւագ Յովաննիս 337
Սէրէրքոյենց Անտոն 537

Փելիկ Յովաննէս 409

Քաղաքենց Սարգիս 685
Քանդըրճի Հաղրպէկ 691
Քաշոտ Մինաս 532

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլեաց վանք 21
Ագուլիս 104, 394, 449, 472, 473, 484, 631, 687, 794, 805, 888
Ագիլ Պղտի 377
Ագրնայ 835
Աղազիրա 559
Աթախ 327
Աթխայ 964
Ալամէք 22
Ալապ 485
Ալէկօռնայ 913
Ալինջան երկիր 789, 958
Ալիփուար (նաև Ալփինեար) 281, 447, 699
Ալնոցի վանք 581
Ախալզոր 97, 113
Ախտայ 957
Ածպտեր 207
Ական 495, 614
Ակրն 472, 779, 815, 880
Ակրլ 362, 363, 575
Ակին 234, 415, 637
Ակունք 779
Ակուռի 688, 689
Աղրակ 203
Աղրևրիկ վանք 561
Աղբուրք 216
Աղբլան 14, 483, 852
Աղթամար 265
Աղուերձ 15
Աղքտ 519
Ամասիա 434, 800
Ամրակում 929—931
Ամրերդ 444, 695, 921
Ամիթ տե՛ս Համիթ
Ամիրգոլ 729—731, 802, 836, 899
Ամիրդոլ մենաստան 577, 578
Ամկոյ 59, 496
Այրարատ տե՛ս Արարատ
Անանավանք 108, 109
Անգեղտուն նահանգ 964
Անդրիանուպոլիս 644, 695, 835
Անկուրի տե՛ս Գաղատիայ
Անկուրիայ 57, 581
Անծուկ 676
Ապահէն 488, 489, 865
Ապարան 74, 943
Ապիթոռ 88
Ապուչեխ 815
Աչանան (նաև Աճանան) 213, 551, 608, 648, 921, 949, 963
Առինջ 386, 387, 585
Առնա 299
Ասթարխան 53
Ասիա 536, 803
Ասպահան տե՛ս Սպահան
Ատանա 228, 532, 907
Արտիշ Մեծ 377
Արաբիա 381, 470
Արաբկեր 172, 562, 565, 572
Արագած 444, 709, 711, 887, 921
Արագածոտան 750
Արարատեան գավառ, երկիր 5, 185, 211, 278, 279, 416, 424, 449, 473, 500, 504, 537, 680, 695, 750, 769, 810, 856, 917, 918, 921, 936
Արարուղ եկեղեցի 213, 497
Արարք 213, 272, 890
Արրենց 734
Արզրում 184, 216, 329, 420, 466, 483, 529, 530, 575, 617, 632, 664, 672, 703, 719, 789, 894, 923, 948
Արծկէ 23, 442, 444, 486, 507, 774
Արկուռի 214, 255
Արղն 365, 470, 582, 784, 894
Արմաշ 963
Արմրատայ գյուղ 280, 281
Արտաղու 30, 719
Արտամետ 451, 639, 940, 941
Արտաւէլ 195, 308, 660
Աւանց 273, 498, 779, 782
Աւընգանց 74, 182, 183, 219, 220, 395, 509, 510, 579, 580, 665, 666, 883, 884, 904
Աւթուան 205
Ափրիկէ 803

Բաբելոն 241, 482, 648
Բաբերթ 190, 245, 282, 306, 337, 341, 460, 461, 670
Բագառիճ 763
Բագրատունի 679, 944

Բալու 84, 276, 503, 580, 880
Բաղդատ 112, 436
Բաղէշ 22, 32, 33, 77, 83, 168, 192, 257, 292, 293, 344, 401, 486, 487, 553, 554, 673, 674, 679, 732, 768, 769, 774, 802, 803, 825, 826, 869, 891, 899, 937, 938
Բանաղուրայ 750, 760
Բասեն 234, 948
Բասկբթու 850
Բարկիս 775
Բեգդէհէմ 693
Բերիայ տե՛ս Հալապ
Բղնունեաց երկիր 802
Բիւզանդիա տե՛ս Կոստանդնուպոլիս
Բիւրական 424
Բիւք 308
Բոլենց 945
Բշնի 508, 564, 565, 769
Բոգնիկ 408, 590, 639
Բուլք 644
Բուրվարոյ 468

Գալկեցւոյ 313
Գոլոզայ 444
Գալ 832, 879
Գաղատիայ 51, 128, 129, 271, 272, 320, 326, 327, 370, 535, 625, 688, 788, 799, 901
Գաղոզայ 307
Գամբիւռակերտ 369
Գանձակ 697
Գանձասար 226, 359, 411, 662, 663, 691, 713, 745, 761, 780, 834, 865, 868, 876
Գանչայ 411
Գանչոյ 663, 718, 852
Գառաւոյ 444
Գառնւոյ 681
Գատապաղ 875, 876
Գեղամայ 279, 508, 775
Գեղաձոր 794
Գեռլա 243
Գետաթաղ 779, 780
Գերմանիկ (Գերմանիկոյ) 31, 32, 80, 392, 653, 685, 686
Գեց 794
Գիմիշխան 346
Գողթ 382, 449, 473, 525, 546, 566, 631, 632, 654, 741, 888, 890, 904, 938
Գոմա 77, 223, 410, 964
Գորիս 261, 489, 775
Գրիգորէս 639
Գոթահիա տե՛ս Քէոթահիա
Դաշտ 230, 328, 509, 616, 848
Դառան արտ. 70
Դատեմ 469
Դարաշամբ 627
Դերշան 308, 462, 644, 763
Դըգմաշին 222
Դիղակ 489, 760
Դոմնաս 67
Դսեղ 491
Դրաղարկ 397
Դօլվաթապատ 843

Եաղլովցայ 122, 197, 292, 484, 532, 536, 588, 589
Եայլախ 779
Եաշ 121, 908
Եբեր (նաև Երերիա) տե՛ս Հալապ
Եգիպտոս 290, 652
Եդեմ 431
Եդեսիայ 46, 95, 389, 430, 431, 454, 570, 621, 634, 866
Եղեր գետ 696
Եղրնկայ 402, 722
Եղեղտյաոր 173, 822
Եղեգիս 605, 818, 819
Երասխ գետ 921
Երընչակ 77, 83, 265, 303, 309, 318, 348, 369, 396, 400, 404, 406, 493, 527, 550, 555, 615, 756, 767, 778, 832, 860, 870, 909, 921
Երկէն մասուր 632
Երուսաղէմ 16, 38, 39, 41, 42, 47, 77, 86, 104, 115, 116, 123, 124, 131, 135, 161, 189, 194, 209, 226—228, 232, 235, 239, 249, 250, 268, 269, 288, 321, 330, 334, 363, 366—368, 376, 404, 411, 419, 422, 426, 436, 444, 453, 454, 458, 460, 467, 469, 472, 475, 481, 505, 510, 512, 518, 521, 522, 524, 526, 530, 541, 564, 568—570, 577, 579—581, 586, 596, 602, 603, 641, 642, 644, 652, 654, 656, 661, 677, 678, 682, 690, 693, 714, 722, 730, 735, 736, 742, 753, 754, 782, 783, 801—803, 830, 834. 841, 842, 852, 892, 895, 896, 923, 925, 928, 932, 933, 951, 953, 954, 956
Երևան 212, 214, 255, 305, 482, 500, 501, 565, 680, 775, 809, 810, 839, 856, 947
Եւդոկիայ 98, 131, 137, 138, 171, 325, 387, 435, 437, 438, 508, 618, 695, 727, 728
Եւրոպա 803
Եւրառայ 692
Եփպարապատ 114

Զախսոր 738
Զակամ 247, 476
Զամոսցայ 196, 477, 534, 751
Զէթուն (նաև Զէյթուն) 32, 80, 226, 685, 686
Զիլայ 907
Զմիւռնիայ 345, 416, 417, 787, 851

Էգէձոր 217
Էգեստան 775
Էկրայ 114
Էճանան տե՛ս Աչանան
Էնկիճաղալայ 392
Էնկիւրեայ տե՛ս Անկուրիայ
Էշմիածին 5, 8, 13, 14, 20, 22, 24, 30, 47, 51, 52, 60, 61, 75, 86, 89, 93, 94, 97, 100, 105, 115, 129, 136, 139, 210, 230, 278, 279, 295, 296, 234, 350, 351, 389, 390, 400, 473, 481, 510, 526, 537, 539, 541, 566, 581, 603, 604, 613, 638, 646, 649, 652, 660, 661, 667, 695, 722, 733, 756, 758, 762, 777, 783, 790, 794, 824, 826, 838, 871, 909, 918, 921, 924, 927, 930, 932, 939
Էտրէնէ 754
Էրէր 302
Էրաել 242

Ընկղագուք 171
Ըռատաւզ տե՛ս Թէքիրտաղ
Ըսպահան տե՛ս Սպահան
Ըստամբուլ (նաև Ըստամպոլ) տե՛ս Կոստանդի-նուպոլիս
Ըստանոս 615

Թալաս 859
Թազավարդ 626, 627
Թամզառայ 322
Թաւրզար 633
Թաւրէզ 467, 482
Թաւուզ 181, 182
Թէոդուպոլիս տե՛ս Արզրում
Թէրիրտաղ 136, 622
Թըխիս (նաև Թպխիս, Թըզիս) տե՛ս Տպխիս
Թոխաթ 97, 98, 323, 438, 652, 727, 749, 750, 793, 887
Թովրասկան (նաև Թորըսկան) 30, 60, 118, 184, 185, 231, 525, 526, 545, 594—597, 678, 679, 902
Թրքայմարդ 309, 310
Թուղ 462

Իրերիա 520
Իզմիր 319, 320
Իլախաց երկիր 85, 180, 553, 604, 828
Իլիմիլ 753, 754
Իլով տե՛ս Լէվ
Իկոնիո երկիր 846, 847, 890, 891
Իշխանիգոմայ 451
Իսպահան տե՛ս Սպահան
Իքան 263

Լայուռ 25
Լաւքաւշայ 277
Լեհաց աշխարհ, երկիր 290, 292, 501, 643
Լէվ 89, 209, 210, 602, 604, 605, 752, 756, 935
Լիզներ 493
Լիմ 21, 22, 33, 59, 107, 250, 257, 265, 277, 278, 320, 442, 787, 899, 900
Լինշան 371
Լիվոռնո 913
Լով տե՛ս Լէվ
Լոր 935
Լոռի 491, 836

Խազան 53, 207
Խալաթիայ տե՛ս Ղալաթիայ
Խաթի տե՛ս Բարերթ
Խախտեանց (նաև Խաղթեաց) գավառ, երկիր 67, 190, 245, 282, 306, 337, 341, 581
Խանածախ 256
Խաչեն 411
Խասկալ 736
Խաւքայ երկիր 216
Խաւունիս 691
Խարբերդ 469, 596
Խարց 726
Խզնավար 506
Խնծորի 601, 806
Խնձորու 605
Խոտանան 648, 921, 949, 963
Խոր Վիրապ 215, 255
Խորանաշատայ 72
Խորասան 436
Խորարան 234
Խորձենք երկիր 113
Խրատեղ 173
Խրիմ տե՛ս Ղրիմ
Խո երկիր 491
Խոշաբ 204
Խոշկաշեն 83

Ծագաձոր 489, 601
Ծածկոտ 196
Ծաղկունեաց երկիր 957

63—277

Ծաղկունոյ ձոր 222, 723, 861, 936
Ծարայ 261, 262, 489, 601, 654

Կախէթ (նաև Կախէդ) 27, 839
Կակաղա 936
Կամախ 84
Կամբրկապ 880
Կամէնից (նաև Կամենից) 85, 180, 198, 209, 403, 533, 602, 605, 644
Կան 216, 217
Կապադովկիա 838
Կարրի 750, 915, 917, 921
Կարին տե՛ս Արզրում
Կարկառ 741
Կարմիր Վանք 71, 229
Կարս 600, 798, 799
Կարուշլայ 614
Կարուց 305
Կաֆայ 19, 20, 26, 27, 67, 90, 109—111, 117, 128, 129, 167, 194, 195, 211, 244, 252, 286—290, 310, 350, 351, 355, 356, 397, 398, 427, 428, 446, 448, 469, 478, 504, 531, 540, 541, 552, 559, 560, 610, 612, 668, 670, 675, 677, 713, 714, 721, 723—725, 731, 747, 751, 761, 762, 771, 772, 874, 901, 934, 935
Կեղի 113
Կեսարիայ 55, 81, 651—653, 692, 838, 901
Կեցնայ 616, 780
Կէծկոյ 719
Կէց 884, 885
Կիլիկիայ 3, 67, 126, 128, 470, 519, 523, 651, 799
Կիպրոսն (Կիպրոս) 277
Կիւռասոյ 533
Կծուակ 496
Կողլով 54, 635, 701
Կողոնիայ 47, 56, 206, 207, 403, 489, 490, 714
Կոստանդինուպօլիս 3, 4, 8, 9, 12, 15, 16, 20, 24, 31, 45, 51, 76, 93, 97, 99, 100, 101, 118, 124, 127, 130, 136, 140, 144, 161, 162, 197, 209, 210, 214, 232, 234, 235, 242, 249, 263, 264, 267, 274, 275, 282, 283, 294, 298, 319, 342, 345, 358, 363—365, 375—377, 400, 411, 415, 436, 438, 448, 454, 459, 469, 470—472, 477, 479, 481, 482, 494, 506, 510—512, 528, 529, 532—536, 541, 542, 558, 563, 573, 581, 582, 587, 588, 603, 604, 613—615, 624—626, 631, 633, 637, 735, 736, 752, 753, 782, 784, 791, 805, 806, 815, 829, 832, 833—835, 839, 854, 855, 879, 893—895, 897, 912, 925, 927, 928, 930
Կովտի Ջանտալուտ 953
Կովտուն 724
Կորդուաց 41
Կտուց 69, 218, 527
Կրէտէ 102, 233, 264, 482, 642
Կուտին 324

Հաբեշ 893
Հազարշրեպ 964
Հաղրու 964
Հալապ (նաև Հալէպ) 28, 54, 55, 82, 92, 118, 125, 165, 166, 274, 330, 338, 380, 381, 436, 467, 479, 520, 521, 523, 535, 562, 565, 566, 571, 572, 592, 619, 620, 668, 684, 693, 696, 728, 747, 779, 837, 896, 954, 955
Հալիձոր 551, 608
Հաղբատ 41, 28, 337, 710, 795
Համիթ 55, 161, 212, 225, 237, 238, 269, 295, 377, 405, 410, 412, 426, 435, 444, 447, 453, 466, 467, 514, 523, 554, 573, 599, 649, 652, 653, 699, 785, 882, 894, 953, 964
Հայաստան 78, 227, 369, 481, 485, 513, 641, 646, 647, 650, 802, 813, 828, 830, 833, 857, 916
Հայկաձոր 204
Հայոց Թառ 793, 810, 887
Հաւաւ 84
Հզու 50, 51
Հիզան 366, 367, 393
Հիղնա 161
Հնդկաստան 25, 61, 353, 436, 869
Հոնաց երկիր 349, 801
Հոռոմայր 836
Հոսաբակայ 262
Հոռմ 454
Հոռմկլայ 210, 380
Հոռմթումաս 371
Հրաստան դեռ 648
Հրեշտակապետաց վանք 870
Հուղսա 921

Ղարան տե՛ս Ղափան
Ղազարու վանք 237
Ղազպին 61
Ղազվին 83, 118, 443
Ղալաթիայ 295, 320, 651, 653
Ղալասար 680, 864
Ղանդալար (նաև Ղանտահար) 61, 369, 371, 385, 925
Ղանղալու 797, 798

Ղարադաղ 253
Ղաթաղաճ 31
Ղարահիսար (նաև Ղարայհիսար) 50, 56
Ղարամուրատ 852, 867
Ղարաշայլու 216
Ղարասար տե՛ս Կողոնիայ
Ղարասու երկիր 95, 211, 249, 348, 349, 696, 747, 827, 828, 891
Ղարս տե՛ս Կարս
Ղափան 181, 489, 775, 754, 860
Ղեզան 409
Ղզլար 305, 306, 810, 811
Ղըշլայ 963
Ղրրուլախ 501
Ղրիմ 20, 230, 289, 290, 349, 397, 531, 714, 725, 731, 747, 762, 828, 830, 935
Ղուլթիկ 869
Ղօնեայ (նաև Ղօնիայ) 686, 728, 891
Ղօտարտ 789

Ճապախչուր 88
Ճերմակ ծով 753
Ճորընճանդի 946
Ճվաձոր 726
Ճուպալու 834
Ճուղայ տե՛ս Ջուղայ (Նոր)

Մազազայ 279
Մազրագրակ 781
Մաժաք 55, 651, 838
Մալաթիայ 378
Մալկարա 690
Մակեդոնի մայրաքաղաք 139
Մակու 676
Մահզազան 491
Մահմուդանք 204
Մաղազայ 601
Մաղրուբայ 705
Մաճառաց 242, 243, 831
Մամրվան 234
Մայեկաց երկիր 904
Մանաչու 948, 950
Մանիսայ 379
Մանճիսոն 732, 819
Մաշկերու 562, 565, 572
Մասրեան 567
Մաւաղիխաթուն 726
Մարանա դաշտ 846
Մարգուան 74, 318, 705, 711, 712
Մարտանաղ 641
Մարտնոյ 423
Մարունան 901, 902
Մեծ անապատ 826
Մեծուր 8, 270, 487
Մեղրի 865, 933
Մէլիքզատայ 476
Մըխալիճ 235, 236
Մըսր 904
Մըրուց 689
Միջա 522
Միշագեղ 521
Միշագետաց աշխարհ 41, 225, 239, 426, 47₁, 514, 554
Միշերկրական ծով 753
Մսկաց երկիր, քաղաք, գավառ 41, 70, 78, 196, 215, 230, 265, 300, 328, 393, 576, 690, 765, 818, 847, 940, 945
Մոկս 616, 765, 847, 300
Մոկք 70, 78, 689
Մոս 601
Մոսկով 736
Մրուց 824
Մուղնի 547, 790
Մուղ 88, 193, 263

Յագուլիս տե՛ս Ագուլիս
Յախրատ տե՛ս Հաղբատ
Յամիթ տե՛ս Համիթ
Յարզրում տե՛ս Արզրում
Յաւթբեան 375
Յեգիպտոս տե՛ս Եգիպտոս
Յետուճուկ 80
Յերիախօճուխ 948
Յէնկի ճամի 284, 285
Յիպրահմեկ 738
Յողու 290
Յոյժ 640, 641
Յուլաշ 516, 517
Յուկուրծու 780
Յունաց 436
Ցուչի 694, 695, 750, 914, 917
Յուշպակ 72
Յուրհայ 431, 621, 634
Յօհաննավանք 428, 709, 914, 918

Նախամարդ (նաև Նեխամարգ) 723, 936
Նախէշեան (նաև Նախիշուան) 104, 411, 430, 493, 508, 527, 542, 627, 650
Նավրէր 472
Նարբնղալայ 30, 60, 118, 385, 410, 452, 526, 595, 773, 902
Նարկիզ 392
Ներքին Ցիպան Ջընհանշենց Նատկանց 442
Նիկիայ 88, 95, 487
Նորագաւիթ 781
Նորագեղ 241
Նորաշէն 555, 760, 958
Նոր Հռոմ 791

Նոր քաղաք 88, 625
Նորգ 499, 500
Նոնուս 769
Նոնիենից վանք 195, 196

Շախասորոն 91
Շախսապան 542, 846
Շահբունու ձոր 493
Շահգալաի 301
Շամ 436
Շամախի 624
Շամրայ 539, 777, 856
Շամիրամակերտ տե՛ս Վան
Շամքոր 409, 450, 740, 876
Շատախ 176, 177, 266
Շատիկ 596, 819, 860
Շաւշ տե՛ս Սպահան
Շէնհէր 52, 181, 399, 607, 608, 627, 658, 659, 790, 853
Շէնքուշ 210, 952
Շէյով տե՛ս Սէյով
Շըղզենի 743, 789, 836
Շիրակ 650, 799
Շնքուշ 527
Շուռթ 77, 103, 104, 265, 303, 309, 348, 361, 399, 400, 404, 406, 432, 508, 527, 542, 550, 553—555, 596, 615, 672, 673, 766, 767, 832, 909
Շրվան 624
Շօշ տե՛ս Սպահան

Ոսկոյգար 86, 358
Ոստան 204
Որոտան 52, 420, 515, 659, 689, 780, 790, 824, 881, 935

Զարէքայ անապատ 47, 663, 691, 376
Զարխափան 236, 900
Զափարու 654
Զիմիչկ 707
Զուխայ 754

Պալիս 11
Պաղեստին 380, 522
Պաղշասարայ 1, 2, 714, 827
Պտղկտարայ 754
Պանտրման 205, 206
Պապչան 867
Պասրա 732
Պատիշխ 420
Պալիս 469
Պանտոս տե՛ս Տրապիզոն
Պար 290
Պարսկաստան 308, 312, 313, 436, 468, 570, 656, 698, 744, 792, 803, 807, 809, 813, 862
Պոնտոս տե՛ս Տրապիզոն
Պուտակ 936
Պոատինք 327
Պրոտ 42
Պուղտանայ (նաև Պողտանայ) 208, 370, 644
Պողճայ 753
Պողազ հիսար 910

Ջամալաւու 214
Ջգրաշէն 107, 461
Ջերմուկ 545, 546, 682
Ջուղայ (Նոր) 5, 9, 44, 60, 69, 91, 144, 191, 201, 213, 252, 279, 311, 313, 331, 347, 372, 383, 391, 394, 408, 427, 452, 464, 465, 512, 513, 518, 525, 526, 567, 568, 570, 584—586, 624, 650, 656, 658, 742, 743, 744, 747, 808—810, 812, 819, 820, 845, 846, 856, 857, 869, 877, 878, 902, 921, 926, 958, 960, 962

Սալմաստ 205, 375, 680, 864, 941
Սաղիան 623, 624
Սաղիմ 928
Սաղմոսավանք 425, 426, 758, 786
Սամարիա 470
Սարմատիա 538
Սաւրի 941
Սափայ 825
Սերաստիայ 36, 113, 114, 116, 205, 324, 330, 346, 366, 375, 408, 459, 462, 464, 519, 572, 590, 615, 635, 639, 684, 695, 694, 724, 743, 789, 836, 853, 870
Սէյով (նաև Սեյրվ) 127, 208, 291, 292, 370, 588, 589, 636, 637
Սէրաթ 484, 532
Սրոսոուտ 740
Սիս 138, 505, 512, 637, 651, 652, 888, 955
Սիսական աշխարհ, նահանգ 5, 421, 538, 949
Սիւնեաց երկիր (նաև Սյունիք) 52, 244, 390, 538, 779, 794, 853, 885, 921
Սնապ 446
Սպահան 5, 9, 17, 18, 28, 30, 41, 43, 44, 60, 61, 63, 64, 76, 91, 92, 118, 185, 189, 199, 202, 231, 251, 253, 279, 297, 331, 347, 369, 373, 383, 385, 391, 394, 407, 408, 410, 421, 422, 425, 427, 440, 441, 451, 465, 468, 513, 523, 525, 526, 537, 542, 545, 548, 568, 570, 584, 592, 593, 595, 597, 598, 650, 658, 611, 706, 710, 712, 742, 773, 800, 806, 807, 809, 810,

812, 813, 820, 839, 857, 862, 869, 878, 887, 902, 905, 908, 920, 922, 925—927, 946, 947, 955, 958—960, 962
Սոթ 261, 262
Սովուխչորախ 610
Ստաթէ 52, 79, 538, 645, 655, 814, 847, 921
Ստամպոլ տե՛ս Կոստանդինուպոլիս
Սրկուղունք 71
Սուլու մանաստիր 197, 247, 345
Սուրաթ-Բանտար 796, 797, 800, 851, 868, 869, 903, 912, 913
Սուրբ 265
Սուրբ Թորոս 708
Սուրշկան 595
Սուրս 265, 353, 393, 576, 734, 818, 939, 940, 943
Սևան 144, 508, 931, 939
Սեբաստ տե՛ս Սեբաստիա

Վախայ 28
Վաղարշապատ 179, 400, 418, 443, 444, 566, 575, 603, 637, 638, 733, 746, 794, 810, 840, 845, 871, 878, 921
Վայոյ ձոր 819, 863
Վան 41, 42, 204, 218, 224, 240, 241, 274, 275, 307, 616, 775, 778, 803, 850, 940, 961, 962
Վանայ երկիր 204, 523, 627, 652, 787, 803, 890
Վանանդայ 525, 741
Վանատիկ 567
Վան-գեղ 234
Վաշարշեյ 242, 243
Վասպուրական 42, 69, 75, 273, 497, 527, 764, 774, 896
Վարաղ 69, 75, 76, 107, 218, 241, 272, 273, 362, 377, 496—498, 764, 890, 942
Վարանդ 493, 627
Վենետիկ 58, 59, 619, 745, 839, 907, 908, 925
Վերի աշխարհ 226
Վերի-գտեցի 805
Վերին Զադամ (նաև Զակամ) 691, 867
Վերի Քարթլ 28
Վիմոլ լեռ 290
Վիրինդետ 667
Վրաստան 795

Տաթև 212, 261, 318, 420, 515, 814, 822, 823, 860, 887, 938, 934
Տաճկաստան 803
Տայուշ 182
Տանձափարախ 759
Տաշրու 491
Տապկոա 196
Տարայբլուս 702, 705, 772, 773
Տարսոն 213
Տարօն 237
Տեղ 173, 174
Տիրերիայ 485
Տիդրանակերտ տե՛ս Համիթ
Տիգրանաշեն 652
Տպխիս (Տփխիս) 27, 28, 34, 102, 130, 254, 720, 795, 855
Տրանսիլվանիա 243
Տրապիզոն 87, 359, 417, 418, 638, 733, 745, 746, 900
Տեվ. 388, 396, 951
Տօմարզայ (Տումարզայ) 81, 224, 629, 653

Բախիշոյ 601

Ցեցկցի Սաթիլմշէն 173

Ուռումելի 901

Փառակայ 545, 546, 559
Փարաքարայ 501
Փարիսայ 468
Փեթլայեմ 354
Փենաթաղ 864

Քաղատիայ տե՛ս Գաղատիայ
Քաղկեդոն 642
Քանավայ (Նաև Քանովա) 54, 402, 625
Քաշան 61
Քաշթաղ 256, 506
Քաշօտ 67
Քայրերունի երկիր 8
Քասաղ գետ 444
Քարահատ (նաև Քարհատ) 662, 663, 667, 851, 852
Քարդման (նաև Քարթիման, Թարթման) 780, 813, 814, 876
Քարնու 329
Քաֆայ տե՛ս Կաֆայ
Քէօշք 451
Քիլիս 2, 3, 166, 191, 192
Քորբէղ 854
Քօթահեայ (նաև Քէօթահիա) 25, 47, 429, 523
Քօթնի 590, 640

Օղբէգստան 436
Օլախաց երկիր 484, 532
Օշական 770
Օստեղո 420
Օրթայ ճամի 284

Ֆռանաւա 849

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ապստամբություն 83, 358, 365, 281, 283, 284, 285, 840
Ասպատակություն 290, 291
Ավազակություն, ավարառություն 283, 284, 290, 417, 489, 506
Ավերում 42, 267, 273, 573, 604, 637
Արևի խավարում 588, 696, 730, 928
Արշավանք, նվաճում 482, 483, 891, 898
Արտակարգ ձյուն 860
Բժշկություն 40, 330
Բռնություն, նեղություն 30, 56, 74, 96, 199, 204, 214, 273, 341, 393, 487, 510, 522, 533, 563, 564, 884

Բուռշ 39

Գազաքին 689
Գահընկեցություն 285, 290, 358, 365
Գերեվարություն 51, 61, 213
Դերիների ազատում 411, 612, 644, 649, 650, 719, 764, 766, 725, 849, 853, 858
Գլխատում 358
Գրչության արվեստ 2, 6, 7, 19, 24, 25, 28, 34, 43, 59, 67, 76, 82, 102, 168, 201, 219, 220, 224, 232, 239, 240, 243, 313, 315, 323, 337 381, 401, 421, 425, 428, 430, 432, 433, 439, 453, 454, 465, 478, 487, 488, 490, 497, 500, 501, 513, 526, 532, 543, 544, 546, 561, 563, 567, 580, 582, 591, 618, 619, 621, 622, 625, 627, 628, 634, 640, 653, 655, 657, 659, 661, 665, 666, 669, 671, 677, 680, 684, 692, 694, 695, 696, 698, 699, 701, 706, 707, 715, 716, 717, 722, 729, 736, 740, 748, 755, 763, 767, 769, 772, 744, 776, 779, 782, 788, 798, 800, 812, 813, 816, 817, 823, 825, 829, 836, 846, 852, 858, 865, 872, 873, 876, 878, 880, 882, 889, 895, 898, 901, 912, 913, 916, 947, 949, 954, 957, 958, 959, 962, 964

Դալալ 424
Դահեկան 253, 610, 677
Դավադրություն 893
Դավանական պայքար 430
Դպրոցներ 203, 296, 344, 537, 538, 539, 569, 570

Եկեղեցու հրկիզում 637
Երկրաշարժ 119, 204, 218, 241, 272, 273, 281, 283, 796

Էկլէսախստէս 373

Ըռոզլամայ 25

Թանկություն 415
Թղթի մշակում 8, 17, 80, 94, 237, 243, 296, 386, 387, 656, 717, 867, 870, 874, 910, 949
Թույի 382
Թուման 253, 298

Լաշ 92
Լուսնի խավարում 484, 775

Խազինա 842
Խարճ 22, 506
Խէքթի 470
Խռովություն 840

Մածկաղիր 834, 843, 868, 885, 895, 898

Կանգուն 406
Կաշառք 367, 470, 840
Կողոպուտ 417, 575, 604, 891
Կողոպուտ, սպանություն 17, 326, 746, 756, 886
Կրոնափոխություն 182

Հալածանք 425
Հարկ 651, 720
Հարկապահանջություն 18, 56, 74, 220, 226, 239, 300, 367, 393, 403, 417, 425, 470, 487, 490, 510, 514, 522, 580, 666, 679, 735, 799, 816, 818, 842, 853, 884
Հարկերից ազատում 6, 136, 271
Հացի սղություն 425
Հեղեղ 415
Հիվանդություն 200
Հոխայ 382

Զեռագրի սառ ու ծախ 18, 23, 49, 81, 123, 675, 677, 863, 864, 946, 988
Զեռագրի գրավ դնել 835
Զեռագրի արժեք 16, 124
Զեռագրի գերություն 293, 299
Զեռագրի գրելու վարձ 201, 269
Զեռագրի նորոգում 21, 22, 38, 46, 57, 62, 68, 69, 91, 106, 107, 114, 130, 632, 643, 663, 684, 685, 686, 702, 729, 731, 732, 739, 759, 764, 771, 772, 813, 818, 819, 850, 877, 879, 880, 885, 891, 896, 898, 899, 901, 926, 945, 946, 948, 952
Զեռագրի փրկություն 120, 565, 644
Զեռագրի նվիրատվություն 17, 70, 71, 272, 305, 320, 327, 335, 429, 501, 881, 883, 890, 901, 913, 918, 927, 946, 947, 955, 960, 964, 994, 999

Ղազապ 372
Ղալաուզ 253
Ղափաճի 573
Ղուռուշ 124, 446, 470, 506, 574, 596, 651, 652, 675, 677, 699, 728, 803, 835, 840

Ճարիմա 367
Ճրնտի 644
Մալազ 423, 730
Մահ տարաժամ 273, 431
Մատենագարանի կողոպուտ 804, 828
Մասչիլ 253
Մուֆրատաք 749

Նանիր ծաղիկ 456

Շահի 201
Շարիատ 17
Շեխ եւ մուտաո 38
Շերիֆ 470
Շինարարություն ամրությունների 876, 963
Շինարարություն եկեղեցու վանքի անապատի 6, 39, 41, 52, 64, 104, 139, 227, 265, 326, 328, 335, 360, 369, 455, 456, 501, 565, 582, 602, 603, 613, 616, 620, 647, 648, 653, 672, 691, 710, 714, 754, 796, 781, 795, 832, 866, 867, 889, 915, 963
Շիթհանք 565

Ջրաղացի 565

Շիշակ 858

Չէլէպի 751

Պանդխտություն 799, 869, 872
Պաշարում 514, 533, 642, 728
Պատերազմ, ճակատամարտ 50, 60, 61, 102, 267, 369, 371, 385, 390, 417, 482, 483, 533, 603, 693, 753, 784, 803, 804, 828, 831, 835, 676, 925
Պատիժ 746
Պատրիկ 470
Պարտք 335

Ջորու արտառոց ծնունդ 92

Ռեալ, ըռիեալ 225, 596
Ռէս 734

Սարուճաք 625
Սով 425, 835
Սպանություն 417, 532

Տպագրություն 6

Ուղևորություն 541, 542

Տալճի 661
Տուքսաղ անել 411

Քիլա 410
Քիլաճլու պատ 382
Քուքուլմիշ անել 382
Քուրէքհի 753, 784

Օտար տիրապետություն 702, 725, 726
Օրհնանք 94

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան . . . . . Ե
Օգտագործած աղբյուրների ցանկ . . . . . Է
Հիշատակարաններ 15
Ցանկեր
Անձնանունների 967
Տեղանունների 1013
Առարկայական 1014

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԷ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Կազմեց ՎԱՉԴԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ

Հրատ. խմբագիր Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ
Կազմը Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հանձնված է շարվածքի 29.3.1983 թ.։ Ստորագրված է տպագրության 23.10.1984 թ.։ ՎՖ 04520։ Չափը 70×108¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 90,3 մամ., տպագր. 64,5 մամուլ։ Ներկ. մամուլ 90,3 Հրատ.-հաշվարկ. 71,4 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 5980։ Պատվեր № 277։ Գինը 11 ռ. 25 կոպ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։

Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин